ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

V

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ МНОГОТОМНИКА:

Агаян Ц. П., Акопян А. М., Аракелян Б. Н.,
Галоян Г. А., Еремян С. Т., Иоаннисян А. Г.
Нерсисян М. Г., Хачикян Л. С.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН · 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա III/4140

ԲԱԶՄԱՀԱՏՈՐԻՑԱԿԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա.,
Ներսիսյան Ս. Ց., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ.,
Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ · 1974

ՀԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴ...

ТОМ V

АРМЕНИЯ
В 1801-1870 ГОДАХ

РЕДАКЦИЯ ТОМА

Агаян Ц. П. (ответственный редактор),
Аветисян В. А., Григорян З. Т., Дилоян В. А.,
Казарян Г. М. (зам. отв. редактора), *Нерсисян М. Г.*

ՀԱՏՈՐ V

ՀԱՅԱՍՏԱՆԸ
1801-1870 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԱՏՈՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղայան Ծ. Պ. (պատասխանատու խմբագիր),
Ավետիսյան Վ. Ա., Դրիգորյան Զ. Ց., Դիլոյան Վ. Ա.,
Ղազարյան Հ. Մ. (պատ. խմբագրի տեղակալ), Ներսիսյան Մ. Գ.

9 (с 43)
Հ 24

Հ 0164·004/703 (02)—74 16-72 © Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն. 1974 թ.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի հինգերորդ հատորն ընդգրկում է պատմական խոշոր իրադարձություններով և բախտորոշող անցքերով հարուստ ժամանակաշրջան՝ 1801—1870 թվականները։

Դարասկզբին հայ ժողովուրդը թևակոխեց իր տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման նոր շրջանը։ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը սկսվեց 1801 թ. և ավարտվեց 1828 թ., առաջադիմական խոշոր քայլ էր և կարևոր շրջադարձ հայ ժողովրդի կյանքում։ Պատմական այդ ակտով հայ ժողովրդի մի հատվածն ազատագրվեց պարսկական դաժան տիրապետությունից. դրանով իսկ կանխվեց նրան սպառնացող ձուլման և ֆիզիկական բնաջնջման վտանգը։ Շուրջ 140 հազար հայեր գաղթելով Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից, բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի տարբեր շրջաններում։ Փոխվեց երկրի դեմոգրաֆիական քարտեզը։ Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի համահավաքման հիմնական կենտրոնը, ուր նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման համար։

XIX դարի 40—50-ական թվականներից սկսած, ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի են ունենում կարևոր իրադարձություններ։ Խորանում է ֆեոդալական հարաբերությունների ճգնաժամը, վերանում է երկրամասի տարբեր նահանգների միջև եղած ինքնապարփակվածությունը, քաղաքները դառնում են աշխուժացող առևտրի և արդյունագործության կենտրոններ։ Աստիճանաբար զարգանում են բուրժուական հարաբերությունները։

Տնտեսական զարգացման նոր ընթացքն ավելի է սրում դասակարգային ներհակությունները քաղաքում և գյուղում։ Քայքայվում է արհեստագործությունը։ Բողոքի ելույթներ են տեղի ունենում համքարությունների իրավունքները սահմանափակող օրենքների դեմ։ Միաժամանակ ծավալվում են գյուղացիական շարժումները։ Արևելյան Հայաստանում ուժեղացող սոցիալական պայքարն աստիճանաբար միահյուսվում է համառուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման հետ, դառնում նրա բաղկացուցիչ մասը։

Ռուսական հեղափոխական մտքի ներգործությամբ հայ աշխատավորական մասսաները մեծ առաջընթաց ապրեցին, իսկ դարավերջին լենինյան դրոշի ներքո բարձրացող բանվոր դասակարգի՝ աշխարհը վերափոխող պայքարի մասնակիցը դարձան։

Հայ ժողովրդի գերակշռող մասը կազմող արևմտահայ հատվածը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության ծանր լծի տակ։

Սուլթանական ռազմա-ֆեոդալական կարգը, կառավարման վայրագ մեթոդը, ազգային ճնշումներն ու կրոնական խտրականությունը, տնտեսական

կողոպուտն ու հարստահարումները, փաշաների անզուսպ կամայականությունները կատարյալ իրավազրկության էին հասցրել հայ ժողովրդական զանգվածներին։ Ֆիզիկական բնաջնջման վտանգը դամոկլյան սրի նման կախված էր մնում հայ ժողովրդի գլխին։

Սուլթանների ինչպես 1839 թ., այնպես էլ 1856 թ. ռեֆորմները՝ Թանզիմաթը, մնաց որպես սոսկ թղթի կտոր։ Արևմտյան Հայաստանի գավառներում շարունակվում էին քաղաքական սարսափը, ազգային ճնշումները և հարստահարությունները, չարդերի ու բացարձակ կողոպուտների քաղաքականությունը։

1850—60-ական ԹԹ. ուժեղացան ազգային-ազատագրական շարժումները Օսմանյան կայսրության մեջ։ Սերբերի, չերնոգորցիների, հույների, ալբանացիների, արաբների հետ միասին թուրքական բռնապետության դեմ ապստամբության դրոշ պարզեցին նաև արևմտահայ զանգվածները Զեյթունում, Վանում, Մուշում, Չարսանջակում և այլուր։ Ազգային-ազատագրական այդ շարժումները, և, մասնավորապես Զեյթունի 1862 թ. ապստամբությունը լայն արձագանք գտան հայ իրականության մեջ, այդ թվում և աշխարհով մեկ սփռված հայ գաղթօջախներում։ Ինչպես 1850—60-ական ԹԹ., այնպես էլ հետագա տասնամյակների հայ ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժը աշխատավորական զանգվածներն էին՝ գյուղացիությունը և արհեստավորությունը։

Աշխատավոր մասսաների սոցիալական ազատագրության ու ազգի լուսավորության հարցերը և վերջապես այն, թե ի՞նչ ճանապարհով պետք է ապագայում ընթանա հայ ժողովուրդը, դառնում են ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի քննարկման հրատապ և կարևորագույն խնդիրները։ Եթե անցյալում հայ հասարակական-քաղաքական գործիչների մի մասը հույսեր էր կապում արևմտյան տերությունների օգնության հետ, ապա այս դարաշրջանում, հաշվի առնելով բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի փորձը, Մաձձինիի և Գարիբալդիի գլխավորած իտալական ժողովրդի պայքարը, ինչպես նաև 1848 թ. հեղափոխության բուռն ընթացքը Արևմտյան Եվրոպայի երկրներում, կարևոր տեղ է տրվում ժողովրդական լայն շարժումներին, դեմոկրատական-հեղափոխական պայքարին։ Նման պայմաններում էլ ձևավորվում են հայ հասարակական-քաղաքական հոսանքները, որոնցից յուրաքանչյուրն, առաջնորդվելով յուր դասակարգային շահերով, առաջադրում է իր քաղաքական ծրագիրը և նրա իրագործման ձևերն ու մեթոդները։

Այդ հոսանքներից կղերա-ֆեոդալականը կառչած մնալով հնին, պաշտպանում էր ֆեոդալական-կալվածատիրական կարգը և կրոնի դոգմաները։ Նա գտնում էր, որ գրաբարը պետք է անսասան մնա։ Այդ հոսանքին որոշ հարցերում հակադրվում էին ազգային-պահպանողականները, սակայն, տնտեսական կյանքի առաջընթացը, բուրժուական հարաբերությունների զարգացումն ու լուսավորության տարածումը դուրս էին մղում հին դոգմաները և դրանց պաշտպան կղերա-ֆեոդալական հոսանքը։ Ձևավորվում է լիբերալ-բուրժուական հոսանքը, որը խթանում է բուրժուական լուսավորության և ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվի արմատավորմանը։ Սոցիա-

լական կյանքի վերափոխման, հատկապես ճորտատիրական կարգերի վերացման գործում այդ հոսանքը որդեգրում է բուրժուական-ռեֆորմիստական ծրագրեր։ Գոյություն ունեցող կարգերը հեղափոխական ճանապարհով վերափոխելու ծրագիր է առաջադրում հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որի առաջնորդ Միքայել Նալբանդյանը ջանում է ոչ միայն կամրջել արևելահայ և արևմտահայ սոցիալական, ազգային-ազատագրական պայքարը, այլև այդ շարժումները կապել համառուսաստանյան ու համաեվրոպական հեղափոխական մարտերի, սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունների հետ։

Առաջադիմական մտավորականության մտահոգության առարկա է դառնում ազատագրական, հայրենասիրական գաղափարների պրոպագանդումը։ Ձևավորվում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, տարաստիճան դեմոկրատական գործիչները առաջադրում են «ամեն ինչ հայրենիքի համար» նշանաբանը։ «Տարակույս չկա,— գրում է Մ. Նալբանդյանը,— որ մարդկության պատմության մեջ, ոչ մի ժամանակ, այնպես սաստիկ և որոշակի երևեցած չեն ազգությունքը, ինչպես ներկայումս։ Ազգությունը ասես թե դարձել է մի ամենօրյա հաց, առանց որին չէր կարելի ապրել. մի էլեկտրականության պես բան, որ փայլակի շուտությամբ տարածվում է զանազան ազգության անդամների մեջ։ Այս բանի խմորը ընկնում է և մեր ազգի մեջ և մեզանում լավում են ձայներ և մեր մեջ սկսում է բարախել մի կենդանի միրտ»[1]։

Այդ ժամանակաշրջանում ձևավորվեց հայ աշխարհաբար լեզուն և՛ արևելահայ և՛ արևմտահայ հատվածներում։ Գրական նոր շարժումը զարգացման աննախընթաց վերելք ապրեց։ Տպագրվեցին աշխարհաբար բազմաթիվ պարբերականներ, որոնց միջոցով գրավոր խոսքը տարածվելով լայն զանգվածների մեջ, մեծ արժեք ստացավ, համախմբող ու միավորող դեր կատարեց։

XIX դարի 50—60-ական թթ. մեծ թափ ստացավ ազգային ուժերի կոնսոլիդացիան, որն իր արտահայտությունը գտավ արևելահայերի և արևմտահայերի մշակութային ու գաղափարական կապերի ուժեղացման, գրականության, պարբերական մամուլի և դպրոցի զարգացման, մշակույթի նոր օջախներ ստեղծելու, լուսավորական շարժման և հասարակական այլ երևույթների մեջ։

Անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին հայ բուրժուական ազգի ձևավորման համար։ Մեծ առաջընթաց նկատվեց հատկապես հայ ժողովրդի տնտեսական կյանքի, մշակույթի և հոգևոր կերտվածքի ընդհանրության ասպարեզում։

Հայ բուրժուական ազգի ձևավորմանը զուգընթաց նոր թափ ստացավ ազգային-ազատագրական շարժումը, որն ընդունեց համազգային ձև և համադեմոկրատական բովանդակություն։ Հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքար մղելով օտար զավթիչների դեմ, պաշտպանել է իր հայրենիքը և կառչած մնացել մայր հողին։ Սակայն տարբեր ժամանակներում բնակչության մի մասը պատմական դաժան դեպքերի բերումով ցրվել է աշխարհով մեկ և այս կամ այն

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1945, հատ. 1, էջ 463։

երկրում ստեղծել գաղթօջախներ, պահպանել իր ազգային առանձնահատկությունները ու նպաստել հայ մշակույթի զարգացմանը։

Հայկական գաղթօջախներն ինքնամփոփ կյանք չեն վարել, նրանք գործօն մասնակցություն են ունեցել և զգալի դեր խաղացել հյուրընկալած երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման մեջ։ Հայ գաղթօջախներում հրատարակվել են բազմաթիվ պարբերականներ, ժամանակի առաջավոր միտքը պրոպագանդող աշխատություններ։ Միաժամանակ հայ հեղինակների ուսումնասիրություններն ու պատմագիտական, փիլիսոփայական ու գրական աշխատությունները թարգմանվել են տարբեր ժողովուրդների լեզուներով և մտել համաշխարհային քաղաքակրթության դանձարանը։

Հայ գաղթօջախները էական դեր են խաղացել նաև հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում։ Ուստի նրանց, և առանձնապես Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի երկրների, Պարսկաստանի, Հնդկաստանի և Մերձավոր Արևելքի գաղթավայրերի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի լուսաբանումը պատշաճ տեղ է գտել ներկա հատորում։

Հատորում ծավալուն բաժին է հատկացված նաև մշակույթին։ XIX դ. առաջին կեսին հիմնվում են նոր տպարաններ, բացվում են տասնյակ դպրոցներ։ Ժամանակի ազգային կրթության ու լուսավորության գործում հատկապես մեծ է Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Փարիզի Մուրադ-Ռափայելյան և Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանների խաղացած դերը։ Սկզբնավորվում է ազգային պրոֆեսիոնալ երաժշտությունը, զարգանում է գեղարվեստական գրականությունը, դրամատուրգիան, մամուլը, հրապարակախոսությունը։ Պատմագիտությունը բարձրանում է մի նոր աստիճանի, պատմա-հնախոսական և կրոնա-բարոյագիտական երկերի կողքին տեղ են գրավում պատմա-քննական ուսումնասիրությունները. հայագիտության մեջ սկիզբ են առնում գիտական նոր, առաջավոր ուղղություններ։

Հայ ժողովրդի դեմոկրատական մտքի ու մշակույթի զարգացման վրա բարերար ազդեցություն ունեցան մասնավորապես ռուսական հարուստ մշակույթն ու հասարակական-քաղաքական միտքը։

* * *

Հատորը պատրաստել է հեղինակային կոլեկտիվը. Ա. Գ. Աբրահամյան, Ժ. Հ. Աննանյան, Ե. Պ. Աղայան, Վ. Բ. Բարխուդարյան, Զ. Տ. Գրիգորյան, Վ. Ա. Դիլոյան, Վ. Ա. Խաչատրյան, Ա. Գ. Հովհաննիսյան, Ս. Վ. Հովնանյան, Հ. Մ. Ղազարյան, Մ. Մ. Ղազարյան, Վ. Ա. Միքայելյան, Ա. Հ. Մուրադյան, Ա. Մ. Պողոսյան, Վ. Հ. Ոշտունի, Ս. Ն. Սարինյան, Գ. Խ. Ստեփանյան, Ս. Է. Քոլանջյան։

Քարտեզների հեղինակներ՝ Ս. Տ. Երեմյան, Հ. Մ. Ղազարյան։ Սխեմատիկ քարտեզների հեղինակներ՝ Հ. Մ. Ղազարյան, Վ. Ա. Դիլոյան, Ս. Մ. Դուլյան, Լ. Հ. Վալեսյան։ Քարտեզագիր՝ Հ. Ն. Գործակալյան։

Կարևոր իրադարձությունների ժամանակագրությունն ու մատենագրությունը կազմել է Հ. Մ. Ղազարյանը, իսկ ցանկերը՝ Ա. Գ. Ավագյանը։

ԲԱԺԻՆ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ

XIX դարի սկզբին Հայաստանը, ինչպես նաև Ադրբեջանը և Վրաստանի մի զգալի հատվածը շարունակում էին մնալ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի տիրապետության ներքո։ Պարսկական լծի տակ գտնվող Արևելյան Հայաստանը և Անդրկովկասի մնացած շրջանները մասնատված էին ֆեոդալական բազմաթիվ մանր, կիսանկախ իշխանությունների, որոնք անընդհատ բախումների մեջ էին միմյանց հետ։ Այս ժամանակահատվածում երկրամասի վարչական քարտեզը հետևյալ պատկերն էր ներկայացնում. Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունն, Իմերեթիայի թագավորությունը, Գուրիայի, Մեգրելիայի, Աբխազիայի, Աջարիայի իշխանությունները, Ախալցխայի փաշայությունը, Երևանի, Ղարաբաղի, Նախիջևանի, Գյանջայի, Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի և Թալիշի խանությունները։

Արևելյան Հայաստանի հիմնական մասը ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունների մեջ, իսկ հյուսիսային շրջանները՝ Լոռին, Փամբակը, Բորչալուն և Շամշադինը մտնում էին Արևելյան Վրաստանի թագավորության մեջ, և վերջինիս միացմամբ Ռուսաստանին՝ անցան սրա տիրապետության տակ։

Քարթլիի և Կախեթի թագավորությունը թեև պահպանում էր իր հարաբերական անկախությունը, սակայն մեծապես թուլացել էր ներքին ֆեոդալական տարրընթացությունների և գահաժառանգական հարցի շուրջը թագավորական ընտանիքում ծագած տարաձայնությունների։ Ի վիճակի չլինելով սեփական ուժերով դիմագրավել արտաքին հարձակումները և լուծել ներքին միջֆեոդալական վեճերը, Վրաստանն իր փրկության ելքը տեսնում էր Ռուսաստանին ապավինելու մեջ։ Արևմտյան Վրաստանի իշխանությունները և Ախալցխայի փաշայությունը գտնվում էին թուրքական լծի տակ, թեև ներքին կառավարման հարցերում օգտվում էին որոշ ինքնուրույնությունից։

Անդրկովկասի խանությունները մտնում էին պարսկական պետության կազմի մեջ և ենթակա էին շահի գերագույն իշխանությանը։ Սակայն այդ խանությունները օգտվելով XVIII դարի կեսերից Պարսկաստանում ծայր առած միջֆեոդալական բախումներից, ներքին երկպառակություններից և գահա-

կալական անվերջ կռիվներից, կարողացել էին իրենց համար գրեթե կիսանկախ վիճակ ապահովել։ Ռուսական տիրակալության տարածումը Կովկասյան լեռնապարից հարավ, հիշյալ խանությունները դրեց երկընտրանքի առաջ. դրանցից Ղուբայի խանությունը ձգտում էր միանալ Ռուսաստանին, ոմանք էլ խուսանավման քաղաքականություն վարելով, ճգնում էին պահպանել իրենց կիսանկախ գոյությունը։

Անդրկովկասում առաջնակարգ նշանակություն ուներ Երևանի խանությունը։ Հատկապես XIX դարի սկզբին Երևանի խանությունը առանձնահատուկ կարևորություն ստացավ որպես կիսանկախ սահմանագլխային կուսակալություն։ Եթե ցարական Ռուսաստանը, ցանկանալով օգտագործել Երևանի խանի «տատանումները», ձգտում էր այդ կարևոր երկրամասը խաղաղ ճանապարհով վերցնել իր հովանավորության տակ, ապա շահական Պարսկաստանը ջանում էր մեկընդմիշտ վերջ տալ Մամադ խանի և նրա ազգական նախիջևանի նախկին Քալբալայի խանի կիսանկախական հովերին։ Վերջինս վաղուց էր վտարվել իր պաշտոնից ու ապաստանել Երևանում։ Ի վերջո, 1805 թ. Պարսկաստանի գահաժառանգ Աբաս Միրզան ձերբակալում և Պարսկաստան է աքսորում Մամադ խանին, Երևանի խանությունը հանձնելով Մեհթի-Ղուլի խանին, ապա՝ Ահմադ խանին, որին 1807 թ. փոխարինելու եկավ Հյուսեին Ղուլի խանը՝ Երևանի վերջին սարդարը։ Այս հանգամանքը հնարավորություն ընձեռեց Պարսկաստանին՝ ժամանակավորապես ամրապնդելու իր դիրքերն Անդրկովկասի այդ մասում։

Սկսած 1805 թ. Պարսկաստանը ֆինանսական զգալի միջոցներ էր տրամադրում ռազմականորեն ամրացնելու Երևանի բերդը, վարժեցնելու խանության զորական ուժերը։ Այդ նպատակով Երևան էին ուղարկվում անգլիական և ֆրանսիական զինվորական հրահանգիչներ։ Եթե մինչև այդ էլ Երևանի խաները օժտված էին սարդարի՝ այսինքն փոխարքայի և գլխավոր զորահրամանատարի անսահմանափակ լիազորություններով, ապա Երևանի խանության վերջին սարդար Հյուսեին Ղուլի խանի իրավասության շրջանակներն առավել ևս ընդարձակվեցին։ Նա դարձավ խանության միահեծան տիրակալը։ Խանության բոլոր եկամուտները մնում էին տեղում և օգտագործվում երկրի ռազմունակության բարձրացման համար։ Այս ամենը ցույց է տալիս, որ Անդրկովկասում կրած կորուստներից հետո Երևանի խանության ռազմա-քաղաքական նշանակությունը մեծանում էր Պարսկաստանի համար։

Երևանի խանությունը բաժանված էր տասնհինգ վարչական միավորների, որոնք կոչվում էին մահալներ։ Դրանք էին՝ Կրխբուլաղի, Ջանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Դարաքենդ-Փարչենիսի, Սաաթլուի, Թալինի, Սեհդլի-Աղսախլիի, Սարդարապատի, Կարբիբասարի, Ապարանի, Դարաշիշագի և Գյոկչայի մահալները։ Մինչև 1805 թ. Երևանի խանության մեջ էր գտնվում նաև Շորագյալի սուլթանությունը, որն այդ թվականին գրավվեց ռուսական զորքերի կողմից և միացվեց Ռուսաստանին։

Վարչական վերոհիշյալ բաժանման հիմքում ընկած էր ջրաբաշխման սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր մահալ կազմվում էր այն բնակավայրերից, որոնց հողերը ոռոգվում էին միևնույն գետի ջրերով։ Վարչական բաժանման

Նման սիստեմը ինչպես ողջ Արևելքում, այնպես էլ Հայաստանում բխում էր արհեստականն ուռճման կարևոր նշանակությունից։ Նման բաժանումը, անշուշտ, դյուրացնում էր մահալների, իբրև ինքնամփոփ վարչական տնտեսական միավորների, կառավարումը։

XIX դարի առաջին քառորդում Նախիջևանի խանությունը անմիջականորեն ենթարկվում էր Ատրպատականի տիրակալ՝ գահաժառանգ Աբաս-Միրզայի իշխանությանը։ Նախիջևանի խանությունը ևս բաժանված էր մի քանի մահալների՝ Ալինջա-չայի, Նախիջևանի, Մավազիխաթունի, Խոքի, Դարալագյազի։

Հարևան Օրդուբադի գավառն իր հերթին կազմված էր Ագուլիսի, Դաստիկնի, Բելևիի, Ջանանափի մահալներից։

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին քաղաքական խոշոր փոփոխություններ էին կատարվել Ղարաբաղի խանության ներսում։ Հայկական նախկին հինգ մելիքությունները՝ Դյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը կորցրել էին իրենց կիսանկախ վիճակը։ Տվյալ ժամանակահատվածում Ղարաբաղի խանության կազմի մեջ էր մտնում նաև Ղափան-Ջանգեզուրի շրջանը։ Ղարաբաղի խանությունը ևս բաժանված էր մահալների։ Դրանք էին՝ Սիսիանի, Կապանի, Դեմուրչասահլի, Բաղաբերդի, Քյաբիրլո՛ի, Բարգուշատի, Տաթևի, Ջիվանշիրի, Ջրաբերդի, Խուրդափարայի, Փիսխանի, Օթուզ-Իքիի, Իգիրմիդիորտի, Կարաչորլուի, Վարանդայի, Դիզակի, Աջնանի, Ջավանշիրի, Թալիշի, Խաչենի, Մեղրու մահալները, որոնց գլուխ կանգնած էին կամ հայ մելիքներ, կամ ադրբեջանական բեկեր։

Մահալների կառավարիչներն էին միրբոլուքները կամ նաիբները, որոնց նշանակում էին սարդարը կամ խանը։ Լինում էին դեպքեր, երբ մեկ միրբոլուքի կառավարմանն էին հանձնվում մեկից ավելի մահալներ։ Միրբոլուքները հետևում էին իրենց տնօրինությանը հանձնված մահալներում տուրքերի նշանակման և գանձման գործին, լուծում էին բնակչության մեջ ծագած վեճերը, ի կատար ածում վերադաս դատաստանական վճիռներն ու որոշումները։

Երևան քաղաքը իբրև վարչական առանձին միավոր, անմիջականորեն կառավարում էր դարուղան (ոստիկանապետը), որը հետևում էր քաղաքի ներքին կարգ ու կանոնին, հսկում շուկաներին և այլն։

Հայկական որոշ շրջաններում կառավարման համար նշանակվում էին մելիքներ, որոնք օժտված էին միրբոլուքների համար սահմանված իրավունքներով։ Այսպես, հիշյալ ժամանակաշրջանում Կրխբուլաղի մահալը հանձնված էր հարյուրապետ Գաբրիել Դեղամյանին, իսկ Երևանի հայ բնակչության կառավարումը՝ Մելիք-Աղամալյաններին։ XIX դարի սկզբում Երևանում մելիք էր Աբրահամ Մելիք-Աղամալյանը։

Նշված հայ մելիքների իշխանությունը ժառանգական էր և փոխանցվում էր հորից որդուն։ Հայկական գյուղերն իրենց հերթին կառավարվում էին գյուղական մելիքների և տանուտերերի կողմից։ Այդ պաշտոնները ձևականորեն ընտրովի էին։ Ընտրությունները կատարվում էին նեղ շրջանակներում և ժամանակի ընթացքում պաշտոնները գրեթե ժառանգական բնույթ էին ստանում։ Մեծ թվով բնակչություն ունեցող գյուղերը շատ դեպքերում կառավարում էին մեկից ավելի մելիքներ կամ տանուտերեր։

Ավազակային հարձակումները՝ թալանը, կողոպուտն այն ժամանակ սովորական երևույթ էին։ Ուստի և գրեթե ամեն մի գյուղ ունենում էր զենք կրելու ընդունակ մարդկանցից կազմված ջոկատներ, որոնք հարկ եղած դեպքում զինվում էին, հետապնդում կողոպտիչներին և աշխատում էր բերել կողոպտված գույքը, անասունները։ Այդ ջոկատները ղեկավարում էին ընտրովի յուզբաշիներ (հարյուրապետներ), որոնք վճռական ձայնի իրավունք էին ստանում համայնքին վերաբերող գործերում։

Երևանի խանությունը, սակայն, ժառանգական ավատ չէր։ Սարդարները նշանակվում էին շահի կողմից և նրա կամքով կարող էին զրկվել իշխանությունից։

Ինչպես առհասարակ հատուկ է Արևելքի բռնապետություններին, Պարսկաստանի մասը կազմող Երևանի խանության մեջ ևս գործառույթների մեջ էին գերատեսչություն. ֆինանսների (սեփական բնակչության կողոպուտ), պատերազմի (սեփական և օտար երկրների կողոպուտ) և հանրային աշխատանքների (հոգացություն վերարտադրության համար)[1]։

Խանական վարչության գլխավոր ուշադրությունը դարձնում էր տուրքերի գանձման վրա, իսկ դեպի հարևան խանությունների ու փաշայությունների սահմանամերձ շրջանները կատարվող ասպատակությունների նպատակը ավարառությունն էր։ Սարդարի բարեհաճ լռության ներքո կողոպուտի էին ենթարկվում երկրով անցնող վաճառականական քարավանները։ Եվ քանի որ խանությունների հիմնական արտադրամիջոցը արհեստական ոռոգման վրա խարսխված գյուղատնտեսությունն էր, ուստի վերարտադրությունն ապահովելու հիմնական գրավականը ջրանցքների վերանորոգումն էր կամ նոր ջրանցքների կառուցումը, որոնց կոռի կարգով մասնակցում էր ամբողջ աշխատավոր բնակչությանը։

Սարդարը և խանները ունեին իրենց դիվանը կամ խորհուրդը, ուր մտնում էին վեզիրը և մի քանի միրզաներ։ Նրանցից յուրաքանչյուրը ղեկավարում էր կառավարման իր հոգացողությանը հանձնված բնագավառը։ Խազնադար-աղասու (գանձապետի) հսկողությանն էր հանձնված խանական գանձարանը, իսկ սանդուխտար-աղասին (ծախսարարը) հոգում էր արքունի ծախսերը. բնակչությունից ստացվող բնամթերային տուրքերը կենտրոնացվում էին ամբարդար-աղասու (շտեմարանապետի) ղեկավարության տակ գտնվող շտեմարաններում։ Դիվանի մեջ մտնում էին նաև խանական սերաֆյուլ-բեկը (զորապետը), մուհասիլը, որ կենսագործում էր խանի հրամանները և դատաստանական վճիռները, ինչպես նաև Երևանի և մյուս քաղաքների ոստիկանապետը։ Կառավարության կարևորագույն խնդիրներն էին՝ նախ և առաջ հոգալ խանական արքունիքի պետքերը, այնուհետև ղեկավարել ֆինանսական ու ռազմական գործերը և, վերջապես, իրականացնել գործադիր իշխանությունը, այսինքն՝ ի կատար ածել դատաստանական որոշումներն ու վճիռները։

Դատական ֆունկցիան հիմնականում հանձնարարված էր մահմեդական հոգևորականությանը, որն առաջնորդվում էր շարիաթի օրենքներով։ Մանր

[1] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. 28, стр. 221.

վեճեր լուծելիս հաճախ օգտվում էին նաև սովորութային իրավունքի նորմերից։ Դատավարությունը կատարվում էր բանավոր։ Սարդարը, երբեմն, անձամբ լսում էր քրեական գործեր և միջամտում քաղաքացիական գործերին, մանավանդ, եթե դրանք պատկառելի եկամուտ էին խոստանում ընչաքաղց իշխանավորին։ Սարդարի ամեն մի խոսքը, որքան էլ այն ընդդեմ լիներ արդարության սկզբունքներին, վերջնական վճռի և օրենքի ուժ ուներ։ Նման դեպքերում զրպարտության դոհ դարձած հպատակները միայն խոշոր կաշառքների գնով կարող էին փրկել իրենց կյանքը կամ ունեցվածքը։ Ուստի և միամտություն կլիներ խորհել օրինականության մասին «անօրինականության երկրում», ուր խանների կամքն ու քմահաճույքը օրենք էր, և ոչ ոք ի վիճակի չէր, հանդգնություն չուներ հակառակել նրանց[2]։ Ամենուր կիրառվում էին մարմնական պատիժներ՝ անդամահատում, ծեծ, ականջ կտրել, աչքերը փորել և այլն։

Պետք է նկատել, որ քաղաքացիական համեմատաբար փոքր գործերի քննարկման ու վճռահատության դեպքում քրիստոնյաները, այսինքն հայ աղգաբնակչությունը, օգտվում էին դատական որոշ ինքնուրույնությամբ։ Այդ բնագավառում իրավասությունը պատկանում էր հայոց եկեղեցուն, հոգևոր պասին, ինչպես նաև մելիքներին՝ առհասարակ, գյուղական մելիքներին և տանուտերերին՝ մասնավորապես։ Քաղաքացիական գործերի դատավարության ժամանակ հայերն առաջնորդվում էին ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմերով, իսկ որոշ դեպքերում էլ օգտվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»։ Վիճարկելի դեպքերում վերջնական խոսքը պատկանում էր Էջմիածնի կաթողիկոսարանին։

Այն դեպքում, երբ դատական վեճը գնում էր մահմեդականի և քրիստոնյայի միջև, դատավարությունը կատարվում էր համաձայն շարիաթի։

Քրեական գործերի դատավարությունն ամբողջովին գտնվում էր մահալների կառավարիչների՝ միրբոլուքների, իսկ հատկապես կարևոր գործերինը՝ Երևանի սարդարի իրավասության ներքո։ Նրանք չէին խորշում և ոչ մի միջոցից, որպեսզի նույնիսկ արհեստականորեն մնղքը բարդեն քրիստոնյաների և սնոտի էջմիածնի վրա։ Նման դեպքերում դատական վճիռը ելնում էր ոչ թե արդարության սկզբունքից, այլ տիրակալի տրամադրությունից ու կամքից, նրա ընչաքաղցության աստիճանից։

Վրաստանի Ռուսաստանին միացումից հետո, նրա կազմի մեջ մտնող Բորչալուի, Ղազախի, Փամբակի, Շամշադինի, ինչպես նաև 1805 թ. գրավված Շորագյալի տուլթանությունները վերանվանվեցին թաթարական ուեմասեր։ Սրանք թաթարական անունն ստացան այն պատճառով, որ դեռևս վրացական թագավորների ժամանակ այս շրջանների կառավարումը հանձնված էր ադրբեջանական ցեղապետերին, որոնք դրա դիմաց պարտավոր էին զինվորական ծառայություն մատուցել վրացական արքունիքին։ Հետագայում այս շրջանների կառավարումը հանձնվում էր վրաց իշխաններից մոուրավներին՝ գավառապետերին։

---

2 См. *П. Огородников*, На пути в Персию и Прикаспийские провинции ее, СПб., 1878, стр. 194.

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1805 թ. Ռուսաստանին միացված Ղարաբաղի խանության մեջ պահպանվեց խանական վարչաձևը, դրանով իսկ վերջնականապես խորտակվեցին Ղարաբաղի մելիքների հույսերը, որ ցարական կառավարության օգնությամբ կվերստանան իրենց երբեմնի տիրույթները և կվերականգնեն վաղեմի իրավունքները։ Այստեղ ևս, ինչպես և մնացած բոլոր խանություններում, խանը կազմում էր դիվան կամ խորհուրդ, որի մեջ մտնում էին վեզիրը, սարքյարալին (գլխավորում էր ֆինանսական վարչությունը), էշիգ-աղասին (վարում էր խանի անձնական տնտեսությունը), ամիրախոռը (գլխավոր ախոռապանը), սանդուխտար-աղասին, ամբարդար-աղասին և ուրիշներ։ Դիվանը խորհրդակցական ձայնի իրավունք ուներ, վճռական խոսքը պատկանում էր խանին։ 1822 թ. Ղարաբաղում ևս ստեղծվեց ռուսական վարչակարգ։

Հարկ է նշել, որ հայ ազգաբնակչության մի զգալի հատվածը ապրում էր Անդրկովկասի տարբեր մարզերում։ Հայերը բնակվում էին Վրաստանում, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի խանություններում և այլուր։ Այսպես, ըստ 1818 թ. կազմված էջմիածնական նվիրակական մի ցուցակի, հայերը բնակվել են ոչ միայն Շամախի քաղաքում, այլև շրջակա 38 գյուղերում։ Հայ ազգաբնակչություն կար Նուխի քաղաքում և մերձակա 47 գյուղերում։ Առանձնապես մեծ էր հայերի թիվը Վրաստանում։ Ներսես Աշտարակեցու Վրաստանի թեմակալության տարիներին (1814—1828 թթ.) վերաբերող մի վավերագրից պարզվում է, որ Թիֆլիսում եղել է 2951 հայ ընտանիք (14532 հոգի), Թիֆլիսի գավառում՝ 704 ընտանիք (4432 հոգի), Թելավում և գավառում՝ 990 ընտանիք (5233 հոգի), Սղնախի, Գորու, Դուշեթի գավառներում՝ 3467 ընտանիք (21316 հոգի), Իմերեթիայում՝ 149 ընտանիք (895 հոգի), իսկ Ելիզավետպոլում և գավառում՝ 2044 ընտանիք (9884 հոգի)[3]։ Վրաստանում և Ելիզավետպոլում հայերը կազմում էին քրիստոնյա բնակչության շուրջ մեկ երրորդը։ Գյանջայի խանության Ռուսաստանին միացվելուց հետո (1804), երբ մահմեդական բնակչության մի մասը խույս տվեց Պարսկաստան, Ելիզավետպոլում և շրջակայքում ստվարացավ հայ ազգաբնակչությունը՝ ի հաշիվ նաև Երևանի խանության սահմաններից տարագրված հայ գաղթվածների։ 1804—1807 թթ. Կարսից մեծ քանակությամբ հայեր տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Փամբակաձորում։ Այստեղ էին բնակվում նաև Աշտարակից, Մուղնուց, Օշականից, Բյուրականից և Վաղարշապատից գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ։

2. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարսկական տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանում տիրապետող հասարակական-տնտեսական ֆորմացիան շարունակում էր մնալ ֆեոդալիզմը՝ արևելյան ավատատիրությանը բնորոշ գծերով։ Օտարերկրյա նվաճողները բերել էին իրենց զարգացման աստիճանին հատուկ արտադրա-

3 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 139—140, Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 37, վավ. 360։

հարաբերություններ։ Մասամբ միահյուսվելով նվաճված երկրի հասարակական-տնտեսական կյանքի զարգացման աստիճանին հատուկ արտադրական հարաբերություններին, դրանք ստեղծել էին բավական բարդ ու յուրատեսակ վիճակ։

Ինչպես Պարսկաստանում, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանում հողային հարաբերությունների բնագավառում ղեկավարվում էին շարիաթի սկզբունքներով, այսինքն գերիշխում էր հողի պետական սեփականությունը, այլ կերպ ասած, հողը համարվում էր երկրի վրա այլահի փոխանորդի՝ շահի սեփականությունը։ Շարիաթի սկզբունքների համար ամուր հենարան էին ծառայում արհեստագործության և գյուղատնտեսական արտադրության միասնության վրա խարսխված համայնքները։

XIX դարի առաջին տասնամյակներում Արևելյան Հայաստանում գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը՝ պետական, մուլքադարական և թիուլդարական։ Հողատիրության ամենատարածված ձևը պետականն էր։

Պետական հողեր համարվում էին բոլոր այն գյուղերի հողատարածությունները, որոնք շահի կողմից տրամադրված էին խաներին։ Երևանի խանության մեջ, օրինակ, տասնչորս մահալներում արքունական կամ պետական գյուղերը կազմել են ամբողջ գյուղերի 70 տոկոսը[4]։

Պետական գյուղերից ստացվող հարկ-ռենտան ամբողջովին մտնում էր խանի գանձարանը և ծառայում էր ինչպես խանական արքունիքի, այնպես էլ ռազմական ու պետական այլ ծախսեր հոգալու համար։ Որոշ գյուղերի գյուղացիներ պարտավոր էին մշակել արքունական այգիները և այլն։ Պետական սեփականության էին համարվում նաև մի շարք ջրաղացներ, ջրանցքներ, իջևանատներ, շուկաներ՝ իրենց խանութներով ու կրպակներով և այլն։

Բոլոր գյուղերը բաժանվում էին երեք կարգի՝ բարհրաջյարական, յարիքջյարական և ռանչպարական։ Բարհրաջյարական էին համարվում բնակլիմայական լավ պայմաններում գտնվող գյուղերը, որոնք ունեին համեմատաբար զարգացած տնտեսություն, մեծաքանակ անասուններ և կարող էին ավելի շատ հարկ վճարել, քան այլ, համեմատաբար անբարենպաստ պայմաններում գտնվող գյուղերը։

Յարիքջյարական կամ վիճարարական գյուղերի բնակչությունը կազմված էր տարբեր վայրերից բերված գաղթականներից, որոնց սարդարը արտադրամիջոցներ էր տրամադրում և դրանց դիմաց վերցնում բերքի կեսը։

Ռանչպարական գյուղերի բնակչությունը լիովին ընչազուրկ էր, չուներ հող և արտադրամիջոցներ։ Գյուղացիները հողը մշակում էին՝ բերքի 2/3-ը հողատիրոջն հանձնելու պայմանով։ Սակայն նման գյուղերը Երևանի խանությունում միայն 6-ն էին։

Հողատիրության մուլքադարական ձևի էությունը հետևյալն էր. մուլքադարներն իրավունք ունեին գյուղից կամ նրա մի մասից գանձել հարկ-ռենտայի այն մասը, որը կոչվում էր մուլք և կազմում էր բերքի 1/10-ը։ Հարկ-ռենտայի իրենց հասանելիք մասը մուլքադարները ոչ թե անձամբ էին գանձում,

---

4 Ս. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1801—1917 թթ., Երևան, 1959, էջ 37։

այլ ստանում էին պետական հարկահավաքների միջոցով։ Մուլքադարական իրավունքը փոխանցվում էր ժառանգաբար։ Մուլքադարական իրավունքի հաստատման համար բավական էր ունենալ ժառանգման, գնման ու վաճառքի, նվիրման ու փոխանակման և նման գործարքները վկայող փաստաթղթեր։ Մուլքի տրոհվելու դեպքում այն բաժանվում էր մինչև 6 հավասար մասերի (դանգերի), այնպես, որ հնարավոր լիներ այն բաժանել ժառանգորդների կամ գնորդների միջև։

Արևելյան Հայաստանի գյուղերի ընդհանուր թվաքանակի 16 տոկոսը մուլքադարական էր, իսկ 3 տոկոսը՝ պետական-մուլքադարական։ Մուլքադարական գյուղերն էլ պետական գյուղերի նման բաժանվում էին երեք կարգի՝ բահրաքյարական, յարիքյարական և ռանչպարական։ Մուլքադարական կամ պետական-մուլքադարական գյուղեր կային տաս մահալներում, ընդ որում Կրխբուլաղի մահալում ընդամենը երկու գյուղ, որոնցից Ծլղովանը պետական-մուլքադարական էր, իսկ Զագը՝ մուլքադարական, Սեդդի-Ախտախլի մահալում նույնպես երկու գյուղ՝ Սերգեուլը և Ուշին էին մուլքադարական։ Մուլքադարությունը համեմատաբար տարածված էր Սուրմալուի մահալում, որտեղ 58 շեն գյուղերից 20-ը, Շարուրում՝ 8 գյուղերից 7-ը, Գառնիբասարում՝ 47 գյուղերից 25-ը և Զանգիբասարում՝ 25 գյուղերից 17-ը մուլքադարական էին։

Պատահում էին դեպքեր, երբ մուլքադարները իրենց հասանելիք մուլքը կապալով էին տալիս։ Այսպես, կապալով էին տրվում Զանգիբասարի մահալի Աղջաղշլաղ և Դամիրչի-ղորլի գյուղերի, Սարդարապատի մահալի Կարխոմն գյուղի, Շարուրի Աքսիքենդ, Խաուշան և Կորչիլի գյուղերի, Սուրմալուի Զուլֆաքար, Ամարաթ գյուղերի մուլքերը։

Մուլքադարական որոշ գյուղեր, որտեղ բնակություն էին հաստատել քոչվոր ցեղախմբեր, որպես հարկ վճարում էին հասույթի 7/30 մասը, ինչպես Սաաթլուի մահալի 7 գյուղերը, Գառնիբասարի մահալի Մեհրաբլի, Զոհրաբլի, Շաֆիաբադ և Կիր-Բուզավանդ գյուղերը։

Մուլքադարներից շատերն ունեին իրենց սեփական տնտեսությունը՝ այգիներ, վարելահողեր և այլն, որոնք մշակում էին անձամբ կամ վարձու աշխատանքի միջոցով։ Միևնույն գյուղում կարող էին լինել մի քանի մուլքադարներ։ Այդ դեպքում մուլքը բաժանվում էր նրանց միջև։ Որպես որևէ գյուղի մուլքի ամբողջություն վերցվում էր 6 դանգը։ Մի գյուղում մի քանի մուլքադարների առկայության դեպքում 6 դանգ մուլքը բաժանվում էր նրանց միջև, բայց ոչ հավասարաչափ։ Մի մուլքադարի կարող էր պատկանել չորս դանգ, մյուսին՝ երկուսը և այլն։

Հողատիրության մյուս ձևը թիուլդարականն էր։ Թիուլները շնորհվում էին առանձին անհատների՝ նրանց պետությանը մատուցած ծառայության դիմաց, հարկ-rենտայից ժամանակավորապես կամ ցմահ օգտվելու իրավունքով։ Թիուլը չէր թույլատրվում ոչ գրավ դնել և ոչ էլ վաճառել, մինչդեռ մուլքի վաճառքը ազատ կերպով թույլատրվում էր։ Թիուլային գյուղերը հազվադեպ էին ժառանգական ավատներ դառնում, այն էլ ամենից հաճախ այն դեպքերում, երբ գտնվում էին տեղաբնակ հայ ազնվականության ձեռքում։ Թիուլային գյուղերը կազմում էին գյուղերի ընդհանուր քանակի տասը տոկոսը։ Սրանք հիմնականում գտնվում էին Կրխբուլաղի, Կարբիբասարի, Սուրմալուի և Գառ-

Նիքասարի՝ մահալներում։ Հայ ազնվականներից թիուլային գյուղեր ունեին Մելիք-Աղամալյանները։

XIX դարի քսանական թվականներին Աբրահամ Մելիք-Աղամալյանի որդի Մելիք-Սահակը իր տոհմին ժառանգաբար շնորհված թիուլային իրավունքով տիրում էր Կրխբուլաղի մահալի Արինջ, Էլար, Արզաքյան, Դալուլար, Գյումուշ, Բեդկիս գյուղերին։ Դրանցից միայն Էլարի կեսն էր նույն թիուլային տիրապետման իրավունքով պատկանում Աղա-Բաբա սուլթանին։ Լինում էին դեպքեր, երբ միևնույն գյուղը կարող էր կիսվել երկու թիուլդարի միջև, որոնք հավասարաչափ իրար միջև բաժանում էին հարկ-ռենտան։

Արևելյան Հայաստանի հողատիրական սիստեմի մեջ յուրահատուկ տեղ էր գրավում էջմիածնի վանական հողատիրությունը։ Մուլքադարական և թիուլային հիմունքներով էջմիածնի վանքը ժառանգաբար տիրում էր մի շարք գյուղերի, թեպետ և ամեն մի նոր շահ պետք է հատուկ հրովարտակով՝ ռաղամով, հաստատեր այդ իրավունքը, դրա դիմաց համապատասխան վարձահատուցում ստանալով ընծայատվության կամ, ավելի ճիշտ, կաշառատվության ձևով։

Էջմիածնի համար կարևոր նշանակություն ունեին այն գյուղերի բնակիչները, որոնք պարսից շահերի հրովարտակներով նրան էին հանձնված իբրև «ռայա և ամալա», այսինքն որպես հպատակներ և ծառաներ։ Այստեղ պետությանը բոլոր հասույթները պարսից շահերի հրովարտակներով հատկացվել են էջմիածնին և նրա հոգևորականներին, թեև երբեմն պարսկական շահերի վերանալու պահերին հափշտակվում էին ժամիշխանների ձեռքով։

1810 թ., նիսան արքեպիսկոպոսի կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ, Աստրպատականի կառավարիչ Աբաս Միրզան հատուկ ռաղամ հրապարակեց, որի համաձայն հաստատվում էին էջմիածնին տրված նախկին հրովարտակները ու արտոնությունները և շնորհվում նորերը։

Սակայն միշտ չէ, որ Աբաս Միրզայի այդ հրամանագիրն ուժի մեջ էր մնում։ Իրենց իսկ կողմից տրված արտոնությունների ու առանձնաշնորհումների խախտումներ էին թույլ տալիս խանը, նրա միրզաները ու մյուս պաշտոնյաները ամեն քայլափոխում։ Այսպես, միայն 1814 թ., շնորհիվ Ներսես Աշտարակեցու ջանքերի, հաջողվեց Աբաս Միրզայից ռաղամ ստանալ՝ Աշտարակ գյուղը էջմիածնին վերադարձնելու մասին։ Սակայն վերադարձնելու համար որպես պարգև Հյուսեին խանը պահանջեց հազար թուման։ Այդ առթիվ 1827 թ. Ներսես Աշտարակեցին գրում էր... «...մինչև ցայսօր ոչ աթոռը կարողացավ վճարել նրան այն գումարը և ոչ էլ սարդարը կամեցավ աթոռին հանձնել այն գյուղը. և ահա 13 տարի է, ինչ էջմիածնի աթոռը վայելում է ազքատության պատվելագույն հրովարտակը, իսկ սարդարը՝ ամբողջ գյուղը և դրանից ստացվող արդյունքները»[5]։

Չնայած Աբաս Միրզայի 1810 թ. հրովարտակի համաձայն էջմիածնի բոլոր գյուղերը և կալվածքները ազատվում էին հարկերից, սարդարը նախկին

---

5 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան» (այսուհետև՝ Մատենադարան), Կաթ. դիվան, թղթ. 45, վավ. 142բ։

սովորությամբ հարկ էր պահանջում մաղթա անվամբ՝ 400 թուման, իսկ մյուս գյուղերի բնակիչներից նույնպես 400 թուманի չափով հարկ վերցնում։

Բացի «մշքատու գեղօրայքից» էջմիածնի վանքն ուներ նաև «սեփական հողեր», որոնց մեծ մասը կենտրոնացած էր Վաղարշապատ գյուղում։ Այդ հողերում տարեկան միջին հաշվով ցանվում էր 400 սոմար (սոմարը հավասար էր 3 փթի) ցորեն, 100 սոմար գարի, 80 սոմար կտավատ, 4 սոմար քունջութ և այլն[6]։ Աշխատող ձեռքերի պակասը հաճախ էր վանքին ստիպում իր հողերը կիսարարության հիմունքներով մշակության տալ գյուղացիներին։ Այսպես, Հաջիլար գյուղի գյուղացիները էջմիածնի հանդում ցանում էին բամբակ, որից վանքը մոտավորապես 50 լիտր (1 լիտրը հավասար էր 0,3 փթի) բամբակ էր ստանում որպես վարձատրություն։ Հողերից ու այգիներից բացի, զանազան վայրերում էջմիածինն ուներ 14 ջրաղաց, մեկ բրնձահան, երեք դինգ[7]։ Փոքր չէր նաև բեռնակիր և կաթնատու անասունների թիվը։ 1813 թ. էջմիածինն ունեցել է 39 մխաքան (եպիսկոպոս և վարդապետ), 31 սարկավագ և դպիր, դպրատան 33 սան, 24 հրացանակիրներ (թվանքչիներ) և զանազան այլ ծառայողներ ու պաշտոնյաներ, որոնք կերակրվում էին վանքի սեղանից։ Դրանց թոլորի թիվը հավասար էր շուրջ 300 հոգու։ Նրանք ոչ միայն կերակրվում էին վանքի հաշվին, այլև դրամական վարձատրություն էին ստանում։

Վանական տնտեսությունը վարելու, հողը և այգիները մշակելու համար էջմիածինը կիրառում էր վարձու աշխատանք։ Վարձու բանվորները կոչվում էին մշակներ. դրանց սովորաբար վարձում էին էջմիածնապատկան գյուղացիների թվից, ինչպես բուն Վաղարշապատում, այնպես էլ Օշականում և Աշտարակում։

Տնտեսությունը ըստ ճյուղերի վարելու համար կաթողիկոսը նշանակում էր զանազան պաշտոնյաներ։ Այսպես, վարդապետներից մեկը նշանակվում էր տնտես, որը վարում էր ընդհանուր գործերը։ Բացի այդ նշանակվում էին նաև գործակալներ, որոնցից մեկը հետևում էր մշակներ վարձելու գործին և այգիների ու հողատարածությունների մշակման աշխատանքներին, իսկ մյուսները՝ գյուղերից պետք է հավաքեին հարկերը և տեղափոխեին էջմիածին։

Գյուղերի կառավարման համար կաթողիկոսարանը նշանակում էր դարուղա, որը և պետք է հետևեր Վաղարշապատի շուկային, չափ ու կշռին և տանուտերերի միջոցով հավաքեր տուրքերը։ Ինչ վերաբերում է ջրաղացներին, ապա դրանք մեծ մասամբ կապալով էին տրվում զանազան մարդկանց, որի դիմաց վանքը ստանում էր դրամական հատուցում։

Էջմիածնի եկամուտների բազմապատկման համար նշանակալից աղբյուր էր նվիրակությունը։ Նվիրակները կաթողիկոսի կողմից առաքվում էին աշխարհասփյուռ հայ զանգվածների մոտ նպաստ հավաքելու՝ օգուտ էջմիածնի։ Նվիրակներն իրենց նվիրակության վայրերից երեք տարին մեկ անգամ յուրաքանչյուր շնչից հավաքում էին որոշակի գումար։ Լինում էին նաև տարբեր

---

6 Նույն տեղում, թղթ. 21, վավ. 117։

7 *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1952, էջ 680—681։

յնության ընծայաբերություններ։ Դրանցից էին՝ քառասնից, հիշատակի, խոստմունք, հոգեբաժին, խաչհամբույր, աջահամբույր, մատաղ, գավազանապատուհ, փոքրավորեք, ժամուց, պաշտոնեից անուններով նվիրատվություններ, որոնց մի փոքր մասը (գավազանապատուհ, փոքրավորեք, ժամուց) նախատեսված էր նվիրակի և նրա սպասավորների համար, իսկ մնացյալը՝ մայր աթոռի։

Նվիրակները էջմիածնի, աշխարհասփյուռ հայ զանգվածների և անգամ օտար պետությունների միջև մի տեսակ հասարակական և քաղաքական հարաբերությունները շաղկապող օղակ էին։ Նրանք հարուստ տեղեկություններ էին հաղորդում այս կամ այն երկրում ծվարած հայ ազգաբնակչության կացության մասին, նրանց կապում էին էջմիածնի հետ, կենդանի էին պահում ազգային ավանդությունները, պայքարում էին կրոնափոխության փորձերի դեմ և շատ դեպքերում ջանքեր թափում թուլացնելու հալածանքներն ու ճնշումները հայերի նկատմամբ, հատկապես Արևմտյան Հայաստանում։

Նվիրակներից բացի կային նաև նպաստահավաքներ կամ իմդադիներ, որոնց պարտականությունն էր քնամթերքով նպաստներ հավաքել հօգուտ էջմիածնի։ Սրանք հատկապես ուղարկվում էին Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի ու Արևմտյան Հայաստանի սահմանամերձ շրջանները, որտեղից դյուրին էր անասուններ, ցորեն, գարի, աղ, յուղ և այլ մթերքներ հավաքելն ու տեղափոխելը։

Նվիրակության ինստիտուտի հետ սերտորեն առնչվում էին էջմիածնի առևտրա-բանկային գործառնությունները։ Նվիրակների հավաքած դրամական եկամուտների հիման վրա էջմիածինը կատուցում էր իր առևտրա-բանկային գործարքները։ Այդ դրամարները, որոնք հիմնականում հավաքվում էին հայկական գաղթավայրերից և Արևմտյան Հայաստանի հայկական թեմերից, նվիրակները ստացականով հանձնում էին, այսպես կոչված, «վեքիլներին»՝ առևտրական աշխարհիկ գործակալներին ի պահ։ Վերջիններս շրջանառության մեջ դնելով դրանք, ստացված շահույթը ուղարկում էին էջմիածին։

Վեքիլները սովորաբար կարգվում էին հարուստ վաճառականների թվից, որոնց հարստությունը և գրաված դիրքը կասկած չէին հարուցում։ Այսպես, Բայազետում գործակալ էր նշանակված Հակոբ աղա Արծրունին, Երևանում՝ աղա Խաչատուրը, Կարինում՝ աղա Կետիկյանը և այլն։ Սրանք բոլորն էլ խոշոր վաճառականներ էին և նրանց ապրանքաշրջանառությունը մեծ գումարների էր հասնում։

Էջմիածինը հասույթներ էր ստանում նաև հարևան երկրներում ունեցած իր կալվածքներից ու մուլքերից, որոնք որպես հոգեբաժին նրան էին կտակում հավատացյալները։ Էջմիածինը բավական ընդարձակ կալվածներ և մուլքեր ուներ Վրաստանում, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մեջ մտնող այլևայլ գավառներում։

Վրաստանում էջմիածնի վանական վիճակին պատկանող ազգաբնակչությունը կազմում էր 2646 ծուխ, երկու սեռի 15607 շնչով, որոնցից 145 ծուխ, ճորտեր էին։ Վրաստանում ունեցած իր բոլոր շարժական և անշարժ կալքե-

րից էջմիածինն ստանում էր մոտավորապես 148 ռուբլի արծաթ, տասնմեկ փութ մոմ[8]։

Այս ամենից բացի, էջմիածինն իր վիճակների բնակչությունից ստանում էր նաև զանազան «կամավոր» տուրքեր, որոնք տարբեր անուններ ունեին՝ սրբադրամ, աթոռահաս, հոգեբաժին, պտղի և այլն։

Արևելյան Հայաստանում սարդարական կառավարչության վերջին տարիներին էջմիածնի և հայկական մյուս վանքերի տնտեսական վիճակը գնում էր դեպի քայքայում՝ հետզհետե ուժեղացող բռնությունների և կեղեքումների հետևանքով։

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որի զարգացմանն արգելակում էին հետամնաց ֆեոդալական հարաբերությունները, աշխատանքի նախնական գործիքները, հողի մշակման հնամենի եղանակը։ Տարածված էր հողի մշակման եռադաշտային սիստեմը, որը դեռ ոչ բոլոր վայրերում էր կիրառվում։ Արարատյան դաշտում, որտեղ հողը բերրի էր, կիրառվում էր ցանքատեսակների փոփոխման եղանակը։

Գյուղատնտեսական արտադրության հիմնական գործիքը, որ օգտագործվում էր հողը վարելու համար, արորն էր։ Միայն խոշոր և ունևոր տնտեսություններն էին ի վիճակի գութան օգտագործել։

Ցանելու և հնձի գործիքները նույնքան նախնական էին։ Հնձի ժամանակ օգտագործում էին գերանդի և մանգաղ։ Հացահատիկը կալսելու համար օգտագործվում էր կամ, իսկ հատիկը դարմանից առանձնացնում էին փայտե լայն թիակների միջոցով՝ դարմանը քամուն տալով։

Այս պայմաններում հնարավոր չէր բարձր բերք ստանալ։ Հացահատիկային կուլտուրաների՝ հատկապես ցորենի և գարու բերքատվությունը հիմնականում կազմել է մեկին երեք-չորս, հազվադեպ մոտեցել է հինգի, բրնձինը՝ մեկին հինգ կամ վեց, կորեկինը՝ մեկին վեց-յոթ[9]։

Լեռնային շրջաններում, որտեղ գրեթե արհեստական ոռոգում չէր կատարվում, բերքն ամբողջովին կախված էր բնության ողորմածությունից։ Երաշտի, կարկուտի, մորեխի և բազմաթիվ այլ տարերային աղետների հանդեպ անզոր էր հողագործը։ Գյուղատնտեսության անկումը պայմանավորված էր նաև երկրի քաղաքական կացությամբ։ Զանգվածային արտագաղթերի հետևանքով երկրի բնակչության մի զգալի մասը թողնում էր հայրենի բնակավայրերը և անցնում հարևան երկրները։ Այնուհետև, Արևելյան Հայաստանում հաճախակի տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով մեծամեծ ավերածություններ էին լինում, բազմաթիվ շեն գյուղեր, այգիներ ու անդաստաններ ոչնչանում էին։ Խիստ տուժել էին Վաղարշապատը, Աշտարակը, Եղվարդը, Մաստարան, Թալինը, Ջաֆարաբադը, Ջարբախը և մյուս, համեմատաբար

8 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 39, վավ. 335։

9 Նույն տեղում, թղթ. 31, վավ. 187։

մեծ գյուղերը, իսկ բազմաթիվ մեծ ու փոքր գյուղեր իսպառ ջնջվել էին երկրի երեսից։ Քաղաքական տևական երերուն կացությունը Արևելյան Հայաստանում ազգաբնակչությանը շունչ քաշելու և քայքայված տնտեսության վերաշինությանը ձեռնարկելու հնարավորություն չէր տալիս։

«...Շրջապատի մեռած պատկերը ավելացնում էր մեր այն տպավորությունը, թե մենք մի անմարդաբնակ ամայության մեջ ենք գտնվում։ Երկրի ամեն կողմը ցրված նախկին բազմամարդ բնակչության անբնակ հետքերը՝ համեմատելով ամեն տեղի ներկա բացարձակ ամայության հետ, ես զգում էի, թե ամենամռայլ ճանապարհն էր այս իմ անցած բոլոր մյուս տեղերից։ ...Այդ ամայությունները պիտի օգտագործվեն մարդկանց կողմից, մինչ սրանցից մարդիկ վտարված են, բազմամարդ երկիրը վերածելով անապատի։ Գրեթե իմ անցած ամբողջ ճանապարհը այս վշտաոիթ նկարագիրն ուներ. փաստերը սփռված էին ամենուրեք, թե այստեղ ապրում էր երբեմն մի բարգավաճ ժողովուրդ, հիմա սրբված երկրի երեսից»[10],— գրում էր այդ ժամանակաշրջանում Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Քեր Փորթերը։

Գյուղատնտեսության քայքայված վիճակը, աշխատող ձեռքերի պակասը անհանգստացնում էր խանական վարչությանը, քանի որ բերքատվության անկման և ցանքատարածությունների կրճատման պատճառով նվազում էին պետական եկամուտները։ Հատկապես ծանր էր Սարդարապատի մահալի վիճակը, որտեղ բնակչությունը սակավ էր։ Այդ նկատառումներով էր, որ 1821 թ. պարսկա-օսմանյան պատերազմի ժամանակ մեծ քանակությամբ հայեր Բայազետից ու Ալաշկերտից բռնի կերպով քշվեցին Երևանի խանություն և բնակեցվեցին հիշյալ մահալում։ Նույնը կատարվեց նաև Կարբիբասարի մահալի նղվարդ գյուղում, որն հռչակված էր իր լավորակ ցորենով։ Սակայն այս և նման միջոցները չէին կարող որևէ չափով փոխել դրությունը, քանի որ տիրապետող ֆեոդալական հարաբերությունները, բռնապետական վարչակարգը միայն խոչընդոտում էին գյուղատնտեսության վերելքին։

Արևելյան Հայաստանի գավառներից գյուղատնտեսական արտադրությունը համեմատաբար զարգացած վիճակում էր գտնվում Արարատյան դաշտում, որտեղ հնուց ի վեր մշակվում էին գյուղատնտեսական բազմաթիվ արժեքավոր կուլտուրաներ։

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից էին հացահատիկային կուլտուրաները (ցորեն, գարի, կորեկ)։ XIX դարի առաջին երեսնամյակում Երևանի խանությունում միջին հաշվով արտադրվել է ցորեն՝ 75000 խալվար, գարի՝ 30000 խալվար։ Հացահատիկի արտադրության այս քանակությունը միշտ չէ, որ բավարարում էր ազգաբնակչության պահանջները, ուստի շատ հաճախ ցորեն և գարի էր ներմուծվում հարևան Բայազետի և Կարսի փաշայություններից։

Տեխնիկական կուլտուրաներից առաջնակարգ նշանակություն ուներ բամբակի մշակությունը։ Բամբակի տարեկան համախառն բերքը կազմում էր մոտավորապես 2500 խալվար (75000 փութ)։ Բամբակի մշակության հիմնական կենտրոններն էին Զանգիբասարի, Կարբիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի մահալները։ Այս մահալ-

10 Տես. Հակոբյան, Ուղեգրություններ (1800—1820), ԺԲ դար, հ. Զ, Երևան, 1934, էջ 751։

ներում բամբակն այնքան եկամտաբեր էր, որ բոլոր փոքր ի շատե խոշոր տնտեսությունները զբաղվում էին բամբակի մշակությամբ։ 1819 թ., օրինակ, Վաղարշապատ գյուղն հազիվ 200 տնտեսություն ուներ, որոնցից 160-ը զբաղվում էր բամբակի մշակությամբ։

Ինչպես բամբակի, այնպես էլ բրնձի վաճառքի գործում սարդարի յուրացրած մենաշնորհը մեծապես արգելակում էր այս կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակմանը և արտադրանքի աճին։ Գյուղացիներին թողնելով նրանց տնտեսական կարիքների համար անհրաժեշտ մինիմումը, իսկ հաճախ ավելի պակաս, Երևանի սարդարն իր իսկ սահմանած գներով գնում էր այդ մթերքների ողջ ավելցուկը և վերավաճառում դրացի երկրներում։ Նման պարագան գյուղացիներին զրկում էր իրենց տնտեսությունը զարգացնելու շահագրգռվածությունից և իջեցնում այդ եկամտաբեր կուլտուրաների մշակության թափը։ Եթե գյուղացիները համարձակվում էին խախտել սահմանված կարգը, և իրենց բամբակը վաճառել այլ գնորդների, ապա խանի պաշտոնյաները դաժան դատաստան էին տեսնում նրանց հետ։

Համեմատաբար զարգացած վիճակում էր գտնվում այգեգործությունը՝ հատկապես խաղողագործությունը։ Երևանի խանությունում կար 3330 այգի, որից 1473-ը Երևան քաղաքում, Նախիջևանի խանությունում՝ 541 այգի, որից 184-ը Նախիջևանում, Օրդուբադի շրջանում՝ 1386 այգի, որից 473-ը Օրդուբադում։ Այդ 5257 այգիները զբաղեցնում էին 2352 3/4 խալվար[11] տարածություն և տարեկան, միջին հաշվով, տալիս էին 6228 խալվար 84 բաթման (բաթմանը հավասար էր 0,3 խալվարի) խաղող, 5808 խալվար 63 բաթման այլևայլ տեսակի մրգեր։ Այդ բերքի մեծ մասը՝ 5161 խալվար 84 բաթման խաղող և 5130 խալվար զանազան տեսակի մրգեր[12] բաժին էր ընկնում Երևանի խանությանը։ Իսկ Երևանի խանության սահմաններում ստացվող խաղողի և մյուս մրգերի համախառն բերքի ավելի քան կեսը տալիս էին Երևանի այգիները։ Պարզ է, որ քաղաքի բնակչության հիմնական զբաղմունքն այգեգործությունն էր, ընդ որում այգիներ ունեին նաև արհեստավորները և առևտրականները։

Խաղողի մշակությունը տնտեսական խոշոր նշանակություն ուներ գյուղացիների համար։ Խաղողից նրանք գինի և օղի էին ստանում ու վաճառքի հանում։ Ինչ վերաբերում է մյուս մրգերին, ապա դրանք չորացվում էին և արտահանվում հարևան երկրները, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այն շրջանները, որտեղ կլիմայական պայմանների բերումով հիշյալ կուլտուրաները չէին մշակվում։

Արևելյան Հայաստանում գյուղատնտեսական բավական տարածված կուլտուրաներից էր բրինձը։ Դրա մշակությամբ հիմնականում զբաղվում էր Ջանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Կարբիբասարի, Շարուրի, Սաաթլուի մահալների բնակչությունը։ Բրինձը նույնպես արտահանության կարևոր ապրանքներից էր։ Այդ պատճառով էլ սարդարական վարչության կողմից բրնձի, ինչպես և բամբակի վաճառքի նկատմամբ մենաշնորհ էր սահմանված։

---

11 Խալվարը նաև տարածության չափ էր և հավասար էր մոտավորապես 4 օրավար հողատարածության կամ 5000 քառակուսի սաժենի։

12 *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 471—472, 747—748։

Բրնձի վաճառքի մենաշնորհը խախտողները նույնպես ենթարկվում էին խիստ պատիժների և մեծամեծ տուգանքների։ Ծխախոտի մշակությունը ևս զգալի տեղ էր գրավում, մանավանդ Սուրմալուի և Զանգիբասարի մահալներում։

Գյուղատնտեսական մյուս կուլտուրաներից բավականաչափ տարածված էին հաճարը (Զանգիբասարի, Կարբիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի մահալներում), քունջութը (Կարբիբասարի, Սարդարապատի, Վեդիբասարի և Սուրմալուի մահալներում), կտավատը (Կրխբուլաղի, Զանգիբասարի, Գառնիբասարի, Սուրմալուի, Կարբիբասարի, Սարդարապատի մահալներում), ոսպը, սիսեռը, սոխը և այլն։

Հողագործության զարգացման համար բացառիկ կարևորություն ուներ արհեստական ոռոգումը։ Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում ոռոգման ջուրը նույնպիսի կենսական անհրաժեշտություն էր, ինչպես հողը։ Այդ իսկ պատճառով, խանական կառավարչությունը կարևոր խնդիր էր համարում նոր ջրանցքների կառուցումը և հների նորոգումը, մանավանդ, որ արհեստական ոռոգումից էր կախված բերքի քանակը, իսկ հարկ-ռենտան գանձվում էր ոչ թե ըստ մշակվող տարածությունների, այլ ստացված բերքի քանակի։

Ոռոգման ջրերը բաժանվում էին երկու կարգի՝ բնական և արհեստական, կամ ինչպես ժողովուրդն էր ասում, «հանած ջուր»։ Առաջին դեպքում խոսքը վերաբերում էր լճերի, գետերի, առուների, առվակների, աղբյուրների ջրերին, ինչպես նաև անձրևաջրերին և այլն։ «Հանած ջրերին» կարգին էին պատկանում արհեստական ջրամբարների՝ քյարեզների, ջրանցքների և ոռոգման այլ կառույցների միջոցով ստացվող ջրերը։

Ջրերի նման կարգորոշումը իրավական տեսակետից խիստ կարևոր նշանակություն ուներ։ Բնատուր ջուրը դիտվում էր իբրև աստծու պարգև ու, որպես այդպիսին, համարվում էր տվյալ գետի կամ լճի ջրով ոռոգվող տերիտորիայի ողջ բնակչության սեփականությունը։ Ինչ վերաբերում է «հանած ջրին», ապա այն, ընդհակառակը, կարող էր լինել ինչպես մեկ անձի, այնպես էլ քաղաքային կամ գյուղական համայնքի, որևէ հիմնարկության մասնավոր սեփականությունը։ Քյարեզների (ջրհորների) ջուրը կարող էր պատկանել այն անձանց կամ համայնքներին, որոնք իրենց միջոցներով փորել էին դրանք։ Ջրանցքներն ու առուները նույնպես կարող էին պատկանել ամբողջ համայնքների կամ համայնքների խմբի, ինչպես և առանձին անձնավորություններին։

Ցուրաքանչյուր համայնք, իրավական կամ ֆիզիկական անձ իրավունք ուներ բնատուր ջրից օգտվելու, եթե հողամաս ուներ այդ ջրով ոռոգվող տերիտորիայում։ Ջրօգտագործման իրավունքը ուղիղ համեմատական էր հողակտորի չափին։ Երևանի խանությունում այդ իրավունքը սահմանվում էր, ելնելով տվյալ շրջանի կամ համայնքի ծխերի թվից։

Ջրի նկատմամբ իրավունքը բացարձակ էր, անսահմանափակ, սրբազան ու նվիրական. այն նույնիսկ սահմանափակում էր հողատիրության իրավունքը։ Ոչ ոք, լիներ դա համայնք կամ մասնավոր անհատ, իրավունք չուներ կտրել ջրի ճանապարհը, իսկ ճանապարհ տալու համար իրավունք չուներ դրամական հատուցում պահանջել։ Որոշ դեպքերում, եթե հողակտորը, որտեղով անցնելու էր առուն կամ ջրանցքը, խիստ թանկ էր տիրոջ համար, նա

կարող էր ջրին շրջանցիկ ճանապարհ տալ, բայց մերժելու իրավունք չուներ[13]։ Քանի որ առուներն ու ջրանցքները ջուր էին մատակարարում համայնքի բոլոր անդամներին, ապա վերջիններս պարտավոր էին դրանց պահպանման համար աշխատանք կատարել ու միջոցներ տրամադրել։ Ջրանցքներ կառուցելիս կամ վերանորոգելիս կիրառվում էր կոռային աշխատանք, ընդ որում դրան մասնակցում էր տվյալ վայրի բնակչության մեծ մասը։

Ջրօգտագործումը կանոնավորելու համար նշանակվում էին հատուկ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին միրաբներ։ Նրանց հսկողության ներքո էին գտնվում ամբողջ մահալի ջրերը, նրանք պետք է հետևեին, որպեսզի գյուղական տարբեր համայնքների միջև ջուրը հնարավորին չափ հավասար բաժանվեր։ Ջրգողության, ջրի հերթի խախտումների դեմ միջոցներ պիտի ձեռնարկեին և առուների, ջրանցքների մաքրման, ջրօգտագործման վերաբերյալ ծագած զանազան վեճերը նույնպես պետք է լուծեին միրաբները։ Իսկ ոյղպիսի վեճերը երբեմն հասցնում էին նույնիսկ մարդասպանության։

Գյուղերում ջրաբաժանության գործը կարգավորում էին ջուվարները, որոնք ենթարկվում էին միրաբներին։ Ջուվարները պետք է հոգային ջրի պահպանման մասին, հատկապես նրա ակունքային մասում, հերթով բաժաներ ջուրն ու հսկեին հերթի պահպանումը։ Մեծ գյուղերում ջուվարներն ունեին օգնականներ, որոնք կոչվում էին կարաջուվարներ։ Միրաբների նման ջուվարներն էլ վարձատրություն ստանում էին բնակչությունից։

Ջրի քանակությունը չափելու գործող հիմնական միավորը բահն էր, այսինքն բահի ծավալով բաց թողնված ջրի քանակությունը, որով մեկ մարդ միաչնակ կարող էր ջրել որոշ հողատարածություն։

Արևելյան Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից էր անասնապահությունը։ Բարձրադիր լեռնային վայրերը շատ նպաստավոր էին անասնապահության զարգացման և հատկապես մանր եղջերավոր անասունների բուծման համար։ XIX դարի սկզբին անասնապահությունը զարգացավ առանձնապես ուժեղ թափով, ավելացավ անասունների գլխաքանակը, որովհետև Հյուսիսին Ղուլի խան սարդարը երկրի հյուսիսային լեռնային շրջաններում բնակեցրեց քոչվոր ադրբեջանական և քրդական անասնապահ բազմաթիվ ցեղեր, որոնք իրենց հետ բերեցին մեծ քվով անասուններ։

Մարգագետինները համարվում էին համայնական սեփականություն։ Ամռան ամիսներին անասունների հոտերը քշում էին դեպի Կրխբուլաղի, Գյոկչայի, Ապարանի, Դարաչիչագի, Թալինի, Սուրմալուի, Սեիդլի-Ախսախլիի, Դարաքենդ-Փարչենիսի, Դարալագյազի, Գառնիբասարի և Վեդիբասարի մահալների լեռնային արոտավայրերը։

Ցրտերն ընկնելուն պես անասուններն իջեցնում էին ձմեռանոցները։

Գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն որոշ քանակությամբ անասուններ էր պահում իր կարիքների համար՝ կաթ, պանիր, յուղ, մածուն և այլ կաթնամթերքներ պատրաստելու նպատակով։ Տնտեսություններն ունենում էին խոտհարքեր՝ ձմեռը անասուններին կերով ապահովելու համար։

---

13 «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, Тифлис, 1887, стр. 137—138.

Անասնապահությունը տալիս էր արհեստագործության համար անհրաժեշտ բուրդ, կաշի, մորթիներ, որոնց մի մասը մշակվում էր տնային պայմաններում, իսկ մյուս մասը՝ արհեստանոցներում։

* * *

Հնուց ի վեր Հայաստանում գյուղական հողերը իրավական տեսակետից գտնվում էին համայնքի տնօրինության ներքո։ Ցուրաքանչյուր գյուղական համայնք, որ կազմում էր առանձին տնտեսական և վարչական միավոր, պարբերական հողաբաժանումների միջոցով հողերը բաշխում էր իր անդամների միջև։

Համայնքի հիմնական միավորը՝ «երդը», «ծուխը», ընտանիքն էր։ Գյուղական գերդաստանները, ըստ իրենց թվաքանակի, բաժանվում էին հինգ կարգի՝ համփաների, երեք-պճեղների, կիսաննների, պճեղների և կես-պճեղների։ Համփաներն այն ընտանիքներն էին, որոնք բաղկացած էին 16 շնչից, երեք պճեղները՝ 12, կիսաննները, պճեղները և կես-պճեղները՝ համապատասխանաբար 8,4 և 2 շնչից։ Կես պճեղները օգտագործվում էին ոչ միայն երկու շունչ ունեցող ընտանիքներին հողաբաժին հատկացնելու համար, այլև միաժամանակ որպես հավասարեցնող միավոր և հավասարեցնող հողաբաժին։ Դա նշանակում էր, որ վեց, տասը, տասնչորս շնչից բաղկացած ընտանիքների հողաբաժիններին համապատասխանաբար միացվում էր նաև կես պճեղ։ Հողաբաժինների չափից էլ կախված էր ընտանիքի իրավական վիճակը գյուղում. մեծ հողաբաժիններ ունեցողները առավել հարուստ գյուղացիներն էին։

Իշխող համընդհանուր բնատնտեսության պայմաններում գյուղական համայնքն ինքնըստինքյան փակ տնտեսական միավոր էր, որը հիմնականում ինքն էր հոգում սեփական կարիքները։ Գյուղական համայնքի գլուխ կանգնած էին լինում տանուտերերը, անկախ այն բանից, թե նրանք ինչպես էին կոչվում՝ քյոխվա, քեդխուդա թե յուզբաշի։ Այս պաշտոնն ընտրովի էր, որը ձևական բնույթ ուներ, քանի որ այն մեծ մասամբ մնում էր միևնույն ընտանիքի անդամների ձեռքում։ Տանուտերերի հիմնական պարտականությունն էր ապահովել հարկերի հավաքումը գյուղում և լուծել մանր-մունր վեճերը։ Համայնքի ներսում գրեթե բոլոր հարցերը վճռվում էին սովորութային չգրված իրավունքի նորմերի համաձայն։

Սարդարը, միրբոլուքները և նրանց պաշտոնյաները գյուղական տանուտերերին էին դիմում իրենց տարբեր պահանջներով։ Տանուտերը պարտավոր էր հոգ տանել, որ համայնքի ներսում պահպանվեն խաղաղությունն ու հանգիստը, ժամանակին մուծվեն հարկերը։ Նա պետք է հոգար, որպեսզի տվյալ գյուղի մոտով անցնող ճանապարհները, ինչպես նաև կամուրջներն ու ջրանցքները բարեկարգ լինեն։ Նա պետք է ընդուներ, կերակրեր և անհրաժեշտ կենսամթերքներով բավարարեր խանական ծառաներին, որոնք հայտնվում էին գյուղում իրենց տերերի կարգադրությամբ։ Այդ պարտականությունները կատարելու գործում տանուտերերին օգնում էին տասնապետերը, վեքիլները և համայնքի այլ պաշտոնյաները։ Վերջիններս ամեն կերպ աշխատում էին պարհակները դնել չքավոր գյուղացիների ուսերին, նրանց հաշվին բավարարել խանական պաշտոնյաների պահանջները։ Համփաները մեծ մասամբ կարողանում

էին խուսափել համայնական ընդհանուր պարտավորությունները կատարելուց, մինչդեռ չքավոր գյուղացիությունը ենթարկվում էր ամեն տեսակ կամայականությունների։

Գյուղական համայնքն ուներ միջնորդ դատարան, որը կոչված էր «խաղաղ» ճանապարհով լուծել այնպիսի հարցեր, ինչպես ոռոգման ջրի հերթի խախտումը, ցանքսերի փչացումը, միջնակների շուրջ եղած վեճերը և այլն[14]։ Նման դեպքերում այն, որպես կանոն, կանգնում էր գյուղի ունևորների կողմը։

Նահապետական կացութաձևի պայմաններում համայնքի կառավարումը ամբողջովին կենտրոնացած էր համփայի խոշոր ընտանիքների գլխավորների ձեռքում։ Հիմնականում նրանք էին ընտրում տանուտերերին, միջնորդներին, դահբաշիներին և այլն։

Հողաբաժանման հիմքում ընկած էր համփա-չարեքային սիստեմը։ Հիշյալ հինգ հողաբաժիններից որևէ մեկին տիրելու հիմք տալիս էր համայնքի անդամի ընտանիքի առկա անդամների թիվը, շատ դեպքերում նաև տնտեսական կարողությունը։

Ոչ համփան և ոչ էլ մյուս կարգերը կայուն մեծություններ չէին։ Նրանց տնտեսության չափը կախված էր ոչ միայն առանձին գերդաստաններում առկա շնչերի քանակից, այլև բնակչության աճից, համայնքին պատկանող հողային ֆոնդի հարուստ կամ աղքատ լինելուց։

Բայց միշտ չէ, որ ծխերը կազմված էին լինում զույգ շնչերից։ Այն դեպքում, երբ շնչերի թիվը կենտ էր, հնարավոր չէր նրանց ապահովել հողով՝ ըստ համփա-չարեքային սիստեմի, քանի որ այդպիսի ընտանիքները կտուժեին և դրանով իսկ կխախտվեր հողի հավասարաչափ բաշխման սկզբունքը։ Հարցը լուծելու համար սովորութային օրենքը ստեղծել էր կես-պճեղի հետ միասին նաև կենտ թիվ ունեցող ընտանիքներին մեկ շունչ ավելացնելու սիստեմը։

Հողաբաժանման նման կարգը կարելի էր կիրառել այն համայնքներում, որոնք հող շատ ունեին և համայնքի անդամները կարող էին թույլ տալ նման շռայլություն։ Այլ էր դրությունը այն համայնքներում, որտեղ հողային ֆոնդը գրեթե սպառված էր։ Իսկ եթե որևէ մեկից հողը կտրում էին, ապա դա երկարատև վեճերի ու թշնամանքի պատճառ էր դառնում։ Նման դեպքերում փոքր, կենտ թվով շնչեր ունեցող ընտանիքները միավորվում էին, ստեղծում «ազատ ընկերակցություններ», որոնք կոչվում էին «հարաքաշություն» և համատեղ հողաբաժին էին ստանում։ Պահանջվում էր միայն, որ այդ հարաքաշությունները շնչերի թվով համապատասխանեին կամ համփայի, կամ երեք-չարեքի, կամ կիսանի, կամ չարեքի և կամ, հակառակ դեպքում, ունենային զույգ թվով շնչեր[15]։

Հարաքաշությունը նպաստում էր վերացնելու հողաբաժինների կոտորակումն ու շերտընդհիջությունը, որոնք, անշուշտ, բացասաբար էին անդրադառնում գյուղացիական տնտեսությունների նյութական դրության վրա։ Հարաքաշության շնորհիվ հնարավոր էր լինում փոքր ի շատե տանելի բերք ստա-

---

[14] *С. А. Егиазаров*, Исследования по истории учреждений в Закавказьи, т. I, Казань, 1889, стр. 87—88.

[15] «Свод матерналов...», т. I, стр. 22—23.

նալ, ինչ որ դժվար կլիներ մանր հողակտորների առկայության դեպքում։ Բայց հարաքաշությունը կիրառվում էր ոչ բոլոր վայրերում։

Պետք է նկատել, որ ոչ բոլոր հողերն էին ենթակա վերաբաժանման և վերաքաշխման։ Խաղողի և մրգի այգիները, տնամերձ հողակտորները, այսինքն բոլոր ցանկապատված հողամասերը գտնվում էին գյուղացիների սեփականության ներքո և վերաբաժանման ենթակա չէին։ Տնամերձ և ցանկապատված հողամասերը իրավական իմաստով լիովին գտնվում էին համայնքի առանձին անդամների տրամադրության ներքո։ Դրանք դիտվում էին իբրև տերերի սեփականություն, այդ իսկ պատճառով էլ կարող էին և վաճառվել, և գնվել, և գրավ դրվել, և փոխանակվել, և նվիրաբերվել, և որպես օժիտ տրվել, եթե գյուղացին մահից հետո արու ժառանգ չէր թողնում[16]։ Այդ իսկ պատճառով էլ հարթավայրերում, որտեղ արագ թափով տեղի էր ունենում արժեքավոր հողամասերի ցանկապատումը, համայնական հողատիրությունը աստիճանաբար իր տեղը սկսում էր զիջել մասնավոր հողատիրությանը՝ ժառանգական տիրապետության հիմունքներով։ Լեռնային շրջաններում և ձորահովիտներում համայնքի սեփականությունից դուրս էին համարվում նաև այնպիսի հողամասեր, ինչպես քարերից մաքրված խոպան և ազատ հողերը։

Թեպետ XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանում տակավին շարունակում էր պահպանվել գյուղական համայնքը, որը և տնօրինում էր իրեն պատկանող հողերը, բայց նրա մեջ արդեն նկատվում էին զգալի տեղաշարժեր։ Համփա ընտանիքները գյուղում կարողացել էին իրենց համար արտոնյալ վիճակ ստեղծել, իրենց ձեռքն առնել համայնքի գործերի տնօրինումը, պարհակների կատարումը փաթաթելով չունևոր գյուղացիների վզին, իրենց ասպահովելով լավագույն հողաբաժիններ։ Դաշտային շրջաններում համայնքային հողատարածություններն աստիճանաբար նվազում էին, ավելանում էր օտարված հողակտորների թիվը (Կարբիբասարի, Ջանգիբասարի, Գառնիբասարի, Սուրմալուի և այլ մահալներում)։

4. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում գյուղատնտեսությունից հետո զգալի դեր էր խաղում արհեստագործությունը, որով գլխավորապես զբաղվում էին քաղաքներում։ Սակայն գյուղերում էլ կային արհեստագործության առանձին ճյուղեր, որոնք կոչված էին բավարարելու տեղական կարիքները։

Արևելյան Հայաստանի արհեստագործության գլխավոր կենտրոնը Երևանն էր։ Արհեստագործությունը բավականաչափ զարգացած էր նաև Վաղարշապատում, որտեղ զանազան մասնագիտությունների տեր արհեստավորներ հոգում էին Էջմիածնի վանական խոշոր տնտեսության ամենատարբեր կարիքները։

Արևելյան Հայաստանում կային շուրջ հարյուր տեսակի արհեստներ, որոնք բավարարում էին բնակչության և խանական արքունիքի ամենատարբեր

16 Նույն տեղում, էջ 40—41։

պահանջները։ Դրանցից էին՝ մաշակարուհությունը, բրուտագործությունը, քարտաշությունը, կաշեգործությունը, դարբնությունը, ներկարարությունը, պղնձագործությունը, գինեգործությունը, վրանագործությունը, թաղիքագործությունը, դերձակությունը, մանածագործությունը, արծաթագործությունը, հյուսնությունը, թամբագործությունը, շերամապահությունը, գրարությունը և բազմաթիվ այլ արհեստներ։ Արհեստավորներ էին համարվում նաև բաղկալները, նպարավաճառները, բաղնիապանները, փերեզակները, երկաթավաճառները, զուռնաչիները, ոակրաբույժները, ալյուրավաճառները, հացագործները և ուրիշներ, որոնց զբաղմունքը կապված էր առևտրի հետ։

Արհեստավորների ընդհանուր թիվը Երևանի խանությունում դարասկզբին կազմում էր շուրջ 5000 մարդ, այսինքն մոտավորապես յուրաքանչյուր 20 բնակչից միջին հաշվով մեկը զբաղվում էր արհեստով։ Սա, իհարկե, բացատրվում է արհեստագործության ցածր արտադրողականությամբ, նրա տնայնագործական բնույթով։

XIX դարի սկզբներին Երևանում գործել են նաև մանուֆակտուրային տիպի մի շարք ձեռնարկություններ՝ «գործարաններ»։ Դրանք էին՝ ապակու, թղնդանոթաձուլական և վառոդի ձեռնարկությունները։

Ապակու «գործարանը» գտնվելիս է եղել մի կիսամութ խրճիթանման շինության մեջ, որտեղ ապակու զանգվածը ձուլվել է 25 փութ տարողությամբ մի մեծ տաշտում։ Ձուլման պրոցեսը տևել է հինգ օր, որի ընթացքում օրական 100-ից մինչև 200 կտոր յոթ տարբեր գույնի ապակիներ են ստացվել։ Արտադրանքը հիմնականում սպառվել է Երևանում[17]։

Թնդանոթաձուլական ձեռնարկության մասին հատ ու կենտ տեղեկություններ են պահպանվել, որոնք վկայում են, որ դա, ըստ երևույթին, եղել է մի սովորական զինագործական արհեստանոց, որտեղ Երևանի բերդի պաշտպանության համար փոքր քանակությամբ թնդանոթներ են պատրաստվել։ Այն իր գոյությունը դադարեցրել է 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ[18]։

Վառոդի «գործարանը» գտնվում էր բերդի մոտ և կառուցվել էր Կարապետ անունով մի հայ վարպետի ձեռքով[19]։ Նա էլ, նախորդ ղույգ ձեռնարկությունների նման, գործել է պարսկական տիրապետության վերջին ժամանակաշրջանում։

Չնայած հանքային հարուստ պաշարների առկայությանը, Արևելյան Հայաստանում XIX դարի սկզբին, խանական կառավարման ժամանակ, լեռնագործությունը ետ էր մնում։ Հանածոներից արդյունահանվում էր միայն աղ և փոքր քանակությամբ պղինձ։ Հայտնի էին ամբողջ Անդրկովկասում հրուչակված Կողբի, մասամբ նաև Նախիջևանի աղահանքերը։

Կողբի աղահանքերը գտնվում էին Արաքս գետի աջ ափին, Երևանից 40 կմ հեռավորության վրա։ Դեկաբրիստ Լաշինովը հետևյալ կերպ է նկարագրում

17 *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 858—859։

18 Հովհ. Հակոբյան, *Ուղեգրություններ*, հ. Զ, էջ 383։

19 «Ճանապարհորդութիւն Մ. Դ. Թաղիադեանց Վ. Ս. Սարկաւագի սր. էջմիածնի ի Հայս», հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 129, Ք. Հակոբյան, Երևանի պատմություն, հատ. III, Երևան, 1957, էջ 88—89։

Կողբը և Կողբի աղահանքերը. «Կողբ ավանը շրջապատող սարերը անսովոր ձև ունեն. սրածայր բլուրները, ժայռերի կտրված գագաթները, զառիթափ ձորակները, ալիքավոր տեղադրությունը, այգիները դեղեցիկ և բազմազան տեսարան են ներկայացնում։ Գյուղը թեև արտաքինից աղքատիկ տեսք ունի, բայց բնակիչները պետք է որ ունևոր լինեն, որովհետև այդ շրջանում է գտնվում ամբողջ երկրամասի հարստության անսպառ աղբյուրը՝ աղի սարերը։ Աղի հանույթը կատարվում է համարյա գետնի մակերեսի վրա։ Աղի հանույթից առաջացած և վերին շերտերը պահելու համար թողնված աղե սյուներով մեկը մյուսից անջատված հսկայական դահլիճները ծառայում են որպես աշխատանքի տեղ։ Կոտրատվում են համարյա երկու փթանոց աղաքարեր, որոնք և տեղափոխվում են Վրաստան ու հարևան բոլոր շրջանները»[20]։

Աղի հանույթով զբաղվում էին 173 ընտանիքից (1118 շունչ) բաղկացած Կողբ գյուղի բնակիչները՝ բոլորն էլ հայեր։ Յուրաքանչյուր տղամարդ կարող էր օրական մինչև 30 աղաքար հանել, ամեն մի քարը՝ մոտ երկու փութ ծանրությամբ։ Կողբում արտադրված աղը արտահանվում էր Վրաստան և Թուրքիայի սահմանամերձ փաշայություններ։

Մինչև 1807 թ., այսինքն Մամադ խանի իշխանության տարիներին, Կողբում աննշան էր աղի հանույթը։ Միայն հետագայում, Հյուսեին Ղուլի խանի իշխանության օրոք, հատուկ ուշադրություն է դարձվում աղի արդյունահանմանը։ Խանը աղահանքերի կառավարումը հանձնարարում է հատուկ պաշտոնյայի՝ սուլթանի, նրան օգնականներ է նշանակում երեք միրզաների, որոնցից մեկը պարսիկ, որը պետք է վարեր արտադրության հաշիվները, և երկուսը՝ հայ։

Հիշյալ ժամանակաշրջանում Կողբի աղահանքերը առաջվա 300 թումանի փոխարեն սկսեցին տարեկան 1400 թուման եկամուտ տալ։

Աղահատները ամեն մի բեռ (մեկ բեռը 4 քար էր, կամ 7—8 փութ) աղի համար ստանում էին 16 կոպեկ, մինչդեռ սարդարին մնում էր 80 կոպեկ, պահակային ծառայությանը՝ 4 կոպեկ, միրզաներին՝ 2 կոպեկ։ Այսպիսով, գնորդը մեկ բեռ աղի համար վճարում էր 1 ռուբլի 02 կոպեկ։

Եթե աղը փոխադրում էին սայլով (մեկ սայլը տանում էր 25—30 քար՝ մինչև 60 փութ կշռով), ապա աղ չարդողներն ստանում էին 1 ռուբլի, մինչդեռ սարդարը՝ 3 ռուբլի 20 կոպեկ, պահակային ծառայությունը՝ 20 կոպեկ, սուլթանը՝ 5 կոպեկ։ Այսպիսով, մեկ սայլ աղը գնորդին նստում էր 4 ռուբլի 45 կոպեկ։ Սակայն սա միայն տեղում։ Քարավան-բաշին էլ իր հերթին յուրաքանչյուր սայլից վերցնում էր 1 ռուբլի, Թալինի բերդում նստող սահմանակալ Կաֆար խանը պահակների համար վերցնում էր 20—40 կոպեկ, քարավան-բաշին էլ պարսկական աստիճանավորներին. մոտ մեկ ռուբլի փեշքեշ էր տալիս և այսպիսով մեկ բեռ աղը նստում էր շուրջ 8 ռուբլի։

Կողբի բնակիչներն իրավունք ունեին իրենց կարիքների համար ձրի օգտագործել աղը, բացի այդ, 200 բեռ էլ վաճառել լոկ իրենց օգտին։ Բնակավայրում կար 34 բինաշա, որոնցից յուրաքանչյուրը տարեկան վճարում էր

---

20 Մ. Գ. Ներսիսյան, *Դեկաբրիստները Հայաստանում*, Երևան, *1958*, էջ *364*, տե՛ս նաև նույնի «Из истории русско-армянских отношений», Ереван, 1956, стр. 370—371.

մոտ 8 թուման հարկ, իսկ բնամթերքով գանձվում էր ստացված բերքի 1/3 մասը։ Հարկագումարը մուծելու փոխարեն կողբեցիները հաճախ սարդարի համար աղ էին տեղափոխում Երևան։

Կողբի բնակիչները պարտավորություններ ունեին նաև էջմիածնի վանքի նկատմամբ։ Ըստ սովորության, յուրաքանչյուր տուն էջմիածնին տալիս էր երկու բեռ աղ։ Հարսանիքի կամ թաղման դեպքում տրվում էր երեք բեռ աղ[21]։ Այս նպատակով ամեն տարի կաթողիկոսի կողմից Կողբ էին ուղարկվում հատուկ նվիրակներ, որոնք հավաքում էին այդ «կամավոր» տուրքը և շատ դեպքերում իրենց իսկ՝ կողբեցիների փոխադրամիջոցներով հասցնում էջմիածնի վանքը։ Այսպիսով, էջմիածինը տարեկան ստանում էր 300—400 բեռ աղ, առանց որևէ վճարի։

Նախիջևանի աղահանքերը գտնվում էին խոզի մահալում։ Այդ աղահանքերին կցված էր, նույն հիմունքներով, ինչպես և Կողբը, Շեյխ-Մահմուդ գյուղը։ Նրա բնակիչները բաժանվում էին վեց հոգուց բաղկացած խմբերի և աղը հանում էին վառոդով պայթեցումներ կատարելով։

Նախիջևանի աղահանքերը նույնպես կապալով էին տրվում։ Մինչև XVIII դարի վերջերը կապալի համար տարեկան վճարում էին 30-ից մինչև 300 թուման։ XIX դարի սկզբին կապալավարձը բարձրացավ մինչև 700 թուման։ Աղահանքերը կապալով վերցնում էր մեծ մասամբ Շեյխ-Մահմուդ գյուղի մելիքը։ Աղ կտրողներն այստեղ հաճախ էին ընդվզում, խլում էին կապալառուի ձեռքից դրամը և այնքան աղ էին վերցնում իրենց համար, որքան կամենում էին[22]։

Արևելյան Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող շրջաններում արդյունահանվում էր նաև պղինձ։ Պղնձի հանքավայրերը գտնվում էին Դարալագյազում և Դարաշիշագում։ Սարդարական կառավարչության վերջին տարիներին Միխմանայում բնակություն էին հաստատել մի շարք հույն ընտանիքներ, որոնք և զբաղվում էին պղնձի արդյունահանությամբ։ Բայց ինչպես պղնձի հանույթը, այնպես էլ ստացված շահը այստեղ խիստ աննշան էր և առանձին զարգացում չունեցավ։

Դարասկզբին ցարական կառավարությունը միջոցներ ձեռք առավ երկրամասի բնական հարստությունների շահագործման ուղղությամբ։ Այդ նպատակով դեռևս 1799 թ. Անդրկովկաս ուղարկվեց լեռնային գործի լավագույն գիտակներից մեկը, բերգ-կոլեգիայի անդամ կոմս Ա. Ա. Մուսին-Պուշկինը, որը զգալի գործունեություն ծավալեց Ալավերդու պղնձահանքերի և Ախթալայի արծաթահանքերի ուսումնասիրության և մշակումը կազմակերպելու ուղղությամբ։ Լեռնային գործի հետագա կազմակերպման համար Մուսին-Պուշկինին տրամադրվեց 12 հազար ռուբլի տեղական եկամուտներից։ 1802 թ. հունիսի 2-ին նա պայմանագիր է կնքում Միխմանայի (Ալավերդու) նախկին կապալառուների և հանքագործ վարպետների հետ, որի համաձայն կարգավորվելու էին հարաբերությունները պետության և պղնձահանքերը մշակողների միջև։ Պետությունը պարտավորվում էր գյուղացիական կարգախմբեր տրամադրել փայ-

21 Մատենադարան, Կաթ. ձեռն., թղթ. 27, վավ. 132։
22 И. Шопен, նշվ. աշխ., էջ 834—837։

տածուխ պատրաստելու և հանքավայրերը տեղափոխելու համար։ 1803 թ. փետրվարի 3-ին պայմանագիր է կնքվում Լոռու կալվածատերերի՝ Արղության-Երկայնաբազուկների և Մելիքովների հետ, որոնք պետք է հանքավայրերը և հարակից հողամասերն ու անտառները տրամադրեին պետությանը՝ հանքերը շահագործելու համար[23]։

1816 թ. գործարանների պետական շահագործումը դադարեցվում է և իրավունք վերապահվում հանքարդյունաբերողներին սեփական միջոցներով և աղատ տնօրինել պղնձագործարանները, փոխարենը կալվածատերերին տրամադրելով արդյունքի 10-րդ մասը։

Հանքերին ամրակցված Ղազախի հայ գյուղացիների վիճակը շատ ծանր էր։ 1803 թ. 500 ընտանիքներից 250-ը փախել էին։ Ամրակցված ամեն մի գյուղ պետք է ձիավոր և հետևակ աշխատողներ տրամադրեր, որոնցից առաջիններին ամսական ստանալու էին 6 ռուբլի, վերջիններին՝ 4 ռուբլի 50 կոպեկ։ Դրա փոխարեն ձի ունեցող գյուղացիները պարտական էին ամեն ամիս 6 խորանարդ սաժեն փայտ կտրել և 60 բեռ ածուխ փոխադրել գործարանները, իսկ ածխագործները պետք է 6 խորանարդ սաժեն ածուխ պատրաստեին։ Մյուս աշխատանքներում զբաղված գյուղացիները պետք է աշխատեին օրական 10—12 ժամ։ Դեպի գործարանները տանող ճանապարհների և կամուրջների վերանորոգումը պարտադրվում էր մոտակա գյուղերի բնակիչներին, որոնք օրական 10—50 կոպեկ վարձ էին ստանում։ Ծանր էր նաև Սիբիրից բերված ռուս վարպետների վիճակը։

Պղինձ արտադրվում էր փոքր քանակությամբ՝ 7500 փութ, որը հիմնականում օգտագործվում էր տեղական արհեստավորների կողմից, տնային գործածության իրեր պատրաստելու համար։ Այդ տարիներին Անդրկովկաս այցելած անգլիացի Ջոնսոնը գրում էր, որ «կառավարությունը մտադիր է քաջալերել պղնձի ամանեղենի արդյունաբերությունը Թիֆլիսում, որպես առևտրի առարկա։ Փաստորեն պատրաստ պղնձի քանակությունը այնքան շատ է, որ նրանք՝ բավական արժանավոր իտալացի մի արտիստի ղեկավարությամբ, արձաններ են ձուլում. նա իր ռոճիկը ստանում է կառավարությունից։ Կարծում եմ, որ սկսած են ձուլել նաև փոքրիկ դաշտային թնդանոթներ»[24]։

Արևելյան Հայաստանում արհեստագործության ճյուղերից հատկապես տարածված էր ջուլհակագործությունը։ Գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ դազգահ և հոգում էր իր տնտեսության կարիքները։ Ի. Շոպենի հաշվումներով երկրում կար 4206 դազգահ, որոնք տարեկան արտադրում էին ավելի քան կես միլիոն արշին կտավ։ Երևանի սարդարը յուրաքանչյուր դազգահից հարկադրաբար վերցնում էր մի թուման կտավ, իսկ Նախիջևանի խանությունում՝ յուրաքանչյուր դազգահից՝ մեկ թուման։

Արհեստագործության մեջ կարևոր տեղ էր գրավում կաշվի մշակությունը։ Կաշեգործական արհեստանոցները գտնվում էին քաղաքներում։ Երևանում կար 32 կաշեգործական արհեստանոց, Օրդուբադում՝ 12, Նախիջևանում՝ 1։ Երե-

---

23 Центральный государственный исторический архив СССР (ЦГИА СССР), *(այսուհետև՝ ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 866, ց. 1, գ. 162, թ. 462—462բ։*

24 Հովհ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հատ. Ջ, էջ 660։*

վանի կաշեգործական արհեստանոցները կենտրոնացած էին քաղաքի Դարաքենդ կոչված թաղամասում, Հրազդանի ափին։ Մշակվում էր ոչ միայն կաշվի տեղական հումքը, այլև Մակուի խանությունից և Բայազետի փաշայությունից մեծ քանակությամբ ներմուծվող կաշին։ Միայն Երևանի 32 կաշեգործական արհեստանոցներում տարեկան մշակվում էր 4000 խոշոր մակերեսի (տավարի) և 25000 փոքր մակերեսի (մանր եղջերավոր անասունների) կաշիներ, որոնք մեծ մասամբ իրացվում էին տեղում[25]։ Որոշ արհեստանոցներում, հատուկ բույսերի սերմնահյութի ներգործությամբ, կաշիներից ստացվում էր շագրեն, որը կապալի ենթակա չէր։ Մինչդեռ մնացած կաշիների մշակությունը կապալային հոդված էր կազմում և, առանց հատուկ դրոշմանիշերի, կաշիների վաճառքը արգելվում էր։ Մի շարք արհեստանոցներում կաշիները ներկում էին սև, կարմիր և դեղին գույներով։

Երևանում և մի շարք այլ վայրերում օճառ էր պատրաստվում։ Օճառի արտադրությունը նույնպես գտնվում էր կապալառուների ձեռքում։ Օճառի ազատ վաճառքը արգելված էր։

Ներկարարները բաժանվում էին երկու մասի՝ շիլաշիներ, որոնք կտորը ներկում էին կարմիր, և բոյաղչիներ, որոնք ներկում էին կապույտ գույնի։ Ներկարարական հիշյալ արհեստանոցները, որոնք թվով 29-ն էին, պետության կողմից նույնպես տրվում էին կապալով։ Բացի Երևանից, ներկարարներ կային Գառնիբասարի, Վեդիբասարի, Զանգիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի, Դարալագյազի, Կարբիբասարի մահալներում, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում։

Արևելյան Հայաստանում աճեցվող գյուղատնտեսական կուլտուրաների մեջ արդյունաբերական նշանակություն ունեին կտավատը և քունջութը։ Դրանք օգտագործվում էին բուսական բարձրորակ յուղ ստանալու համար։ Ամբողջ երկրի տերիտորիայում կային շուրջ 285 ձիթհաններ, որոնցից, սակայն, XIX դարի սկզբին գործում էին միայն 25-ը՝ ունենալով տարեկան մինչև 15000 փութ արտադրանք[26]։ Արտադրվում էր նաև կանեփի ձեթ, որն օգտագործվում էր տները լուսավորելու համար։

Դեռ հնուց ի վեր Հայաստանում մեծ տարածում ուներ բրուտագործությունը։ Գրեթե բոլոր մահալներում էլ կային բրուտանոցներ, որտեղ պատրաստում էին գինու և հացահատիկի կարասներ, կավե կերակրամաններ և այլն։ Որոշ դեպքերում այդ նույն բրուտանոցներում աղյուս էին թրծում։

Արևելյան Հայաստանում կային մեծ քանակությամբ ջրաղացներ և դինգեր։ Ջրաղացների թիվը 2589 էր, որոնցից գործում էին միայն 1456-ը։ Դինգերի թիվը ավելի քիչ էր՝ 221, դրանցից գործում էր 138-ը։ Դինգերում չալթուկը թեփազերծում և բրինձ էին ստանում։ Խոշոր ջրաղացներում օրական աղացվում էր մինչև մեկ խալվար, իսկ փոքրերում՝ 15—20 բաթման ցորեն։ Հիշատակենք, որ Կարապետ անունով նշանավոր հայ վարպետը ջրի ուժով գործող երկու խոշոր դինգեր էր կառուցել Երևանում և Էջմիածնում[27]։ Սակայն նման տիպի ձեռնարկությունները եզակի էին։

25 Տե՛ս И. Шопен, նշվ. աշխ., էջ 387։

26 Նույն տեղում, էջ 861։

27 Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 39—40։

Արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունները, որոնք կոչվում էին համքարություններ կամ էսնաֆություններ։ Միևնույն ճյուղում զբաղված արհեստավորները մտնում էին իրենց առանձին համքարության մեջ և առաջնորդվում էին տվյալ համքարության սկզբունքներով։ «Պարսկական տիրապետության շրջանից,— գրում է Ա. Հաքստհաուզենը,— արհեստավորները միավորված են գիլդիաներում ըստ պարսկական օրենքների, բայց ոչ այնպես բացառիկորեն, ինչպես Վրաստանում։ Նոր վարպետները նույնպես հանդիսավոր կերպով են ձեռնադրվում։ Հայտնի տոնախմբությունների և հասարակական արարողությունների ժամանակ ամեն մի արհեստ ներկայացվում է համքարության կողմից։ Հայ և թուրք արհեստավորները առանձին համքարություններ են կազմում։ ...Համքարությունն ընտրում է իր ավագին, որ դատական իշխանություն ունի և ենթավարպետին վարպետ է ձեռնադրում, որի դեպքում առաջինը ծունկի է գալիս նրա առջև և ստանում է հարվածը»[28]։

Համքարությունների անդամներին միավորող կապը տնտեսական, կրոնական, իրավական, վարչա-դատական, հասարակական շահերի միասնությանն և, որ գլխավորն է, փոխադարձ օգնության գաղափարն էր[29]։ Համքարության անդամների թիվը չէր սահմանափակվում։ Նրանցից յուրաքանչյուրը կարող էր ուզած ժամանակ դուրս գալ մեկ համքարությունից և անդամագրվել մեկ ուրիշի։ Պատահում էր, որ միևնույն արհեստի տեր մարդիկ ունենում էին մի քանի համքարություններ։ Այսպես, սափրիչները, դարբինները, մազմանները և այլն կարող էին միևնույն վայրում միաժամանակ մեկից ավելի համքարություններ ունենալ։ Համքարությունները որոշակի զբաղմունք ունեցող անձանց կազմակերպություններ էին և գործում էին որոշակի կանոնադրություններով, որոնք լինում էին բանավոր, երբեմն էլ՝ գրավոր։

Համքարությունների կազմակերպման գործով զբաղվել է և Էջմիածինը։ Նիկիեմ կաթողիկոսի ստորագրությամբ հաստատվել էր արևելահայ համքարությունների «սահմանադրություն», ընդ որում նույնիսկ Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Բաբերդի էսնաֆությունները խնդրել էին իրենց էլ ուղարկել այդ փաստաթղթի «պատկերը», որպեսզի իրենք էլ գործեն դրա համաձայն[30]։

Տվյալ կանոնադրության հաստատումը կաթողիկոսի կողմից վկայություն է այն բանի, որ Էջմիածինը և նրա գահակալը այդ նույն համքարությունների համար եղել են որոշ առումով պետական ֆունկցիաների կրողներ, քանի որ դարեր շարունակ պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար կաթողիկոսն էր դարձել այդ ֆունկցիաների մասնակի գործադրողը։

Վաճառականները նույնպես ունեին իրենց առանձին համքարությունները։ Պարսկական տիրապետության շրջանում վաճառականությունը բաժանվում էր չորս խմբի՝ սովդաքյարներ, բինահդարներ, բազազներ և չարչիներ կամ փերեզակներ։ Այս բաժանման հիմքում ընկած էին ունեցած դրամագլխի չա-

---

28 *А. фон-Гакстгаузен*, Закавказский край, СПб., 1857, стр. 165.

29 *С. А. Егиазаров*, Исследования по истории учреждений в Закавказьи, т. 2, Казань, 1894, стр. 2.

30 *Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 53, վավ. 8։*

փը, առևտրական գործառնությունների շրջանակների ծավալը, երկրի տնտեսական կյանքում նրանց խաղացած դերը, վաճառած ապրանքների տեսակը։ Սովդաքյարները հարուստ վաճառականներ էին, որոնց ունեցած դրամական խոշոր կապիտալը նրանց հնարավորություն էր տալիս մեծածախ առևտրով զբաղվել։ Նրանք ազատ էին ամեն տեսակի տուրքերից, բայց մաքս վճարում էին։ Սովդաքյարներից հետո վաճառականության շարքերում իրենց ազդեցությամբ աչքի ընկնող տեղ էին գրավում բինահդարները։ Նրանք զբաղվում էին և մեծածախ, և մանրածախ առևտրով, ունեին խանութներ և հիմնականում կապված էին տվյալ վայրին։

Բազազները մանր առևտրականներ էին, ունեին փոքրիկ խանութներ, որտեղ վաճառում էին իրենց ապրանքները, գլխավորապես կտորեղեն։ Սրանք, բինահդարների հետ մեկտեղ, Արևելյան Հայաստանի վաճառականության ճնշող մեծամասնությունն էին կազմում։

Չարչիները կամ փերեզակները շրջիկ մանր առևտրականներ էին, որոնք տեղից-տեղ էին թափառում և վաճառում ամենաազանազան ապրանքներ, ձգտելով արժեքից ավելին կորզել միամիտ գնորդներից։ Աղքատ չարչիները շրջում էին ոտքով, համեմատաբար ունևորները՝ ձիով կամ ավանակով[31]։

Համքարությանն անդամներին նեղության դեպքում օգնելու, բարեգործական ձեռնարկումներին նպաստելու գործում մեծ դեր էին խաղում համքարությունների գանձարկղները (խազնանները)։ Այս գանձարկղների հիմնական դրամագլուխը գոյանում էր համքարության լիիրավ անդամների՝ վարպետների մուծումներից։ Սրանք լինում էին տարբեր չափի՝ ըստ տվյալ անդամի ունեվորության աստիճանի, ընտանիքի անդամների թվի և այլն։ Բացի այդ, համքարության մեջ մտնող յուրաքանչյուր նոր անդամ նույնպես որոշ գումար էր մուծում։

Համքարությունների եկամտի մյուս կարևոր աղբյուրն էլ տուգանքներն էին, որոնք գանձվում էին «սահմանադրության» կանոնները խախտած անդամներից, ինչպես նաև, այսպես կոչված, «դաստուրհացը», որը վճարում էին վարպետացուները, երբ նրանք արդեն ինքնուրույն աշխատանքի իրավունք էին ստանում։ Այս դրամով սովորաբար ճաշկերույթ էր կազմակերպվում համքարների համար։

Համքարությունը ղեկավարելու համար ընտրվում էր ուստաբաշի (վարպետների գլուխ կամ գլխավոր վարպետ), ուստաբաշու օգնական կամ աղսախկալ, գանձապահ (խազնադար) և իգիթ բաշի[32]։ Սրանց ընտրում էին համքարության անդամների ընդհանուր հավաքույթում։ Ընտրություններից հետո ուստաբաշին ու աղսախկալները տնօրինում էին համքարության գործերը, կարգավորում համքարության ու քաղաքային իշխանությունների փոխհարաբերությունները։ Նրանք կատարում էին նաև համքարության ընկերային դատարանի ֆունկցիաները՝ քննում էին ոչ-քրեական բնույթի գործերը և մեղավորնե-

---

31 И. Шопен, նշվ. աշխ., էջ 986։

32 А. фон-Гакстгаузен, նշվ. աշխ., էջ 106, տե՛ս նաև Աշոտ Հովհաննիսյան, Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 200, 206)։

րին ենթարկում տուգանքների ու մարմնական պատիժների։ Ավելի մանր գործերը ուստաբաշին կարող էր վճռել միանձնյա։

Ուստաբաշուց և աղսախկալներից կազմված համքարական դատարանը քննում և լուծում էր մի կողմից վարպետների, մյուս կողմից վարպետացուների և աշակերտների փոխհարաբերությունները, միևնույն համքարության անդամ-վարպետների միջև ծագած վեճերը, ընտանեկան հարաբերությունների, կրոնական պարտականությունների խախտմանը, հասարակական հանգիստը խանգարելուն վերաբերող գործերը։ Այստեղ լսվում էին նաև կողմնակի անձանց բողոքները՝ պատվերների ցածրորակ կատարման մասին և այլն[33]։

Համքարությունները, սովորաբար, աշխատում էին գործերը քննել և լուծել իրենց դատարաններում, խուսափել դարուղայի (ոստիկանապետի) միջնորդությանը դիմելուց, քանի որ դա կապված էր ոչ միայն կաշառատվության, այլև համքարության հեղինակության և ինքնուրույնության հետ։

Ուստաբաշու և աղսախկալների վարձատրությունը կազմվում էր այն նվերներից, որ նրանք ստանում էին համքարության մեջ նոր անդամ ընդունելիս, դատական բնույթի վեճեր լուծելիս։ Համքարության համար ապրանքներ գնելիս նրանք տոկոսներ էին ստանում ապրանքի վաճառորդներից։ Բացի այդ, նրանք ազատված էին համքարության ընդհանուր գանձարկղը կատարվող որոշ մուծումներից։

Համքարության մեջ կարևոր դիրք էր գրավում գանձապահը։ Նա ընտրվում էր գրագետ այն անդամներից, որոնց աղնվությունը կասկածի ենթակա չէր։ Գանձապահը պատասխանատու էր միայն ընդհանուր հավաքույթի առաջ, որտեղ պարբերաբար հաշիվ էր տալիս եկամուտների մասին։ Գանձապահի պարտականությունն էր անդամավճարների, հատարակական հարկի, տուգանքների հավաքումը և պահպանումը։

Իգիթբաշու պարտականությունն էր տվյալ համքարության բոլոր անդամներին տեղյակ պահել ուստաբաշու և նրա օգնականների ընդունած որոշումներին, հաղորդել, թե երբ են տեղի ունենալու համքարական հավաքույթներ և կամ կրոնական ծիսակատարություններ։ Որպես կատարածու, իգիթբաշին պետք է դատի ենթակա համքարներին ներկայացներ դատարան, ի կատար ածեր դատավճիռները։ Համքարության գերագույն օրգանը ընդհանուր հավաքն էր, որին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում էին համքարները, ինչպես նաև մահացած համքարների այրիները, այն տարիքավոր վարպետացուները, որոնք երբևէ անդամակցել էին ուրիշ համքարություններին։ Այրի կանայք և երիտասարդ վարպետացուները վճռական ձայնի իրավունք չունեին։

Ընդհանուր հավաքներում քննարկվում էին համքարության ղեկավարների հաշվետվությունները, նոր անդամների ընդունելության, զանցառուների հեռացման և համքարության համար կենսական նշանակություն ունեցող այլ հարցեր։ Այս հավաքներում էլ հարկերն ու տուրքերը բաշխվում էին համքա-

---

33 С. А. Егиазаров, նշվ. աշխ., էջ 292—293։ А. фон-Гакстгаузен, նշվ. աշխ., էջ 102—106։

րության անդամների միջև, ստուգվում էին վարպետացուների աշխատանքները և համապատասխան գնահատական ստանում։

Համքարության ամենաստորին աստիճանին կանգնած էին աշակերտները։ Սրանց ընդունում էր վարպետը և ուստաբաշու, աղսախկալների ներկայությամբ երդում առնում, որ կաշխատեն ազնվորեն ու նվիրվածությամբ։ Ուսման տևողությունը երեքից մինչև տասը տարի էր, նայած արհեստին։ Ընդունվելուց հետո աշակերտը լիովին գտնվում էր վարպետի տրամադրության տակ, աշխատում էր առանց վարձատրության։ Նրան կարող էին ծեծել, ուզածի պես պատժել, օգտագործել վարպետի տնային աշխատանքներում, և աշակերտը այդ ամենը պիտի տաներ անտրտունջ։ Աշակերտին սովորեցնելու համար վարպետը հատուկ վարձատրություն չէր ստանում, բայց աշակերտը, երբ վարպետ էր ձեռնադրվում, պետք է նվեր տար նրան։

Համքարությունները հետաքրքրվում էին աշակերտների վիճակով, հետևվում էին նրանց ուսման ընթացքին և երբ համոզվում էին, որ նրանք արդեն բավականաչափ հմտացել են ընտրած արհեստում, դարձնում էին վարպետացու և ինքնուրույն աշխատանքներ հանձնարարում։

Ենթավարպետը աշակերտից բարձր էր կանգնած։ Բավական երկար ժամանակ մնալով այդ կարգում, նա ինքնուրույն որևէ գործ էր կատարում և իր պատրաստածը ներկայացնում ավագների դատին։ Քննությունը բռնելու դեպքում վարպետացուն ստանում էր վարպետի կոչում։ Դրա համար նա իր արհեստուսուցչին խալաթ էր տալիս, իսկ համքարությանը՝ դաստուրհաց[34]։

Համքարության ոգուն խորթ էր մենաշնորհի ձգտումը։ Մենաշնորհին և մրցակցությանը վերջ տալու նպատակով հումքը հավասարաչափ բաժանվում էր համքարության անդամների միջև։ Նրա անդամներն իրավունք չունեին առանց ուստաբաշու և նրա օգնականների գիտության մասնավոր գործարքների մեջ մտնել՝ հումք գնել, խանութներ վարձակալել և այլն։ Արտադրանքի ցածր որակի վերաբերյալ գանգատի դեպքում հատուկ դատով որոշվում էր նրա խախտությունը, որից հետո միայն ցածրորակ ապրանք արտադրած արհեստավորը ենթարկվում էր տուժի։

Արհեստանոցները մեծ մասամբ տեղավորված էին շուկաներում և հրապարակներում, որտեղ, սովորաբար, յուրաքանչյուր համքարություն իր շարքերն էր ունենում։ Ապրանքներն արտադրվում և վաճառվում էին տեղերում։ Վտանգավոր և վնասակար մնացուկներ ունեցող արտադրության հետ կապված արհեստանոցները տեղավորվում էին քաղաքի ծայրամասերում, գետի ափին։

Յուրաքանչյուր համքարություն ուներ իր սուրբը կամ «փիրը», որը համարվում էր տվյալ արհեստի հովանավորը։ Երևանի ատաղձագործների համքարության «սուրբը» եղել է աստվածահայր Հովսեփը, կաշեգործների համքարությանը՝ Սիմեոն Ծերունին, դարբիններինը՝ Դավիթ Մարգարեն, մաշակարներինը՝ Մելքիսեդեկը և այլն[35]։

Հիշյալ սրբերի եկեղեցական օրացույցով սահմանված տոներին համքարությունները կազմակերպում էին շքեղ հանդեսներ, մատուցում էին պատա-

---

34 *А. фон-Гакстгаузен*, նշվ. աշխ., էջ 106։

35 Ն. Շահազիզ, *Հին Երևանը*, Երևան, 1931, էջ 79։

րադ, «մատաղ» էին անում և բաժանում աղքատներին և այլն[36]։ Երևանի համքարությունները նման տոնահանդեսները կատարում էին քաղաքի Շահար թաղամասի Դեհբեմանի մատուռի շրջակայքում։

Համքարություններն ունեին իրենց խաչվառաձև դրոշները՝ համքարության հովանավոր սրբի պատկերով։ Եկեղեցական թափորների ժամանակ, կաթողիկոսին հանդիսավոր կերպով դիմավորելու և այլ նման դեպքերում համքարության անդամները դուրս էին գալիս իրենց դրոշներով և հանդեսներին շքեղ բնույթ տալիս։

Համքարությունների հիմնական սկզբունքը, որը նրանց անդամներին շաղկապում էր իրար, փոխօգնության սկզբունքն էր։

Ինչպես աշակերտները, այնպես էլ ենթավարպետները շահագործվում էին վարպետների կողմից։ Վերջիններս աշխատում էին որքան հնարավոր է նրանց ավելի երկար պահել կախյալ վիճակում, իրենց շահերի համար օգտագործել նրանց աշխատանքը։

Համքարության բարձրաստիճան խավը վարպետներն էին։ Նրանք ունեին խանութներ, պահում էին ենթավարպետներ և աշակերտներ, համքարության գործերը որոշելիս օգտվում էին վճռական ձայնի իրավունքով, կարող էին ընտրվել ուստաբաշի, աղսախկալ, գանձապահ։ Միաժամանակ նրանք պարտավոր էին կատարել իրենց պարտականությունները համքարության նկատմամբ։

Համքարությունները բաժանված էին ըստ աղգային հատկանիշի։ Արհեստի բազմաթիվ ճյուղեր ներկայացված էին մեկ կամ մի քանի արհեստավորներով, որոնք, բնականաբար, չէին կարող առանձին համքարություններ կազմել, ուստի և մտնում էին իրենց արհեստին համեմատաբար մոտ համքարությունների մեջ։

Կային նաև վարձու աշխատանքով ապրող արհեստավորներ։ Դրանցից էին էջմիածնի վանական տնտեսության մեջ աշխատող արհեստավորները, որոնք մտնում էին «Մայր աթոռի» ծառայողների՝ ամալաների թվի մեջ։ Վանական տնտեսության մեջ մշտապես աշխատում էին դարբիններ, խառատներ, աշշիներ (կերակուր պատրաստողներ), պայտարներ և այլն։

Նման արհեստավորների առկայությունը ցույց է տալիս, որ վարձու աշխատանքը ևս մասնակի կիրառություն ուներ երկրի տնտեսական կյանքում, որ գոյություն ուներ համքարություններից դուրս գտնվող և իր գոյության միջոցները աշխատուժի վաճառքով հայթայթող արհեստավորական մի խավ։

* * *

XIX դարի առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում առևտուրը, մասնավորապես արտաքին առևտուրը, բավական աշխույժ բնույթ էր կրում։ Բերենք Արևելյան Հայաստանի հիմնական մասը կազմող Երևանի խանության օրինակը, որը դրացի լինելով Ռուսաստանին և Թուրքիային, գտնվելով առևտրական բանուկ ճանապարհների կենտրոնում, որոնք նրան կապում էին Թավրիզի, Թիֆլիսի, Կարսի, Էրզրումի ու Բայազետի հետ, հանդիսանում էր առևտրական կարևոր հանգույց։ Արևելյան Հայաստանում առևտրի զարգացմանը

36 С. А. Егиазаров, նշվ. աշխ., էջ 208—210։

Նպաստում էր նաև այն պարագան, որ Երևանը կուսակալության կենտրոնն էր, այնտեղ էր գտնվում խանական արքունիքը։ Քաղաքում էին կենտրոնացված բարձրաստիճան խանները, պարսկական զորքը, որոնց սպառման համար անհրաժեշտ բազմաթիվ ապրանքները ներմուծում էին օտար երկրներից։ Առևտրի զարգացմանը, ինչպես արդեն ասված է, նպաստում էր նաև էջմիածնի՝ Երևանի խանության սահմաններում գտնվելու փաստը։ Էջմիածինն իր նվիրակների միջոցով աշխարհի տարբեր անկյուններից ապրանքներ էր ստանում որպես նվիրատվություն, որոնք և վաճառքի էր հանում իր կարիքները հոգալու համար։ Միաժամանակ էջմիածինը առաջնակարգ գնորդներից էր, քանի որ մեծաթիվ միաբանության պահանջները բավարարելու համար հաճախ ստիպված էր լինում դիմել շուկա։



Հին Երևանի շուկայի ճեպագրակը

Երևանի վաճառականները առևտրական գործառնություններ էին ծավալում Պարսկաստանում, Թուրքիայում, Վրաստանում։ Հատկապես աշխույժ էր առևտրական կապը Թիֆլիսի և Էրզրումի հետ, որտեղ Երևանի վաճառականները գնում էին եվրոպական ու ռուսական արտադրության ապրանքներ և վերավաճառում Պարսկաստանում։ Փոխադարձաբար նրանք վերոհիշյալ քաղաքներն էին արտածում տեղական ու Պարսկաստանի հարևան շրջաններից ապրանքներ՝ մետաքսեղեն, կաշի, բուրդ, բուսական յուղ, բամբակ, չոր մրգեր, աղ և այլն։ Երևանի սարդարը և էջմիածնի վանքը ներգրավված էին առևտրական գործառնությունների ոլորտը։ 1804—1813 թվականների ռուս-պարսկական պատերազմը, անշուշտ, բացասական ազդեցություն ունեցավ արտաքին առևտրի վրա, սակայն անգամ այդ տարիներին առևտրական կապերը չդադարեցին։

Պարսկաստանի և, հատկապես Ռուսաստանի առևտրական հարաբերությունները ընդլայնելու շահագրգռվածությունն իր արտահայտությունը գտավ Գյուլիստանի հաշտության պայմանագրում։ Պայմանավորվող կողմերը պետք

է թույլ տային՝ վաճառականների ազատ երթևեկություն ցամաքային և ջրային ճանապարհներով։ Վաճառականների կյանքն ու գույքը, ինչպես և կոսկի իրավունքը պետք է երաշխավորվեր ու հարգվեր երկու պետությունների կողմից։ Նրանց հպատակ վաճառականները տարանցիկ առևտրի իրավունք էին ստանում։ Կարգավորվում էր նաև մաքսային սիստեմը։ Նախկին տարատեսակ և կամայական մաքսերի փոխարեն սահմանվում էր ընդհանուր մաքս՝ ապրանքի արժեքի հինգ տոկոսի չափով[37]։ Հետագայում էլ Ռուսաստանը և Պարսկաստանը շարունակեցին միջոցներ ձեռնարկել առևտրին խանգարող արգելքները վերացնելու համար։ Չնայած դրան, վաճառականական քարավանների ապահովությունը Արևելյան Հայաստանում հեռու էր բավարար լինելուց։ Ավարառությունները սովորական երևույթ էին և հաճախ կատարվում էին սարդարի բարեհաճ հավանությամբ։

XIX դարասկզբի քաղաքական իրադարձություններից բացի, առևտրի զարգացմանն ու ծավալմանը խանգարում էին ավատատիրությանը հատուկ մաքսային կեղեքիչ սիստեմը, ճանապարհների վտանգավորությունը, վաճառականների կյանքի ու գույքի անապահովությունը, չափի ու կշռի բազմազանությունը և, որ գլխավորն է, հիմնական սպառողների՝ աշխատավոր զանգվածների ցածր գնողունակությունը, թեև Երևանում ու Նախիջևանում գոյություն ուներ սարդարի, պալատականների, հարեմի, զորքերի, խանների, բեկերի ու միրզաների՝ բարձր պահանջներ ունեցող այդ սպառողների բազմությունը[38]։

Բուն Երևանում մաքսատուն չկար։ Մաքսեր (ռահդարի) գանձվում էին Սարդարապատում, որտեղով անցնում էին էրզրումից ու Կարսից եկող քարավանները։ Մաքսի գործն այստեղ տնօրինում էր սարդարի եղբայր Հասան խանը, իսկ Բայազետի ճանապարհին և Շարուրում՝ նրա թոռը։ Կրխբուլաղի ճանապարհին մաքսի գանձումը հանձնարարված էր հայազգի յուզբաշի Գեղամյաններին։

Ամեն տարի որոշ գումարի դիմաց Հյուսեին Ղուլի խանը մաքսի գանձումը հանձնարարում էր կապալառուներին։ Վերջիններս օսմանյան պետության սահմաններից բերված կտորեղենի, բամբակի, շաքարի, գխտորի, կաշու, պողպատի, հինայի և այլ ապրանքների յուրաքանչյուր բեռի համար գանձել են չորս հազար դիան (ռուսական դրամով մեկ ռուբլի վաթսուն կոպեկ)։ Նույն ապրանքների տրանզիտի համար գանձվել է հինգ ռեալ (երկու ռուբլի 50 կոպեկ)։ Երևանի խանության վաճառականները դրսից բերված նույն ապրանքների համար ավելի պակաս մաքս են վճարել։ Պարսկաստանից բերված մեկ բեռ կտորեղենի համար նրանք վճարել են միայն մեկ ռեալ (հիսուն կոպեկ արծաթով)։ Ջամիլի, յուղի, բրնձի յուրաքանչյուր բեռից գանձվել է, որպես մաքս, հազար դիան (քառասուն կոպեկ արծաթով), մեղրի մեկ բեռից՝ երկու հազար դիան (ութսուն կոպեկ արծաթով)։ Մետաքսի, լեղակի և մորթիների յուրաքանչյուր բեռից գանձվել է մեկ թումանի։

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Երևանի վրայով կատարվող առևտուրը ավելի մեծածավալ էր, քան Թուրքիայի և Պարսկաստանի միջև եղած

---

37 И. Шопен, նշվ. աշխ., էջ 873։

38 Բ. Խ. Հակոբյան, Երևանի պատմություն, հատ. III, Երևան, 1957, էջ 90։

ապրանքաշրջանառությունը։ 1825 և 1826 թվականներին ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը կազմել է 919.770 ռուբլի արծաթ դրամ[39], իսկ 1828—1829 թվականներին՝ 867.700 ռուբլի, մինչդեռ 1815 թվականին միայն այն կազմել է 499.532 ռուբլի[40]։ Այդ ժամանակաշրջանում Պարսկաստանից Երևան է ներմուծվել տարեկան 80 հազար ռուբլու ապրանք։

Ներմուծվող ապրանքները տեղավորելու և նրանց վաճառքը կազմակերպելու համար կառուցվում էին քարավանատներ։ Կային պետական և մասնավոր քարավանատներ. առաջինների շահագործումը տրվում էր կապալով։ Երևանում կար յոթ քարավանատուն, որոնցից միայն Գյուրջիի քարվանսարան ունեցել է 62 խանութ ու կրպակ։ Դա սարդարին բերում էր 280 թուման, իսկ մյուսները՝ 150-ական, ընդամենը 700 թուման եկամուտ[41]։ Ընդհանուր առմամբ խանութների ու կրպակների թիվը հասել է 851-ի, որոնց մի մասը գրտնվում էր առևտրաշարքերում կամ չարսուներում և հրապարակներում։ Քարավանատուն կար նաև Վաղարշապատ գյուղում, որը վանական սեփականություն էր։

Քարավանատներից օգտվելու համար վաճառականներից գանձում էին զանազան տուրքեր։ Դրանցից էին ավային և բորոնան։ Ավայի գանձում էին մեծածախ առևտրի դեպքում, յուրաքանչյուր թումանից վերցնելով մեկ շահի։ Այդ գումարը կարող էր գանձվել այնքան անգամ, որքան ապրանքները քարավանատան մեջ մի ձեռքից մյուսն էին անցնում։ Բորոնան գանձվում էր այն դեպքում, երբ գնորդ չունենալու կամ մի այլ պատճառով վաճառականն իր ապրանքները դուրս էր հանում խանության սահմաններից և տանում մի այլ վայրում վաճառելու։ Յուրաքանչյուր բեռից բորոնա վերցվում էր 4 շահի (8 կոպեկ արծաթով)։

Եթե արտաքին առևտուրը համեմատաբար աշխույժ վիճակում էր, այդ նույնը չի կարելի ասել ներքին առևտրի մասին։ Հողագործության ամենակարևոր արտադրանքների, հատկապես բամբակի և բրնձի գնման ու վաճառքի մենաշնորհը սարդարը կենտրոնացրել էր իր ձեռքում և գնումները կատարում էր իր իսկ սահմանած գներով։ Բամբակի մեկ խալվարի համար նա վճարում էր 80 ռուբլի, իսկ չալթուկի մեկ խալվարի համար՝ 6 ռուբլի արծաթով։ Խանության մեջ սահմանված այդ մենաշնորհը խախտողները դաժան պատիժների և ծանր տուգանքների էին ենթարկվում։

Մեյդանում (հրապարակում) դրված էին ղանթարը՝ մեծ կշեռքը և միզանը՝ փոքր կշեռքը։ Սրանք նույնպես տրված էին կապալով։ Սարդարը նշանակում էր կշեռքների հսկիչ՝ ղանթարբաշի։ Կշեռքներից օգտվելու համար դրամով կամ բնամթերքով հատուկ վարձ էր գանձվում։

Ղանթարը խանական արքունիքին տարեկան տալիս էր 500 թուման եկամուտ, իսկ միզանից ստացվում էր 215 թուման[42]։ Խանութներից ստացվում էր տարեկան 1260 թումանի տուրք։ Առևտուր էին անում գյուղացիները, արհես-

---

39 *О. Евецкий*, Статистическое описание Закавказского края, СПб., 1835, стр. 76—77.


40 *Г. Тер-Гукасов*, Экономические интересы России в Персии, Петроград, 1915, стр. 35.

41 *И. Шопек*, նշվ. աշխ., էջ 983։

42 Նույն տեղում։

տավորները, վաճառականները։ Սարդարն ինքն էլ ստացված բնամթերային հարկերի մի մասը վաճառքի էր հանում։

Չնայած առևտուրը և առևտրի հետ կապված եկամուտները գտնվում էին խանական վարչության ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ նույն այդ վարչությունը, սարդարի գլխավորությամբ, ի վիճակի չէր առևտրի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու։ Մենաշնորհները, բազմապիսի տուրքերը, ճանապարհների անապահովությունը, ժողովրդական զանգվածների թշվառ կացությունը, գյուղատնտեսության ու արհեստագործության հետամնաց վիճակը արգելակում էին առևտրի հետագա ծավալմանը։



Սարդարի պալատի հայելապատ դահլիճը

Արևելյան Հայաստանի առևտրական կյանքի առանձնահատկություններից մեկն եղել է այն, որ այստեղ ազատ շրջանառության մեջ են գտնվել բազմաթիվ և բազմատեսակ դրամներ՝ պարսկական, թուրքական, ռուսական, հոլանդական, վրացական, բուն երևանյան և այլն։ Տարբեր երկրների պատկանող և ամենատարբեր արժեքներ ունեցող այդ դրամները ստեղծում էին դրամափոխանակության անհրաժեշտություն, իսկ նրանց արժեքները խիստ տատանվում էին։

Այս պայմաններում ստեղծվել էր դրամափոխների (սարաֆների) մի խումբ։ Երևանում դրանց թիվը հասնում էր քսանի։ Սակայն սրանք հիմնականում ռուսական դրամներ էին փոխանակում, որոնցից Պարսկաստանում արծաթյա դրամներ՝ սահիբ-ղրաններ էին հատում և կրկին ուղարկում Երևան։ Այդ շրջանառությունից նրանք հինգ տոկոս շահ էին ստանում։ Շրջանառության մեջ էին նաև այնպիսի դրամներ, ինչպես «ֆնտղը», «աստամպօլը», «պաբջաղլին», «ղուռուշը», «Ֆաթհալի շահի ռիալը», «ուզլուկը», «օսմանցվի իքլիքը», «սուլթան Սալիմի ռիալը», «փանահատլին» և բազմաթիվ այլ դրամներ, որոնք տարբեր արժողություններ ունեին[43]։

43 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 24, վավ. 139։

Երևանում՝ Արևելյան Հայաստանի առևտրի գլխավոր կենտրոնում, խաչաձևում էին տարբեր ճանապարհներ, որոնցից մեկը, որը հետագայում, ռուսական տիրապետության շրջանում, գլխավոր փոստային ճանապարհ դարձավ, Շիրակավանը (Գյումրի) Մաստարայի, Սարդարապատի, Էջմիածնի վրայով միացնում էր Երևանին, իսկ այստեղից էլ անցնում դեպի Նախիջևան և Օրդուբադ։ Մի այլ ճանապարհով Սարդարապատը կապվում էր Բայազետ քաղաքին։ Սարդարապատի վրայով էին ձգվում նաև երկու այլ ճանապարհներ՝ Սարդարապատ—Կողբ—Կաղզվան—Կարին և Սարդարապատ—Անի—Կարս։ Նախիջևանը տարբեր ճանապարհներով կապվում էր Թավրիզի, Կարաբաղ ամրոցի և Շամշադինի հետ։ Երևանից դեպի Թիֆլիս ճանապարհն անցնում էր երկու ուղղությամբ՝ Դիլիջանի և Ապարան—Ղարաքիլիսայի վրայով։ Երևանը Կարսի հետ կապվում էր Էջմիածնի, Ղազքիլիսայի և Ղոշավանքի վրայով։ Այդ ճանապարհներով անցնում էին կառքեր, սայլեր և բեռնակիր անասուններ։

Թիֆլիսում, Դորիում, Թելավում, Սղնախում, Անանուրում և Վրաստանի այլ վայրերում հայկական տարրը պատկառելի տոկոս էր կազմում, ուր արհեստները և առևտուրը նշանակալից չափով կենտրոնացած էին հայերի ձեռքին։ Դեռևս 1714 թ. Թիֆլիսի մելիքի և մամասախլիսի պաշտոնը ժառանգաբար վերապահված էր հայազգի Բեհբության իշխանական տոհմին։ Մելիքը օժտված էր մեծ արտոնություններով։ Առանց նրա կնիքի վավերական չէին Թիֆլիսի ու շրջակայքի կալվածքների առն ու վաճառքը։ Նա հետևում էր առևտրի վիճակին, չափ ու կշռին, վարում էր դատաստանական կարևոր գործերը։ Ռուսական տիրապետության հաստատումից հետո մելիքի պաշտոնը նույնացվեց ոստիկանապետի պաշտոնին, բայց սկզբնական շրջանում նրա նախկին արտոնություններն ու իրավունքները պահպանվեցին։

Վրաստանի քաղաքային բնակչության կազմում զգալի տոկոս էին կազմում մոքալաքները։ Մոքալաք կարող էին դառնալ միայն խոշոր վաճառականները և արհեստավորները։ Այդ կոչումը շնորհում էին վրաց թագավորները՝ հավանաբար որոշ ընծայաբերության դիմաց։ XVIII դարի կեսերից արդեն մոքալաք դառնում էին նաև թագավորական ծառայության մեջ գտնվող ցածր խավին պատկանող մարդիկ։

Մոքալաքները բաժանված էին երեք կարգի՝ առաջին, երկրորդ և երրորդ։ Նրանք ենթարկվում էին Թիֆլիսի մելիքին և կատարում էին նրա կարգադրությունները։

5. ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ

Հարկերը խիստ ծանր էին, բազմաթիվ և բազմատեսակ։ Խանական վարչությունը ձգտում էր հնարավորին չափ շատ կորզել բնակչությունից և այդ նպատակին հասնելու համար խանական պաշտոնյաները չէին խորշում բացարձակ կողոպուտի և ոչ մի միջոցից։

Հարկերը երկու տեսակի էին՝ դրամական և բնամթերային։ Դրամական հարկերը որոշ իմաստով հաստատուն միավորներ էին, իսկ բնամթերային հարկերը կազմում էին տվյալ տարում ստացված բերքի 3/30 մասը։ Բնամթերքով գանձվող հարկը կարող էր լինել և՛ մուլք և՛ բահրա։ Բահրան դա հարկ-

ռենտայի այն մասն էր, որ գնում էր պետության գանձարանը։ Մուլքադարական դյուղերում մուլքը կազմում էր բերքի 1/10 մասը և հատկացվում մուլքադարին։

Հարկային սիստեմը կարգավորելու և հարկերի գանձումը դյուրացնելու նպատակով խանական վարչությունը գյուղերը բաժանել էր երեք խմբի՝ բահրաքյարական, յարիքյարական և ռանչպարական։ Գյուղերն էլ իրենց հերթին տրոհված-էին բինաչաների։ Վերջիններս հարկման ենթակա հատուկ միավորներ էին, կազմված մի քանի ընտանիքներից՝ նայած նրանց տնտեսական հզորության։ Նույնիսկ այնպես էր լինում, որ մի ամբողջ գյուղ հազիվ մեկ բինաչա էր կազմում, կային նաև գյուղեր, որտեղ բինաչաների թիվը մի քանի տասնյակի էր հասնում։ Այսպես, Ուլուխանլու գյուղում կար 80 բինաչա, Սարդարապատում՝ 50, մինչդեռ Ջաֆարաբադ գյուղում կար միայն մեկ բինաչա։ Բազմաթիվ կիսավեր գյուղեր նույնիսկ մեկ բինաչա էլ չէին կազմում։

Բինաչաները կազմելիս խանական վարչությունը հաշվի էր առնում նաև տեղական պայմանները, գյուղերի եկամուտների չափերը, քաղաքներից և գըլխավոր մայրուղիներից նրանց հեռավորությունը, տեղական գյուղատնտեսական մթերքների որակը և դրանք հաջող կերպով իրացնելու հնարավորությունները, ինչպես և անասնապահության վիճակը։ Բինաչա կազմող գերդաստանները կարող էին իրենց հաշվում գրանցել աղքատ ընտանիքներին և վճարել նրանց փոխարեն էս։ Հիմնականում այդպիսի վիճակում էին եկվորները։ Եթե նրանք մշակություն էին անում բինաչայի համար, ապա ոչինչ չէին վճարում, իսկ եթե ունեին իրենց սեփական տնտեսությունը, ապա մասամբ պետք է հատուցեին, կատարելով նրանց ընդունող բինաչայի պարհակները։

Բնական պատահարների դեպքերում սարդարը պակասեցնում էր բինաչաների քանակը։ Նվ, ընդհակառակը, բարեկեցության աճի հետ մեկտեղ, աճում էր նաև բինաչաների թիվը։ Այսպես, սարդարը 1826 թ., Ուլուխանլու գյուղի բինաչաների թիվը պակասեցրել էր 34-ով, 114-ի փոխարեն թողնելով 80-ը։ Բինաչաների թիվը ավելացվում էր նաև որպես պատիժ այս կամ այն արարքի համար։ Նման դեպքերում դժվար էր ազատվել հավելադրված բինաչաներից։

Բինաչաները, ըստ գյուղերի պատկանելության, երկու տեսակի էին՝ բահրաքյարական և յարիքյարական։ Բահրաքյարական յուրաքանչյուր բինաչա վճարում էր տասը թուման և երկրագործության արդյունքների 1/3 մասը։

Յարիքյարական կամ կիսարարական գյուղերի բնակչությունը գերազանցապես այլ վայրերից գաղթեցվածներ էին։ Նորեկ գաղթականներին սարդարը տրամադրում էր հող, անասուններ, սերմացու, երկրագործական գործիքներ։ Բերքը հավաքելուց հետո առանձնացնում էին սերմացուն, մնացածը բաժանվում սարդարի և յարիքյարների միջև։ Յարիքյարական բինաչան դրամով երեք թուման հարկ էր վճարում։

Պարսկական տիրապետության վերջին տարիներին Երևանի խանությունում կար բահրաքյարական 539,5 բինաչա։ Յարիքյարական բինաչաների թիվը նույն տարիներին կազմում էր 300,5, որոնցից 204,5-ը պետական էր, 20-ը՝ պետական-մուլքադարական և 76-ը՝ մուլքադարական։ Սրանց դրամական հարկավճարը կազմում էր 901 թուման[44]։

44 И. Шопен, նշվ. աշխ., էջ 972։

Մի շարք մահալներում հարկավճարումների համար բինաչաներ չկային։ Շարուրի մահալում, օրինակ, հողը մշակվում էր սարդարի հետ կիսարար, և դրամ չէին վճարում, իսկ բնապարհակներ կատարելու համար մահալի վրա դրանցված էր 126 բինաչա։

Որոշ վայրերում հարկավճարումներն ըստ բինաչաների կազմվում էին այլ կերպ։ Դա վերաբերում էր թուրքական քոչվոր ցեղախմբերով բնակեցված վայրերին։ Կարաչորլիներից 7,5 բինաչայի համար գանձում էին 62,5 թուման, միլլի ցեղախմբից՝ 19,5 բինաչայի համար 162,6 թուման, Քյոլանի և Մուղանլի ցեղախմբերից՝ 37 բինաչայի համար 193 թուման, սաաթլուցիներից՝ 28 բինաչայի համար 62,8 թուման, Ջիրախլի ցեղից՝ 40 բինաչայի համար 250 թուման, շահդիլիների և սադարակլիցիների 53 բինաչայի համար 275 թուման և այլն։ Հայկական համայնքից Կողբի և Ջնչհավատի «աղ կտրողները» 38 բինաչայի համար վճարում էին 357 թուման, իսկ ակոռեցիները՝ 30 բինաչայի համար 250 թուման[45]։

Երևանի խանությունում բոլոր բինաչաների թիվը հավասար էր 1093-ի։ Սրանք տարեկան խանական գանձարան էին մուծում 7836 թումանից ավել դրամական հարկ։ Բացի այդ, կային նաև 490 բինաչաներ Շարուրի, Սարդարապատի և Կարբիբասարի մահալներում, որոնք դրամական տուրք չէին վճարում։

Համեմատաբար քիչ դրամական տուրք վճարում էին քոչվոր ցեղախմբերը, որոնց բնակավայրերի կենսապայմանները, ինչպես նաև զբաղմունքի տեսակը այնքան էլ չէին նպաստում նրանց բարեկեցությանը։ Բացի այդ, նրանց տրված էին որոշ արտոնություններ՝ սահմանապահ ծառայություն կատարելու համար։

Տարեկան դրամական տուրքեր վճարում էին նաև ա) Երևանի հայ բնակչությունը—1724,5 թուման, բ) Էջմիածնի վանքը որպես մաղթա—400 թուման, (թեև Աբաս Միրզայի հրովարտակով ազատված էր այդ վճարումից), գ) Մակուի Ալի խանը, որը ենթարկվում էր Երևանի սարդարին և 300 թուման վճարում էր Շարուրի մահալում նրան որպես թիուլ պարգևված Արաբ-Ենգիջա, Կարա-Հասանլի և Դիադին գյուղերի համար, դ) քոչվոր ցեղերը—8219,8 թուման[46]։

Յուրաքանչյուր տարի Երևանի խանին տրվում էին ընծաներ՝ փեշքեշներ, որպես հարգանքի և հավատարմության նշան։ Փեշքեշը մատուցվում էր նովրուզ-բայրամի օրը՝ ոսկե կամ արծաթե մատուցարաններով վրա։ Այդ փեշքեշները պարտադիր էին, և նույնիսկ սահմանված էր նրանց գումարը։ Էջմիածնի վանքը որպես փեշքեշ վճարում էր 150, Մակուի Ալի խանը՝ 200, Երևանի բնակիչները 100, Զանգիբասարի, Կրխբուլաղի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի և Կարբիբասարի բնակիչները՝ 440 թուման։ Բացի այդ, Երևանի բնակիչները պարտավոր էին սարդարին ընծայել 60 գլուխ շաքար, իսկ Շարուրի բնակիչները, դրամի փոխարեն, վճարում էին մոտավորապես 1000 թաճկիրա ցորեն և 1400 թաճկիրա չալթուկ՝ 460,6 թումանի արժողությամբ։ Դարաքենդ-Փարչենիսի և Սաաթլուի մահալի ավագները սարդարին մեկական նժույգ պետք է ընծայեին։ Փեշքեշի տարեկան գումարը կազմում էր 1320,6 թու-

45 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1377, ց. 1, գ. 19, թ. 16բ։

46 И. Шопен, նշվ. աշխ., էջ 968—969։

ման[47]։ Դրամական զգալի գումար էր ստացվում կաշառատվությունից (ռուշֆաթից), որին թեև փեշքեշի տեսք էր տրվում, բայց մատուցվում էր դատական գործերը հօգուտ իրենց լուծելու համար։

Խոշոր հարկ էր դրվում նաև հայերի խաղողի այգիների վրա։ Մահմեդական ները խաղողի այգիների համար տուրք չէին վճարում, քանի որ նրանք իբր գինի չէին պատրաստում։ Ջալմաքչի, Քանաքեռ և Կղզի-Կալա (Կրիեբուլաղի մահալ), Շիրաբադ (Ջանդիբասարի մահալ), Աշտարակ (Կարբիբասարի մահալ) գյուղերի բնակիչները խաղողի այգիների համար վճարում էին 680 թուման։ Դրանցից միայն Աշտարակ գյուղը, որը խլվել էր էջմիածնից, վճարում էր 240 թուման։ Էջմիածնի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ և Օշական գյուղերը ազատված էին այդ տուրքից։

Մահալների պետերը՝ միրբոլուքները, թեև իրենց ծառայության համար, սովորաբար խանից էին ռոճիկ ստանում, որոշ դեպքերում ռոճիկը վճարելու պարտավորությունը դրվում էր բնակչության վրա։ Սուրմալուի միրբոլուքի համար մահալի բնակչությունը հավաքում և վճարում էր տարեկան 40 թուման, իսկ նույն մահալի հայ բնակչությունն իր մելիքի համար հավաքում էր 30 թուման և այլն։

Բնակչությունից էր գանձվում նաև միրաբների (ջրաբաժաններ) վարձը։ Երևանի բնակչությունը պետք է հավաքեր և միրաբին վճարեր 145 թուման, Գառնիբասարի միրաբին տրվում էր 58 թուման, Վեդիբասարի միրաբին՝ 29, Կարբիբասար, Շարուր և Սուրմալու մահալների միրաբները ստանում էին 30-ական թուման, որոշ դեպքերում էլ տարբեր քանակությամբ բնամթերքներ։

Բնակչությունը հարկահավաքներին պետք է վճարեր ծառայության վարձ՝ ղուլլուղ-փուլի։ Այն գանձվում էր բերքահավաքից հետո։ Սարդարին հասանելիք յուրաքանչյուր խալվար հացահատիկի համար գանձվում էր 6 շահի, բամբակի և ծխախոտի համար՝ 2 թուման։ 1827 թ. ղուլլուխ-փուլու գումարը կազմել է 1383 թուման։ Միաժամանակ այդ տուրքի միջոցով ստուգվում էին մյուս տուրքերը։

Դեռ հնագույն ժամանակներից Երևանի բնակիչները սովորություն ունեին գիշերապահներ վարձել քաղաքում և շուկայում հասարակական անվտանգությունն ապահովելու համար։ Սարդարը այդ գործը հանձնարարել էր իր մարդկանց, իսկ դրանց հասանելիք 72 թուման դրամը դնում էր իր գրպանը։ Երևանի խանությունում հնձվորները ևս պետք է տուրք վճարեին՝ յուրաքանչյուրը 34 շահի. դա կազմում էր 400 թուման և մտնում էր սարդարի գանձարանը։

Վերոհիշյալ բազմաթիվ դրամական ուղղակի տուրքերից և հարկերից բացի, խանական գանձարանին մեծ եկամուտ էին բերում նաև անուղղակի հարկերը՝ մաքսերը, զանազան տեսակի կապալային հոդվածները, քարավանատները, կրպակները, դրամահատությունը և այլն։

Հյուսեին-Ղուլի խանի տիրապետության օրոք կապալով տրված օբյեկտներից ամենակարևորը Կողբի աղահանքերն էին, որոնք տարեկան 3500 թուման եկամուտ էին բերում։ Մաքսի կամ ռահդարիի գանձման գործը նույնպես տրվում էր կապալով։ Ռահդարի տարեկան կապալավարձը կազմում էր 3394

47 Նույն տեղում, էջ 274—275։

թուման[48]։ Գինի և օղի վաճառելու իրավունք ստանալու համար բնակչությունը պարտավոր էր սարդարին վճարել 110 թուման, որից 80 թուման ստացվում էր Երևանից, իսկ 30-ը՝ Սարդարապատից։ Սևանա լճում ձկնորսության կապալից ստացվում էր ընդամենը 100 թուման։ Կապալային հողված էր նաև ծխախոտի վաճառքը։ Երևանի շուկայում ծխախոտի վաճառքից ստացվում էր 72 թուման. 50 թուման էլ բերում էր կաշվի դրոշմումը։

Որոշ դեպքերում սարդարը մուլքադարներին էր շնորհում նրանց գյուղերից ստացվող բոլոր հարկերը, բայց դրանց դիմաց զանազան գումարների դրամական հատուցում էր ստանում։ Այս գյուղերից էին Ջանգիբասարի մահալի Դամիրչի-Շորլը, Գառնիբասարի մահալի Ագհամզալը, Շարուրի մահալի Քյուրքլիլին, Ակսիքենդը, Լաուշանը, որոնց մուլքադարներից գանձվում էր 526 թուման։ Նույնիսկ Երևանի դարուղայի (ոստիկանապետի) պաշտոնն էր կապալով տրվում, որը սարդարին տարեկան 819 թուման եկամուտ էր բերում, իսկ դարուղան էլ իր հերթին, այդ գումարից շատ ավելին գանձում էր Երևանի բնակիչներից, ինչպես նաև վաճառականներից, որոնք ապրանք արտահանելու համար նրանից թույլտվություն էին վերցնում և որոշակի գումար մուծում՝ ամեն մի բեռ ապրանքի համար։

Այսպիսի ուղղակի և անուղղակի հարկերից ու տուրքերից ստացվող դրամական գումարը տարեկան կազմում էր մոտավորապես 30709,2 թուման (158,837 ռուբլի արծաթով)[49]։

Դրամական հարկերն ու տուրքերը գանձվում էին երկու նվագով՝ աշնանը բերքահավաքից հետո և փետրվար ամսին, երբ ավարտվում էր բամբակի պտումը։ Այդ նպատակով գյուղերն էին ուղարկվում խանական ֆարաշներ՝ միրբոլուքների միրզաների ուղեկցությամբ և, ստորագրություն վերցնելով, պարտադրում էին տանուտերերին հավաքել և ճիշտ ժամկետին գանձարան մուծել դրամական հարկերը, հակառակ դեպքում տուգանում էին նրանց։ Տանուտերերը իսկույն ձեռնամուխ էին լինում կես տարվա հարկերի գանձմանը։ Հարկերը հավաքելուց հետո նրանք այն մուծում էին խանական գանձարան և գանձապահից ստանում բարաթներ։ Դրանից հետո միրբոլուքները հավաքում էին բարաթները, վերադարձնում դրանք գանձապահին և ստանում մի ընդհանուր բարաթ՝ ամբողջ մահալի համար։

Դրամական հարկերից ու տուրքերից բացի, գյուղական բնակչությունից գանձվում էին նաև բնամթերային հարկեր։ Բնամթերային հարկերի չափը կախված էր գյուղերի այս կամ այն խմբին պատկանելուց։

Բահրաքյարական գյուղերը վճարում էին երկրագործական բոլոր մթերքների երրորդ մասը։ Յարիքյարական կամ կիսրարական գյուղերը, սերմացուն առանձնացնելուց հետո, գանձարանի հետ կիսում էին բերքը։ Ռանչպարական գյուղերի բնակչությունը լիովին ընչազուրկ գյուղացիներ էին, որոնք հողազուրկ էին և մշակում էին ուրիշի հողերը՝ նրանց իսկ արտադրամիջոցներով։ Գյուղացիներից խլում էին բերքի 2/3-ը և թողնում էին այնքան, որքան անհրաժեշտ

48 И. Шопен, նշվ. աշխ., էջ 979—980։
49 Նույն տեղում, էջ 984—986։

էր, որպեսզի նրանք սովամահ չլինեին։ Նման գյուղերի թիվը մեծ չէր։ Ընդամենը վեց ռանչպարական գյուղեր կային, որոնցից երկուսը պետական, երկուսը մզկիթապատկան և երկուսն էլ մուլքադարական։ Դրանք էին Ջանգիբասարի մահալի Ջարբախ և Սարվանլար-Սուգիլա մզկիթապատկան գյուղերը, Շարուրի մահալի Ջոմախտըր և Կարբիբասարի մահալի Մուղանջիկ պետական գյուղերը, Սուրմալուի մահալի Ջիրախլի և Կարբիբասարի մահալի Ալիբեկլու մուլքադարական գյուղերը։ Սակայն այս գյուղերի հարկավճարումները միատեսակ չէին։ Ջարբախ գյուղը վճարում էր չալթուկի և բամբակի բերքի 2/3-ը, իսկ մյուս մթերքների՝ երրորդ մասը։ Ջոմախտըր գյուղը տալիս էր չալթուկի բերքի 2/3-ը, բայց մյուս կուլտուրաների բերքի կեսը։ Մուղանջիկ պետական գյուղի վիճակը ավելի ծանր էր՝ վերցվում էր բերքի 4/5 մասը։

Որոշ դեպքերում սարդարը մուլքադարներից վարձով վերցնում էր հարուստ գյուղերից բոլոր հարկերը գանձելու և սեփականացնելու իրավունքը, մուլքադարներին վճարելով որոշ քանակությամբ ցորեն, բամբակ և այլն[50]։

Սահմանված անասնահարկը վերցնելու համար նախապես հաշվում էին անասունների գլխաքանակը։ Յուղը հավաքվում էր սովորաբար սեպտեմբերին։

Որոշ վայրերի գյուղացիներ կրում էին նաև մի այլ պարհակ, որ փարաքար էր կոչվում։ Լավ հողեր և առատ ջուր ունեցող գյուղերի բնակիչներին սարդարը սերմացու էր տալիս ցանելու համար և բերքահավաքից հետո ցանված յուրաքանչյուր խալվարի դիմաց վերցնում էր հինգ անգամ ավելի ցորեն և գարի, յոթ անգամ ավելի չալթուկ, և 60 բաթմանն էլ մաքուր զտված բամբակ։ Այդ եղանակով սարդարը տարեկան 89 խալվար 47 բաթմանի զուտ եկամուտ էր ունենում, որ դրամով հաշված կազմում էր 23715 ռուբլի։ Իսկ ընդհանրապես բնամթերային հարկերից ստացված եկամուտը հավասար էր 84435,4 թուման (337742 ռուբլի արծաթով)։

Այս բոլորից բացի, գյուղացիներից վերցնում էին անասնահարկեր։ Քոչվոր ցեղերից յուրաքանչյուր հարյուր գլուխ այծի և ոչխարի դիմաց որպես հարկ վերցվում էր մեկ ոչխար և մեկ գառ, կամ յուրաքանչյուր հարյուր հազար գլուխ ոչխարի դիմաց 500 թուման։ Քոչվոր քրդական ցեղախմբերը 251700 գլուխ ոչխարի դիմաց վճարում էին մոտ 1300 թուման հարկ։ Նրանք պարտավոր էին նաև պահել սարդարին պատկանող անասունները դեշպեդեշի և ամանիի հիմունքներով։ Առաջին դեպքում քոչվորները պարտավոր էին պահանջելուն պես տալ նույն տարիքի և քանակի անասուններ։ Յուրաքանչյուր կթի ոչխարի դիմաց նրանք վճարում էին կես բաթման յուղ, իսկ բոլոր ոչխարների համար մեկ ստիլ (իստիլ) բուրդ։ Ոչխարների ծինը պատկանում էր պահողին։ Երկրորդ դեպքում աճեցրած գլխաքանակը և բուրդը պատկանում էր սարդարին, դրա հետ մեկտեղ 7,5 ստիլ յուղ յուրաքանչյուր կթի ոչխարից։ Ոչխարներին դրոշմում էին և 500 գլուխ տալիս երկու հովվի պահելու, որոնց վարձ էր տրվում 20 գառ և 120 բաթման ցորեն։ Դեշպեդեշի հիմունքով սարդարը պահել էր տալիս մոտ 11 հազար գլուխ ոչխար, որոնց դիմաց ստանում էր 5420,5 բաթման յուղ և 504 բաթման բուրդ։ Ամանիի հիմունքով սարդարը պահելու էր տալիս 8425

50 И. Шопен, նշվ. աշխ., էջ 988—989։

գլուխ ոչխար և 830 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։ Մեկ գոմեշի դիմաց սարդարին վճարվում էր 6 բաթման, իսկ կովի դիմաց՝ 4 բաթման յուղ, ընդամենը 2060 բաթման։ Ոչխարներից ստացվում էր 3154 բաթման յուղ և 3197 բաթման բուրդ։ Քոչվոր քրդերը պարտավոր էին նաև տարեկան մեկ անգամ սարդարին տրամադրել իրենց բեռնակիր անասունները, որպեսզի նա բամբակը, բրինձը և այլ ապրանքներ տեղափոխի Բայազետ, Նախիջևան, Կարս, Խոյ, Ուրմիա, Թիֆլիս և այլուր[51]։

Բնատուրք հավաքելու համար նշանակվում էին սարքյարներ (հարկահավաքներ), ինչպես սարդարի, այնպես էլ միրբոլուքների կողմից։ Սարդարը հաճախ մահալներն էր ուղարկում իր սարքյարներին, եթե նկատում էր, որ տուրքերը պակասում են, իսկ որոշ դեպքերում էլ իր սարքյարների փոխարեն նշանակում էր մահալային սարքյարներ։

Սարքյարները գյուղերում հայտնվում էին սովորաբար մայիս ամսին և հաշվի էին առնում ցանքերը։ Բերքահավաքից հետո հացահատիկը տանում էին կալերը։ Ամեն երեկո, կալսելուց հետո, ցորենի շեղջակույտերի վրա սարքյարը դնում էր իր փայտյա կնիքը, որպեսզի գողություն չկատարվի։ Գողության դեպքում հայտնում էին միրբոլուքին և պահանջում գտնել և պատժել մեղավորներին։ Կալսելուց հետո սարքյարը առանձնացնում էր պետական հարկը և լցնում գյուղական ամբարները, որոնք փակ էին և կնքված, հացահատիկը լցնում էին երդիկից։ Երբ կալսումը ավարտվում էր, բացում էին ամբարի դուռը և տանտիրոջ, քահանայի կամ մուլլայի, իսկ մուլքադարական գյուղերում նաև մուլքադարի ներկայությամբ, չափում էին հացահատիկը, մուլքադարին տալիս իր բաժինը, որից հետո գյուղացիները պարտավոր էին բերքը տեղափոխել պետական ամբարները։ Հանձնելուց հետո նրանք բարաթներ էին ստանում ամբարդարներից։ Պետական ամբարներ կային Երևանում, Սարդարապատում, Թալինի բերդում, Սուրմալուի մահալի գյուղերում։ Շատ դեպքերում բերքը մնում էր գյուղական ամբարներում՝ ցանօրինությունն սարդարի։ Որոշ դեպքերում էլ, ինչպես Շարուրի մահալում, ստացված տուրք-բնամթերքը տեղնուտեղը վաճառվում էր Ատրպատականից և այլ վայրերից եկած վաճառականներին։

Սարդարի կողմից նշանակված սարքյարներին բնակչությունը ամսական մեկից մինչև երկու թուման էր վճարում և երեք բաթման էլ մթերքներ ամեն մի կալից, բացի բամբակից։ Գյուղացիները միաժամանակ պետք է կերակրեին նրանց և ձիու համար էլ օրական մեկ բաթման գարի տային։ Սարդարական սարքյարների թիվը հասնում էր մինչև 50-ի։

Մահալական սարքյարները ամսական մինչև մեկ թուման էին ստանում և երեք բաթման էլ բնամթերք։ Դրանց թիվը հասնում էր 150-ի։ Բայց նրանք իրավունք չունեին ձիու համար գարի ստանալ։

Նախիջևանի խանությունը գտնվում էր Ատրպատականի կուսակալի անմիջական գերակայության ներքո։ Այստեղ հարկերը հավաքվում էին այնպես, ինչպես որ ընդունված էր ամբողջ Պարսկաստանում։ Նախիջևանի խաները

---

51 *Н. Г. Богданова*, К вопросу о феодальной эксплуатации кочевников в Закавказском крае в первой трети XIX в. («Исторический архив», т. 2, М.—Л., 1939), *տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1337, ց. 1, գ. 19, թ. 21բ—26բ։*

տարեկան հարկ էին վճարում Աբաս Միրզային։ Այդ հարկի գումարը կազմում էր ավելի քան 30 հազար թուման դրամով և 2424 խալվար 90 բաթման՝ հացահատիկով։

Նախիջևանի խանությունում ուղղակի հարկեր գանձվում էին ինչպես առանձին շնչերից, այնպես էլ ծխերից, նաև բնակչության խմբերից, անասնապահությունից, մեղվաբուծությունից, ջրաղացներից, ջուլհակագործությունից, հայկական եկեղեցիներից, անշարժ կայքից, առևտրից և այլն։

Գլխահարկը կոչվում էր բաշ-փուլի և գանձվում էր յուրաքանչյուր 15 տարին լրացած հողագործից։ Այն գանձվում էր ամուրիներից, հայերից՝ 1 թուման, իսկ ադրբեջանցիներից՝ կես թուման 4 շահի։

Ծխահարկը կամ էվփուլին գանձվում էր յուրաքանչյուր ընտանիքից. հայերից՝ 2 թուման, ադրբեջանցիներից՝ 1 թուման։

Քաղաքային բնակչությունից քյանգարլիցիներին պատկանողները վճարում էին 1260,9 թուման, երկրագործությամբ զբաղվողները՝ 150 թուման։ Օրդուբադ քաղաքը վճարում էր հազար թուման։ Դարալագյազի մահալում հաստատված կարաշռռու և քյանգարլու ցեղախմբերը միասին վճարում էին 2000 թուման։ Այդ գումարը հատկացվում էր Պարսկաստան փախած վրացական արքայազն Ալեքսանդրին, որին այդ մահալը տրված էր որպես թիուլ։

Անասունների յուրքանչյուր գլխի համար, բացառությամբ եղների, գանձվում էր որոշակի գումար։ Խոշոր եղջերավոր անասունների յուրաքանչյուր գլխից գանձվում էր մոտավորապես կես թուման, մանր եղջերավոր անասուններից՝ 12 շահի, 16 շահի էլ վճարվում էր մեղվի ամեն մի փեթակի համար։

Ջուլհակագործությամբ հայերն էին զբաղվում, որոնք և յուրաքանչյուր դազգահի համար վճարում էին կես թուման, մոտավորապես երկու թուման էլ մետաքսագործական ամեն մի դազգահից։

Հայկական ամեն մի եկեղեցի վճարում էր չորս թուման։ Սակայն որոշ վանքեր ավելին էին վճարում, ինչպես Կարմիր վանքը՝ տարեկան վեց թուման։ Այդ հարկը տրվում էր փաստորեն ազատ ժամասացության իրավունք ձեռք բերելու համար։

Քարավանատների, կրպակների և բաղնիքների տերերը, որպես հարկ, վճարում էին շահույթի քսան տոկոսը։ Այդ հարկի տարեկան ընդհանուր գումարը կազմում էր մոտավորապես 300 թուման։

Առևտրականները վճարում էին յուրաքանչյուր թումանից մեկ շահի, որպես ավալի։ Այդ հարկավճարի տարեկան ընդհանուր գումարը կազմում էր 400 թուման, որը նշանակում էր, թե տարեկան դրամաշրջանառությունը Նախիջևանում հասնում էր 80000 թումանի։

Նախիջևանի խանությունում գանձվում էր կուլլուղ փուլի, թարղի փուլի, ինչպես նաև թերակշռման համար հարկ՝ 2000 դիան յուրաքանչյուր խալվարից։ Օրդուբադի շրջանում բոլոր գնորդներից գանձվում էր նաև ղուլլեկ կոչված տուրքը, որը Պարսկաստանի որևէ մասում գոյություն չուներ։

Հարկեր գանձվում էին նաև այգիներից։ Խաղողի յուրաքանչյուր այգուց գանձվում էր 4,5 թուման, ամեն մի հազար մրգատու ծառից՝ երեք թուման։ Ընկուզի ամեն մի ծառի համար գանձվում էր 20 շահի։ Այդ հարկը կազմում էր բերքի մեկ հինգերորդ մասը։

Մնացած հողերը բաժանվում էին երեք հավասար մասի, մի մասը նախատեսվում էր ցորեն և գարի ցանելու համար, մյուս մասը այլ կուլտուրաների, այն է՝ բամբակ, բրինձ, քունջութ և այլն, որոնցից հարկը դրամով էր գանձվում, իսկ երրորդ մասը հանգստի համար և չէր հարկադրվում։ Հողագործները պարտավոր էին վճարել նաև դարմանի դիմաց՝ կես թոման ամեն մի խալվարից, մետաքսամշակության համար՝ ստացված ամբողջ մետաքսի հինգերորդ մասը, առվույտի ընդհանուր բերքի մեկ հինգերորդ մասը։

Ցորենի և գարու բերքից գանձարանը վերցնում էր ընդհանուր բերքի 3/10-ը, իսկ 1/20 մասը կազմում էր չելչեքը, որը նույնպես խանները սեփականացրել էին։ Մուլքադարական հողերից եկամտի 2/10 գնում էր գանձարանին, իսկ 1/10-ը տրվում էր մուլքադարին։

Հայաստանի հյուսիսային շրջաններում և Արցախում գանձվող հարկերը մեծ մասամբ ըստ էության նույնն էին, բայց կրում էին այլ անվանումներ։

Լոռիում, ինչպես և ամբողջ Վրաստանում գանձվող գլխավոր տուրքերը հետևյալներն էին՝ սուրսաթ, որը հավաքվում էր ինչպես պետական, այնպես էր կալվածատիրական և եկեղեցապատկան գյուղացիներից։ Ցուրաքանչյուր ծուխ վճարում էր երեք կոտ հացահատիկ՝ երկու կոտ ցորեն և մեկ կոտ գարի։ Սուրսաթը գանձվում էր պատերազմների ժամանակ՝ զորքը հացով ապահովելու նպատակով։ Եթե բերքառատ տարի չէր լինում, ապա յուրաքանչյուր կոտի դիմաց գանձվում էր մեկ ռուբլի։ Հայկական շրջաններից գանձվող սուրսաթի քանակը կազմում էր 16042 կոտ[52]։

Ղալա (բահրայի տեսակ, որ դրվում էր ըստ հողի բերքատվության) վճարում էին միայն արքունական գյուղացիները, ընդ որում տարբեր վայրերում տարբեր չափով՝ հացահատիկի բերքի 1/7 մինչև 1/10 չափով։ Մաղթան (բահրա) դրամական հարկ էր, որ պետք է վճարեին քաղաքացիները՝ մոքալաքները և արքունական գյուղացիները։ Մաղթա գանձվում էր յուրաքանչյուր շնչից 1 ռուբլի 4 3/4 կոպեկ։ Այսպես կոչված թաթարական սուլթանությունները մաղթա վճարում էին հացահատիկով։ Բնատուրքերից էր կուլուխին՝ գինու հարկը՝ բերքի 1/10 կամ 1/7 չափով. երբեմն այս հարկը գանձվում էր դրամով, յուրաքանչյուր սապալիեի (112 թունգու) դիմաց 10 ռուբլի արծաթով։ Մի շարք հարուստ համարված գյուղերից սուրսաթից բացի գանձվում էր կոդիսպուրի։ Կալվածատիրական գյուղացիները վճարում էին դրամական և բնամթերային հարկեր, կատարում էին աշխատանքային պարհակներ և այլն։

Թե պետական և թե կալվածատիրական գյուղացիների համար ամենածանր պարհակներ էին հանքերի մշակման համար կարգախմբեր առանձնացնելը և ճանապարհների վերանորոգումը կամ նորերի շինարարությունը։ Դրանք ծանր էին ոչ միայն այն պատճառով, որ գյուղացիներից մեծ ծախսեր և ուժերի լարում էին պահանջում, այլև խանգարում էին նրանց զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով և շատ դեպքերում ծանր վնասներ էին հասցընում տնտեսությանը։

---

52 Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 16, գ. 31, էջ 27։

Ուղեմասերի բնակիչները նաև պետք է պահակային ծառայություն կատարեին, հեծյալ (123 մարդ) և հետևակ (500 մարդ) տային լեռնանցքները և ճանապարհները պաշտպանելու ավազակներից և համաճարակային հիվանդություններից[53]։

Ղարաբաղի խանության մեջ նստակյաց բնակչությունից և քոչվորներից տարբեր հարկեր էին գանձվում։ Նստակյաց բնակչությունը վճարում էր հեուկյալ հարկերը՝ մալուջաիաք (բահրա)-հացահատիկի և երկրագործական մյուս արդյունքների 1/5-ի չափով, սալյանե (բահրա՝ հօգուտ խանական դիվանի)՝ գանձվում էր նույնպես հացահատիկով, միրզայանի, կուլլուղի, թաուվիլանի և դարղալըղ, որոնք գանձվում էին խանական պաշտոնյաների, ծառաների և զորքի վարձատրության համար, ինչպես նաև դրամական հատուկ տուրք, որից կազմվում էր խանի կողմից ռուսական պետությանը վճարվող 8 հազար ռուբլու տուրքը։ Գյուղացիները վճարում էին նաև բայրամլըղ նովրուզ-բայրամի տոնին, հարսանիքի համար, իսկ առանձին գյուղեր նաև փայտ էին տալիս։

Քոչվորներից գանձվում էր սալյանե, օթաղ-խարջի, սիրխանա-խարջի, (խանական խոհանոցի համար գանձվող տուրք)՝ ինչպես նաև բահրա՝ պետական հողի վրա վարուցանք կատարելու իրավունքի համար՝ յուրաքանչյուր արորից 1,5 չետվերտ ցորեն և 1,5 չվալ գարի, ինչպես նաև դրամական տուրք։

Հարկերի գանձումը ուղեկցվում էր բռնություններով, խժդժություններով, գյուղացիությանը դատապարտելով աղքատության ու թշվառության։ Խիստ բնորոշ է հինավուրց Դվինի ավերակներից հարավ-արևմուտք ընկած Աղքաշ գյուղի թշվառության նկարագրությունը, որ թողել է Մ. Թաղիադյանը։ «Սրա անդաստանները հռչակավոր են բրնձի ընտիր և պատվական բերքով, որ միայն իշխանների ու թագավորների կերակուր է դառնում։ Թեև բոլորի համեմատ շատ առատ էր բերքը, սակայն բնությունից խիստ ընտիր էր, ուստի կրկնապատիկ ավելի գնով էր վաճառվում, քան այդ գավառի այլևայլ արտերի բերքը։ Այսպիսի բարեբեր գյուղի բնակիչները, հարկավ պետք է հարստանային, բայց ընդհակառակը, չքավորության շղթաներով էին կաշկանդված, որովհետև Երեվանի կուսակալ Հյուսեին Ղուլի խանը, որպես երկրիս բոլոր գյուղերի, այնպես էլ այս գյուղի բնակիչների բոլոր ցանքսերին բաժնեկից էր դառնում։ Ամեն մի տան տալիս էր մի լուծ եզներ, բրնձի, բամբակի և այլ շահաբեր կուլտուրաների սերմեր։ Նրանք ցանում էին, իսկ հնձի ժամանակ խանը ուղարկում էր (հարկահավաքներ), որոնք կիսում էին բերքը և ապա մնացած մասից էլ վերցնում էին արքունական տուրքը, այնպես որ գյուղացիների ծախսերի համար բավական բան չէր մնում։

Եթե պատահում էր, որ երկնառաք պատուհասից անբերրիանում էին հանդերը և բերք չէին տալիս, խանը, ժողովրդի վրա գցելով մեղքը, անպատմելի խժդժություններ բռնանում էր նրանց վրա, բռնագրավում էր ինչ որ գտնում էր նրանց տանը՝ կահն ու կարասին և, եթե դա էլ էր պակասում, վերցնում էր նրանց կանանց ու զավակներին՝ իր ընկերաբաժնի դիմաց։ ...Մեծի միջոցով էր նա բազմապատկում յուր ռակինները և տառապյալ մարդկանց տանջանքների

53 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 16, գ. 4150, թ. 121։

հաշվին հավաքում էր այն հագեցնելու իր որկորը. ամբողջ երկիրը մաշում էր կեղեքումներով և ժողովրդի քրտինքով կառուցում Ղազվինի իր դաստակերտները, բազմացնում իր գանձերը»[54]։

Հարկային դաժան սիստեմը, իշխանավորների ընչաքաղցությունը, բազմաթիվ ու բազմապիսի հարկերը, կանանց ու երեխաների վաճառքը, ունեցվածքի բռնագրավումը, խեղճ գյուղացիության ստրկացումը վաշխառուներին, որոնք բարձր տոկոսներով և կարճ ժամկետներով գումարներ տալով, հետագայում բազմապատիկ ավելին էին կորզում իրենց ճանկն ընկած զոհերից, գոյության անտանելի պայմաններ էին ստեղծում երկրի ամենաբազմամարդ և առավել շատ շահագործվող դասակարգի՝ գյուղացիության համար։

6. ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Պարսկական տիրապետության վերջին տարիներին հայ ազգաբնակչության վիճակը գնալով ավելի ծանրացավ։ Սոցիալական դաժան ճնշումներին գումարվում էին ազգային ու կրոնական հալածանքները, որպես պատասխան հայ ժողովրդական զանգվածների ազատագրական ձգտումների, Ռուսաստանի օգնությամբ օտար լուծը թոթափելու նրանց փորձերին։ Հայերի նկատմամբ բռնություններն ու վայրագությունները հասել էին մինչ այդ չտեսնված չափերի. «Մարդ ո՞ր հողը տա գլխին. ինչ ուզում են, էն են անում։ Դատաստան չկա, իրավունք չկա... Աղչիկն ասես, քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը՝ ո՛չ օղլուշաղը»[55]։

Նույնիսկ ամենայն հայոց կաթողիկոսությունը և նրա կենտրոն էջմիածինը, որոնք իբր թե գտնվում էին գահաժառանգ Աբաս Միրզայի «հատուկ հովանավորության» ներքո, ենթարկվում էին անլուր հալածանքների ու ահավոր բռնություններին։ Բանը երբեմն այնտեղ էր հասնում, որ նույնիսկ հոգևոր պաշտոնյաներին էին փորձում կրոնափոխ անել, հարկադրում մահմեդականություն ընդունել։

Սարդարական կառավարությունը օգտագործում էր ամեն մի առիթ, որպեսզի կաշառքներ ու կամավոր «նվիրատվություններ» կորզի իր հպատակներից։ «Պատահում էր, որ ոչ միայն սարդարը, այլև մի ինչ-որ խան էր գալիս,— աշտարակցիների պատմածից իր օրագրում մեջ է բերում դեկաբրիստ Ե. Լաչինովը,— և նրա այստեղ մնալու ժամանակը անցնում էր տանջալից սպասումով՝ ոչ-ոք վստահ չէր իր կյանքի ապահովության համար։ Ծանրությունն ընկնում էր մարդու հոգուց միայն այն ժամանակ, երբ նա գնում էր, բայց այն երկյուղը, որ նա հանկարծ չլինի թե վերադառնա, երկար ժամանակ թույլ չէր տալիս բոլորովին հանգստանալ...»[56]։ Մի այլ կապակցությամբ նույն Լաչինովը գրում էր. «...սարդարի գալուստը բոլորին ստիպում էր թպրտալ։ Ամեն րոպե վախենալով զրկվել ողջ կարողությունից, նրանք վստահ չէին կա-

54 Մ. Դ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս..., հատ. I, էջ 226—227։

55 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 38։

56 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 377—378։

րող լինել նույնիսկ կյանքի համար»[57]։ Այդպես էր ողջ Պարսկաստանում. իր ձեռքում իշխանություն ունեցող անձի այցելությունը որևէ վայր հաճախ իր եռևից բերում էր շատերի սնանկացում։ Հայ ունևոր դասակարգերը ևս ազատ չէին այդ վտանգից. նրանց կյանքը և ունեցվածքը նույնպես մշտական սպառնալիքի տակ էին։ Հյուսեին-Ղուլի խանի կառավարչության խիստ ցայտուն բնութագիրը տվել է ժամանակակից իրադարձությունների ականատես Մեսրոպ Թաղիադյանը։ Սարդարը, գրում էր նա, «գանակոծությամբ էր ծնեցնում յուր ոսկիները և տառապյալների տանջանքների արյունով էր արբեցնում. ամբողջ երկիրը մաշում էր կեղեքումներով և [հպատակների] քրտինքով էր կերտում Ղաղբինի իր դաստակերտները և մեծացնում հարստությունը»[58]։

Խ. Աբովյանը Երևանի բերդի մասին, որպես Արևելյան Հայաստանում պարսկական դաժան տիրապետության հենակետի, գրել է. «Երևանու բերդը՝ ա՞խ՝ աչքս դուս գա, քանի՞ քանի ողորմելի հալի միս ա կերել, քանի՞ քանի անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլնելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կղակած քարփչի տանելուց, համբերելուց եղը, կամ թուփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրա յա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամներովը կոծելով, աչքերը դուս տրաքելով, ղռվում, ղարդաշ, իրավորի, աղգականի, իր որդոց զավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթոթվելով, հոգին ավանդել. երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գաղանների ձեռիցը։ Քանի՞ քանի չահել երիտասարդ՝ մեկ սաղ օջաղի մեն մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը գլուխ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արևի նոր բաց էլած ժամանակին՝ կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել...»[59]։ Սա այն համընդհանուր դառն վիճակի վառ նկարագրությունն է, որի մեջ գտնվում էր օտար լծի տակ կեղեքվող հայ ժողովուրդը։

Նույնիսկ 1810 թ., երբ շահական ու խանական կառավարությունները կարծես էջմիածինը սիրաշահելու դիրք էին բռնել, դարձյալ շարունակվում էին հալածանքները։ Երբ Փամբակից փախած Նաղի խանի տոհմը հրդեհվեց մի մարդու կողմից, որի ընտանեկան պատիվը արատավորել էր այդ նույն Նաղի խանը, սարդարի եղբայր Հասան խանը այդ առիթն օգտագործեց՝ կրկին անգամ կողոպտելու վանքը։ Նաղի խանի եղբայր Հասան բեկը իր մարդկանցով ներխուժում է էջմիածին և սկսում ծեծել ու ջարդել պատահած մարդկանց։ Զինվորներից մեկի հարվածից վախճանվում է զառամյալ Ստեփաննոս եպիսկոպոսը։ Քսան հրացանավոր պարսիկներ դաժանորեն ծեծում էին Ներսիսյան Հովհաննես եպիսկոպոսին և Մայր տաճարից դեռնաքարշ տանում մինչև Գայանեի վանքը։ Տեղապահ Բարսեղ եպիսկոպոսին այնպես են հարվածում, որ երկու ժամ ընկած է մնում սառույցի վրա։ Մի քանի օր հետո ձերբակալվում են

57 Նույն տեղում, էջ 383։

58 Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հատ. I, էջ 227։

59 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 59—60։

Ներսես Աշտարակեցին, տնտես Ղուկաս վարդապետը, մեհտար Ավետիսը և ուրիշներ։ Հասան խանը սպառնում է նրանց հրանոթազարկ անել։ Էջմիածնի վանքից 450 թուման դրամ կորզելուց հետո միայն հանգիստ են թողնում միաբանությանը[60]։

Նրանք, ովքեր խանին «զայրացնում էին», պետք է բռնեին փախուստի ճանապարհը։ Հետագայում Շուշիում հաստատված երևանցի հայ մեծահարուստ Զոհրաբ Թառումյանը, ժամանակին հալածվելով սարդար Մամադ խանից, երեք օր մնացել էր մի արկղի մեջ թաքնված, որից հետո մի կերպ դուրս էր եկել ու փախել խանության սահմաններից[61]։ Վայրագ կամայականությունների և հալածանքների դեպքերը կրկնվել են սարդարական տիրապետության բոլոր ժամանակներում։ 1823 թ., երբ Սիրեմ կաթողիկոսը գտնվում էր փախուստի մեջ, սարդարի պաշտոնյաներից ոմն Միրզա Ջապար, իր ծառաների հետ գալիս է վանք, հյուրընկալվում «անդէն ըմբռնեալ յարբեցութեան»։ Երբ նրանք բավականաչափ գինովանում են, հանում են սրերը և սկսում աջ ու ձախ հարվածել հանդիպած մարդկանց։ Թիկունքից վիրավորում են Ստեփաննոս Գեղամյան և Փիլիպպոս Թոխատցի եպիսկոպոսներին, հյուրընկալ Հակոբ և Գևորգ Տաթևացի վարդապետները վիրավորվում են թևերից։ Անբաժին չի մնում նաև աթոռակալ Սիրեմ Տեղապահյան արքեպիսկոպոսը։ Ժամանակակիցները հետևյալ կերպ են նկարագրում այս դեպքը. «Սարդարի հավատարիմ Միրզա Ջապպարը գնում է աթոռ այն դիտավորությամբ, որ այնտեղ գրտնըլված բարիքները վայելելուց հետո, հրաման տա իր ծառաներին սուր վերցնել և թրատել բոլորին. այդ ժամանակ երկու եպիսկոպոսներից մեկին երկու տեղով և մյուսին երեք տեղով ծանր վիրավորում են, այլև սրով հարվածում են մի վարդապետի գլխին, կտրում վեղարը և նրա գլուխը փրկվում է շնորհիվ վեղարի մեջ եղած բամբակի. վարդապետներից մեկի բազուկը փշրում են փայտի հարվածով, իսկ մի ուրիշ վարդապետի ծեծում են մինչև շնչասպառ լինելը և հետո կամենում են մորթել՝ գետնին տարածելով, երբ հանկարծ վրա է հասնում սարդարի պաշտոնյաներից մեկը և ազատում նրան. հարվածներից մեռնում է միայն դռնապաններից մեկը»[62]։

Տանջանքների նորանոր ձևեր հնարելիս բարբարոսների երևակայությունը կանգ չէր առնում ոչ մի բանի առաջ։ Պատճառաբանելով, որ իբր թե մի շարք արքեպիսկոպոսներ չեն հնազանդվում կաթողիկոսին, էջմիածին է ժամանում խանի գինվորական պաշտոնյաներից սարհանգ Մահմեդ խանը և հրամայում, որպեսզի վեց արքեպիսկոպոսների և Վաղարշապատի նշանավոր բնակիչներից մի քանի հոգու լցնեն մի սենյակի մեջ և ապա «հիւսել զդրունսն, զի մեռցին անդէն»։ Այնուհետև «որքան էլ որ չեն աղաղակում պատրիարքն ինքը և առհասարակ մյուսները, թե նման խոսք չի եղել իրենց մեջ, չեն կամենում լսել և ոչ էլ ներում են, մինչև որ սարհանգ Մահմեդ խանը հազար թումանի մուր-

60 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 17, վավ. 46։

61 Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հատ. I, էջ 298—299։

62 «Համառօտութիւն անցից Քրիստոսակերտ մայր աթոռոյ սրբոյ էջմիածնի», Տփխս., 1853, էջ 18—19։

հակ չի վերցնում, այդ գումարը մի ամսում վճարելու պայմանով, բացի նրանից, որ վերցնում են սարհանգն ու նրա հետ եղածները որպես վարձ իրենց պատճառած տանջանքի համար»[63]։

Դրան ավելանում էին նաև պատերազմի առաջացրած ավերները։ Պատերազմական գործողությունների ժամանակ, ինչպես արդեն հիշատակվել է, ժողովուրդը տեղահանվում էր, իսկ նրա ունեցվածքը թալանվում, ոչնչացվում։ Ցնցող է տեղահանության պատկերը «Ղալաբանդըղի» (բերդի պաշարման) ժամանակ, որ տալիս է Խ. Աբովյանը. «Զորագեղի ու Կոնդի քուչեքումը որ ասեղ քցեիր, գետինը չէր հասնիլ, էնքան Արախլու, Ղարափափախ, Քուրդ, Սարվազ էին լցվել, որ գետինը սևացել էր։ Բերդի չորս կողմն էլ տեղ չկար. դուքան էր՝ որ թարաշ էին տալիս, տուն էր, որ թալանում, կրակ տալիս ու տան տիրոնջը չիփ չիփլախ իր ողորմելի օղլուշաղի ձեռը բռնած, դառ ու դարդակ դուս խըռկում, բրի, թվանքի առաջն առնում... Քուչեքանց միջին՝ երեխեքանց, հարսների ու աղչկերանց ձենը՝ քարերը մղկտացնում էր, լացացնում։ Շատը ձիու ոտի տակին էր հոգին տալիս, շատը ահից ու դողից էր լեղապատառ ըլում, շատին երեսի վրա էին քաշ տալիս, որի մազերից էին ձիու եդևիցը սուրբմիշ անում, քարեքար տալիս, էն օրը գնա, ոչ եդ գա, ինչ Երևանի հալն էր»[64]։

Հաճախ էր պատահում, որ հարկերը և պարտքերը վճարելու կարողություն չունեցողների կալքի հետ վաճառում էին նույնիսկ երեխաներին։ 1810 թ. քառասուն թուման պարտքի դիմաց ցանկանում էին վաճառել քանաքեռցի Հովհաննեսի Ահարոն և Կարապետ որդիներին։ Ճարահատյալ հայրը այդ գումարը վերցնում է Ներսես Աշտարակեցուց և այդպիսով փրկում իր որդիներին՝ ստրուկ դառնալու վտանգից[65]։

Օգտագործելով իր բռնակալական իշխանությունը և բաժնեկից դառնալով բազմաթիվ բերքատու գյուղերի բնակիչների ցանքսերին, բնական պատուհասների և այլ տարերային աղետների դեպքերում խանը պահանջում էր իր բաժինը. «...բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր զոր ինչ տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում»[66]։ Դրանով իսկ նա մշտական աղքատության և իրավազրկության էր դատապարտում երկրի բնակչությանը։

Ահա այսպիսի միջոցների էին դիմում սարդարը և նրա պաշտոնյաները՝ անօգնական ու անզոր հպատակներից նրանց վերջին հյութերը քամելու համար։ Տուգանքները, անասելի տուկոսներով, կարճ ժամանակով դրամ փոխ տալը, ծեծն ու սպառնալիքները, ամենաարժեքավոր մթերքների վաճառքի մենաշնորհ սահմանելը, հպատակներից էժան գնով ապրանքներ գնելը և թանկ գնով նրանց վերավաճառելը, իրենց իսկ շնորհած ռաղամներն ու շնորհագրերը ոտնատակ տալը, կաշառակերությունը, բռնի կրոնափոխությունը, երեխաներին ծնողներից անջատելն ու պարտքերի դիմաց որպես ստրուկներ վաճառելը,

63 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 45, վավ. 142բ։
64 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 85—86։
65 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 22ա, վավ. 41։
66 Մ. Թազիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հատ. I, էջ 226։

գերեվարությունը և բազմաթիվ նման բնույթի ապօրինի գործողությունները, խժդժություններն ու չարաշահումները հայ ժողովրդական զանգվածների համար դժոխային պայմաններ էին ստեղծել։ Պարսկական տիրապետության վերջին տարիներին հայ ժողովրդի այդ անտանելի գոյավիճակի կենդանի ու սարսռեցուցիչ պատկերը մեզ թողել է Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանիս» վեպում։ Մեծ հայրենասերի խոսքերով ասած. «Էս անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հալից էլ, մալ են տեսնում մեզանում՝ խլում են, ղչիկ են գտնում՝ քաշում են, մեզ կրակն են դրել, սաղ սաղ էրում են, փոթոթում, թե մեկ խոսք էլ ասում ես հո՝ վայ քո օրին, արևին՝ գլխիդ էնքան բռնցկում են (մուշտում), որ աչքդ բուդ ա ընկնում։ Տունդ էլ որ քանդեն ձեն չպետք է տաս. ախր որ մեր միսն էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կըլի։ Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա չա բարձրացնում։ Ջիլում՝ որ մեկ օր գնանք, ջուրը թափինք, պրծնինք։ Ախր էս հո օր չի՝ որ մենք քաշում ենք»[67]։

Պարզ է, որ նման պայմաններում, երբ օտար բռնակալության ծանր բռունցքը անողոքաբար ճնշում էր հայ ժողովրդի բոլոր խավերին, նրանք պետք է փրկության ելք որոնեին։ Այդ ժամանակամիջոցում հասունացող արտաքին քաղաքական իրադարձություններն ինքնըստինքյան թելադրում էին, որ արդեն Անդրկովկասում հիմնավորվող ռուսական զենքն է, որ պետք է ազատի նրանց այդ ծանր վիճակից։ Դեպքերի տրամաբանական զարգացումը օրակարգի մեջ էր դրել Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից։

---

67 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. *III*, էջ 80։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Թուրքիան ապրում էր տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամ։ Ռազմական նվաճումների ճանապարհով ուռճացած կայսրությունը թուլանում էր, քայլ առ քայլ զիջում երբեմնի դիրքերը, իրար հետևից կորցնում նախկինում բռնագրաված երկրամասերը։ Այս պայմաններում աստիճանաբար ուժեղանում էին կենտրոնախույս ուժերը, հաճախակի դառնում միջֆեոդալական ու միջցեղային բախումներն ու ներքին երկպառակությունները։ Սուլթանների վաղեմի հավատարիմ զորաջոկատները՝ ենիչերիները (ենի-չերի՝ նոր զորք) մեծ մասամբ հավաքվել էին մայրաքաղաքում, մասնակցում էին գահակալական կռիվներին, գահընկեց էին անում անցանկալի վեհապետերին, կառափնարան քշում մեծ վեզիրներին ու բարձրաստիճան այլ անձանց։ Թուրքական հետևակն ու հեծելազորը խիստ թուլացել էին[1]։

Օգտվելով կայսրության ռազմա-քաղաքական ու տնտեսական հզորության թուլացումից՝ Անատոլիայի մեծ մասում սփռված քրդական ցեղապետերն իրենց կապերը խզել էին կենտրոնական կառավարությունից, դարձել անկախ դերեբեյներ (հովտատերեր) և ոչ միայն հարկեր չէին վճարում, զինվորական ուժեր չէին տրամադրում գերագույն սյուզերենին, այլև ասպատակում էին նրան հպատակ մնացած երկրամասերը։ Քուրդ խաներին ենթակա շրջանները, Կիլիկիայի մեծ մասը և Եգիպտոսը վերածվել էին շարունակական կռիվների բեմահարթակի։

Այս ընդարձակ շրջանների վրա պետության գերիշխանությունը թուլլ էր։ Բիթլիսի, Վասպուրականի, Մուշի, Խիզանի, Դիարբեքիրի իշխողները, լեռնային ու դաշտային Կիլիկիայի մեծ մասին տեր դարձած Կոզանյան բեկերն ու խաները արգելակում էին թուրքական զորաջոկատների ու հարկահաններ-ների մուտքն իրենց գավառները։ Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալին և նրա որդի Իբրահիմ փաշան ռազմականապես այնքան էին հզորացել, որ պարտության էին մատնում թուրքական բանակները։

---

[1] *Д. Г. Розен*, История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. I, СПб., 1872, стр. 7—8.

Թուրքահպատակ ազգային շրջանների, նրանց թուրք կառավարիչների ու Բարձրագույն Դռան փոխհարաբերությունները ևս լարված էին։ Ռազմա-ֆեոդալական սիստեմը վաղուց ցույց էր տվել իր սնանկությունը։ Թուրք դինվորականներն, օգտվելով իրենց համար նպաստավոր իրադրությունից, պետական հողերը դարձրել էին մասնավոր, ժառանգական սեփականություն։ Ամանց զինվոր տալու նրանք այժմ կարող էին տիրել նախկին հողակտորներին, հարկը գանել ու գրպանել։

Ուժեղացել էին ազգային ճնշումները։ Քրիստոնյա այլազգիները զգալով կենտրոնական պետության թուլությունը, տարերայնորեն ոտքի էին ելնում, դարավոր շղթաները խորտակելու փորձեր անում։

Կայսրության ներքին հակասությունները մեծապես օգտագործում էին եվրոպական մեծ տերությունները, հատկապես Անգլիան, Ֆրանսիան և ցարական Ռուսաստանը, որոնց շահերը խաչաձևվում էին Մերձավոր Արևելքում։ Դարասկզբին Ֆրանսիան կարողացավ սրել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները, որի դերը պակաս կարևոր չէր ռուս-թուրքական 1806—1812 թթ. պատերազմի բռնկման գործում։ Ինչպես այդ, այնպես էլ հետագա իրադարձությունները (հատկապես Տիլզիտի հաշտության պայմանագրի կնքումից հետո) թուլացրին Ֆրանսիայի ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա. Անգլիան սկսեց ավելի մեծ դեր խաղալ։ Ռուսաստանն իր սահմաններն ընդարձակեց մինչև Պրուտ գետը։ Իրար հետևից կնքվում ու չեղյալ էին հայտարարվում ռուս-թուրքական, թուրք-անգլիական պայմանագրերը, փոխվում էին սուլթանները, բայց եվրոպական վեհապետություններից կախվածությունը նկատելիորեն ուժեղանում էր։

Գիտակցելով կայսրության՝ ներքին ու արտաքին ազդակներով պայմանավորված գահավիժումը, ռազմական հզորության կորուստը, կենտրոնախույս ուժերի զորեղանալը և այլն, Բարձրագույն Դուռը մի շարք ռեֆորմներ էր անցկացնում, որոնք սակայն Թուրքիային աշխուժացման որոշ նշաններ հաղորդելով հանդերձ, այլևս անկարող էին վերադարձնել նրա վաղեմի հզորությունը։

Սելիմ III-ին ու Մահմուդ II-ին ծառայող Մուստաֆա Բայրաքտար ու Ռեշիդ փաշաները Թուրքիայի եվրոպականացման փորձեր արեցին։ Նրանք ջանացին վերակառուցել բանակն ու ոստիկանությունը, առողջացնել պետական ապարատը[2]։ Կայսրության կենտրոնացման ուղղությամբ որոշ քայլեր կատարեց սուլթան Մահմուդ II-ը։ Իրեն գործակից ունենալով Մեհմեդ Ռեշիդ փաշային, նա խորամանկությամբ, տեղական դժգոհ տարրերին օգտագործելով, 1820-ական թվականներին կարողացավ զենքի ուժով փոխել Ուրֆայի, Դիարբեքիրի, Մոսուլի, Բաղդադի, Մարդինի փաշաներին, հպատակեցրեց Զմյուռնիայում նստած Կարա-օսմանօղլուների դինաստիան, Անգորայի Չապան-օղլուներին։ 1826 թվականի հունիսի 16-ին[3], գրեթե մեկ դիշերվա ընթացքում, ոչնչացվեց ենիչերիների բանակը մայրաքաղաքում, կարճ ժամանակ անց՝ նաև

---

2 *А. Ф. Миллер*, Мустафа паша Байрактар, М.—Л., 1947, стр. 50—70.

3 *Д. Г. Розен*, Նշվ. աշխ., էջ 7—20, տե՛ս նաև Ա. Պերպերյան, Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 180—181։

ողջ կայսրությունում։ Սակայն ռուս-թուրքական 1828—1829 թվականների պատերազմը, եգիպտացիների ապստամբությունը, ավատատերերի դիմադրությունները և այլն, Մահմուդ II-ին հնարավորություն չընձեռեցին իրագործելու իր մշակած ծրագրերը։

XIX դարի առաջին քառորդում Թուրքիան շարունակում էր մնալ միջնադարյան հետամնաց, մասնատված մի կայսրություն։ Գրեթե անփոփոխ էին մնացել ոչ միայն սոցիալ-տնտեսական կարգերը՝ հողատիրության ձևերն ու հողատիրական հարաբերությունները, այլև վարչակարգը երկրում, առավել ևս նրա անատոլիական մասում։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրները բաժանված էին կուսակալությունների, որոնք կոչվում էին էյալեթներ կամ փաշայություններ։ Սրանք իրենց հերթին բաժանվում էին սանջակների (գավառների), իսկ վերջիններս էլ տրոհվում էին վարչական ավելի մանր միավորների։

Թուրքիային հպատակ մյուս երկրների նման Արևմտյան Հայաստանը և հայաբնակ նահանգները բաժանված էին Էրզրումի (Կարին), Բայազեթի, Կարսի, Ախալցխայի (Ջըլդըր), Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի (Սվազ), Կեսարիայի փաշայություններին։ Կիլիկիայի հայկական մասն ընդգրկված էր Ադանայի և Մարաշի (Ներաուցիների)[4] փաշայությունների մեջ։

Մինչև Ադրիանապոլսի դաշնադիրը (1829 թ.) Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի վարչական բաժանումը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

1. Էրզրումի փաշայությունը ընդգրկում էր Կարինը, Թեքման, Բասենը, Թորթում, Սպեր, Բաբերդ (Բայբուրդ), Դեբջան, Երզնկա, Կամախ (Քամախ), Քեղիխիր, Ղուզուջան սանջակները։ Հիշյալ բոլոր սանջակները ենթարկվում էին Կարինում նստած թուրքական սերասքյար փաշային, հետևապես և կենտրոնական կառավարությանը։ Անվանապես փաշայությանը կցված Տուժիկ և Մանազկերտ (Մելազկերտ) գավառները, փաստորեն, կիսանկախ դրություն էին ձեռք բերել և վաղուց ի վեր չէին ենթարկվում Էրզրումի սերասքյարին[5]։ Շապին-Կարահիսարի գավառը մինչև 1806 թվականը Տրապիզոնի փաշայության մեջ էր, իսկ հետագայում կցվեց Էրզրումին։

2. Բայազեթի փաշայությունը բաղկացած էր Բայազեթ, Դիադին, Խնուս, Ալաշկերտ, Խմուր, Թոփրակ Կալե, Նաճեա կամ Նաճին գավառներից։ Վարչական այս միավորը դարի առաջին քառորդին և հետագայում կառավարվում էր քուրդ փաշաների կողմից և գրեթե կիսանկախ էր։ Փաշայի հպատակությունը կառավարությանն արտահայտվում էր միայն նրանով, որ պատերազմների ժամանակ երկրատերերից զինվորական ուժեր էր կազմում և տրամադրում կենտրոնական կառավարությանը։

---

4 Մանրամասն տե՛ս Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա. Վենետիկ, 1806, էջ 50, 282, 309, տե՛ս նաև Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2462, թ. 3—5, գ. 2464, թ. 6։

5 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 111—112։

3. Կարսի փաշայության կազմումն էին Կարս, Կաղզվան, Քեղյան, Ջարուջատ, Խոջևան, Արևմտյան Շորագյալ գավառները։ Կենտրոնը Կարս քաղաքն էր, որի փաշան հպատակվում էր Բ. Դռանն։

4. Ախալցխայի (Ջըլդըրի) փաշայության գավառներն էին Ախալցխա, Նարիման, Օլթի, Ֆենեսկերտ, Թավրսկերտ, Ջըլդըր, Ջավախեթ, Աղշոր, Փոցխով, Վերին և Ստորին Իմեր, Արդաճուշ, Արդաճառ, Կիսկիմ, Բեռդագարակ և այլն։ 23 գավառներից բաղկացած վարչամիավորի կենտրոնը Ախալցխան էր։

5. Վանի փաշայության գավառներն էին Վան, Խոշաբ, Ջուլամերկ, Խլաթ, Առծկե, Արճեշ, Բերկրի, Բաղեշ (Բիթլիս), Խիզան, Մուշ, Ջրբխա, Էսբաբերդ, Աղիաֆիս, Մոկս։

6. Անատոլիայում ամենախոշոր ու ամենաբարդ կառուցվածք ունեցող փաշայությունը Դիարբեքիրն էր, որն օտարների կողմից անվանվում էր Ամիդ, իսկ հայկական աղբյուրներում Տիգրանակերտ։ Փաշայության կառուցվածքի բարդությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։ Նախ, անմատչելի կիրճեր ունեցող անտառաշատ ու լեռնոտ երկրամասը սկզբից ևեթ չնվաճվեց օսմանյան սուլթանների կողմից։ Ջալդրանի հայտնի ճակատամարտում (1514) Թուրքիան Մոլլա Իդրիսի գլխավորած քրդական ցեղախմբերի օգնությամբ Պարսկաստանի դեմ հաղթանակ տարավ։ Փոխարենը քուրդ ցեղապետերը արտոնություններ ու առանձնաշնորհումներ ստացան՝ երկրի սահմանները պաշտպանելու պայմանով։ Նստակեցության ու կազատ ապրելու պայմաններ ստեղծելով, սուլթան Սելիմ I Յավուզը գայթակղեցրեց Պարսկաստանի քրդերին, նրանց գաղթեցրեց ու բնակեցրեց Տիգրանակերտի շրջանում[6]։ Նախքան քրդերի գաղթը, նահանգում ապրում էին հայեր, ասորիներ, փոքր թվով թուրքեր ու հույներ։ Կիսանկախ, նույնիսկ լիովին անկախ գավառների ամենից ստվար թիվը Դիարբեքիրում էր։ Նահանգում կային քրդական իշխանություններ, ասորական ու հայկական անկախ համայնքներ։

Դիարբեքիրի փաշայության թուրքահպատակ գավառներն էին. Ամիդ, Հաճի, Միոֆարկին, Խարբերդ, Սինջար, Էսֆերիդ, Սևերեկ, Էրկանի, Անադե, Հիսնի-Քեոյ, Ճապաղջուր, Սաղմաճ, Ջերմեկ, Կուլբ, Իլիս, Բենեբեճ, Բեռդագարակ։ Արևմտյան Հայաստանում եղած հյուրումեթությունները միայն Դիարբեքիրում էին. դրանք էին Բալու, Գիեճ, Ջեզիրե, Էգիլ, Հազզո, Թեռջիլ, Սավուր գավառները[7]։ Սակայն թուրքահպատակ գավառների մեջ էլ կային համայնքներ, որոնք, օգտվելով Թուրքիայի տնտեսական անկումից, պատեհ առ պատեհ ապստամբում էին, վռնդում պետական պաշտոնյաներին և հրաժարվում հարկատվությունից։

7. Սվազի (Սեբաստիայի) փաշայության կազմումն էին Սվազ, Ամասիա, Բողոճ, Ջորում, Ջանիկ, Դիվրիկ, Արաբկիր գավառները։ Փաշայությունը 30 տարում փոխեց 15-ից ավելի կուսակալներ, որոնցից ամեն մեկը նախորդին գերազանցեց իր վայրագություններով։ Դրանց մեջ ամենադաժանը Ջապանօղլու Մուհամեդ փաշան էր (1809—1813), իսկ նրան հաջորդած Իբրահիմ փա-

---

6 *В. Никитин*, Курды, М., 1964, стр. 240—247.

7 «Аграрный строй Османской империи XV—XVII вв.», документы и материалы, составленные *А. С. Тверитиновой*, М., 1963, стр. 95—96.

շան հետամուտ էր հպատակեցնելու քրդական ապստամբ ցեղերը, թեև ապարդյուն։ Փաշայությունը մինչև 1834 թ. ապստամբ ցեղապետերի կռիվներ ու արյունահեղություններ էր[8]։

8. Ադանայի փաշայության գավառներն էին՝ Ադանա, Տարսուս (Տարսոն), Ալաենիա (Ալայե), Իչիլ, Սիս, Ուզեյր, Բեյլան։

9. Մարաշի փաշայությունն ուներ Մարաշ, Մալաթիա (Մելետինե), Սամսաթ (Սամոսատ), Գեոզեր գավառները։ Սրանցից բացի կային Կոզան-օղլուներին հպատակ բազմաթիվ մանր իշխանություններ։ Այս նահանգի մեջ էին կիսանկախ Ղփրխսբանը (Ալբիստան), Զեյթունն՝ իր շրջակայքով։

Հայկական ու հայաբնակ մի շարք գավառներ, գավառակներ մտնում էին Տրապիզոնի, Կեսարիայի, Նիկեաի փաշայությունների մեջ։ Դրանց թվումն էին Սյուրմենը, Օռմուրայի և Սև գետի հովտային գյուղերը, Ուրֆան, Կեսարիան և այլ մարզեր։

Ինչպես փաշայությունները, այնպես էլ նրանց փաշաները բաժանվում էին երեք կարգի՝ միհերձանի (մեկդուղ), երկհերձանի, եռհերձանի։ Այս կարգը պայմանավորված էր վարչական միավորի ռազմա-ստրատեգիական դիրքով, հղորությամբ ու տնտեսական կարևորությամբ։ Հայաստանի մասերը կազմող փաշայությունների մեջ ամենախոշորն էրզրումն էր՝ Կարինը, որի փաշան օժտված էր սերասքյարի (փոխարքայի) իրավունքներով։ Ախալցխայի, Կարսի, Բայազետի, Վանի փաշայությունները մինչև 1829 թ. հպատակվում էին Կարինի սերասքյար փաշային, որն ուներ անսահմանափակ իշխանություն։ Նա էր նշանակում ու հանում քաղաքացիական ու ռազմական պաշտոնյաներին, հավաքում զորքեր, հաստատում կամ մերժում մահվան դատավճիռներ[9]։

Սերասքյարությանը ենթակա մյուս փաշաները ևս մեծ լիազորություններ ունեին, սակայն մահվան դատավճռի հաստատման կամ մերժման իրավունքը պատկանում էր սերասքյարին։ Ակներև է, որ բոլոր փաշաներն, անկախ փաշայության մեծությունից ու փոքրությունից, ունեին ոչ միայն քաղաքացիական, այլև զինվորական իրավունքներ ու պարտականություններ։

Փաշայությունները բաժանվում էին սանջակների (գավառների)։ Վարչական այս ավելի փոքր միավորները ղեկավարում էին սանջակբեյերը։ Եթե փաշաներն առանց միջնորդ օղակի, կապված էին սուլթանի հետ, ապա սանջակբեյերը, ճիշտ է նշանակվում էին Բ. Դռան կողմից, սակայն նրա հետ հարաբերությունների մեջ էին նահանգապետերի միջոցով[10]։ Սանջակները բաժանվում էին կազաների (գավառակ), որոնց կառավարիչները կոչվում էին կայմակամներ։ Կազաները տրոհվում էին նահիեների (վիճակ), կառավարիչ ունենալով մյուդիրներին։

---

8 «Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիո և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսության նորին, հորինեաց գերապատիվ Անդրեաս Աղեքսանդրեան», Վենետիկ, ս. Ղազար, 1911, էջ 341—343։

9 Центральный государственный военно-исторический архив СССР (ЦГВИА СССР), фонд ВУА. ՍՍՀՄ կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ, ֆոնդ ՌԳԱ, գործ 4643, 1830, թերթ 2—3 (այսուհետև՝ ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԳԱ)։

10 ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4643, թ. 1—2։

Կառավարման այս սիստեմը հատուկ էր Թուրքահպատակ փաշայություններին։ Սակայն Թուրքիայի այս մասերում էլ ամեն ինչ այնպես չէր կատարվում, ինչպես գրված էր օրինաթղթերում։ Օրենքն ու իրողությունը XIX դարի առաջին երեսնամյակին դարձել էին իրարամերժ։ Ֆինանսական փակուղու մեջ ընկած այդ երկրում ամեն ինչ կատարվում էր դրամի ուժով, կաշառատվությամբ։ Գնալով ավելի մեծ գումարներ էին պետք փաշա, ինչպես նաև սանջակբեյ դառնալու համար։

Թուրքիայում կաշառքով փաշաներ նշանակելն այնքան սովորական երեվույթ էր դարձել, որ պաշտոնները նույնիսկ աճուրդի էին հանվում։ «Եվ պաշտոնյան, մի անգամ կատարելով իր հավատարիմ հպատակության պարտքը, չէր կարող ապահով լինել, թե երկար կպաշտոնավարե։ Ամեն տարի, բայրամի տոնին, նա պարտավոր էր վերանորոգել իր լիազորությունը, և եթե շատ էր սակարկություն անում, նրա պաշտոնն անցնում էր մի ուրիշին, որն ավելի առատաձեռն էր հանդիսանում»[11]։

Քրիստոնյաները զրկված էին իրենց երկրում պաշտոններ վարելու իրավունքից։ Փաշա կամ այլ կառավարիչ էին նշանակվում միայն մահմեդականները, որոնք, սակայն, անկարող էին անձնական կալվածներից ստացված եկամուտներից հատուցել այդ հսկայական գումարները։ Ուստի և նրանք դիմում էին Դալաքիայում նստած ամիրաներին ու սարաֆներին (սեղանավորներ), որոնցից բարձր տոկոսներով դրամ էին վերցնում, վճարում պետական գանձարանին և ապա մեկնում երկրամասը, բնական է ոչ թե կառավարելու, այլ կողոպտելու։ Սուլթանի գանձարանը, ամիրայի ու փաշայի գրպանը լցվում էին, գյուղացիության, հատկապես քրիստոնյաների անտանելի շահագործման ու կեղեքման հաշվին։

Պաշտոնյաներ նշանակելու համար կաշառք էին վերցնում ոչ միայն սուլթանները, մեծ վեզիրները, վալիդե (մայր) սուլթանը, այլև փաշաները, նրանց ստորադրյալները, ամեն մեկը ինչքան կարող էր շատ, որպեսզի նախ գոհացներ արքունիքին, ապա և իրեն էլ «բաժին թողներ»։ «Անիրավությունները և կաշառակերությունը Թուրքիայում առասպելական չափերի էին հասնում։ Բոլոր պաշտոնները գնվում և վաճառվում էին և յուրաքանչյուր ենթակա պարտավոր էր որոշակի գումար հատուցել իր պետին։ Պետական բարձր պաշտոնյաները տարբերվում էին մանր աստիճանավորներից նրանով, որ ավելի շատ էին ըստանում և եթե ինչ-որ մի մուդիր ստանում էր տարեկան 60 հազար ղուրուշ (մեկ ղուրուշը հավասար էր 40 փարայի, իսկ 100 ղուրուշը մեկ թուրքական ոսկյա լիրայի—խմբ.), ապա մուշիրը կամ փաշան բավարարվում էին ոչ քիչ, քան տարեկան 4 միլիոն ղուրուշ եկամտով։ Նման կարգերի պայմաններում ցածր աստիճանավորները ձգտում էին պակասը լրացնել ժողովրդի հաշվին և ծծել այն ամենը, ինչ կարելի էր»[12]։

XIX դարի առաջին երեք տասնամյակներին ոչ միայն շարունակում էին իրենց կիսանկախ գոյությունը պահպանել, այլև ձգտում էին լիովին անկա-

---

11 Նե՛ռ, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1969, էջ 58։

12 «Дело», № 4, 1867, Н. Радюкин, Турция, стр. 190—192. տե՛ս նաև Ա. Ներսիսյան, Արևմտահայերի տնտեսական և քաղաքական վիճակը և նրանց ոտնձգական օրինազանցիան, Երևան, 1962, էջ 10—11։

խանալ քրդահպատակ Բաղեշի, Ջուլամերկի, Ջիզիրեյի, Սուլեյմանիեի, Ոստանի, Բերկրիի, Դերսիմի, Խոշաբի (Մահմուդիե), Հեքյարիի, Բալուի և այլ իշխանապետություններ։

Քրդահպատակ իշխանապետությունների մեջ ամենախոշորը Բաղեշն (Բիթլիս) էր։ XVIII դարի կեսերից Բաղեշը կռվախնձոր էր դարձել տարբեր իշխանապետերի ձեռքին։ Գործին միշտ էլ միջամտում էր կենտրոնական կառավարությունը, սակայն արդյունքի չէր հասնում։ XIX դարի ողջ առաջին կեսին այն «հանձնված» էր Շերեֆների տոհմի ժառանգական կառավարմանը և ընդգրկում էր Բաղեշի, Մուշի, Սասունի, Զրտըզանի, Խիզանի և այլ շրջաններ[13]։ Բաղեշի քուրդ խանը տիրապետում էր Վանից մինչև Դիարբեքիր ձգվող մի ընդարձակ երկրամասի, որտեղ նստած ցեղապետերը հպատակվում էին նրան[14]։ Չնայած գլխավոր խանը չէր կարողանում անմիջապես իրեն ենթարկել իշխանապետության մեջ մտնող բոլոր մանր ու խոշոր բեկերին, սակայն XVIII դ. վերջին և XIX դարի առաջին կեսին ռազմական մեծ հզորության էր հասել։ «Բաղեշի էմիրները դարերե ի վեր,—գրում է Կ. Բասմաջյանը,—ինքնիշխան կառավարություն մը կազմած էին, անառիկ դիրքերու և ամրոցներու մեջ հաստատված։ Ասոնք դրամ տպած են անշուշտ։ Ինձ ծանոթ են միայն երկու էմիրի դրամներ»[15]։

Բաղեշի խանը հաստատվում էր սուլթանի կողմից և անպայման ազգությամբ քուրդ պիտի լիներ։ Հաստատվելով գահի վրա, քուրդ խանը այլևս ոչ ոքի առջև հաշվետու չէր։ Ժամանակակիցները նրա ուժի ու հզորության մասին վկայում են, թե նա պատերազմի դաշտ կարող էր հանել 20—25 հազար ձիավոր, «առանց հաշվելու մեծ թվով հետևազորքը»։ Բաղեշի իշխանության մեջ օրենք սահմանողը խանն էր։ Նա փաստորեն սուլթանն էր իր տիրապետության սահմաններում, իսկ գավառը պետության էր պետության մեջ։ Անվանապես Բաղեշի խանին էին ենթարկվում Մուշն ու Զուխուրը, սակայն իրականում սրանք ևս արդեն անկախացել էին։

Երկակի կառավարման տակ էր Վանի փաշայությունը։ Այստեղ նստում էին միաժամանակ և՛ թուրք փաշա, և՛ քուրդ խան։ Թուրքական պետությունն անկարող էր ոչնչացնել քրդական խաների իշխանությունը, ուստի քաղաքում տեղավորել էր բերդապահ զորք, որը կոչվում էր վան-կուլիներ (վանի ղուլեր—ծառաներ)։ Այս տասնամյակներին փաշայի իշխանությունը ձևական էր և նա չէր կարող երկար կառավարել, եթե հաշվի չնստեր քուրդ խանի հետ, որի թիկունքում կանգնած էին մանր բեկերն՝ իրենց զինախմբերով, ռազմատենչ խոլամներով։ «Բայց միշտ եռացող կաթսա մըն էր Վանը, ուր ո՛չ կյանքի, ո՛չ ինչքի և ո՛չ ալ պատվի ապահովություն գոյություն ուներ»[16]։

Խոշաբի գավառը կամ Մահմուդիե իշխանությունը ևս քուրդ բեկերի ձեռքում էր։ XVIII դարի երկրորդ կեսին այնտեղ տիրում էին Զապան օղլու

---

13 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 52։

14 Х. Ф. Б. Линч, Армения. Путевые очерки и этюды, Тифлис, 1910, стр. 191—193.

15 Կ. Յ. Բասմաջյան, Հայկական ընդհանուր դրամագիտություն, Վենետիկ, 1936, էջ 119։

16 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 451, տե՛ս նաև Թ. Խ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 368—371։

բեկերը, որոնք մերթ ընդ մերթ կրելով Վանի կուսակալի հարվածները, քաշվում էին Մահմուդիե անառիկ բերդը և ապա կրկին տիրում գավառին։

Անվանապես Վանի փաշայության մեջ մտնող Ջուլամերկի կամ Հեքյարիի (Աղբակ) գավառը բնակեցված էր հայերով, ինչպես նաև քրդերով ու ասորիներով։ Այն վաղուց ի վեր անկախ իշխանություն էր և շարունակում էր իր իրավունքները պաշտպանել նաև այս ժամանակաշրջանում։

Քրդահպատակ ընդարձակ ու հզոր իշխանություններ կային նաև Հարավային Հայաստանում։ Դրանց մեջ ամենաուժեղը Ջեզիրեն էր, Դիարբեքիրի փաշայության մեջ մտնող մի հյուրումեք (իշխանություն), որը «վաղուց դարձել էր քրդերի սեփականություն. ունի ինքնագլուխ ու հզոր բեյ, որի տիրապետության տակ են ոչ միայն բազմաթիվ գյուղեր, այլև վիճակներ (նահիե)։ Այստեղի բնակիչները հիմնականում քրդեր են և կարող են մինչև 70 հազար զորք հանել»[17]։ Ջեզիրեն կառավարում էին Բեդեր-խանի տոհմի ներկայացուցիչները։ Սրանք, փաստորեն, իրենց էին ենթարկել քրդահպատակ ու քրդաբնակ շրջանների մեծ մասը։

Մեծաքանակ զինվորներ ունեցող Բոհտանի անառիկ բերդում նստած Բեդեր-խան բեյը դարձել էր մի այնպիսի հզոր ֆեոդալ, որը պետության հետ բնավ հարաբերությունների մեջ չէր մտնում և մտադրություն ուներ համահավաքել քրդաբնակ շրջանները, ստեղծել քրդական ֆեոդալական պետություն[18]։ 1830-ական թթ. նա իր տիրապետության տակ էր առել Վանից մինչև Բաղեշ ընկած քրդական մանր ու խոշոր իշխաններին, ջանում էր ընկճել ասորական ըմբոստ համայնքը։

XIX դարի առաջին քառորդին Բայազետում դեռևս շարունակվում էր քուրդ ֆեոդալների տիրապետությունը՝ հանձին Բայլուլների տոհմի։ Օգտվելով պետության թուլացումից, փաշայությունն անկախացել էր, և նահանգը դրվել էր քուրդ տիրակալների գերիշխանության տակ։ Քրդահպատակ իշխանություններ էին նաև Դերսիմը, Ջարսանջակը, Շիրո և Աղճատաղ գավառները։

Ապստամբ ու կիսանկախ իշխաններ կային նաև Կիլիկիայում։ Նրանք, այսինքն Կոզան-օղլու դերեբեյները, Կիլիկիայի լեռնային մասերում (Սսից մինչև Հաճըն) հաստատվեցին XVI դարից սկսած, սակայն հետագայում իրենց տիրապետությունը ընդարձակեցին։

Վիկտոր Լանգլուան հաստատում է, թե XIX դարակեսին Սիսը, Հաճընը և այլ մարզեր կառավարվում էին Կոզան-օղլուների կողմից[19]։

Այս ցեղապետերի իրավունքները ճանաչվել էին սուլթանական կառավարության կողմից։ Նրանք պարտավոր էին հարկերը հավաքել և հանձնել պետական պաշտոնյաներին, հարգել գավառապետի և նայիբի հանած վճիռները, վերջիններիս միջոցով գործադրել պետական հրամանագրերը։ XIX դարի առաջին կեսին Կոզան-օղլուները, օգտվելով Օսմանյան կայսրության տկարա-

---

17 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 349։

18 Բարունակ Պէյի Տերունեան, Ճանապարհորդութիւն ի Բաբէլոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, Արմաշ, 1876, էջ 62—63։

19 Մանրամասն տե՛ս V. Langlois, Voyage dans la Cilicie et les montagnes de Taurus en 1852—1853, Paris.

ցումից, դադարեցրին կանոնավոր հարկատվությունը և շարունակեցին ավելի վայրագ ձևով վարվել հպատակների հետ։

Այսպիսով, 1800—1830-ական ԹԹ. Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում Թուրքահպատակ նահանգների կողքին տակավին հարատեվում էին ֆեոդալական կիսանկախ իշխանապետություններ՝ քուրդ, թուրքմեն ցեղապետեր, որոնց սանձարձակությունը չափ չուներ։ Դարասկզբին կայսրության հպատակությամբ ապրող հայությունը տեղաբաշխված էր Արևմտյան Հայաստանում, շերտընդմեջ բնակվում էր հայաբնակ նահանգներում, Հայկական Կիլիկիայում, ինչպես նաև ծովամերձ գաղութահայ օջախներում։

XIX դարի առաջին քառորդին Թուրքահպատակ երկրամասերում ապրող արևմտահայերի և ընդհանրապես կայսրության ենթակա ազգերի ճշգրիտ մարդահամար գոյություն չի ունեցել[20]։ Սակայն կան առանձին ուղեգրողների տվյալներ, հետազոտողների հրապարակած թվեր։

Գերմանացի վիճակագիր Գ. Հասելը 1822 թ. հրատարակած «Եվրոպական երկրների վիճակագրական տարեգիրք-վիճակագույց» աշխատության մեջ Թուրքիայում հաշվում է 12 միլիոն 920 հազ. բնակիչ, որից հայեր՝ 1 միլիոն 690 հազ.[21]։ Այս թվերը խիստ պակասավոր են։ 1836 թ. գրված մի վավերագրում ասվում է, թե երեք միլիոն հայեր էին ապրում Արևմտյան Հայաստանի, Փոքր Ասիայի զանազան գավառներում, Կ. Պոլսում և Զմյուռնիայում[22]։ 1844 թ. անցկացված մարդահամարի տվյալներն ամփոփելով, ֆրանսիացի քաղաքագետ-պատմաբան Մ. Ա. Ուբիչինին գտնում էր, որ Թուրքիայում ապրում էին 35,350 հազ. մարդ՝ պատկանելով 14 ազգության և ցեղերի։ Հայերի թիվը 2 միլիոն 400 հազար էր, որից երկու միլիոնն ապրում էին եվրոպական, 400 հազարը՝ ասիական Թուրքիայում[23]։ Այս մարդահամարը ևս պակասավոր էր, քանի որ Թուրքիայում ապրող քրիստոնյաները, զինվորական հարկ վճարելու պարտականությունից ազատվելու նպատակով թաքցնում էին իրենց թվաքանակը[24], վիճակագրական ոչ լրիվ տվյալներ հաղորդում ինչպես պետական պաշտոնյաներին, այնպես էլ հոգևոր առաջնորդներին, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ Այսպիսով, XIX դարի առաջին երեսնամյակին Թուրքիայում ապրում էր շուրջ երեք միլիոն հայ։

Դարասկզբին Կոստանդնուպոլսում ապրում էր 222 հազար հայ, Զմյուռնիայում՝ 12 հազար[25], Կիլիկիայում՝ 414 հազար մարդ, որից հայեր՝ 200 հազար, քրիստոնյա այլազգիներ՝ 16 հազար, մահմեդականներ՝ 198 հազար[26],

---

20 Եվրոպացիների օգնությամբ Թուրքիայում առաջին մարդահամարի փորձ է եղել միայն 1844 թ., դրա համար էլ հայերի թիվը բերվում է մոտավոր ճշտությամբ՝ բազմաթիվ աղբյուրների համադրությամբ։

21 Տե՛ս Ն. Խաբաեասյան, Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 7։

22 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 88, վավ. 105։

23 Տե՛ս M. A. Ubicini, Lettres sur le Turquie, էջ 22—23, տե՛ս նաև «Եվրոպա», 1850, № 16։

24 Տե՛ս Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972, стр. 25.

25 Հ. Հակովբ վ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 43—44։

26 Տե՛ս Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 16—17։

Հետևաբար շուրջ կես միլիոն հայ էր ապրում Կիլիկիայում ու Թուրքիայի հայ գաղթօջախներում, իսկ երկուս և կես միլիոնը միայն Արևմտյան Հայաստանում ու հայաբնակ հարևան շրջաններում։

XIX դարի առաջին քառորդում Արևմտյան Հայաստանում, ծովային անցուդարձերով Եվրոպային կամրջվող Հայկական Կիլիկիայում, հարևան նահանգներում տակավին կանգուն էին 40-ից ավելի հայկական քաղաքներ, ուր ապրում էին մոտավորապես 670 հազար քաղաքացիներ, դրանց թվում շուրջ 365 հազար հայ։ Գաղութահայ օջախներում ապրում էին շուրջ 234 հազար հայեր։

Ակնառու է, որ այս տասնամյակներին 600 հազար հայեր էին կենտրոնացել քաղաքներում և կազմում էին Թուրքիայի հայ ազգաբնակչության շուրջ 20 տոկոսը։ Մնացած 80 տոկոսը ապրում էր գյուղերում[27]։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՍԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանը նվաճած օսմանյան հորդաները, ասպատակելով ու հպատակեցնելով դաշտային երկրահատվածները, երկար ժամանակ չկարողացան բարձրանալ բազմաթիվ լեռնագավառներ և ծնկի բերել ազատատենչ հայ համայնքներին։ Հարյուրամյակներ շարունակ իրենց կիսանկախ, հաճախ և անկախ գոյությունը պաշտպանեցին հայկական մի շարք լեռնային մանր իշխանապետություններ։

Արևմտյան Հայաստանում հարատևող կիսանկախ համայնքներից ամենաուժեղը Սասունն էր։

Լեռնագավառը հպատակեցնելու Թուրքիայի անհամար փորձերը մատնվել էին անհաջողության։ 1806 թ. Ղ. Ինճիճյանը գրում էր, թե Սասունի «բնակիչները քրդերն ու հայերն են, որոնք երկուսն էլ միևնույն ազատությունն ունեն։ Տղամարդիկ հաղթանդամ են, քաջասիրտ, երևելի իրենց մարմնի կորովությամբ։ Նրանք պատերազմի ժամանակ ահեղ են... Սրանք իւ սկզբանե եղել են անկախ, ոչ ոքի չեն ենթարկվել. ոչ մի փաշա կամ բեյ չի կարողացել իրեն ենթարկել սրանց. իրենց հզոր ուժի և ապաստանած վայրերի անմատչելիության շնորհիվ ոչ ոքի չեն թողել մուտք գործել իրենց երկիրը։ Սրանք ունեն իրենց մասնավոր, ինքնուրույն բեյը»[28]։

Սասունի անկախության երկարատև պահպանման գրավականներից էր և այն, որ տեղի հայ և քուրդ ազգաբնակչությունը բարեկամական հարաբերությունների մեջ էր, ընդհանուր անվամբ կոչվում էր սասունցի, ամիզադ (հորեղբորորդի)։ «Շատ առաջներ, այս շրջանի հայերն ու քյուրդերը միությունկազմելով միշտ կռվեր են թուրք բռնապետական ռեժիմին դեմ ու մնացեր են կիսանկախ՝ դաշտայիններու նման չենթարկվելով թուրք իշխանության»[29]։

Ինքնուրույն համայնքի իր իրավունքը պահպանելով, Սասունը 1800—1830 թթ. կառավարվում էր մնացած գավառներից տարբերվող, յուրահատուկ սկզբունքներով։ Քուրդ բեկը կամ հայ իշխանը, ընտրովի ավագանին տնօրինում էին երկրամասի գործերը, պատերազմի ժամանակ ժողովրդին մեկ մար-

27 Հայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 162—170։

28 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 200։

29 Հ. Շահպազյան, Քյուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 107—108։

դու նման հանում մարտադաշտ։ Կռվում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք, նույնիսկ անչափահասները։ Զինադադարի կնքման, հարկերի վճարման, օտարների հետ փոխհարաբերությունների մեջ մտնելու պահին ավագանին վճիռները կայացնում էր բոլոր համայնապետերի մասնակցությամբ։ Թուրքական կառավարիչներ կամ հարկահաններ մուտք չէին գործել այս գավառը։

Սասունից բացի, Դիարբեքիրի փաշայության մեջ մտնող հայկական ազատ համայնքներ էին մնում Սավուրը և Իսյանը (իսյան բառացի նշանակում է ապստամբություն, որը և բնորոշում է գավառի ազգաբնակչության իրավական դրությունը)[30]։ Նրա կազմում մտնող գյուղերում բնակվում էին քրդեր ու քրդախոս հայեր, որոնք լավ հրաձիգներ էին։ Պատերազմի փողը հնչելիս, մարտունակ ազգաբնակչությունն իր ունեցվածքը թաքցնում էր գաղտնարաններում, կանանց ու երեխաներին պատսպարում ամրացված, պարսպապատ ավաններում, իսկ ինքը շարժվում էր դեպի լեռնանցքներն ու կիրճերը, դիմագրավելու արշավող հակառակորդին։



Սասունցի հայ

Դիարբեքիրի փաշան 4500 զորքով գավառի վրա արշավեց 1782 թ., սակայն 500 զինվոր կորցնելով ունայնաձեռն վերադարձավ։ 1785 թ. Իսյան շարժվող թուրքական բանակը գավառցիներից վախեցած, կրկին ապարդյուն ետ դարձավ։ Թուրքերը 1789 թ. սպանեցին գավառապետին։ Հորը հաջորդեց որդին։ Նա շարունակեց կռիվները և պաշտպանեց Իսյանի անկախությունը մինչև 1834 թվականը։

Շատախի անկախության, Մոկսի դրության մասին Ղ. Ինճիճյանը 1806 թ. գրում էր, թե այստեղ. «...նստում է հայազգի մելիքը և գործադրում է ամեն տեսակի իշխանություն, դատավորի պաշտոն, քանի որ քուրդ բեկին չեն թողնում նստի այստեղ, ինչպես նաև Մոկսում»[31]։ «Սավուր գավառի ինքնուրույն և անկախ բնակիչները, որոնք մեծ մասամբ հայեր են, հզոր են և պատիկ կռվողներ, իսկ քրդերը՝ սակավաթիվ են»[32]։

Մուշ գավառի մեջ մտնող Ճապաղջուրի հայերն, «անվանի իրենց քաջությամբ», XVIII դարի երկրորդ կեսին զենքի ուժով անկախություն էին վերանվաճել։ Քրդական իշխանության ծանր հարվածներից խուսափելով, ճապաղ-

38 Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 149։

31 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 163։

32 Նույն տեղում, էջ 230։

ջուրցիները հետագայում ստիպված էին զիջումներ անել, խանին որոշ հարկեր տալ, սակայն պաշտպանելով իրենց անկախությունը, շարունակում էին «զինված խաղաղության մեջ ապրել»[33]։

Գրեթե կիսանկախ վիճակում էր Խնուս գավառը։ Այն անվանապես մըտնում էր Բայազետի փաշայության մեջ և ուներ հայկական տասնյակ գյուղեր, ստվար բնակչությամբ։ Կենտրոնը Բյուրակնյա լեռների արևելյան ստորոտում, ձորի երկայնքով ձգված բերդաքաղաքն էր՝ 4—5 հազար բնակիչներով։ Խնուսի մասին ժոռերը 1805 թվականին գրում էր. «...սակայն Հայաստանի այս մասում, կառավարության իշխանությունը համարյա թե չնչին է։ Գյուղացիք զինված են և պատրաստ կռվելու քուրդերի հարձակումների դեմ, որոնց հետ հաճախակի կռիվներ են մղում և չեն վախենում ո՛չ սպառնալիքից, ո՛չ նախատինքից և ո՛չ էլ մահից»[34]։

Էրզրումի փաշայության մեջ էին Տուժիկ և Մանազկերտ (Մելազկերտ) գավառները, ուր ապրում էին քրդացած, ինչպես նաև լուսավորչական կրոնը պահպանող քրիստոնյա հայեր և շեյխհասանցի քրդեր։ Երկիրը հարուստ էր, հողը՝ բերրի, պտղատու այգիներով ու ծառաստաններով ծածկված։ Բնակիչներն արտադրում էին այն ամենն, ինչ անհրաժեշտ էր իրենց։ Դրասչխարհի հետ նրանք քիչ էին առնչվում. «ապա յավելցուք զՏուժիկ զՄալազկերտ, որք են անկախ ի փաշայեն էրզիռումայ»[35]։

Անկախ և կիսանկախ համայնքներ, Թուրքիայի գերիշխանությունը չճանաչող մի շարք գավառներ էին մնացել նաև Լեռնային Կիլիկիայում, հատկապես Տավրոսի լեռնակրծքին՝ Մարաշի փաշայությունում։ Դրանց մեջ ամենաուժեղը Ուլնիան էր՝ Զեյթունը։

Զեյթուն գյուղաքաղաքը գտնվում էր Մարաշ քաղաքից 38 կմ հյուսիս-արևմուտք, Ջիհան գետից 13 կմ արևմուտք և շրջապատված էր լեռներով։ Քաղաքը հիմնվել էր տակավին 1375—1409 թթ. Ջյուլ-կադիրների իշխանության շրջանում։ 1626 թ., Մուրադ IV-ը տվեց Զեյթունի կիսանկախության ֆերման և գավառը ճանաչեց իբրև հրովարտակ (ֆերման) ունեցող վակըֆ[36]։

Սուլթանը միաժամանակ մահմեդական պաշտոնյաներին արգելում էր մուտք գործել գավառ, բնակչությանն ազատում էր գլխահարկ-ջիզիեից, սակայն պարտադրում՝ տարեկան 15000 դահեկան հարկ վճարել Կ. Պոլսի թուրքական մզկիթներին, հատկապես Այա-Սոֆիային։ «Բաց յայսմանե սույն գավառի մեջ թուրք պաշտոնյա չպիտի գտնվի... այնպես որ բնավ մեկ կողմե մը վնաս չհասնի այս բացառիկ ու ինքնավարական դրության, զոր շնորհած եմ անոնց՝ ինքզինքնին կառավարելու, առանց արտաքին միջամտության»[37]։

Բարուբյուն անելու միտումով չէ, որ Մուրադ IV-ը շնորհում էր այս ինքնավարությունը, այլ զեյթունցին իր ինքնապաշտպանության ուժով էր նվաճում այն։ Հետագա սուլթանները մոռացության տվեցին հրովարտակի գոյու-

33 Լ. Ալիշան, Պատմություն Հայոց, Գահիրե, 1936, գիրք Դ, էջ 37։

34 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ջ, ԺԲ դար, էջ 208։

35 Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 65։

36 Զեյթունցի [Մ. Սեմերճյան], Զեյթունի անցյալեն ու ներկայեն, մաս Ա, Վիեննա, 1900, էջ 31։

37 Նույն տեղում, էջ 31—32։

թյունը, ուստի Տավրոսի քաջ Դելի Քեշիշը (տեր Օհանը) 1835 թ. Պոլիս է մեկնում և վերավավերացնել տալիս փաստաթուղթը[38]։

Ինքնավարության հրովարտակ ստանալով, սակայն, Զեյթունը չիրկվեց նոր աղետներից։ Սուլթանները նորանոր բանակներ էին ուղարկում Ուչնիա, ջանում ծնկի բերել ըմբոստ լեռնականներին, բայց միշտ ջարդված և ունայնաձեռն էին վերադառնում։ Թուրքական տիրապետության ընթացքում իր ազատությունն ու անկախությունը պահելու համար Զեյթունը մղել է 36, թուրք դրիչների կարծիքով նույնիսկ 42 պատերազմներ։ Կես հազարամյակում 42։



Զեյթունցիներ

պատերազմ[39], ամեն 10—12 տարին մեկ պատերազմ։ 1782—1808 թթ. Զեյթունը հրաժարվեց նույնիսկ հրովարտակով նախատեսված հարկատվությունից և, օգտվելով ծայր առած գահակալական կռիվներից, ամրացրեց իր դիրքերը, ապրեց «ապստամբական դրության» մեջ։ Իշխանության գլուխն անցնելով, Մահմուդ II-ը զորք տվեց Մարաշի Կալանդեր փաշային և հրահանգեց նվաճել Զեյթունը։ Թուրքական բանակը 1808 թ. պաշարեց բերդաքաղաքը և ինն ամիս շարունակ այն կտրեց շրջապատից։ Սով սկսվեց, ծայր առան հիվանդություններ։ Գավառի բնակչությունը կանգնել էր ոչնչացման վտանգի առաջ։ Ավագ-

---

38 Հարություն Ս. Նաշալեան, *Զեյթունի քաջամարտիկ Տեր-Օհանի քաջագործության դրվագները*, Պեյրութ, 1958, էջ 48—50։

39 *Esat Uras*, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, էջ 491—494։

ների խորհուրդը որոշեց բանակցությունների մեջ մտնել թուրք փաշայի հետ։ Նրանք համաձայնության եկան Մարաշի կառավարչին հարկ տալ, սակայն օսմանյան բանակն անմիջապես պետք է հեռանար գավառից և հարգվեին իշխանապետության նախկին արտոնությունները։ Զեյթունի վճարած հարկաքանակը բարձրացավ, հասավ 60 հազար դահեկանի, որը, սակայն, վճարվեց մի քանի տարի միայն։ 1818 թ. Զեյթունը կրկին ապստամբեց և հրաժարվեց հարկատրվությունից։



Շատախցի հայեր

Զեյթուն գավառը կառավարվել է սկզբում երկու, ապա չորս իշխանական տների կողմից՝ Սուրենյաններին, Ցաղուբյաններին, Ենիտունյաններին և Շովրոյաններին։ Իշխանների իրավունքները ժառանգական էին։ Ընդհանուր գավառին վերաբերող խնդիրները լուծելիս, իշխանները հավաքվում էին Զեյթունի խորհրդարան, արքեպիսկոպոսի ու քհյանների (տեղակալ գյուղապետեր՝ նույնպես ընտրովի) հետ, վիճաբանությունից հետո վճռական խոսքի իրավունքը վերապահելով իշխանապետին կամ հոգևոր առաջնորդին, վճիռ էին կայացնում։

Ֆեոդալ իշխաններից, շահագործող գյուղատեր վերնախավից կազմված այս վարիչների կառավարման ձևը, որի պայմաններում գնալով խորանում էր դասակարգային տարբերակումը[40], զարմանք էր պատճառել Թուրքիա այցելած եվրոպացի ուղեգիրներին։ Վ. Լանգլուայի կարծիքով այն «հանրապետա-

40 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 111։

կան»[41] բնույթ ուներ։ Էլիզե Ռեկլյուն ավելացնում է. «մի հայկական դաշնակցություն՝ բաղկացած վեց փոքրիկ հասարակապետական հասարակություններից»[42]։ Հիշյալ դաշնակցությունը արտահայտվում էր հետևյալում. Զեյթուն գավառը բաղկացած էր 29 գյուղերից, ուներ 27460 հայ ազգաբնակչություն, 8334 մահմեդականներ կամ թուրքմեններ։ Այս «...գյուղերը կազմում են մեկ դաշնակցություն, որոնց մեջ կան զեյթունցի հայեր և Կոզան-օղլու ցեղի թուրքմեններ»[43]։

4. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆեոդալական տնտեսակարգի վրա խարսխված Թուրքիայում դեռևս գործադրության մեջ էին ավելի քան երկու հարյուրամյակ առաջ հրապարակված հողատիրության օրենքները, հարկահավաքման երբեմնի չափերն ու հարկապահանջության ձևերը։

XVIII դարի վերջին ու XIX դարի սկզբներին էլ Թուրքիայում շարունակում էր գոյություն ունենալ հողատիրության ռազմա-ֆեոդալական սիստեմը։ Սուլթանապատկան հողերի մեծ մասը կոչվում էր միրիե (պետական) և տրվում էր օգտագործման՝ պայմանով, որ օգտագործողները ոչ միայն հարկեր վճարեին, այլև արքունիքում ու բանակում ծառայություններ կատարեին։ Հողը հատկացվում էր սրանց իբրև վարձատրություն, իրավունք ստացողները հարկեր էին գանձում գյուղացիներից, մի մասը պահելով իբրև պարտավորության վարձ, մի մասը հատուցելով Բ. Դռան։ Միրիե կոչվող հողերն էլ տարատեսակ էին լինում։ Կային խասեր, զեամեթներ, թիմարներ։

Խասերը հողատիրական խոշոր միավորներ էին և տարածվում էին Արևմտյան Հայաստանի մի քանի նահանգներում։ Խաս էր կոչվում հողային այն միավորը, որից ստացված եկամուտը կազմում էր 100 հազար ակչեից ոչ պակաս։ Օգտագործման իրավունքով և ծառայության պայմանաժամանակով այն տրվում էր վեզիրներին, բեյլերբեյերին, սանջակբեյերին։ Ծառայությունը լրանալուց հետո, խասատերը կորցնում էր իր իրավունքը և հայտնվում նոր տեր, այսինքն հաջորդ պաշտոնյան։ Օրենքով խասերը մասնավոր սեփականություն դառնալ կամ ժառանգական իրավունքով փոխանցվել չէին կարող։ Մեռնում էր մեծ վեզիրը, հաջորդն ստանում էր նրա խասերը, փոխվում էր նահանգապետ փաշան, նորը՝ փադիշահական արտոնագրով ներկայանում էր էյալեթ և ստանում ռազմա-քաղաքական իշխանությունը, նախորդին պատկանած հողատարածությունների եկամուտը վայելելու իրավունքները։

Պետական հողերի մյուս մասը տրվում էր մահմեդականներին՝ զինվորական ծառայություն կատարելու կամ զինվոր տալու պայմանով։ Այստեղ էր, որ ի հայտ էր գալիս կայսրության ռազմա-ֆեոդալական բնույթը, որովհետև զորամիավորումները պահվում էին ոչ թե պետական գանձարանի հաշվին, այլ զինվոր տվողին հողեր տրամադրելով։ Զորամիավորման պետը ցեղի առաջ-

41 «Մասյաց աղավնի», 1856, № 6։

42 Էլիզե Ռեկլյու, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան..., Վաղարշապատ, 1893, էջ 95։

43 [Գաբրիել Պատկանյան], Հայոց ազգի պատմություն, Ս. Պետերբուրգ, 1863, էջ 265։

նորդ խոշոր հողատեր ֆեոդալի արտոնություն էր ստանում, բայց ոչ թե ժառանգաբար, այլ ծառայության տարիներին միայն։

Սուլթանական բանակին զինվորներ տրամադրող թուրք հողատեր ազնվականները կոչվում էին սիպահիներ, նրանց ծառայության համար հատկացված հողակտորները՝ զեամեթ և թիմար։ Հողի օգտագործման իրավունք ստացող մահմեդական զինվորականները ազարակները հանձնում էին գյուղացիներին մշակելու, գանձում էին հարկեր, դրա դիմաց պարտավորվելով պահել հեծելազոր ու հետևակ, ծառայել սուլթանին, պաշտպանել երկրի ու պետության անվտանգությունը, արշավանքներ կատարել, ավար ու կողոպուտ ձեռք բերել։ Ղ. Ինճիճյանը գրում է. «Սիպահի անվանումը պարսկերենում նշանակում է զորական, մինչդեռ տաճկերենում սեփականացված է հեծելազորի յուրաքանչյուր գնդի կողմից, որոնք երևելի ու բազմաթիվ են, որոնց անվանում են զիամեթլի և թիմարլի զաիմ. սրանք թոշակավորված են և վերցնում են իրենց համար ապրելու միջոց երկրի կալվածքներից, որոնք կոչվում են զեամեթ և թիմար, որովհետև օսմանցիների նախկին թագավորները օրըստօրե իրենց իշխանության տակ գցելով զանազան երկրներ, յուրաքանչյուր գավառի մի որևէ մասը (մանավանդ դրանք էին եկեղեցական, վանական և առանձին իշխանների կալվածքներ) որոշյալ կարգեցին հեծելազորների թոշակ... Այդպիսի կալվածներ թագավորը հաճախ ձրի նվիրում էր զինվորական ծառայություն կատարողներին կամ իր պաշտոնյաներին, իսկ մյուսներն արքունիքում վաճառքի էին հանում առավել վճարողին»[44]։

Սիպահիներին տրվող հողամիավորներից ամենափոքրը թիմարն էր։ Ամեն մի թիմարից ստացված տարեկան նվազագույն եկամուտը 3000 ղուրուշ էր, առավելագույնը՝ 20 հազար ղուրուշ։ Զեամեթից ստացված նվազագույն եկամուտը 20 հազար ղուրուշ էր, առավելագույնը՝ 99.999 ղուրուշ։

Օրենքով թիմարներին և զեամեթներին տիրապետելու իրավունք ստացած սիպահիները դրանք գնել, վաճառել կամ ժառանգել չէին կարող։ Նրանք օգտագործում էին կալվածները այնքան ժամանակ, քանի դեռ ծառայության մեջ էին։ Ծառայության ժամկետը լրանալու դեպքում սիպահին կորցնում էր հողատիրական նախկին իրավունքները։

Խասերից բացի, որոնք մեծ թիվ չէին կազմում Արևմտյան Հայաստանում, մշակելի հողի գերակշռող մասը թիմարները և զեամեթներն էին։ Մի հնդադարի մասին Կ. Մարքսը գրում է. «Փոքր Ասիան և Հայաստանը այն շտեմարաններն էին, որոնք մշտապես համալրում էին թուրքական բանակները, սկսած նըրանցից, որոնք կանգնած էին Վիեննայի պարիսպների տակ, վերջացրած նըրանցով, որոնք ջախջախվեցին Կուլեվչի մոտ»[45]։ XIX դարի սկզբին վիճակը քիչ էր փոխվել։

Կարինն ուներ 122 զեամեթ, 5548 թիմար և տալիս էր 11584 չեքելու զինվոր։ Վանը՝ 185 զեամեթ, 826 թիմար, 2392 զինվոր, Դիարբեքիրը՝ 106 զեամեթ, 540 թիմար, 1504 զինվոր, Զըլդըրը՝ 106 զեամեթ, 695 թիմար, 1804 զինվոր։ Սեբաստիայի փաշան իր խասերից տարեկան ստանում էր 900000 ակչեի

---

44 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Բ, հատ. ե, էջ 80—81։

45 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, стр. 5.

եկամուտ։ Փաշայության 8 սանջակներն ունեին 108-ը զեամեթներ, 3022 թիմարներ և տալիս էին 6490 զինվոր, որոնց հողատարածություններից ստացած հասույթը կազմում էր 13087327 ակչե[46]։ 1830 թ. Բայազետի փաշայության պետական հողերն ամբողջապես փաշայի խասերը, զեամեթներն ու թիմարներն էին։ Սուլթանն այստեղից ոչինչ չէր ստանում[47]։ Մարաշի փաշայությունն ուներ 2869 կըլըջ*, պետական օգտագործելի, լավորակ հողեր և տալիս էր 6500 զինվոր։ Այսպիսով, անվանապես Արևմտյան Հայաստանում հողերի մեծ մասը պետական-միրիե տեսակին էին պատկանում և տրվում էին մահմեդական զինվորականներին՝ օգտագործման իրավունքով։

Հողակտորի անցումը մեկ գյուղացուց մյուսին կարող էր տեղի ունենալ միայն ֆեոդալի թույլտվությամբ, որի համար վերջինս տալիս էր արտոնագիր, դրա դիմաց ստանալով սահմանված քանակի գումար։ Իսկ ֆեոդալներն էլ փաշայի կամ սուլթանի առաջ պարտավորված էին հողից ստացած հարկ-rենտայի հաշվին պահել հեծելազոր և պատերազմի պահին այն առաջնորդել ռազմադաշտ։

XIX դարի սկզբներին հողատիրական նախկին օրենքները, խասերին, զեամեթներին ու թիմարներին տիրապետելու իրավունքները, դրա դիմաց սուլթանին ծառայելու պարտավորությունները, փոխվել էին։ Այժմ արդեն սուլթանի խստաբարո գրություններն այնքան էլ դեր չէին կատարում։ Քայքայման եզրին հասած կայսրության մեջ էականը ուժն ու հարստությունն էր։

Հողատեր զինվորականների մեծ մասը, օգտվելով պետության թուլությունից, ժամանակի ընթացքում ամրապնդվել էր իր կալվածներում, դիզել հրոսկայական հարստություն, սեփականացրել, երբեմն էլ ժառանգական դարձրել հողերը, նույնիսկ քաղաքական իշխանությունը։ Նրանցից շատերն ապրում էին ոչ միայն գավառական քաղաքներում, այլ ապարանքներ էին կառուցել ու հիմնավորվել սուլթանի նստավայրում, փաշայանիստ քաղաքներում։ Ռազմա-ֆեոդալական հողատերերն աճել էին, դարձել հողային արիստոկրատներ, զինված ջոկատների ղեկավարներ։ Սուլթանները վաղուց էին նկատել, որ թուրքական ֆեոդալների աճող ազդեցությունը, կենտրոնախույս ձգտումները վտանգավոր կերպարանք էին ստանում կենտրոնական պետության համար, սակայն առայժմ լռում էին, քանի որ անկարող էին պայքարել այդ երևույթի դեմ։

Պետական գանձարանի աղքատացման պատճառով կառավարությունը պակասեցրեց ենիչերիների ռոճիկները, փոխարենը շնորհեց հողեր։ Իբրև անբարեհույս, ենիչերիական գնդերի մեծ մասը տեղափոխվեց ծայրամասերը՝ Կարին, Կարս, Ախալցխա։ Արևմտյան Հայաստանը սուլթաններից նոր պատուհաս ստացավ։ Ենիչերիները խլեցին քրիստոնյաների, նույնիսկ մահմեդականների հողատարածությունները, սկսեցին կեղեքել ռայային։

Արևմտյան Հայաստանի հողերի մյուս մասը վակուֆային անունն էր

---

46 «Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիո և սահմանաց նորա...», հորինեց Անդրեաս Աղեխսանդրյան, էջ 220։

47 Վրացական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 2646, թ. 9։

* Բառացի նշանակում է սուր, սրի իրավունք. այդպիսի անուն ունեին ռազմիկ, հողատեր ֆեոդալի եկամուտները, հողակտորները։

կրում և պատկանում էր մահմեդական ու հայ հոգևորականությանը։ Հոգևոր ֆեոդալների տնօրինությանն հանձնված վակուֆները ևս բաժանվում էին երեք խմբի։ Առաջին խմբի վակուֆներն էին շարժական ու անշարժ այն գույքերը, որոնցից ստացված եկամուտներով վերանորոգվում էին մզկիթները, կերակրվում էր հոգևոր դասը։ Սուլթան Մուստաֆա II-ը մալիֆիանե կոչվող հիշյալ վակուֆներից, որոնք տրվում էին ժառանգաբար, հարկ էր գանձում ոչ միայն միանվագ, այլ նաև ամեն տարի[48]։ Մուստաֆա III-ը փոխեց մալիքիանեների կառավարման ձևը և դրանք դարձրեց պետական սեփականություն, գանձվող հարկագումարը լցնելով իր գանձարանը։

Երկրորդ կարգի վակուֆներից ստացված եկամուտներն անվանապես ծախսվում էին աղքատներին ու կարիքավորներին օգնելու նպատակով, սակայն իրականում դրանք խժռում էին կառավարիչ նաղիրները։ Երրորդ խմբին էին պատկանում տովորական վակուֆները[49]։ Սրանք նվիրվում էին մզկիթներին, իբրև սեփականություն՝ առհավետ օգտագործելու, բայց ոչ օտարելու իրավունքով։

Խոշոր հողատարածություններ՝ վակուֆներ ստանալու իրավունք վերապահվեց նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին և թվով 200-ից անցնող հայկական վանքերին։ Հաշվի առնելով ամենայն Հայոց կաթողիկոսի ազդեցությունը, սուլթանները հողեր, զանազան նվերներ, դրամական միջոցներ, արտոնություններ էին բաշխում կաթողիկոսին, Կ. Պոլսի Հայոց պատրիարքին, սրբանց սիրաշահելու քաղաքականություն վարում դեռևս միջնադարում։ Գնալով ստվարանում էին վակուֆային հողերը, մանավանդ էջմիածնապատկան կալվածները։ XIX դարի սկզբներին էջմիածնի կաթողիկոսությունը հողային կալվածներ, ջրաղացներ, ձիթհաններ, այգիներ, պարտեզներ ուներ Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր փաշայություններում, այդ թվում և Եվդոկիայում, Ջմյուռնիայում և Հալեպական փիլիպիայում։ Կաթողիկոսի նշանակած մարդիկ վարձակալության էին տալիս այդ կալվածները, արդյունքից գանձված հարկը ստանում դրամով կամ բնամթերքով, ապա տեղափոխում էջմիածին։

Հողային կալվածներ ունեին Արևմտյան Հայաստանի վանքերը, ինչպես և մի քանի տասնյակ եկեղեցիներ՝ Վարագա ս. Նշանի վանքը, Մուշի ս. Կարապետը, Ախթամարի ու Սսի կաթողիկոսությունները և շատ այլ վանքեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ 300 հեկտարից ավելի հողեր, անասունների հոտեր ու նախիրներ։ Նրանք հողերը մշակելու համար աշխատեցնում էին վանքապատկան գյուղացիներին, վարձակալող մարաբաներին (կիսարարներ, վարձու մշակներ), հարստություն դիզում։ Սակայն այդ հարստությունն ապահով չէր։ Ամեն րոպե ունեցվածքի հետ միասին, վանականները կարող էին կորցնել իրենց կյանքը։ Քուրդ և թուրք ասպատակողների, ավազակների արշավանքները մի հարվածով կարող էին ծայրահեղ խեղճության հասցնել ամենահարուստ վանքը։ Վանական հողատիրությունը ֆեոդալական բնույթ ուներ։ Գյուղացիության շահագործման ճանապարհով մշակվող վանքապատկան հողե-

---

48 *Дм. Бакрадзе*, Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889, стр. 10.

49 *И. Соколов*, Земельные отношения в Турции до Танзимата («Новый восток», 1924, № 6, стр. 100—102).

րից ստացված եկամտով սնվում էր հնազանդություն քարոզող հայ հոգևորականությունը։ Վանքապատկան կալվածների հաշվին պահվում էին նաև դրպրոցներ։

Արևմտյան Հայաստանում տակավին հարատևում էին մասնավոր սեփականատիրական հողեր՝ մյուլքեր։ Առք ու վաճառքի, տնօրինության ժառանգական իրավունքով արտոնված այս հողերը թուրքահպատակ հայկական շրջաններում քանակապես մեծ թիվ չէին կազմում, սակայն XIX դարի սկզբներին դրանք ավելացան։ Խասերի, թիմարների ու զեամեթների մի մասը դարձավ մահմեդական ֆեոդալների ձևակերպված կամ չձևակերպված ժառանգական սեփականությունը։ Մյուլքեր ունեին նաև հայ հողատերերը Վանի, Արճեշի, Դիարբեքիրի գավառներում, Ակնում և Սեբաստիայում[50]։ Հայերը մյուլքեր էին ձեռք բերել, թարխանության իրավունք ստացել սուլթաններին մատուցած հատուկ ծառայությունների, կռվում ցուցաբերած խիզախության համար։ Սակայն մյուլքերի թիվը թուրքահպատակ նահանգներում ավելի քիչ էր, քան քրդահպատակ խանություններում ու գավառներում։

Ժառանգական հողատիրության ձևն ավելի տարածված էր Հարավային Հայաստանի կիսանկախ համայնքներում և Կիլիկիայի լեռնագավառներում։ Վարչական իշխանության անունն այստեղ անուղղակիորեն փոխանցվում ու դրոշմվում էր հողատիրության ձևերի վրա։ Մասնավոր հողեր էին ճյուղյումնք, օջաքլըք (օջախ), դեռեբեյություն (ձորապետություն), յուրդլուկ (հայրենի վայր) կոչված գավառների հողատարածությունների գերակշռող մեծամասնությունը։ Դրանք պատկանում էին քուրդ խաներին, բեկերին, ցեղապետերին, հայ մելիքներին, իշխաններին։

Այդ նույն ժամանակաշրջանում սուլթանական կառավարությունն ընդլայնեց սահմանապահ գավառների իրավունքները, բաշխելով հողատիրական արտոնություններ և անկախության ֆերմաններ։ Բացառապես քրդական ավագանուն հանձնված «օջաքլըքներն այն երկրամասերն էին, որոնց խասը (հարկի տեսակ) կամ ամբողջովին, կամ մասամբ հատկացվում էր քաղաքի սահմանագլուխը պահպանող զորքերին, որպես ռոճիկ»[51]։

Օջաքլըքի, հաճախ և նրա հետ հավասարեցվող յուրդլուկի անուն կրող գավառները, գավառատերերը, որոնք կոչվում էին էմիրներ, ունեին դրոշակներ և թմբուկներ։ Նրանց մեջ կային այնպիսիները, որոնք սուլթանի կողմից նշանակման բարաթ էին ստացել։ Կային, սակայն, դարեր առաջ սուլթաններից ստացված այնպիսի բարաթներ, որոնք օջաքլըքի նախկին տերերին իրավունք էին տալիս ժառանգաբար կառավարելու՝ առանց որևէ մեկի նշանակման կամ հաստատման։ Քաղաքական իշխանությունը, դրան սերտորեն առնչվող հողային տիրույթները փաստորեն, երբեմն էլ իրավական առումով, վերածվում էին նման էմիրների ժառանգական սեփականության։

Արևմտյան Հայաստանի քրդաբնակ մասերում՝ Բալուի, Դինջի, Էգիլի, Դարոյի, Եկրադի, Միհրիվանի, Ուշտյուի, Ամադիեի գավառները ճանաչվել էին իբրև հյուքյումեթություններ. փաստորեն այստեղի հողերի ճնշող մասը ժա-

50 Հ. Շահպազյան, Քյուրդո-հայ պատմություն, էջ 70—71, 72։

51 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, հատ. Ե, էջ 97։

ռանգական սեփականություն էր։ Սուլթանը կամ թուրք պետական ավագանին հյուքյումեթությունների տերիտորիայում ոչ մի կտոր խաս, զեամեթ կամ թիմար չուներ։ Փադիշահի ստորագրած մի հրովարտակում ասվում է, թե հյուքյումեթները. «...որպես սեփականություն հանձնվեցին նրանց տիրակալներին՝ ծառայությունների և հնազանդության դիմաց։ Նրանք տիրակալում են այնտեղ սեփականատիրական իրավունքներով։ Նրանց մարզերն ենթակա չեն անդամ մարդահամարի և վերաբաժանման։ Նրանց եկամուտները չեն մտցվում պետական ցուցակների մեջ։ Այնտեղ չկա օսմանյան ոչ մի էմիր, չկան սուլթանական զորքեր։ Այդ բոլոր պարտականությունները նրանք՝ իրենք են կատարում։ Եվ նրանք (դրանց տիրակալները), ըստ համաձայնագրի, ապագայում ենթակա չեն ո՛չ հեռացման և ո՛չ էլ նշանակման»[52]։ Հյուքյումեթությունները գնալով ուժեղացան։

Ղ. Ինճիճյանը պարզաբանում է, թե XIX դարի սկզբին հյուքյումեթություն էր կոչվում այն գավառը, որին տիրապետողների ունեցվածքը «սեփականություն է. նրա տերերը իշխաններ են, որոնք նույն տոհմից ժառանգաբար իշխում են որդոց որդի... Անատոլիայի քրդերի մեջ այդպիսի բազմաթիվ իշխանություններ կան»[53]։

Մասնավոր հողատիրական իրավունքով էին օժտված Արևմտյան Հայաստանի դերեբեյությունները, Կիլիկիայի Կոզան-օղլու ցեղապետերը։ Տարբերությունը, սակայն, այն էր, որ պետությունը ճանաչել էր հյուքյումեթների, օջաքլըքների տիրակալների ժառանգական իրավունքները, սակայն սուլթանից ապըստամբ դերեբեյները Բ. Դռան հետ գրեթե ոչ մի պարտավորությամբ կապված չէին։ Նրանց արտոնագրեր տրվեցին 1830-ական թվականներին միայն և նոր վերցվեցին 1840-ականներին։

Հայկական աղբյուրները, եվրոպացի ուղեգրողները, նույնիսկ թուրքական կանուն-նամեները միաբերան վկայում են, թե Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի կիսանկախ գավառների, մասնավորապես Զեյթունի, Սասունի, Մոկսի, Շատախի, Սավուրի և Խյանի հողատարածությունները հայերի և փոքրաքանակ քրդերի ժառանգական սեփականությունն էին։ Այստեղ դասային ու դասակարգային տարբերակում կար, սակայն դեռևս այնքան չէր խորացել, ինչպես մյուս նահանգներում։ Հայ և քուրդ գյուղացիները, քանի որ հողակատորներ ունեին, դրա համար էլ անձնազոհ պայքար էին մղում թուրքական նվաճողների դեմ։ Հող և քաղաքական ազատություն, ահա երկու զորեղ գործոններ, որոնք կիսանկախ համայնքների ազգաբնակչությանը մղում էին ինքնապաշտպանության։

* * *

Արևմտյան Հայաստանն ու հարևան նահանգները XIX դարի սկզբներին էլ հետամնաց ագրարային երկրամասեր էին, որտեղ երկրագործությամբ ու անասնապահությամբ պարապող ազգաբնակչությունը երկփեղկված էր հողատեր ֆեոդալների և աշխատավոր գյուղացիության։ Սրանք իրենց հերթին տրոհ-

52 «Аграрный строй Османской империи...», стр. 93.

53 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, հատ. Ե, էջ 97։

վում էին սոցիալական, ունեցվածքային, ինչպես նաև իրավական տարբեր դրություն ունեցող դասերի։

Արևմտյան Հայաստանում խոշոր հողատերեր էին թուրք, քուրդ, մասամբ և ասորի ու հայ ֆեոդալները։ Երկրի ամենախոշոր ֆեոդալը, թուրքահպատակ շրջանների հողային կալվածքների զգալի մասի տերը սուլթանն էր։ Նրանից հետո, ըստ պաշտոնի ու ունեցվածքի, խոշոր հողատերեր էին մեծ վեզիրը, բեյլերբեյերը, միրմիրանները, սանջակբեյերը։

XIX դարի սկզբին Էրզրումի Ահմեդ փաշան 1200 հոգուց բաղկացած իր զորաջոկատը պահում էր նահանգում «ունեցած» հողերից ստացվող եկամուտների հաշվին։ Էրզրումի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Ադանայի, Տրապիզոնի փաշայություններում հողատեր ֆեոդալները թուրք զինվորականներն էին՝ սիպահիները, ենիչերիները, առևտրա-վաշխառուական ճանապարհով կամ բռնությամբ հողեր ձեռք գցած թուրք ավատատերերը։ Քրդական տարրը տարածուն հիմքեր էր գցել Էրզրումի, Կարսի, Ախալցխայի գավառներում, զենքի ուժով խլել հայերի հողերը, անցել նստակյաց կյանքի։ Սակայն, ընդհանուր առմամբ, այս նահանգներում հողերի տերը թուրք վերնախավն էր։

Ախալցխայի սանջակի հողատարածությունների մեծ մասը, Մահմուդ II-ի ֆերմաններով ամրացված էր թուրք բիմարլիներին։ 1822 թ. տրված, ապա 1823 և 1827 թթ. վերահաստատված մի ընդարձակ հրամանագրով, սանջակի հողերից 10250 ակչե տրվում էր թուրք իշխանավոր Սուլեյմանի որդի Ահմեդին, իսկ վերջինիս մահվանից հետո՝ փոխանցվում նրա ազգականներին։ Սանջակի 41 հազար ակչե մշակելի պետական հողերը 1827 թ. արդեն դարձել էին թուրք կալվածատերերի սեփականություն, որի մասին Մահմուդ II-ը բանակցում էր Սելիդ Ահմեդ փաշայի հետ, ջանում գոնե հարկեր գանձել դրանցից[54]։

Չըլդըրի սանջակի խոշոր հողատեր-կալվածատերերը նույնպես թուրքերն էին։ Նաղի բեկը, Թուրսուն աղան, Օսման աղան, Հուսեյին աղան և մի քանի այլ թուրք ֆեոդալներ իրենց մեջ էին բաժանել գրեթե ողջ սանջակի մշակելի հողերը, անտառները, արոտավայրերը և հարկեր էին գանձում գյուղացիներից։ Նրանք հողեր էին ձեռք բերել նաև Կարսի փաշայության մեջ և, նստած կենտրոնական քաղաքներում, վայելում էին հարկահանների բերած եկամուտները։ 1828 թ. Նաղի բեկին էին «պատկանում» նաև Չըլդըրի և Կարսի օգտագործելի հանքերը, որոնք կապալով շահագործման էին տրվում հայերին ու հույներին։ Փոցխովի սանջակի խոշոր հողատեր կալվածատերերն էին Ալայ բեկը, Գադա բեկը, Մադադ բեկը, Մուստաֆա բեկը, Իսմայիլ բեկը։ Սրանցից ամեն մեկը երկու գյուղից ոչ պակաս հողային կալվածներ ուներ։ Հատկանշական է, որ սրանց շարքումն էր Մուղդուսի Հարությունն անունով մի հայ հողատեր, որն ուներ «անբավ» հարստություն, հողեր, անասունների նախիրներ, ջրաղացներ ու ձիթհաններ։ 1827—1828 թթ. Փոցխովի սանջակում կային 7 խոշոր և 13 միջակ կալվածատեր, 148 ունևորներ։ Կալվածատիրական գյուղերը 210-ն էին, պետականը՝ միայն 133[55]։ Այստեղ և մյուս շրջաններում պետական հողերը

54 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 17, ց. 57, թ. 13—15։

55 Նույն տեղում, ֆ. 47, գ. 75, թ. 21—22։

նվազում էին, դրանց հաշվին ուռճանում էին թուրք կալվածատերերի տնտեսությունները։

Հարավային Հայաստանի քրդահպատակ ու մասամբ քրդաբնակ շրջաններում՝ Դիարբեքիրի, Վանի, Բայազետի փաշայություններում կային քուրդ խոշոր այնպիսի հողատեր ֆեոդալներ, որոնց հզորությունը, հողային կալվածները զարմանք են պատճառել եվրոպացի ուղևորներին, առիթ տվել նրանց համեմատելու միջնադարի արևմտաեվրոպական կալվածատերերի հետ։ Բիթլիսի իշխանության գլուխ կանգնած քուրդ Շերեֆների տոհմը ուներ հողային հսկայական կալվածներ, բերդեր, ամրոցներ, պահում էր մինչև 50 հազարանոց զորք։ Հայերի հողերը իշխողները սեփականացրել էին և հաճախ տերերին վռնդում էին քաղաքներից, խլում ու տիրանում վերջիններիս կալվածներին, նույնիսկ բնակելի տներին։ Սովից, սրից ու հալածանքներից ոչնչացող կամ խույս տվող հայերի կայքին անմիջապես տիրում էին քրդական բեկերը։

Դերսիմում ու Ջարսանջակում «հողերը, ջրերը, տները, մալերն ու միլքերը պիթուն ալ տարապակիններուն էր։ Տարապակին թե օր ուզեր մեզի (հայերին) կը պեյեր (պահեր), թե օր չուզեր՝ չէր պեյեր, ինչպես հիմա ըլ. թե օր ուզեր՝ կը մորթեր, թե օր չուզեր՝ չէր մորթեր»[56]։ Վանի շրջակայքի հողային կալվածքներն անցնում էին ձեռքից-ձեռք։ Դրանց մերթ տիրում էին թուրքերը, մերթ՝ քրդերը։ 1808 թ. Վանի քրդերի գլխավոր Դերվիշ բեկը խեղդամահ արեց Ֆեյզուլլահ փաշային, և «քուրդերը կրկին անգամ տեր դարձան քաղաքին և Վանի հողամասին»[57]։ Նույն տարում Բայազետի Աբդուլա քուրդ փաշան հենված վրանաբնակ խոլամների վրա, «..հափշտակել էր բոլոր հողերը...»[58]։ Մուշի, Հեքյարիի, Ջուլամերկի հողերը նույնպես կենտրոնացված էին քրդական հովտատերերի, խաների, բեկերի, թոռանների ձեռքում։

XIX դարի առաջին երեսնամյակում Հարավային Հայաստանի նահանգներում քրդական վերնախավը հղփացել էր և, օգտվելով պետության թուլությունից, քրիստոնյա ու մահմեդական աշխատավորության անպաշտպան դրությունից, խլել էր նրանից հողատարածություններ, գյուղացիներին դրել ծանր հարկերի տակ։ Հատկանշական է նաև այն, որ քրդական թափառաշրջիկ, վրանաբնակ ցեղերի մի մասն այս ժամանակահատվածում անցնում էր նստակյաց կյանքի, զբաղվում հողագործությամբ։ Ազատ հողատարածություններ չկային։ Նրանք այդ բանն անում էին հայերի ունեցվածքի հաշվին, բռնության ու բիրտ ուժի միջոցով, խլում ռայաչի հողերը, երբեմն էլ տներն ու այգիները։

Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, վանական ու եկեղեցական հողատիրության կողքին, գոյացել էին աշխարհիկ հայ հողատերեր, որոնք կալվածները ձեռք էին բերել գնման, այս կամ այն փաշային, քուրդ խանին ծառայելու և այլ միջոցներով։ Վասպուրականում Դանկովյաններ հայտնի տոհմն ուներ հողային ընդարձակ կալվածներ։ Արճեշի մեջ կար բարխանության իրավունք սփացած մի մեծ գերդաստան, որը ազատ էր հարկատվու-

56 Անդրեասիկ, *Տերսիմ*, Թիֆլիս, 1901, էջ 50—51։
57 Հովճ. Հակոբյան, *Ուղեգրություններ*, հատ. Զ, էջ 219։
58 Նույն տեղում, էջ 271։

բյունից, տիրում էր յոթը գյուղերի։ «Օսմանյան սուլթան մը ֆերմանով ճանչցեր էր անոնց թարխանությունը»[59]։ Վանի սանջակումն էր Գործոթ գյուղի հայ մելիքը, իսկ քաղաքումն էին նստում իշխանաց իշխան խոջա Ախիշյան Գաբրասլֆերյանը, Մկրտիչ իշխան Գասպարյանը, Գրիգոր աղան, Հակոբ իշխան Սաֆարյանը։ Մասնավոր սեփականատիրական հողերից բացի, Այգեստան ու Արարոց թաղերում սրանք ունեին այգիներ, տներ, ձիթհաններ, խանութներ։

Չարաճոջակի վրա բռնացող դերեբեյների կողքին կային հայ մելիքներ, իշխաններ։ Բայազետի փաշայության մասերին տիրող Բեղեր-խան բեյի, Մահմուդ և Ավդալ խանների խորհրդականները հայ իշխաններն էին։ Քուրդ բռնատերերի տնտեսությունը վարող, քաղաքականության ուղղություն տվող Միր Մարտո Բաշկալեցին, Հովհաննես Մանոպյանը և շատ ուրիշներ նվաճել էին «տերերի» համակրանքը և նրանց գյուղերը, ագարակները ազատ էին հարկերից ու պարհակներից։

Սասունում, Տարոնում, Հաճընի շրջանում հողատեր ֆեոդալների գերակշռող մասը հայեր էին։ Զեյթունի չորս իշխանական տներն իրենց մեջ էին բաժանել հայ և թուրքմեն գյուղերը և գյուղացիներից հարկ էին ստանում։

Այսպիսով, Հայաստանի ու հայաբնակ նահանգների հողատեր ֆեոդալների դասակարգը բազմատարր էր ըստ ազգության, ապրում էր աշխատավոր գյուղացիության, նրանից գանձած հարկերի, ունեցվածքի կողոպտման, անտանելի ճնշումների ու խոշտանգումների միջոցով կորզած եկամուտների հաշվին։

Թուրքիայի ազգաբնակչության գերակշռող մասը, արտադրող դասը, աշխատավոր գյուղացիությունն էր, որը սոցիալական դրությամբ միատարր չէր։ Դավառահայության ամենատավար զանգվածը համարվում էր իրավականորեն (de jure) ազատ գյուղացիությունը, սակայն փոքր մասն ուներ սեփական հողեր, մյուս մասը նստած էր պետական հողերի վրա, մի հատվածն էլ ապրում էր վակուֆային հողեր մշակելով։ Եթե հայկական կիսանկախ համայնքների գյուղացիության դրությունը որոշ չափով կայուն էր, ապա քրդապատկան շրջաններում այն չափազանց հեղհեղուկ էր, երբեմն էլ հավասարվում էր ճորտերի իրավիճակին։

Կիսանկախ հայկական դավառներում՝ Զեյթունում, Սասունում, Մոկսում, Սավուրում, Ճապաղջուրում և այլ գավառներում գյուղացիությունը իրավականորեն ազատ էր ճորտական կապանքներից։ Տեղի իշխաններից, մելիքներից, հաճախ և կառավարիչ դարձած քուրդ բեկերից նրա կախվածությունը արտահայտվում էր ոչ այլ կերպ, քան հարկատվությամբ, կարիքի դեպքում գավառի անկախության պաշտպանությամբ։

Սուլթանահպատակ շրջաններում գյուղացիության իրավական դրությունն այլ էր։ Այստեղ սփռված պետական ու կալվածատիրական հողերի վրա նստած երկրագործները բաժանվում էին ազատների և կախյալների։ Ծայր էր առել նաև մարաբայության (վխտարության) ինստիտուտը։

---

59 Հ. Շահպազյան, Քյուրդո-հայ պատմություն, էջ 71—72։

Թուրքական պատմագրությունը այսօր էլ անհարկի ջանում է ապացուցելու, թե կայսրության մեջ ընդհանրապես գյուղացու կախվածություն, ճորտություն գոյություն չի ունեցել, իսկ եթե փաստականորեն եղել է, ապա այն սուլթանների կողմից իրավականորեն չի ձևակերպվել։ Սակայն իրենց իսկ հրապարակած փաստերը հակառակն են ապացուցում։ Էրզրումի փաշայության կանուն-նամեն գյուղացուն օրենքով պարտադրում էր հողից չհեռանալ։ Սիպա հուն իրավունք էր տրվում փախչող գյուղացուն ետ վերադարձնել[60]։ Սուլեյման Կանունիի հրատարակած օրենքով «թիմարից փախած ռայաթի հավաքելը օրենք էր»[61]։ Պայմանաժամանակը սահմանվում էր 10—15 տարի, միաժամանակ ասվում էր, թե «ըստ արևելյան սովորության՝ հին դաֆթարում նյոքար արձանագրվածի որդին նոր դաֆթարում նյոքարի որդի պիտի արձանագրվի»[62]։ Ակնհայտ է, որ դեռևս միջնադարից օրենսդրությունը գյուղացու կախվածության իրավազրկության վերաբերյալ հոդվածներ էր հրապարակել։ Հետևաբար, շարիաթի հայտարարությունը գյուղացու անձնական ազատության մասին միայն ձևական էր։ Հրապարակված հատուկենտ փաստերը հիմք չեն տալիս եզրակացնելու, թե Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ նահանգների գյուղացիները կախման մեջ չեն եղել հողատերերից։ Այլ բան էր թուրքական օրենսդրությունը, ուրիշ բան՝ փաստացի իրավիճակը։

XVIII դարի վերջից կենտրոնական պետության թուլացման հետևանքով ուժեղացան հողատեր-ֆեոդալները, գրեթե գործադրությունից հանվեցին նախկինում հռչակված օրենքները, սկսեց մոլեգնել ֆեոդալի կամայականությունը։ Վատթարացավ գյուղացու իրավա-քաղաքական և տնտեսական կացությունը։ Փաստապես կախյալ վիճակի մեջ ընկած գյուղացիների մի մասը Հարավային Հայաստանումն էր, դերբեյությունների, հյուքյումեթությունների և օջաքլըքների տարածքում։ Ճիշտ է միայն, որ գյուղացիների, մասնավորապես քրիստոնյաների ճորտացման ու նրանց կախյալ վիճակի մեջ դնելու մասին պետական օրենքներ չեն հրապարակվել, գյուղացիների ճորտացումը իրավաբանորեն չի ձևակերպվել։ Սակայն իրավունքն այստեղ ուժեղինն էր, թուրք ու քուրդ ավատատերերինը, որոնք գյուղացու հետ վարվում էին այնպես, ինչպես ցանկանում էին։ Ակներև է, որ զնալով փոքրանում էր Հարավային Հայաստանում հայ ազատ գյուղացիության թիվը։

Ռազմատենչ քուրդ ավագանին ապրում էր նահապետականից ֆեոդալական հարաբերությունների անցման ճանապարհին և աստիճանաբար քոչվորական կյանքը փոխում նստակյացի, բռնագրավում հողեր, դարձնում իր սեփականությունը և սահմանում ֆեոդալական կախվածության կամ հարկատվության անտանելի ձևեր։ Այս գավառներում հայ և քուրդ գյուղացին օրենքով չէր ճորտացված, իսկ իրականում նրանց վիճակը ոչնչով չէր տարբերվում ճորտերի դրությունից։ Իրավա-տնտեսական կախման ամենացայտուն արտահայտու-


60 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», կազմեցին և ծանոթագրեցին՝ Ա. Ս. Սաֆրաստյանը, Մ. Կ. Ջուվալյանը, էջ 22։

61 «Аграрный строй Османской империи...», стр. 30—31.

62 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 30—31։

թյունը խաֆիրության (բառացի, արաբերեն նշանակում է պահապան) ինստիտուտն էր, որը ծագել էր վաղուց ի վեր, սակայն ավելի տարածուն ու տիրապետող դարձել XIX դարի առաջին կեսին։

Նկարագրելով քուրդ ցեղապետերի վայրագ կամայականությունները, Ս. Աբովյանը գրում է. «Քրիստոնյաները, հատկապես հայ դժբախտ ժողովուրդը և նեստորականները նրանց սուրուկներն էին բառիս բուն իմաստով։ Խոտառատ լեռներից և հովիտներից իջնելուց հետո, նրանք իրենց անհամար ոչխարների և եղջերավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում էին հայերի մոտ, առանց որևէ վարձատրության։ Դրա համար էլ սրանք ստիպված էին տարվա պատշաճ եղանակին անչափ կեր ու ճմռվա պաշար պատրաստ պահելու, որպեսզի ազատ մնային նրանց զարհուրելի վրեժխնդրությունից։ Ո՛չ մի օրենք, ո՛չ մի իշխանություն չէր կարող պաշտպանել սրանց այդ ենթումից։ Ամենաթեթև դիմադրությունը հատուցվում էր ամենավայրագ դաժանությամբ։ ...Հարևան երկրների թագավորները և իշխանները դողում էին նրանց վրեժխնդրությունից»[63]։



Տեսարան Մուշ քաղաքից

Կան նաև բազմաթիվ այլ փաստեր, որոնք վավերականորեն հաստատում են Բայազետի, Վասպուրականի, Տարոնի, Բիթլիսի, Ջարսանջակի գյուղացիության՝ ցեղապետերից կախվածության բազմազան ձևերը։ Նույն կացության մեջ էին ոչ միայն հայ աշխատավորները, այլև սրանց հետ բարեկամորեն ապրող քուրդ ներքնախավերը՝ անպաշտպան գյուղացիները, նստակեցության անցած ռայաթը։

Բացի փաստական կախյալ վիճակում գտնվող գյուղացիներից ու դաժան

63 Ս. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1958, էջ 248 (ընդգծումները մերն են—խմբ.)։

ճնշումների ենթարկվող ազատներից՝ կային նաև ստրուկներ, որոնց վաճառքը թույլատրվում, նույնիսկ խրախուսվում էր պետության կողմից։

Միջնադարից սկսած ստրուկներ կային Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր փաշայություններում։ Էրզրումի կանուն-նամեն ստրուկներ գնողին պարտադրում էր բերել և հանձնել կայսերական խասերի էմիրներին, իսկ Ամիդին վերաբերող օրենքը սպիտակամորթ վաճառողից պահանջում էր 50 ղուրուշ հարկ տալ, սևամորթ վաճառողից՝ 25 ղուրուշ։

Թավրիզից վերադառնալիս անգլիացի դիվանագետ Վիլյամ Աուզլին 1812 թ. Կարինում ականատես է լինում հետևյալ տեսարանին. Թուրք ենիչերին վրացուց հափշտակել էր նրա աղջկան և ցանկանում էր վաճառքի հանել շուկայում։ Հայերը փող են հավաքում աղջկա փրկագինը տալու, սակայն ենիչերու պահանջած գումարը մեծ էր։ Նա ավելացնում է «...այս տեղերից մեկում բազմաթիվ վրացի աղջիկներ ցուցադրված էին հրապարակային վաճառքի, ինչպես նաև մի քանի տղաներ, որոնց վերջերս թուրքերը ձեռք էին բերել ռուսական ճակատից, ուրիշ կողոպուտների հետ»[64]։ Ստրկավաճառները դործելու ազատ իրավունք ունեին Թուրքիայում, իսկ Կ. Պոլսի շուկաներում մունետիկների օգնությամբ անարգել կատարում էին գործարքներ, նույնիսկ խաներից, փաշաներից պատվերներ ստանում աղջկա կամ տղայի տարիքի, արտաքինի, հասակի, գույնի, դրանով իսկ պայմանավորված գնի վերաբերյալ։ Ապա կարճ միջոցում, փողով թե մարդորսությամբ, կատարում էին նրանց պահանջները։

Բռնությունն ու աղքատությունը շատերին ստիպում էին վաճառել իրենց զավակներին։ Ականատեսը պատմում է, թե ինչպես Դիարբեքիրում քուրդ մայրը սակարկում էր երկու չքնաղ, փոքրահասակ աղջիկներ վաճառելիս, իսկ գնորդն էլ արծաթե 25 մեճիտիեով գնելով «զանոնք, պիտի կրթե ու իր մոտիկ ազգականներուն կնության տա»[65]։ Թուրքիայի քաղաքներում կարելի էր հանդիպել մարդավաճառության շատ դեպքերի։ Ստրկությունը, սակայն, ոչ մի դեր չէր խաղում կայսրության սոցիալ-տնտեսական կյանքում։

5. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

XIX դարի սկզբին ինչպես սուլթանական Թուրքիայի, այնպես էլ նրա տիրապետության տակ ընկած Արևմտյան Հայաստանի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը հետամնաց գյուղատնտեսությունն էր։ Արդյունաբերական ձեռնարկությունները քիչ եկամուտ էին բերում պետությանը։ Դեռևս ազգաբնակչության ոչ մեծ տոկոսն էր ընդգրկված արտադրության այդ բնագավառում։ Մինչև դարակեսը արևմտահայության շուրջ 80 տոկոսը զբաղվում էր գյուղատնտեսությամբ։

Գյուղատնտեսության զարգացման համար Արևմտյան Հայաստանն ուներ լայն հնարավորություններ։ Երկիրը հարուստ էր լավորակ վարելահողերով, անտառներով և արոտավայրերով։ Արևմտյան Հայաստանում մշակում էին գյուղատնտեսական բազմաթիվ կուլտուրաներ, որոնց մեջ իրենց տեսա-

64 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ջ, էջ 485—486։
65 Հ. Նաճպազյան, Քյուրդո-հայ պատմություն, էջ 115։

կարար կշռով մեծ տեղ էին գրավում հատիկային կուլտուրաները, հատկապես ցորենը, գարին, մասամբ էլ բրինձը։

Հացահատիկ էին ցանում Արևմտյան Հայաստանի և հայաբնակ նահանգների գրեթե բոլոր շրջաններում, տակավին բերրիությամբ հայտնի էին Կարինի, Կարսի, Վանի, Սեբաստիայի, Զըլդըրի փաշայությունները, որտեղի հացը ոչ միայն բավարարում էր տեղի բնակչության պահանջները, այլև արտահանվում էր։ Ցորենի և գարու արտադրությամբ աչքի էին ընկնում Էրզրումի էյալեթի Իրզնկա գավառը, Բասենի դաշտը, Դերջանի լայնարձակ հովիտը, Ղուզուջանը։ Բայազետի փաշայության Խնուս և Դիադին գավառները կուտակում էին ցորենի, բայց հիմնականում գարու մեծ պաշարներ, իսկ Ալաշկերտի հովտի ընտիր ցորենով կերակրվում էր ողջ նահանգի ազգաբնակչությունը։ Կարսի փաշայության մեջ մտնող Արևմտյան Շիրակի, Կաղզվանի դաշտերը ցորենի լավագույն ցանքատարածություններ էին։ Վանի փաշայության Խլաթի, Բերկրիի, Արծկեի, Արճեշի գավառներում հողը շատ բերրի էր, և այնտեղ աճեցվում էր լավորակ ցորեն։ Սեբաստիան հայտնի էր կարմիր և սպիտակ ընտիր ցորենով։ Սվազ, Ամասիա, Արաբկիր գավառներն իրենց արտադրած հացահատիկով բավարարում էին Փոքր Ասիայի բնակչության գրեթե մեծ մասի պահանջները։

XIX դարի առաջին կեսին Աղանայի ու Մարաշի փաշայություններում ընդարձակվում էին բամբակի ցանքատարածությունները։ Գյուղատնտեսության այս ճյուղն աստիճանաբար իրենց տնօրինության տակ էին վերցնում ֆրանսիացիները, որոնք աշխատում էին բարելավել բամբակի տեսակները, կազմակերպելով ընդարձակ պլանտացիաներ։ Եղավ մի ժամանակ, երբ Աղանայի արտադրած բամբակով սնվեց Ամերիկայից հումք ստանալու մերժում ստացած ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը։ Սակայն այդ կուլտուրայի արտադրությունը չէր կարգավորված, քանի որ պետությունը ոչ միայն չէր խրախուսում բամբակագործությունը, այլ սահմանած մաքսային տարիֆներով, արտադրողի վրա դրած ծանր հարկերով քայքայման եզրին էր հասցնում այն։ Տեխնիկական կուլտուրաներից տարածված էին ափիոնի, ծխախոտի արտադրությունը, շերամապահությունը։ Ողջ Տրապիզոնի փաշայությունը ծխախոտի «Սամսոն», «Դիշկուլաղ» տեսակները արտահանում էր Ռուսաստան և իր ծխախոտի արտադրությամբ բավարարում ասիական Թուրքիայի պահանջները։ Դարասկզբին ծխախոտ էր ցանվում նաև Աղանայի նահանգի ծովամերձ լավորակ հողամասերում։

Մետաքսագործությունը կենտրոնացած էր հայերի ու հույների ձեռքում։ Սկյուտարի ու Բրուսովոյի մետաքսագործական հազարավոր դազգահները բանեցնելու համար նրանք հումքն ստանում էին Արևմտյան Հայաստանից (հատկապես Դիարբեքիրից) ու Հայկական Կիլիկիայից։ Քանի դեռ եվրոպական կապիտալը մուտք չէր գործել Թուրքիա, բուժուժի արտադրությունը մեծ համբրում ուներ թե՛ տեղացիների և թե՛ եվրոպացի վաճառականների աչքում։

Արևմտյան Հայաստանը համարվում էր այգեգործության երկիր։ Կիլիկիան տալիս էր բազմատեսակ մրգեր, մերձարևադարձային այնպիսի պտուղներ, որոնք թարմ կամ չորացած վիճակում վաճառվում էին ներքին ու արտաքին շուկաներում։ Վանի վիլայեթի Շատախ, Արճեշ, Ջուլամերիկ և Ոստան գավառներում, հատկապես քաղաքում աճեցվում էին խաղող, խնձորի ու տանձի բազ-

մաթիվ տեսակներ։ Դիարբեքիրի մեջ մտնող Արղանա-մադենի և Բալուի սանջակներում բնակիչներն արտադրում էին տարբեր տեսակի խաղողներ։

Եվդոկիայի բնակչությունը երկրագործությանը զուգընթաց զբաղվում էր նաև այգեգործությամբ։ Այստեղ աճեցվում էին բոլոր տեսակի պտուղները, նույնիսկ ձիթապտուղ, և առատ բերք ստանում։ Դարասկզբին Եվդոկիա քաղաքի շրջակայքում կային շուրջ 10.000 այգիներ և «կարտադրեին տեսակ-տեսակ պտուղներ, որոնք նույնիսկ կարտածվեին»[66]։ Ամենից գեղեցիկ պարտեզները գտնվում էին քաղաքի հարավային մասում։ Բազմատեսակ խաղողը աճում էր որթատունկերի վրա, սակայն օգտագործվում էին նաև ձողաբարձերը։ Հայտնի էին Եվդոկիայի «Համով-հոտով», «Ջավուշ», «Ֆեներիտա», «Կելին-Փարամազը» և այլ խաղողատեսակները[67], որոնցից «Թանձրամաշկն» ընտիր էր։ Այսպիսով այգեգործությունը տարածված էր Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր նահանգներում, սակայն հարկ է հիշատակել, որ թուրքական վերնախավը տեր էր դարձել այգիների զգալի մասին։

Արևմտյան Հայաստանը իր խոտառատ արոտավայրերի շնորհիվ անասնապահության զարգացման բոլոր հնարավորություններն ուներ։ Խաշնարածությունը զարգացած էր Կարինի, Վանի, Բայազետի, Դիարբեքիրի փաշայություններում, Սասնո և Զեյթունի լեռներում, Բիթլիսի խոտավետ վայրերում։ Սեբաստիայի վիլայեթը բուծում էր ոչխարների մի քանի տեսակներ, արտադրում ընտիր բուրդ։ Վանը արտահանում էր նաև այծի մազ՝ կապերտներ գործելու, փափուկ՝ դիֆտիկ գլխարկներ և կանանց վերնազգեստներ պատրաստելու համար։ Սակայն անասնապահությունը ատիճանաբար կենտրոնանում էր քոչվոր քրդական ցեղախմբերի ձեռքում, որոնք բռնությամբ խլել էին հայերին պատկանող արոտավայրերը, սեփականացրել, իսկ շատ տեղերում էլ հաստատելով խաֆիրության իրավունք, իրենց անասունների հետ միասին ձմեռում էին քրիստոնյաների տներում, ստիպելով նրանց անվճար հոգ տանել անասունների և իրենց ուտեստի մասին։

Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ցածր էր գյուղատնտեսության եկամտաբերությունը, որը պայմանավորված էր երկրագործության ծայրահեղ հետամնացությամբ։ Հողը դեռևս մշակում էին հասարակ արորներով, քիչ էին ոռոգման սիստեմները։ Խոսք չէր կարող լինել հողի պարարտացման մասին։ Կանոնավոր փոխադրամիջոցների բացակայության պատճառով թույլ էր ապրանքափոխանակությունը, արտաքին շուկայից կտրված լինելը վերացնում էր երկրագործի նախաձեռնությունն ու շահագրգռվածությունը։ Նույն վիճակում էր գտնվում նաև անասնապահությունը։

Աշխատանքի ցածր արտադրողականությունը համընդհանուր երևույթ էր Թուրքիայի ու նրա տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության համար։ Այն պայմանավորված էր ոչ միայն արտադրամիջոցների հետամնացությամբ, այլև արտադրահարաբերություններով, առա-

---

66 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 28։

67 Նույն տեղում, էջ 28, գյուղատնտեսության մասին տե՛ս նաև Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 151 և հետո։

վել ևս երկրագործի անձնական շահագրգռվածության, նրա ունեցվածքի ու կյանքի ապահովության բացակայությամբ, պարբերական թալանի առկայությամբ, ավազակախմբերի անարգել գործունեությամբ։ Եթե սրան ավելացնենք բազմաթիվ հարկերը, պաշտոնյաների ընչաքաղցությունն ու կաշառակերությունը, ապա պարզ կդառնան գյուղատնտեսության հետամնացության պատճառները։

Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ շրջաններում գյուղացին հարկեր էր վճարում պետությանը, թուրք հողատերերին՝ զիմմիներին ու քիմարլիներին, խասատերերին։ Քրդապատկան մարզերի աշխատավորությունը վճարում էր քուրդ խաներին, բեկերին, պետությանը, խաֆիրներին։ Գավառահայությունը հարկեր ու տուրքեր էր տալիս հայ եկեղեցուն ու վանքերին։

Արևմտյան Հայաստանի գյուղացիության վճարած հարկերից ամենածանրը աշարն էր։ Հարկը կազմում էր հողից ստացված տարեկան եկամտի 1/10 մասը, դրա համար էլ կոչվում էր նաև տասանորդ, որի փաստացի չափն և գանձման եղանակների ու տարատեսակների պատկերն իրականության մեջ ավելի բարդ էր, քան թղթի վրա ու օրենադրական ակտերում։

Ախալցխայի փաշայության պետական հողերը մշակող գյուղացիները 1828—1829 թթ. աշար էին վճարում բերքի 20 տոկոսի չափով[68]։ Պոնտոսի դաշտավայրի, Տրապիզոնի նահանգի, Շապին Կարահիսարի գյուղացիները 1807—1808 թթ. ցանում էին գարի. «...վճարում հողի արտադրության մեկ հինգհերորդը»[69]։ Բայազետի փաշան 1827—1828 թթ. թուրք ու քուրդ գյուղացիներից աշար էր հավաքում եկամտի տասից մեկը, հայերից յոթ մասից մեկը[70]։ Նա միաժամանակ գյուղացուց գանձում էր թոփրակ-վարաջ անունով հարկ։ Այն երկրագործները, որոնք գութան ունեին, պարտավոր էին հատուկ հարկ տալ՝ տասանորդից բացի։ Հատկանշական է, որ տասանորդը տարբեր նահանգներում, նույնիսկ տարբեր գավառներում տարբեր չափեր է ունեցել, ինչպես նաև գանձման անհամանմանման եղանակներ։ Ըստ որում, միշտ էլ քրիստոնյաներից հարկը գանձել են ավելի, քան մահմեդականներից։ 1830 թ. էրզրումի փաշայության Դերջան գավառում Իզմայիլ բեկը հայերից աշարը վերցնում էր մահմեդականների վճարածի կրկնակի չափով։ Աշարը այստեղ կազմում էր եկամտի 25 տոկոսը[71]։

Արևմտահայ ազգաբնակչության համար և՛ ծանր և՛ անպատվաբեր հարկ էր չիզիեն (գլխահարկը), որը գանձվում էր քրիստոնյաներից ու հրեաներից իբրև փրկագին, գլխագին, սկզբում ընդհանուր գերդաստանից, իսկ հետո ամեն մի արու չափահասից։ Չիզիեն ամենամյա հարկ էր և իր չափերով անընդհատ փոփոխության էր ենթարկվում։ 1800 թ. գլխահարկը գանձվում էր ըստ ունեցվածքի՝ հարուստից 48 ղուրուշ, միջակից՝ 24, աղքատից՝ 12, ընդհանուր գումարը կազմում էր 4000 քսակ։ Հարկաչափը 1803 թ. ավելանում է։ Այժմ այն գանձվում էր ոսկով։ Հարուստը տալիս էր 4 շերիֆի ոսկի, միջակը՝ 2, աղքա-

68 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 49, 1830, թ. 34։
69 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, էջ 94։
70 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2462, թ. 3—4։
71 ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 1046, 1830, թ. 1—2։

տը՝ 1, դրա հետ միասին «վասն հարկապահանջացն» 10, 8 և 4 փարա։ 1804 թ. հարկապահանջների վարձը և ընկալագրերի գինը միացվեցին և հարկաչափը սահմանվեց 12 ղուրուշ[72]։

Հետագա տասնամյակներին գլխահարկն անընդհատ ավելանում էր, կըրկնապատկվում, նույնիսկ քառապատկվում, որը պայմանավորված էր կայսրության տնտեսական քայքայումով։ 1815 թ. այն 15 ղուրուշից բարձրացավ 16-ի, 1824 թ. դարձավ 24 ղուրուշ, 1827 թ.՝ 36 ղուրուշ, 1829 թ.՝ 48 ղուրուշ, 1834 թ.՝ 60 ղուրուշ։ Ընդ որում, 1840 թ. փետրվարի 28-ի հրովարտակով «Ձարկ իւրաքանչիւր հարկատու ազգաց՝ հանձնվեցավ՝ ի ձեռս ազգապետաց նոցին՝ հաւաքել յազգէն եւ հատուցանել արքունի գանձարանին»[73]։

Եթե հոգևոր դասը, անկախ կամ կիսանկախ գավառների հայ գյուղացիությունը գլխահարկից «ազատ էին», ապա Արևմտյան Հայաստանի «այլահավատները» սահմանված գումարը վճարելով չէին ազատվում։ Հայկական աղբյուրներում եղած բազմաթիվ հիշատակությունների համաձայն Վասպուրականում, Տարոնում, Դերսիմ-Ջարսանջակում քուրդ խաներն ու թուրք փաշաները գլխահարկը գանձել են տարվա մեջ երկու, երեք անգամ և հասցրել մինչև 150—200 ղուրուշի։ Գ. Սրվանձտյանցը գրում է, թե Վանի կուլերը խարաջն ավելացրել են, նրանք «...ի. խարաջ առին ի Հայոցս և կես ղուռուշ էլ հարամ խարաջ»[74]։ Գլխահարկ էր գանձվում պանդխտից, գաղթողից, պանդխտության մեջ մահացածի ընտանիքից։ Պետությունը, մահմեդական մոլեռանդ կրոնավորները շահագրգռված էին գլխահարկի անընդհատ ավելացմամբ։ Դրանով իսկ նրանք նյութական հսկայական միջոցներ էին կորզում այլազգի հպատակներից, և մյուս կողմից՝ «խաղաղ մեթոդներով» վերջիններիս կրոնափոխ անում։

Մահմուդ II-ը վերականգնացրեց միջնադարում գործող մանկահավաքը։ Այդ տասնամյակներին կայսրությունը գլխահարկ հավաքելուց բացի, արհեստ սովորեցնելու պատրվակով, քրիստոնյա մանուկներ էր հավաքում, բռնությամբ տարագրում մայրաքաղաք, առանց վարձի, անտանելի պայմաններում աշխատեցնում Իփլիկ խանե անվանված նավարանում։ 1830 թ. Սվազի Հաջի Հասան փաշան, միացած էրզրումի սերասքյարին, 200 զինվոր էր առանձնացրել, նրանց տրամադրության տակ դրել զինված քրդեր, որոնք հայերից «մանկահավաքություն» պիտի անեին։ Ապրիլի վերջին արդեն Կ. Պոլիս էին ուղարկվել Կարա-Հիսարի և Երզնկայի գավառների 40 հայ[75] երիտասարդներ։ 1832 թ. Կարինից, Սեբաստիայից, Վանից և այլոց քաղաքաց Անատոլուի» հավաքեցին 6000 երիտասարդների և տեղափոխեցին Իփլիկ խանե աշխատելու։ 1844 թ.[76], սրանց մոտ 2/3-ը արդեն զոհվել էին նավերի ընկղմվելու պատճառով, մի մասն էլ փախուստի էր դիմել։ Ոչնչացվածների տեղը լրացնում էին «նորահավաքները»։ Գրեթե ամեն տարի յուրաքանչյուր գավառից հավաքում էին 20-ական հոգի, իսկ Արևմտյան Հայաստանից ամենապակասը՝ 300—400 երիտասարդներ։

---

72 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, հատ. Ե, էջ 46—47։

73 Ա. Պերպերյան, Պատմութիւն հայոց, էջ 452, 469, 475, 480, 500։

74 Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 393։

75 ՍՍՀՄ ԿՊՌՄԱ, ֆ. ՌԳԱ, գ. 1046, թերթ 16—18։

76 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 110, վավ. 51, 1844, թ. 1—2։

Թուրքիայի գանձած ծանր հարկերից էր ավարիզը կամ ավարիզ-դիվանիյեն («պատահական» հարկ)։ Այն մտցվում էր պատերազմների ժամանակ և չէր վերացվում նույնիսկ խաղաղ ժամանակաշրջանում։ Այս տասնամյակներում ավարիզը դարձել էր կանոնավոր հարկ և ամեն մի գերդաստանից գանձվում էր մինչև 300 ղուրուշի չափով։ 1807—1808 թթ. Տրապիզոնի նահանգի ամեն մի տնտեսություն տալիս էր 300 ղուրուշ ավարիզ, բացի այդ, նաև աշար և այլ տուրքեր։ 1830 թ. ռուսական հյուպատոսը վկայում է, որ «եթե այս հարկերը շարունակվեն ևս որոշ ժամանակ, ապա անմարդաբնակ կդառնան ոչ միայն գյուղերը, այլև ամբողջական սանջակներ»[77]։

Թուրքահպատակ մարզերի բնակիչները պարտավոր էին վճարել նաև հողային հարկ, որը միավորում էր մի քանի անուններ։ Պետական հողերի համար գանձվող հողահարկը կոչվում էր թափու (հողային տուրք, որը գյուղացին հողակատոր ստանալիս վճարում էր ֆեոդալին)։ Հարկը, սակայն, ամենուրեք չէր, այլ փաստորեն հանդիսանում էր պետական հողերի վարձավճար։ Հարկաչափը պայմանավորված էր հողի որակով։ Լավ հողակտորի համար վճարում էին 50 ղուրուշ, միջակի՝ 20—30, վատի՝ 15—20։ Թափուն վճարվում էր միանվագ։ Հոր մահվանից հետո վարձաթուղթը որդու անունով փոխանցվելու դեպքում, ամբողջովին կրկնվում էր հարկահանման արարողությունը, որը և կոչվում էր հակկի կարար։

Մասնավոր սեփականատիրական կալվածների, տների, խանութների, ջրաղացների, ձիթհանների, տնամերձ ագարակների համար հողատերերը վճարում էին հողային հարկ՝ էմլաք (կալվածք)։ Թուրքիայում էմլաքը ևս ուներ իր տարատեսակը, որը գանձվում էր միայն հողերից, հաշվի առնելով ոչ թե եկամուտը, այլ տարածությունը։ Ամեն մի ջրաղացից տարեկան գանձում էին 120 ղուրուշ, կես տարի գործող ձիթհանից՝ 60 ղուրուշ, բնակելի տներից՝ 15 ղուրուշ, խանութներից՝ 150 ղուրուշ։

Արոտների հարկ կամ ղամճուռ էին գանձում անասնատերերից։ Հարկվում էին թե՛ խոշոր և թե՛ մանր եղջերավոր անասունները։ Ախալցխայի փաշայության մեջ 1800—1830 թթ. գյուղացիները պարտավոր էին գարնանը վճարել ինակ-յագ։ Ամեն մի կովի համար վերցվում էր 1/2 հոկա յուղ, 40 ոչխարից՝ մեկ հոկա յուղ և մեկ ոչխար, 20 այծից՝ մեկը[78]։ Տավար ռեամին (անասնահարկը) վերցվում էր ամեն մի հարյուր անասնոնից մեկը, օնուս-ռեամին՝ յուրաքանչյուր զույգ ցուլ ունեցողից 32 ղուրուշ։ Սեբաստիայի փաշայության մեջ սրանց զուգահեռ վճարվում էր նաև ջանավար փարասի (անասունները գաղանների հարձակումներից պաշտպանելու հարկ)։ Դիարբեքիրի փաշայության հայ գյուղերից խբրև ղշլաղի (ձմեռանոցի) հարկ վերցնում էին 300 ոչխարից մեկը։

Թուրքիայում կար հարկերի մի ամբողջ խումբ, որոնք ստացել էին քաղաքացիական տուրքեր անվանումը։ Դրա մեջ էին մտնում ամուսնության տուրքը՝ առաջին ամուսնության դեպքում 100 փարա, երկրորդ ամուսնության ժամա-

---

77 Архив внешней политики России (АВПР) (այսուհետև՝ ՌԱՔՒԱ, Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ), Գլխավոր արխիվ 1—9, գործ 13, մաս 17, թերթ 30։

78 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 49, թ. 34—35։

նակ իգական սեռից՝ 100 ղուրուշ և ավելին։ Դրանից բացի, պետական հողերի վրա նստած գյուղացիների մահվան դեպքում նրա ունեցվածքի մեկ տասներորդը գրավվում էր արքունիքի օգտին, միաժամանակ, մահացած բոլոր քրիստոնյաներին հողում ամփոփելու թույլտվության համար գանձվում էր 50—100 ղուրուշ հարկ։

Թուրքական կառավարության պետական հարկերի ցանկը սրանով չէր ավարտվում։ Տարբեր նահանգներում կային՝ փեթակի հարկ, տոնախմբության համար վճարվող հարկ, նավրուզի հարկ, կեֆենդուզի հարկ (ամեն մի կոշկակարից 25 ակչե), յուղի հարկ (ամեն մի ծախից 1200 դիրհեմ յուղ), ջրելու վարձ (տրվում էր միրաբին), գիշերապահության (քաղաքներում խանութներ պահելու համար գանձվում էր խանութպաններից) և այլ հարկեր։

Սակայն նշված հարկերը բոլոր տնտեսությունները չէ, որ վճարում էին։ Հարկերի գանձումը կատարվում էր ըստ զբաղմունքի տեսակների, հողատարածությունների կամ ստացված եկամուտների։ Միայն չիզիեն էր, որ պարտադիր էր բոլոր քրիստոնյաների համար։

Վերոհիշյալ հարկերն իրենց տարատեսակներով ու անհամաչափությամբ գրեթե պարտավոր էին Արևմտյան Հայաստանի՝ Էրզրումի, Սեբաստիայի, Ջըլդըրի, Կարսի ողջ էյալեթների, Բայազետի, Վանի, Դիարբեքիրի միայն թուրքահպատակ շրջանների ազգաբնակչության համար։ Քրդահպատակ մարզերը «ազատ էին» պետական մի շարք հարկերից։ Դարասկզբին սուլթանական ֆերմաններն արդեն ուժ չունեին։ Ստեղծվել էին, սակայն, հարկային այնպիսի խճճված ցանցեր, որոնցում բեկերն ու ցեղապետերը, բազմաստիճան ու հարափոփոխ իշխանավորներն արյունաքամ էին անում ժողովրդին, սոցիալական ծանր շահագործման ենթարկում հպատակներին։ Քրդահպատակ ոչ բոլոր վայրերն էին սուլթանին հարկատու։ Նրանց գերակշռող մասը հարկեր էր տալիս քուրդ փաշաներին, քուրդ ու թուրք բեկերին, երբեմն էլ հայ իշխաններին։

Հարկային բեռը անհամեմատ ծանր էր Վանի փաշայության մեջ։ Նահանգի ու առավելապես քաղաքի ազգաբնակչության քրիստոնեական հատվածըն իր ունեցվածքով պահում էր բերդապահ վան-կուլիներին, հոգում նրանց ուտեստն ու հանդերձանքը, վճարում կոշիկների, զենքի գինը, միաժամանակ, ամեն մի տնտեսություն պարտավոր էր 30—40 դահեկանի դրամահարկ տալ։ 1800—1806 թթ. քուրդ փաշան քաղաքի ամեն մի տնտեսությունից պահանջում էր տարեկան 100 ղուրուշ։ Իմդադիյե և յայլըկ հարկը զենքի սպառնալիքով գանձվում էր տարվա սկզբին, ամբողջ տարվա համար, իսկ երեք կամ չորս ամիս հետո պահանջվում էր մյուս «տարվա հարկը»։

Բիթլիսի քուրդ խանը բնակչությունից, հատկապես քրիստոնյաներից, գանձում էր այնքան, որքան ուզենար։ Այստեղ տասանորդը հասնում էր մինչև 20 տոկոսի, դրանից բացի, կային տան հարկ՝ 4,5 ակչեով ավելի քան թուրքահպատակ շրջաններում, ջուլհակի հարկ՝ 4,5 ակչե, կերի հարկ՝ ամեն մի շնչից 2 ակչե, տոնական հարկ՝ ամեն մի գյուղից երկու ոչխար, նավրուզի հարկ՝ ամեն մի ծախից 7 ակչե, հողն անմշակ թողնելու հարկ՝ յուրաքանչյուր գյուղից 50 ակչե։ Գանձվում էին նաև կեֆենդուզի, ղշլաղի, յուղի հարկեր։ Բաղեշցին եթե ցանկանար գավառից դուրս գալ, պարտավոր էր ներկայացնել բոլոր հար-

կերի գանձման «ընկալագրեր», դրան զուգընթաց 20—30 փարա տալով «ազատության թուղթ» ստանալ՝ տեղից բացակայել կարողանալու համար։ Օտարականը վճարում էր ղշլա կոչվող տուրքը՝ 60—80 փարա[79]։

Դրությունը ավելի քան անմխիթարական էր քրդական խաներին ենթակա Տարոնում, Դիարբեքիրի փաշայության հայկական շրջաններում, Բեդեր-խան բեյի, Նուրալլահի, Մահմուդ խանի տիրակալության սահմաններում։ Սեբաստիայի տիրող, Կեսարիան, Մարաշը միշտ ասպատակող ապստամբ Ջապան-օղլուները հպատակ դավառներից տարին երեք-չորս անգամ հարկ էին պահանջում, ամեն անգամ էլ յուրաքանչյուրից բռնագրավում 30 դահեկան։ Դրամն այստեղ այնքան հազվագյուտ էր դարձել, որ 1808—1809 թթ. վճարում էին «հարյուրին հարյուր տոկոս»[80]։ Դրանից բացի, հպատակները անասնակերով, ձիերով, հագուստով, պարենով, փայտով ապահովում էին Ջապան-օղլուի զինվորներին։

Քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները դրվում էին ծանր հարկերի տակ։ Սուլթանի 1800 թ. հրամանագրով Կ. Պոլսի պատրիարք ընտրվողը հրովարտակ ստանալիս 140 հազար ակչե հարկ պիտի վճարեր։ Նոր վեզիրի իշխանության գլուխն անցնելու ժամանակ պատրիարքը տալիս էր 500 ղուրուշ, վեզիր քեհյասուն՝ 250 ղուրուշ, չավուշ բաշուն՝ 200 ղուրուշ, դրամի հետ նաև մետաքսյա հագուստներ, ճոքավոր կարմիր կոշիկներ պիտի նվեր ուղարկեր բարձրաստիճան պաշտոնյաներին։

Կ. Պոլսի պատրիարքն այդ գումարները գանձում էր հայկական վանքերից, եկեղեցիներից, հոգևոր առաջնորդներից՝ միրի մուկաթա անունով և իր րաժինը վերցնելով, վերոհիշյալ հարկագումարը հանձնում էր Բ. Դռանը։ 1817 թ. Հասան Ղալեի վանքը տվել է 150, Կարմիր վանքը՝ 50, Խաչկանց վանքը՝ 50, իսկ 1812 թ. Կարինի ու շրջակա գյուղերի մուկաթան (արաբերեն մակթու բառից՝ գինը որոշված հողամաս) կազմել է 1222 ղուրուշ[81]։

Ըստ օրենքի, այս հարկից բացի, արևմտահայ վանքերն ու եկեղեցիները ուրիշ տուրքեր չէին տալու։ Սակայն իրականում այդպես չէր։ Փաշաներն ու խաները ամենածանր հարկեր էին դնում գրեթե բոլոր վանքերի, վանական կալվածների, ուխտավորներից ստացված հասույթի վրա։ Դարասկզբին Վարագա ս. Նշան վանքը քուրդ խանին այնքան էր վճարել, որ տնտեսապես բոլորովին քայքայվել էր։ Մուշի ս. Կարապետ վանքից ստացվում էր մեծագումար հարկ։ Ս. Կարապետ այցելող թուրքահպատակները խանին հարկ պիտի տային, իսկ ռուսահպատակները, անցաթուղթ ստանալու համար, մեծագումար «թղթագին»։ Հարկվում էին, սակայն, ոչ միայն երկրորդական ու տեղական համբավ ունեցող վանքեր, այլև Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքը։ 1800 թ. և դրանից հետո Երուսաղեմի Պետրոս պատրիարքը տարին 4195,5 րուպիե ոսկի էր վճարում Դամասկոսի փաշային։

Արևմտահայ աշխատավորության ուսերին ծանր բեռի նման նստած էր նաև եկեղեցու, հայ հոգևորականության հարկապահանջությունը։ Այս դեպքում

79 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 444։

80 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, էջ 89։

81 Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163ա, վավ. 12բ։

կառավարական զափթիան, անխնա թուրք աղան կամ քուրդ բեկը չէ, որ կողոպտում էր հայ գյուղացուն, շողոքոր սրի սարսափը չէ, որ դատարկում էր անպաշտպան ռայայի գրպանը, այլ՝ եկեղեցու «քաղցրաքարող» սպասարկուները, վանահայրերը, կաթողիկոսի ու պատրիարքի հաճախակի առաքած նվիրակները։

Դարի առաջին քառորդին, ավելի քան երբևէ Արևմտյան Հայաստան ու հայ գաղթօջախներ էին ափռվել էջմիածնի, Երուսաղեմի, Կ. Պոլսի պատրիարքի նվիրակները։ Միայն Կ. Պոլսի հայերից էջմիածինը 1818 թ. նվիրատվություն է գանձել 559735 ղուրուշ[82], Կարինից՝ 1814 թ.՝ 10000 ղուրուշ[83]։ 1818—1823 թթ. Ակնի, Սվդոկիայի, Կեսարիայի հոգևոր վիճակներից 51001 ղուրուշ նվիրատվություն էր հավաքվել։ 1840 թ. Հովհաննես կաթողիկոսը, Կ. Պոլսի պատրիարքի միջնորդությամբ, մեկ տարում թուրքահպատակ հայերից «գանձանակել» էր 66976 ղուրուշ դրամ[84]։

Արևմտահայությունը եկեղեցուն տալիս էր աշհամբույր, խաչհամբույր, գավազանապտուղ, նորածնի մկրտության, նորահարսի ու նորափեսայի պսակադրության վարձ, հանգուցյալի թաղման արարողությունը կատարելու գին, հոգեբաժին։ Ջատկի տոնակատարության նպատակով եկեղեցականները գանձում էին յուղ կամ յուղագին, նույնիսկ ընկալագրեր բաժանում դրա համար։ Վանականները վանքի վիճակի գյուղացիներից պտղի էին հավաքում։ Նրանք շահագործում էին հավատացյալների ֆիզիկական ուժը, վերակառուցել տալիս վանքերը, աշխատեցնում իրենց ագարակներում և փոխարենը, իբրև վարձ, բաժանում «մեղաց թողություն» կոչվող օրհնագրեր։ Դրամավճարից ու բնամթերք տալուց բացի, գյուղացիությունը կոռային աշխատանք էր կատարում հայ հոգևորականության համար։

Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը կեղեքվում ու թալանվում էր սուլթանական կառավարության, թուրք փաշաների, քուրդ խաների ու բեկերի, հայ հոգևոր ու աշխարհիկ վերնախավի կողմից։

6. ՔԱՂԱՔՆԵՐ, ԱՐՀԵՍՏՆԵՐ, ԱՌԵՎՏՈՒՐ

Արևմտյան Հայաստանում և հարևան նահանգներում XIX դարի առաջին երեք տասնամյակներին կանգուն էին շուրջ 40 հայկական ու հայաբնակ քաղաքներ, որտեղ հայերի ձեռքին էին կենտրոնացած արհեստագործությունը և առևտուրը։

Ազգաբնակչության ստվարության, առևտրի ու արհեստագործության աշխուժության տեսակետից աչքի էին ընկնում Կարինը, Սեբաստիան, Կեսարիան, Սվդոկիան։ Սահմանամերձ Կարինը դարի սկզբներին ասիական նահանգների կենտրոնն էր, ազգաբնակչությամբ ամենամեծ քաղաքը։

Մինչև Ադրիանապոլսի պայմանագիրն ու արևմտահայության զանգվածային գաղթը, Կարինն ուներ 130 հազար բնակիչ[85], Սվդոկիան (Թոքաթ)՝ 80,

82 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 29, վավ. 133։

83 Նույն տեղում, թղթ. 25, վավ. 6։

84 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 11, գ. 1120, թ. 1—2։

85 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, վավ. 624, թ. 7, տե՛ս նաև Հովհ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 96։

Դիարբեքիրը՝ 40, Սեբաստիան՝ 40, Վանը՝ 45—50, Ակնը՝ 20, Ադանան՝ 12, Ամասիան՝ 30 հազար[86]։ Արևմտյան Հայաստանի քաղաքներն այս տասնամյակներին արդեն կորցրել էին իրենց ազգային միատարրությունը և վերածվել բազմազգ քաղաքների, ուր հայերենի կողքին ամենուր լսվում էր թուրքերեն, քրդերեն, հունարեն, ասորերեն և այլն։

Համեմատաբար հայաշատ էին Արաբկիրը, Ակնը, Հաճընը, Մարաշը և հայաբնակ Եվդոկիան, Կեսարիան, այսինքն՝ այն քաղաքները, որտեղ հույների հետ հայերը մեծամասնություն էին կազմում։ Առևտրի ու արհեստագործության զարգացման համար եկամուտներ, մեծագումար հարկեր գանձելու շահից դրդված, պետությունն ավելի «հնարավորություն» էր տալիս քաղաքների զարգացմանը։ Ակնհայտ էր, որ թուրքահպատակ նահանգներում, ծովամերձ Կիլիկիայում արհեստագործությունը շարունակում էր զարգանալ։



Տեսարան Բիթլիս (Բաղեշ) քաղաքից

Կայսրության արդյունաբերության ու վաճառականության մենաշնորհը, ընդհուպ մինչև դարակեսը, պատկանում էր թուրքահպատակ քրիստոնյա ազգերին՝ հայերին, հույներին, բուլղարներին ու սերբերին։

«Քաղաքներում,— գրում է Ի. Գոլոբորոդկոն,— առանց հայերի չէր կարող գոյություն ունենալ տեխնիկայի, արվեստի, գիտության, արհեստագործության որևէ ճյուղ»[87]։

86 Հայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 162։

87 *И. И. Голобородько* (И. Южанин), Старая и новая Турция, М., 1908, стр. 221.

Քաղաքաբնակ հայ ազգաբնակչության գերակշռող մեծամասնությունը պարապում էր բազմաճյուղ արհեստագործությամբ։ Այդ արհեստաճյուղերի մեջ առաջնակարգ տեղ ուներ մետաղագործությունն՝ իր տարատեսակներով։ Մետաղագործության հանրաճանաչ կենտրոններ էին Սվդոկիան, Վանը, Երզընկան, Կարինը, Ադանան, Զեյթունը։ Մետաղագործության մեջ առաջնությունը տրված էր պղնձագործությանը։ Այս ճյուղն ամենից ավելի զարգացած էր Սվդոկիայում։ Հումքի բազային մոտ լինելը, արհեստագործության արտադրանքից ստացած եկամուտները հնարավորություն էին ընձեռում և շահագրգռում հայ պղնձագործներին արտադրելու ապրանքներ, քանակով շատ՝ գնորդին բավարարելու, որակով լավ՝ մրցությանը դիմանալու համար։ Ինչ Ճիճյանի վկայությամբ. «Արհեստավորների առումով Թոխաթը պետք է կոչել քաղաք պղնձագործների կամ ղազանչիների, որոնց արտադրածը համբավավոր է և ընտիր է համարվում, քան օսմանյան տերության բոլոր վայրերինը։ Թոխաթի պղնձե գեղեցիկ ամանները, սեղանի սպասքը, կրակարանները, կաթսաները և այլն, տարածված էին Էրզրումում, Կոստանդնուպոլսում, Ամասիայում և ավելի հեռու՝ Սամսոնում և այլ նահանգներում»[88]։ Այս քաղաքում հայ պղնձագործների արհեստն առանց վերապահության, զարգացել և արվեստի էր վերածվել։ Սվդոկիան դարձել էր հանուր Թուրքիայի մետաղագործության կարևոր ու մեծ ապագա խոստացող կենտրոններից մեկը։

Պղնձագործությունը զարգացած էր նաև Կարինում, որտեղ 1818 թ. կային պղնձագործական 29 արհեստանոցներ։ Սրանք գործում էին միավորված և 1826 թ. մշակել էին «Գիր ուխտադրության և պայմանի»[89] նշանավոր կանոնադրությունը, մի փաստաթուղթ, որը կասկած չի թողնում Կարինում եղած պղնձագործության բարձր մակարդակի մասին։

Պղնձագործները Երզնկայում պատրաստում էին կաթսաներ, թասեր, ափսեներ, ինքնաեռներ, գեղեցիկ ու նուրբ ջրամաններ։ Նրանց արտադրանքը հետագայում ցուցադրվում էր Փարիզի, Վիեննայի, Ֆիլադելֆիայի ցուցահանդեսներում և նույնիսկ մրցանակներ շահում։

Խարբերդում, Կարինում, Սեբաստիայում, Դիարբեքիրում զարգացած էր նաև երկաթագործությունը։ Պատրաստում էին երկաթյա գործիքներ, կողպեքներ, մանկական օրորոցներ, անիվներ, կառքեր, մկրատներ, դանակներ, բազմատեսակ սառը զենքեր և հրազեն։ Սակայն մետաղամշակության ճյուղերում ոսկերչության մենաշնորհն էլ մնում էր հայերին։

Ոսկերչությունը լայն տարածում ուներ Կարինում, Ախալցխայում, Սեբաստիայում, իսկ Արևմտյան Հայաստանում զարգացած այդ արհեստի հրուշակված հայրենիքը Վանն էր։ Վանում «ոսկերչական արհեստը մյուս արհեստներու նման սահմանափակ չէ, որոնցմէ արտադրված ապրանքներու տեսակները գրեթե 30-ը չեն անցնիր. ան կընդարձակվի այնքան՝ որքան կզորին արհեստավորի միտքն ու կարողությունը»[90]։

Թուրքիայում ապրող քրիստոնյաներին արգելված էր զենք կրել։ Հայը

---

88 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 290։

89 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 258, վավ. 130, թ. 1—5։

90 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 227, ց. 346, թ. 1։

զրկված էր սառը զենք կրելու և հրազեն գործածելու իրավունքից, սակայն նրան «արտոնված» էր դրանք արտադրելը։ Սասունցի և զեյթունցի քաջակորով լեռնականները զենքեր էին արտադրում իրենց համար։ Հրացանը հարազատ մանկան հավասար դասելով, նրանք «դողում էին զենքի վրա», որովհետև դրանով էին պաշտպանում իրենց գոյությունն ու անկախությունը։ Զինագործության օջախներ էին ոչ միայն Զեյթունն ու Սասունը, այլև արհեստաշատ Կարինն ու Վանը։ Կարինի զինագործները դարերով զենք են մատակարարել Թուրքերին, մերձակայքում ապրող քրդերին։ Կայսրությունով մեկ հռչակված էին Կարինի «Ծդի կարդաշ» ընտանիքը, Վեմյան գերդաստանը։

Կաշեգործության, կոշկակարության, թանկարժեք մորթիներից մուշտակներ պատրաստելու արհեստանոցներ կային Ադանայում, Մարաշում, Բաղեշում, Կարինում, Դերսիմում և այլ քաղաքներում։ Արհեստի այս մարզը, սակայն, էական տեղ չէր գրավում հայ արհեստագործության բնագավառում։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում գոյություն ունեին արհեստի բազմաթիվ այլ տեսակներ։ Կային թիթեղագործներ, մսագործներ, հյուսներ, վարսավիրներ, հացագործներ, թաղիքագործներ, պայտառներ, որմնադիրներ, կավագործներ, համեստագործներ։ Արհեստագործության թվարկված ճյուղերի մեջ ներգրավված մարդիկ, չնչին բացառություններով արտադրում էին պարզունակ արտադրամիջոցներով, բավարարում միայն տեղական կարիքները։ Փոքր էր սրանց տեսակարար կշիռը Թուրքիայի ընդհանուր արտադրության, առավել ևս առևտրի հաշվեկշռում։

Ավելի զարգացած էին բրդե և բամբակե գործվածքների արտադրությունը, չթագործությունը, կտավագործությունը։ Սրանց առաջընթացին նպաստում էին բրդի ու բամբակի, մետաքսահումքի, ինչպես նաև կարմիր տորոն կոչվող ներկանյութի առատությունն Արևմտյան Հայաստանում։ Անասնապահները ու երկրագործներն արհեստավորին տալիս էին բուրդ, բամբակ, մետաքս, վուշ և կանեփաթել, սակայն վերջիններս դրանով չբավարարվելով, Եվրոպայից ներմուծում էին կիսապատրաստ հումք, մշակում արհեստանոցներում, գեղեցիկ տեսք ու ձևավորում տալիս, ներկում չգունաթափվող ներկով, վաճառահանում հայրենական և օտար շուկաները։

Կարինում արտադրում էին չիթ, մետաքսյա գործվածքներ, ընտիր շալեր, քիլիմ կոչվող գորգեր, բրդյա աբաներ։ 1818 թ. Կարինի չթագործ արհեստագործների թիվը հասնում էր 100-ի[91], որոնք աշխատում էին 50-ից ավելի արհեստանոցներում։ Աբաճիներն ունեին շուրջ 31 արհեստանոց, քյուրքճիները՝ 15 արհեստանոց, իսկ մահուդագործներն հայտնի էին ամբողջ կայսրությունում։ Այնքան էր տարածվել սրանց հռչակը, որ հեռավոր քաղաքներից արհեստավոր վարպետներ էին գալիս այստեղ՝ տեղի արդյունագործությանը ծանոթանալու, հայերի մոտ կատարելագործվելու։ 1837 թ. հուլիսի 5-ի կառավարության հրահանգով Սլիվենի (Բուլղարիա) մահուդագործները[92] գալիս են Կարին կատարելագործման։ Նման խմբեր էին ընդունում նաև կարնեցի պղընձագործները և դերձակները։

---

91 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 53, վավ. 263, 1818, թ. 6—7։

92 А. Косев, Новая история Болгарии, М., 1952, стр. 87.

Կարինի դերձակությունն առաջնակարգ էր Թուրքիայում։ Նրանք կատարում էին օտար վաճառականների, նույնիսկ կառավարության պատվերները։ Դերձակների թիվն անցնում էր 300-ից։ Հիշատակվում են «Բեզազ օղլի խան»-ում նստած 45 դերձակները, «Թոփխանեի դերձակներ»՝ 10 արհեստանոց, «Թրուի չարշավչիներ»՝ 50 արհեստանոց, «Դաշխանեի դերձակներ»՝ 15 արհեստանոց և այլն[93]։

Որակյալ կտավ՝ կարմիր շիլա էին արտադրում Բաղեշում։ Կային 100-ի չափ կտավագործներ, որոնք «կարմիր ներկով ներկված պատվական կտավ մը կշինեն, որ բոլոր Քրդստանի մեջ կգործածվի»[94]։ Վանի ջուլհակները հնամենի գործիքներով արտադրում էին տարատեսակ կտավեղեններ։ Ակնի հայ արհեստավորներն արտադրում էին բամբակյա և մետաքսյա հյուսվածքներ, ինչպես նաև տպածո և ձեռքով ներկված «յազմայի վարշամակներ»։

Խարբերդում գործում էին «ասուրաց չիթ» կոչվող կտավեղենը, որը դիմացկունության ու չգունաթափման շնորհիվ մեծ հաջողությամբ վաճառվում էր քրդերի մեջ։

Մարաշում զարգացած էր ջուլհակությունը (ջուլֆալըգ)։ Առևտրականները գործարքի մեջ մտնելով արհեստագործ վարպետների հետ, հավաքագրում էին ջուլհակություն իմացող տղամարդկանց ու կանանց, թելեր բաժանում, գործել տալիս ալաջա կոչվող քաթանանման չիթը։ Քաղաքում պատրաստում էին աբաներ՝ մետաքսաթել սըրման, բրդյա պետեն։ Մարաշի արտադրանքը վաճառվում էր Փոքր Ասիայի քաղաքներում, Սիրիայում։ Մեծ հաջողություն ուներ ավելեղենը՝ ղումաշը։ Պասմախանաներն ընդունում էին դրսից բերված գործվածքները, նրանց վրա «տպածո գեղեցիկ դաճեր» հանում և ստացված եկամուտով բազմաթիվ գերդաստաններ պահում։

Թուրքերի կողմից լավորակ հողերը զավթելու հետևանքով մշակելի հողատարածությունների պակասը պատճառ դարձավ, որպեսզի հաճընցի հայը իր գոյությունը պահպանելու համար զբաղվեր արհեստով ու առևտրով։ Քաղաքի խաղախորդարանի (քաղարանոցի) շուրջը համախմբված 20—25 տնակներում աշխատող արհեստավորները ծանր պայմաններում մշակում էին անասունների մորթիները, բուրդը կամ մազը, ապա ուղարկում արտադրության այլ ճյուղերին։ Բուրդն օգտագործում էին լայն շալվարներ գործելու համար։ Արտադրանքի մի մասը վաճառում էին Հաճընի շրջակա գյուղերում, մեծ մասը արտահանում Մարաշի, Բիթլիսի, Այնթափի, Հալեպի, Ալեքսանդրիայի և մանավանդ Ադանայի շուկաները։ Նշանավոր արհեստագործներ էին Մըխեյան, Աշըգյան, Պելյան, Ղարիբյան և այլ գերդաստանները։ Հաճընցիները և մարաշցիները հայտնի գուլպայագործներ էին։ Արտադրած բրդյա գույնզգույն գուլպաներով նրանք բավարարում էին Կիլիկիայի ազգաբնակչության գրեթե մեծ մասի պահանջները։ Արհեստի այս ճյուղում աշխատում էին բացառապես կանայք, որոնք զբաղվում էին նաև ձեռագործով։

Դարի առաջին կեսի Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի քաղաքներում բամբակագործությունը և բրդե կտորեղենի, աբաների, մուշտակ-

---

93 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 33, վավ. 263, թ. 7—15։

94 Բարունակ Պէյի Տեր-Ուխան, նշվ. աշխ., էջ 149։

ների արտադրությունը դեռևս գտնվում էր ծայրաստիճան ցածր մակարդակի վրա. սակավաթիվ էին մանուֆակտուրաները։ Արհեստագործները, ճիշտ է, կապված էին արտաքին շուկայի հետ, սակայն հիմնականում սահմանափակվում էին միջնադարյան արհեստանոցներով, լավագույն դեպքում պահում էին աշակերտներ։

Սվազի և Կեսարիայի նահանգներում գտնվող Սվազ, Եվդոկիա, Ամասիա, Կեսարիա, ինչպես նաև Ուրֆա քաղաքները արդյունագործության մարզում ստեղծել էին մանուֆակտուրաներ։ Նրանք հումքը ստանում էին Եվրոպայից՝ մշակված կամ կիսամշակ ձևով, դրանից գործվածքներ էին պատրաստում և վաճառքի հանում անգլիական, ֆրանսիական շուկաներում։ Արհեստանոցներում աշխատողների թիվը գնալով ավելանում էր, գործադրվում էր վարձու աշխատանք, արտադրողը կախման մեջ էր ընկնում գնորդ-վաճառականից, որը թելադրում էր իր կամքը ոչ միայն գների, այլև ապրանքների տեսակների, դույնի ու ձևի վերաբերյալ։



Ամասիա քաղաքի ընդհանուր տեսքը

Բամբակագործության և մետաքսագործության մարզերում մանուֆակտուրաներ էին առաջացել Ուրֆայում, Դիարբեքիրում, Բրուսայում, Հալեպում և այլ քաղաքներում, որտեղ արտադրանքը, մինչև եվրոպականի ներմուծը Թուրքիա, արտադրության կազմակերպման իր ձևով, ընդգրկման շրջանակներով, վաճառահանման շուկաներում խաղացած դերով հազիվ թե հնարավոր լիներ տեղակայել ֆեոդալական արտադրաեղանակի սահմաններում։ 1800—1805 թթ. 12 հազար տուն ունեցող Ուրֆան բանեցնում էր կտավագործական

400 դազգահ, որոնք կենտրոնացված էին արդեն վաճառորդներին ենթարկվող երկու տասնյակ արհեստանոցներում, աշխատում էին բերված հումքով և արտադրանքի դիմաց ստանում միայն աշխատավարձ։ Շահագործվում էր հիմնականում կանանց և երեխաների աշխատանքը։

Մ. Ա. Ուբիչինին վկայում է, թե դարակեսի Դիարբեքիրը և Բրուսան տարեկան արտադրում էին 400.000 ղուրուշի արժողությամբ մետաքսյա կտորեղեն, այսինքն 1812 թ. արտադրանքի $^{1}/_{10}$-ը[95]։ Ուրեմն, դարի առաջին քառորդին այս քաղաքները միջին ու մոտավոր հաշվով արտադրել են 4 միլիոն ղուրուշի արժողությամբ կերպասեղեն։ Արտադրողներն ու հատկապես վաճառողները հիմնականում հայերն էին։ Բրուսայի (Բուրսայի) հայ մետաքսագործները 1830-ական թթ. տարեկան արտադրում էին 100 հազար թուի մետաքսյա գործվածքներ։

Արևմտահայ արհեստագործության բնագավառում առաջացել էին մի շարք նոր ու հատկանշական երևույթներ։ Հումքի բազային մոտ լինելով, վաճառահանման շուկաների հետ կապված միջնորդ առևտրականների թելադրանքով, գնորդների պահանջարկով, պետության ուղղակի ու անուղղակի միջամտությամբ խմբավորում էր կատարվել արհեստատեսակների մեջ, ոչ միայն ըստ ճյուղերի, այլև ըստ քաղաքների։ Միևնույն ապրանքի արտադրման համար գործադրվող աշխատանքը բաժանվում էր, տրոհվում տարբեր քաղաքների միջև։ Այսպես, օրինակ, պղինձը հանվում էր Արղանա-մադենի և այլ հանքերից, հալվում Եվդոկիայի զալ-խանե կոչված պղնձահալ հնոցներում, դարձվում պղնձյա ձողեր կամ թիթեղներ և ապա նորից վերադարձվում Թուրքիայի ամենատարբեր քաղաքները։ Օտար շուկաներում վաճառելու համար պատրաստված պղնձե ամանեղենը երկրի ասիական մասի գրեթե բոլոր քաղաքներից բերվում էր Եվդոկիա, արտաքնապես ձևավորվում, անագապատվում և նոր միայն արտահանվում։

Նման պրոցեսն ավելի էր խորացել գործվածքեղենի արտադրության մեջ։ 1830-ական թթ. վերջերին Ամասիայում և Մալաթիայում արտադրվում էր մեծաքանակ բեզ կամ բոգազ կոչվող բամբակոնացու կտորեղենը։ Արտադրանքի մի մասը արհեստագործների ձեռքով ներկվում ու վաճառվում էր տեղական շուկաներում։ Սակայն դա փոքր քանակ էր կազմում։ Վաճառականների պատվերով, դեռևս չգունավորված հիմնական արտադրանքը հանձնվում էր սրանց, որոնք այն տանում էին Հալեպ և Եվդոկիա, ներկել տալիս ներկատուն-բոյախանաներում, ապա տեղափոխում Մոսուլ, տալիս պասմաճիներին՝ տպահանման, զարդանկարման համար, երբեմն էլ ձևելու և բամբակոններ կարելու, նոր միայն հանում երկրի և դրսի առևտրահրապարակները, վաճառում բանկ գներով, ստանում անհամեմատ բարձր շահույթ։ Աստառը գործում էին Զիլեյում և շրջակա հայկական գյուղերում, ապա տեղափոխում Ամասիա և Եվդոկիա՝ ձևավորման։

Սակայն սրանք դարաշրջանի տիրապետող կացութաձևեր չէին։ Դարի առաջին քառորդին մանուֆակտուրայի ստեղծման նախնական քայլեր էին արվում միայն, հիմնականում իշխում էր ֆեոդալական հետամնաց արտադրա-

---

95 M. A. Ubicini, նշվ. աշխ., էջ 357։

նղանակը։ Գյուղատնտեսության նման արդյունագործությունը ևս գտնվում էր ծայրաստիճան հետամնաց վիճակում։

* * *

Չնայած ռազմա-ֆեոդալական բռնատիրությանը բնորոշ խանա-փաշայական սիստեմի ստեղծած արգելքներին, ավազակախմբերի ձեռարձակ գործունեությանը, Թուրքիայի արտաքին ու ներքին առևտուրը XIX դարի առաջին քառորդին բավական աշխուժացել էր։ Կայսրությունը առևտրական սերտ փոխհարաբերությունների մեջ էր Եվրոպայի, Ասիայի, նույնիսկ Ամերիկայի երկրների հետ, ներմուծում էր ոչ-մեծ քանակությամբ գործարանային ապրանքներ, միաժամանակ արտահանում գյուղատնտեսական մթերքներ, հացահատիկ, մրգեր, ինչպես նաև արհեստագործական արտադրանք։

Թուրքիայի արտաքին առևտուրը կենտրոնացված էր քրիստոնյա վաճառականների ձեռքում։ «...Ո՞վ է առևտուր անում Թուրքիայում,— գրում էր Ֆ. Էնգելսը,—համենայն դեպս ոչ թուրքերը։... Հույները, հայերը, սլավոնները, արևմտաեվրոպացիները, հիմնավորվելով ծովային նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...»[96]։

Թուրք-եվրոպական առևտրի մեջ գլխավոր բաժինը թուրքահայ վաճառականներինն էր։ Սրանք էին ներմուծում եվրոպական ապրանքներ, որոնք տարածվում էին Պարսկաստանից մինչև Աֆղանստան, առևտրական կետեր ըստեղծում Մարսելում, Հոլանդիայում, Վենետիկում, Անգլիայում, Հասնում Հնդկաստան, Ֆիլիպինյան կղզիներ, սահմանամերձ ու հեռավոր ռուսական քաղաքները, Ամերիկա, որտեղից և ներմուծում էին բամբակ։

Հայ միջնորդ վաճառականները վաղուց էին հիմնավորվել Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Տրապիզոնում, սակայն դարասկզբին նրանց շարքերը համալրվում էին Ակնից եկած սեղանավորներով, Կեսարիայի բազազներով, կարնեցի վաճառականներով, եվդոկիացի ու սեբաստացի դրամատերերով։

Միջնորդ վաճառականների մի ստվար խումբ մշտական բնակություն էր հաստատել Լիվոռնոյում, Մարսելում, Մանչեստրում, Հոլանդիայում, Վենետիկում, Ամստերդամում։

Մինչև 1830-ական թթ. Թուրքիայի վաճառաշահ ներքին, մասամբ էլ արտաքին առևտուրը հիմնականում ցամաքային էր և երկաթուղիների բացակայության պատճառով քարավանային առևտրի բնույթ ուներ։ Մեծահարուստ կոմպրադորները Արևմտյան Հայաստանից ու հայաբնակ նահանգներից արտահանվող ապրանքները քարավաններով տեղափոխում էին Պարսկաստանի վրայով, կապվում Բաղդադի ու Բասրայի հետ։ Նրանք Սև ծովով ապրանքներ էին տեղափոխում Տրապիզոն, Ղրիմ, Կ. Պոլիս ու Զմյուռնիա, ապա Արևմտյան Եվրոպա։

Այդ կապակցությամբ Ֆ. Էնգելսը գրել է. «Կ. Պոլիսը և մանավանդ, ասիական Թուրքիայում գտնվող Տրապիզոնը հանդիսանում են ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Պարսկաստանի և Թուրքեստանի քարա-

---

[96] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, стр. 25.

վանային առևտրի գլխավոր կենտրոնները։ Եվ այդ առևտուրը նույնպես ապագորեն աճում է ...իր դիրքի շնորհիվ Տրապիզոնն ավելի է համակերպված այդ առևտրին, քան որևէ այլ կետ։ Նրա հետևախորքի վրա գտնվում է Հայկական բարձրավանդակը, որն ավելի հեշտ անցանելի է, քան սիրիական տափաստանը և բավականաչափ մոտ է գտնվում Բաղդադին, Շիրազին ու Թեհրանին։ Վերջինս առևտրական միջանկյալ կետի դեր է կատարում Խիվայից ու Բուխարայից եկած քարավանների համար։ Մանչեստրի բորսայում կարելի է ակնհայտորեն տեսնել, թե ինչ մեծ նշանակություն է ստանում այդ առևտուրը և Սև ծովի առևտուրն առհասարակ...»[97]։

Թուրքիայի հայ գաղթօջախներում հասունանում էր Եվրոպայի հետ կապված կոմպրադորական-առևտրական դասը, որն իր գործարքներից խնայած գումարները պահում էր արտասահմանյան բանկերում։

Նոր կազմավորվող այս դասը, չնայած իր վիճակի անկայունությանը, չէր մտածում գոյություն ունեցող կարգերը փոխելու, Արևմտյան Հայաստանն ազատագրելու մասին և, խուսափելով դիմադրական պայքարից, անցնում էր արտասահման։

Արևմտյան Հայաստանի առևտուրը կատարվում էր քաղաքներում, գերազանցապես փաշայանիստ մեծ շահաստաններում։ Առևտուրը ծաղկել էր այնտեղ, որտեղ դրա համար քիչ թե շատ հնարավորություններ կային, իսկ Հարավային Հայաստանում կորցրել էր իր նախկին նշանակությունը։ Երբեմնի վաճառաշահ Բիթլիսում, Մուշում, Բայազետում, Վանում, Դիարբեքիրում այլևս չկար նախկին եռուզեռը, որն ստեղծում էին գլխավորապես հայ վաճառականները։ Բացի Դիարբեքիրից, մյուս կենտրոնները վերածվում էին գավառական հեռամնաց քաղաքների, բավարարվում միայն տեղական արտադրանքի վաճառքով կամ անցորդ քարավաններին հանգրվան տալով։

Բաղեշի վիճակը քիչ այլ էր։ Այն միակ կենտրոնն էր, որի վրայով Վանի հյուսիսային շրջանները կապվում էին Դիարբեքիրի և Միջագետքի հետ։ Քաղաքի փոքրաքանակ հայ վաճառականներն ընկերանում էին Հալեպից Թավրիզ գնացող քարավաններին և արտահանում գյուղատնտեսական արտադրանք։ Շուրջ 300 խանութներ վաճառում էին անցորդ վաճառականներից գնած ապրանքներ, սակայն հայերը, չկարողանալով վճարել Շերեֆների տոհմի սահմանած ծանր հարկերը, անընդհատ կողոպտվելով, հարստության հետ վտանգի տակ դնելով կյանքը, ստիպված էին լքել հայրենի բնօրրանը և տեղափոխվել Թուրքիայով մեկ։

Գրեթե նույն վիճակում էր հայկական 1487 գերդաստան ունեցող Բայազետը։ Քաղաքում կար 331 խանութ, իսկ Դիադինում՝ 22, երկու քարվանսարա[98]։ Առևտուրը խղճուկ վիճակում էր, արհեստավորը տալիս էր 650 դուրուշ հարկ, խանութատերը՝ մինչև 1100 դուրուշ։ Քուրդ խանի և ցեղապետերի վերցրած ապրանքների դիմաց առևտրականը ոչինչ չէր ստանում։

Մուշը, Սղերդը, Բալուն, Դերսիմը, Ջարսանջակը ունեին միայն մանրավաճառներ։ Վանն ուներ երեք փայտաշեն «բեզեստաններ», շուրջ 500 խանութ։

---

97 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том 9, стр. 12.

98 Վրացական ՍՍՀ ԿՊՎԱ, ֆ. 21, գ. 2462, թ. 3, գ. 2646, թ. 9, 1829 թ.։

Հայտնի առևտրական էր Ավետիս Փիրղալեմյանը, որն իր շուրջը համախմբած մի խումբ հայ վաճառականների հետ գնում էր Թավրիզ, Թիֆլիս, Կ. Պոլիս, Ռուսաստան, արտահանում Վանի «շատխու շալը», ոսկյա ապարանջաններ, գյուղատնտեսական արտադրանք, ներմուծում՝ գործվածքեղեն, մետաղ, սառը ղենք ու հրազեն։ Վանի Թամուր փաշան բանտարկեց վաճառական Ավետիսին, օսմանյան հազար ոսկու տուգանք առավ և սնանկացրեց նրան[99]։ Հարուստ վաճառականներ էին Ախիջան Ղարասեֆերյանը, Մահտեսի Գալուստ Շաշկատրյանը, Մարտիրոս աղան։ Սակայն վաշկատուն ցեղապետերը սրանց ամբողջ ունեցվածքը խլեցին ու իրենց էլ հալածեցին։



Կարին քաղաքի ընդհանուր տեսքը

Դրությունը որոշ չափով այլ էր այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Կարինը, Սեբաստիան, Եվդոկիան, Տրապիզոնը, Մարաշը, Ադանան։ Սրանք դառնում էին ներքին ու արտաքին առևտրի նշանակալից շուկաներ, ներմուծում, վաճառում ամենատարբեր ապրանքներ։ Եվրոպայից, Պարսկաստանից Ռուսաստանից ներմուծում էին արդյունաբերական ապրանքներ, մասնակցում համաշխարհային շուկաներում կատարվող առևտրին։ Տրապիզոնի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի հայ վաճառականները առևտրական լայն կապեր ունեին Մոսկվայի, Նիժնի-Նովգորոդի, Աստրախանի, Մանչեստրի, Լիվոռնոյի, Վենետիկի, նույնիսկ հեռավոր Հնդկաստանի շուկաների հետ։ Նրանք արտահանում էին Հալեպի փարչա՝ ոսկեձաղ մետաքսյա կտորեղեն, Դամասկոսի մետաքսյա և բամբակյա գործվածքներ, Մարաշի, Կարինի բրդյա աբաներ, Սեբաստիայի,

99 Մատենադարան, ձեռագիր 6237, թերթ 347 ա, 348 բ։

Կեսարիայի գեղեցիկ ձևավորված մեծածավալ ու փոքրիկ գորգեր, թաշկինակներ, լուսամուտի վարագույրներ, Բաղեշի ոսկեթել մետաքսյա դիպակներ։ Ռուսաստան արտահանած արդյունաբերական ապրանքների մեջ հայտնի էին Արդվինի և Երզնկայի ղումաշը, Վանի, Կարինի, Մարաշի ալաջան, Տրապիզոնի մահուդը, Կարինի ֆեսերը, Դամասկոսի մետաքսյա և բամբակյա գործվածքներ և այլն[100]։

Արտահանվում էին նաև տորոն, ծխախոտ, բամբակ, խեժ, բուրդ, մորթիներ, մեղրամոմ, չորացրած մրգեր, ընկուզենու կոճղեր, հացահատիկ, մանր ու խոշոր եղջերավոր անասուններ։ Ներմուծում էին երկաթեղեն, շաքար, օճառ, չիթ, մահուդ, ապակի, թել, արհեստագործական ու գյուղատնտեսական գործիքներ, ոգելից խմիչքներ, մշակված ծխախոտ։ Ներմուծած ապրանքները, տեղական արտադրանքի մի մասի հետ, վաճառում էին հայկական ու հայաբնակ քաղաքներում, նույնիսկ հեռավոր գյուղերի խանութներում։



Արհեստավորների հավաք Կարին քաղաքում

Կարինը վաղուց ի վեր հռչակված էր իբրև առևտրի խոշորագույն կենտրոն, տարանցիկ առևտրական ուղիներ հանգուցող, եվրոպական ու ասիական ապրանքներ մթերող, անցորդ առևտրականներին հանգրվանելու հնարավորություն ընձեռող քաղաք, որը գրաստկզբին գրեթե ողջ Արևմտյան Հայաստանի տնտեսական կենտրոնի և խոշոր շուկայի դեր էր ստանձնել։ Ի տարբերություն մյուս քաղաքների, Կարինի առևտուրը սեզոնային չէր։ Ամբողջ տարին 2 խոշոր, 10-ից ավելի մանր շուկաները, շուրջ 50 խանները, 1500 խանութները լիքն

---

100 Վրացական ՍՍՀ ԿՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 1986, թ. 4—11։

էին ապրանքներով։ Ամեն ամիս ուղտերով անցնող, Եվդոկիայից եկող ու Թավրիզ գնացող քարավաններ կային այնտեղ[101]։

Կարինի հայ վաճառականները Պարսկաստանից բերում էին շալեր, «գալփախցու մորթիներ», ալաճա կտորեղեն, բամբակ, մուշտակներ։ Թուրքիայի այլ վայրերից Կարին էին ներմուծում սպիրտ, երկաթ, պղինձ, կտավեղեն, բամբակ, ատլաս, չուխա, սուրճ, շաքար և այլն։

Կարինի էսնաֆությունների համախմբված արհեստավորների մեծ մասը արտադրանքն իրենք էին վաճառում, իսկ բազազները կամ սրանցից էին գնում, կամ խոշոր վաճառականներից, կամ էլ քաղաքով անցնող քարավաններից, երբեմն էլ ներմուծում էին երկրի մյուս շրջաններից։

Եվդոկիան «Փոքր Ասիայի վաճառականության կենտրոնն էր.. Այնտեղ հաճախ երթևեկում էին ամեն կողմերի քարավանները»[102]։ Քաղաքում եղած չորս շուկաների 551 խանութներում վաճառվում էր տեղական արհեստավորների արտադրանքը, ինչպես նաև Կեսարիայից բերած տորոնը, դեղին ներկը, Զմյուռնիայի չուխան, համեմը, շաքարը, թուղթը, Այտընի բամբակը, Կարինի պղինձը, երկաթը, Դիարբեքիրի կտավը, Մոսուլի կտավե գործվածքները, գունավոր թաշկինակներ։ Եվդոկիան ամեն տարի արտահանում էր 500 հազար թուրքական ոսկու արժողությամբ ապրանքներ, շուրջ այդքանի էլ ներմուծում։

Սեբաստիայի առևտուրը շատ աշխույժ էր XVIII դարի վերջերին. քաղաքը տարեկան արտահանում էր 475 հազար ոսկու արժողությամբ աստառացու, ներմուծելով եվրոպական ու ասիական ապրանքներ։ Սեբաստիայում կային մինչև 50 հազար ոսկի դրամագլուխ ունեցող հայ վաճառականներ։ Սակայն դարասկզբին Ջապան-օղլուների գործած վայրագությունների հետևանքով երկրում ստեղծված անիշխանական դրության պատճառով առևտուրը նվազել էր։ Քաղաքը տնտեսական զարգացման նոր թափ ստացավ 1830-ական թթ., երբ հայերի ձեռքում կենտրոնացվեց Սամսունի, Զիլեի, Մարզվանի, Արաբկիրի, Մալաթիայի առևտուրը։

Կեսարիայում ապրում էին խոշոր առևտրականներ, հարուստ դրամատերեր, ամիրաներ ու սեղանավորներ։ Կեսարացի առևտրականները հասնում էին մինչև Բոսֆոր, Լամանշ, հիմնվում Լոնդոնում ու Մանչեստրում, Լիվոռնոյում ու Փարիզում։ Սակայն կեսարացի հայ վաճառականները գերազանցապես կոմպրադորներ էին, երկրին քիչ առնչված։

Կեսարիայի հետ ընդհանրություն ուներ Ակնը։ Այս քաղաքը Թուրքիայի տնտեսական կյանքում մեկ դար շարունակ խոշոր դեր խաղաց, ամիրայական գերդաստաններ տվեց Կ. Պոլսին, Զմյուռնիային։ Դարասկզբին ամիրաներն իրենց ձեռքն էին վերցրել կայսրության տնտեսության հիմնական ճյուղերը։ Թուրք փաշաները նրանց էին հանձնարարում հարկերի գանձումը Փոքր Ասիայում։ Կեսարացի ամիրաները շահագործում էին Կապան-մատենի հանքերը, կազմակերպում պղնձի, ձեռագործ արհեստների արտադրանքի վաճառքը և դիզում հարստություն։

Ասպիսով, XIX դարի առաջին երեսնամյակին Արևմտյան Հայաստանի

---

101 Տե՛ս ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ, ց. 8, գ. 13, մ. 15, թ. 2—3։

102 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 291—292։

և Փոքր Ասիայի հայաբնակ քաղաքների առևտուրը որոշ աշխուժություն էր ապրում։ Սակայն վաճառականությունը կանգնած էր բազմաթիվ դժվարությունների առաջ։ Առևտուրը գտնվում էր անապահով վիճակում, չկար անձի ու գույքի պաշտպանության երաշխիք։ Երկրի համար ողբերգական էր կապիտուլի օտարումը, այսինքն տնտեսված, շահած գումարները եվրոպական բանկերին պահ տալը։ Վաճառականները վախենում էին ունեցվածքի հետ միասին կորցնել նաև կյանքը։ Այդ պատճառով դրամը փոխանակ շրջանառության մեջ դնելու, այն վերածում էին ոսկու կամ դնում օտար բանկերում կամ էլ պահում թաքստոցներում։

Այս տասնամյակներին դրամի կարիքի պատճառով բարձրանում էին մաքսային տարիֆները, մաքսատների աշխատողների բռնությունն ու կամայականությունը սահման չուներ, ծանրանում էին անընդհատ ավելացվող պետական հարկերն ու տուրքերը, հաճախակի էին դառնում բռնագանձումները, վաճառականի ողջ ունեցվածքի պետականացումը։ Բնական է, որ գավառահայ վաճառականությունը նման պայմաններում չէր կարող ավելի ընդլայնել իր գործարքները։ Ի տարբերություն կոմպրադորական բուրժուազիայի, կապված լինելով բնաշխարհին, նեղվելով Թուրքիայի վարած մաքսային քաղաքականությունից ու անիշխանությունից, նա ընդդիմադիր դիրք էր գրավում և ջանում ազատվել տիրող կարգերից։

7. ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները ենթարկվում էին ազգային ու քաղաքական բիրտ ճնշումների, կրոնա-բարոյական անարգանքի։ Ոտնահարվում էր նրանց մարդկային արժանապատվությունը։ Հայերը, հույները, պավղոնները զրկված էին ամենատարրական իրավունքներից։ Անկախ դասային և ունեցվածքային տարբերություններից, ոչ մահմեդական ժողովուրդները կոչվում էին ռայա, զիմմի, գյավուր (անհավատ)։

«Ղուրանը և դրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը ,— գրում է Կ. Մարքսը,— աշխարհագրությունը և տարբեր ժողովուրդների ազգագրությունը հանգեցնում է նրանց՝ երկու երկրների և երկու ազգությունների՝ ուղղահավատների և անհավատների բաժանելու հասարակ և հարմար բանաձևմանը։ Անհավատը դա գյավուրն է, թշնամի։ Իսլամն օրենքից դուրս է դնում անհավատներին և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»[103]։

Հայերի իրավազրկությունը առավել դաժան կերպարանք ստացավ XVIII դարի վերջին և XIX դարի առաջին քառորդին։ Քաղաքական ճնշումների խըստացումը պայմանավորված էր նաև նրանով, որ ռազմատենչ թուրքական հորդաները և արյունածարավ ենիչերիները այլևս անկարող էին նոր արշավանքներ կատարել, նոր ժողովուրդներ ստրկացնել, նախկինի պես անհամար ավար ու ռազմագերիներ ձեռք բերել։ Թուրքական երթևեկի ահարկու յաթաղանը Արևմուտքում դեմ էր առել Եվրոպային, Արևելքում՝ Ռուսաստանի ամրակուռ վահանին, փշրվել ու ետ էր շպրտվել։ Սուլթաններն այժմ ստիպված էին

---

103 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, том 10, стр. 167.

մտածել ձեռք բերած երկրները պահպանելու, հուսահատորեն պայքարի հրապարակ նետվող ժողովուրդների ազգային շարժումներն արյան մեջ խեղդելու և այդ միջոցով իրենց տիրապետությունը երկարաձգելու մասին։ Քրիստոնյա հպատակները լիովին անբարեհույս էին սուլթաններին աչքում։ Մահմեդական մոլեռանդ վերնախավը, նրա հոգևոր ու աշխարհիկ պետերը միջոցների մեջ խտրություն չդնելով, գերադասում էին համաձուլել այլահավատ հպատակներին։

Արևմտյան Հայաստանի ծայրագավառներում, թուրքահպատակ մի քանի շրջաններում XIX դարի սկզբներին հայերի նկատմամբ արդեն կիրառվում էր զանգվածային, բռնի կրոնափոխության քաղաքականություն։ Բազմահազար հայեր մահմեդականացվեցին Կարինի և Տրապիզոնի փաշայություններում։ Սև դետ կոչվող ձորերի, Համշեն գավառի, Սյուրմենի լեռնահովտի քրիստոնյաները բռնադատվեցին մահմեդականության։ Նրանց թիվը հասնում էր մոտ 10.000 մարդու, որոնք բնակվում էին շուրջ 100 գյուղերում[104]։ Մահմեդականության բռնադատվեցին Սոմուրայի շրջանի հայկական շատ գյուղերի բնակիչներ։

Հայերի համաձուլումը բավական լայն չափերի էր հասնում Վասպուրականում և Բիթլիսում։ Տակավին XVIII դարում Բաղեշի մոլլան հրաման արձակեց, թե երբ որևէ քրիստոնյա մահմեդականություն ընդունի, ապա նրա բոլոր ազգականները պարտավոր են իրենց արու զավակներին հանձնել վերջինիս խնամակալությանը։ Հրամանագիրը ցնցեց Բաղեշի ու Վանի հայերին, որոնք մեծ կաշառքներով միայն կարողացան վերացնել հայացինջ վերոհիշյալ որոշումը։ Սակայն մոլլան այնպիսի ազգային թշնամանք սերմանեց Բաղեշի հայերի, քրդերի ու թուրքերի միջև, որ կարճ ժամանակամիջոցում քաղաքի մեծաթիվ քրիստոնյա բնակիչներից միայն 1500-ը կարողացան մնալ տեղում։

Բռնությամբ թե կամովի մահմեդականություն ընդունած այլահավատը զրկված էր կրկին հայրենի համայնքը վերադառնալու իրավունքից։

Թուրքիայում, շարիաթի համաձայն, այլազգիները զրկված էին ձի հեծնելու, կարմիր գլխաշոր կրելու, շքեղ հագնվելու և տարրական այլ իրավունքներից։ Հրամանագրերից մեկում ասված էր. «Հրամայեցի ... Շերիի օրենքին համաձայն, նախատելով և նվաստացնելով, անհավատներու դասակարգին՝ ձի նստեցնել, սամույր մուշտակ, սամույր գլխանոց (գալփակ) գործածել շատս. անդուսե և մետաքսե ծաղկենկար կերպասե շինված զգեստներ՝ իրենց կիներուն ալ բարձր գդակներ և եզերքները ծոպավոր զարդարանքներով պատրաստված շուխա հագցնել շատս, որպեսզի իսլամներու հատուկ զգեստներու տարազով չպատին...»[105]։

XIX դարի սկզբներին վերակենդանացվում էին, լրացվում ու գործողության մեջ դրվում խալիֆ Օմարի հռչակած օրենքները։ 1808 թ. Յուսուֆ փաշան հրապարակեց հպատակ այլազգիներին ավելի նվաստացնող մի ֆերման[106],

104 Հ. Հակոբոս վ. Տաշյան, *Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 34։*

105 «*Բազմավեպ*», *1934, № 1, էջ 32—33։*

106 *Лорд Кокрин,* Новейшие сведения о Турецкой империи, ч. 1, перевод с английского, М., 1828. стр. 150—153.

ըստ որի 1. քրիստոնյաներին և հրեաներին արգելվում էր նոր եկեղեցիներ ու վանքեր կառուցել, 2. քրիստոնյաներն իրավունք ունեին իրենց բնակարանները վերակառուցել ծայրահեղ կարիքի դեպքում, հատուկ թույլտվությամբ, 3. նրանց երեխաները չպետք է ղորան սովորեին, 4. մոտեցող մահմեդականի առաջ բոլոր այլահավատները պետք է ոտքի կանգնեին, ճանապարհ տային նրան, գլուխ խոնարհեին, 5. քրիստոնյաները և հրեաները մահմեդականի տարազ չպետք է հագնեին, արաբերեն լեզու չպետք է սովորեին, քամրած ձի չպետք է հեծնեին, սուր չպիտի կրեին, 6. նրանք իրավունք չունեին գինի վաճառել, մազեր սանրել ու կոկել, կարմիր շորեր հագնել, լայն գոտիներ կապել, 7. այլահավատները տնից դուրս գալիս պետք է հանեին կրած խաչերը, եկեղեցու զանգերը հնչեցնեին հնարավորին չափ ցածր, հանգուցյալի վրա լաց լինեին կամ թաղման թափորին մասնակցեին լուռ կամ կիսաձայն, 8. մահմեդականներին իրավունք էր վերապահվում վարելահողերի վերածել քրիստոնեական այն գերեզմանատները, որոնք այլևս չէին գործում, 9. քրիստոնյաներն իրավունք չունեին ստրուկներ գնելու կամ տնային ծառաներ պահելու, 10. եթե մահմեդականը սպաներ քրիստոնյային, տուգանք վճարելով ազատվում էր, իսկ եթե քրիստոնյան նման հանցանք գործեր, անպայման կզվխատվեր։ Ճիշտ է նկատում անգլիացի պատմաբանը, որ «մահմեդական օրենսդրության ոգին միշտ էլ նույնն է եղել, այն է՝ արհամարհանք ու թշնամանք դեպի անհավատները»[107]։

Այդ բնույթի բազմաթիվ այլ հրամանագրեր անխաթար գործադրվեցին թուրքահպատակ բոլոր դավառներում։ Պետք է արձանագրել, սակայն, առանձին սուլթանների կամ փաշաների արած «բարերարությունները» հայ վերնախավին, ամիրաներին ու սարաֆներին։ Վերջիններս, եթե Բ. Դռան պաշտոնեության կողմից ճանաչված էին, գործով ապացուցել էին իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը Թուրքիային, միայն սուլթանի ստորագրությամբ տրվող ֆերմաններով կարող էին ձի նստելու թույլտվություն ստանալ։ Անկախ հարստության ու դիրքի, ձի նստող հայը բոլոր դեպքերում պետք է տարբերվեր մահմեդականից։ «Խուդավերդի օղլու Մանուկ Օսմանյան պետության ավագանիին պաշտոնատուներուն մեջ իր ծառայությամբ հայտնի սարաֆներու դասակարգեն հիշյալը՝ հիվանդ, կաղ և ծեր ըլլալով՝ սույն թեզքերեն տրվեցավ, որպեսզի իսլամներու ձի նստելու կերպին չեմաճվելու պայմանավ ինք երբ որ ձի նստի և ոչ մեկու մը կողմեն իրեն դեմ արգելք չհարուցվի»[108]։

Սոսկալի էին մահմեդական պաշտոնյաների կողմից քրիստոնյաներին տրված պատիժները։ Օրենքով սահմանված էր և արդեն սովորություն էր դարձել, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք պարտավոր էր տարվա մեջ երեք օր հյուրընկալել մահմեդական ճանապարհորդներին, պետական պաշտոնյաներին, ըստ որում քրիստոնյա հյուրընկալողը պարտավոր էր «իրեն պատիվ արած», իր օջախը ոտք դրած մահմեդականի բոլոր քմահաճույքները կատարել։

Թուրք վերնախավի ներկայացուցիչները քմահաճորեն դաժան պատիժներ էին կիրառում քրիստոնյաների, հատկապես հայերի նկատմամբ։ Բանտե-

---

107 Նույն տեղում, էջ 153։

108 «Բազմավեպ», 1934, № 1, էջ 32։

րում տարածված էր «չխոստովանող» քրիստոնյային խաչ հանելու սովորությունը։ «Հային ձեռքերն ու ոտքերը իրարից հեռացնելով, մարմնին խաչի ձև տալով բարձրացնում էին վերև, ձեռքերից ու ոտքերից մեխում պատին և այդպես տանջամահ անում»։ Հարկատվությունից խուսափող հայերին խարանում էին շիկացած երկաթով, կտրում ականջները, փորում աչքերը, իսկ հանցանքը մեծ շինելու դեպքում, մանավանդ մահմեդական կրոնը անարգելու պարագայում ներքինիացնում էին, հաճախ էլ շիկացած երկաթով պայտում էին «հանցագործ անհավատին», կտրում լեզուն։

Քրիստոնյա հպատակների համար Թուրքիայում դատարան գոյություն չուներ։ Հայերը զրկված էին դատարանում վկայություն տալու իրավունքից։ Լավագույն դեպքում քրիստոնյա երկու ականատեսների ներկայությունը հավասարեցվում էր մեկ ականջալուր մահմեդականի վկայության։ Շարիաթի այս կետը հայերի համար ունենում էր աղետաբեր հետևանքներ։ Մահմեդականը կարող էր առևանգել, թալանել, սպանել քրիստոնյային և մնալ անպատիժ։ Հանցագործի հավատակիցները դատարանում վկայություն չէին տալիս։ «Ավելորդ է ըսել, թե այս պատճառով որչափ առևանգություն, հափշտակություն, գողություն, նամանավանդ սպանություն անպատիժ մնացած են կամ անհայտ, նույնիսկ կառավարության ջանիցն հակառակ»[109]։

Քրդահպատակ հայկական գավառներում ամենօրյա սպանությունները սովորական երևույթ էին։ Դատարանը կամ զափթիեները հազվադեպ էին ըզբաղվում սպանվողի ու սպանողի ինքնությամբ։ Բողոքող քրիստոնյան արժանանում էր մահմեդականի վրեժխնդրությանը։ Խիստ տարածված էր կաշառակերությունը։ Այդ էր պատճառը, որ երբ քրիստոնյաներն իրար դեմ դատ էին սկսում, եկամտի առատ աղբյուր էր ստեղծվում դատական պաշտոնյաների համար։ Հաճախ վերջվում էին «օրինական» կաշառքներ. մարմնական ծանր վնասվածք հասցնողը տալիս էր 3000 փարա, աչք հանողը՝ 1500, գլուխ ջարդողը՝ 30 փարա և ազատվում պատժից։

Օսմանյան կայսրության մեջ գոյություն ունեցող քաղաքական, ազգային ճնշումների, կրոնական խտրականության այս ամբողջ սիստեմը նմանը չուներ ոչ մի երկրում։ Բնական է, որ նման պայմաններում գնալով ավելի պիտի ուժեղանար հայ ժողովրդի ազատագրական պայքարն իր հարստահարիչների՝ սուլթանական միահեծանության, դերեբեյական սիստեմի, քրդական վերնախավի դեմ և ժողովրդական զանգվածներին մղեր դեպի ազատություն, որքան էլ այն թանկ նստեր նրան։

---

109 Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 616։

ԲԱԺԻՆ Բ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՀՑՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՑԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

1. ՄԵՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

XIX դարի շեմին նպաստավոր իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համար։ Ուստի ցարիզմը չհապաղեց ձեռնամուխ լինել նրա իրագործմանը։

Հայ ժողովրդի նախորդ դարաշրջանի ողջ պատմական կյանքի ընթացքը նրան հանգեցրեց այն հաստատ համոզման, որ ստեղծված կոնկրետ պատմական իրադրության պայմաններում թուրքական և պարսկական կործանարար լուծը նա կարող է թոթափել ու իր ազգային գոյությունը հարատևել միայն Ռուսաստանի օգնությամբ, ռուսական զենքի միջոցով։ Սրանով է պայմանավորված XIX դարի սկզբներին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերի՝ ռուսական բանակներին ցույց տված ռազմական, նյութական ու բարոյական գործուն օգնությունը։

Ռուսական զենքի օգնությամբ թուրքական ու պարսկական տիրապետությունից ազատագրվելու հայերի ակնկալությունները առավել ուժեղացան XIX դարի սկզբներին, երբ ռուսական զորքերը մտան Վրաստան։ Ալեքսանդր I-ի 1801 թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին[1], որը կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն վրաց, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների համար։

Հայերը բուռն խանդավառությամբ ընդունեցին Վրաստանի միացումը Ռուսաստանին։ Դրա շնորհիվ Ռուսաստանի հպատակության տակ անցավ Վրաստանում բնակվող հայությունը, որը բավական մեծ թիվ էր կազմում։ Ռուսաստանին միացվեց նաև Լոռին, Փամբակը, Շամշադինը և Հայաստանի հյուսիսային մի քանի այլ շրջաններ։ Եվ, վերջապես, այս պատմական ակտով հայ ժողովրդի համար ստեղծվեցին Ռուսաստանի օգնությամբ պարսկական և

---

1 *1803 թ. Ռուսաստանին միացվեց նաև Մեգրելիան, 1804 թ.՝ Իմերեթը և Գուրիան, 1810 թ.՝ Աբխազիան։*

թուրքական տիրապետությունից ազատագրվելու առավել իրական պայմաններ։ 1804 թ. հունվարին Գյանջայի խանության գրավոմով այստեղ բնակվող հայերը նույնպես անցան ռուսական հպատակության ներքո։

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ցարիզմի շահագրգռվածությունն ամենևին էլ չի բխել անդրկովկասյան ժողովուրդների նկատմամբ Ալեքսանդր I-ի և Նիկոլայ I-ի «մարդասիրությունից» ու «ողորմածությունից», ինչպես փորձել են ներկայացնել ցարական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները (Ն. Սուխոտին, Վ. Պոտտո, Ն. Դուբրովին, Վ. Բուտկով, Ա. Շչերբատով և ուրիշներ)։ Ցարիզմին չի մտահոգել բռնապետական Թուրքիայի ու Պարսկաստանի կողմից խոշտանգված անդրկովկասյան ժողովուրդների ճակատագիրը, նրանց մղած ազատագրական պայքարի ելքը։ Հանդես գալով անդրկովկասյան ժողովուրդների «ազատարարի» ու «փրկարարի» դիմակի տակ, ցարիզմի բուն նպատակն է եղել ընդարձակել կայսրության սահմանները և Անդրկովկասը ծառայեցնել իր գաղութատիրական շահերին։

Անդրկովկասի գրավոմը շահավետ հեռանկարներ էր բացում ասիական, մասնավորապես պարսկական շուկաներում ռուսական առևտրի համար։ Մեծ տերությունների հակամարտությունների կիզակետ Մերձավոր Արևելքում Անդրկովկասը Ռուսաստանի համար ուներ նաև ռազմա-քաղաքական կարևոր նշանակություն։ Սև ու Կասպից ծովերը, Կուր, Արաքս և Ախուրյան գետերը բնական սահմանագիծ էին՝ Ռուսաստանի հարավային սահմանները Պարսկաստանից, Թուրքիայից և նրանց «հովանավորներ» Անգլիայից ու Ֆրանսիայից անխոցելի դարձնելու համար։ Միաժամանակ Անդրկովկասն այն հարմարավետ հիմնակետն էր, որ նպաստելու էր ռուսական ազդեցության տարածմանը Մերձավոր Արևելքում։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին օբյեկտիվորեն համապատասխանում էր թուրք փաշաների և պարսիկ խանների ստրկությունից ազատագրվելու հայ ժողովրդի վաղեմի ձգտումներին։

Վրաստանի և Գյանջայի խանության միացումը Ռուսաստանին էլ ավելի սրեց ռուս-պարսկա-թուրքական և ռուս-անգլո-ֆրանսիական հակասությունները։ Շահական Պարսկաստանը թեպետ արդեն դառնում էր Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային կեղեքումների ու հարստահարումների առարկա, բայց իր հերթին նա էլ նվաճողական ձգտումներ ուներ Կովկասի նկատմամբ։ Ուստի Պարսկաստանը ոչ միայն չէր հանդուրժում Վրաստանի և Գյանջայի խանությունների միացումը Ռուսաստանին, այլև ծրագրում էր զավթողական գործողություններ ընդարձակ պլան։ Ֆաթհ-Ալի շահը ձգտում էր ռուսներին դուրս մղել Վրաստանից ու Գյանջայից և հնազանդեցնել Անդրկովկասի բոլոր այն խաներին, որոնք դադարել էին ենթարկվել Պարսկաստանի կենտրոնական կառավարությանը։ Այդ նպատակով 1804 թ. գարնանը ավելի քան 40 հազարանոց պարսկական բանակը, գահաժառանգ Աբաս-Միրզայի գլխավորությամբ, կազմ ու պատրաստ սպասում էր շահի հրամանին՝ Անդրկովկաս ներխուժելու համար։ Իսկ Ֆաթհ-Ալի շահը Թիֆլիս ժամանած իր ներկայացուցչի միջոցով Վրաստանի կառավարչապետ ու ռուսական զորքի հրամանատար գեներալ

Ցիցիանովից[2] պահանջում էր անհապաղ հեռանալ Վրաստանից, հակառակ դեպքում սպառնալով ռազմական գործողություններ սկսել Ռուսաստանի դեմ։

Պատերազմական նախապատրաստություններ էր տեսնում նաև Երևանի Մամադ խանը։ Նա արագորեն ամրացնում էր Երևանի բերդը, կուտակում զենք ու զինամթերք։ Քաջ գիտենալով ռուսների նկատմամբ հայերի ջերմ վերաբերմունքի մասին, Մամադ խանը Արարատյան դաշտից տեղահանում էր նրանց, արտաքսում Պարսկաստան ու Կարսի փաշայության սահմանները, իսկ շատ պղտեցիկ հայերի փակում Երևանի բերդում՝ իբրև պատանդներ։ Պարսիկ խանը դրանով փորձում էր խափանել հայերից օգնություն ստանալու ռուսների ակնկալությունները։ Այդ ամենի հետ միասին, ժամանակ շահելու և Երևանի բերդն էլ ավելի ամրացնելու նպատակամղումով, խանը փորձում էր խաբել Ցիցիանովին՝ հավաստիացնելով, թե ինքը «ռուսների բարեկամն է»։ Պարսկաստանի և Ռուսաստանի միջև Մամադ խանի վարած խոսանավման քաղաքականությունը որոշ ժամանակ մոլորեցրեց Ցիցիանովին և Աբաս-Միրզային հնարավորություն տվեց ժամանակ շահել ու իր ուժերը կենտրոնացնել Երևանի շրջակայքում։ Սուլթանական Թուրքիան նույնպես ակտիվացնում էր իր նվաճողական քաղաքականությունը, նպատակ ունենալով զավթել Անդրկովկասը, Դաղստանը, գրավել ողջ Կովկասը։

Անդրկովկասի համար մղվող պայքարը սրվում էր ոչ միայն Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի, այլև Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև[3]։ Անգլիան և Ֆրանսիան եռանդուն կերպով պաշտպանում էին Պարսկաստանի ու Թուրքիայի բոլոր ձեռնարկումները՝ ուղղված ռուսական առաջխաղացման, ինչպես և անդրկովկասյան ժողովուրդների ազատագրության դեմ։ Մերձավոր Արևելքում իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու համար նրանք առանձին-առանձին օգնում էին Պարսկաստանին ու Թուրքիային, ամեն կերպ աշխատում թուլացնել Ռուսաստանի ռազմական հզորությունը և նրան հեռու պահել Անդրկովկասից։

Պարսկաստանի հետ պայմանագիր կնքելու նպատակով 1800 թ. նոյեմբերին Թեհրան էր ժամանել Մալկոլմի դեսպանությունը։ Իր առաքելության հաջողության համար առատորեն բաժանելով անգլիական ոսկին, Մալկոլմը «գնում է ամեն ինչ, սկսած շանից մինչև ուղտապաներ»[4]։ 1801 թվականի հունվարին նրան հաջողվեց Պարսկաստանի հետ քաղաքական և առևտրական պայմանագրեր կնքել, որոնց հետևանքով Անգլիան Պարսկաստանում ձեռք բերեց ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, թեև կարճատև, բայց մեծ աղդեցություն։

1801 թ. անգլո-պարսկական դաշնակցային պայմանագրով Անգլիան խոստանում էր ֆինանսական ու ռազմական օգնություն ցույց տալ Պարսկաս-

---

2 Ցիցիանովը կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար ու Վրաստանի կառավարչապետ նշանակվեց 1802 թ. սեպտեմբերի 11-ին և ժամանեց Թիֆլիս 1803 թ. փետրվարի 1-ին։

3 Տե՛ս А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958; З. Т. Григорян, Борьба Англии и Франции против освобождения Армении из-под ирано-турецкого ига («Вопросы истории», 1952, № 3).

4 К. Маркс, Хронологические выписки по истории Индии, М., 1947, стр. 105.

տանին՝ նրա իշխանությունը Անդրկովկասում վերականգնելու և ամրապնդելու նպատակով, իսկ Պարսկաստանը պիտի նպաստեր Անգլիայի արևելյան քաղաքականությանը։ Պայմանագիրն ուղղված էր ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ։ Քանի որ այն գալիս էր ուժեղացնելու Պարսկաստանի տիրապետությունն Անդրկովկասում, ուստի՝ ուղղված էր նաև անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումների դեմ։

Նապոլեոն Բոնապարտն իր հերթին Ֆրանսիայի քաղաքական ու տնտեսական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով դիմեց ակտիվ գործողությունների՝ Թուրքիայում, Պարսկաստանում և ամբողջ Մերձավոր Արևելքում։ Այդ դիտավորությամբ Կոստանդնուպոլիս ժամանեց ճարպիկ ու խորամանկ դիվանագետ գնդապետ Սեբաստիանիի գլխավորած պատվիրակությունը։ 1802 թ. հունիսի 26-ին Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև Փարիզում կնքվեց հաշտության պայմանագիր։ Այնուհետև Նապոլեոնն իր ուշադրությունն ուղղեց դեպի Պարսկաստան։ Մեկը մյուսի հետևից Պարսկաստան ուղարկվեցին ֆրանսիական գործակալներ՝ անգրո-պարսկական 1801 թ. դաշնակցային պայմանագիրը չեղյալ դարձնելու, Ֆրանսիայի ազդեցությունը տարածելու և Պարսկաստանն ինչպես Անգլիայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ օգտագործելու նպատակով։ Իր գործակալների միջոցով Նապոլեոնը շահին հավատացնում էր, թե ֆրանսիական ու պարսկական բանակների համատեղ ջանքերով ռուսները դուրս կմղվեն Վրաստանից և գրավված երկրամասերը կբաժանվեն պայմանավորվող կողմերի միջև։ Ֆրանսիայի կառավարող շրջանների թելադրանքով էր, որ 1803 թ. Կոստանդնուպոլիս ժամանած պարսկական գործակալները ձգտում էին սուլթանական կառավարությանը համոզել՝ համատեղ ուժերով ելնելու Ռուսաստանի դեմ։

Անգլիայի և Ֆրանսիայի հակառուսական քաղաքականությունը նպաստեց XIX դարի սկզբին Պարսկաստանի զավթողական տրամադրությունների սանձազերծմանը և նրան մղեց Կովկասի վերանվաճման իր ծրագիրն իրականացնելու ակտիվ գործողությունների։ Անդրկովկասի նկատմամբ պարսկական կառավարող շրջանների վարած զավթողական քաղաքականությունը համապատասխանում էր Անգլիայի և Ֆրանսիայի հակառուսական տրամադրություններին։ Ուստի վերջիններս ընդառաջում էին բռնապետական Պարսկաստանի նվաճողական ձգտումներին՝ նպատակ ունենալով նրան օգտագործել Մերձավոր Արևելքում իրենց քաղաքական ու տնտեսական ազդեցությունը տարածելու և ամրապնդելու համար։

Ներհակ ու իրարամերժ շահերի այս խաչաձևումը հղի էր մեծ բախումներով և արյունալի պատերազմներով։ Գյանջայի խանությունը Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո ռուսական հրամանատարությունն սկսում է եռանդուն նախապատրաստություններ տեսնել իր ձեռքը վերցնելու նախաձեռնությունը, գրավելու ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Երևանի ու Նախիջևանի խանությունները և Շիրակը։ Սակայն դեպի Արևելյան Հայաստան արշավանք սկսելու համար պատրվակ էր պետք։ Այդպիսի մի պատրվակ եղավ էջմիածնի կաթողիկոսական գահի թեկնածուների միջև այդ ժամանակ սկսված աթոռակռիվը։

Կաթողիկոս Հովսեփ Արղությանի 1801 թ. մարտի 9-ին Թիֆլիսում հանկարծամահ լինելուց հետո էջմիածնի միաբանությունը, Երևանի սարդարի գործուն միջամտությամբ, ապրիլի 28-ին շտապեց կաթողիկոս ընտրել արքեպիսկոպոս Դավթին։ Իսկ 1802 թ. մայիսի 25-ին նրա հակառակորդները Բագրեվանդի գավառի Ուշքիլիսա վանքում կաթողիկոս օծեցին Դանիել արքեպիսկոպոսին, որը տակավին Հովսեփ Արղությանի հետ ընտրված կաթողիկոսական առաջին թեկնածուն էր։ Դրանով իսկ ծայր առավ էջմիածնի կաթողիկոսական աթոռի համար «Դավիթ-Դանիելյան» կռիվը։

Ռուսական, պարսկական և թուրքական կառավարությունները չհապաղեցին իրենց շահերին ծառայեցնելու «Դավիթ-Դանիելյան» կռիվը։ Միջամտելով էջմիածնի կաթողիկոսության ներքին գործերին, նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր այն օգտագործել Հայաստանում իր ազդեցությունն ամրապնդելու համար։ Դանիելը և նրա համախոհները Հայաստանը Ռուսաստանին միացնելու ջերմ կողմնակիցներ էին։ Իսկ Դավիթն ու իր համախոհները արտահայտում էին անձնական շահերով Պարսկաստանի հետ կապված սակավաթիվ այն հայ հոգևորականության և ֆեոդալների կամքը, որոնք տվյալ հարցում պասիվ դիրք էին գրավում, իսկ երբեմն էլ հակառակ հայ ժողովրդի ազգային շահերի, բախում էին պարսկական շահի ու Երևանի խանի դռները, ստորաքարշություն անում նրանց առաջ։

Երբ ռուսական կառավարությանը հայտնի դարձավ Դավթի այս վարքագիծը, նա անվերապահորեն կողմնորոշվեց դեպի Դանիելը։ Գեներալ Ցիցիանովը Երևանի Մամադ խանից պահանջեց էջմիածնի կաթողիկոս ճանաչել Դանիելին[5], իսկ Դավթին ուղարկել Թիֆլիս։ Խանը մերժեց Ցիցիանովի պահանջը, որը և Կովկասում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանը առիթ ծառայեց 1804 թ. գարնանը արշավանք սկսելու Երևանի վրա։

2. 1804—1813 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Շորագյալը, Երևանի ու Նախիջևանի խանությունները գրավելու և հարավում Արաքս գետը ռուս-պարսկական սահմանագիծ հաստատելու ցարական կառավարության մտադրություններն իրականացնելու համար 1804 թ. մայիսի 29-ին ռուսական առաջապահ զորամասերը գեներալ-մայոր Լեոնտևի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Արևելյան Հայաստան։ Անցնելով Լոռի-Փամբակով, հունիսի սկզբներին նրանք հասան Դյումրի (Լենինական) և ճամբար դրեցին պարսկական զորքից 18 կիլոմետր հեռավորության վրա։ Հունիսի 9-ին սրանց միացավ գեներալ-մայոր Տուչկովը՝ Կովկասյան գրենադերական գնդի երկու գումարտակներով և հինգ թնդանոթով։

---

5 «Դավիթ-Դանիելյան վեճը» մերթ ավարտվում էր Դավթի, մերթ էլ՝ Դանիելի հաղթանակով։ Մինչև 1807 թ. ապրիլը շահի և Երևանի խանի կամքով էջմիածնում կաթողիկոս էր Դավիթը, իսկ Դանիելը որպես գերի պահվում էր Մարաղայում։ 1807 թ. ապրիլին ռուսական կառավարության միջամտության շնորհիվ էջմիածնի կաթողիկոսական գահը ստանձնեց Դանիելը։ 1808 թ. հոկտեմբերի 9-ին վախճանվեց Դանիելը և 1809 թ. կաթողիկոս ընտրվեց Ռուսաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Եփրեմը։

Ռուսական կորպուսի առաջապահ ուժերի և պարսկական զորքերի միջև առաջին լուրջ ճակատամարտը տեղի ունեցավ հունիսի 10-ին Արփաչայի (Ախուրյան) ափին, Փոքր Ղարաքիլիսա (Ազատան) գյուղի մոտ։ Թեպետ պարսիկներն ունեին 8000 սարբազ ու թվով զգալիորեն գերակշռում էին հակառակորդին, բայց շնորհիվ ռուսական հրետանու եռանդուն գործողությունների, ուս զինվորների և նրանց օգնող հայ աշխարհազորայինների անձնազոհության ու խիզախության, ճակատամարտն ավարտվեց ռուսական զորագնդի փայլուն հաղթանակով։ Ռուսական կորպուսի առաջապահ ուժերի տարած այս հաղթանակի շնորհիվ պարսկական գերությունից ազատվեցին 400 հայ ընտանիք։ Բացի այդ Երևանի խանի կողմից Կարսի փաշայությունն արտաքսվող 7000 հայ ընտանիքի համար էլ ճանապարհ բացվեց անցնելու Փամբակ-Լոռի, ապաստան գտնելու ռուսական հպատակության տակ։

Ռուսական և պարսկական բանակների միջև տեղի ունեցած այս զինաբախումով էլ սկսվեց **ռուս-պարսկական առաջին պատերազմը**։

Հունիսի 12-ին Գյումրի են հասնում ռուսական կորպուսի գլխավոր ուժերը՝ գեներալ Ցիցիանովի հրամանատարությամբ և եռանդուն նախապատրաստություններ տեսնում արշավելու Երևանի վրա։ Հունիսի 15-ին 4370 զինվորից, 20 դաշտային թնդանոթից և հայ-վրացական աշխարհակոչային ջոկատից կազմված ռուսական կորպուսը, դուրս գալով Գյումրիից, Ապարանի վրայով շարժվում է դեպի Երևան[6]։ Հունիսի 19-ին ռուսական զորաբանակը մոտենում է էջմիածնին։ Գեներալ Ցիցիանովը ծրագրում էր գրավել էջմիածինը, հանգիստ տալ զորքին և ապա բանակցություններ սկսել Մամադ խանի հետ՝ Երևանի բերդը առանց դիմադրության իրեն հանձնելու համար։ Սակայն Աբաս-Միրզայի հրամանատարությամբ գործող պարսկական 20 հազարանոց բանակը ռուսական զորքից առաջ հասել էր էջմիածին և ամուր դիրքեր գրավել։

Հունիսի 20-ին էջմիածնի մատույցներում մարտեր են սկսվում ռուսական կորպուսի և Աբաս-Միրզայի բանակի միջև։ Պարսկաստանի գահաժառանգը հույս ուներ էջմիածնի մերձակայքում ջախջախել ռուսական կորպուսը, սըրընթաց գրոհով գրավել Թիֆլիսը և իրագործել պարսկական կառավարող շրջանների ծրագիրը՝ Վրաստանն ու ամբողջ Կովկասը նվաճելու վերաբերյալ։ Սակայն հունիսի 21-ին և 22-ին ռուսական դիրքերի վրա պարսկական զորքերի բոլոր գրոհներն ապարդյուն անցան։ Ռուսական կորպուսի հրամանատարությունն իր հերթին զգալով, որ ուժերն անհավասար են և անարդյունավետ կլինի էջմիածնի համար ռազմական գործողությունների հետագա շարունակումը, որոշում է շրջանցել էջմիածինը, շարժվել Քանաքեռ՝ այնտեղից գրոհել Երևանի վրա և հակառակորդին հարվածել թիկունքից, համոզված լինելով, որ այդ դեպքում Աբաս-Միրզան հարկադրված կլինի կամովին թողնել էջմիածինը։ Այդպես էլ եղավ։

Ռուսական կորպուսի զորամասերը հունիսի 25-ին գրավեցին Քանաքեռը։ Շրջապատման վտանգից վախենալով, Աբաս-Միրզայի զորաբանակը Երևանով նահանջեց և ճամբար դրեց քաղաքից մոտ 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք՝ Գառնի-չայ (Ազատ) գետի ափին։

---

6 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒԳԱ, ֆ. ՌԳՒ, գ. 4258, մ. II, թ. 1—41։

Հունիսի 27-ին Քանաքեռի ռուսական ճամբարը եկած մի քանի հայեր հայտնեցին էջմիածնից պարսկական բանակի նահանջի լուրը։ Նրանք միաժամանակ հաղորդեցին, որ էջմիածնի վանքի պահեստներում սննդամթերքի խոշոր պաշարներ են պահվում, որոնք կտրամադրվեն ռուսական զորքին։ Այդ լուրը մեծ ուրախություն պատճառեց, քանի որ ռուսական կորպուսը արդեն պարենի կարիք էր զգում։ Գեներալ Ցիցիանովը մի զոկատ է ուղարկում տիրելու էջմիածնին, իսկ ինքը կորպուսի գլխավոր ուժերով հունիսի 29-ի լույս 30-ի գիշերը անցնում է Հրազդանի ձախ ափը և գրոհում Աբաս-Միրզայի ճամբարի վրա։ Պարսկական թագաժառանգը, պարտություն կրելով, խուճապահար նահանջում է Արաքսի աջ ափը, իսկ Ցիցիանովը հուլիսի 2-ին պաշարում է Երևանի բերդը[7]։

Ռազմական գործողությունների այդպիսի հաջող ընթացքից հետո գեներալ Ցիցիանովը հաշվի չառավ, որ Երևանի երկարատև պաշարման համար ռուսական զորքն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ զինամթերքով ու պարենով և նման պայմաններում ինքը հաջողության կարող է հասնել միայն հարձակողական սրընթաց գործողություններով։ Պաշարելով բերդը, վճռական գրոհի անցնելու փոխարեն, նա սկսեց բանակցություններ վարել Երևանի խանի հետ՝ բերդը առանց դիմադրության իրեն հանձնելու մասին։ Մինչդեռ Մամադ խանը դիտավորյալ ձգձգում էր բանակցությունները, որպեսզի ժամանակ շահի և պարսկական բանակներից օգնություն ստանա։ Օգտագործելով Ցիցիանովի տակտիկական սխալը, Աբաս-Միրզան հնարավորություն ունեցավ կարգի բերել խուճապի մատնված բանակը և վերստին ճամբար դրեց Գառնի-չայի ափին։ Հուլիսի 14-ին Աբաս-Միրզային օգնության հասավ Ֆաթհ-Ալի շահը՝ 15 հազար զորքով։ Իսկ Մամադ խանը այդ ժամանակամիջոցում հմնականում ավարտեց բերդի պաշտպանական կառուցվածքները[8], կայազորը (բաղկացած էր յոթ հազար սարբազներից, ուներ 60 թնդանոթ և երկու հրասանդ) համալրեց շահի ուղարկած 800 զինվորներով և ակտիվ գործողություններ սկսեց ռուսական կորպուսի դեմ։

Երևանի մոտ կենտրոնացնելով շուրջ 35 հազարանոց բանակ, հուլիսի 15-ին պարսկական զորաջոկերն անցնում են հակահարձակման, նպատակ ունենալով ոչնչացնել Ցիցիանովի կորպուսը և ներխուժել Վրաստան։ Պարսկական մի խոշոր զորամիավորում հարվածն ուղղում է ռուսական զորքերի ձախ թևի՝ գեներալ-մայոր Լեոնտևի զոկատի դեմ։ Հակառակորդի երկրորդ խոշոր զորախումբն անցնելով Հրազդանը, գրոհում է գնդապետ Ցեխանովսկու զորակետի վրա։ Իսկ մի երրորդ զորախումբ էլ արշավում է գեներալ-մայոր Պորտնյագինի դիրքերի վրա։ Այդ նույն միջոցին պարսկական միացյալ բանակին ակտիվորեն օգնում էր Մամադ խանը։ Նրա արագաշարժ զոկատները

---

7 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊՄ, ֆ. ՌԳԱ, գ. 4258, մ. III, թ. 154—157։

8 Երևանի բերդը կառուցվել է 1582 թ. Հրազդան գետի ժայռապատ ափին։ Նա մի կողմից պաշտպանվում էր Հրազդանի խոր կիրճով, իսկ մյուս երեք կողմերից՝ աղյուսից կառուցված կրկնաշար պարիսպներով, որոնք ունեին 17 աշտարակներ։ Աշտարակներին ամրացված էր 22 թնդանոթ։ Նրա կայազորը հասնում էր 5—7 հազար մարդու, որը պատերազմների ժամանակ ավելացվում էր։ Ռուս-պարսկական առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում այն ավելի ամրացվեց ֆրանսիական, ապա անգլիական ինժեներների օգնությամբ։

դուրս գալով բերդից, թիկունքից հարձակումներ էին կատարում ռուսական զորքի վրա, իսկ հրետանին ռմբակոծում էր նրանց դիրքերը։

Թեպետ պարսկական ուժերը քանակապես մոտ տասն անգամ գերազանցում էին, բայց շնորհիվ ռուսական զորքի ցուցաբերած բացառիկ կայունության ու խիզախության, ինչպես նաև հրետանու գերազանց գործողությունների, հուլիսի 15-ի ութ ժամից ավելի տևած ճակատամարտը դարձյալ ավարտվեց պարսիկների պարտությամբ ու նահանջով։ Ոգևորված այդ հաջողություններով, հուլիսի 23-ին Ցիցիանովի կորպուսն սկսեց Երևանի բերդի գրոհը, սակայն համառ դիմադրության հանդիպելով, հարկադրված եղավ դադարեցնել կրակը։

Ռուսական կորպուսի վիճակը գնալով ծանրանում էր։ Ռազմամթերքի ու պարենի խիստ պակաս էր զգացվում։ Լարված մարտերի, ինչպես նաև Արաբատյան դաշտի շոգերի հետևանքով նոսրանում էին առանց այդ էլ սակավաթիվ զորաբանակի շարքերը։ Շուտով հայտնի դարձավ, որ խռովություններ են սկսվել Օսեթիայում։ Այդ օրերին դեպի Փամբակ էր շարժվում պարսկական մի զորաբանակ՝ վրաց արքայազն Ալեքսանդրի հրամանատարությամբ, որն արտահայտելով վրաց փոքրաթիվ հետադիմական ազնվականության և պարսկական նվաճողների կամքը, փորձում էր վերանվաճել Վրաստանը և այնտեղից դուրս մղել ռուսներին։ Այդ իրավիճակը գնահատելով Ցիցիանովին հարկադրեց սեպտեմբերի 3-ին դադարեցնել Երևանի բերդի պաշարումը և նահանջել էջմիածին, իսկ սեպտեմբերի 7-ին՝ ուղղություն վերցնել դեպի Թիֆլիս։

Որքան էլ ծանր էր ռուսական զորքերի Երևանյան առաջին արշավանքի անհաջողությունը, այնուամենայնիվ, այն չվհատեցրեց հայերին։ Նրանք ոչ միայն չկորցրին իրենց մոտալուտ ազատագրության հույսը, այլև տարբեր ձևերով ու եղանակներով շարունակելով պայքարը պարսիկ բռնակալների դեմ, եռանդագին նախապատրաստվում էին դարձյալ օգնելու ռուսական բանակներին, դրա մեջ տեսնելով իրենց փրկությունը։ Երևանի հայերը անհամբերությամբ սպասելով ռուսական կորպուսի նոր արշավանքին՝ մեկը մյուսի ետևից նամակներ էին գրում Ցիցիանովին, նկարագրում ռուսական զորքի նահանջից հետո իրենց նկատմամբ առավել սաստկացած բռնությունները և խնդրում նորից վերադառնալ ու գրավել Երևանի բերդը։ Միաժամանակ նրանք ռուսական հրամանատարությանը հավաստիացնում էին, որ տեղի հայերը և ազդրբեջանցիները կօգնեն ռուսական զորքին։ Երևանից տարագրված և ռուսական հովանու տակ ապաստան գտած Մելիք Աբրահամը և յուզբաշի Գաբրիելը Ցիցիանովին ուղղված նամակներից մեկում գրում էին. «... տեղեկացնում ենք, որ այժմ Երևանում գտնվում է շատ քիչ թվով զորք՝ 3000-ից ոչ ավելի հետիոտն մարդ, իսկ Երևանի բնակիչները, թաթարները, որոնք ապրում են բերդում և նրանից դուրս, բոլորը մեզ հետ խոսել են և խոսք են տվել, որ եթե կարճ ժամանակաընթացքում Ձեր զորքը գա Երևան, ապա նրանք բոլորը կենթարկվեն և առանց դժվարության կգրավեք բերդը՝ նրա բոլոր ունեցվածքներով հանդերձ...»[9]։

---

9 «Акты, собранные Кавказской археографической комиссиею...» (այսուհետև՝ АКАК), т. II, Тифлис, 1868, стр. 605.

Ռուսական կորպուսի երևանյան առաջին արշավանքը թեպետ չպսակվեց Երևանի գրավումով, բայց և անհետևանք չմնաց։ Այդ արշավանքը արագացրեց Երևանի սարդարի հպատակության տակ գտնվող Շորագյալի շրջանի (Աբևելյան Շիրակ) միացումը Ռուսաստանին։

Երևանյան առաջին արշավանքի ժամանակ Շորագյալի Բուդաղ սուլթանը ռուսների նկատմամբ վերապահ դիրք էր բռնել։ Ռուսական զորքերի նահանջից հետո, սարդարի թելադրանքով, նա հարձակումներ սկսեց Վրաստանի սահմանակից շրջանների վրա։ Չնայած դրան, Շորագյալի հայ բնակչությունը շարունակում էր գործել ռուսների օգտին։ Ստեղծված նպաստավոր իրավիճակում՝ 1805 թ. մարտի 30-ին գեներալ Նեսվետաևի գլխավորած զորագունդը գրավեց Շորագյալի սուլթանության կենտրոն Արթիկը։ Բուդաղ սուլթանը հոկտեմբերին ընդունեց ռուսական հպատակություն։

Ռուսաստանի համար Շորագյալը ունեցավ ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն։ Հացառատ այդ շրջանը Հայաստանում գործող զորաբանակին, անհրաժեշտության դեպքում, կարող էր պարեն մատակարարել, միաժամանակ նաև միջնապատի դեր խաղալ մի կողմից՝ Վրաստանի, մյուս կողմից՝ Թուրքիայի ու Պարսկաստանի միջև։

Շորագյալին նախորդել էր Ղարաբաղի խանության միացումը։ Գեներալ Ցիցիանովը 1805 թ. սկզբներին ուժեղացնում է ճնշումը Ղարաբաղի Իբրահիմ խանի վրա՝ պահանջելով ընդունել ռուսական հպատակություն։ Խանի փորձերը՝ ձգձգել այդ նպատակով Շուշի ժամանած մայոր Լիսանևիչի հետ բանակցությունները, անցան ապարդյուն։ Ցիցիանովը Ղարաբաղի տիրակալին զգացնել է տալիս, որ բանակցությունների հետագա ձգձգումը կարող է հանգեցնել զենքի միջամտության։ Միայն դրանից հետո, 1805 թ. փետրվարի 21-ին, Իբրահիմ խանը Լիսանևիչի միջոցով հայտնում է իր հոժարակամությունը՝ գրծին դրական ընթացք տալ։ 1805 թ. մայիսի 14-ին Քյուրակչայ գետի ափին խփված վրանում, հանդիսավոր իրադրության պայմաններում գեներալ Ցիցիանովը և Իբրահիմ խանը պայմանագիր ստորագրեցին Ղարաբաղի ռուսական հպատակություն ընդունելու մասին։ Մայիսի 21-ին Քյուրակչայի ափին նույնպիսի պայմանագիր ստորագրեց նաև Շաքիի Սելիմ խանը։

Ղարաբաղի հետ միասին Քյուրակչայի պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցան միաժամանակ Ղափանի, Գորիսի և Սիսիանի շրջանները։ 1805—1806 թթ. Ռուսաստանին միացվեց նաև հյուսիսային Ադրբեջանի՝ Շիրվանի, Բաքվի ու Դերբենդի խանությունները։ Այս ամենը Ռուսական կայսրությանը հնարավորություն ընձեռեց զգալիորեն ամրապնդելու իր դիրքերն Անդրկովկասում։

* * *

Ռուս-պարսկական առաջին պատերազմը ընթանում էր այնպիսի պայմաններում, երբ Ռուսաստանը և Ֆրանսիական նորաստեղծ կայսրությունը թշնամաբար էին տրամադրված իրար նկատմամբ։ Նապոլեոնը չանում էր Ռուսաստանի ուշադրությունը գամել Պարսկաստանի հետ մղվող պատերազմական գործողություններին, որպեսզի կարողանար ձեռարձակ իրագործել իր նվաճողական ծրագրերը Եվրոպայում։ Մյուս կողմից՝ նրա նպատակն էր Պարսկաս-

տանի և Թուրքիայի համատեղ ջանքերով թուլացնել Ռուսաստանը և դրանով իսկ իշխող դիրք ստանալ Մերձավոր Արևելքում, որը միաժամանակ շարունակում էր մնալ նաև Ֆրանսիայի ու Անգլիայի միջև եղած հակամարտությունների ընդհանուր շղթայի գլխավոր օղակներից մեկը։

Մեծ տերությունների միջև բորբոքված հակամարտությունների բովում առժամանակյա խոշոր հաջողություններ հասավ Ֆրանսիան։ 1806 թ. հունիսին Թեհրան ժամանած Նապոլեոնի գործակալ ժոբերին հաջողվեց շահի հետ նախնական համաձայնության գալ՝ երկու երկրների միջև ռազմական դաշինք կնքելու մասին։ Նապոլեոնը միաժամանակ ուժեղացնում էր իր դիվանագիտական խարդավանքները Թուրքիայում՝ ջանալով նրան պատերազմի մեջ ներքաշել Ռուսաստանի դեմ։ Ֆրանսիայի հակառուսական քաղաքականությունը համընկնում էր թուրքական կառավարող շրջանների տրամադրություններին, որոնք առավել ակնհայտ դարձան, երբ Կոստանդնուպոլիս ժամանեց Ֆրանսիայի դեսպան գեներալ Սեբաստիանին (1806 թ. օգոստոս)։ Ժամանելով Թուրքիա, Սեբաստիանին գործում էր Նապոլեոնի գաղտնի հրահանգով, որի համաձայն պետք է ամեն ինչ աներ, որպեսզի Թուրքիան պատերազմ սկսեր Ռուսաստանի դեմ[10]։

Նապոլեոնի անունից Սեբաստիանին սուլթանին խոստանում էր օգնել զենքով, պարենով և անգամ ռազմական ուժով։ Շուտով Կոստանդնուպոլիս են ժամանում ֆրանսիական բազմաթիվ զինվորական հրահանգիչներ, խորհրդականներ, ռազմական ամրություններ կառուցելու համար համապատասխան մասնագետներ։ Նապոլեոնը նույնիսկ ծրագրում էր հաշտեցնել Թուրքիային և Պարսկաստանին (որոնց հարաբերությունները սրված էին սահմանային տերիտորիալ վեճերի հետևանքով) և ռազմական դաշինք ստեղծել ընդդեմ Ռուսաստանի։ Այսպիսով, Թուրքիան դարձյալ կանգնեց Ռուսաստանի նկատմամբ բացահայտ թշնամական քաղաքականության ուղու վրա և կրկին հայտնվեց նրա հակառակորդների բանակում։ Կամայականորեն խախտելով 1791 թ. կնքված Ցասսի հաշտության պայմանագիրը, Թուրքիան արգելեց ռուսական ռազմական նավերին անցնել Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով, սկսեց խոշոր ռազմական ուժեր կուտակել Դանուբի և Ախուրյանի ափերին, զգալիորեն ամրացրեց սահմանային բերդերը և 1806 թ. դեկտեմբերի 18 (30)-ին պաշտոնապես պատերազմ հայտարարեց Ռուսաստանին։ Սկիզբ առավ 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի ժամանակ սուլթանական կառավարությունն իր առջև խնդիր էր դրել ամրապնդել թուրքական տիրապետությունը նվաճված երկրների ու ժողովուրդների վրա, գրավել ամբողջ Կովկասը և Ռուսաստանից զավթել տնտեսական ու ռազմա-ստրատեգիական կարևորություն ներկայացնող այլ շրջաններ։

Թուրքիայի հետ սկսված պատերազմը (այն տեղի էր ունենում երկու ճակատով՝ Դանուբում և Կովկասում) առավել բարդացրեց ռուսների դրությունը Անդրկովկասում։ Կամենալով թեթևացնել Կովկասում գործող ռուսական զոր-

10 Տե՛ս «История XIX века», под редак. *Лависса* и *Рамбо*, т. II, М., 1937, стр. 123—124.

քերի վիճակը, Ցիցիանովին փոխարինած[11] գեներալ Ի. Վ. Գուդովիչը բանակցություններ է վարում պարսկական արքունիքի հետ՝ հաշտություն կնքելու համար։ Որպես հաշտության նախապայման նա պահանջում էր Երևանի ու Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին և Քուռ ու Արաքս գետերի ճանաչումը իբրև ռուս-պարսկական պետական սահմանագիծ։

Հակառակ դրան, ֆրանսիական դիվանագիտությունը Պարսկաստանում նոր հաջողություններ հասավ։ 1807 թ. մայիսի 4-ին Ֆրանսիայի ու Պարսկաստանի միջև Ֆինկենշտեյնում կնքվեց դաշնակցային պայմանագիր, որով Նապոլեոնը խոստանում էր իր օգնությունը՝ ռուսներին դուրս մղելու Վրաստանից ու Անդրկովկասի մյուս մարզերից, զենք տրամադրել Պարսկաստանին, ինչպես նաև բանակը վերակառուցելու և վարժեցնելու համար ռազմական հրահանգիչներ ուղարկել։ Պարսկաստանն իր հերթին պարտավորվում էր խզել կապերն Անգլիայի հետ, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև պատերազմ սկսվելու դեպքում զորք ուղարկել Հնդկաստան, միաժամանակ ֆրանսիական բանակին հնարավորություն տալ Պարսկաստանի վրայով անցնել Հնդկաստան։ Ֆինկենշտեյնի պայմանագիրը նախ և առաջ ուղղված էր Անգլիայի ու Ռուսաստանի շահերի դեմ։ Նա միաժամանակ ուղղված էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ, որովհետև այդ պայմանագրով Նապոլեոնը «երաշխավորում էր» Պարսկաստանի տիրապետությունը Անդրկովկասում։

Ֆինկենշտեյնի պայմանագրի կնքումը ավելի թևավորեց պարսկական կառավարող շրջաններին։ Թեհրան ժամանած ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանի աջակցությամբ Ֆաթհ-Ալի շահը և Աբաս-Միրզան նախապատրաստվում էին ներխուժել Վրաստան ճիշտ այն պահին, երբ թուրքական բանակը հարձակման անցներ կովկասյան ճակատում։

Անդրկովկասում ռուսական բանակների համար ստեղծված /այսպիսի/ աննպաստ /պայմաններում/ գեներալ Գուդովիչը թուրքերի դեմ ռազմական ակտիվ գործողություններ սկսելու հրաման է ստանում, որպեսզի նրանց թույլ չտա Վրաստան ներխուժել։ /Դրա նպատակն էր նաև թշնամուն խանգարել իր ուժերը կուտակելու պատերազմի Դանուբյան գլխավոր ռազմաճակատում։

Գործող կորպուսի հիմնական ուժերով 1807 թ. ապրիլի սկզբներին գեներալ Գուդովիչը շարժվում է դեպի Ախալքալաք-Ախալցխա, իսկ գեներալ Նեսվետաևին հրամայում է անցնել Ախուրյան գետը և գրոհել Կարսի վրա։ Նեսվետաևի զորախումբը կատարելով այդ հրամանը, մեկ շաբաթից հետո, ապրիլի 7-ին մոտենում է Կարսին։ Էրզրումի սերասքյար Յուսուֆ փաշան իր հերթին խոշոր ուժեր կուտակելով, ծրագրում է՝ սեպի պես խրվել Գուդովիչի ու Նեսվետաևի գլխավորած զորախմբերի միջև, նրանց անջատ-անջատ ջախջախել և ապա Թիֆլիս ներխուժելու ճանապարհ բացել։ Թուրքական հրամանատարության պլանը խափանելու համար գեներալ Գուդովիչը Նեսվետաևին հրամայում է նահանջել Ախուրյանի սահմանագիծը։ Ինքը ևս դադարեցնելով ռազմական գործողությունները Ախալքալաք-Ախալցխայի շրջաններում, շտապում է Ախուրյան-Գյումրի՝ միանալու Նեսվետաևին, որպեսզի միացյալ ուժերով

11 Գեներալ Ցիցիանովը սպանվեց 1806 թ. փետրվարին՝ Բաքվում։

պատնեշեն թուրքական բանակի առաջխաղացումը։ Այդ ժամանակ ռուս-թուրքական սահմանին է մոտենում նաև Աբաս-Միրզան իր 12 հազարանոց զորքով՝ նպատակ ունենալով միանալ թուրքական բանակին, համատեղ ուժերով ոչնչացնել Գուդովիչի գլխավորությամբ Գյումրի հասած ռուսական զորաբանակը և շարժվել դեպի Թիֆլիս։

Թուրքական բանակին միանալու Աբաս-Միրզայի մտադրությունը խափանելու և հակառակորդի ուժերը անջատ-անջատ ջախջախելու նպատակով հունիսի 18-ին Գուդովիչի գլխավորած զորքերը հարձակվում են թուրքական բանակի վրա։ Ախուրյանի ափին, Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ, տեղի է ունենում արյունալի ճակատամարտ, որին ռուսներից մասնակցում էր 7 հազար, իսկ թուրքերից՝ 20 հազար զինվոր։ Հակառակ հաղթանակի հասնելու թուրքական բանակի գործադրած բոլոր ճիգերին, ճակատամարտն ավարտվեց ռուսական կորպուսի փայլուն հաղթանակով։ Մեծ կորուստներ կրելով, թուրքական բանակը փախուստի դիմեց, իսկ դարան մտած Աբաս-Միրզան, լսելով թուրքերի պարտության լուրը, առանց մարտի մեջ մտնելու, նահանջեց դեպի Նախիջևան։ Դրանից հետո ռուս-թուրքական պատերազմը կովկասյան ճակատում գերազանցապես դիրքային բնույթ ստացավ։ Հունիսի 18-ի ճակատամարտում ռուսական կորպուսի տարած հաղթանակի շնորհիվ ոչ միայն ձախողվեց Վրաստան ներխուժելու հակառակորդի պլանը, այլև ի չիք դարձավ թուրք-պարսկական ռազմական դաշինքի կնքումը, որը բացահայտորեն խրախուսում էին Նապոլեոնի գործակալները։

Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև 1807 թ. հուլիսի 8-ին կնքված Տիլզիտի պայմանագրից հետո՝ օգոստոսին, թեպետ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց ժամանակավոր զինադադար, սակայն Նապոլեոնի դիվանագետները Թուրքիայում շարունակում էին իրենց հակառուսական գործունեությունը և սպեշնյում թուրքական կառավարող շրջաններին շարունակել պատերազմը։ Դրանով Նապոլեոն Բոնապարտը ձգտում էր խոչընդոտել Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը և թուլացնել նրա ռազմական հզորությունը։

Տիլզիտի պայմանագրի կնքումից հետո ֆրանսիական դիվանագետներն իրենց հակառուսական գործունեությունը շարունակում են նաև Պարսկաստանում։ Թեհրանում Գարդանի միսիան օգնում էր Պարսկաստանին՝ պատերազմը Ռուսաստանի դեմ շարունակելու համար։ Ֆրանսիական զինվորական ինժեներ Վերդեյը և ուրիշներ մեծ դեր խաղացին Երևանի բերդի ամրացման և նոր ամրություններ կառուցելու գործում[12]։ Այդ միսիայի վարած հակառուսական քաղաքականության արտահայտությունն էր և այն, որ 1808 թ. մարտին, երբ Գուդովիչը փոխգնդապետ Վրեդեին ուղարկեց Պարսկաստան՝ Ֆաթհ-Ալի շահի և Աբաս-Միրզայի հետ վերսկսելու հաշտության բանակցությունները, Գարդանը բացահայտորեն սկսեց գործել հօգուտ Պարսկաստանի։ Նա առաջարկում է ժամանակավոր զինադադար կնքել, իսկ հաշտության բանակցությունները փոխադրել Փարիզ և որպես բանակցությունների վերսկսման նախապայման, կռվող կողմերից պահանջում էր իրենց զինված ուժերը ետ քաշել մինչպատե-

12 Տե՛ս АКАК, т. III, 1869, стр. 254.

րաղմյան սահմանագիծը։ Օգտվելով Ֆրանսիայի բռնած դիրքից, պարսկական կառավարությունը մերժեց ռուսների հաշտության առաջարկը և, պատերազմական գործողությունները Վրաստան փոխադրելու համար, սկսեց եռանդուն նախապատրաստություններ տեսնել։

Դիվանագիտական ճանապարհով ռուս-պարսկական սահմանագծի հարցը լուծելու բոլոր հույսերը սպառված համարելով, ռուսական հրամանատարությունը որոշում է նոր արշավանք կազմակերպել, գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունները և պարսկական արքունիքին հարկադրել Արաքս ու Քուռ գետերը ճանաչել իբրև ռուս-պարսկական սահմանագիծ։ Այդ խնդրի իրագործման նպատակով որոշ զորամասեր թողնելով Շորագյալի ու Փամբակի գավառների պաշտպանության համար, կորպուսի հիմնական ուժերով (6000 զորքով և 12 դաշտային թնդանոթներով) 1808 թ. սեպտեմբերի 25-ին ֆելդմարշալ Գուդովիչը Ապարանի վրայով շարժվեց դեպի Երևան։

Սեպտեմբերի 26-ին ռուսական զորաբանակը գրավում է Ապարանը և փախուստի մատնում պարսկական առաջապահ ուժերին։ Ստանալով այդ լուրը, Երևանի նոր սարդար Հյուսեին-Ղուլի խանը չորս հազար հեծյալներով դուրս է գալիս Գուդովիչի գլխավորած զորքերին ընդառաջ։ Ռուսական կորպուսի և Հյուսեին-Ղուլի խանի հեծելազորի միջև Աշտարակի մոտ սեպտեմբերի 29-ին տեղի է ունենում կատաղի ճակատամարտ, որն ավարտվում է ռուսների հաղթանակով։ Պարսկական հեծելազորը, կրելով խոշոր կորուստներ, նահանջում է դեպի Երևան, իսկ Գուդովիչի զորաբանակը սեպտեմբերի 30-ին գրեթե առանց դիմադրության հանդիպելու գրավում է Էջմիածինը։ Ռուսական զորքին չեմ ընդունելություն են ցույց տալիս տեղի հայերը։ Հոկտեմբերի 3-ին ռուսական զորաբանակը շարժվում է առաջ և ճամբար դնում Երևանի բերդից մոտ երեք կիլոմետր հեռավորության վրա։ Իսկ Հյուսեին-Ղուլի խանը Երևանի բերդի պաշտպանությունը հանձնելով եղբորը՝ Հասան խանին, ինքը հեծյալ մի չոկատով հեռանում է Գառնի-չայի շրջակայքը, թիկունքից ռուսական զորքերին հարվածելու նպատակով։ Կոտրելով հակառակորդի դիմադրությունը, ռուսական առաջապահ զորամասերը հոկտեմբերի 9-ին մոտենում են Երևանին և պաշարում բերդը[13]։

Դեռևս Երևանյան արշավանքի սկզբին Ղարաբաղում գտնվող գեներալ-մայոր Նեբոլսինի գլխավորած զորագունդը Գուդովիչի հրամանով շարժվում է դեպի Նախիջևան, խնդիր ունենալով գրավել այն և փակել Երևան տանող ճանապարհը, Ֆաթհ-Ալի շահին և Աբաս-Միրզային զրկելով Երևանի սարդարին օգնական ուժեր ուղարկելու հնարավորությունից։ Նեբոլսինի զորագունդը հաջողությամբ կատարեց այդ առաջադրանքը։ Հոկտեմբերի 28-ին, Նախիջևանից 18 կիլոմետր հեռավորության վրա, Ղարաբաբա գյուղի մոտ, ռուսական զորագունդը հաղթական ճակատամարտ տվեց Աբաս-Միրզայի զորքերին։ Այդ հաղթանակը նրա առաջ բացեց Նախիջևան տանող ճանապարհը։ Ղարաբաբայի ճակատամարտից երեք օր հետո, նոյեմբերի 1-ին գեներալ Նեբոլսինի զորագունդը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավում է Նախիջևանը։ Երևանի մոտ Գուդովիչի և Նախիջևանում Նեբոլսինի գլխավորած զորքերի հա-

13 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊՄ, ֆ. ՌԳՎԱ, գ. 4265, թ. 4—16։

ջողությունները նպաստավոր պահ ստեղծեցին Երևանը գրավելու համար։ Սակայն պաշարելով Երևանի բերդը, Գուդովիչը թանկագին ժամանակը վատնեց Հասան խանի հետ վարած անօգուտ գրագրության վրա՝ հույս ունենալով, որ կհաջողվի բերդին տիրել առանց արյունահեղության։

Զեռքից բաց թողնելով նպաստավոր պահը, Գուդովիչը միայն նոյեմբերի 17-ին գրոհեց Երևանի բերդի վրա։ Սակայն հանդիպելով հակառակորդի համառ դիմադրությանը, նա համոզվեց, որ այլևս անկարող է շարունակել բերդի պաշարումը։ Դրությունն ավելի էր լրջանում այն պատճառով, որ Փամբակի լեռնանցքն արդեն ծածկվել էր ձյունով և Վրաստանից կտրվելու իրական վտանգ էր ստեղծվել։ Բացի այդ, արդեն սպառվում էին անհրաժեշտ զինամթերքի, հանդերձանքի ու սննդամթերքի պաշարները։ Այս ամենը հարկադրեցին ֆելդմարշալ Գուդովիչին նոյեմբերի 30-ին նահանջի հրաման արձակել։ Դեկտեմբերի 1-ին գեներալ Նեբոլսինի զորագունդը նույնպես թողեց Նախիջևանը։

Այսպիսով, 1808 թ. սեպտեմբեր—նոյեմբեր ամիսներին ռուսական կորպուսին հաջողվեց գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունների գրեթե ողջ տերիտորիան, բացառությամբ Երևանի բերդի, որը մոտ երկու ամիս մնաց պաշարված։ Սակայն կովող կողմերի ուժերի անհավասարությունը, Երևանը Թիֆլիսին կապող ճանապարհների փակման սպառնալիքն ու Վրաստանը երկար ժամանակ անպաշտպան թողնելու վտանգը կորպուսի հրամանատարությանը հարկադրեց առժամանակ հրաժարվել Երևանյան երկրորդ արշավանքի ընթացքում ձեռք բերած հաջողություններից։

Երևանի գրավման անհաջողությունը թանկ նստեց Գուդովիչին։ Նա հեռացվեց Վրաստանի կառավարչապետի և Կովկասում ռուսական զորքերի հրամանատարի պաշտոնից։ Նրան փոխարինեց գեներալ Տորմասովը։

3. ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ռուս-պարսկական առաջին պատերազմում ռուսական զորքերին ռազմական, նյութական ու բարոյական զգալի օգնություն ցույց տվեց հայ ժողովուրդը, որն իր ազատագրման հեռանկարները կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ։ Հայերը ռուսական բանակներին օգնություն էին ցույց տալիս տարբեր ձևերով ու մեթոդներով։ Նախ և առաջ կարևոր նշանակություն ունեցավ հայերի ռազմական օգնությունը։ Պատերազմի հենց սկզբից, սեփական նախաձեռնությամբ, նրանք կազմակերպեցին աշխարհազորային ջոկատներ, որոնք պաշտպանում էին իրենց բնակատեղերը, ինչպես նաև մասնակցում ռուսական զորքերի հարձակողական մարտերին։

1804 թ., երբ սկսվեց ռուսական զորքերի արշավանքը դեպի Երևան, նրանց միացավ 100 հեծյալներից կազմված հայկական աշխարհազորային մի ջոկատ։ Սա մասնակցեց 1804 թ. հունիսի 10-ին պարսկական բանակի դեմ Ախուրյանի ափին մղված ճակատամարտին։ Այդ ջոկատը մնաց ռուսական առաջապահ զորքերի շարքում և մասնակցեց Երևանի առաջին պաշարմանը։

Երևանի 1804 թ. պաշարման ժամանակ ռուսական կորպուսին մեծ օգնություն ցույց տվեց Գյուլիստանի (հետագայում Բոլնիսում հաստատված)

Մելիք-Աբովի որդու՝ Ռոստոմ բեկի գլխավորած հայկական հեծյալ ջոկատը։ Նրա օգնությունը մեծ եղավ հատկապես Երևանի բերդի պաշարման օրերին՝ Փամբակ-Ապարանի վրայով զինամթերքով բարձած ռուսական գումակները անվտանգ Երևան հասցնելու գործում։ Այդ մասին ռուսական կորպուսի 1804 թ. հուլիսի 14-ի ռազմական գործողությունների օրագրում ասված է. «Այսօր Փամբակից տեղ հասավ գումակը՝ արկերով. կապիտան Ստեպկովը վրկայում է, որ իր արշավախմբի հաջողության մեջ գլխավոր օգնական է եղել Մելիք-Աբովի որդի հայ իշխան Ռոստոմ բեկը»[14]։ Ռոստոմ բեկի ջոկատը հետագայում ևս մի քանի անգամ նույնպիսի օգնություն ցույց տվեց Երևանը պաշարած ռուսական զորամասերին՝ Փամբակ—Ապարանի վրայով զենք ու զինամթերք փոխադրող գումակների պահակախմբերին։ Վերջին անգամ, նույնպիսի հանձնարարություն կատարելու ժամանակ, Փամբակի կիրճերում նա ենթարկվեց պարսկական մի խոշոր զորախմբի հանկարծակի հարձակմանը։ Ռոստոմ բեկի ջոկատը մի ամբողջ օր հերոսական կռիվ մղեց թշնամու գերակշռող ուժերի դեմ։ Անհավասար մարտում ընկավ հայ աշխարհազորայինների մեծ մասը։ Ջոկատի հրամանատար Ռոստոմը մի քանի տեղից վիրավորվեց, բայց շարունակեց անձնազոհ կռվել։ Ծանր վիրավոր վիճակում նա գերվեց և շղթայակապ ուղարկվեց Թավրիզի բանտը, որտեղ և դաժան խոշտանգումներից հետո սպանվեց Աբաս-Միրզայի դահիճների ձեռքով[15]։

Ռուս-պարսկական պատերազմի առաջին իսկ օրերից Բորչալուում, Ղազախում և Շամշադինում պարսիկ խաների հրոսակախմբերի դեմ քաջաբար կռվում էր Գրիգոր Մանուչարյանի գլխավորած՝ 500 հայ հեծյալներից կազմված աշխարհազորային ջոկատը[16]։ Նա մեծ դեր խաղաց Ղազախ—Շամշադինի և Բորչալուի շրջանների հայկական ու ադրբեջանական շատ գյուղեր պարսկական հրոսակախմբերի հարձակումներից ու ավարառություններից պաշտպանելու գործում։ Գ. Մանուչարյանի ջոկատը հաճախ խոր անցումներ էր կատարում հակառակորդի թիկունքը, մարտի բռնվում նույնիսկ պարսկական կանոնավոր բանակի զորամասերի հետ և գերությունից ազատում բազմաթիվ հայ ընտանիքներ։ Աշխարհազորային այդ ջոկատն իր մասնակցությունը բերեց նաև ռուսական բանակի հարձակողական գործողություններին։ Նա մասնակցեց Գյանջայի գրավմանը, ինչպես նաև գեներալներ Ցիցիանովի ու Գուդովիչի գլխավորած Երևանյան արշավանքներին։ Այս արշավանքների ժամանակ ռուսական զորքերին ցույց տված օգնության համար Գ. Մանուչարյանը պարգևատրվեց Գեորգիևյան խաչով և Վլադիմիրի ու Աննայի շքանշաններով[17]։ 1804 թ. աշնանը, երբ պարսկական զորամիավորումները փորձում էին ներխուժել Փամբակ-Լոռի, տեղի հայերը կազմում են աշխարհազորային ջոկատներ, միանում ռուսական կայազորներին և անձ-

14 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4258, մ. II, թ. 56։

15 Տե՛ս Ախո, Նոր նյութեր 19-րդ դարու պատմության համար («Նոր ուղի» հանդես, գիրք 1, Երևան, 1932, էջ 127—128)։

16 ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 894, թ. 39։

17 Տե՛ս Ա. Սրիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 244—245։

նազոհ դիմագրավում պարսկական զորքերի առաջխաղացմանը։ 1804 թ. նոյեմբերին Փամբակի ավելի քան 13 հայկական գյուղերի շատ բնակիչներ միանում են ռուսական զորամասերին և ձախողում Ղարաքիլիսան գրավելու թշնամու բոլոր փորձերը։ Այդ նույն ամիսներին Լոռի-Փամբակում աչքի ընկավ նաև 50 հեծյալ հայերից կազմված մի այլ ջոկատ, որի հրամանատարությունը զոհված որդու փոխարեն իր ձեռքն էր վերցրել քաջակորով ծերունի Մելիք-Աբովը[18]։

Հայ աշխարհազորային ջոկատները ռուսական զորամասերին օգնում էին նաև Ղարաբաղում։ 1806 թվականին Ղարաբաղում պարսկական բանակների դեմ մղվող կռիվներում աչքի ընկավ Մելիք-Ջումշուդ Շահնազարյանի և Մեհտի-Ղուլի խանի գլխավորած հեծյալ հայերից և ադրբեջանցիներից կազմված ջոկատը[19]։ Մինչև պատերազմի վերջը նա մնաց գեներալ-մայոր Նեբոլսինի զորագնդի կազմում և մասնակցեց Ասկարանի ու մի շարք այլ հաղթական ճակատամարտերի։

Բարձր գնահատելով Մելիք-Ջումշուդ Շահնազարյանի հրամանատարական հմտությունն ու մատուցած ծառայությունները, ֆելդմարշալ Գուդովիչը ռուսական բանակի գլխավոր շտաբին զեկուցագիր է ներկայացնում նրան փոխգնդապետի աստիճան շնորհելու մասին։

1811—1812 թթ. Ջանգեզուրում նույնպես կազմակերպվում են աշխարհազորային ջոկատներ, որոնք ոչ միայն պարսկական զորախմբերի հարձակումներից արիաբար պաշտպանում էին իրենց գյուղերը, այլև հաճախ մասնակցում ռուսական զորքերի գործողություններին։ Այսպես, գեներալ Տորմասովը 1811 թ. մարտի 3-ին ռազմական մինիստրին ուղարկած զեկուցագրով հաղորդում է, որ Մեղրիի մոտ տեղացի հայ աշխարհազորայինները Օգերական 17-րդ գնդի վաշտերից մեկի ու 27 հեծյալ կազակների հետ համատեղ մարտեր մղեցին գյուղը ներխուժելու փորձ կատարող պարսկական զորախմբի դեմ։ Կռվի ժամանակ ռուսներից սպանվում է 25, իսկ հայերից՝ 8 մարդ, բայց թշնամին հարկադրված է լինում դիմել փախուստի[20]։ 1812 թ. հունիսին Ջանգեզուրում՝ Խնձորեսկ գյուղի մոտ, հայերից և ադրբեջանցիներից կազմված աշխարհազորային ջոկատը, միանալով ռուսական զորագնդին, հաղթական ճակատամարտ մղեց երկու հազար պարսիկ զինվորների դեմ։ Գեներալ Ռտիշչևը 1812 թ. հուլիսի 27-ին իշխան Գորչակովին ուղարկած զեկուցագրում հաղորդում էր, որ հուլիսի 12-ին Օգերական 17-րդ գրնդի ջոկատին միանալով՝ 65 զինված հայեր Խնձորեսկ գյուղի մոտ մարտ մղեցին գյուղը կողոպտելու փորձ կատարող սարբազների դեմ՝ հարկադրելով նրանց դիմել փախուստի[21]։ Կան բազմաթիվ ուրիշ փաստեր ևս, որոնք վկայում են այդ տարիներին Ջանգեզուրում պարսկական զորքերի դեմ հայ աշխարհազորայինների և ռուսական զորամասերի համատեղ ռազմական գործողությունների մասին։

---

18 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԳՒԱ, գ. 4259, մ. V, թ. 53—54։

19 Նույն տեղում, գ. 4263, թ. 61։

20 Տե՛ս նույն տեղում, գ. 4258 (В), էջ 374—375։

21 Նույն տեղում, գ. 4259, մաս II, թ. 100—102։

Շատ հայեր, որպես ռազմական հետախույզներ ու կապավորներ, օժանդակում էին ռուսական զորքերին։ Հայ սուրհանդակների միջոցով կապ էր հաստատվում հակառակորդի կողմից պաշարված ռուսական կայազորների և մոտակա զորամասերի միջև։ Հաճախ էլ նրանց ուղեկցությամբ ռուսական զորամասերը հայտնվում էին պարսկական զորաբանակների թիկունքում և հանկարծակի գրոհում վերջիններիս վրա։ Ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ հայ սուրհանդակներից իրենց համարձակությամբ ու խիզախությամբ աչքի ընկան Երևանում՝ Հարություն Բաբիջանյանը, Ղարաբաղում՝ Մելիք-Վանի ու Հակոբ-յուզբաշի Աթաբեկյան եղբայրները և ուրիշներ։

Աբաս-Միրզայի մեծաքանակ բանակի առաջապահ ուժերը (10 հազար սարբազ) Փիր-Ղուլի խանի գլխավորությամբ 1805 թ. հունիսին, անցնելով Արաքս գետը, շարժվում են դեպի Շուշի, որի պաշտպանությունը հանձնված էր Լիսանևիչի սակավաթիվ գումարտակին։ Շուշիի պաշտպաններին օգնության է շտապում գնդապետ Կարյագինի 400 մարդուց կազմված գումարտակը։ Սակայն հունիսի 24-ին, Շուշիից 25 վերստ հեռավորության վրա, Ասկարանի կիրճում, Կարյագինի գումարտակի ճանապարհը փակում է պարսկական բանակը։ Կռվող կողմերի ուժերը խիստ անհավասար էին։ Փիր-Ղուլի խանին օգնության է հասնում Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը, և Կարյագինը շտապում է իր գումարտակի ծանր վիճակի մասին տեղյակ պահել Շուշիի կայազորին։ Այդ պարտականությունն իր վրա է վերցնում ռուսական գումարտակում կամավոր ծառայության մտած ղարաբաղցի Վանի Աթաբեկյանը։ Հունիսի 25-ի գիշերը, պարսիկներից աննկատ, նա հեռանում է ռուսական ճամբարից և, հասնելով մոտակա հայկական գյուղը, տեղի հայերի միջոցով Կարյագինի նամակը ուղարկում է Լիսանևիչին, իսկ ինքը նույն գիշերը վերադառնում գումարտակ։ Այնուհետև Վանի Աթաբեկյանի առաջնորդությամբ ռուսական գումարտակը թշնամուց գաղտնի հեռանում է և ամրանում Շահ-Բուլաղ բերդում։ Շահ-Բուլաղը գրավելու Աբաս-Միրզայի բոլոր փորձերն ապարդյուն են անցնում, ուստի նա որոշում է երկար ժամանակ պաշարել բերդը և, սովի մատնելու սպառնալիքի տակ, ռուս զինվորներին հարկադրել անձնատուր լինել։ Ստեղծված այս ծանր պայմաններում ռուսական գումարտակին դարձյալ օգնության է գալիս Վանի Աթաբեկյանը։ Վերցնելով գեներալ Ցիցիանովին հասցեագրված Կարյագինի նամակը, նա դարձյալ հաջողությամբ դուրս է գալիս թշնամու օղակումից և հասնում Շահ-Բուլաղից 20 վերստ հեռավորության վրա գտնվող իր հայրենի Կուսապատ գյուղը։ Կրտսեր եղբոր՝ Հակոբ Աթաբեկյանի միջոցով Վանին այդ նամակն ուղարկում է Ելիսավետպոլ, իսկ հաջորդ գիշերը վերադառնում գումարտակ, սովի մատնված զինվորների համար տանելով հաց և այլ սննդամթերքներ[22]։

Հուլսը կտրելով օժանդակ ուժեր ստանալուց և մերժելով անձնատուր լինելու մասին պարսկական հրամանատարության առաջարկը, հուլիսի 7-ի

---

22 *В. Потто*, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества *(այսուհետև՝ В. Потто*, Первые добровольцы Карабаха...), Тифлис, 1902, стр. 24.

գիշերը, Վանի Աթաբեկյանի ուղեկցությամբ, Կարյագինի գումարտակը թըշնամուց աննկատ հեռացավ Շահ-Բուլաղից և դուրս եկավ պարսկական զորաբանակի շրջապատումից։

Վանի Աթաբեկյանի ծառայությունների մասին գնդապետ Ասեևի տված 1811 թ. հունիսի 16-ի վկայականում ասված է. «Տրվում է սույնը Ղարաբաղի տիրույթի հայերից յուզբաշի Ավանեսին առ այն, որ նա իմ նախորդի՝ գնդապետ Կարյագինի, նույնպես և մինչև իմ ժամանումը... գնդապետ Լիսանևիչի հրամանատարության օրոք... Ինչպես և Կոտլյարևսկու օրոք, և ապա՝ 1807 թ. մինչև սույն 1811 թվականը, իմ օրոք, ի պաշտոնե նրա վրա դրված... հանձնարարություններ կատարել է իրրև անձնուրաց հայատակ՝ գերազանց եռանդով ու ջերմեռանդությամբ։ Շատ անգամ է նա իր ստորադրյալներին ուղարկել Պարսկաստանի խորքը՝ իմանալու թշնամու բոլոր մտադրությունների և ոտնձգությունների մասին և այդպիսով, ինձ միշտ բերել է ճշգրիտ տեղեկություններ։ Հատկապես ամենավտանգավոր ժամանակներին նա օժանդակում էր հրամանատարությանը՝ գրություններ տանելու և բերելու գործում»[23]։

Երևանյան առաջին և երկրորդ արշավանքների ժամանակ ռուսական զորքը շարունակ պարենի և կենսամթերքի պակաս էր զգում։ Դա պետք է բացատրել ոչ միայն ցարական բանակի հրամանատարության ապաշնորհությամբ, այլև Թիֆլիսից Երևան տանող ճանապարհների ու փոխադրամիջոցների անկանոնությամբ։ Բացի այդ, պատերազմական գործողությունների ամբողջ ընթացքում պարսկական զինված հրոսակախմբերը հետապնդում էին Թիֆլիսից Երևան շարժվող ռուսական գումարկներին և կողոպտում նրանց։ Այս ամենի հետևանքով պարենային ծանր վիճակի մեջ ընկած ռուսական զորքերի բախտը մեծապես մտահոգում էր տեղի հայերին։ Ժամանակակից Ե. Խուբովը գրել է. «Ռուսները պաշարեղենի պակաս էին զգում... Ձիերը մնում էին առանց կերի։ Հայերը անհանգստանում էին իրենց կրոնակիցների այդ դժբախտությունից»[24]։ Եվ չնայած պարսիկ խաները կողոպտել էին հայերին, բայց նրանք իրենց վերջին պաշարից անգամ բաժին էին հանում ռուս զինվորներին։ Նյութապես նրանց օգնելու ցանկությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ Երևանի բերդում որպես պատանդներ պահված հայերը սուրհանդակների միջոցով գաղտնի նամակներ էին գրում ռուսական կորպուսի հրամանատարությանը, հայտնում էջմիածնում և Երևանում պահած հացահատիկի սեփական հորերի տեղը և հոժարակամ այն դնում ռուսական զորքի տրամադրության տակ։

Ռուսական զորամասերին պարենային զգալի օգնություն ցույց տվեց նաև էջմիածնի վանքը։ Ըստ արխիվային փաստաթղթերի վկայության, վանքը միայն 1804 թ. Երևանի բերդը պաշարած ռուսական զորքերին իր միջոցներից տվել է՝ 2175 սոմար ցորեն, 1000 սոմար ալյուր, 300 սոմար ձավարեղեն[25] և այլ կենսամթերքներ։

---

23 Նույն տեղում, էջ 38—39։

24 *Е. Хубов*, Описание достопамятных происшествий в Армении с 1779 до 1809 года, СПб., 1811, стр. 60.

25 Տե՛ս Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 15, վավ. 85։

Արարատյան դաշտի, Շորագյալի ու Փամբակի գյուղացիները, նույնիսկ պատերազմական գործողությունների ամենաթեժ պահին դուրս էին գալիս դաշտ, հնձում հացահատիկի արտերը, հավաքում այգիների բերքը և առատ բաժին հանում ռուսական զորամասերին։ Շամշադինի, Բորչալուի, Ղազախի, Լոռու, Փամբակի և Շորագյալի շրջանների գյուղացիները մեծ սիրով ռուսական հրամանատարությանը տրամադրում էին սայլեր, ձիեր, եզներ և այլ փոխադրական միջոցներ՝ դեպի Երևան զենք, զինամթերք և պարեն փոխադրելու համար։ Շատ հայեր պատերազմի դաշտից հավաքում, իրենց տներն էին տանում ռուս վիրավոր զինվորներին և սպաներին ու հոգատարությամբ ապաքինում նրանց վերքերը։

Ռուսական զորքերին հայերի ցույց տված բազմակողմանի օգնությունը պետք է դիտել որպես հայ ժողովրդի ազատագրական շարժման արտահայտություններից մեկը։ Այդ միաժամանակ վկայում է, որ իրենց ազատագրության համար մարտնչող հայ ժողովրդական զանգվածները լուրջ ակնկալություններ ունեին Ռուսաստանից և ձգտում էին թշնամու դեմ իրենց մղած պայքարը միաձուլել ռուսական զենքի հաղթանակին։

4. ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Տիլզիտի պայմանագրի կնքումից հետո Թուրքիայում և Պարսկաստանում սկսեց փոխվել մեծ տերությունների ուժերի հարաբերակցությունը։ Հետզհետե ի չիք դարձավ 1807 թ. Ֆինկենշտեյնում կնքված պարսկա-ֆրանսիական դաշինքի նշանակությունը։ Անգլիան Թուրքիայում և Պարսկաստանում աստիճանաբար ուժեղացրեց իր ազդեցությունը։ Անգլո-թուրքական մերձեցումն ավարտվեց նրանց միջև «հաշտության և բարեկամության» պայմանագրի կնքմամբ (1809 թ. հունվարի 5)։

Ի հակակշիռ Ֆրանսիայի, Անգլիայի ազդեցությունը գնալով ուժեղացավ նաև Պարսկաստանում։ 1809 թ. մարտի 12-ին Անգլիայի և Պարսկաստանի միջև կնքվեց դաշնակցային «նախնական պայմանագիր»։ Այդ պայմանագրով Անգլիան Պարսկաստանին խոստանում էր ֆինանսական ու ռազմական օգնություն և հրահրում էր շարունակել Ռուսաստանի դեմ մղվող պատերազմը։ Անդրադառնալով այդ շրջանի անգլո-պարսկական հարաբերություններին, Վ. Ի. Լենինը գրել է. «...Անգլիան մի հատուկ դեսպան է ուղարկում Պարսկաստան. նա Պարսկաստանին օգնում է Ռուսաստանի դեմ նրա վարած պատերազմում»[26]։ Նույնիսկ անգլիական բուրժուական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները, որոնք միտումնավոր կերպով են ներկայացրել ռուս-պարսկական հարաբերությունների պատմությունը, երբեմն հարկադրված են եղել խոստովանել, որ Անգլիան ֆինանսական ու ռազմական օգնություն խոստանալով Պարսկաստանին՝ պատերազմի է հրահրել Ռուսաստանի դեմ[27]։ Այսպիսով, 1809 թ. հունվարին կնքված անգլո-թուրքական և 1809 թ. մարտին

---

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 889։

27 *P. Sykes*, A History of Persia, vol. II, London, 1951, էջ 405։

կնքված անգլո-պարսկական պայմանագրերը մեծապես ուժեղացրին Անգլիայի ազդեցությունը Թուրքիայում և Պարսկաստանում։

Անգլիայի վարած հակառուսական քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ Թուրքիան, խախտելով 1807 թ. օգոստոսին կնքած զինադադարը, 1809 թ. ապրիլի վերջերին վերսկսեց պատերազմը Ռուսաստանի դեմ։ Պարսիկներն իրենց հերթին 1809 թ. ամռանը մեծ չափով ակտիվացրին ռազմական գործողությունները։

Ստեղծված ծանր պայմաններում ռուսները փորձեցին վերսկսել բանակցությունները Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու համար (1810 թ. փետրվարին՝ Թավրիզում և ապրիլին՝ Ասկարանում)։ Սակայն անգլիական դիվանագետները դարձյալ միջամտեցին և ձախողեցին դրանք։ Ջենքի և զինամթերքի լրացուցիչ պաշարներ ուղարկելով Պարսկաստան, Անգլիան նրան մղեց հարձակողական նոր գործողությունների։ Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանը տասը հազարանոց զորքով շարժվում է դեպի Ախալքալաք, որպեսզի միանա թուրքական բանակին՝ Վրաստան ներխուժելու համար։ Պարսկական մի այլ բանակ շարժվում է Շորագյալ—Փամբակ, իսկ Աբաս-Միրզայի մեծաքանակ զորքը բռնեց Ղարաբաղի ճանապարհը։

Ջնայած Պարսկաստանին ցույց տված Անգլիայի ֆինանսական օգնությանը, տրամադրված զենքին ու զինամթերքին, ինչպես նաև պարսկական բանակը վարժեցնող անգլիական հրահանգիչների ջանքերին, ռազմական գործողությունները կրկին ընթացան հօգուտ ռուսական կորպուսի։ 1810 թ. ամռանը Պ. Ս. Կոտլյարևսկու զորագունդը գրավեց Մեղրին, ապա, հանկարծակի գրոհելով Աբաս-Միրզայի ճամբարը, նրան պարտության մատնեց և հարկադրեց զորքերը դուրս բերել Ղարաբաղից։ 1810 թ. սեպտեմբերի 5-ին գեներալ Պաուլուչչիի զորագունդը Ախալքալաքի մոտ սրընթաց գրոհով մխրճվեց Երևանի Հյուսեին-Ղուլի խանի զորաբանակի շարքերը, պարտության մատնեց նրան և ստիպեց նահանջել։ Շիրակում և Փամբակում սահմանապահ ռուսական զորքերը, հայկական աշխարհազորային ջոկատների հետ միասին, նույնպես հաջողությամբ ետ մղեցին պարսկական զորախմբերի բոլոր գրոհները։

Պարսկական բանակի 1810 թ. անհաջողություններից հետո Անգլիան էլ ավելի է ուժեղացնում օգնությունն իր դաշնակցին։ Պարսկաստան են ուղարկվում 12 հազար հրացան, 22 թնդանոթ և այլ սպառազինություններ[28]։ Անգլիական սպաները վերակազմում և վարժեցնում են պարսկական բանակը, նրան նախապատրաստում հարձակողական նոր գործողությունների համար։ Անգլիական դիվանագետները կապեր են հաստատում նաև Պարսկաստանում գտնվող վրաց արքայազն Ալեքսանդրի և Անդրկովկասում իշխանությունները կորցրած ու Պարսկաստանում ապաստանած խաների հետ, հրահրում նրանց ապստամբություններ սկսելու ռուսական բանակի թիկունքում։ Վրաստանի կառավարչապետ և զորքերի հրամանատար գեներալ Տորմասովը 1811 թ. ռազմական գործերի մինիստրին հաղորդում էր, որ ռուսական թիկունքում անդրկովկասյան զանազան մանր-մունր իշխաններին «...պարսկական կառավարությունը,

---

28 АКАК, т. IV, Тифлис, 1870, стр. 761, т. V, стр. 177.

անգլիական ոսկու օգնությամբ, դրդում է խռովությունների և ապստամբությունների...»[29]։ Այս ամենից ոգեշնչված, պարսկական բանակները 1811 թ. ամռանը նորից ներխուժեցին Ղարաբաղ, սակայն հանդիպելով ռուսական զորքերի և տեղի բնակչության համառ դիմադրությանը, նահանջեցին դեպի Նախիջևան։

Ռուսական զորքերը խոշոր հաջողության հասան նաև թուրքական ճակատում։ 1809 թ. նրանք գրավեցին Փոթին, 1810 թ. Սուխումը, իսկ 1811 թ. դեկտեմբերի 8 (20)-ին Կոտլյարևսկու զորագունդը կայծակնային գրոհով գրավեց Ախալքալաքի բերդը։ Ռազմական այս գործողությունների ժամանակ ռուսական զորքերին մեծ օգնություն ցույց տվեցին հայ, վրացի, ադրբեջանցի և աբխազ աշխարհազորայինները։

Ռուսները առավել խոշոր հաջողությունների հասան Դանուբյան ռազմաճակատում։ Մ. Ի. Կուտուզովի գլխավորությամբ ռուսական բանակը 1811 թ. հունիսի 22-ին Ռուշչուկի տակ հաղթական ճակատամարտ տվեց թուրքերի դեմ, ապա դիմեց ռազմական խորամանկության։ Կուտուզովը թողեց Ռուշչուկը և իր բանակը ետ քաշեց Դանուբի ձախ ափը, որպեսզի թուրքական գլխավոր ուժերը դուրս բերի Դանուբի ձախ ափը, ապա շրջապատի և ոչնչացնի։ Թուրքական բանակի գլխավոր հրամանատար Ահմադ-բեյը ռուսական բանակի անցումը Դանուբի ձախ ափը համարեց նրա թուլության արդյունք և, Ռուշչուկի ճամբարում թողնելով 20 հազար զորք, մնացած 35 հազարով անցավ Դանուբը՝ ռուսական բանակը ջախջախելու ակնկալությամբ։ Կուտուզովն անհապաղ ձեռնամուխ եղավ իր պլանի իրագործմանը։ Նա 20 հազար զորքով պաշարեց թուրքական գլխավոր ուժերը, իսկ 7 հազար արագաշարժ զորք գեներալ Մարկովի հրամանատարությամբ աննկատ անցկացրեց Դանուբի աջ ափը։ Հոկտեմբերի 2-ին Մարկովի զորաբանակը թիկունքից հարձակվելով թուրքական ճամբարի վրա, նրան կտրեց արտաքին աշխարհից։ Նոյեմբերի 26-ին թուրքական այդ խմբավորումը անձնատուր եղավ։ Կուտուզովն իր հերթին անցնելով հարձակման, ջախջախում է Դանուբի ձախ ափն անցած 35 հազարանոց թուրքական խմբավորումը։ Զրկվելով Դանուբյան բանակից, Թուրքիան այլևս անկարող էր շարունակել պատերազմը, ուստի հաշտության խնդրեց։

Ռուսական կառավարությունը նույնպես շահագրգռված էր հաշտություն կնքելու ինչպես Թուրքիայի, այնպես էլ Պարսկաստանի հետ, որովհետև ռուս-ֆրանսիական հարաբերությունները մեծապես լարվել էին և մոտալուտ էր նապոլեոնյան բանակի ներխուժումը Ռուսաստան։ Թուրքիայի և Պարսկաստանի հետ հաշտության կնքումը Ռուսաստանին հնարավորություն կտար իր բոլոր ուժերն ուղղել Ֆրանսիայի դեմ՝ դիմագրավելու նապոլեոնյան ագրեսիային։

Թուրքիայի հետ սկսված հաշտության բանակցությունները հաջողությամբ պսակվեցին։ 1812 թ. մայիսի 16 (28)-ին Բուխարեստում հաշտության պայմանագիր ստորագրվեց[30]։ Ռուս-թուրքական պետական սահման ճանաչվեցին

---

29 АКАК, т. IV, стр. 756.

30 Տե՛ս «Договоры России с Востоком, политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПб., 1869, стр. 49—58. (Այսուհետև՝ „Договоры России с Востоком...“);

Արևմուտքում՝ Պրուսիա, Անդրկովկասում՝ Ախուրյան գետերը։ Ռուսաստանին միացվեց Բեսարաբիան՝ Խոտին, Բենդեր, Աքքերման, Կիլյա և Իզմայիլ բերդերով, իսկ Կովկասում Ախալքալաքը վերադարձվեց Թուրքերին։ Բուխարեստի պայմանագրով իրավունք վերապահվեց ռուսական առևտրական նավերին ազատ նավարկելու Դանուբի ամբողջ հոսանքով։ Թուրքիան պարտավորվեց պահպանել Ցասսի պայմանագրով Մոլդավիային և Վալախիային տրված արտոնությունները, իսկ Սերբիային ինքնավարություն տալ ներքին կառավարման հարցերում։ Բուխարեստի պայմանագրի ստորագրմամբ Թուրքիան այլևս չէր կարող դաշնակցել Ֆրանսիային։

Հաշտություն կնքելու մասին ռուսների առաջարկությունն այլ ընդունելություն գտավ շահական կառավարության կողմից։ Օգտվելով ժամանակավոր դինադադարից, պարսկական զորքը ներխուժեց Թալիշի խանություն։ Չնայած դրան, Կովկասում ռուսական զորքերի նոր հրամանատար Ն. Ֆ. Ռտիշչևի առաջարկությամբ սեպտեմբերին Ասլանդուզ ամրոցում (Արաքսի աջ ափին) վերսկսվեցին հաշտության բանակցությունները։ Նապոլեոնի բանակների ներխուժումը Ռուսաստան և պատերազմի առաջին շրջանում նրանց հաջողությունները վերստին աշխուժացրին պարսիկներին։ Նրանք սկսեցին ուժեղացնել ճնշումը և ռուսներից պահանջեցին հաշտություն այն սահմաններով, որ եղել էին մինչև Վրաստանի Ռուսաստանին միանալը։ Բնական է, ռուսները չէին կարող ընդունել այդ պահանջը, և բանակցություններն ընդհատվեցին։

Ռուսական հրամանատարությունը հարկադրված եղավ դիմել վճռական հակագործողություններին։ 1812 թ. հոկտեմբերի 19/31-ին գեներալ Պ. Ս. Կոտլյարևսկու զորախումբը համարձակ անցում կատարելով Արաքսի աջ ափը՝ Ասլանդուզի մոտ պարտության մատնեց Աբաս-Միրզայի 30 հազարանոց բանակին, որը նախապատրաստվում էր ներխուժել Ղարաբաղ։ Դրան հաջորդեց 1812 թ. դեկտեմբերի 31-ի—1813 թ. հունվարի 1-ի ռուսական բանակի նոր, փայլուն հաղթանակը, որը նշանավորվեց Լենքորանի նորակառույց բերդի գրավումով։ Ռուսական զորքերի այս հաղթանակների հետ միասին պատերազմի նկատմամբ շահական կառավարության հետագա դիրքորոշման հարցում կարևոր նշանակություն ունեցավ և այն, որ 1812 թ. վերջերին ռուսական զինված ուժերը լիովին ջախջախեցին Նապոլեոնյան բանակը և երկիրն ազատագրեցին ֆրանսիական զավթիչներից, իսկ վերջինս մեծ չափով բարձրացրեց Ռուսաստանի ռազմական հեղինակությունը։

Այս ամենը շահին հարկադրեց հաշտություն խնդրել ռուսներից։ Հաշտության բանակցություններն սկսվեցին 1813 թ. սեպտեմբերին Ղարաբաղում՝ Գյուլիստան փոքրիկ բերդավանում։ Հոկտեմբերի 12/24-ին կնքվեց հաշտության պայմանագիր[31], որով և ավարտվեց 1804—1813 թթ. ռուս-պարսկական

Բուխարեստի պայմանագիրը ռուսների կողմից ստորագրեց Դանուբյան բանակի գլխավոր հրամանատար Մ. Ի. Կուտուզովը, իսկ Թուրքերի կողմից՝ մեծ վեզիր Ահմեդ փաշան։

31 Տե՛ս «Договоры России с Востоком...», стр. 208—214. Գյուլիստանի պայմանագիրը Ռուսաստանի կողմից ստորագրեց գեներալ Ն. Ֆ. Ռտիշչևը, իսկ Պարսկաստանի կողմից Միրզա Աբդուլ-Հասան խանը։

պատերազմը։ Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Դաղըստանի ու Վրաստանի, ինչպես և Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Ջանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին։ Վրաստանի և Հյուսիսային Ադրբեջանի հետ միասին, Արևելյան Հայաստանի այդ գավառների միացումով սկիզբ դրվեց նաև հայկական հողերի միացմանը Ռուսաստանին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼՈՒԾԻՑ

1. ՌՈՒՍ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1826 ԹՎԱԿԱՆԻՆ

Պարսկական կառավարող շրջանները, շարունակելով իրենց նվաճողական քաղաքականությունը, հարմար առիթի էին սպասում չեղյալ համարելու Գյուլիստանի պայմանագիրը և վերսկսելու պատերազմը Ռուսաստանի դեմ՝ Անդրկովկասը զավթելու համար։

Անգլիան, օգտվելով պարսկական արքունիքում տիրող նվաճողական տրամադրություններից, Պարսկաստանում հետզհետե աշխուժացնում էր իր հակառուսական քաղաքականությունը։ 1814 թ. նոյեմբերի 25-ին Անգլիան Պարսկաստանի հետ կնքում է նոր՝ «վերջնական» դաշնակցային պայմանագիր, որը գրականության մեջ հայտնի է «Թեհրանի պայմանագիր» անունով։

Անգլո-պարսկական 1814 թ. պայմանագիրը աներկբայելիորեն ուղղված էր Ռուսաստանի դեմ, ակնարկում էր Գյուլիստանի պայմանագրով սահմանված ռուս-պարսկական սահմանագծի վերանայման անհրաժեշտությունը և վկայում Պարսկաստանում Անգլիայի ազդեցության ուժեղացումը։

Սուլթանական Թուրքիան նույնպես Անդրկովկասը զավթելու պլաններ ունենալով, թշնամաբար է ընդունում Գյուլիստանի հաշտության պայմանագիրը և Անգլիայի հետ միասին Պարսկաստանին հրահրում Ռուսաստանի դեմ։ Անգլիան ձգտում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել մերձավոր արևելյան, բալկանյան և միջին ասիական պրոբլեմներից, ապա նաև ժամանակ շահել՝ վերակազմելու և վերազինելու թուրքական բանակը՝ հարձակողական ակտիվ գործողությունների համար։

Ցարիզմն իր հերթին, օգտվելով ռուս-պարսկական առաջին պատերազմում ձեռք բերած հաջողություններից, հետևողականորեն շարունակում է իր նվաճողական քաղաքականությունը, ամեն ջանք գործ դնում հաստատորեն ամրապնդվելու Անդրկովկասում։ Դրա համար նա ձգտում էր գրավել նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները և ռուսական պետական սահմանը հասցնել մինչև Արաքս գետը։ Որպես օրվա հրատապ խնդիր, նա կամենում էր Պարսկաստանի հետ առժամանակ պահպանել խաղաղ հարաբերու-

թյուններ և իր ուշադրությունը բևեռել Թուրքիայի վրա, որովհետև Արևելյան հարցը գնալով սրվում էր։ Ռուս-պարսկական հարաբերությունների կարգավորման նպատակով Կովկասի կառավարչապետ, Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար գեներալ Ա. Պ. Երմոլովի գլխավորությամբ 1817 թ. ապրիլի վերջին Պարսկաստան մեկնեց հատուկ դեսպանություն (կազմված 203 մարդուց)[1]։ Ա. Երմոլովը սկզբում բանակցություններ էր վարում Թավրիզում՝ Աբաս-Միրզայի, ապա Սուլթանիեում՝ Ֆաթհ-Ալի շահի հետ։ Ա. Երմոլովի առաքելության նպատակն էր Թավրիզում ունենալ մշտական դիվանագիտական միսիա, իսկ Ռեշտում՝ առևտրական գրասենյակ, դրականորեն լուծել Պարսկաստանում գտնվող ռուս ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու հարցը, ստանալ շահի հավաստիացումները՝ ռուս-թուրքական պատերազմի դեպքում չեզոքություն պահպանելու մասին, ապա նաև ջանալ, որ Պարսկաստանում թուլանա Անգլիայի և ուժեղանա Ռուսաստանի ազդեցությունը։ Այս ամենի հետ, Երմոլովը հանձնարարություն ուներ նաև կարգավորելու Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև առաջացած տերիտորիալ-սահմանային վիճելի հարցերը։

Աբաս-Միրզան և Ֆաթհ-Ալի շահը, մի կողմ թողնելով Երմոլովի դեսպանությանը հետաքրքրող հիմնական հարցերը, պահանջում էին վերանայել Գյուլիստանի պայմանագրով նախատեսված ռուս-պարսկական սահմանագիծը և, մասնավորապես, Պարսկաստանին վերադարձնել Թալիշն ու Ղարաբաղի մի մասը։ Մերժելով պարսիկների այդ պահանջը, Երմոլովն իր հերթին հարց է հարուցում կայսրությանը վերադարձնել Մեղրիի գավառի այն մասը, որ ռուսական բանակը գրավել էր մինչև Գյուլիստանի հաշտությունը։ Բանակցություններն ընթացան ռուսների համար չափազանց աննպաստ ու լարված պայմաններում։ Երմոլովի գործադրած ջանքերը դրական արդյունքի չհանգեցին, և նա ձեռնունայն վերադարձավ Թիֆլիս։ Ա. Երմոլովի դիվանագիտական քայլը անհաջողության մատնվեց, որովհետև պարսկական արքունիքում իշխում էին զավթողական ու ռևանշիստական տրամադրություններ ունեցող տարրերը և քաղաքական թելադրող դերը գրաված անգլիական դիվանագետները։

1825 թ. վերջերից պարսկական բանակներն աստիճանաբար մոտենում են ռուսական սահմանին, ունենալով անգլիական ռազմական խորհրդականների ձեռքով մշակված՝ Անդրկովկաս ներխուժելու ռազմա-ստրատեգիական պլան։ 1826 թ. սկզբին անգլիացիները պարսկական արքունիք հասցրին դեկաբրիստների ապստամբության լուրը։ Նրանց հորդորանքները շահին բերին այն համոզման, որ հասել է հարմար պահը՝ հրաժարվելու Գյուլիստանի պայմանագրից և վերստին նվաճելու Անդրկովկասում կորցրած հողերը։ Այդ մասին ռուս-պարսկական երկրորդ պատերազմի մասնակից գեներալ Դենիս Դավիդովը գրում է. «Դեկտեմբերի 14-ի օրը Պետերբուրգում էր գտնվում անգլիական գնդապետ Շիլը, որը վայելում էր Աբաս-Միրզայի անսահմանափակ վստահությունը։ Հետևյալ օրը Շիլը մեկնեց Պետերբուրգից։ Ժամանելով Թավրիզ, նա հավատացնում էր Աբաս-Միրզային, թե Ռուսաստանում երկպառակտ-

---

[1] *А. Ермолов*, Алексей Петрович Ермолов, СПб., 1912, стр. 84—88.

չական պատերազմ է բռնկվել երկու կայսր-եղբայրների միջև... Շիլի կարծիքով պարսիկների համար եկել էր ամենանպաստավոր պահը՝ Վրաստան ներխուժելու համար, ուր ռուսների ուժերը խիստ թույլ էին։ Պարսիկները շարժվեցին... Աբաս-Միրզան, առանց նախապես պատերազմ հայտարարելու, ներխուժեց Փամբակի և Շիրակի մարզերը»[2]։

Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու շահի որոշմանը նպաստեց նաև Ռուսաստանի հարաբերությունների սրումը Թուրքիայի ու Արևմտյան մեծ տերությունների հետ, ինչպես նաև Կովկասում լեռնականների սկսած շարժումը։ Ռուս-պարսկական հարաբերությունների այդ լարված օրերին՝ 1826 թ. փետրվարին Պետերբուրգից Թեհրան է մեկնում Նիկոլայ Առաջինի լիազոր ներկայացուցիչ իշխան Ա. Ս. Մենշիկովը։ Նրան հանձնարարված էր շահին հավաստիացնել, որ ռուսական կառավարությունը ցանկանում է Պարսկաստանի հետ բարի-դրացիական հարաբերություններ ունենալ և խաղաղ ճանապարհով կարգավորել սահմանային ու տերիտորիալ վիճելի հարցերը։ Սակայն Աբաս-Միրզան և Ֆաթհ-Ալի շահը Ա. Մենշիկովին ոչ միայն շատ սառը ընդունեցին, այլև նրան պահում էին յուրօրինակ տնային կալանքի տակ, ձախողելով բանակցություններ վարելու նրա բոլոր փորձերը։ Ա. Մենշիկովը Պարսկաստանում ականատես եղավ պատերազմի տենդագին նախապատրաստություններին և, համոզվելով, որ աննպատակ է Պարսկաստանում իր մնալը, հուլիսի 5-ին շահից պահանջեց իրեն թույլ տալ վերադառնալու Ռուսաստան։

1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարդարի զինված ուժերը Ապարանում հարձակվեցին Միրաքի ռուսական պահակակետի վրա, իսկ հուլիսի 17/18-ին պարսկական 60 հազարանոց բանակը Աբաս-Միրզայի հրամանատարությամբ ներխուժեց Ղարաբաղ և հուլիսի 25-ին պաշարեց Շուշի բերդը[3]։ Աբաս-Միրզան գլխավոր ուժերով մնալով Շուշիի տակ, 12 հազար մարդուց կազմված մի զորաբանակ շարժեց դեպի Ելիսավետպոլ (Գյանջա)։ Նա ծրագրում էր գրավել Շուշին ու Ելիսավետպոլը, ամրապնդել իր բանակի թիկունքը, ապա պարսկական միացյալ ուժերով գրոհել Թիֆլիսի վրա։ Նույն օրերին Երևանի Հյուսեին-Ղուլի խանի և նրա եղբայր Հասան խանի զինված ուժերը, կոտրելով ռուս փոքրաթիվ սահմանապահների ու հայ աշխարհազորայինների դիմադրությունը, ներխուժեցին Փամբակի և Շիրակի գավառները։ Իսկ 25 հազար հեծյալներից կազմված պարսկական մի այլ բանակ էլ Թավրիզից շարժվեց դեպի Մուղանի հարթավայրը՝ խնդիր ունենալով գրավել Հյուսիսային Ադրբեջանի գավառները և ներխուժել Դաղստան։ Օգտվելով անակնկալ հարձակման առավելությունից, պարսկական բանակներին հաջողվեց գրավել Ելիսավետպոլ, Շամախի, Նուխի քաղաքները, Թալիշի, Շաքիի, Շիրվանի և Շորագյալ-Փամբակի որոշ գավառներ։ Այսպես սկսվեց **ռուս-պարսկական երկրորդ պատերազմը (1826—1828)**։

Պարսկական բանակները նորից ավերեցին հայկական տասնյակ գյուղեր, հազարավոր հայեր սրի քաշվեցին, իսկ շատերն էլ գերվեցին։ 1826 թ.

---

2 Դեկ Դավիդով, Ռազմական հուշեր, Երևան, 1942, էջ 532։

3 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳՌՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 4290, թ. 53—54։

ամռանը Շիրակի ու Փամբակի գավառներում պարսկական զորքերի կատարած ավերածությունների ու ոճրագործությունների մասին Վ. Պոտտոն գրում է. «Այսպես, վրա հասավ 1826 թվականի ամառը, երբ պարսկական հրոսակախմբերն անսպասելի կերպով, առանց պատերազմ հայտարարելու, ներխուժեցին մեր սահմանները և ամպրոպը նախ ճայթեց անպաշտպան հայ բնակչության գլխին։ Երևանի խանի առաջին հարվածը կրեցին Փամբակի և Շորագյալի շրջանները։ Գյուղերն ամայացրին, երեխաների ու կանանց մեծ մասը տանջամահության ենթարկեցին, հարյուրավոր ընտանիքներ գերության քշեցին»[4]։ Շիրակում Հասան խանի կատարած չարագործությունների, հայկական գյուղերի ավերման, բնակչության զանգվածային գերեվարության ու ոչնչացման ցնցող պատկերները սրտի կսկիծով ու խորը ցասումով է պատկերել Խ. Աբովյանն իր «Վերք Հայաստանիկ» վեպում։ Նկարագրելով Շիրակում Փոքր Ղարաքիլիսայի աղետը, նա գրում է. «Խլղարաքիլիսեն մխումը կորավ. հենց բռնեա՝ երկինքն հանկարծ փուլ էկավ, ամպ ու կայծակով քանդեց սար ու ձոր. էսպես էր նրանց խեղճ հալը էս օր։ Տավարը մեկ կողմից քշեցին, տարան. գեղը մեկ կողմից կրակ տվին, առան»[5]։ Փոքր Ղարաքիլիսայի աղետավոր բախտին արժանացան նաև Ապարանի, Շիրակի, Փամբակի, Զանգեզուրի և Ղարաբաղի բազմաթիվ գյուղեր։

Սակայն պարսկական խաներն անկարող եղան ընկճել հայ ժողովրդի աղատագրական ոգին։ Ամենուրեք կազմակերպելով աշխարհազորային ջոկատներ ու միանալով ռուսական սահմանապահ զորքերին, հայերը հերոսաբար մարտնչում էին թշնամու բանակների դեմ։ Պատերազմի առաջին շրջափուլում (1826 թ. հուլիս—օգոստոս) Կովկասյան կորպուսի հրամանատարությունը հարկադրված եղավ դիմել ակտիվ պաշտպանության, մինչև Ռուսաստանից կստանար լրացուցիչ ուժեր՝ հակահարձակման անցնելու համար։ Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու նպատակով, ռուսական սահմանապահ կայազորները տեղական բնակիչներից կազմված աշխարհազորային ջոկատների օգնությամբ դիմում են ռազմաստրատեգիական կարևորության ներկայացնող բերդերի ու անցումների պաշտպանությանը։

Այդպիսի կարևոր նշանակություն ունեցող ամրություն էր Շուշիի բերդը։ Տեղի ռուսական կայազորը (բաղկացած 1700 զինվորից) և շրջակայքի 22 հայկական գյուղերից նրան օգնության եկած 1500 աշխարհազորայիններ ձեռնամուխ եղան Շուշիի հերոսական պաշտպանությանը[6]։ Ավելի քան վեց շաբաթ բերդը պաշտպանվեց Աբաս-Միրզայի մեծաքանակ բանակի անընդմեջ հարձակումներից։

Շուշիի պաշտպանության գործում հայերի խաղացած դերը շատ բարձր է գնահատել բերդապահ կայազորի պետ գնդապետ Ռեուտը։ Գեներալ Երմոլովին ներկայացրած իր զեկուցագրերից մեկում նա գրել է. «Բնդրդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունը արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան բազմաթիվ գրոհների, ետ մղեցին

4 *В. Потто*, Первые добровольцы Карабага..., стр. 58.

5 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. III, էջ 99։

6 *ՏԿ՚ս ՍՍՀՄ ԿՈՒՊՄԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4291, թ. 61։*

Թշնամուն խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա էր հասել կատարյալ սովը»[7]։

1826 թ. հուլիսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ը տևած Շուշու հերոսական պաշտպանությունը ունեցավ այն կարևոր նշանակությունը, որ իրեն գամեց հակառակորդի գլխավոր ուժերը, իսկ դա հնարավորություն ընձեռեց ժամանակ շահել, կենտրոնացնել կովկասյան կորպուսի ցրված ուժերը, ընդացուցիչ օգնական ուժեր ստանալ Ռուսաստանից և ջախջախիչ հարված հասցնել Անդրկովկաս ներխուժած պարսկական բանակներին։

Եթե Շուշի բերդի պաշտպանությունը փակեց Աբաս-Միրզայի բանակի ճանապարհը Ղարաբաղից դեպի Կովկասի վարչական կենտրոնը՝ Թիֆլիս, ապա նույն խնդիրը մյուս ճակատում հաջողությամբ կատարեցին Շիրակի և Լոռի—Փամբակի ռուսական կայազորները և նրանց օգնության եկած հայ աշխարհազորային ջոկատները՝ Երևանի սարդարի և նրա եղբոր՝ Հասան խանի զորքերի դեմ մղած համատեղ պաշտպանական մարտերում։ Հասան խանը, կենտրոնացնելով խոշոր ուժեր, ձգտում էր գրավել Արևելյան Շիրակը, Լոռի—Փամբակը և շարժվել դեպի Թիֆլիս։ 1826 թ. հուլիս—օգոստոս ամիսներին արյունալի մարտեր տեղի ունեցան Շիրակում։ Դրանցից հատկապես նշանավոր էին Փոքր Ղարաքիլիսայի (Խղղարաքիլիսա, այժմ Ազատան) համար մղված մարտերը։ Հասան խանի հրոսակախմբերից հայրենի դյուղը պաշտպանելու համար փոքր ղարաքիլիսցիները զինվեցին ինչով կարող էին և, միացած ռուսական փոքրաթիվ ջոկատին, մինչև արյան վերջին կաթիլը հերոսաբար կռվեցին Թշնամու դեմ։ Այդ մասին Խ. Աբովյանը գրում է. «...քաջ Հայկազունք սիրտ սրտի տվին... իրար կանչեցին... ընկերք՝ մի վախիք, դուք ղոշաղ կացեք, քամակ քամակի տվեք, միացեք, թող՝ մեկ հող, մեկ սուր փըրթի, մեզ թաղի, մինչև եդին մարդն, մեկն էլա չփախչի»[8]։ Այսպիսի վճռականությամբ ու հաստատակամությամբ նրանք ոտքի կանգնեցին Թշնամու դեմ։

Հասան խանի զորաջոկատները մի քանի անգամ գրոհեցին գյուղի վրա, բայց, հանդիպելով հայ և ռուս պաշտպանների դիմադրությանը, կրելով խոշոր կորուստներ՝ ետ շպրտվեցին։ Հակառակորդին հաջողվեց Փոքր Ղարաքիլիսան գրավել միայն այն ժամանակ, երբ անհավասար մարտում ընկան գյուղի հայ և ռուս վերջին քաջարի պաշտպանները։

Լոռի—Փամբակի և Շամշադինի—Ղազախի պաշտպանական մարտերում ալքի ընկավ Գրիգոր Մանուչարյանի 500 հեծյալներից կազմված աշխարհազորային ջոկատը, որը մարտական հարուստ փորձ էր կուտակել դեռևս ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ պարսիկ զավթիչների դեմ մղած հերոսամարտերում։ Իսկ պատերազմի երկրորդ էտապում, երբ կովկասյան կորպուսն անցավ հակահարձակման, հայկական աշխարհազորային այդ ջոկատը մարտական ակտիվ գործողություններ է ծավալում սկսած Ղազախ—Շամշադինից մինչև Սևանի ափերը։ Նա պարսկական հորդաների դեմ շարունակեց իր պայքարը մինչև պատերազմի ավարտը։

---

7 *В. Потто,* Первые добровольцы Карабага..., стр. 62.

8 *Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 99։*

Հակառակորդի դեմ ռազմական գործողություններ մղելուց բացի, Գ. Մանուչարյանի գլխավորած ջոկատի օգնությունը կովկասյան հատուկ կորպուսին արտահայտվում էր նաև այլ ձևերով։ Հարկ եղած դեպքում նա հաջողությամբ պաշտպանում էր Թիֆլիս—Երևան ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհները, կապավորի դեր խաղում ռուսական զորամասերի և գլխավոր հրամանատարության միջև, իսկ երբ Հայաստանում գործող զորամասերը նեղվում էին պարենի պակասից, Գ. Մանուչարյանի ջոկատն իր վրա էր վերցնում նրանց համար պարեն հայթայթելու դժվարին գործը։

Ստրատեգիական լուրջ հաջողությունների հասնելու համար պարսկական բանակները չկարողացան օգտագործել ոչ իրենց թվական գերակշռությունը, ոչ էլ հանկարծակի հարձակման առավելությունները։ Կովկասյան հատուկ կորպուսի զորամասերը և տեղական ժողովուրդներից ձևավորված աշխարհազորային ջոկատները, սերտ համագործակցելով, կարողացան կասեցնել պարսկական զորքերի առաջխաղացումը և ձախողել նրանց ռազմա-ստրատեգիական ծրագրերի իրականացումը։

1826 թ. օգոստոսի վերջերին Կովկասյան հատուկ կորպուսը Ռուսաստանից օգնական ուժեր ստացավ։ Կովկաս ուղարկվեցին 20-րդ հետևակային և 2-րդ ուլանական դիվիզիաները՝ ձիաքարշ հրետանիով, ու մի քանի կազակային գնդեր։ Կովկասյան կորպուսի շարքերը համալրեցին նաև 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում դեկաբրիստների ապստամբությանը մասնակցած գվարդիական գնդերի վաշտերից ձևավորված լեյբ-գվարդիական հավաքական գունդը (կազմված 1287 մարդուց, որից 38-ը սպաներ էին), Չերնիգովյան գնդի ապստամբությանը մասնակցած 1527 զինվորները, դեկաբրիստների գործով մեղադրված շուրջ յոթ տասնյակ աստիճանազրկված դեկաբրիստ սպաներն ու նրանց «ամեղսակիցները»։ Կովկասյան հատուկ կորպուս ուղարկվեցին նաև մի շարք գեներալներ ու բարձրաստիճան սպաներ։ Զգալիորեն փոխվեց կռվող ուժերի հարաբերակցությունը, որը Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար գեներալ-ադյուտանտ Ա. Երմոլովին և նրա օգնական գեներալ-լեյտենանտ Վ. Մադաթովին[9] հնարավորություն տվեց հարձակում սկսել Թշնամու դեմ։

1826 թ. սեպտեմբերից ռուս-պարսկական պատերազմը թևակոխեց իր երկրորդ շրջափուլը, որը նշանավորվեց Կովկասյան հատուկ կորպուսի զորամասերի մղած մի շարք հաղթական ճակատամարտերով։ Դրանցից առաջինը Շամքորի նշանավոր ճակատամարտն էր, որը վճռական բեկում առաջ բերեց պատերազմական գործողությունների մեջ՝ հօգուտ Կովկասյան հատուկ կորպուսի։ Ռուսական մի զորագունդ, կազմված 2000 զինվորներից, գեներալ Վ. Մադաթովի հրամանատարությամբ, սեպտեմբերի 3-ին Շամքոր գետի ափին չախչախեց Ամիր-խանի հրամանատարությամբ գործող պարս-

9 Վալերիան (Ռոստոմ) Մադաթովը ծնվել է Ղարաբաղում, Վարանդայի Ավետարանոց (Ջանախչի) գյուղում։ Նա աչքի ընկավ դեռևս 1812 թ. Հայրենական պատերազմում։ Վ. Մադաթովը 1812 թ. Հայրենական պատերազմի սկզբում ծառայում էր 3-րդ բանակում՝ փոխգնդապետի աստիճանով, իսկ ռուսական բանակի 1813—1814 թթ. արտասահմանյան արշավանքից վերադարձավ գեներալ-մայորի աստիճանով։

կական 10 հազարանոց բանակը և ետ գրավեց Ելիսավետպոլը։ Լսելով Ամիրխանի պարտության լուրը, Աբաս-Միրզան շուրջ 25 հազարանոց բանակով Քյուրակ-չայից շարժվեց Ելիսավետպոլ, նպատակ ունենալով ջախջախել ռուսական կորպուսի գլխավոր ուժերը և առաջանալ դեպի Թիֆլիս։ Ելիսավետպոլի մոտ պարսկական բանակի դեմ դուրս եկավ գեներալ Պասկևիչի հրամանատարությանը հանձնված մի հատուկ զորաբանակ, որի կազմում էր նաև լեյբ-գվարդիական հավաքական գունդը։ Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց Աբաս-Միրզայի ջախջախիչ պարտությամբ։ Ռազմի դաշտում թողնելով մոտ 2000 սպանված, պարսկական բանակը փախուստի դիմեց։ Ռուսներն այդ ճակատամարտում վերցրին ավելի քան 1000 գերի, գրավեցին երկու թնդանոթ, չորս զինադրոշ և այլ ռազմավար։

Շամքորի և Ելիսավետպոլի ճակատամարտերը վճռական նշանակություն ունեցան պատերազմական գործողությունների հետագա ամբողջ ընթացքի համար։ Կորցնելով մարտական հիմնական ուժերը, հակառակորդն այլևս անկարող եղավ լուրջ դիմադրության։ Կովկասյան կորպուսի հարձակողական գործողությունների ծավալման շնորհիվ պարսկական ջախջախված բանակները սեպտեմբերի վերջին դուրս մղվեցին Ղարաբաղից և շպրտվեցին Արաքսի աջ ափը։

Նույն ժամանակամիջոցում ռուսական կորպուսի զորամասերը հաղթական մարտեր են վարում նաև Փամբակում, Շիրակում և Ապարանում։ Այդ դավառների ազատագրումը Երևանի սարդարի զորքերից իրագործեց 1812 թ. Հայրենական պատերազմի քաջակորով պարտիզան-հրամանատար գեներալ-մայոր Դենիս Դավիդովի զորագունդը։ Այն կազմված էր երեք հետևակային գումարտակներից ու 900 հեծյալներից և ուներ 12 դաշտային թնդանոթ։ Դուրս գալով Ջալալօղլուց (Ստեփանավան), սեպտեմբերի 19-ին զորագունդը հասավ Փամբակ և դիմեց հարձակողական մարտերի։ Սեպտեմբերի 20-ին Դավիդովի զորամասը թշնամուց ետ խլեց Համամլու գյուղը։ Հակառակորդը, խոշոր կորուստներ կրելով, նահանջեց դեպի Ապարան։ Սեպտեմբերի 21-ին Դենիս Դավիդովի զորագունդը Ապարանում, Միրաք գյուղի մոտ, հաղթական ճակատամարտ մղելով Հասան խանի չորս հազար հեծյալների դեմ, վերջիններիս հարկադրեց նահանջել դեպի Երևան։ Հյուսեին-Ղուլի խանը, լսելով Միրաքի ճակատամարտում եղբոր կրած պարտության լուրը, շտապեց հեռանալ Սևանի հյուսիսային ափերից և ապաստանել Երևանի բերդում։ Ոգևորված այդ հաջողություններով, Դենիս Դավիդովը առաջ է շարժվում, նպատակ ունենալով սրընթաց գրոհով գրավել նաև Երևանը։ Սակայն սեպտեմբերի վերջերին, կես ճանապարհին, Դավիդովն ստացավ գեներալ Երմոլովի հրամանը՝ վերադառնալ Ջալալօղլի։ Նա միաժամանակ հայտնում է, որ Երևանյան արշավանքը հետաձգվում է մինչև 1827 թ. գարունը, որովհետև արդեն ձմեռնամուտ է և Երևանի գրավման համար անհրաժեշտ նախապատրաստությունները դեռևս չեն ավարտվել։

Ջնայած թշնամու ուժերի գերակշռությանը, Կովկասյան կորպուսին հաջողվեց 1826 թ. աշնան վերջերին Գյուլիստանի պայմանագրով ճանաչված Անդրկովկասի ռուսական տիրապետության սահմանները լիովին մաքրել

պարսկական բանակներից և ձախողել Անդրկովկասը զավթելու նրանց պլանները։ Այդ գործում նշանակալից ներդրում արեցին անդրկովկասյան ժողովուրդները։

1826 թ. աշնանը գեներալներ Երմոլովի, Մադաթովի, Պասկևիչի, Դենիս Դավիդովի զորաբանակների կազմում անմոռաց քաջության ու խիզախության օրինակներ ցույց տվեցին հայ, վրաց և ադրբեջանական աշխարհազորային ջոկատները։ Ռուսական կորպուսի հակահարձակողական գործողություններին լայնորեն մասնակցեցին տակավին պատերազմի սկզբում ձևավորված և պաշտպանողական ծանրը մարտերի բովով անցած հայկական աշխարհազորային ջոկատները։ Սրանցից մեկն էր էրզրումցի քաջակորով և. րիտասարդ Մարտիրոս Վեքիլյանի գըլխավորած հեծյալ ջոկատը, որը մտնում էր Դենիս Դավիդովի զորագնդի մեջ։ Այդ ջոկատն իր բարձր մարտունակությամբ աչքի ընկավ Գյումրիի մոտ տեղի ունեցած մարտերում։ Վեքիլյանի ջոկատի աշխարհազորայիններն իրենց սխրանքներով հատկապես փայլեցին Միրաքի նշանավոր ճակատամարտում։



Դենիս Դավիդով

Այնուհետև, հայկական այդ ջոկատը 1827 թ. արիաբար մասնակցեց Հայաստանում Կովկասյան կորպուսի մղած մի շարք ճակատամարտերին։ Մ. Վեքիլյանի ինչպես 1826, այնպես էլ 1827 թթ. ծառայությունների մասին Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Պասկևիչը 1827 թ. մայիսի 30-ին իր զեկուցագրերից մեկում գրում էր. «Մարտիրոս Վեքիլովն անցյալում երկար ժամանակ օգտագործվելով ըստ ծառայության զանազան հանձնարարությունների համար, անցյալ՝ 1826 թ. գտնվում էր Գյումրիում, գընդապետ Ֆրեդերիքսի մոտ, որտեղ շատ ընդհարումների ժամանակ գերազանց քաջություն ցուցաբերեց։ Ապա լինելով Ղարաքիլիսայի և Ջալալօղլու զորքի մեջ, որպես հայկական հեծելազորի հրամանատար, աննկուն ջանքերով պաշտպանեց սահմանը և, թշնամուն Ջալալօղլուց ու Միրաքի մոտ հետապնդելու ժամանակ, գտնվում էր գեներալ-մայոր Դավիդովի ջոկատում։ Ընթացիկ տարում գտնվում էր գեներալ-ադյուտանտ Բենկենդորֆի մոտ և օգտագործվում էր թշնամու հետ բանակցություններ վարելու համար. Հասան խանի պարտության ժամանակ գտնվում էր Սարդարապատում. մասնակցում էր մայիսի 9-ի մարտերին։ Մայիսի 21-ին գտնվելով զորային ավագ Վերբիցկու էքսպեդիցիայում՝ Կրխբուլաղում, համոզեց ձորակում ամրացած և ի-

բենց շրջապատած կազակների վրա ուժեղ կրակ բացած 90 պարսիկներին անձնատուր լինել»[10]։

Հայկական աշխարհազորային ջոկատի քաջակորով հրամանատար Մ. Վեքիլյանն իր «ցուցաբերած գերազանց հերոսության» համար արժանացավ պարգևի և ստացավ պրապորշչիկի աստիճան։

1826 թ. Շամքորի նշանավոր ճակատամարտում գեներալ-լեյտենանտ Վ. Մադաթովի զորաբանակում բազմաթիվ հայ աշխարհազորայիններ աչքի ընկան իրենց անձնազոհությամբ և հերոսությամբ։ Նրանք շարունակեցին մնալ Մադաթովի զորաբանակում և մասնակցություն ունեցան Ղարաբաղում մղված մարտերին։

Շիրակում ու Փամբակում, Զանգեզուրում ու Ղարաբաղում և այլուր թշնամու դեմ անձնազոհ կերպով կռվում էին նաև շատ հայ կանայք։ Երկար ժամանակ Փամբակ—Լոռիում ժողովրդի մեջ տարածված ավանդազրույցը պատմում է Հասան խանի հրոսակախմբերի դեմ համամլեցի գեղջկուհի Մանուշակի մղած անձնազոհ կռվի և հերոսական մահվան մասին։ Ղարաբաղում թշնամու դեմ մղված մարտերում ցուցաբերած հերոսության համար համաժողովրդական սիրո ու հարգանքի արժանացավ հայ գեղջկուհի Հաթայիին։ Վ. Պոտտոն նկարագրելով 1826 թ. Ղարաբաղի հայերի անձնուրաց պայքարը թշնամու դեմ, գրում է. «...Նույնիսկ նրանց կանայք հանդիսանում էին հերոսուհիներ, և նրանցից մեկի, Հաթայիի անունը, գիտեր այն ժամանակ ամբողջ Ղարաբաղը[11]»։

Այսպիսով, որքան մոտենում էր Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական խաների լծից, այնքան ավելի էր զանգվածային դառնում և ուժեղանում հայերի օգնությունը ռուսական բանակներին։ Ընդհանուր թշնամու դեմ մղված կռիվներում կոփվում ու ամրապնդվում էր հայ աշխարհազորայինների ու ռուս զինվորների զինակցությունը։

2. ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարությունը 1826—1827 թթ. ձմռանը լարված նախապատրաստություն էր տեսնում Երևանի վրա արշավելու համար։ Մշակվում և ռուսական բանակի գլխավոր շտաբի կողմից հաստատվում է երևանյան արշավանքի ռազմական գործողությունների պլանը։ 1827 թ. գարնան սկզբներին ավարտվում են արշավանքի նախապատրաստությունները։ Սակայն, գեներալ Երմոլովին չվիճակվեց գլխավորել Երևանյան արշավանքը։ Դեկաբրիստների ապստամբությունից հետո Նիկոլայ I-ը անվստահությամբ էր վերաբերում Երմոլովին և առիթներ էր որոնում նրան ավելի վստահելի մարդով փոխարինելու համար[12]։ Եվ ահա 1827 թ. մարտի 28-ին Նիկոլայ I-ի հրամանով Երմոլովը ազատվում է Կովկասի կառավարչապետի և Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարի պաշտո-

10 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 6218, թ. 19։

11 В. Потто, նշվ. աշխ., էջ 64։

12 М. В. Нечкина, А. С. Грибоедов и декабристы, М., 1947, стр. 187, 189, 202.

նից ու նրա փոխարեն նշանակվում է գեներալ-ադյուտանտ Ի. Ֆ. Պասկեվիչը։

Տեղեկություն ունենալով ռուսական կորպուսի՝ Երևանյան արշավանքի նախապատրաստությունների մասին, Ֆաթհ-Ալի շահը և Աբաս-Միրզան անգլիացիների օգնությամբ արագորեն վերակազմում ու վերազինում են իրենց բանակները և պատրաստվում դիմադրելու ռուսներին։ Դիմադրության էր նախապատրաստվում նաև Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանը, որն իր իշխանության տարիներին (1807—1827) մեծ ազդեցություն էր ձեռք բերել պարսկական կառավարող շրջաններում և դարձել էր լիովին ինքնիշխան[13]։ Հայերին համարելով ռուսների դաշնակից, նա առավել սաստկացրեց հալածանքներն ու բռնությունները։ Պատերազմի ժամանակ խանն իր տիրապետության տակ եղած հայերին զանգվածորեն տեղահան արեց և քշեց Պարսկաստանի խորքերը, իսկ շատերին էլ փակեց Երևանի բերդում՝ կողոպտելով նրանց ունեցվածքը, ավերելով պապենական բնակավայրերը։

Երևանի սարդարը համառ ու երկարատև պաշտպանության վճիռ ընդունելով, արագորեն ամրացնում է Երևանի ու Սարդարապատի բերդերը, նրբանց կայազորները համալրում Պարսկաստանից ուղարկված սարբազների թարմ ուժերով և կուտակում զենքի, զինամթերքի ու պարենի մեծ պաշարներ։

1827 թ. սկզբին Կովկասյան հատուկ կորպուսը սկսում է Երևանյան երրորդ և վերջին արշավանքը։ Մինչև կորպուսի գլխավոր ուժերի Երևան հասնելը, էջմիածնում զենքի-զինամթերքի ու պարենի անհրաժեշտ պաշարներ կուտակելու և Երևանի գրավումը հաջողությամբ նախապատրաստելու նպատակով, ապրիլի 2-ին Կովկասյան կորպուսի մի զորաբաժին (որի կազմում կար 3200 հետևակ, 1200 հեծյալ զինվոր և 16 դաշտային հրանոթ)[14] գեներալ Կ. Բենկենդորֆի հրամանատարությամբ ու Ներսես Աշտարակեցու ուղեկցությամբ, դուրս գալով Բորչալուից, մի քանի օրում հասնում է Ջալալօղլի, ապա ապրիլի 7-ին Փամբակ—Ապարանի վրայով շարժվում դեպի էջմիածին ու Երևան։ Բենկենդորֆի զորախումբը, դիմադրության չհանդիպելով, ապրիլի 13-ին գրավում է էջմիածինը, որովհետև պարսկական փոքրաթիվ կայազորը, լսելով ռուսական զորքերի մոտենալու լուրը, վաղօրոք հեռացել էր այնտեղից։

Էջմիածնի հայերը ռուսական զորքին խանդավառ ընդունելություն ցույց տվեցին։ Ապրիլի 23-ին Բենկենդորֆի զորախումբը, դուրս գալով էջմիածնից, շարժվում է առաջ և չորս օր տևող մարտերից հետո, ապրիլի 27-ին պաշարում Երևանի բերդը։ Գեներալ Բենկենդորֆի գլխավորած զորքերի ռազմական գործողություններով սկիզբ դրվեց ռուս-պարսկական պատերազմի նոր էտապին։

---

13 *Ի. Шопен*, նշվ. աշխ., էջ 449, Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. 2, էջ 313։

14 *Տե՛ս А. Щербатов*, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, т. II, СПб., 1890, стр. 269, 270.

* * *

Ռուսական բանակի երևանյան այս արշավանքը հայ ժողովրդական զանգվածներին պարսկական խաների տիրապետությունից ազատագրվելու նոր, իրական հույսեր ներշնչեց։ Հայ առաջավոր մարդիկ եռանդուն գործունեություն ծավալեցին ուժեղացնելու հայերի օգնությունը Կովկասյան կորպուսին։ Դրանցից մեկն էր արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին, որը 1814 թ. վարում էր Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնը։ Նա դեռևս Դավիթ—Դանիելյան պայքարի տարիներին աչքի ընկավ որպես Դանիելի ազդեցիկ կողմնակից և ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան։ Որպես Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ, Թիֆլիս գալուց հետո նրա առջև բացվում է ազատ ու համարձակ գործունեության ասպարեզ։

Գործելով Կովկասի հասարակական-քաղաքական կյանքի խոշոր կենտրոն Թիֆլիսում, Ներսես Աշտարակեցին մեծ հեղինակություն է վայելում։ Եվ դա ոչ միայն նրա անձնական ընդունակությունների, եռանդի ու կազմակերպչական մեծ կարողությունների շնորհիվ, այլև այն բանի, որ նա անմիջական շփման մեջ էր ու սերտ կապեր ուներ Կովկասի ռուսական զինվորական և քաղաքացիական իշխանությունների ու ղեկավար գործիչների հետ։ Բացի այդ, Թիֆլիսում գործելը մեծապես նպաստում է Ներսեսի հեղինակության բարձրացմանը նաև այն պատճառով, որ տեղի հայաբնակ գաղութը ձեռք էր բերում խոշոր ազդեցություն հայ կյանքում։ Եթե այս ամենին ավելացնենք և այն, որ ծերացած ու թուլակամ Եփրեմ կաթողիկոսը 1821 թ. հեռանալով էջմիածնից, հաստատվել էր Հաղպատի վանքում և լիովին գտնվում էր Ներսես Աշտարակեցու ազդեցության տակ, ապա պարզ կդառնա վերջինիս գրաված տեղն ու դիրքը ոչ միայն կրոնական, այլև ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Ներսես Աշտարակեցուն եռանդուն գործունեության էր մղում ռուսական զենքի օգնությամբ հայ ժողովրդին թուրքական և պարսկական լծից ազատագրելու հեռանկարը։ Ուստի, գործի դնելով կազմակերպչական իր ողջ ունակություններն ու եռանդը, նա ձգտում էր հաջողությամբ պսակել Կովկասյան հատուկ կորպուսի երևանյան արշավանքը։

Ներսես Աշտարակեցու հետ միասին հայրենանվեր գործի լծվեց նաև ականավոր հասարակական գործիչ, Ներսիսյան դպրոցի տեսուչ, բանաստեղծ Հարություն Ալամդարյանը։ Նրանք ոչ միայն գործարար մասնակցություն ունեցան երևանյան նոր արշավանքի նախապատրաստական աշխատանքներին, այլև ձեռնամուխ եղան Թիֆլիսում հայկական կամավորական գումարտակների ստեղծմանը, որպեսզի առավել գործուն ռազմական օգնություն ցույց տան Կովկասյան կորպուսին։ Ռուսական հրամանատարությունը սիրով ընդառաջեց հայերի այդ ցանկությանը, նկատի ունենալով պատերազմական նախորդ գործողությունների ժամանակ հայ աշխարհազորայինների Կովկասյան կորպուսին ցույց տված ռազմական օգնության նշանակությունը։

Հայկական գումարտակների կազմակերպման համար մշակվեց 34 հոդվածից բաղկացած հատուկ «Առաջադրություն»[15], որը հաստատվեց ռու-

15 «Предположения для сформирования армянских батальонов», տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒԳԱ, Ֆ. ՌԴԱ, գ. 4336, թ. 2—5։

սական բանակի գլխավոր շտաբի կողմից։ Ըստ «Առաջադրության» հայկական գումարտակ կարող էին ընդունվել կամավոր ցանկությամբ՝ 18 տարեկանից ոչ փոքր և 30 տարեկանից ոչ մեծ տղամարդիկ, որոնք առողջ էին և կարող էին դիմանալ արշավանքի դժվարություններին։ Գումարտակը նախատեսվում էր հետևյալ կազմով՝ 1 շտաբս-սպա, 2 կապիտան, 2 շտաբս-կապիտան, 4 պորուչիկ, 4 պոդպորուչիկ, 1 գանձապահ, 1 համհարզ, 4 փողհար, 4 թմբկահար, 80 ենթասպա, 800 շարքային և 40 արտաշարային ֆուրլեյտորներ։ Գումարտակի հրամանատարը պետք է ունենար շտաբս-ըսպայի կամ կապիտանի աստիճան և ազգությամբ լիներ հայ։ Գումարտակի հագուստն էր՝ կանաչ գույնի մահուդե չեկմետ՝ ծալվող թևերով, մուգ գույնի բուրմեթից արխալուղ, գդակ և յափնջի։ Գումարտակի զորայինները պարտավոր էին, ինչպես ընդունված էր ռուսական բանակում, հավատարիմ ծառայության երդում տալ։




Վ. Մադաթով

Հայկական գումարտակների կազմակերպման «Առաջադրությունում» մանրամասնորեն նշված էին նաև զորայինների սպառազինության, ծառայության կարգի և ռազմական կարգապահության կանոնները։ Ուշագրավ է, որ ըստ մշակված «Առաջադրության», գումարտակները պետք է ունենային իրենց հատուկ ազգային զինադրոշները, իսկ հրամանները տրվելու էին հայերեն։ «Առաջադրության» 14-րդ հոդվածով նախատեսվում էր, որ զորայինները «...հատուկ գերազանցության համար կներկայացվեն պարգևատրման՝ ստանալու իսկական առաջին սպայական աստիճան»։

3-րդ հոդվածը վերաբերում էր կամավորների ու նրանց ընտանիքների արտոնություններին։ Կամավորները ծառայության ամբողջ ժամանակաշրջանում իրենց կանանց ու երեխաների հետ ազատվում էին բոլոր հարկերից ու պարհակներից։ Իսկ 4-րդ հոդվածի համաձայն զորայիններին իրավունք էր վերապահվում ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո վերադառնալ իրենց տները։ Կամավորական գումարտակների կազմակերպման լուրը հայերն ընդունեցին բուռն խանդավառությամբ։ Թիֆլիս էին գալիս բազմաթիվ երիտասարդներ և ցանկություն հայտնում մտնել նրանց շարքերը։

1827 թ. մարտի 30-ին Թիֆլիսում կայացավ հայ առաջին կամավորների զորահանդեսը, իսկ մայիսի 15-ին Թիֆլիսի հայկական վանքում առաջին գումարտակին (գրականության մեջ գործ է ածվել նաև «Հայկական

գունդ») հանձնվեց հատուկ պատրաստված զինադրոշ։ Կամավորների երդման արարողությունից հետո Հարություն Ալամդարյանը նրանց դիմեց հայրենասիրական ջերմ խոսքով, կոչ անելով «Մինչև արյան վերջին կաթիլը սատար լինել մեր ամենասիրելի հայրենիքի վերականգնմանը՝ դարավոր ավերակներից»։



Հայկական կամավորական գումարտակներից մեկի զինադրոշը, 1827 թ.

Մայիսի 17-ին կամավորական առաջին գումարտակը՝ կազմված 117 զորայիններից, շտաբս—կապիտան Սումբատովի հրամանատարությամբ մեկնեց էջմիածին՝ գործող զորքին միանալու։ Այդ մասին Թիֆլիսի զինվորական գեներալ-նահանգապետ Սիպյագինը ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչին պաշտոնական զեկույցով հայտնում էր. «... Առաջին գումարտակը, թվով 117 մարդ, արդեն կազմակերպված, պատշաճ կարգով սպառազինված և մատակարարված արշավի համար ամեն ինչով, կորպուսի պարոն հրամանատարի հրամանի համաձայն, այսօր Թիֆլիսից ուղարկված է էջմիածին՝ գործող բանակին միանալու համար»[16]։ Հունիսի 2-ին ռազմաճակատ մեկնեց երկրորդ գումարտակը (կազմված 100 կամավորներից), իսկ օգոստոսի 21-ին՝ երրորդ գումարտակը։ Երրորդ գումարտակի կազմակերպման ու ռազմաճակատ մեկնելու մասին Սիպյագինը գեներալ Դիբիչին գրում

16 ՍՍՀՄ ԿՈՒՊՄ, ֆ. ՈԳԱ, գ. 4336, թ. 6։

էր. «...Այստեղ կազմավորված հայկական երրորդ գումարտակը թվով 67 մարդ, պաշտոնաթող կապիտան Բեբուրովի հրամանատարությամբ, այս ամսի 21-ին, անհրաժեշտ ամեն ինչով ապահովված, ուղևորվեց դեպի Երևան, ըստ տրված երթուղու, գեներալ-լեյտենանտ Կրասովսկու զորախմբին միանալու համար»[17]։

Թիֆլիսից Երևան մեկնելու ճանապարհին հայկական կամավորական զորախմբերը համալրվում էին հարյուրավոր հայ երիտասարդներով ու փոքրիկ ջոկատներից վերածվում գումարտակների ու գնդերի։

Առաջին գումարտակի համալրման մասին գրում էին. «Մույն մայիսի 17-ին նրանք (առաջին գումարտակի զորայինները—խմբ.) Թիֆլիսից դուրս եկան և ուղևորվեցին Երևան։ Ճանապարհին տեղական բնակիչներից նույնպես շատ հայեր կազմ ու պատրաստ միանում են իրենց եղբայրներին։ Ջոկատը թվով հասնում էր մինչև 1000 մարդու՝ բոլորն էլ հայեր։ Բոլորը տոգորված են հավատարմության և նվիրվածության ոգով»[18]։ Նույնպիսի մեծ համալրում ստացան նաև երկրորդ ու երրորդ ջոկատները։

Թեև հայկական կամավորական ջոկատները կարճ ժամանակում կազմակերպվեցին ու անմիջապես մեկնեցին ռազմաճակատ և այդ պատճառով չկարողացան ձեռք բերել պատշաճ ռազմական պատրաստություն, այնուամենայնիվ, ամենքն էլ հիանում էին նրանց կարգապահությամբ, մարտունակությամբ, կռիվներում ցուցաբերած անձնազոհությամբ։

Ռուս—պարսկական երկրորդ պատերազմի մասնակից գեներալ Ն. Մուրավյովը հայկական առաջին զորաջոկատի մասին գրել է. «Հայկական դրուժինային տրվեց Թիֆլիսում պատրաստված մի զինադրոշ։ Նա արշավանքի դուրս եկավ հոժարակամ և արտասովոր եռանդով, ունենալով երիտասարդ զինվորի ոգի... Զինված լինելով սվինավոր հրացաններով, նա կանոնավոր զորքի տեսք ուներ, ենթարկվում էր հրամանատարությանը, շարք էր կանգնում և գրանցվում էր մատյաններում... Այս նոր զորքը լավագույն հույսեր է ներշնչում, որ կգա ժամանակ, երբ կարելի կլինի մի պատկառելի կորպուս կազմել տեղական զորքերից, որոնք կարող կլինեն փոխարինել այստեղ, Վրաստանում կլիմայի հետևանքով մեռնող ռուսներին»[19]։ Հայկական կամավորական դրուժինանների կազմակերպումով ավելի ծավալուն դարձավ և առավել կազմակերպված բնույթ ստացավ հայերի ռազմական օգնությունը Երևան արշավող Կովկասյան կորպուսին։

Մայիսի 13-ին Կովկասյան կորպուսի գլխավոր ուժերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ դուրս գալով Շուլավերից՝ հունիսի 8-ին հասան Էջմիածին։ Կորպուսի գլխավոր ուժերը (չհաշված Բենկենդորֆի զորախումբը) կազմված էին 4800 հետևակ, 3800 հեծյալ զինվորներից ու 26 թնդանոթից[20]։ Գեներալ Պասկևիչը, անձամբ ծանոթանալով Երևանի բերդի պաշարման պայմաններին, հանգեց այն եզրակացության, որ գրոհով հնարավոր չէ

17 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4336, թ. 14։

18 Նույն տեղում, գ. 4338, թ. 37—38։

19 Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. CXXVI.

20 Տե՛ս А. Щербатов, նշվ. աշխ., էջ 269, 270։

բերդը գրավել։ Դրա համար հարկավոր էր պաշարողական ծանր հրետանի, որը դեռևս Թիֆլիսից տեղ չէր հասել։ Ուստի Պասկևիչը Բենկենդորֆի զորախումբը միացնում է Կորպուսի գլխավոր ուժերին, Երևանի բերդի պաշարումը հանձնարարում գեներալ Ա. Ի. Կրասովսկու գլխավորած 20-րդ դիվիզիային, իսկ ինքը հունիսի 19-ին, Կորպուսի գլխավոր ուժերով, շարժվում է դեպի Նախիջևան։ Նա ծրագրում է նախքան Արարատյան դաշտի շոգերը սկսվելը, գրավել Նախիջևանը և Աբասաբադ բերդը, Երևանը կտրել Պարսկաստանից, դրանով իսկ դյուրացնել նրա գրավումը և հարկադրել Ֆաթհ-Ալի շահին հաշտություն կնքել։

Ռուսական կորպուսի գործողությունները Նախիջևանի ուղղությամբ պըսակվեցին հաջողությամբ։ Գառնի-չայի և Վեդի-չայի շրջակայքում ծավալված հաղթական կռիվներից հետո, հունիսի 26-ին ռուսական կորպուսը առանց դժվարության գրավեց Նախիջևանը և հուլիսի 1-ին պաշարեց Արաքսի ափին անգլիական ռազմական մասնագետների օգնությամբ կառուցված Աբասաբադ բերդը։

Պաշարված Աբասաբադին 12 հազար զորքով օգնության շտապեց Աբաս-Միրզան։ Ռուսական կորպուսի հրամանատարությունը, նախաձեռնությունն իր ձեռքը պահելու նպատակով, հուլիսի 5-ին կորպուսի գլխավոր ուժերով անցնում է Արաքսը և Ջևան-Բուլաղի մոտ ճակատամարտ տալիս Աբաս-Միրզայի զորքերին։ Ճակատամարտն ավարտվում է ռուսական զորքերի փայլուն հաղթանակով։ Կրելով խոշոր կորուստներ՝ պարսկական բանակը փախուստի է դիմում։

Ջևան-Բուլաղի հաղթական ճակատամարտից երկու օր հետո, հուլիսի 7-ին, Աբասաբադի պարսկական բերդապահ կայազորը անձնատուր եղավ։ Աբասաբադում ռուսները գերեցին երեք հազար սարբազ՝ իրենց հրամանատարների հետ, գրավեցին 18 թնդանոթ, հազար փութ վառոդ և կենսամթերքի հարուստ պաշարներ[21]։ Աբասաբադ բերդի գրավման համար մղված ճակատամարտում ռուսական զորքերի շարքում կռվում էր նաև 100 հոգուց բաղկացած հայկական աշխարհազորային մի ջոկատ[22]։

Ռազմական գործողությունները ռուսների համար անբնպատ էին զարգանում Երևանի մոտ։ Բերդը գրավելու գեներալ Կրասովսկու դիվիզիայի գործադրած ջանքերն ապարդյուն անցան, որովհետև Երևանի բերդի պարիսպները կործանելու համար Թիֆլիսից ծանր հրետանին դեռևս տեղ չէր հասել։ Բացի այդ, սկսվել էին Արարատյան դաշտի շոգերը և հազարից ավելի զինվորներ շարքից դուրս էին եկել հիվանդությունների պատճառով։ Ուստի, նախքան Թիֆլիսից օգնական լրացուցիչ ուժերի հասնելը, Պասկևիչի թույլտվությամբ Կրասովսկին դադարեցնում է Երևանի բերդի պաշարումը և հուլիսի 1-ից զորքին հանգիստ տալիս Ապարանի սարահարթում։ Իսկ վիրակապ-դպետ Լինդենֆելդերի հրամանատարությամբ էջմիածնում թողնում է մի գումարտակ, 5 թնդանոթ և 100 հեծյալ աշխարհազորայինների՝ վանքը և զինվորական հոսպիտալը պաշտպանելու համար։

---

21 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 114ա։

22 ՏՀ՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4316, թ. 3—4։

Նախիջևանը և Աբասաբադը կորցնելով, Աբաս-Միրզան, իր ուժերը վերադասավորելու նպատակով, դիմում է խորամանկությանը, հաշտության բանակցություններ վարելու պատրվակով զինադադար է խնդրում։ Օգտվելով ժամանակավոր զինադադարից, գեներալ Պասկևիչը որոշ զորամասեր թողնում է Նախիջևանի և Աբասաբադի պաշտպանության համար, իսկ կորպուսի գլխավոր ուժերին հուլիսի 18-ից հանգիստ է տալիս Ղարաբաբայի լեռնալանջերում։ Այնուհետև, Աբաս-Միրզայի հետ հաշտության բանակցություններ վարելու նպատակով, հուլիսի 20-ին Կարազիադինի պարսկական զորակայանն է ժամանում գեներալ Պասկևիչի ներկայացուցիչ Ա. Ս. Գրիբոյեդովը, որն ամբողջ պատերազմի ընթացքում գտնվում էր Կովկասյան կորպուսում և հաջողությամբ վարում նրա դիվանագիտական գործերը[23]։ Աբաս-Միրզան, հաշտություն կնքելու անկեղծ ցանկություն չունենալով, ձախողում է հուլիսի 21-ին սկսված բանակցությունները և, օգտվելով ռուսական կորպուսի ժամանակավոր հանգստից, խախտում զինադադարը ու օգոստոսի 4-ին 30 հազարանոց զորքով անցնում Արաքսի ձախ ափը և սկսում հարձակողական գործողություններ։ Նա ծրագրում էր գրավել էջմիածինը, ոչնչացնել Կրասովսկու դիվիզիան, ապա շարժվել դեպի Թիֆլիս, Ելիսավետպոլ և Ղարաբաղ։ Դրանով նա կամենում էր հարկադրել Պասկևիչին հրաժարվել Թավրիզի վրա արշավելու մտադրությունից և վերադառնալ՝ ռուսական սահմանները պաշտպանելու։

Դեպքերը զարգանում են մեծ արագությամբ։ Օգոստոսի 6-ին Աբաս-Միրզայի բանակը գրավում է Աշտարակը, ապա, առաջ շարժվելով, օգոստոսի 15-ին պաշարում է էջմիածինը և նույն դիշերը սկսում նրա հրետանային ռմբակոծությունը։

Հակառակորդի անակնկալ հարձակումը և էջմիածինը կործանելու նրա սպառնալիքներն անկարող եղան ընկճել էջմիածնի ռուսական կայազորի և տեղի հայ աշխարհազորայինների հաստատակամությունը։ Ժողովելով իրենց ողջ ուժերը, նրանք արիաբար դիմադրում են մեծաքանակ թշնամուն։ Հայ սուրհանդակների միջոցով ստանալով էջմիածնի պաշարման լուրը, գեներալ Կրասովսկին էջմիածինը և նրա կայազորը փրկելու համար Ապարանի ճամբարից վերցնում է շուրջ երեք հազար զինվոր, այդ թվում 100 հայ ու 40 վրացի աշխարհազորայիններ և օգոստոսի 16-ին շարժվում դեպի Աշտարակ—էջմիածին[24]։ Օգոստոսի 17-ին, Օշական գյուղի մոտ, Կրասովսկու և Աբաս-Միրզայի բանակները հանդիպում են իրար։ Սկսվում է արյունալի մի կռիվ, որը պատմության մեջ մտավ «Օշականի ճակատամարտ» անունով։ Աբաս-Միրզան աշխատում էր փակել Կրասովսկու զորադնդի ճանապարհը դեպի էջմիածին, շրջապատել, ոչնչացնել նրան ու ճանապարհ բացել Թիֆլիս շարժվելու համար։ Իսկ ռուս զինվորները և հայ աշխարհազորայինները, չնայած ծայրահեղ հոգնածության, քաղցին ու ծարավին, կռվում էին մեծ խիզախությամբ։ Մի քանի ժամից պատերազմի դաշտը ծածկվում է թշնամու դիակներով, բայց նոսրանում էին նաև ռուսական զորագնդի շարքերը։

---

23 Տե՛ս Վ. Ա. Պատսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 51, նույնը տե՛ս И. Ениколопов, Грибоедов и Восток, Ереван, 1954.

24 ՍՍՀՄ ԿՈՒՊՄ, ֆ. ՌԳՆ, գ. 4318, թ. 1—4։

Օշականի ճակատամարտին էջմիածնից տագնապով հետևող Ներսես Աշտարակեցին գրել է. «Ամսի 17-ին, երբ լուսացավ... մոտ ժամի 8-ին երեվեցավ ռուսական բանակը Աշտարակի դիմացը։ Իսկ պարսից զորքը պատրաստ վիճակի մեջ դրվեց Օշականի գետակի եզերքին, և երբ ռուսաց զորքը մոտեցավ նրանց, սկսեցին նախ թնդանոթ արձակել և ապա չափազանց սաստկացավ ահեղատեսիլ պատերազմը, սկսած ժամը ութից մինչև ժամը 5-ը, կեսօրից հետո։

Որպես հավաստում են, թշնամու բանակը թվով 30000 էր, բաղկացած 9000 հետևակից և 21000 հեծյալներից։ Թնդանոթների թիվը՝ 24, որից երեքը՝ բավական մեծ։ Իսկ ռուսաց բանակը 3000-ի մոտ 12 թնդանոթով... երկու կողմից, այլ ավելի շատ պարսից կողմից արձակվեցին թնդանոթներ, ոչ պակաս քան 700։

Ասում են այդ կռվում պարսիկներից մեռան ավելի քան 3500, իսկ վիրավոր շատ ավելի...»[25]։

Կանգ չառնելով խոշոր կորուստների առաջ, Աբաս-Միրզան աստիճանաբար ռուսական զորագունդը օղակելու վտանգ է ստեղծում։ Այդ ծանր պահին հանկարծ պարսկական զորքերի գլխին որոտում է հրանոթի հզոր համազարկը։ Պարսիկները սկսում են խուճապահար նահանջել, կարծելով, թե Կրնսովսկու զորագնդին օգնության են հասել օժանդակ ուժեր՝ ծանր հրետանիով։ Սակայն ռուսական զորքին ոչ մի ուժ օգնության չէր եկել։ Դա բրոնության համար պարսկական բանակ քշված նորքեցի նշանավոր թնդանոթաձիգ Հակոբ Հարությունյանն էր, որ տեսնելով ռուսական զորագնդի աղետալի վիճակը, իր կյանքը վտանգելով, անգլիական նոր ծանր թնդանոթն ուղղում է պարսկական զորաշարքերի դեմ։ Մինչև թշնամին ուշքի կգար և կհասկանար կատարվածը, Կրասովսկու զորագունդը ճեղքում է հակառակորդի շղթան և մտնում էջմիածին։ Հակոբ Հարությունյանը փորձում է փախչել և միանալ ռուսական զորքին, սակայն էջմիածնի մատույցներում բռնվում է ու ենթարկվում հրեշավոր խոշտանգումների։ Պարսիկ սատրապները փորում են նրա աչքերը, կտրում քիթը, շրթունքները, ականջներն ու կրունկները[26]։ Որոշ ժամանակ անց Հարությունյանը ուշքի գալով, մի կերպ հասնում է էջմիածին, որտեղ սկսում են բուժել նրա վերքերը։ Հակոբ Հարությունյանին իր յուցաբերած սխրագործության համար ռուսական կառավարությունը սահմանեց տարեկան 100 ռուբլի ցմահ կենսաթոշակ[27]։ Իսկ հայերը, ի հավերժացումն Օշականի ճակատամարտում զոհված ռուս զինվորների հիշատակի, էջմիածնից չորս կիլոմետր հեռավորության վրա 1833 թվականի մայիսի 9-ին, մեծ հանդիսավորությամբ հիմք դրեցին մի հուշարձանի, որի կառուցումն ավարտվեց 1834 թվականին։

Չնայած Օշականի ճակատամարտում Կրասովսկու զորագունդը բազմաթիվ զոհեր տվեց, բայց ձախողեց Աբաս-Միրզայի՝ էջմիածինը գրավելու և Թիֆլիս շարժվելու պլանը։


---

25 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 150։

26 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 8, գ. 1902, թ. 7—8, 27—28։

27 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 293—294։

Տեղեկանալով Օշականի ճակատամարտի մասին, Պասկևիչը Նախիջևանում գեներալ Գ. էրիսթովի հրամանատարության տակ թողնելով մի ղորագունդ, կորպուսի գլխավոր ուժերով շարժվում է դեպի էջմիածին՝ Աբաս-Միրզայի բանակը Արաքս գետի աջ ափը շպրտելու և Սարդարապատի ու Երևանի բերդերի գրավումը փութացնելու համար։ Իսկ Աբաս-Միրզան իր հերթին, ստանալով Կովկասյան կորպուսի գլխավոր ուժերի էջմիածին շարժվե-



Օշականի ճակատամարտի հերոսների հիշատակին կառուցված հուշարձանը

լու լուրը, շտապում է ճողոպրել Արաքսի մյուս ափը։ Սեպտեմբերի 5-ին Պասկևիչի զորաբանակը հասավ Էջմիածին, իսկ 12-ին ռուսական զորքը երկու զորասյունով շարժվում է Հյուսեին-Ղուլի խանի օրոք կառուցված Սարդարապատի բերդի վրա, որի պաշտպանությունն իր ձեռքն էր առել Հասան խանը։ Սեպտեմբերի 13-ին Սարդարապատ հասավ գեներալ Կրասովսկին, բերելով Թիֆլիսից տեղ հասած ծանր հրետանին։ Աստիճանաբար բերդին են մոտենում նաև կորպուսի մյուս զորամասերը։

Սեպտեմբերի 16-ից ռուսական թնդանոթները հրետանին սկսեց Սարդարապատի բերդի ռմբակոծությունը։ Երկու օր հետո գործի դրվեց նաև ծանր հրետանին։ Սեպտեմբերի 19-ին փլվում է բերդի հարավային պարիսպը։ Հասան խանը զգալով, որ այլևս անկարող է շարունակել բերդի պաշտպանությունը, նույն գիշերը, իր մի քանի թիկնապահների հետ դիմում է փախուստի։ Նրա օրինակին են հետևում բերդապահ զինվորներից շատերը։ Ռուսական կորպուսը, սեպտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը, գրավում է Սարդարապատի բերդը։ Նրա պարիսպների մեջ փակված հայերը չերմորեն դիմավորեցին ռուսական զորամասերին։ Սարդարապատում ռուսների ձեռքն ընկավ 13 թնդանոթ, մեծ քանակությամբ վառոդ, ռումբ, 14 հազար չեթվերտ ցորեն (չեթվերտ—ռուսական հին չափ է, հավասար է 209,9 լիտրի), զգալի քանակությամբ բամբակ և այլ ավար։ Հաղթանակը Սարդարապատի ճակատամարտում Պասկևիչին հնարավորություն ընձեռեց կորպուսի գլխավոր ուժերը շարժել Երևանի վրա։

Երևանի պաշտպանության համար հուսակտուր ճիգեր է գործադրում Հյուսեին-Ղուլի խանը։ Նա բերդապահ զորքի հրամանատարությունը հանձնում է Հասան խանին, իսկ ինքը, փոքրաթիվ ուժերով, հեռանում է բերդից, նպատակ ունենալով հավաքել 8—9 հազար հեծյալներ և բերդը պաշարող ռուսական զորամասերին հարվածել թիկունքից։ Սակայն ռուսական հրամանատարությունը, ժամանակին կռահելով Սարդարի այդ մտադրությունը, դիմում է հակագործողություններ։ Գնդապետ Ն. Ն. Ռաևսկու զորագնդին խնդիր է տրվում՝ հետապնդել Հյուսեին-Ղուլի խանին, ջախջախել նրա ուժերը և անվտանգ դարձնել Երևանը պաշարող զորքերի թիկունքը։

Սեպտեմբերի 21-ին գլխավոր հրամանատարին Ն. Ն. Ռաևսկին հաղորդում էր, որ Երևանի սարդարը, խոշոր կորուստներ կրելով, 1200 հեծյալներով փախավ Բայազետի փաշայության սահմանները, իսկ այնտեղից էլ հեռացավ Խոյ։ Դրանից հետո ռուսական զորամասերը առաջ շարժվելով, սեպտեմբերի 23-ին դուրս եկան Հրազդանի ափը և հաջորդ օրը պաշարեցին Երևանի բերդը։ Երևանի բերդի պարիսպներին է մոտենում նաև ռուսական պաշարողական ծանր հրետանին։ Որոշվում է գրոհն սկսել բերդի հարավ-արևելյան կողմից։

Ռուսական ծանր հրետանին սեպտեմբերի 25-ի վաղ առավոտվանից սկսեց ռմբակոծել Երևանի հինավուրց բերդը։ Հասան խանը բերդում ուներ 6000 սարբազ և 50-ից ավելի թնդանոթ, բայց դրանք անզոր էին խափանելու հաղթանակի վճռակամությամբ լցված ռուս զինվորների ու հայ աշխարհազորայինների գրոհները։ Չնայած թշնամու կատաղի դիմադրությանը, բերդից տեղացող հրետանային ու հրացանային կրակին, ռուսական հետե-

վակը, աստիճանաբար առաջ շարժվելով, հասնում է բերդի արտաքին պարիսպներին և սեղմում պաշարման օղակը։

Հրետանային անընդմեջ ռմբակոծությունների հետևանքով սեպտեմբերի 30-ին, լույս հոկտեմբերի 1-ի գիշերը վերջնականապես կոտրվեց պարսկական կայազորի դիմադրությունը։ Բերդից անկանոն կերպով արձակվող հրանոթային և հրացանային կրակն այլևս անկարող էր փրկել դրությունը։ Ռուսական հետևակը դիմում է համարձակ գրոհների՝ ներխուժելու բերդը, իսկ 40 թնդանոթներ, միայն սեպտեմբերի 30-ի գիշերը, 1000-ից ավել ռումբ թափեցին նրա ամրությունների վրա՝ պատճառելով մեծ ավերածություններ։ Հասան խանի վիճակն առավել ծանրացավ, որովհետև նրա դեմ ապստամբեցին նաև բերդի պարիսպների մեջ քշված ավելի քան 10 հազար հայեր։ Պարսկական կայազորին, գոռոզ Հասան խանի հորդորանքներին հակառակ, տիրել էր անասելի հուսալքություն։



Երևանի ներկայումը ռուսական զորքերին։ Նկ. Ռուբոյի

Հոկտեմբերի 1-ի վաղ առավոտյան սկսվեց ռուսական հետևակի վերջին գրոհը, որն ավարտվեց բերդի գրավումով։ Հրետանային ռմբակոծությունից բերդի հարավ-արևելյան պարսպի փլվածքի միջով առաջինը Երևանի բերդը ներխուժեցին լեյբ-գվարդիական հավաքական գնդի վաշտերը[28] և գրավեցին նրա հարավ-արևելյան աշտարակը։ Նույն այդ ժամանակ գվարդիական գնդի մյուս վաշտերը և գեներալ Կրասովսկու զորամասը արագորեն մո-

28 Տե՛ս С. Скрутовский, Лейб-гвардии сводный полк на Кавказе в персидскую войну с 1826 по 1828 гг., СПб., 1896, стр. 43.

տեցան բերդի հյուսիսային դարպասներին և այնտեղից ներխուժեցին բերդը։ Կրավելով հյուսիսային դարպասները, Կրասովսկին փակեց Թշնամու բերդապահ զորքի փախուստի ճանապարհը։ Նրանցից անմիջապես հետո բերդ մտան նաև ռուսական կորպուսի մյուս զորամասերը։ Պարսկական կայազորը հարկադրված եղավ անձնատուր լինել, իսկ Պարսկաստանում «անպարտելի» անուն հանած զոռող Հասան խանը թաքնվեց եղբոր նորակառույց մզկիթում։ Գվարդիական վաշտերը գեներալ Կրասովսկու գլխավորությամբ մտան մզկիթ, գերեցին Հասան խանին ու նրա հետ այնտեղ թաքնված մյուս խաներին։

Ռուսները գերի վերցրին բերդապահ կայազորի բոլոր զորահրամանատարներին և կենդանի մնացած ավելի քան 3000 սարբազ։ Երևանում ռուսների ձեռքն ընկավ նաև ռազմական մեծ ավար, այդ թվում 35 թնդանոթ, երկու հաուբից, ութ մորտիր, չորս մարտկոցային հրանոթ, մեծ քանակությամբ արկեր, վառոդ և այլ զենք ու զինամթերք, հակառակորդի բոլոր զորամասերի զինադրոշները, ինչպես և ավելի քան 10 հազար չետվերտ հացահատիկ[29]։ Երևանի գրավման մարտերում ռուսներն ունեցան 52 սպանված և վիրավոր։ Այսպիսով, ռուսական զորքերի երրորդ արշավանքը ավարտվեց 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի գրավումով։

Հայ ժողովուրդը ցնծագին հրճվանքով ընդունեց Երևանի ազատագրումը պարսիկ խաների ճիրաններից։ Այդ մասին Խ. Աբովյանը, որպես ականատես, գրել է. «...դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը Հայերի համար»[30]։ Ապա խոսելով հայ ժողովրդին համակած հրճվանքի ու խնդության մասին, շարունակում է. «Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ Թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»[31]։

Հայերի հետ մեկտեղ բուռն հրճվանք էին ապրում նաև տեղի ադրբեջանցիները։ Այդ մասին Խ. Աբովյանը գրում է. «Երևան թևին տվեց, երբ Ռուսաց զորքը իր մեջը մտան... էն ժամանակվան խաղերը որ հանել ասում էին, հավիտյանս հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե Թուրք (խոսքը ադրբեջանցիների մասին է —խմբ.) ու Հայ հենց իմացան թե Աստված վեր էկավ, իրանց համար։ Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն Երևանու բաղերն ու ձորերը լսում էին ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում»[32]։

Ուշագրավ է, որ Խ. Աբովյանից շատ հետո՝ 1908 թ., հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը «Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իբրև պատմություն» իր աշխատության մեջ նույնպես պարսկական տիրապետությունը համարել է կատարյալ «դժոխք» և բարձր գնահատել 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի նշանակությունը։ Այդ պատերազմով, գրում է Հովհ. Թումանյանը, «Հայ ժողովուրդը ազատվում էր մի դժոխքից,

---

29 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. ՈԳԱ, գ. 4292, թ. 1—19, գ. 4312, թ. 197—202։

30 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 179։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 177։

որ նրա համար ստեղծել էր պարսկական [կոպիտ ու խավար] բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ոչ օրենք, ոչ իրավունք, ոչ խնդիր, ոչ աղաչանք, ոչ [կրոն], ոչ սրբություն, ոչ կալք, ոչ կյանք, ոչ կին, ոչ պատիվ, ոչ ամոթ, ոչ խղճմտանք... Եվ այդ դժոխքի միջնաբերդը Երևանն էր»[33]։ Ապա շարունակելով իր միտքը, նա գրում է. «Երևանի առումով Ռուսաստանին միացավ Մասիսի էս կողմը գտնվող հայությունը ու էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան։ Կատարվեց (Կովկասի) [հայության դարավոր տենչանքը]»[34]։

Երևանի գրավմանը մասնակից նախկին դեկաբրիստ Ե. Լաչինովն իր օրագրում նշել է. «Հուզիչ է ազատագրված հայերի հրճվանքը։ Սրտից է բխում նրանց արտահայտած ուրախությունը։ Նրանք իրենց երկիրը հարսանքատան են նմանեցնում, որտեղ հիմա ամեն ինչ ցնծում է»[35]։





«Երևանի գրավման համար» մեդալը

Մեծ բերկրանքով լսելով Երևանի գրավման լուրը, Հ. Ալամդարյանը այն գնահատում է որպես «...Հայաստան աշխարհի փրկությունը անգութ պարսիկների երկաթե հնոցից»[36]։

Ռուսական զորքերի կողմից Երևանի գրավման առթիվ Հնդկաստանից իր հայրենակիցներին հղած շնորհավորական նամակում Մեսրոպ Թաղիադյանը գրում է. «Աչքներդ լուսս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքներից ազատվեց»[37]։

Պարսկական խաների լծից Երևանի ազատագրման առթիվ բնակչությունը մեծ տոնախմբություն կազմակերպեց, որ տևեց մի քանի օր և ավարտվեց հոկտեմբերի 6-ի պաշտոնական տոնակատարությամբ։ Այդ օրը եկե-

33 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 256։

34 Նույն տեղում։

35 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 374։

36 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 210։

37 Տ. Հովհաննես Կ. Մկրտեան, Կենսագրութիւն Մեսրուպայ Դաւթեան Թաղիադեանց երեվանցւոյ, Թիֆլիս, 1886, էջ 133։

ղեցիներում ու մզկիթներում տեղի ունեցան հանդիսավոր արարողություններ։ Կեսօրին հրապարակում կայացավ շքեղ զորահանդես, որին ներկա էր քաղաքի ամբողջ բնակչությունը[38]։ Զորահանդեսի սկիզբը և ավարտը ազդարարվեց 101 հրետանային համազարկով։ Ի նշանավորումն Երևանի բերդի գրավման, սահմանվեց հատուկ մեդալ, որով պարգևատրվեցին Երևանի գրավման հազարավոր մասնակիցներ։



Ռուսական զորքերի զորահանդեսը Երևանում 1827 թ.։ Նկ. Վ. Մաշկովի

Ո՞րն էր հայերի այդպիսի ուրախության և հրճվանքի պատճառը։ Կարծես թե այդ հարցի պատասխանն է կամեցել տալ Ստ. Նազարյանցը, որ գրել է. «...հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»[39]։

3. ԿՈՎԿԱՍ ԱՔՍՈՐՎԱԾ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՄԱՆԸ

Ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Երևանի համար մղված մարտերում աչքի ընկնող դեր խաղացին Կովկասյան կորպուս արտաքսված աստիճանազրկված դեկաբրիստ սպաները, նրանց «մեղսակիցները»,

38 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959, էջ 340։
39 Ստ. Նազարյանց, Երկեր, հատ. I, Թիֆլիս, 1913, էջ 95—96։

1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում Սենատի հրապարակի ապստամբությանը մասնակցած գվարդիական գնդերի և Հարավում՝ Չերնիգովյան գնդի ապստամբությանը մասնակցած զինվորները, ավելի քան 3000 մարդ[40], որոնք 1826 թ. ամռանը և աշնան սկզբներին ուղարկվեցին Կովկաս՝ մասնակցելու ռուս-պարսկական պատերազմին։ Նրանց Կովկաս գալը մեծ չափով բարձրացրեց ռուսական կորպուսի մարտունակությունը, քանի որ դեկաբրիստ սպաներն իրենց խոր գիտելիքներով և ռազմական հարուստ փորձով ժամանակի ռուսական սպայության ամենաառաջավոր ներկայացուցիչներն էին։

Գեներալ Պասկևիչը 1828 թ. հուլիսի 15-ին ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչին գրել է. «...Ընդհանրապես աստիճանաղրկվածներին ես բոլոր ճակատամարտերի ժամանակ էլ օգտագործել եմ առաջին շարքերում, որպես հրաձիգների, և միշտ այնտեղ, ուր վտանգն ավելի մեծ է եղել»[41]։ Դեկավարվելով այս սկզբունքով, 1827 թ. մայիսին, երբ Կովկասյան կորպուսի գլխավոր ուժերը Թիֆլիսից շարժվեցին Երևան, Պասկևիչը լեյբ-գվարդիական հավաքական գունդը տեղադրեց գործող կորպուսի ավանգարդում։ Դեկաբրիստական գունդը հունիսի 8-ին հասավ Էջմիածին, ապա կորպուսի գլխավոր ուժերի կազմում, ակտիվ մասնակցություն ունեցավ Գառնի-Չայի, Վեդի-Չայի ճակատամարտերին և հունիսի 26-ին մտավ Նախիջևան։ Այդ գունդը հուլիսի 5-ին մասնակցեց Ջևան-Բուլաղի նշանավոր ճակատամարտին և հուլիսի 7-ին առաջինը մտավ Աբասաբադի պարսպած բերդը։ Ջևան-Բուլաղի ճակատամարտում դեկաբրիստական գնդի խաղացած դերն այնքան ակնբախ էր, որ Պասկևիչը գվարդիայի հովանավոր մեծ իշխան Միխայիլ Պավլովիչին գրեց. «...բոլորից ավելի արժանի է գվարդիական գունդը, որի կարգը և եռանդը անպատկերելի է։ Ես բախտավոր եմ, որ դրան կարող եմ օրինակ դարձնել այստեղ կորպուսի այլ վորքերի համար»[42]։

Լեյբ-գվարդիական հավաքական գունդը շատ ավելի աչքի ընկնող դեր խաղաց Սարդարապատի և Երևանի բերդերի գրավման մարտերում։ Սեպտեմբերի 18—19-ին, երբ տեղի էր ունենում Սարդարապատի վճռական գրոհը, նա դարձյալ գտնվում էր առաջին շարքերում և իր համարձակ գործողություններով արագացրեց բերդի անկումը։

Սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը գվարդիական գնդի պաշտպանության տակ ու նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին Երևանի բերդի հաղթական գրոհի համար անհրաժեշտ կառույցները։ Այդ գնդի վաշտերն էին, որ հոկտեմբերի 1-ի վաղ առավոտյան, համարձակ գրոհով առաջինը ներխուժեցին բերդ։

Սարդարապատի և Երևանի բերդերի գրավման ժամանակ դեկաբրիստական գնդի դերն այնքան մեծ էր, որ ցարական հրամանատարությունը հարկադրված եղավ նշել զինվորների խիզախությունը՝ պարգևատրելով նրանց։

---

40 Տե՛ս Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 12։

41 *Е. Вейденбаум*, Декабристы на Кавказе («Русская старина», 1903, № 6, стр. 486).

42 *С. Скрутовский*, նշվ. աշխ., էջ 37—38։

Դնդի վաշտերից յուրաքանչյուրը Սարդարապատի գրավման համար պարգևատրվեց հնգական և երևանի համար՝ ութական խաչով, իսկ գնդի հրամանատար Իվան Շիպովը պարգևատրվեց Սարդարապատի համար՝ Վլադիմիրի 3-րդ աստիճանի և Երևանի գրավման համար՝ Գեորգիևյան 4-րդ աստիճանի շքանշաններով։

Լեյբ-գվարդիական հավաքական գունդը հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 5-ը մնաց Երևանում և մեծ դեր խաղաց քաղաքում կարգուկանոն հաստատելու գործում։ Այնուհետև դուրս գալով Երևանից, նա շարժվեց դեպի Թավրիզ և միանալով կորպուսի գլխավոր ուժերին, մասնակցեց գրեթե բոլոր կարևոր ռազմական գործողություններին[43]։

Արևելյան Հայաստանի ու նրա կենտրոն Երևանի համար մղված ճակատամարտերին գործնական մասնակցություն ունեցան նաև Կովկասյան կորպուս աքսորված և ուղարկված շուրջ յոթ տասնյակ դեկաբրիստ աստիճանազրկվածներ ու նրանց «ամեղսակիցներ»[44]։

Անկախ այն բանից, որ դեկաբրիստ սպաները աստիճանազրկված էին ու ծառայում էին որպես շարքային զինվորներ կամ պահպանելով զինվորական կոչումները, վարում էին հրամանատարական պաշտոններ, բոլորն էլ իրենց արժանի բաժինը բերեցին Կովկասյան կորպուսի տարած հաղթանակներում։ Դեներալ Պասկևիչը, Դենիս Դավիդովի դիպուկ բնութագրությամբ, «...աչքի չընկնելով ոչ ոգու մի առանձին կայունությամբ, ոչ պերճախոսությամբ, ոչ թղթի վրա իր մտքերը շարադրելու ընդունակությամբ, ոչ սիրալիր վարմունքով սրտեր գրավելու կարողությամբ և ոչ էլ գիտության որևէ ճյուղից տեղեկություններ ունենալով...»[45], հաճախ հարկադրված էր լինում դիմել ոչ միայն կորպուսում ծառայող նախկին դեկաբրիստ սպաների, այլև աստիճանազրկվածների օգնությանը, որպես գիտուն, փորձված ու հմուտ մասնագետների։ Այդ տեսակետից բնորոշ է նախկին գվարդիական կապիտան, լեյբ-գվարդիայի պիոներային (սակրավոր) էսկադրոնի հրամանատար, դեկաբրիստական շարժմանը հարելու համար աստիճանազրկված և Կովկասյան կորպուս աքսորված Մ. Պուշչինի օրինակը։ Պասկևիչը պատերազմական գործողությունների ընթացքում զգալով կորպուսի ինժեներական մասի պետ գեներալ Տրուզսոնի անկարողությունը, հարկադրված էր նրա պարտականությունները դնել Պուշչինի վրա, որը միշտ էլ դրանք կատարում էր մեծ հաջողությամբ։ Հասարակ զինվորի շինել հագած այդ մարդն ըստ էության դարձել էր կորպուսի ինժեներական մասի փաստացի ղեկավարը[46]։

Աբասաբադի տակ Արաքս գետն անցնելու համար Մ. Պուշչինի ղեկավարությամբ մեկ գիշերվա ընթացքում կառուցվեցին շարժական կամուրջներ

---

43 Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց լեյբ-գվարդիական հավաքական գունդը ետ կանչվեց Պետերբուրգ և նրա վաշտերին թույլ տրվեց նորից միաձուլվելու իրենց նախկին գնդերին։ 1828 թ. հուլիսի 8 (20)-ին այն դուրս եկավ Թիֆլիսից և Պետերբուրգ հասավ դեկտեմբերի 11 (23)-ին։

44 Տե՛ս Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 9—12։

45 Դենիս Դավիդով, Ռազմական հուշեր, էջ 528—529։


46 *М. В. Нечкина*, Движение декабристов, т. II, М., 1955, стр. 449.



Ն. Ն. Օժիցկի



Զ. Գ. Զերճիշև



Մ. Ի. Պուշչին



Ա. Ա. Բեստուժև-Մառլինսկի

Կովկաս աքսորված մի խումբ դեկաբրիստներ

և այլ հարմարանքներ, որոնք հնարավորություն տվին արագ կերպով անհրաժեշտ ուժեր փոխադրել գետի մյուս ափը՝ Ջևան-Բուլաղում ճակատամարտ տալու համար։ Մ. Պուշչինի նախագծերով ու նրա ղեկավարությամբ կառուցվեցին Սարդարապատի բերդը գրոհելու անհրաժեշտ ամրությունները[47]։

Առանձնապես մեծ էր Մ. Պուշչինի դերը Երևանի բերդի գրավման գործում։ Դեռևս 1827 թ. գարնանը, լինելով գեներալ Բենկենդորֆի զորախմբի կազմում, նա բավական հանգամանորեն ուսումնասիրել էր բերդը։ Հետագայում իր թողած հիշողություններում Մ. Պուշչինը գրում էր, որ հաճախ, հագնելով պարսիկի շորեր, երեկոները ծպտյալ մտնում էր Երևան, մոտիկից ուսումնասիրում բերդի պարիսպները, աշտարակները և պաշտպանական կարևոր այլ կետեր, ապա վերադառնալով ռուսական ճամբար, գծում բերդի հրետանային ռմբակոծման պլանները։ Այդ ամենը օգտակար եղավ 1827 թ. սեպտեմբերին, երբ Կովկասյան կորպուսը վերջին անգամ պաշարեց Երևանի բերդը։ Այս անգամ էլ, կորպուսի հրամանատարությունը բերդը գրոհելու համար բոլոր կարևոր ամրությունների կառուցումը հանձնարարեց Մ. Պուշչինին, փաստորեն մեկուսացնելով կորպուսի ինժեներական մասի պետ գեներալ Տրուզսոնին։ Երևանի գրավման կապակցությամբ Մ. Պուշչինին շնորհվեց կրտսեր սպայի աստիճան։

Կովկասյան կորպուսի Երևանյան արշավանքին նույնպիսի ակտիվ մասնակցություն ունեցան նախկին դեկաբրիստներ Ե. Լաչինովը, Պ. Բեստուժևը, Ֆ. Վիշնևսկին, Ն. Ակուլովը, Ա. Գանգեբլովը, Պ. Կոնովնիցինը, Ա. Ռիննկեվիչը, Մ. Մալյուտինը, Ն. Սեմիչևը, Ա. Միկլաշևսկին, Վ. Վոլխովսկին, Ի. Բուրցովը, Ն. Օրժիցկին և շատ ուրիշներ[48]։

Երևանի գրավումից հետո, մինչև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկսվելը, որոշ դեկաբրիստներ ծառայության մնացին Երևանի կայազորում և մոտիկից հաղորդակից դարձան հայ կյանքին։ Պ. Կոնովնիցինը վարում էր Երևանի բերդի պարետին առընթեր ինժեներական մասի պետի պաշտոնը, Ա. Գանգեբլովը՝ պլաց-մայորի պաշտոնը, ապա միաժամանակ պաշտոնավարում էր նաև Երևանի մարզային վարչությունում։ Մ. Մալյուտինը աշխատում էր Հայկական մարզի վարչությունում և եռանդուն մասնակցում հայերի ներգաղթի կազմակերպման կոմիտեի աշխատանքներին։

Հիշատակության արժանի է նաև այն փաստը, որ Ա. Գանգեբլովի և Պ. Կոնովնիցինի նախաձեռնությամբ 1827 թ. վերջերին 1828 թ. սկզբին Երևանում ռուս սպաներից կազմվում է մշակութային մի խմբակ։ Անդամները ծանոթանում են Հայաստանին, նրա հիասքանչ բնաշխարհին, նկարում զանազան բնապատկերներ, մասնավորապես գեղեցիկ ու վեհատեսիլ Արարատ լեռը, լուսաբանում ժամանակի հասարակական-քաղաքական հուզող հարցերը։ Նրանք քննարկում են նաև Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի ձեռագիրը։ Այդ խմբակի նախաձեռնությամբ Երևանի սարդարի պա-

---

47 «Записки Михайла Ивановича Пущина», («Русский архив», 1908, книга 3, № 11—13, стр. 510—514).

48 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 10—12։

լատի հայելապատ դահլիճում ռուս սպաների ուժերով տեղի ունեցավ «Խելքից պատուհաս»-ի առաջին բեմադրությունը, որին ներկա էր նաև հեղինակը։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի տարիներին Կովկասյան կորպուս աքսորված դեկաբրիստներից ոմանք անձնական կապեր հաստատեցին հայ մշակույթի, հասարակական ու ռազմական գործիչների (Հ. Ալամդարյան, Ն. Աշտարակեցի, Հ. Շահան-Ջրպետյան, Վ. Մադաթով, Լ. Լազարև, Վ. Բհհրութով և ուրիշներ) հետ։ Շատերն էլ, լինելով Հայաստանում ու մոտիկից ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանը, ականատես լինելով նրա ծանր վիճակին, մեծ կարեկցանքով էին լցված հայ ժողովրդի նկատմամբ։ Նրանց մասնավորապես հուզում էր այն հարցը, թե հայ ժողովուրդը կկարողանա՞ արդյոք դուրս գալ այն մղձավանջային ծանր վիճակից, որի մեջ գցել էին նրան պարսիկ խաները և թուրք փաշաները, թե կշարունակի մնալ նախկին թշվառ վիճակում։ Ն. Լաչինովը, Մ. Պուշչինը, Ա. Գանգեբլովը, Վ. Վոլխովսկին, Ա. Բեստուժև-Մառլինսկին, Ն. Վեդենյապինը, Վ. Սուխորուկովը և ուրիշներ իրենց հուշերում ու նամակներում ոչ միայն արժեքավոր տեղեկություններ են թողել Հայաստանի ու հայերի մասին, այլև արտահայտել են դեկաբրիստ սպաների ու աստիճանավորվածների ջերմ համակրանքը հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ և դրսևորել անկեղծ ցանկություն, որ, ինչպես իրենք էին ասում, երբեմնի նշանավոր Հայաստանը «նորից ձեռք բերի իր նախկին փառքը»։ Դեկաբրիստ Ն. Լաչինովը իր հուշերում գրում է. «Դո՜ւ, երբեմնի մեծահռչակ Հայաստան, դո՜ւ, որ մեզ մինչև հիմա հիացնող այդքան հուշարձաններ ես թողել, ի՞նչ է քեզ սպասում։ Կհայտնվե՞ս արդյոք նորից փառքի ասպարեզում, թե քո թախծոտ զավակներին վիճակված է հավիտյանս լքյալ գոյություն»[49]։

Չնայած ցարիզմի հետապնդած ռազմա-քաղաքական ու գաղութակալական նպատակներին, Կովկասյան կորպուսի շարքերում կռվող դեկաբրիստներից շատերը ցարիզմի մղած պատերազմները դիտում էին որպես միջոց՝ հայ ժողովրդին ազատագրելու թուրքական և պարսկական լծից։ Այդ մասին Ն. Լաչինովը գրում է. «Ամսի 17-ի առավոտյան (1828 թ. օգոստոսի 17-ի—խմբ.) մենք առաջ շարժվեցինք։ Նայեցինք անցյալ տարվա հենց այս օրերի հետ մեր դրության միանմանությանը։ Այն ժամանակ՝ օգոստոսի 16-ին, մենք դուրս եկանք Ջանգիլիից՝ (խոսքը Կրասովսկու դիվիզիայի՝ Ապարանի ճամբարի մասին է—խմբ.) էջմիածինն ազատագրելու համար, այժմ գնում ենք ազատագրելու նրա ճնշված զավակներին»[50]։

Այդ համոզմունքով էլ պայմանավորվում էր պատերազմական գործողությունների ժամանակ Կովկասյան կորպուսում ծառայող դեկաբրիստների ջերմ համակրանքը և օգնությունը հայերին։

* * *

Երևանի ազատագրումը պարսկական տիրապետությունից, անտարակույս, հնարավոր եղավ Կովկասյան կորպուսի բարձր մարտունակության,

49 Մ. Նեռսիսյան, նշվ աշխ., էջ 254։

50 Отрывок из «Исповеди Лачинова» («Кавказский сборник», том I, Тифлис, 1876, стр. 151, 152).

հակառակորդի դեմ մղված մարտերում ռուս զինվորների ցուցաբերած քաջության ու խիզախության շնորհիվ։ Միաժամանակ Երևանյան երրորդ արշավանքի հաջող ավարտին մեծ չափով նպաստեց հայերի ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների՝ ռուսական արշավող զորքերին ցույց տված համակողմանի օգնությունը։ Սարդարապատի և Երևանի բերդերի գրավման մարտերում մշտապես կրակի առաջին գծում էին հայկական կամավորական գումարտակները։ Սրանց հետ միասին թշնամու դեմ անձնվիրաբար կռվում էին Լոռի-Փամբակում, Շիրակում և Հայաստանի այլ շրջաններում գյուղացիներից տարերայնորեն ձևավորված աշխարհազորային-պարտիզանական ջոկատները։

Երևանի պաշարման օրերին հայ հասարակական գործիչները ռուսական կորպուսին օգնում էին իրենց մարտական պրոպագանդայով։ Ներսես Աշտարակեցին Երևանի ու նրա շրջակայքի հայերին կոչ էր անում ուժերազորեն Երևանը պաշարած ռուսական զորքերին ցույց տրվող օգնությունը։ Այդ կոչերը տարածողներից էր նորքեցի հայրենասեր Աստվածատուրյանը, որը գաղանաբար սպանվեց Հասան խանի սարբազների ձեռքով։ Արձագանքելով Աշտարակեցու կոչերին, Էջմիածնի, Քանաքեռի, Աշտարակի, Օշականի և այլ վայրերի գյուղացիները 1827 թ. սեպտեմբերին, աշխարհազորային նոր ջոկատներ կազմելով, օգնության էին գալիս Երևանի բերդը գրոհող ռուսական զորամասերին։

Կովկասյան կորպուսին գործուն օգնություն էին ցույց տալիս նաև բրոնի կերպով պարսկական բանակ ծառայության քշված հայերից շատերը։ Նրանք, փախչելով պարսկական բանակից, մտնում էին աշխարհազորային ջոկատների ու հայկական կամավորական դրուժինաների շարքերը և անձնազոհ կռվում հակառակորդի դեմ։ Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի մասնակից գեներալ Ն. Մուրավյովը, խոսելով հայկական կամավորական առաջին դրուժինայի մասին, վկայում է, որ այն պարբերաբար համալրվում էր ինչպես Երևանի շրջակայքի, այնպես էլ պարսկական բանակից փախած հայերով։ «...Այս առաջին դրուժինան միանալով մեզ,— գրում է Ն. Մուրավյովը,— հետզհետե ուժեղանում էր պարսկական գումարտակներից փախած հայ սարբազներով ու Երևանի խանության բնակիչներով։ Բոլորը հավատարիմ ծառայության երդում էին ընդունում և մեզ հետ մասնակցում մեր բոլոր արշավանքներին»[51]։

Հայկական կամավորական գումարտակների և աշխարհազորային-պարտիզանական ջոկատների շատ զորայիններ պատերազմական գործողությունների ժամանակ իրենց ցուցաբերած քաջության ու անձնազոհության համար արժանացան մարտական շքանշանների ու զանազան պարգևների։ Սարդարապատի բերդի գրավման համար 8 խաչով պարգևատրվեց հայկական կամավորական գումարտակի մի զորաբաժին, որ կազմված էր 259 մարդուց, 3 խաչով պարգևատրվեցին հայ աշխարհազորային-պարտիզանական մի այլ ջոկատի զորայինները[52]։ Երևանի բերդի գրավմանը մասնակցելու համար

---

51 Г. Эзов, նշվ. աշխ., էջ CXXVI։

52 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1137, գ. 715, թ. 138—139։

բազմաթիվ հայեր պարգևատրվեցին «Երևանի բերդի գրավման համար» մեդալով։

Սարդարապատի և Երևանի բերդերի գրավման ժամանակ իրենց քաջագործություններով աչքի ընկած և շքանշաններով պարգևատրված հայ զորայիններից էին Պողոս Սասնովը, Ռուստամ Լաչինովը, Գրիգոր Քալանթարյանը, Մկրտում Պուտապովը, Գևորգ Նազարյանը, Սարգիս Ալեքսանյանը և շատ ուրիշներ։

Խ. Աբովյանը հանձին Աղասու և նրա մարտական զինակիցների, գնահատելով հայ զորայինների խաղացած դերը ռուս-պարսկական երկրորդ պատերազմում, գրում էր. «Օրհնվի էն կաթը, որ դուք կերել էք, էն հողը՝ որ ձեղ ծնել ա...»[53]։

Երևանյան երրորդ արշավանքի ժամանակ աչքի ընկան նաև հայ սուրհանդակ-կապավորները։ Դրանցից էր խիզախ ու անձնազոհ Հովհաննես Ասլանյանը, որին ներսես Աշտարակեցին ուղարկեց էջմիածին՝ Բենկենդորֆի զորաջոկատի՝ Երևան շարժվելու լուրը հաղորդելու համար։ Սակայն էջմիածնի մատույցներում նրան բռնում են պարսիկ սարբազները և ենթարկում դաժան խոշտանգումների։ Փորում են նրա մեկ աչքը, կտրում քիթն ու լեզուն և ուշագնաց վիճակում նետում ամայի դաշտում ու հեռանում։ Հ. Ասլանյանն իր ցուցաբերած անձնազոհության համար պարգևատրվեց ոսկե մեդալով։ Նրան տարեկան սահմանվեց 100 ռուբլի կենսաթոշակ[54]։ Անվախ ու անձնազոհ սուրհանդակ-կապավորներ էին նաև Հարություն Մանուկյանը, Մկրտիչ Կոստանյանը, Համազասպ Օսայանը և ուրիշներ։

Երևանյան արշավանքի ժամանակ ևս հայերը Կովկասյան կորպուսի պարենային դժվարությունները հաղթահարելու համար ցույց էին տալիս անհրաժեշտ օգնություն։ 1827 թ. հունիսի 29-ին գնդապետ Աբխազովը պաշտոնական զեկուցագրով հայտնում էր, որ Գորիսում հավաքվել է պարենի մեծ պաշար, ընդամենը 9300 չետվերտ, որից սուխարի և ալյուր՝ 4500 չետվերտ։ Նա միաժամանակ հաղորդում էր, որ հավաքված է 1000 գլուխ անասուն[55]։ Ռուսական զորամասերին նյութական օգնություն էին ցույց տալիս նաև Լոռի—Փամբակի, Շիրակի, Ապարանի, Երևանի, էջմիածնի, Աշտարակի, Թալինի և մյուս շրջանների գյուղացիները։

Էջմիածնի և Երևանի հայերը 1827 թ. ամռանը անմիջական մասնակցություն ունեցան էջմիածնում ռուսական զինվորական մնայուն հոսպիտալի կազմակերպմանը։ Նրանք նորաստեղծ հոսպիտալին սիրով տրամադրում էին փայտ, մահճակալներ, բամբակ ու բուրդ, ներքնակներ և վերմակներ պատրաստելու համար։ Այդ հոսպիտալում ռուս բժիշկների հետ միասին ծառայում էին նաև հայ բուժակներ[56]։

---

53 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 325։

54 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը, մասն Ա, էջ 282—283։ Նույնը տե՛ս M. Я. Алавердяиц, Граф Иван Федорович Паскевич Ереванский, СПб., 1912, стр. 11.

55 Տե՛ս ԿՊՌԱ, ֆ. ՌԳԱ, գ. 4312, թ. 134—143։

56 Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. IV, Ереван, 1947, стр. 7. Երևանը ռուսական զորքերի կողմից գրավվելուց հետո զինվորական հոսպիտալը փոխադրվեց այնտեղ։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ հայերի Կովկասյան կորպուսին ցույց տված համակողմանի օգնության մասին Խ. Աբովյանը պատկերավոր ձևով գրել է. «Ինչ որ պարսից կռվի ժամանակին Հայք արին... Թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան»[57].



Հայկական գումարտակներից մեկի զինադրոշը, 1827 թ.

Իհարկե, ինքնին հասկանալի է, որ ռուսական բանակի շարքերում ընդհանուր թշնամու դեմ կռվող հայ զորայիններին, ռուսական զորքերին նյութական ու բարոյական օգնություն ցույց տվող հայ աշխատավորական զանգվածներին ոգեշնչում էին ոչ թե ցարիզմի ռազմա-քաղաքական ու գաղութատիրական նպատակները, այլ ռուսական զենքի միջոցով պարսիկ խաների լծից ազատագրվելու իրենց ակնկալությունները։

Կովկասյան կորպուսի Երևանյան երրորդ արշավանքին մասնակցություն ունեցան նաև վրաց և ադրբեջանական աշխարհազորային ջոկատները։ Գեներալ Դենիս Դավիդովի զորագնդի կազմում՝ դեռևս 1826 թ. սեպտեմբերին Փամբակում և Ապարանում Հասան խանի հրոսակախմբերի դեմ մղվող կռիվ-

57 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ III, էջ 121։

ներին իր մասնակցությունը բերեց վրացիներից կազմված աշխարհազորային մի չոկատ, որը հատկապես աչքի ընկավ Միրաքի նշանավոր ճակատամարտում։ 1827 թ. Երևանի մոտ գործող ռուսական բանակի կազմում թշնամու դեմ կռվում էր նաև վրացական մի այլ հեծյալ աշխարհազորային չոկատ։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Սարդարապատի և Երևանի բերդի գրավման համար մղված մարտերին։ Բացի այդ չոկատներից, Հայաստանում Կովկասյան կորպուսի զորամասերում հակառակորդի դեմ կռվում էին նաև վրացի շատ դինվորներ և հրամանատարներ։ Դրանց շարքերում էր նաև գեներալ-մայոր Ա. Ճավճավաձեն։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ Կովկասյան կորպուսի շարքերում, ոչ միայն Ադրբեջանում, այլև Հայաստանում գործում էին ոչ քիչ թվով ադրբեջանական աշխարհազորային չոկատներ։

Կովկասյան կորպուսին մեծ ծառայություն էր մատուցում ժամանակի ադրբեջանական ականավոր հասարակական գործիչ, գրող ու գիտնական, լուսավորիչ ու հրապարակախոս, ռուսական կողմնորոշման պաշտպան Ա. Բակիխանովը[58]։ Նա ռուս-պարսկական պատերազմի տարիներին աշխատում էր Կովկասյան կորպուսում՝ Գրիբոյեդովի մոտ, իբրև արևելյան լեզուների թարգման։ Բակիխանովը ակտիվ մասնակցություն ունեցավ Սարդարապատի գրավմանը և պարգևատրվեց։

Խ. Աբովյանը նույնպես բազմաթիվ վկայություններ ունի, որոնք հաստատում են պարսիկ խանների դեմ հայերի մղած ազատագրական պայքարի նկատմամբ ադրբեջանական ժողովրդական զանգվածների համակրանքը։ Եվ դա հասկանալի է։ Հայերին բախտակից ադրբեջանական աշխատավոր ժողովուրդը նույնպես տնքում էր պարսկական լծի տակ և պայքարում իր ազատագրության համար։

Հայերի նկատմամբ երևանաբնակ ադրբեջանցիների համակրանքի և ցույց տված օգնության մասին Խ. Աբովյանը գրում է. նրանք «...որ Հայի հետ մեկտեղ մեծացել՝ ախպոր պես էին վարվում...» հայի հետ, նրանք էլ էին «Սարդարին, Հասան-խանին անիծելով, թքելով, Ղզլբաշի վրա ատամները կրճտացնելով...» երազում այն օրը, որ կազատվեն «...անիծած Ղզլբաշի ձեռքը...»։ Ադրբեջանցիները «...շատ անգամ,— գրում է Խ. Աբովյանը,— հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով էկել էլ եդ երկիրը զավթել էին»[59]։

Ջնայած Երևանը պարսկական լծից ազատագրվեց ռուս զինվորների, Կովկասյան կորպուս աքսորված դեկաբրիստների և հայ աշխարհազորայինների քաջագործությունների շնորհիվ ու նրանց արյան գնով, բայց Նիկոլայ ցարը այդ փառքը վերագրեց գեներալ Պասկևիչին, նրան շնորհեց «Երևանի կոմս» տիտղոսը ու տվեց մեկ միլիոն ռուբլի պարգև։

---

58 Տե՛ս Ц. П. Агаян, А. Бакиханов, Баку, 1948, стр. 44—53.

59 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 128։

4. ԹՈՒՐՔՄԱՆՉԱՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռուս-պարսկական պատերազմը 1827 թ. հոկտեմբերից թևակոխեց իր եզրափակիչ էտապը։ Կովկասյան հատուկ կորպուսը, զարգացնելով Սարդարապատի և Երևանի համար մղված մարտերում ձեռք բերած հաջողությունները, հետապնդում էր պարտված հակառակորդին։ Օգտվելով պարսկական բանակի խուճապից ու բարոյալքումից, գեներալ Էրիսթովը, իր զորագնդով հոկտեմբերի 4-ին դուրս գալով Նախիջևանից, հոկտեմբերի 13-ին, գրեթե առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավեց Թավրիզը։ Հոկտեմբերի 19-ին Թավրիզ հասան նաև կորպուսի գլխավոր ուժերը։



Թուրքմենչայի պայմանագրի կնքումը 1828 թ.։ Նկ. Վ. Մաշկովի

Թավրիզի անկումը և պարսկական բանակի խուճապահար նահանջը շահական կառավարությանը հարկադրեցին հաշտություն խնդրել։ Հաշտության բանակցություններ վարելու համար նոյեմբերի 6-ին՝ Դեհխարղան ժամանեց պարսկական պատվիրակությունը (Դեհխարղանում էր գտնվում Կովկասյան կորպուսի գլխավոր զորակայանը)[60]։ Հաջորդ օրը սկսվեցին բանակցությունները։ Արտաքուստ թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող է ընթանում։ Պար-

---

60 Բանակցություններին ռուսների կողմից մասնակցում էին Ի. Պասկևիչը, Ա. Օբրեզկովը, որպես խմբագիրներ՝ Ա. Գրիբոյեդովը, Ա. Ամբուրգերը, Ն. Կիսլևը, թարգմանիչներ՝ Ա. Բակիխանովը, Դ. Վլադալին։ Պարսկական կողմից մասնակցում էին Աբաս-Միրզան, Կայմակամ Ֆարահանին, Բեգլար բեկ Ֆաթհ-Ալի խանը, ստաուս-քարտուղար՝ Միրզա-Մահմեդ-Ալին և թարգմանիչ Միրզա-Մասուդը (այդ բանակցությունների մասին տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 432)։

սիկներն ընդունում են ռուսական առաջարկությունը՝ Արաքս և Կուր գետերը ճանաչելու որպես պետական սահմանագիծ, ռուսներն էլ, ընդառաջելով պարսիկներին, համաձայնվում են ռազմատուգանքի չափը 15 քուրուր թումանից (30 միլիոն ռուբլի արծաթ) հասցնել 10 քուրուր թումանի (20 միլիոն ռուբլի)։ Սակայն այդպիսի զիջում ստանալուց հետո էլ նրանք ռուսների համար աննպաստ պայմաններ էին առաջարկում ռազմատուգանքի վճարման կարգի և ժամկետների մասին, մասնավորապես պահանջելով, որ ռազմատուգանքի առաջին վճարը կատարվի միայն այն ժամանակ, երբ ռուսական զորքերը ամբողջովին դուրս կգան Հարավային Ադրբեջանից։ Շուտով պարզ է դառնում, որ պարսիկները զանազան պատրվակներով աշխատում են բանակցությունները ձգձգել՝ հույս ունենալով, որ առաջիկայում թուրքերից օգնություն կստանան և, վերսկսելով ռազմական գործողությունները, ի չիք կդարձնեն Կովկասյան կորպուսի ձեռք բերած հաղթանակները։ Հայտնի է դառնում և այն, որ պարսկական հրամանատարությունը Ուրմիայի շրջանում խոշոր ուժեր է կենտրոնացնում ռուսական կորպուսին թիկունքից անակնկալ հարված հասցնելու համար։ Այսպիսի իրավիճակում հաշտության բանակցություններ վարելու համար սահմանված զինադադարի ժամկետը լրանալուց հետո, Պասկևիչը 1828 թ. հունվարի 7-ին ընդհատում է Դեհխարղանի բանակցությունները և վերադառնում Թավրիզ։

Ստեղծված բարդ իրադրության պայմաններում, որպեսզի շահական կառավարությունը հարկադրված լինի անհապաղ հաշտության պայմանագիր կնքել, Կովկասյան կորպուսի հրամանատարությունը որոշում է վերսկսել հարձակողական գործողությունները։ 1828 թ. հունվարին Հարավային Ադրբեջանում գտնվող ռուսական զորամասերը կարճ ժամանակամիջոցում գրավում են Մարաղան, ապա Ուրմիան, Խոյը, Սալմաստը և հունվարի 25-ին Արդաբիլը։ Դրանից հետո կորպուսի գլխավոր ուժերը ուղղություն են վերցնում դեպի Թեհրան։

Պարսկական բանակի իրար հաջորդած պարտությունները մեծ չափով սրեցին երկրի ներքին հակասությունները։ Ուժեղացան խանական երկպառակությունները, Կաջարների դինաստիայի դեմ ծայր առան հուզումներ ու բացահայտ ապստամբություններ։ Կանգնած լինելով կատարյալ աղետի առաջ, Ֆաթհ-Ալի շահը անգլիական դեսպան Մակդոնալդի միջոցով Պասկևիչին հայտնեց, որ ընդունում է ռուսների առաջարկած հաշտության բոլոր պայմանները և խնդրում վերսկսել բանակցությունները։

Հաշտությունն անհրաժեշտ էր նաև ռուսներին, քանի որ նրանք արդեն լուծել էին իրենց առաջ դրված խնդիրները՝ գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունները և դուրս գալ Արաքսի՝ ստրատեգիական կարևորություն ներկայացնող սահմանագիծը։ Բացի այդ, հաշտության կնքումով կկանխվեր թուրք-պարսկական ռազմական հնարավոր դաշինքը և Թուրքիայի հետ պատերազմի դեպքում՝ Կովկասյան կորպուսի ամբողջ ուժերը կկենտրոնացվեին վերջինիս դեմ։

Հաշտության բանակցությունների վերսկսման վայր նշանակվեց Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղը, ուր և փետրվարի 6-ին ժամանեցին ռուսական ու պարսկական պատվիրակությու-

ները։ Անգլիական դիվանագետները դիմում են մի շարք փորձերի՝ մասնակցելու հաշտության բանակցություններին որպես միջնորդ կողմ։ Այդ նպատակով Թեհրանի անգլիական դեսպանության քարտուղար Կեմբելը նույնիսկ, նախքան Թուրքմենչայի բանակցությունները, հանդիպում ունեցավ Պասկևիչի հետ, սակայն նրանից վճռական մերժում ստացավ։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր կոմս Նեսսելրոդեն, իր հերթին, շտապեց նախազգուշացնել Պասկևիչին, որ հաշտության պայմանագրի կնքման գործում ոչ մի դեպքում թույլ չպետք է տալ Պարսկաստանում գտնվող անգլիական դեսպանության միջամտությունը[61]։



Ա. Ս. Գրիբոյեդով

1828 թ. փետրվարի 10 (22)-ին Թուրքմենչայում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքվեց երկկողմանի հաշտության պայմանագիր[62]։ Ռուսաստանի կողմից պայմանագիրը ըստորագրեցին գեներալ Պասկևիչը և պետական խորհրդական Ա. Օբրեզկովը, իսկ Պարսկաստանի կողմից՝ գահաժառանգ Աբաս-Միրզան։

Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում մեծ դեր խաղաց Ա. Ս. Գրիբոյեդովը։ Նա է ձևակերպել և վերջնականապես խմբագրել այդ դաշնագրի բոլոր հիմնական ու սկզբունքային հոդվածները։ Սակայն Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեությունը չի սահմանափակվում դրանով։ Պատերազմի ժամանակ նա անմիջական մասնակցություն ունեցավ նաև ռազմական գործողություններին և պարգևատրվեց «Երևանի բերդի գրավման համար» մեդալով[63]։

Թուրքմենչայի պայմանագրով ռուս-պարսկական պետական սահմանագիծը հարավում հասցվեց մինչև Արաքս գետը։ Պարսկաստանը պաշտոնապես ճանաչեց Երևանի ու Նախիջևանի խանությունների և Օրդուբադի գավառի միացումը Ռուսաստանին։ Նա պարտավորվեց Ռուսաստանին վճարել 10 քուրուր թուման (20 միլիոն ռուբլի արծաթ) ռազմական տուգանք։ Պարսկական կառավարությունը պարտավորվեց արգելք չհարուցել իր հպատակության տակ գտնվող այն քրիստոնյաներին, որոնք կցանկանային մշտապես բնակություն հաստատելու համար գաղթել ռուսական տիրապետության սահմանները։ Հատուկ հոդվածով Կասպից ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունքը վերապահվեց միայն Ռուսաստանին։ Թուրքմենչայի պայմանագրով

---

61 АКАК, т. VII, стр. 540.

62 «Договоры России с Востоком...», стр. 214—222.

63 Տե՛ս Վ. Ա. Պառսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 61—63։

վերահաստատվեցին Պարսկաստանի՝ Գյուլիստանի պայմանագրի համաձայն ստանձնած բոլոր պարտավորությունները։

Պայմանավորող կողմերի միջև մխիթարական կնքվեց ռուս վաճառականության համար նպաստավոր առևտրական պայմանագիր։

Այսպիսով, ռուս-պարսկական երկրորդ պատերազմում ռուսական բանակների փառած հաղթանակի և Թուրքմենչայի պայմանագրի շնորհիվ վերջնականապես տապալվեցին Հայաստանը շահական Պարսկաստանի տիրապետության տակ պահելու պարսկական խանների և նրանց «հովանավոր» Անգլիայի ու Ֆրանսիայի ռեակցիոն պլանները։ Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին և հայ ժողովրդի արևելյան հատվածն ազատագրվելով պարսկական դժնդակ տիրապետությունից, իր բախտը հաստատորեն կապեց ռուս մեծ ժողովրդի հետ։

* * *

Ողջ հայության հետ միասին Պարսկաստանում ապրող հայերը նույնպես խանդավառությամբ ընդունեցին Թուրքմենչայի պայմանագիրը։ Եվ դա հասկանալի է։ Հայ ժողովրդի համար պատմական մեծ նշանակություն ունեցող այդ ակտով ոչ միայն Արևելյան Հայաստանն ազատվեց պարսիկ խանների կործանարար լծից, այլև նրա 15-րդ հոդվածով պարսկահայերին իրավունք էր վերապահվում գաղթելու Ռուսաստանին միացված իրենց հայրենի երկիրը։ Թուրքմենչայի պայմանագրով գաղթի համար սահմանվեց մեկ տարի ժամանակ։ Գաղթողներին իրավունք էր տրվում առանց մաքսի և որևէ այլ հարկ վճարելու, տանել իրենց շարժական կայքը, իսկ անշարժ կայքը վաճառելու և առհասարակ իրենց հայեցողությամբ տնօրինելու համար տրվեց հինգ տարի ժամանակ[64]։

Թուրքմենչայի պայմանագիրը ստորագրելուց հետո Պարսկաստանում բնակվող տասնյակ հազարավոր հայեր բուռն ցանկություն հայտնեցին ներգաղթել Արևելյան Հայաստան։ Դրա մեջ էին նրանք տեսնում իրենց փրկությունը պարսկական խանների ճիրաններից։

Հայ հասարակական գործիչները (Ն. Աշտարակեցին, Լազարյանները և ուրիշներ) Պարսկաստանից Արևելյան Հայաստան ներգաղթ կազմակերպելու իրավունք ձեռք բերելը համարելով հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող ձեռնարկում, եռանդուն գործունեություն ծավալեցին դեռևս ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում։ Ջանգվածային ներգաղթի միջոցով նրանք կամենում էին ոչ միայն պարսկահայերին փրկել ձուլման սպառնալիքից, այլև զարկ տալ ավերված երկրամասի տնտեսական ու հոգևոր կյանքին և Արևելյան Հայաստանը դարձնել հայ ժողովրդի ազգահավաքման օջախ։

Նոր գրավված Արևելյան Հայաստանը մարդաբնակ դարձնելու և մասնավորապես Արաքսի գիծը հուսալի էթնիկական տարրով բնակեցնելու խնդիրը մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը զբաղեցրել է նաև ցարական կառավարությանը։ Նա ծրագրում էր այդ խնդիրը լուծել այնտեղ շուրջ 80 հա-

64 «Договоры России с Востоком...», стр. 221—222.

զար կազակներ վերաբնակեցնելու միջոցով։ Սակայն շուտով պարզ դարձավ, որ Ռուսաստանից կազակների նման զանգվածային գաղթը կպահանջեր ինչպես կազմակերպչական երկարատև ու մանրակրկիտ նախապատրաստություններ, այնպես էլ դրամական ու նյութական խոշոր միջոցների ներդրում, որպիսին կառավարությունն ի վիճակի չէր տրամադրել։ Ուստի այդ ծրագիրը թողնվում է ապագային, օրվա ռեալ հարց համարելով Պարսկաստանից հայերի ներգաղթը[65]։ Արաքսի սահմանային գիծը կազակներով բնակեցնելու ծրագրի ձախողման հարցում պակաս նշանակություն չունեցավ նաև հայ հասարակական գործիչների ցույց տված համառ դիմադրությունը։

Հայերի ներգաղթին ռուսական կառավարության ցուցաբերած դրական վերաբերմունքը, անտարակույս, բխում էր նրա ռազմա-քաղաքական և գաղութային շահերից։ Այդ մասին գեներալ Պասկևիչը ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ Դիբիչին գրած զեկուցագրերից մեկում ուղղակիորեն ասում է. «Մեր սահմանի ամայի հողերի բնակեցումը հնազանդ, աշխատասեր և հավատով մեզ նվիրված ժողովրդով կարող է մեծ օգուտ բերել»[66]։

Թուրքմենչայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո սկսվում են ներգաղթի եռանդուն նախապատրաստությունները։ Ներգաղթողներին ընդունելու և տեղավորելու համար, 1828 թ. փետրվարի վերջերին, Երևանի մարզային ժամանակավոր վարչության կից կազմակերպվում է ներգաղթի կոմիտե, որը հայկական մարզի վարչության ստեղծումից հետո (1828 թ. մարտի 21) գործում էր նրան առընթեր, նրա ղեկավարության ներքո։ Կովկասյան կորպուսի հրամանատարը, 1828 թ. փետրվարի 29-ին, հատուկ հրահանգ է ուղարկում, ուր հանգամանորեն շարադրված են Երևանի մարզային ժամանակավոր վարչության և նրան առընթեր գործող ներգաղթի կոմիտեի անելիքները։ Այդ հրահանգի համաձայն ներգաղթողները, ռուսական սահմանը հասնելուն պես, լիովին անցնում էին ներգաղթի կոմիտեի իրավասության ներքո։ Հաշվի առնելով եկվորների զբաղմունքը, կոմիտեն պարտավոր էր ներգաղթողներին բնակեցնել համապատասխան շրջաններում (նախ Երևանի դավառում, որից հետո նաև Նախիջևանի, Օրդուբադի, Մեղրու և Ղափանի շրջաններում) պետական հողերի վրա։

Պարսկաստանից ներգաղթի կազմակերպումը հանձնարարվում է զնդապետ Լազար Լազարևին (Լազարյան), որը 1827 թ. աշնանից ծառայության մեջ էր Կովկասյան կորպուսում, իսկ Թավրիզը գրավելուց հետո նշանակվեց նրա սպարետ։ Լ. Լազարևի օգնականներն էին զնդապետ Մովսես Արղությանը, մայորներ Իվանե Մելիքյանը, Իսահակ Ղամազյանը, Դավիթ և Ալեքսանդր Ղորղանյանները և այլ զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներ[67]։ Զնդապետ Լ. Լազարևին տրամադրվեց մի չնչին գումար՝ 25 հազար ռուբլի արծաթ դրամ (որը հավասար էր 100 հազար ռուբլի թղթադրամի)՝ ներգաղթի հետ կապված ծախքերը հոգալու, ինչպես և խիստ կարիքավոր ներգաղթողներին նպաստ տալու համար։

---

65 Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն 2, Երևան, 1927, էջ 108—109։
66 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 978, թ. 22—26։
67 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 58, վավ. 133։

Լ. Լազարևը ձեռնամուխ եղավ ներգաղթի կազմակերպմանը՝ առաջնորդվելով գեներալ Պասկևիչի 1828 թ. փետրվարի 26-ի հատուկ հրահանգով։ Այնտեղ հանգամանորեն շարադրված էր ներգաղթի կազմակերպման կարգը[68]։ Հրահանգված էր ներգաղթը կազմակերպել սոսկ կամավոր սկզբունքով։ Առաջին հերթին գաղթեցվելու էին այն շրջաններից, որտեղից Կովկասյան կորպուսի զորամասերը շուտ էին հեռանալու։ Ռուսական կառավարության անունից հայերին հավաստիացնում էին, որ գաղթելու դեպքում նրանք կըստանան «նարավորություն՝ զբաղվելու երկրագործությամբ, արհեստով, առևտրով և այն ամենով, ինչով կցանկանան։ Գյուղացիներին խոստանում էին բավարար չափով հող։ Նրանք վեց տարով ազատվում էին հարկեր վճարելուց և երեք տարով բոլոր տեսակի պարհակներից։

Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանը հանձնարարվում էր գործարար օգնություն ցույց տալ Լ. Լազարևին՝ գաղթը հաջող կազմակերպելու համար, ինչպես և ապահովել գաղթականների կյանքը և ունեցվածքը, հոգ տանել նաև Պարսկաստանում՝ նրանց անշարժ գույքի պահպանմանը և վաճառքի կազմակերպմանը։ Հրահանգվում էր՝ գաղթականների շարժումը և ռուսական սահմանում ընդունումը դյուրացնելու նպատակով նրանց բաժանել խմբերի՝ յուրաքանչյուրը կազմված 150—300 ընտանիքից։

Հայերի գաղթի կազմակերպմանը եռանդուն մասնակցություն ունեցավ Պարսկաստանում ռուսական արտակարգ լիազոր-դեսպան Ա. Ս. Գրիբոյեդովը։ Նա մշտապես կապված էր ինչպես գնդապետ Լ. Լազարևի, այնպես էլ Երևանում գործող ներգաղթի կոմիտեի հետ։ Ա. Գրիբոյեդովը նույնիսկ իր վրա էր վերցնում գաղթականների՝ Պարսկաստանում թողած գույքի պահպանման ու վաճառքի կազմակերպման գործը[69]։

Ներգաղթի նախապատրաստման և իրագործման մեջ իր խոշոր ներդրումն ունի Հայկական մարզի վարչության անդամ Ներսես Աշտարակեցին։ Ներգաղթը հաջողությամբ պսակելու համար նա մեկ անգամ չէ, որ դիմել է գեներալներ Դիբիչի, Պասկևիչի, Կրասովսկու, Պարսկաստանում ռուսական դեսպան Գրիբոյեդովի և ռուսական այլ բարձրաստիճան զինվորականների ու պետական գործիչների օգնությանը։ Նա միաժամանակ գործարար կապեր է հաստատում Լ. Լազարևի ու նրա օգնականների հետ։ Ներսեսը հատուկ պատվիրակների միջոցով բացատրական լայն գործունեություն ծավալեց նաև պարսկահայերի մեջ, հորդորելով նրանց ներգաղթել Արևելյան Հայաստան։ Իսկ երբ ներգաղթն սկսվեց, նա մեծ ջանքեր գործադրեց Հայկական մարզում գաղթականների ընդունման, բնակեցման և նրանց ապրելու համար շատ թե քիչ տանելի պայմաններ ստեղծելու գործում եղած դժվարությունները հաղթահարելու համար։

Հայերի գաղթը կապված էր բազմաթիվ դժվարությունների հետ։ Շահական կառավարությունն, օրինակ, դիմում էր զանազան միջոցների՝ տապա-

---

68 ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 978, թ. 3—9։ Նույնը տե՛ս «Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», Մոսկվա, 1832, էջ 71—72։

69 Տե՛ս А. С. Грибоедов, Полное собрание сочинений, т. III, П., 1917, стр. 237.

լելու այն, որպեսզի չզրկվի իր հազարավոր շահավետ հարկատուներից։ Պարսիկ խաները նույնիսկ սկսեցին մեղադրել Լ. Լազարևին, թե իբր նա խախտում է գաղթի կամավոր սկզբունքը և դիմում բռնի միջոցների։ Այդ խարդավանքները մերկացնելու համար Լ. Լազարևին նույնիսկ հարկ եղավ կազմակերպել գաղթող հայերի և պարսկական պաշտոնյա անձանց առերեսում, որի ժամանակ հայերը միաբերան հաստատեցին, որ իրենք գաղթում են լիակատար հոժարությամբ և որ ոչ մի ուժ չի կարող իրենց ետ պահել հայրենիք վերադառնալու որոշումից[70]։

Հայերին գաղթից ետ պահելու նպատակով պարսիկ խաները ստեղծում էին նաև զանազան արհեստական խոչընդոտներ, հատկապես մեծ դժվարություններ էին հարուցում՝ խանգարելու նրանց անշարժ գույքի վաճառքը։ Սակայն դա նույնպես հայերին ետ չպահեց գաղթելու իրենց հաստատ որոշումից։ Այն, ինչ չէին կարողանում վաճառել, նրանք թողնում էին իրենց ծանոթներին, կամ բարեկամներին՝ հետագայում վաճառելու հույսով, շատերը նույնիսկ հրաժարվում էին իրենց անշարժ գույքից, միայն թե օր առաջ հասնեին հայրենիք։ Հայերի ներգաղթի նկատմամբ պարսիկ խաների վարած թշնամական քաղաքականությունը պաշտպանում էին անգլիական դիվանագետները[71]։ Չնայած հարուցվող բոլոր դժվարություններին ու արգելակումներին, ոչ պարսիկ խաները, ոչ էլ նրանց գործակից անգլիական դիվանագետները չկարողացան խափանել հայերի Հայաստան վերադառնալու գործը։ Պարսկաստանից հեռանալու հայերի ցանկությունը այնքան մեծ էր, որ շատերը, չսպասելով անգամ իրենց հերթին, ժամանակից շուտ սկսում էին շարժվել դեպի ռուսական սահմանը։

Գաղթականների առաջին քարավանը դեպի ռուսական սահմանը շարժվեց 1828 թ. մարտին։ Նրանք մեծ մասամբ կազմված էին թավրիզաբնակ հայերից։ Սրանց շուտով հետևեցին նաև մյուս գավառների հայերը։ Ներգաղթի ընթացքում գաղթողներին մեծ օգնություն էին ցույց տալիս Պարսկաստանում գտնվող ռուսական զորամասերը։ Զինվորներն ուղեկցում էին ներգաղթողների քարավաններին, նրանց կյանքը և ունեցվածքը ապահովում ավազակային հարձակումներից, անվտանգ կերպով հասցնում էին ռուսական սահմանն ու հանձնում ներգաղթի կազմակերպման կոմիտեին և Հայկական մարզի իշխանությունների իրավասությանը։

Ռուս սպաների՝ հայ գաղթականների նկատմամբ ցուցաբերած բարյացակամության ու հոգատարության մասին կան բազմաթիվ վկայություններ։ Օրինակ, ներգաղթողների մի քանի քարավաններ ուղեկցող կաբարդական հեռևակային և Շամշիևի կազակային գնդերի սպաները հաճախ իրենց ձիերը տրամադրում էին կանանց ու երեխաների փոխադրման համար, իսկ իրենք գընում էին ոտքով[72]։ Նրանցից շատերը, անձրևային ու ցուրտ եղանակին, գաղթականներին էին տրամադրում նույնիսկ իրենց անձնական տաք հագուստնե-

---

70 Տե՛ս С. Глинка, Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831, стр. 125. Տե՛ս նաև «Ընկերագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», էջ 44, 57։

71 Տե՛ս С. Глинка, նշվ. աշխ., էջ 49, 51—54։

72 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 978, թ. 22—26։

րը։ Գեներալ Պասկևիչի վկայությամբ Պարսկաստանից հայերի զանգվածային ներգաղթի հաջող կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև գնդապետ Լ. Լազարևի ու նրա օգնականների ծավալած եռանդուն գործունեությունը[73]։

1828—1829 թթ. Ատրպատականում ապրող 60—65 հազար հայերից Արևելյան Հայաստան ներգաղթեցին 8249 ընտանիք՝ շուրջ 45 հազար հայ[74]։ Նրանք մեծ մասամբ բնակեցվեցին Երևան, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում, Ջանգիբասարի, Կարբիբասարի, Սարդարապատի, Վեդիբասարի, Կըրխբուլաղի, Դարաչիչակի, Ապարանի, Սուրմալուի, ինչպես նաև Նախիջևանի ու Օրդուբադի մահալներում և Վայոց ձորում։ Մի քանի հարյուր ընտանիք բնակություն հաստատեց Ղարաբաղում և այլ վայրերում։

Հայկական մարզում գաղթականները բազում դժվարություններ կրեցին։ Նախապես հոգ չէր տարվել բնակարանային ամենատարրական հարմարություններ ստեղծելու մասին, ուստի շատերը հարկադրված էին ապրել վրաններում կամ բոլորովին բաց երկնքի տակ։ Միջոցներ չէին ձեռնարկվել գաղթականներին ապահովելու պարենով, նույնիսկ անհրաժեշտ քանակությամբ հացով։ Գաղթականներից շատերը, հնարավորություն չունենալով իրենց ունեցվածքը փոխադրել կամ վաճառել, ծայրաստիճան կարիքի մեջ ընկան։ Եվ վերջապես, Երևանի մարզային վարչությանը կից գործող ներգաղթի կոմիտեի, նրա տեղական բաժանմունքների ու ցարական բյուրոկրատիայի ապաշնորհության հետևանքով մեծ դժվարություններ ծագեցին նաև գաղթականների ընդունման, բնակատեղերի բաշխման և գաղթի հետ կապված այլևայլ հարցերում։

Չնայած այս դժվարություններին ու գաղթականների կրած զրկանքներին, ներգաղթի հետևանքով իրականություն դարձավ տասնյակ հազարավոր հայերի իղձը՝ ազատագրվել պարսիկ խաների տիրապետությունից, վերադառնալ հայրենիք՝ իրենց մասնակցությունը բերելու հարազատ ժողովրդի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքին։

---

73 Նույն տեղում։

74 АКАК, т. VII, стр. 845—851.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1828—1829 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՑՈՒԹՑՈՒՆԸ

1. ՌՈՒՍ—ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ

Դեռևս ռուս-պարսկական երկրորդ պատերազմի շրջանում լրջորեն սրվել էին մեծ տերությունների հակասությունները Մերձավոր Արևելքում և Բալկաններում։ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, օգտվելով Թուրքիայի թուլությունից, ձգտում էին աստիճանաբար իրենց ազդեցությունը տարածել ու ամրապնդել Օսմանյան կայսրության մեջ։ Նրանք ջանում էին տիրանալ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներին և հատկապես Կոստանդնուպոլսին, Կ. Մարքսի խոսքերով ասած՝ Արևելքի ու Արևմուտքի միջև ընկած այդ ոսկյա կամուրջին[1]։

Սևծովյան նեղուցների ու Կոստանդնուպոլսի գրավումը Ռուսաստանի կողմից կնշանակեր ազատ ելք ունենալ դեպի Միջերկրական ծով, որը մեծ չափով կնպաստեր նրա համաշխարհային տնտեսական կապերի ուժեղացմանը։ Սակայն Ռուսաստանի շահագրգռվածությունը չէր պայմանավորված միայն նեղուցներով և առհասարակ Սև ծովի հյուսիսային ափերով, ինչպես նաև դրանց տնտեսական նշանակությամբ։ Դրանք Ռուսաստանի համար բացառիկ կարևոր էին երկրի պաշտպանության, մասնավորապես նրա հարավային սահմանները թուրքական հարձակումներից անվտանգ դարձնելու համար։ Սևծովյան նեղուցների ռազմա-ստրատեգիական նշանակության մասին Ֆ. Էնգելսը գրել է. «Դարդանելի և Բոսֆորի առևտրական նշանակությունը միաժամանակ դրանք դարձնում է նաև առաջնակարգ ռազմական դիրքեր, այսինքն այնպիսի դիրքեր, որոնք վճռական նշանակություն կունենան ամեն մի պատերազմում... Միևնույն ժամանակ Դարդանելի և Բոսֆորի նեղուցներն այնքան նեղ են, որ հարկ եղած տեղերում կառուցված և լավ զինված փոքր թվով իսկ ամրություններ, որոնք անմիջապես կստեղծի Ռուսաստանը նեղուցներին տիրանալու դեպքում, կարող է անհաղթահարելի պատվար կազմել ողջ աշխարհի միացյալ նավատորմերի առջև, եթե նրանք փորձեն անցնել նեղուցներով»[2]։

---

1 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 441.

2 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. 9, изд. II, стр. 14.

Բալկաններում և Մերձավոր Արևելքում սուր կերպով բախվում էին Ռուսաստանի և արևմտաեվրոպական մեծ տերությունների շահերը։ Ցարիզմի հզոր ախոյաններն էին Ավստրիան, Անգլիան և Ֆրանսիան, որոնցից յուրաքանչյուրը պայքարում էր հաստատուն դիրք գրավելու այդ շրջաններում։

Սրված հակասությունների ու բարդ իրադրության պայմաններում ցարական կառավարությանը հաջողվեց հարկադրել Թուրքիային՝ դիմելու որոշ դիջումների։ 1826 թ. սեպտեմբերի 25-ին (ն. տ. հոկտեմբերի 7) Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Աքքերմանի համաձայնագիրը, որով թուրքական կառավարությունը կրկին վերահաստատում էր նախորդ պայմանագրերով ու մասնավորապես 1812 թ. Բուխարեստի պայմանագրով ստանձնած իր բոլոր պարտավորությունները[3]։ Թուրքիան պարտավորվեց սեփական ջրերում նավարկելու ազատ իրավունք տալ ռուս վաճառականների նավերին, ինչպես նաև առևտրական նպատակներով անարգել կերպով օգտվելու նեղուցներից։ Հատուկ նշվեց այն մասին, որ Թուրքիան անհապաղ իրագործելու է Բուխարեստի պայմանագրի որոշումները նաև Մոլդավիայի, Վալախիայի և Սերբիայի վերաբերյալ։ Աքքերմանի համաձայնագիրը Ռուսաստանի դիվանագիտական խոշոր հաղթանակն էր։

Ռուսական կառավարությունը որոշ քայլերի է դիմում լուծելու նաև թուրքական բռնապետության դեմ 1821 թ. ապստամբության դրոշ պարզած հույն ժողովրդին ինքնավարություն տալու հարցը։

Այդ կապակցությամբ Ռուսաստանի և Անգլիայի միջև 1826 թ. մարտի 23-ին (ապրիլի 4) ստորագրվեց Պետերբուրգի արձանագրությունը, որով ստորագրող կողմերը որոշեցին Թուրքիայի հետ համատեղ բանակցություններ վարել և միասին էլ դիմել սուլթանին՝ առաջարկելով դադարեցնել Հունաստանում մղվող պատերազմը և հույներին ինքնավարություն տալ։ Հունաստանն առանց հապաղելու միացավ Պետերբուրգի արձանագրությանը, իսկ սուլթանական կառավարությունը հրաժարվեց հունական հարցում որևէ դիջում անել։ Ինքնին հասկանալի է, որ հունական հարցում այդպիսի դիրք բռնելով, ցարիզմը առավելապես շահագրգռված էր Բալկաններում իր ազդեցության ուժեղացմամբ։

Թուրքիայի վրա նոր ճնշում գործադրելու և հունական հարցը «լուծելու» նպատակով 1827 թ. հուլիսի 6-ին Լոնդոնում, Ռուսաստանի նախաձեռնությամբ, համաձայնագիր ստորագրվեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որով նրանք պարտավորվեցին պաշտպանել հույներին ինքնավարություն տալու պահանջը։ Անգլիան և Ֆրանսիան վախենում էին, որ Ռուսաստանի միակողմանի միջամտությունը հունական հարցում կարող էր հանգեցնել Բալկաններում իրենց ազդեցության թուլացմանը և Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը։ Այդ իսկ պատճառով բարվոք էին համարում համատեղ գործել։

Լոնդոնյան համաձայնագրի կնքումից հետո Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան Թուրքիային առաջարկեցին դադարեցնել ռազմական գործողությունները Հունաստանում, հեռացնել այնտեղից թուրք-եգիպտական նավա-

[3] «Договоры России с Востоком...», стр. 49—58.

տորմն ու ցամաքային զորքերը և հունական հարցը լուծել առաջարկվա՝ պայմաններով։ Սակայն թուրքական կառավարությունը դարձյալ մերժեց դաշնակիցների առաջարկությունը և պատրաստվեց նոր զորքեր ուղարկել Հունաստան՝ ռազմական գործողություններն ավելի ծավալելու և ապստամբությունը վերջնականապես խեղդելու նպատակով։ Ի պատասխան դրան 1827 թ. սեպտեմբերին ռուսական, անգլիական և ֆրանսիական միացյալ նավատորմը մոտենում է Նավարինի ծովախորշին, ուր գտնվում էր թուրք-եգիպտական նավատորմը և վերսկսում բանակցությունները՝ հույների դեմ պատերազմական գործողությունները դադարեցնելու պահանջով։ Դարձյալ մերժում ստանալով, դաշնակիցների նավատորմը մտնում է Նավարինի ծովախորշը։ Թուրք-եգիպտական նավատորմը, օգտվելով իր թվական գերակշռությունից (126 նավ, դաշնակիցների 27 նավի դիմաց), առաջինն է կրակ բացում։ 1827 թ. հոկտեմբերի 20-ին Նավարինում տեղի ունեցավ ծովային խոշոր մարտ, որն ավարտվեց թուրք-եգիպտական նավատորմի ջախջախումով։

Նավարինի ճակատամարտն առավել բորբոքեց թուրքական կառավարող շրջանների թշնամանքը Ռուսաստանի նկատմամբ։ 1827 թ. դեկտեմբերի 18-ին սուլթանը չեղյալ համարեց Ռուսաստանի հետ կնքված բոլոր պայմանագրերը, այդ թվում նաև Աքքերմանի համաձայնագիրը և սկսեց նախապատրաստվել պատերազմի։ Նա ակնկալում էր պատերազմի միջոցով իրագործել Ղրիմը գրավելու, Ռուսաստանը ամբողջովին Ազովից ու Սև ծովից մեկուսացնելու, ռուսներին Կովկասից դուրս մղելու և այնտեղ թուրքական տիրապետություն հաստատելու իր վաղեմի ծրագրերը։ Կովկասում հաջողության հասնելու համար սուլթանի բոլոր գործակալները, այդ թվում և մահմեդական հոգևորականությունը, ռեակցիոն մյուրիդիզմի պրոպագանդ էին ծավալում կովկասյան լեռնականների մեջ։

Ցարիզմն իր հերթին, Թուրքմենչայի պայմանագիրը կնքելով, Թուրքիայի դեմ պատերազմի էր նախապատրաստվում, ծրագրելով ոչ միայն վերջնականապես խափանել Թուրքիայի զավթողական նկրտումները Ղրիմի, Կովկասի, Սև ու Ազովի ծովերի նկատմամբ, այլև թուլացնել նրա ռազմական հզորությունը և Բալկաններում ու Մերձավոր Արևելքում ուժեղացնել իր ազդեցությունը։

Այդ ծրագրի իրագործման համար նպաստավոր իրադրություն էր ստեղծվել։ Նապոլեոնի ջախջախումը մեծ չափով բարձրացրել էր Ռուսաստանի ռազմական հեղինակությունը։ 1827 թ. լոնդոնյան համաձայնագրի և Նավարինի ճակատամարտի հետևանքով Անգլիան ու Ֆրանսիան հարկադրված էին չեզոքություն պահպանել։ Բացի այդ, ուժեղացել էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը, քանի որ 1821 թ. Թուրքիայի դեմ սկսված հունական ապստամբությունը ոգեշնչող օրինակ հանդիսացավ նաև թուրքահպատակ մյուս ժողովուրդների համար։ Ցարիզմը այդ ժողովուրդների «հովանավորի» ու «պաշտպանի» դերը ընդունեց՝ նրանց իր շահերին ծառայեցնելու նպատակով։

«Այդ գրեթե բացառապես ուղղափառ-հունական դավանանքին պատկանող քրիստոնյաները (խոսքը բալկանյան քրիստոնյաների մասին է—խմբ.),—

պրում է Ֆ. Էնգելսը,— այդպիսով, դավանակից էին ռուսներին, իսկ նրանց թվում սլավոնները՝ սերբերն ու բուլղարները նաև նրանց ցեղակիցներն են։ Այդ իսկ պատճառով էլ բավական էր, որ Ռուսաստանը հայտարարեր ճնշված ուղղափառ եկեղեցին ու ստրկացված սլավոնությանը պաշտպանելու իր կոչման մասին, որպեսզի այստեղ ազատագրության գաղափար եվ ատելություն առաջացնելու համար հողը արդեն պատրաստ լիներ։ Ճիշտ այդպես էլ Կովկասյան լեռնաշղթայից հարավ Թուրքական տիրապետության տակ գտնվում էին քրիստոնեական փոքր պետություններ ու քրիստոնեություն դավանող հայեր, որոնց նկատմամբ ցարիզմը կարող էր իրեն «ազատարար» հռչակել»[4]։ Անկախ ցարիզմի նվաճողական նպատակներից, այդ ժողովուրդների նկատմամբ նրա վարած «հովանավորման» քաղաքականությունը, ինչպես նաև պատերազմների միջոցով Թուրքիայի ռազմական հզորության թուլացումը օբյեկտիվորեն աշխուժացնում էր թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները և Ռուսաստանի նկատմամբ համակրանքի ջերմ զգացմունքներ արթնացնում նրանց մեջ։ Այս, ինչպես և ռուսական զենքի միջոցով Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, մեծ հույսեր էին ներշնչում նաև արևմտահայ զանգվածներին։ Նրանց մեջ գնալով ուժեղանում էր իրենց գոյատևման համար ակտիվ պայքարի դիմելու վճռականությունը։ Դրա անմոռաց օրինակը տվեցին Տավրոսյան լեռների քաջակորով զավակները՝ զեյթունցիները, որոնք իրենց անձնազոհ պայքարով հասել էին յուրօրինակ ինքնավարության։ XIX դարի քսանական թվականների առաջին կեսին հայերի ինքնապաշտպանական զինված ելույթներ տեղի ունեցան նաև Բայազետի, Սասունի և Արևմտյան Հայաստանի մի շարք այլ գավառներում։

2. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Ռուսաստանի համար նպաստավոր իրադրության պայմաններում՝ 1828 թ. ապրիլի 14 (26)-ին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը՝ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներով։

Ռուսական հրամանատարությունը Կովկասյան ճակատում իր գլխավոր խնդիրն էր համարում՝ գրավել Փոթին ու Անապան, ամրանալ Սև ծովի արեվելյան ափերին, տեր դառնալ Կարսին, Ախալքալաքին, Ախալցխային, Բայազետին և այդպիսով անվտանգ դարձնել կայսրության հարավային սահմանները։ Բացի այդ, Կովկասյան ռազմաճակատում, ակտիվ գործողությունների միջոցով ռուսական հրամանատարությունը ձգտում էր ջլատել թուրքական բանակը և թույլ չտալ հակառակորդին խոշոր ուժեր կուտակել պատերազմի գլխավոր՝ Դանուբ-բալկանյան ռազմաճակատում։

1828 թ. ապրիլին ռուսական բանակը (կազմված 92 հազար մարդուց), Պ. Վիտգենշտեյնի հրամանատարությամբ, անցավ Պրուտ գետը և գրավեց Դանուբյան իշխանությունները, իսկ Կովկասյան ճակատում ռուսական զոր-

---

4 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. 22, стр. 17.

քերը հարձակողական գործողություններ սկսեցին հունիսի կեսերին։ Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունների գլխավոր ասպարեզ դարձան Կարսի, Ախալցխայի, Բայազետի, Էրզրումի (Կարինի), և Վանի փաշայություններին տերիտորիաները, որոնց բնակչության հիմնական մասը հայերն էին։ Այս հանգամանքը ռուսական զորքերի համար խիստ դրական հետևանք ունեցավ, որովհետև արևմտահայերը, թուրքական տիրապետությունից իրենց ազատագրության ելքը կապելով Ռուսաստանի հետ, ամենուրեք Կովկասյան հատուկ կորպուսի զորամասերին դիմավորում էին մեծ սիրով և գործուն օգնություն էին ցույց տալիս[5]։

Պատերազմական գործողությունների առաջին իսկ օրերին Կովկասյան ճակատում ռուսական հրամանատարությունը խնդիր դրեց սրընթաց գրոհով գրավել ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Կարս քաղաքը և նրա հռչակավոր ամրոցը։ Կովկասյան կորպուսի զորամասերը (հայ աշխարհազորայինների հետ միասին շուրջ 14 հազար մարդ) հունիսի 14-ին անցան Ախուրյան գետը և ձեռնամուխ եղան այդ խնդրի իրագործմանը։

Ռուսական բանակի առաջխաղացումը դեպի Կարս եռանդուն պայքարի հանեց նաև արևելահայ զանգվածներին։ Ճակատ մեկնելու համար կազմակերպվում էին հայկական աշխարհազորային նոր ջոկատներ։ Նկատի ունենալով ռուս-պարսկական առաջին և երկրորդ պատերազմների ժամանակ հայկական աշխարհազորային ջոկատների խաղացած կարևոր դերը, Կովկասյան կորպուսի հրամանատարությունը սիրով ընդառաջում էր հայերի նախաձեռնությանը, որովհետև Կովկասյան ռազմաճակատում հակառակորդը քանակապես գերակշռում էր ռուսական ուժերին։ Եթե Կովկասյան ռազմաճակատում ակտիվ հարձակողական գործողությունների համար Թուրքիան 40 հազարից ավելի զորք ուներ, ապա ռուսները՝ Կովկասում ունեցած 49 հազար զորքից Թուրքիայի դեմ հարձակողական գործողություններ վարելու համար կարող էին դուրս բերել միայն շուրջ 14 հազար զինվոր[6]։ Մնացած զորամասերը զբաղված էին երկրամասի սահմանային շրջանների պաշտպանությամբ։ Այս իրադրության մեջ Կովկասյան կորպուսի հրամանատարությունն, ընդառաջելով հայերի ցանկությանը, դեռևս պատերազմի նախօրյակին ձեռնամուխ եղավ Երևանի ու նրա շրջակայքի հայերից կամավորական աշխարհազորային ջոկատների ձևավորմանը։ 1828 թ. փետրվարին Երևանում ստեղծվեց 400 հայերից բաղկացած «Հայկական հեծյալ գունդ» և «Հայկական հետևակային գումարտակ» (800 հոգի)[7]։ Խաղաղ ժամանակ, մարզի սահմանների պահպանման համար սրանք պահակային ծառայություն էին կատարում, իսկ ռուս-թուրքական պատերազմը սկսվելուն պես մեկնեցին ռազմաճակատ։ Պատերազմի ընթացքում աշխարհազորային նոր ջոկատներ կազմակերպվեցին ինչպես Հայկական մարզի, այնպես էլ Կովկասի հայաբնակ մյուս շըր-

---

5 Տե՛ս «История военных действий в Азиатской Турции в 1828—1829 годах», ч. I, Варшава, 1843, стр. 76—77 и пос.

6 Տե՛ս *Н. И. Сухотин.* Периоды войн, не вошедшие в 1, 2 и 3 части обзора войн России от Петра Великого до наших дней, 1897, ч. IV, кн. 1, стр. 340—341.

7 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊՄ, ֆ. ՌԳՎ, գ. 4334, թթ. 8—9, 12—13։

ջանների հայկրից։ Միայն Հայկական մարզից ռազմաճակատ մեկնեցին շուրջ երեք հազար հայ աշխարհազորայիններ[8]։

Գոտրելով հակառակորդի դիմադրությունը, Կովկասյան հատուկ կորպուսի զորամասերը հունիսի 20-ին ընդհուպ մոտեցան Կարսին և պաշարեցին նրա բերդը։ Թուրքական հրամանատարությունը մեծ հույսեր էր կապում Կարսի բերդի հետ, որովհետև իր բնական հարմար դիրքով և տարիներ շարունակ ֆրանսիական ու անգլիական ռազմական ինժեներների օգնությամբ կառուցած արհեստական ամրություններով ամրացված լինելով, այն համարվում էր ժամանակի անառիկ ամրոցներից մեկը։ Բերդի պաշտպանությունը հանձնված էր 11 հազարանոց կայազորին, որն իր տրամադրության տակ ուներ 151 թնդանոթ։ Պաշարված Կարսին մեծաթիվ բանակով օգնության էր շտապում Կիոս-Մամեդ փաշան։ Սակայն, որքան էլ Կարսի բերդը անառիկ ամրոցի անուն էր հանել, այնուամենայնիվ չդիմացավ ռուսական զորամասերի հուժկու գրոհներին։ Հունիսի 23-ի վաղ առավոտյան Կարսի թուրքական կայազորը Մահմեդ-Էմին փաշայի գլխավորությամբ հարկադրված եղավ անձնատուր լինել, իսկ Կիոս-Մամեդ փաշայի զորաբանակը, լսելով Կարսի անկման լուրը, նահանջեց և սկսեց նախապատրաստվել՝ կանխելու ռուսական բանակի հետագա առաջխաղացումը։

Կարսի գրավմանը մեծ օգնություն ցույց տվեցին ինչպես Արևելյան Հայաստանից եկած և Կովկասյան կորպուսի կազմում գործող հայկական աշխարհազորային ջոկատները, այնպես էլ Կարսի հայերը։ Պաշարման օրերին բերդապահ թուրքական կայազորի հրամանատարությունը զինել էր զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց՝ բերդի պաշտպանության համար նրանց օգտագործելու նպատակով։ Սակայն կռվի թեժ պահին նրանցից շատերը միացան ռուսներին և զենքը ուղղեցին թուրքերի դեմ, իսկ բերդում մնացածները, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, ռուսներին օգնում էին, ինչով կարող էին[9]։

Կարսի անկումով թուրքերը զրկվեցին մի հզոր ամրոցից, որը կոչված էր ոչ միայն պաշտպանական դեր խաղալու, այլև անհրաժեշտության դեպքում օգտագործվելու որպես ռազմական հենակետ՝ Անդրկովկաս ներխուժելու համար։ Բացի այդ, գրավելով Կարսը, Կովկասյան կորպուսի զորամասերը թուրքական բանակը ետ շպրտեցին ռուսական սահմանագծից և ճանապարհ բացեցին դեպի Ախալքալաք, Ախալցխա, ապա Էրզրում։

Կովկասյան կորպուսի հրամանատարությունը, Կարսի պաշտպանությունը վստահելով հատուկ կայազորի, մնացած ուժերը (9 հազար զորք՝ 48 հրանոթով) շարժեց դեպի Ախալքալաք—Ախալցխա։ Սակայն Կիոս-Մամեդ փաշայի բանակին Ախալքալաք—Ախալցխային օգնության հասնելու հնարավորությունից զրկելու համար դիմեց ռազմական խորամանկության։ Ռուսական հրամանատարությունն, անցնելով ճարպիկ զորաշարժի, այնպիսի տպավորություն ստեղծեց, թե իբր նպատակ ունի շարժվել ոչ թե Ախալքալաք—

---

8 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 453։

9 Տե՛ս В. Потто, Кавказская война..., т. IV, вып. II, Тифлис, 1887, стр. 64.

Ախալցխա ուղղությամբ, այլ դեպի էրզրում։ Կիոս-Մամեդ փաշան, հավատալով դրան, իր բանակը շտապ ետ է քաշում՝ էրզրում տանող ճանապարհը պաշտպանելու։ Օգտվելով դրանից, ռուսական կորպուսը հուլիսի 23-ին առագորեն մոտեցավ Ախալքալաքին և սրընթաց գրոհով գրավեց այն։ Ամրոցի թուրքական կայազորի զինվորների մի մասը դիմեց փախուստի, իսկ 300 զինվորներ գերի հանձնվեցին։ Ախալքալաքից անմիջապես հետո, հուլիսի 26-ին, Կովկասյան կորպուսի զորամասերը նույնպիսի հաջողությամբ գրավում են նաև Խերթվիսի ամրոցը։

Ամրապնդելով ձեռք բերած հաջողությունները, համալրվելով Վրաստանից օգնության եկած 2500 զինվորներով, օգոստոսի 5-ին ռուսական բանակը պաշարեց Ախալցխան։ Նույն ժամանակամիջոցին Ախալցխային էր մոտեցել և նրա մոտակայքում ճամբար դրել Կիոս-Մամեդ փաշայի բանակը։

Ուստի Ախալցխայի գրավման համար նախ անհրաժեշտ եղավ ջախջախել և ետ մղել նրան օգնության շտապող Կիոս-Մամեդ փաշայի ուժերը։ Այդ նպատակով, օգոստոսի 9-ին, ռուսական կորպուսը գրոհում է Թշնամու ճամբարը։ Արյունահեղ ճակատամարտն ավարտվում է ռուսների հաղթանակով։ Թուրքական ջախջախված բանակը դիմում է փախուստի։

Օգոստոսի 10-ին Կովկասյան կորպուսի զորամասերը սկսում են Ախալցխայի բերդի գլխավոր գրոհը։ Ռուսական հրետանին հինգ օր շարունակ ռմբակոծում էր բերդը, իսկ հետևակը՝ գնալով սեղմում պաշարման օղակը։ Կորցնելով կարսը և Ախալքալաքը, թուրքական հրամանատարությունն իր հույսերը կապել էր Ախալցխայի բերդի հետ, որը պաշտպանության համար նույնպես ուներ հարմար ամրություններ և ուժեղ կայազոր (10 հազար զինվոր)։ Սրան միացել էր նաև Կիոս-Մամեդ փաշան՝ իր ջախջախված բանակից մնացած 5000 զինվորներով, և մեծ ճիգեր էր գործադրում ամեն գնով պաշտպանելու բերդը։ Սակայն այս անգամ ևս թուրքերի դիմադրությունը ապարդյուն անցավ։ Օգոստոսի 15-ի արյունահեղ ճակատամարտից հետո ռուսական կորպուսին հաջողվում է գրավել Ախալցխան։ Յոթ օր անց, օգոստոսի 22-ին, ռուսական զորքերը գրավում են նաև Արդահանը։

Ախալքալաքի, Ախալցխայի, Խերթվիսի և Արդահանի գրավման մարտերին Կովկասյան կորպուսի զորամասերին լուրջ օգնություն ցույց տվեցին հայերը։ Կարսի գրավումից հետո տեղի հայերից ձևավորվեց հետևակային դումարտակ և 800 մարդուց կազմված հեծյալ աշխարհազորային ջոկատ[10], որոնք իրենց մասնակցությունը բերեցին ռուսական կորպուսի հարձակողական գործողություններին։ Ախալցխայի գրավման համար մղված մարտերում ցուցաբերած արիությամբ աչքի ընկան 70 հայերից կազմված կամավորական ջոկատը[11], ինչպես և Ախալցխայի շատ հայեր ու վրացիներ։

Այն ժամանակ, երբ Կովկասյան կորպուսի գլխավոր ուժերը, գրավելով Կարսը, Ախալքալաքը, Ախալցխան ու Արդահանը, զբաղված էին ձեռք բերած հաղթանակը ամրապնդելու գործով, Հայկական մարզի կառավարիչ գեներալ Ա. Ճավճավաձեի հրամանատարության տակ գտնվող զորագունդը,

10 ՏԿ՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 1019, թ. 3, գ. 4644, թ. 72։

11 Նույն տեղում, գ. 4644, թ. 203—204։

դուրս գալով Երևանից, հարձակողական գործողություններ սկսեց Բայազետի ուղղությամբ։ Ա. Ճավճավաձեի գլխավորած զորագունդը, որի կազմում էր Երևանի 400 հայերից ու ադրբեջանցիներից կազմված աշխարհազորային յոկատը[12], օգոստոսի 27-ին Բայազետի մոտ պարտության մատնելով թուրքական առաջապահ ուժերին, հարկադրեց նրանց փախուստի դիմել։ Ռուսական զորագնդին համակողմանի օգնություն էին ցույց տալիս Բայազետի ու նրա շրջակայքի հայերը։ Պաշարված Բայազետի կայազորի վիճակը գնալով ծանրանում էր։ Մի կողմից ռուսական հրետանու և հետևակի անընդմեջ գրոհները, մյուս կողմից տեղի հայերի ճնշումը հարկադրեցին թուրքական կայազորին, քուրդ Բահլլուլ փաշայի գլխավորությամբ, օգոստոսի 28-ին անձնատուր լինել։ Բայազետից հետո գեներալ Ա. Ճավճավաձեի գլխավորած զորքերը գրավում են Դիադինը, իսկ սեպտեմբերի 12-ին՝ Ալաշկերտը։

1828 թ. ամառվա ամիսներին ռազմական գործողությունները զարգանում էին հօգուտ ռուսների նաև մերձսևծովյան շրջանում։ Առանձնացված ռուսական հատուկ զորամասերը Սև ծովի ափերին գրավում են Անապան, Սուխումը և Փոթին։ Այսպիսով, 1828 թ. ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում ավարտվեցին ռուսական զենքի փայլուն հաղթանակով։

Ռուսական բանակները 1828 թ. զգալի հաջողությունների հասան նաև Բալկանյան ռազմաճակատում։ Կոտրելով հակառակորդի քանակապես գերակշիռ ուժերի դիմադրությունը (ռուսների 92 հազար զորքի դեմ թուրքերը դուրս բերեցին 127 հազար), նրանք 1828 թ. հունիսի 17-ին գրավեցին Բրաիլը, իսկ հոկտեմբերի 10-ին՝ Վառնան։

* * *

Ի հակակշիռ ռուսական բանակների 1828 թ. ձեռք բերած ռազմական հաջողությունների, եվրոպական մեծ տէրությունները դիմում են Ռուսաստանի նկատմամբ ակտիվ հակագործողություններին։ Ավստրիան արագորեն սկսեց զինվել՝ անհրաժեշտության դեպքում Դանուբյան իշխանությունները ներխուժելու համար, իսկ անգլիական կառավարությունը, թեպետ կաշկանդված 1827 թ. Լոնդոնյան համաձայնագրով, այնուամենայնիվ չէր թաքցնում իր համակրանքը թուրքերի նկատմամբ։ Եթե Նավարինի նշանավոր ճակատամարտից անմիջապես հետո անգլիական կառավարությունը շտապում էր Թուրքիային խոնարհաբար «ափսոսանք» հայտնել, թե «Նավարինի ճակատամարտը լոկ մի չնախատեսված դժբախտ պատահականություն էր», ապա այժմ լիովին պարզ էր դառնում այդ «ափսոսանքի» պատճառը։ Անգլիան Արևելքում իր ազդեցության տարածման և ուժեղացման համար հաճախ է Ռուսաստանի դեմ հանել Թուրքիային։ 1828 թ. ռազմական գործողությունների ժամանակ ռուսական բանակների ձեռք բերած հաջողությունները հակադրվում էին Անգլիայի շահերին, դրա համար վերջինս ամեն կերպ ջանում էր փոխել պատերազմի ընթացքը։ Անգլիական դիվանագետները դիմում էին նորանոր խարդավանքների՝ Պարսկաստանին Ռուսաստանի դեմ վերստին

12 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. ՌԴԱ, գ. 4644, թ. 266, 267—269։

պատերազմի մեջ ներքաշելու համար, անգամ ջանում էին թուրք-պարսկական ռազմական դաշինք ստեղծել։ Պարսկաստանում անգլիական դիվանագետների վարած հակառուսական քաղաքականության մասին գեներալ Պասկևիչը 1828 թ. դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը Նեսսելրոդեին գրում էր. «անգլիական մինիստրությունը, որը Մալկոլմի դեսպանության ժամանակներից ի վեր պարսկական արքունիքում իր ազդեցությունը պահպանելու համար ծախսել է մեր դրամով 75 միլիոն, չի խնայի ևս մի քանի տասնյակ միլիոն, որպեսզի մեր դեմ զինի Պարսկաստանին և նրան հաջողությամբ գործելու միջոցներ տրամադրի»[13]։

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև նոր պատերազմ բորբոքելու նպատակով էր, որ անգլիական գործակալները և նրանց հարած պարսկական խաները 1829 թ. փետրվարի 11-ին (հ. տ. հունվարի 30-ին) Թեհրանում կազմակերպեցին պարսկական խաժամուժի հարձակումը ռուսական դեսպանատան վրա, որի ժամանակ զոհվեց ռուսական դեսպան Ա. Ս. Գրիբոյեդովը, ոչնչացվեց դեսպանության ամբողջ անձնակազմը և 32 կազակներից բաղկացած պահակախումբը։ Պատահաբար փրկվեցին դեսպանության առաջին քարտուղար Ի. Մալցևը, թարգմանիչ Մելիքովը և դեսպանատան մի քանի սպասարկողներ։ Անգլիական դիվանագետները շատ ջանքեր թափեցին, որպեսզի ծխտին իրենց մասնակցությունը այդ ամոթալի ակտին, սակայն դա նրանց չհաջողվեց։ Ռուսական դեսպանության վրա կատարված հարձակման հանդամանքների մասին ստացված առաջին իսկ տեղեկությունների հիման վրա գեներալ Պասկևիչը Նեսսելրոդեին գրում էր. «անգլիացիները անմասն չեն եղել Թեհրանում բռնկված խռովությանը... որովհետև նրանք անտարբեր չէին նայում Պարսկաստանում մեր մինիստրության գերազանցությանը և իրենց սեփական ազդեցության ոչնչացմանը»[14]։


Կովկասյան կորպուսում ծառայության, մասնավորապես Պարսկաստանում ռուսական դեսպանի պաշտոնում եղած ժամանակաշրջանում Ա. Գրիբոյեդովի՝ հայերի հանդեպ ունեցած ջերմ հոգատարությունը հայկական լայն շրջաններում առաջ էր բերել խոր հարգանքի ու երախտագիտության զգացում։ Ահա թե ինչու Գրիբոյեդովի ողբերգական մահը ծանր վիշտ պատճառեց հայերին։ Այդ շատ անգամ են գոհունակությամբ նշել հենց իրենք՝ Գրիբոյեդովի մերձավոր բարեկամներն ու պաշտոնակիցները։ Նկարագրելով Թավրիզում Ա. Ս. Գրիբոյեդովի հոգեհանգստի արարողությունը, ռուսական հյուպատոս Ամբուրգերը գրում էր. «Ջափարանց շատ ժողովուրդ կար՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ, որոնք կարծես բոլորն էլ խորապես վշտակցում էին հանգուցյալի դժբախտ ճակատագրին, նրանց մեջ հաճախ լսվում էին բարձրաձայն հեծկլտանքներ։ Կանայք մինչև երեկո չէին հեռանում եկեղեցուց, միայն պետք է նշել, որ դրանք մեծ մասամբ հայեր էին, իսկ նման վշտակցությունը, իհարկե, պատիվ է բերում այդ ժողովրդին»[15]։

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև նոր պատերազմ բորբոքելու և

---

13 АКАК, т. VII, стр. 667.
14 Նույն տեղում, էջ 674։
15 Նույն տեղում, էջ 697։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ


40°
42°
44°
46°
48°
38°
Ս Ե Վ Ծ Ո Վ
Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն
Կ Ա Ն
Կ Ա Ս Ի Ա
Ս Ա Հ Մ Ա Ն Յ Ա Ն
Ա Ր Ա Բ Ա Կ Ի Ր
Ե Ր Ե Վ Ա Ն Ի
Ե Ր Ե Վ Ա Ն Ի Տ Ր Ո Վ Ա Ն Ց Ի Ա
Ն Ա Խ Ի Ջ Ե Վ Ա Ն Ի
Ն Ա Խ Ի Ջ Ե Վ Ա Ն Ի Տ Ր Ո Վ Ա Ն Ց Ի Ա
Ա Ր Ց Ա Խ Ի
Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի
Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Տ Ր Ո Վ Ա Ն Ց Ի Ա
Ջ Ա Ն Գ Ե Զ Ո Ւ Ր
Ղ Ա Ր Ս Կ Ա Մ Ա Ս
Ա Ր Տ Ա Հ Ա Ն Ի
Ա Խ Ա Լ Ց Ի Խ Ե
Ա Խ Ա Լ Ք Ա Լ Ա Ք
Ա Ղ Ա Ս Ի Ի
Ա Ռ Տ Ա Հ Ա Ն
Ա Ղ Ա Ս Ի Ի Տ Ր Ո Վ Ա Ն Ց Ի Ա
Ա Ր Ե Վ Ե Լ Ց Ի Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Ի Ա Ց Ո Ւ Մ Ը Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն Ի Ն
Ա Ր Ե Վ Ե Լ Յ

Ռուսաստանի դեմ թուրք-պարսկական ռազմական դաշինք ստեղծելու անգլիական դիվանագետների փորձերը ձախողվեցին։ 1829 թ. գարնանը թուրքական բանակների դեմ ռուսական զորքերի տարած նոր հաղթանակները սթափեցրին Ֆաթհ-Ալի շահին, զգալ տալով, որ Ռուսաստանի դեմ նոր պատերազմը կործանարար կլինի Պարսկաստանի համար, ուստի նա շտապեց Նիկոլայ I-ին թանկարժեք նվեր ուղարկել, որ հայտնի է «շահ ալմաստ» անունով, պաշտոնապես ներողություն խնդրեց ռուսական դեսպանության հետ կատարված ողբերգության համար և պարտավորվեց անհապաղ կատարել Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանի ստանձնած բոլոր պարտավորությունները։ Ցարական կառավարությունն էլ բավարարվեց դրանով, որովհետև ռուս-թուրքական պատերազմը թևակոխել էր իր վճռական շրջափուլը և նման պայմաններում ռուս-պարսկական հարաբերությունների հետագա սրումը միայն օգտակար կլիներ Թուրքիային ու Արևմտյան տերություններին։

Հուսախաբ լինելով Պարսկաստանից, Անգլիան իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց Թուրքիայի վրա։ Նրա ռազմական խորհրդականների մշակած պլաններով սուլթանը ծրագրում էր 1829 թ. սկզբներին հզոր հարձակում սկսել Ախալցխայի, Կարսի և Բայազետի ուղղություններով։ Այդ պլանի իրագործման համար թուրքական հրամանատարությունը Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացրեց մեծաքանակ բանակ զենքի, զինամթերքի ու պարենի խոշոր պաշարներ։ Հայերին Կովկասյան կորպուսի զորամասերին օգնություն ցույց տալու հնարավորությունից զրկելու նպատակով թուրք փաշաները նրանց զանգվածաբար տեղահան էին անում սահմանամերձ շրջաններից ու քշում երկրի խորքը, իսկ նրանց ունեցվածքը կողոպտում։

Թուրքական հրամանատարությունն իր առաջին հարվածն ուղղեց Ախալցխայի դեմ։ Թշնամու 20 հազարանոց բանակը սրընթաց առաջխաղացումով 1829 թ. փետրվարի 17-ին պաշարեց Ախալցխան։ Փետրվարի 19-ի լույս 20-ի գիշերը տեղի ունեցած արյունալի մարտերից հետո հակառակորդին հաջողվեց ներխուժել քաղաքի փողոցները։ Օգտվելով դրանից, թուրք զինվորները ոչ միայն կողոպտում են հայերի ու վրացիների ամբողջ ունեցվածքը, այլև սրի են քաշում նրանց, չխնայելով անգամ երեխաներին, կանանց ու ալեհեր ծերունիներին։ Անառիկ էր մնում պաշարված ամրոցը, որի կայազորի պետ գեներալ Վ. Բեհբութովը, վճռականորեն մերժելով անձնատուր լինելու մասին Ահմեդ փաշայի վերջնագիրը, մեծ հմտությամբ կազմակերպեց պաշտպանությունը։ Ռուսական սակավաթիվ բերդապահ կայազորին օգնություն էին ցույց տալիս տեղի հայերն ու վրացիները, որոնցից շատերն ընկան անհավասար կռվում։ 12 օրից հետո պաշարված Ախալցխային Թիֆլիսից օգնության է հասնում նախկին դեկաբրիստ Ի. Գ. Բուրցովի զորադունդը։ Բարժոմի կիրճում նա պարտության է մատնում թուրքական առաջապահ կորպուսին և, Թիկունքից հարվածելով Ախալցխան պաշարած հակառակորդի բանակին, մարտի 4-ին թշնամուն հարկադրում է խուճապահար փախուստի դիմել։

Թուրքական զորքերի հակահարձակման ձախողման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև Բայազետի պաշտպանությունը։ Վանի

փաշայի գլխավորությամբ թուրքական 15 հազարանոց մի զորաբանակ 1829 թ. հունիսի 19 (20)-ին պաշարում է Բայազետը։ Ռուսական 1500 զինվորից կազմված կայազորի հետ միասին զենքի դիմեցին քաղաքի հայերը, անգամ կանայք ու պատանիները։ Գեներալ Պասկևիչի 1829 թ. հոկտեմբերի 10-ի պաշտոնական զեկուցագրի համաձայն, Բայազետի պաշտպանության մարտերին մասնակցել են 2000 հայեր[16]։ Դիմանալով զենքի ու պարենի պակասից առաջացած բոլոր դժվարություններին, ռուս զինվորների հետ սերտորեն համագործակցելով, նրանք ետ մղեցին թուրքական մեծաքանակ բանակի բոլոր գրոհները և քաջաբար պաշտպանեցին Բայազետը։ Պաշտպանության ղեկավարներից մեկի՝ գեներալ Պոպովի վկայությամբ, հայերը կռվում ու մեռնում էին ինչպես հերոսներ, նրանց հրամանատարները, չնայած բոլորն էլ վիրավորված էին, բայց միշտ գտնվում էին կրակի առաջին գծում։ Ռուս զինվորների և հայ աշխարհազորայինների քաջարի դիմադրության շնորհիվ ձախողվեց Բայազետը գրավելու թուրքական պլանը։ Լսելով էրզրումի ուղղությամբ ռուսական զորքերի հաղթական գործողությունների լուրը, Բայազետը պաշարած թուրքական բանակը շտապում է ետ վերադառնալ Վան, այն պաշտպանելու համար։

Թուրքական բանակների դեմ նշանավոր հակահարձակողական մարտերից էր նաև Սողանլուղի ճակատամարտը (հունիսի 19—20), որն ավարտվեց ռուսական զորքերի փայլուն հաղթանակով և հունիսի 24-ին Հասան-Ղալա բերդի գրավումով։

Բոլոր ուղղություններով թուրքական բանակներին ետ շպրտելուց հետո, Կովկասյան կորպուսի զորամասերը, առաջ շարժվելով, ազատագրում են Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ։ 1829 թ. հունիսի 27-ին ռուսական զորամասերը առանց դիմադրության հանդիպելու գրավեցին էրզրումը (Կարին)։ Դա խոշոր նշանակություն ունեցող իրադարձություն էր, որովհետև եթե Կարսը համարվում էր էրզրումի բանալին, ապա էրզրումը՝ Անատոլիայի նախադուռն էր։

Էրզրումի գրավման կարևորության մասին Ֆ. Էնգելսը գրել է. «... ռուսների կողմից էրզրումի հաջող գրոհը որոշեց կամպանիայի ելքը Ասիայում 1829 թվականին»[17]։ Ռուսական զորքերի հետ էրզրում հասավ նաև մեծ գրող Ա. Ս. Պուշկինը, որն այցի էր եկել Կովկաս աքսորված իր դեկաբրիստ բարեկամներին։ Հուլիս-օգոստոս ամիսներին ռուսական կորպուսի զորամասերը գրավում են Օլթին, Քղին, Մուշը, Խնուսը, Դերջանը, Բաբերդը (Բայբուրթը) և նախապատրաստվում գրավել Սև ծովի առափնյա շրջանները, հատկապես Բաթումն ու Տրապիզոնը։

* * *

1829 թ. ռազմական գործողությունների ժամանակ հայերի օգնությունը Կովկասյան կորպուսի զորամասերին ավելի կազմակերպված ու ծավալուն բնույթ ստացավ։ Եթե պատերազմի սկզբին արևմտահայերը մեծ մասամբ միանում էին Հայկական մարզից ռուսական զորամասերի հետ ռազմաճա-

16 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄԱ, ֆ. ՌԳԱ, գ. 1019, թ. 3։

17 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. 9, стр. 450.

կատ եկած աշխարհազորային ջոկատներին և քաջաբար կռվում թշնամու դեմ, ապա 1828 թ. վերջերին, մասնավորապես 1829 թ., նրանք ստեղծում են նաև իրենց ինքնուրույն ջոկատները։

Պատերազմական գործողությունների ամբողջ ընթացքում խոշոր ծառայություն մատուցեց Բայազետի Մելիք-Մարտիրոսի 500 մարդուց բաղկացած հեծյալ ջոկատը։

1829 թ. հունիսին էրզրում շարժվող ռուսական զորամասերին նշանակալից օգնություն ցույց տվեցին Բասենի և էրզրումի հայերը՝ կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ։ Աշխարհազորային այդպիսի ջոկատներ ստեղծեցին նաև Բայազետի, Ալաշկերտի, Բասենի, Սեբաստիայի, Մուշի, Արդահանի և Արևմտյան Հայաստանի այլ գավառների հայերը։



Էրզրումի գրավումը։ Նկ. Վ. Մաշկովի

Ռուս-թուրքական պատերազմում աչքի ընկնող մասնակցություն ունեցան Կովկասյան կորպուս աքսորված և արդեն ռուս-պարսկական պատերազմի ճակատներում բազում սխրանքներ գործած դեկաբրիստները։ Մ. Պուշչինի նախագծով ու նրա ղեկավարությամբ Կարս տանող ճանապարհին կառուցվեցին մի շարք կամուրջներ և անցումներ, նույնիսկ որոշ ճանապարհներ սալարկվեցին։

Ռուս-թուրքական պատերազմում համարձակ ու քաջ զորավարի անուն վաստակեց նախկին դեկաբրիստ փոխգնդապետ Ա. Միկլաշևսկին։ Նա մասնակցություն ունեցավ Կարսի, Ախալքալաքի ու Ախալցխայի բերդերի գրավման մարտերին։ 1828 թ. նոյեմբերին Ա. Միկլաշևսկին ստացավ գնդապետի աստիճան, 1829 թ. մարտին նշանակվեց 42-րդ Եգերական գնդի հր-

բամանատար և իր գնդով խոշոր դեր խաղաց թուրքական բանակների դեմ մղված բոլոր նշանավոր ճակատամարտերում։

1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների գրեթե բոլոր կարևոր ստրատեգիական պլանները կազմվում ու մշակվում էին դեկաբրիստների «Փրկության միության» ապա «Բարօրության միության» անդամ, Կովկասյան կորպուսի օբեր-կվարտիրմեյստեր Վ. Վոլխովսկու անմիջական մասնակցությամբ։ Նրա անունը սերտորեն կապված է Կարսի, Էրզրումի, Բաբերդի համար մղված ճակատամարտերի հետ։

Ռուս-պարսկական և հատկապես ռուս-թուրքական պատերազմների ժամանակ իր ռազմական խոր գիտելիքներով, զորավարական տաղանդով ու անձնական քաջությամբ փայլեց նախկին դեկաբրիստ գնդապետ Ի. Բուրցովը։ Նա Կարսի բերդի վրա կատարված խիզախ ու սրընթաց գրոհի նախաձեռնողներից մեկն էր, որի համար պարգևատրվեց Գեորգիևյան խաչով։ Ի. Բուրցովը, Ախալցխայի գրավման մարտերի ամենավճռական պահին, Շիրվանյան գնդի հրամանատար Բորոդինի սպանվելուց հետո, գնդի հրամանատարությունը վերցրեց իր ձեռքը, մեծ հմտությամբ ու համարձակությամբ մարտի տարավ այն և օգոստոսի 15-ին առաջինը մտավ Ախալցխա։

1829 թ. ռազմական գործողությունների ժամանակ Ի. Բուրցովի գլխավորած Խերսոնյան գրենադերական գունդը Արդահանի մոտ ջախջախեց թուրքական 16 հազար զինվորից կազմված բանակը և փայլուն հաղթանակ տարավ Սողանլուղի հակատամարտում։

1829 թ. ամռանը Ի. Բուրցովն, իր գնդով անցնելով վճռական հարձակման, գրավեց Օլթի գավառը, ապա Բաբերդը։ Հուլիսի 19-ին Խարբ գյուղի մոտ տեղի ունեցած արյունալի ճակատամարտում Ի. Բուրցովը, որն արդեն գեներալ-մայորի աստիճան ուներ, ծանր վիրավորվեց և մահացավ հուլիսի 23-ին։

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Արևելյան Հայաստանում մղված մարտերի մասնակից նախկին դեկաբրիստ Վ. Սուխորուկովը «գերազանց քաջություն» ցուցաբերեց նաև Ախալցխայի ու Էրզրումի համար մղված կռիվներում և ռուս-թուրքական պատերազմի այլ հերոսամարտերում։ Վ. Սուխորուկովը, որպես շնորհալի զինվորական, զարգացած պատմաբան և փայլուն լրագրող, աչքի ընկնող դեր խաղաց նաև Կովկասյան կորպուսի շտաբում։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում իրենց անունները հերոսի փառքով պսակեցին նախկին դեկաբրիստներ Պյոտր և Պավել Բեստուժև եղբայրները, Ա. Վեդենյապինը, Ֆ. Վիշնևսկին, Պ. Կոնովնիցինը, Ա. Գանգեբլովը, Ն. Սեմիչևը և ուրիշներ։

3. ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԴԱՂԹԸ

Պատերազմական գործողությունները ռուսների համար հաջող էին զարգանում նաև գլխավոր՝ Բալկանյան ռազմաճակատում։ 1829 թ. այս ռազմաճակատի հրամանատար նշանակվեց գեներալ Ի. Դիբիչը, որը ձեռնամուխ ե-

դավ վճռական հարձակողական գործողությունների և կարճ ժամանակում հասավ մեծ արդյունքի։ Հունիսի 18 (30)-ին ռուսական բանակը գրավեց Սիլիստրիա ամրոցը, ապա անցնելով Բալկանյան լեռնաշղթան, մտավ Հարավային Բուլղարիա և հուլիսի 12 (24)-ին գրավեց Բուրգաս քաղաքը։ Ռուսական բանակի մուտքը Բուլղարիա մեծ չափով նպաստեց Թուրքիայի դեմ բուլղար ժողովրդի մղած ազատագրական պայքարին։ 1829 թ. օգոստոսի 8 (20)-ին ռուսական բանակն, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավեց Ադրիանապոլիսը և Կոստանդնուպոլսի վրա արշավելու նախապատրաստություններ սկսեց։ Մինչդեռ թուրքական բանակը բոլորովին քայքայվել էր և մայրաքաղաքի պաշտպանության համար «նույնիսկ ձեռքի տակ բրիգադներ չկային»[18]։ Այսպիսի ծանր վիճակի մեջ ընկնելով, Սուլթան Մահմուդ II-ին ուրիշ ոչինչ չէր մնում, քան անհապաղ հաշտություն խնդրել ռուսներից։

Բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում ռուսական բանակների տարած հաղթանակները մեծ խուճապ առաջացրին նաև արևմտյան տերությունների կառավարող շրջաններում։ Ավստրիական բանակը սպասում էր հրամանի՝ ներխուժելու Դանուբյան իշխանությունները։ Հունիսին Կոստանդնուպոլիս վերադարձան անգլիական և ֆրանսիական դեսպանները, որոնք 1827 թ. նոյեմբերին, հունական միջադեպի կապակցությամբ, ռուսական դեսպանի հետ միասին հեռացել էին այնտեղից։ Անգլիական կառավարությունը ծովակալ Դորդոնին հրամայեց Կոստանդնուպոլսի վրա ռուսների շարժվելուն պես, նավատորմն անհապաղ մտցնել Սևծովյան նեղուցները։ Այսպիսով, Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան պատրաստ էին Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու, եթե նա իր բանակը շարժեր դեպի Թուրքիայի մայրաքաղաքը։ Նրանք միաժամանակ սկսում են դիվանագիտական ճնշում գործադրել՝ արագացնելու հաշտության կնքումը։ Ստեղծված միջազգային լարված իրադրությունը հարկադրեց Ռուսաստանին տեղի տալ արևմտյան պետությունների ճնշմանը և հաշտության դիմել։

Կռվող կողմերի միջև օգոստոսի 21-ից Ադրիանապոլսում սկսվում են հաշտության բանակցություններ։ Թուրքիայում գտնվող անգլիական, ֆրանսիական, ավստրիական և պրուսական դիվանագետները դիմում են զանազան միջոցների, որպեսզի հարկադրեն Ռուսաստանին՝ հաշտություն կնքել զիջող պայմաններով։ 1829 թ. սեպտեմբերի 2 (14)-ին կնքվեց հաշտության պայմանագիրը[19]։

Ադրիանապոլսի պայմանագրով Թուրքիան ճանաչեց Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրով հաստատված Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։ Այդ հաշտությամբ Ռուսաստանին անցան Դանուբի գետաբերանն՝ իր կղզիներով, Սև ծովի արևելյան ափը՝ Կուբանի գետաբերանից մինչև սբ. Նիկոլայի նավամատույցը, Անապա և Փոթի նավահանգիստները, Անդրկովկասում Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալքալաք ու Ախալցխա բերդերով։ Ռուսական առևտրական նավերին իրավունք տրվեց նավարկելու Սևծովյան նեղուցներով, իսկ ռուսական վաճառականներին՝ ազատ առևտուր անելու Օսմանյան կայսրության բոլոր մարզերում։ Թուր-

18 *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. 9, стр. 352.

19 «Договоры России с Востоком...», стр. 71—80.

քիան պարտավորվեց Ռուսաստանին վճարել ռազմատուգանք՝ 1,5 միլիոն հոլանդական չերվոնեց (հոլանդական չերվոնեցը հավասար էր 3 ռուբլի ոսկյա դրամի)։ Թուրքիան ճանաչեց Հունաստանի ներքին ինքնավարությունը[20]։ Ինքնավար իրավունքներ տրվեցին Մոլդավիային և Վալախիային, ըստ որում այդ ինքնավարության ապահովման երաշխիքը հանձնվեց Ռուսաստանին, որ փաստորեն նշանակում էր նրանց վրա Ռուսաստանի խնամակալության հաստատում։ Ադրիանապոլսի պայմանագրով ինքնավարություն տրվեց նաև Սերբիային։

Ադրիանապոլսի պայմանագրի 15-րդ հոդվածով Թուրքիան վերաճանաչեց մինչ այդ Ռուսաստանի հետ կնքած բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը[21]։

Արևմտյան տերությունների ճնշման տակ, որոնց ձեռնտու չէր Ռուսաստանի ուժեղացումն Արևելքում, ի վնաս հայ ժողովրդի ազգային շահերի, Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Կարսը և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները, որոնք պատերազմի ընթացքում գրավվել էին Կովկասյան կորպուսի կողմից։

Այսպիսով, Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը ցույց տվեց, որ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արդեն արևմտահայության հարցը սոսկ հայ-թուրքական, նույնիսկ հայ-ռուս-թուրքական հարաբերությունների հարց չէր։ Նա սերտորեն առնչվում էր ռուս-թուրք և արևմտյան մեծ տերությունների հարաբերություններին, Մերձավոր Արևելքում նրանց գաղութատիրական, նվաճողական ծրագրերին։ Ուստի այդ ժամանակներից ի վեր, հանուն իրենց նվաճողական-գաղութատիրական շահերի, մեծ տերությունները մեկ անգամ չէ, որ արևմտահայության ճակատագիրը դրել են արյունոտ զոհասեղանին։ Արևմտյան տերությունների վարած այդ քաղաքականությունն էլ դարձավ հայ ժողովրդի մեծ ողբերգության գլխավոր պատճառը։

* * *

Ադրիանապոլսի պայմանագրով, ռուսական բանակի գրաված Արևմտյան Հայաստանի գավառները Թուրքիային վերադարձնելու որոշումը հարկադրեց այդ վայրերի հայ բնակչության մի մասին գեթ օգտագործելու Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածը, որի համաձայն երկու կողմերի հպատակներին իրավունք տրվեց մեկ և կես տարվա ընթացքում ինքնահոժար մեկ երկրից տեղափոխվել մյուսը։

Արևմտահայերի գաղթը ղեկավարելու համար Թիֆլիսի զինվորական գեներալ-նահանգապետի նախագահությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով։ Նա գործում էր Պասկևիչի տված հրահանգով, որն իր բովանդակությամբ գրեթե նույնն էր, ինչ Պարսկաստանից հայերի գաղթի վերաբերյալ հրահանգը։ Հաստատված կարգի համաձայն նախատեսվում էր գաղթող վաճառականներին ու արհեստավորներին բնակեցնել քաղաքատիպ վայրե-

---

20 1830 թ. փետրվարի 3 (15)-ին Լոնդոնում կնքված համաձայնագրով Հունաստանը հռչակվեց անկախ պետություն՝ կառավարման միապետական ձևով։

21 «Договоры России с Востоком...», стр. 79.

րում, իսկ գյուղացիներին՝ պետական հողերի վրա։ Փոխարինելաբար նրանց նյութական օգնություն ցույց տալու համար հատկացվում էր 380 հազար ռուբլի արծաթ դրամ (թղթյա դրամով՝ 1500000 ռուբլի)[22]։ Գաղթողները վեց տարի ժամանակով ազատվում էին բոլոր տեսակի հարկերից ու պարհակներից։

Տասնյակ հազարավոր հայեր անհամբերությամբ էին սպասում գաղթի պաշտոնական թույլտվությանը, որպեսզի անցնեն ռուսական սահմանները, քանի դեռ Կովկասյան կորպուսի զորամասերը ետ չէին քաշվել Ադրիանապոլսի պայմանագրով սահմանված պետական սահմանագիծը։ Գաղթականների այսպիսի նախաղգուշական քայլի դիմելը բացատրվում է նրանով, որ թուրք փաշաները պատերազմում իրենց կրած պարտությունը շատ բանով վերագրելով հայերին, նախապատրաստվում էին նրանց նկատմամբ իրագործել նորանոր արյունալի ոճրագործություններ։ Ահա թե ինչու Կարսից, Արդահանից, Բայազետից, Էրզրումից և Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններից, գաղթի մասին պաշտոնական թույլտվության հրապարակումից անմիջապես հետո, նույնիսկ չսպասելով սահմանված նպաստը ստանալուն, գաղթականների առաջին քարավաններն սկսում են շարժվել դեպի ռուսական սահմանները։ Զանգվածային գաղթը սկսվեց 1830 թ. վաղ գարնանից։ Գեներալ Պասկևիչը 1830 թ. հունվարի 22-ին ռազմական մինիստր Չերնիշևին գրում էր, որ սկսած 1829 թ. հոկտեմբերի 1-ից մեծ քանակությամբ հայեր արդեն անցել են ռուսական սահմանը։ Նա հաղորդում էր, որ Կարսից և նրա շրջակայքից 2500 ընտանիքներ արդեն տեղավորվել են Ալագյազի (Արագած) մոտերքում Փամբակի ուեմասի ամայի գյուղերում, իսկ Էրզրումից 25 ընտանիքներ՝ Լոռիում։ Նույն զեկուցագրում Պասկևիչը հայտնում էր, որ գաղթի համար Էրզրումում պատրաստ է մոտ 2000 ընտանիք, Բայազետ քաղաքում՝ 1143, Բայազետի փաշայության գավառներում՝ ավելի քան 2000 ընտանիք[23]։

Ռուսական տիրապետության սահմանները գաղթելու հայերի ընդհանուր ցանկությունը տագնապ և անհանգստություն է պատճառում թուրք փաշաներին, որովհետև դրա հետևանքով նրանք զրկվում են իրենց առատ եկամուտներ բերող հողագործներից, արհեստավորներից ու վաճառականներից։ Ուստի, ինչպես իր ժամանակին պարսիկ խաները, այժմ էլ թուրք փաշաները դիմում են նենգ միջոցների, նրանց զանգվածային գաղթը խափանելու համար։

Չնայած թուրք փաշաների ու նրանց հովանավորող անգլիական գործակալների հարուցած բոլոր խոչընդոտներին, անգամ բացահայտ դիմադրությանը, արևմտահայերի գաղթը կատարվեց հաջողությամբ։ Արևմտյան Հայաստանից Հայկական մարզ և Անդրկովկասի այլ շրջանները գաղթած հայերի թիվը 1829 թ. վերջերից մինչև գաղթելու իրավունքի սահմանված ժամկետի ավարտը կազմել է 14047 ընտանիք՝ մոտավոր հաշիվներով 90—100 հազար մարդ[24]։

22 «Собранне актов, относящихся к обозренню исторни армянского народа», ч. I, М., 1833, стр. 61.

23 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊՄ, ֆ. ՌԳԱ, գ. 1019, թ. 12—13։

24 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 441—442։

Էրզրումի փաշայությունից գաղթածները, կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, հիմնականում հաստատվեցին Ախալցխա և Ախալքալաք քաղաքներում ու նրանց շրջակա գյուղերում, մասամբ էլ Լոռու, Շիրակի և Ծալկայի գյուղերում, կարսեցիները՝ Ալեքսանդրապոլում, Շիրակի, Ապարանի ու Թալինի գյուղերում, բայազետցիները՝ Սևանի ավազանում, Դարաչիչակում և մասամբ Սուրմալուում։ 1829—1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով միայն հայկական մարզում մշտական բնակություն հաստատած արևմտահայ գաղթականների թիվը հասնում էր 21666 մարդու[25] (3682 ընտանիք)։

Այսպիսով, թեպետ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո էլ Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ սուլթանական տիրապետության ներքո, այնուամենայնիվ, ռուսական բանակների տարած հաղթանակի շնորհիվ էր, որ Ադրիանապոլսի պայմանագրով շուրջ 100 հազար արևմտահայեր հնարավորություն ստացան գաղթել Արևելյան Հայաստան ու Կովկասի մյուս մարզերը, ազատվելով թուրքական լծից։ Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրով Պարսկաստանից ու Թուրքիայից հայերի զանգվածային գաղթը Արևելյան Հայաստան խոշոր քայլ էր հայ ժողովրդի ազգահավաքման ճանապարհին։

4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանի տարած հաղթանակների, Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերի, Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև 1827 թ. կնքված Լոնդոնյան համաձայնագրի հետևանքով Ռուսաստանը արտաքին քաղաքականության բնագավառում հասավ զգալի հաջողությունների։ Սակայն ակնհայտ է դրանց երկակի նշանակությունը։ Ռուսաստանի ռազմական հաղթանակները թեպետ ժամանակավորապես, բայց որոշակիորեն ամրապնդեցին ցարիզմի դիրքերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին քաղաքականության ասպարեզում։ Մյուս կողմից, այդ պատերազմներում Ռուսաստանի հաղթանակների շնորհիվ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրումը պարսկական, մասամբ էլ՝ նրանց ու բալկանյան որոշ ժողովուրդների ազատագրումը սուլթանական լծից, այդ ժողովուրդների համար առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ։

XIX դարի սկզբին հայ ժողովրդի համար ստեղծված բախտորոշ պահին, նրա նկատմամբ Պարսկաստանի ու Թուրքիայի, ինչպես և Անգլիայի ու Ֆրանսիայի վարած ռեակցիոն քաղաքականության պայմաններում, հայ ժողովրդի ֆիզիկական փրկության ու գոյատևման միակ ելքը Ռուսաստանին միանալն էր։ Եվ դա հասկանալի է, որովհետև թուրք փաշաները և պարսիկ խաները ազետալի իրավիճակ էին ստեղծել հայ ժողովրդի ճակատագրի և նրա ազատագրական պայքարի համար։ Մինչդեռ պատմական այդ կոնկրետ իրադրության պայմաններում, հայ ժողովրդի զարգացման հեռանկարներն օբյեկտի-

25 Տե՛ս И. Шопен, Исторический памятник..., стр. 539—540, 639—642.

վորեն համընկնում էին Ռուսաստանի պատմական զարգացման օրինաչափություններին և նպաստում առաջինի ֆիզիկական գոյության հարատևմանը, երկրի արտադրողական ուժերի, ազգային մշակույթի, հասարակական-քաղաքական մտքի զարգացմանը։ Ուստի, չնայած ցարիզմի նվաճողական նպատակներին և վարած գաղութատիրական քաղաքականությանը, ստեղծված պատմական կոնկրետ իրադրության պայմաններում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար օբյեկտիվորեն ունեցավ առաջադիմական խոշոր նշանակություն[26]։

Շահական Պարսկաստանը և սուլթանական Թուրքիան ոչ միայն զավթել էին Հայաստանը, հաստատել իրենց արյունոտ տիրապետությունը և մասնատել այդ հինավուրց ժողովրդին, նրա նկատմամբ կիրառելով ազգային ու կրոնական բիրտ խտրականության, բռնի մահմեդականացման ու ձուլման քաղաքականություն, այլև պարբերաբար կազմակերպում էին հայ զանգվածների բնաջնջումներ, որոնք լուրջ վտանգ էին ստեղծել հայ ժողովրդի նույնիսկ ֆիզիկական գոյության համար։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու շնորհիվ արևելահայերը ոչ միայն փրկվեցին բնաջինջ լինելու վերահաս վտանգից, այլև սկսած 1828 թ.՝ Պարսկաստանից, ապա Թուրքիայից մեծ քանակությամբ հայեր գաղթեցին Արևելյան Հայաստան, հնարավորություն ստանալով իրենց ուժերը նվիրաբերել հայ ժողովրդի տնտեսական, հոգևոր ու քաղաքական կյանքի զարգացմանը։

Նթե պարսիկ խաների կազմակերպած զանգվածային բռնագաղթերի հետևանքով ապագա Հայկական մարզի տերիտորիայում 1827 թ. սկզբին հայերի թիվը նվազել և կազմում էր բնակչության միայն մեկ քառորդը (106.900 բնակչից հայեր էին միայն 25.151 մարդ), ապա դրանից երեք տարի հետո, 1831 թ. նրանց թիվը հասավ 82.377 մարդու և կազմեց բնակչության կեսից ավելին[27]։ Հետագա տարիներին այդ թիվն առավել արագությամբ աճեց, և Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի հավաքման ու ազգային համախմբման օջախ։ Իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար գաղթելով Պարսկաստանից ու Թուրքիայից, հայերը ոչ միայն ապաստան էին գտնում Արևելյան Հայաստանում, այլև Կովկասի ու ռուսական կայսրության այլ մարզերում՝ ավելացնելով այնտեղ բնակվող հայերի թիվը։

Արևելյան Հայաստանում, նրա Ռուսաստանին միանալուց հետո, արագորեն աճում էր հայ բնակչությունը։ Ֆիզիկական բնաջնջման եզրին հասած հայ ժողովրդի համար Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման

---

26 *Տե՛ս М. Г. Нерсисян,* Из истории русско-армянских отношений, Ереван, 1956; *А. Р. Иоаннисян,* Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958; *З. Т. Григорян,* Присоединение Восточной Армении к России в начале XIX в., М., 1959; *Նույնի,* Հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամությունը, Երևան, 1942, *նույնի,* Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957, *նույնի,* Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, *Ֆ. Խ. Հակոբյան,* Երևանի պատմությունը (1801—1879), Երևան, 1959, *Վ. Ա. Պատրամյան,* Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947։

27 *Տե՛ս Ա. Երիցյան, Նշվ. աշխ., էջ 337—338։*

նշանակության արժեքավորման ելակետը միշտ և առաջին հերթին եղել է ժողովրդի ֆիզիկական գոյատևման հարցը։ Դրա համար էլ դեռևս այն ժամանակ Խ. Աբովյանը, խորապես ըմբռնելով Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու նշանակությունը հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման համար, գրել է. «...քոռ նախանձոտ մարդին գործքով ցույց կուտա, թե հայ ազգը ո՛չ թե փողի կամ շահի խաթեր ա ռուսի տիրության անունը պաշտում, այլ թե իր սրտի ուխտն ուզում կատարի, որ իրան ճալատաճ ու ազգը պահողին (ընդգծումը մերն է—խմբ.) արինը, կյանքը, որդին չխընայի»[28]։

Այդ հարցում նույն սկզբունքով են առաջնորդվել Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման ժամանակակից հայ հասարակական ակտիվ գործիչներ Մ. Թաղիադյանը, Հ. Ալամդարյանը և նրանց հաջորդած բոլոր հայ առաջադեմ ու հեռատես մտածողները։ Ահա թե ինչու Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց շուրջ մեկ դար հետո էլ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը գրել է. «Հայկական հարցը վայրենի կոտորածների... ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է։ Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ (ընդգծումը մերն է—խմբ.)։ Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին։

Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»[29]։ Ապա անդրադառնալով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակությանը, նա գրել է. «...մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Գուգարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիշտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առևանգումներով հայտնի հայկական հարցին հայոց աշխարհքի էս մասում, կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին»[30]։

Այսպիսով, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմական նշանակությունը մեծ է, նախ և առաջ, այն պատճառով, որ դրանով արևելահայերը փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից, ինչպես նաև ընդ պատավոր պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի ազգաճավաքման համար։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին շրջադարձային խոշոր նշանակություն ունեցավ նրա արտադրողական ուժերի և ողջ տնտեսական կյանքի զարգացման համար։ Պարսկաստանի տնտեսական ծայրաստիճան հետամնացությունը, երկրում իշխող միջնադարյան հողային հարաբերությունները և ծանր հարկային սիստեմը, արևելյան տիրակալների կողմից աշխատավորության գիշատիչ կողոպուտը, անձի ու սեփականության իրավունքի անձեռնմխելիության բացակայությունը, ֆեոդալական մասնատված-

28 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, Երևան, 1948, էջ 177։

29 Հովհ. Թումանյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1951, էջ 230—231։

30 Նույն տեղում, էջ 228։

ծությունը, մաքսային արգելափակումները, հարատև պատերազմները կաշկանդում և արգելակում էին երկրի արտադրողական ուժերի և ողջ տնտեսության զարգացումը։ Ավելին, Պարսկաստանը արագորեն կորցնում էր իր ինքնուրույնությունը, սկսում էր դառնալ կախյալ երկիր և ենթարկվել արևմտյան տերությունների գաղութային շահագործմանը։

Այլ էր Ռուսաստանի վիճակը։ Չնայած իր ընդհանուր հետամնացությանը, նա տնտեսապես անհամեմատ ավելի բարձր աստիճանի վրա էր գտնվում և հետագա առաջընթացի առավել մեծ նախադրյալներ ու պայմաններ ուներ, քան շահական Պարսկաստանը։ XIX դարի երկրորդ քառորդում Ռուսաստանում զարգանում էր արդյունաբերությունը, աճում էր արդյունաբերական ձեռնարկությունների թիվը և նրանցում աշխատող վարձու բանվորների քանակը։ Արտադրության մեջ նկատելիորեն ավելանում էր նաև մեքենային աշխատանքի ներդրումը։ Սկսվում է հայրենի մեքենաշինական գործարանների շինարարությունն ու գործարկումը։ Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց աճում էր քաղաքների թիվը և բնակչության քանակը։ XIX դարի 30-ական թվականների վերջերից Ռուսաստանում սկսվում է երկաթուղային շինարարությունը, որն իր հերթին մեծ չափով նպաստում է երկրի տնտեսական կյանքի զարգացմանը։ Ապրանք-դրամական հարաբերությունները սկսեցին ավելի ու ավելի ներթափանցել գյուղատնտեսության մեջ։ Այսպիսով, Ռուսաստանում զարգանում էր կապիտալիստական կացութաձևը, և շուտով նա թևակոխում է կապիտալիզմի շրջափուլը։

Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները բարերար ազդեցություն գործեցին Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման վրա։ Վերացվեցին նրա ֆեոդալական մասնատվածությունը, անիշխանությունը, ներքին մաքսային սահմանները, բնակչության համար ապահովվեց անձի ու սեփականության անձեռնմխելիության իրավունք։ Արևելյան Հայաստանի տնտեսությունը ներգրավվեց հետզհետե զարգացող համառուսաստանյան տնտեսական կյանքի ընդհանուր ոլորտը և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների հանդես գալու, արտադրողական ուժերի և ողջ տնտեսական կյանքի զարգացման համար։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու առաջին իսկ տասնամյակում լուրջ տեղաշարժեր կատարվեցին նրա տնտեսական կյանքում։ Ընդարձակվեցին ցանքատարածությունները, աճեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, հիմնվեցին բազմաթիվ մանուֆակտուրային ձեռնարկություններ, և պայմաններ ստեղծվեցին ֆաբրիկա-գործարանային արտադրության զարգացման համար։ Զգալիորեն ուժեղանում են նաև Արևելյան Հայաստանի առևտրա-տնտեսական կապերն Անդրկովկասի մյուս շրջանների, Ռուսաստանի, ինչպես և Հայաստանի հարևան երկրների հետ։

Այսպիսով, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը հայ ժողովրդի սոցիալական ու տնտեսական կյանքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին զուգադիպեց Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքի և մշակույթի զարգացման նր-

շանակալից մի ժամանակաշրջանի։ Եթե շահական Պարսկաստանը տակավին խարխափում էր միջնադարյան խավարի ու հետամնացության մեջ, կաշկանդում իր տիրապետության ներքո գտնվող հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի առաջընթացը, ապա Ռուսաստանը թևակոխել էր ազատագրական ու հեղափոխական շարժումների ազնվականական փուլը և ճանապարհ էր հարթում հեղափոխական-դեմոկրատական էտապին անցնելու համար։ Համապատասխանորեն զարգացման նոր շրջափուլ էր մտել նաև ռուսական ազգային դեմոկրատական մշակույթը՝ գրականությունը, արվեստը, գիտությունը, ժողովրդական կրթությունը։

Ռուսական նոր մշակույթի վերընթացը սերտորեն կապված է Ռադիշչևի ու Գրիբոյեդովի, Պուշկինի ու Լերմոնտովի, Գոգոլի ու Նեկրասովի, Գլինկայի ու Դարգոմիժսկու, Լոբաչևսկու և Պիրոգովի, Բրյուլովի և XIX դարի առաջին կեսի ռուսական գրականության, արվեստի ու գիտության շատ ուրիշ նշանավոր գործիչների անունների հետ։ Իր ժամանակի ռուսական հեղափոխական հասարակական միտքը մեծ թռիչք գործեց դեկաբրիստների ու հեղափոխական դեմոկրատների քաղաքական ծրագրերում, «Սովրեմեննիկի» էջերում, Ռադիշչևի, Գերցենի, Օգարյովի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի ստեղծագործություններում։ Այդ ամենն իրենց բարերար ու առաջադիմական ներգործությունն ունեցան Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի մշակույթի, հեղափոխական-դեմոկրատական մտքի ու առաջադեմ հասարակական շարժման հետագա աճի վրա։ Դա բնական ու օրինաչափ պրոցես էր, քանի որ այն ճշմարտացին ու տաղանդավորը, ուժեղն ու առաջադիմականը, ինքնատիպը, հետևաբար նաև համամարդկայինը, որ պատմական այդ ժամանակաշրջանում ստեղծվում էր Ռուսաստանում, չէր կարող արձագանք չգտնել նրա կազմում գտնվող ու նրա հետ մշտական սերտ շփման մեջ ապրող հայ ժողովրդի մշակութային, հասարակական-քաղաքական և ողջ հոգևոր կյանքում։

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ նոր գրականության, արվեստի, գիտության, ժողովրդական կրթության ու լուսավորության և հասարակական-քաղաքական առաջադեմ մտքի զարգացման համար։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջընթաց մի նոր խոշոր քայլ հանդիսացավ հայ և ռուս ժողովուրդների մերձեցման ճանապարհին։ Դա միանգամայն օրինաչափ էր, որովհետև կենտրոնացված մեկ պետության կազմում նրանց գտնվելը, տնտեսական և մշակութային փոխազդեցությունը, վերջապես համատեղ պայքարն ինչպես ցարիզմի ու ճորտատիրության, այնպես էլ արտաքին ընդհանուր թշնամիների դեմ, չէին կարող չնպաստել այդ ժողովուրդների մերձեցմանն ու բարեկամության խորացմանը, հայ ժողովրդի բովանդակ կյանքի հետագա օրինաչափ առաջընթացին։ Լիովին արդարանում է Ֆ. Էնգելսի *1851 թ.* արտահայտած այն միտքը, թե «...Ռուսաստանը իրոք առաջադիմական դեր է խաղում Արևելքի նկատմամբ...»[31]։

---

31 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. 27, изд. 2, М., 1962, стр. 241.

Արտահայտելով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակության մասին ժամանակի հայ առաջադեմ մտածողների պատմաքաղաքական մտահայեցողությունը մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանը դրել է. «Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ, ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց»[32]։

Այսպիսով, եթե ցարիզմը՝ արակչեևների Ռուսաստանը, հայ ժողովրդին ենթարկել է ազգային դաժան ճնշման ու գաղութային կեղեքման, ապա նոր բարձրացող հեղափոխական Ռուսաստանը՝ Բելինսկու և Դերցենի, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի Ռուսաստանը, պատմական մեծագույն դեր է խաղացել նրա բովանդակ կյանքում։

Չնայած Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար առաջադիմական խոշոր նշանակություն ունեցավ, բայց դրանից հետո էլ հայ ժողովրդական զանգվածները չհասան ոչ ազգային և ոչ էլ սոցիալական ու քաղաքական ազատագրության։ Ճաշակելով ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականության ողջ դառնությունը, նրանք իրենց իրական ազատագրությունը որոնում էին ոչ միայն պարսկական ու թուրքական, այլև ցարական բռնապետության կործանման մեջ։ Ուստի հայ աշխատավորական զանգվածները, դաշնակցած ռուս և Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ, անհաշտ պայքար ծավալեցին՝ թոթափելու նաև ցարական լուծը։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանին, պատմության օբյեկտիվ, օրինաչափ առաջընթացով հայ ժողովրդի ազգային, սոցիալական ու քաղաքական ազատագրության հեռանկարները հաստատորեն կամրջվեցին Ռուսաստանում բարձրացող հեղափոխական ուժերի պայքարի ու հաղթանակի հետ։

---

32 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, Երևան, 1948, էջ 58։

ԲԱԺԻՆ Գ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830-1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՑԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

1. ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի ազատագրումից հետո Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարության առջև խնդիր ծառացավ ստեղծել տեղական իշխանության ժամանակավոր օրգաններ, որոնք պիտի տնօրինեին և կարգավորեին նորագրավ երկրամասերի ներքին գործերը, մինչև կռվող կողմերի միջև կկնքվեր հաշտության պայմանագիր։

1827 թ. հոկտեմբերի 6-ին գեներալ Պասկևիչի կարգադրությամբ ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչություն, որի գլուխ կարգվեց գեներալ Կրասովսկին, իսկ անդամներ նշանակվեցին Երևանի պարետ փոխգնդապետ Բորոդինը և Ներսես Աշտարակեցին։ Ժամանակավոր վարչությանը հրահանգ տրվեց պարսկական լծից ազատագրված վայրերում կազմակերպել իշխանության նոր օրգաններ, որոնց անհրաժեշտ խնդիրը պետք է լիներ՝ օժանդակել պատերազմի հաղթական ավարտին։ Դա նշանակում էր, որ վարչությունը պետք է ապահովեր զորքերի մատակարարումը պարենամթերքով, կազմակերպեր ազատագրված տերիտորիայի անվտանգությունը թշնամական ոտնձգություններից, պետք է հոգ տաներ Երևանի, Սարդարապատի և Աբասաբադի բերդերի պաշտպանության մասին և ապահովեր հիշյալ բերդերի կայազորների մարտունակությունը։ Այդ խնդիրների հաջող կենսագործման համար վարչությանը հանձնարարվեց հաշվառման ենթարկել և պետականացնել Երևանի սարդարի ողջ ունեցվածքը, բարեկարգել ճանապարհները, ապահովել նրանց անվտանգությունը, որպեսզի պահպանվեր կապը Վրաստանի հետ և վերականգնվեին պատերազմի հետևանքով խաթարված առևտրական հարաբերությունները։ Երևանի վարչությանը հանձնարարված էր նաև հայերից կազմել ինչպես հեծյալ, այնպես էլ հետևակ զինված ուժեր, որոնց առաջնային խնդիրը պետք է լիներ պահակային ծառայության կատարումը։ Այսպիսով, Երևանի ժամանակավոր վարչությունը, պատերազմական ժամանակաշրջանի պայմաններին հարմարեցված, Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարին ենթակա իշխանության մի օրգան էր։

Իր կարճատև գոյության ընթացքում Երևանի ժամանակավոր վարչությունը առանդուն գործունեություն ծավալեց հիշյալ խնդիրները կենսագործելու

համար։ Այդ բանին մասամբ նպաստում էին վարչության պետ գեներալ Կրասովսկու փոխհարաբերությունները վարչության անդամ Ներսես Աշտարակեցու հետ։ Ժամանակավոր վարչությունն անհապաղ ձեռնամուխ եղավ հայկական զինված ուժերի ստեղծմանը, կազմեց ավելի քան հազար հոգուց բաղկացած զորաջոկատ, որը երկրում տեղակայված ռուսական բերդապահ զորքերի հետ մեկտեղ ապահովում էր կարգ ու կանոնը։ Սարդարի կայքը հաշվառման ենթարկվեց և պետականացվեց, որի շնորհիվ հնարավոր եղավ զորաբանակն ապահովել անհրաժեշտ պարենամթերքով։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմը դեռ չավարտված, ինչպես ռուս կառավարական շրջաններին, այնպես էլ հայ ազատագրական շարժման գործիչներին մտահոգում և զբաղեցնում էր այն հարցը, թե ինչպիսի վարչակարգ պետք է մտցվեր Արևելյան Հայաստանում պարսկական լծի թոթափումից հետո։ Գաղտնիք չէ, որ ցարական կառավարությունը կամենում էր օգտագործել ստեղծված իրադրությունը՝ տիրակալության սահմանները դեպի Կուր—Արաքս—Ախուրյան բնագիծը տարածելու համար։

Այլ էր հայ ազատագրական շարժման գործիչների ձգտումը։ Նրանց մտահոգում էր ոչ միայն օտարերկրյա բռնակալական լծից հայրենի երկրի ազատագրումը, այլ նաև նրա ապագա կացության հարցը։ Նրանք շարունակում էին փայփայել այն վաղեմի երազը, թե պարսկական բռնակալական լծի խորտակումից հետո կվերականգնվի հայկական պետականությունը՝ Ռուսաստանի հովանու ներքո։ Ցարական կառավարությանը քաջ հայտնի էին հայ ազատագրական շրջանների այդ ձգտումները, ուստի և Նիկոլայ I-ի կարգադրությամբ Պետերբուրգում ստեղծվեց հատուկ կոմիտե, որը պետք է ըղբաղվեր նոր գրավված երկրամասի ապագա կացության հարցով։

Ելնելով դրանից, Ռուսաստանում գործող մի շարք հայ գործիչներ (Խ. Լազարյան, Կ. Արղության, Ալ. Խուդաբաշյան) այդ օրերին մշակում և ռուսական կառավարությանն են ներկայացնում մի նախագիծ, որը պետք է հնարավորություն ընձեռեր ապահովելու Արևելյան Հայաստանի ինքնավարությունը ռուսական կայսրության շրջանակներում։ Այդ նախագիծը անհրաժեշտ էր համարում վերականգնել «հայկական թագավորությունը», և Նիկոլայ I-ը իր տիտղոսների թվում պետք է ավելացներ նաև «հայկական թագավոր» տիտղոսը։ Հայկական ապագա թագավորությունը պետք է կազմվեր հին հայկական թագավորության մեջ մտնող գլխավոր շրջաններից։ Նախագծի հեղինակների կարծիքով Նիկոլայ I-ի կողմից հայկական թագավոր տիտղոսի ընդունումը, «որպես հին Հայաստանի թագավորության վերածնունդ, ուժեղ ազդեցություն կգործի Եվրոպական և Ասիական Թուրքիայում, բացի այդ ամբողջ Ասիայում և մասամբ Հյուսիսային Աֆրիկայում բնակվող մեծաքանակ հայերի վրա։ Այդ բարի լուրը կխանդավառի ողջ [հայ] ժողովրդին», որը ամեն կողմից կներհոսի դեպի նորաստեղծ հայկական պետության սահմանները, և դրանով իսկ մեծ հարված կհասցվի ինչպես Թուրքիային, այնպես էլ Պարսկաստանին[1]։ Նախա-

1 Տե՛ս Վ. Ա. Պառսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 267։

գիծը, սակայն, չէր սահմանափակվում միայն այսքանով։ Նման ինքնավարությունն ձեռք բերելուց հետո նախագծի հեղինակները հարկ էին համարում ունենալ նաև կամավոր հիմունքներով հայերից ստեղծված սեփական զորք, որը պետք է փոխարիներ ռուսական զորքերին և սահմանապահ ծառայություն կատարեր։ Հայկական զորաբանակը պետք է ստեղծվեր և գործեր այն նույն հիմունքներով, ինչպիսի հիմունքներով կազմավորվել էր Պետրոս I-ի պարսկական արշավանքի շրջանում հայկական էսկադրոնը։ Հայկական հիշյալ զորաբանակի սպայակույտը պետք է հավաքագրվեր բացառապես հայ, մասամբ նաև վրացի սպաներից, իսկ հետագայում քաղաքացիական և զինվորական ծառայողները պետք է պատրաստվեին Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Հայկական զորաբանակի ինչպես սպաները, այնպես էլ զինվորները պետք է օգտվեին որոշակի արտոնություններից, մի բան, որը մեծապես կխթաներ նման զորաբանակի արագ հավաքագրումը և կազմավորումը։

Այսուհանդերձ, նախագծի հեղինակները քաջ գիտակցում էին, որ «Հայկական թագավորությունը» գոնվելու էր Ռուսաստանի հովանու ներքո, ուստի սկզբից ևեթ ձգտում էին կանխել որոշ երևույթների տարածումը Արևելյան Հայաստանի սահմաններում, որը որոշակի բացասական հետևանքներ կարող էր ունենալ հայ ժողովրդական զանգվածների համար։ Առաջին հերթին այդ ճորտատիրական իրավունքի հարցն էր, որ գոյություն ուներ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հարևան Վրաստանում։ Արդ՝ քանի որ դրանից «շատ չարիքներ և անկարգություններ են առաջանում, անհրաժեշտ է սահմանափակել կամ վերացնել ճորտատիրական իրավունքը Վրաստանում, կամ գեթ սահմանել, որպեսզի ոչ ոք չկարողանա առանձին-առանձին վաճառել մարդկանց, որոնք ամրակցված են ոչ թե անձին, այլ հողին և որպեսզի բոլորովին արգելվի մարդկանց վաճառել, արտահանել կամ գաղթեցնել այլ նահանգներ և այլ վայրեր»[2]։ Ըստ նախագծի, ապագա «Հայաստանի թագավորության» բնակիչների իրավունքների պաշտպանությունը պետք է խարսխված լիներ կայուն օրենքների վրա, ընդ որում այդ օրենքների մշակմանն ու կենսագործմանը մասնակցություն պետք է ունենային հայերի ներկայացուցիչները՝ հանձինս հայկական եկեղեցու և առավել նշանավոր տոհմերի լիազորված անդամների։

Ի հակադրություն պարսկական տիրապետության շրջանում իշխած անօրինականության ու բռնությունների, պետք է սահմանվեին բնակիչների իրավունքներն ապահովող և պարտականությունները ցուցանող օրենքներ։ Կասկած չկա, որ նախագծում առաջ քաշված բոլոր սկզբունքային դրույթների նպատակակետն էր՝ Ռուսաստանի վեհապետության ներքո ապահովել հայ ազգային վերնախավերի գլխավորած ներքին ինքնավարության ստեղծումը։

Սակայն դեկաբրիստների ապստամբությունից անմիջապես հետո ճորտատիրական ծայրահեղ ռեակցիայի ուղին որդեգրած ցարական կառավարությունը չէ, որ պետք է ընդառաջեր նման ինքնավարական ակնկալությունների և հակաճորտատիրական ձգտումներին։ Ուստի հասկանալի է, որ հիշյալ նախագծում առաջ քաշված առաջադրանքները և առավել ևս հակաճորտատի-

2 Նույն տեղում, էջ 256։

րական տրամադրությունները պետք է բարձիթողի արվեին ցարական կենտրոնական կառավարության և անդրկովկասյան իշխանությունների կողմից։ Ավելին, սրանց վարքագծում շատ շուտով նկատելի են դառնում որոշակի հակահայկական տրամադրություններ, որոնց խթանողը Կովկասի կառավարչապետ Պասկևիչն էր։ Եթե մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին Պասկևիչը հայերին շողոքորթելու, նրանց ընդառաջելու քաղաքականություն էր վարում, ապա հետագայում նա ակներև ատելություն էր տածում հայերի նկատմամբ։ Նման քաղաքականության հիմքը պետք է փնտրել այն ինքնավարական ձգտումների մեջ, որոնց համար մարտնչել էր հայ ժողովուրդը և որոնք գաղտնիք չէին Կովկասի կառավարչապետի համար։

Պասկևիչը, որին հանձնարարված էր Արևելյան Հայաստանում նոր իշխանության կազմակերպման և նոր օրենքների կենսագործման խնդիրը, չհապաղեց իսկույն ևեթ ձեռնամուխ լինելու ցարիզմի գաղութային քաղաքականության կենսագործմանը։ Նրա առաջին քայլերից մեկը հայ գործիչներին ասպարեզից հեռացնելն էր, որոնք հայկական ինքնավարական ձգտումների թարգմանն էին։ Դրանց մեջ ամենակարկառուն դեմքը Ներսես Աշտարակեցին էր, հայ ինքնավարական բաղձանքների գաղափարակիրներից մեկը։ Պասկևիչի սադրանքներով էր, որ ցարական կառավարությունը որոշեց Հայաստանից հեռացնել Ներսես Աշտարակեցուն, Թիֆլիսի թեմը գլխավորող հայ վիճակավորին, նրան փաստորեն աքսորելով հեռավոր Բեսարաբիա։ Ներսես Աշտարակեցին մեղադրվում էր այն բանում, որ իր ազդեցության տակ առնելով Երևանի ժամանակավոր վարչության պետ գեներալ Կրասովսկուն, հայերի նկատմամբ վարել է աշառու քաղաքականություն և դրանով իսկ մահմեդական ազգաբնակչությանը «գրգռել» ընդդեմ հայերի, որ նա փորձել է ընդլայնել էջմիածնի կալվածատիրական իրավունքներն ի հաշիվ արքունի գանձարանի։ Պասկևիչը չէր խորշում նույնիսկ հակառուսական տրամադրություններ վերագրել Աշտարակեցուն։ Իր հերյուրանքներն հիմնավորելու համար Պասկևիչը օգտագործում էր այն փաստը, որ Աշտարակեցին մտադրություն ուներ կազմել շուրջ 200 հոգուց բաղկացած մի զորաջոկատ, որը կոչված էր պաշտպանելու էջմիածնի վանքը։ Պասկևիչն այդ մտադրությունն հրամցնում էր իբրև հայկական բանակ կազմելու և հայերին Ռուսաստանի դեմ ապստամբեցնելու փորձ։ Ճիշտ է, շուտով նա հարկադրված էր ժխտել իր այդ հերյուրանքը Ներսեսի հասցեին, սակայն փաստը մնում էր փաստ, որ նա ամեն կերպ ձգտում էր ասպարեզից հեռացնել Ներսեսին։ Այդ բանը նրան հաջողվեց, և Ներսես Աշտարակեցին հեռացվեց Հայաստանից։ Հեռացվեց նաև հայերի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված գեներալ Կրասովսկին, Սակայն Պասկևիչը այսքանով էլ չբավարարվեց։ Նա սկսեց հալածել և պատժել այն անձանց, ովքեր տոգորված էին Հայաստանի պետականության վերականգնման գաղափարով։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԸ

1828 թ. մարտի 20-ին Նիկոլայ I-ը, Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը վավերացնելուց անմիջապես հետո, ստորագրեց մի հրամանագիր, ուր ասված էր. «Համաձայն Պարսկաստանի հետ կնքված պայմանագրի, հրամա-

յում եմ՝ Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանությունները այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և այն ներմուծել մեր տիտղոսի մեջ։ Այս մարզի բարեկարգման և կառավարման մասին կառավարիչ սենատը համապատասխան հրամանագիր կստանա իր ժամանակին»[3]։

Այսպիսով, Երևանի ժամանակավոր վարչությանը գալիս էր փոխարինելու վարչական մեկ այլ օրգան, և նորաստեղծ մարզի կառավարման գործը փոխանցվում էր մարզային վարչությանը[4], որի պետ նշանակվեց Երևանում ռուսական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Ալեքսանդր Ճավճավաձեն։ Վարչության կազմում իբրև անդամներ մտնում էին երկու ռուս զինվորական և տեղի հայ ու մահմեդական բնակչության իշխող խավերի մեկական ներկայացուցիչներ։ Մինչև 1833 թ. հայ բնակչության ներկայացուցիչն էր Սահակ Մելիք-Աղամալյանը։ Վարչության կազմի մեջ մտնում էին նաև երեք խորհրդական, որոնք համապատասխանաբար պետք է վարեին գործադիր, ֆինանսական, տնտեսական և դատական գործերը։

Հայկական մարզն իր հերթին բաժանվում էր Երևանի և Նախիջևանի գավառների և Օրդուբադի օկրուգի։ Գավառներում ստեղծվեցին ոստիկանական վարչություններ և գավառական դատարաններ, իսկ Երևանում և Նախիջևանում՝ քաղաքային դատարաններ։ Նախիջևանի գավառում և Օրդուբադի օկրուգում իշխանությունը թողնվեց տեղական մահմեդական նախիների՝ էհսան խանի և նրա եղբայր Շեյխ-Ալի բեկի ձեռքը, մի բան, որ խիստ դժգոհություն առաջացրեց հայ բնակչության մեջ։ Հիշյալ անձնավորությունների ձեռքում տեղական իշխանության թողնելը ցարական իշխանությունները բացատրում էին այն բանով, որ նրանք պատերազմի ընթացքում իրր մեծամեծ ծառայություններ են մատուցել ռուսական զորքերին։ Էհսան խանին և Շեյխ-Ալի բեկին ռուս սպաներից միայն օգնականներ էին հատկացվում։

Ինչ վերաբերում է Հայկական մարզի քոչվոր քուրդ և աղրբեջանցի բնակչությանը, ապա նրանց վրա շարունակվելու էր իրենց ցեղապետերի կառավարչությունը։ Սկզբնական շրջանում մահալների և առանձին գյուղերի կառավարման նախկին ձևը գրեթե պահպանվեց, քանի որ այնտեղ իշխանության գլուխ մնում էին պարսկական տիրապետության ժամանակաշրջանի կառավարիչները, այն է՝ միրբոլուքները, մելիքները և աղաները։

Այնուամենայնիվ, Հայկական մարզի ստեղծումը ցարական կառավարության կողմից մասնակի զիջում էր ինքնավարական և ազգային պետականության վերականգնման ձգտումներին։ Եվ եթե «Հայկական մարզ» անվամբ ցարական կառավարությունը կամենում էր խաբուսիկ պատրանքներ ստեղծել հայ ազատագրական շրջաններում, ապա վերջիններս իրոք ցանկալին ընդունում էին իրականի տեղ։ «Դեռ բոլորովին նոր էր այս անունը մտցվել Ռուսաստանի վարչական աշխարհագրության մեջ, երբ Երևանի և նրա շրջակա գյուղերի հայ հասարակության կողմից մի բազմաստորագիր դիմում

---

3 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I, М., 1833, стр. 278.

4 Հայկական մարզի մեջ էր մտնում նաև Օրդուբադի գավառը։ Տե՛ս *В. Н. Иваненко*, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, стр. 241.

էր խմբագրվում, ուղղված էջմիածնի հոգևոր վարչության, որի մեջ իմիջիայլոց կոչ էր արվում ամբողջ աշխարհում ցրված հայությանը գալ հավաքվել Արարատյան երկրում, ուր մի ժամանակ հայոց թագավորությունն էր եղել և ուր այժմ ռուսների ձեռքով նորից հաստատվել է ազատությունը»[5]։

Մինչդեռ իրականում ցարական կառավարությունը բոլորովին այլ մտադրություններ ուներ։ Պասկևիչը և ֆինանսների մինիստր Կանկրինը ամբողջ Անդրկովկասը դիտում էին իբրև Ռուսական կայսրության գաղութային մի կցորդ և ձգտում էին «այն կապել Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին և ստիպել տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար»[6], ինչպես գրում էին Պասկևիչը և սենատորներ Մեչնիկովն ու Կուտաիսովը կենտրոնական կառավարությանը ներկայացրած «Առաջարկություններ անդրկովկասյան երկրամասի կառուցվածքի մասին» իրենց նախագծում։ Ճիշտ է, այս նախագիծը չկենսագործվեց, սակայն բացահայտում էր այն իրական քաղաքական գիծը, որին հետամուտ էր ցարական կառավարությունը Անդրկովկասում։

Նորահաստատ վարչական կարգը Արևելյան Հայաստանում իրենից ներկայացնում էր հնի և նորի մի խառնուրդ, ընդ որում 1828—1829 թթ. Թուրքիայի դեմ մղվող պատերազմը և 1828—1830 թթ. երկրում մոլեգնող ժանտախտի համաճարակը մեծապես խանգարում էին ռուսական իշխանություններին՝ ցարական օրենքների համապատասխան կարգ ու կանոն հաստատել նոր նվաճված երկրում։ Այս ամենի հետևանքով սկզբնական շրջանում բնակչության մեջ ծայր է առնում զանգվածային խուլ բողոք, հատկապես այն շահատակություններից, որ կատարում էին երկրի նախկին իշխողները, որոնք այժմ էլ դեռ տեղերում իշխանության սանձերն իրենց ձեռքն էին պահում։ Առանձնապես ուժեղ էր դժգոհությունը Էհսան խանի և Շեյխ-Ալի բեկի տնօրինությանը թողնված Նախիջևանում և Օրդուբադում, որտեղ «հուզմունքը և դժգոհությունը... ծայր աստիճանի են հասնում»[7]։

Բայց այսպիսին էր իրավիճակը միայն սկզբնական շրջանում։ Արևելյան Հայաստանի պատմության մեջ սկսվում էր մի նոր ժամանակահատված։ Աստիճանաբար երկրի կառավարման մեջ զգալի փոփոխություններ էին մտցվում։ Ցարական կառավարությունը ձգտում էր երկրում հաստատել միօրինակ կարգեր։ Նախկին կառավարության բռնապետական ապօրինությունները վերացվում էին, գործի էին դրվում հաստատուն օրենքներ, որոնք նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ մի քայլ էին դեպի առաջ։ 1830 թ. փետրվար ամսին Հայկական մարզի պետ նշանակվեց գեներալ-մայոր իշխան Վասիլի Բեհբութովը, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1838 թվականը։ Բեհբութովը զգալի աշխատանք կատարեց մարզում ցարական օրենքների հաստատման և կիրառման ուղղությամբ։ Սակայն այդ հարցը դրված էր ողջ Անդրկովկասի մասշտաբով, որովհետև դեռևս մեկ ընդհանուր քաղաքական գիծ չէր մշակված և, բացի այդ, կառավարական շրջաններում էլ

5 Նեռ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն Բ, Երևան, 1927, էջ 133։

6 «Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20—60-х гг. XIX в.», ч. I, М.—Л., 1936, стр. 21.

7 АКАК, т. VII, стр. 647.

գոյություն ունեին լուրջ տարաձայնություններ։ Եթե բացահայտ գաղութարարական հայեցակետի վրա կանգնած պաշտոնական անձինք (Պասկևիչ, Մեշնիկով, Կուտաիսով և այլք) այն միտքն էին արծարծում, որ անհրաժեշտ է իսկույն ևեթ Անդրկովկասում մտցնել ռուսական վարչակարգ և արմատախիլ անել տեղական ժողովուրդների վարչական և օրենսդրական նախկին համակառույցը, ապա Կովկասի կառավարչապետի պաշտոնում Պասկևիչին փոխարինած բարոն Ռոզենը դեմ էր արտահայտվում միանգամից նման արմատական փոփոխություններ կատարելուն և գտնում էր, որ տեղական ժողովուրդների վարչական և օրենսդրական կյանքում փոփոխություններն անհրաժեշտ է աստիճանաբար ներմուծել։

Այս տարաձայնությունների հետևանքով ողջ Անդրկովկասում կատարվելիք վերափոխումների հարցը փոքր-ինչ հետաձգվեց։ Չնայած դրան, Պասկևիչի հանձնարարությամբ Վ. Բեհբութովը Հայկական մարզում մի շարք վերակառուցումներ ձեռնարկեց։ Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Փալավանդովի հետ միասին Բեհբութովը Հայկական մարզի կառավարման բնագավառում մտցնում է էական փոփոխություններ՝ վարչության ռուսացման ուղղությամբ։ Նրանք միասին կազմում են կանոններ, որոնք 1833 թ. հունիսի 23-ին վավերացվում են Նիկոլայ I-ի կողմից և օրենքի ուժ ստանում։

Հունիսի 23-ի օրենքով նախ և առաջ փոփոխությունների էր ենթարկվում Հայկական մարզի վարչական քարտեզը։ Դրանով Երևանի գավառը բաժանվում էր չորս օկրուգների՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարապատի։ Նախիջևանի գավառը և Օրդուբադի օկրուգը պահպանվում էին։ Նորաստեղծ օկրուգների կառավարման համար նշանակվում էին ռուս աստիճանավորներ, մինչդեռ Նախիջևանը և Օրդուբադը շարունակում էին մնալ նախկին նայիբների կառավարչության ներքո։

Մյուս կարևոր փոփոխությունը, որ բերում էր հունիսի 23-ի օրենքը, Հայկական մարզի վարչության կոլեգիալ ձևի վերացումն էր և վարչության պետի փաստական միանձնյա իշխանության հաստատումը։ Այնուհետև՝ եթե նախկինում ոստիկանական, դատական և ֆինանսական գործերի տնօրինությունը հանձնարարված էր խորհրդականներին, ապա այժմ դրանք իրականացնելու էին այդ նպատակով ստեղծված տարբեր բաժինները։ Հարկերի և տուրքերի գանձման համար ստեղծվում է առանձին վարչություն, ինչպես նաև հատուկ կոմիսարի պաշտոն, որի հոգսը պետք է լիներ հարկերի ու տուրքերի գանձումը և պետական եկամտի նոր աղբյուրների որոնումը[8]։

Մինչ այդ Երևանում և Նախիջևանում եղած քաղաքային դատարանները վերածվեցին գավառական դատարանների։ Մարզի բնակիչներին իրավունք էր վերապահվում նաև օգտվել միջնորդ դատարաններից, իսկ մահմեդականներին՝ նույնպես և շարիաթից։

Սակայն այս միջոցառումները ժամանակավոր բնույթ էին կրում, մինչ ցարիզմը ձեռնամուխ կլիներ ամբողջ Անդրկովկասում վարչական ռեֆորմների անցկացմանը։

---

[8] «Полное собрание законов Российской империи» (այսուհետև՝ ПСЗРИ), т. VIII, 1833, № 6282.

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ. ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Ցարիզմին մտահոգում էր ամբողջ երկրամասում միանման վարչակարգ ստեղծելու և ընդհանուր օրենքներով այն կառավարելու խնդիրը։ Դեռևս 30-ական թվականների սկզբներին սենատորներ Մեչնիկովի և Կուտաիսովի կողմից անցկացված վերստուգումը ցույց էր տվել, որ հին ու նոր օրենքների առկայությունը, ընդհանուր մշակված վարչական կառավարման բացակայությունը բազմատեսակ չարաշահումների աղբյուր են հանդիսանում և իրավացի դժգոհություն առաջ բերում տեղական բնակչության մեջ։ 1837 թ. Նիկոլայ I-ի այցելությունը Անդրկովկաս և բնակչության անսքող դժգոհությունն ու բողոքներն ավելի ևս համոզեցին ցարական կառավարությանը, որ անհրաժեշտ է շուտափույթ միջոցներ ձեռք առնել երկամասում դրությունը կարգավորելու և կայուն վարչաձև ստեղծելու համար։

Դեռևս 1833 թ. զինվորական մինիստր կոմս Չերնիշևի նախագահությամբ ստեղծվեց «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե», որը, ինչպես այդ կոմիտեի անվանումն է ցույց տալիս, պետք է զբաղվեր Անդրկովկասում անցկացվելիք ապագա բարեփոխումների խնդրով։

Այս հարցերը կարգավորելու և վերջնական որոշում կայացնելու նպատակով 1837 թ. մարտին Անդրկովկաս ուղարկվեց հատուկ հանձնաժողով՝ սենատոր Գանի գլխավորությամբ, որը պետք է ուսումնասիրեր երկրամասում տիրող իրավիճակը և դրա հիման վրա համապատասխան օրինագիծ կազմեր՝ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար։ Արդեն 1838 թ. փետրվարին Գանի հանձնաժողովի զեկուցագիրը պատրաստ էր և ներկայացվեց կառավարության քննարկմանը։ Երկարատև քննություններից ու կշռադատումներից հետո, 1840 թ. ապրիլի 10-ին օրինագիծը վավերացվեց կայսեր կողմից և օրենքի ուժ ստացավ։ Այդ օրենքի առանձնահատկություններից մեկն այն էր, որ, այսպես կոչված, տեղական «բարձր դասը»՝ աղաներն ու բեկերը, դուրս էին մղվում վարչական գործունեության ասպարեզից, իբրև ցարիզմի քաղաքական նոր խնդիրներին բոլորովին անհամապատասխան և ավելորդ մի տարր։ Գանի հաշվումներով միայն Շաքիում, Շիրվանում և Ղարաբաղում անաշխատունակ և պորտաբույծ այդ դասի թիվը կազմում էր 10750 մարդ, որոնց կերակրում էին 83 հազար գյուղացիներ՝ դանձարանին չվճարելով և ոչ մի կոպեկ[9]։ Նման պարագան, իր հերթին, լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում կառավարության համար և մտահոգության պատճառ դառնում. ձրիակերության և անաշխատ կյանքի սովոր «արտոնյալ» դասը, զրկվելով վարչական գործերից և դրանից ստացվող եկամուտներից, կարող էր մի ամբողջ չարիք դառնալ երկրի գլխին, քանի որ պիտի պարապեր գողությամբ և ավազակությամբ։ Ստեղծված դժվարությունից դուրս գալու ելքը համարվեց այն, որ սկզբունքորեն որոշվեց բեկերին թոշակ նշանակել պետական գանձարանից։

---

[9] Տե՛ս В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, стр. 342—343.


ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶ
1828–1840 թթ.
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ԵՐԵՎԱՆ Մարզային կենտրոն
ՆԱԽԻՋԵՎԱՆ Այլ քաղաքներ
Քանաքեռ Մահալների կենտրոններ
Արթիկ Այլ բնակավայրեր
էջմիածին Վանքեր
ՍԱՀՄԱՆՆԵՐ
Պետական
Հայկական մարզի
Պրովինսիաների և օկրուգի 21·Ը·1828թ.
Մահալների
Օկրուգների 23·Ը·1833թ.
Երեվանի պրովինսիա
Նախիջևանի պրովինսիա
Օրդուբադի օկրուգ
Քարտեզի հեղինակներ՝ Հ.Մ. ՂԱՋԱՐՅԱՆ
Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆ
Ս.Մ. ԴՈՒԼՅԱՆ
Քարտեզագիր՝ Հ.Ն.ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ՊԵՐՍԱՍՏԱՆ
ՏՈՒՐՔԻԱ
ԿԱՍՊԻԱՅԻ ԾՈՎ
ՍԵՎԱՆԱ ԼԻՃ
ԳՅՈՒՄՐԻ (ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ)
Մ.ՂԱՐԱՔԻԼԻՍԱ
Իջևան
Դիլիջան
Չիրուխլու
Արթիկ
Քաշ-Ապարան
Դարաշիչակ
Սևան
Գետաբեկ
Դաշքեսան
Ախտա
Ալափարս
Նոր-Բայազետ (Գավառ)
Մաստարա
Թալին
Բյուրական
Ուշի
Եղվարդ
Աշտարակ
Արվճի (Կոտայք)
Բաշքենդ
Մեծ Մափրա
Ջոդ
Բասարգեչար
Ն.Գյոլվալ-արա
Ն.Ղարանլուղ
Քյալբաջար
Թարթառ
Քանաքեռ
Զանգի-
-ջմին
ԵՐԵՎԱՆ
Էջմիածին
Սարդարապատ
Խերիբեկլու
Սահար
Կողբ
Գառնի
Ուլուխանլու
Ղամարլու
Իստիսու
Ջերմուկ (Իստիսու)
Խոր Վիրապ
Դավալու
Սադարակ
Ակոռի
Իգդիր
Դիադին
Բայազետ
Ենգիջա
Մարտիրոս
Բավարչայ
Ռրուտաք
Սիսիան
Բռնակոթ
Տաթև
Ղարաքաղլար
Շահբուզ
Խոր
Ջահրի
ՆԱԽԻՋԵՎԱՆ
Ջուլֆա (Ջուղա)
Դաստա
Օրդուբադ
Ագուլիս
Ջանանախ
Բիլյավ
Ալաղուլիս
Արակունիս
Հայ ժող. պատմ. հատ. V

1840 թ. օրենքով Անդրկովկասում վարչական նոր բաժանում էր անցկացվում և երկրամասում ստեղծվում էին վրացա-իմերեթական նահանգ՝ Թիֆլիս, և Կասպիական մարզ՝ Շամախի կենտրոններով։ Վրացա-իմերեթական նահանգի մեջ մտնում էին Թիֆլիսի, Թելավի, Գորիի, Բելոկանի, Քութայիսիի, Ելիսավետպոլի, Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Ախալցրխայի և Գուրիայի գավառները, իսկ Կասպիական մարզի գավառներն էին Շիրվանը, Ղարաբաղը, Շաքին, Բաքուն, Թալիշը, Դերբենդը և Ղուբան։ Հիշյալ 18 գավառներն իրենց հերթին բաժանվում էին 72 շրջանների։

Այսպիսով, տասներկուամյա դոյությունից հետո վերացվում էր Հայկական մարզը։ Հայկական մարզի վերացումը գալիս էր խորտակելու հայկական ինքնավարության պատրանքները և ցույց էր տալիս, որ ցարիզմն արդեն անցնում է գաղութային անսքող քաղաքականության։ Դրա ապացույցն էր նաև երկրամասի նոր վարչական բաժանման փաստը, որով անտեսվում էին ազգային առանձնահատկությունները։

Կառավարության նոր քաղաքականության հաջորդ քայլը 1841 թ. մայիսի 23-ի օրենքն էր։ Վերջինիս համաձայն ադրբեջանցի աղաների կառավարման ներքո գտնված գյուղերն աղատվում էին նրանց ենթարկվելու, տուրքեր վճարելու և անձնական ծառայություններ կատարելու պարտավորություններից։ Կարգ էր սահմանվում, որ գյուղացիները այժմ հարկերը տանուտերերի միջոցով պետք է հանձնեին գանձարանին։

Կառավարությունն իսկույն ևեթ ձեռնամուխ եղավ ընդունված օրենքների կենսագործմանը։ Դեռևս 1840 թ. Ղազախի 11 հայ գյուղերի բնակիչներն ազատվել էին աղաների վարչությունից, որպես արդյունք 1837 թ. Նիկոլայ I-ին կատարած դիմումի և ի հատուցումն այն ծառայությունների, որ նրանք մատուցել էին ռուսական զորքերին 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում[10]։ 1841 թ. մայիսի 28-ին կայսերական հրաման ըստացվեց Ղազախի և Բորչալուի աղաներին իրենց պաշտոններից հեռացնելու մասին. նրանց կախումից ազատվեցին 102 գյուղեր։ Դրա փոխարեն աղաները պետք է գանձարանից փոխհատուցում ստանային, իսկ այդ գումարը գանձվում էր գյուղացիներից։ Նախքան աղալարների վերաբերյալ օրենքը կհրապարակվեր, Անդրկովկասի Գլխավոր վարչության խորհուրդը դեռևս 1841 թ. մարտի 24-ին որոշել էր ընդունել սպասվող օրենքը, որի բովանդակությունը նրան քաջ հայտնի էր և տարածել նաև մնացած բեկերի վրա, ելնելով այն պարագայից, որ բեկերը խանների ժամանակ են եղել վարչական անձինք, ուստի և այժմ պետք է հեռացվեն վարչական գործունեության ասպարեզից։

Հարկ է նշել, որ աղաներին և բեկերին վերաբերող օրենքը և նրա ոգուց բխած որոշումները առաջադիմական քայլ էին հանդիսանում, քանի որ գյուղացիական լայն խավերին ազատում էին այդ պորտաբույծ դասի կամայականություններից։ Ուստի և զարմանալի չէր, որ արտոնյալ այդ դասը խիստ դիմադրեց։ Աղաներն ու բեկերը չխորշեցին ոչ մի միջոցից, որպեսզի կառավարությանը հարկադրեն նահանջել։ Երկրամասում ստեղծված խառնա-

10 Տե՛ս В. Н. Иваненко, նշվ աշխ., էջ 338։

շիոթ կացությունը և «արտոնյալ դասի» դժգոհությունը հարկադրեցին, որպեսզի Կովկաս ժամանի Կովկասյան կոմիտեի նախագահ Ջերնիշևը և տեղում զբաղվի դրության կարգավորմամբ։ Դրա արդյունքը եղավ այն, որ նա կարգադրեց վերահաստատել բեկերի նախկին իրավունքները, իսկ աղաների ապահովության համար նոր միջոցներ փնտրել։

Որոշ դեպքերում աղաներին և բեկերին հաջողվեց ոտքի հանել նաև մոլորության մատնված մահմեդական գյուղացիության մի մասին՝ կառավարության միջոցառումները բացատրելով որպես ոտնձգություն նրանց ազգային ավանդույթների նկատմամբ։ Դրանից դրդված, կառավարությունն իր հերթին միջոցներ ձեռք առավ խստացնելու ոստիկանական և ժանդարմական հնշումը երկրամասում։ Դեռևս 1837 թ. ստեղծված Անդրկովկասի ժանդարմական կորպուսը վերակազմվեց և 1842 թ. աշնանը վերածվեց ժանդարմական 6-րդ բաժանմունքի։

Ցարական կառավարությունը 40-ական թվականների կեսերին դիմում է նոր միջոցների՝ ռուսական տիրապետությունը Անդրկովկասում ամրապնդելու և այստեղ դասակարգային վստահելի հենարան ստեղծելու համար։ Ահա այս խնդիրն էր, որ պիտի իրագործեր Անդրկովկասի առաջին փոխարքա իշխան Մ. Ս. Վորոնցովը։

Վորոնցովը օժտված էր մեծ լիազորություններով։ Նրան վերապահված էր, մինիստրներից և մինիստրություններից անկախ, տեղական բազմազան հարցերի լուծումը։

Փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ձեռք առած միջոցառումների մի մասը վերաբերում էր Անդրկովկասի վարչակարգի հետագա փոփոխություններին, ելնելով ազգային խայտաբղետ կազմ ունեցող և զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած ժողովուրդներով բնակեցված այդ երկրամասի յուրահատկություններից։ Այսպես, Արևելյան Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանի մի շարք շրջաններում հիմնվում են քաղաքացիական վարչություններ, մինչդեռ Օսեթիայում, Գուրիայում, Ջարո-Բելոկանիում և այլուր կառավարման գործը հանձնվում էր ռազմա-քաղաքական վարչություններին, իսկ լեռնականներով բնակեցված շրջաններում՝ ռազմական վարչություններին։

Այսքանով էլ չբավարարվելով, 1846 թ. դեկտեմբերի 14-ին կառավարությունը կրկին Անդրկովկասը վարչական բաժանման է ենթարկում։ Այս անգամ ստեղծվում էին չորս նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի։ Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառները մտնում էին Թիֆլիսի նահանգի կազմի մեջ։ Այս դեպքում ևս անտեսվում էին երկրամասի ազգային առանձնահատկությունները։ Միայն 1849 թ. հունիսի 9-ին Երևանի նահանգի կազմակերպումով Արևելյան Հայաստանի զգալի մասը ցարիզմը ամփոփեց վարչական մեկ միավորի մեջ, որով զարկ տվեց նահանգի տնտեսական ու կուլտուրական առաջընթացին, փոքրիշատե նպաստավոր պայմաններ ստեղծեց ոչ միայն Երևան քաղաքի, այլև նահանգի գավառական քաղաքների զարգացման համար։ Երևանի նահանգի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Օրդուբադի և Նոր Բայազետի գավառները։

4. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցարիզմը իր գաղութային քաղաքականությունը Անդրկովկասում վարում էր մեծ զգուշավորությամբ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր հայ ժողովրդին։ Բանն այն է, որ բուն հայկական տերիտորիայի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, որտեղ և բնակվում էր հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը, շարունակում էր գտնվել Օսմանյան կայսրության տիրապետության տակ, իսկ ցարական կառավարության ռազմա-քաղաքական շահերը Թուրքիայում պահանջում էին անկայման հաշվի նստել այդ փաստի հետ։ Ուստի և ցարիզմը աշխատում էր քողարկել իր գաղութարարական ձգտումները։ Նշված պարագաները երկվություն էին մտցնում ցարական կառավարության վարած քաղաքականության մեջ, և հետագայում մեծ մասամբ արտաքին քաղաքական իրադրություններից էին կախված լինում դեպի Արևելյան Հայաստանը և հայ ժողովրդի արևելյան հատվածը ունեցած վերաբերմունքի մեջ կատարվող փոփոխությունները։ Այս պարագան հատկապես ցայտուն կերպով դրսևորվեց հայ եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականության հարցում։

Եկեղեցու դերը նշանակալից էր հայ ժողովրդի կյանքում։ Պետականության կորստից հետո, դարեր շարունակ, հայ եկեղեցին էր այն միակ կազմակերպությունը, որ կրում էր համազգային բնույթ և միմյանց էր շաղկապում ինչպես հայ ժողովրդի տարանջատված և տարբեր պետությունների տիրապետության տակ գտնվող հատվածները, այնպես էլ այն հայ զանգվածներին, որոնք ապաստան էին գտել աշխարհի զանազան ծայրերում։ Պարսկական և թուրքական տիրապետության շրջանում եկեղեցին հայ ժողովրդի աղգապահպանության գործում զգալի դեր էր կատարում։ Ռուսական պետական գործիչները դեռևս XVIII դարի սկզբներից հասկացել էին հայ եկեղեցու դերը և դիտում էին այն իբրև կարևոր մի աղդակ, որը կարող էր մեծապես նպաստել իրենց արտաքին-քաղաքական նպատակադրումներին Մերձավոր ու Միջին Արևելքում։

Ցարական Ռուսաստանը ծրագրում էր հայ եկեղեցու դերքն օգտագործել ոչ միայն իր իշխանությունը Արևելահայաստանում ամրապնդելու համար, այլև Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ մնացած և ընդհանրապես արտասահմանյան երկրներում ցրված հայ զանգվածների վրա այս կամ այն չափով ազդեցություն նվաճելու նպատակով։ Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի հայ եկեղեցին կարողանար պահպանել իր նախկին դիրքը։ Արևելյան Հայաստանի միացումից անմիջապես հետո ցարական կառավարությունը, ի դեմս Կովկասի կուսակալ կոմս Պասկևիչի, ձեռնամուխ եղավ հայ եկեղեցու ներքին հարցերի կարգավորմանը և ցարական Ռուսաստանում նրա տեղի, դերի ու նշանակության որոշմանը։ Այդ առումով անհրաժեշտ էր մասնակիորեն բարձրացնել կաթողիկոսական գահի նշանակությունը, շնորհել նրան որոշակի իշխանություն և արտոնություններ, միևնույն ժամանակ պահպանելով այն՝ կառավարության համար շահավետ շրջանակներում։

Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է չորս հոգուց կազմված մի գաղտնի

հանձնաժողով, որը պետք է հայ եկեղեցու ներքին կյանքը սահմանող կանոնադրություն մշակեր։ Դաղտնի հանձնաժողովի մեջ մտնում էին Հայկական մարզի պետ Վ. Օ. Բեհբութովը, Սերովբե վարդապետ Կարնեցին, Հակոբ Շահան-Ջրպետյանը և մի լեհ աստիճանավոր՝ Օչկինը։ Հանձնաժողովի անդամները բոլորովին անձեռնհաս էին իրենց առջև դրված խնդիրը իրագործելու։

Հայ եկեղեցու բարենորոգության հարցը դեռևս XIX դարի սկզբին էր գրավել որոշ գործիչների ուշադրությունը։ Մասնավորապես Լազարյանների դրդմամբ էր, որ 1808 թ. մայիսի 25-ին Դանիել կաթողիկոսը ստեղծեց էջմիածնի «Բարձրագույն խորհրդարանը» կամ «սյունհոդոսը»։ Խորհրդարանի կազմի մեջ մտնում էին էջմիածնի բարձր հոգևորականության ներկայացուցիչները։ Խորհրդարանը օգտվում էր խորհրդակցական մարմնի իրավունքներով։

Հայ եկեղեցու հարցում ցարիզմի հետամտած նպատակները ցայտուն կերպով բացահայտվում են Պասկևիչի՝ օտար դավանանքների գործերի մինիստր Բլուդովին հղած մի նամակից. «Այժմ պատրիարք ծփրեմը, թե՛ իր բնավորությամբ և թե՛ իր անձնվիրությամբ Ռուսաստանին, դիմադրություն ցույց չի տա այս կապակցությամբ անցկացվելիք բարենորոգումներին և անհրաժեշտ կարգ ու կանոնին։ Բայց նրա խորին ծերության պատճառով շուտով երևի նրա տեղը կնշանակվի մեկ ուրիշը, որը կարող է համառ և ըմբոստ անձնավորություն լինել։ Այնժամ տերության համար դժվար կլինի հաշտեցնել ընդհանուրի օգտի և հայերի հոգևոր վարչության բարեկարգման իր դիտավորությունները նման մի քահանայապետի մասնավոր ձգտումների հետ, քանի որ նա կսկսի հոգ տանել սոսկ իր սեփական օգուտների մասին և կկամենա պաշտպանել իր իշխանությունը օտար ամեն մի ազդեցությունից։ Նմանապես պետք չէ մոռանալ, որ էջմիածնում նստող համայն հայոց պատրիարքը, ըստ հնավանդ սովորության, հայ հոգևորականության պետն է և հոգևոր հովիվը ամենայն հայոց, որոնք սփռված են ամբողջ աշխարհում և որոնք նրան համարում են մասամբ ազգի պետը և գլուխը նաև աշխարհիկ գործերում։ Եթե այդ պաշտոնը ստանձնի մի ընդունակ և ձեռներեց անձնավորություն, որ հակամետ լինի խորամանկության և ըմբոստության, ապա, երբ տերությունը ձեռնամուխ լինի հայոց հոգևոր գործերի վարչության բարեկավմանը, նա կարող կլինի դիմել Թուրքիայի և Պարսկաստանի հայերին և նրանց միջոցով դիմադրել այստեղի քաղաքական իշխանության բարի դիտավորություններին»[11]։

Ահա այս նկատառումներով էր, որ Թիֆլիսի գաղտնի հանձնաժողովը մշակեց եկեղեցու համար կանոնադրության մի նախագիծ, որը հետագայում վերաքննվեց Պետերբուրգում, փոփոխությունների ենթարկվեց և 1836 թ. մարտի 11-ին հաստատվեց Նիկոլայ I-ի կողմից իբրև հայ եկեղեցական կանոնադրություն։ Պատմության մեջ «Պոլոժենիե» անունով հայտնի այդ կանոնադրությունը իր ազդեցությունն ունեցավ հայ ժողովրդի ներքին կյանքի վրա։ Դա բացատրվում է այն հանգամանքով, որ «Պոլոժենիե»-ի ընդդրկումը

11 ԱԿԱԿ, т. VII, № 214.

շատ ավելի լայն էր, քան հայ եկեղեցու ներքին կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող հարցերը։ «Պոլոժենիեն» միայն եկեղեցական կանոնադրության կանոնագիրք չէր, այլ դրանից ավելին—Ռուսաստանի սահմաններում ապրող հայության ազգային-կուլտուրական ինքնորոշման առանձնաշնորհում»[12]։ Սա նշանակում է, որ հայ ժողովուրդը իրավունք էր ստանում, իբրև մի կրոնական առանձին համայնք, պահպանել իր լեզուն և ազգային-կրոնական առանձնահատկությունները։ Եթե պետական պաշտոնական լեզուն ռուսերենն էր, ապա ազգային-հասարակական կյանքում հայերը կարող էին օգտվել մայրենի լեզվից։ Հայ եկեղեցին, այդ իմաստով, իրավունք էր ստանում ստեղծել և պահել հայկական դպրոցներ, որոնք սակայն դրվում էին կղերականության իրավասության տակ։ «Պոլոժենիեն» վերահաստատում և ամրապնդում էր կղերականության տիրապետությունը։

Մյուս կողմից, ռուսական արտաքին քաղաքականության շահերը պահանջում էին, որպեսզի հայ եկեղեցին շարունակեր նախկինի պես վայելել հանուր հայության վստահությունը, կամ, ինչպես Բլուդովն էր գրում Պասկևիչին, «բազմաթիվ կարևոր քաղաքական պատճառներով անհրաժեշտ էր, որ հայոց պատրիարքը սիրվի և հարգվի ոչ միայն ռուսահպատակների կողմից, այլև մյուս հայերից»[13]։ Առաջին հերթին դա վերաբերում էր արևմտահայերին, որոնց համերաշխությանը մայր աթոռի հետ խիստ մեծ նշանակություն էր տալիս ռուսական կառավարությունը։

«Թագավոր կայսեր ամենաողորմած հովանավորության» ներքո հայկական եկեղեցու դավանանքը հռչակվում էր ազատ։ Հայ եկեղեցուց պահանջվում էր հարգել կայսրության մեջ առկա մյուս դավանանքները և հրաժարվել հավատորսությունից, թեպետ թույլատրվում էր, որ մահմեդականները և հեթանոսներն ընդունեն հայոց դավանությունը։ Հայ հոգևորականությունը ազատ էր կացուցվում մարմնական պատիժներից, հարկերից, կոռ ու բեկարից։

«Պոլոժենիե»-ի համաձայն հայ եկեղեցին ստանում էր հետևյալ կազմակերպական կառուցվածքը. եկեղեցական ստորին վարչական միավորը ծուխն էր կամ ծխական համայնքը, որն ունենալու էր քահանա և երեցփոխ։ Այս երկուսն էլ պաշտոնի կարող էին կոչվել միայն ժողովրդական ընտրությամբ։ Հայ եկեղեցական թեմերը կառավարելու համար կաթողիկոսի ընտրությամբ և առաջադրությամբ ցարական իշխանության բարձրագույն օրգանները հաստատելու էին թեմակալ առաջնորդներ։ Վերջիններս թեմական գործերը կառավարելու համար իրենց ենթակայության տակ ունենում էին կոնսիստորիաներ։ Ի վավերացումն նախնի ավանդությունների, հայկական եկեղեցու գլուխ կրկին հռչակվում էր ամենայն հայոց կաթողիկոսը և ծայրագույն պատրիարքը, որն ընտրվում էր ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցիչների կողմից, համազգային ընդհանուր ժողովում՝ աշխարհիկ և հոգևոր պատգամավորների քվեներով։ Ջնայած այս բանին, համազգային ժողովն իր ընտրության մեջ ազատ չէր, ազատ չէր այնքանով, որքանով որ կարող էր քվեարկել և գահի

12 Տես, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն II, Երևան- 1927, էջ 264։

13 AKAK, т. VII, № 221.

համար առաջադրել երկու թեկնածուներ, սակայն չգիտեր, թե նրանցից որ մեկը կարժանանա ռուսական ցարի հաստատությանը։ Դրանով իսկ, փաստորեն, կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում և լայն հնարավորություններ էր ստանում կաթողիկոսական գահին բազմեցնելու իրեն հաճելի և ցանկալի անձնավորության։ Այսպիսով, խախտվում էր նախկին ավանդույթը, որի համաձայն կաթողիկոսը հաստատվում էր պարսից շահերի, օսմանյան սուլթանների, իսկ XIX դարի սկզբից նաև ռուսական ցարերի կողմից։ Այդ իրավունքն այժմ միմիայն ռուսական ցարին էր վերապահվում։ Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայության հետ կաթողիկոսը կապ կարող էր պահպանել միայն արտաքին գործերի մինիստրության միջոցով։ Կաթողիկոսի իշխանության սահմանափակում էր նշանակում նաև այն, որ սինոդը գրեթե կիսանկախ մի հիմնարկություն էր և ամբողջովին գտնվում էր կառավարության կողմից նշանակվող պրոկուրորի անմիջական հսկողության տակ, թեև սինոդի նախագահը համարվում էր կաթողիկոսն ինքը։

«Պոլոժենիե»-ով նախատեսվում էր եկեղեցիներին կից ստեղծել ծխական դպրոցներ, իսկ յուրաքանչյուր թեմում՝ սեմինարիա կամ թեմական դպրոց։ Էջմիածնում ստեղծվելու էր հոգևոր ճեմարան։ Անհրաժեշտ էր նշել, որ դպրոցների վերաբերյալ հոդվածները «Պոլոժենիե»-ի դրական կողմերից էին։

Դրվելով ամբողջովին կառավարության հսկողության տակ հայ եկեղեցին, սակայն, նրանից նյութական օժանդակություն չէր ստանում, և նրա գոյության նյութական հիմք կարող էին ծառայել սոսկ հայ ժողովրդի նվիրատվությունները և եկեղեցական կալվածներից ստացված եկամուտները։

«Պոլոժենիե»-ն դժգոհությամբ ընդունվեց հայ եկեղեցու, ժողովրդական լայն զանգվածների և հատկապես արևմտահայության կողմից, քանի որ այն դիտվեց իբրև հայ եկեղեցու և ազգային իրավունքներն ու ավանդույթները սահմանափակող մի օրենք։ Նկատի ունենալով «Պոլոժենիե»-ի՝ հայ եկեղեցու ոգու և ավանդույթներին խորթ մի շարք հոդվածները, նույնիսկ հնդկահայերը 1840 թ. պաշտոնապես բողոքեցին Նիկոլայ I-ին, որպեսզի վերացվեն նման օրինակ հոդվածները։

«Պոլոժենիե»-ի համաձայն 1837 թ. հիմնվեցին էջմիածնի սինոդը և ռուսահայ վեց թեմերի (Երևանի, Վրաստանի, Ղարաբաղի, Շամախու կամ Շիրվանի, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Աստրախանի) կոնսիստորիաները։ Բացվեցին թեմական դպրոցներ Երևանում (1837) և Շուշում (1838)։

Այսպիսով «Պոլոժենիեն» ռուսական կառավարության կողմից օգտագործվում էր իբրև մի միջոց հայ ժողովրդի լուսավորության գործը դնելու եկեղեցու «հոգևոր» վարչության տակ, իսկ մյուս կողմից նպատակ էր հետապնդում հայ եկեղեցու և հոգևորականության միջոցով առավել դյուրությամբ անցկացնելու ցարիզմի քաղաքականությունը։

* * *

Եթե հայ եկեղեցու «բարենորոգության» խնդիրը ցարական կառավարությանը հետաքրքրում էր առաջին հերթին իբրև արտաքին-քաղաքական մի կարևոր գործոն, ապա ոչ պակաս չափով նրան շահագրգռում էր Արևելյան

Հայաստանում և առհասարակ ամբողջ Անդրկովկասում դասակարգային ամուր հենարան ստեղծելու հարցը։

1830-ական թթ. Հայկական մարզում կառավարության առաջին քայլերից մեկն այն եղավ, որ վարչական պաշտոններից հեռացվեցին խանական շրջանի նախկին պաշտոնյաները՝ խաները, բեկերը, մելիքները և աղաները, իսկ մահալների կառավարիչներ նշանակվեցին ռուս աստիճանավորներ։ Սակայն այդ միջոցառումից հետո կառավարությունը պետք է լուծեր նաև նախկին պաշտոնյաների հողատիրական իրավունքների կարգավորման հարցը։ Քանի որ նախկին կառավարության ժամանակ հողատիրական իրավունքները հիմնականում կապված էին պաշտոնավարության հետ, անհրաժեշտություն էր առաջանում շուտափույթ կարգավորել այդ հարցը։ Այստեղ ցարական կառավարությունը հավատարիմ մնաց դասակարգային իր էությանը։

Պասկևիչին հաջորդած Անդրկովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի կարգադրությամբ Հայկական մարզի պետ իշխան Բեհբութովը 1836 թ. մի շարք կանոններ մշակեց մուլքադարների և թիուլդարների, ինչպես նաև քոչվոր ժողովուրդների ցեղապետերի իրավունքների վերաբերյալ։

Իշխան Բեհբութովի մշակած «Կանոնադրության» ելակետային սկզբունքն այն էր, որ պարսկական տիրապետության օրոք Հայկական մարզի բոլոր խանները, բեկերը, սուլթանները, մելիքները իսկական կալվածատերեր են եղել, որ համապատասխան գյուղերը պատկանել են նրանց և գտնվել են նրանց տնօրինության տակ, որ այդ գյուղերի բնակիչները կատարել են տարբեր տեսակի պարհակներ՝ հօգուտ մուլքադարների և թիուլդարների և իբրև մուլք վճարել են ամբողջ բերքի որոշ մասը։

Կանոնադրության մեջ այն միտքն է զարգացվում, որ ամբողջ հողի տնօրինության իրավունքը «թողնված է ստորին դասակարգի երկրագործ մարդկանց, որոնք եթե ցանքի համար կամովին որևէ հողակտոր չտան մուլքադարին կամ հողատիրոջը, նա արդեն իրավունք չունի իր սեփականության վրա և միայն հանդիսատես է մնում, թե ինչպես հասարակ հողագործները նրա սեփական հողից մեծ օգուտներ են ստանում»[14]։ Այսպիսով, պարզ է դառնում, որ 1836 թ. կանոնադրությունը կյանքի էր կոչված պաշտպան կանգնելու շահագործող նախկին դասերի իրավունքներին։

Այժմ մուլքադարներն իրավունք էին ստանում ամեն մի գյուղի հողերից, որոնք նախկինի պես բաժանվում էին վեց հավասար մասերի՝ դանգի կամ ակչայի, սեփական ցանքերի համար օգտագործել յուրաքանչյուր ակչայից 2 կամ 3 խալվար հողաբաժին, այսինքն ամեն մի գյուղից նրանց բաժին էր ընկնելու 12—18 խալվար հողատարածություն, իսկ եթե գյուղը սակավահող էր, ապա այնքան, որքան բաժին էր ընկնում ամեն մի գյուղական զորդատանի։ Բացի այդ, գյուղացիները պարտավոր էին մուլքադարի ցանքերը ջրել, հնձել, կալսել և բերքը նրա տուն տանել։ Նշվածից ավելի ցանք կատարելիս մուլքադարը պարտավոր էր կիրառել վարձու աշխատանք, իսկ ցանքերից գյուղացիներին համահավասար պետությանը բահրա վճարել։ Ամեն մի ակչայից կամ դանգից գյուղացիները պետք է մեկական գյուղացիական ընտա-

14 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. Կովկասյան կոմիտե, № 1268, ց. 68, I, թ. 19։

նիք տրամադրեին մուլքատեր խաներին, բեկերին, սուլթաններին և մելիքներին՝ վերջիններիս տնային տնտեսության մեջ աշխատելու համար։ Սա արդեն մի պարտավորություն էր, որ առաջին անգամ փաթաթվում էր գյուղացիության վզին և որը մեծ դժգոհությունների տեղիք պիտի տար։ Հիշյալ ընտանիքները ազատվում էին դեմստվային պարհակներից և անձնական դրամական տուրքից, բայց բահրա պետք է վճարեին մյուս գյուղացիներին համահավասար։ Պահպանվում էր զանազան տոների և հանդեսների առթիվ նվերներ մատուցելու նախկին սովորությունը։

Մուլքատերերն ազատ էին լինելու, բացի բահրայից, մնացյալ տուրքերից և զեմստվային պարհակներից։ Սակայն այդ արտոնությունը չէր տարածվում գնման կամ այլ օրինական ճանապարհով հողեր ձեռք բերած հողատերերի վրա, եթե նրանք պատկանում էին հարկատու դասերին։

Այսպիսով, նոր կանոնադրությամբ մուլքատերերն իրավունք էին ստանում հիմնականում գյուղացիական ձրի աշխատանք կիրառելով սեփական ցանք կատարելու։ Միաժամանակ, փաստորեն, ճորտային կացության էր մատնվում ամեն մի գյուղական համայնքից վեց ընտանիք։ Տեղական ոստիկանությունը պետք է հոգ տաներ, որպեսզի գյուղացիներն անխախտ կատարեին իրենց վրա ծանրացած նոր պարհակները։

Իշխանությունների տեսադաշտից դուրս չմնացին նաև թիուլդարները։ Այդ շրջանում գոյություն ունեին չորս տեսակի թիուլներ՝ ա) ժառանգական, բ) մուսավեզե, այն է՝ մեկ կամ մի քանի մուլքատիրական գյուղի փոխարեն տրված թիուլ, գ) ռոճիկի փոխարեն ստացած թիուլ և, վերջապես, դ) թիուլային էին համարվում էջմիածնի վանքին պատկանող գյուղերը[15]։

Դեռևս ռուսական տիրապետության հաստատման շրջանում, Պասկևիչի օրոք, սահմանվել էր հետևյալ կարգը. «ցմահ օգտագործման համար թիուլներ տալ նրանց, ովքեր նախկինում ստացել են, բայց սահմանել, որ ա) թիուլները երբեք ժառանգներին չանցնեն, բ) որ այսուհետև ոչ ոքի թիուլ չտրվի, գ) հակաօրինական արարքների համար, առավել ևս դավաճաններից (այսինքն, Պարսկաստան փախած թիուլատերերից), թիուլները խլել և դ) որ այժմ զանազան անձերի ցմահ օգտագործմանը թողնված թիուլներում բնակիչներից տուրքերի գանձումն ավելի շատ չլինի, քան վճարում են պետական գյուղացիները»[16]։ Սակայն ցարական կառավարությունը շուտով փոխեց իր վերաբերմունքը նման անձանց նկատմամբ։ Նրանց թուլլատրեց որոշակի ժամանակամիջոցում վաճառել իրենց ունեցվածքը։ Այսպես, 1828 թ. Պարսկաստան էր փախել Դարաքենդ Փարչենիսի մահալի կառավարիչ Մամեդ Ջաֆար խանը, և Պասկևիչը կարգադրել էր, որպեսզի այլևս նրան չթուլլատրվի ոտք դնել ռուսական սահմանները։ Սակայն Ռոշենի կառավարչապետ դառնալուց հետո, Մամեդ Ջաֆար խանը դիմեց նրան՝ վերադառնալու և իր ու-

---

15 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, հակ.՝ Կովկասյան կոմիտե, № 1268, ցուց. (68), 1, 1837, գ. ?, թ. 26—26 հակ.։

16 Նույն տեղում, թ. 29։

նեցվածքին տեր կանգնելու խնդրանքով։ Ջաֆար խանին, ինչպես և շատ ուրիշներին, թույլատրվեց վերադառնալ և տնօրինել իրենց ունեցվածքը[17]։

Այժմ Հայկական մարզի պետը գտնում էր, որ դա «մասամբ անարդարացի» է, քանի որ նման վճիռը հանված է պատահական և «չստուգված» տվյալների հիման վրա։ Բհհբութովը, հանդես գալով թիուլատերերի և նրանց ժառանգների շահերի պաշտպանությամբ, առաջարկում էր նոր ստուգում անցկացնել և, եթե դրանից հետո էլ կառավարությունը չցանկանա ժառանգական թիուլի ինստիտուտն ընդունել, ապա թող համապատասխան փոխհատուցում տրվի թիուլատերերի ժառանգներին։ Ինչ վերաբերում է էջմիածնի վանքին, ապա նրան պատկանող թիուլները «ընդմիշտ թողնել նրա տիրապետության տակ, որովհետև այդ վանքը հնուց տիրում է թիուլների և երբեք դրանցից չի զրկվել»։ Իսկ մինչ համապատասխան վճիռ կհանվեր թիուլային տիրույթների մասին, առաջարկվում էր սրանցից զեմստվային պարհակներ չպահանջել, բացառությամբ փոստային պարհակի և միրաքների օգտին գանձվող դրամի[18]։

Հիշյալ կանոնադրության մեջ մոռացության չէին տրված նաև քոչվոր ժողովուրդների աղաները և ցեղապետերը, որոնք տեղական իշխանություններին պետք է օգնեին իրենց կառավարման տակ թողնվող ցեղախմբերին հսկելու և տուրքեր հավաքելու գործում։ Նրանք պետք է հետևեին «կարգ ու կանոնի» պահպանմանը, զինված պայքար կազմակերպեին արտասահմանից հայտնվող կամ ներքին ավազակախմբերի դեմ, պատժեին պետական տուրքերի վճարման կամ հասարակական պարհակների կատարման մեջ թերացողներին։ Նոր աղալարներ կամ ցեղապետեր նշանակելիս և հներին հեռացնելիս Հայկական մարզի պետը պետք է տեղյակ պահեր երկրամասի կառավարչապետին և ստանար վերջինիս համաձայնությունը[19]։

Պետությանը մատուցած վերոհիշյալ ծառայությունների դիմաց բնակչությունը պարտավոր էր աղաներին և ցեղապետերին աշխատուժով օգնել նոր տուն կառուցելիս կամ հինը վերանորոգելիս. յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տարեկան մեկ օր նրանց համար վար ու ցանք անել, հնձել, կալսել, բերքը տանել ամբարները, ինչպես նաև տարեկան մի բանվոր տալ խոտհնձի համար։ Բացի այդ, նրանց պետք է տնային ծառայողներ տրամադրվեին։ Պատերազմի դեպքում ձեռք բերված ավարի 1/10 մասը բնակիչները պարտավոր էին հատկացնել նրանց։ Տոնահանդեսների կամ ամուսնության կապակցությամբ խրախուսվում էր «կամավոր» ընծաներ տալու սովորույթը։ Հայկական մարզի բոլոր քոչվոր ցեղախմբերը ամեն մի ծխից պետք է հինգ ռուբլի արծաթ վճարեին գանձարանին, ինչպես նաև կոպարային հացատուրք, մինչդեռ աղաները և ցեղապետերն ազատ էին հողի բերքից պետությանը տուրք վճարելուց։ Սա դեռ բոլորը չէր։ Աղաների և ցեղապետերի ազգականների ապրուստի հոգսը ևս դրվում էր գյուղացիների վրա, քանի որ նույնպիսի պարհակներ նրանք պարտավոր էին կատարել նաև սր-

17 ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ, գ. 1—7, 1834, գ. 1, թ. 3—8։

18 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, Կովկասյան կոմիտե, գ. № 1268, ցուց. (68) 1, 1837, գ. 7, «1», գ. 31—31 հա.։

19 Նույն տեղում, գ. 1, «1», թ. 2—6։

բանց համար, իսկ վերջիններս ազատվում էին պետական բոլոր տուրքերից և պարհակներից։

«Կանոնադրության» մեջ մանրամասն սահմանված էին նաև գյուղական տանուտերերի (քյոխվաների) և նրանց օգնականների (չաուշների) ընտրության կարգը և պարտավորությունները։ Կառավարման և տուրքերի հավաքման գործում նրանք պետք է օժանդակեին աղաներին և ցեղապետերին, բայց պետք է գտնվեին աղայի կամ ցեղապետի անմիջական հսկողության ներքո և «անպայման» կատարեին նրանց բոլոր հրամաններն ու կարգադրությունները։

Հիշյալ «կանոնադրությամբ» փաստորեն իրավական ձևակերպում էր ստանում Հայկական մարզի քոչվորական 3108 ընտանիքների կիսաֆեոդալական կախվածությունը 47 աղաներից, ցեղապետերից և սրանց աղգականներից, ընդ որում 180 ընտանիք էլ մատնվում էր ճորտերի կացության՝ հատարակական նորաստեղծ այդ վերնաշերտի տնտեսության մեջ ծառայելու համար։ Այն գյուղերը, որոնք ազատ էին մնացել նման բեռից, նախատեսվում էր նրանց համար ևս ստեղծել նույն վիճակը։

Այսպիսին էր ցարիզմի քաղաքականությունը արտոնյալ դասի նկատմամբ Հայկական մարզում ցարական տիրակալության առաջին տասնամյակում։

Սրան զուգընթաց, ամբողջ մարզում 1829—1836 թթ. կեսերը հարկային սիստեմը դեռևս ծանր էր, որը մեծ դժգոհությունների տեղիք էր տալիս։ Ուստի անհրաժեշտ եղավ նոր հարկային սիստեմ մշակել, որը հաստատվեց և կենսագործվեց 1836 թ. կեսերից։ Բայց այն էլ էական թեթևություն չբերեց աշխատավոր բնակչության։ Տեղական պաշտոնյաների, մուլքադարների ու թիուլատերերի պետական տուրքերը կապալով վերցնողների զեղծումներն ու չարաշահումները չափ ու սահման չունեին։

1840-ական թթ. սկզբին իրագործված վարչական ռեֆորմներն իրենց աղդեցությունը թողեցին նաև Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի վրա։ 1841 թվականի մայիսի 28-ի օրենքով վարչական իրավունքներից զրկված աղալարների և բեկերի արտոնյալ դասը, չհաշտվելով կատարվածի հետ, մեծ դիմադրություն ցույց տվեց և հարկադրեց կառավարությանը դիպաղվել իր հարցով։ Դրա հետևանքը եղավ այն, որ 1842 թ. Թիֆլիսում սկսեցին գործել երեք հանձնաժողովներ, որոնցից մեկը զբաղված էր բեկերի, իսկ մյուս երկուսը՝ աղալարների իրավունքների ճշտման և նյութական ապահովության խնդիրներով։ Հանձնաժողովները հանգեցին այն եզրակացության, որ ա) բեկերն իրենց ունեցած բնակեցված կալվածների ժառանգական տերերն են, բ) որ թեպետև աղալարները նման իրավունքներով օժտված չեն, բայց որպես գյուղերի ժառանգական կառավարիչներ, իրավատեր են որոշ եկամուտների և, վերջապես, գ) ռուսական իմաստով ճորտական կարգ այսպես կոչված մուսուլմանական գավառներում գոյություն չի ունեցել։ Այս հիմնական սկզբունքներն էլ պետք է կազմեին նախագծվող աղալարական-բեկական օրինագծի ողնաշարը։ Ոչ պակաս հատկանշական էին հանձնաժողովների այն եզրակացությունները, որ բեկերին ու աղալարներին հնարավոր է իրենց իրավունքներում իրավահավասար ճանաչել, որովհետև նրանք օգտվում են համանման իրավունքներով և արտոնություններով։

Այսպիսին էր իրավիճակը Անդրկովկասում առհասարակ և Արևելյան Հայաստանում, մասնավորապես, երբ Կովկասում ստեղծվեց փոխարքայություն և առաջին փոխարքա նշանակվեց իշխան Մ. Ս. Վորոնցովը (1844—1854)։ Վորոնցովին հրահանգված և լուծման կարոտ առաջնահերթ խնդիրներից մեկն էլ աղալարների և բեկերի հարցն էր։ Փոխարքայի հանձնարարությամբ նրա օգնական գնդապետ Լադինսկին զբաղվեց հիշյալ խնդրի ուսումնասիրությամբ և 1845 թ. հունիսի 6-ին համապատասխան զեկուցագիր ներկայացրեց։ Փաստաթղթի բովանդակությունը ցույց է տալիս այն կտրուկ շրջադարձը, որ պատրաստվում էր կատարել կառավարությունը։ Լադինսկին գտնում էր, որ ինչպես աղաները, այնպես էլ բեկերն իրենց վարչությանը հանձնված գյուղերի ժառանգական կալվածատերերն են եղել և նույնիսկ օժտված այնպիսի իրավասություններով, որպիսիք ունեցել են վրացական կալվածատերերը, միայն այն տարբերությամբ, որ ժառանգական սեփականության սկզբունքն այնտեղ անվիճելի չի եղել։ Լադինսկու կարծիքով անհրաժեշտ էր բեկերի ու աղալարների ժառանգական սեփականություն ճանաչել այն բոլոր հողատարածությունները, որոնք փաստաթղթերով, կամ փաստական տիրույթի իրավունքով նրանց ձեռքին են գտնվել Անդրկովկասի միացման ժամանակաշրջանում։

Իսկ ինչպիսին պետք է լիներ գյուղացիության իրավական դրությունը։ Առաջարկվում էր գյուղացիներին համարել պետական, բայց կախման մեջ թողնել բեկերից, իսկ վերջիններիս օժտել ռուսական ազնվականության իրավունքներով։ Ահա այս ոգով էլ Վորոնցովը դիմեց կառավարությանը, որպեսզի օրենսդրական ճանապարհով սահմանվեն գյուղացիների և արտոնյալ դասի փոխհարաբերությունները։

Բայց այս տրամադրություններն արտահայտություն էին մի պրոցեսի, որն իր սկիզբը առել էր դեռևս տասնյակ տարիներ առաջ, երբ Շաքիում, Շիրվանում և Ղարաբաղում պահպանվում էին խանական կարգերը։ Բավական արագ ծանոթանալով Ռուսաստանում տիրող սոցիալական կարգերին և ըմբռնելով դրանց բովանդակությունը, տեղական իշխող դասը որոշեց կալվածների ու գյուղացիների տեր դառնալ։ Չնայած փոխարքայի ներկայացրած նախագծի դեմ եղան լուրջ առարկություններ, սակայն, Նիկոլայ 1-ը հավանություն տվեց դրան։ 1846 թ. դեկտեմբերի 6-ի ռեսկրիպտը եկավ օրինականացնելու ադրբեջանական բեկերի ու աղաների և հայ մելիքների հողային իրավունքներն այն ոգով, ինչ ոգով որ նախագծել էր փոխարքա Վորոնցովը։

Ռեսկրիպտով մասնավորապես նախատեսվում էր կայունացնել Անդրկովկասի արտոնյալ դասերի վիճակը և դրանով իսկ նրանց «օգտակար» դարձնել կառավարության վարելիք քաղաքականությանը։ Այս նպատակով խաների, բեկերի և այլոց ժառանգական սեփականություն էին հռչակվում նախկինում զանազան «ծառայությունների և քաջագործությունների» համար շնորհված և երկրամասը Ռուսաստանին միացվելու ժամանակ հիշյալների տիրապետության տակ եղած, ինչպես նաև «այժմ էլ անվիճելիորեն նրանց ձեռքին գտնվող հողերը»։ «1840 թ. որոշ անձնավորություններից վարչական կարգով բռնագրավված հողերը, ինչպես նաև Բորչալու-Շամշադինի, Ղազա-

խի ուղեմասերում 1841 թ. բռնագրավված հողերը նույնպես վերադարձնել այդ անձանց կամ նրանց ժառանգորդներին, դրանք ճանաչել իբրև ժառանգական սեփականություն և դադարեցնել դրանց փոխարեն թոշակների վճարումը»։ Ինչ վերաբերում է ռուսական կառավարության կողմից տարբեր ծառայություններուն համար ցմահ շնորհված հողերը ժառանգական ժամանակավոր տիրապետության տակ թողնելու հարցին, ապա հանձնարարվում էր Կովկասի փոխարքային առաջադրություն կատարել հիշյալ անձերի մասին, իսկ եթե նմանաբնույթ հողերը արդեն անցել են նրանց ժառանգներին, ապա դրանք ճանաչել իբրև ժառանգական սեփականություն։

Ժառանգական իրավունքով կալվածատերերին անցնող հողերը, բոլոր արդյունատեղիներով հանդերձ, դառնում էին նրանց լիակատար սեփականությունը, կարող էին փոխանցվել ժառանգաբար, նվիրաբերվել, վաճառվել, սակայն այնպիսի անձանց, որոնք նույնպես պատկանելիս լինեին արտոնյալ խավերին։ Այս հարցում կարելի էր առաջնորդվել և՛ պետական օրենքներով, և՛ շարիաթով. և՛ թե սովորութային իրավունքի նորմերով։ Հողերի շուրջը ծագած վեճերը կարող էին քննարկվել միայն դատական ատյաններում, ընդհանուր հիմունքներով։

Այնուհետև ռեսկրիպտը անդրադառնում էր նաև նորաթուխ հողատերերի և սրանց հողերի վրա բնակվող գյուղացիների փոխհարաբերությունների հարցին։ Վերջիններս պետք է շարունակեին բնակվել վերոհիշյալ կալվածատերերին շնորհված հողերի վրա, բայց... ճանաչվում էին իբրև պետական գյուղացիներ։ Հողատերերի հողերից օգտվելու համար այս գյուղացիները պարտավոր էին զանազան ծառայություններ կատարել հօգուտ կալվածատերերի։ Գյուղացիները դրվում էին նաև հողատերերի ոստիկանական վերահսկողության տակ։

Այսպիսով, ցարական կառավարությունը ժառանգական կալվածատերեր հռչակեց և ճորտատիրական որոշ իրավունքներով օժտեց Արևելյան Հայաստանի և Ադրբեջանի ամեն կարգի հողատերերին և, ելնելով իր իսկ ստեղծած իրողությունից, այն հիմք համարեց նրանց արտոնյալ դասին պատկանելը որոշելու համար[20]։ Դրանով իսկ ճորտատիրական պետության և Անդրկովկասի նորաստեղծ կալվածատիրության միջև «հաշտություն» էր կայանում։

Ցարական ռեսկրիպտով Կովկասի փոխարքային հանձնարարվում էր զբաղվել արտոնյալ դասի անձնական իրավունքների որոշումով, հավասարեցնելով դրանք ըստ հնարավորության, այն իրավունքներին, որոնք շնորհված էին ռուսական ազնվականությանը։ Այս սկզբունքը կենսագործելու նպատակով Թիֆլիսում, Երևանում, Շուշում և Բաքվում ստեղծվում էին հանձնաժողովներ, որոնց տրված հրահանգում նշված էր. «Բեկական տոհմի մեջ հաշվելու համար առավել վճռական հատկանիշը համարվում է հողատիրությունը, իսկ այն բոլոր անձինք, որոնց տրված են բնակեցված կալվածներ, բեկական իրավունքով, առանց որևէ հետագա քննության ճանաչվում են..., իրենց ընտանիքներով հանդերձ, բարձր դասին պատկանող»[21]։

---

20 *Ц. П. Агаян*, Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956, стр. 79.

21 «Свод материалов....», т. I, ч. II, стр. 43.

Հանձնաժողովների գործունեության արդյունքը եղավ բեկական և աղալարական կոչված «կանոնադրությունների» ընդունումը, որոնց հիմնական սկզբունքները մշակել էին Վորոնցովը և Լադինսկին, ձգտելով դրանց տալ հնարավորին չափ ընդգծված ճորտատիրական բնույթ։ Ընդունվեց երեք «կանոնադրություն», որոնք հայտնի են իբրև 1847 թ. ապրիլի 20-ի, 1847 թ. դեկտեմբերի 28-ի և 1851 թ. հունիսի 8-ի կանոնադրություններ։ Այս վերջինը վերաբերում էր Երևանի նահանգին և Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառին, բայց կյանքում չկիրառվեց։

Բեկական և աղալարական կանոնադրությունները վերաբերում էին նաև Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններին՝ Ղարաբաղին, Զանգեզուրին և Հայաստանի հյուսիսային երեք ուեզդասերին (դիստանցիաներին)։ Կանոնադրություններով սահմանվում էր կալվածատերերի կողմից գյուղացիներին հատկացվելիք հողաբաժնի չափը, նշվում էին այն ֆեոդալական-ճորտատիրական պարհակները, որ ստացված հողաբաժնի դիմաց պետք է կատարեին գյուղացիները՝ հօգուտ կալվածատերերի, թվարկվում էին հողատերերին շընորհված ոստիկանական-դատական ֆունկցիանները, որոշվում այն կարգը, որի համաձայն գյուղացին կարող էր հեռանալ տվյալ կալվածատիրոջ հողից։

Ըստ բեկական կանոնադրության, հողատերը պարտավոր էր 15 տարին լրացած արական սեռի յուրաքանչյուր գյուղացու տալ 5 դեսյատինից ոչ պակաս հարմար հողակտոր։ Աղալարական կանոնադրությամբ նախատեսվում էր, որ գյուղացու հողաբաժինը մնալու է նույնը, ինչ որ էր մինչ 1847 թվականի դեկտեմբերի 28-ը, որ աղալարները իրավունք չունեն այն պակասեցնել, իսկ եթե տնօրինության տակ ունեն ազատ հողամասեր, ապա պարտավոր են գյուղացիների հողաբաժինը հասցնել բեկական գյուղացիների հողային նորմային։ Այս որոշումը այնպես էլ չիրականացվեց[22]։

Կալվածատիրական հողում բնակվելու և դրանից օգտվելու համար գյուղացիները պարտավոր էին բնատուրք վճարել հողի բոլոր բերքերի 1/10-ի չափով։ Հողատիրոջից բանող անասուններ, գործիքներ և սերմացու ստանալու դեպքում այն կազմում էր բերքի 1/5 մասը։ Այգիների, բոստանների, բրնձի ցանքսերի և շերամապահության համար մալջահաթը հավասար էր բերքի 1/3-ին։ Գյուղացիները պարտավոր էին այն հասցնել կալվածատիրոջ տուն մինչև 50 վերստ հեռավորության վրա։

Գյուղացիները պարտավոր էին նաև կոռ կատարել։ Ամեն մի գյուղական գերդաստան պետք է տարեկան մեկ մշակ տար՝ 18 օր աշխատելու համար, իր գյուղատնտեսական գործիքներով հանդերձ, կամ համաձայն կալվածատիրոջ ցանկության, ամեն մի բանվորական օրվա դիմաց վճարել 20 կոպեկ։ Աղալարների համար կոռը համապատասխանաբար կազմում էր 8 օր կամ 10 կոպեկ։ Յուրաքանչյուր տասը ընտանիք պետք է մեկ տղամարդ և մեկ կին ծառայող տրամադրեր դաշտային կամ տնային աշխատանքների համար, ընդ որում կին ծառայող տրամադրելու կետը բնավ չկենսագործվեց, ելնելով երկրամասի ազգային-կենցաղային պայմանների առանձնահատկություններից։ Ծառայողի ընտանիքը կալվածատիրոջ համար այլ պարհակներ

22 «Свод материалов...», т. I, ч. II, стр. 54—55.

չէր կատարում, իսկ նրա պետական տուրքերը վճարում էր կալվածատերը։ Կար նաև կոռի մեկ այլ տեսակը՝ ավարեզը, որը պարտավոր էր կատարել գյուղական ողջ համայնքը՝ տարեկան երկու օր։ Դրամական տուրքերը գանձվում էին արոտավայրերից օգտվելու կամ քոչավայրի իրավունք տալու համար։

Այսպիսով, կալվածատիրական դարձած հողերի վրա ապրող գյուղացիների համար ստեղծվում էին կացության ծանր պայմաններ, նրանք դրվում էին գրեթե ճորտային դրության մեջ, անգամ սահմանափակվում էր նրանց տեղափոխության իրավունքը, մինչդեռ նորաթուխ կալվածատիրական դասը, որը կոչված էր ցարիզմի ամրապինդ հենարանը դառնալու Անդրկովկասում, օժտված էր լայն իրավունքներով և արտոնութիւններով։

Ճիշտ է, Անդրկովկասի բեկական և աղալարական դասը իր իրավունքներում այնպես էլ երբեք չհավասարվեց ռուսական ազնվականությանը, բայց և այնպես դրվեց արտոնյալ դրության մեջ։ Իսկ սրանց մեծ մասը «գյուղացիական և քոչվորական միջավայրից գլուխ բարձրացրած ինքնաբուխ բռնատերեր էին, որոնք Վորոնցովի կողմից առաջ քաշվեցին և կազմակերպվեցին իբրև ֆեոդալական դաս»[23]։ Ֆեոդալական-ճորտատիրական կարգերի չատապով իշխան Վորոնցովը և նրա համախոհները կամենում էին ի հաշիվ տեղական գյուղացիության բարվոքել նորաստեղծ կալվածատիրության դրությունը։

Ցարիզմի գաղութային քաղաքականության բնորոշ գծերից մեկն էլ Արևելյան Հայաստանի և առհասարակ ամբողջ Անդրկովկասի բնակեցումն էր Ռուսաստանի տարբեր նահանգներից բերված գաղթականներով, քաղաքականություն, որ կիրառվում էր դեռևս XIX դարի սկզբից։ Այդ գործն սկսվեց դեռևս գեներալ Երմոլովի կառավարչության տարիներին, երբ Վիրտեմբերգից գերմանացի գաղթականներ բերվեցին և բնակեցվեցին Վրաստանում ու Ադրբեջանում։ Դրանից հետո ծրագրվեց պարսկական լծից ազատագրված Արևելյան Հայաստանում զինվորական շեներ ստեղծել։ 1827 թ. կոմս Դիբիչը գրում էր Պասկևիչին «Պարսկաստանի սահմանագլխին 80000 մալոռուսական կազակների բնակեցմանն» մասին, ամեն մի շնչին 25 դեսյատին հարմարավետ հողեր տրամադրելով, որ նշանակում էր շուրջ 2 միլիոն դեսյատին հող առանձնացնել նախատեսված գաղթականության համար[24]։

Պասկևիչի 1830 թ. պատասխանից պարզվում է, որ, չնայած Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից հայերի ներգաղթին, անդրկովկասյան իշխանութիւններին շարունակում էր զբաղեցնել այդ հարցը։ Նա գրում էր, որ հարմար բնակավայրեր են ընտրվում զինվորական շեների համար, որ այդ ժամանակ արդեն անմիջապես յոթ հազար հոգու կարող են ընդունել և այլն։ Սակայն զինվորական շեների ստեղծման ծրագրից ոչինչ չստացվեց, և 1850-ական թթ. վերջերին Կովկասի փոխարքա Բարյատինսկու առաջարկով գոյութիւն ունեցող մի քանի շեների զինվորականները պարզապես վերածվեցին պետական գյուղացիների։

Բացի այդ, Պետական խորհուրդը 1830 թ. հոկտեմբերի 20-ին, բարձրագույն հաճութիւն ստացած, կարծիք էր հայտնել ռուս աղանդավորներին (դուխոբորներ, իկոնոբորներ, մոլոկաններ և այլն) Անդրկովկաս բնակեց-

23 Խ. Հ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 133։

24 AKAK, т. VII, стр. 322.

ման ուղարկելու և դրա համար հարմարավետ վայրեր տրամադրելու մասին։ Սակայն այդ նպատակի համար ազատ հողատարածություններ, մասնավորապես Արևելյան Հայաստանում, չկային, ուստի Ռուսաստանից վտարված աղանդավորներին հողով հնարավոր էր ապահովել միայն ի հաշիվ տեղական գյուղաբնակչության հողաբաժինների։

Ռուս դաղթականներին Անդրկովկաս գրավելու նպատակով ցարական կառավարությունը նրանց համար ստեղծում էր բոլոր պայմանները։ Եթե կայսրության մեջ գործող ընդհանուր օրենքների համաձայն նոր վայրեր գաղթող գյուղական բնակչությանը վեցամյա հարկային արտոնություն էր տրվում, այսինքն, այդ տարիների ընթացքում նրանք ազատվում էին պետությանը հարկեր և տուրքեր վճարելու պարտականությունից, ապա Անդրկովկաս գաղթող աղանդավորներին ութամյա հարկային ու տուրքային արտոնություն էր շնորհված ըստ 1848 թ. դեկտեմբերի 9-ի կառավարական որոշման[25], իսկ կամովին Անդրկովկաս գաղթած և այնտեղ ուղղափառ դավանանքը ընդունած նախկին աղանդավորները պետական գանձարան մուծվող տուրքերից ազատվելու էին 26 տարով[26]։ Ուղղափառ դավանանքին պատկանող ռուս գյուղացիների հարկային արտոնությունը կազմում էր տասը տարի։

Այդ կապակցությամբ Կովկասյան կոմիտեի բարձրագույն հաստատության արժանացած որոշման մեջ ասված էր. «Մալոռուս կազակներին, ինչպես նաև ընդհանրապես Անդրկովկաս գաղթող ուղղափառ դավանանքի բոլոր ռուսներին տասնամյա արտոնություն շնորհել, ի նկատի ունենալով, որ այնտեղ գաղթող աղանդավորներին ութամյա արտոնություն է տրված, իսկ այդ հարցում ուղղափառներին անհրաժեշտ է գերապատվություն տալ նրանց հանդեպ»[27]։

Այստեղից պարզ է, որ ցարական կառավարությունը կամենում էր միանգամից երկու կարևոր խնդիր լուծել։ Նախ՝ հաշիվ տեսնել աղանդավորների հետ և վերադարձնել նրանց ուղղափառության գիրկը և, մյուս կողմից, արտոնություններ շնորհելով «բարձր դասին», իր համար կայուն քաղաքական հենարան ստեղծել Անդրկովկասում։ Այս միջոցառման քաղաքական նշանակությունը ավելի պարզ է դառնում, երբ ռուս գաղթականներին տրվող արտոնությունները համեմատում ենք Պարսկաստանի և Թուրքիայի սահմաններից հայրենիք ներգաղթած հայ գաղթականների հետ, որոնք կորցրել էին իրենց ողջ ունեցվածքը, բայց հարկերից ու տուրքերից ազատ լինելու միայն վեց տարվա արտոնությամբ էին օժտվում։

1840-ական թթ. Անդրկովկասում ռուս գաղթականների բնակեցման և բնակավայրերի ընտրության գործը ղեկավարում էին Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի մինիստրության կովկասյան լիազոր Ֆադեևը և Երևանի գավառապետ Բլավատսկին։ Ցարական աստիճանավորները ռուս գաղթականների Անդրկովկասում հիմնավորելը հրամցնում էին իբրև տեղական բնակչության կուլտուրական

---

25 ПСЗРИ, т. XXII, 1848, № 22806.
26 ПСЗРИ, т. XXXVI, 1859, № 34324.
27 ПСЗРИ, т. XXVII, 1852, № 26227.

զարգացմանը խթանող մի միջոց։ Այսպես, Ֆադեևը 1849 թ. գրում էր. «ռուս գաղթականները Անդրկովկաս են բերում... բարեկարգ գյուղերի օրինակ, նպաստում են փոստային և առևտրական հաղորդակցությանը, բերում են ցանքերի նոր տեսակներ... իրենց մեջ ունեն շատ արհեստավորներ, որոնք այս երկրամասում պակասում են և ընդհանրապես տեղական շինականներից ավելի ձեռներեց և գործունյա են...»[28]։ Մյուս կողմից, ռուս գաղթականների առկայության հետ կապվում էին Անդրկովկասը կայսրության համար տնտեսապես ավելի շահավետ դարձնելու հեռանկարներ։

Առաջին ռուսաբնակ գյուղերը Արևելյան Հայաստանում հիմնվեցին իշխան Վորոնցովի փոխարքայության տարիներին։ Այդ գաղթավայրերից էին 1844 թ. հիմնադրված Վորոնցովկա և դրանից մի տարի անց ստեղծված Նովո-Միխայլովկա գյուղերը, որոնք երկուսն էլ կրում էին փոխարքայի անունը և տոհմանունը։ Այս գաղթավայրերը հիմնվեցին Թիֆլիս-Ալեքսանդրապոլ ճանապարհին, Լոռու դաշտում և, ժամանակի ընթացքում, տնտեսապես խիստ բարգավաճեցին, քանի որ նրանց բնակիչները ի հաշիվ հայ գյուղացիության ընդարձակ և բարեբեր հողատարածություններ էին ձեռք բերել, մինչդեռ հայ գյուղացիները հարկադրված էին լքել-հեռանալ իրենց պապենական հողերից։ Այնուհետև այս վայրերում ստեղծվեցին Պրիվոլնոյե, Պոկրովկա, Ալեքսանդրովկա, Նիկոլաևկա, Ռուս-Գերգեր ռուսական մեծ բնակավայրերը։ Ֆադեևը կամենում էր ռուսական գաղթավայրեր ստեղծել նաև Ախուրյանի միջին հոսանքի ձախափնյա սևահողային տափարակում, սակայն ոռոդման սիստեմի բացակայությունը վիժեցրեց այդ ծրագրի կենսագործումը։ Ֆադեևը ծրագրել էր նաև ռուսներով բնակեցված գյուղեր հիմնել Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա-Ջալալօղլի և Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա-Դիլիջան ճանապարհների վրա, սակայն տեղական բնակչության դիմադրությունը խափանեց այդ պլանի կենսագործումը, միայն Համզաչիման գյուղի աջ և ահյակ կողմերում հիմնվեցին Նիկիտինո և Վոսկրեսենովկա գյուղերը։ Երևանի գավառապետ Բլավատսկու առաջադրությամբ հիմնադրվեց Միխայլովկա (Միխանա) գյուղը, որի վրայով նախատեսվում էր Ալեքսանդրապոլը անմիջականորեն կապել Սևանա լճի ավազանի հետ։ Նա ծրագրել էր նաև Սևանա լճի ափերի երկայնքով ռուս գաղթականներ բնակեցնել և լիճը օղակել նրանց գյուղերով։ Սակայն նրան հաջողվեց այստեղ հիմնել միայն Ալեքսանդրովկա և Նադեժդինո (Շորժա) գյուղերը։ Բացի այդ, հիմնադրվել էին նաև Ելենովկա, Սեմյոնովկա և Կոստանտինովկա գյուղերը։

Նախատեսված էր չորս գյուղ էլ հիմնադրել Ելենովկայի և Նոր Բայազետի միջև։ Ռուս գաղթականների համար հիշյալ տեղի ընտրությունը հիմնավորվում էր նրանով, որ կլիման առողջարար է, հողը՝ բարեբեր, ջուրը՝ առատ, անտառը՝ մոտիկ։ Այդ գյուղերի հիմնադրման հետ կապվում էին նաև որոշակի տնտեսական հեռանկարներ, առնչված Սևանա լճի հետ։ Ֆադեևի մտադրությամբ չորս գյուղերի հիմնումը կկենդանացներ այդ վայրի անապատային տեղերը և կզարգացներ Սևանա լճում արդյունաբերությունը, ինչ-

[28] ՀԿԳԱ, ֆ. 133, գ. 389, էջ 1—10։ Տե՛ս *В. Ратуки*, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, стр. 166.

պես ձկնորսության ընդարձակումով, այնպես էլ հատկապես նավագնացության հաստատումով լճի վրա, որը և կհեշտացներ գյուղատնտեսական ապրանքների փոխադրումը արևելյան ափից դեպի Ելենովկա և Չիբուխլու, որտեղ կարելի կլիներ հիմնել առևտրական նավամատույցներ[29]։

Ցարիզմը ռուս դաղթականներին, տեղացիների համեմատությամբ, արտոնյալ վիճակում էր դնում, նրանց լավագույն հողաբաժիններ էր տրամադրում։ Այդ ամենը դժգոհություն և բողոքներ էր առաջացնում տեղական ազգաբնակչության մեջ։

Ցարդեևի կարծիքով տեղական գյուղացիության բողոքների հետ հաշվի նստելու անհրաժեշտություն չկար։

Կովկասյան փոխարքայի վարչությանը կից պետական էքսպեդիցիայի հանձնարարությամբ հողաշափ Պոլուխտովիչը 1850 թ. պետք է սահմանադծեր Ելենովկա գյուղը և այնքան հողատարածություն տրամադրեր, որքան հնարավոր կլիներ զատել Ջրջըրը, Քարվանսարա և Ռնդամալ հայկական գյուղերի հողերից, իբր թե այն հաշվով, որ և՛ ռուսները, և՛ հայերը հավասար ու բավարար չափով հող ունենան։ Սակայն հողաշափ Պոլուխտովիչը չարաշահում է իր իրավունքները, որի վկայությունը տալիս է Նոր Բայազետի գավառապետի հիշյալ հողաշափին հղած գրությունը. «Դուք, բացի Ձեզ արված հանձնարարություններից, դիպել եք նաև Օրդաքլու գյուղի հողերին, ինչ հրամանի մեջ ամենևին չի նշված, և այդ հողերից Ելենովկա գյուղի համար կտրել եք մեծ քանակությամբ վարած հողեր և արդեն դրել եք սահմանաձողեր. բացի այդ ենթադրում եք նույն ձևով վարվել նաև Շահրիզ, Դմաշեն, Ցախչի և Վերին ու Ներքին Ախտա գյուղերի հետ»[30]։

Նման քաղաքականության պայմաններում ամենևին էլ զարմանալի չէ, որ Երևանի նահանգապետը մերժում էր հայ գյուղացիների դիմումը, երբ նրանք նշում էին, որ իրենց ռուս հարևանների մեկ շնչին գրեթե վեց անգամ ավելի հող է ընկնում, քան իրենց։ Այդպես էր դրությունը Սեմյոնովկա և Չիբուխլու գյուղերում, ուստի և չիբուխլվեցիները խնդրում էին Սեմյոնովկայի ավելցուկ հողերը տրամադրել իրենց։ Ներքին Ախտայի 95 ծուխ հայերն ավելի վատ հողային պայմաններում էին գտնվում, քան 35 ծուխ մոլոկանները։ Ադրբեջանցիներով բնակեցված Բղնու գյուղի համարյա բոլոր հարմարավետ վարելահողերն ու արտերը 1864 թ. ծրաչափությամբ անցան ռուսական Ալեքսանդրովկա գյուղին։

Զանգեզուրի սակավահող Անգեղակոթ և մի շարք այլ գյուղերի հողատարածությունների հաշվին հիմնվեցին Բազարչայ և Բորիսովկա ռուսաբնակ գյուղերը, իսկ Դիլիջանի Ջարխեչ և Հարևան սակավահող գյուղական համայնքները հարկադրված էին տեղ հատկացնել Նոր Դիլիջան և Գոլովինո գյուղերի համար։

Չնայած բոլոր ջանքերին, ցարական կառավարությանը չհաջողվեց զանգվածային ռուս գաղթականություն հաստատել Արևելյան Հայաստանում, առավել ևս այն դարձնել ցարիզմի հենարան, որովհետև լինելով աղանդավորներ, նրանք մինչև վերջ էլ դիմադիր դիրք ունեին ցարիզմի նկատմամբ։ Ավելին,

29 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 359, թ. 1—10։

30 Նույն տեղում, թ. 71—72։

ռուս գաղթականները սկզբից ևեթ երազում էին հայրենիք վերադառնալու մասին, անընդհատ դիմում էին կառավարությանը, բայց մերժում էին ստանում։ 1865 թ. թուլլատրվում է նրանց վերադարձը, բայց տեղական իշխանությունները դարձյալ խոչընդոտներ էին հարուցում։

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո էլ ամենաբազմամարդ դասակարգը շարունակում էր մնալ գյուղացիությունը։ Բազմահազար պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթից հետո գյուղացիական դասակարգը էլ ավելի ստվարացավ։

Ներգաղթի հետևանքով Հայկական մարզի մինչ այդ ավեր ու ամայի 127 գյուղերը բնակեցվեցին, աճեց մեծաքանակ բնակչություն ունեցող գյուղերի թիվը. այսպես, 201—2000 շունչ բնակչություն ունեցող բնակավայրերի քանակը կրկնապատկվել էր։ 1831 թ. գյուղական բնակչությունը կազմում էր ամբողջ ազգաբնակչության 91,6 տոկոսը։ Քաղաքային բնակչության գերակշիռ մասը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ։

Ցարիզմի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության հետևանքով Արևելյան Հայաստանի «բարձր դասի» քանակական կազմում տեղի ունեցան որոշակի փոփոխություններ։ Ըստ 1829—1832 թթ. կամերալ ցուցակագրության տվյալների, Հայկական մարզի բնակչությունը կազմում էր 104.450 մարդ որից «բարձր դասի» պատկանում էր 3,173 մարդ (սրանցից 434-ը ազգությամբ հայ էին, մնացյալները՝ ադրբեջանցի (կամ բնակչության 1,9 տոկոսը)։ 1865 թ. տվյալներով Երևանի նահանգի (ի բաց առյալ Ալեքսանդրապոլի գավառը) բնակչությունը կազմում էր 356780 մարդ, որից 4260-ը պատկանում էին «բարձր դասին»։ Սրանցից հայեր էին միայն 713-ը։ «Բարձր դասը» կազմում էր բնակչության 1,2 տոկոսը։ Ահա այդ «դասն» էր, որ կեղեքում էր աշխատավոր գյուղացիությանը։

Մինչև 1834 թ. Հայկական մարզում տեղաբնիկներից տուրքերը պետք է գանձվեին պարսկական տիրապետության ժամանակաշրջանում գանձվող տուրքերի կեսի չափով։ Ներգաղթողները մինչև 1836 թ. ազատված էին տուրքերից։ 1834 թ., եկամուտների և պետական գույքերի վարչության ստեղծումից հետո, որի գլուխ կանգնած էր Ի. Շոպենը, «տուրքերը հավասարեցվեցին և որոշվեց ամենուրեք միատեսակ գանձել բերքի բոլոր արդյունքների 1/5 մասը»[31]։ Այդ պարագան միանգամայն ծանրացնում էր գյուղացիական զանգվածների դրությունը, ուստի և բավական սուր բողոքների ու դժգոհությունների տեղիք տվեց։ Դրա հետևանքը եղավ այն, որ 1836 թ. մտցվեցին վեց տարվա փորձնական ժամկետով Հայկական մարզի ողջ բնակչության համար հողի արդյունքներից գանձվող դրույքային տուրքեր։ Միաժամանակ հաստատվեցին նաև դրամական տուրքեր, ընդ որում պետական գյուղացիների ամեն մի ծուխ վճարելու էր 2 ռուբլի 50 կոպեկ, մուլքադարական գյու-

31 И. Шопен, նշվ. աշխ., էջ 1218։

գյուղերի ամեն մի ծուխ՝ 2 ռուբլի, իսկ քաղաքացիների յուրաքանչյուր ծխից գանձվելու էր 3 ռուբլի։

1836—1842 թթ. կիրառված հարկային նոր՝ կոպարային կամ դրույքային սիստեմին փոխարինելու եկավ դրամական տուրքի սիստեմը, որը մեծ դժգոհություն առաջ բերեց գյուղացիության մեջ, թեև դա ամենևին էլ չխանգարեց այն կենսագործելու կյանքում։

Դրամական տուրքերի գանձմանը վերաբերող կանոնները մշակվեցին բյուրոկրատական դիվանատների խուլ անկյուններում, և այդ մասին որևէ վաղաժամ հայտարարություն չեղավ, քանի որ դա «կարող էր ժողովրդի մեջ անհիմն լուրեր առաջացնել և երկյուղ ծնել»։ Նիկոլայ I-ը Անդրկովկասի իր պաշտոնյաներին հրահանգ էր տալիս՝ պայմաններ ստեղծել ապագա մեծ եկամուտների ապահովման համար[32]։

Հարկային նոր սիստեմով Հայաստանի և Ադրբեջանի բոլոր գյուղացիները ճանաչվեցին պետական գյուղացիներ, բաժանվելով երկու կարգի՝ պետական հողի վրա ապրող գյուղացիներ և մուլքադարական հողի վրա ապրող շինականներ։

Հարկային այս սիստեմին անցնելուց հետո էլ մուլքադար գյուղացիները պետք է վճարեին բոլոր նախկին տուրքերը, մի բան, որ մեծագույն դժգոհությունների և բախումների պատճառ է դառնում կալվածատիրական գյուղերում։ Ինչ վերաբերում է թիուլդարներին, ապա նրանք «իրենց պատկանող եկամուտը ստանում են նախկին հիմունքներով»։ Տուրքերի վճարման գործում գյուղացիության վրա հաստատվեց համապարտ երաշխավորության սկզբունքը։

Ուստի հասկանալի է, թե ինչու 30-ական թվականների վերջից, ինչպես կալվածատիրական գյուղերում, այնպես էլ պետական գյուղացիության շրջանում, աճում էր դժգոհությունը ցարիզմի սոցիալ-դասակարգային քաղաքականության, տեղական իշխանության չարաշահումների և ծանր հարկերի դեմ։

Այնուամենայնիվ, ռուսական տիրապետության հաստատումը մասնակիորեն թեթևացրեց աշխատավոր գյուղացիության վիճակը։ Պարսկական տիրապետության շրջանում հարկային ծանր բեռը զուգորդվում էր անասելի բռնություններին և վայրագություններին։ Կայուն օրենքների և կարգ ու կանոնի բացակայությունը, իշխանավորների կամայականությունները գյուղացիներին հաճախակի մատնում էին տնտեսական քայքայման և նետում աղքատության գիրկը։ Նրանց կյանքն ու կայքը ամեն վայրկյան կարող էին կորստի մատնվել։ Այլ էր դրությունը ռուսական իշխանության տակ անցնելուց հետո։ Ճիշտ է, լինում էին չարաշահումներ, զեղծումներ, իշխանությունները հովանավորում էին «բարձր դասերին», բայց առկա էր և գործում էր կայուն օրենքը։

Բնամթերային տուրքերի փոխարեն հարկերի դրամական հաստուցման սիստեմին անցնելը մեծապես խթանեց ապրանքա-դրամական հարաբերու-

---

32 *Տե՛ս И. П. Бахтадзе*, Податное обложение государственных крестьян Закавказского края, *տե՛ս* «Свод материалов...», т. I, ч. III, стр. 9 и 93, 94.

թյունների հետագա զարգացմանը, հետևապես և երկրի տնտեսական առաջընթացին։ Ժողովուրդը, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո, ապահովվում էր նաև իր տնտեսության զարգացման համար խիստ անհրաժեշտ մեկ այլ նախապայմանով ևս. դա խաղաղության հաստատումն էր երկրում, որի շնորհիվ մարդը հնարավորություն էր ստանում առանց երկյուղի զբաղվել իր խաղաղ աշխատանքով, մինչդեռ նախկինում միջֆեոդալական խռովությունները, անվերջ ասպատակությունները զրկում էին նրան իր տնտեսությունը վարելու հնարավորությունից։

Այլ էր համեմատաբար շատ ավելի փոքր թիվ կազմող կալվածատիրական գյուղացիության դրությունը։ Հայկական մարզի, ավելի ուշ Երևանի նահանգի հողատերերը՝ մուլքադարները և թիուլդարները թեև հնարավորություն ստացան ցարական իշխանության հովանավորության շնորհիվ ընդարձակել իրենց դասային արտոնությունները գյուղացիության նկատմամբ, շատերին էլ հաջողվեց սողոսկել «բարձր դասի» կազմի մեջ, բայց մինչև 1840-ական թվականների կեսերը նրանք շատ հեռու էին այնպիսի արտոնություններ ունենալուց, որպիսիք վայելում էին, ռուս ճորտատերերի նման, վրացական ազնվականներն իրենց գյուղացիների նկատմամբ։

Ցարական քաղաքականության շրջադարձը դեպի Արևելյան Հայաստանի «բարձր դասի» կալվածատիրական իրավունքների ընդլայնումը և ամրապնդումը, իհարկե, հնարավորին չափ օգտագործվեց վերջինիս կողմից։

Ռուսական տիրապետության հաստատումից շատ անձնավորություններ, օգտվելով երկրում տիրող խառնաշփոթությունից, տեր էին դառնում գյուղերի և մեծ թվով հողային տարածություններին։ Ավելին, նրանք կողոպտում էին ժողովրդին և մյուս կողմից ոչ մի հարկ չէին վճարում պետական դանձարանին։ Նախիջևանի խանությունում թիուլներ չկային։ Սակայն արդեն 1831 թ. հայտնի է դառնում, որ մասնավոր մի շարք անձեր յուրացրել են որոշ գյուղեր և հայտարարել դրանք իրենց պատկանող թիուլներ։ Այդ եղանակով ոմն Ահմադ սուլթան տեր էր կանգնել Ցարըմջա գյուղին, որն իբր գնել էր 1827 թ. Պարսկաստան փախած Մահմադ բեկի ժառանգներից, մինչդեռ Ցարըմջան պետական գյուղ էր եղել[33]։

Նույն եղանակով Նախիջևանի նախիջ էհսան խանը բռնագրավել էր Աղբենդ և Աղդարա գյուղերը և տարիներ շարունակ յուրացրել դրանց հասույթները, գյուղացիության համար ստեղծելով գոյության անտանելի պայմաններ։ Հետագայում դատավճռով այդ գյուղերը վերցվել էին նրանից և վերադարձվել գանձարանին, սակայն շուտով հաջորդել էր Նիկոլայ I կայսեր ռեսկրիպտը և անօրինական կերպով զավթված գյուղերը կրկին դարձել էին Հափշտակողի սեփականությունը[34]։ Այսպիսով, հիշյալ ժամանակաշրջանում բռնագրավումները ֆեոդալ-հողատեր դառնալու տարածված ձևերից մեկն էին։

Պետական գյուղերին ու հողերին տիրելու մյուս ձևը կեղծ փաստաթղթեր ստեղծելն էր, սուտ վկայություններ տալը։ Այդ տարիներին հայտնվեցին բազմաթիվ պարգևագրեր, վաճառագրեր և այլն, որոնք հնարավորություն

33 ՀԿՊՊԱ, ֆ. 26, 1848, գ. 149, թ. 99։

34 Տե՛ս Խ. Հ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 88։

էին տալիս տեր կանգնելու խոշոր կալվածների։ Դժվար չէր դրանց կեղծ լինելն ապացուցել, սակայն, մեծ մասամբ, ցարական պետական ատյաններն ու տեղական իշխանությունները աչք էին փակում դրա վրա։ Կեղծ փաստաթղթերի օգնությամբ էր, որ Երևանի բնակիչներից ոմն Մեհթի բեկ Հաջի-բեկլինսկի կամենում էր տեր կանգնել Զանգիբասարի հինգ գյուղերի, որպես թիուլդար և մուլքադար։ Շուրջ 25 տարի Հաջիբեկլինսկին յուրացնում է այդ գյուղերի եկամուտները, որից հետո միայն բացահայտվում է կեղծիքը և նա դրկվում է անօրինական ճանապարհով սեփականացրած գյուղերից[35]։

Շատ-շատերին հաջողվեց արտոնյալ դասի շարքերն անցնել պարզապես շնորհիվ այն բանի, որ կոչվում էին խան, սուլթան, աղա, բեկ, իսկ ոմանք էլ կաշառակերության, պետական հողերի շուրջը կեղծ վիճաբանություններ սարքելով և այլ զարտուղի ճանապարհներով տեր կանգնեցին հողերի։ Ցարական իշխանությունները ևս քիչ հոգ չտարան բազմացնելու այդ պորտաբույծ դասակարգը՝ գյուղեր և հողեր պարգևելով և զանազան կոչումներ շընորհելով իրենց մարդկանց։ Թե ինչպես էին վերաբերվում սրանք գյուղացիների հետ, ցայտուն կերպով ցույց է տալիս Կարճևան գյուղի օրինակը, որը Պասկևիչը պարգևել էր Ղարադաղի նախկին Մամադ Կուլի խանին։ Կարճևանցիների բողոքագրում ասվում էր հետևյալը. «... Այժմ հրամանավ Պասկևիչ սարդարին Մամադ-Կուլի-խան Ղարադաղցի տասն ու հինգ տան խանություն է անում, որ է Կարճևան. խնդրեմք հասարակությամբ վերահասու լինել, որ այս փոքուր ժամանակիս ինչքան նեղություն կամ զուլում է արել, մեր գյուղն չի ծախվել կամ մենք չենք ծախվել նորա վրեն»[36]։ Ապա նշվում է, որ խանը 90 ձիավորով գալով գյուղ և բազմապիսի նվերներ ու հարկեր հավաքելով, ավերել է իրենց գյուղը։

Թե ինչպիսի կացություն էր ստեղծվել աշխատավորական զանգվածների համար այնպիսի մի շրջանում, երբ դեռ իշխանության նոր օրգանները չէին ամրապնդվել, և գերիշխող էր մնում հինը, երբ նորն ու հինը դեռ միահյուսված էին, երևում է Հայկական մարզի վարչության Շոպենի հղած մի գաղտնի զեկուցագրից, որը վերաբերում է Նախիջևանի և Օրդուբադի շրջաններին. «Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բնակիչների ներկա դրությունը խղճալի տպավորություն թողեց ինձ վրա։ Ջնայած երկրի բնական հարըստություններին, բնակիչներն անհամեմատ ավելի աղքատ են։ ...Այսպիսի հակադրության գլխավոր պատճառները համարում եմ հետևյալը.

ա) հարկերն այստեղ գանձվում են պարսկական կառավարության ժամանակ գոյություն ունեցող չափով, չնայած Հայկական մարզի համար կիսով չափ կրճատելու կարգադրություն կա.

բ) պատերազմի ու ժանտախտի հետևանքով ազգաբնակչությանը պարված հարկային արտոնությունները չեն կիրառվել.

գ) շրջանների կառավարման ձևն արգելակում է բնակչության բարեկեցությանը։ Նախիջևն անսանձ կերպով անձնատուր են եղել ասիական շահամոլության. նրանք իրենց ձիավոր ծառաների մեծամեծ խմբերով շրջագա-

35 Նույն տեղում, էջ 77—78։
36 ՀԿՊԳԱ, ֆ. 26, գ. 9, թ. 29։

յում են գյուղերում և ձրիաբար օգտվում գյուղացիների պարենից ու խարից.

դ) նախիջևանի իրենց ազգականների ու մերձավորների հետ, որոնք տեղից դևխավոր մուլքադարներն են, ամենևին չհոգալով բնակչության մասին, ամեն ինչ անում են, կարելություն չափ մեծ հասույթ ստանալու համար։ Ջնայած այս շրջանների ջրասակավությանը, նրանք չալթուկ են ցանում, որը պարսկական կառավարության ժամանակ արգելված էր։ Սևփական ցանքսերի համար լավագույն և ամենից բերրի հողերն են ընտրում, միայն վատ հողերը գյուղացիներին թողնելով։ Չալթուկի ցանքսերից ազատված ջրերով նրանք իրենց խամ հողերն են ջրում։ Այս դրկանքներին ամենից շատ պետական գյուղերի բնակիչներն են ենթակա, որովհետև նրանք ոչ մի պաշտպան չունեն.

ե) պարհակներն ու պարտուլքները կամայականորեն են բաշխվում։ Անդատաստան պատիժները, գանակոծումներն ու տուգանումները վերջ չունեն։ Շատ անգամ պատժում են, որպեսզի տուգանք գանձեն։ Նախիջևանում տարածված համբավ է, որ երբ նախիջևանը կամենում է թուղթ խաղալ, կրպակներից մեկական չերվոնեց է հավաքել տալիս յուր օգտին.

զ) խաները, նրանց ազգականները ու մերձավորները յուրացրել են պետական ու լքյալ (Պարսկաստան փախածների) գյուղերը և կամ թե չէ՝ վերջիններ հաշվին ընդարձակել են իրենց հողատիրության սահմանները։ Բնակչությունից գանձում են անչափ մեծ տուրքեր, բայց պետական գանձարանին միայն փշրանքներն են հանձնում.

է) քաղաքական տեսակետից իրենց շահերից ելնելով՝ նախիջևանն ու տիրող տարրերը տեղացիների մեջ «վայրենի, խստաբարո ու խորթ» վերաբերմունք են սնում դեպի ռուսները։ Այս բանն անում են մի կողմից իրենց դիրքն ու կշիռը կառավարության առաջ արժեքավորելու և բարձր պահելու նկատառումով, մյուս կողմից՝ բնակչությանը միմիայն իրենց ենթակա պահելու նպատակով, որպեսզի պահանջված ժամին (պատերազմ, ապստամբություն հօգուտ Պարսկաստանի և այլն) տեղական տարրը զերծ լինի իրենց համար ոչ-ձեռնտու աղդեցություններից և անի այն, ինչ իրենք կթելադրեն...»[37]։

Շոպենի այս գաղտնի զեկուցագրում սեղմ կերպով թվարկված են այն ապօրինությունները, սանձարձակությունները, խժդժություններն ու կամայականությունները, որոնց այս կամ այն չափով ենթակա էր Արևելյան Հայաստանի բնակչությունը։ Եվ թերևս այս ամենից ելնելով էր, որ ցարական կառավարությունը նախապես վարեց քաղաքական մի կուրս, որը նպատակ ուներ սահմանափակել ֆեոդալական հողատիրության ինքնաշնորհված իրավունքները։

1860-ական թթ. գյուղացիության վիճակում կատարվում են որոշ տեղաշարժեր, կապված դրամական հարաբերությունների, ապրանքային տնտեսության զարգացման և կապիտալիստական արտադրահեղանակի առաջացման հետ։ Այդ նույն երևույթը գյուղում նկատվող ներքին պայքարն է՝ ուղղված շահագործման նոր տեսակի՝ իր էությամբ բուրժուական շահագործ-

37 AKAK, т. VII, № 411—413.

ման և դրանց կրողների՝ գյուղական կուլակների դեմ։ Գյուղացիության վրա ծանրացող այդ նոր բեռը դեռևս հիմնականը չէ, պետական ու կալվածատիրական ճնշման կողքին այն իրեն հաղիվ է զգացնել տալիս, բայց դա մի երևույթ է, որն անտեսել արդեն չի կարելի։

1863 թ. Դարալագյազի Աղքենդ մուլքադարական գյուղի բնակիչների 17 ընտանիք դիմում է Երևանի նահանգապետին և իրավունք խնդրում վերաբնակվելու Նոր Բայազետի գավառի Խատրլուկ ավերակ գյուղում, քանի որ վարելահողը պակաս է և ի վիճակի չեն պետական ու մուլքադարական տուրքերն ու պարհակները վճարել։

Ծանր էր նաև Ջիբուխլու գյուղի բնակիչների վիճակը. կլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով ցորենի և գարու ցածր բերքը ոչ միայն չէր բավարարում նրանց կարիքները, այլև շատ անգամ գյուղացիներն ստիպված էին լինում շուկայից հաց գնել։ Բավարար չէին նաև Ջիբուխլվեցիների վարելահողերն ու արոտատեղիները։ Ջնայած դրան, նրանցից կամենում էին խլել և Սևանա վանքին հանձնել հողակտորներից մեկը։ Նրանց վրա էր բարդված նաև լճի ափով անցնող ճանապարհի ձյունը մաքրելու, փոստը հինգ ձիավորներով ուղեկցելու և այլ պարհակներ։ Կարիքից ու կամայականություններից ծեծկված գյուղացիները պաշտպանություն էին որոնում նահանգական իշխանությունների մոտ, խնդրում ազատել անվճար պետական պարհակներից, չխլել իրենց հողը։

1866 թ. Ներքին Ախտալի հայ գյուղացիները փոխարքային ուղած խընդրագրում նշում էին, որ սկսած 1851 թ. իրենց տնտեսական դրությունը վատացել է, որովհետև գյուղական համայնքին պատկանող բերրի ու մոտիկ վարելահողերը կտրել ու տվել են մոլոկաններին։ Նրանք զրկված էին նաև վառելափայտ ձեռք բերելու հնարավորությունից։

Անցյալ դարի 60-ական թթ. Ապարանը մտնում էր Էջմիածնի գավառի մեջ. նրա բնակչությունը կազմված էր գլխավորապես Արևմտյան Հայաստանից 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո գաղթած հայ գյուղացիներից։ Բնակչությունը 30-ական թվականների վերջերին Նոր Բայազետի և Փամբակ-Շորագյալի հայ գաղթականների նման ըմբոստացել էր և հրաժարվել պետական տուրքեր վճարելուց և պարհակներ կատարելուց։ Թեև 1863 թ. ժամանակավոր պարտապանի վիճակում գտնվող ռուս գյուղացիների մեջ տարածված էր այն մտայնությունը, որ այդ թվականի գարնանից իրենց բաժնեհողերի սեփականատերերն են դառնալու, ապա Ապարանի գյուղացիության մեջ այդ մտայնությունը յուրատեսակ արձագանք էր գտել և պետական տուրքերից խուսափելու առիթ ծառայեց։ Ապարանի գյուղացիների հարկերը վճարելուց հրաժարվելու իրական դրդապատճառն այն էր, որ գավառապետը կողոպտում էր գյուղացիներին՝ հենվելով գյուղական կուլակների վրա։ Վերջիններս թույլ չէին տալիս գյուղացիներին իրենց հացահատիկը վաճառել Երևանում, հարկադրում էին ղուկայական արժեքից 3—4, նույնիսկ 5—6 անգամ ավելի պակաս գներով այն վաճառել գավառապետի գործակալներին, իսկ ցորեն չունեցողներին ստիպում էին ընչին գներով վաճառել իրենց անասունները։

Գավառապետը դիմում էր նաև ուղղակի խաբեության՝ ավելացնելով պետական հարկերն ու պարհակները և գրպանելով տարբերությունը։ Երբեմն էլ նա գյուղացիներից հավաքում էր վաղուց վերացված տուրքերը, ինչպես ա-րոտավայրերից գանձվող սաբալախո տուրքը։ Որոշակի գումար էր գանձվում տեղական պահակախմբի համար, մինչդեռ այդպիսին գոյություն չուներ։ Իր անձնական հողամասի պահպանման ծախքերը ևս նա գանձում էր գյուղացիներից։ Գավառապետը կամայականորեն փոփոխում էր գյուղական ընտրովի պաշտոնյաներին, վաճառում էր պաշտոնները կամ նշանակում իր մարդկանց։ Գավառապետի գործակիցները նվերների անվան տակ հավաքում էին զանազան մթերքներ, կաշառքներ վերցնում և այլ ապօրինություններ կատարում։

1860-ական թթ. Ալեքսանդրապոլի գավառի պետական քսան գյուղերի բնակիչների բողոքը իրենց գավառապետի դեմ բացահայտում է այն ապօրինությունները, որոնց զոհ էին դառնում անխնա կերպով շահագործվող գյուղացիները։ Վերջիններիս բողոքը քննող պաշտոնյան նշում էր. «Կազակային պոստի կառուցումը չափազանց ծանր է նստում բնակիչների վրա։ Նրանք պարտավոր են ամբողջ շինանյութը բերել իրենց հաշվին՝ չտանալով փոխադրավարձ, ձրի բանվորներ են տալիս և համարյա ձրի վարպետներ»։ Թեև գյուղացիներից, սկսած 1861 թ., տարեկան ամեն մի ընտանիքից հավաքում էին 2 ռուբլի 17 կոպեկ՝ ձիավոր պահակների ծախքը հոգալու համար, որոնք իբր թե նրանց պետք է պաշտպաններին կողոպուտներից, բայց պահակային ծառայությունը գրեթե բացակայում էր։ Գյուղացիների համար դժվարացել էր նաև պետական անտառներից անձնական կարիքների համար փայտ ձեռք բերելը։ Երևանի ժանդարմական վարչության պետ կապիտան Զոլոտովսկին իր զեկուցագրերից մեկում նկարագրում էր այն ճնշումներն ու կողոպուտը, որոնց ենթարկվում էին Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները՝ գավառապետ Ֆոն-դեր-Պալենի կողմից։ Վերջինս յուրացնում էր փայտ կտրելու իրավունքի համար գանձվող գումարները։

Գյուղական հասարակության պարհակները և տուրքերը բաշխելու իրավունքը ոտնահարվում էր և՛ գավառական իշխանության կողմից, և՛ գյուղի վերնաշերտի կամքով։ Ալեքսանդրապոլի գավառի 20 գյուղերի ներկայացուցիչները, փոխադրչային բողոքելով պարհակների և տուրքերի սահմանման գործում գավառապետի վարչական կամայականության դեմ, պաշտպանում էին ոչ թե գյուղի հասարակական ժողովի իրավունքները, այլ գյուղական տանուտերերի և «պատվավոր անձերի»՝ այսինքն գյուղի վերնաշերտի արտոնությունը. դրա համար էլ այդ բողոքն ստորագրած 47 հոգուց 17-ը տանուտերեր էին։

Գյուղական վերնաշերտերի տրամադրությունները բողոքագրում երևան են գալիս մեկ այլ հարցում ևս։ Գավառապետը մեղադրվում է այն բանում, որ հրաման է տվել գյուղերում հողի ներքին վերաբաժանում կատարել ոչ թե այնտեղ հնուց գոյություն ունեցող, այսպես կոչված, համփա-չարեքային սկզբունքով, այլ ըստ ընտանիքների արական սեռի շնչերի։ Ապա ավելացնում են, որ հենց «այդ պատճառով էլ մեր միջև շարունակ անբավականություններ են տեղի ունենում»։

Գյուղացիների բողոքագրի այդ կետը ճիշտ հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները։

Գյուղական համայնքի հողն ըստ շնչի բաշխելու նոր սկզբունքը պաշտպանում էր չքավորությունը, իսկ վերնաշերտը կողմնակից էր հնուց գոյություն ունեցող համփա-չարեքային սիստեմին, որի համաձայն, ի միջի այլոց, կարելի էր համապատասխան տուրքեր տալով, անկախ ընտանիքի աբական սեռի անդամների թվի, ավելի մեծ քանակությամբ հող ստանալ, իսկ այդ, իհարկե, հնարավոր և ձեռնտու էր միայն գյուղական վերնաշերտին[38]։

Դրամական տնտեսության հետզհետե նկատվող զարգացման պայմաններում գյուղական բնակչության աճը, հողի պակասությունը, հատկապես գյուղացիական ռեֆորմին հաջորդող տարիներին[39], սրել էր պայքարը հողի վերաբաժանման համար այդ երկու սիստեմների կողմնակիցների միջև ոչ միայն Ալեքսանդրապոլի գավառում, այլև Երևանի նահանգի մյուս շրջաններում։

Թեև Ալեքսանդրապոլի գավառի պետական 20 գյուղերի բողոքն իբրև «անհիմն» անհետևանք թողնվեց Երևանի նահանգապետի կողմից, բայց դրա համառոտ վերլուծությունը պարզորեն ցույց է տալիս, որ այդ դիմումով Հայաստանի գյուղացիները հարուցել են պետական գյուղի հասարակական կյանքը հուզող մի շարք կարևոր հարցեր՝ կապված պետական իշխանության գավառական մարմինների չարաշահումների և կամայականությունների հետ, գյուղում զանազան շերտերի միջև սկսված բախումների հետ՝ պարհակների ու տուրքերի բաշխման և հողի վերաբաժանման եղանակների կապակցությամբ։

1830—1860 թթ. Արևելյան Հայաստանում ծավալված գյուղացիական ելույթները կարելի է ստորաբաժանել երկու ժամանակահատվածի, որոնցից մեկն ընդգրկում է 1830-ական թթ. և մյուսը 1840-ական թթ. կեսերից հետո ընկած ժամանակաշրջանը։ Եթե 1830-ական թթ. գյուղացիությունը, հատկապես Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթած, հիմնականում պայքար ծավալեց կառավարության հարկային քաղաքականության դեմ, ավելի ճիշտ հարկային արտոնությունները երկարաձգելու համար, քանի որ ներգաղթից հետո դեռևս չէր կարողացել կարգի բերել իր քայքայված տնտեսական կացությունը, ապա երկրորդ ժամանակաշրջանի բնորոշ գիծն էր՝ պայքարը նորաթուխ կալվածատիրական դասի ուժեղացող շահագործման և ճորտատիրական հավակնությունների դեմ։ Այս շրջանում պայքարը միաժամանակ ուղղվում էր իշխանության և նրա ներկայացուցիչների դեմ, որովհետև նրանք, իբրև կանոն, հանդես էին գալիս կալվածատերերի շահերի պաշտպանությամբ։

Գյուղացիական ելույթների մեջ աստիճանաբար ուրվագծվում էր մեկ այլ գիծ ևս՝ գյուղացիական զանգվածների պայքարը գյուղական ունևոր շերտերի դեմ։ Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ շահագործման դեմ մղ-

38 Տե՛ս С. Г. Егиазаров, Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии. В книге «Свод материалов...», т. I, ч. I, стр. 26, 27.

39 Տե՛ս С. Завдров, Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, стр. 218.

վող պայքարում հայ և ադրբեջանցի գյուղացիները հաճախակի միասնաբար էին հանդես գալիս դասակարգային ընդհանուր թշնամու դեմ[40]։

Գյուղացիության զանգվածային առաջին բողոքները և գանգատները վերաբերում են 1837 թ., երբ Նիկոլայ I-ը այցելեց Հայաստան։ Օգտագործելով առիթը, գյուղացիները յուրահատուկ ձևով ներկայացրին կայսրին իրենց բողոքն ու գանգատը։ Նրանք ճանապարհի վրա ծղոտ էին վառում, ցույց տալու համար, որ իրենք էլ այդպես վառվում են իրենց շահագործողների ձեռքին, իսկ Սարդարապատում ցույց տվեցին մի փետրահան աքաղաղ, որը խորհրդանշում էր, թե իրենք այդպես փետրահան են լինում, այսինքն՝ կողոպրտվում են[41]։

Ղազախի հայ գյուղացիները նույնպես դիմեցին Նիկոլայ I-ին՝ գանգատվելով, որ նախկինում իրենք կողոպտվում էին աղալարների կողմից, իսկ այժմ տառապում են ցարի իշխանության լծի տակ։ Նկատի ունենալով Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանի գլխավորությամբ Ղազախի հայ գյուղացիների գործուն մասնակցությունը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին և այն, որ նրանց մատուցած ծառայությունների համար դեռևս կառավարչապետ Երմոլովն էր խոստացել ազատել աղալարների իշխանությունից, գյուղացիների խնդիրքը հարգվեց[42]։

Նույն թվականին Ջանգեզուրի մահալի Բռնակոթ գյուղի բնակիչները ցարական պաշտոնյաների շահատակությունները և իրենց տնտեսական ծանր վիճակը հետևյալ կերպ էին նկարագրում. «Մեր պետերը,— գրում էին նրանք,— ոչխարի հոտի վրա ընկած գայլերի նման զանազան ճնշումներով քայքայում են մեր բարեկեցությունը։ Մշտապես Շուշի ամրոցում իր տանը գտնվող պարետը իր ճաշի համար ամեն օր գանձում է մեկ ռուբլի արծաթով։ Ամեն վեց ամիսը մեկ նաիբները մեզ մոտ փոխվում են։ Նաիբի ամեն մի ճաշի համար պահանջվում է մեկ ոչխար, 1 լիտր բրինձ, կես լիտր յուղ, խոհարարին ճաշ եփելու համար տալիս ենք 5 ռուբլի, ծառայողին՝ 4 ռուբլի, միրզային (գրագրին) 12 ռուբլի, իսկ իրեն՝ նաիբին՝ 50 ռուբլի արծաթով։ Նաիբն ունենում է 10 նոքարներ ու ծառաներ, որոնք մեր ձիերն են հեծնում և վերադարձնելիս էլ մեկ ռուբլի են վերցնում»[43]։ Նույն մահալի գյուղացիները բացի բողոքներից, տնքում էին ճնշումների և ապօրինի տուրքերի տակ, թեև դա այնքան էլ վտանգավոր չէր նրանց համար, ինչպես վկայում էր սենատոր Գանի Հանձնաժողովի անդամներից մեկը։ Նույն անձնավորությունը հաղորդում էր, որ տեղական պաշտոնյաները համապատասխան «նախազգուշական» միջոցների են դիմում՝ կանխելու ժողովրդական բողոքի ամեն մի փորձ։ Երևանի բնակիչները վախենում էին ավելորդ մի խոսք արտասանել, որովհետև նրանցից շատերը «խնդրագրերով թագավոր կայսրին դիմելու համար տուժել էին»։

Շատ դեպքերում կալվածատիրական բռնությանը ենթարկված գյուղացիները իրենց ֆեոդալներից ազատվելու համար, դիմում էին իշխանու-

40 Տե՛ս Ц. П. Агаян, Крестьянская реформа в Азербайджане в 1870 г., стр. 164.

41 Տե՛ս Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը, մաս Բ, էջ 434։

42 Տե՛ս В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, стр. 338.

43 «Колониальная политика Российского царизма в Азербайджане», ч. I, стр. 368.

թյուններին և խնդրում թույլատրել բնակություն հաստատել պետական գյուղերում։ Այսպես, Դարալագյազի մահալի Կորադիզ և Ալմալու գյուղերի բնակիչները այդ գյուղերից հեռանալու իրենց ցանկությունը պատճառաբանում էին հետևյալ կերպ. նրանք «Պարսկաստանից գաղթելու օրից աղքատության ու չքավորության մեջ են ընկել միմիայն այն ճնշումների հետևանքով... որ նրանց պատճառում է Մահմեդ Սադրխ բեկը, որը բացի բնատուրքերից, նրանցից դանձում է նաև զանազան դրամական տուրքեր, ինչպես և խնդրում են թույլտվություն, վերաբնակվելու մի այլ տեղ, որպեսզի ազատվեն անհավատի լծից»[44]։

Սակայն 1830-ական թվականների վերջերին ծավալված գյուղացիական ելույթների հիմնական պատճառը պարսկահայ և արևմտահայ գաղթականության շնորհված վեցամյա արտոնաժամկետի լրանալուց հետո նրանց հարկադրվելն էր։ Կառավարությունն այդ ժամանակավոր արտոնությունը 1836 թ. համարեց վերջացած և 1837 թվականին նրանց վրա հարկեր դրեց՝ «համապատասխան նրանց կացության և այն դրույքներով, որ նշանակված են բնակիչների համար»։ Նման ելույթներ ծավալվեցին Փամբակում, Շորագյալում, Ախալցխայում, որոնք վարչական առումով մտնում էին Վրաստանի կազմի մեջ, նոր Բայազետում և այլուր։

Փամբակի և Շորագյալի շրջանը մեծ մասամբ բնակեցված էր էրզրումից և Կարսից գաղթած հայերով։ Նրանք տնտեսական խիստ ծանր կացության մեջ էին գտնվում, թեև Նիկոլայ I-ի կարգադրությամբ հարկերից և տուրքերից ազատ լինելու նրանց արտոնաժամկետը երկարաձգվել էր մինչև 1838 թվականը, այսինքն ևս մեկ տարով։ 1838 թ. նորագաղթները դարձյալ հրաժարվեցին տուրքերը վճարելուց։

Կովկասի կառավարչապետի հրամանով Փամբակ-Շորագյալի ուղևորվեց պետական խորհրդական իշխան Փալավանդովը՝ գյուղացիներին հանդարտացնելու և կարգն ու կանոնը վերահաստատելու համար։

Նրա 1838 թ. հունվարի 31-ի գրությունից պարզվում է, որ մինչև Գյումրի հասնելը, նա եղել է ուղևորասի մի շարք գյուղերում, և հայ գաղթականները պահանջել են տանուտերերին պաշտոնից հեռացնել։ Գյումրիում նա պարզում է, թե ովքեր են խռովության դրդիչները և կալանավորում նրանց, իսկ դրանց մեջ եղած մի քանի քահանաներին նախազգուշացում անում։ Նա այցելում է խռովության մեջ ամենից շատ աչքի ընկած գյուղերը՝ Փոքր Ղարաքիլիսան, Բայանդուրը, Թաիշան-Ղշլաղը և Ղազարապատը[45]։

Նույն Փալավանդովի փետրվարի 2-ի գրությունից երևում է, որ բնակչության դժգոհությունները ճնշելու համար նա պահանջում է խիստ պատիժներ կիրառել գյուղացիների նկատմամբ։ Այնուամենայնիվ, գլխավոր պըրիստավ Շլիպենբախը ազատվում է պաշտոնից։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ժողովրդական հուզումները պայմանավորված էին նաև պաշտոնյաների չարաշահումներով։

---

44 Նույն տեղում, էջ 348։

45 «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. 62, Երևան, 1958, էջ 79—82։

Փալավանդովը 1838 թ. փետրվարի 9-ին զեկուցում էր, որ ճիշտ չէր գյուղացիական «անկարգություններն» ամբողջովին վերագրել անբարեհույս մարդկանց «սադրանքներին», որ դրանք պայմանավորված էին հայ գաղթականների տնտեսական դրությամբ և տեղական պաշտոնյաների, այդ թվում նաև գյուղական տանուտերերի կամայականությամբ։

Առավել մեծ ծավալ ընդունեցին և իշխանություններին մտահոգեցին Գյոկչայի կամ Նոր Բայազետի 30 հայ գյուղերում ծավալված գյուղացիական հուզումները, որոնք նույնպես ուղղված էին կառավարության հարկային քաղականության դեմ։ 1837 թ. հիշյալ 30 գյուղերում բնակություն հաստատած արևմտահայ գաղթականությանը նույնպես պարտավորեցվեց հարկեր վճարել։ Նրանց խնդիրը հարկերը կրճատելու մասին մերժվեց։ Հետաձգվեց նաև Նոր Բայազետի բնակիչների դիմումներին բավարարություն տալու հարցը։ Նրանք խնդրում էին իրենց ճանաչել իբրև քաղաքացիներ (պաշտոնապես նոր Բայազետը քաղաք դարձավ 1850 թվականից), ազատել գյուղական տուրքերից, այնտեղ գավառական դպրոց բաց անել պետության հաշվին։

Տեղական իշխանությունների հետ գյուղացիների բախման առիթը հետևյալն էր. 1837 թ. վերջերին նրանք հավաքեցին բերքը, բայց տուրքերը չվճարեցին, պատճառաբանելով, որ այդ վեր է իրենց ուժերից և հնարավորություններից ու հարց դրեցին կրճատել հարկերը։ Կառավարչապետը նախ դիմեց «ներշնչման» միջոցին, բայց տեսնելով, որ դա արդյունք չի տալիս, գյուղերը եսաուլներ ուղարկեց, որոնց սակայն գյուղացիները վռնդեցին և հետո էլ «բացահայտ անհնազանդություն ցուցաբերեցին»։ Դրանից հետո նրանք պատգամավորություն ուղարկեցին Թիֆլիս՝ իրենց գանգատը կառավարչապետին հայտնելու։

Գյուղացիների դիմադրությունը հարկերի գանձմանը բացատրվում էր նաև այն բանով, որ նրանցից ընթացիկ տարվա տուրքերից բացի պահանջում էին նաև վերադարձնել գաղթի ժամանակ պետության տված նպաստը։ Անգամ իշխանության ներկայացուցիչներն ընդունում էին, որ նպաստի բավական մեծ գումարի գանձումը, «տուրքերը լրիվ վճարելու գլխավոր արգելքը կհանդիսանա» և ավելի օգտակար էին համարում ղիջել նրանց տրված նպաստը, որպեսզի լրիվ կերպով կարողանան գանձել տուրքերը, քանի որ տուրքերի կրճատումը կարող էր առիթ ծառայել այլ վայրերի գյուղացիներին ևս գնման ներողամտության ձգտելուն։ Բայց այդ ուղղությամբ էլ իշխանությունները որևէ կոնկրետ քայլի չդիմեցին։

Կառավարչապետ Ռոզենի հանձնարարությամբ Նոր Բայազետ է ժամանում Հայկական մարզի պետ իշխան Բեհբութովը՝ տեղում հարցը քննելու համար, սակայն ոչ մի արդյունքի չի հասնում։ «Իմ խրատներն ու հորդորները,— գրում էր նա 1838 թվականի փետրվարի 19-ին Ռոզենին հղած զեկուցագրում,— ոչ միայն որևէ ազդեցություն չունեցան նրանց վրա, այլ. ընդհակառակը, համարձակ արտահայտություններ ցույց էին տալիս, որ նրանք պատրաստ են հանդգնություններիս[46]։ Գյուղերից հավաքված բնակիչները քաղաքացիների հետ միասին «կազմել էին մի վայրենի ամբոխ և, թը-

[46] «Крестьянское движение в Армении в XIX в.», Ереван, 1948, стр. 25—26.

վում է, առիթ էին որոնում անկարգություններ անելու։ «Կատաղած ամբոխը մելիքներից և տանուտերերից ոմանց չեզոքացրել էր... ժողովուրդը բոլորովին չի հնազանդվում նրանց», «մի քանի ավելի անբարեմիտ տանուտերեր... ամենևին չներկայացան ինձ» այն պատրվակով, որ «իբր ժողովուրդը չի թողնում, ծեծում է նրանց»[47]։

Անկարող լինելով դրությունը շտկել, իշխան Բեհբութովը պաշտոնական հայտարարություն է անում տուրքերը վճարելու ժամկետի վերաբերյալ և սպառնում է գյուղացիներին, որ չմուծելու դեպքում «նրանք կհամարվեն կառավարության հակառակորդներ և նրանց հետ կվարվեն իբրև խռովարարների և ընդհանուր անդորրը խանգարողների»։ Տուրքերը մուծելու վերջին ժամկետը նշանակվում է մարտի 16-ը։

Մարզապետին գյուղացիները խիստ թշնամաբար են ճանապարհ գցում։ Նրա շուրջը խռոված ամբոխը «օդը լցնում է սարսափելի աղաղակներով. այդ աղմուկի մեջ ևս կարողացա հասկանալ միայն հետևյալ բառերը. «Մենք չենք ուզում մելիքներ, տանուտերեր, օկրուգային պետ, ու թվում է, նույնպես և կառավարություն»։ Իշխան Բեհբութովի եզրակացությունն այն էր, որ «արդարությունը պահանջում է նրանց ամենախիստ պատժի ենթարկել» և այն էլ «զենքի ուժով»[48]։

Անդրկովկասի կառավարչապետ Ռոզենը հավանություն է տալիս իշխան Բեհբութովի առաջարկին և Գյոկչայի գյուղացիների խռովությունը ճնշելու նպատակով Բեհբութովի տրամադրության տակ է դնում եգերների երկու վաշտ, կազակային մեկ հարյուրյակ և երկու լեռնային թնդանոթներ։ Փոխգնդապետ Պրոցիկովի գլխավորությամբ սրանք ժամանում են Նոր Բայազետ և անմիջապես ձեռնարկում բռնություններին։ Մարտի 24-ին ձերբակալվում և Երևան են ուղարկվում «գլխավոր գրգռիչները», իսկ վեց հոգու հրապարակային գանահարության են ենթարկում։ Դրանից հետո հաջողվում է հնազանդեցնել գյուղացիներին և խոստում ստանալ, որ կվճարեն տուրքերը։ Գյոկչայի գաղթականներից տուրքերը գանձելու այս վճռական միջոցները «առիթ ծառայեցին նաև մարզի մյուս բնակիչների լիակատար հնազանդության համար»[49]։

Հետագա քննություններից պարզվեց, որ տեղական իշխանությունները հարկերը սահմանելիս խախտել էին գոյություն ունեցող դրույքները և Նոր Բայազետի գյուղացիության ընդվզումը իսկապես որ արդարացի հիմքեր ուներ։ Այսպես, այդ ժամանակ Անդրկովկասում գտնվող և Նոր Բայազետ այցելած սենատոր Գանը գրում էր զինվորական մինիստր Ջերնիշովին, որ իրոք Գյոկչայի հայ գաղթականներին տուրքադրելիս խախտված է եղել Հայկական մարզում ընդունված կարգը, և որ նրանց տուրքերն ավելի ծանր են եղել, քան հարևան ադրբեջանցի գյուղացիներինը։ «Ջանց առնելով գործված անօրինությունը, անդրկովկասյան իշխանությունները պնդում էին, որ իրրև թե հայ գաղթականները վստահացան այդքան համառ անհնազանդության ցույց տալ՝ ելնելով Փամբակ-Շորագյալի անցքերից, որոնք տեղի ունեցան

47 Նույն տեղում, էջ 26։
48 Նույն տեղում, էջ 27։
49 Նույն տեղում, էջ 33—34։

այնտեղի գաղթականների և բնիկների մեջ՝ անբարեհույս մարդկանց դրդումով...»[50]։

Ցարական պաշտոնյաները նշում էին նաև, որ Նոր Բայազետի գյուղացիության ըմբոստության մեջ մեծ դեր են խաղացել քաղաքացիները, որ վերջիններս «ջանում են նման անհնազանդություն տարածել նաև մյուս բնակիչների մեջ», նույնիսկ համարձակվում են Գյոկչայի մահալում ապրող մուսուլմաններին առաջարկել, որ միանան նրանց և տուրքեր չվճարեն»[51]։

Նոր Բայազետի և շրջակա երեսուն գյուղերի բնակչության այս համառ ըմբոստությունը XIX դարի առաջին կեսի ամենախոշոր գյուղացիական ելույթն էր Արևելյան Հայաստանում՝ ուղղված ցարական կառավարության հարկային քաղաքականության դեմ։

XIX դարի 40-ական թթ. արևելահայ գյուղացիությունը, ֆեոդալական ճնշման ուժեղացման պայմաններում, բավական լայն պայքար ծավալեց կալվածատերերի և նրանց շահերը պաշտպանող իշխանությունների դեմ։

Կալվածապատկան գյուղացիները պայքարում էին կիսաճորտային վիճակի, կալվածատերերի կողմից կատարվող հողային հափշտակումների և անտանելի շահագործումների դեմ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի է Երևանի գավառի Գյոկչայի գավառամասի աղալարական հինգ գյուղերի բնակիչների համառ ու տևական պայքարն իրենց աղալարների դեմ։ Այդ պայքարը, սկսվելով անցյալ դարի 40-ական թթ. կեսերից, փոքր ընդմիջումներով շարունակվեց մինչև 70-ական թթ. վերջը և ավարտվեց Զոդ, Մեծ-Մազրա, Փոքր-Մազրա, Ջախրլու և Ղոշա-Բուլախ գյուղերի բնակիչների ազատագրումով աղալարական կախումից։ Այդ գյուղերի բնակիչները փոխարքային ուղղված դիմումում տեղեկացնում էին, որ իրենց աղալարների իրավունքը հիմնված է կեղծ փաստաթղթերի վրա։ Այսպես, Մազրա գյուղացի Աղաբեկ Բաբիշ Բադալ Օղլին, օգտվելով այն բանից, որ հայրը պարսկական տիրապետության ժամանակ սուլթան է եղել, այսինքն հեծելազորի տասնապետ, որ քուրդերն ամուսնացած են Զոդի աղաների հետ, իսկ ինքն էլ երեք տարով տանուտեր է ընտրված եղել, առանց գրավոր փաստաթղթեր ունենալու իրեն աղա է հայտարարում և իշխանությունների օժանդակությամբ հարկադրում համագյուղացիներին պարտույթներ կատարել իր համար։ Նույնպիսի ճանապարհով դրոշակակիր Մուստաֆան, օգտվելով այն բանից, որ գյուղացիները իր զինվորական կոչման նկատմամբ տածած հարգանքից ելնելով մի քանի ծառայություններ են մատուցել և տանուտեր են ընտրել, հարկադրում է գյուղացիներին ծառայել իրեն։ Ջնայած Գյոկչայի հիշյալ հինգ գյուղերի բնակիչները ապացուցել էին իրենց իրավացի լինելը, փոխարքան կարգադրում է նրանց կատարել պարհակները «մինչև որ կորոշվի Երևանի դավառի կալվածատիրական հողերի վրա բնակվող գյուղացիների և հողատերերի փոխհարաբերությունների» հարցը։

Սակայն դրանից հետո էլ Զոդ և Մեծ-Մազրա գյուղերի բնակիչները ստորոշ մարդկանց սադրանքով ու դրդումով վճռապես խուսափում էին աղա-

---

50 Նույն տեղում, էջ 30—31։

51 Նույն տեղում, էջ 26։

լարական պարհակների կատարելուց» և Թիֆլիս պատգամավորներ են ուղարկում փոխարքային դանգատ ներկայացնելու։ Այս անգամ ևս նրանք մերժում են ստանում, բայց չեն հանդարտվում և շարունակում են պայքարել իրենց իրավունքների համար։

1860-ական թթ. սկզբներին Ջախրլու գյուղի բնակիչները նորից հարց են հարուցում Երևանի նահանգապետի առջև, որպեսզի իրենց ազատեն կեղծ աղալարի ճնշումից, մանավանդ, որ իրենք պետական գյուղացիներ են։ Այս անգամ էլ Կովկասի փոխարքայի գլխավոր վարչությունը մերժում է նրանց դիմումը, բայց միաժամանակ հայտնում, որ համապատասխան թույլտվության դեպքում նրանք կարող են տեղափոխվել և բնակություն հաստատել պետական հողերի վրա, «բայց ոչ այլ կերպ, քան պահպանելով այն կանոնները, որոնք հաստատված են կալվածատիրական հողերի վրա ապրող գյուղացիների տեղափոխության համար»[52], ինչ որ փաստորեն քողարկված մերժում էր նշանակում։ Հարկավոր եղավ այդ գյուղացիների համառ պայքարի ևս 20 տարի, որպեսզի նրանք, թեկուզ ծանր գնով, կարողանան ազատագրվել ինքնակոչ աղալարների լծից և իրենց հողերի տերը դառնան։

Ջանգեզուրում նույնպես շատ էին նորաթուխ կալվածատերերի կողմից բազմաթիվ գյուղեր ու հողեր սեփականացնելու փաստերը։ Այստեղ պայքարը շատ սուր բնույթ ստացավ Տեղ գյուղում՝ ինքնակոչ կալվածատեր Ասադբեկի դեմ։ Հիշյալ գյուղի բնակիչները վճռականապես հրաժարվեցին իրենց գյուղը բեկական ճանաչել այն կառավարական հանձնաժողովի առաջ, որը զբաղված էր այդ հարցի ստուգմամբ։ Գյուղացիները պնդում էին, որ իրենց գյուղը պետական է, որ Ասադ-բեկը խարդախությամբ է տեր դարձել նրան։ Սակայն նրանց բողոքը մնում է անհետևանք, իսկ ցարական պաշտոնյանները «հայտնաբերում են» գյուղացիներին «խռովության» մղողին՝ գյուղի քահանա Սահակ Բաբայանին, որին և հայ հոգևոր իշխանությունների միջոցով պատժի են ենթարկում։

Այդ նույն Սահակ Բաբայանի վկայությամբ, տեղական բեկերը, պետական աստիճանավորների օգնությամբ, ահ ու սարսափ էին ստեղծել և դաժանորեն վրեժխնդիր էին լինում ամեն մեկից, ով բողոքելու փորձ էր կատարում։ Սակայն նման պայմաններում էլ դյուրին չեղավ ճնշել Տեղի գյուղաբնակչության բուռն ընդվզումը։ Նրանց պայքարը տևեց մինչև 1852 թ.։ Ինչպես գրում էր այդ ժամանակ Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետի պաշտոնը գրավող իշխան Բեհբութովը, պայքարը կալվածատերոջ և գյուղացիների միջև այնպես էր սրվել, որ «...բնակիչները հասել են մոլեգնության, իսկ... Ասադ բեկը ծայրահեղության»։ Ստեղծված դրության հանգավորը դարձյալ համարվում էր Սահակ Բաբայանը, որն իբր թե գործում էր «չափազանց զգույշ և ծածուկ»[53]։ Սակայն ամբողջ հարցն այն էր, որ գյուղացիները պայքարում էին կառավարության ճորտատիրական նը-

---

52 Նույն տեղում, էջ 118—121։

53 Նշո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, 1838—1913 թթ., Թիֆլիս, 1915, էջ 79—84, Վ. Ռշտունի, Հայաստանի 19-րդ դարի գյուղացիական շարժումների մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 6, էջ 47—48։

պատակների և մտադրությունների դեմ, իսկ դա նրանց պայքարի մղող դրդիչ ուժն էր։

Պակաս բնորոշ չէ նաև նույն Զանգեզուրի գավառամասի Բանազոր գյուղի երկարատև պայքարը դաժան կալվածատեր Ջաֆար-Ղուլի աղայի շահագործումից և ճնշումներից ազատվելու համար։ Սանձարձակ աղան վիրավորում էր նաև հայ գյուղացիների կրոնական զգացմունքները, ուստի նրանք դիմում էին կաթողիկոսի պաշտպանությանը՝ փրկություն որոնելով երկարամյա շահագործումից, բռնություններից ու կրոնական անարգանքներից։

1849 թ. տրված իրենց ցուցմունքներում մի շարք գյուղացիներ պատմում էին, որ Ջաֆար-Ղուլի աղայի վայրագ շահագործման հետևանքով իրենք դարձել են «կարոտ օրական հացի», որ դեռևս 1843 թ. են բողոքել իշխանություններին, բայց հրաման են ստացել «այնուամենայնիվ ծառայել նրան»։ Աղայի վայրագություններից ազատվելու համար գյուղացիներից շատերը փախչում են, բայց բռնվում են և դաժանորեն գանահարվում, որի հետևանքով մի քանի հոգի մահանում են։ Ջաֆար-Ղուլի աղան առանց քաշվելու դիմում է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին, որպեսզի վերջինս հորդորի Բանազորից փախած 12 ընտանիքներին վերադառնալ «որ մյուսներին էլ օրինակ լինի. հույս ունիմ, որ իմ կյանքի վերջումն ինձ այնպիսի անարգանքի միջի չիք թողիլ և իմ խնդրքս անկատար չիք անիլ»,— գրում էր նա։

Ահա այս և նման «անարգված» կալվածատերերի արթուն պաշտպաններն էին անդրկովկասյան իշխանությունները՝ փոխարքա Վորոնցովի գլխավորությամբ, որոնք «բոլորովին անհիմն» էին համարում գյուղացիների բողոքները և չէին ցանկանում անգամ «ձևական քննություն կատարել Բանազորի բնակիչների գանգատի կապակցությամբ։

1849 թ. նոյեմբերին Ներսես Աշտարակեցուն ուղարկված Վորոնցովի գրությունից պարզվում է Ջաֆար-Ղուլի աղայի դեմ գյուղացիների մղած պայքարի մի քանի մանրամասնություններ։ Նրանք դեռևս 1840 թ. հրաժարվել են այդ աղային տուրքեր վճարելուց, իսկ 1842 թ. նրան մեղադրել են ծանր տուրքեր նշանակելու և դաժան բռնությունների մեջ։ 1843 թ. կառավարության որոշումով «Բանազոր գյուղում նշանակվել է էկզեկուցիա... բանազորցիներին իրենց կալվածատիրոջը հնազանդեցնելու համար»։ Նույն թվականին իշխանությունները երեք գյուղացու հանձնել են զինվորական դատարան՝ իբրև համագյուղացիներին կալվածատիրոջ դեմ գրգռողների, իսկ 1845 թ. դատական որոշում է եղել, որ իբր թե բանազորցիների գանգատները Ջաֆար-Ղուլի աղայի վրա անհիմն են[54]։

Ահա բռնության և ապօրինության այսպիսի մթնոլորտ էր ստեղծվել Զանգեզուրի մի շարք գյուղերի հայ գյուղացիության համար։ Հասկանալի պատճառներով կալվածատերերի ճանկերից փրկվելու գյուղացիների բոլոր ջանքերը ի դերև էին ելնում՝ բախվելով ճորտատիրություն սերմանողների համերաշխ դիմադրությանը։

Կալվածատիրական գյուղացիների երկարատև, համառ ու հետևողական

---

54 «Крестьянское движение в Армении в XIX в.», стр. 48—49.

պայքարի մի բնորոշ նմուշ է Նոր Բայազետի գավառամասի Բջնի թիուլային գյուղի հայ և ադրբեջանցի գյուղացիների ընդհարումն իրենց կալվածատեր Արսեն սուլթան Դեղամյանի հետ։ Հիշյալ գյուղացիների պայքարը բռնկեց 1850 թ. մարտին և ճնշվեց նույն տարվա վերջերին, բայց 1860-ական թթ. կրկին վերսկսվեց և, որոշ ընդհատումներով, շարունակվեց մինչև 1864 թ.։

1840 թ. Բարսեղ Դեղամյանցի մահից հետո Երևանի դատարանը որոշեց չեղյալ հայտարարել նրա որդի Արսեն սուլթանի թիուլային իրավունքները։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ Անդրկովկասում գործող սենատոր Դանի հանձնաժողովը բացասաբար էր տրամադրված դեպի տեղական կալվածատերերի հավակնությունները։ Սակայն շուտով փոխարքա Վորոնցովի հավանությամբ որոշում է հանվում, որ մինչև Հայաստանի և Ադրբեջանի «բարձր դասի» իրավունքների վերջնական սահմանումը, Բջնի, Գյոյ-քիլիսա և Ելդովան թիուլային գյուղերի եկամուտները պետք է մնան Դեղամյանների ազատ տնօրինության ներքո։

1850 թ. գարնանը Երևանի նահանգապետին հղված դիմումներում Բջնիի բնակիչները հայտնում էին, որ թիուղար Արսեն Դեղամյանցը վերջին տասը տարում կրկնապատկել է պարհակները, ուստի և խնդրում էին ստուգել փաստերը և իրենց «փրկել Արսեն սուլթանի ստրկությունից ու դաժանություններից», ինչպես նաև թույլ տալ տեղափոխվելու նույն գավառամասի Ղուռի-Կալավեր ամայի ու ավեր գյուղը։ Գյուղացիները միաժամանակ խնդրում էին հոգ տանել այն մասին, որպեսզի «Արսեն սուլթանը արգելքներ չհարուցի մեր դեմ և չխլի մեր սեփականությունը, ինչպես այդ անում էր մինչև այժմ, այլ բավականանա նրանով, որ մեր տները մնալու են իրենն»։ Գյուղացիները վճռականապես հայտարարում էին. «Մենք այլևս ոչ մի պայմանով չենք կարող մնալ աստիճանավոր Արսեն սուլթանի գյուղում, այսքան տարի ճանաչելով նրա բնավորությունը և իմանալով, թե ինչ է բերել նա մեր գլխին»։

Նահանգապետի նշանակած քննությունից և թիուղարի բացատրություններից պարզ է դառնում, թե ինչպիսի պարհակներ էին կատարում գյուղացիները։ Նրանցից պահանջվում էր թիուղարի Երևանի տան համար մեկ պահապան, ձիեր, աշխատող ձեռքեր՝ նրա զանազան կարիքները հոգալու։ Բացի այդ, նրանք մի ամբողջ շարք այլ պարհակներ ևս պետք է կատարեին։ Իր այդ իրավունքները հաստատելու համար Արսեն սուլթանը վկայակոչում էր այն թալզան, որ Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանը 1825 թ. շնորհել էր նրա հորը՝ Բարսեղ Յուզբաշուն։ Նրանում ասված էր, որ Բջնի և Գյոյ-քիլիսա գյուղերը ավելի քան հարյուր տարի դրանից առաջ տրվել են Դեղամյաններին և նրանց սերունդներին իբրև թիուլ «աղնիվ ծագման և վաստակների համար»։ Այնուհետև նշվում էր, որ հիշյալ գյուղերի բնակիչները պարտավոր են կատարել Դեղամյանների կամքը։

Գավառապետը հրամայում է ձերբակալել գյուղացիների երեք առաջնորդներին և նրանց համերաշխ դիմադրությունը կոտրելու համար անհրաժեշտ է գտնում այդ երեքին մի քանի տարով աքսորել Ռուսաստանի ներքին նահանգները։ Գավառապետը կարծում էր, որ հիշյալ միջոցառման շնորհիվ «կդադարեն այդ գյուղում տեղի ունեցող բոլոր անկարգությունները»։

Բայց շուտով բջնեցիները նոր անակնկալի առջև կանգնեցրին Երևանի

նահանգական իշխանություններին։ Մեծ բազմությամբ, իրենց հետ վերցրած կանանց ու երեխաներին, նրանք եկան Երևան՝ նահանգապետի մոտ բողոքի։ Վերջինս դիմեց բռնի ուժի՝ առավել ըմբոստներին ենթարկելով մարմնական պատիժների, անհնազանդներին գյուղից արտաքսելու հրաման արձակելով։

Կալվածատիրական լծից ազատվելու և պետական հողի վրա վերաբնակվելու նպատակով Բջնի գյուղի բնակիչների երկարատև ու համառ պայքարը շատ չնչին հաջողություն բերեց նրանց։ Ճիշտ է, տուրքերի գանձման հարցում բիուղարը ստիպված եղավ աննշան զիջումների գնալ, բայց պետական հողի վրա վերաբնակվելու նրանց պահանջը հանդիպեց ոչ միայն բիուղարի, այլև նահանգական իշխանությունների դիմադրությանը։ Երևանի նահանգապետը վճռականորեն առարկեց բջնեցիների այդ ցանկությանն ընդառաջելուն և իր պաշտպանության տակ առավ տեղական կալվածատերերի շահերը՝ գյուղացիական ամեն կարգի «տոնձգություններին» դեմ։

Այդ նույն ոգով Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետը 1860 թ. օգոստոսին գրում էր Երևանի նահանգապետին, որ բիուղար Գեղամյանցից նրա գյուղացիների գանգատները անարդարացի են և թելադրված են սոսկ «պետական հողի վրա բնակվելու միտումներով»։ Ուստի նա նահանգապետին առաջարկում էր գյուղացիներին համապատասխան ձևով «ներշընչել», որպեսզի այլևս նման գանգատներով չդիմեն «գլխավոր իշխանությանը», այլապես «հանցավորները խիստ պատիժների կենթարկվեն»[55]։

Սակայն այդ սպառնալիքն էլ չօգնեց։ Բջնիի գյուղացիների ելույթները շարունակվեցին մինչև 1864 թ.։ Նահանգական և անդրկովկասյան իշխանությունները այն կապում էին Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմի ազդեցության հետ։ Այդ բանը մատնանշում էր նաև Արսեն Գեղամյանցը, միաժամանակ բացատրելով, որ ռուսական օրինակով թևավորված իր գյուղացիները չեն հասկանում, որ այն, ինչ տեղի է ունենում Ռուսաստանում, չի վերաբերում և չի էլ կարող վերաբերել Անդրկովկասի, այդ թվում նաև Երևանի նահանգի գյուղացիներին, քանի որ այնտեղ խոսքը գնում է ճորտատիրության վերացման մասին, իսկ այստեղ ճորտատիրություն չկա[56]։

Բջնիի գյուղացիության ըմբոստությունը երկրորդ անգամ ճնշվեց հենց այն պահին, երբ գյուղացիական ռեֆորմը արդեն կենսագործվում էր Վրաստանում և նախապատրաստվում նրա անցկացումը Հայաստանում և Ադրբեջանում։

Ռեֆորմի անցկացումը նախապատրաստելու կապակցությամբ ստեղծվեց Երևանի նահանգի բեկական հանձնաժողով՝ նահանգապետի նախագահությամբ։ Հանձնաժողովի կազմում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև կալվածատիրական դասի ներկայացուցիչներ։ Այն պետք է ստուգեր, ճշտեր և հաստատեր նահանգի «բարձր դասի» ցուցակը, որը յուրատեսակ մի նախապատրաստություն էր նահանգում գյուղացիական ռեֆորմի անցկացման համար։ Սա որոշ մարդկանց համար առիթ էր զանազան մեքե-

---

55 Նույն տեղում, էջ 105—107։

56 Նույն տեղում, էջ 99—100։

նայութիւնների դիմելու, որպեսզի խաբեութեան միջոցով սողոսկեն «բարձր դասի» շարքերը և օգտվեն ռեֆորմի արդյունքներից։ Կալվածատերերի այդ-օրինակ ոտնձգութիւնների դեմ պայքարի ելան գյուղացիները։

Այդ տեսակետից ուշադրութեան արժանի է հատկապես այն պայքարը, որ Մեղրու Արջաձոր գյուղի բնակիչները, հարևան մի քանի գյուղերի օժանդակութեամբ, 1866—1867 թթ. ծավալեցին Օրդուբադում պաշտոնավարող. աստիճանավոր Անդրեաս Ստեփանյանի և նրա գործակիցների չարաշահումների դեմ։ Գյուղացիները փոխարքային տված խնդրագրում պնդում էին, որ այդ անձնավորութիւնը, խցկվելով հանձնաժողովի մեջ, կարողացել է Նախիջևանի և Օրդուբադի հանձնաժողովի անդամների օժանդակութեամբ կաշառքներ ստանալով հարուստ, բայց հարկատու դասին պատկանող մարդկանցից, նրանց դասել ժառանգական բեկերի շարքը։ Նա ինքն էլ հաջողացրել է «կեղծիքով ապացուցել իր բեկական ծագումը» և ոմն Մելիք Բուդաղի հետ ցանկանում է տիրել հիշյալ գյուղին. բայց գյուղացիների բոլոր դիմումներն ու բողոքները մնացին անհետևանք և անօգուտ[57]։

Արևելյան Հայաստանի կալվածատիրական գյուղացիութեան մինչռեֆորմյան շրջանի պայքարի մի քանի բնորոշ էջերի, այդ պայքարի բնույթի ու արդյունքների շարադրանքը կարելի է ամփոփել այն բնութագրումով, որ տալիս է Վ. Ի. Լենինը Ռուսաստանի ճորտատիրական էպոխայի գյուղացիական պայքարին. «Երբ գոյութիւն ուներ ճորտատիրական իրավունքը, այն ժամանակ գյուղացիների ամբողջ մասսան պայքարում էր իր ճնշողների, կալվածատերերի դասակարգի դեմ, որոնց պահպանում, պաշտպանում ու օժանդակում էր ցարական կառավարութիւնը։ Գյուղացիները չէին կարողանում միանալ, գյուղացիները այն ժամանակ բոլորովին ճնշված էին խավարից, գյուղացիներն օգնականներ ու եղբայրներ չունեին քաղաքի բանվորների մեջ, բայց գյուղացիներն, այնուամենայնիվ, պայքարում էին ինչպես գիտեին և ինչպես կարողանում էին»[58]։

6. ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1853 թ. Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը դաշնագրային համաձայնութեան գալով Անգլիայի հետ և զգալի հաջողութիւնների հասնելով ռուսաավստրո-հունգարական հարաբերութիւնների լարման ուղղութեամբ, միջազգային դիվանագիտութեան քննարկման հարց դարձրեց Երուսաղեմի քրիստոնեական սրբավայրերի նկատմամբ հսկողութիւն սահմանելու վերաբերյալ տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը։ Պարզ է, որ թե՛ Ֆրանսիան և թե՛ Ռուսաստանը «սրբազան վայրերին» տիրապետումը դիտում էին որպես Մերձավոր Արևելքում իրենց քաղաքական ազդեցութեան հաստատման միջոց։ Սրվում էր պայքարը «Արևելյան հարցի» շուրջը։

Միջազգային այս լարված իրադրութեան պայմաններում Նիկոլայ I-ը 1853 թ. փետրվարին Թուրքիա ուղարկեց իշխան Ա. Մենշիկովի դեսպանու-

57 Նույն տեղում, էջ 130—139, 156—158։

58 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 6, էջ 538։

թյունը, սուլթանին ահաբեկելու և իր կամքը թելադրելու նպատակով՝ Նիկոլայը մի հանձնարարական նամակով սուլթանից պահանջեց, որ նա պաշտպանի ուղղափառ եկեղեցու իրավունքները և չեղյալ համարի իր նախկին հրամանը կաթոլիկական եկեղեցուն արտոնություն շնորհելու վերաբերյալ։ Իշխան Ա. Մենշիկովը միաժամանակ սուլթանից պահանջեց պաշտոնազուրկ անել ֆրանսիական կողմնորոշում ունեցող արտաքին գործերի մինիստր Ֆուադ փաշային և Ռուսաստանին հանձնել Թուրքիայում ապաստանած ավստրո-հունգարական և լեհական հեղափոխականներին։

Անգլիայի և Ֆրանսիայի թելադրանքով Թուրքիան մերժեց Ռուսաստանի պահանջները։ Ի պատասխան դրան Մենշիկովը խզեց բանակցությունները և հեռանալով Կոստանդնուպոլսից, հայտարարեց՝ «Ուղղափառ կրոնին երաշխիք տալու մերժումը Թուրքիայի կողմից՝ կայսերական կառավարության համար անհրաժեշտություն ստեղծեց այդ երաշխիքը փնտրել իր սեփական ուժի մեջ»[59]։ Թուրքիային ահաբեկելու նպատակով արված այդ հայտարարությանը հետևեց 1853 թ. հունիսի 2 (14)-ին Մոլդավիայի և Վալախիայի օկուպացումը։

Սուլթանը Ռուսաստանից պահանջեց ետ քաշել զորքերը Դանուբյան իշխանություններից, սակայն, մերժում ստանալով, հոկտեմբերի 4-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին։ Արդուլ Մեջիդը ոչ միայն կատարում էր իր «հովանավորներ» Անգլիայի և Ֆրանսիայի կամքը, այլև հույս ուներ նրանց օգնությամբ զավթել Ղրիմը և Կովկասը։

Այսպես սկսվեց Ղրիմի կամ «Արևելյան» պատերազմը (1853—1856)։

Պատերազմական գործողությունները սկսվեցին Դանուբի, Ղրիմի և Կովկասյան ռազմաճակատներում։

Գրավելով սբ. Նիկոլայի ամրոցը, թուրքական հրամանատարությունը ծրագրում էր դեսանտ իջեցնել Սուխումիի շրջանում և ներխուժել Արևմտյան Վրաստան։

Տեղեկանալով, որ թուրքական նավատորմի հիմնական ուժերը կուտակվում են Սինոպի ծովախորշում, այնտեղից կովկասյան ափերին մոտենալու և թուրքական դեսանտային ուժերին օգնելու համար, փոխծովակալ Պ. Նախիմովը (նրա հետ էր նաև հայազգի փոխծովակալ Լ. Սերեբրյակովը, որին հանձնարարված էր կովկասյան առափնյա գծի պաշտպանությունը), 1853 թ. նոյեմբերի 18 (30)-ին գրոհեց նրանց վրա։ Ճակատամարտը տևեց 5 ժամ և ավարտվեց ռուսական նավախմբի փայլուն հաղթանակով։

Ռազմական գործողությունները ռուսների համար աննպաստ էին զարգանում Դանուբի ռազմաճակատում։ Միայն 1854 թ. մարտին ռուսական հիսուն հազարանոց բանակին հաջողվեց անցնել Դանուբը և պաշարել Սիլիստրիա ամրոցը։

Ռազմական գործողությունները հաջող սկսվեցին Կովկասյան ռազմաճակատում, որը չնայած համարվում էր երկրորդական, բայց պատերազմի ելքի համար ունեցավ վճռական նշանակություն։ Կովկասյան կորպուսը գեներալ-լեյտենանտ Վ. Բեհբութովի հրամանատարությամբ խնդիր ուներ Ան-

---

[59] *С. Бушуев*, Крымская война 1853—1856 гг., М., 1940, стр. 51.

դըրկովկասի սահմանները պաշտպանել թշնամու ներխուժումից և հարկադրել հակառակորդին իր ուժերի մի մասը Դանուբի և Ղրիմի ռազմաճակատներից փոխադրել Կովկասյան ճակատ։

Գեներալ Բեհբութովը Կովկասյան կորպուսի մի մասը տեղավորեց Ախալքալաքից Երևան ձգվող գծում, իսկ տասը գումարտակ հետևակ և ոչ մեծ թվով հեծելազոր կենտրոնացրեց Ալեքսանդրապոլում[60]։

Թուրքական շուրջ 100 հազարանոց բանակը, Աբդի փաշայի ընդհանուր հրամանատարությամբ, ծրագրում էր Ախալցխայի, Ալեքսանդրապոլի և Երևանի ուղղություններով ներխուժել Անդրկովկաս, գրավել Թիֆլիսը[61] և իրագործել Կովկասի զավթման պլանը։

Ռուսական հրամանատարությունը, տեղեկանալով թուրքերի դեպի Ալեքսանդրապոլ շարժվելու մասին, իր հիմնական ուժերը կենտրոնացրեց այդ շրջանում՝ հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու համար։

Թուրքական բանակի ռազմական պլանները և առաջիկա մտադրությունները պարզելու նպատակով հոկտեմբերի 31-ին գեներալ Օրբելիանիի գլխավորությամբ 7000 հոգուց բաղկացած մի զորամաս ուղարկվեց հետախուզության։ Ալեքսանդրապոլից 4—5 կմ վրա, Բայանդուր գյուղի մոտ, նոյեմբերի 2-ին Օրբելիանիի զորախմբի վրա անակնկալ հարձակում գործեց թուրքական մոտ 40 հազարանոց բանակը։

Ալեքսանդրապոլից Օրբելիանիի զորագնդին օգնական ուժեր ուղարկվեցին։ Խուսափելով վճռական մարտից, թուրքերը նահանջեցին դեպի Կարս։

Բեհբութովի հրամանատարության տակ գտնվող Կովկասյան կորպուսի հիմնական ուժերը կանգնած էին Բաշ-Շորագյալում և նախապատրաստվում էին արշավել Կարսի վրա։ Թուրքական 15 հազարանոց մի զորաբանակ, Ալի փաշայի հրամանատարությամբ, նոյեմբերի 13-ին հարձակվեց Ախալցխայի վրա, որտեղ ռուսներն ունեին 7 հազար հոգուց բաղկացած բերդապահ կայազոր։ Նոյեմբերի 14(26)-ին Ախալցխայի զորաջոկատը գեներալ Անդրոնիկովի հրամանատարությամբ անցնելով հակահարձակման, կարողացավ ոչ մեծ դժվարությամբ ետ շպրտել Ալի փաշայի զորաբանակը։

Նոյեմբերի 18-ին գեներալ Բեհբութովը, տեղեկանալով, որ Բայանդուրից նահանջած թուրքական զորքերը ճամբար են դրել Միջին և Վերին Բաշ-Շորագյալ գյուղերի միջակայքում, 10 հազար մարդուց բաղկացած առաջապահ զորամասերով Պիրվալի գյուղի մոտ անցնելով Կարս գետը, գրավում է շրջակա բարձունքները և սկսում նախապատրաստվել վճռական գործողություններին։

Թուրքական բանակի հրամանատար Ահմեդ փաշան այնքան վստահ էր իր զորաբանակի վրա, որ հանդես գալով զորքի առաջ, անապարծորեն հայտարարեց. «Ահա անհավատների ուժերը, որոնցով ուզում են մեզ սարսափեցնել. ինչի համար մենք մարտ տանք, քանի որ նրանցից յուրաքանչյուրի դիմաց մենք ունենք 4 մարդ։ Կշրջապատենք նրանց, կկապոտենք բոլորին և կտանենք Կարս»[62]։

60 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 69, ց. 1, գ. 37, թ. 445—459։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում։

Նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու համար ռուսական զորամասերը նոյեմբերի 19-ին Բաշ-Քադրկլարի տակ անցան հարձակման, գլխավոր հարվածը հակառակորդին հասցնելով կենտրոնից և ձախ թևից։ Առաջին իսկ հրետանային համազարկերից ու հետևակի գրոհից հետո թուրքական բանակը Մավրյակ գետի ափին բաժանվեց երեք առանձին խմբերի։ Ռուսական զորամասերն ուժեղացրին գրոհը՝ նրանց առանձին-առանձին շրջապատելու և ջախջախելու համար։ Օգտվելով հակառակորդի բանակում առաջացած խուճապից, ռուսական զորամասերը երկու կողմից թևանցեցին Բաշ-Քադրկլար գյուղը, իսկ հակառակորդը, խուսափելով աքցանի մեջ ընկնելուց, խուճապահար նահանջեց։

Այսպիսով, Բաշ-Քադրկլարի ճակատամարտն ավարտվեց ռուսական կորպուսի փայլուն հաղթանակով։ Ռուսները որպես ռազմավար վերցրին 25 հրանոթ, 60 զույգ ձի, 13 արկղ վառոդ և մեծ քանակությամբ հանդերձանք։ Հակառակորդի ընդհանուր կորուստն անցավ 6000 մարդուց[63], այդ թվում 1500-ից ավելի սպանվածն։ Ռուսական կողմից սպանվեց 317 և վիրավորվեց 826 մարդ[64]։ Բաշ-Քադրկլարի ճակատամարտը այդ պատերազմում Կովկասյան կորպուսի ամենանշանավոր գործողություններից մեկն էր։

Պատերազմի առաջին էտապն ավարտվեց Սև ծովում թուրքական նավատորմի ջախջախմամբ և ռուսական նավատորմի գերիշխանության հաստատմամբ։ Դրանից հետո ձախողվեց Ալեքսանդրապոլի վրայով Անդրկովկաս ներխուժելու թշնամու պլանը։

Ախալցխայի, Սինոպի և Բաշ-Քադրկլարի հաղթական մարտերից հետո Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջաններն ավելի բացահայտորեն դրսևորեցին իրենց թշնամանքը Ռուսաստանի նկատմամբ։ 1854 թ. փետրվարի 28 (մարտի 12)-ին Թուրքիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքվեց «պաշտպանական ու հարձակողական» դաշնագիր և նրանք պաշտոնապես մտան պատերազմի մեջ։

Այսպիսով, սկսած 1854 թ. մարտից Ռուսաստանը ստիպված էր պատերազմել Թուրքիայի և նրա դաշնակիցների միացյալ ուժերի դեմ։

Չնայած դաշնակիցների ուժերի գերակշռությանն, այնուամենայնիվ, պատերազմի երկրորդ էտապում ևս (1854 թ. մարտ-օգոստոս) թշնամուն չհաջողվեց լուրջ հաջողությունների հասնել։

1854 թ. ռազմական գործողություններին կովկասյան ռազմաճակատում կողմերը նախապատրաստվել էին ձմռան ամիսներին։ Թուրքական սահմանագլխին կանգնած ռուսական բանակի կազմի մեջ էին մտնում Ալեքսանդրապոլյան զորաջոկատը (7500 սվին և սուր, 74 հրանոթ), Գուրիականը (10 գումարտակ, 200 կազակ, 31,5 հարյուրյակ միլիցիա, 18 հրանոթ) և Երևանյանը (4,5 գումարտակ, 2 կազակական գնդեր, 4 հարյուրյակ միլիցիա, 12 հրանոթ)[65]։ Իսկ թուրքական հրամանատարությունը Կարսի շրջակայքում կենտրոնացրել էր 60 հազար զորք։ Նա խոշոր զորաջոկատներ ուներ նաև Բաթումում,

---

63 Տե՛ս Е. Тарле, Крымская война, т. I, М., 1942, стр. 246.

64 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄԱ, ֆ. 69, ց. 1, գ. 37, թ. 445—459։

65 Նույն տեղում, գ. 57, թ. 109—112։

Օղուրգեթում և Բայազետում։ Թուրքերն, օգտվելով իրենց քանակական գերակշռությունից, 1854 թ. գարնանը դեսանտային ուժերով Գուրիայում և Մենգրելիայում սկսեցին հարձակողական գործողություններ։ Սակայն Կովկասյան կորպուսի զորամասերին հաջողվեց մայիսի 27-ին Նիգոտյան բարձունքներում, հուլիսի 4-ին՝ Օղուրգեթի մոտ, իսկ հուլիսի 17-ին՝ Ջընգլի կիրճում ջախջախել թուրքական մեծաքանակ բանակներին։ Այդ հաղթական մարտերից հետո Կովկասյան կորպուսն իր գլխավոր հարվածն ուղղում է Կարսի վրա։



Ալեքսանդրապոլը XIX դ. 50-ական թթ.

Հաշվի առնելով Կարսի բերդի անմատչելիությունը, Կովկասյան կորպուսի հրամանատարությունը խուսափեց անմիջապես նրա վրա գրոհելուց և որոշեց ձմեռնամուտն ջախջախել բաց դաշտում։ Այդ տեղի ունեցավ հուլիսի 24-ին վաղ առավոտյան՝ Կարսից 18 կմ հեռավորության վրա գտնվող Քյուրուկդարայում տրված արյունալի ճակատամարտում։

Նույն ժամանակամիջոցին ռազմական գործողություններ է սկսում նաև Երևանյան զորաջոկատը։ Նա, հուլիսի 17-ին դուրս գալով Իգդիրից, Ջընգլի կիրճում հանդիպեց թուրքական մոտ 20 հազարանոց բանակին։ Թշնամին տեսնելով Երևանյան զորաջոկատի փոքրաթվությունը, գրոհեց նրա վրա, սակայն հանդիպելով համառ դիմադրության, ստիպված եղավ դադարեցնել գրոհը։ Առիթից օգտվելով, Երևանյան զորաջոկատն անցավ հակահարձակման և ստիպեց թուրքերին նահանջել դեպի Բայազետ։ Պարտված թշնամին այնպիսի խուճապի էր մատնվել, որ վախեցավ նույնիսկ Բայազետում կանգ առ-

նել։ Օգտագործելով այդ, ռուսներն, առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին Բայազետը։

1854 թ. Կովկասում ռուսական զորաբանակների տարած հաղթանակները Թուրքիային և նրա դաշնակիցներին դրեցին ծանր կացության մեջ։ Ձախողվեցին անգլո-ֆրանսիական ստրատեգների և նրանց թուրք դաշնակիցների Անդրկովկաս ներխուժելու բոլոր փորձերը։ 1854 թ. ամռանը անհաջողությամբ ավարտվեց նաև Շամիլի փորձը՝ գրավելու Կախեթիան և ռուսական բանակը կտրելու Թիկունքից։

Դաշնակիցները 1854 թ. սեպտեմբերից սկսում են ծովային ու ցամաքային խոշոր ուժեր կենտրոնացնել Ղրիմում՝ ռազմական կարևոր բազա Սևաստոպոլը գրավելու համար։ Ռազմական այդ գործողություններով պատերազմը թևակոխեց իր երրորդ էտապը (1854 թ. սեպտեմբեր —1855 թ. օգոստոս)։ Իշխան Մենշիկովի ապաշնորհության հետևանքով նրա հրամանատարությամբ գործող 33-հազարանոց բանակը մի քանի անհաջող մարտերից հետո նահանջեց Բախչիսարայ, Սևաստոպոլը թողնելով բախտի քմահաճույքին։ 1854 թ. հոկտեմբերի 4-ին դաշնակիցների բանակները պաշարեցին Սևաստոպոլը։ Պաշարված Սևաստոպոլի պաշտպանությունն իրենց ձեռքը վերցրին փոխ-ծովակալ Վ. Կոռնիլովը, ծովակալ Պ. Նախիմովը և կոնտր-ծովակալ Վ. Իստոմինը։

Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը տևեց 349 օր և միայն 1855 թ. օգոստոսի 28 (ն. տ. սեպտեմբերի 8)-ին 73 հազար զինվորների կորուստի գնով դաշնակիցներին հաջողվեց գրավել այն։

Հակառակ դրան, պատերազմական գործողությունները ռուսների համար շատ նպաստավոր ընթացք ունեցան Կովկասյան ռազմաճակատում։

1855 թվականի մայիսին Կովկասյան գործող կորպուսի հրամանատարությունն իր վրա վերցրեց նոր փոխարքա գեներալ Ն. Մուրավյովը, իսկ Վ. Բեհբութովը նշանակվեց Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ։ Նախատեսվում էր հարձակողական գործողություններ սկսել երեք ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ-Կարս՝ գեներալ Ն. Մուրավյովի հրամանատարությամբ, Ախալցխա-Ախալքալաք՝ գեներալ Կովալևսկու և Երևան-Բայազետ՝ գեներալ Սուսլովի հրամանատարությամբ։ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությունը գլխավորն էր, ուր ռուսները կենտրոնացրին 21200 հետևակ, 6 հազար կազակ, 88 հրանոթ և 4 հարյուրյակ միլիցիա[66]։

Թուրքական հրամանատարությունը նույնպես նախապատրաստվում էր վճռական գործողություններին։ Այն դրվել էր անգլիական սպա Ուիլյամսի վրա, որին թուրքական կառավարությունը շնորհել էր փաշայի կոչում։ Թուրքերը հարձակողական ակտիվ գործողություններ վարելու համար Կարսի շրջակայքում կենտրոնացրել էին 38 հազար զորք։ Նրանք մեծաքանակ ուժեր ունեին նաև Էրզրումի շրջակայքում։

Մեծ էր Կարսի ռազմա-ստրատեգիական նշանակությունը։ Այն Փոքր Ասիա տանող ճանապարհին մի ամուր դարբաս էր, Ֆ. Էնգելսի արտահայտությամբ՝ «Հայաստանի պատվարը»։ Թուրքերն ամուր կառչել էին Կարսից,

66 Տե՛ս Е. Тарле, Крымская война, т. II, М., 1942, стр. 389.

քանի որ նրա գրավումը ռուսական բանակի համար ճանապարհ կբացեր դեպի Էրզրում։ Կովկասյան կորպուսի հրամանատարությունը, նկատի ունենալով իր ուժերի սակավությունը, որոշեց Կարսը գրավել երկարատև պաշարման միջոցով։ 1855 թ. օգոստոսի կեսերին ռուսներին հաջողվեց օղակել Կարսը և լիովին կտրել արտաքին աշխարհից։

Կարսի բերդապահ կայազորի համար ստեղծվեց ծանր դրություն։ Նրանից ռուսական բանակի ուշադրությունը շեղելու նպատակով, թուրքական հրամանատարությունը 1855 թ. սեպտեմբերին Օմար փաշայի քառասուն հազարանոց դեսանտը ափ իջեցրեց Սուխումիում։

Որպես պատասխան Սևաստոպոլի անկման և Օմար փաշայի Սուխումիում հայտնվելուն, Կովկասյան կորպուսի հրամանատարությունը որոշեց ավարտել Կարսի գրավումը։

Սեպտեմբերի 17-ի վաղ առավոտյան ռուսական զորամասերն սկսեցին Կարսի գրոհը։ Չնայած թշնամին կատաղի դիմադրություն ցույց տվեց, բայց ռուսական զորամասերն առաջ շարժվեցին և գրավեցին Ձախմախյան ամրությունները։ Սակայն անհրաժեշտ քանակությամբ ուժեր չունենալով, ժամանակավորապես դադարեցրին հետագա առաջխաղացումը։ Ստանալով լրացուցիչ օգնական ուժեր, ռուսական բանակը նոյեմբերի սկզբներին վերսկսեց Կարսի գրոհը։ Կարսի բերդապահ կայազորի վիճակն այնքան անելանելի դարձավ, որ նոյեմբերի 12-ին թուրքական հրամանատարությունը որոշեց բանակցություններ սկսել գեներալ Ն. Մուրավյովի հետ, անձնատուր լինելու համար։

Նոյեմբերի 13-ին գեներալ Մուրավյովը Ուիլյամսին հանձնեց կապիտուլյացիայի պայմանները, որոնք անվերապահորեն ընդունվեցին։ Նոյեմբերի 16 (28)-ին Կարսի բերդապահ կայազորը անձնատուր եղավ։

Այսպիսով, պատերազմի եզրափակիչ շրջափուլի ամենանշանավոր իրադարձությունը եղավ ռուսական զորքերի կողմից Կարսի գրավումը։ Դա արագացրեց պատերազմի ավարտը և մեծ ազդեցություն ունեցավ փարիզյան հաշտության բանակցությունների վրա։ «Կարսի անկումը,— գրել է Կ. Մարքսը,— շրջադարձային կետ հանդիսացավ Ռուսաստանի դեմ մղվող կարծեցյալ պատերազմի պատմության մեջ»[67]։

Ղրիմի պատերազմն ավարտվեց 1856 թ. մարտի 30-ին Փարիզում կընքված հաշտության պայմանագրով, որի համաձայն Կարսը և Արևմտյան Հայաստանում գրավված մյուս հողերը ետ վերադարձվեցին Թուրքիային, Սևաստոպոլը և «դաշնակիցների» կողմից օկուպացված մյուս քաղաքները՝ Ռուսաստանին։ Ռուսաստանը զրկվեց Դանուբի գետաբերանից և Բեսարաբիայի հարավարևմտյան մասից, ինչպես նաև Սև ծովում ռազմական նավատորմիղ պահելու, նրա ափերին ռազմական ամրություններ ունենալու իրավունքից։ Նա միաժամանակ ճանաչեց մեծ պետությունների կոլեկտիվ հովանավորությունը Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող քրիստոնյաների վրա։

Թեև Ղրիմի պատերազմը չլուծեց Թուրքական տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը, բայց հետագա տարինե-

---

67 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 11, стр. 635.

րին ավելի ուժեղացան սուլթանական բռնապետության լուծը ռուսական զենքի օգնությամբ թոթափելու արևմտահայության ակնկալությունները։

* * *

Հայ հասարակական տարբեր խավերը, քաղաքական հոսանքները, ինչպես և առանձին գործիչներ տարբեր վերաբերմունք են ունեցել պատերազմի ժամանակաշրջանում ծավալված ազատագրական շարժման նկատմամբ։ Հայաստանի երկու հատվածներում ապրող հայ աշխատավորական զանգվածները, աչքի առջև ունենալով Արևելյան Հայաստանի պարսկական տիրապետությունից ազատագրվելու օրինակը, համոզված ու հաստատուն կերպով հույսեր էին կապում ռուսական զենքի հետ և ցանկանում, որպեսզի Արևմտյան Հայաստանը ևս միանա Ռուսաստանին։ Այդ ուղու վրա էր կանգնած նաև զարդացող արևելահայ բուրժուազիան, որը տնտեսական ու քաղաքական շահերով կապված էր Ռուսաստանի հետ։

Կոստանդնուպոլսում ծվարած, սուլթանական կառավարության հետ բազմաթիվ թելերով կապված հայ ամիրաները դեմ էին օտար պետություններից և հատկապես Ռուսաստանի միջամտությանը և գտնում էին, որ հայերը պետք է սիրաշահեն թուրքական կառավարությանը։

Ռուսական առաջխաղացմանը Մերձավոր Արևելք բացասաբար էին տրամադրված նաև արևմտահայ այն միջնորդ, կոմպրադոր վաճառականները, որոնք տնտեսական շահերով կապված էին Արևմուտքի և հատկապես Անգլիայի հետ։

Չնայած պատերազմը երկուստեք անարդարացի բնույթ ուներ, հետապնդում էր զավթողական որոշակի նպատակներ, այնուամենայնիվ Կովկասյան ռազմաճակատում մղվող մարտերում հայ ժողովրդական զանգվածները համագործակցեցին ռուսական զենքին, ոգեշնչվելով այն պատրանքներով, թե ցարական բանակի հաղթանակը կարող է Արևմտյան Հայաստանը ազատել սուլթանական բռնապետությունից։

Ելնելով նախորդ պատերազմների փորձից, երբ հայերը և անդրկովկասյան մյուս ժողովուրդները համակրանքով էին լցված ռուսների նկատմամբ, թուրքական կառավարող շրջաններն ու բանակի հրամանատարությունը, սկսած 1853 թ. սկզբներից, ավելի ուժեղացրին սահմանամերձ հայկական գյուղերի ասպատակությունները և զանգվածային տեղահանումները։

Կովկասյան բանակի հրամանատարության 1853 թ. նոյեմբերի 4-ի զեկուցագրում ասված է. «...բոլոր կողմերից տեղեկություններ են հասնում թուրքերի կատարած կողոպուտների և բռնությունների մասին։ Նրանք, հաշվի չառնելով ոչ հասակը, ոչ սեռը, չեն խնայում ոչ ոքի, նույնիսկ հոգևորականությանը։ Բոլոր դիմադրողներին անխնա սպանում են, իսկ կենդանի մնացածները չեն խուսափում գերությունից»[68]։ Կովկասյան կորպուսի հրամանատարությունը, հաշվի առնելով ռուս-պարսկական և ռուս-թուրքական նախորդ պատերազմների ժամանակ Անդրկովկասի ժողովուրդների ռուսական բանակին ցույց տված օգնության նշանակությունը, սկսեց նրանցից կամա-

---

[68] *Л. А. Зисерман*, Фельдмаршал А. Барятинский, М., 1898, стр. 303—304.

վորական գումարտակներ և աշխարհազորային ջոկատներ կազմակերպել։ Հայկական աշխարհազորային ջոկատներ կազմակերպվեցին Երևանում, Վաղարշապատում, Սարդարապատում, Նոր Բայազետում, Ալեքսանդրապոլում, Շամախիում, Շորագյալում, Ելիսավետպոլում, Ղազախում, Ջանդզուրում, Նախիջևանում և Անդրկովկասի տարբեր շրջաններում։ Նույնպիսի ջոկատներ կազմակերպվեցին նաև վրացիներից և ադրբեջանցիներից։

Մինչև պատերազմական գործողությունների սկսվելը կազմակերպվել էին դուրիական 12, մենգրելական և իմերեթյան 6, երևանյան 14, քրդական 3, Շամախիի 10, օսեթական 4, Ախալցխայի 1, Գորիի հայ-վրացական 2,5, Թիֆլիսի վրացական-ազնվականական 2,5, ելիսավետպոլյան 10, Բորչալուի 5, լեռնականների 4, Շուշու 3,5 հարյուրյակներ[69]։ Դրանցից բացի կազմակերպվել էր Նախիջևանի միլիցիան։ Նախատեսված էր արագ կերպով ստեղծել Գյանջայի և Բորչալուի բնակիչներից երկու դրուժինա՝ յուրաքանչյուրը 500 հոգուց և վրացական մեկ դրուժինա, նույնպես բաղկացած 500 հոգուց[70]։

Հետագայում, պատերազմի ընթացքում, Անդրկովկասյան ժողովուրդներից կազմակերպվել են կամավորական և միլիցիայի բազմաթիվ նոր ջոկատներ՝ իրենց բնակավայրերը թուրքական հարձակումներից պաշտպանելու և զինվորական այլ կարգի ծառայություններ կատարելու համար։ Հիշատակության արժանի է էջմիածնի 300 հոգուց կազմված ջոկատը՝ Գևորգ Մալինցյանի և Ստեփան Սամսոնյանի գլխավորությամբ։ Բացի այդ, կային Սուրմալուի, Համամլուի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի շրջանների բնակիչներից կազմակերպված ջոկատներ։ Գեներալ Վ. Բեհբութովի կարգադրությամբ 1853 թ. սեպտեմբերի 6-ին ստեղծվեց քրդական միլիցիան՝ Սուրմալուի տեղամասում, բեկական դրուժինան Երևանում, 1853 թ. օգոստոսի 31-ին Ախալքալաքում ստեղծվեց օսեթական 2 հարյուրյակը, 1853 թ. հունիսի 21-ին Ալեքսանդրապոլի և Երևանի գավառներում ստեղծվեց երեքհարյուրական հոգուց բաղկացած հեծյալ միլիցիան և այլն։ Այս ջոկատները ռուսական զորաբանակների կազմում, հաճախ էլ առանձին, գործել են ամբողջ պատերազմի ընթացքում՝ ռուսական զորամասերին ցույց տալով զգալի օգնություն։

Իրենց ծառայություններով հայերն աչքի ընկան հատկապես Կարսի պաշարման և գրավման համար մղված մարտերում։ Կարսի պաշարման ժամանակ թուրքական բերդապահ կայազորը սովից փրկելու Ուիլյամսի բոլոր փորձերը ձախողվեցին, տեղանքին լավ ծանոթ հայերից կազմված ջոկատների մղած հակագործողությունների շնորհիվ։

1853 թ. նոյեմբերի 2-ին Բայանդուրի ճակատամարտում ռուսներին օգնություն ցույց տվեց Բայանդուրի գյուղացիներից ձևավորված աշխարհազորային ջոկատը։ Հայերից ու վրացիներից կազմված 11 հեծյալ և 3 հետևակային հարյուրյակները եռանդուն մասնակցություն ունեցան 1853 թ. նոյեմբերի 14-ին Ախալցխայի տակ տեղի ունեցած ճակատամարտին։ Այդ ճակատամարտում թուրքերի դեմ զենքի դիմեց նաև քաղաքի հայ և վրացի բնակչությունը։

---

69 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. 69, ց. 1, գ. 47, թ. 447—451։

70 Նույն տեղում, ֆ. 68, ց. 1, գ. 57, թ. 134։

Հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդներից կազմակերպված 11 հարյուրյակ հեծյալ միլիցիան եռանդուն մասնակցություն ունեցավ Բաշ-Քադրկլարի ճակատամարտին[71]։

1854 թ. գարնանը Ալաշկերտ-Կաղզվան հատվածում ծավալված ռազմական գործողությունների ժամանակ իրեն փառքով պսակեց Երևանյան զորաջոկատը, որի կազմում կռվում էր հայերից ձևավորված միլիցիայի 6 հեծյալ հարյուրյակ։ Երևանյան զորաջոկատի մարտական գործողություններին մասնակցել են նաև մահմեդական հեծյալ 4-րդ գունդը, Նախիջևանի, Շուշու, Օրդուբադի շրջանի, Երևանի և Վաղարշապատի հայկական ջոկատները[72]։

Հայերը քաջարի մասնակցություն ունեցան նաև 1854 թ. հուլիսի 24-ի Քյուրուկ-Դարայի ճակատամարտին։ Ականատեսների վկայությամբ այդ մարտում իրենց խիզախությամբ աչքի ընկան դրագունները, կազակները, մահմեդական հեծյալները, Լորիս-Մելիքովի կամավորները, վրացական դրուժինան և հայկական կամավորական ջոկատները[73]։

Հայերի օգնությունը ռուսական բանակին չի սահմանափակվել միայն Կովկասյան ռազմաճակատում ծավալված ռազմական գործողություններին ունեցած մասնակցությամբ։

Թուրքական զորաբանակները պատերազմի ամբողջ ընթացքում Կովկասի տարբեր սահմաններում հաճախակի կատարել են նաև կողոպուտ և ցուցադրական ահաբեկիչ նպատակներ հետապնդող հարձակողական գործողություններ։ Նման դեպքերում ռուսական հրամանատարությունը թշնամու դեմ հիմնականում օգտագործել է տեղական ժողովուրդներից ձևավորված միլիցիայի և աշխարհազորային ջոկատները։ 1853 թ. նոյեմբերին Սուրմալուի, Թալինի, Սարդարապատի և էջմիածնի վրա թուրքական հրոսակախմբերի կատարած բոլոր հարձակումներն էլ ետ մղվեցին տեղական բնակիչներից կազմված աշխարհազորային ուժերով[74]։ 1853 թ. նոյեմբերին Իգդիրից ոչ հեռու թշնամու 1500 հոգուց բաղկացած հրոսակախմբի դեմ է ուղարկվել Շամախիի միլիցիան փոխգնդապետ Եդիգարովի հրամանատարությամբ, որին հաջողվել է մեծ կորուստներ պատճառել և ետ շպրտել կողոպտիչներին[75]։ 1854 թ. Ալեքսանդրապոլի քաղաքապետ կապիտան Շանսևը Վ. Բեհբութովի թույլտվությամբ կազմակերպել է ևս մեկ հեծյալ հայկական հարյուրյակ, որը միացվելով Շորագյալի երրորդ հարյուրյակին, ուղարկվել է Շորագյալի տեղամասից հյուսիս ընկած սահմանների պաշտպանության համար[76]։ Թշնամու 600 հոգուց բաղկացած հեծելազորը նույն թվականի հունիսին հարձակվել է Բայանդուր, Ղազարապատ և սահմանամերձ այլ գյուղերի վրա, սակայն տեղական միլիցիայի ջոկատները Թարխանովի գլխավորությամբ զինված բնակիչների հետ միասին ետ են շպրտել նրան և ետ վե-

71 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄԱ, ֆ. 69, ց. 1, գ. 57, թ. 109—112։
72 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 559, ց. 7, թ. 1, 5, 14, 36։
73 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄԱ, ֆ. 57, գ. 155, թ. 33։
74 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 155, թ. 33։
75 Նույն տեղում, թ. 84—85։
76 Տե՛ս Վրացական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 559, գ. 5, թ. 3—4։

դադարձրել կողոպտված ավարը[77]։ Հուլիսի 16-ին Բայանդուրի ուղղությամբ կրկին հարձակում գործած թուրքական 3000 հոգուց բաղկացած զորաջոկատը ետ է շպրտվել դարձյալ տեղի բնակիչների և կազակական մեկ հարյուրյակի համատեղ ջանքերով։

Հա՛յերը ռուսական հրամանատարությանը տրամադրում էին նաև հրմուտ սուրհանդակներ, կապավորներ, ուղեկիցներ։

Կովկասյան կորպուսի տարած հաղթանակների գործում քիչ նշանակություն չունեցավ տեղական ժողովուրդների ցույց տված նյութական օգնությունը։ Պատերազմն սկսվելու առաջին իսկ օրերին հայերն ու վրացիները ռուսական զորամասերին տրամադրի՛ցին 1700 սայլ՝ քաշող անասուններով։ Ալեքսանդրապոլում ռազմական ամրություններ կառուցելու գործում կամավոր օգնություն են ցույց տվել տեղի բնակիչները։ Սահմանամերձ շրջաններում շատ հայկական գյուղեր իրենց միջոցներից են հոգացել տեղում եղած զորամասերի սնունդը։

Հայ կանայք և աղջիկները հոգատարությամբ են շրջապատել վիրավոր և հիվանդ զինվորներին։ Նրանց տեղավորել են հոսպիտալներում, հաճախ էլ իրենց տներում, ապահովել սնունդով՝ հրաժարվելով որևէ վարձատրությունից։

Այսպիսով, անտարակույս է Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի տարած հաղթանակների գործում հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների օգնության նշանակությունը։

---

77 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 356, մաս 2, թ. 97։

ԳԼՈՒԽ ՅԱԹԵՐՈՐԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստեց նրա տնտեսական կյանքի հետագա զարգացմանը։ Երկրում հաստատված երկարատև խաղաղությունը, պարսկական բռնապետական տիրակալությանը յուրահատուկ անօրինականությունների վերացումը, հարևան տերիտորիաներից հայկական բնակչության հոծ ներգաղթը հնարավորություն տվեցին հայ գյուղացուն ձեռնամուխ լինելու իր տնտեսական դրության բարելավմանը։

Արևելյան Հայաստանը մնում էր հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը դարձյալ գյուղատնտեսությունն էր։ Երկրի բնակչության ավելի քան 90 տոկոսը կազմում էր գյուղացիությունը։ Ըստ պաշտոնական տվյալների, 1859 թ. Երևանի նահանգում կար 37957 ծուխ գյուղաբնակչություն, որից 25934 ծուխը՝ պետական[1]։

Գյուղատնտեսության զարգացման ամենացայտուն արտահայտությունը մշակվող հողային տարածությունների ընդարձակումն էր։ Եթե պարսկական տիրապետության շրջանում մշակվում էին հարմարավետ հողերի 8—10 տոկոսից ոչ ավելին, իսկ մնացյալները չէին օգտագործվում, ապա այժմ դրությունը բոլորովին փոխվել էր։ 1829 թ. ցանքատարածություններն ընդգրկում էին 87000 հեկտար տարածություն, 1870 թ. արդեն ցանքսի տակ էր գտնվում 213170 հեկտար հողատարածություն, այսինքն՝ շուրջ 2,5 անգամ ավելին[2]։ Հատկապես ընդարձակվել էին ցորենի, գարու, չալթուկի, բամբակի ցանքատարածությունները։

Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաները մնում էին նույնը, այսինքն՝ ցանվում էր ցորեն, գարի, կորեկ, բամբակ, բրինձ, քունջութ, վուշ, ծխախոտ և այլն։ Բացառությամբ ցորենի, գարու և կորեկի, մնացած գյուղատնտեսական կուլտուրաների մշակման հիմնական վայրերը Երևանի և Նախիջևանի գավառներն էին։ Այս երկու գավառներում էին հիմնականում

---

[1] АКАК, т. XII, стр. 1350.

[2] *Տե՛ս М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957, стр. 163—164.

կենտրոնացած խաղողագործությունն ու գինեգործությունը, ինչպես նաև բանջարա-բոստանային կուլտուրաների մշակությունը։

1850-ական թթ. սկզբին ցորենի տարեկան բերքը կազմում էր 2700 հազար փութ, գարունը՝ 1080 հազար փութ, իսկ զտված բամբակի ու ծխախոտի տարեկան բերքը 10500 փութ էր։ Այդ նույն տարիներին խաղողից և մրգերից տարեկան 30000 ռուբլու (արծաթով) եկամուտ էր ստացվում[3]։

1870 թ. ցորենի ցանքատարածությունները 1827 թ. համեմատությամբ աճել էին 160 տոկոսով, իսկ գարու ցանքսերը՝ 287,5 տոկոսով։ Գարու ցանքատարածությունների նման աճը պայմանավորված էր նրանով, որ այն ավելի քիչ ծախսեր էր պահանջում և ավելի մեծ բերք էր տալիս, մոտավորապես տարեկան 3—3,5 մլն. փութ, որը օգտագործվում էր տեղական բնակչության պահանջների բավարարման համար[4]։

Այսպիսով գյուղն էլ աստիճանաբար ներգրավվում էր ապրանք-դրամական հարաբերությունների մեջ։ Ցարական կառավարությունը Արևելյան Հայաստանի գրավումից հետո իր ուշադրությունը բևեռեց այստեղ, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում բամբակագործության հետագա զարգացման խնդիրների վրա[5]։ Այդ առումով բամբակագործության զարգացման համար կարևորություն էր ներկայացնում ոչ միայն ցանքատարածությունների ընդարձակումը, այլև հումքի որակի բարձրացումը, բամբակի զտման պրոցեսի կատարելագործումը։ Ուստի և ֆինանսների մինիստրությունը հարց է հարուցում, որպեսզի Եգիպտոսից ներմուծվի մեկ միլիոն փութ եգիպտական բամբակենու սերմ «Հայկական մարզի բնակիչներին բաժանելու համար, որպեսզի այն փոխարինի տեղում աճող ցածրորակ բամբակենուն»[6]։ Հետագայում ներմուծվեցին եգիպտական, ամերիկյան, սիրիական, սիցիլիական բամբակենու սերմատեսակներ, որոնց արդյունքները թեև սկզբնական շրջանում բավարար չէին, սակայն հետագայում մեծապես նպաստեցին բամբակագործության զարգացմանը։ 1870 թ. բամբակենու ցանքատարածությունները գերազանցում էին շուրջ 26 հազար հեկտար տարածություն, 1829 թ. 8000 հեկտարի համեմատությամբ։

1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո կապիտալիզմի արագ զարգացումը Ռուսաստանում, ինչպես նաև 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմի հետևանքով հյուսիսամերիկյան բամբակի արտահանման դադարեցումը մեծապես խթանեց բամբակագործության հետագա վերելքին Արևելյան Հայաստանում։ Արդեն 1870 թ. Երևանի նահանգում բամբակի արտադրանքն ավելացել էր 9 անգամ, և արտադրվել էր 27876 փութ բամբակ[7]։ Բամբակի ցանքատարածություններն աճել էին ի վնաս մյուս կուլտուրանե-

---

3 «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. VI. Эриванская губерния, СПб., 1853, стр. 208—209, 212.

4 Տե՛ս *Մ. Ա. Ադոնց*, նշվ. աշխ., էջ 165։

5 Տե՛ս *Ի. Լ. Сегал*, Развитие хлопководства в Закавказском крае и современное состояние его («Труды съезда хлопководов», т. II, ч. II, Тифлис, 1914, стр. 56).

6 АКАК, т. IX., стр. 51—52.

7 Տե՛ս *Н. Н. Спасский*, նշվ. աշխ., էջ 165։

բի, մասնավորապես ցորենի և գարու։ 1863 թ. բամբակի փութը վաճառվել է միջին հաշվով 15—16 ռուբլով, և շուրջ 2—2,1 մլն. ռուբլու եկամուտ է բերել։ 1868 թ. Երևանի մոտ կառուցվեց բամբակ զտելու և մամլելու միջոցով հակավորելու գործարան։ Այնուամենայնիվ, ռուսական կառավարությանը չհաջողվեց Արևելյան Հայաստանը և ողջ Անդրկովկասը վերածել իր արդյունաբերության համար բամբակի հումքի հուսալի բազայի։

Ցարական կառավարությունը լրջորեն զբաղվեց շերամապահության զարգացման խնդրով ինչպես Անդրկովկասում, այնպես էլ մասնավորապես Արևելյան Հայաստանում՝ իբրև կայուն մի բազա մետաքսի թանկարժեք հումք ստանալու համար։ 1830—1840-ական թթ. ռուսական մետաքսի արդյունաբերությունը Անդրկովկասից ստացել էր 17—18 հազար փութ մետաքսի հումք[8]։ Սա արդեն վկայում է այն մասին, որ ամբողջ Անդրկովկասը դառնում էր ռուսական մետաքսարդյունաբերության հումքի կարևոր և հիմնական հենակետը։

Խաղողը և խաղողի վերամշակումից ստացվող արդյունքները՝ գինի, օղի և այլն, նույնպես շուկա էին հանվում և նպաստում գյուղացիական տնտեսությունների ներգրավմանը ապրանքա-դրամական հարաբերությունների ոլորտը։ Այսպես, 1870 թվականին, երբ խաղողի բերքը համեմատաբար վատ էր, ստացվել էր 984.172 փութ խաղող, որի 1/3 մասը սպառվել կամ վաճառվել էր, իսկ մնացյալ 2/3 մասից ստացվել էր 479585 դույլ գինի։ Բայց այս շրջանում խաղողագործությունն անհրաժեշտ չափով չէր զարգանում, բնակչության աճն ավելի էր, քան խաղողի այգիների տարածության[9]։ Դա պետք է բացատրել, ըստ երևույթին, այն հանգամանքով, որ բամբակագործության ածը և մյուս կողմից խաղողագործության արդյունքների դեմս ոչ մեծ եկամտաբերությունը արգելակում էին այդ արժեքավոր կուլտուրայի տարածմանը։

Անասնապահությունը ևս շարունակում էր մնալ բնակչության զբաղմունքի հիմնական տեսակներից մեկը։ Անասնապահությամբ մեծ մասամբ զբաղվում էին քոչվորական կամ կիսաքոչվորական քրդական և ադրբեջանական ցեղախմբերը։ 1860-ական թթ. անասնապահության զարգացման մասին կարելի է գաղափար կազմել հետևյալ աղյուսակից[10] (տե՛ս 257 էջի աղյուսակը)։

Աղյուսակից երևում է, որ Երևանի նահանգում, ճիշտ է, դանդաղորեն, բայց անասնապահությունը ևս վերելք էր ապրում, և այն պայմանավորված պետք է համարել նույնպես ապրանքա-դրամական հարաբերությունների ծավալմամբ։

---

8 *Տե՛ս М. Рожкова*, Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, М.—Л., 1949, стр. 130—131.

9 «Сборник сведений о Кавказе», т. II, стр. 181—183.

10 *Տե՛ս* Վ. Հ. Ոշտուկի, *Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 229։*

	Անասունների քանակը		Աճը %-ներով
	1865 թ.	1870 թ.	
Ձիեր	33041	40626	+ 23
Եղջերավոր անասուններ .	226780	274739	+ 21
Ոչխարներ և այծեր . . .	575142	688338	+ 20
Խոզեր	1663	3162	+ 90
Ուղտեր	10940	16724	+ 53
Էշեր և ջորիներ	17018	16218	— 5
Ընդամենը . . .	864584	1038837	20%

Այդ պրոցեսի վկայությունն է գյուղական տոնավաճառների ստեղծումը, ինչպես Շարուր-Դարալագյազի գավառի Մալիշկա գյուղի տոնավաճառն էր, որը բացվեց 1857 թվականին։

1860-ական թթ. փորձեր են արվում նաև հողի վարձակալման միջոցով կապիտալիստական բնույթի ֆերմերական տնտեսություններ ստեղծելու ուղղությամբ։ Դրանց նպատակն էր լինելու տեխնիկական արժեքավոր կուլտուրաների մշակությունը և վաճառքը արդյունաբերական ձեռնարկություններին։ Սակայն այս ժամանակահատվածում նման փորձերը հաջուկենտ էին և ցանկալի արդյունք չտվեցին։ Այսպես, 1862 թ. ռուս ազնվական գեներալ Կախանովը կառավարությունից 65 տարվա ժամկետով վարձակալության վերցրեց Երևանի գավառի Դավալու և Սաղարակ գյուղերի միջև ընկած մի հողակտոր՝ 10022 դեսյատին տարածությամբ։ 1950 դեսյատին մեծությամբ մի հողակտոր էլ վարձակալել էր Նախիջևանի գավառում Շարուր-Դարալագյազի գավառապետ Ա. Պ. Շան-գիրեյը, որը կազմակերպել էր իր տնտեսությունը կապիտալիստական հիմունքներով և գլխավորապես բամբակագործությամբ էր զբաղվում։

Այսպիսով, Արևելյան Հայաստանում հետզհետե զարգանում էր գյուղատնտեսության ապրանքայնությունը, ուշադրություն էր դարձվում հատկապես տեխնիկական կուլտուրաների մշակության վրա և, դրանով իսկ, երկիրը դանդաղ, բայց անշեղ կերպով ներգրավվում էր կապիտալիստական արտադրաեղանակի ոլորտը։ Նախկին բնատնտեսությունն իր տեղը զիջում էր գյուղացիական ապրանքային տնտեսությանը, դրանով իսկ փոխելով երկրի նախկին ֆեոդալական դեմքը։

2. ԱՐՀԵՍՏՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ռուսաստանին միացվելուց հետո Անդրկովկասում նպաստավոր պայմաններ էին ստեղծվում առևտրի ու արհեստների, արդյունաբերության զարգացման համար։ Դրանց զարգացմանը նպաստում էր նաև այն հանգամանք-

քը, որ երկրում երևան էր գալիս ռուս ղինվորականությունը և պաշտոնեությունը՝ իր պահանջարկով։ Սա ևս թափ էր հաղորդում ապրանք-դրամային հարաբերությունների հետագա խորացմանը և զարգացմանը։

Խոսելով ընդհանրապես Անդրկովկասի արհեստագործական, առևտրական և արդյունաբերական զարգացման մասին, պետք է նշել այն հանգամանքը, որ հայ ազգաբնակչությունը սփռված էր ամբողջ Անդրկովկասով մեկ և առաջնային դեր էր խաղում և արհեստային արտադրության, և արդյունաբերության, և առևտրի ասպարեզում։ Հայ առևտրականներն ու արհեստավորները կարևոր դեր էին խաղում Անդրկովկասի մի շարք քաղաքների տնտեսական կյանքում։ Պաշտոնական վավերագրերից մեկում նշվում է, որ 1840-ական թթ. Անդրկովկասի առևտուրը գրեթե բացառապես գտնվում էր հայերի ձեռքում և նրա տարեկան շրջանառության գումարը կազմում էր շուրջ վեց միլիոն ռուբլի[11]։

Արևելյան Հայաստանում, Ռուսաստանին միացվելուց հետո, արհեստագործությունը մնում էր արտադրական գործունեության հիմնական ճյուղը։ Սակայն 1830—1860-ական թթ. արհեստագործական արտադրության քանակի վերաբերյալ մենք գրեթե տեղեկություններ չունենք. դրանք ավելի շատ վերաբերում են արհեստավորների քանակին՝ արհեստագործության մի քանի տոնայնակի հատվող ճյուղերում և հիմնականում 20-ական թթ. վերջերին և 30-ական թթ. սկզբներին։ Որոշ տվյալներ կան նաև 1860-ական թթ. վերաբերյալ։ Եթե 1829—1832 թթ. Հայկական մարզի երեք քաղաքներում՝ Երևանում, Նախիջևանում և Օրդուբադում արհեստավորների թիվը կազմել է համապատասխանաբար 2349, 717 և 608 հոգի, ապա 1865 թ.՝ 3238, 840 և 740 մարդ։ Հետևաբար 30—35 տարվա ժամանակամիջոցում արհեստավորների քանակական աճը տոկոսային հարաբերությամբ կազմել է. Երևանում՝ 38 տոկոս, Նախիջևանում՝ 17, Օրդուբադում՝ 29 տոկոս։ Միջին հաշվով արհեստավորների քանակական աճը 12 տոկոսով գերազանցել է հիշյալ քաղաքների բնակչության ընդհանուր աճին, իսկ Երևանում՝ նույնիսկ 23 տոկոսով։ Ալեքսանդրապոլում և Նոր Բայազետում արհեստավորների թիվը համապատասխանորեն կազմել է 2695 և 391[12]։ Այսպիսով, Երևանի նահանգի արհեստավորների ընդհանուր թիվը 1865 թ. հավասար էր 7995-ի, որոնցից վարպետներ՝ 3663, ենթավարպետներ՝ 2117 և աշակերտներ՝ 2215։ Հավանորեն արհեստի յուրաքանչյուր ճյուղ կազմված է եղել մանր արտադրողական միավորներից, քանի որ ամեն մի վարպետի միջին հաշվով ընկնում էր 1,2 ենթավարպետ և աշակերտ։ Այդ վկայում է նաև արհեստային արտադրության ոչ բարձր մակարդակի մասին։ Այսպես, Երևանի արհեստավորությունը սպասարկում էր միայն տեղական պահանջարկը, թեև արհեստավորների մեծ մասը հենց այստեղ էր կենտրոնացած։ Երևանյան նահանգի քաղաքներից միայն Ալեքսանդրապոլի արհեստավորներն էին, որ սպասարկում էին ոչ միայն տեղական պահանջարկը, այլև իրենց արտադրանքն ուղարկում էին Անդրկովկասի վարչական կենտրոնը՝ Թիֆլիս, և անգամ արտահանում Թուրքիա։ Արտահան-

11 ԱԿԱԿ, т. X, № 184.

12 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, Тифлис, 1869.

ման հիմնական ապրանքը մաշիկներն էին, որի արտադրանքի դրամական գումարը կազմում էր 8000—10000 ռուբլի արծաթով և ոսկեթել դիպակները։ Ամբողջ արհեստային արտադրության ընդհանուր գումարը Ալեքսանդրապոլում տարեկան հասնում էր 160000 ռուբլու (արծաթով)[13]։

Բավական մեծ թվով տնայնագործներ կային գյուղերում, ուր մասնավորապես լայն տարածում ուներ ջուլհակությունը։ Ջուլհակ-տնայնագործների թիվը Հայկական մարզում ըստ Շոպենի 4206 էր։ Նրանք ունեին դազգահներ և կտավ էին գործում։ Այդ եղանակով տարեկան շուրջ կես միլիոն արշին կտավ էր գործվում։ Սակայն 40-ական թվականներից արհեստի այդ ճյուղը դանդաղորեն սկսում է վերանալ, չդիմանալով ռուսական գործարանային էժան ապրանքների մրցակցությանը[14]։

Արևելյան Հայաստանում փոքր թիվ չէին կազմում նաև այն արհեստավորները, որոնք պղնձից կաթսաներ էին պատրաստում և վաճառում գյուղերում։ Նրանց մասին 1860-ական թթ. վերաբերող որոշ հարևանցի տեղեկություններ են պահպանվել։ Այսպես, 1866 թ. Ալավերդու գործարանում ձուլված 5435 փութ պղնձից 2000 փութը օգտագործվել էր ամանեղեն պատրաստելու համար։ Այդ արտադրաճյուղում զբաղված էին 75 արհեստավորներ, որոնք և պատրաստի ամանեղենը վաճառքի էին հանում գյուղերում։ 1870 թ. Ալավերդում ձուլված 4572 փութ պղնձից այդ նպատակի համար օգտագործվել է 1100 փութը[15]։ Հավանորեն այդպես է եղել նաև Սիսիմադանի գործարանում, որտեղ ձուլված պղինձը «հենց տեղում վաճառվում էր եկվոր գնորդներին»։

Արհեստի հիմնական ճյուղերը մնում էին բրուտագործությունը, կաշեգործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, դերձակությունը, կոշկակարությունը, հացագործությունը, գզրարությունը և այլն։ Այս ճյուղերում ներգրավված արհեստավորների թիվը զգալիորեն աճել էր, որը վկայություն էր ապրանքա-դրամական հարաբերությունների հետագա զարգացման։

Այս ժամանակահատվածում էլ արհեստավորները կազմակերպված էին համքարությունների մեջ և ղեկավարվում էին նախկին ավանդույթներով։ Համքարությունների մեջ, բացի արհեստավորներից, միավորված էին նաև առևտրականները։

1863 թ. Երևանի համքարությունների թիվը հասնում էր 28-ի։ Դրանցից էին բազազների, կաշեգործների, որմնադիրների, կոշկակարների և այլ համքարություններ, որտեղ վարպետների թիվը հասնում էր 816-ի, վարպետացուներինը՝ 692-ի, աշակերտներինը՝ 667-ի, ընդամենը՝ 2175 հոգու։

Նույն 1863 թ. Թիֆլիսի համքարություններում կազմակերպված արհեստավորների ու առևտրականների թիվը հետևյալն էր. վարպետներ՝ 1156, վարպետացուներ կամ ենթավարպետներ՝ 334, ընդամենը՝ 1500 հոգի, ի բաց առյալ աշակերտներին, Ալեքսանդրապոլի համար համապատասխան տըվ-

13 Նույն տեղում։

14 Տե՛ս И. Шопен, նշվ. աշխ., էջ 851—852։

15 «Сборник сведений о Кавказе», т. II, стр. 3.

յալներն են. վարպետներ՝ 750, ենթավարպետներ՝ 603 և աշակերտներ՝ 780, ընդամենը՝ 2133 հոգի։

Ըստ 1863 թ. պաշտոնական վիճակագրության տվյալների, Երևանում համքարություններից դուրս կային 270 արհեստավորներ միայն, հիմնականում ադրբեջանցիներ, մասամբ նաև ռուսներ[16]։

Արհեստագործական այս կազմակերպությունները պահպանվում էին, նրբեմն էլ որոշ հաջողությունների հասնում, քանի դեռ ռուսական գործարանային արդյունաբերության արտադրանքը քիչ էր ներթափանցել Անդրկովկաս, որը կատարվեց 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո։ 1870 թ. Հայաստանում և Անդրկովկասում գյուղացիական ռեֆորմի անցկացումից հետո գործունեության լայն ասպարեզ նետվեց նաև տեղական կապիտալը, որի պատճառով համքարությունների տնտեսական հիմքերն սկսեցին խարխլվել։

Այդ երևույթը առավել սպառնալի չափեր ընդունեց և ամենից շատ ըղգացնել տվեց Թիֆլիսում, որտեղ կապիտալիստական արտադրաեղանակը շատ ավելի շեշտված առաջընթաց էր կատարել։ Ահա թե ինչու հենց այստեղ բռնկվեց համքարությունների մեջ իրենց տնտեսական դոյության հենարանը տեսնող արհեստավորների ու առևտրականների 1865 թ. բավականաչափ բուռն ընթացք ստացած ելույթը՝ ուղղված Թիֆլիսի քաղաքային ինքնավարության հակահամքարական բնույթ կրող միջոցառումների դեմ։

Թիֆլիսի համքարական կազմակերպությունները, որոնց անդամների ըղգալի մասը կազմում էին հայ արհեստավորները, եռանդուն դիմադրություն էին ցույց տալիս ռուսական արդյունաբերական արտադրանքի տարածմանը։ Սա արդեն բավական էր, որպեսզի «հասարակության եվրոպական մասի մեջ սկսեին խոսել համքարությունները ոչնչացնելու անհրաժեշտության մասին»[17]։

Թիֆլիսի արդեն արդյունաբերական գործունեության ասպարեզը ոտք դրած բուրժուազիան, դեռևս Մ. Ս. Վորոնցովի փոխարքայության օրոք նման տրամադրություններ արտահայտել էր, սակայն փոխարքան դրանց չէր ընդառաջել։ Վորոնցովը գտնում էր, որ կարիք չկա մեկ հարվածով ոչնչացնել համքարությունները, քանի որ առևտրի և արդյունաբերության զարգացումը Անդրկովկասում ինքնըստինքյան ասպարեզից դուրս էր մղում դրանք[18]։ Վերջինիս միջամտությունը լոկ այն էր, որ հսկողություն էր սահմանում համքարությունների վրա, սահմանափակում դրանց արտոնությունները։ Վորոնցովը, որոշ զիջում անելով «հասարակությանը», թույլատրեց, որ արհեստով ու մանրավաճառ առևտրով զբաղվեն նաև համքարություններից դուրս գտնվող անձինք, միաժամանակ պահպանելով մինչկապիտալիստական տընտեսական այդ կազմակերպությունները։

Համքարությունների պաշտպանությամբ 1857 թ. հրապարակ իջան հայտնի մտավորականներ և հասարակական գործիչներ Գևորգ Ախվերդյանը և Պետրոս Շանշյանը։ Ախվերդյանը համքարությունների թշնամիներն էր հա-


---

16 *Տե՛ս* Թ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1801—1879), հատ. III, Երևան, 1959, էջ 425—428, 430—431։*

17 *В. Н. Иваненко*, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, стр. 453.

18 АКАК, т. X, стр. 1318.

մարում իրենց շահերով տարված խոշոր դրամատերերին, որոնք առևտրի և արհեստի ազատությունն պահանջելով, կամենում էին իրենց նյութական հզորության շնորհիվ ասպարեզի միակ տերը դառնալ և ստեղծել մենաշնորհներից վատթարագույնը[19]։ Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ բարոն Նիկոլային գրում էր, որ առևտրական համքարությունները պետք է միանգամից արգելվեն և ցրվեն որպես գաղտնի ընկերություններ, իսկ նրանց կազմակերպողները պատժվեն իբրև քրեական հանցագործներ, թեև ամենևին իրականությանը չէր համապատասխանում այն մեղադրանքը, թե համքարությունները գաղտնի կազմակերպություններ են։



Թիֆլիսի հայ համքարության դրոշակ

Համքարությունների գլխին փոթորիկ պայթեց ավելի ուշ, 1865 թ., երբ դրանց մեջ համախմբված արհեստավորներն ու մանր առևտրականները ցույց կազմակերպեցին այն պատճառով, որ նրանց վրա դրված տուրքերը ավելացվել էին 60000 ռուբլով։ Այդ առիթ դարձավ, որպեսզի 1865 թ. հունիսի 16-ին տարերայնորեն բռնկեր արհեստավորների և մանր առևտրականների շուրջ տասը հազարանոց զանգվածի ըմբոստությունը։ Նրանք փակեցին իրենց խանութներն ու արհեստանոցները և, չնայած իշխանությունների ըսպառնալիքներին, թե «խռովությունը» ճնշելու համար զենքի կդիմեն, մինչև հունիսի 29-ը չբացեցին դրանք։ Ըմբոստացած արհեստավորները և մանր առևտրականները հարձակվեցին քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանի տան վրա և քարուքանդ արեցին այն, իսկ քաղաքագլուխը կանացի հագուստներով ծպտված մի կերպ կարողացավ փախչել։ Կառավարությունը զենքի դիմեց-

19 Տե՛ս Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, гл. 1, стр. 2.

եղան վիրավորներ և սպանվածներ։ Կառավարական շրջաններում նույնիսկ մտացածին լուրեր տարածվեցին, թե իբր «խռովարարները» կամենում էին քաղաքի կառավարման գործը, մասնավորապես հարկերի նշանակումը և դանձումը հանձնել ժողովրդից ընտրված անձնավորություններին։ Անգամ խոսում էին ցարիզմի դեմ ծրագրված ինչ-որ դավադրության մասին և գործն այնպես էին ներկայացնում, որ իբր թե նախապատրաստվում էր Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից։ Տնտեսական ծանր կացության մեջ ընկած համքարական զանգվածների ըմբոստության շուրջը ստեղծվեց մեծ աղմուկ և այն պատրվակ ծառայեց համքարական կազմակերպությունները ոչնչացնելու համար[20]։



Ալեքսանդրապոլի պղնձագործների համքարության դրոշակը

1869 թ. ապրիլի 5-ին հրատարակված նոր կանոնների համաձայն Թիֆլիսի 80 համքարություններից թողնվում էին միայն 17-ը, որոնք պետք է հնթարկվեին քաղաքային վարչության կազմի մեջ մտնող Արհեստավորական վարչությանը։ Համքարությունների մեջ կարող էին մնալ միայն արհեստավորները, իսկ մանր առևտրականներին արգելվում էր նման կազմակերպություններ ունենալ։ Պահպանված համքարությունների ներքին կյանքը, ընտրությունների կարգը և առհասարակ նրանց ամբողջ գործունեությունը դրվում էր ոստիկանության, հսկողության տակ։

Սահմանվում էին երկաստիճան ընտրություններ։ Ընդհանուր համքարական ժողովին կարող էին մասնակցել միայն լիազորները։ Յուրաքանչյուր տասը

---

20 Տե՛ս Ф. Махарадзе, Грузия в XIX столетии, Тбилиси, 1933, стр. 59—64.

համքարից ընտրվում էր միայն մեկ լիազոր։ Համքարության գործերը վարելու նախկին կոլեգիալ կարգը և ուղղակի ընտրությունները վերացվում էին, արհեստավորաց գլխավորը ավելի լայն իրավասություններով էր օժտվում։

Այսպիսով, քաղաքի մանր արհեստավորների ու առևտրականների բազմահազարանոց զանգվածը «արժանի» պատիժ էր ստանում, որովհետև համարձակվել էր իր կազմակերպությունը օգտագործել ոչ միայն իբրև «ներքին ոստիկանություն», այլև փորձ էր արել ծառայեցնել այն իր շահերի պաշտպանությանը և զանգվածային բողոք կազմակերպել քաղաքային իշխանությունների հարկային քաղաքականության դեմ։

1865 թ. Թիֆլիսի համքարային կազմակերպությունների ցույցին իրենց համակրանքը արտահայտեցին հայ մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչներ Պետրոս Շանշյանը, Պետրոս Սիմեոնյանը, Գաբրիել Սունդուկյանը, Պերճ Պռոշյանը և ուրիշներ։

Բայց և այնպես համքարությունները քայքայման էին դատապարտված. աստիճանաբար զարգանում էր կապիտալիստական արտադրության եղանակը։

* * *

Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանը արդյունաբերական զարգացման տեսակետից դեռևս առաջին քայլերն էր անում։ Համեմատաբար զարգացած էր լեռնային արդյունաբերությունը՝ շնորհիվ աղի ու պղնձի հարուստ հանքերի առկայության։ Ցարական կառավարությունը որոշ քայլերի դիմեց՝ խթանելու համար լեռնարդյունաբերությունը, ընդ որում այդ միջոցառումների նպատակն էր ինչպես ընդհանրապես ամբողջ Անդրկովկասը, այնպես էլ Արևելյան Հայաստանը տնտեսապես օգտակար դարձնել մետրոպոլիայի համար։ Այդ մասնակիորեն հաջողվեց Կողբի և Նախիջևանի աղահանքերի մշակման գործը քաջալերելով և պղնձի արդյունաբերության ձեռնարկությունները պետության ու մասնավոր արդյունաբերողների միջոցների ներդրմամբ զգալիորեն եկամտաբեր դարձնելով։

Եթե բացառելու լինենք լեռնարդյունաբերությունը, ապա պատմական աղբյուրներում «գործարանային արդյունաբերություն» անվան տակ հիշատակվող ձեռնարկությունները ոչ այլ ինչ էին, եթե ոչ չնչին մասշտաբների մանուֆակտուրային, շատ ավելի հաճախ տնայնագործական արհեստանոցներ միայն։ Նույնիսկ արդեն 1860-ական թթ. հիշյալ «գործարանների ու ֆաբրիկաների» մասին խոսում էին իբրև «բնակարաններին կից կառուցված աշխատանքային արհեստանոցների մասին»[21]։

Հիշյալ «արդյունաբերական ձեռնարկությունները», ըստ քաղաքների, հետևյալ կերպ էին տեղաբաշխված. Երևանում՝ 10, Նոր Բայազետում՝ 2 և այլն։ Այդ գործարաններն, ըստ արտադրության ճյուղերի, այսպիսի պատկեր էին ներկայացնում. կաշվի ձեռնարկություններ՝ 40, օճառի՝ 10, ներկարաններ՝ 4, օղեգործական՝ 13, բրուտագործական՝ 11, աղյուսի՝ 11, կրի՝ 9 և այլն։

---

21 «Сборник статистических сведений...», т. I, 1869, отд. I, стр. 33.

Այդ ձեռնարկությունների արտադրության քանակի, բանվորական ուժի, աշխատավճարի և այլնի մասին պահպանվել են տարբեր ժամանակաշրջանների համար որոշակի, սակայն ոչ լրիվ ու լիարժեք տեղեկություններ։ Դրանք վերաբերում են XIX դարի առաջին երեսնամյակին կամ 1860-ական ԹԹ. կեսերին։ Հիշյալ երկու ժամանակահատվածների միջև ընկած տարիների վերաբերյալ սոսկ հատուկենտ տեղեկություններ են պահպանվել։ Առկա տվյալները վկայում են, որ «գործարան կամ ֆաբրիկա» անվանված ձեռնարկությունները լոկ փոքրիկ արհեստանոցներ էին, որոնցից յուրաքանչյուրի տարեկան միջին արտադրանքի դրամական արտահայտությունը չէր գերազանցում 700 ռուբլուց։ Աշխատանքային օրվա ընդհանուր կարգավորման մասին խոսք չէր կարող լինել։ Սովորաբար աշխատանքային օրվա տևողությունն էր վաղ արշալույսից մինչև ուշ երեկո։ Օրավարձը խիստ չնչին էր. 1850-ական ԹԹ. այն կազմում էր 20—25 կոպեկ, իսկ 60-ական ԹԹ.՝ 30—50 կոպեկ։

Չնայած երկրի տնտեսական հետամնացությանը, քաղաքներում և գյուղերում տարածված մանր արդյունաբերության ծավալը, բանվորների թիվը, արտադրանքի դրամական արտահայտությունը որոշ հիմք են տալիս եզրահանգելու, որ Արևելյան Հայաստանում 1860-ական ԹԹ., հատկապես գյուղացիական ռեֆորմի նախօրեին, դրամա-փոխանակային հարաբերությունները արդեն շոշափելի չափերի էին հասել։

Ռուս-պարսկական 1826—1828 ԹԹ. պատերազմից անմիջապես հետո ռուսական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց Արևելյան Հայաստանի հանքային հարստությունների երկուսի՝ աղի և պղնձի արտադրության կազմակերպմանը և ընդլայնմանը։

Աղի արտադրության հիմնական կենտրոնը Կողբ ավանի նշանավոր աղահանքն էր՝ հարուստ պաշարներով և աղի բարձր որակով։ Նախիջևանի մոտակայքի աղահանքերը թե՛ քանակով և թե՛ որակով զիջում էին առաջինին։

Մինչև 1870 թ. գյուղացիական ռեֆորմը երկու աղահանքերի շահագործումն էլ իրականացվում էր կամ մասնավոր կապալառուների, կամ կառավարական օրգանների միջոցով։ Երկու դեպքում էլ աղի հանույթի եղանակի մեջ ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ. հանույթը շարունակվում էր կաւարվել ձեռքի աշխատանքով։

Կողբի աղահանքերին, իբրև աշխատուժ, կցված էին նույն գյուղի բնակիչներից 123 և Ջնշհավատ գյուղից՝ 20 ընտանիք։ Սրանք ազատված էին պետական տուրքերից ու պարհակներից։ Նույն այդ ձևով էր կազմակերպված նաև Նախիջևանի աղահանքերի շահագործումը։ Այստեղ աղահանքերին կցված էին Շխե-Մահմուդ գյուղից 63 ընտանիք։ Հիշյալ գյուղացիների աշխատանքը չի կարելի, իհարկե, ազատ վարձու աշխատանք համարել. նրանք ավելի շուտ հիշեցնում են ռուսական պոսեսիոն ձեռնարկությունների բանվորներին, որոնք ամբողջ գյուղով հարկադիր կարգով կցված էին լեռնարդյունաբերական գործարաններին և ստանում էին պետության կողմից սահմանված վարձատրություն։ Նույն ձևով էին վարձվում նաև Կողբի աղահանքերի բանվորները։ Համաձայն պաշտոնական տվյալների, Կողբում ամեն մի փութ աղի համար, եթե այն վաճառում էին սայլով, բանվորներին հասնում էր 1

3/4 կոպեկ, իսկ եթե աղը բեռով էր վաճառվում, ապա ավելի քան 2 կոպեկ։ Նախիջևանի աղահանքերի բանվորները վաճառված ամեն մի փութ աղի դիմաց ստանում էին 2 կոպեկից ավելի[22]։

Հայաստանի աղահանքերում մինչև 1868 թ. բանվորները շարունակում էին մնալ հարկադրական աշխատանքի պայմաններում։ Միայն ռեֆորմի նախօրյակին աղահանքերին կցված գյուղացիները ազատվեցին և ընդհանուր կարգով հարկերի ու պարհակների ենթարկվեցին։ Այդ ժամանակվանից էլ այստեղ սկսվեց կիրառվել ազատ վարձու աշխատանքը։

Կողբի և Նախիջևանի աղահանքերը մինչռեֆորմյան շուրջ քառասուն տարիների ընթացքում եկամտի բավական խոշոր աղբյուր եղան ցարական գանձարանի համար։ 1828—1869 թթ. ընթացքում, պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, Կողբի աղահանքերից ստացված եկամուտը կազմել է 1742887 ռուբլի[23], իսկ ըստ մեկ այլ պաշտոնական տեղեկության՝ Նախիջևանի աղահանքից ստացված եկամուտը տարեկան 20.334 ռուբլի է կազմել[24]։

Որոշակի տվյալներ են պահպանվել նաև արդյունահանվող աղի քանակի մասին։ Եթե 1852 թ. աղի արդյունահանությունը կազմել է 733.403 փութ, ապա 1866 թ. այն հասել է 1.266.131 փթի[25]։

Բերված թվերը ցույց են տալիս, որ 1852—1866 թթ. աղի հանույթի տոկոսային աճը կազմել էր 72,63%։

Ցարական կառավարությունը լուրջ ուշադրություն նվիրեց նաև Հայաստանի պղնձարդյունաբերությանը՝ Ալավերդու և Ջանգեզուրի պղնձահանքերին։ Մինչև 1850-ական թթ. պղնձի արդյունաբերության մեջ նույնպես կիրառվում էր հարկադիր աշխատանք. շրջակա գյուղերի բնակիչները կցված էին ձեռնարկություններին և գործարանների համար աշխատանքային կարգախմբեր էին տրամադրում։ Վորոնցովի փոխարքայության տարիներին պղնձարդյունաբերության մեջ մտցվեց ազատ վարձու աշխատանքի սիստեմ։ Այսուհետև պղնձահանքերը կապալով էին տրվում հայ, հույն, գերմանացի արդյունաբերողներին։

1868 թ. պղնձարդյունաբերական 10 ձեռնարկություններում ձուլվել էր 15860 փութ պղինձ, իսկ բոլոր գործող ձեռնարկությունների աշխատողների թիվը հավասար էր 1230-ի, որից հիմնական բանվորներ՝ 656, օժանդակ բանվորներ՝ 574[26]։

Նույն 1870 թ. աշխատողների քանակն այդ բոլոր գործարաններում հասնում էր 987-ի, որից 567-ը հիմնական բանվորական կազմն էր, իսկ մնացյալը՝ օժանդակ[27]։ Ալավերդու, Շամլուղի և Ախթալայի ձեռնարկություններում պղնձի արդյունահանությունը 1857—1870 թթ. ունեցել է ընդամենը 5,3%

22 ԱԿԱԿ, т. VII, стр. 95—96.

23 «Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, стр. 21—22.

24 ԱԿԱԿ, т. XII. стр. 1345.

25 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. II, стр. 94.

26 Տե՛ս *О. Е. Туманян*, Экономическое развитие Армении, ч. I, стр. 180—181.

27 Տե՛ս *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX в., стр. 194—197.

աճ, մինչդեռ Զանգեզուրի մեջ մտնող Կավարտի, Ղաթարի, Փիրդոուդանի, Ագարակի և Հալիձորի ձեռնարկություններում այդ աճը հասել է 381,4 %[23]։ Սա բացատրվում է այն հանգամանքով, որ Զանգեզուրի ձեռնարկությունները նոր էին և շատ ավելի արագ տեմպերով էին աճում։ Սակայն վերևում բոլոր բերված տվյալները ցույց են տալիս, որ պղնձարդյունաբերական ձեռնարկությունները տեխնիկական իմաստով միայն քիչ թե շատ ձևավորված մանուֆակտուրաներ էին։

Ինչպես արդեն հիշատակվեց, այս ձեռնարկություններում մինչև 1850-ական թթ. կիրառվում էր կցված գյուղաբնակչության հարկադիր աշխատանքը։ Դրանք, ըստ էության, ճորտական բնույթի պոսեսիոն ձեռնարկություններ էին։ Այսպես, դեռևս 1812 թ. Ալավերդու և Շամլուղի գործարաններին կցված են եղել 282 հայ գյուղացիներ, որոնք, բացի ընդհանուր պարհակներից, տարեկան ութ ամիս պետք է զբաղվեին գործարանային աշխատանքներով։ Կցված գյուղացիները չնչին վարձատրություն էին ստանում, որի հետևանքով էլ նրանց աշխատանքը խիստ անարտադրողական էր[29]։

Արդեն 40-ական թթ. երկրորդ կեսին փոխարքա Մ. Ս. Վորոնցովի «Հաշվետվության» մեջ ասված է, որ «գործարաններին կցված գյուղացիներն ազատվում են հարկադիր աշխատանքից և իշխանությունն այդ գործարանները տալիս է վարձակալության»[30]։

Բանվորների վիճակը խիստ ծանր էր։ Ամենափոքր զանցանքի դեպքում նրանց դաժան պատիժների էին ենթարկում։ Այսպես, Ալավերդու գործարանի բանվորների՝ ձմեռվա ցրտին փայտ կտրելուց հրաժարվելը նկատվում է «բունտ», բանվորները շրջապատվում են զինվորներով ու կազակներով և պանակոծության ենթարկվում։ Իսկ գործարանի ղեկավարը իր զեկույցում հպարտանում էր, թե «կարողացա բունտը և անհնազանդությունը վերջացնել միայն փայտերով, այլապես բանվորները կարող էին վարպետներին և զինվորական փոքրիկ ջոկատը կացիններով կոտորել...»։ Այդ դեպքն արձագանք է գտնում Փամբակի բնակչության մեջ և բողոքի ատիթ տալիս։

Նման իրադարձությունները, իրենց հերթին, չէին կարող չազդել ցարական իշխանավորի վրա, բերել այն համոզման, որ անհրաժեշտ է հրաժարվել վտանգավոր և, դրա հետ միասին, խիստ անարտադրողական հարկադիր աշխատանքի կիրառումից, մանավանդ որ գործարանները վարձակալության էին տրվում տեղական կապիտալիստներին, որով կառավարական օրգանները ազատվում էին ոչ միայն կցված բանվորների դժգոհության թիրախը դառնալուց, այլև բանվորների բավական մեծ չափերի հասնող փախուստի դեպքերից[31]։

Մասնավոր անձերի պատկանող կամ նրանց վարձակալության տրված գործարաններում, հավանորեն նաև պետական ձեռնարկություններում, 50-ական թթ. վերացավ ամրակցված գյուղացիների հարկադիր աշխատանքը։ 0-

---

28 AKAK, т. V, стр. 287.

29 AKAK, т. X, стр. 363.

30 О. Е. Туманян, նշվ աշխ., էջ 182—183։

31 Նույն տեղում, էջ 188։

րինակ, Միխայլովում հույն ձեռնարկատիրոջ կողմից գործարան կառուցելու պետական մանրամասն պայմանների մեջ ոչ մի խոսք չի ասվում աշխատուժի մասին։ Ըստ երևույթին դա համարվում էր նրա մասնավոր գործը[32]։

Նույնը, հավանաբար, վերաբերում է նաև Զանգեզուրի հույն և հայ արդյունաբերողներին (եղբայրք Կոնդուրովներ, Մելիք-Ղարադյոզյան, Մելիք-Փարսադանյան, Խոջամիրով, Մելիք-Ազարյան և այլք) պատկանող ձեռնարկություններին։

Գյուղացիական ռեֆորմին նախորդող տասնամյակներին, մասնավորապես 1850—60-ական թթ., բավական անբարենպաստ տնտեսական պայմաններում գտնվող Երևանի նահանգում ևս զարգանում էին ապրանքադրամական հարաբերությունները։ Հայկական գյուղը աստիճանաբար ներգրավվում էր առևտրա-փոխանակային գործառնությունների ոլորտը։ Ձեռնարդյունաբերական արտադրանքը սկսում էր լայն շուկա դուրս գալ։ Հայ առևտրական կապիտալը ներգրավվում էր արդյունաբերական գործունեության ոլորտը բուն Հայաստանի սահմաններից դուրս։ Այն մեծ հոսք կատարեց հատկապես դեպի Բաքու, որտեղ զարգացող նավթարդյունաբերությունը մեծամեծ շահույթներ էր խոստանում նրան։

* * *

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին այդ երկրամասի առևտրի զարգացման համար նույնպես նոր հնարավորություններ ստեղծեց։ Այդ բանին խթանող ամենակարևոր ազդակը կյանքի և ունեցվածքի ապահովությունն էր։ Եթե պարսկական տիրապետության ժամանակաշրջանում վաճառականների համար երաշխավորված չէր ո՛չ կյանքի, ո՛չ ունեցվածքի ապահովություն ու անվտանգություն, ապա վիճակը բոլորովին փոխվեց, երբ Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին։ Առևտուրը և առևտրականներն այժմ վայելում էին պետության հովանավորությունը, խորտակվում էին ներքին մաքսային պատնեշները, դրամագլուխը գործառնությունների մեջ դնելու լայն հնարավորություններ էին ստեղծվում։ Առևտրական կյանքի զարգացման կարևոր գործոններից էր նաև Անդրկովկասում ռուսական բանակների առկայությունը, որոնց մթերքներ մատակարարելու անհրաժեշտությունը հարստացման նոր աղբյուր էր դառնում։

Առևտրի զարգացմանը առավել ևս խթանեցին անցումը հարկային նոր սիստեմի, այն է՝ բնամթերային հարկի փոխարինումը դրամական հարկով, որը նպաստեց տնտեսության ապրանքայնացմանը, վաճառքի համար տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակումը և մի շարք այլ գործոններ։

Ռուսական կառավարությունը և նրա պաշտոնատարներն Անդրկովկասում խիստ մեծ նշանակություն էին տալիս առևտրի զարգացմանը և բազմաբնույթ միջոցառումներ էին նախագծում ու մշակում՝ խրախուսելու համար առևտրական դասին և նրա գործունեությունը։ Այսպես, 1812 թ. Վրաստանի

32 Տե՛ս В. Ратуки, Крестьянская реформа..., стр. 135—136.

կառավարչապետ մարկիզ Պաուլուչչին առաջարկում էր, ելնելով վաճառականների վարած առևտրի ծավալից, նրանց շնորհել Թիֆլիս քաղաքի մոքալաքի կամ քաղքենու, անգամ ազնվականի կոչում[33]։ Այս ծրագիրը իսկապես որ մեծապես կարող էր խթանել անդրկովկասյան առևտրի զարգացմանը։

Դեռ նոր էին Երևանի և Նախիջևանի խանություններն ազատագրվել պարսկական լծից, երբ Պասկևիչը հրահանգեց տեղական իշխանություններին հոգալ Երևանում և Սարդարապատում գրավված բամբակի շահավետ վաճառքի մասին։ Մյուս կողմից նա առաջարկում էր խրախուսել տնտեսական այդ կարևոր կուլտուրայի մշակումը բնակչության կողմից, հավաքել արտադրված բերքի մի մասը «իբրև տուրք», համաձայն տեղական վաղեմի սովորության, և իրացնել այն։ Նա տեղական իշխանությունների ուշադրությունն էր հրավիրում նաև Կողբում աղի հանույթն ընդլայնելու անհրաժեշտության վրա, որպեսզի պետք եղած քանակությամբ աղ արտադրվի և արտահանվի առաջին հերթին Վրաստան։

Ռուսական իշխանությունները ամեն կերպ խրախուսում էին հայ վաճառականների գործուն մասնակցությունը երկրամասի տնտեսական կյանքին, և, միաժամանակ, նշում նրանց խաղացած կարևոր դերն ու հաջողությունները այդ բնագավառում։ Արդեն երեսնական թվականներից ցարական պաշտոնական աղբյուրները հաստատում էին այն իրողությունը, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն են առել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը», որ նրանք «կատարում են ամեն տեսակի հանձնարարություններ. գրեթե բոլոր վարձակալությունները նրանց ձեռքին են, նրանք են վերցնում բոլոր կապալները»[34]։ 1840—50-ական թթ. այդ նույն բանն էր շեշտում փոխարքա Մ. Ս. Վորոնցովը, երբ գրում էր Նիկոլայ I-ին, թե հայերը Անդրկովկասում կառավարության գլխավոր ուժերն են կապալների և վարձակալությունների խնդրում[35]։

Ռուսական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից կապալառության սիստեմը լայնորեն օգտագործվում էր ոչ միայն զորքերի մատակարարման և պետական հիմնարկների համար շինություններ կառուցելու գործում. կապալով էին տրվում շատ դեպքերում նաև տուրքերի գանձումը, արդյունատեղիները, արդյունաբերական որոշ ճյուղեր և այլն։ Այսպես, 1808 թ. Բաքվի տուրքերը չորս տարի ժամանակով կապալով տրվում էին Հայտանի հայ վաճառական շուշեցի Բաբա Թառումյանին։ Որպես կապալավարձ վճարելով տարեկան 112.500 ռուբլի, նա դրա դիմաց իրավունք էր ստանում գանձել ավելի քան կրկնակին, այսինքն՝ 251.430 ռուբլի[36]։ Հայերի ձեռքին էր գտնվում նաև նավթի, ձկան, աղի, մետաքսի արտադրության կապալը։

Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական կյանքում այս շրջանում հատկապես հայ կապալառուների խաղացած դերի վկայությունն է այն ու-

---

33 АКАК, т. V, стр. 17.

34 «Обозрение Российских владений за Кавказом», ч. I, СПб., 1836, стр. 199.

35 АКАК, т. X, стр. 97.

36 АКАК, т. V, стр. 865.

շադրությունը, որ փոխարքա Վորոնցովը հանդես էր բերում կապալառուներ Արշակունու, Միրիմանյանի, Սվեշնիկյանի, Միրզոյանի նկատմամբ և 1854 թ. իր հաջորդին հանձնարարում հատուկ ուշադրություն դարձնել նրանց վրա, որպես կառավարության համար պիտանի և օգտակար մարդկանց[37]: Հայ կապալառուներից շատերը ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի տարիներին իրենց ձեռքն էին վերցրել ամբողջ զորքի մատակարարումը: Սակայն սրանց գործունեությունը Երևանի նահանգում լայն ծավալում չստացավ, որովհետև այդ նահանգը դուրս մնաց առևտրական տարանցիկ ճանապարհների շրջագծից:

1840-ական թթ. Արևելյան Հայաստանի առևտուրը սկսում է որոշակի աշխուժացում ապրել: Արտահանության հիմնական առարկաները մնում էին տեղում արտադրվող գյուղատնտեսական մթերքները՝ բամբակը, բրինձը, չոր մրգերը և այլն: Արտաքին առևտրական կապերը բավական աշխույժ էին Պարսկաստանի և Թուրքիայի հետ: Վերջինիս հետ առևտուրը կատարվում էր Ծրգովի և Ալեքսանդրապոլի մաքսային վարչությունների միջոցով: 1840-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիա էր արտահանվել մոտ 800.000 ռուբլու (արծաթով) և ներմուծվել շուրջ 850.000 ռուբլու (արծաթով) ապրանք: Արտահանվել էին բամբակ, բրինձ (400.000 ռ. գումարով), չմշակված կաշիներ, ծխախոտ և այլ ապրանքներ: Ներմուծվել էր շինարարական փայտ, անասուններ, աղած ձուկ, հաց և այլն:

Բավական ծավալուն էր քաղաքային առևտուրը, որի հիմնական օջախներն էին Երևանը և Ալեքսանդրապոլը: Թուրքիայի հետ կատարվող առևտրի հանգուցակետը Ալեքսանդրապոլն էր: 1863 թ. հիշյալ քաղաքի վրայով Թուրքիա էր արտահանվել 350.000 ռուբլու (արծաթով) արտադրանք: Երևանի առևտուրը հիմնականում կենտրոնացած էր քաղաքի շրջանակներում, բայց երբեմն ծավալվում էր մինչև Թիֆլիս և դրանով իսկ դուրս գալիս անդրկովկասյան շուկա:

Ըստ վիճակագրական տեղեկությունների, Երևանի նահանգի հինգ քաղաքների ներքին առևտրի շրջանառության գումարը կազմում էր 969.000 ռուբլի, իսկ քաղաքներից և նահանգից դուրս կատարվող առևտրինը՝ 50.000 ռուբլի: Ամբողջ առևտրի գումարը կազմում էր 1.819.000 ռուբլի[38]:

Եթե 1820-ական թթ. վերջերին Հայկական մարզում ապրանքաշրջանառության տարեկան միջին գումարը կազմում էր 4 մլն. ռուբլի, ապա 1864 թ. Երևանի նահանգում այն կազմում էր շուրջ 10 մլն. ռուբլի, այսինքն՝ ավելացել էր 2,5 անգամ[39]: Զարգացող առևտրական գործարքներին սկսում է իր մասնակցությունը բերել նաև գյուղացիությունը: 1865 թ. քաղաքներում առևտուր անելու համար գյուղացիները վերցրել էին 305 վկայական, որից առաջին կարգի՝ 6, երկրորդ կարգի՝ 10 և երրորդ կարգի՝ 289: Սրանց առևտուրը գլխավորապես կենտրոնացած էր Երևանում, Շուշում և Ալեքսանդրապոլում, ընդ որում Երևանում առևտուր անելու համար վերցված էր 105 վկա-

37 ԱԿԱԿ, т. X, № 71.

38 «Сборник статистических сведений...», т. I, отд. I, стр. 28—60.

39 Տե՛ս М. Адонц, նշվ. աշխ., էջ 217:

յական, Ալեքսանդրապոլում՝ 116։ Մյուս քաղաքներից Նախիջևանի համար տրված էր՝ 60, Օրդուբադի համար՝ 12 վկայական և նույնքան էլ Նոր Բայազետի համար։

Այդ վկայականները տրված էին բամբակ վաճառելու իրավունքի համար՝ Երևանում և Նախիջևանում, մրգերի վաճառքի համար՝ Երևանում և Օրդուբադում, խոշոր եղջերավոր անասունների, կաշիների, օճառի և օղու համար՝ Ալեքսանդրապոլում, մետաքսի համար՝ Օրդուբադում, աղի համար՝ Նախիջևանում, այգեգործության, հողագործության և բանջարաբուծության արդյունքների համար՝ Նոր Բայազետում[40]։

Անդրկովկասը կայսրության համար շահավետ դարձնելու մտահոդությունը դրդում էր երկրամասի իշխանություններին բարյացակամ վերաբերմունք ցույց տալ դեպի տեղական առևտրական դասի գործունեությունը։ Բայց երբ տեղական, մասնավորապես հայ վաճառականները, փորձում էին ռուսական կապիտալի գործունեության շրջանակները սահմանափակել, հանդիպում էին իշխանությունների վճռական հակահարվածին։

Այսպես, 1847 թ. Մոսկվայի մի շարք խոշոր գործարանատերեր և վաճառականներ Թիֆլիսում հիմնեցին «առևտրական դեպո», որի միջոցով Մոսկվայի, Վլադիմիրի և Նիժնի Նովգորոդի տոնավաճառի ապրանքները վաճառահանվում էին Անդրկովկաս։ Այդ «դեպոն» միաժամանակ այստեղից Ռուսաստան էր արտահանում տորոն, մետաքս, բամբակ, սոդա և այլն։ Հենց այդ նույն տարում հայ վաճառականները փոխարքայի մոտ միջնորդություն հարուցեցին, որպեսզի «դեպոյին» արգելվի մանրածախ առևտրով զբաղվել։ Նրանց խնդիրը ոչ միայն մերժվեց, այլև վերջիններիս հասկանալ տվեցին նրա դիմումի անտեղի լինելը[41]։ Չնայած կառավարության հովանավորությանը, ստեղծված աննպաստ պայմանների պատճառով 1852 թ. «դեպոն» փակվեց։

Նույն գիծն էր տարվում նաև մաքսային քաղաքականության բնագավառում, երբ բախվում էին ռուսական և տեղական առևտրական դասի շահերը։ 1821 թ. ռուսական կառավարությունը մտցրեց մաքսային բարձր տարիֆներ, որոնցով գրեթե արգելվում էր արտասահմանյան արդյունաբերական այնպիսի ապրանքների ներմուծումը Ռուսաստան, որոնց արտադրությունն արդեն սկսված էր տեղում։ Ռուսական արդյունաբերական կապիտալի անարգել զարգացումն ապահովող այդ միջոցառումը Անդրկովկասի վրա չտարածվեց, քանի որ ռուսական արդյունաբերությունը դեռևս անկարող էր սպասարկել նրա պահանջները։ Մերձավոր և Միջին Արևելքի շուկաներում ռուսական կապիտալը դեռևս չէր կարող մրցել եվրոպական կապիտալի հետ։

Այդ պատճառով էլ դեռևս 1821 թ. վերջերին Անդրկովկասի համար մշակված էր մաքսային քաղաքականության բոլորովին այլ գիծ, որը շահավետ պայմաններ էր ստեղծում եվրոպական ապրանքները Անդրկովկաս ներմուծելու և ապա Պարսկաստան ու Թուրքիա արտահանելու համար։ Անդրկովկաս ներմուծվող ապրանքներից գանձվում էր 5 տոկոս մաքս, իսկ

---

40 Նույն տեղում, էջ 212։

41 АКАК, т. X, стр. 188—195.

Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրանզիտ։

Մաքսային նման քաղաքականության շնորհիվ հետագա տասը տարիների ընթացքում կրկնապատկվեց Անդրկովկասի արտաքին առևտրի շրջանառությունը, որի ընդհանուր գումարը հասավ 2462700 ռուբլու[42]։ Արտաքին առևտրի ասպարեզում գլխավոր դերը խաղում էին հայ վաճառականները, որոնք առևտրական կապեր հաստատեցին եվրոպական խոշոր շատ քաղաքների հետ և, մասնավորապես, Լայպցիգի տոնավաճառի հետ։

Բայց 1821 թ. այդ արտոնյալ տարիֆը և դրա շնորհիվ եվրոպական ապրանքների առատ ներհոսքը Անդրկովկաս, մասամբ նաև Ռուսաստան, բացասական նշանակություն ունեցավ ռուսական արդյունաբերական բուրժուազիայի համար։ Ուստի և վերջինս համառորեն ձգտում էր այն բանին, որպեսզի Անդրկովկասի վրա ևս տարածվի մաքսային տարիֆը՝ կազմված հովանավորողական մաքսային քաղաքականության ոգով, որը նպաստում էր ռուսական բուրժուազիայի շահերին և անտեսում անդրկովկասյան բուրժուազիայի և նրա գլխավոր ներկայացուցչի՝ հայ առևտրական կապիտալի շահերը։ Ռուս բուրժուազիային 1821 թ. մաքսադրույքի վերացումը հաջողվեց միայն շնորհիվ տևական համառ պայքարի և ֆինանսների մինիստր Կանկրինի աջակցության։ «1831 թվականի կանոնադրությամբ Անդրկովկասը մըտցվեց Նիկոլայ 1-ի կառավարության հովանավորողական մաքսային քաղաքականության շրջանագծի մեջ և դարձավ ռուսական արդյունաբերության արտադրանքի վաճառահանման ներքին շուկա»[43]։

Վերոհիշյալ կանոնադրությամբ 5 տոկոս մաքսային դրույքը ուժի մեջ թողնվեց միայն ասիական ապրանքների ներմուծման համար։ Եվրոպական ապրանքների ներմուծումն Անդրկովկաս թույլատրվում էր միայն սևծովյան նավահանգիստներից։ Այդ ապրանքներից մաքս վերցվում էր ընդհանուր հիմունքներով, համաձայն Ռուսաստանում սահմանված բարձր մաքսային տարիֆների։ Արգելվում էր արտասահմանից ներմուծել ռուսական արդյունաբերության համար ոչ ձեռնտու ապրանքներ։ Արտասահմանյան ապրանքների ներմուծումը Անդրկովկասի վրայով Ռուսաստան՝ խստիվ արգելվում էր։ Բայց միաժամանակ թույլատրվում էր առանց մաքսի Անդրկովկասից արտածել ռուսական և տեղական ապրանքներ։

Ապարդյուն անցան Անդրկովկասի վաճառականների և առաջին հերթին հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների բոլոր միջնորդությունները այս կամ այն ձևով երկարաձգել կամ գեթ մասամբ պահպանել նախորդ մաքսային սիստեմը։ Սակայն 1831 թ. գրեթե արգելիչ մաքսային տարիֆը չտվեց այն արդյունքները, ինչ որ ակընկալում էին նրանից ցարական կառավարությունը և ռուսական բուրժուազիան։ Այն ավելի քան բացասական հետևանքներ ունեցավ, քանի որ Թիֆլիսի փոխարեն Եվրոպայի և Միջին Արևելքի միջև կատարվող առևտրի կենտրոն դարձավ Տրապիզոնը։ Ան-

---

42 Տե՛ս М. А. Адоиц, նշվ. աշխ., էջ 222։

43 М. К. Рожкова, Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, М., 1949, стр. 93.

հրաժեշտություն առաջացավ միջոցներ ձեռնարկել նախկին իրավիճակը վերականգնելու համար։ Ուստի և ռուսական կառավարությունն այն եզրակացությանը հանգեց, որ անհրաժեշտ է 1831 թ. արգելիչ մաքսային սիստեմը վերացնել և եվրոպական ու ասիական տրանզիտային առևտրի համար նոր կանոններ հաստատել, ինչ և արվեց 1846 թ. վերջերին։

Նոր կանոնադրությամբ թույլատրվում էր եվրոպական և ասիական ապրանքների տրանզիտն Անդրկովկասի վրայով, իջեցվում էին եվրոպական ապրանքներից գանձվող մաքսերը։ Բայց նախկին նպաստավոր իրավիճակը այլևս չվերականգնվեց։ Արևմտաեվրոպական տերություններին հաջողվել էր Տրապիզոնի վրայով շահավետ առևտրական ուղիներ հարթել դեպի Մերձավոր ու Միջին Արևելքի շուկաները։ Առավել ևս Ռուսաստանի համար աննպաստ իրավիճակ ստեղծվեց Ղրիմի պատերազմի տարիներին, երբ դադարեց եվրոպական ապրանքների ներմուծումն Անդրկովկաս։

Ցարական կառավարությանը հետզհետե չհաջողվեց ռուսական կապիտալի համար ձեռնտու պայմաններ ստեղծել Անդրկովկասում և տեղական կապիտալը ամբողջությամբ ծառայեցնել պետության շահերին։ Առավել ևս մեծ դժվարությունների հանդիպեց նա Թուրքիայի և Պարսկաստանի շուկաների նվաճման ասպարեզում եվրոպական կապիտալի հետ մրցելիս։ Այսպիսով, մինչռեֆորմյան տարիներին ռուսական կապիտալին չհաջողվեց ամբողջովին տիրանալ անդրկովկասյան շուկային։ Այստեղ բավական մեծ դեր էր խաղում եվրոպական կապիտալը։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, Կովկասի և Անդրկովկասի տնտեսական նվաճումը ռուսական բուրժուազիայի կողմից տեղի ունեցավ միայն հետռեֆորմյան տարիներին։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՑԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 1830—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՌԵՖՈՐՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

XIX դարի երկրորդ քառորդին սուլթանական Թուրքիան շարունակում էր մնալ որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ տնտեսապես իրար հետ քիչ կապված կիսանկախ փաշայություններ ու դերեբեյություններ։ Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանում կենտրոնական իշխանությունը կորցրել էր իր նախկին ազդեցությունը. սուլթանները մտահոգված էին կայսրության կենտրոնացման խնդրով։ Թուրքիայի ներսում հզորացող կենտրոնախույս ուժերի ոչնչացումը, անկախություն նվաճած իշխանությունների վերացումը, երկրի շատ նահանգների վերանվաճումը հրամայական պահանջ էին դարձել։ Ռեֆորմների խիստ կարիք էր զգացվում։

XIX դարի առաջին քառորդի մասնակի բարենորոգումները, կայսրությունում ծավալվող հարատև զինաբախումները կանխելու, կենտրոնախույս ուժերը հպատակեցնելու, բանակն ու ոստիկանությունը վերակազմելու սուլթանների բազմաթիվ փորձերը քիչ արդյունք էին տվել։ Այդ պատճառով էլ 1830—50-ական թթ. հրապարակվում են նոր ռեֆորմներ, որոնց իրագործման համար ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել։

Պետության հենարաններ էին դարձել այն նոր հողատերերն ու սեղանավորները, որոնք կալվածքներ ու հարստություն էին դիզել հարկերի կապալառման, առևտրա-վաշխառուական ճանապարհով։ Սակայն կալվածքների ու իրավունքների ընդարձակման սրանց ցանկությանը դիմագրավում էր ֆեոդալական հին վերնախավը, ուստի և առաջինները սուլթանին համոզում էին զենքի ուժով հպատակեցնել ապստամբ հովտատերերին, քրդական մանր ու խոշոր խաներին, բեկերին, ապակենտրոնացման քաղաքականություն վարող թուրք փաշաներին։ Ռեֆորմներով խիստ շահագրգռված էին արդյունաբերողներն ու առևտրականները, որովհետև կյանքի ու գույքի ապահովության բացակայության պայմաններում անհնար էր ընչասեր ֆեոդալներից պաշտպանել սեփական ունեցվածքը, քարավանները փրկել կողոպտվելու վտանգից, տնտեսապես կամրջել երկրի ասիական ու եվրոպական մարզերը։

Տեղական ֆեոդալներից դժգոհ էին նաև նրանց կամայականություններից տուժող գյուղացիությունն ու քրիստոնյա բնակչությունը։ Պետության և ֆեոդալների հակամարտության և դրան հաջորդող ու անցկացվելիք ռեֆորմների շրջանում գյուղացիական զանգվածները ամենից ավելի էին տուժում ֆեոդալական մասնատվածությունից, ուստի և շահագրգռված էին պետության վարած կենտրոնացման քաղաքականությամբ։ Նման պայմաններում կայսրության կենտրոնացման փորձեր սկսեց Մահմուդ II-ը, որի խորհրդականն էր Մեհմեդ Ռեշիդ փաշան՝ Թուրքիայի եվրոպականացման կողմնակիցների պարագլուխը։ 1826 թ. ոչնչացնելով ենիչերիներին, եվրոպայից հրավիրված ռազմագետների օգնությամբ սուլթանը վերակառուցեց կայսրության ցամաքային և ծովային զինված ուժերը։

Այս վերափոխումները Մահմուդ II-ին հնարավորություն տվեցին սկսել քրդական դերբեյությունների նվաճման և կամակոր ֆեոդալների հպատակեցման գործը։ Սակայն շուտով սուլթանի առջև նոր խնդիրներ ծառացան։

Հունաստանի անկախությունից հետո, Թուրքիայի տիրապետության տակ մնացել էին էգեյան ծովի հունաբնակ երկու կղզի՝ Կանդիան և Սամոսը։ 1831 թ. այս կղզիների բնակիչների ազատագրական պայքարն ավելի ուժեղացավ։ Չկարողանալով սեփական ուժերով հպատակեցնել ապստամբներին, որոնց հովանավորում էր Եվրոպան, սուլթանը դիմեց եգիպտոսի փոխարքա Մուհամեդ Ալիի օգնությանը, որից մերժում ստացավ։ Տեղի ունեցան, սակայն, անսպասելի այլ իրադարձություններ։

Օգտագործելով Ալժիրի բնակչության հակաթուրքական տրամադրությունները, Ֆրանսիան առանց մեծ դժվարությունների նվաճեց այդ երկիրը։ Ապստամբում էր Ալբանիան, անկախություն ձեռք բերելու փորձեր էին անում Սիրիան ու Իրաքը։ Սակայն թուրքական կայսրության ամենից ուժեղ թշնամին դարձավ մարտունակ բանակ ունեցող եգիպտոսը՝ փոխարքա Մուհամեդ Ալիի և նրա որդի Իբրահիմ փաշայի գլխավորությամբ։

1832 թ. օգոստոսի 11-ին Իբրահիմ փաշան գրավեց Ադանան, առանց դիմադրության հանձնվեց նաև Կիլիկիայի մեծ մասը՝ բացի Զեյթունից ու Կոզան-օղլուների մի քանի բերդամրոցներից։ Հալեպի Մեհմեդ փաշան ստիպված նահանջեց Մալաթիա, Իկոնիայի նահանգապետ Ալիշն անցավ Կիպրոս։ Տարեվերջին արդեն եգիպտոսի փոխարքայի տիրապետության տակ էին Կիլիկիան ու Սիրիան։

Դրությունը փրկելու համար Մահմուդ II-ը 1832 թ. օգոստոսի 31-ին Մեհմեդ Ռեշիդ փաշային նշանակեց մեծ վեզիր, նրան տվեց զորքի գլխավոր հրամանատարությունը և հանձնարարեց կասեցնել եգիպտական բանակի առաջխաղացումը։

Ռեշիդ փաշան վերակազմեց բանակը, զորքի թիվը հասցնելով 80 հազարի, պատրաստվեց դիմադրության։ Սակայն Իբրահիմ փաշան 1832 թ. մայիսի 27-ին գրավեց Ակկան, ապա Դամասկոսը, Հալեպը, Հոմսը։ Կայսերական բանակը Անտիոքի ու Ալեքսանդրիայի միջև ընկած Բեյլանի դաշտում եգիպտացիների հետ ունեցած ճակատամարտում պարտություն կրեց և դեկտեմբերի 31-ին Ռեշիդ փաշան գերի ընկավ։

Եգիպտական բանակը առաջ էր ընթանում, նպատակ ունենալով վերջին հարվածը տալ Կոստանդնուպոլսին, կործանել Թուրքական կայսրությունը։

Կայսրության համար ստեղծված այսպիսի ծանր պայմաններում սուլթանի խնդրանքով փոխ-ծովակալ Լազարևի հրամանատարությամբ ռուսական մի նավախումբ դուրս եկավ Բոսֆոր և իր պաշտպանության տակ առավ մայրաքաղաքը. Անգլիան ու Ֆրանսիան վախենալով, որ Ռուսաստանը օգտագործելով նպաստավոր առիթը կարող է ամրանալ նեղուցներում, եգիպտական հարկադրեցին Թուրքիայի հետ հաշտություն կնքել։ Սակայն մինչև Բոսֆորից ռուսական դեսանտի հեռանալը՝ 1833 թ. հուլիսի 8-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Ունքյար-Իսքելեսի պաշտպանական-դաշնակցային պայմանագիրը՝ 8 տարի ժամկետով։ Այդ պայմանագրով Թուրքիան պարտավորվեց նեղուցները փակել ոչ սևծովյան պետությունների ռազմական նավերի առաջ։ Այդպիսով, եթե ռուսական զինված ուժերի միջամտությունը թուրք-եվրոպական պատերազմին Օսմանյան կայսրությանը փրկեց կործանումից, ապա Ունքյար-Իսքելեսի դաշնագիրը նպաստեց միառժամանակ Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցության նկատելի ուժեղացմանը։

Եգիպտական գերությունից ազատվելուց հետո Ռեշիդ փաշան նշանակվեց Սեբաստիայի կառավարիչ. սուլթանը Սեբաստիան դարձրեց կառավարական զորքի բանակատեղի և հանձնարարեց Ռեշիդ փաշային հպատակեցնել Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի քրդական ապստամբ դերեբեյներին, որոնցից շատերը 1830—34 թթ. օգնության ձեռք էին մեկնել եգիպտական զորքերին։

Մ. Ռեշիդ փաշան նախ համալրեց բանակը, կազմեց գործողության ծրագրեր և 1834 թ. գարնանը սկսեց իր արշավանքը։ Սև ծովից դեպի Պարսկաստան տանող առևտրական մայրուղին մաքրելու նպատակով նա անցավ Տավրոսի լեռները, այնտեղից Տրապիզոն, ապա Էրզրում ու Բայազետ, ոչընչացրեց մի շարք ավազակախմբերի, նշանակեց պահակակետեր, դրանով իսկ շահելով Հայաստանի առևտրականների, արհեստավորների համակրանքը։

Քսան հազարանոց թուրքական բանակը, փաստորեն, վերանվաճեց քրդական բեկերին հպատակված շրջանների մեծ մասը[1]։ Առաջին և լուրջ դիմադրությունը եղավ Ռևանդուզում։ Չնայած քրդական աշիրեթների կատաղի դիմադրությանը, Ռեշիդի բանակը հաղթանակ տարավ, գերեվարեց քուրդ բեկին և ուղարկեց Կ. Պոլիս։ Ռևանդուզի բեկը կաշառվելով սուլթանի խոստումներով վերադարձավ Ջեզիրե և իր կողմնակից ցեղախմբերով միացավ կառավարական բանակին։ Նրա դասալքումը, սակայն, ավելի բորբոքեց թշնամությունը, և պատերազմը երկու կողմից առավել արյունալի դարձավ։

1836 թ. Ռեշիդ փաշայի գլխավորությամբ Խարբերդի մոտակայքում տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ։ Քրդերի հզոր ցեղապետ Չոթելզադե Հաճի խանը, մեծ բազմությամբ, երկու ամիս շարունակ կատաղի դիմադրում էր օսմանյան բանակին։ «...Տեղացի հայերը եռանդուն աջակցություն ցույց տվին Ռաշիտ փաշին, մինչև որ նա ... կարողացավ... Եփրատն անցնելով՝ քար-

1 Տե՛ս А. Карцов, Заметки о курдах, Тифлис, 1896, стр. 15—16.

րերդ մտնել»[2]։ Խարբերդի ու Չարսանջակի քուրդ բեկերը կալանավորվեցին և խիստ պատժվեցին։ «Կրակով ու արյունով» Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններով անցնող Ռեշիդ փաշան բարբարոսության դեմ կռվում էր բարբարոսաբար։ Նշենք, սակայն, որ հաշվի առնելով կայսրության շահերը, նա օգտագործում էր տեղի հայ բնակչությանը և նրանց նկատմամբ բարյացակամ էր տրամադրված։

Հավաքելով Խարբերդի հայ մեծատուններին, Ռեշիդը նրանց առաջարկում է, անջատվել քրդերից, թողնել գավառը և տեղափոխվել Դիարբեքիր, որտեղի քրդերը կտարագրվեին Չարսանջակ և Դերսիմ։ Նա խոստանում էր զենք բաժանել հայերին, նույնիսկ հայ փաշա նշանակել։ Առաջարկը դրվում է հայ վերնախավի երեքօրյա խորհրդակցության քննարկման և մերժվում։ Խարբերդի ու չարսանջակցի հայերը մնում են տեղերում, իսկ քրդերից տարագրվում են միայն ապստամբության մասնակիցները։

Սուլթանին ձեռնտու էր թուրք փաշաների և քուրդ ապստամբ բեկերի հպատակեցումը, բայց ոչ ոչնչացումը։ Տարագրվածներին նա հողեր, արոտավայրեր էր բաշխում, փոխարենը պահանջելով զինված զորաջոկատների կազմակերպում՝ կայսերական բանակում ծառայելու համար։ Սակայն պետք է հպատակեցվեին նաև Բիթլիսը, Բայազետը, Վասպուրականը։ Ռեշիդը ձգտում էր իրականացնել իր ծրագրերը, բայց 1837 թ. հունվարին նա մահացավ։

Ռեշիդին հաջորդեց չերքեզ Հաֆըզ փաշան, որը շարունակեց արշավանքն Արևմտյան Հայաստանում։ Նա այդ ընթացքում 15 հազար քուրդ ոչնչացրեց, վեց հազար ընտանիք գերեվարեց։ Դիարբեքիրում սրանց հողեր տվեց ու հիմնավորեց այստեղ, զորանոցներ կառուցեց, ապա զորքի թիվը հասցնելով 24 հազարի, անցավ Ալաճա-դաղ։

Կառավարությանը չենթարկվող քրդական բազմաթիվ քոչվոր աշիրեթներ բարձրացել էին Անտիտավրոսյան Ալաճա-դաղի բարձունքները և ամուր դիրքեր գրավելով սպասում էին թուրքական բանակին։ 1837 թ. օգոստոսի 8-ին 12 ժամ տևող ճակատամարտում թուրքական բանակը 800 զոհերի գնով գրավեց լեռը։ Քուրդ ապստամբները 1500 մարդ կորցնելով՝ անձնատուր եղան։

Չերքեզ փաշան շատ դաժան վարվեց քրդերի հետ։ Նա գերեվարեց 4000 քրդերի, որոնց իջեցնելով լեռներից, Ալաճա-դաղի ստորոտների հրակեզ ավազուտների միջով, գրեթե մերկ քշեց դեպի Մալաթիա ու շրջակա գյուղերը՝ ստիպելով նստակեցության անցնել։ Եվրոպացի ուղևոր ականատեսի վկայությամբ «արցունքներն ու հեկեկանքները կիներուն, լացը ծծկեր տղոց, կրտոր-կտոր կընեին սիրտդ։ Այս չորս հազար քյուրտերը, ամենասոսկալի տառապանքներու մատնված, երևակայել կուտան ինծի Տանդեի Դժոխքին դատապարտյալներուն տանջանքը»[3]։ Ժողովրդական զանգվածներին, հատկապես քրիստոնյա աշխատավորությանը այնքան վիշտ ու տառապանք պատճառող քուրդ դերեբեյներին, մանր ու խոշոր բեկերին ծնկի բերելը թեպետ դրական քայլ էր, սակայն կառավարությունը չափից ավելի դաժան էր վարվում քոչ-

---

2 Անդրեաձիկ, *Տերսիմ, ճանապարհորդություն և տեղագրություն*, Թիֆլիս, 1901, էջ 53։

3 «*Մանզոմա*», 1912, սեպտեմբեր 11/24, № 2629։

վորական կյանքով ապրող քրդերի հետ։ Տասը տարվա ընթացքում Հարավային Հայաստանի ու Կիլիկիայի քրդահպատակ շրջանները վերածվել էին արյան ծովի։ Արևմտյան Հայաստանի քրդահպատակ, շերտընդմեջ քրդերով բնակեցված գավառները ևս դաժան ավերածության ենթարկվեցին և տնտեսապես քայքայվեցին։ Հայ ժողովուրդը ընկավ ծանր վիճակի մեջ։

1830-ական թթ. վերջերին կրկին սրվեցին մեծ տերությունների միջև եղած հակասությունները Կոստանդնուպոլսի և նեղուցների շուրջը։ Օգտվելով անգլո-ֆրանս-ռուսական հակամարտություններից, Պրուսիան Թուրքիա է ուղարկում ռազմական մասնագետներ, մեծ թվով խորհրդականներ։ 1837 թ. Անատոլիա է գալիս Հելմուտ ֆոն Մոլտկեն, գործակցում Հաֆըզ փաշային, վերակառուցում և համալրում թուրքական բանակը։ Գերմանական խորհրդականների օգնությամբ թուրքական զորաջոկատները հպատակեցնում են Սինջար գավառը և շարունակում արշավանքը[4]։ Ապա նրանք անցնում են Բարձր Հայք, արյունահեղությամբ հնազանդեցնում քրդական մանր ցեղախմբերին և 1838 թ. վերադառնում Մալաթիա։ Սուլթանի կողմնակիցները նպատակ ունեին այստեղից անցնել Կիլիկիա և ապա արշավել դեպի Եգիպտոս՝ Մուհամեդ փաշային վերջնականապես ընկճելու համար։ Բայց մինչ այդ, անհրաժեշտ էր ամրապնդել թիկունքը, բարձրացնել բանակի մարտունակությունը, որոշ հանգիստ տալ նրան, կանխել տարածվող հիվանդությունները։ Թուրքական փաշաները բեկերին, թիմարների, զեամեթների, խոշոր կալվածքների տեր աղաներին զրկում էին քաղաքական, վարչական իրավունքներից և սրանց տեղը նշանակում մայրաքաղաքից առաքված, կառավարությանը հավատարիմ նոր կառավարիչներ՝ սանջակբեյեր, կայմակամներ։

Տակավին նորակազմ, փոքրաքանակ բանակը ի վիճակի չէր իհարկե իսկույն հպատակեցնել Բիթլիսի, Վասպուրականի, Տարոնի քրդական ռազմունակ խոշոր ցեղապետերին, ինչպես նաև ասորիներին, մինչդեռ առանց այդ խնդիրը լուծելու չէր կարելի արշավել Եգիպտոս։ Եվ ահա սուլթանի կողմնակից փաշաները դիմում են դիվանագիտական միջոցների։ Նրանք իրենց մոտ են հրավիրում Բիթլիսի, Հեքյարիի, Ջեզիրե-Բոհտանի, Մոկսի և այլ գավառների քուրդ դերեբեյներին, հավաստիացնում են, որ ճանաչում են վերջիններիս իշխանությունը, անկախության ֆերմաններ են բաժանում և փոխարենը պահանջում ձևական հպատակություն։ «Սուլթան Մահմուտը յուլեմաներև կազմված ժողով մը կղրկե Հայաստան և Քյուրդիստան, կգծե ամեն մեկ տերե-պեյիի իշխանության սահմանը, ու կըճանչնա այդ իշխանությունները իրավասու՝ ամեն մեկը իր սահմանին մեջ։ Տերե-պեյական իշխանությունները այսպիսով է, որ կունենան իրենց անկախության ֆերմանները»[5]։ Բիթլիսը, Հեքյարին, Վանը, Բոհտանը, Բայազետը, Մոկսը, Շատախը շարունակում էին պաշտպանել իրենց նախկին արտոնությունները։

Հաֆըզ փաշան զորքերի թիվը հասցնելով 70 հազարի, Մալաթիայից անցավ Կիլիկիա և պատրաստվեց ճակատամարտի եգիպտական փոխարքայի

4 Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ*, Երևան, 1955, էջ 80։ Տե՛ս նաև *Trotter*, Мало-Азиатские курды, Тифлис, 1886, стр. 24.

5 Հ. Շահպազյան, *Քուրդ-հայ պատմություն*, Կ. Պոլիս, 1911, էջ 64։

դեմ։ 1839 թ. հուլիսի 24-ին Հյունքիսայիին Սիրիայում, Նիզիբի մոտ, տեղի ունեցավ թուրք-եգիպտական բանակների ճակատամարտը[6]։ Սուլթանական զամբաքային բանակը չախչախվեց, նավատորմը կես ճանապարհին հանձնվեց եգիպտացիներին։ Բանակի կորստյան լուրն առնելով, սուլթանը կաթվածահար եղավ ու մահացավ։ Գահ բարձրացավ 16-ամյա, թուլակազմ, սահմանափակ ընդունակություններ տեր Աբդուլ Մեջիդը։ Մայրաքաղաքում ուժեղացավ պայքարը հնամոլ ու նորի կողմնակից թուրքերի միջև։ Պետության թուլությունից օգտվելով Անատոլիայում կրկին գլուխ բարձրացրին քուրդ դերբեյները։

Նիզիբիի պարտությունից հետո Թուրքիայի համար ստեղծվեցին նաև արտաքին անբարենպաստ պայմաններ։ Ներքին ու արտաքին ծանր կացությունից դուրս գալու, կայսրության ինքնուրույնությունը պաշտպանելու միակ միջոցը համարվեց բարեփոխություններ անցկացնելը։

1839 թ. Լոնդոնից Կ. Պոլիս վերադարձավ Մուստաֆա Ռեշիդ փաշան, որին վիճակված էր բացելու «Թանզիմաթի» դարագլուխը։ Օգտվելով նպաստավոր պայմաններից, արտաքին գործերի մինիստր պաշտոնում նշանակված Ռեշիդ փաշան և նրա կողմնակիցները սուլթանին ստիպեցին 1839 թ. նոյեմբերի 3-ին ստորագրել ռեֆորմների ծրագիրը, որը կոչվեց Գյուլխանեի Հաթթը-շերիֆ (Վարդաստանի հրովարտակ)[7]։

Հաթթը-շերիֆը պետության այլազգի և մյուս հպատակներին խոստանում էր պատվի, ունեցվածքի և կյանքի ապահովություն, որոշ փոփոխություններ հարկատվության սիստեմում։ Կայսերահպատակ այլազգիները բանակում ծառայության իրավունք էին ստանում, կանոնավորվում էր զինվորական ծառայության ժամկետը։

Հաթթը-շերիֆի հրապարակումով ռեշիդականները նպատակ ունեին հրապատակ այլազգիների բախտով առերես հետաքրքրվող, իրականում նրանց մանրադրամի տեղ ծառայեցնող եվրոպական պետություններին հավատիացնել, թե կայսրության կյանքում լուրջ փոփոխություններ են եղել, հետևաբար և կարիք չկա Արևմուտքի նոր միջամտություններին։ Սակայն ամենաէականն այն է, որ նրանք շահում էին այլազգիների համակրանքը, վերջիններիս մեջ հենարաններ գտնում կենտրոնախույս տրամադրություններով համակված իրենց ռեակցիոն հակառակորդների՝ թուրք խոշոր հողատերերի ու քուրդ ցեղապետերի դեմ մղվելիք պայքարում։

1856 թ. փետրվարի 18-ին տրվեց նոր հրովարտակ, որը կոչվեց Հաթթը-հումայուն։ Ղրիմի պատերազմից հետո կնքվելիք Փարիզի պայմանագրի նախօրյակն էր այս, երբ ազդարարվում էր նոր դարագլուխ Թուրքիայի պատմության մեջ։ Սակայն, եթե «Թանզիմաթի» առաջին տարբերակը կազմվել էր եվրոպացիներին խաբելու նպատակով, ապա երկրորդ հրովարտակը թելադրված էր արևմտաեվրոպական պետությունների կողմից։ Իրականում Հաթ-

---

6 Տե՛ս Համբարձում Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 22։

7 Տե՛ս А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны. М.—Л., 1937, стр. 34—35.

թը-Հումայունը Հաթթը-շերիֆի շարունակությունն էր։ Այստեղ որոշ հոդվածներ գրեթե նույնությամբ վերակրկնվում էին։

1856 թ. օրենքով այլահավատ հպատակները խոսքով քաղաքացիական իրավունքներ էին ստանում։ Ստեղծվում էին մինիստրություններ, կազմակերպվում էր Օտտոմանյան բանկը, քրիստոնյա ազգերը հոգևոր խորհուրդներ ընտրելու թույլտվություն էին ձեռք բերում։ Իբրև փաստաթուղթ «Թանզիմաթը» իր բովանդակությամբ ժողովրդի մեջ պատրանքներ էր առաջ բերում։ Այդ օրենքները հիմնականում չկիրառվեցին և բռնապետական Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքում էական փոփոխություն չմտցրին։

«Թանզիմաթի» կիրառման փորձ կատարող թուրք կառավարող շրջանները փորձեցին շարունակել քրդական ապստամբ խաների ու բեկերի հպատակեցումը, սակայն հանդիպեցին լուրջ դիմադրության։ Հարավային Հայաստանի մեծ մասի տիրակալ Բեդեր-խան բեյը չհպատակվեց կառավարական զորամասերին և 1843 թ. նույնիսկ ապստամբեց, ձգտելով իր շուրջն համախմբել քրդական մյուս իշխաններին. մի տարի առաջ ապստամբել էր Խան-Մահմուդը՝ առաջինի զինակիցը[8]։

Սուլթանական կառավարությունը տեսնում էր այս ամենը, բայց ելքը փնտրում էր իր քաղաքականության հին զինանոցում։ Նա վարձկանների միջոցով քրդական բեկերին գրգռում էր ասորիների, հայերի ու եզիդների դեմ, կազմակերպել տալիս քուրդ-ասորական ջարդեր։ 1843 թ. Բեդեր խանը և Նուր-Ալլահը հարձակվեցին Հեքյարիի իշխանության մեջ մտնող Թիար լեռնագավառի վրա, կոտորեցին տասը հազար ասորի խաղաղ բնակիչների, արյան մեջ ողողեցին Թխոմա գավառը։ Արևմտյան Հայաստանի քրիստոնյա ազգերն էլ ավելի մեծ ցասումով լցվեցին դեպի Քյուրդիստանի ջարդարար բեկը։ Նրան պակաս չէին ատում եզդիները, նեստորական ասորիները, որոնց ողբը հասավ մինչև ռուսական մայրաքաղաք, զայրույթ առաջացրեց եվրոպական երկրներում։ Սուլթանական կառավարությունը իրար դեմ հանելով հպատակներին, կարծում էր, թե հասել է իր նպատակին և ստեղծել դեպի Արևմտյան Հայաստան ու Փոքր Ասիայի քրդական շրջաններն արշավանք սկսելու հարմար պահ։

1845 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը Սըրրի փաշային հանձնարարում է հրպատակեցնել քուրդ բեկերին։ Այդ ժամանակ պետական զորքերի դեմ զենք էին բարձրացրել նաև Վան-կուլերի զորաջոկատները՝ Թեմուրզադե Մուստաֆա բեյի գլխավորությամբ։ Ռեշիդականները կռվում էին ոչ միայն քուրդ, այլև թուրք ռեակցիոն տարրերի դեմ։

Ապստամբ Վան-կուլերին օգնության ձեռք են մեկնում քրդերի ղեկավար Խան-Մահմուդը և նրա վեց եղբայրները։ Նրանք եկել էին Մոկսից[9], Ըրշտունյաց ու Կորդվաց լեռներից, Աղձնիքից, Հայոց ձորից[10]։ Ապստամբների գլուխն է անցնում Բեդեր-խան բեյը և ջանում համախմբել նրանց ուժերը։

Ապստամբները 1847 թ. որոշում են նվաճել Վանի, Բաղեշի ու Դիարբե-

---

8 Մատենադարան, ձեռագիր 9424, թերթ 273։

9 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 451։

10 Մատենադարան, ձեռագիր 9424, քք. 143—144։

քիրի կուսակալությունները, անջատվել Թուրքիայից և Պարսկաստանի հովանավորությամբ՝ Բեդեր-խան բեյի գլխավորությամբ ստեղծել անկախ Քյուրդիստան։ Հատկանշականն այն է, որ հայերին իրենց կողմը գրավելու միտումով, ապստամբները լուրեր էին տարածել, թե հայկական գավառներին Թուլլ կտան ստեղծել անկախ Հայաստան՝ Ռուսաստանի հովանավորությամբ, իսկ եթե այդ չհաջողվի, Բեդեր-խանը նրանց կհանձնի Քյուրդիստանի «տնտեսական բաժնի մատակարարությունը»[11]։ Հայերի օգնությանը կարոտ էին և կառավարությունը, և քրդական ցեղապետերը, դրա համար էլ նրանց զիջումներ էին անում և խոստումներ տալիս։ Հարավային Հայաստանի հայ ֆեոդալները պաշտպանում էին ապստամբներին, ջանում երկարաձգել իրենց ֆեոդալական իրավունքները։ Նրանցից ոմանք դարձան Բեդեր-խանի խորհրդականները։

Տեղի վերնախավի ջանքերով Շատախ ու Մոկսի հայ ռազմիկների մի մասը միացավ ապստամբներին։ 1847 թ. սրանց միացավ Դըհի հայ ու քուրդ բնակիչների մի ստվար հատված։ Նույն տարում Բեդեր-խանի բազմահազարանոց բանակն արշավեց Վանի վրա, գրավեց քաղաքը և պաշտոնից հեռացրեց թուրք Մուստաֆա բեյին, նոր կառավարիչ նշանակելով քուրդ խան-Մահմուդին։

Ապստամբների հաջողությունները մեծ տագնապ էին առաջացրել թուրքական արքունիքում։ Սակայն քիչ սարսափ չէր տարածվել նաև Վասպուրականի գյուղացիության մեջ, որի կյանքի, ունեցվածքի, պատվի ապահովությունը կախված էր քուրդ առաջնորդների քմահաճույքից։ Քրդահպատակ հայկական շրջաններն արյունահեղ կռիվների ասպարեզ էին։ Քայքայվում էին արհեստն ու առևտուրը, գյուղատնտեսությունն ու անասնապահությունը։ Հայ գյուղացու վիճակը երբևէ այսքան ողբերգական չէր եղել, ինչպես այդ ժամանակ։

Կենտրոնական պետության հրապարակած օրենքները որոշ չափով ձեռնտու էին հայ գյուղացիությանը։ Կարինի, Սեբաստիայի, Տրապիզոնի փաշայություններում մասնակիորեն փոխվել էին հողատիրության նախկին ձևերը, գյուղացիությունը, եռգնման ճանապարհով, մասամբ հող էր ձեռք բերել։ Քրդահպատակ շրջանների գյուղացիները տեղյակ էին դրան և ջանում էին ազատվել քուրդ ֆեոդալների նոր բռնություններից։ Ագրարային ակտերից գրեթե մեկ տասնամյակ անց նրանք ոչ միայն հողեր, իրավունքներ չէին ստացել, այլ եղածն էլ աստիճանաբար կորցնում էին։ Լցվել էր հայ գյուղացու, արհեստավորի, առևտրականի համբերության բաժակը։ Վերադաս իշխանություններին ամենուրեք բողոքագրեր էին հղում, օգնություն աղերսում։

Դավառահայերի բողոքները պոլսահայերին դրդում էին գործողություններ դիմել։ Մատթեոս պատրիարքը երիցս դիմում է Բ. Դռանը, անձամբ այցելում սուլթանին և խնդրում Վասպուրականի ու Տարոնի հայ ազգաբնակչությանն ազատել քրդական ցեղապետերի կամայականությունից։ Նա կառավարությանն զգուշացնում էր, որ եթե հայերին օգնություն ցույց չտան, ապա նրանք ամբողջ գերդաստաններով կգաղթեն Ռուսաստան։

---

11 Հ. Շահպազյան, Քուրդ-հայ պատմություն, էջ 86։

Հայերի ցանկություններն ու պահանջները սերտաճում էին Աբդուլ Մեջիդի ու Ռեշիդ փաշայի պլաններին։ 1847 թ. ամռանը սուլթանի հրամանով, Օսման փաշայի ղեկավարությամբ հատուկ բանակ է ուղարկվում Արևմտյան Հայաստան։ Բ. Դուռը Մատթեոս պատրիարքին առաջարկում է հորդորել տեղի հայերին օգնության հասնելու բանակին, իսկ Օսման փաշային իրավունք է վերապահվում տեղացիներից զինվորագրություն կատարել։

Մատթեոս պատրիարքը հատուկ շրջաբերականներով դիմեց Տիգրանակերտի, Բաղեշի, Բալուի, Կարինի և Վանի հայ ազգաբնակչությանը։ Հայերը առաջին անգամ զինվորական ծառայության էին կանչվում կառավարության կողմից։

1847 թ. աշնանը Օսման փաշան մտավ Մոկս։ Կառավարական բանակը ամբակոծեց Աբդալ-բեյի անառիկ բերդերը, ջարդեց նրա զորաբանակը և գերեվարեց առաջնորդին։ Քյոռ Մուստաֆա փաշան առանց կռվի հանձնվեց։ Երկրորդ ճակատամարտը տեղի ունեցավ Վանի տակ։ Խան-Մահմուդը պաշարեց Այգեստանը։ Հայերը դիմադրում էին խիզախությամբ։ Վասպուրականի քաջարի աշխարհազորը գերի վերցրեց Խան-Մահմուդին և հանձնեց Օսման փաշային։

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Բոհտանի Ջեզիրե գավառում, այնտեղ, որտեղ ապաստանել էր քրդական ցեղախմբերի գերագույն սյուզերեն Բեդեր-խան բեյը[12]։ Կառավարական զորքի և հայ ու եզիդ աշխարհազորայինների անխնա հարվածների տակ Բեդեր-խանը նահանջեց և փակվեց Ջեզիրեի Օրագ բերդում։ Բերդը պաշարվեց և, 17 օր անց, 1847 թ. հուլիսի 20-ին անձնատուր եղավ Օսման փաշային։

1848 թ. սկզբներին ընկճվեց նաև Խոշաբը։ Նույն օրերին նվաճվեց Մուշը։ Բիթլիսի իշխանությունը համառորեն դիմադրում էր։ Օսման փաշայի զորաբանակները հաղթության չհասան։ Օգնության եկավ Ռ. Ռեշիդ փաշան, որը 1849 թ. միայն կարողացավ գրավել Բաղեշը, գերեվարել Շերեֆների տոհմի բոլոր անդամներին և մեկընդմիշտ վերջ դնել նրանց տիրապետությանը։ Բաղեշին միացվեց և նրա ենթակայության տակ դրվեց դաշտային Սասունը։ Գրավված մարզերում բանտարկված բեյերին անմիջապես փոխարինելու էին գալիս թուրք փաշաները։

Սուլթանական բանակի հաղթանակը կատարյալ էր։ Դերեբեյությունները, օջաքըլքները, հյուրյումեթությունները ու յուրթլուկները վերացված էին։ Դիարբեքիրի վիլայեթը հպատակվեց թուրք էսատ փաշային[13], այսինքն՝ կենտրոնական պետությանը։ Հայ և քուրդ ռայան, ըստ խոստման, պիտի ազատվեր քուրդ բեկերի հարկային ծանր բեռից ու ֆեոդալական քմայքներից։ Այս առթիվ շնորհակալական բազմաթիվ հեռագրեր էր ստանում Մատթեոս պատրիարքը, որը նույնպես զերծ չէր հեռագրերի հեղինակների փայփայած պատրանքներից։

---

12 Տե՛ս П. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, стр. 82.

13 «Արշալույս Արարատյան», 1847, 28 նոյեմբերի, № 299։

Թուրք պետական խորամանկ գործիչները զսպել էին քրդական ցեղապետերի քաղաքական հավակնությունները, սակայն բնավ մտադիր չէին հրաժարվել նրանց ռազմական ծառայություններից։ Այդ իսկ պատճառով էլ նրանք հռչակում էին «Թանզիմաթ», քիչ անց ընդարմացնում նրա գործադրությունը, բանտարկում քուրդ ցեղապետերին, միաժամանակ սիրաշահում, առաջ քաշում նոր քուրդ առաջնորդներ։

Բեդր-խանն աքսորվեց Կրետե կղզի, Խան-Մահմուդը՝ Սիլիստրե։ Բայց դրա հետ միաժամանակ պաշտոնի կանչվեց Բեդր-խանի եղբորորդին՝ Եզդանշիրը, շատ ցեղապետերի շնորհվեցին արտոնություններ, ասորական ջարդի կազմակերպիչներից արյունախում Նուր-Ալլահ բեկը նույնիսկ վարչական պաշտոն ստացավ։ Այսպիսի կիրառություն ուներ «Թանզիմաթի» առաջին ակտը քրդաբնակ հայկական նահանգներում։

* * *

Դերեբեյությունների ոչնչացումից հետո, սակայն, սուլթանական կառավարությանը թվում էր, թե ընկճել է քուրդ ցեղապետերին, դրա համար էլ պաշտոններ էր բաժանում շատերին։ Կատարվեց սպասածին հակառակը։ Արևմտյան Հայաստանում գտնվող քուրդ բեկերի հպատակեցման պահին թուրքական բանակը դաժանությամբ վարվեց քուրդ և եզիդ աշխատավորության հետ։ Այդ դաժանություններն էլ ծնունդ տվեցին քրդական մի նոր շարժման, որն իր բնույթով տարբերվում էր նախորդ ապստամբություններից և որի գլուխն էր կանգնած Բեդր-խան բեյի ազգական Եզդանշիրը։

Օգտվելով Ղրիմի պատերազմի ժամանակ ստեղծված իրադրությունից, 1854 թ. դեկտեմբերին Եզդանշիրը ապստամբության դրոշ պարզեց և 1855 թ. հունվարին արդեն նրա գերագահության տակ էին Մոսուլը, ողջ Վասպուրականը։ 1855 թ. փետրվարի սկզբներին ապստամբներն ունեին 30 հազարանոց բանակ, որը գնալով ստվարանում է և ամսվա վերջին հասնում շուրջ 60 հազարի։ Շուտով ապստամբները տիրեցին Բաղդադից մինչև Վան ընկած գավառներին, ապա նվաճեցին Բաղեշ, Սղերդ, Շատախ, Խարազան և այլ գավառներ ու քաղաքներ[14]։

Ապստամբների հաջողություններն անհանգստություն առաջ բերեցին ոչ միայն սուլթանի արքունիքում, այլև Թուրքիայի դաշնակիցների, հատկապես Անգլիայի կառավարող շրջաններում։ Դործի անցավ բրիտանական դիվանագիտությունը և, միջոցների մեջ խտրություն չդնելով, ջանաց «խաղաղեցնել Քյուրդիստանը»։ Մոսուլի անգլիական հյուպատոսը բանակցություններ սկսեց ապստամբության ղեկավարների հետ, հայտարարելով, թե նպատակ ունի Թուրքիային առաջարկելու կատարել Եզդանշիրի պահանջները և այդպիսով նրան ստիպել հաշտություն կնքել[15]։ Անգլիացի դիվանագետի այս փորձը հաջողությամբ չպսակվեց։ Դրանից հետո նա կաշառեց քուրդ բեկերից

---

14 *Տե՛ս М. Лихутин,* Русские в Азиатской Турции в 1854—1855 гг., СПб., 1863, стр. 256—259.

15 *Տե՛ս П. И. Аверьянов,* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, стр. 150—154.

շատերին, հեռացրեց ապստամբներից, ապա Եզդանշիրին ապահովության խոստում տալով, հրավիրեց բանակցություններին։ Թուրք և անգլիացի բանագնացները երդմնազանցությամբ բանտարկեցին Եզդանշիրին և ուղարկեցին Կ. Պոլիս։ Առանց ղեկավարի մնալով, ապստամբներն աստիճանաբար ցրվեցին և այդ ձևով ճնշվեց ապստամբությունը[16]։

Այսպիսով, XIX դարի 50-ական թթ. դեռևս սրված էին մնում սուլթանական կառավարության և Արևմտյան Հայաստանի քրդական ցեղապետերի հարաբերությունները։ Բ. Դուռը երբեմն սիրաշահում էր, երբեմն խուսանավում ու օգտագործում նրանց ուժերը, սակայն հիմնականում դործադրում էր քրդերի թուրքացման ու նրանց վերնախավերին քրիստոնյա ազգերի դեմ ուղղելու քաղաքականությունը։ Այլահավատ հպատակները, մասնավորապես հայերն ու սլավոնները, դիտակցելով դարերով ապաճանաչված իրավունքները, պայքարի էին դուրս գալիս իրենց արյան ու տանջանքների գնով ձեռք բերած թղթեղեն խոստումներն իրողություն դարձնելու համար։

2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

XIX դարի երկրորդ քառորդից փոփոխության ենթարկվեց Թուրքիայի վարչաձևը։ 1834 թ. նախկին փաշայությունները վերանվանվեցին վիլայեթներ, որոնք իրենց հերթին բաժանվեցին սանջակների ու կազաների։ Կառավարիչներն այժմ ուղարկվում էին մայրաքաղաքից, որոնք օժտված էին վարչական իրավունքներով։

Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի (Կարին), Սվազի (Սեբաստիա), Դիարբեքիրի և նորաստեղծ Խարբերդի վիլայեթների, իսկ մի քանի գավառներ էլ միացվեցին Տրապիզոնին։ Նախկինում Վանի փաշայության մեջ մտնող Մոկսը, Դերսիմը, Հեքյարին կցվեցին Դիարբեքիրին։ Վերացվեցին Կարսի, Ջըլդըրի, Բայազետի փաշայությունները։ Քրդական իշխանությունների վերացումից հետո 1847—49 թթ. երկրի վարչամիավորների մեջ վերախմբավորում կատարվեց։ Վանը, Ջեզիրեն, Հեքյարին միացվեցին և դրվեցին մեկ կուսակալի իշխանության տակ։ 1848 թ. հուլիսին Մարաշի վիլայեթը միացվեց Ադանային և հանձնվեց այնտեղ նստող Օսման փաշայի իրավասությանը[17]։

1864—67 թթ. կայսրությունը վարչական նոր բաժանման ենթարկվեց։ Այս անգամ խոշորացվեցին վարչամիավորները, «վերականգնվեցին» կայսրության կազմում մտնող այլազգի ժողովուրդների նախկինում ունեցած իշխանությունների սահմանները։ 1864 թ. ստեղծվեց Դանուբի, իսկ 1866 թ.՝ Բոսնիայի վիլայեթը։ Արևմտյան Հայաստանի մեծ մասը 1865 թ. ընդգրկվեց Էրզրումի վիլայեթի մեջ, նրան տալով էրմենիստան անուն։

1864—1866 թթ. վարչական ակտերը, սակայն, փորձնական նպատակ էին հետապնդում և սուլթանի կողմից վավերացված չէին։ 1867 թ. միայն մշակվեց ու հրապարակվեց «Վիլայեթների վարչության մասին օրենքը»[18]։

---

16 Տե՛ս П. И. Аверьянов, նշվ. աշխ., էջ 154—157։

17 «Արշալույս Արարատյան», 1848, 9 հուլիսի, № 315։

18 ՌԱՔԱ, Քաղարխիվ, գ. 9468, «Բացատրական գրություն», էջ 1—37։

էրզրումի վիլայեթի մեջ մտցվեցին Կարսը, Բայազետը և էրզինջանը։ Սվազի վիլայեթին էր մնում Սեբաստիան, Ամասիան, Դիվրիկը, Խարբերդի վիլայեթին՝ Խարբերդը, Մալաթիան, Մադենը։ Շապին-Կարահիսարը և Գյումուշխանեն անջատվում էին հայկական նահանգներից և կցվում Տրապիզոնին։

Զգալի փոփոխության էր ենթարկվում Դիարբեքիրի վիլայեթը։ Սրա մեջ էին մտցվում Դիարբեքիրը, Մուշը, Վանը, Հեքյարին, Ջեզիրեն, Բիթլիսը։ Այժմ, երբ վերացվել էին հյուքումեթները, դերեբեյությունները, օջաքլըքնիրը, կառավարությունը միավորում էր սրանց և տալիս Քյուրդիստան անունը։ Եվ ահա այս անվան հրապարակումն էլ տեղիք տվեց հայերի զայրույթին և բողոքին, քանի որ Վանը, Մուշը, Բիթլիսը մտցված էին Քյուրդիստանի մեջ։ Բ. Դուռը նոր անախորժություններից խուսափելու համար Վանի և Մուշի նախկին տարածքը անջատեց Դիարբեքիրից և միացրեց էրզրումի վիլայեթին։



Վարագա լեռը Թոփրախ կալեի բարձունքից

Վարչական այս բաժանումը պատճառաբանվում էր ծախսերի կրճատումով։ Մյուս կողմից եվրոպական տերություններին, մասնավորապես Ռուսաստանին հավաստիացվում էր, թե վերականգնվում են քրիստոնյաների և ընդհանրապես հպատակ այլազգիների երբեմնի պետական սահմանները, հետևաբար մեծ պետությունները կայսրության ներքին գործերին միջամտելու և հպատակներին գրգռելու հարկ չպիտի ունենան այլևս։

Արևմտյան Հայաստանի և ողջ կայսրության վարչական անդադար բաժանումները հիմնականում բխում էին ազգերի բեկորացման, քրիստոնյաների տարանջատման, ազգային շարժումների արհեստական արգելակման,

քրիստոնյաների ձուլման Թուրքիայի վարած ավանդական քաղաքականությունից։ Այդուհանդերձ Թուրքիան «Թանզիմաթի» ժամանակ բացարձակ գլխի չէր անցել, առերես սիրաշահում էր քրիստոնյաներին, իսկ գործնականում քողարկված ձևով իրականացնում իր պլանները։

1867 և 1870 ԹԹ. օրենքներով փոխվեց վիլայեթների կառավարման, կառավարիչների նշանակման, ցածրաստիճան իշխանավորներ ընտրելու և հաստատելու ձևը։ «Վիլայեթների վարչության մասին օրենքի»[19] (1870) համաձայն, նահանգների նախկին փաշաները կոչվում էին վալի, որոնք նշանակվում էին Բ. Դռան և վավերացվում սուլթանի կողմից։ Սահմանափակվում էին նահանգապետերի երբեմնի իրավունքները, նրանք զրկվում էին զինվորական հրամանատարի պաշտոնից, բանակը և վարչա-կառավարչական ապարատը զատվում էին իրարից։ Նույնիսկ սանջակների կառավարիչ մյութեսարիֆներին, կազաների փոխկառավարիչ կայմակամներին, վիճակների գլուխ կանգնած մյուդիրներին հաստատում էր ոչ թե վալին, այլ ներքին գործերի մինիստրը[20]։

Ստեղծվում էին վիլայեթների վարչություններ, գավառական ժողովներ։ Իրավաբանորեն և ձևականորեն վիլայեթի բարձրագույն օրենսդիր մարմինը ընդհանուր ժողովն էր (մեջլիս ումումի), որի անդամ երեսփոխանները ընտրովի էին։

Ընդհանուր ժողովը գումարվում էր տարին մեկ անգամ՝ 40 օրվա նստաշրջանով։ Այն քննում էր վիլայեթի հարկերի, ճանապարհաշինության, առևտրի և արդյունագործության, հողագործության և անասնապահության, պետական ունեցվածքի պահպանման և այլ խնդիրներ։ Բոլոր որոշումները, վալիի միջոցով, ներկայացվում էին Բ. Դուռ։ Այն կարող էր մերժվել, իսկ հաստատվելու դեպքում վերադարձվում էր տեղական իշխանության գործադիր մարմիններին։ Վարչական խորհուրդները գործում էին վալիի նախագահությամբ, կաղիի, մյուֆտիի, ուլեմների մասնակցությամբ։ Խորհրդի անդամների մի մասը քրիստոնյաներ էին՝ սանջակներից ընտրված։

Թուրքիայում այս վարչական օրգանները ձևական նշանակություն ունեին և երկրի սոցիալ-քաղաքական կյանքում էական դեր չէին խաղում։ Համենայն դեպս, սրանք նոր երևույթ էին կայսրության կյանքում և փաշայական նախկին անարխիկ վարչակարգերի համեմատությամբ որոշ քայլ էին դեպի առաջ։

Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բնակչության, առավել ևս այլազգի հպատակների թվաքանակի մասին հավաստի տեղեկություններ չկան։ «Երկյուղը, կասկածամտությունը սպառնալի ուրվականների նման կարծես միշտ կանգնած են Ծլղրզի գլխին և շարունակ ստիպում են... ամենապարզ, ամենահասարակ փաստերն աղավաղել։ Ով հենց դրանից էլ առաջ են եկել այն հակասական թվերն ու տեղեկությունները, որ գոյություն ունեն Թուրքահպատակ հայերի քանակի մասին»[21]։

Քիչ դեր չէին խաղում նաև այլազավան հպատակների նկատմամբ կի-

19 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 39, թ. 2—3։

20 ՌԱՔԱ, Քաղ-արխիվ, գործ 3468, թերթ 17։

21 «Լուսո պատկերազարդ օրացույց հանդես 1905 թվականի», 1904, Թիֆլիս, էջ 198։

բաովող ծանր հարկային քաղաքականությունը, մասնավորապես քրիստոնյաներից գանձվող զինվորական հարկը, որի չափը որոշվում էր արու ազգաբնակչության քանակով։ Ահա թե ինչու քրիստոնյաները նվազեցրած տեղեկություններ էին տալիս իրենց թվի մասին, որպեսզի կարողանային համեմատաբար թեթևացնել հարկային ծանր բեռը։

Արևմտահայության թվաքանակի մասին եղած թուրքական բոլոր տրվյալները հավաստի չեն եղել և նվազեցված են։ Լրիվ տեղեկություններ չեն տալիս նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարները, քանի որ վիճակագիրները հնարավորություն չեն ունեցել թափանցել հայկական ու հայաբնակ բոլոր վայրերը, գրանցել մեռածներին ու նորածիններին։ Այստեղ մասամբ օգնության են հասնում եվրոպական դիվանագետների հրապարակած թվերը և հայ պարբերական մամուլի հաղորդագրությունները։

Օտար հեղինակներից մեկը՝ Բրուսալին, Օսմանյան կայսրության մեջ XIX դարի 50—70-ական թթ. ապրող հայերի քանակը հաշվում էր 3.800.000[22], ամերիկյան միսիոներ Ֆր. Դեվիս Դրինը՝ 2,5 միլիոն[23], էլիզե Ռեկլյուն՝ 2.520.000[24] մարդ։ Լ. Կոնդանսոնը համադրելով նախորդների հրապարակած բազմաթիվ տվյալները, գտնում էր, որ ասիական Թուրքիայում ապրում են 2.050.586, եվրոպական մասում՝ 280.000[25] հայեր։ Ուրեմն եվրոպացի հեղինակների տվյալներով, Բեռլինի վեհաժողովի նախօրյակին արևմտահայ ազգաբնակչության թիվը երկուս ու կես միլիոնից մինչև երեք միլիոն էր։ Այդ կարծիքը հաստատում են նաև հայկական աղբյուրները։

Մկրտիչ-բեյ Դադյանը 1860-ական թթ. արևմտահայերի թիվը հաշվում է 3.400 հազար[26]։ Բաֆֆին և Գր. Արծրունին բազմիցս վկայել են, թե Թուրքիայում երեք միլիոն հայեր էին ապրում[27]։ Նույն կարծիքը հաստատում է նաև «Մասիս» պարբերականը։ Ակնհայտ է, որ ինչպես եվրոպացի, այնպես էլ վերոհիշյալ հայ հեղինակների կարծիքները հայերի թվաքանակի հարցում համընկնում են։

Բեռլինի վեհաժողովի նախօրեին Ն. Վարժապետյան պատրիարքի գլխավորած մարդահամարը արևմտահայության թիվը 3 միլիոն գրանցեց։ Այդ թվից 400.000-ն ապրում էին եվրոպական Թուրքիայում, 600.000-ը՝ Փոքր Ասիայում ու Կիլիկիայում, 670.000-ը՝ Փոքր Հայքում (Սեբաստիայի ու Կեսարիայի վիլայեթներում) և 1.330.000-ը՝ Մեծ Հայքի Թուրքահպատակ նահանգներում (Էրզրումի, Վանի վիլայեթներ, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը և Սղերդի սանջակի հյուսիսային մասը)[28]։ Մեկ այլ վկայությամբ Վանի վիլայեթում ապրում էին 400.000, Սվազի վիլայեթում՝ 280.000,

---

22 Les revendications de l'Arménie, par Jean Broussali, „Revue française de l'etranger et des colonies", t. 3, 1886, p. 517, см. также *Ե. Կ. Սարգսյան*, նշվ. աշխ., էջ 26։

23 «Армянский кризис и владычество турок», стр. 255.

24 Էլ. Ռեկլյու, *Աշխատան և Թուրդիստան*, Վաղարշապատ, *1893*, էջ 70։

25 «Նոր կյանք», Լոնդոն, *1901*, 15-ը մայիսի, էջ *150—151*։

26 *Տե՛ս Мкртичъ-бей Дадіанъ*, Армяне Оттоманской имперіи, Тифлис, 1878, стр. 8.

27 «*Մշակ*», *1872*, № *30*, *1874*, №*1*, *1875*, № *24*, № *35*, *1876*, №*24*։

28 *Տե՛ս* Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ *35*, *տե՛ս* նաև «*Ուրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի*», Կ. Պոլիս, *1878*, էջ *30*։

Խարբերդի վիլայեթում՝ 270.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 150.000, Էրզրումի վիլայեթում՝ 280.000, Ադանայի և Հալեպի վիլայեթներում՝ 380.000, Ասիական Թուրքիայի մնացած մասերում՝ 455.000, Եվրոպական Թուրքիայում՝ 195.000[29] հայեր։

Տոկոսային փոխհարաբերությամբ ևս հայկական տարրը 1830—60-ական թվականներին կազմում էր Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության համեմատական մեծամասնությունը։ Նկատենք, որ այս հանգամանքը փորձում են ժխտել ժամանակակից թուրք ռեակցիոն պատմաբանները[30]։

* * *

1830—50-ական թվականներին Թուրքիայում որոշ չափով վերափոխվում էին նաև հողատիրության ձևերը։ Ռումելիայում, Անատոլիայի մեծ մասում, այդ թվում և Արևմտյան Հայաստանի սուլթանահպատակ մարզերում՝ Էրզրումում, Սվազում, Կարսում սուլթանը գլխատեց, բանտարկեց կամ թոշակ նշանակելով պաշտոններից հանեց թուրք էմիրներին, աղաներին, նույնիսկ պալատում մեծ պաշտոններ զբաղեցնող զինվորականներին և բռնագրավեց նրանց հողային կալվածքները՝ թիմարները, զեամեթները, խասերը։ Արևմտյան Հայաստանի երբեմնի քրդահպատակ շրջանների հողատիրության մեջ որոշ փոփոխություններ կատարվեցին 1840-ական թթ. վերջերին միայն, այսինքն քրդական դերբեյությունների ոչնչացումից, քուրդ խոշոր ֆեոդալների իրավազրկումից հետո։ Կայսրության հողերի մեծ մասը որպես պետական սեփականություն օգտագործման տրվեց նոր հողատերերին։

Սուլթանները փոփոխելով հողատիրության ձևերն ու հողատերերին, սակայն չէին վերացնում գյուղացիության շահագործման ֆեոդալական սիստեմը։ Գյուղացիները շարունակում էին հողերը մշակել այնպես, ինչպես նախորդ շրջանում։ Հին բեկերին փոխարինելու եկան նորերը։ Պետության ու կալվածատերերի եկամտի աղբյուրը մնաց ֆեոդալական ռենտան՝ իր տարատեսակներով։ Փոփոխվեցին հարկերի անունները, պարհակների ձևերը, իսկ շահագործումն ու ճնշումը մնացին նույնը։

Աբդուլ Մեջիդը 1858 թ. ապրիլի 21-ին ձևակերպեց հողային օրենք՝ Դուստրը, որը «չփոխելով գյուղական ազգաբնակչության դրությունը, պաշտպանեց ֆեոդալական հողատիրությունը։ Նրա նշանակությունը կայանում էր նրանում, որ օրինականացնում էր պատմական տարբեր պայմաններում առաջացած հողատիրության ձևերը»[31]։ Դուստրը իրավաբանորեն սահմանում էր հողատիրության հինգ հիմնական ձևեր՝ 1. պետական՝ միրիե, 2. մասնավոր՝ մյուլք, 3. հոգևոր՝ վակֆ, 4. մետրուքե՝ համայնական, 5. մեվաթ՝ մեռյալ-անօգտագործելի հողատարածություններ։ Արևմտյան Հայաստանում հողատիրության այս բոլոր ձևերը կային, սակայն գերակշռում էին պետականը և վակֆայինը։

---

29 «Արարատ», էջմիածին, 1914, № 9, էջ 811։

30 Տե՛ս Türk inkilab tarihi, ikinci Türk tarih Kongresi, էջ 1062, 1074, տե՛ս նաև— Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, էջ 3։

31 Տե՛ս П. П. Моисеев, Аграрные отношения в современной Турции, М., 1960, стр. 19—21.

Արևմտյան Հայաստանի պետական և վակֆային կալվածքները կալվածագրերով, ազարակ առ ազարակ ձևակերպվեցին թուրք, քուրդ, մասամբ էլ հայ հողատերերի վրա։ Ֆեոդալների հիմնական դասը մնաց մահմեդական վերնախավը, որը գնման, բռնության կամ նախկին հողակտորների չհանձնման ճանապարհով պաշտպանեց իր հողատիրական իրավունքները։ Դրան նպաստեց նաև այն, որ 1867 թ. սուլթանը նոր օրենք հրապարակեց՝ հողատերերին թույլատրելով հինգ տարվա ընթացքում պետությունից գնել օգտագործվող հողակտորները։

1867—1870 թթ. ընթացքում հողօգտագործողները վճարեցին պահանջվող գումարը, սակայն ոչ բոլորը ստացան թափու՝ կալվածագիր։ 1873 թ. ստուգումների ժամանակ պարզվեց, որ գյուղացիության մեծ մասը կալվածագրեր չուներ։ Բ. Դուրը սրանց ստիպեց կրկին վճարել պահանջվող գումարը։ Թուրք աղաները, քրդական աշիրաթապետերը զավթեցին քուրդ, թուրք և հատկապես հայ գյուղացիների հողակտորները։ Պետությունը արհեստականորեն ագրարային վեճեր հրահրեց հայերի, քրդերի, թուրքերի միջև։

Բեռլինի կոնգրեսի նախօրյակին երկրում շրջող հանձնախմբի հաղորդագրությունների համաձայն Ջմշկածագի առաջնորդության մեջ «հողերը մեծավ մասամբ թրքաց կը պատկանի, վեցեն մեկը հայոց թափու են»[32]։ Բալուի և Չարսանջակի հողերը բռնագրավել էին 24 քուրդ ու թուրք աղաներ[33]։ Միայն Մեծկերտի ու Աղջովայի հայ գյուղացիները թափուական իրավունքով հողեր ունեին։ Խարբերդի «հողերուն 3/4 մասը թրքաց և 1/4 մասը հայոց ձեռքն է թափույով»[34]։ Բաբերդի առաջնորդության հայերը «ըստ չափու հող ունին և ընդհանրապես թափու են, իսկ բաղդատմամբ թուրք գյուղականաց ոչինչ ունին գրեթե»[35]։

Բեդեր-խանի տոհմը սուլթանի ֆերմանով Վասպուրականում պահպանել էր իր կալվածքների գերակշռող մասը։ Նոր կալվածատեր էր դարձել Եզդանշիրը։ Մոսուլի շրջանի վրանաբնակ 24 աշիրեթներ ամեն ամառ տակն ու վրա էին անում Վասպուրականի հայ գյուղացու տնտեսությունը, յուրացնում նրա ստացած արդյունքները։ Քուրդ ցեղապետերը կործանել էին Գավան, Մարմեդ, Խնձորգեն, Օրմենաս, Պնդունի, Կսկինձ գյուղերը։ Ընդհանրապես Ղրիմի պատերազմից հետո նորից գլուխ է բարձրացնում քրդական վերնախավը, աքսորավայրերից Արևմտյան Հայաստան են վերադառնում նոր իրավունքներ նվաճած ցեղապետերը։

Արևմտյան Հայաստանում խոշոր հողատերեր էին մզկիթները, քուրդ շեյխերը, թուրք ուլեմները։ Մուսուլման հոգևորականությունը լիովին պաշտպանեց ոչ միայն իր վակֆները, այլև Մեքքայի և Մեդինայի ծախսերը հոգացող կալվածքները։

Արևմտյան Հայաստանում որոշ չափով ավելացավ նաև հայ հողատերերի թիվը։ Մշո դաշտում ընդարձակ կալվածքներ ձեռք բերեցին Հաճի Ա-

32 ԴԱԲ, Բ. Ազատյանի արխիվ, III բաժին, փաստաթուղթ 52, էջ 4։

33 «Ամենագրություն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ», հատ. Բ, էջ 15—16։

34 Նաթանյան Պողոս, Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճակի, Ճապաղչուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1879, էջ 136։

35 ԴԱԲ, Բ. Ազատյանի արխիվ, III բաժին, փաստաթուղթ 38, էջ 7։

ղայանցը, Կոնճոյանները և այլն[36]։ Սղերդի նահիթլի Խիզան դավառի կալվածատեր Վարդան քահանան 100 արտավար հող ուներ, ս. Խաչ վանքի վանահայր Սահակ վարդապետը պահպանում էր վանքապատկան 40 արտավար հողը և սեփականացնում ստացված եկամուտը։ Հայ խոշոր հողատերեր կային Կարինի, Խարբերդի, Բաղեշի, Սեբաստիայի վիլայեթներում։ Սոցիալական հարստահարման ասպարեզում սրանք քիչ էին զիջում թուրք ու քուրդ ֆեոդալներին։ Այնուամենայնիվ, երկրի տնտեսական հաշվեկշռում հայ աշխարհիկ հողատերերը չնչին տոկոս էին կազմում։



Բայազետի բերդը

XIX դարի երկրորդ կեսին հարուստ հողատերեր էին մնում Արևմտյան Հայաստանի վանքերը, եկեղեցական վերնախավը։ Մուշի ս. Կարապետի վանքը տարեկան ստանում էր 400 հազար ղուրուշի եկամուտ։ Ժամեր էին հարկավոր «երիվարով անցնելու ու կտրելու այն հողատարածությունները, հատանելի անտառները, վարելի հողերը և բուսաբեր մեծատարած լեռնադաշտերը»[37], որոնք վանքի սեփականությունն էին կամ նրա վրա թափու արած։ Մուշի առաջնորդական վիճակին ենթակա ս. Հովհաննու վանքը տարին 200 հազար ղուրուշի եկամուտ ուներ[38]։ Նրա ագարակների թիվը անցնում էր 400-ից։ Վասպուրականի հոգևոր վիճակի Լիմ անապատի միաբանությունն ուներ ընդարձակ հողեր, անտառներ, ջրաղացներ և խանութներ։

---

36 Տե՛ս Գեղամ տ. Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներու մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 6։

37 «Ուղևորություն ի Փոքր Ասիա», գրեցին Ալպեր Տրվրյե և Գեորգ Փիսոն, Վիեննա, 1892, էջ 57։

38 ԳԱՔ, Թ Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 49, թ. 1—2։

1850—1860-ական թթ. Արևմտյան Հայաստանում և ողջ Թուրքիայում կային 200-ից ավելի հայկական վանքեր, որոնցից շատերը զբաղվում էին նաև առևտրական գործարքներով և բավականաչափ եկամուտ ստանում։

1830-ական թթ. սկսած քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները, նրանց հողերն ու անասունները անխտիր հարկադրվում են, վերանում է վանական հողատիրության ապահարկ կացությունը։ Դեռևս սուլթան Մահմուդ II-ը ստեղծեց մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր մուսուլման և քրիստոնյա հոգևորականության «վակֆերի»» դրությունը և հսկողություն սահմաններ նրանց եկամուտների վրա, ինչպես նաև կալվածքների առքն ու վաճառքը կատարեր կառավարության ստեղծած վարչության միջոցով։ Հետագայում հայ ամիրաների ու պատրիարքի ջանքերով սուլթանը վերանայեց իր հրամանագիրը։

Աբդուլ Մեջիդը 1853 թ. մայիսի 25-ին տված հրովարտակով հրահանգում էր, որ «...եկեղեցիներն ու վանքերը և անոնց սեպհական կալվածներն ու անշարժ ստացվածները զերծ մնան այսուհետև ամեն վնասներե։ Նմանապես բոլոր կրոնական հաստատությանց և եկեղեցականներու ապահարկությունը, և պատրիարքներուն և անոնց փոխանորդներուն արտոնություններն ու առանձնաշնորհությունները, որոնք հինեն ի վեր նշանակված են պերաթներուն մեջ...»[39]։ Ղրիմի պատերազմի նախօրյակին էր այս։ Սուլթանը դրանով սիրաշահում էր այլահավատներին, ձգտում նրանց հետու պահել Ռուսաստանի ազդեցությունից։ Աբդուլ Ազիզը պետականացնում էր հայոց վանքերի ու եկեղեցիների կալվածքները, դրանք թողնելով նախկին տերերի օգտագործմանը՝ պայմանով, որ հարկ վճարեն պետությանը։

Վանի Սալանապատ վանքը մեկ տարում վճարում էր 1179 ռուբլի կալվածական հարկ ու աղնամ։ Վարագա վանքը տասանորդ էր տալիս 2811 ղուրուշ 10 փարա, երկու տարվա կալվածահարկ՝ 1106 ղուրուշ 30 փարա, ոչխարի հարկ՝ աղնամ 1581,3 ղուրուշ։ Աղթամարի վանքը և ողջ միաբանությունը պարտավոր էր նվիրատվությունից ստացած դրամից հարկ տալ, իսկ ոչխարների դիմաց, չնայած թալանվել էին քրդերի կողմից, երկու տարի շարունակ վճարում էր նախկին աղնամը։

Հարստություն դիզած վանքերը միշտ չէ, որ հանգիստ վայելում էին իրենց եկամուտները։ Քուրդ ու թուրք ավազակախմբերն ամեն րոպե կարող էին հայտնվել, կողոպտել նրանց ունեցվածքը և աղքատության դատապարտել վանականներին։ Այստեղ ևս ունենալը չէր կարևոր, այլ ունեցվածքի ապահովությունը։ Դրա համար էլ փողը գանձ էր դառնում, վերածվում ոսկու, թաղվում գաղտնարաններում, հանվում շրջանառությունից։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ նահանգներում XIX դարի 30—60-ական թթ. ստվարացավ ամենատարբեր դավանանքի, տարբեր ազգությունների պատկանող խոշոր հողատեր-կալվածատերերի դասը։ Խոշոր հողատերեր մնացին սուլթանը, Բ. Դռան պաշտոնյաները, թուրք աղաները, մահմեդական հոգևորականները, քուրդ ցեղապետերը, հայկական վանքերը, հայ սարաֆները, չորբաջիները, էֆենդիները,

39 Տիգրան Սավալանյանց, Պատմություն Երուսաղեմի, հատ. 2, Երուսաղեմ, 1931, էջ 1218։

աղաները։ Կալվածատերերը, սակայն, ազգաբնակչության վեցը տոկոսն էին կազմում, բայց և այնպես տիրում էին հողային հարստության մի զգալի մասին, իսկ գյուղացիությանը, որն իր ուսերին էր կրում սոցիալ-քաղաքական ճնշումների աններելակելի ծանրությունը, մնում էր հողերի շուրջ 30%-ը։ Անվիճելի է, որ արևմտահայ ազգաբնակչության գերակշռող հատվածը հողագործությամբ զբաղվող, սոցիալական ու իրավական ծանր ճնշումների ենթակա աշխատավոր գյուղացիությունն էր։

Ադրիանոպոլի ռեֆորմից հետո թուրքահպատակ նահանգների թիմարատեր ու զեամեթատեր, առավել ևս խասատեր կալվածատերերի հողերի վրա աշխատող գյուղացիների զգալի մասը փրկագին վճարեց և թափուկան իրավունքով հողակտորներ գնեց։ Ոչնչացված, տարագրված քուրդ ու թուրք բեկերի և աղաների հողերի մի մասը ևս տրվեց գյուղացիներին, պարտավորեցնելով հարկը վճարել Բ. Դռան։

Արևմտյան Հայաստանի սակավ հող ունեցող բոլոր գյուղացիները չէ, սակայն, որ հող ստացան կամ, մի կերպ դիմանալով պետության հարկային ծանր քաղաքականությանը, պաշտպանեցին իրենց հողատարածությունները։ Դրամատեր, իշխանավոր ու զորավոր հարուստները շարունակեցին վաշխառուության, բռնության, կողոպուտի միջոցով ունեզրկել գյուղացուն, նրան կախման մեջ դնել ու աշխատեցնել կալվածատիրական հողերի վրա։ Գյուղացիության մի մասն էլ վարձակալությամբ հողը վերցնում էր քաղաքներում ապրող հողատերերից։ Գյուղացիների մյուս խումբը կիսարարներն էին։ Կիսրար հողամշակմամբ զբաղվող գյուղացիությունը աստիճանաբար վերածվեց մի ստվար դասի, որը կոչվում էր մարաբա։ 1858 թ., հատկապես 1867—72 թթ. ռեֆորմներից հետո մարաբայությունը տարածվում է հատկապես քրզախառն հայկական գավառներում։

Մարաբաները հիմնականում հողազուրկ գյուղացիներն էին։ Սրանք կախման մեջ էին քուրդ ու թուրք ֆեոդալներից, հայ հողատերերից, կալվածատեր վանքերից։ Մարաբաները ևս բաժանվում էին մի քանի մասերի։ Կային մարաբաներ, որոնք ունեին հողակտորներ, սակայն չունեին գյուղատնտեսական գործիքներ, բանող անասուններ։ Մարաբաների մյուս խումբն ուներ հող, անասուններ, սերմացու, սակայն ֆեոդալը բռնությամբ նրանց հողերը դարձրել էր իր սեփականությունը և նախկին հողատերերին պարտադրում էր աշխատել իր համար[40]։ Խիստ ծանր էր վիճակն այն գյուղացիների, որոնք աշխատում էին ռազմատենչ, զորավոր ցեղապետերի, քուրդ խաֆիրների, էմիրների համար։ Այստեղ առկա էր չձևակերպված կիսաճորտությունը, որն ավելի քան տարածված էր Տարոնում, Վասպուրականում, դաշտային Սասունի մի շարք գյուղերում։

Գր. վ. Աղվանյանցը, որը Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ 1870—72 թթ. շրջում էր Տարոնի ու Վասպուրականի գյուղերում, իր նամակներում նկարագրում էր հայ գյուղացու ողբերգական կացությունը։ Նրա բազմաթիվ գրություններից վկայում են, որ Մշո, Շատախի, Խութի, Բռնաշենի, Սասունի դաշտային շրջանների քուրդ բեկերը, խաֆիրները հայ ու քուրդ

40 Տե՛ս Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 70—71։

գյուղացիներին ճորտական կացության մեջ էին դրել։ «Դաս դաս նոցա բաժին եղած յուրաքանչյուրին իբրև հպատակ և սեփհականության համարված և ոչ տերության՝ տարեկան տուրքը կուտան խաֆիրներուն։ Այն մարդակերպ վայրենի գազան խաֆիրներ՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մեջ լինելով՝ իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդվոք շարժական և անշարժ կալվածներով իրարու ծախելու սովորություն ունին. և երբ իրարու դեմ կատաղին և բըշնամանան, յուրաքանչյուրն իրենց ստրուկ հայերն բռնի առչևնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ թե հայոց բնակած գեղերու վրա, կկողոպտեն, կքանդեն, կավրեն, կվիրավորեն, կսպաննեն և կվերադառնան տեղերնին։ Հաղթահարեալ թշնամին՝ մյուսին վրեժը լուծելու համար, զորաժողով կլինի, կասպատակ թշնամուն հպատակ հայերու գյուղերը, արջային զայրույթով կկողոպտե, կքանդե, կավրե, կսպաննե և կդառնայ»[41]։

Խութում և Բռնաշենում խաֆիրները հայ գյուղերն ամբողջ համայնքներով վաճառում էին իրար, իսկ գնողները հարկերը գանձում էին քառապատիկ ավելի, քան թուրքահպատակ շրջաններում։ Ամբողջ Բռնաշենը պատկանում էր երեք քուրդ խաֆիրի։ Սասունի գավառի Մահպապանք գյուղի խաֆիրներն էին Հայտար Մահմուդը, Իսկան Քահվարը, Շավեշը և Մեհմետը։ Խաֆիրները փոխադարձաբար թալանում էին «իրար գյուղերը», իսկ երբ Մ. Խրիմյանը դրա համար բողոքեց Բ. Դռանը, ոչ մի պատասխան չստացավ։ Նա հասկացավ, որ թուրք կառավարիչները ոչ միայն համաձայն էին նման ակտերի գոյությանը, այլև իրենք հրահրում էին քրդական վերնախավին, որպեսզի այս մեթոդով հնազանդեցնեին Սասունը, Շատախը, Մոկսը։ Պատահական չէ, որ կիսաճորտական վիճակը հետագայում ուժեղացավ և տարածվեց հայկական մյուս նահանգներում։

Այսպիսով, խաֆիրապատկան գյուղացիները միայն ձևականորեն էին ազատ, իսկ իրականում կիսաճորտեր էին։ Նրանք վճարում էին բազմաթիվ հարկեր, կատարում պարհակներ և առանց վճարի ու թուլլտվության ոչ կարող էին ամուսնանալ և ոչ էլ թաղել իրենց հանգուցյալներին։

* * *

XIX դարի 40—60-ական թթ. Թուրքիայի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն[42] էր, որը ֆեոդալական մակարդակի վրա գտնվելով, ընդգրկում էր ազգաբնակչության շուրջ 85 տոկոսը։ Կայսրության գյուղատնտեսությունն իր եկամտաբերությամբ, մանավանդ ժամանակի կապիտալիստական երկրների գյուղատնտեսության համեմատությամբ, գտնվում էր զարգացման ցածր աստիճանի վրա։

Այդուհանդերձ, XIX դարի 50—60-ական թթ. Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի մի շարք մարզերում, նախորդ տասնամյակների համեմատությամբ, գյուղատնտեսությունը որոշ առաջընթաց էր կատարել։ Կիլիկիայի ծովամերձ շրջաններում զարգացել էր բամբակագործությունը, Ադանան սկսել

---

41 Մատենադարան, Կաթ. ձեռ., թղթ. 219, վավ. 152, տե՛ս նաև «Մասիս», 1872, № 1239։

42 Տե՛ս А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 43—44.

էր իր արտահանած բամբակով սնել ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը, Տրապիզոնը աճեցնում էր տարբեր տեսակների ծխախոտ, եվրոպացիների, մասամբ էլ տեղացի հայ վաճառականների միջոցով հումքը արտահանվում էր հարևան երկրները և երբեմն էլ Ռուսաստանի ու Անգլիայի շուկաները։ Արտահանվում էին նաև հացահատիկ, չոր մրգեր, անասուններ, բուրդ, կաթնամթերք։ Ապրանքների արտահանության աճը նպաստում էր գյուղատնտեսության մի շարք ճյուղերի առաջընթացին։

Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը, սակայն, դեռևս մնում էր զարգացման ֆեոդալական մակարդակի վրա։ Գործիքների պարզունակության պատճառով ցածր էր գյուղատնտեսության արտադրողականությունը։ Արտադրողներն անկարող էին կատարելագործել արտադրամիջոցները, իսկ կառավարությունը բնավ չէր էլ մտահոգվում դրանով։ Ուրեմն, գյուղատնտեսության հետամնացության առաջին ու հիմնական պատճառը տիրապետող ֆեոդալական արտադրաեղանակն էր։ Կ. Մարքսը նկատում էր, թե Ասիայում «բերքը այնպես է կախված լավ կամ վատ կառավարությունից, ինչպես Եվրոպայում՝ լավ կամ վատ եղանակից»[43]։

Արևմտյան Հայաստանի տնտեսության հետամնացության հիմնական պատճառներից էր նաև օտար կապիտալի զորեղ ու քայքայիչ ազդեցությունը։ XIX դարի 40-ական թթ. արտասահմանյան կապիտալը ծանր հարվածներ էր հասցնում հողագործին, քայքայում նրա տնտեսությունը, շուկայական մրցության մեջ պարտության մատնում տեղական հումքով սնվող ազգային փոքրաթիվ ձեռնարկություններին։ Եվրոպացիները էժան գներով հացահատիկ էին գնում Թուրքիայից և թանկ գներով արդյունաբերական ապրանքներ վաճառում նրա ազգաբնակչությանը։

Ղրիմի պատերազմը ճակատագրական նշանակություն ունեցավ կայսրության տնտեսության համար։ Եվրոպացիները մի ձեռքով առատ վարկեր էին տալիս սուլթանին, մյուս ձեռքով ազդեցության շրջանների բաժանում նրա կայսրությունը։ Ֆրանսիան հաստատվեց Սիրիայում, փորձեց տնտեսապես նվաճել Կիլիկիան։ Անգլիան տիրացավ Միջագետքին, ջանալով իր ազդեցությունը հաստատել Անատոլիայում և միջերկրածովյան կղզիներում։ Անգլիան ու Ռուսաստանը մրցում էին Արևմտյան Հայաստանը ազդեցության գոտիների բաժանելու համար։ 1860-ական թթ. վերջերին Թուրքիան արդեն դարձել էր եվրոպական տերությունների կիսագաղութ։

Օտարերկրացիները դրանով չբավականացան։ Նրանք Թուրքիայում բացեցին բանկեր։ 1856 թ. հիմնված Օտոմանյան բանկը 1863 թ. պետական բանկի իրավունք ստացավ, արտոնություն ունենալով ոչ միայն փոխառություններ բաց թողնել, այլև դրամաթղթեր փոխանակել և այլն։ Օտոմանյան բանկը աստիճանաբար իրեն ենթարկեց կայսրության ֆինանսները։ Եվրոպացիները վերցնում են նոր կոնցեսիաներ, իսկ պետական պարտքը գնալով ավելի էր մեծանում։ Մեծ ծախսեր էին պահանջում բանակը, սուլթանի բազմանդամ հարեմը, մեծաքանակ պաշտոնյաները։

1850—60-ական թթ. Թուրքիան ապրեց ֆինանսական ճգնաժամ։ Կայսր-

---

43 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., том 9, стр. 133.

րության դրամական եկամուտների գլխավոր աղբյուրը մնում էին գյուղատնտեսությունը, մահմեդական բնակիչներից, առավել ևս քրիստոնյա հպատակ ազգերից գանձվող բազմաթիվ հարկերը։ Որքան ավելի էր պետությունը ստրկանում Եվրոպային, այնքան սաստիկ էր նա կողոպտում ժողովրդական զանգվածներին։

Գյուղացիությունից գանձվող հարկերը բազմատեսակ էին։ Դժվար է ճշգրիտ կերպով ցույց տալ, թե ամեն մի ծխին միջին հաշվով ինչքան հարկ էր հասնում կամ ինչ անուններ ունեին այդ հարկերը, քանի որ «միևնույն կազայի տարբեր գյուղերում, կամ նույնիսկ միևնույն... վիճակում նույն հարկը անվանվում էր այլ ձևով, գանձվում էր այլ կերպով, տարբեր չափերի, տարվա տարբեր ժամանակներում, այլ պայմանների առկայությամբ»[44]։ Համապատասխան նյութերի պակասը հնարավորություն չի տալիս ընդհանուր հայտարարի բերել հարկման գործում եղած կամայականություններն ու չարաշահումները։ Այնուամենայնիվ կային հարկեր, որոնք պարտադիր էին բոլորի համար, դրանցից ամենահիմնականն ու ծանրը աշարն էր։

Աշար-տասանորդը գանձում էին ոչ միայն աղաներն ու բեյերը, այլև պետական հարկահավաքները, հարկերը կապալով վերցնող պաշտոնյաներն ու սարաֆի նշանակած մարդիկ։ Հարկը ծանրանում էր, քանի որ վաշխառուն կամ սարաֆը նահանգի աշարը գնում էր պետությունից, իր հերթին վաճառում փոքրերին, սրանք էլ իրենց ստորադրյալներին էին հանձնարարում կատարել հարկահավաքումը։ Ինչքան ավելանում էր վաշխառուների թիվը, այնքան շատանում էր հարկաչափը։

Պաշտոնական տվյալներով, պետությունը Էրզրումի վիլայեթից 1864—1865 թթ. աշար է գանձել բերքի 15%-ը, իսկ հաջորդ հինգ տարիներին՝ 12,5%-ը։ 1867 թ. վիլայեթը գանձարան է մուծել 152.900 թուրքական լիրայի աշարագումար, 1868 թ.՝ 184.470 լիրայի, 1870 թ.՝ 195.000 լիրայի[45]։ Բայց դա բոլորը չէր։ Եթե տարվա հացը քանկ էր, հարկը գանձում էին բնամթերքով, իսկ եթե էժան էր՝ դրամով։ Եթե սրան գումարենք հարկահավաքների ապօրինությունները, ապա աշարի քանակը կանցնի եկամտի 20%-ից։

Էմլաք-կալվածահարկը գանձվում էր տների, կալվածքների, մարգագետինների համար։ Այն բաժանվում էր երկու մասի՝ հողային հարկի կամ արազի և շինությունների հարկի կամ էմլաքի։ Կալվածահարկը գանձվում էր կալվածքի գնահատման յուրաքանչյուր 1000-ից 4%-ը և ստացված եկամտի յուրաքանչյուր հարյուրից 4%-ը[46]։ Քաղաքներում, եթե տունը հարկվում էր, վճարվում էր գնահատման 5 և ավելի տոկոսը։ Էրզրումի վիլայեթը 1866 թ. տվել է 73.700 թուրքական լիրայի էմլաք, 1867 թ.՝ 69.300, 1868 թ.՝ 70.950, 1869 թ.՝ 69.410 օսմ. լիրայի[47]։

Աղնամ կամ ղամճուռը գանձում էին ամեն մի ոչխարի կամ այծի համար երեք դահեկան։ 1850-ական թթ. աղնամ էին գանձում մանր եղջերա-

---

44 ՌԱՔԱ, ՍՊՐ, Գլխավոր արխիվ, V—Ա2, 1872 թ., գ. 1083 (72), թ. 16։

45 Նույն տեղում, թթ. 17—19։

46 «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», կ. Պոլիս, 1901, էջ 300։

47 ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ, V—Ա2, գ. 1083, թ. 19։ Տե՛ս նաև Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 108—109։

վոր անասունների տերերից, ամեն մի ոչխարի համար 1,5 ղուրուշ։ 1868 թ. հարկը դարձավ 2 ղուրուշ, իսկ 1870—71 թթ.՝ 3 ղուրուշ[48]։

Սակայն աղնամը ավելի էր ծանրանում գանձման ձևերի և գանձողների կամայականությունների պատճառով։ Եթե անասունները գարնանը հաշվառված էին և մի քանի օր հետո թալանված քուրդ ավազակապետերի կողմից, միևնույնն էր; անասնատերը պարտավոր էր հարկերը վճարել ամբողջությամբ։ Չվճարելու դեպքում բռնագրավվում էր նրա շարժական ու անշարժ գույքը։ Աղնամը ևս տրվում էր կապալով։ Միայն 1872 թ. պետությունն ինքը կազմակերպելով աղնամի գանձումը, հավաքեց 2.010.000 դահեկանով ավելի, քան նախորդ տարին։ Իսկ Էրզրումի վիլայեթի նույն տարվա աղնամը կազմեց 9.404. 286 դահեկան[49]։

Բեյրե անվանված հարկը հավաքվում էր ղույգ եզների տերերից՝ մեկ բեռ ցորեն, մեկ բեռ գարի, իսկ շահնալըխը կամ եոլչեկ հակկը վճարվում էր հարկահաններին՝ աշարի 1/16 մասի չափով։ Ճանապարհների հարկը պարտադիր էր 20—60 տարիական տղամարդկանց համար, ամեն մեկից 20 ղուրուշ գումար կամ փոխարենը պետք է կատարեին ֆիզիկական աշխատանք։

Էհթիսաբը վերցվում էր խոշոր եղջերավոր անասունների, ձիերի, ջորիների վաճառքի, նույնիսկ փոխանակման դեպքում, նրանց գնի մեկ քառասուներորդի չափով[50]։

Թուրքահպատակ այլազգիները մահմեդականներին հավասար հարկեր վճարելուց զատ, տալիս էին մի շարք այլ հարկեր, որոնք իրենց ծանրությամբ պակաս չէին վերոհիշյալից, իսկ իրավական տեսակետից ցուցադրում էին հայերի «ռայա» լինելու հանգամանքը։ Դրանցից առաջինն ու ամենածանրը խարաջն էր՝ վերանվանված բեդելի ասկերիե (զինվորական հարկ)։

1840 թ. հրամանագրով գլխահարկի գանձումը կատարվում էր ոչ թե ղատ-ղատ՝ անհատներից, այլ ընդհանուր գումարը գրվում էր համայնքների վրա և պահանջվում համայնապետերից։ Հնուց եկող գլխահարկը հարատևեց մինչև 1855 թ., այնուհետև փոխարինվեց զինվորական հարկի՝ ըստ էության մնալով նույնը, սակայն ստանալով նոր հիմնավորում, այլազգի ժողովուրդներին կեղեքելու նոր երանգներ։ Պատճառաբանությունը հետևյալն էր. զինվորական օրենքով Օսմանյան կայսրության մեջ բնակվող ամեն մի համայնքի համար նախատեսվում էր արական սեռին պատկանող յուրաքանչյուր 180 մարդուց մեկ զինվոր։ Քանի որ ոչ-մուսուլման հպատակները զրկված էին բանակում ծառայելու իրավունքից, ապա նրանք պետք է վճարեին 5000 ղուրուշ հարկագումար[51]։

Աբդուլ-Ազիզը հարկատու համայնքի անդամների թիվը իջեցրեց 135-ի, իսկ հարկը բարձրացրեց 6000 ղուրուշի։ Ըստ որում, այժմ հարկը գանձում էին արական սեռի բոլոր քրիստոնյաներից՝ ներառյալ հաշմանդամները, անաշխատունակները։

---

48 ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ, V—Ա2, գ. 1083, թթ. 20—21։

49 Նույն տեղում, թ. 22։

50 Նույն տեղում, թ. 23։

51 Տե՛ս M. A. Ubicini, Etat présent de l'Empire Ottoman. Paris, 1876, էջ 128։

1860-ական թթ. Արևմտյան Հայաստանում բեդելի ասկերիեն արդեն դանձվում էր 21—32 ղուրուշի չափով, սակայն այն անխախտ օրենք չէր, անփոփոխ բոլորի համար։ Մի քանի գավառներում բեդելի ասկերիեն վերցվում էր նորածնից մինչև զառամյալ հասակի արական սեռի հայերից, որոշ տեղերում 15 կամ 18 տարեկան հասակից սկսած[52]։ 1871 թ. Վանում զինվորական հարկ էր դանձվում աղքատներից ու հարուստներից, սկսած 15, վերջացրած 60 տարեկանով՝ ամեն մեկից 21 ղուրուշ 20 փարա։ 1872 թ. Վանի իդարեն մեջլիսը որոշեց արական սեռի քրիստոնյաներին հաշվել հարյուրնեբով, ամեն մի խմբից 25-ին ազատել, իսկ մնացած 75-ից դանձել՝ յուրաքանչյուրից 21,5-ի փոխարեն 27 ղուրուշ 30 փարա։ Կարին քաղաքի հայերը տալիս էին յուրաքանչյուրը 21 ղուրուշ. հարկի մեկ տարվա գումարը կազմում էր 84000 ղուրուշ[53]։ Էրզրումի վիլայեթը 1865 թ. պետական գանձարան մուտք է արել 25.960, 1866 թ.՝ 25.960, 1867 թ.՝ 24.860, 1869 թ.՝ 30.960 ղուրուշ զինվորական հարկ։ Սեբաստիայի վիլայեթի մեկ տարվա ընդհանուր հարկագումարը ավելի մեծ չափերի էր հասնում[54]։

Հարկերի և առանձնապես զինվորական հարկի ծանրության պատճառով նվազում էր հայ ազգաբնակչությունը, կրճատվում էր բնական աճը, տեղի էին ունենում կրոնափոխության դեպքեր, մի երևույթ, որը վերջին սուլթանների վարած ազգային քաղաքականության բնորոշ կողմերից մեկն էր։

Գավառահայ ռայան, պետական հարկերից բացի, տուրքեր էր տալիս քրդական վերնախավին, խաֆիրներին, թոռաններին. սրանք պարբերաբար արշավանքներ էին կազմակերպում, կողոպտում հայերին, հաճախ չհենթարկվելով ոչ միայն կուսակալ վալիներին, այլև սուլթանական կառավարությանը։

Վրանաբնակ քուրդ ցեղապետերը հայերին հարկադրաբար դարձնում էին իրենց հարկատուներ։ Մեկ համփա հողամաս ունեցողը վճարում էր $12^1/_2$ ղուրուշ հարկ, կիսահամփան՝ դրա երկու երրորդը, իսկ պճեղը՝ մեկ երրորդը[55]։ Դրանից բացի, հայերը պարտավոր էին քուրդ բեկերին փեշքեշ տալ, զավակ ծնվելու դեպքում թանկարժեք նվերներ տանել, կոռ ու բեգար կատարել։

Երբ վրանաբնակ քրդերը ձմեռելու նպատակով գյուղերն էին իջնում, ֆելասները պարտավոր էին հոգալ խաֆիրների ուտեստի, անասուններին կերով ապահովելու գործը։ Երբեմն խաֆիրը ֆելասի հացն ուտելու համար դիշքիրասի՝ աոտամի վարձ էր ստանում։ Հպատակները հարստանեկան հանդեսի թույլտվություն ստանալու համար պարտավոր էին 50—150 ղուրուշի գումար տալ[56]։

Նիկոմիդիայի (Իզմիտի) գավառի կալվածատիրական հողերի վրա աշխատող գյուղացին, եթե թողներ բեկի հողը և անցներ մեկ ուրիշի կալվածքը կամ գաղթեր ընդհանրապես, համայնքի մյուս անդամները պարտավոր էին նրա

---

52 ՌԱՔԱ, Գլխավոր, արխիվ, V—Ա2, գ. 1086, թ. 27։

53 Նույն տեղում, թ. 28։

54 Տե՛ս Վ. Համբարձումյան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 42։

55 «Մասիս», 1872, 18 մայիսի, № 1239։

56 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 202, վավ. 549։

տեղ 5 ոսկի վճարել։ Համայնքի անդամները 50 օրվա պարտադիր, անվճար կոռային աշխատանք պիտի կատարեին կալվածատիրոջ համար։ Չի ունեցողները «տիրոջ» ընտանիքը փոխադրում էին ամառանոցներ, իսկ չունեցողները պարտավոր էին շալակել նրա երեխաներին և տանել ամառանոցներ կամ ուր կ՚արգադրվեր[57]։

Սասունի որոշ գյուղերում, Բռնաշենում, Խութում, Շատախում խաֆիրապատկան գյուղացիները, քրդական դերեբեյությունների վերացումից հետո էլ, հովանավոր խաֆիրին տալիս էին բնամթերային ռենտա։

Արևմտյան Հայաստանի տնտեսական հետամնացության, ժողովրդի սոցիալական անտանելի կացության պատճառներից էին տիրակալների՝ դինված ջոկատներ ունեցող թուրք ֆեոդալների, առավել ևս վրանաբնակ, միշտ տեղից տեղ շարժվող, իրենց հետևից մոխրակույտեր, ավերածություն, ողբ ու աղաղակ թողնող քուրդ ցեղապետերի ասպատակությունները, ավարառությունը, անպաշտպան ռայայի ունեցվածքի կողոպուտը։ Եթե 1850-ական թթ. դավառներում որոշ չափով զսպվեցին հարստահարությունները, ապա 1860-ականներին դրանք ավելի սաստկացան և հայ աշխատավորի կյանքըն, ունեցվածքը կրկին դրվեցին անապահովության վտանգի տակ։

Հայ աշխատավորը սոցիալապես ճնշվում էր նաև ազգակից վերնախավի՝ սարաֆ ամիրաների, չորբաջիների, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, տեղական առաջնորդների, վանքերի ու եկեղեցիների վանականների ու եկեղեցականների կողմից։ Թուրք փաշային սարաֆ դառնալով, ամիրաներից ամեն մեկը անխնայորեն կողոպտում էր աշխատավորությանը։ Դրամի տենչով մոլեգնած նա աշխատում էր, առանց ազգի ու դավանանքի խտրության, գյուղացուց կորզել այնքան, որքան հնարավոր էր։ Արևմտյան Հայաստանում նղած վաշխառուների զգալի մասը հայեր էին։ Նրանք դրամը փոխ էին տալիս բարձր տոկոսներով, գյուղացուն գցում իրենց ոստայնի մեջ և կեղեքում նրան։

XIX դարի կեսերին ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման հետևանքով վանքերը ևս ուժեղացնում են գյուղացիության սոցիալական շահագործումը։ Զբաղվականանալով վանքապատկան հողերից ստացված եկամուտներով, նրանք ծանրացնում էին հարկերը, ավելի անխնա կողոպտում հայ գյուղացուն։ Գյուղացիները վանքին տալիս էին պտղի, աշխատում վանքապատկան հողերում, ուտելիք և վառելիք մատակարարում վանականներին։ Իսկ եկեղեցուն, ծխատեր քահանային կամ վարդապետին վճարում էին «... քառասնից, ժամոց, աջհամբույր, խաչհամբույր, գավազանպտուղ»[58] և այլն։ Գոյություն ուներ նաև «վանական կողոպուտ» անունով տուրք, այն է՝ մեռնողի հագուստը տրվում էր քահանային, իսկ եթե հարուստ լիներ՝ մի հատ էլ խոշոր եղջերավոր անասուն՝ որպես «մեղաց դին»[59]։

1861 թ. սահմանվեց հարկահավաքման նոր ձև։ Արևմտահայ հարկա-

---

57 Տե՛ս Միհաս Դասապյան, Հայերը Նիկոմիդիո դավառին մեջ, Պարտիզակ, 1913, էջ 82—83։

58 «Արծվի Վասպուրական», 1862—1863, № 3, էջ 89։

59 Հայկ Ղազարյան, Մ. Մամուրյան, Երևան, 1961, էջ 79—80։

տունները բաժանվեցին չորս խմբի. 1. 20—30 ղուրուշ հարկ վճարողներ, 2. 50—60 ղուրուշ, 3. 100—120 ղուրուշ, 4. 120 և բարձր վճարողներ՝ «...ըստ չափու կարողության և ազգասիրության»[60]: Պատրիարքարանը հարկ էր վերցնում նաև քահանաներից, իսկ սրանք էլ՝ «հովվյալներից»: Վանում մանկան մկրտության համար գանձում էին 2—5 ղուրուշ, պսակի համար՝ 10—20 ղուրուշ, թաղման համար՝ 5—20 ղուրուշ, տնօրհնեքի համար՝ 30—40 փարա, դերեզմանօրհնեքի համար՝ 20—40 փարա, քառասունքի համար՝ 40—60 փարա[61]:

* * *

Սոցիալական հարստահարություններից ավելի անտանելի էին ազգային այն ճնշումներն ու հալածանքները, որոնք բաժին էին ընկնում կայսրության քրիստոնյա հպատակներին:

«Թանզիմաթի» խոստումները չէին կարող իրականացվել ֆեոդալական բռնապետական տերության մեջ և վերացնել կրոնական ու ազգային խտրականությունը Թուրքիայում, իրավական տեսակետից հավասարության նըշան դնել քրիստոնյա ու մահմեդական ժողովուրդների միջև: Սրագրված բարեփոխությունները ձևական էին, իսկ կառավարության կողմից հրահրվող ազգամիջյան խտրականությունն ու ընդհարումները սուլթանական կառավարության վարած քաղաքականության հիմնանպատակն էր:

1850—60-ական թթ. հրապարակված փաստերը կասկած չեն թողնում, որ «Թանզիմաթը» մնացել էր թղթի վրա: Գազանություններին, ոճրագործությունների անթիվ դեպքերը մերթ հիշեցնում էին սուլթանական մոռյլ միջնադարը, մերթ էլ անօրինակ դառնալով, գրեթե նմանը չէին գտնում մարդկության պատմության մեջ:

Հայերի նկատմամբ կատարած իրենց վայրագությունների մեջ, մասնավորապես Ղրիմի պատերազմից հետո, քուրդ վերնախավերը կրկին արտոնության իրավունք էին վայելում: «Ի՞նչ է պատահում դժբախտ հայերի հետ,— գրում էր նշանավոր արևելագետ Ա. Կրիմսկին,— այդ ամենքին էլ հայտնի է. նույնպես հայտնի է բոլորին, որ գազանությունների մեղսագործներն ոչ միայն չեն արժանանում պատժի, այլ, ընդհակառակը, կառավարությունից պարգևներ են ստանում: Մինչև անգամ Ասորիքում, այն երկրում, որը տաճկական ուրիշ գավառներից քրիստոնյաների համար ավելի ապահով է համարվում, մահմեդականը սպանելով քրիստոնյային՝ անպատիժ է մնում. սկզբում մի որևէ հյուպատոսի պահանջով նա բանտ կնստի, իսկ երեք օրից հետո տաճիկ կառավարության շնորհիվ ազատ կհամարվի (մանավանդ, եթե կաշառք էլ ստանան), և բոլորին ծանոթ մարդասպանը հպարտ կերպով անցուդարձ կանի, օրինակ այնպիսի բազմամարդ փողոցով, ինչպես Բեյրութի բյուրժն է»[62]:

---

60 «Տեղեկագիր քաղաքական ժողովո», Կ. Պոլիս, 1861, էջ 31:

61 «Մուրճ», 1904, № 12, էջ 46:

62 Ա. Կրիմսկի, Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, Վաղարշապատ, 1906, Թարգմանեց Բարգեն վարդապետը, էջ 105—106:

Ռուս գեներալ Լիխուտինը, ծանոթանալով հայերի իրավազուրկ վիճակին, գրում է. «Ներանք իրավունք չունեն զենք կրելու... Ես տեսա մի քանի հայեր կտրված ականջներով ու քթերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականորեն և բռնությամբ, այս կամ այն աղդեցիկ ու հարուստ գյուղապետի կամ տեղական դատարանի անդամի կողմից։ Նրանք [հայերը] մշտապես գտնվում էին տագնապի մեջ, ունեին ահաբեկված տեսք...»[63]։

Թուրք և քուրդ վերնախավերը քրիստոնյա հպատակների հետ վարվում էին ինչպես ցանկանում էին, անարգում էին նրանց, վիրավորում, կողոպտում և անպատիժ հեռանում։ Այդ մասին Վասպուրականի սոցիալ-քաղաքական կյանքին քաջատեղյակ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Թուրքաց մոլեռանդությունն և անլսելողություննն այնչափ է, որ կրնան հայ մը ձիեն վար առնել, շուկայի և փողոցներու մեջ անտեղի պատճառով մը, կամ ի՞նչ պետք է պատճառ, մի՞թե հայ լինելը բավական պատճառ չէ՞, կքաշեն, կգանակոծեն. եթե թուրք մը բան գնած է հայե մը իրավունք չունի հայն ստակ պահանջելու, եթե վճարե թուրքն՝ շնորհ մ'ե, եթե ոչ յուր իրավունքն է»[64]։ Թուրքական թաղամասերով հայերն ազատ, համարձակ անցնել չէին կարող։ Ծկեղեցի, շուկա գնալիս կամ ընդհանրապես փողոցով երթևեկելիս հայ կանայք ու աղջիկները ստիպված էին մինչև աչքերը փաթաթվել շալերի մեջ, որպեսզի չնկատվեր նրանց գեղեցկությունը։

Սուլթանական կառավարությունը 1850—60-ական թթ. սկսեց ուժեղացնել ազգային ճնշման ու հալածանքների իր քաղաքականությունը և ընդհանուր գրոհի անցավ արևմտահայության դեմ[65]։ Դրա պատճառն այն էր, որ նախ շովինիստական նոր ծրագրերով հրապարակ իջավ թուրք բուրժուազիան, որի հիմնական ձգտումներն էին երկարաձգել Օսմանյան կայսրության գոյությունը, ազգային-ազատագրական շարժումներն արյան մեջ խեղդելով, հավերժացնել իր տերության ամբողջականությունը և ընդարձակել նրա սահմանները։ Թուրք բուրժուազիայի ռազմատենչ ծրագրերը իրականացնելու նպատակով 1868 թ. ստեղծվեց «Իթթիհատը», որի հիմնադիրները հանդիսանում էին «մոլի թուրքերը, մոլի նացիոնալիստները»[66]։ «Իթթիհատը» որդեգրվեց «Թուրքիան թուրքերի համար» քաղաքականությանը։

1860-ական թթ. կառավարությունը սկսեց ավելի շատ զբաղվել հպատակ այլազգիների խնդրով։ Քրիստոնյաներին պատեհառիթ ձուլելու նախկին պրակտիկան վերածվեց պետական քաղաքականության։ 1869 թ. Ֆուադ փաշան թուրք նորաստեղծ բուրժուազիային ու կառավարությանը պատգամեց. «Ներքին գործերում մեջ մեր բոլոր ջանքը միմիայն մեկ նպատակի մը ձգտելու է, որ է զանազան ցեղերու ի մի ձուլումը։ ... Ասկե հետո այդ մեծ կայսրությունը ո՛չ հույներուն, ո՛չ ալ Սլավներուն կրնա վերաբերիլ, ո՛չ մի կրոնքի և ոչ ալ մեկ ցեղի։ ... Դարատաղ մը, Սերպ իշխանապետություն մը, Հայաստանի թա-

---

63 *М. Лихутин*, Русские в Азиатской Турции в 1854 и 1855 гг., СПб., 1863, стр. 168.

64 Գ. Սրվանձտյանց, *Թորոս աղբար Հայաստանի ճամփորդ, մասն Ա, էջ 162—163։*

65 *Տե՛ս* Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 76—80։

66 «История XIX века», под ред. *Лависса* и *Рамбо*, т. VI, М., 1938, стр. 121.

գավառությունը մը, իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելե զատ, առավել կամ նվազ ցնորական երազներ են...»[67]։

Մահից քիչ առաջ կազմված Ֆուադի այս կտակը դարձավ թուրքական կառավարության վարած «նոր» քաղաքականության հիմնաքարը, մանավանդ, երբ Բ. Դուռը տեսավ, թե Բուլղարիան, Զերնոգորիան, Սերբիան ինչպիսի համառ պայքար մղեցին իրենց ազատագրման համար։ Ուժեղացավ հայերի ձուլման քաղաքականությունը։ Մահմեդականացումը կատարվում էր և՛ բռնությամբ՝ ուղղակիորեն, և՛ հարկային ծանր քաղաքականության միջոցով՝ անուղղակիորեն։

«Խաղտիք և Բարձր Հայք թրքացած, մորթված, գաղթած և աքսորված՝ կը հեծե այսօր,—գրում էր Սրվանձտյանցը,—Քեղքիթ գավառն այսօր ունի... 98 գերեզմանոց ավերակ, այդ ընդարձակ գավառին մեջ միայն 15 տուն հայ մնացեր է»[68]։ Տիգրանակերտի մոտակայքում բնակություն էին հաստատել սասունցիների մի քանի հարյուր ընտանիք, որոնք մահմեդականություն էին ընդունել[69]։ Նրանք շարունակում էին խոսել հայերեն, հարգել հայ վանականներին, հաճախել հայոց վանքեր, իսկ մահմեդականությունն ընդունելը առերես էր, հարկադրված։

Հայերի մահմեդականացումն ավելի ուժեղ էր արտահայտվում քրդաշատ Վասպուրականում։ Վանի վիլայեթում հազարների հասնող քրդացած ու թուրքացած հայեր, 44 ավերակ վանքեր, 800-ից ավելի «... շեն և անշեն եկեղեցիք կան, որոնք քրդեր ավիրեր, մզկիթ, գոմ և ախոռ շիներ են»[70]։ Կ. Պոլիս առաքված բողոքագրերից մեկում արձանագրված է. «Խլաթա մեջ հայ կին մը սաստիկ ծեծելով թևն ու գլուխը ջարդեցին զոռով տաճիկցնելու համար»[71]։

Տարոնի հայ բնակչությունը 1868 թ. դիմելով Կ. Պոլսի Ազգային ժողովին և պատրիարքին գրում էր. «...զմեզ անխնա կնեղեն, կշարչարեն, և կհարստահարեն... մեր Մշո գավառին մեջ քանի, քանի եկեղեցիներ կողոպտեցին ու բազմաթիվ գանձեր տարին... այս տարի բազմաթիվ գանձեր հափշտակեցին ու տարին, թե՛ Մշո մեջ և թե՛ ի գյուղորեսն ամեն գիշեր զխանութս և զտուներնիս կպատռեն և զունեցածնիս կտանին... Մենք չենք համարձակիր որևիցե այլազգիներեն զմեր իրավացի պահանջն պահանջել ու ուզել, կամ կանարգեն և կամ կուրանան. թե հայ վկաներ բերենք՝ չեն ընդունիր...»[72]։ Հարանմանկ բովանդակության բողոքագրեր էին պատրիարքարան առաքվում Քղիի, Ջարսանջակի, Մուշի, Դիարբեքիրի և այլ վիլայեթներից ու գավառներից։ Փաստերի առատությունը հիմնավորապես ապացուցում է, որ 1860-ականների երկրորդ կեսը արևմտահայության ուծացման մի ժամանակաշրջան էր՝ հովանավորված ու խրախուսված սուլթանական կառավարության կողմից։

---

67 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, հատ. Բ, Դահիրե, 1937, էջ 1430։

68 ԳԱՔ, Բ. Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 42։

69 Նույն տեղում, վավ. 50, էջ 5—6։

70 ԳԱՔ, Բ. Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 57։

71 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, Թիֆլիս, 1915, էջ 493։

72 Նույն տեղում, էջ 143—144։

Բ. Դուրը, թուրք նորելուկ բուրժուական գործիչները, չբավարարվելով հայ ժողովրդի հարստահարման, իրավազրկման և մահմեդականացման քաղաքականությամբ, սկսեցին գրոհը նախ պետական ապարատը հայերից մաքրելու, ապա հայկական պատմական հուշարձանները ոչնչացնելու համար[73]։ «Համբավաբեր Ռուսիո» պարբերականը 1863 թ. գրում էր. «Գրեթե 80 տարիէ ի վեր Օսմանյան պետության վառոդաշինությունը հայոց հանձնված էր, ընդ վերատեսչությամբ Տատյան... գերդաստանին։ Այժմ Բ. Դուրը արժան համարեր է վառոդարանի վերատեսչությունը նույն գերդաստանն առնուլ և հայ աշխատավորաց քով թուրք զինվորներ դնել, և նույն աշխատավորներն ստիպել, որ անոնց հետ գործեն և վառոդաշինության արհեստն ուսուցանեն անոնց, որպեսզի հետո հայերը բոլորովին արտաքսե վառոդարանեն»[74]։ Հատկանշական է նաև, որ Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևը 1869 թ. հաղորդում է իր կառավարությանը, թե Բ. Դուրը գաղտնի հրահանգ է տվել տեղական իշխանություններին, որպեսզի սրանք ոչնչացնեն հայկական պատմական հուշարձանները, այնպես անեն, որ այդ կոթողները չհիշեցնեն Հայաստանի անցյալը և ազգային անկախության գաղափար չզարթնեցնեն հայ ժողովրդի մեջ[75]։

Հայերի նկատմամբ սուլթանական կառավարության վարած ազգային ճնշումներն ուժեղացնելու պատճառներից էր և այն, որ 1840-ական թվականներին զսպելով քրդական դերեբեյներին, վերացնելով ապստամբ, կենտրոնախույս ուժերը, Բ. Դուրը 60-ական թթ. կտրուկ միջոցների էր դիմում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի լեռնային գոտիներում անցյալից մնացած հայերի կիսանկախությունը վերացնելու համար։ Դարամիջին սուլթանական պալատականներն ամեն միջոց խորհում էին հպատակեցնելու Սասունն ու Զեյթունը։ Այս նպատակին հասնելու համար թուրքական կառավարությունը Լեռնային Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանում բնակեցրեց Հյուսիսային Կովկասից գաղթեցրած չերքեզ բնակչությանը, սրբեց նրանց և հայերի, հայերի ու քրդերի փոխհարաբերությունները, պարարտ հող նախապատրաստեց իր ապագա արշավանքների համար։

3. ՔԱՂԱՔՆԵՐ

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը, երկրագործությունից ու անասնապահությունից բացի, զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով։ Արհեստով էր պարապում նաև արևմտահայ գյուղական ազգաբնակչության մի մասը, սակայն արդյունագործության և առևտրի հիմնական կենտրոնները մնում էին քաղաքները։

XIX դարի երկրորդ երեսնամյակին Թուրքիայում կային չորս տասնյակից ավելի հայկական ու հայաբնակ քաղաքներ։ Այդ քաղաքներում ապրում էին բուն քաղաքացիներ, գյուղերից գաղթած արհեստավորներ, առևտրական-

---

73 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 78—79։

74 «Համբավաբեր Ռուսիո», Մոսկվա, 1863, № 48, էջ 3։

75 «Биржевые ведомости», 1869, № 109.

ներ, պանդուխտ օրամշակներ։ Հայկական քաղաքներն էին ներհոսում նաև քուրդ ու թուրք բնակչությունը՝ խոշոր հողատեր կալվածատերերը, մահմեդական առևտրականներն ու արհեստավորները։

Այս հոսքի պատճառով ստվարանում էր Խարբերդի, Բաղեշի, Եվդոկիայի, Ադանայի, Մարաշի, Վանի բնակչությունը։ Ադրիանապոլսի պայմանագրից հետո, գաղթի հետևանքով Կարինի ազգաբնակչության մեծ մասը արդեն թուրքեր էին, բայց տնտեսության հիմնական ճյուղերը կենտրոնացած էին հայերի ձեռքում։

1830—60-ական թթ. Խարբերդն ուներ 16 հազար բնակիչ, Դիարբեքիրը՝ 40—50 հազար, Սեբաստիան՝ 30 հազար, Երզնկան՝ 15 հազար, Ադանան՝ 40 հազար, Մարաշը՝ 40 հազար, Հաճընը՝ 25 հազար, Զեյթունը՝ 20 հազար, Վանը՝ 30—40 հազար, Կարինը՝ 45—50 հազար։ Քաղաքային բնակչության մեծ մասը հայերն էին։ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում ապրում էին մոտ 350 հազար հայ քաղաքացիներ[76]։

Դարի առաջին քառորդի համեմատությամբ աճեց Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Հալեպի, Ադանայի քաղաքաբնակ հայերի թիվը։ Կարինը մնաց առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոն։ Առևտրական նոր մայրուղիներից հեռու ընկած հայկական նահանգների երբեմնի հայաշատ քաղաքներն, ընդհակառակը, վերածվեցին ընդարձակ գյուղերի։ Գաղթեց արհեստավորների ու առևտրականների մեծ մասը, քայքայվեցին արհեստն ու առևտուրը։ Բայազետը, Բալուն, Մուշը, Դերսիմը կորցրին հայկական տարրի մեծ մասը և ստացան հետամնաց գյուղաքաղաքների կերպարանք։ Այնուամենայնիվ, արևմտահայերի արհեստագործությունն ու առևտուրը շարունակում էր ոչ միայն հարատևել, այլև որոշ չափով զարգանալ։

XIX դարի առաջին քառորդին Թուրքիայի արհեստագործությունը և մանուֆակտուրային արդյունաբերությունը զգալի առաջընթաց էր կատարել։ Դարի երկրորդ քառորդին եվրոպական գործարանային ապրանքների մուտքը մի կողմից, կյանքի ու գույքի անապահով պայմանները, ֆեոդալական ռեժիմը, փաշաների ու բեկերի կամայականությունները՝ մյուս կողմից, փակեցին առաջընթացի ճանապարհը։

«...Թուրքական, ինչպես և բոլոր մյուս արևելյան տիրապետություններր անհամատեղելի են կապիտալիստական կարգի հետ. ձեռք բերած հավելյալ արժեքը,—գրում էր Ֆ. Էնգելսը,—ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, գոյություն չունի բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և սեփականության ապահովությունը»[77]։ Ֆ. Էնգելսը ավելացնում էր թե «... անգլիական գործարանային ապրանքները... իրենց ցածր գների շնորհիվ, ասիական հարեմներից արագորեն դուրս են մղում տնայնագործական արդյունագործության արտադրանքները»[78]։ Օտարերկրացիների առևտրական գործարքները, տնտեսակա-

---

76 Տե՛ս Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 287—295։

77 Ф. Энгельс, Внешняя политика руеского царизма (К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, стр. 33).

78 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 22.

նին զուգահեռ հետապնդում էին քաղաքական նպատակներ։ Եվրոպական կապիտալը ջանում էր կասեցնել Թուրքիայի տնտեսության առաջընթացը, քայքայել երկրի արդյունաբերական ձեռնարկությունները, ի վերջո երկիրը դարձընել հումքի բազա։

Եվրոպական կապիտալը հասավ իր նպատակին։ Քայքայումը սկսվեց 1830-ական թթ., իսկ հաջորդ երկու տասնամյակներում Թուրքիան հասավ այն դրության, որ Եվրոպայից ներմուծում էր «բոլոր անհրաժեշտ ապրանքները, բացի գյուղատնտեսական մթերքներից»[79]։ Թուրքիայում չկային մեքենաշինական, թուջի և պողպատի ձեռնարկություններ, 250 մետաղահանքերից գործում էր միայն 30-ը, մնացածները մատնված էին անգործության։

1840-ական թթ. Թուրքիայի նախկին մանուֆակտուրաներն արդեն քայքայվել էին։ Սկյութարում, Բրուսովոյում 1812 թ. գործող մանածագործական 2000 դազգահներից 1841 թ. մնացել էր 200-ը, Սալոնիկի 280 մետաքսագործներից՝ 18-ը։ Անատոլիան, Դիարբեքիրը, Բուրսան, որոնք հայտնի էին իրենց արտադրած թավիշով, սատինով, մետաքսյա կտորեղեններով, այժմ արտադրում էին առաջվա արտադրանքի մեկ տասներորդը։ Մետաղներով հարուստ Թուրքիան երկաթ և այլ տեսակի մետաղահումք էր ներմուծում դրսից։ Կայսրության արդյունագործությունը, արհեստները ընդհանուր առմամբ անկում էին ապրում։ Սակայն երկրի ընդհանուր դեգրադացիայի պայմաններում հայ արհեստավորները կարողանում էին հարմարվել նոր իրադրությանը և, դիմագրավելով օտար կապիտալին, շարունակում էին պահպանել իրենց արտադրության նախկին մակարդակը։ Ավելին, երբ թուրքապատկան գործարանները փակվում էին, հայերը նոր գործարաններ էին բացում։ Կայսրության մեջ արդյունաբերության չքայքայվող ճյուղերից մեկը գորգագործությունն էր, որի արտադրությունը և վաճառահանումը կենտրոնացած էին հայերի ձեռքում։ Տեղաշարժեր էին նկատվում արհեստագործության մի քանի ճյուղերում։ Հայկական քաղաքները մանուֆակտուրային արտադրության զարգացման տեսակետից ավելի կայուն էին, քան ասիական Թուրքիայի արհեստագործական մյուս կենտրոնները։

Տեքստիլ արհեստագործությունը՝ հատկապես չթագործությունը, կտավագործությունը զարգացած էին Եվդոկիայում, Բաղեշում, Կարինում, Ադանայում, Երզնկայում և այլուր։ Գործիմաց հայ արհեստավորները ստիպված կատարելագործում էին իրենց գործիքները, վառ դարձնում ներկերի գույները, արտադրանքին եվրոպական ձևավորում տալիս, շարունակում տեղեր ապահովել ազգային, նույնիսկ եվրոպական շուկաներում։

Եվդոկիայում գործում էին յազմայի 120 և կտավագործության ու բազմաթիվ այլ արհեստանոցներ։ Ամեն մի արհեստանոցում աշխատում էին 8—10 բանվորներ[80]։ Նրանք արտադրում էին վերմակի թավիշե երեսներ, սեղանի սփռոցներ, լուսամուտներ վարագուրող զարդակտավներ։ Ադրաբկիրում աշխատում էին մանուսա գործող 1000 դազգահներ։ 1878 թ. նրանց թիվը հասնում էր 1600-ի։ Սեբաստիայի տեքստիլագործները տարեկան ներմու-

79 *Կարլայլ Մակ-Կոակ*, Наш новый протекторат, стр. 153—154.

80 *Տե՛ս* Ա. Ալպոյաճյան, *Պատմություն Եվդոկիո հայոց*, Գահիրե, 1952, էջ 1282 և հետո։

ծում էին մոտ երկու միլիոն ֆրանկի արժողությամբ 10 հազար հակ ներկված բամբակ։ Արտադրանքի արժեքը կազմում էր 20 միլիոն ֆրանկ։ 1847 թ. Բաղեշում կային կտավագործական 100 արհեստանոցներ՝ 400 դազգահով [illegible] շատին գործարաններում կտավը Ամերիկայինեն վար չմնար։ Կարմիր ներկով ներկված կտավ մը կը շինեն, որ բոլոր Քրդստանի մեջ կգործածվի»[81], Բաղեշի «կարմիր շիլան» շնորհիվ իր բարձր որակի, բնավ չդունաթափվելու հատկության, հայտնի էր նույնիսկ եվրոպացիներին։ Խարբերդի հայերը ասորիների հետ արտադրում էին բազմատեսակ չիթ, ներկում բուսական ներկով և գեղեցիկ ծաղկազարդման վարպետությամբ գերազանցում գործարանային արտադրանքին։

Մարաշում տարածված էր չուլհակությունը։ Արտադրում էին ալաճա կոչվող չիթը, որն ավելի շատ քաթանի էր նման։ Պատրաստում էին գունավոր մետաքսաթել աբաներ, սրմաներ, իսկ պետեն կոչվող բրդյա աբաներն ավելի էժան էին և գործածում էին միայն տեղացիները։ Հաճընը աչքի էր ընկնում իր գուլպաներով և բրդյա շալվարներով։ Դրանք արտադրվում և մեծ քանակությամբ արտահանվում էին Մարաշ, Բիթլիս, Այնթապ, Հալեպ, Ալեքսանդրիա։ Արհեստի այս ճյուղերում ներգրավված էին ոչ միայն կանայք, այլև անչափահաս երեխաներ։

Այսպիսով, արևմտահայ քաղաքային աղգաբնակչության մի ստվար մասը ներգրավված էր մանածագործական մանուֆակտուրայի մեջ։ Արտադրությունը, ինչպես նաև վաճառքը կենտրոնացված էին տեղական հումքով սընվող գավառահայ առևտրականների ձեռքում։

Արևմտյան Հայաստանի ընդերքը հարուստ էր օգտակար հանածոներով։ Սակայն թուրքական իշխանությունները ժողովրդին զրկում էին դրանցից օգտվելու հնարավորություններից։ Դարակեսին գործում էին Արղանայի պղղընձահանքերը։ Տարեկան հանվում էր երկու միլիոն հոխա* պղինձ, ամեն մի հոխան վաճառվում էր 12 ղուրուշով։ Պղինձն իր մեջ պարունակում էր ոսկի, դրա համար էլ տեղափոխում էին Անգլիա՝ այնտեղ մշակելու։ 1860 թ. Եվդոկիայի հարավ-արևելյան մասում կառուցվեց պղնձաձուլարան. պղնձամշակման տեխնիկան պարզունակ էր։

Կապան-մատենում մշակվող արծաթահանքերը օգտագործվել էին դեռևս միջնադարում, սակայն նրանց հանույթը մեծացավ 1830—60-ական թվականներին։ Մեծ քանակությամբ արծաթ էր հանվում նաև Գյումուշխանեի հինավուրց հանքերից։ Դերսիմում գործում էին ոսկու և աղի հանքերը։

Կարևոր է հիշատակել նաև Վանի Կարճկան գյուղի շրջակայքում գտնվող պղնձաձուլարանը, Ջեյթունի Պիրիդ լեռների պղնձահանքերը։ 1840—50 թթ. Եվդոկիայում գործում էր «Ղալխանեն»՝ եվրոպական ձևով կառուցված պղնձաձուլական գործարանը։ Ղալխանեում էր մշակվում Թոխաթի շրջակայքից հանված ողջ պղինձը։ Եվդոկիան պղնձագործների քաղաք էր։ Պղնձագործության բնագավառում ամբողջ Թուրքիայում այն մրցակից չուներ։

Խարբերդում կային մեծ թվով երկաթագործներ և դարբիններ, որոնք

81 Բարունակ Պէյի Ֆերուխան, ճանապարհորդութիւն ի Բաբելոն քնդ Հայաստան, Արմաշ, 1876, էջ 149։

* Մեկ հոխան 400 դրամ է։

պատրաստում էին կողպեքներ, երկրագործական գործիքներ, տնային գործածության այլ իրեր, ինչպես նաև կառքեր, օրորոցներ, պղնձյա գեղեցիկ դավաթներ, փոքր ու մեծ կաթսաներ։ Երզնկայի պղնձագործներն իրենց արտադրանքով մասնակցում էին Լիոնի, Փարիզի, Վիեննայի, Ֆիլադելֆիայի ցուցահանդեսներին։ Վանը արծաթագործության և ոսկերչության ասպարեզում լայն ճանաչում ստացած քաղաք էր։

Վանում, Կարինում, Սասունում, Զեյթունում տարածված էր զինագործությունը։ Կարինում հրացան և ատրճանակ էին արտադրում հարյուրից ավելի արհեստավորներ։ Սակայն մետաղագործությունը մնում էր խարսխված հին տեխնիկայի վրա։ Տակավին գերակշռում էր ձեռքի աշխատանքը։

Խարբերդում գործում էին կաշեգործական արհեստանոցներ, ուր մշակում էին տարբեր տեսակի կաշիներ։ Մշակված կաշին ներկում էին բազմատեսակ ներկանյութերով, կարում ճոկավոր կոշիկներ՝ վաճառելու համար։ Հումքը ըստացվում էր շրջակայքից, ներկերը՝ արտասահմանից։ Կարինը կաշեգործության կենտրոն էր, սակայն հայ արհեստավորների շարքում գնալով ավելանում էր թուրքերի թիվը։ Եվդոկիայի կաշեգործարանը տարեկան 1000—1500 ոսկու արժողությամբ կաշի էր մշակում։ Կաշեգործության, կոշկակարության, թանկարժեք մորթիներից մուշտակներ պատրաստելու արհեստանոցներ կային Ադանայում, Մարաշում, Բաղեշում, Վանում։ Արհեստի այս մարզը, սակայն, ծանրակշիռ տեղ չէր բռնում հայ արհեստագործության մեջ. այն տեղական նշանակություն ուներ։

Հայաստանի քաղաքներում և գյուղերում կային բազմաթիվ դերձակներ, թիթեղագործներ, հյուսներ, վարսավիրներ, ժամագործներ, հացագործներ, թաղիքագործներ, պայտառներ, որմնադիրներ, բրուտներ, համեստագործներ։ Արհեստագործության ճյուղերի մեջ ներգրավված մարդիկ, չնչին բացառություններով, արտադրում էին հետամնաց արտադրամիջոցներով և բավարարում միայն տեղական կարիքները։

Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում հայերը հիմնել էին նաև մի շարք գործարաններ։ Նիկոմիդիայի շրջակայքում 1836 թ. Հովհաննես բեյ Տատյանը կառուցել տվեց չուխայի գործարան։ Նրա վարպետները և բանվորները հավաքագրվեցին արևմտահայ արհեստավորներից։ Նույն տարում Հ. Տատյանը հիմնեց Հրեքեի մետաքսյա գործվածքների գործարանը։ «Չուխայի թագավորական գործարանը, որ Իզնիմիտու և Պաղչեճագու մեջտեղ շինվեցավ, այն կողմերու հեռավոր բնակիչներուն անգամ, թե մտավոր կըրթության և թե ապրուստի շատ մեծ օգուտ ըրավ...»[82]։ Գործարանում աշխատում էին 385 բանվորներ, որից 284-ը հայեր էին։ Օսմանյան բանակին նրանք հանդերձանք էին մատակարարում։

Հայերը գործարաններ ունեին Կեսարիայում։ 1840 թ. կեսարացի Սարգիս Խալֆան Կոստանդնուպոլսում գլխաշորի գործարան է հիմնում[83]։ Մայրաքաղաքում աշխատում էին կեսարացի պանդուխտ արհեստավորներ։ Նրանք համատանալով արհեստի մեջ և դրամագլուխ հավաքելով, վերադառնում

82 «Հայաստան», Կ. Պոլիս, 1847, № 13, սեպտեմբեր։

83 «Վերջին լուր», 1921, № 2192։

էին Կեսարիա, հիմնում նոր «գործարաններ»։ «...կեսարական եազմաճեր շուտով առաջնություն կշահին թե՛ արտասահմանյան, և թե՛ բոլոր կուսակալության մեջ»[84]։ 1856—1857 թթ. Դասրաճյան եղբայրները հիմնում են ալաճայի գործարանները, որոնց մեջ գործում էին 300—350 դաղգահներ, 400—450 վարպետ բանվորներով, շուրջ 2500 օրամշակ, սեզոնային աշխատողներով. «...ամեն կողմեն հոչակված էր Դայսերի- Չիթարը Դասարճյան եղբարց գործարանը՝ ուր ... 3 հազարի մոտ հոգիներ կապահովեին իրենց ապրուստը»[85]։

Խարբերդում ավելի ուշ հիմնվեցին Քյուրքչյան, ինչպես նաև Ֆաբրիկատորյան եղբայրների մետաքսի գործարանները, ուր աշխատում էին մի քանի հարյուր բանվորներ։

Մանուֆակտուրային տիպի տեքստիլագործական բազմաթիվ ձեռնարկություններ կային Վանում ու Բաղեշում։ Վանում պատրաստվում էին «...Շամի, Հալեպի և Պուրսայի ապրանքներու տեսակներ...»[86]։ Սակայն քաղաքների ազգաբնակչության ապրուստի հիմնական միջոցները գյուղատնտեսությունը, արհեստագործությունը և առևտուրն էին։

Բանվորների մի զգալի բազմություն ներգրավված էր երկրի ռազմական արդյունաբերության մեջ։ Զեյթուն-Բուռնի հրանոթներ արտադրող (Թուխանե) գործարանում աշխատում էին 3500 բանվորներ։ Ձեռնարկության մեքենաները գնված էին Եվրոպայից, հումքի մեծ մասն ստացվում էր տեղական երկաթահանքերից, մյուս մասը՝ Անգլիայից։

1860-ական թթ. ֆրանսիացիները բամբակամշակման մի քանի գործարաններ են հիմնում Ադանայի վիլայեթում։ Հայերը գործարար դեր էին կատարում ինչպես այս, այնպես էլ Կ. Պոլսում և Զմյուռնիայում եվրոպացիներին պատկանող գործարաններում։

Թվարկված արդյունաբերական ձեռնարկությունները, սակայն, փոքրիկ ջահեր էին ֆեոդալական տնտեսակարգի մեջ։ Թուրքիայում, Արևմտյան Հայաստանում շարունակում էին տիրապետել ֆեոդալական կարգերը, արտադրության հնամենի եղանակը։ Կային արդյունաբերողներ, բայց ոչ արդյունաբերական ձևավորված բուրժուազիա, կային բանվորներ, բայց ոչ կազմավորված բանվոր դասակարգ։

Հատկանշական է նաև, որ դարակեսից սկսած հայ արհեստավորներն ու արդյունագործողները մրցակցության մեջ էին մտնում օտար կապիտալի հետ, շատերը տնտեսապես քայքայվում ու սնանկանում էին։

Արևմտահայ քաղաքային ազգաբնակչության մի մասը զբաղվում էր առևտրով։ XIX դարի առաջին կեսին Օրլդզի տիրապետության տակ գտնվող երկրների առևտուրը գտնվում էր քրիստոնյա ազգերի, առավելապես հայերի և հույների ձեռքում։ Տակավին նոր էր ձևավորվում թուրք առևտրական բուրժուազիան, որն անծանոթ լինելով եվրոպական լեզուներին և առևտրի եվրոպական մեթոդներին, ստիպված էր դեռևս «ղիջել» քրիստոնյաներին։

---

84 Մկրտիչ Պռոտուրյան, Գաղութահայ տարեգիրք, Ա տարի, Պուքրեշ, 1939, էջ 152։

85 Նույն տեղում, էջ 153։

86 «Մասիս», 1882, № 3219, 6 հուլիսի, տե՛ս նաև № 3222։

Կայսրության քրիստոնյա հպատակները, վաղուց ի վեր զբաղվելով առևտրով, կապվել էին դրսի շուկայի և արտասահմանյան կապիտալի հետ։ Մանչեստրի շուկաներում հաճախ երևացող հայ և հույն վաճառականները որդեգրվել էին օտար կապիտալին, դարձել նրա գործակալը, ինչպես նաև թուրք-եվրոպական առևտրի միջնորդներ։ Նրանք կարողացել էին ձեռք բերել այն արտոնությունները, ինչից օգտվում էին եվրոպացիները Թուրքիայում։

Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ առևտուրը տնօրինում էին հայ վաճառականները։ Նրանց տրամադրության տակ էր ներքին շուկան, ինչպես նաև ասիական ներքնագավառների հումքի մթերման, ընդհանուր արտադրանքի առու ծախի գործը։ Հայերն էին ապրանք մատակարարում ասիական Թուրքիայի հայ, թուրք, քուրդ, ասորի ազգաբնակչությանը։ Կարինը, Բաղեշը, Վանը, Սեբաստիան, Եվդոկիան, Ադանան, Մարաշը մնում էին տեղական արտադրանքի, եվրոպական ու ասիական արդյունաբերական ապրանքների դնման, վաճառահանման, քարավանային առևտրի կարևոր կենտրոններ։

Կարինի առևտուրն անկում ապրեց 1830—40-ական թթ., սակայն հաջորդ երկու տասնամյակներին նորից աշխուժացավ։ 1859 թ. գերմանացի ճանապարհորդ Հոֆմեստերը հաղորդում էր. «Այսուհանդերձ... տակավին այսօր Տաճկահայաստանի ամենանշանավոր քաղաքն է Կարինը, թե՛ զինվորական, և թե՛ վաճառականական տեսակետե։ Այսօր դեռ տարեկան 50000-ի չափ ուղտեր Կարնեն կանցնին վաճառքներով»[87]։ Կարինը կապեր էր ստեղծում Տրապիզոնի, Ալաշկերտի, Վանի, Բիթլիսի, Մուշի, Խարբերդի առևտրականների միջև։

Կարինում 1860-ական թթ. գործում էին 250—300 խանութներ և խաներ, որոնցից «ամենակարևորներն ալ հայ վաճառականներու ձեռքն էր»[88]։ Նշկյան, Ասատուրյան, Տեր-Ներսիսյան առևտրական տներն արևելյան արտադրանք էին տեղափոխում Եվրոպա, դրա փոխարեն Հոլանդիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից ներմուծում գործարանային ապրանքներ։ Հայ առևտրականները տարեկան միջին հաշվով արտահանում էին 30 միլիոն դահեկանի ապրանք, ներմուծում՝ 60 միլիոնի։

Առևտրի հանրաճանաչ կենտրոն էր նաև Վանը։ Ի տարբերություն Կարինի, Վանի և ամբողջ վիլայեթի առևտուրը հայերի ձեռքում էր։ Նրանք վաճառում էին գերազանցապես տեղական արտադրանքը՝ գյուղատնտեսական մթերքներ, արհեստագործական իրեր։ Վանեցիները կապ ունեին նաև Կ. Պոլսի, Այնթապի, Դիարբեքիրի, Մոսուլի, Պարսկաստանի, Մոսկվայի հետ։ Ներմուծում էին գորգեր, բամբակ, չիթ, քիշմիրի շալեր, մանրավաճառ ապրանքներ։

Խարբերդում կային հայ առևտրականներ, որոնք կապված էին Հալեպի, Կ. Պոլսի, Դիարբեքիրի, Այնթապի, Սամսունի, Արաբկիրի, Բալուի, Մալաթիայի հետ։ 1860-ականներին «... վաճառականությունն այնքան ծաղկեցավ, որ պարապ խանութ և կամ խաներու որևէ մթերանոց պարապ չմնաց...»[89]։ Խարբերդն առևտրական կապեր ուներ նաև Ամերիկայի հետ։

---

87 Հ. Վ. Քոսյան, Բարձր Հայք (Կարինը և շրջակայք), Վիեննա, 1925, էջ 36։

88 Ղազար Ջարըգ, Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրութ, 1957, էջ 107—108։

89 Մ. Գ. Ճիզմեճյան, Խարբերդ և իր զավակները, Տրեզնո, 1955, էջ 175։

Եվդոկիայում աշխույժ էր պղնձեղենի առևտուրը։ Հայ պղնձագործներն ունեին 150 խանութ։ Երկաթագործական 50 խանութից 40-ը թուրքերինն էր, 10-ը՝ հայերինը, թիթեղագործներից՝ 7-ը, անագագործներից՝ 15-ը[90]։ Քաղաքի առևտրական շառավիղը մեծ էր, վաճառքի հանված տեղական ապրանքների արժեգումարը տարեկան կազմում էր 116.500 թուրքական ոսկի։



Տեսարան Կարս բաղամից

Բազմաթիվ մանր ու խոշոր խանութ-կրպակներ ունեցող Բաղեշի շուկայի հիմնական տերերը հայերն էին։ Նրանք սպասարկում էին քաղաքին, շրջակա քուրդ աշիրեթներին, Տարոնի ու Վասպուրականի գյուղացիությանը։ Վաճառում էին մետաքսեղեն, կարմիր կտավ, մանուֆակտուրային ապրանքներ։ Քաղաքի առևտրի հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ իր դիրքի շնորհիվ Բաղեշը երկրի արևելքը կապում էր արևմուտքի հետ։ Քաղաքի խաչմանուկյան, Բենտերճյան, Մխչյան առևտրական գերդաստանները տարեկան 50 հազար թուրքական ոսկու առևտուր էին անում։

Կեսարիայի առևտուրը գերազանցում էր մյուս քաղաքների առևտրին։ Քաղաքի հայ առևտրականները կապված լինելով Անգլիայի հետ, Թուրքիայում վաճառում էին անգլիական ապրանքներ։ Մեծ թիվ էին կազմում կերպասեղենի, պատրաստի հագուստի առևտրականները, բազազները, գինեվաճառները, երկաթ ու երկաթեղեն, պղինձ ու պղնձեղեն վաճառողները։ Առաջին անգամ կեսարացիները գրախանութներ կազմակերպեցին։

90 «Արաքս», 1887, գիրք Ա, էջ 92։

Կեսարացի հայ առևտրականներն առևտրից տարեկան շահում էին 650 հազար ոսկի։ Հետագայում շատերը թողեցին Թուրքիան և առևտրական գաղութներ ստեղծեցին Եվրոպայում։

Ասիական Թուրքիայի առևտրի կարևոր կենտրոններից էին Դիարբեքիրը, Տրապիզոնը, Սեբաստիան, Երզնկան, Բաբերդը։ Առևտրի հանրաճանաչ



Տեսարան Վան քաղաքից

կենտրոններ էին մնում Մարաշը, Հաճընը, հատկապես Ադանան։ Սուեզի ջրանցքի բացումը առևտրական շուկաների, ճանապարհների նոր խմբավորում առաջ բերեց։ Արևմտյան Հայաստանի քաղաքները զրկվեցին իրենց նախկին առևտրական նշանակությունից։ Ռուսաստանի, Պարսկաստանի, Արևվելքի շատ երկրների հետ կապող ցամաքային մայրուղիները փոխարինվեցին ծովայիններով։ Ադանան ավելի սերտորեն կապվեց Եվրոպայի հետ։

Թուրքիայի առևտրականները սակայն զրկված էին անձի ու գույքի ապահովության երաշխիքից։ Առևտրական հարաբերությունների կաշկանդման գործում քիչ դեր չէին խաղում հարկային ծանր բեռը, մաքսային բարձր տարիֆները, բացահայտ խտրականությունը մահմեդական և քրիստոնյա առևտրականների միջև, օտարերկրյա առևտրականներին տրվող արտոնությունները, եվրոպական կապիտալի քայքայիչ գործունեությունը։ Եվրոպացի առևտրականները, նրանց հայ հանձնակատարները մրցության մեջ շարքից հանում էին զավառահայ առևտրականներից շատերին։

* * *

Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի արհեստավորներն ու առևտրականները հիմնականում համախմբված էին ցեխային կազմակերպություններ՝ էսնաֆություններ մեջ։

Օտար տիրակալների ֆեոդալական լուծը, պարբերական ջինաբախումները, անձի ու գույքի անապահովությունը, տնտեսական ու քաղաքական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը արհեստավորներին ու առևտրականներին մղում էին միավորվելու, եղբայրություններ կազմակերպելու։ «Միացյալ ավազակային աղնվականության դեմ միավորվելու անհրաժեշտությունը,— գրում էր Կ. Մարքսը,— շուկայական ընդհանուր շենքերի կարիքն այն դարաշրջանում, երբ արդյունագործողը եղել է միաժամանակ և վաճառորդ, դեպի ծաղկող քաղաքները ներհոսող փախստական ճորտերի մրցակցության աճը, ամբողջ երկրի ֆեոդալական հաստարակարգը, այս ամենը ծնեցին համքարություններ»[91]։

Արևմտահայ էսնաֆությունների առաջացման ու զարգացման մյուս կարևոր պատճառներն էին տնտեսական տագնապները, երբ արհեստավորի աննախանձելի նյութական դրության պայմաններում «մարդիկ կարիք էին զգում միանալ, համերաշխորեն գործել ձախող հանգամանքների դեմ»[92], օգնության ձեռք մեկնել թուլլին ու տկարին, փրկել նրանց կործանումից, դիմակայել հարկահանների ապօրինություններին, անանկացման պահին «վարկավորել» արհեստակցին, դժբախտության ժամանակ օգնել նրա ընտանիքին։

Մինչև XIX դարի առաջին կեսերը թուրքական պետությունը խրախուսում էր էսնաֆությունները։ Սուլթաններին ձեռնտու էին առևտրականների և արհեստավորների միությունները, որովհետև իրենց սահմանած բազմաթիվ հարկերն ավելի հեշտ էր գանձել ընդհանուր գանձարկղից, քան անհատ արհեստավորներից։ Պատահական չէր, որ 1835—36 թթ. սուլթան Մահմուդ II-ը հրատարակեց ծավալուն մի ֆերման, որտեղ գրանցվում էին Տրապիզոնի առևտրա-արհեստավորական միությունները և վերջիններիս օրինակով սահմանում երկրի էսնաֆությունների իրավունքներն ու պարտավորությունները[93]։ Նրա քաղաքականությունը շարունակեց Աբդուլ Մեջիդը՝ կենտրոնախույս ուժերի զսպման գործում արհեստավորների նյութական, բարոյական ու ռազմական օգնության խիստ կարիք ունեցող սուլթանը։

Սակայն էսնաֆությունների ստվարաթիվ դառնալու պատճառներից մեկը էլ օտար կապիտալի քայքայիչ ազդեցությունն էր։ Գործարանային արտադրության դիմագրավումը, սեփական գոյության երկարաձգումը, տեղական առևտրով ու հնամենի արհեստագործությամբ պարապող էսնաֆներին ստիպում էին ավելի համախմբվել էսնաֆությունների մեջ, կատարելագործել արտադրության միջոցները, գանձարկղներում կուտակվող գումարներից վարկավորել առևտրականներին, նրանց փրկել սնանկացումներից, նույնիսկ մտահոգվել երկրի ներքին կյանքում բարեփոխություններ կատարելու և քաղաքացիական իրավունքներ նվաճելու հարցերով։

Թուրքիայում գործող էսնաֆությունների ճշգրիտ քանակը մինչև օրս էլ

---

91 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 4, стр. 14—15.

92 «Մշակ», 1888, № 134։

93 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, Թուրքական ֆերմանների ֆոնդ, վավ. 94։

պարզված չէ։ Հայտնի է, սակայն, որ XVIII դարի վերջին Կ. Պոլսում գործում էին առևտրականներ և արհեստավորներ համախմբող հայկական 65 էսնաֆություններ[94]։ Հաջորդ դարասկզբին սրանց թիվը հասնում է 98-ի[95]։ Կ. Պոլսում և Տրապիզոնում էսնաֆություններ ունեին բեռնակիրները, ջրկիրները, հրշեջները, այսինքն այն մարդիկ, որոնք թողած տունն ու հայրենիքը, փող վաստակելու, պարտքերը մարելու հույսով աստանդականի ցուպ էին վերցրել, դարձել պանդուխտներ, հանգրվանել քաղաքներում։ Նվ փոխօգնության դանձարկղը ամենից առավել հարկավոր էր այս պանդուխտներին։

Էսնաֆությունների քանակով աշքի էր ընկնում Կարինը։ Մինչև Ադրիանապոլսի պայմանագիրը և հայկական տարրի զանգվածային գաղթը, քաղաքի առևտրականներն ու արհեստավորները համախմբված էին 50-ից ավելի էսնաֆությունների մեջ, որոնք ունեին իրենց կանոնադրությունները և, որոշ չափաստով, օրինակ էին ծառայում հայկական մյուս քաղաքներում գործող առևտրա-արհեստագործական միություն-եղբայրություններին։ Հայտնի էին երկաթագործների, զինագործների, պղնձագործների, կոշկակարների, կաշեգործների, դերձակների, մետաքսագործների, ջուլհակների, որմնադիրների, հացագործների, չթագործների ու բազմաթիվ այլ էսնաֆություններ։ 1837 թ. Կարինում գործող ռուսահպատակ ախալցխացի, Թիֆլիսեցի, գյումրեցի, գյոկչեցի, երևանցի հայ վաճառականները ևս ստեղծել էին իրենց էսնաֆությունները[96]։

Նախքան Ռուսաստանին միացվելը Ախալցխայում ու Ախալքալաքում գործում էին շուրջ 30 էսնաֆություններ[97]։ Քրդական ավազակախմբերի անարգել գործունեությունը, առևտրականի առավել անպաշտպան վիճակը՝ Բայազետի, Վանի, Բաղեշի հայ արհեստավոր-առևտրականներին ստիպել էին գրեթե ամբողջապես համախմբվել էսնաֆությունների մեջ։

Վանի ոսկերչական համայնքի վարպետները աշխատում էին 70-ի հասնող արհեստանոցներում. յուրաքանչյուր խանութ ուներ միջին հաշվով 4—5 աշակերտ։ Նրանք կենտրոնացված էին շուկայում, արտադրում ու միասնական գներով վաճառում էին ոսկեղենը։ Վանի ափաշալին ծառայող արհեստավորը կնշանակվեր իր արհեստակիցներուն պետը՝ էսնաֆ պաշի... աշը պաշի, նալպանտ պաշի, ֆյուրֆչի պաշի, գույումճի պաշի և այլն։ Ասոնք հաճախ կախաղանեն մարդ կազատեին, թեև իրենք ալ երբեմն զոհ երթալով իրենց տիրոջ մեկ քմահաճույքին՝ կճոճեին նույն կախաղաններեն ու իրենց պաշտոնը կտրվեր իրենց ժառանգորդներեն մեկուն կամ ուրիշի մը»[98]։

Սվդոկիայի էսնաֆություններից ամենամեծը պղնձագործներինն էր, որոնց արտադրանքը վաճառվում էր ամբողջ Թուրքիայում։ 1850 թ. քաղաքի էսնաֆությունների վեքիլը գույումճի Գրիգորն էր, որը պարտավոր էր արհեստավոր-վաճառականներից հավաքել 300 քիսեի հարկ և տալ պետությա-

94 «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 338։
95 Մատենադարան, ձեռագիր 2622, թերթ 85։
96 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 90, վավ. 58։
97 «Մշակ», 1890, № 127, 130։
98 Հ. Երամյան, Հուշարձան, հատ. Ա, էջ 27։

նը։ Սեբաստիայի մեծաթիվ էսնաֆություններն ընդգրկում էին և՛ առևտրականներին, և՛ արհեստավորներին։

Էսնաֆության անդամներ էին վարպետները, ենթավարպետները (խալֆա, քարգահ), աշակերտները, նրանց ընտանիքների չափահաս անդամները։ Ի տարբերություն, սակայն, մնացածների, ընտրելու ու ընտրվելու իրավունք ունեին միայն վարպետները, որոնք մասնակցում էին եղբայրության գործերին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը։

Ամեն մի էսնաֆություն կազմվում էր տարբեր քանակի արհեստավորներից։ Արհեստանոցի տերը վարպետն էր, որն ուներ ենթավարպետ կամ խալֆաներ, 1—5 աշակերտներ։ Աշակերտելու պայմանաժամանակը, տարբեր արհեստատեսակների համար և տարբեր քաղաքներում տարբեր էր։ Կարինում և Ախալցխայում աշակերտից վարպետ դառնալու ժամանակը սահմանված էր 3—9 տարի. կոշկակարները՝ 8 տարի, դազազները՝ 3 տարի, դարբինները՝ 6 տարի, դերձակները՝ 4 տարի։

Վարպետի ու աշակերտի փոխհարաբերությունները սահմանվում էին նախօրոք մշակված կանոններով, որոնցից խոտորվելը պատիժ էր նախատեսում։ Ըստ ոսկերիչների կանոնադրության՝ վարպետի մոտ սովորելու եկած աշակերտը նրա տանը պետք է մնար մինչև վարպետ «օրհնվելը»[99]։ Ընկերընկական շրջանում նա ծառայում էր անվարձ, ստանալով միայն հագուստ և ուտելիք։ Աշակերտը, սակայն, այս տարիներին, ամեն շաբաթվա վերջում ըստանում էր մի քանի կոպեկ վարձ՝ շեֆիրտանկը։ Երկու, հաճախ և չորս տարուց հետո, վարպետը աշակերտին դարձնում էր խալֆա, նշանակում տարեկան վարձատրություն։ Ինչպես աշակերտը, այնպես էլ ենթավարպետը, արհեստ սովորելուն զուգընթաց, պարտավոր էին կատարել նաև այլ աշխատանք՝ արհեստանոցի ու վարպետի տնտեսության համար։ Վարպետը շահագործում էր ենթավարպետներին, առավել ևս աշակերտներին։ XIX դարի երկրորդ կեսին սոցիալական շահագործումը էսնաֆություններում ավելի է ուժեղանում։

Էսնաֆությունն ուներ իր ղեկավար մարմինը, գանձարկղը, դրոշակը, ժողովատեղը, կառավարման ուրույն, գրավոր կամ սովորութային օրենքները։ Բոլոր էսնաֆությունների արհեստանոցատեր վարպետներն ընտրում էին եղբայրության ղեկավարին՝ ուստաբաշուն, նրա խորհրդականներին. ախսախակալներին, գանձապետին և իգիթբաշուն։ Ուստաբաշու, նրա խորհրդականների ու գործակիցների ընտրությունը կատարվում էր հոգևորականի ներկայությամբ[100]։

Ուստաբաշին խորհրդականների հետ միասին գնում էր հումքը, որոշում արտադրանքի գները, վարձում արհեստանոցներ, խանութներ, թույլատրում նոր արհեստանոցների բացումը, սահմանում ենթավարպետների ու աշակերտների թիվը, բաժանում էսնաֆության վրա դրված հարկագումարը, այն հավաքում ու հանձնում պետությանը, հետևում արհեստավորների կենցաղին, հսկում ապրանքների որակին, լուծում միության անդամների, ինչպես նաև գնորդների ու արհեստանոցատերերի միջև ծագած վեճերը։ Տարաձայնություն-


---

99 «Հումա», 1898, գիրք Ա, էջ 328—333, գիրք Բ, էջ 193—210։

100 Նույն տեղում, էջ 328—329։

նը հաճախ հարթվում էր ուստաբաշու կողմից, իսկ լուրջ բնույթ ստանալիս, հրավիրվում էին ախսախկալները, քննում վեճը և կայացնում համապատասխան դատավճիռ։

Էսնաֆության իգիթբաշին համայնքին հաղորդում էր ուստաբաշու հրամանները, փակում «հանցապարտների» խանութները, գանձապետի հետ միասին շրջում խանութներում՝ հավաքում սահմանված դրամը։



Բաքուն Բաղամի ընդհանուր տեսքը

Ամեն մի էսնաֆություն ուներ իր գանձարկղը, ուր խազնադարի միջոցով մուտք ու ելք էր արվում դրամը։ Այդ դրամը հավաքվում էր յուրաքանչյուր վարպետից։ Ոսկերիչ էսնաֆներից ամեն մեկը պարտավոր էր ամսեկան 20 կոպեկ տալ գանձարանին։ Կարինի պղնձագործները 1826 թ. ընդունած կանոնների համաձայն, չմշակված պղինձ վաճառելու դեպքում մեկ ղուրուշից մեկ փարա էին տալիս, պղնձյա ապրանքների վաճառքի դեպքում ևս այդքան։ Քաղաքի երկաթագործները, 1825 թ. կանոնադրությամբ, տալիս էին երկաթեղևնի համար մեկ ղուրուշից մեկ փարա, իսկ երկաթ վաճառելիս՝ 2 ղուրուշից մեկ փարա։ Որոշ գումար հավաքվում էր նաև տուգանքներից, բռնագանձումներից, էսնաֆության «անխոհեմ» անդամներին դրամական պատիժների ենթարկելուց։

Հավաքված գումարը ծախսվում էր էսնաֆության անդամների կարիքների համար։ Այստեղ էր, որ երևում էր էսնաֆությունների հավաքական ուժի, ամբողջ կարևորությունը բռնապետական երկրում ապրող, միշտ անակընկալների ենթակա հայ քաղաքաբնակների համար։ Էսնաֆությունները փաստորեն դառնում էին աղքատությունը ու ոճիրները կանխող, փոխօգնության

սկզբունքով կազմակերպված տեղական արհեստի ու առևտրի առկա մակարդակը պահպանող միություններ։

Էսնաֆությունները օգնում էին միության աղքատ, անանկացած անդամներին, որբերին, ժամանակավորապես կարիքի մեջ գտնվող արհեստավորներին ու առևտրականներին։ Եթե էսնաֆներից մեկը ծերության կամ հիվանդության պատճառով անաշխատունակ էր դարձել և հեռացել էր աշխատանքից, մանավանդ, եթե զավակներ չուներ, ապա ձմռանը գանձարկղից անվերադարձ դրամ էր ստանում, ինչպես նաև հաց, փայտ, հագուստեղեն։ Աղքատ արհեստավորի մահվան դեպքում թաղման ծախսերը էսնաֆությունն էր կատարում։

Էսնաֆության անդամները անհրաժեշտություն չունեին վաշխառուներին դիմելու, քանի որ կար իրենց գանձարկղը[101]։ Էսնաֆները գանձարկղից դրամ վերցնելով, պարտավորվում էին ժամանակին վերադարձնել «մի ծաղիկ էլ ավելացնելով վրեն ի սեր հասարակության ու գանձարանի օգտին»։ Սակայն գանձարանի դրամը փոխարինաբար ուրիշ մարդկանց տալիս՝ բարձր տոկոսներ էին վերցնում։ Ընդհանուր գանձարկղից էին վերցվում գումարները՝ ամեն տարի ուստաբաշուն նվերներ տալու, իգիթբաշուն ու խազնադարին վարձատրելու, համաէսնաֆական հանդեսներ կազմակերպելու համար։

Համաքաղաքային խնդիրները, դատաստանական ու վարչական գործերի լուծման անհրաժեշտությունը էսնաֆություններին թելադրում էին միավորվել, ավելի մեծ միություններ կազմակերպել։ Այս դեպքում ուստաբաշիները պիտի ընտրեին ուստաների-ուստային՝ շեյխուստասուն, որի մահմեդական, հաճախ և մուսուլմանական կրոնավոր լինելը, նոր ժամանակաշրջանում, գրեթե պարտադիր էր։ Բանն այնտեղ էր հասնում, որ ոչ միայն շեյխուստասինների, այլև ուստաբաշիների ընտրության գործերին արդեն խառնվում էին Բ. Դռան պաշտոնյաները, նահանգապետ փաշաները և նույնիսկ սուլթանները։ Ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմի շրջանում, մանավանդ Ղրիմի պատերազմից ու Ջեյթունի հերոսամարտերից հետո, հայերի վրա ավելի կասկածանքով նայող թուրք պալատականները փորձում էին իրենց «աչքն ու ականջն ունենալ» բոլոր էսնաֆությունների մեջ։

Էսնաֆությունները դարձել էին Արևմտյան Հայաստանի ճակատագրով հետաքրքրվող ընդդիմադիր ուժ, ուղղվել հայ ֆեոդալա-ամիրայական գերդաստանների մենատիրության, պատրիարքի միահեծանության դեմ, փորձում էին սրանց ձեռքից խլել դարերով վայելած առանձնաշնորհումները։

Արևմտահայ գաղթօջախներում XIX դարի երկրորդ քառորդին ծավալված քաղաքական պայքարը հիմնականում արտահայտվում էր արհեստավորների և ամիրաների գոտեմարտերի մեջ՝ ծնելով Ազգային սահմանադրության տարբերակները, մարտահրապարակ հանելով պանդուխտներին և օրամշակ բեռնակիրներին։

---

101 Տե՛ս «Լումա», 1898, գիրք Բ, էջ 197։

4. ՊՈԼՍԱՀԱՅԵՐԸ

XIX դարի առաջին կեսին, առավել ևս 50—60-ական թթ. Կ. Պոլսի հայ գաղութը դարձել էր արևմտահայերի տնտեսական, քաղաքական ու մշակութային խոշոր կենտրոն։ Հայ ազգաբնակչության քանակով, ժողովրդի լուսավորության նկատմամբ ունեցած մտահոգություններով, հասարակական մտքի զարթացումով ու ծավալված շարժումներով Կ. Պոլիսն իրավամբ առաջնակարգ դեր էր խաղում արևմտահայության կյանքում։ Գաղթօջախը ուղղություն էր տալիս արևմտահայության ազատագրական և համազգային ձգտումներին և որոշակի ազդեցություն թողնում նրա կրթական-մշակութային առաջընթացի վրա։

Գաղթօջախը գնալով ընդարձակվում էր Արևմտյան Հայաստանի բնակչության հաշվին. ստվարանում էր հայ ազգաբնակչության թիվը։ Կ. Պոլիսն ուներ 36 թաղամաս։ Հայերն զբաղեցնում էին ծայրամասային 20 թաղամասերի կեսից ավելին։ Միայն Սուլու Մանաստրում ապրում էին 1000 տնտեսություն հայեր, ս. Հրեշտակապետում՝ 800, Գում-Գափուլում՝ 2000, Ղալաթիայում՝ 3000, վեց Օտալարներում՝ 2000։ Հայաշատ էին Սկյուտարը, Պալաթը, Ենի Գափուն, Կետիկ փաշան, Սելամիչեն։ Ամբողջովին հայկական թաղամասեր էին Խաս գյուղը, Գատը գյուղը, Մաքրիգյուղը, Միջագյուղը (Օրթագյուղը)[102]։

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Կոստանդնուպոլիսն ուներ 860 հազար բնակիչ, որից 374 հազարը մահմեդականներ էին, 152 հազարը՝ հույներ, 150 հազարը՝ հայեր, 44 հազարը՝ հրեաներ, շուրջ 90 հազարը՝ եվրոպացիներ, ասորիներ, ղպտիներ և այլ ազգեր[103]։

1840-ական թթ. մայրաքաղաքի հայերի թիվը հասավ 222 հազարի[104], 1860—80-ական թթ.՝ 250—300 հազարի։ Այսպիսով, Կ. Պոլսի հայ գաղութը աճում էր զգալի արագությամբ։

Արհեստի ու առևտրի զարգացման համար քաղաքում լայն հնարավորություններ կային։ Թուրք-եվրոպական առևտուրը պահանջում էր գործիմաց, լեզուներ գիտցող վաճառականներ։ Իրենց վայելքներով տարված իշխողներն արհամարհում էին առևտրական գործը։ Առևտուրը մնում էր հայ և հույն վաճառականների ձեռքում։ Հետևաբար առևտրի և արհեստագործության զարգացման հնարավորությունները գավառից դեպի Կ. Պոլիս էին ձգտում հայկական տարրի նոր քարավաններ։

Մայրաքաղաք էին գալիս հիմնականում պանդուխտներ, օրամշակ բեռնակիրներ։ Նրանք գալիս էին հաց ու աշխատանք որոնելու, փող շահելու, հայոց պատրիարքարանից պաշտպանություն ու ապահովություն հայցելու։

---

102 «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1902, էջ 198։

103 Տե՛ս Յ. Գ. Փալագաչյան, Տեղեկություն Կոստանդնուպոլսո և յուր շրջակայից, հատակագիծ պատկերով Վոսփորի, Կ. Պոլիս, 1887, էջ 7, տե՛ս նաև Հ. Գ. Մ. [Հարություն Մըրմըրյան], Մասնական պատմություն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1909, էջ 49։

104 *M. A. Ubicini*, Lettres sur la Turquie, Paris, 1853, էջ 27։

Պատրիարքարանի առկայությունը սուլթանի նստավայրում քիչ դեր չխաղաց պոլսահայության համախմբման գործում։

Կ. Պոլիսը ազգաբնակչության սոցիալական կազմով, զբաղմունքի տեսակներով, մտավորականության առկայությամբ, մշակութային պահանջների մակարդակով, կառավարության հրապարակած «Թանզիմաթով» առերևույթ նմանվում էր եվրոպական քաղաքի՝ միշտ պահպանելով իր ասիական բնույթը։ Գավառի հետ համեմատած այստեղ քիչ մեղմացած էին ազգային ճնշումները։ Եվրոպական բազմաթիվ դեսպանությունների առկայությունը Կ. Պոլսում, Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կախումն այդ տերություններից այս կամ այն կերպ կաշկանդում էին և թույլ չէին տալիս հպատակների հետ վարվել այնպես, ինչպես վարվում էին ծայրագավառներում։

Նկատելի էին գաղութահայության և գավառահայության ապրելակերպի, հատկապես քաղաքական դրության էական տարբերությունները, դրա համար էլ պատահական չէր, որ մտավորականությունը, առևտրականների ու արհեստավորների մեծ մասը, մշակներն ու բեռնակիրներն անընդհատ կենտրոնանում էին ծովամերձ քաղաքներում։ Պոլիսը վերածվում էր արևմտահայ մշակույթի ամենախոշոր օջախի։

Կ. Պոլսի հայկական գաղութը XIX դարի առաջին կեսին բաղկացած էր սոցիալական տարբեր, հակադիր ու իրարամերժ դասերից։ Հասարակական այդ դասերը էական դեր էին խաղում Թուրքիայի տնտեսական կյանքում։ Երկար ժամանակ Օսմանյան պետության կարևոր զարկերակներն իրենց ձեռքում էին պահում պոլսահայ ամիրաները, հայ առևտրա-վաշխառուական կապիտալի այն մագնատները, որոնք քիչ անց սկսեք է նահանջեին Թուրքիայի նավահանգստներում խարսխված եվրոպական կապիտալի ու նրա շոշափուկների հանդիսացող կոմպրադորական բուրժուազիայի առաջ[105]։

Ամիրաներն ընդհանրապես ֆեոդալական Թուրքիայի ջատագովներն էին, իսկ մի մասն էլ՝ խոշոր կարողություն դիզած հայ վաշխառուներ։ Ամիրաների գոյությունը ձգվում էր XVI դարից։ Ամիրա-էմիր-պատրիկ տիտղոս են կրել հայ մեծատունները, տերության բարձրաստիճան պաշտոնյաները, կուսակալների սեղանավորները։ «Ամիրա բառը, թեև ոչ հայկական (արաբերեն ....էմիր-իշխան, յումերա-իշխաններ) միայն հայազգիներու տրված տիտղոս մ'էր և անպատճառ կենթադրեր կառավարության քով դիրք ունեցող անձ մը։ ...Ամիրա տիտղոսն իբրև պատվանուն բացառապես կտրվեր նաև հարուստ և երևելի ազգայնոց ոմանց»[106]։

Ամիրաների մեծ մասը ևս տարբեր ժամանակներում մայրաքաղաք էր գաղթել հայկական ու հայաբնակ քաղաքներից։ Քսանից ավելի ամիրայական գերդաստաններ, սկզբում գործելով Ակն քաղաքում ու նրա շրջակայքում, դրամագլուխ դիզելով, հետագայում Կ. Պոլիս էին տեղափոխվել և կայսրության տնտեսական մի քանի կարևոր գերատեսչությունների տնօրեն դարձել։ Ակնից էին եկել Տատյանները, Ճեզայիրլյանը, Խորասանճյանը, Միրճան-

105 Տե՛ս Աշտ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, էջ 348 և հետ.։

106 Բյուզանդ Քեչյան, Պատմություն ս. Փրկչի հիվանդանոցին հայոց ի Կ. Պոլիս, Կ. Պոլիս, 1888, էջ 49։

յանը, Փեշմիշյանները, իսկ Զոպանյան, Չերազյան գերդաստանները, չկարողանալով դիմանալ մրցությանը, սնանկացել և կործանվել էին XIX դարի սկզբներին։ Դիվրիկից էին գաղթել «հանդերձակարությամբ» պարապող Տյուզյանները։ Ամիրաներից առավել ճարպիկները կարողացել էին սուլթանների պալատում որոշ դիրք գրավել։

Ամիրաների գերազանց մեծամասնությունը (սարաֆները՝) շուրջ 80—100 հոգի, կազմելով սարաֆական ընկերություններ, զբաղվում էր սեղանավորությամբ և հիմնականում հարստանում գավառի ազգաբնակչությունից գանձվող հարկերի հաշվին։ Թուրքիայում հարկերի գանձումը հանձնարարված էր փաշաներին, որոնք պարտավոր էին ժամանակին գանձել հարկերը և մուծել պետական գանձարան։ Կենտրոնախույս տրամադրություններով համակված թուրք փաշաները անբարեհույս էին պետության աչքում։ Զգացվում էր դրամատեր հայ հարուստների կարիքը։ Դառնալով փաշաների սարաֆներ, սրանք իրենց վրա էին վերցնում հարկերը պետական գանձարանին հանձնելու պարտականությունը։ Կնքվում էր մի տեսակ դաշինք փաշայի ու սեղանավորի միջև, սկսվում էր գավառի ինչպես թուրք, առավել ևս այլազգի գյուղացիության հարկային հարստահարությունը։

Հին սեղանավորների մնացորդները և նոր դրամատերերը սուլթանի թույլտվությամբ դարակեսին կազմեցին սարաֆական երկու՝ «Անատոլուի» և «Ռումելիի» ընկերությունները։ Անատոլուի ընկերության անդամներն էին Հարություն Ուզունյանը, Քյուրքչիխանլը Պետրոսը, Ճեզայիրլյան Մկրտիչը, Չերազյան Պաղտասարը, Աշնան Պողոսը։ Ռումելիի ընկերությունը բաղկացած էր Ճանիկ և Մագսուտ ամիրաներից, անդամակցում էին Հարություն Կելկելյանը, Աբրահամ Ալլահվերդին, Հովհաննես Թընկըրյանը, Հովսեփ Տավուտյանը։ Սրանց երկուսի գլխավորն էր Ուզունյան Հարություն ամիրան, որին սուլթանը «ականակուռ շքանշան» պարգևեց և հաճախ խորհրդակցում էր նրա հետ՝ իր պալատական գործերը վարելիս։

Այս ընկերություններից «առաջինը կտնտեսեր ու կը հավաքեր իր գործակատարներուն և հարյուրորդավոր հավաքողներուն ձեռքով Անատոլուի հարկերը, և երկրորդը նույնպես Ռումելիի հարկերը, այնպես, որ բովանդակ տերության հարկերն և տուրքերը կժողովվեին այդ ընկերության ձեռքով, որ շատ անգամ ի հաշիվ տերության կանխավճարներ ընելով այդ հարկերուն փոխարեն՝ կդյուրացներ անոր պյուտճեն՝ առ ձեռն հավասարակշռության, և ինքն ալ կշահեր լիովին ցորչափ գիտնար իր հաշիվը»[107]։

Ամիրաներն օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիայում մինչև 1856 թ. կանոնավոր բանկեր չկային, իրենք էին կատարում այդ գործարքները, վարկեր էին բաց թողնում այս կամ այն վաճառականին, առևտրական ընկերությանը, պետական գրասենյակներին, հաճախ էլ սուլթաններին[108]։ Սրանք վարկ էին տալիս 20—25%-ով, իսկ պարտք վերցնող փաշաների հետ, պայմանադրությամբ, հարկերից ստացված գումարի ավելադիրը հավասարա-

---

107 «Վերջին լուր», 1921, 4 հունիսի, № 2194։

108 Տե՛ս Գ. Խ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. 1, Երևան, 1962, էջ 22։

չափ բաժանում։ Ակնհայտ է, որ սարաֆ ամիրաները հարստություն էին կուտակում բացառապես վաշխառության ճանապարհով։

Ամիրաների մի մասը պարապում էր սեղանավորությամբ։ Հիմնական հատվածը կապված էր պալատի հետ, պատասխանատու պաշտոններ էր վարում արքունիքում, ղեկավարում կայսրության տնտեսական կարևոր գերատեսչությունները։ Ակնի Ապուչեխ գյուղից գաղթած և արհեստագործության մեջ աչքի ընկած Մահտեսի առաքել Տատ ամիրան՝ Տատյան գերդաստանի ավագագույնը, 1795 թ. կանչվում է պալատ և նշանակվում արքունի վառոդարանի, այսինքն զինագործության ղեկավարը։ Այնուհետև, շուրջ 75 տարի Տատյան ամիրայական տան զավակները ժառանգաբար ղեկավարում էին ողջ Թուրքիայի զինագործարանները, նույնիսկ թղթի արտադրության և բանակի հանդերձավորման գործերը։

Տյուզյան ամիրայական տանն էր վստահված պետական ոսկերչանոցը, հետագայում նաև «փողերանոցը»։ Նրանք կտրում էին ոսկյա ու արծաթյա դրամներ։ Արքունի ճարտարապետությունը գլխավորում էին Պալյանները։ Սրանց «ոսկյա մատամբ» շքեղաշեն էին դառնում սուլթանի պալատները, ծնվում չքնաղ Դոլմա-բախչեն, վերանորոգվում Այա-Սոֆիան։ Մկրտիչ Ճեզայիրլյանը կարգավորում էր Կ. Պոլսի և համարյա ողջ Թուրքիայի մետաքսագործության, մաքսահավաքման գործերը։ Ակնեցի Արփիարյան ամիրայական տունը երկար տարիներ վարեց Կապան-Մատենի արծաթի հանքերի վերատեսչության գործը։

Հայ ամիրաների ձեռքերով թուրքական սուլթանները կառուցեցին արդյունաբերական մի շարք կենտրոններ։ Հակոբ Չելեպի Տյուզյանը, արքունի փողերանոցի տնօրենը, սուլթանի հանձնարարությամբ Անգլիայից տեղափոխեց շոգեշարժ մեքենա, Կ. Պոլսում հիմնեց դրամահատարան և սկսեց կտրել ոսկյա ու արծաթյա դրամներ։

Հայ ամիրաները թուրքական սուլթանների հանձնարարությամբ XIX դարի առաջին կեսին կառուցում էին մի շարք գործարաններ, որոնք տեղավորված էին թե՛ մայրաքաղաքում, և թե՛ Արևմտյան Հայաստանում։ Այդ գործարանները կառուցում և վերասարքավորում էին Տյուզյան և Տատյան ամիրայական գերդաստանները։ Աննկատած է, որ ամիրաները սեղանավորությամբ զբաղվելուց բացի խոշոր դեր էին կատարում նաև կայսրության պետական արդյունաբերության զարգացման գործում։ Սակայն ամիրաների մեծ մասը դեմ էր բուրժուական ռեֆորմներին։

Ամիրաները զորեղ ազդեցություն ունեին նաև հայոց պատրիարքների վրա։ Նրանք, փաստորեն, միջնորդ էին պատրիարքի ու պետության միջև, ֆինանսավորում էին պատրիարքարանը և նրա միջոցով իրենց ազդեցությունը տարածում արևմտահայության վրա։

Հայկական համայնքների վրա ազդեցությունը չկորցնելու դիտավորությամբ՝ պատրիարքարանի, եկեղեցականների ու վանականների միջոցով ամիրաներից շատերը հաճախ հիմնում էին դպրոցներ, հիվանդանոցներ, մեկենասի դեր ստանձնում, հրատարակում գրքեր և ամսագրեր։

Բայց հարստությունից հղփացած հայ ամիրաները, առավել ևս սարաֆ-

ները, քաղաքականապես հեղհեղուկ վիճակում էին, միշտ ենթակա անակընկալների։ Առանձնապես անապահով էին սեղանավորների կյանքն ու ունեցվածքը։ «...Երբ փաշան պաշտոնեն իյնար կամ պատժվեր, անոր սարաֆը խստութեյան մեծագույն բաժին կկրեր, ան երբեմն կաքսորվեր, երբեմն ստացվածքեն կզրկվեր և երբեմն ստացվածքեն և կյանքեն»[109]։ Հ. Մրմրյանը գրում էր. «Բայց և այնպես՝ իրենք (ամիրաները) միշտ անակնկալով մը ամեն բան կորսնցունելու վտանգի մեջ են»[110]։

Սուլթանն ամեն րոպե կարող էր պատճառ գտնել կառափնարան ուղարկելու Ղալաթիայում ծվարած հայ մեծահարուստ սեղանավորին։ Ոսկիների պարկերը նրան չէին փրկում, քանի որ տիրոջ գլխատումից հետո ամբողջովին բռնագրավվում էր նրա հարստութեյունը։ Այս տեսակետից օրինակ է Տյուզյան գերդաստանի ճակատագիրը։

Տյուզյանները շուրջ մեկ դար իրենց ձեռքումն էին պահում Թուրքիայի դրամահատութեյան գործը. նրանց հարստութեյանը նախանձում էին նույնիսկ Թուրք պալատականները։ Սուլթան Մահմուդ II-ը ընդառաջելով իր պալատականների ցանկութեյանը, միաժամանակ ձգտելով տեր դառնալ Տյուզյանների հարստութեյանը, 1819 թ. օգոստոսին նրանցից հաշվետվութեյուն պահանջեց գանձարանի մասին և պատրվակ բռնելով պակասորդը, գիշերով պաշարեց հայ ամիրայի բնակարանը, բռնագրավեց նրա ողջ ունեցվածքը, գլխատելով ընտանիքի արու բոլոր անդամներին։ Այս փաստը խոսում է կյանքի ու գույքի անապահով վիճակի մասին Թուրքական կայսրութեյան մեջ։

Անցյալ դարասկզբից սկսած, Թուրքիայի պետական ապարատի վերակառուցման, նոր, եվրոպական տիպի գերատեսչութեյունների ստեղծման պատճառով, ամիրաները զրկվում էին պալատում գրաված տեղերից, կայսրութեյան տնտեսական կյանքում խաղացած նախկին դերից։ Նվազում են վաշխառութեյան համար երբեմնի ստեղծված հնարավորութեյունները։

1856 թ. վերականգնվում է սուլթանի 1848 թ. հրամանագիրը և կազմակերպվում Օտոմանյան բանկը։ Այժմ սուլթանը, նրա պալատականները, նահանգապետ փաշաները դրամը վաշխով վերցնում էին ոչ թե հայ ամիրաներից, այլ այդ բանկից։ Կազմակերպվում են ֆինանսական, ռազմական, ներքին և արտաքին գործերի մինիստրութեյուններ, վերակառուցվում է արքունիքը, կազմվում դիվան, բազմահազար չինովնիկներ-էֆենդիներ պաշտոններ են ստանում։ Մի խոսքով ստեղծվում է «էֆենդիների» մի ստվար խավ, որը հաջորդելու էր ամիրայութեյանը ոչ միայն պաշտոններ գրավելու, այլև տնտեսական բարձունքներին տիրապետելու տեսակետից։

1850—60-ական թթ. Թուրքերի, հույների ու սլավոնների կողքին մայրաքաղաքում ձևավորվեց ու առնականացավ նաև հայ պետական պաշտոնյաների նոր դաս՝ արևմտահայ էֆենդիները։ Եթե մինչև 30-ականները Թուրքիայի պաշտոնյա էֆենդիների մեջ հայերի անուններ քիչ էին հիշատակվում, ապա 40-ականներից սկսած Կ. Պոլսում, Զմյուռնիայում և նույնիսկ գավառական քաղաքներում տեղեր են գրավում նաև հայ էֆենդիները, որոնք բարձրա-

109 «Ընդարձակ պատմութեյուն Հայոց», պատրաստեց Հ. Հ. Ջագմագեյան, Պոսթոն, 1917, էջ 556։

110 Հ. Գ. Մ., նշվ. աշխ., էջ 118։

նում էին գաղութահայ վաճառականների, ներքին ու արտաքին առևտրով պարապող հայ առևտրականների միջավայրից։ Կոստանդնուպոլսում աշխույժ էր ներքին առևտուրը, որի գերակշռող մասը կենտրոնացած էր հայ վաճառականների ձեռքում։ Սրանք սկզբում համախմբված էին էսնաֆությունների մեջ, պարապում էին նախ գավառից բերված գյուղատնտեսական մթերքների, ապա և տեղական արհեստների արտադրանքների վաճառքով։ Դարասկզբին արդեն հայ առևտրականները տիրապետում էին առևտրի եվրոպական մեթոդներին։ Նրանք առևտրական սերտ հարաբերությունների մեջ էին Վենետիկի, Հռոմի, Ամստերդամի հետ։ Հնդկաստանից ներմուծում էին շալեր, համեմներ ու դոհարեղեն, Իրանից՝ կերպասներ, Դամասկոսից՝ բեհեզներ։ Պոլսահայ վաճառականները Ֆրանսիայից, Իտալիայից բերում էին ծանրագին կերպասներ, վենետիկյան հայելիներ, ապակյա ճրագարաններ, գերմանական սաթ, որոնց մի մասը վաճառում Թուրքիայում, մյուս մասը՝ Իրանում, Եգիպտոսում, Հարավային Ռուսաստանում։ Ահա այս առևտրականներն էին, որոնք առևտրից, մեծ մասամբ գյուղատնտեսական մթերքների վաճառքից հսկայական եկամուտներ ստացան և տարածվելով Արևմտյան Եվրոպայում՝ դարձան Թուրք-եվրոպական առևտրի միջնորդները։

Ամիրայական դասին հակադրվող վաճառականական այս դասը գերազանցապես կոմպրադորական էր, որը տեր դառնալով քարավանային և ծովային առևտրին, քիչ էր մտահոգված երկրի տնտեսական զարգացման, աղգային արդյունաբերության ստեղծման խնդիրներով։

Մինչև XIX դարի կեսերը պոլսահայ «եվրոպականացած» առևտրականները կապված էին ֆրանսիական, գերազանցապես իտալական շուկաների հետ[111]։ Անգլիայի տնտեսական հզորացումը մի կողմից, Ղրիմի պատերազմը մյուս կողմից, փոխեցին նախկին իրադրությունը։ Պոլսահայ առևտրականները մեծ մասամբ զինվորագրվեցին Անգլիային՝ նրա ապրանքները տարածելով ողջ երկրով մեկ։

Սկզբնական շրջանում նրանք սոսկ միջնորդներ էին։ Դարի երկրորդ կեսին նրանց մի մասը բնակություն է հաստատում եվրոպական քաղաքներում, մասնավորապես Լոնդոնում, Մանչեստրում, Լիվոռնոյում, Փարիզում և այլուր։

1861 թ. Մանչեստրի հայ վաճառականների թիվը հասնում էր 30-ի, որոնք կազմելով առևտրական ընկերություններ, միաժամանակ պետությունից թուլլտվություն ստացան հայկական եկեղեցի ունենալու, հայերեն գրքեր տպագրելու։ 1863 թ. մի հիշատակարանում նշված է, որ Մանչեստրում այդ ժամանակ կային 25 խոշոր հայ առևտրականներ, իսկ Լիվոռնոյում՝ վեց։ Դրանք գաղթել էին Պոլսից, Զմյուռնիայից և Կեսարիայից[112]։

Գաղթելով նախկին բնակավայրերից, հայ կոմպրադորներն իրենց կապերը պահպանում էին Թուրքիայի հետ և միջնորդ օղակ դառնում թուրք-անգլիական առևտրի մեջ։ Այդ վաճառականների «կեսը,— գրում է Մ[ամբր-

111 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, էջ 353։

112 Հ. Գ. Մ[ամբյան], Թուրքահայոց հին վաճառականությունն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 47։

յանը,— Կ. Պոլսեն և Զմյուռնայեն Մանչեսդր երթևեկողներ էին, մյուս կեսը մնայուն կերպով հոն գործողներ՝ իբրև ներկայացուցիչ Կ. Պոլսի և Զմյուռնայի իրենց կեդրոնական տուներուն»[113]։

XIX դարի առաջին, առավել ևս երկրորդ կեսին, Պոլսի հայ ազգաբնակչության ստվար մասը և հիմնական դասը կազմում էր արհեստավորությունը։ Արհեստավորների մեծ մասը Հայաստանից նախկինում գաղթած հայերն էին։ Այս շրջանում ևս շարունակում էին Կ. Պոլիս գալ կիլիկեցի ու վանեցի ոսկերիչներ, ակնեցի հացագործներ, սեբաստացի դերձակներ, կեսարացի կաուցող ու շինարար վարպետներ, կարնեցի զինագործներ, բաղեշցի կտավագործներ։ Քաղաքի ողջ արհեստագործությունը կենտրոնացած էր հայերի, հույների և հրեաների ձեռքում։

Թուրքիայի վիճակագրական գրասենյակի հաղորդագրության համաձայն XIX դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում ապրող հայերից 494-ը, էֆենդի հորջորջմամբ, պետական պաշտոնյաներ էին, 35.979-ը՝ վաճառականներ, արհեստավորներ, խանութպաններ, 32.399-ը՝ ուսանողներ և աշակերտներ, 14.998-ը՝ անգրաղմունք մարդիկ[114]։ Մոտ 40 հազար հայ արհեստավորներ և առևտրականների մի մասը XVIII դարավերջին ընդգրկված էին արհեստավորական 65, իսկ XIX դարակեսին՝ 100-ից ավելի կազմակերպությունների՝ էսնաֆությունների մեջ[115]։

XIX դարի կեսերին հիշատակվում են մայրաքաղաքում կազմակերպված հայկական հետևյալ էսնաֆությունները. սառաֆ (սեղանավոր), խոյամճի (ոսկերիչ), տյուլպենտճի (ծաղկավար, դաճող), հացագործ, քերեստեճի (փայտյա շինանյութ պատրաստող և վաճառող), սանտալճի (հողաթափի կարող), թերզի (դերձակ), սահաթճի (ժամագործ), պեզազ (ճոթավաճառ), ղազանճի (պղնձագործ), տյուրկեր (հյուսն), ֆինճանճի (գավաթագործ), մեստրճի (բարակ կաշվից կոշիկ կարող), համամճի (բաղնիսպան), աշճի (խոհարար), մանկավարժներ, պերպեր (վարսավիր), գաֆաֆ (կոշկավաճառ), փեշտիմալճի (գոգնոց, բաղնիքի ցամքոց գործող), էնֆիյեճի (քթախոտավաճառ), քիթապճի (գրավաճառ), պախալ (նպարավաճառ), պչախճի (դանակ շինող) և այլ միություններ[116]։

Կ. Պոլսի էսնաֆություններից ամենանշանավորը ամբողջ երկրում ու Եվրոպայում հայտնի ոսկերիչներինն էր։ Սրանց էսնաֆության մեջ էին համախմբված վարպետ ոսկերիչները, ոսկեղենի վաճառականները, ակնավաճառները, արծաթեղենի առևտրով պարապողները։ Կ. Պոլսի մեծ շուկայում նրանք զբաղեցնում էին մի ընդարձակ հրապարակ։ Կողք-կողքի շարված էին արհեստանոցները, վաճառողների վոջր ու մեծ խանութները։ Հայ ոսկերիչների արտադրանքը շուկայում մրցության մեջ հաջողությամբ դուրս էր մղում եվրոպականին։

---

113 Հ. Գ. Մ., Թուրքահայոց հին վաճառականությունն..., էջ 53։

114 «Արձագանք», 1885, № 10, էջ 142—143։

115 «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1902, էջ 199, տե՛ս նաև Մատենադարան, ձեռագիր 2622, թ. 82—83։

116 Մատենադարան, ձեռագիր 2622, թերթ 85—87։

XIX դարի թե՛ առաջին և թե՛ երկրորդ կեսերին Կ. Պոլսի հայ գաղթօջախի արհեստավորներից բացի, առևտրականների գերակշռող հատվածը ևս համախմբված էր միություն-եղբայրությունների մեջ, որոնք միաժանաբար էին հանդես գալիս ազգի ներքին գործերը տնօրինելիս։ «Ով պետք է ընդունել,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— թե ազգն այն ատեն կներկայացնեին ավելի դասակարգերը, քան թե ազատ քաղաքացիական խումբերը, վասնզի արհեստապետությունները (էնաֆ) զորավոր կազմակերպություն ունեին, և իրենց արհեստապետովը և արհեստապետական ժողովներովը (լոնճա օտասը) կներկայացնեին տեսակ մը ինքնագլուխ վարչություններ և մատակարարություններ, որոնք հավաքաբար կկատարեին էնաֆի մը ամբողջական ներկայացուցչի հանգամանքը»[117]։

Թուրքիայի մայրաքաղաքի հայ աշխատավորական զանգվածների ըզգալի մասը գավառից եկած պանդուխտներն էին։

Հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության հետևանքն էին պանդխտությունն ու գաղթականությունը։ Գաղթականության պատճառով դատարկվեցին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ, առաջացան գաղութահայ նոր օջախներ։

Քիչ վտանգավոր ու վնասակար չէր պանդխտությունը, որի հետևանքով պակասում էր գավառահայ բնակչության թիվը, քայքայվում էր գյուղատնտեսությունը, աղքատանում էին հազարավոր ընտանիքներ։

Պանդուխտները նրանք էին, որոնք չկտրվելով հայրենիքից, ժամանակավորապես գնում էին օտար վայրեր՝ աշխատանք և վաստակ որոնելու և ապա հայրենիք վերադառնալու հույսով։ Պանդուխտը միայն ժամանակավորապես էր թողնում բնակավայրը և գաղթում՝ միևնույնն է հայրենիքի սահմաններից դուրս կամ նրա սահմանների մեջ։

Պանդխտության էր դիմում ոչ միայն գյուղացին։ Ճիշտ էր նկատում Մ. Մամուրյանը. «...վաճառականը կգաղթե, երկրագործը կգաղթե, արհեստավորը կգաղթե, բանվորը կգաղթե, մեկ խոսքով՝ ամենքը կգաղթեն և Հայաստան կմնան շատ տեղեր միայն ծերեր, կիներ, մանկունք»[118]։

Արևմտյան Հայաստանից պանդխտության ճանապարհ բռնած հայերի տարածման շառավիղը, մանավանդ դարակեսին, շատ լայն էր։ Նրանք պանդխտում էին Բաքու, Թիֆլիս, Պարսկաստանի քաղաքները, անգամ Եվրոպա և ԱՄՆ։ Սակայն հայ պանդուխտները հիմնականում կենտրոնանում էին Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և նավահանգստային Տրապիզոն քաղաքում։ «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակցի վկայությամբ «...այսօր հարյուր հազարով պանդուխտ հայեր եկած են այստեղ (Կ. Պոլիս—խմբ.) Վանա, Բաղեշի, Մուշի, Էրզրումի, Տիգրանակերտի, Ակնա, Երզնկայի և Փոքր Ասիո ամեն կողմերեն, որպեսզի քիչ մը դրամ շահելով, կարողանան հատուցանել իրենց պարտքն կամ տուրքը, զոր տերության գործակալներն անգթորեն կը պահանջեն»[119]։

---

117 «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 202—203, Ա. Ալպոյաճյան, Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը։

118 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881, էջ 200։

119 «Արձագանք», 1886, № 24, էջ 337։

Մինչև XIX դարի 70-ական թթ. Մալաթիայից պանդխտել էին 2 հազար, Վասպուրականից՝ 38 հազար հայեր։ Տարոնից 17 հազար հայեր էին պանդխտել Պոլիս, Ռուսաստան և Պարսկաստան[120]։ Մուշի վիճակի ամեն մի ընտանիք 1—2, նույնիսկ 4—5 պանդուխտներ ուներ քաղաքներում։ Միայն Խաս գյուղը, որն ուներ ընդամենը 250 տնտեսություն, տվել էր 3—4 հարյուր պանդուխտ, Նորաշենը՝ 200 տնից՝ 300 պանդուխտ, Բերդակը՝ 120 տնից՝ 200 պանդուխտ։

Բաղեշի վիճակից «2800 գաղթյալներ կան, որոնք Պոլիս, Կարին, Կարս, Ալեքսանդրապոլ և այլ տեղեր գաղթած են»։ Սեբաստիայի գավառի 60 տնտեսություն ունեցող Խառնվիլ գյուղից գաղթել էին 140 հայեր, Մուրվանա գյուղից՝ 100, Օտուրից՝ 150, Ալուշենից՝ 70, Կիրասունից՝ 40, որոնք բոլորն էլ կուտակվել էին Կոստանդնուպոլսում[121]։ Քղիի վիճակից 1878 թ. 3000 պանդուխտներ կային մայրաքաղաքում և այլ վայրերում։ «Արձագանքի» արևմտահայ թղթակից Վարդանը վկայում է, թե «Քղիի ժողովուրդը արյուն արցունք կթափե, բոլորովին ընկճված է, հոդրրեցի, որ քիչ մը սպասեն և չգաղթեն»[122]։ «Հողերը,— ընդհանրապես երքաց և քրդաց թափու են... ուստի ընդհանրապես պանդխտությամբ կճարեն ապրուստնին»[123]։ Խարբերդից տարեկան մի քանի հազար հայեր էին պանդխտում Կ. Պոլիս, իսկ 1870-ականներից սկսած՝ Ամերիկայի մայր ցամաք։ Բազմահազար պանդխտողներ կային Կ. Պոլսում նաև Կարինից և Կիլիկիայից։ Հաճընի պանդուխտները 60-ական թվականներից այլևս չէին բավարարվում Միջերկրականի ծովամերձ քաղաքներով, այլ սփռվում էին եվրոպական շահաստանները։ Դարակեսից սկսած պանդուխտները Մարաշից խմբերով էին հեռանում և շատերն այլևս չէին վերադառնում Կիլիկիա։

Մարաշցի պանդուխտները ընդհանրապես հեռանում և հաստատվում էին Եվրոպայում[124]։

Ազգային ժողովի 1860 թ. տվյալներով Կ. Պոլսում 15.000 հայ պանդուխտներ էին ապրում[125]։ 1870-ական թթ. նրանց թիվը հասնում էր 45.000-ի[126]։ 1860 թ. Զմյուռնիայում կային 4 հազար պանդուխտներ, իսկ 1870-ական թթ. վերջին՝ մինչև 5.000, որոնց գերակշռող մասը այլևս չվերադարձավ հայրենիք։

Արևմտյան Հայաստանից Կ. Պոլիս գաղթող հայ պանդուխտները պարապում էին օրավարձու մշակությամբ, բռնակրությամբ կամ ջրկիրությամբ[127]։ «Պոլսի հայերը մեծ մասամբ բռնակիրներ, գործակատարներ, տան ծառաներ և հավատարմատարներն են... Դրամական հաստատությունները, գրասենյակները, Պերայի, Կալաթիայի և Ստամբուլի մեծամեծ խանութները համալներ են պահում»։

120 ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, III բաժին, վավ. 47, 49, 57։

121 «Արձագանք», 1882, № 12, էջ 276—277։

122 Նույն տեղում։

123 ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, III բաժին, փաստաթուղթ № 59, էջ 7։

124 Տե՛ս «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», երկասիրեց Գր. Հ. Գալուստյան, Նյու-Յորք, 1934, էջ 834—869։

125 «Ատենագրություն ազգային ժողովո», հատ. Ա, էջ 24։

126 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, էջ 360։

127 Տե՛ս Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 426—429։

Պոլսի պանդուխտները լցվում էին «քարվանսարաները, նավահանգիստները, մաքսատները, և համալի մտոր պաշտոն էին կատարում... Այդ ժողովուրդն է, որին հանդիպում ես Տաճկաստանի և Եգիպտոսի (որտե՞ղ չկան նրանք), բոլոր ծովեզրյա քաղաքներում, ուր նոցա գործն է շուխչիություն (քաղաքից աղբ են առնում կողովները, տանում նետում ծովը—խմբ.), թուլումբաչիություն (ջրկիր, հրշեջներ) և այլ այսպիսի ստոր պարապմունքներ։ Ուր նոցա կերակուրն է՝ զինվորներից ավելցած սոմունը և մեջիդների միաբանության (սոֆթայների) սեղանից ավելցած փշրանք։ Ուր նոցա օթևանն է բաղնիքների վառարանի (թուլումբարի) մոխիրները»[128]։

Անտուն, անօթևան պանդուխտները ամառները գիշերում էին բաց երկնքի տակ, իսկ ձմեռները լցվում բաղնիքների նկուղահարկերը, թուլումբարանները, որտեղ ծուխը, մոխիրը և բոցը խեղդում էր նրանց, մրոտում, սեվացնում դեմքերը, քայքայում առողջությունը, մի բան, որն այլևս չէր հետաքրքրում կարիքի ու թշվառության մեջ մոլորված հայ պանդուխտին։ Միայն 1868—1869 թթ. Պոլսի խոնավ նկուղներում մեռնող պանդուխտների թիվը հասել է 1700-ի։

Ծանր պայմաններում ապրող ու աշխատող պանդուխտները օրական վաստակում էին 30—40 կոպեկ, սակայն այդ ևս պակասեց, երբ Պոլսում կառուցվեց երկաթուղի, իսկ հույները սկսեցին գործադրել ձիաքարշ տրամվայներ[129]։

1840—60-ական թթ. Թուրքիայի առափնյա քաղաքներում, մասնավորապես մայրաքաղաքում կենտրոնացած պանդուխտներն էին, որ արտահայտում էին գավառի հայ գյուղացիության տրամադրությունները։ Զրկված ընտանիքից, հայրենիքից, նրանք քաղաք էին բերել հայրենատենչ սիրտ, որի վրա խորը վերքեր էին թողել թուրքական կառավարողները, թուրք ու հայ վաշխառուները։ Պանդուխտներն անմիջականորեն էին կրել այն քայքայիչ ազդեցությունը, որն ունեցել էր արտասահմանյան կապիտալը Թուրքիայի տնտեսության վրա։ Նրանք ավելի շատ էին տուժել օտար բռնակալների ճնշումներից, ավելի հաճախակի հարստահարվել քուրդ ու թուրք հրոսակների կողմից, այդ իսկ պատճառով էլ նրանց համար ավելի անտանելի էր թուրքական լուծը։

Պանդուխտներն առանց երկնչելու ստիպում էին պատրիարքարանի պաշտոնյաներին, նրանց միջոցով և՛ սուլթանական կառավարությանը՝ ըզբաղվելու գավառահայության սոցիալ-քաղաքական կյանքի հարցերով։ Նրանց ճնշման տակ էր, որ հաստատվեց «Ազգային սահմանադրությունը», կազմվեց գավառական հարստահարություններն ուսումնասիրող խորհուրդը, Բ. Դռանն ուղղվեցին բազմաթիվ բողոքագրեր, որոնցում նկարագրվում էին այն բոլոր զրկանքներն ու հարստահարությունները, որ կրում էին գավառահայերը։ «Կ. Պոլսո հայ գաղթականությունն է, որ ամեն պարագային մեջ,— գրում էր «Արձագանքը»,— ցույց տված է, թե կա հայ ազգություն մը, որ

128 Րաֆֆի, Երկեր, հատ. 9, Երևան, 1958, էջ 196—197։

129 «Մշակ», 1875, № 51։

պիտի գործել յուր անդամոց համար»[130]։ Պանդուխտները, դառնալով Թուրքիայի, մասնավորապես արևմտահայության XIX դարի երկրորդ կեսին վերապրած խորունկ տնտեսական ճգնաժամի հայտարարը[131], արտահայտելով բախտակիցների քաղաքական ու տնտեսական շահերը, հենք դառնալով մարտահրապարակ իջնող դեմոկրատական հոսանքին, այնուամենայնիվ չձևավորվեցին իբրև բանվոր դասակարգ։

Եվրոպական կապիտալի ներմուծը Թուրքիա մի կողմից սաստկացնում էր սոցիալական ճնշումն ու հարստահարությունները Արևմտյան Հայաստանում, բնաշխարհից կտրում սնանկացած, պարտքերով բեռնավորված հայ ազգաբնակչությանը, ստեղծում էր բանվորական հսկա պահեստաբանակ, մյուս կողմից պատճառ դառնում ազգային արդյունագործական ճեռնարկությունների քայքայման, պանդուխտներին զրկում ժամանակակից տեխնիկայի վրա հանգչող աշխատանքի գործող բանակ դառնալու հնարավորություններից։ «Սրա մեջն էր հենց վերապրած ճգնաժամի էությունը, և այստեղ էր առաջանում նաև հին ու նոր պանդխտության ոչ միայն քանակական, այլև որակական տարբերանքը»[132]։

Այսպիսով, արևմտահայ այս խոշոր գաղթօջախում էին խարսխված աստիճանաբար մարող ամիրայությունը, նրա դեմ խոյացող կոմպրադորական բուրժուազիան, էնաֆությունների մեջ ընդգրկված ու նրանցից դուրս եղած արհեստավորները, տեղական արտադրանքի առևտրականները, բազմահազար հին ու նոր պանդուխտները և, վերջապես, այս դասերի ծնունդ, սրանց դասակարգային շահերը յուրովի պաշտպանող, հասարակական տարբեր ու հաճախ իրարամերժ հոսանքների, խմբերի փեղկված ստվարաթիվ արևմտահայ մտավորականությունը։

Կ. Պոլսի գաղթօջախը արևմտահայ մշակույթի զորեղ կենտրոնն էր։ Մայրաքաղաքի հայ գաղթօջախում ամենից առաջ զարգանում էր տպագրական գործը։ XIX դարի առաջին կեսին հայկական տպարանների թիվը հասնում էր 25-ի[133]։ Հայտնի էին Արապյանները, որոնք գուտենբերգյան ճեռնաշարժ մեքենան փոխարինում են արագատիպ մեխանիզմներով, տպագրության մեջ օգտագործում լուսանկարներ, բարձրորակ թուղթ։

Հայ տպագրության մեջ էական դեր են կատարել 1792 թ. Մ. Մխիթարյանի ջանքերով հիմնված Մայր Դպրատունը, 1799 թ. բացված Մ. Հովնանյանի տպարանը, 1839 թ. հիմնված Մյուհենտիսյան և այլ տպարանները, որոնք աստվածաբանական և կրոնա-բարոյագիտական գրքերի հետ միաժամանակ տպագրում էին նաև աշխարհիկ բովանդակությամբ, աշխարհաբարով գրված ինքնուրույն ու թարգմանական ստեղծագործություններ, օրացույցներ, պարբերականներ։

1806 թ. Կ. Պոլսում, Քիթապճի Մարգարի ջանքերով, հիմնվում է ա-

---

130 «Արձագանք», 1886, № 20, էջ 289։

131 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 361։

132 Նույն տեղում, էջ 362։

133 Տե՛ս Քնարիկ Կոչոյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, էջ 107—150։

բևմտահայերի առաջին գրավաճառանոցը, որը, փաստորեն, դարձել էր յուրօրինակ մի կենտրոն, որտեղ գրքափոխանակությունից, գնումներ անելուց բացի, ընթերցասեր մարդիկ փոխանակում էին նաև գաղափարներ, հաղորդակից դառնում մշակութային նորույթներին։ Ինչպես Քիթապճի Մարգարը, այնպես էլ մյուս գրավաճառներն ու տպարանատերերը Կ. Պոլսում տպագրած գիրքը տարածում էին մյուս հայ գաղթօջախներում։

XVIII դարի վերջերին սկսում է աշխուժանալ կրթական գործը։ 1770 թթ. Կ. Պոլսում սկսեց գործել «Սրբոյն Հակոբա Մծբնա Հայրապետի մանկատունը», իսկ 1790 թ. հիմնվեց անդրանիկ թաղային դպրոցը։ Դարասկզբին այստեղ բացվեցին շուրջ 15 դպրոցներ, որոնցում ընդգրկված աշակերտների թիվը հասնում էր 2000-ի։ Դրանցից աչքի ընկնող դեր են կատարել Միջագյուղ, Սամաթիա, Դուրուչեշմե թաղերի հայկական նորաստեղծ դպրոցները, 1797 թվականին բացված Սկյուտարի ս. Խաչի, 1813 թ. Պեյքոզի Թուղլաճի Մարտիրոսի հիմնած դպրոցը։ 1828 թ. Հարություն Պեզճյանը Բերայում հիմնում է ասեղնագործության դպրոց՝ փաստորեն պոլսահայերի ի-գական առաջին վարժարանը[134]։ Նույն թվականին Մայր եկեղեցու մոտ կառուցվում է ևս մի դպրոց, ուր ուսուցչության է կանչվում հայտնի հայկաբան Գր. Փեշտիմալճյանը։

Հետագա տասնամյակներին հիմնվում են Հռիփսիմյանց, Գայանյանց, ապա էյուպ թաղամասի Պեզճյան վարժարանը (1832)։ 1836 թ. արդեն գործում էր Խասգյուղի Ներսիսյան վարժարանը, Հանրահայտ Սկյուտարի Ճեմարանը, որն ամիրաների ու էնաֆների ընդհարումների առիթ դարձավ։

1840-ական թթ. սկսած հետադիմական մտավորականությունը համատ պայքարով ու դանդաղորեն իր տեղը զիջում է ֆրանսիական հեղափոխության գաղափարներով սնված ու հայրենիք վերադարձած պոլսահայ լուսավորյալների սերնդին։ Կազմվում են դպրոցական ու մշակութային մի շարք ընկերություններ, ավելի հրատապ է դառնում ժողովրդի լուսավորության խնդիրը։

1846 թ. ապրիլի 1-ին Մուրադ-Ռաֆայելյան դպրոցավարտները, Մ. Պեշիկթաշլյանի մասնակցությամբ, հիմնում են «Համազգեաց ընկերությունը», որին հաջորդում են «Ուսումնական ընկերությունը», «Արամյան ընկերությունը», «Հայկական թանգարան ընկերությունը», «Վերածնության ընկերությունը» և, վերջապես, 1860 թ. «Բարեգործական ընկերությունը»։ Տակավին չերկփեղկված, լուսավորական հովերով տարված պոլսահայ երիտասարդ, խանդավառ ու հայրենանվեր գործիչները ջանք չէին խնայում դպրոցական գործի կազմակերպման, ժողովրդի կրթության ու լուսավորության համար։

XIX դարի երկրորդ կեսին դպրոցների ու այնտեղ ընդգրկված աշակերտության թվով Կ. Պոլիսն առաջինն էր հայ իրականության մեջ։ 1859 թ. այստեղ կար 42 վարժարան՝ 4376 աշակերտներով, 1155 աշակերտուհիներով, 197 ուսուցիչներով։ 1871 թ. վարժարանների թիվը հասել էր 48-ի՝ 3936 աշակերտներով, 1886 աշակերտուհիներով, 224 ուսուցիչներով[135]։ Գաղթօջախը

134 Տե՛ս Գ. Սահփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, էջ 27—28։

135 Տե՛ս Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 427։

դպրոցների հիմնման, կրթական գործի կազմակերպման տեսակետից վերելք է ապրել հիմնականում անցյալ դարի 50—60-ական թթ.։ Հետագայում, համիդյան ռեժիմի տարիներին, նա հանդիպեց մեծ դժվարություններին։

1834 թվականին Կ. Պոլսում բացվում է Ազգային հիվանդանոցը, որն ուներ վարժարան, 100—150 մահճակալ՝ հիվանդների համար։ Դարակեսին մահճակալների թիվը հասնում է 200-ի, «ծաղկում էր» հիվանդանոցին կից գործող վարժարանը, տալիս ազգային, մշակութային գործիչներ։ Հիվանդանոցի ծախսերը սկզբում հոգում էր Հարություն Պեզճյան ամիրան, իսկ 1863 թ. սկսած՝ Ազգային սահմանադրությամբ ստեղծված հոգաբարձությունը։

Կ. Պոլսի գաղթօջախում ձևավորվեցին արևմտահայ հրապարակախոսությունը, հասարակական-քաղաքական հոսանքները։ Այստեղ էին հրատարակվում «Ջոհալ», «Երևակ», «Հայաստան», «Ժամանակ», «Արևելյան դար» կղերա-ամիրայական հոսանքի խոսափողերը հանդիսացող պարբերականները, «Մեղու», «Մյունաստի», «Թատրոն», «Նիծաղ», «Թատրոն բարեկամ մանկանց» դեմոկրատական հանդեսները։ Սրանց շուրջը համախմբված մտավորականները, իրարամերժ պայքար ծավալելով, գաղափարական մարտեր մղելով, միաժամանակ զգալի զարգացման հասցրին արևմտահայ գրականությունը։

* * *

Թուրքիայի կիսագաղութի վերածվելը պարտատեր եվրոպական տերություններին ու Վատիկանին նոր հնարավորություններ էին ընձեռում կրոնական քարոզիչների միջոցով իրենց ազդեցությունը տարածել գաղթօջախի հայ զանգվածների վրա՝ ջանալով նրանց հեռու պահել դեպի Ռուսաստանն ունեցած կողմնորոշումից։ Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում իրենց առևտրական գործարքները դյուրին դարձնելու, Ռուսաստանի տնտեսական, առավել ևս քաղաքական ազդեցությունը թուլացնելու նպատակով Իտալիան և Ֆրանսիան կաթոլիկ պրոպագանդիստների, ուսուցիչների բազմամարդ խմբեր էին շարժում դեպի Կ. Պոլիս, ապա Արևմտյան Հայաստան, «քաղաքակրթություն տարածելու» և քրիստոնեական եկեղեցու շահերը պաշտպանելու կեղծ պատրվակով դավանափոխում հազարավոր հայերի և ջանում վերջիններիս ծառայեցնել Արևմուտքի նվաճողական դիտավորություններին։

Միսիոներական շարժումը, կաթոլիկական քարոզչարանները Կ. Պոլսում սկզբնավորվում էին XVI դարավերջից։ «Վատիկանը, որն համառորեն ջանում էր իր գերիշխանությունը հաստատել համաքրիստոնեական եկեղեցու վրա... խաչակրաց արշավանքների վերջնական ձախողումից հետո անցավ Արևելքի ոչ-քրիստոնեական երկրներում «խաղաղ» ներթափանցման գործելակերպին»[136]։ Առաջինը Ֆրանսիան սկսեց կաթոլիկ քարոզիչներ առաքել Կ. Պոլիս և, հայերից շատերին դավանափոխելով, մահմեդականներից ու հրեաներից հաղարավոր գործակալներ պատրաստելով՝ ջանք չխնայեց իր նվաճողական քաղաքականության համար հող ստեղծելուն։

---

136 Е. А. Беляев, Предисловие к кн.: Мустафа аль-Халиди, Омар Фарух, Миссионеры и империализм в арабских странах, М., 1961, стр. 4. *Հայերի կաթոլիկացման մասին տե՛ս* Հ. Մ. Պողոսյան, *Հեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 217—230։*

XIX դարի առաջին քառորդում հայ կաթոլիկների համայնքը Կ. Պոլսում համահավաքում էր 25000 մարդ և եվրոպացիների հարկադրանքի տակ վարում հակահայկական քաղաքականություն, նույնիսկ հակադրվում հայկական ընդհանուր եկեղեցու ավանդույթներին, Հռոմի կղերապետության սադրանքներով դավանաբանական վեճեր մղում էջմիածնի կաթողիկոսության և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դեմ։

Սուլթանական կառավարությանը ձեռնտու էր արևմտահայության պառակտումը, ուստի, մերթ պաշտպանելով համայնքներից մեկին, մերթ՝ մյուսին, հարմար առիթով վնասում էր երկուսին էլ։ 1828 թ. հունվարի 27-ին[137] Մահմուդ II-ը, կաթոլիկ-լուսավորչական պայքարի առիթով, 12,000 հայ կաթոլիկների, այդ թվում 42 հոգևորականների, աքսորում է Կ. Պոլսից, Բերայից, Ղալաթիայից։ Կողոպտված հայկական գերդաստանները ցրտաշունչ ձմռանը քշվում են Փոքր Ասիայի խորքերը։ Ճանապարհին մահանում են շուրջ 400 երեխաներ, ծերեր ու կանայք։

Որոշ ժամանակ անց, Ֆրանսիայի միջամտությամբ, սուլթանը նորից արտոնում է կաթոլիկ հայերի վերադարձը մայրաքաղաք, որը և խթանում է կաթոլիկացման պրոցեսի արագացմանը։ 1840-ական թթ. հայ կաթոլիկները 35.000 էին, որոնք ունեին քարոզչարաններ, բազմաթիվ դպրոցներ, հիվանդանոց։ 1846 թ. կաթոլիկների համայնապետ դարձավ Անարզաբայի եպիսկոպոս Անտոն Հասունյանը, որը միջոցների մեջ խտրություն չդնելով համալրում էր «իր համայնքը»։ Մինչ այդ կաթոլիկների առաջնորդ Գևորգ Ը-ն նստում էր Զմառի վանքում, իսկ նրա մահից հետո Թուրքիայում ստեղծվեց կաթոլիկների պատրիարքություն և տեղափոխվեց Կ. Պոլիս՝ իրեն ենթարկելով Ասորիքի, Միջագետքի, Փոքր Հայքի, Եգիպտոսի 40.000 հայ կաթոլիկներին։

Հասունյանը Հռոմից ստացավ կաթոլիկների կաթողիկոս-պատրիարք՝ «պատրիարք տանն Կիլիկիո» տիտղոսը, եպիսկոպոսական աթոռներ հաստատեց Կ. Պոլսում, Հալեպում, Մարաշում, Ադանայում, Դիարբեքիրում։ 1856 թ. Թուրքիայի հայ կաթոլիկների թիվը մոտենում էր 100 հազարի։

1850-ական թթ. սկզբին Կ. Պոլսում ձևավորվեց և հետագայում ավելի մարդաշատ դարձավ «Հասունյան կուսակցությունը»։ Հասունյանները բացում էին արական ու իգական վարժարաններ, անվճար հագուստ և սնունդ էին բաժանում աղքատ երեխաներին, կաթոլիկացնում նրանց, ապա ուղարկում Հայաստանի ամենաաղքատ գավառները։ Կարիքը, թշվառությունն ու քաղցը հայ մայրերին ստիպում էին այդ ճանապարհով կորցնել իրենց զավակներին, իսկ կաթոլիկ պրոպագանդիստներն էլ Ֆրանսիայից ու Վատիկանից միջոցներ ստանալով, հոգիներ էին գնում։ Կ. Պոլսից կաթողիկոսին բողոք էր ուղարկվում, որտեղ ասված էր. «կաթոլիկ որսորդները խիստ հաջող դեր կխաղան, անհնարին է մրցել նոցա հետ, վասնզի Եվրոպայեն ահագին գումարներ են թափում հոն»[138]։

---

137 Տե՛ս Ա. Պերպերյան, Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 196—197։

138 Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. 12, վավ. 370։ Տե՛ս նաև Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 237։

Կաթոլիկների վարքագիծը՝ սուլթանին դրածո դառնալը զայրույթ առաջ բերեց Կ. Պոլսի հայ առաջավոր մտավորականների մեջ և, ի հակադրություն սրանց, կազմակերպվեց «Հակահասունյան կուսակցությունը»։

1846 թ. հիմնված «Համազգյաց» մշակութային ընկերությունը Հասունյանների կողմից Բ. Դռանը ներկայացվեց իբրև քաղաքական կազմակերպություն և արգելվեց։ Այդ առիթով Մ. Պեշիկթաշլյանը գրեց «Հանելուկ» բանաստեղծությունը, որտեղ Անտոն Հասանյանի մասին ասվում էր.

Անունով մեծ ճգնավոր — Գործքով գիտնաս ինչ ըլլալս
Ու եմ հովիվ պաշտոնով — Պիտի դողաս սարսափով[139]։

Հասունյանների դեմ պայքար սկսեցին Կ. Փանոսյանը, Ա. Հայկունին, Հ. Սվաճյանը և ուրիշներ։ Փանոսյանը գոմարներ էր հանգանակում, Սամաթիայում բացում աղջիկների վարժարան, ձրի ուսում տալիս հայ մանուկներին, որպեսզի նրանք չընկնեին կաթոլիկների թակարդը։ Ա. Հայկունին գրեց երգիծական պամֆլետներ, Հ. Սվաճյանը «Մեղուն» պայքարի ամբիոն դարձրեց Հասունյանների դեմ։ Բաֆֆին Հռոմի պապի Թուրքիայում ծավալած գործունեությունը որակեց հայակործան, իսկ Հասունյան ամբողջ խումբը՝ պապի «ծանր լծի տակ» պատսպարվածներ[140]։

Կ. Պոլսում Հասունյան-հակահասունյան պայքարն ավելի սրվեց Զեյթունի 1862 թ. ապստամբությունից հետո։ Ա. Հասունյանը Զեյթունի իշխաններին ֆրանսիական կառավարության անունից հովանավորության խոստումներ էր տալիս, փոխարենը պահանջելով կաթոլիկություն ընդունել։ Գործին միջամտում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, Սարգիս Ջալալյանց եպիսկոպոսը, որը 1868 թ. նոյեմբերի 30-ին Էջմիածնի կաթողիկոսին գրում էր. «Հասունն ամենայն զորությամբ ջանում է մեր ազգը կաթոլիկ դարձնել և պրոպագանդ է մղում, որին իբրև ծախս տրամադրվում է 25000 մանեթ, որով և այս և այն տեղեր կառուցում է դպրոցներ, հեշտությամբ մեր ազգը որսալու համար։ Պողոս բեյ Մարլին ցանկանում է դպրոց կառուցել Զեյթունում և ընծայել հանուն սուլթանին, տեսեք թե ինչպիսի խորամանկությամբ են գործում...»[141]։ Էջմիածնի միջամտությամբ Զեյթունում բացվեցին լուսավորչական դպրոցներ, սակայն կաթոլիկներն իրենց նպատակներն սկսել էին իրականացնել Կիլիկիայում, մասամբ էլ Զեյթունում։ 1863 թ. այնտեղ 285 տուն կաթոլիկ էր դարձել, իսկ 1864 թ. Հասունի կոնդակով Զեյթունի կաթոլիկների առաջնորդ է ճանաչվում Կղեմես Միքայելյանը։ 1860-ականներին արևմտահայ կաթոլիկների թիվը հասնում էր շուրջ 150 հազարի, որոնք իրենց «ֆրանկ» էին անվանում։

Հայերի կաթոլիկացման գործը կատարվում էր Ֆրանսիայի թելադրանքով։

---

139 Տե՛ս Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1961, էջ 86։

140 Տե՛ս Բաֆֆի, Երկեր, հատ. 9, էջ 487։

141 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 198։

Եթե Արևելքում կաթոլիկության տարածելու միսիան հիմնականում կապված էր Ֆրանսիայի հետ և պաշտպանվում, վարկավորվում էր ֆրանսիական կառավարության կողմից, ապա բողոքականությունը տարածում էին ամերիկյան միսիոներները, հովանավորվելով Կոստանդնուպոլսի անգլիական դեսպանության կողմից, քանի որ Ամերիկան Թուրքիայում դեռևս պաշտոնական ներկայացուցիչներ չուներ[142]։ 1810 թ. Բոստոնում հիմնադրված բողոքականների միությունը 1820 թ. Մալթա կղզում մասնաճյուղ է հաստատում, տպարան հիմնում, դպրոցներ բացում և քարոզիչներ պատրաստելով ուղարկում Թուրքիայի ասիական գավառները։

Բողոքական միսիոներները Արևելք ներթափանցելիս հիմնական կենտրոնն ընտրում են Կ. Պոլիսը և աշխատում դլխավորապես արևմտահայության մեջ։ 1824 թ. մայրաքաղաքում նրանք բացում են տարրական կրթարաններ, ապա ողջ Եվրոպայում հայտնի Ռոբերտ-կոլեջ բարձրագույն դպրոցը, տպարան, ուր վեց լեզուներով հրատարակվում և ձրի բաժանվում էին կրոնական գրքեր։

XIX դարի կեսերին Բոստոնից վարկավորվող ընկերությունը Թուրքիայում հաստատում է 15 գլխավոր, 254 երկրորդական քարոզչարաններ, որոնք բաժանված էին երեք խմբի. 1. Արևմտյան Թուրքական՝ Կ. Պոլիս կենտրոնով, 2. Կենտրոնական Թուրքական՝ Այնթապ կենտրոնով, 3. Արևելյան Թուրքական՝ Խարբերդ կենտրոնով։ 1845 թ. Փոքր Ասիայում բողոքականներն ունեին 7 դպրոցներ՝ 135 սովորողներով, որը գնալով աճեց։ Թուրքիայում 1865 թ. արդեն կային 6 արական միջնակարգ դպրոցներ, 9 իգական պանսիոնատներ, 122 տարրական դպրոցներ՝ 139 ուսուցիչներով, 5126 աշակերտներով, իսկ 1869 թ. այդ դպրոցների թիվը հասնում էր 185-ի։ Դարավերջին դրրանք քառապատկվել էին։

Արևմտահայության դավանափոխության գործը «հաջողց էր կազմակերպել Արևելյան միսիան, որն ուներ 5 գլխավոր (Խարբերդ, Կարին, Վան, Բիթլիս, Մարդին) և 110 երկրորդական կայաններ։ Բոլոր կայանների դեկավարները, դպրոցների տնօրենները բացառապես ամերիկացի միսիոներներ էին, որոնց կենտրոնն ու հրահանգիչը դառնում էր Կ. Պոլսի անգլիական դեսպանատունը։

Միսիոներական շարժման տարածումը բողոքի ալիք առաջ բերեց Կ. Պոլսի հայ մտավորականության մեջ։ Մ. Պեշիկթաշլյանը գրեց մի շարք հոդվածներ, Ա. Հայկունին 1860 թ. հրատարակեց «Թուրֆանտա տիկինը և իր գաղափարը ամերիկացի երիցական քարոզչաց վրա», «Պղատոն ի Վոսբոր» գործերը, որտեղ ամերիկացի քարոզիչներին անվանեց «ինքնակոչ առաքյալներ», «անճոռնի և իմաստակ փախստականներ»։ «Մեղուն» հոդվածաշարով քողազերծ արեց բողոքականների դեմքը, արևմտահայությանը թախանձեց հեռու մնալ «վարակիչ այդ ախտից»։ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով հայ ժողովրդին կոչ արեց զոհ չգնալ եվրոպացի ու ամերիկացի քարոզիչների «մեղրածոր լեզվին»։ Կ. Պոլսի հայոց պատրիար-

142 Տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции, М., 1965, стр. 137—138.

քը բազմաթիվ դիմումներով ու գրություններով բողոքում էր էջմիածնի կաթողիկոսին, որ ինքը չի կարող արգելել բողոքականության տարածումը, քանի որ նրանց հովանավորում է Կ. Պոլսի անգլիական դեսպանը։

Կաթոլիկների, բողոքականների և լուսավորչականների միջև մղվող պայքարը մեծ ծավալ ստացավ։ Դավանաբանական այդ վեճերը խիստ բացասական դեր խաղացին Օսմանյան կայսրության տիրապետության տակ հեծող արևմտահայության սոցիալ-քաղաքական կյանքում։

5. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի առաջին կեսին Կ. Պոլսում աստիճանաբար աշխուժանում էին հասարակական-քաղաքական շարժումները, հատկապես ամիրայության դեմ բռնկված արհեստավորական ելույթները։

Մինչև 1840-ական թթ. պոլսահայ գաղթօջախի ներքին կյանքը տնօրինում էին ամիրաները և նրանց կամակատար Կ. Պոլսի հայոց պատրիարքները։ Ամիրաները առաջադրում և սուլթանների միջնորդությամբ քամահաճորեն հաստատել կամ հեռացնել էին տալիս պատրիարքին, լուծում կրոնադավանաբանական բնույթի վեճերը, վճռում գավառին հուզող հարցերը, բացում և փակում դպրոցներ։

Սակայն արևմտահայ կրոնական համայնքին վերաբերող եկեղեցական, երբեմն էլ աշխարհիկ խնդիրներում տակավին ընդարձակ իրավունքներից էին օգտվում Կ. Պոլսի հայոց պատրիարքները, որոնց ստացած առանձնաշնորհումները սկիզբ էին առնում սուլթան Մահմեդ Ֆաթիհի ժամանակներից և շարունակում գոյություն ունենալ մինչև 1860 թվականը։ Նախքան Ազգային սահմանադրությունը, հայոց պատրիարքներն իրավունք ունեին դատել, պատժել, նույնիսկ աքսորել բոլոր այն հոգևորական ու աշխարհական հայերին, որոնք անհնազանդ էին գտնվել կամ մեղանչել էին կրոնական ավանդույթների դեմ, վատնել եկեղեցու հարստությունը, հրաժարվել հարկատվությունից[143]։

Պատրիարքների ու ամիրաների վերոհիշյալ իրավունքները ծանր էին նստում գավառներում ապրող արևմտահայության վրա, քանի որ այստեղ էլ չարաշահումներն ու բռնությունները գործադրում էին եկեղեցական թեմերի առաջնորդները, հայ աղաները։

Դարի առաջին քառորդին պոլսահայ արհեստավորությունը, քաղաքականապես հասունանալով, իր շահերը գիտակցելով, մարտահրավեր էր նետում ամիրայությանն ու պատրիարքին։ 1820 թ. օգոստոսին տեղի է ունենում արհեստավորության կազմակերպած անդրանիկ ելույթն՝ ուղղված ամիրայության և նրա դրածո Պողոս պատրիարքի դեմ։

Այդ օրերին մայրաքաղաքում լուրեր էին տարածվել, թե պատրիարքը կաթոլիկություն է ընդունել։ Օգտվելով այս առիթից, օգոստոսի 8-ին ցուցարարները հոծ բազմությամբ մտնում են պատրիարքարան՝ Պողոսին սպանելու մտադրությամբ։ Պողոսը ճողոպրում է։ Արհեստավորները չեն հեռա-

143 «Մասիս», 1893, էջ 163-ի ծանոթագրությունը։

նում։ Վրա են հասնում թուրք զինվորները և ցրում ցուցարարներին։ Օգոստոսի 9-ին արհեստավորներն իրենց պահանջները ձևակերպում են և գրավոր ներկայացնում Բ. Դռանը։ Մեծ սադրազամը ամիրաների սադրանքով բանտարկում է ցույցի ղեկավարներին։ Օգոստոսի 18-ին կեսարացի Հակոբը և Գրիգոր Սաքայանը մահապատժի են դատապարտվում։ Առանց վճռի Դելի Բաղդասարին, Կարապետ սարկավագին, պատանի Ազարիային կառափնարան են առաջնորդում, իսկ բազմաթիվ ցուցարարների աքսորում։

Արհեստավորության ցույցեր են բռնկվում նաև 1825, 1827, 1832, 1836 թվականներին։ Նախորդի ծավալը չընդունած, բայց ամիրայական մենատիրության դեմ խոյացած այս ընդվզումները ժողովրդական զանգվածներին արդյունք չտվեցին։ Սուլթանը դեռ զգում էր ամիրաների կարիքը, ուստի կատարում էր նրանց կամքը, հաճությամբ պատժում արհեստավորներին։

Արհեստավորական ցույցերն ավելի հաճախակի և հուժկու դարձան 1840-ական թվականներին։ 1838 թ. սեպտեմբերի 9-ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում բացվեց դիշերօթիկ դպրոց։ Ըստ նախնական պայմանավորվածության, Սկյուտարի ճեմարանի ծախսերը պետք է հոգային ամիրաները և Երուսաղեմի պատրիարքությունը՝ տրամադրելով տարեկան 20 հազար դահեկան նպաստ։ Այնտեղ պիտի սովորեին նաև էնաֆների երեխաները։

Ամիրաներն «անպատվաբեր» են համարում իրենց երեխաների կողքին տեսնել «հասարակ մարդկանց» զավակներին, դրա համար էլ ոչ միայն միջոցներ չտրամադրեցին, այլև Երուսաղեմի պատրիարքին պարտադրեցին հրաժարվել խոստացած նպաստատվությունից։ Արհեստավորներն ստիպված էին դրամ հանգանակել, միաժամանակ Հակոբ պատրիարքին խնդրել ամեն մի ամձնագրի վրա հինգ ղուրուշ հարկ դնել և այդ միջոցներով երկարաձգել ճեմարանի գոյությունը։ «Ժողովրդական արհեստավոր մասը ջանք կթափե ճեմարանի կանգուն պահելուն, մինչդեռ ամիրայությունը կփակե այն»[144]։

Սկյուտարի ճեմարանի շուրջը սկսված պայքարը գնալով սուր կերպարանք ստացավ։ 1841 թ. կազմվեց Միակամ ընկերությունը, որի մեջ մտնող 24 արհեստավորները որոշեցին դրամ հանգանակել և սեփական միջոցներով դիշերօթիկ դպրոցը պահել։ Մարտին կառավարությունը ցրեց այդ հանձնախումբը, փակեց ճեմարանը։ Ապրիլի 13-ին ճեմարանի մի խումբ աշակերտներ, ներկայանալով մեծ սադրազամին, աղերսագիր մատուցեցին և խնդրեցին 24 արհեստավորներից կազմված հանձնախմբի վերականգնում, ճեմարանի նոր հոգաբարձության ստեղծում[145]։ Կառավարությունը սկզբում համաձայնվեց կատարելու ցուցարարների պահանջները։ Սակայն ամիրաները օգտագործելով իրենց հարստությունը, պալատում գրաված դիրքը, արքունի պաշտոնյաների ու սուլթանի հետ ունեցած կապերը, տապալել են տալիս արհեստավորներին ընդառաջող հայոց պատրիարքին, աթոռը հանձնում իրենց կամակատարին[146]։ Արհեստավորներն ստիպված են լինում նորից բո-

---

144 Հ. Պարոնյան, Երկեր, հատ. 3, էջ 55։

145 Ա. Պերպերյան, Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 272։

146 Նույն տեղում, էջ 272—273։

զոքել Բ. Դոանը, բայց կառավարությունը օգոստոսի 14-ին ձերբակալում է հեմսրանի վարչության 24 անդամներին։ Կղերա-ամիրայական ռեակցիան փաստորեն վերստանում է իր մենատիրական դիրքը։

Այս բացարձակ անարխարությունից զայրացած, 1841 թ. օգոստոսի 24-ին պալնդուխտ օրամշակներից, արհեստավորներից բաղկացած երեք հապրանոց ամբոխը նոր ու հզոր ցույց կազմակերպեց։ «Չենք ուզեր պատրիարք և սեղանավոր ամիրաներից կազմված վարչությունը» կոչով նրանք պահանջեցին ազատել բանտարկյալներին։ Բողոքի այս ցույցը ղեկավարում էր «գինևպան Իսկենտերը—զայրն ճարտարախոս»[147]։

Ամբոխի հուզմունքից վախեցած Բիֆատ փաշան ակամայից համաձայնեց ազատ արձակել կալանավորներին։ Սակայն չանցած քսան օր, արդարադատության ատյան կանչվեցին արհեստավորների ղեկավարները և հարցաքննության հետո մայրաքաղաքից աքսորվեցին Պողոս և Հովհաննես վարդապետները, Հակոբիկ Մանվելյանը, ոսկերիչ Անդրիասը, Տիվիթյան Գևորգը, պասմաճի Պետրոսը, հարթաքչի Հովհաննեսը։ Աքսորի ահից շատերն անցան Արևելյան Հայաստան, իսկ գինևպան Իսկենդերը փախավ Օդեսա։

Բանտարկություններն ու խստությունները ոչ միայն չվհատեցրին, այլ պայքարի ոգեշնչեցին մայրաքաղաքի արհեստավորությանը, նրա հետ համաքայլ ընթացող գավառահայ պանդուխտներին։ 1841 թ. նոյեմբերի 9-ին նոր ցույց կազմակերպվեց։ Լցվելով նավակները, ցուցարարները շարժվում են դեպի սուլթանի պալատը, աղերսագիր ներկայացնում նրան, որի մեջ շեշտվում է, թե «տերության հնազանդ են, բայց ամիրաներու գերի չեն ուզեր մնալ, ավելի կսիրեն մեռնիլ, քան ասոնց ծառայել»[148]։

Մեծ սադրազամի հրամանով, թուրքական զափթիեները շրջապատում են ցուցարարներին, բանտարկում շատերին, սակայն շուտով ազատ արձակում։ «Հազիվ երկու շաբաթ հետո Աստվածատուրի ընտրութենեն, 1841 թվականի հոկտեմբերի 3-ին կը փակվեր Սկյուտարի ճեմարանը, իբր պատճառ ազգին խռովության... Սակայն արհեստավորք պարտություն չխոստովանեցան, այլ ընդհակառակը ավելի սերտիվ հարեցան ամիրաներու լուծը թոթափելու գաղափարին»[149]։

1841 թ. նոյեմբերի 9-ին կրկին ցույց է կազմակերպվում։ Կառավարությունը տեսնելով, որ այլևս չի կարող հանգիստ վիճակում պահել մայրաքաղաքը, ընդառաջելով նորընտիր պատրիարքի թախանձանքին, դեկտեմբերի 12-ին կայսերական հրովարտակով 27 արհեստավորներից կազմված վարչությանն է հանձնում պատրիարքարանի տնտեսական գործունեության ղեկավարությունը։ Չնայած փակվում է Սկյուտարի ճեմարանը, բայց և այնպես պարտվում է ամիրայությունը։ Հակառակ վերջիններիս ոտնձգություններին, էնաֆները հաղթանակ են տանում և ջանում նվաճել նոր իրավունքներ։

1846 թ. հոկտեմբերի 1-ին վերաբացվում է Սկյուտարի ճեմարանը։ Նրա

147 Ա. Պերպերյան. Պատմություն հայոց, էջ 273։

148 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3733։

149 «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 196։

շուրջն անմիջապես բորբոքվում է նախկին պայքարը։ Հայոց պատրիարքը հարկադրված էր հաշտարարի դեր ստանձնել, ամիրաներին համոզելով կառավարության հաճությունն ստանալ, որպեսզի արհեստավորության համար տեղեր հատկացվեին ազգային-մշակութային բնույթի հիմնարկների գործերը տնօրինող մարմիններում մեջ։ Դեռևս 1846 թ. կազմված Ազգային ժողովի 30 անդամներից 16-ը ամիրաներ էին, 14-ը՝ էսնաֆներ։ 1847 թ. մայիսի 9-ին այդ ժողովը վերակազմվում է երկուսի՝ Կրոնական ժողով՝ բաղկացած 14 անդամներից, Քաղաքական ժողով՝ 20 հոգուց։ Արդուլ Մեջիդի մայիսի 20-ի հրովարտակով վավերացված, արհեստավորներից ու ամիրաներից բաղկացած, պատրիարքի նախագահությամբ գործող այս հիմնարկությունները նոր երևույթ էին արևմտահայոց կյանքում։

Այսպիսով, 1840-ական թթ. կեսերից փաստորեն սահմանափակվում են ամիրաների մենատիրական իրավունքները, վերջ է տրվում կղերա-ավատատական վերնախավերի անկաշկանդ թելադրանքին արևմտահայ մշակութային օջախների վրա, ուժեղանում է լուսավորական շարժման ազդեցությունը, պայքարի հրապարակ է դուրս գալիս արհեստավորությունը, որն աստիճանաբար իր շուրջն է համախմբում մայրաքաղաքի աշխատավորական զանգվածներին։

Ղրիմի պատերազմից հետո Թուրքիայի ներքին ու արտաքին ծանր կացությունն օգտագործեցին Եվրոպայի մեծ տերությունները, որոնք կարճ ժամանակամիջոցում տեր դարձան կայսրության տնտեսական կարևոր մարզերին, կիսագաղութային կախման մեջ դրեցին երկիրը։ Գնալով անմխիթարական դարձավ կայսրության տնտեսական ու քաղաքական վիճակը։

Զգալով այս բոլորը, նոր Թուրքիայի կողմնակիցները, երկրի ներքին գործերը արտաքին միջամտությունից զերծ պահելու, վարկաստուների ձեռքին մանրադրամի դեր կատարող քրիստոնյա հպատակ ազգերին սիրաշահելու, նրանց և մանավանդ մահմեդական ժողովուրդների մեջ լեռնացող դժգոհությունը կանխելու նպատակով Աբդուլ Մեջիդին ստիպեցին, թեկուզ խոսքով, քրիստոնյա ժողովուրդներին ազգային ներքին գործերը տնօրինող կանոնադրություններ ստեղծման թույլտվություն տալ։ Դրանք ավելի շուտ ժողովրդական զանգվածներին խաբելու և արտաքին միջամտություններից խուսափելու միջոցառումներ էին։ Փարիզի 1856 թ. մարտի 30-ի պայմանագրում մտցված 9-րդ հոդվածը խոսքով ճանաչում էր քրիստոնյա հպատակների դարերով ապաճանաչված իրավունքները։ Այն սուլթանի ու թուրք ֆեոդալների կամքին հակառակ, օբյեկտիվորեն նպաստեց հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի աշխուժացմանը։

Օգտվելով ընձեռած հնարավորություններից, նոր գաղափարներով սընված, արհեստավորների և ողջ աշխատավորության ճակատագրով մտահոգվող մտավորականները նորից ոտքի են ելնում։ Պոլսի հայ գաղութը դառնում է դասակարգային պայքարի մարտադաշտ, նոր թափ է ստանում լուսավորական շարժումը։ Ամիրայության, պատրիարքի, նրանց հովանավորող սուլթանական կառավարության դեմ նախկինում եղած ընդվզումները 1850-ական թվականներին թևակոխում են վճռական շրջափուլ։ Դարամիջի երկու

տասնամյակներին Թուրք փաշաներին, վեզիրներին, անգամ սուլթաններին նեցուկ դարձած հայ դրամատերերի դեմ մարտադրող են պարզում Եվրոպայից վերադարձած, ֆրանսիական 1848 թ. հեղափոխության ավազանում մկրտված, բուրժուական առաջավոր մտածողների գաղափարներին հաղորդակից մի շարք հայ մտավորականներ։ Սրանք ջանում էին ստեղծել մի այնպիսի կանոնադրություն, որով հնարավոր լիներ չեզոքացնել ֆեոդալական կարգերի հայ պաշտպաններին և ազգային հիմնարկների մեջ տեղեր ապահովել առևտրական նորելուկ բուրժուազիային։ Գր. Օտյանը, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Գ. Պալյանը, Ն. Ռուսինյանը մի քանի հոգևորականների մասնակցությամբ 1854 թ. կազմեցին նախօրոք մտահղացված կանոնադրության տեքստը և օգոստոսի 26-ին ներկայացրին պատրիարքին ի հաստատություն։ Նախագիծը կազմված էր բուրժուական սահմանադրությունների սկզբունքով, տեղ-տեղ նույնիսկ արտագրված էին 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո ընդունված սահմանադրության որոշ հոդվածները։ Եվրոպական ազատամտական հովերով տարված հայ լուսավորյալ սահմանադրականներն իրենց կազմած օրինագծի մեջ տեսնում էին ապագա ազգային ինքնավարության սաղմը։

Կանոնադրության անդրանիկ նախագիծը դուր չեկավ հայ ամիրաներին և երկու տարի ընթացքի մեջ չէր դրվում։ Կազմվեց 21 եկեղեցականներից ու աշխարհականներից բաղկացած սահմանադրական նոր հանձնաժողով, որը 1856 թ. դեկտեմբերին ավարտում է վաղուց ի վեր սկսած իր աշխատանքը[150] և 1857 թ. մարտի 22-ին հրապարակում հայկական համայնքի ներքին գործերի տնօրինությունից շատ հեռու գնացող, ազատամիտ, ընդարձակածավալ կանոնադրությունը[151]։ «Բայց հազիվ քանի մը ամիս կանցնի, և ահա ամիրաներու խումբ մը, իրենց հետ ունենալով մաս մը վզերական դասեն, այն կանոնադրությունը անհարմար կտեսնեն, ազգին կրոնքի և ազգային ավանդությանց հակառակ բաներ անոր մեջ տեսնել կկարծեն...»[152]։ Կառավարության միջամտությամբ խափանվում է գործը, ընտրվում ավելի չափավոր հայացքներ ունեցող անձնավորություններից բաղկացած նոր հանձնաժողով։

Այս հանձնաժողովը 1858 թ. երկրորդ կեսին վերսկսում է իր աշխատանքը, ձգտում շուտափույթ վերամշակել և Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնել կանոնադրության խմբագրված նախագիծը։ Գործը նորից հետաձգվում է։ Նախ վախճանվում է ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, ապա և 1858 թ. հունիսին հրաժարական է տալիս Հակոբ պատրիարքը, հոկտեմբերի 17-ին նոր պատրիարք է ընտրվում Գեորգ եպիսկոպոսը։

Հակասահմանադրականները ձգտում են տապալել կանոնադրությունը, քանի որ «... շատ ազատամիտ կնկատվեր Տատյանց, Պալյանց, Երամյանց և

---

150 «Մեղու», 1856, դեկտեմբեր, № 31, էջ 173—175։

151 «Մասիս», 1857, 28 մարտի, № 270։

152 «Հանդես ամսօրեայ», 1902, հուլիս, էջ 207։

ասոնց համախոհ ամիրայական խմբակին»[153]։ Հակառակ սրանց, 1859 թ. մայիսին ընտրվում է հերթական հանձնաժողովը՝ 5 եկեղեցականների և 14 աշխարհականների մասնակցությամբ։ Հանձնախմբի կազմումն էին Կ. Յուբիճյանը, Բարունակ բեյը, Մկրտիչ Աղաթոնը, Նահապետ Ռուսինյանը, Ենովք Տեմիրճիպաշյանը, Գրիգոր Օտյանը։ Խմբի ոգին և գաղափարական առաջնորդը տակավին ֆրանսիական հեղափոխության գաղափարներով տարված Նահապետ Ռուսինյանն էր, որը գրեթե միանձնյա խմբագրում էր կանոնադրությունը։

Հանձնախումբը նոյեմբերին ավարտում է աշխատանքները և վերամբողջակված տեքստը ներկայացնում Ազգային ընդհանուր ժողովի հաստատությանը[154]։ Քննարկման ժամանակ ամիրաները առաջարկ են մտցնում նույն նիստում չվավերացնել այն, այլ փոփոխությունները հանգամանորեն քննելուց հետո ներկայացնել հաջորդ անգամ։ Սակայն հաջորդ նիստը հետաձգվում է անորոշ ժամանակով. ավելին, Գեորգ պատրիարքը, դաշնակցած ամիրայական խմբավորման հետ, ոչնչի առաջ կանգ չի առնում, ջանալով Բ. Դռան միջնորդությամբ մեկընդմիշտ արգելել տալ կանոնադրությունը։

Հակասահմանադրականների նման արարքը զայրացնում է սահմանադրականներին և աստիճանաբար ուժեղացնում սահմանադրական շարժումը։ Կանոնադրությանն արդեն պաշտպան են կանգնում ոչ միայն բուրժուական մտավորականները, արհեստավորները, այլև պանդուխտ մշակները և գավառահայ հոծ բազմությունը։ Այս ամենը նոր որակորություն է առաջ բերում և պոլսահայ լրագրապետերին մղում ակտիվ գործողության։ Աշխուժանում են դեմոկրատական ուժերը, վարկազրկվում է պատրիարքը և հեռացվում։ Նորընտիր պատրիարք Սարգիս Գույումճյանը 1860 թ. մայիսի 24-ին ստիպված ընդունում է կանոնադրությունը։ Գր. Օտյանի, Սերվիչենի, Գ. Պալյանի կրկին խմբագրումով կանոնադրությունը ներկայացվում է ընդհանուր ժողովի քննարկմանը և հաստատվում։ Ն. Ռուսինյանի առաջարկությամբ այն ստանում է Ազգային սահմանադրություն անվանումը[155]։

Ազգային սահմանադրության այս տարբերակը նվաճվեց Կ. Պոլսի հայ արհեստավորների, օրամշակ բանվորների, բազմահազար պանդուխտների և սրանց ղեկավարող հայ առաջադեմ մտավորականության պայքարի գնով։ Չի կարելի համաձայնվել հայ բուրժուական այն պատմաբանների հետ, որոնք Սահմանադրությունը դիտում են իբրև բարեխնամ սուլթանի գթության ու շնորհի արդյունք։ Արևմտահայ դեմոկրատիայի օրգան «Մեղու» պարբերականի վկայությամբ. «...տասն անգամ տակն ու վրա եղավ ազգը այս բանիս (Սահմանադրության —խմբ.) համար...»[156]։

1860 թ. ընդունված Ազգային սահմանադրությունը բաղկացած էր ընդարձակ առաջաբանից, 150 հոդվածներից։ Պետք է ընտրվեին 220 երեսփո-

---

153 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, էջ 4016։

154 «Մասիս», 1859, 24 դեկտեմբերի, № 413։

155 «Մասիս», 1860, № 433, 26 մայիսի։

156 «Մեղու», 1860, № 86, էջ 11։

խաններ, հրավիրվին 140 անդամակիցներ։ Կազմվում էին կրոնական ու քաղաքական ժողովներ, որոնց միացյալ ընտրությամբ ստեղծված Գերագույն ժողովը օրենսդիր իրավունքներ ուներ։ Ժողովների որոշումները գործադրության էր դնում Ազգային կենտրոնական վարչությունը[157]։

Սահմանափակվում էին ամիրաների իրավունքները։ Կ. Պոլսի հայոց պատրիարքին թվեարկող Ազգային ժողովի երեսփոխաններին իրավունք էր վերապահվում նախօրոք, նույնիսկ մամուլի միջոցով, հրապարակայնորեն իրենց կարծիքներն հայտնել պատրիարքի թեկնածության մասին։ Պատրիարքը զրկվում էր ինքնագլուխ ազգի ներքին գործերին վերաբերող օրենքներ հրապարակելու, առավել ևս գործադրության մեջ դնելու իր նախկին արտոնությունից։ Նա, փաստորեն, մնում էր ազգի և կառավարության միջև միջնորդ մի օղակ, որը, եթե Սահմանադրությանը հակառակ գործեր (հոդված 5), կհեռացվեր պաշտոնից։

Կրոնական ու քաղաքական ժողովների անդամներն ընտրվում էին գաղտնի քվեարկությամբ։ Կրոնական ժողովի ղեկավար ու մշտական գործող կազմը բաղկացած էր 12 հոգուց, իսկ քաղաքականինը՝ 20։ Քաղաքական ժողովն իր հերթին կազմում էր ազգային խորհուրդներ և հոգաբարձություններ։ Սրան կից ստեղծվում էին ուսումնական և դատական խորհուրդներ։ Դատական խորհրդի նախագահ էր նշանակվում Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդը (հոդված 44)։ Կրոնական ժողովը կազմել էր տալիս վանորեից խորհուրդ, ելևմտից, կտակաց, հիվանդանոցի հոգաբարձություններ։ Այս մարմինները ղեկավարում էին համապատասխան հիմնարկների գործերն ու տնտեսությունը[158]։ Վերոհիշյալ հիմնարկների ստորին օղակներն էին գավառական ու թաղական խորհուրդները, որոնք անմիջապես շփվում էին ժողովրդի հետ։

Ակնհայտ է, որ արևմտահայերի Ազգային սահմանադրություն անունն իր ներքին բովանդակությանն անհարիր էր։ Սահմանադրությունը սոսկ հայկական համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն էր և սուլթանական բռնապետության ճնշումներից հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության տեսակետից արժեք չէր ներկայացնում։ Ինչպես հետագայում գրում էր բելգիացի Ռոլեն Ժեքմենը, «Այստեղ ամեն ինչ կար, բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին և չվարեր նրա հողը, հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջեր միևնույն հարկը, մի խոսքով՝ ամեն ինչ կար, բացի մի այնպիսի կարգադրությունից, որն իրոք երաշխիք լիներ թուրքական կառավարության կամայականության դեմ»[159]։ Սահմանադրությունը չէր ներկայացնում արևմտահայ աշխատավորության հավաքական կամքը, չէր արդարացնում նրա հույսերն ու ակնկալությունները։ Մ. Նալբանդյանի բնութագրությամբ «... դա մի անուն է, որ անիմաստ է,

157 «Ազգային սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս, 1860, էջ 26, 28։

158 Նույն տեղում, էջ 27։

159 *М. Г. Ролен-Жекмен*, Армения, армяне и трактаты, М., 1896, стр. 197.

թե հայ ազգի և թե այս կանոնադրության իսկ վերաբերյալ»։ Զուր չէ, որ մեծ վեզիր Ալի փաշան արհամարհանքով «տեղից չշարժվող քառակուսի անիվ» էր անվանում այն։

Չնայած այս բոլորին, արևելյան բռնապետների դժնի տիրապետության պայմաններում կյանքի կոչված Ազգային սահմանադրությունը առաջադիմական երևույթ էր։ Այն պայքարի էր հանում ինչպես նոր ձևավորվող բուրժուազիային, այնպես էլ ժողովրդական զանգվածներին։ 1850—60-ական ԹԹ. Ազգային սահմանադրությունը այն առանցքն էր, որի շուրջը պտտվում էին հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու պարբերաթերթերը, որոնք սահմանադրության կապակցությամբ հայտնում էին իրենց կարծիքները ժամանակաշրջանի ամենքին հուզող հարցերի մասին։ Արևմտահայերի ազատագրական պայքարի գաղափարաբանության կաղապարման տեսակետից իսկ էական դեր խաղաց 1860—1863 ԹԹ. ծավալված սահմանադրական շարժումը։

Ազգային ժողովի ու պատրիարքի կողմից 1860 թ. մայիսի 24-ին ընդունված Ազգային սահմանադրությունը գործադրության մեջ կարող էր դրվել կառավարության վավերացումից հետո միայն, որը ուշացվում էր։ Բ. Դուռը պաշտպանում էր ռեակցիոն ամիրաներին ու բարձրաստիճան հոգևորականությանը։ Հովանավորը և հովանավորյալները մտադրվել էին թաղել Սահմանադրությունը։ Նրանք սպասում էին հարմար առիթի, որը և չուշացավ։

1860 թ. դեկտեմբերի 23-ին հանկարծամահ եղավ Երուսաղեմի հայոց պատրիարքը։ Կղերա-ամիրայականները, Կ. Պոլսի հայոց պատրիարքի գլխավորությամբ, մերժելով Սահմանադրության սկզբունքները, պահանջեցին Երուսաղեմի պատրիարքության թեկնածուներն առաջադրել տեղի միաբաններից՝ ներսից։ Սահմանադրության պաշտպանները, հասկանալով հակառակորդների հետամուտ դիտավորությունների իմաստը, հակադրվեցին դրան և Երուսաղեմի պատրիարքին դրսից ընտրելու առաջարկ արեցին։

Այս հողի վրա նոր կրքեր բորբոքվեցին։ Պոլսահայ մտավորականությունը համախմբվեց «ներսեն»—«դրսեն» խմբակցությունների մեջ և շարունակեց պայքարը այլ անունով, բայց փաստորեն Ազգային սահմանադրության մերժման կամ հաստատման համար։ «Սահմանադրականները» «դրսենականներն» էին, «հակասահմանադրականները»՝ «ներսենականները»։ «Վասնզի այսօր ամեն ողջամիտ հայ կտեսնի թե Երուսաղեմի պատրիարքը մեջեն ըլլա, դուրսեն ըլլա կռիվներուն ներքին նպատակը Սահմանադրության կործանումն է»[160] կամ «Ազգային խավարյալ և կոպտավոր մասը ս. Երուսաղեմի պատրիարքը ընտրելու խնդիրը պատրվակ բռնելով... Հակոբ Տիրունի եպիսկոպոս իրենց գլուխ ունենալով՝ Սահմանադրության կործանել փորձում են. հաջողացուցին, գնացին Դռան կասկածելի ցուցեցին, զրպարտեցին։ Սարգիս պատրիարքն ալ բոլորովին անոնց հորդորությամբ գնաց Դուռը իր ազգը բամբասեց, զրպարտեց»[161]։

---

160 «Մեղու», 1861, հուլիսի 26-ի «Հավելվածը»։

161 Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 459։

1861 թ. հուլիսի 12-ին խառը ժողովը հրավիրեց առաջին նիստը՝ որոշելու երուսաղեմի պատրիարքության խնդիրը։ Արհեստավորները հավաքվեցին պատրիարքարանի դռան մոտ և պահանջեցին պատրիարքի հրաժարականը։ Նիստն անարդյունք և կիսատ մնաց։ Երեսփոխանները ցրվեցին։ Հուլիսի 21-ին կայացավ հաջորդ նիստը[162]։ Ժողովուրդն իմացավ այդ մասին, խուժեց պատրիարքարան, սպառնալիքներ տեղաց երեսփոխանների գլխին և պահանջեց հավատարիմ մնալ Ազգային սահմանադրության սկզբունքներին։

1861 թ. օգոստոսի 21-ին պոլսահայ աշխատավորությունը ապստամբեց պատրիարքի ու հակասահմանադրականների դեմ։ «Ժողովուրդը ըստ մեծի մասին կրազկանար ընկերություններե ու ուսանողներեն»[163]։ Սարգիս պատրիարքը փորձեց դիմել հավաքվածներին, բայց նրան լռեցրին և պահանջեցին հրաժարական տալ կամ հնազանդվել Սահմանադրությանը։ Ապարդյուն անցան Բ. Դռան անունից ժողովրդին արած նրա բոլոր սպառնալիքները։ Հուզումը ավելի ու ավելի էր աճում։ Վրա է հասնում Սելիմ փաշան իր զափթիեներով։ Սակայն մթնոլորտը այնքան շիկացած էր, որ վախեցած զինվորները ետ քաշվեցին։ «Ան ատեն պատրիարքը որոշեց սահմանադրությունը կատարելապես ընդունելու ստորագրություն մը տալ»[164]։

Սահմանադրական շարժման ուժեղացումն անհանգստացրեց կառավարությանը։ Մեծ վեզիր Ալի փաշան, կառավարության կողմից վավերացված չլինելու պատճառաբանությամբ, հատուկ գրությունով պահանջեց դադարեցնել Սահմանադրության գործադրությունը։ Հետադիմականները փաստորեն հասան իրենց նպատակին՝ արգելվեց Սահմանադրությունը[165], ցրվեցին բոլոր հանձնաժողովները, որը և առիթ դարձավ, որպեսզի քաղաքական պայքարն ավելի սուր կերպարանք ստանար։

Նախկին լիբերալ-սահմանադրականները, ակնհատես լինելով ժողովրդական ցույցերին, 1861 թ. վախեցան, սկսեցին պահպանողականների հետ հաշտության եզր փնտրել, և մարտահրապարակը մնաց դեմոկրատական մտավորականությանը, նրա հետևից շարժվող ժողովրդական զանգվածներին։ Սահմանադրության արգելումից քիչ անց փակվեցին նաև «Մեղու», «Մյունատիս», «Ծաղիկ» դեմոկրատական պարբերաթերթերը։ Կ. Փանոսյանը, Հ. Սվաճյանը, Գր. Չիլինկիրյանը, Ա. Հայկունին և շատ ուրիշներ սկսեցին թռուցիկներ տպագրել և գաղտնի տարածել ժողովրդի մեջ։

Ժողովրդի և պոլսահայ դեմոկրատների ցուցաբերած հաստատակամությունը վախեցրեց և՛ կառավարությանը, և՛ պատրիարքին։ Սարգիս պատրիարքը հարկադրված հրաժարական տվեց։ Նշանակվեցին հանձնաժողովներ՝ Ազգային սահմանադրությունը վերաքննելու հանձնարարությամբ։ Դրանց մեջ ընդգրկվեցին Սերվիչենը, Ստ. Ասլանյանը, Մ. Մինասյանը, Հ. Սուրենյանը, Գր. Օտյանը, Մ. Աղաթոնը, Ն. Ռուսինյանը։ Սահմանադրության նոր նախագիծը 1862 թ. ապրիլին հանձնվում է կառավարության հաստատությանը, որը կրկին դիտավորյալ ուշացվում է։ Պետությունից ու պատ-

162 «Փորձ», 1876, № 3, Ա. Երիցյան, Տաճկահայոց իրավունքները, էջ 155։

163 «Փարիզ», 1861, № 55։

164 Նույն տեղում։

165 «Մասիս», 1861, № 506։

րիարքից դժգոհ աշխատավորությունը նորից բողոքի ցույցեր է կազմակերպում։

1862 թ. օգոստոսի 1-ին, Զեյթունի ապստամբության օրը, ամբոխը հարձակվում է պատրիարքարանի վրա, շենքից վռնդում պատրիարքի տեղապահին և խառը ժողովի անդամներին։ Երեկոյան Սելիմ փաշան շտապում է պատրիարքարան։ Շենքի սպառնալիքի տակ ցուցարարները ցրվում են։ Այս իրադրության մեջ պատրիարքի տեղապահ Մաղաքիան և խառը ժողովի նախագահ Բարունակ բեյը հրաժարվում են պաշտոնից։ Բարձրագույն Դուռը մերժում է նրանց հրաժարականը և խոստանում վավերացնել Ազգային սահմանադրությունը։ 1863 թ. մարտի 17-ին, բազմաթիվ վերափոխություններից հետո, կառավարության կողմից հաստատվեց այն և անմիջապես գործողության մեջ դրվեց։ Մ. Նալբանդյանի արտահայտությամբ «թլպատվեց» Սահմանադրությունը, նախկինում եղած 150 հոդվածների փոխարեն, ազգին հրամցվեց 99 հոդվածներից բաղկացած սահմանափակ մի կանոնադրություն։

Գերազանցապես լիբերալների գրչով վերաձևված 1863 թ. Սահմանադրությունը, նախորդի համեմատությամբ, հետընթաց քայլ էր։ Ազգային ընդհանուր ժողով կազմող երեսփոխանների թիվը 220-ից իջեցվում էր 140-ի, որոնց մեծ մասը ընտրվում էին ոչ թե աշխարհականների, այլ եկեղեցական ժողովների կողմից։ Արգելվում էր նախկին 140 անդամակիցների մուտքը Ազգային ժողով։ Դեմոկրատական մտավորականությունը զրկվում էր ամբիոնն օգտագործելու հնարավորությունից։ Գավառից եկող 60 երեսփոխանների թիվը իջեցվում էր 40-ի։ Ազգային համագումար ժողովների նրստաշրջանների ժամկետը մեկ տարուց երկարաձգվում էր երկուսի։ Ազգային սահմանադրության և սահմանադրական հանձնաժողովների գործունեությունը, բազմաթիվ վերապահումներով, խղճուկ վիճակի և կախման մեջ էր դրվում սուլթանի քմահաճույքից։

Այսպիսով, 1863 թ. մարտին ընտրված սահմանադրական վարչությունը սկզբից ևեթ հանդես եկավ որպես գավառահայ աշխատավորության շահերին հակադրվող մի ուժ։ Կղերա-ամիրայականների հետ դաշինք որոնելու մտադրությամբ, լիբերալները սկսեցին ժողովրդի ձեռքից ետ խլել այն փոքրիկ զիջումները, որոնք սկզբից տրված լինելով, այժմ չափազանց մեծ էին թվում և վախեցնում նրանց։

Ազգային սահմանադրության համար մղվող պայքարն իր բուռն արտահայտությունը գտավ հայ պարբերական մամուլի էջերում։ Հասարակական տարբեր, հակադիր ու իրարամերժ հոսանքների պատկանող արևմտահայ մտավորականները յուրովի գնահատեցին կանոնադրությունը և ջանք չխնայեցին Սահմանադրությունն ու նրա համար ծավալված շարժումը ծառայեցնել իրենց դասակարգային նպատակադրումներին։

Պոլսահայ ամիրաների և նրանց հետ բազմաթիվ գործարքներով աղերսվող բարձրաստիճան հոգևորականության շահերի արտահայտիչ կղերա-ամիրայականներն սկզբից ևեթ դեմ էին Սահմանադրությանը։ Նոր կանոնադրության մեջ նրանք տեսնում էին ոչ միայն իրենց ու պատրիարքի իրավունքների սահմանափակումը, այլ ավելի սարսափելի թվացող բարեփոխու-

թյունները եկեղեցական կանոնների մեջ։ Կղերա-ամիրայականների ձայնափող դարձած «Երևակը», «Արևելյան դարը», «Ժամանակը» և սրանց խմբագիրներ՝ Հովհաննես Տերոյենց-Ջամուռճյանը, Տեյիրմենճյանը, Ս. Փափազյանը ամեն կերպ անվանարկում էին սահմանադրականներին, փակել տալիս դեմոկրատական թերթերը, հալածանքի ենթարկում Հ. Սվաճյանին, Կ. Փանոսյանին, Գր. Չիլինկիրյանին։ «Երևակը» սուլթանական կառավարությանը հուշում էր, թե Սահմանադրությունը «... կնշանակե միևնույն կառավարության մեջ երկու կերպ կառավարություն ընդունիլ»[166] կամ «Հայաչնամ» թուրքական պետության մեջ նոր պետություն ստեղծել։ Ստրկամիտ ռեակցիոներները ժխտում էին հայկական ինքնավարության, ազգի քաղաքական իշխանության գաղափարները։

Լիբերալ բուրժուական հոսանքը, նրա սահմանադրական ներկայացուցիչներ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Մ. Աղաթոնը, Գ. Պալյանը, այսինքն նախկին լուսավորականները, 1850—1860-ական թթ. ապրեցին գործունեության երկու շրջան։ Մինչև 1861 թ. պոլսահայ լիբերալներն ավելի առաջադիմական դիրքեր էին պաշտպանում։ Նրանց էր պատկանում Ազգային սահմանադրության մտահղացումը, նրա մի քանի տարբերակների խմբագրումը։

1860 թ. «Մեղու» պարբերականում տպագրված Գր. Օտյանի ու Ն. Ռուսինյանի հոդվածաշարում հանգամանորեն շարադրվում էին նրանց հայացքները Ազգային սահմանադրության վերաբերյալ։ Դեռևս համաքայլ ընթացող ապագա դեմոկրատները և լիբերալ-սահմանադրականները գրչով ու խոսքով ապացուցում էին Սահմանադրության անհրաժեշտությունը։

1850-ական թթ. լուսավորյալ սահմանադրականները նույնիսկ մտադրություն ունեին Թուրքիայի տիրապետության տակ հայկական բուրժուական ազգային իճնավարություն ստեղծել, ապա և ծնունդ տալ պառլամենտական ճառապետության։ Սակայն նրանք այդ պատրանքը ուզում էին իրողության վերածել ազգի «լուսավոր ու ճարտասան» ներկայացուցիչների միջոցով, սկզբից ևեթ խուսափելով ժողովրդական զանգվածների լայնահուն հեղափոխական շարժումներից։ Լիբերալները դեռևս 1860 թ., իրենց պարագլուխ Գր. Օտյանի բերանով, ընտրությունների ժամանակ սահմանում էին կրթական ցենզ և անգրագետ գավառահայությանը զրկում ընտրելու և ընտրվելու իրավունքներից։

1861—63 թթ. սահմանադրական շարժումները, Զեյթունի հերոսամարտերը, Վասպուրականի ու Մուշի զինված ելույթները սարսափ ներշնչեցին լիբերալ-սահմանադրականներին։ Նրանք փորձով տեսան, որ ժողովուրդն այլևս իրենց ետևից չի գնում, ընդհակառակը, հակադրվում է չափավոր պահանջներին, ուստի գերադասեցին սահմանազատվել դեմոկրատներից, ընդհանուր ճակատ կազմել կղերա-ամիրայականների հետ և համաձայնվել Սահմանադրության աղճատմանը։ Լիբերալները 1861 թ. մշակեցին զրաքննչական կանոնների անդրանիկ նախագիծը, փորձեցին արգելել պետության ու եկեղեցու մասին քննադատական հոդվածների տպագրումը։

Արևմտահայ լիբերալների օրգան «Մասիս» պարբերաթերթը, սկզբնական

166 «Երևակ», 1861, № 109։

շրջանում հետևողականորեն պաշտպանելով Սահմանադրությունը, երբեմն պայքար մղելով ամիրաների ու պատրիարքի դեմ, 1861—62 թթ. սահմանադրական շարժումից վախեցավ և խմբագրի բերանով օգոստոսյան ցույցերն անվանեց «անկարգ ու անպատեհ» դեպքեր[167]։ Կ. Յուբուճյանը, լսելով «Մեղու» և «Մաղիկ» դեմոկրատական թերթերի փակման լուրը, չվարանեց հրապարակայնորեն կշտամբել նրանց խմբագիրներին։

Գավառահայության շահերի պաշտպան Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Իսկենդերյանը, «Արծվի Վասպուրական» և «Արծվիկ Տարոնո» պարբերաթերթերն ավելի հետևողականորեն պաշտպանեցին Ազգային սահմանադրությունը և չխզեցին իրենց կապերը դեմոկրատական մտավորականության հետ։ Կառավարական շրջաններում «տաքգլուխ» հայի համբավ վայելող Մկրտիչ Խրիմյանը գրում էր. «Սահմանադրություն մերժող դասը ավելի հասկըցողներն են, քան թե պարզամիտ հասարակությունը»[168]։ Իր կուսակիցների հետ միասին Խրիմյանը գովասանքի խոսքեր չէր խնայում Ազգային սահմանադրության հասցեին, սակայն ծաղրում էր պոլսահայ փափկասունների լիբերալ բարեհոգությունը, պահանջելով սահմանադրական հիմնարկների ստեղծում Արևմտյան Հայաստանում։

1869 թ. Մ. Խրիմյանը պատրիարք կարգվեց։ Նրա նախաձեռնությամբ ստեղծվեցին գավառահայերի հարստահարություններն ուսումնասիրող հանձնաժողովներ և հայրենասեր երեսփոխանների միջոցով Հայաստանի վիշտը մայրաքաղաք տեղափոխվեց, ճնշված հայ գյուղացու աղեկտուր ճիչը պատրիարքարանի պաշտոնյաների ու սուլթանի թանձրաթաղանթ ականջին հասցվեց։

Սահմանադրական երկարատև շարժման պրոցեսում դեմոկրատական մտավորականությունը ևս հայացքների երկու շրջանապրեց։ Պայքարի առաջին էտապում արևմտահայ դեմոկրատիայի տրիբունը՝ Մ. Նալբանդյանի ասպագա զինակից Հ. Սվաճյանը սահմանադրական պատրանքի մեջ էր, կարծում էր, թե դրանով կարող է փրկության սպեղանի հասցնել խոշտանգվող գավառին՝ Արևմտյան Հայաստանի աշխատավորությանը։ Տակավին լիբերալներից չսահմանազատված մեղվական երիտասարդությունը հայտարարում էր. «Աշխարհ թող զարմանա, երբ օր մը քո տարեգրության այս բերկրարիթ գլուխը կարդալով տեսնե, թե ի՞նչ մեծ գործ մը, ի՞նչ մեծ դյուրությամբ ի գլուխ ելած է, ու զմայլի հայ ազգին խաղաղասեր բնավորության վրա։ Եվ դուք...աղքատ և հարստահարյալք՝ ցնծացեք և ուրախ եղիք...։ Ծափ զարկեք ու օրհնեցեք ազգին բարերարները»[169]։ Ազգային սահմանադրության հետ ըսկզբնական շրջանում մեծ հույսեր էին կապել Հ. Սվաճյանի գաղափարամերձ Կ. Փանոսյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը։

1861—1863 թթ., սահմանադրական պայքարի նոր շրջափուլում, լիբերալների եսընթաց շրջադարձը զգաստացրեց ձևավորվող դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչներին։ Սուլթանական լծի դեմ սկսված ապստամբական շարժումները, Միքայել Նալբանդյանի զորեղ ազդեցությունը նրանց հանեց սահմանադրական պատրանքների մշուշից։

---

167 «Մասիս», 1862, № 549։

168 «Արծվի Վասպուրական», 1861, № 8, էջ 228—229։

169 «Մեղու», 1860, № 108, օգոստոսի 30, էջ 189։

Դեմոկրատական հոսանքը զգաց, որ լիբերալները, «թլպատելով» Ազգային սահմանադրությունը, լեզու գտնելով պահպանողականների հետ, դրվատելով կանոնադրության նոր նախագիծը, փաստորեն խաբում են ժողովրդին, ձգտում բավարարվածի տեսք ընդունել և վերջիններիս հեռու պահել ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլև ազգային-քաղաքական պայքարից։

Դեմոկրատական հոսանքը զատվեց նախկին կուսակիցներից, շարունակեց ղեկավարել պոլսահայ սահմանադրական շարժումը, քննադատության նշանախեց դարձրեց «թլպատված» սահմանադրությունը։ Այս հարցում ամենից վաղ շրջադարձ կատարեց Հ. Սվաճյանը, որին հետևեցին Կ. Փանոսյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը և ուրիշներ։

Հ. Սվաճյանը, գաղտնի, թե՛ հրապարակով, «Մեղվի» հոդվածներով, թե՛ «Մատնություն» գրքույկով, ժողովրդի մեջ տարածած բազմաթիվ թռուցիկներով, Ազգային ժողովի ամբիոնից քննադատության կրակ էր տեղում ժողովրդադավ կղերա-ամիրայականների, չափավոր լիբերալների, անգործունյա երեսփոխանների գլխին։ Արդեն հեղափոխական դեմոկրատիզմին հարող Սվաճյանը խոր հիասթափություն էր ապրել այս հարցում, գրելով՝ ժողովուրդը «... երեսփոխան ընտրեց, անոնց տվավ ազգը կառավարելու իշխանությունը և մինչև հիմա ամենայն կերպով հնազանդեցավ անոր։ Սակայն ասոնք, ցավելով կսենք մեծագույն մասով խաբեցին անոր վստահությունը և ի դերև հանեցին անոր գեղեցիկ հույսերը»[170]։

Սահմանադրական անգործունյա հիմնարկները քննադատեց Կ. Փանոսյանը։ Ընտրվելով Ազգային ժողովի երեսփոխան, նա սակայն, շուտով հիասթափվեց և հրաժարվեց մասնակցել նրա նիստերին։ 1863 թ. Մ. Մամուրյանը գրում էր. այժմ «...երբ սահմանադրական հայ կտեսնեմ, կհիշեմ այն մուրացկանը, որ հացը մեղրի գոց ամանի վրա կքսեր և կկարծեր թե մեղր է կերածը... անոր հոտով կկշտանար»[171]։ Մ. Մամուրյանը խիստ դժգոհ էր կրոնական ու քաղաքական ժողովների անդամներից։ Այդ մասին նա ավելացնում է. «մի՞թե Պոլսի հայը Սահմանադրությունը պիտի մեջ բերե, զոր հանուն ազգին շինեց, տպեց և ծոցը դրավ»[172]։ Թեկուզ ուշացումով, բայց և այնպես Գր. Չիլինկիրյանը հասկացավ, որ «Սահմանադրության ազդեցությունը խիստ փանաքի եղավ... ամիրաներու քմածին կամքին հաջորդեց ամիրայական բեկորներու խռսոքը և անզգա ժողովականներու թոթվումը»[173]։ Պոլսի հայերը հուզվում են, վիճում, գոչում «կենցե՛ Սահմանադրությունը», հույս ունենալով դրանով «զորավոր» ազգերի շարքին դասվել»...[174]։

Մ. Նալբանդյանի արևմտահայ զինակիցներ ու հետևորդներ Հ. Սվաճյանը, Կ. Փանոսյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը եկան այն համոզման, որ սոցիալ-քաղաքական կազմակերպված պայքարը զինված ապրստամբությունն է։ Բայց և այնպես, նրանք չժխտեցին 1850-ական, առավելա-

170 «Մեղու», 1865, № 255, էջ 1։
171 Վրույր [Մ. Մամուրյան], Հայկական նամականի, Զմյուռնիա, 1872, էջ 124։
172 Նույն տեղում, էջ 34։
173 Գր. Չիլինկիրյան, Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, 1883, էջ 58։
174 Նույն տեղում, էջ 56։

պես 60-ական ԹԹ. իրենց մղած սահմանադրական պայքարի, այսինքն՝ հանուն ժողովրդական սահմանադրության սկսած շարժման դերը, որն արևմտահայ աշխատավորությանը քաղաքական պայքարի աստիճանի հասունացնելու գործում շոշափելի արդյունք տվեց։ Ազգային սահմանադրությունը սուլթանների տիրապետության տակ դարերից ի վեր հալածվող հայ ժողովրդին ինքնագիտակցության բերեց, պայքարի և հաղթանակի հնարավորության վստահություն ներշնչեց։

Ազգային սահմանադրությունը իր բոլոր թերություններով հանդերձ մի կարևոր էջ էր արևմտահայ հասարակական մտքի ու քաղաքական պայքարի պատմության մեջ։ Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Սահմանադրության համար մղվող պայքարը։

Ազգային սահմանադրությունը առանց փոփոխության գործադրվեց մինչև 1870 թվականը։ Մ. Խրիմյանը իր պատրիարքության վերջին շրջանում պահանջում էր վերանայել Սահմանադրության հոդվածները, փոխել երեսփոխանների թիվը, ընտրության կարգը, միացնել գործադիր ժողովները, կրոնական և քաղաքական խնդիրները զատել իրարից, գավառահայ ներկայացուցիչների քանակն ավելացնել։ Ազգային ժողովը կղերա-պահպանողականների ճնշման տակ մերժեց այդ առաջարկը։ Սահմանադրությունը հարատևեց մինչև 1896 թվականը։ Համիդյան ջարդերի օրերից այն դադարեց գործելուց, ապա վերականգնվեց 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո։ Ազգային սահմանադրությունը վերջնականապես արգելվեց 1915 թվականին։ Ցրվեցին Ազգային ժողովները, երեսփոխանների մեծ մասը աքսորվեց կամ ոչնչացվեց Տեր-Զոր տանող ճանապարհին։

Արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը, որոշ խմբագրումներով, մինչև օրս էլ գործադրվում է Սիլուռքի մի շարք հայաշատ համայքներում։

ԲԱԺԻՆ Դ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՋԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ 1830—50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արևմտյան Հայաստանում և հատկապես Հայկական Կիլիկիայի լեռնագավառներում 1830—50-ական թթ. բռնկվեցին սուլթանական կառավարության դեմ ուղղված մի շարք ապստամբություններ. տեղի ունեցան զինված ելույթներ, ինքնապաշտպանական կռիվներ։ Մարտերի կենտրոնը մնում էր Լեռնային Կիլիկիայի Ջեյթուն գավառը։


Մարաշի փաշայության մեջ մտնող ըմբոստ, քաջակորով ու ազատատենչ լեռնականներով բնակեցված Ջեյթունը շարունակում էր պահպանել իր կիսանկախ դրությունը։ Ամուր պաշտպանական վայրեր, հարմարավետ աշխարհագրական դիրք ունեցող Ուլնիայի բնակիչների թիվը հասնում էր 35—40 հազարի։ Այստեղ մշակում էին Պիրիդի երկաթի, կապարարծաթի հանքերը, արտադրում երկաթ, վառոդ, պատրաստում զենք ու զինամթերք, այն օգտագործելով արշավող զորաբանակներին դիմագրավելու, լեռնահամայնքի իրավունքները պաշտպանելու նպատակներին։

XIX դարի երկրորդ քառորդին սուլթանական կառավարությունը ուժեղացնում է Ջեյթունի կիսանկախության վերացման իր վաղեմի քաղաքականությունը։ Եգիպտական արշավանքով, Հունաստանում, Սիրիայում ծավալված ազատագրական պայքարի ճնշումով զբաղված Մահմուդ II-ը սկզբում օգտագործում էր կուսակալ փաշաներին, նրանց կռվեցնում Ջեյթունի հետ, փոխադարձաբար թուլացնում երկուսի ուժերը, հիմնական հարվածը վերապահելով ապագային։ 1829 թ. Կեսարիայի նահանգապետ Քեոսե փաշան հանձնարարություն է ստանում նվաճել Ջեյթունը։ Թուրքական բանակը Կոկիսոնի մոտ հանդիպում է փոքրաքանակ զեյթունցիների համառ դիմադրությանը։ Յաղուպյան Աստվածատուրի գնդակով սպանվում է դրոշակակիր Քելլաղը, փաշայի զորքը խուճապահար նահանջում է, իսկ Ջեյթունը շարունակում է մնալ կիսանկախ։

1832 թ. Մարաշի Սուլեյման փաշան շարժվեց դեպի Ջեյթուն և բանակ

դրեց Զեյթունի դաշտում[1]։ Թուրք փաշան նպատակ ուներ գրավել բերդաքաղաքը և հիմնովին կործանել այն։

Օտար բանակի թվաշատությունից երբեք չերկնչող զեյթունցիները անմիջապես մոռանում են բոլոր հակասությունները, միավորվում և գիշերը հանկարծակի հարձակման անցնելով, չորս կողմից շրջապատում են Սուլեյման փաշայի զորամիավորումները, մի մասը ջարդում, մյուսի մեջ խուճապ առաջ բերում և ստիպում փախուստի դիմել։ Սուլեյման փաշան մարտադաշտում 309 դիակ թողնելով «շունչը Մարաշ կառնե և քովը եկողներուն կըսե թե... այդ կյավուրներուն հետ բշնամությունը անօգուտ է, պետք է բարեկամությամբ վարվիլ»[2]։



Զեյթուն բաղամի ընդհանուր տեսքը

Զեյթունի հերթական հաղթանակին օգնեցին նաև արտաքին հանգամանքները։ Այդ ժամանակ Եգիպտոսի Իբրահիմ փաշան գրավել էր թուրքական բազմաթիվ նահանգներ, տիրել Կիլիկիայի դաշտային վայրերին և շարժվում էր դեպի մայրաքաղաք։ Նման իրադրության մեջ սուլթանական կառավարությունը ոչ միայն չէր կարող մտածել Զեյթունը սրով նվաճելու մասին, այլև խորամանկ, ուժեղ հակառակորդի առաջխաղացման վտանգի դեմ հանդիման՝ ստիպված էր «փոքրերին» նկատմամբ մեղմանալ։ Այդ շրջանում սուլթանին ատելի քրդական իշխանապետերը անկախության ֆերմաններ էին ստանում, պետությունը հաստատում էր նրանց իրավունքները, միայն

1 Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 136։

2 Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 130։

թե բանակ տրամադրեին կառավարությանը, ճանաչեին նրա գերիշխանությունը։

Օգտագործելով սուլթան Մահմուդի այդ քաղաքականությունը՝ զեյթունցիները որոշում են մարտերում փառաբանված հերոս Դելի-քեշիշ մականուն ունեցող Տեր Օհան քահանայի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել մայրաքաղաք[3], որը խնդիր պիտի ունենար վերահաստատել տալու Մուրադ IV-ի շնորհած հրովարտակը և, հարկաչափը կայունացնելով, ազատվել Մարաշի փաշաների այօրինություններից։ 1833 թ. Տեր Օհանը հասնում է Կ. Պոլիս, ներկայանում Մահմուդ II-ին և վերահաստատել տալիս Զեյթունի՝ ֆերմանը վակֆի իրավունքը։ Հարկաչափը մնում էր նախկին տասնհինգ հազար դահեկանը։ Տեր Օհանի հաջողությունն արդյունք էր և այն բանի, որ Մահմուդ II-ը այդ օրերին շահագրգռված էր զեյթունցիներին սիրաշահելու և իր կողմը դրավելու։ Այստեղ, փաստորեն, Զեյթունի խնդրանքը համընկնում էր սուլթանի ցանկությանը, ուստի և վերահաստատվում էին գավառի նախկին իրավունքները։

1833 թ. Եգիպտոսի Իբրահիմ փաշան, ձևականորեն ընդունելով Թուրքիայի գերիշխանությունը, իրեն ենթարկեց Սիրիան, Պաղեստինը և Կիլիկիան, որոնք շարունակեցին մնալ եգիպտական գերագահության տակ մինչև 1840 թ. Լոնդոնի պայմանագիրը[4]։ Մինչ այդ Իբրահիմ փաշայի բազմաթիվ փորձերը Զեյթունի հպատակեցման համար դրական արդյունքի չհասան։

Եգիպտացիների արշավանքները Զեյթունի վրա շարունակվեցին նաև հաջորդ տարիներին։ «Մասյաց աղավնի» պարբերականի վկայությամբ «զեյթունցիք խոզան օղլուի ցեղին հետ դաշնակցելով քաջությամբ դեմ կեցան եգիպտացվոց բանակին, չորս տարի հուսահատաբար կռվեցան Իբրահիմ փաշայի հետ, և վերջապես ստիպեցին, որ ետ կենա յուր անպտուղ աշխատանքեն, ու մեկդի քաշվի»[5]։ 1840 թ. եգիպտացիները թողեցին Կիլիկիան, և Զեյթունը ազատվեց Իբրահիմ փաշայի հարձակումների վտանգից։

1841 թ. 500 հեծյալներով Խասեք անունով մի թուրք զինվորական մըտավ Զեյթուն իբրև հյուր, ապա երեք օր պայմանաժամանակ դնելով, պահանջեց հարկագումարը։ Նրա զինվորներին իշխանները կալանավորեցին և հասկացրին, որ թուրք հարկահավաքը հանկարծ փողոց դուրս չգա, «վասնզի, ըսին, մեր երիտասարդները, այստեղ թուրք տեսած չըլլալուն համար՝ ծանր պիտի թվի իրենց քո ներկայությունդ և առաջին անգամ հանդիպողը պիտի սպաննե քեզ»[6]։ Զորապետը ստիպված էր խնդրելու, որ իրեն զորքի հետ միասին բաց թողնեն։ Իշխանները պատասխանեցին, թե իրենք թուրք զինվորներին արդեն վռնդել են գավառից և պահանջեցին ուղեկիցներից յուրաքանչյուրին 10-ական ոսկի վճարել, այլապես կկողոպտեն բոլորին և մերկամարմին

3 Տե՛ս Հարություն Ս. Նաշալյան, Զեյթունի քաղամարտիկ Տեր-Օհանի քաջագործությանց դրվագներեն, Պեյրութ, 1958, էջ 49—50։

4 Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 142—143։

5 «Մասյաց աղավնի», 1864, հուլիս, էջ 187։

6 «Զեյթունի պատմագիրք», հրատարակություն Զեյթունի հայրենակցական միության, Պուենոս-Այրես, 1960, էջ 189—190։

կարտաքսեն գավառից։ Կողոպտելու եկած խասեքը հարկադրված ընդունեց բոլոր պահանջները և ամոթահար վերադարձավ Մարաշ։

1842 թ. Յուսուֆ փաշայի զորաբանակը շրջապատեց հարևան թեճերլանցի թուրքմեն ցեղերին։ Նրանց դրությունը անհուսալի էր, փրկության ելք չկար. թուրքերը որոշել էին բոլորին սրի քաշել։ Այդպես էլ կլիներ, եթե օգնության չհասնեին զեյթունցիները։ Լեռնագավառի հայերի ու թեճերլանցիների մեջ վեճերը, զինաբախումներն անընդմեջ էին, սակայն այժմ տեսնելով հարևանների վիճակը, զեյթունցիները օգնության հասան նրանց։ Զեյթունի երեք իշխանները և 500 քաջերի գլուխն անցած Տեր-Օհան Դելի քեշիշը Ղանտըրի տակ ճակատամարտ տվեցին։ Թուրքական բանակը նահանջեց Կոկիսոն։ Հայերը հաղթանակ տարան և թեճերլանցիները շնորհակալությամբ, ստատ նվերներ տալով զեյթունցիներին, խոստացան մշտնջենապես բարեկամ մնալ նրանց։

1847 թ. Զեյթունի վրա է արշավում Թոփալ Սատո անունով զորապետը և բանակը մոտեցնում բերդաքաղաքին։

Կես գիշերին, եկեղեցու զանգերով տրված ազդանշանով, սկսվում է զեյթունցիների հարձակումը։ Ջարդն ահավոր էր[7]։ Ամենուր թշնամին գթություն էր աղերսում։ Սպանվում է Թոփալ Սատո զորապետը, իսկ զեյթունցիք, սակավաթիվ զոհեր տալով, հաղթանակ են տանում։

Կոտորածի լուրը հասնում է մայրաքաղաք։ Սուլթանն ու իր պալատականները մեկ անգամ ևս համոզվելով, որ Զեյթունն անընկճելի է, որոշ ժամանակ դադարեցնում են արշավանքները, իսկ 1850 թ. որոշում են սիրաշահել իշխաններին և այդ միջոցով լեռնաշխարհը ենթարկել իրենց։ 1851 թ. Զեյթունի չորս իշխանները՝ իշխանապետ Մահտեսի Հովհաննես Շովրոյանը, Մարտիրոս Սուրենյանը, Աստվածատուր Յաղուբյանը, Աստվածատուր Ենիտունյանը հրավիրվեցին Կ. Պոլիս՝ բանակցությունների[8]։

Փոխադարձ զիջումներով պայմանագիր կնքվեց թուրքական կառավարության և Զեյթունի միջև։

Պայմանագրության համաձայն, զեյթունցիները պարտավորվում էին ամեն տարի կանոնավորապես Աբդուլ Մեջիդին վճարել 60 քիսե հարկ, սակայն միաժամանակ պաշտպանել իրենց կիսանկախ վիճակը։ Սուլթանը հաջորդ տարում փոխեց իր քաղաքականությունը Զեյթունի հանդեպ։ Ավելացվեցին հարկերը։ 1852 թ. զեյթունցիները աղերսագրեր են առաքում Կ. Պոլսի պատրիարքին, հայոց կաթողիկոսին, որտեղ հիշատակվում է. «բայց արքա թագավորի վերկին վաթսուն քիսե ըստակ է կտրվածը և կանոնադրերեն և հաստատությամբ և անշարժությամբ և անհնար և առանց խաղխտության և ի նոցանե արքայեն եկեալ սպասավորքն Ուլնեյու այսինքն Զեյթունեն նյություսին համարն չափ խնդրելով կամին զոռով չափեն դուրս ավելի վերկի առնեն, իսկ սակս ամենայն ժողովուրդ խեղճ և անկարող են ավելի տալոյ ոչ կարեն. խեղճությունը մեր դուք հոգացեք...»[9]։

---

7 Տե՛ս Գր. Դալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 132։

8 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 158, վավ. 39, 1851, մայիսի 20։

9 Նույն տեղում, թղթ. 163, վավ. 31։

Ակնհայտ է, որ թուրքական կառավարությունը այս անգամ խորամանկությամբ էր գործել։

Ղրիմի պատերազմում «դաշնակիցների» տարած հաղթանակից հետո սուլթանական կառավարությունը, ամրապնդված համարելով իր դիրքերը, ձգտում էր ամեն գնով ոչնչացնել տակավին հարատևող փոքրաթիվ կիսանկախ համայնքների իրավունքները, դիմադրության դեպքում՝ նաև ողջ ազգաբնակչությանը։ Սուլթաններին ամենից շատ մտահոգում էր Զեյթունի հնպատակեցումը։ Այդ ուղղությամբ արված քայլերը ավելի վճռական էին դառնում. մտահղացվում էին նորանոր ծրագրեր։

1850-ական թթ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը հաճույքամբ ընդունում էր Հյուսիսային Կովկասից գաղթած չերքեզներին, նրանց բնակեցնում Մարաշի կուսակալության լեռնագավառներում, տալիս հողային կալվածքներ ու արտոնություններ, սիրաշահում վերջիններիս՝ օգտագործում զեյթունցիների դեմ։ Կառավարության հրահանգով չերքեզները 1858 թ. ներխուժեցին Զեյթունի սահմանները՝ ավերածություն ու մահ սփռելով հայկական գյուղերում։ Բերդաքաղաքից դուրս եկած հայ քաջամարտիկները չերքեզներին դիմագրավեցին Քոշ-դաղ լեռան ստորոտում։ Ջդիմանալով զեյթունցիների գրոհին, չերքեզները խուճապահար փախուստի դիմեցին։

Բ. Դուռը դիմեց նոր քայլի։ Սուլթանը Մարաշի կուսակալին հանձնարարում է խստացնել ճնշումները Կիլիկիայի հայ բնակչության նկատմամբ, կանոնավոր ու անկանոն զորաջոկատների, հատկապես չերքեզների միջոցով ասպատակել Ալբիստանի, Հաճընի և Մարաշի հայ գյուղերը, Զեյթունն օղակի մեջ առնելով կտրել դրսաշխարհից և նոր արշավանքի միջոցով վերջնականապես բնաջնջել պետությանն այդքան հոգսեր պատճառող արծվաբույնը։ Դրվում էր Զեյթունը հիմնահատակ ավերելու խնդիրը[10]։

1860 թ. օսմանյան մի բանակ, խուրշիդ փաշայի գլխավորությամբ, հարմար առիթի էր սպասում Զեյթունի վրա արշավելու։ Փաշան 10 հազարանոց կանոնավոր զորքով, չերքեզների ու խաժամուժի ուղեկցությամբ, ներխուժեց լեռնագավառ և բանակ դրեց Զեյթունից 20 կմ հեռավորության վրա գտնվող Ջահան գետի հովտում։

Հունիսի 8-ին թուրքական բանագնացները հայ իշխաններին հաղորդեցին, թե փաշան պահանջում է անցած 12 տարիների հարկը և անվերապահ հպատակություն, այլապես կսկսի գրոհը[11]։ Ստանալով հայ իշխանների բացասական պատասխանը, զայրացած փաշան զորքը շարժում է դեպի Ջերմուկի դաշտ և փաստորեն սկսում կռիվը։ «Այս միջոցին զեյթունցիք Պոլիս դանվող իրենց եկեղեցականներեն քաջալերիչ նամակ ստանալով, կհարձակին բանակին վրա, որ խուճապահար կփախչի և շատերը կամուրջեն անցնիլ չկարենալով գետը կնետվին կեավուռներուն գերի չիյնալու համար»[12]։ Խուր-

---

10 Տե՛ս Վ. Մելիքսեթյան, Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, Առանձնատիպ Հայաստանի պատմության պետական թանգարանի, «Աշխատություններ», հատ. Բ, Երևան, 1950։

11 Տե՛ս Զեյթուեցի [Մ. Սեմերճյան], Զեյթունի անցյալեն և ներկայեն, մասն Ա, Վիեննա, 1900, էջ 102—104։

12 Դր. Դալուզյան, նշվ. աշխ., էջ 135։

շիդ փաշան, այժմ գլխիկոր, իշխաններից թույլտվություն է խնդրում Ախրիդաղի ճանապարհով Մարաշ վերադառնալու։ Պարտված թշնամին խուճապահար հեռանում է լեռնագավառից։ Սրանով ավարտվում է Զեյթունի կիսանկախության պաշտպանության համար մղվող պայքարի առաջին էտապը։

2. ԶԵՅԹՈՒՆԻ 1862 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթանական բռնապետության դեմ սկսված ապստամբական կռիվները ազգային-ազատագրական պայքարի բնույթ են ստանում։ Դեռևս դարասկզբին ապստամբության դրոշ են պարզում հույները, բուլղարները, սերբերը, ռումինացիները, սիրիացիները։ 1804 թ. ծայր առան սերբերի ազգային շարժումները, 1821 թ. ոտքի կանգնեցին հույն ժողովրդի հերոս զավակները։ 1862 թ. ապստամբեց Չերնոգորիան, 1866—1868 թթ.՝ Կրետեն, 1875 թ.՝ Բոսնիան և Հերցոգովինան, 1876 թ.՝ Բուլղարիան։ Թուրքական կառավարությունը դիմում էր կտրուկ միջոցների, որպեսզի կանխի նման շարժումները արևմտահայության մեջ։ Որքան ուժեղանում էին Թուրքիայի հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, այնքան ավելի էին խստացվում ազգային ու սոցիալական ճնշումները, հետապնդումներն ու հալածանքներն Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, առավել ևս ըմբոստ, կիսանկախ համայնքների՝ Սասունի ու Զեյթունի նկատմամբ։

Խուրշիդ փաշայի պարտությունից հետո Թուրքիան մշակեց նոր ծրագրեր, Կիլիկիայում կենտրոնացրեց ստվարաթիվ բանակ և ամեն կերպ ջանաց հպատակեցնել, նույնիսկ բնաջնջել Զեյթունը, որպեսզի ազատվի հետագա բարդություններից։ «Ալի փաշա զրուցած էր 1861-ն առաջ տոքթոր Պառթ՝ հռչակավոր գերմանացի ճանապարհորդին՝ թե՝ «Կիլիկիո լեռներուն մեջ կան քանի մը ապստամբ ժողովուրդք, հուսամ թե քիչ ատենեն զանոնք անհետ կընենք»[13]։

1862 թ. Մարաշի կուսակալ նշանակվեց Ազիզ փաշան։ Նրան տրվեց կանոնավոր բանակ, հրետանի, լայն լիազորություններ՝ լեռնային Կիլիկիայի ապստամբող ցեղերին, հատկապես չերքեզներին զինաթափելու, արշավանքի նախապատրաստություն տեսնելու և ապա Զեյթունի վրա արշավելու համար։ Շեյխերի, դերվիշների ու մոլլաների թափորը շարժվում էր Կիլիկիայի քաղաքներով ու գյուղերով, բորբոքում հետամնաց մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունը։

Լուրեր էին տարածվել, թե Զեյթունի բնակչությանը սրակոտոր անելուց հետո, նրա ունեցվածքը բաժանվելու է արշավանքի մասնակիցներին։ Այդ պատճառով ամեն օր Ազիզ փաշայի բանակատեղ էին գալիս թուրքերի, չերքեզների, քրդերի զինված ջոկատներ։ Գնալով հսկայական չափեր էր ընդունում Մարաշի կուսակալի բանակը։ Ամեն ինչ պատրաստ էր, հարկավոր էր արշավանքի առիթ փնտրել, որը և չուշացավ։

Հուլիսի վերջերին Ազիզ փաշան 12 հազարանոց բանակով Մարաշից

13 «Փորձ», 1879, № 11, էջ 21—22։

դուրս եկավ և շարժվեց դեպի Ջահան գետը։ Նրան միացան շրջակա թուրք, թուրքմեն, քուրդ ավարածարավ, ասպատակություններով պարապող թափառաշրջիկ ցեղերը, որոնց խոստացել էր ավար և հարստություն։ Զեյթունի վրա էին աքշավում Պայազետ օղլի Ահմեդ փաշան՝ 5000 բաշիբոզուկներով, Մարաշի նախկին կառավարիչ Իբրահիմ փաշան՝ 1000 զինվորով, Քարատիշի Սման փաշան՝ 800 զինվորով, Մարաշի շրջակա 12 բեյերն իրենց աշիրեթներով, Զեյթունի սահմանամերձ շրջաններում ապրող ցեղերը, բացի Կոզան-օղլուներից, որոնք մերժում են լեռնագավառի վրա հարձակվելու Ազիզ փաշայի առաջարկը։ «Անոնք կրսեին լավ դրացիներ և հիաճալի դաշնակիցներ են մեզի, անոնց արյունով ողողված սուրերը կրնան մեզի դեմ դառնալ»[14]։ Աշրաֆանքի նախօրեին թուրքական հրոսակախմբերի թիվը ոմանց կարծիքով հասնում էր 40, նույնիսկ՝ 52 հազարի։ Նրանց կռվի էին առաջնորդում առջևից ընթացող 150 շեյխ և մոլլա։

1862 թ. հուլիսի 27-ին Ազիզ փաշան անցավ Ջահան գետը և սկսեց իր հարձակումը։ Շրջակա հայկական բոլոր գյուղերի բնակիչները թողեցին իրենց բնակավայրերն ու կայքը և ապաստանեցին քաղաքում։ Մեկ մարդու նման ոտքի է կանգնում Զեյթունը։ Ամրացվում են դիրքերը, դարաններ ու ծուղակներ են պատրաստվում։ Զենք են վերցնում բոլոր չափահասներն անխտիր, նույնիսկ ալեհեր ծերունիները, պատանիները։ Աստվածածնի վանքում հավաքվել էր մեծ բազմություն։ Եկեղեցական թափորից հետո, նախքան թշնամու հետ գոտեմարտի բռնվելը, մարդիկ համբուրվում էին հարազատների հետ, ոգևորում իրար։

Դեռահաս աղջիկներին ու կանանց տեղավորեցին Ցաղուլյան թաղամասի այն հատվածում, որն ընկած էր Շուղրի կամրջի մերձակա բարձունքի վրա։ Զեյթունցի քաջուհիները այստեղից քարեր պիտի տեղային թշնամու գլխին, իսկ պարտության դեպքում նետվեին գետը, որպեսզի չընկնեին թշնամիների ձեռքը։

1862 թ. հուլիսի 28-ի առավոտյան Ազիզ փաշայի բանակը մտնում է Զեյթուն գավառը։ Ավերվում ու մոխրակույտերի են վերածվում ճանապարհին ընկած 10-ից ավելի գյուղեր։ Առաջին հանդիպումն հայերի հետ տեղի է ունենում Ջաքըր-դերե Քեփիր կոչված վայրում ուր, հակառակ խորհրդարանի որոշմանը, ամրացել էր 500 զինվորի գլուխ անցած Շովրոյան իշխանը։ Մեկ ամբողջ օր տևող անհավասար մարտում, 72 զինվորի կորստով, Շովրոյանը կանգնեցնում է թշնամու առաջխաղացումը, սակայն դիմագրավումն անհուսալի համարելով, հարկադրված, գիշերը նահանջում է քաղաք։

Արեգին գյուղի ավերման մասին զեյթունցիները գրում էին. «արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, տուները կողոպտեցան և ամբողջ գյուղը հրո ճարակ եղավ։ Արյունը փողոցներու մեջ կվազեր, և հրդեհին մուխը սոսկում ու սարսափ կծավալեր մերձակա գյուղերը։ Փաշան հրամայեց գյուղին մոտակա հայ վանքին դռները խորտակել, այս արյան ծարավի մարդիկը կուսակալին աչաց առջև և նրա հրամանավ վանահայրը և միաբանք

14 «Զեյթունի պատմագիրք», էջ 278։

փողոտեցին... Եվ նվիրական սպասք, անոթ և զարդեր բաժանելեն վերջ յուր զորաց՝ հրամայեց փաշան վանքն էլ հրդեհել»[15]։

Ոգևորված այս հաղթությունից, Արեգին գյուղը կործանելուց հետո, փաշայի զորաբանակները ներխուժում են ս. Փրկչի վանքը, սրախողխող անում Մամբրե վարդապետին և շարժվում դեպի Ջերմուկի դաշտը։ Մյուս կողմից, թուրք ու չերքեզ աշիրեթները Քարատիշի Օսման փաշայի գլխավորությամբ մոխրակույտի են վերածում Ավագակալը (Մխալ), թալանում ամեն ինչ և գալիս միանում հիմնական բանակախմբերին։ Երկու բանակները, դեմ-հանդիման, կանգնած էին իրարից կես ժամվա հեռավորության վրա։ Սպասվում էր ահեղ ճակատամարտ։

Հուլիսի 29-ի գիշերը իշխանները և հոգևորականները վերջին խորհուրդն արեցին ս. Աստվածածնի վանքում և ուժերը մարտական դասավորության մեջ դրին։ Նրանք իրենց 5000 կանոնավոր ռազմիկներին բաժանեցին խմբերի, նշանակեցին հրամանատարներ, պատվիրեցին գործել խստագույն կարգապահությամբ, անխուճապ, մեռնել, բայց չփախչել, առավել ևս չհանձնվել թշնամուն։ Նրանք որոշում են մեռնել հերոսաբար։

Ջնայած իր ահռելի բանակին, հաշվի առնելով նախորդների ստացած դասերը, խորամանկ փաշան դիմում է նոր խարդավանքի։ Ժամանակ շահելու, զեյթունցիներին խաբեությամբ հանգստացնելու, ապա հանկարծակի հարձակման անցնելու մտադրությամբ, փաշան բանագնացներ է ուղարկում հայերի մոտ և ծանր պայմաններով հաշտություն առաջարկում։ Թուրքերը պահանջում էին վճարել անցած տարիների հարկը՝ 500 հազար դահեկան, ապա և իրենց հանձնել Քեթխնի դեպքերի ղեկավարներին՝ կարապետ քեհյային, Ջափար Վարդանյանին։ Զեյթունցիները, հասկանալով փաշայի խորամանկությունը, ապագա անցքերի պատասխանատվությունից խուսափելու խոհեմ մտադրությամբ համաձայնվեցին վճարել 128 հազար դահեկան[16], ինչքան որ ունեին, սակայն հրաժարվեցին ամեղադրյալներին հանձնելուց»։

Ազիզ փաշան, նախքան ճակատամարտ տալը, հոգեբանական գրոհ էր սկսել զեյթունցիների դեմ։ Ամեն անգամ բանագնացներ ուղարկելով, փաշան հայտնում էր իր բանակի թիվը, ջանալով սարսափ տարածել, դրանով իսկ առանց կռվի գրավել բերդաքաղաքը։ Զեյթունի իշխանապետ Հազար Շովրոյանը նրա բանախոսներին վստահ պատասխաններ էր տալիս, թե լեռնականները մտադիր չեն այդպիսի զիջումների գնալ, իսկ ինչ վերաբերում է բանակի թվաշատությանը, ապա թող հայտնի լինի բանակապետին, որ զեյթունցիները շատ բեյերի ու փաշաների, մեծաքանակ զինվորների հետ են չափել իրենց ուժերը, այժմ էլ առանց երկմտելու պատրաստ են վարելու մարտը[17]։

Բանակցությունների դադարի պահին լուրեր են ստացվում, թե Պայազետ-օղլի Ահմետ փաշան իր զինվորներով շարժվում է Ավագ-Կետիկի կիր-

---

15 «Արձագանք», 1895, դեկտեմբեր 6 (18), № 141, տե՛ս նաև Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 166—167։

16 «Կռունկ հայոց աշխարհին», 1863, № 3, էջ 222—223։

17 Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 170։

ճը և հաջորդ օրը պիտի միանա ընդհանուր զորաբանակին։ Իշխանները 500 հոգիանոց մի ջոկատ են ուղարկում Մարաշի թուրքերի դեմ, նրանց պարտությյան մատնում և հաղթականորեն վերադառնում Զեյթուն։

Ահմեդի ջարդված ու խուճապահար բանակի բեկորները, միանալով Ազիզ փաշայի զորքին, սարսափ են ներազդում բոլորին, իսկ զեյթունցիները, ոգևորվելով անդրանիկ հաջողությունից, պատրաստվում են վճռական ճակատամարտի։ Իշխան Յաղուպյանը կռվելու էր Ավագկալի ճակատամասում՝ 12 բեյերի դեմ։ Սուրենյանը և Շովրոյանը ամրացել էին Զեյթունի նախադռան կիսավեր ճեմարանի մեջ, իսկ Ենիտունյան իշխանը 1500 մարտիկներով դարան պիտի մտներ վանքի և քաղաքի միջև ընկած ձորում։ 500 զինվորներ պիտի գնային թուրքական բանակին ընդառաջ, կռվելով նահանջեին և զորքը քաշեին դարանակալների մեջտեղով։ Վճռական պահը դարանակալներին պետք է ազդարարեին եկեղեցիների կոչնակները, որից հետո պետք է ըսկըսվեր հարձակումը։

1862 թ. օգոստոսի 2-ի (14) առավոտյան Զեյթունի լեռներն ու ձորերը լցվում են հրացանազարկերի ու թնդանոթի որոտով։ Ազիզ փաշան ամբակոծում էր կենտրոնական թաղամասերը, Օսման բեյի բանակի թուրքմենները Աննաձորից 12000 զինվորով շարժվում էին ճեմարանի մարտկոցի դեմ։ Յաղուպյանը ստիպված միանում է մյուս զորախմբին և այս հատվածում կենտրոնացնում 3000 զինվոր՝ երկու իշխանների գլխավորությամբ, որոնք զինվորներին հրամայում են չկրակել, մինչև թշնամին այնքան մոտենա, որ «վառոդն ալ գնդակին հետ փորերնին մտնե»։

Ս. Աստվածածնա վանքը պաշտպանում էր ծերունազարդ վարդապետ Մահտեսի Գրիգոր Մարտիրոսյանը, ունենալով 7 չափահաս զինվորներ և փոքրաթիվ պատանիներ։ Դերվիշներ ու շեյխեր առաջը գցած թուրք բանակախմբի չորս դրոշակակիրները միանգամից գնդակախոռով են լինում։ Վանքի դրռները կացնով ջարդելու փորձերը անհաջող են անցնում, դռան մոտ կուտակվում են թուրքական զինվորների դիակները։

Մյուս թևում թուրքական բանակի մի ջոկատ հասնում է քաղաքի եզերքը, որտեղ արյունահեղ մարտը տևում է երկու ժամ։ Փախուստի կեղծ ցույցով զեյթունցի առաջապահ գունդը չերքեզներին քաշում է այն կողմը, ուր դարանամուտ սպասում էին Ենիտունյանի գլխավորած 1500 քաջերը։ Հասնում է կանխորոշված պահը։ Հնչում են եկեղեցիների կոչնակները, թաքստոցներից ելնում են լեռնականները, սկսվում է կոտորածը։

Անսպառելի հարվածներից շփոթված չերքեզները, իսկ քիչ անց նաև ձախ թևում կռվող թուրքմենական աշիրեթները խուճապահար փախչում են։ Զեյթունցիները շարունակում են հետապնդումը։

Հետագայում «Կոտորածի ձոր» կոչված վայրից փախուստի դիմող թուրքական բանակը մարտադաշտում թողնում է 756 դիակ՝ 9 բեյերի հետ միասին, զինամթերք, պարեն։

Ազիզ փաշան, տեսնելով իր բանակի ջախջախումը, թնդանոթաձգի սպանությունը, զեյթունցիների հակահարձակման անցնելը, նահանջի հրաման է

արձակում և մի կերպ փրկվում գերի ընկնելուց։ Թուրքական բանակը խուճապահար, սարսափից գլուխը կորցրած նահանջում է։ Օգտագործելով հարմար պահը, 5000 զեյթունցի զինվորները, իրենց պատրաստած լավ կրակող չոխմախլի հրացաններով զինված, դուրս են գալիս թաքստոցներից, մինչև Ջահան գետը հետապնդում փախչող թուրքերին և կոտորում նրանց։

1862 թ. օգոստոսի 2-ի հաղթանակը կատարյալ էր։ Փախուստի դիմող թուրքական բանակը ռազմադաշտում թողնում է երկու թնդանոթ, 2000-ից ավելի դիակ։ Փառավոր հաղթանակ տարած զեյթունցիները միայն 77 հոգու կորուստ տվեցին։ Անօրինակ այդ ախրագործության ժամանակ խիղախությամբ կռվեցին շատերը։

Հայրենանվեր երիտասարդ Մարկոս Թաշճյանը որոշում է մոտենալ թուրքական բանակատեղին, սպանել Ազիզ փաշային, խուճապ առաջացնել թշնամու զորքերի մեջ։ Ընկերները փորձում են ետ պահել նրան, ասելով «անմիտ, ուր կերթաս, մեռնելու կերթաս»։ Նա պատասխանում է. «Այո, գիտեմ պիտի մեռնիմ, բայց ուրիշներ պիտի ապրեցնեմ»։ Թաշճյանը հերոսի հանդգնությամբ մոտենում է թուրքական բանակին, կրակում, իր կարծիքով ըսպանում Ազիզ փաշային, սակայն իրականում՝ հայերին մեծ վնաս պատճառող թնդանոթաձգին։ Հայրենակիցներին ազատելով թնդանոթի անխնա կրակից, վերադարձին նա հերոսաբար զոհվում է։

Ջաքըր-դերեի մարտահատվածում հերոսաբար էր կռվում Մելիքսեթ Քամյանը։ Քաջը մարտում ծանր վերքեր ստանալով, սողսող մոտենում է Փրկչի լեռանը։ Այդ պահին վրա են հասնում փաշայի զինվորները։ Թուրք հրոսակները Քամյանի կենդանի լինելը ստուգելու նպատակով կտրում են նրա ականջները։ Հերոսը տանում է բոլոր տանջանքները։ Մայրը որդուն դտնում է տակավին կենդանի ու ահավոր տառապանքների մեջ։ Այս դեպքը պատմում են Մկրտիչ Պեշիկթաշլյանին։ Մեկ օր հետո ծնվում է մեծ քնարերգուի «Դու զով խնդրես մայր իմ անուշ» բանաստեղծությունը։ Մարտերում անօրինակ սխրանքներ գործեցին նաև Գալուստ վարդապետը, Ջոպա Ապարդյանը, Թորոսենց Հակոբը, Գուգուրենց Փանոսը, որոնք բոլորն էլ հերոսաբար ընկան ճակատամարտում։

Զեյթունի հերոսամարտից հետո Ազիզ փաշան, վրեժխնդրությամբ լցված, շրջակա թուրքական ցեղերին արտոնություն է տալիս ճանապարհներին կամ ամենուր կողոպտել և սպանել զեյթունցիներին։ Սրանով իսկ Մարաշի կառավարիչը ծանրացնում է ջորեպանների դրությունը, որոնք առևտրականներին ծառայելով բավական եկամուտ էին տալիս լեռնագավառին։ Քիչ անց Զեյթունը դրվում է պաշարված կացության մեջ, կտրվում դրսի հետ ունեցած հարաբերություններից։ Պաշարումը լեռնականներին կանգնեցնում է սովամահության վտանգի առջև։

1862 թ. սեպտեմբերին Ազիզ փաշան զեյթունցիներից պահանջեց երկու թնդանոթները, ապա հարկի մի մասը։ Նրան պատասխանեցին, որ եթե վերացվի գավառի պաշարումը, ապա լեռնականները կկատարեն փաշայի ցանկությունը։ Պահանջը կրկնվում է։ Զեյթունցիները Մովսես քահանայի և գավառի արքեպիսկոպոսի միջոցով 30 հազար ղուրուշ հարկ և ռազմավարի մի մասը ուղարկում են Մարաշ։ Ուխտադրուժ փաշան ընդունելով այդ, պա-

հանջում է, որ իրեն ներկայանան չորս իշխանները։ Մովսես քահանայի առաջնորդությամբ Մարաշ են գալիս Զեյթունի չորս իշխանների որդիները, որոնց անմիջապես կալանավորում և բանտ են նետում, պահանջելով մեծ իշխաններին։ 40 ծերունիներից բաղկացած Զեյթունի նոր պատվիրակությունը աղերսում է աղատ արձակել կալանավորներին և վերացնել պաշարումը։

Փաշան ստիպված համաձայնվում է։ Զեյթուն է ուղարկվում Սուլեյման բեկը՝ հանձնարարարություն ունենալով հարկեր հավաքել։ Նա մի քանի օրում 25000 ղուրուշի հարկ է հավաքում, ապա չկարողանալով դիմանալ գավառում, ութ օրից հետո հեռանում է Զեյթունից։ Արծվաբնի օղակումը շարունակվում է։



Ձիավոր զեյթունցիներ

Սուլթանն իմանալով իր բանակի ծանր պարտության մասին, որոշում է Բելգրադի նախկին կառավարիչ Աշիր փաշային 150 հազարանոց զորք տալ՝ հանձնարարելով շրջապատել և հիմնահատակ կործանել Զեյթունը, իսկ բնակիչներին սրակոտոր անել։ Կառավարությունը սկսում է արշավանքի նախապատրաստությունը, սակայն փոխվում է ծրագիրը, պաշտոնից ազատվում է Ազիզ փաշան, Մարաշի նոր կառավարիչ է նշանակվում Աշիրը, որին հանձնարարվում է «հոխադարձ զիջումների գնով հաշտվել Զեյթունի հետ։ Վերացվում են Զեյթունի որոշ արտոնությունները, սահմանվում է զինվորական հարկ, առաջին անգամ թուրք զորախումբ է մտցվում քաղաք։

Սուլթանին ձեռնտու չէր Զեյթունը դարձնել մի նոր Հունաստան կամ Չերնոգորիա, մեծ տերություններին նորանոր միջամտությունների առիթ տալ։ Ուստի Աբդուլ Ազիզը խորամանկորեն, քայլ առ քայլ զիջեց, ամենից առաջ

Երկինչելով համահայկական նոր ու հուժկու շարժումներից, խուսափելով Ռուսաստանին միանալու կամ անկախանալու արևմտահայերի անջատողական ձգտումներին սնունդ տալուց։

Գործին միջամտեց նաև Մերձավոր Արևելքում նվաճողական ծրագրեր ունեցող Նապոլեոն III-ը։

Կ. Պոլսում Երեմիա Տևկանց Տեր-Սարգսենցի գլխավորությամբ հավաքվում են մի խումբ հայ մտավորականներ, ամիրաներ ու էֆենդիներ և որոշում դիմել Նապոլեոն III-ին, կանխելու Զեյթունին սպառնացող աղետը։ Կազմվում է երկու գրություն։ Մեկն, իբրև հանձնարարական, ուղարկվում է Փարիզ՝ Կարապետ Շահնազարյանին, որպեսզի նա օգնի Գրիգոր Ապարյանին[18], մյուսը ուղղված էր Նապոլեոն III-ին[19], որտեղ նկարագրում էին Ուլնիայի իրավիճակը, սուլթանի նոր մտադրությունները, ապա խնդրում օգնել Զեյթունին։

Պատրիարքի միջնորդությամբ, վաճառականի անցագիր հանելով, պոլսահայ երևելիները Զեյթունից Կ. Պոլիս եկած Գրիգոր վարդապետ Ապարյանին ուղարկում են Փարիզ։ Նա Ֆրանսիայի մայրաքաղաքում Կ. Շահնազարյանին հաղորդում է դեպքերի ընթացքը և երկուսով դիմումներ են ուղարկում կառավարությանը։

1862 թ. դեկտեմբերի 11-ին Կ. Շահնազարյանն ստանում է իր գրության պատասխանը, որտեղ ասվում էր, թե հանձնարարված է Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Տրուեն դը Լուիսին, ինչպես նաև Հալեպի ֆրանսիական հյուպատոսին, հայերին պաշտպանել և թույլ չտալ արշավանքի կրկնություն։ Դեկտեմբերի 31-ին Տրուեն դը Լուիսը անձամբ ներկայանում է մեծ սադրազամ Ալի փաշային, հայտնում Նապոլեոնի կամքը և պահանջում Կիլիկիայում տիրող խժդժությունների վերացումը։ Սիրիայի դեպքերից դաս առած, թուրք բարձրաստիճան պալատականը առերես համաձայնություն է տալիս, իսկ գաղտնաբար Մարաշի կուսակալին հրահանգում շարունակել Զեյթունի պաշարումը և սովամահությամբ վերջ տալ ըմբոստ լեռնականներին։

Ալի փաշայի դիտավորությունները չվրիպեցին պոլսահայերի ուշադրությունից։ Զեյթունով խանդավառված Մ. Պեշիկթաշլյանը, Մ. Մամուրյանը, Երեմիա Տևկանցը, արդեն մայրաքաղաք հասած Մ. Խրիմյանը, սրանց հետ ժամանակավորապես միացած, դավանափոխության խոստում առած կաթոլիկների համայնապետ Անտոն Հասունյանը նոր բողոքագրեր են առաքում ֆրանսիական դեսպանին, Կարապետ Շահնազարյանին հանձնարարում վերըստին դիմել ֆրանսիական կառավարությանը, որը, ելնելով իր քաղաքական շահերից, նորից ճնշում գործադրեց սուլթանի վրա։ Զեյթունի պաշարումը վերացվեց։

Ավելին, սուլթանական կառավարությունը առհարկի համաձայնում է հանձնաժողով կազմել և լեռնային Կիլիկիայում տիրող իրավիճակը քննել։ Սկզբում Մարաշ է գնում Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանության քարտուղարը, միջնորդում Ազիզ փաշայի առաջ և մահապատժից ազատում վա-

18 «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1964, № 3, էջ 56—78։
19 ԴԱԲ, Բ. Ազատյանի արխիվ, I բաժին, վավ. 142։

դուց-ինչ բանտում շղթայված մի խումբ զեյթունցիների, որոնցից երկուսն արդեն տանջամահ էին արվել։ Կալանավորված իշխաններին բերում են մայրաքաղաք և քիչ անց ազատ արձակում։ 1863 թ. դեկտեմբերի 6-ին Մարաշ ուղևորվեց Զեյթունի գործը քննող հանձնախումբը՝ մեծ եպարքոսի օգնական Շեյին բեյը, հայերի ներկայացուցիչ Սարգիս Աղաբեկյանը, կաթոլիկների պատգամավոր Դավուտ էֆենդին, ֆրանսիական դեսպանատան աշխատակից Ժյուլ Ռոբերը։ Հանձնաժողովը ուսումնասիրեց ապստամբության հետ կապված մանրամասնությունները, կառավարությանը վերադարձրեց թուրքերից գրաված ռազմավարի դեռևս չհանձնված մասը, զեյթունցիներին պարտադրեց կանոնավոր հարկ տալ և թուլատրեց ս. Աստվածածնա բարձունքի վրա զորանոց կառուցել, այնտեղ մշտական հսկող զորախումբ պահելու մտադրությամբ։

Այսպիսով, Զեյթունի խնդիրը լուծվում էր փոխադարձ զիջումների գնով։ Եթե թուրքական կառավարությունը հրաժարվում էր նոր արշավանքից, «խնայում էր լեռնականներին» կյանքը, ապա ուլնեցիներն էլ որոշ չափով զրկվում էին իրենց դարավոր կիսանկախ դրությունից։

Ֆրանսիական կառավարությունը վաղուց էր հետաքրքրվում Կիլիկիայով։ Տակավին 50-ականների սկզբներին Նապոլեոն III-ի առաքած միսիոներները վխտում էին Տավրոսում և քրիստոնյա աղգաբնակչությանը քաշում կաթոլիկ համայնքի դիրկը, որպեսզի նրանց օգտագործեն ֆրանսիական պետության նվաճողական քաղաքականության իրականացման համար։ Փարիզի քաղաքագետներն այս նպատակին էին ծառայեցնում նաև արկածախնդիր Լևոն Լուսինյանին, որը հանրագրեր էր կազմում, ամեն տեղ ներկայանում իբրև Լուսինյան տոհմից սերված, Հայաստանի բախտով հետաքրքրքրվող մի անձնավորություն։ Իրականում նա ջանում էր հայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից և Նապոլեոն III-ի արևելյան քաղաքականության գործիք դարձնել։

Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը, հայասիրական «փրկարար միսիան» ուներ ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական հիմքեր։ Նապոլեոն III-ին հետաքրքրում էր Կիլիկիայի բամբակը։ Նա ձգտում էր Միջերկրականի ծովամերձ գոտին վերածել բամբակացան դաշտերի։

Բացահայտելով Ֆրանսիայի վարած արևելյան քաղաքականության դրդապատճառները, չի կարելի սակայն հայերի նկատմամբ բռնած դիրքի խնդրում հավասարության նշան դնել սրա և Անգլիայի միջև։ Կ. Պոլսի անգլիական «Լևանտ Հերալդ» թերթը, դեսպանի անմիջական մասնակցությամբ, հալածանք սկսեց Կիլիկիայի ապստամբ հայերի դեմ։ Նրանից ետ չէր մնում «Տեպա» պարբերաթերթը, որի միջոցով պարզ էր դառնում իր պետության դիրքորոշումը՝ վերջ տալ Սերբիայի ու Հունաստանի անկախությանը, «խաղաղեցնել» Կիլիկիան ու Հայաստանը, Ռուսաստանին ու Ֆրանսիային զրկել կայսրության մեջ ունեցած հենակետից։

«Ծաղիկ», «Մեղու», «Սեր», «Մասիս», «Փարիզ» թերթերը մերկացրին անգլիական կառավարության հակահայկական քաղաքականությունը։ Այդ բանը չվրիպեց նաև օտարների աչքերից։ Ֆրանսիացի ականավոր գրող և հրապարակախոս Ժիրարդենը Աբդուլ-Ազիզի վարած հայահալած քաղաքականության նոր կուրսի պատասխանատվությունը դնում էր Անգլիայի վրա։

3. ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐԸ

Զեյթունի իրադարձությունները լայն արձագանք գտան հայ իրականության մեջ։ Կոստանդնուպոլսի հայ հասարակական զանազան խմբավորումներ տարբեր կերպ արձագանքեցին Ուլնիայի հերոսամարտերին։

Երբ թուրքական բանակը արշավում էր Զեյթունի վրա, Կ. Պոլսի հայ ամիրաները, բարձրաստիճան հոգևորականները ձևացնում էին, թե իրենց ոչինչ հայտնի չէ կատարվող անցքերից։ Ապստամբության հաղթանակից հետո, ամիրաների մի մասը միջնորդի դեր կատարեց Բ. Դռան և Զեյթունի միջև, հորդորեց հպատակություն կառավարությանը, նույնիսկ դատապարտեց ապըստամբների անխոհեմ ընթացքը։

Ազգային ժողովի երեսփոխանները, մասնավորապես «սահմանադրական» ճանաչված Սերվիչենը, Գր. Օտյանը, Պալյան և Աղաթոնյան եղբայրները, երկնչելով ժողովրդական զանգվածների հուժկու շարժումներից, հանդես եկան խաղաղասիրական քարոզներով, պատճառաբանելով, թե հայն այլևս արյուն չունի թափելու, ուստի նա պետք է զարգանա, լուսավորվի և այդ ճանապարհով գտնի իր փրկությունը։

1862 թ. օգոստոսի 1-ին, Ազիզ փաշայի Զեյթունի վրա հարձակվելու օրը, Կ. Պոլսի հայ արհեստավորները, պանդուխտ օրամշակները մայրաքաղաքում ցույց կազմակերպեցին։ Ավելի քան 2000 ցուցարարներ պատրիարքից պահանջում էին գործադրել արևմտահայերին խոստացված Սահմանադրությունը, վերջ տալ հալածանքներին Արևմտյան Հայաստանում, դադրեցնել արյունահեղությունը Կիլիկիայում։ Առավոտից մինչև երեկո տևող ցույցը ճնշվեց զենքի ուժով։

Մեկ շաբաթ չանցած, Կ. Պոլսում սկսեցին լուրեր տարածվել Ազիզ փաշայի բազմահազարանոց բանակի պարտության մասին։ Կատաղած էր կայսերական պաշտոնեությունը, ոգևորություն ու ցնծություն էին ապրում հայ աշխատավորական զանգվածները, առաջադեմ մտավորականությունը։ Զեյթունը հայ ժողովրդի ոգևորության ու ազգային հպարտության խորհրդանիշը էր այդ օրերին, վկայում է Սրբուհի Երիցյանը։ «Այն տարին (1862 թ.— խմբ.) Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վերա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակությանց... Նույնիսկ հռոմեադավան հայ երիտասարդները մոռացել էին դեպի իրանց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը, և ամենայն սիրով թե նյութապես, և թե բարոյապես օգնում էին այդ ձեռնարկություններին»[20]։

Ապստամբության մասին շատ քիչ տեղեկություններ էին ստացվում, որովհետև Ազիզ փաշան այնպես էր օղակել Կիլիկիան, որ ոչ մի լրաբեր չէր կարող դուրս գալ այնտեղից։ Նույնիսկ անանցանելի լեռնակիրճերի վրա պահակակետեր էին հաստատված, իսկ Զեյթունն առնված էր աքցանի մեջ։

Մեծ դժվարություններ հաղթահարելով, 1862 թ. հոկտեմբերի կեսերին Կ. Պոլիս հասան Զեյթունի պատգամավորները՝ Տեր-Հակոբ Բաճանան և Մր-

---

20 «Փորձ», 1877, № 4, էջ 193։

նացական Սեմբերյան–Զեյթունցին: Հաջորդ օրը գումարված խառը ժողովում նրանք պատմեցին ընդհանուր եղելությունը և հանձնեցին իշխանների խընդրագրերը՝ իրենց օգնության հասնելու մասին: Պոլսահայերն անմիջապես հանգանակություն կատարեցին, կազմեցին մի աղերսագիր և սրանց ձեռքով մատուցեցին Ալի փաշային:

Երկու զեյթունցիները մայրաքաղաքի մտավորականության, գավառահայ պանդուխտների, եկեղեցականների մեծ մասի ամենացանկալի հյուրերն էին: Ոգևորությունը գնալով մեծացավ և որոշվեց հանձնաժողով կազմել, հանգանակություն կատարել և օգնություն հասցնել ապստամբներին:

Զեյթունին օգնություն կազմակերպելու նպատակով ստեղծված ընկերությունն իր մասնաճյուղը հաստատեց Թիֆլիսում: Մատթեոս Մամուրյանին հանձնարարվեց կազմել գրություններ, կապ հաստատել Թիֆլիսի մասնաճյուղի հետ և «պահել» հանգանակած գումարի հաշվեկշիռը: Հանգանակվեց 2000 օսմանյան ոսկի, որը մաս-մաս ուղարկվեց Զեյթուն: Հանգանակությանը մասնակցեցին ամենատարբեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ, հեռավոր ու մոտավոր քաղաքների հայերը: Անգամ Ինդոնեզիայի սակավաթիվ հայ գաղթօջախը մասնակցում էր Զեյթունի օգնության գործին:

Զեյթունի հերոսամարտերը լուրջ ազդեցություն ունեցան նաև Պետերբուրգում, Մոսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում սովորող հայ ուսանողության քաղաքական մտայնության վրա: 1863 թ. ռուսական այդ երկու մեծ քաղաքներում կազմակերպվեցին ուսանողական խմբակներ, որոնք համախմբվեցին «Ժողով» անունով կազմակերպության շուրջը: «Ժողովը» քաղաքական աշխատանք էր տանում ուսանողության մեջ: Խմբի մեջ մըտնող 42 հայ ուսանողների ջանքերով քննության էին առնվում «հետաքրքիր նյութեր», Թուրքիայից եկած նամակներ, հայ ազատագրական շարժումներին, Զեյթունին ու Վանին վերաբերող հոդվածներ և այլն:

Զեյթունի հերոսամարտը լայն արձագանք գտավ հայ պարբերական մամուլի էջերում: Ապստամբության մասին Պոլսի հայկական բոլոր պարբերականներից հայատառ թուրքերեն «Մյունաիհ» շաբաթաթերթը տպագրեց առաջին հոդվածը, որը կարդացվեց լարված հետաքրքրությամբ և բորբոքեց առաջադեմ մտավորականների ու ժողովրդական զանգվածների արդարացի վրդովմունքը թուրք բռնակալների նկատմամբ[21]: Հաջորդ օրը «...հիշյալ լրագրի խմբագիր պ. Կարապետ Փանոսյանը առանց որևիցե բացատրության բանտարկվեցավ այնպիսի խիստ կերպով, որ երկար ժամանակ ոչ ոք չգիտեր, թե նա սպանվեցավ, թե կենդանի է»: Երեմիա Տևկանցը վկայում է, թե Փանոսյանը նստած սուլթանի քթի տակ «փարավոնական բարբարոս»[22] էր անվանել նրա զորավար Ազիզ փաշային, պահանջելով պատժել վերջինիս արյունարբու զինվորներին: Փանոսյանը բանտարկվեց, իսկ «Մյունաիհին» ընդմիշտ փակվեց:

Արևմտահայ առաջադիմական «Մեղու» պարբերաթերթն ավելի հանդամանորեն անդրադարձավ Զեյթունի ապստամբությանը: Թերթի խմբա-

---

21 Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 9—12:

22 Նույն տեղում, էջ 10:

գիր Հարություն Սվաճյանը մասնակցեց պոլսահայերի օգոստոսի 1-ի ցույցին, հրապարակեց մարտաշունչ հոդվածներ, որտեղ նա դատապարտում էր ցարական «Սովրեմեննոե սլովո» և անգլիական «Վևանտ հերալդ» թերթերի թղթակիցներին, որոնք պաշտպանում էին մեծ տերությունների նվաճողական քաղաքականությունը։ Սվաճյանն ուղղակի զենքի էր կոչում արևմտահայությանը։ Ապստամբության օրերին նա տպագրեց Ս. Շահազիզի հետևյալ տողերը.

Ոչ ոք չէ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ո՛չ սուր, ո՛չ արյուն, ո՛չ բանտ, ո՛չ կայծակ,
Ո՛չ նույնիսկ գեհեն մշտավառ բոցով[23]։

Ջեյթունի ապստամբության օրերին Սվաճյանը, հրապարակախոսությանը զուգընթաց, գաղտնի աշխատանք էր ծավալում պոլսահայության մեջ։ Սուլթանական կառավարության հրամանով օգոստոսի 10-ից 20-ը «Մեղու»-ն ևս փակվեց։ Սվաճյանը ենթարկվեց հարցաքննության և սպառնալիքի։ Նույն տարվա վերջերին մի քանի ամսով Սվաճյան-Մեչուխեչյան «անհետացավ» հրապարակից։ Թուրքահպատակ հայկական գավառները շրջելիս, հավանաբար, նա եղել է նաև Կիլիկիայում։

Ջեյթունի դյուցազնամարտը պաշտպանության գտավ Զմյուռնիայի հայ առաջադեմ «Մաղիկ» տասնօրյա հանդեսի էջերում, որն այդ օրերին խմբագրում էին Ար. Հայկունին և Գ. Չիլինկիրյանը։

1862 թ. օգոստոսի 1-ի, 10-ի և 20-ի համարների ընդարձակ առաջնորդողները և մի քանի այլ հոդվածներ նվիրված էին Կ. Պոլսի օգոստոսի 1-ի ցույցին, մասամբ նաև Ջեյթունին և նրա ապստամբությանը։ Հոդվածներում բացահայտորեն ապստամբության մարտակոչ էր նետվում։ Օգոստոսի 1-ին Ա. Հայկունին գրում էր. «Հայե՛ր, արդեն ժամանակը անցած է, և մեզ կամ դեպի ճշմարիտ բարեկարգություն դիմելեն և կամ կորուսելեն ի զատ ուրիշ հույս մնացած չէ, ...արիանանք ուրեմն և փառավոր կյանքը մը ձեռք անցնելու փափաքեն ավելի մահվան ձեռքեն ազատելուն համար հարկ եղած միջոցները ձեռք առնոմք, առանց աչ կամ ահյակ ծրելու ճակատնիս բարձրացունեմք, անվեհեր լինիմք և մեր վատ թշնամիներուս ցուցընենք մեյ մը ինքզինքնիս, և հայտնեմք նոցա, թե հայությունը մեռած չէ, ցուցընենք նոցա թե որքան դյուրակործանելի և խարխուլ են իրենց ամբարշտական պարիսպները և վերջապես հայտնեմք, թե հաղթությունը միմիայն ճշմարիտ ազգասիրաց վերջին մրցանակն է»[24]։

Հատկանշականն այն է, որ «Մաղիկը» արմատական դիրքերից հարձակումներ էր գործում ոչ միայն թուրքական կառավարության, նրա կուսակալների, այլև այն հայերի վրա, որոնք պահակում էին ազգը և դավաճանում ազատագրական համընդհանուր շարժմանը։ Նա «ասպարեզը զինու զորությանն» էր թողնում և անմիջականորեն «զինական հեղափոխություն» էր

23 «Մեղու», 1862, № 170, էջ 179։
24 «Մաղիկ», 1862, օգոստոս, № 40, էջ 333։

պատգամում յուրայիններին։ Օգոստոսի վերջին արգելվեց նաև «Մաղիկը»։ Կալանքի տակ դրվեց և խոշտանգումների ենթարկվեց Գր. Չիլինկիրյանը։ Հ. Սվաճյանը, Ա. Հայկունին, Գր. Չիլինկիրյանը անցան գաղտնի աշխատանքի։ Նրանց ջանքերով երևացին մի շարք թռուցիկներ, որոնք զենքի էին կոչում և հումբարաշխ պայքարի նախապատրաստում հայ ժողովրդին[25]։

Ապստամբության մասին հաղորդագրություններ տպագրեցին «Մասիս», «Արշալույս Այրարատյանը» և Կ. Պոլսի ու Զմյուռնիայի մյուս թերթերը։

Նույն ժամանակ «Երևակի» ռեակցիոն խմբագիր Հովհաննես Ջամուռճյանը կառավարության ուշադրությունն էր հրավիրում դեմոկրատական թերթերում տպագրվող հոդվածների վրա, պատճառ դառնալով նրանց փակմանը։

Ապստամբությունն արձագանք գտավ կովկասահայության մեջ, Ռուսաստանի հայ գաղթավայրերում և Փարիզում։ Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ հայոց աշխարհին» հանդեսը դրվատում էր զեյթունցիների քաջագործությունները, դատապարտում սուլթանական կառավարությանը։ «Կիլիկիայի անցքերու պատճառով հրավեր Ռուսաստանի հայերուն» կոչ-հոդվածում խմբագրությունը հայերին հիշեցնում էր կիլիկեցիների անցյալի փառքը, նրանց ըմբոստ ու քաջակորով բնավորությունը, արևելահայերին պարտավորեցնում՝ դրամական միջոցներով օգնել վշտացյալ ու վիրավոր եղբայրներին[26]։

Նույն տարվա հոկտեմբեր ամսվա համարում «Կռունկը» Ստեփաննոս Պալասանյանի թարգմանությամբ տպագրում էր ֆրանսիացի ճանապարհորդ Վիկտոր Լանգլուայի «Ճանապարհորդություն ի Կիլիկիա և լերինս Տավրոսի» աշխատությունը, նպատակ ունենալով արևելահայության մեջ համազգային պայքարի ու միասնական պետության ստեղծման գաղափար հղացնել։ Նոյեմբերին ամսագիրը տպագրում էր նոր լուրեր Զեյթունի մասին, որոնք քաղված էին «Արշալույս Այրարատյան», ֆրանսիական «Օպինիոն Նասիոնալ» և «Նորդ» լրագրերից։

Զեյթունի իրադարձություններին մանրամասնորեն անդրադարձավ Կալկաթայում նիհազար Հարությունյանի խմբագրությամբ լույս տեսնող վիմատիպ «Եղբայրասեր»-ը՝ հնդկահայ վերջին պարբերականներից մեկը։

«Եղբայրասեր» տասնօրյա հանդեսը 1862 թ. օգոստոս ամսից սկսած արտատպում էր Զեյթունի «անցքերին» վերաբերող մանրամասն տեղեկությունները, բացատրում այդ շարժումների համազգային քաղաքական բնույթը, բացահայտում, թե ինչպես Վանի զինված ելույթը, այնպես էլ Ուլնիայի ապստամբությունը բռնկվել էին սուլթանների վարած ազգահալած քաղաքականության, ազգային ճնշումների և սոցիալական հարստահարությունների ուժեղացման պատճառով։ «Արշալույս Այրարատյան», «Մասիս», «Փարիզ» պարբերականների հաղորդագրությունների հիման վրա Տեր-Հարությունյանը կազմում է մի ընդարձակ տեսություն, կոչ անում հնդկահայերին՝ օգնություն կազմակերպել Զեյթունի հերոսներին[27]։

---

25 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 193, վավ. 148, 151, 157, 158։

26 «Կռունկ հայոց աշխարհին», 1862, էջ 780։

27 «Եղբայրասեր», № 23, էջ 185 և հետ.։

«Եղբայրասերը» Զեյթունը դիտում էր իբրև ազատագրական պայքարի ելած հայրենասերների խորհրդանիշ։ Պարբերականը դատապարտում էր Անգլիայի, Թուրքիայի ու Պարսկաստանի քաղաքական կուրսը՝ հզոր աշխարհակալների ձիերի սմբակների տակ տրորվող, դանդաղորեն քայքայվող ու ձուլման ենթարկվող փոքր ազգերի նկատմամբ։

Զեյթունին համակիր էջեր էին նվիրում նաև «Հյուսիս», «Կովկաս», «Մասյաց աղավնի», «Փարիզ», «Մեղու Հայաստանի» և արևելահայ ու աշխարհասփյուռ գաղթօջախների այլ թերթեր։

1864 թ. «Մասյաց աղավնի» պարբերականը հրատարակեց Գևորգ Քանանյանցի «Զեյթունի հայք և զանոնք Կովկաս փոխադրելու առաջարկությունը» հոդվածը[28], ուր առաջարկվում էր զեյթունցիներին գաղթեցնել Ռուսաստան։

Զեյթունի հերոսամարտը ոգևորության աղբյուր հանդիսացավ հայ մտավորականության համար, այն նյութ տվեց հրապարակախոսներին, սյուժե՝ արձակագրին, երգվեց հայրենանվեր բանաստեղծների գրչով։

Ուլնիայի դեպքերը խոր տպավորություն գործեցին քնարերգու բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի վրա։ Քաջատեղյակ լինելով ապստամբության ընթացքին, բանաստեղծը 1862—1863 թթ., հերոսամարտի առաջ բերած ընդհանուր ոգևորության մթնոլորտում, գրեց «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին» Զեյթունին նվիրված երգերի հիանալի շարքը, ինչպես նաև «Եղբայր եմք մեք» բանաստեղծությունը։ Իրար հետ օրգանապես կապված, քառամաս այս դյուցազներգական պոեմի հերոսը Մելիքսեթ Քասմյանն էր, որը կյանքից առավել ազատությունն էր սիրում և ծանր վերքեր ստացավ հայրենիքի ու նրա ազատության համար մղվող պայքարում։

Հիշյալ շարքում կերտված է նաև ազգային-ազատագրական պայքարի մասնակից զեյթունցի կնոջ կերպարը։ Նրանում խտացել է Պեշիկթաշլյանի հավատամքը՝ հայ ժողովրդի քաղաքական վերածնության, հայ պետականության ստեղծման մասին։

Զեյթունի դեպքերը մեծ ազդեցություն ունեցան Ռ. Պատկանյանի վրա։ Հայերի ազգային-ազատագրական շարժմանն արձագանքել է Սմբատ Շահազիզը։ Ջերմ տողեր նվիրելով Իտալիայի ազատագրական շարժման հերոսներին, ոգեշնչվելով նրանց հաղթանակով, նա միաժամանակ մեծարել է Զեյթունի հերոսական ապստամբությունը։ Ազգային-ազատագրական պայքարի միասնություն քարոզող բանաստեղծի տեսադաշտից չեն վրիպել այն դավերը, որ զեյթունցիների շուրջը նյութում էին կաթոլիկ քարոզիչները։ 1863 թ. «Եզվիտներ և Զեյթուն» բանաստեղծության մեջ նա գրում էր.

Զեյթո՜ւն, սրբազան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների հայ ազգ բնակիչ,
Արթո՜ւն կաց,— գիտե՞ս, վրադ է գալի
Եզվիդ ամբոխը, գայլեր գիշատիչ։

28 Տե՛ս «Մասյաց աղավնի», 1864 հունիսի, էջ 186—191։

Նոքա յուրյանց հետ շատ ոսկի ունին,
Նոքա կշռում են դորանով կրոն...
Ականջ չդնես գետնաքարշ լեզվին,
Թքի՛ր լրտեսին,— զինվորվի՛ր Զեյթուն։

Շահազիզի այս տողերը քաղաքական տագնապի ահազանգ էին[29]։ Հեղինակը նպատակ ուներ այլադավան քարոզիչներին զրկել Կիլիկիայում միսիոներական հասկաքաղից, վերացնել ազգային միասնության վրա կախված այդ վտանգը։

Ինչ խոսք, ով կարող էր Զեյթունի փառքն ավելի գովերգել, քան ինքը՝ պայքարող ու նահատակվող, խիզախ ու անվեհեր զեյթունցին։ Զեյթունի ժողովրդական բանահյուսությունը ներծծված է ազատասիրական մտորումներով, մեռնող քաջի գովասանքով, վախկոտի պարսավանքով, մարտական ոգով։ «Քայլերգ Զեյթունի» (Հարություն Չագրյանի), «Երգ զեյթունցվոց», «Զեյթունն անկախ» (Մ. Փորթուգալյանի), «Զեյթունցիներ», «Զեյթունցիք», «Զեյթունցիներուն» և այլ բանաստեղծությունները[30], որոնք երգի են վերածված, գովերգում էին գավառի քաջամարտիկների սխրանքները, ոգևորում Տավրոսի բնակիչներին։

Զեյթունի ապստամբության լուրը թափանցեց հայաբնակ բոլոր անկյունները, ոգևորեց ազատության ծարավի հայ ժողովրդին և խոր ազդեցություն ունեցավ հայ ազատագրական շարժումների հետագա ծավալման վրա։

Հայ ազատագրական շարժման շահերով ապրող առաջադեմ մտավորականները չբավարարվելով միայն գրական-հրապարակախոսական գործունեությամբ, հիմնում են նաև ընդհատակյա քաղաքական խմբակներ, ժողովրդին ազատագրական պայքարի ոգեկոչող ընկերություններ։

Տակավին Ղրիմի պատերազմի օրերին, 1853 թ., Կոստանդնուպոլսից Զեյթուն ուղևորվեց Մելիքյան Հովակիմը։ Զեյթունի անդրանիկ գաղափարական քարոզիչը սկզբում ուսուցչի պարտականություն էր կատարում, սակայն ուներ այլ խնդիրներ ևս։ Հ. Մելիքյանը ինքնապաշտպանական խմբեր էր կազմակերպում, զենք գնում, առավելաբար ազատասիրական գաղափարներ սերմանում, ձգտում ժողովրդին ոտքի հանել սուլթանական լծի դեմ[31]։ Հ. Մելիքյանը նպատակադրվել էր չսահմանափակվել Զեյթունով, այլ կամրջել արևելահայերի ու արևմտահայերի ազատասիրական բաղձանքները, Կովկասից դրամական օգնություն ստանալով՝ զարկ տալ զենքի արտադրությանը։ Մելիքյանը այնպիսի ազդեցություն ուներ, որ Զեյթունի չորս իշխանները նրան կարգում են իրենց ընդհանուր ղեկավար՝ վալի[32]։ Մելիքյանը կառուցել տվեց մի ընդարձակ դպրոց, ռազմական նշանակություն ունեցող ամրություններ և, իր գործունեությունն ընդարձակելու մտադրությամբ ճանա-

---

29 «Հայ նոր գրականության պատմություն», ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտ, հատ. 2, Երևան 1962, էջ 305։

30 «Զեյթունի պատմագիրք», էջ 798—820։

31 Տե՛ս Զեյքուեցի, Զեյթունի անցյալն և ներկայն, մասն Ա, 91—92։

32 *Esat Uras*, Tarihte ermeniler ve ermeni meselesi, 1950, Ankara, էջ 494։

պարհվեց Ռուսաստան՝ հանգանակություն կատարելու։ Սակայն էրզրումում նա ձերբակալվեց ու հրապարակավ կախաղան հանվեց։

Մելիքյանին հաջորդեցին շատերը, սակայն նրանց մեջ առավել ուշադրության արժանի է Եղիա Տնտեսյանը (1834—1881)։ 1862 թ. հուլիսի 24-ին Կ. Պոլսից Ադանայի և Սսի վրայով նա մեկնեց Հաճըն։ Տնտեսյանը հայտնի նրաժշտագետ էր, ուսուցիչ, «Անձնվեր ընկերության» անդամ, որը և Տավրոս մեկնելիս հանձնարարություն ուներ աղատասիրական գաղափարների պրոպագանդ մղել ժողովրդի մեջ։ Հուլիսի 24-ին Ադանայից, սեպտեմբերին Հաճընից Տնտեսյանի գրած նամակներից ակնհայտ է, որ նա պատասխանատու խնդիր լուծելու պարտավորություն ուներ, ինչպես նաև «գաղտնապահ բարեկամներ»[33]։ Հայրենասեր ուսուցիչը Կիլիկիայում, հատկապես Հաճընում ու Զեյթունում, մնաց մինչև 1863 թ. հուլիսի 18-ը[34]։ Տնտեսյանը զեյթունցիներին հայրենասիրական եռանդ ներշնչեց, հանձնեց «Անձնվեր ընկերության» հանգանակած դրամը և մեկ տարի հետո միայն վերադարձավ մայրաքաղաք։

Ե. Տնտեսյանի հետ մերձավոր հարաբերությունների մեջ էր երիտասարդ Գրիգոր վարդապետ Ապարտյանը, որը կապում էր Կ. Պոլիսը Տավրոսի, Տավրոսը՝ Փարիզի հետ։ Անշուշտ հայրենանվեր այս սուրհանդակն էր, որն հիշատակվում է Ս. Թագվորյանի Մ. Նալբանդյանին առաքած հանրահայտ նամակում[35]։

Զեյթունի ապստամբության ղեկավարների, Տավրոսից Պոլիս ժամանած պատվիրակների հետ գործարար կապեր էին պաշտպանում 1860 թ. հիմնված «Բարեգործական ընկերության» անդամների մի մասը, մասնավորապես նրա ձախ թևը։ «Բարեգործականի» ատենադպիր Մկրտիչ Պեշիկթաշլյանը 1862 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մի քանի անգամ ընդունում է Զեյթունից եկած սուրհանդակներին, մանրամասն տեղեկանում գավառի դրության, իր մոտ հավաքում «գաղափարամերձ ամձնավորություններին» և ապստամբներին նյութական օգնություն և բարոյական աջակցություն ցույց տալիս։

Ապստամբությունից որոշ ժամանակ անց Մ. Պեշիկթաշլյանը և Երեմիա Տևկանցը ստանում են երկու նամակ Զեյթունից։ Նամակները Պոլիս էր բերել Տեր Հակոբը, իսկ քիչ անց մայրաքաղաք էր եկել Մնացական Սեմերճյանը (Զեյթունցին)։ Պեշիկթաշլյանը և Երեմիա Տևկանցը ապստամբների սուրհանդակներին մեկ ամիս պահում են Կ. Պոլսում, ապա նոյեմբերի վերջերին տեղի ունեցած պոլսահայ մտավորականների մի ժողովում որոշում են նամակներ ուղարկել Զեյթուն։ Նամակները պատրաստում է Մկրտիչ Պեշիկթաշլյանը՝ խոստանալով օգնություն հասցնել նրանց։ Այս նիստին

---

33 Վ. Զարդարյան, Հիշատակարան, հայ երևելիներու կենսագրությունները, լուսանկարները, ձեռագիրները, գրությունները, հատ. Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 343 և հետ.։

34 Հ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմություն և շրջակա Գոզան-տաղի հայ գյուղերը, Լոս-Անջելոս, Կալիֆորնիա, 1942, էջ 421—424։

35 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 498, տե՛ս նաև «Փարիզ», 1862, № 64։

մասնակցում էր նաև Զեյթունով խանդավառված Պոլսի հայոց պատրիարքարանի նորընտիր դիվանապետ Մատթեոս Մամուրյանը[36]։

1862 թ. նոյեմբերի 16-ին կրկին Պոլիս եկած Գրիգոր վարդապետ Ասպարտյանը, Մ. Պեշիկթաշլյանի բնակարանում, նրա «համակիրներին» տեղեկացնում է Զեյթունում տիրող իրադրության, իշխանների մտադրության մասին։

1862 թ. դեկտեմբերի 12-ին Կոստանդնուպոլիս են ժամանում զեյթունցիների նոր պատվիրակները՝ Տեր-Մովսեսը, Աստվածատուր և Ղազար իշխանները, նրանց սպասավոր Կարապետը[37]։ Այս նոր պատվիրակությունն ավելի հարուստ տեղեկություններ հաղորդեց պոլսահայ առաջադեմ մտավորականությանը, ընդունվեց «Բարեգործական ընկերության» գործադիր ու ղեկավար կազմի կողմից և Զեյթուն տեղափոխեց «Գավառական տառապելոց նպաստի անվամբ» կոչված ընկերության հանգանակած դրամի մի մասը։ Նախքան Զեյթուն մեկնելը պատվիրակությանն ընդունեց պատրիարքական տեղապահ Ստեփանոս Մաղաքյան եպիսկոպոսը։ Պատվիրակության անդամները նրա ընկերակցությամբ այցելեցին արտաքին գործերի մինիստր Ալի փաշային, Մովսես քահանայի միջոցով հաղորդեցին Զեյթունում տիրող դրության մասին[38] և կառավարությանը հանձնեցին Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Մամուրյանի, Ե. Տևկանցի խմբագրությամբ իշխանների կազմած դիմումը։

Այսպիսով, Մնացականի Սեմերճյանի, Մովսես քահանայի, տեր Հակոբի, Տավրոսից եկած այլ հայ պատվիրակների միջոցով Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Հովհաննես ավագ քահանա Մկրյանը, Երեմիա Տևկանցը, երիտասարդ վարդապետ Մկրտիչ Խրիմյանը և նրա սան ու ապագա զինակից Գ. Սրվանձտյանցը ապստամբությունից հետո զեյթունցիների հետ գործարար կապերի մեջ էին։ Պատվիրակների և հայրենասերների մի ամբողջ բույլ էր այդ, որը համահավաքում էր նրանց մեկ ընդհանուր նպատակի՝ ժողովրդի ազատագրման համար։ Այնուամենայնիվ, այս գործիչներն ապստամբների հետ կապեր հաստատեցին կամ արձագանքեցին շարժմանը՝ նրա բռնկումից հետո միայն։

Հայ ազատագրական շարժման պատմության համար հետաքրքիր վավերաթուղթ է Պաղտասար Նորատունկյանի նամակը։ Նորատունկյանը 1862 թ. Փարիզում էր և մասնակցում էր Վ. Լանգլուայի նախագահությամբ Ֆրանսիայի մայրաքաղաքում կազմված, Մարաշի կոտորածների պատճառով տուժած ընտանիքներին օգնություն հասցնող հանձնաժողովի աշխատանքներին, որին անդամակցում էին Կ. Շահնազարյանը, Ա. Մուրադյանը և ուրիշներ[39]։ 1863 թ. Նորատունկյանն անցավ Եգիպտոս, փիչ հետո եղավ Հռոմում, որտեղից և հոկտեմբերի 21-ին Պոլիս առաքեց իր ծրագիր-նամակը՝ Հայաստանի ազատագրման վերաբերյալ։

Նամակում ասվում էր, թե նա տեսակցություն է ունեցել լեհ իշխան Ջարտորիժսկու հետ, որն առաջարկել է հայերից զորախումբ կազմել՝ «ի

---

36 Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 14—20։

37 Նույն տեղում, էջ 26բ։

38 Նույն տեղում, էջ 28ա, տե՛ս նաև «Մասիս», 1862, 22 դեկտեմբերի։

39 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 559։

նպաստ լեհական հեղափոխության»։ Չնայած Նորատունկյանը տեսակցության էր գնացել ֆրանսիացի «հայտնի ծովակալին», նրանից տեղեկացել լեհ հեղափոխականների ծրագրի մանրամասներին, սակայն գաղափարամերձ Մ. Պեշիկթաշլյանի նման վստահություն չէր ցուցաբերում ֆրանսիական ծրագրին, այն է՝ Կ. Պոլսից մարդիկ ուղարկել Բարձր Հայք, այնտեղ կազմակերպել հայ և քուրդ «քաջամարտիկներ», արշավել Վրաստան և Ռուսաստան, բուլացնել ցարական կառավարությանը և դրանով նպաստել Լեհաստանի ազատագրմանը։

Պ. Նորատունկյանը մերժում էր լեհ-ֆրանսիական ծրագրերը, բացասաբար արտահայտվում Բոնապարտի մասին, սակայն դրվատում ֆրանսիական հեղափոխության գաղափարներն ու պայքարի մեթոդները։ Նա առաջարկում էր ապստամբական ոգի ներարկել հայերին, ազգի փրկությունը որոնել նրա սեփական ուժերի մեջ։ Նորատունկյանը տրտնջում էր Նապոլեոնին օգնության դիմողներից, ասելով, որ «Ջեյթունի գործը խայտառակ կերպով վերջացավ», միաժամանակ պահանջում «եռյակներին» սիստեմով ստեղծել ընդհատակյա կոմիտեներ, հիմք դնել Հայաստանի ազատագրումը նախաձեռնող եռանձնյա կամ հինգ հոգուց բաղկացած մասնաժողովի[40]։ «Կարելի է հարցնես թե ո՞վ կարող է այդպիսի ծանր բեռի մը տակ մտնելով, հաջողիլ զասոնք գործադրելու։

Այն ժամանակ պիտի պատասխանեմ. Մեճ և միմիայն հետևյալ հոդվածներն անմիջապես հավատով ընդունելով։ Ա. մասնաժողով մը երեք կամ հինգ անդամներե բաղկացյալ։ Բ. պաշտոնն, ազգիս արտաքին գործերըն վարել։ Գ. նպատակն. Հայաստանի շղթաներն խորտակել»[41]։

Մեծ ակնածանքով էր խոսվում Մ. Պեշիկթաշլյանի մասին։ Հիշյալ նամակը գտնվել է Գ. Սրվանձտյանցի թղթերի մեջ։ Սրանից զատ հայտնի այլ տվյալներ չեն հրապարակվել վերոհիշյալ ծրագրի մասին։ Սակայն այսքանն էլ բավարար է եզրակացնելու, թե Ջեյթունով խանդավառված վերոհիշյալ անձնավորությունները երկնում էին ընդհանուր Հայաստանի ազատագրման ծրագրեր։ Այդուհանդերձ, նրանք նախընտրում էին պայքարի դավադրական մեթոդներ և հեռու էին ազգային-ազատագրական լայնահուն շարժումներ կազմակերպելու մտադրություններից։

1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի օրերին ֆրանսիական կառավարությունը, լեհերին իր շահերին ծառայեցնելու, բանակում զինվորագրելու մտադրությամբ, կրկին հրապարակ հանեց լեհական հարցը։ Նապոլեոն III-ը լեհ վտարանդիներին հավաստիացնում էր, թե Ավստրիայի ու Պրուսիայի դեմ մղվող պատերազմի հաղթական ավարտից հետո Ֆրանսիան կօգնի լեհական վտարանդիներին, կվերականգնի նրանց երկրի անկախությունը։

Ոգեշնչված այս առաջարկով, Կ. Պոլսում և ընդհանրապես Թուրքիայում ապրող լեհ վտարանդիները ջանացին կապեր հաստատել սուլթանից ու ցարական կառավարությունից դժգոհ Կովկասի ժողովուրդների ներկայացու-

---

40 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 561—562, տե՛ս նաև Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 141—142, նամակի տեքստը տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, էջ 57—58։

41 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, էջ 57։

ցիչների հետ, ծրագրեցին վերահաս ապստամբությանը մասնակից դարձնել նրանց. հաղթանակի դեպքում «անկախություն կստանային բոլորը, այդ թվում և հայ ժողովուրդը»։ Գեներալ Իգնատևը 1871 թ. հունվարի 5-ին Կոստանդնուպոլսից գաղտնի խորհրդական Վեստմանին տեղեկացնում էր[42], թե լեհերն արդեն ակտիվ պրոպագանդ են մղում Թուրքիայում ապրող հայերի, վրացիների, նույնիսկ մահմեդականների մեջ, ունեն բազմաթիվ կողմնակիցներ, նրանց միջոցով կապեր են հաստատել Թիֆլիսում, Երևանում, Ղարաբաղում և այլուր խարսխված «կազմակերպության» կենտրոնների հետ։ Կոմիտեի ներկայացուցիչ հայերը և վրացիները իբրև թե հանգանակությամբ դրամ են հավաքում, զինապահեստներ ստեղծում, զենք տեղափոխում ու մթերում, մի խոսքով «նախապատրաստվում ապստամբության»[43]։ 1871 թ. հունվարի 16-ին Կովկասի փոխարքան կայսրին զեկուցում էր, թե Իգնատևի հաղորդագրությունը ոչ ամբողջապես, բայց և այնպես հաստատվում է[44]։

Ցարական կառավարող շրջանները հակահարվածի նախապատրաստություններ էին տեսնում։ Գաղտնի գրություններ էին ուղարկվում Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Քութայիսի, Ելիսավետպոլի, Բաքվի, Ստավրոպոլի, Թերթերի, Կուբայի, Դաղստանի կառավարիչներին։ Զորքը կազմ ու պատրաստ էին պահում, ցարական պահնորդական բաժնի գործակալները վխտում էին ամենուրեք։ Սակայն, ինչպես հայտնի է, նման ապստամբություն տեղի չունեցավ։ Ըստ երևույթին, դրան խանգարեց Ֆրանսիայի պարտությունը։

1870 թ. իրադարձությունների մասնակիցները, որոնք կապված էին լեհերի հետ, կտրված էին ժողովրդից և պայքարի դավադրական, եվրոպացիների «օգնությամբ» անկախություն ստանալու անիրականանալի ու խաբուսիկ մեթոդը դիրադասում էին համընդհանուր ժողովրդական հեղափոխական շարժումներից։

Ձեյթունի ազատագրական շարժման հարցերով առավելապես հետաքրքրվել են Միքայել Նալբանդյանը, Հարություն Սվաճյանը, Սերովբե Թագվորյանը, Հովհաննես Քյաթիպյանը, Կարապետ Փանոսյանը, որոնք արտահայտում էին աշխատավորության շահերը և ձգտում հայ ազատագրական պայքարը շաղկապել համասլավոնական, ինչպես նաև իտալական հեղափոխական շարժումների հետ։

1850-ական թթ. վերջերի, առավելապես 1860-ականների սկզբի հայ ազատագրական շարժման մեջ մեծ դեր է խաղացել հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը։ Նա գաղափարապես լուրջ աշխատանք ծավալեց և՛ արևելահայ, և՛ արևմտահայ հատվածներում։

1862 թ. ցարական ոստիկանության կողմից Նոր Նախիջևանում Մ. Նալբանդյանի տունը կատարած խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք լույս սփռեցին նրա արտասահմանյան գործունեության վրա։ Հայտնի է, որ Մ. Նալբանդյանը 1860 թ. նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 21-ը առաջին անգամ և 1861 թ. նոյեմբերի 20-ից մինչև

42 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 5, ց. 1, գ. 2093, թթ. 1—2։

43 Նույն տեղում։

44 Նույն տեղում, թ. 5։

դեկտեմբերի 27-ը երկրորդ անգամ եղել էր Կոստանդնուպոլսում։ Նա եղել էր նաև Փարիզում, Լոնդոնում, Իտալիայում, Հնդկաստանում։

Ցարական ոստիկանության հայտնաբերած մի նամակից՝ գրված 1862 թ. մայիսի 14-ին, Ս. Թագվորյանի կողմից և այլ փաստաթղթերից պարզվում է, որ Նալբանդյանը կապեր էր հաստատել ռուսական և իտալական հեղափոխական-ազատագրական շարժման ղեկավարների հետ[45]։ Նա մշակել է ծրագրեր Հայաստանի ազատագրման մասին, համաձայնեցրել արտասահմանյան վտարանդի բարեկամների հետ, ստացել նրանց հավանությունը։ Նամակից երևում է, որ Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը և Հ. Քյաթիպյանը խոստացել էին զինված ուժեր կենտրոնացնել մի որևէ տեղ, հավանաբար Կիլիկիայում կամ Պոնտոսի ծովեզրին, գաղտնի խմբակ հիմնել, լրագիր հրատարակել, սվինավոր հրացաններ, թնդանոթներ, ռումբեր, վառոդ արտադրել ու մթերել, դրամ հավաքել, ապստամբություն բարձրացնել։ Բազմաթիվ փաստեր կան ենթադրելու, որ Մ. Նալբանդյանի պոլսահայ բարեկամները կապվելու էին կամ արդեն կապված էին Գերցենի, Մածինիի, Բակունինի և այլոց հետ. նրանց ուշադրությունը սկզբից ևեթ կենտրոնացած է եղել Կիլիկիայի՝ Զեյթունի վրա։

Այսպիսով, Մ. Նալբանդյանին գաղափարամերձ մտավորականները Կ. Պոլսում ծավալել են նաև ընդհատակյա գործունեություն, խոստացել հիմնել գաղտնի կոմիտե, կատարել Եվրոպայի ու Ռուսաստանի ազատագրական պայքարի ղեկավարներին իրենց ուսուցչի տված խոստումները։ Զեյթունի հերոսական ապստամբությունից ամիսներ առաջ Մ. Նալբանդյանը և նրա պոլսահայ բարեկամները մտահոգվել էին տավրոսահայության բախտով, դրամ էին հավաքել ու հանձնել նրանց, հնարավորություն ընձեռել՝ զենք գնելու համար։

Պարզվում է, որ Ս. Թագվորյանը բանակցություններ է վարել Զեյթունում ազատագրական շարժումներ կազմակերպելու վերաբերյալ, այդ նպատակով էլ դրամ է հանձնել Կիլիկիայից Կ. Պոլիս եկած վարդապետին՝ զենք, զինամթերք գնելու և այնտեղ փոխադրելու համար։ Ինչպես Մ. Նալբանդյանը, այնպես էլ Պոլսում եղած «քսան-երեսուն» մտավորականները 1862 թ. գարնանը տեղյակ են եղել Զեյթունի իրադարձություններին և ձգտել են Տավրոսի ու մայրաքաղաքի հայության մեջ կապեր ստեղծել։ Հատկանշական է, որ Նալբանդյանն ուսումնասիրում էր Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում վառոդ պատրաստելու տեխնիկան, մի բան, որ իրեն, ըստ երևույթին, պետք պիտի լիներ առաջիկայում[46]։

Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի և այլոց՝ Զեյթունի հետ ապստամբությունից առաջ ունեցած կապերի կամ Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժումներ կազմակերպելու օգտին է խոսում ծածկագիր այն բառարանը, որը կազմվել էր հավանաբար Կ. Պոլսում, արևմտահայերեն, և բաժանվել գործին մասնակից, տարբեր քաղաքներում ու եր-

---

45 *Տե՛ս* Մ. Նալբանդյան, *Անտիպ երկեր, խմբագրությունը և կոմենտարները* Աշոտ Հովհաննիսյանի, *Երևան—Մոսկվա, 1935, էջ 442 և հետ.։*

46 *Տե՛ս* Մ. Գ. Ներսիսյան, *նշվ. աշխ., էջ 137—138։*

կրոններում ապրող հայ դեմոկրատներին, իրար հետ նամակագրական կապեր պահպանելու նպատակով։ Մածկագիրը Մ. Նալբանդյանի թղթերում հայտնաբերել է ցարական ոստիկանությունը, որի բառացանկում գտնում ենք. «վաճառականության տուն մը բանալ —Ջorf կենտրոնացնել և շատցնել տեղի մը մեջ։ Սեղանավոր մը ունենալ տեղի մը մեջ —Քոմիքե ունենալ տեղի մը մեջ։ Քրիդիթ ունենալ —Լրագիր հաստատել տեղի մը մեջ։ Սամսոնի բարեկամ —Ռուս։ Լոնդոնի բարեկամ —Հերցեն։ Ճենովայի բարեկամ —Իթալիա։ Լիվոռնոյի բարեկամ —Կարիպալտի։ Պոլսո բարեկամ —Տաճկաստան։ Հիվանդ —Հայաստան։ Բամբակ —Կիլիկիա։ Փարիզի բարեկամ—Ջարտոռիժսկի։ Պարոն Մարտիրոս —Մածծինի։ Պարոն Ալմինքար —Պաֆուենի։ Ժամացույց —Սվիճավոր հրացան։ Քրոնոմեթր —թնդանոթ։ Ալյուր —վառոդ։ Շորյան —ռումբ։ Բեքոլթեն (հունձք—խմբ.) առաջ ստակ տալ երկրագործաց կամ վաճառականաց —Ազգայնություն զարթեցնել տեղի մը մեջ։ Պաղ բռնել կամ ապրանք մը գնելու համար ինքը զինքը հոժարամիտ չցցնել —Ապստամբություն (ընդգծումները մերն են խմբ.)»[47]։

Բառերի այս բացատրությունները գալիս են լրացնելու Ս. Թագվորյանի նամակը և վկայում են, որ Մ. Նալբանդյանն ու արևմտահայ դեմոկրատները մտադրվել էին արևմտահայության մեջ ծավալել հայրենասիրական գաղափարներ և ժողովրդին զինելով՝ կապել Լոնդոնում գործող ռուս հեղափոխական դեմոկրատների, ինչպես նաև իտալական ազատագրական շարժման գործիչների՝ հատկապես Մածծինիի հետ։

Ենթադրվում է, որ Պոլսում ստեղծվել է նաև «Մասոնական օթյակ», որը ղեկավարել է Ս. Թագվորյանը կամ Հ. Սվաճյանը։

Մասոնական կազմակերպություններ ստեղծվեցին նաև Զմյուռնիայում։ «Տիգրան» ժողովարանը հիմնվեց «Օտտո-Ֆելոզից»՝ «Հայկ կամ Օրիոնից» հետո, նրանից անկախ և անմիջականորեն ենթարկվում էր Մանչեստրի բաժանմունքին[48]։ 1864 թ. Պոլսի Գում-Գափու թաղամասում հիմնվեց «Արամ» ժողովարանը[49]։ Անգլիական մասոնությանը ենթարկվող բոլոր այս կազմակերպությունները էլ հեռու էին նալբանդյանական կոմիտեներ լինելուց։ Սակայն եղել են մտավորականների խմբեր, որոնք կազմակերպություն են ստեղծել 1866 թ., ունեցել են դեմոկրատական կազմ և գործել են գաղտնի։

XX դարի քսանական թթ. սկզբներին Կոստանդնուպոլսի մի նպարավաճառի խանութում, պատահաբար, Ռուբեն Բերբերյանի ձեռքն է ընկնում սևագիր թղթերի մի կապոց, որը պարզում էր մայրաքաղաքում հիմնված «Սեր» ընկերության գործունեությունը, բացահայտում նրա մասնակիցների կազմը, հետապնդած նպատակները, կապը դրսի երկրների հետ։

Ըստ Բերբերյանի հրապարակած վավերագրերի, «Սեր» օթյակը գաղտնի «ֆրեր-մասոնական» կազմակերպություն էր։ Այն հիմնվել էր 1866 թ. մայիսի 7-ին, Պոլսի Գուլե Գափու թաղի Եազըճի փողոցի № 21 տանը։

«Սեր» օթյակն ուներ անդամների բավական մեծ թիվ։ Ընտրվել էր գոր-

47 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1949, էջ 283—284։

48 «Արշալույս Արարատյան», 1866, № 795։

49 «Մասիս», 1864, № 654։

ծադիր և ղեկավար մարմին՝ հանձին Մատթեոս Մամուրյանի (եղբայրության հոգևոր), Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի, Ե. Տնտեսյանի, Ս. Հեքիմյանի, Ռոմանոս Սեռոբեճյանի, Մ. Երեմյանի, Էքզեշյանի։ Իբրև հյուրեր կանչվում էին Գր. Չիլինկիրյանը, Հ. Նորատունկյանը, որոնց մասնակցությունը պատեհադիպ բնույթ էր կրում Կ. Պոլսում քիչ լինելու պատճառով։ 1867 թ. ընդունվեցին նաև երեք նոր անդամներ՝ բողոքական Ղազարոս Դավուտը, հայ ազգային միությունների վարչության անդամ Սիմոն Մաքսուտ բեյը և ընարերդու բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը[50]։

«Սեր» ընկերության նշանաբանն էր՝ գիտություն, աշխատանք, ազատություն, եղբայրություն, իսկ քիչ հետո ընդունվեցին ֆրանսիական հեղափոխության կոչերը՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն։

«Սեր» ընկերության ժողովներում լսվում էին զեկուցումներ։ 1866 թ. հունիսի 5-ին Մամուրյանը «Սեր» ընկերության դռնփակ նիստում կարդաց «Միքայել Նալբանդյանց» զեկուցումը, որը «Մ. Մ.» ստորագրությամբ տպագրվեց «Ծաղիկ» հանդեսի նույն թվականի հուլիսի 15-ի համարում։

Այսպիսով, 1860-ական թթ. Թուրքիայի առափնյա քաղաքներում կազմակերպված մշակութային բազմաթիվ ընկերությունների կողքին հիմնվել է նաև գաղտնի ընկերություն, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանի ոչ միայն լուսավորությունը, տնտեսական զարգացումը, այլև քաղաքական ապատադրումը։ Նույն տարիներին Մոսկվայում, Բաքվում, Թիֆլիսում ևս հիմնադրվում են մշակութային մի շարք ընկերություններ, աշակերտական խմբակներ, որոնց մասնակիցների մեջ կային նաև դեմոկրատական հովերով տարված մտավորականներ։

Ժողովրդին ազգային-ազատագրական պայքարի ոգեկոչող խմբակներ են հիմնադրվել նաև Արևելյան Հայաստանում, մասնավորապես Ալեքսանդրապոլում։ Սահմանամերձ այս քաղաքն, ունենալով արհեստավորական բազմաթիվ կազմակերպություններ, առևտրական մերձավոր կապեր Թուրքիայի հետ, քաջատեղյակ էր սուլթանների մագիլներում խոշտանգվող արևմտահայ եղբայրների դրությանը։

1868 թ. հունիսի 1-ին Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցին կից բացվում է «Որբախնամ» ընկերությունը, որն ուներ 100 անդամ և միավորում էր քաղաքական տարբեր հայացքներ ունեցող անձնավորությունների։ 1869 թ. սկզբներին «Որբախնամ»-ը պառակտվում է. նրա ձախ թևին պատկանող անդամների նախաձեռնությամբ ապրիլ ամսին հիմնադրվում է «Բարեգործական ընկերությունը»։ Ընկերության նախաձեռնողն ու ղեկավարը տեղի մասնավոր դպրոցի ուսուցիչ Արսեն Կրիտյանն էր, նրա օգնականը՝ Պետրոս Հայկազունին[51], որոնք իրենց շուրջն էին համախմբել 43 անդամների և ձևավորել «Բարեգործական»։ Այդ ընկերության մեջ ընդգրկված էին ուսուցիչներ, աշակերտներ, արհեստավորներ, ծառայողներ։ «Բարեգործականն» ուներ իր կանոնադրությունը, Ալեքսանդրապոլում և նրա մերձակայքում գաղտնի ժո-

50 Տե՛ս Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 519—524։

51 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 119—164, տե՛ս նաև Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 141—146։

ղովներ էր գումարում, քննարկելով հայ ժողովրդին այդ պահին հուզող քաղաքական ազատագրության, ինչպես նաև հայոց լեզվի, գրականության, պատմության դասավանդման, դպրոցական ուսուցման և այլ խնդիրներ։

Ընկերությունը հետաքրքրվում էր Արևմտյան Հայաստանի ճակատագրով, ձգտում այնտեղ ապստամբական շարժումներ կազմակերպել, ժողովրդին ոտքի հանել սուլթանական բռնապետության դեմ։ Ա. Կրիտյանը չափածո տողերով երանի էր տալիս այն մարդկանց, որոնք կարող էին ազատ ու անկաշկանդ ապրել իրենց հայրենիքում։ Նա հայերին կոչ էր անում. «Մի՛ հապաղեք հայեր շարժվելու դեպի Հայաստանի կենտրոնը», իսկ Հայաստանի կենտրոն ասելով Արսեն Կրիտյանը հասկանում էր Վասպուրականը։ Ընկերության անդամ Պետրոս Հայկազունին այդ նույն նպատակով անցավ Արևմտյան Հայաստան, ճանապարհորդության ընթացքում ուսումնասիրեց երկիրը, վերադարձին հանգանակություն կատարեց՝ գենք գնելու և այնտեղ առաքելու նպատակով։

«Բարենպատակ ընկերության» անդամները կապերի մեջ էին Կոստանդնուպոլսի հայ առաջավոր մտավորականների հետ։ Նրանք Հ. Ներսիսյանի միջոցով այնտեղից ստանում էին գրականություն, պարբերական մամուլ, մասնավորապես Ռուսաստանում արգելված գրքեր, այդ թվում Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։

«Բարենպատակ ընկերությունը» գործեց շուրջ վեց տարի, գոյություն ունեցավ մինչև 1875 թ. ապրիլ ամիսը, երբ Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին հայտնաբերեց խմբակը[52], խուզարկություններ կատարեց, ձերբակալեց ընկերության գրեթե բոլոր անդամներին։ Մեկ տարի անց կայացվում է համեմատաբար մեղմ դատավճիռ, հավանաբար այն պատճառով, որ «Բարենպատակին» գործունեության սուր ծայրն ուղղված էր մի պետության դեմ, որին Ռուսաստանը բարյացակամորեն չէր վերաբերվում։

Այսպիսով, 1850-1860-ական թթ. հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական ակտիվ գործողությունների սկզբնավորման տասնամյակներ էին։ Սակայն գործող խմբակները տակավին իրար հետ շաղկապված չէին։ Մտավորականությունը կտրված էր գավառից, անհրաժեշտ չափով տեղյակ չէր ժողովրդի վիճակին և կապված չէր նրա հետ։ Այդուհանդերձ, Ջեյթունի 1862 թ. ապստամբության արձագանքը Հայաստանի երկու հատվածներում, աշխարհասփյուռ հայ գաղթօջախներում, գաղտնի կազմակերպությունների երևան գալը պատահական չէին։ XIX դարի երկրորդ կեսին զգալի տեղաշարժեր կատարվեցին երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, ուժեղացան տնտեսական, կուլտուրական-գաղափարական կապերը երկու հատվածների միջև. Թուրքական բռնապետական լծից արևմտահայության ազատագրման խնդիրն արդեն հուզում էր ողջ հայ ժողովրդին, ուժեղանում էր նրա ազգային կոնսոլիդացիայի պրոցեսը, որն իր հերթին նպաստում էր համազգային մշակույթի զարգացմանը։

---

52 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 163—164։

1850—1860-ական թթ. ձևավորվեց և քաղաքացիության իրավունք ստացավ հայ աշխարհաբար գրական լեզուն իր երկու՝ արևելահայ և արևմտահայ ճյուղերով։ Լուսավորական համազգային շարժումը հաղթանակ տարավ գրաբարի, կղերա-ֆեոդալական մտայնության դեմ։ Ձևավորվեց ու զարգացավ աշխարհաբար, աշխարհիկ գրականությունը, բարեփոխվեց հայկական դպրոցը, հիմնադրվեց ազգային թատրոնը, ստեղծվեց հայկական անդրանիկ օպերան, նոր հուն ընտրեց գրատպությունը։

Հայ մտավորականությունը, հատկապես դեմոկրատ գործիչները, տոգորվում են ազգային գաղափարներով, մշակում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսություն, քաղաքական կապեր են դարբնվում արևելահայ ու արևմտահայ հատվածների միջև։ Այսպիսով, հիշյալ տասնամյակների «կուլտուրական վերածնությունը», հայ ազգության կազմավորման, ժողովրդի գաղափարական հասունացման, գրական-կուլտուրական վերելքի արտահայտություններն էին՝ այն դեպքում, երբ սուլթանական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժումն ընդունում էր համազգային ձև և համադեմոկրատական բովանդակություն։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ հասարակական-քաղաքական ու ազատագրական շարժումները ծավալվում էին ոչ միայն Կիլիկիայում, գաղութահայ օջախներում, այլև Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում։ Մուշի, Վանի, Կարինի, Դերսիմի հայ ռայան բողոքագրերով, ցույցերով ու զինված ելույթներով դիմագրավում էր սուլթանական բռնապետությանը, քուրդ ցեղապետերի հարկային ճնշումներին, կրոնական խտրականությանը, իր ֆիզիկական գոյությանը վերջ տալու ահավոր փորձերին։ Ջնախապատրաստված, անկազմակերպ և տարերային ձևով ոտքի էր կանգնում Արևմտյան Հայաստանի հայ աշխատավորությունը, զենքը ձեռքին պաշտպանում իր պատիվն ու իրավունքը։ Այս առումով ուշագրավ փորձեր է արել Վանի հայ ազգաբնակչությունը։

Վասպուրականն Արևմտյան Հայաստանի սիրտն էր, նրա հայաշատ և համեմատաբար լուսավորված գավառը։ Հայրենիք վերադառնալով, Մ. Խրիմյանը իր հետ գավառ բերեց պարբերաթերթերի հրատարակելու, դպրոց բացելու մտահղացում։ Նա Վարագում հիմք դրեց տպագրական գործին։ Մ. Խրիմյանի ու Գ. Սրվանձտյանցի «Արծվի Վասպուրական», «Արծվիկ Տարոնո» պարբերաթերթերը հայրենիքում լույս տեսնող անդրանիկ հանդեսներն էին, որոնց շուրջը համախմբվեց գավառահայ նորաստեղծ մտավորականությունը։

1860-ական թթ. թուրքական կառավարող շրջանները ավելի խստացրին ազգային ճնշումներն ու հալածանքները, որոնց ի պատասխան ծայր առավ Վանի 1862 թ. զինված ելույթը։ Նույն թվականի փետրվարի 26-ին «Փարիզ» պարբերականը գրում էր. «Հայաստանի Վան քաղաքի մեջ տաճիկ զինվորները քրիստոնեից խաչը վիրավորելու համար կռիվ եղավ ու միջնաբերդն առնվեցավ։ Երկու կողմեն մեռելոց և վիրավորելոց թիվը հազարի կհասնի»[53]։

---

53 «Փարիզ», 1862, № 62, 28 փետրվարի։

Վանի ելույթի լուրն անմիջապես տարածվեց հայկական մի շարք գաղթօջախներում։ 1862 թ. ապրիլի 5-ին հնդկահայ պարբերականներից «Ծղրայրասերը» հաստատում էր նախորդ հոդվածագրերի հայտնած տեղեկությունները Վանի անցքերի մասին և բանակոիվ մղում նրանց դեմ, ովքեր սուտ էին համարել հրապարակված լուրը[54]։ Մոսկվայում հրապարակվող «Համբավաբեր Ռուսիո» լրագիրը նույն թվականի հունիսի 10-ին գրում էր Վանի ելույթի մասին։ Բաղեշի հոգևոր առաջնորդ Երեմիա վարդապետը 1862 թ. Վան գնալու մտադրություն ունենալով հետագայում գրել է հետևյալ տողերը. «կարնեցի և բաղեշցի բարեկամք մեր աղաղակեցին և հորդորեցին բնավ չհանդիպել ի Վան, որ զբաբելոն ծփայր ի սաստիկ խռովութենե...»[55]։

Թեոդոսիայի «Ռադուգա» (Միածան) լրագիրը ապրիլի 18-ին տպագրում էր Կ. Պոլսից ստացված մի թղթակցություն, որտեղ հանգամանորեն խոսվում էր Վանի զինված ելույթի, նրա սկսման դրդապատճառների և ընթացքի մասին։

«Ռադուգայի» արևմտահայ թղթակիցը պատմում էր, որ մինչև «Թանզիմաթը» թուրքահպատակ քրիստոնյաները հուշարկավորության ժամանակ ստիպված էին հանգուցյալի առջևից խաչ և խաչվառ տանելու իրավունքից։ Սակայն Վանի հայերը «Թանզիմաթից» առաջ և հետո հուշարկավորությունը կատարում էին ավանդական ծեսով, բոլորովին չերկնչելով մահմեդականների սպառնալիքներից։ Աբդուլ Մեջիդի մահվանից հետո տեղի թուրքերը ներկայացուցիչներ ուղարկեցին Վանի փաշայի մոտ և պահանջեցին «զսպել հայերին», վերջ տալ հուշարկավորության այդ ձևին, այլապես իրենք կկոտորեն նրանց։ Լուրն իսկույն տարածվեց քաղաքով մեկ։ Հայերը, մի վարդապետի միջոցով, տեղեկացրին փաշային, որ եթե նա թուրքերին թույլ տա իրենց վրա հարձակվելու, օգնության պիտի կանչեն «... բարեկամ քրիստոնյա քրդերին»[56]։

Փաշան խոստանում է կանխել այդ եղեռնը։ Սակայն, կարճ ժամանակից հետո, մահանում են և՛ այդ փաշան, և՛ հայ հարուստներից մեկը։ Հուշարկավորության ժամանակ մոլլաների կողմից «գրգռված տաճիկների» ամբոխը հարձակվում է հայերի վրա, որի պատճառով տեղի է ունենում ընդհարում։ Վանի և շրջակայքի զինված հայերը պաշտպանեցին հուշարկավորության մասնակիցներին։ Նրանց մեջ կային նաև քրիստոնյա քրդեր, որոնք եկել էին շրջակա գյուղերից։ «... Բուն բերդի մեջ սկսվեցավ ձեռամբարձի սոսկալի կռիվը (ծեծք) և կոտորած։ Բերդը մնաց հայերի ձեռքում, որովհետև նրանք թվով շատ էին տաճիկներից։ Ասում են՝ այս և այն կողմից շատ մարդիկ սպանվեցան և վիրավորվեցան, բայց նոցա թվույն վերա լսված համբավները շատ տարաձայն են»[57]։

«Ռադուգայի» Կ. Պոլսի թղթակցի հոդվածը թարգմանաբար տպագրվեց

---

54 «Ծղրայրասեր», 1862, № 4, ապրիլի 5, էջ 30։

55 Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 49ա։

56 «Радуга», 1862, 15 ապրիլի։

57 Նույն տեղում։

«Համբավաբեր Ռուսիո» պարբերականում[58]։ Նույն հոդվածը արտատպեցին եվրոպական մի շարք թերթեր, ինչպես նաև «Փարիզ» պարբերականը[59]։

1860-ական թվականներին Արևմտյան Հայաստանում, մասնավորապես նրա քրդախառն հայկական գավառներում՝ Մուշում, Քղում և Ջարսանջակում, քուրդ ցեղապետերի և հայերի միջև զինված ընդհարումներ եղան։ 1863 թ. Մուշի քուրդ բեկերի կատարած անարդարությունների դեմ սկսվեց հայ ազգաբնակչության բողոքը, որը հետագայում վերածվեց զինված ելույթի։ Մուշի ելույթի մասին մահմեդականացած եվրոպացի զինվորականներից Ֆ. Միլլինգենը իր հուշերում պատմում է, թե «Մշո գավառի բազմամարդ հայ բնակչությունը 1863 թվականին բացահայտ ապստամբություն բարձրացրեց իր հարբսստահարիչների դեմ»[60]։ 1863 թ. ելույթից հետո մշեցիները պատվիրակություն ուղարկեցին Պոլիս՝ Բ. Դռանը բողոքելու։ Ցուստ փաշան անհետևանք թողեց նրանց բողոքը, դրա համար էլ պատվիրակները վերադարձան՝ սպառնալով հեռանալ Վրաստան կամ Ռուսաստան։ Մեծ վեզիրը զայրացած հայտարարեց, կարող են գնալ, ուր որ ուզեն և որ ռուսական սահմանները միանգամայն բաց են նրանց համար։ Հայտարարությունից հետո 300 հայ ընտանիք որոշեց գաղթել Ռուսաստան։

Մուշի 1863 թ. ժողովրդական ելույթի մասին հայտնի են միայն կցկտուր տեղեկություններ։ 1865 թ. Կ. Պոլսի Ազգային ժողովը արձանագրում էր. «երբ քաղաքական ժողովը վարչության ղեկը ձեռք առավ, նկատեց, որ իր նախորդին տնօրինմամբ Մուշի ծանր խնդիրը գրեթե լուծված էր»[61]։ Մուշի «ծանր խնդիրը» 1863 թ. ելույթն էր, որն ուղղված էր աշիրաթապետերի դեմ։ Տարիներ հետո Մ. Իզմիրլյանը գրում էր, թե՝ կառավարությունը Մուշի սահմանակից ցեղապետերին «ձերբակալելով՝ նույն երկրեն հեռացուց, և ասով ժողովրդյան աշխատությանը մեծ դյուրություն ընծայեց, սակայն այդ աքսորյալ գլխավորներեն ոմանք սկսան վերադառնալ նույն երկիրը, որով ավելի ևս կենդանացավ և գրգռեցավ ասոնց բարբարոսությունը»[62]։

1862 թ. սկսած էրզրումի վիլայեթի Քղի գավառում ևս տեղի ունեցան բողոքի ցույցեր՝ ուղղված տեղի ցեղապետերի դեմ։

Ղրիմի պատերազմից հետո, ինչպես ողջ էրզրումի վիլայեթում, այնպես էլ Քղիի և Երզնկայի գավառներում տեր ու տնօրեն էին դարձել քուրդ էմիրները։ Սրանք ինքնիշխան կերպով կառավարում էին Քղիի և Երզնկայի գավառները, հաշվետու և հարկատու չլինելով ո՛չ կենտրոնական կառավարության և ո՛չ էլ էրզրումի վիլայեթի բուրք կառավարիչներին։

Քղիի քուրդ աղաները բռնագրավել էին հայերի հողակտորները, հափշտակել անասունները։ Հարստահարված քրիստոնյաները դրամ են հավաքում և Կ. Պոլսի դատարանում դատ սկսում հարստահարիչ քուրդ բեյերի դեմ։ Այդ բեյերը 1863 թ. Կ. Պոլսում դատվեցին և աքսորի դատապարտվեցին։

---

58 «Համբավաբեր Ռուսիո», 1862, № 21։

59 «Փարիզ», 1862, № 26։

60 Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 124։

61 «Ատենագրություն ազգային ընդհանուր ժողովոյ», հ. Ա, Կ. Պոլիս, 1865, («Տեղեկագիր քաղաքական ժողովո, կեդրոնական վարչության առ ազգային ընդհանուր ժողովն»), էջ 26։

62 Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 616։

Սակայն երկու տարի հետո նրանք վերադարձան իրենց տեղերը և շարունակեցին ասպատակությունները[63]։ Զեյթունի և Վասպուրականի ապստամբություններից գազազած սուլթանական կառավարությունը այժմ հովանավորում էր քուրդ աղաներին, նրանց գրգռում հայերի դեմ։ Բ. Դուրը նրանց ձեռքն է հանձնում էրզրում—Դիարբեքիր ճանապարհաշինարարության համար հայերից և մյուս ազգություններից բանվորներ հավաքագրելու գործը։ Օգտվելով այդ հովանավորությունից, քուրդ աղաները խոշտանգում էին դնում ճանապարհաշինարարության համար հավաքագրվող բանվորների միշև, հայերին աշխատանքի էին ուղարկում ավելի հեռու վայրեր, նույնիսկ չվճարելով կոպեկներ կազմող նրանց աշխատավարձը։

Այս ծանր պայմանների պատճառով 1868 թ. Քղիի գավառի հայերը հրաժարվեցին աշխատող ձեռքեր տալ էրզրում-Դիարբեքիր ճանապարհի շինարարության համար[64], կազմեցին բողոքագրեր և ուղարկեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ու Ազգային ժողովին։ Քաղաքական ժողովի ըմբոստ երեսփոխանների պահանջով երկու դիմում ուղարկվեց Բ. Դուռ, որտեղ պատմվում էր հայերի կրած ճնշումների ու հարստահարությունների մասին։

Դիմումները մնացին անպատասխան։ Հայերը ստիպված եղան նոր դիմումներ ուղարկել սուլթանի պալատականներին, հատկապես մեծ վեզիրին։ Տեսնելով, որ անընդմեջ բողոքագրեր են ստացվում, մեծ վեզիրը հայկական պատրիարքարանին է ուղարկում պատասխան գրություններ, որոնք լի են առաջնորդարանին, հոգևորականությանը և ժողովրդին արված սպառնալիքներով։

Կառավարության՝ հայոց պատրիարքարանի և Քղիի հոգևոր առաջնորդի վրա բարդած մեղադրանքներից երևում է, որ Մելքիսեդեկ վարդապետն է հրահրել քղեցիներին՝ հրաժարվել պարհակ կատարելուց, ապա հայերից հավաքել է մի մեծ խումբ, մեկնել էրզրում և բողոքել վիլայեթի կառավարչին։ Ջգոհացնող պատասխան ստանալով, նա մեկնել է Կ. Պոլիս՝ գավառում կազմված բողոքագրերը արքունիք հասցնելու[65]։

Նոր բազմաթիվ բողոքագրերից զայրացած Բ. Դուռը կարգադրում է բռնի ուժով բանվորներ վերցնել, իսկ ըմբոստներին պատժել։ Տեղի են ունենում զինված ընդհարումներ։ Կ. Պոլիս են կանչում քուրդ էմիրներին, բայց նրանք չեն ներկայանում։ Կառավարությունը, անտեսելով հայերի պահանջները, Քղիի 1868 թ. «միջադեպի» մեղքը ամբողջությամբ բարդում է Ազգային ժողովի երեսփոխանների վրա։

Սուլթանի ներկայացրած մեղադրանքներից սարսափած՝ Ազգային ժողովի տատանողական դիրք բռնող երեսփոխանները մեղանչական գրություններ են հղում կառավարությանը։ Փոխադարձաբար իրար ուղղված բազմա-

---

63 «Ատենագրություն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ», հ. Բ, Կ. Պոլիս, 1870, («Տեղեկագիր քաղաքական ժողովո կեդրոնական վարչութեան 1870—1871 ամի առ ազգային ընդհանուր ժողովն»), էջ 15։

64 «Ատենագրություն...», հ. Բ, «Համարատվություն ազգ. կեդրոնական վարչության 1872—1873 ամի առ ազգային ընդհանուր ժողովն», էջ 16։

65 Նույն տեղում, էջ 17։ Այս փաստաթղթերը տպագրված են հայատառ թուրքերենով, որոնք հայերեն է թարգմանել Ա. Սաֆրաստյանը։

թիվ գրություններից, որոնք հայատառ թուրքերենով տպագրված են Ազգային ժողովի արձանագրությունների մեջ[66], դժվար չէ եզրակացնել, որ Քղիի դեպքերի շուրջը եղած վիճաբանությունը շարունակվել է մինչև 1872 թվականը[67]։

1860-ական թվականներին քուրդ ցեղապետերի դեմ բազմաթիվ բողոքներ են ուղարկվել մայրաքաղաք նաև Դիարբեքիրի վիլայեթի Չարսանջակ գավառից։ Չարսանջակը, Բալուի հետ միասին, Դիարբեքիրի վիլայեթի մեջ մտավ 1865 թ. վարչական բաժանումների ժամանակ և շարունակեց մնալ նրա կազմում մինչև Բեռլինի վեհաժողովը[68]։

Գավառի հայ և քուրդ ազգաբնակչությունը խառն էին բնակվում։ Աշխատավորական խավերն առլում էին բարեկամական մթնոլորտում։ Դերսիմի և Չարսանջակի քրդերը լավ հաճախորդներ էին առևտրական հայերի համար։ Նրանց մեջ տարածված էր, այսպես կոչված, «քիրվայությունը», մի սրբազան ուխտ, որը հաճախ բարձր էր դասվում եղբայրությունից[69]։ Հայ և քուրդ աշխատավորության միջև սկսված բարեկամությունը գնալով խորանում էր։ Սակայն, հակառակ աշխատավորների շահերի, Դերսիմի ու Չարսանջակի քուրդ վերնախավը խլել էր հայերի հողերը և երբեմնի սեփականատերերին դարձրել իր մարաբաները։

1860-ական թվականների սկզբներից Չարսանջակի հայերը նման ծանր դրությունից դուրս գալու տքնաջան փորձեր էին կատարում։ Նրանք Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին և թուրք պալատականներին բազմաթիվ բողոքագրեր ուղարկեցին, ապա ծայր առան ժողովրդական ելույթներ՝ ուղղված քուրդ ցեղապետերի դեմ։ Ժողովրդի հիմնական պահանջն է եղել վերադարձնել այն հողերը, որոնք հայերի կողմից ժառանգաբար օգտագործվել են իբրև մասնավոր սեփականություն։

Չարսանջակի դեպքերի մասին հարուստ տվյալներ են պահպանված Կ. Պոլսի Ազգային ժողովի արձանագրությունների մեջ։ Այդ փաստաթղթերից պարզվում է, որ շարժումը սկսվել է ոչ թե 1865 թ., այլ դրանից բավական առաջ, նույնիսկ 1860 թ.։ 1872 թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսի պատրիարքարանը Բ. Դռանը ուղղած բողոքագրում Չարսանջակի խնդրի կապակցությամբ գրում էր. «Չարսանջակի գավառում բնակվող հայ ազգային մարդկանց պապենական սեփականություն եղող տունը և պարտեզն ու արտերը մուսուլման հպատակներից՝ գյուղական աղաների կողմից գրավված լինելու և հայ ազգի մարդկանց իբրև վարձակալ համարելով նրանցից հարկեր և այլն պահանջելով նեղություն և ճնշում է գործադրվել, գործը հանձնվել է դատարան, վեճը գնալով ուժեղացել է հայերի և բեյերի միջև։ Այն 10—12 տարուց ի վեր շարունակվում է հայ ժողովրդի մարդկանց և նրանց ճնշող քայքայողների միջև»[70]։ Վեճը ավելի սուր կերպարանք ստացավ 1865 թ., երբ Չարսանջակի հայ բնակչությունը ենթարկվեց նոր հարստահարության, որի հետևան-

66 «Ատենագրություններ...», հ. Բ, էջ 16—23։

67 Նույն տեղում, էջ 21։

68 Տե՛ս Գ. Երեմյան, Պատմություն Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 147։

69 Նույն տեղում, էջ 137։

70 «Ատենագրություններ երեսփոխանական ընդհանուր ժողովոյ», հ. Բ, էջ 15—16։

քով ոտքի կանգնեց Դիարբեքիրի հայ հասարակությունը և որոշեց 24 հոգուց բաղկացած պատվիրակության միջոցով բողոքագրեր ներկայացնել սուլթանին և նրա պալատականներին։ 1865 թ. մարտի 31-ին բողոքագիրը Աբդուլ-Ազիզին հանձնվեց, որն իր հերթին այն ուղարկեց «փոխանորդին»՝ Ֆուատ փաշային։ Հայատյաց Ֆուատը, փոխանակ ունկնդրելու հպատակների բողոքի ձայնին, նրանցից 15-ին բանտարկեց և մեկ շաբաթ հետո միայն արձակեց, պայմանով, որ վերջիններս անմիջապես վերադառնային իրենց տեղերը[71]։ Հուսահատված չարսանջակցիները ներկայացան Կ. Պոլսի Ազգային ժողովին։ Նրանց տված տեղեկությունների համաձայն կազմվեց ընդարձակ բողոքագիր և առաքվեց Ասիայի կայսերական բանակի հրամանատար Դերվիշ փաշային։

Հիշյալ բողոքագրում պատմվում էր, թե չարսանջակցիները 1860 թ. ըսկըսած վեճի ու պայքարի մեջ են գավառում նստած ցեղապետերի հետ։ Չարսանջակցիները պահանջում են Կ. Պոլիս կանչել 7 ցեղապետերին և դատ բացել նրանց դեմ, մանավանդ, որ հայերի իրավացիությունն է հաստատում Դերվիշ փաշան[72]։ Սակայն այս բողոքագրերը ևս սովորականի նման մնացին անպատասխան։

Չարսանջակցիները ստիպված դիմեցին ամենայն հայոց կաթողիկոսին։ 1867 թ. հունվարի 20-ին նրանք վերջինիս ուղարկեցին մի աղերսագիր, որը լի էր գավառի հայերի անելանելի դրությունը նկարագրող սրտաճմլիկ փաստերով[73]։ Կաթողիկոսը պատասխան գրությունով Կ. Պոլսի պատրիարքին և քաղաքական ժողովի երեսփոխաններին հանձնարարում էր հետամուտ լինել Չարսանջակի խնդրին։ Բողոքները շարունակվում են։ Առանձնացվում է հանձնաժողով, որը բողոքագրերը առաքում է Բ. Դուռ։ 1870 թ. այդ հանձնաժողովը հաղորդում էր. «Չարսանջախցիք դարձյալ ներկայացան, և հուսահատական վիճակին հայտնելով կուզեին, որ գաղթեն, որովհետև իրենց գործն այսպես կախ մնալուն-համար երկրագործություն ընելու ալ թույլ չեն տար եղեր»[74]։

1870 թ. վերջերին միայն թուրքական կառավարությունը քուրդ բեյերին կանչում է Կ. Պոլիս և վճռում «Չարսանջակի խնդիրը»։ Սակայն 9 ցեղապետերը շարունակեցին ասպատակել ողջ գավառը և սպառնալ, թե կապստամբեն կուսակալի և կենտրոնական կառավարության դեմ։ Փաստորեն ոչ մի հարց չլուծվեց[75]։

Բողոքները շարունակվեցին։ Ազգային կենտրոնական վարչության 1872—1874 թթ. նիստերում նորից քննարկվում են Չարսանջակի աշխատավորության ներկայացրած դիմումները։ 1872 թ. օգոստոսի 3-ի նիստում Ազգային քաղաքական ժողովի երեսփոխանները, Չարսանջակի հարցի առի-

---

71 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 124—125։

72 «Ատենագրություն ազգային ընդհանուր ժողովոյ», հ. Ա, Կ. Պոլիս, 1865, «Տեղեկագիր քաղաքական ժողովո, կեդրոնական վարչութեան առ ազգային ընդհանուր ժողովն», էջ 33—34։

73 «Ատենագրություն երեսփոխական ընդհանուր ժողովոյ», հ. Բ, Կ. Պոլիս, 1870, («Տեղեկագիր քաղաքական ժողովո կեդրոնական վարչութեան...»), էջ 13։

74 Նույն տեղում, էջ 14։

75 «Ատենագրություն...», հ. Բ, էջ 24։

թով, մեծ վիճաբանություններ ունեցան։ Նրանք կազմեցին մի ընդարձակ ու ընդհանրացնող բողոքագիր և Գր. Օտյանի միջոցով հանձնեցին սուլթանին։

Ինչպես այս, այնպես էլ 1863—1874 թթ. «Զարսանջակի հարցի» կապակցությամբ, տեղացիների և Ազգային քաղաքական ժողովի կողմից կառավարությանն ուղղված բողոքագրերից և ոչ մեկը արդյունք չտվեց։ Հայերի կացությունը գնալով վատթարացավ, մանավանդ, որ 1870-ական թթ. Բ. Դուռը ամեն կերպ հրահրեց ազգամիջյան ընդհարումներ, կազմակերպեց քրիստոնյաների թալան, բռնի կրոնափոխություններ, ըմբոստների ոչնչացում։

Այսպիսով, 1850—60-ական թթ. Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում եղած զինված ապստամբությունները, ժողովրդական ելույթները ուղղված էին սուլթանական կառավարության, թուրք հրոսակների և վաշկատուն, ռազմատենչ քուրդ ֆեոդալների դեմ։ Այդ բոլոր ելույթներն էլ ժողովրդական զանգվածների մեջ դարերով կուտակված ցասման բուռն արտահայտություններ էին, որոնք բռնկում էին տարերային կերպով և աստիճանաբար իրենց վրա հրավիրում արևմտահայ և ողջ հայ առաջադեմ մտավորականության ուշադրությունը։

Արևմտյան Հայաստանում բռնկված բոլոր ելույթներն էլ մեկուսացված մնացին, գավառները գործեցին անջատ-անջատ և հաջողության չհասան։ Այդուհանդերձ, նրանք հայ ժողովրդի մեջ զարթեցրին պայքարի ոգի, ներշընչեցին հաղթանակի ու ազատության հույս և նպաստեցին ազգային կոնսոլիդացիային, իսկ նորաստեղծ դեմոկրատական մտավորականությանը ըստիպեցին սուլթանական տիրապետությունից ազատվելու միջոցներ որոնել։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի 50—60-ական թվականներին տնտեսական ու քաղաքական բնույթի փոփոխություններով պայմանավորված լուրջ տեղաշարժեր կատարվեցին հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Համառուսական և համաեվրոպական ազգային-ազատագրական, հեղափոխական շարժման վերելքը լայն արձագանք գտավ հայ իրականության մեջ։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին մեծապես նպաստեց տնտեսական կյանքի առաջընթացին, Արևելյան Հայաստանում և ողջ երկրամասում հայ զանգվածների համախմբմանը։ Արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց աճեց բնակչության ընդհանուր կենսամակարդակը, որոշ օրինականություն հաստատվեց երբեմնի ֆեոդալական անիշխանության զոհ դարձած երկրում։ Ընդլայնվեցին գյուղի և քաղաքի առևտրական կապերը, անհամեմատ ուժեղացան տնտեսական, մշակութային ու գաղափարական շփումները Ռուսաստանի հետ՝ նպաստելով արտադրողական ուժերի և մշակույթի զարգացմանը։

Կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը, քաղաքային կյանքի աշխուժացումը, գյուղացիության շերտավորման խորացումը, համքարությունների քայքայումը և այդ հողի վրա արհեստավորական դասի ըմբոստացումը պարզորոշ երևան հանեցին սոցիալական ներհակությունների սրումը և համապատասխան արձագանք գտան դասակարգային փոխհարաբերությունների մեջ։

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև արևմտահայության սոցիալ-տնտեսական կյանքում և որոշակի նախապայմաններ ստեղծվեցին բուրժուական հարաբերությունների մասնակի զարգացման համար։ Դրանց նպաստեցին կենտրոնախույս ուժերի ոչնչացումը և այլազգի առևտրական բուրժուազիայի գործունեության առժամանակյա հովանավորումը։ Հատկապես դյուրին աշխուժություն դրսևորեց հայ միջնորդ-առևտրականների դասը, որի կապերն Արևմուտքի հետ նպաստեցին նրա կողմից եվրոպական ազատամտական գաղափարների որդեգրմանը և շահագրգռեցին նրան մտահոգվելու Օսմանյան կայսրության մեջ անցկացվելիք բարեփոխումների հարցով։

Այս ժամանակահատվածում որոշ զարգացում ապրեցին նաև բուն Արևմտյան Հայաստանի քաղաքները՝ Վանը, Կարինը, Եվդոկիան, Սեբաստիան, Բաղեշը և այլն։ Այստեղ ձևավորվեց իր շահագրգռություններով հայրենի բնաշխարհի հետ կապված գավառահայ առևտրա-արդյունագործական դասը, որը պայքար ծավալեց եվրոպական գործարանային արտադրանքների մրցակցության դեմ։

Հայաստանի երկու հատվածներում և գաղութահայ իրականության մեջ տեղի ունեցող այս բոլոր տեղաշարժերն ու երևույթներն էլ պայմանավորեցին անցյալ դարի 50—60-ական թթ. դասակարգային հարաբերությունների և շահագրգռությունների բյուրեղացումը, հասարակական-քաղաքական հոսանքների երևան գալը և նրանց որոշակի սահմանազատումը։

Հայ իրականության մեջ դեռևս իր բավական ազդեցիկ դիրքերը պահպանած հոգևորականությունը՝ դաշնակցած արևելահայ աղայական և արևմտահայ ամիրայական վերնախավին, ամեն կերպ ջանում էր խոչընդոտել պատմության առաջընթացը և դրանով իսկ դառնում էր իրենց դարն ապրած ֆեոդալական հարաբերությունների և միջնադարյան կաստայականության ջատագով։

Այս հողի վրա ձևավորվեց կղերա-աղայական հոսանքը արևելահայ և կղերա-ամիրայականը՝ արևմտահայ իրականության մեջ, որոնք պաշտպանում էին գրաբարն՝ ընդդեմ աշխարհաբարի, ֆեոդալական միապետությունը՝ ընդդեմ բուրժուական հանրապետության, կրոնական մեռյալ դոգմանները՝ ընդդեմ լուսավորականության, դրանով իսկ արգելափակելով ազգային-ազատագրական շարժման ու նրա գաղափարաբանների ուղին։ Սակայն ֆեոդալական հարաբերությունների քայքայման, կապիտալիզմի զարգացման և բուրժուական լիբերալիզմի, հատկապես հեղափոխական դեմոկրատիայի ասպարեզ գալով այդ հոսանքը շուտով կորցրեց իր ազդեցությունը՝ իբրև հասարակական մտքի ուրույն ուղղություն։

Ժամանակաշրջանի մյուս՝ ազգային-պահպանողական հոսանքը ծնունդ առավ որպես անմիջական հետևանք այն պայքարի, որ հարկադրված էին մղել տեղական մանր արդյունաբերողներն ու վաճառականները արտասահմանյան կապիտալի և գործարանային արտադրանքի մրցակցության դեմ, հանուն իրենց գոյատևության։ Ազգային արժեքների պահպանման և զարգացման մեջ տեսնելով իրենց ապագայի ողջ կռվանը, ազգային-պահպանողականները ընդառաջում էին հայկական տնտեսական ու մշակութային կյանքի մասնակի «եվրոպականացմանը», ազգային կյանքի առաջընթացին։ Նրանց պահպանողականությունը անշարժության ու լճացման քարոզ չէր, այլ ազգային յուրահատկության պահպանության հորդոր։ Նրանք կողմնակից էին հայ եկեղեցու ավանդական ծեսերի բարեփոխությանը, պաշտպանում էին աշխարհաբարը՝ դրաբարի հիմքի վրա, սեփական լեզուն, եկեղեցին և ազգությունը ջանում փրկել օտարակալ տերությունների ուծացման քաղաքականությունից։

Դարամիջին ձևավորվեց առևտրա-արդյունաբերական հայ բուրժուազիան և այն ներկայացնող լիբերալ-բուրժուական հոսանքը։ Արևմտահայ լիբերալներն հիմնականում արտահայտում էին կոմպրադորական բուրժուա-

դիայի շահերը, իսկ արևելահայ լիբերալները՝ կովկասահայ առևտրա-արդյունաբերական կապիտալի շահախնդրությունները։

Լիբերալ-բուրժուական հոսանքը պայքար է ծավալում ֆեոդալական հասարակարգի պաշտպանների դեմ, ձգտում հաստատել բուրժուական կարգեր, գրաբարը փոխարինել աշխարհաբարով, զարկ տալ աշխարհիկ գրականությանը, ժողովրդի լուսավորությանը, նոր դպրոցի հաստատմանը, գիտության զարգացմանը։ Լիբերալ-բուրժուական հոսանքը հետամտում էր հայ բուրժուազիայի տնտեսական, քաղաքական ու գաղափարական դիրքերի հաստատմանը Հայաստանում։ Ժողովրդին իր կողմը գրավելու համար նրանք խոսում էին ողջ ազգի անունից, երբեմն առաջադրելով նաև այնպիսի խնդիրներ, որոնք իրոք ունեին ժողովրդանպաստ բովանդակություն։ Սակայն «լիբերալները եղել են և մնում են բուրժուազիայի գաղափարախոսները,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որը չի կարող հաշտվել ճորտատիրության հետ, բայց որը վախենում է հեղափոխությունից, վախենում է մասսաների շարժումից, մի շարժում, որն ընդունակ է տապալելու միապետությունը և ոչնչացնելու կալվածատերերի իշխանությունը։ Այդ պատճառով էլ լիբերալները սահմանափակվում են «ռեֆորմների համար մղվող պայքարով», «իրավունքների համար մղվող պայքարով», այսինքն՝ իշխանության բաժանումով ճորտատերերի և բուրժուազիայի միջև»[1]։

Հայ հասարակական մտքի պատմության մեջ ամենաառաջավոր ուղղությունը հեղափոխական-դեմոկրատական հոսանքն էր, որը զինվորագրվեց ռուս հեղափոխական-դեմոկրատական շարժմանը, դարձավ նրա ջոկատներից մեկը և պայքարի մարտադրոշ պարզեց ոչ միայն ցարական ու սուլթանական միապետական վարչակարգի, այլ ֆեոդալիզմի պաշտպանների ու հաշտվողական լիբերալների դեմ։ Մ. Նալբանդյանի գլխավորած այս հոսանքը, արտահայտելով աշխատավորական լայն խավերի շահերը, ձգտում էր ոչ միայն հայ ժողովրդի ազգային-ազատագրությանը, այլև գյուղացիության հողով բավարարելուն և նրա սոցիալական ազատագրությանը։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հայ իրականության մեջ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը մինչև մարքսիստական գաղափարախոսության տարածումը մնում էր այն միակ հոսանքը, որը զորեղ ազդեցություն էր գործում ժողովրդական զանգվածների վրա և ձգտում հեղափոխական շարժման միջոցով լուծել թե՛ ազգային և թե՛ ագրարային հարցերը։

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

1. ԿՂԵՐԱ-ԱՂԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

XIX դարի երկրորդ կեսից սկսած պատմության բեմահարթակում բախվում էին ցարիզմի հետ կապված կղերա-աղայական ռեակցիան և ժողովրդական շահերը պաշտպանող արևելահայ դեմոկրատիան, որը սկսում էր դիմադրել ցարիզմի սահմանած գաղութային ռեժիմին և պայքարել սոցիա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 133։

լական ու ազգային-ազատագրական խնդիրների կենսագործման համար։

Միակողմանի կլիներ, սակայն, ի սկզբանե կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչներին դիտել իբրև միջնադարյան ֆեոդալական գաղափարախոսության ջատագովներ։ Հայտնի է, որ այդ հոսանքի ներկայացուցիչներ Ն. Աշտարակեցին և Ղ. Լազարյանը ոչ միայն զգալի դեր խաղացին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում, այլև դարձան Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադիրներ, ռուսական կողմնորոշման ջատագովներ։

Իրադրությունը փոխվեց 40-ական թթ. սկսած։ Չնայած ցարիզմը չարդարացրեց հայ իշխող վերնախավերի բոլոր սպասելիքները, նրանք, սակայն, ի վերջո գոհացան իրենց տրված արտոնություններով ու առանձնաշնորհումներով և չէին բաժանում ցարական վարչակարգի հանդեպ հայ աշխատավորության տրտունջները։ Հայ կալվածատերերի ու արևելահայ կղերի շահախնդրությունները միաղոդվելով առևտրա-վաշխառուական բուրժուազիայի միտումներին՝ հիմնական հարցերում սկսում են համընկնել ռազմա-ֆեոդալական վարչակարգի պահպանման ռեակցիոն քաղաքականության հետ։ Երկնչելով լիբերալ-բուրժուազիայի և հատկապես հասունացող դեմոկրատական հոսանքի առաջադրած պահանջներից, հայ իշխող վերնախավերի պաշտպաններն ու նրանց շահախնդրությունների ձայնատարները կապվեցին ցարական բյուրոկրատիայի հետ, դիմապրավեցին ազատամտական գաղափարներին։

Կղերա-աղայական հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը Ն. Աշտարակեցին էր, որը 1843 թ. սկսած գործելով իբրև ամենայն հայոց կաթողիկոս, ուղղություն էր տալիս իր կուսակիցներին։

XIX դարի առաջին կեսին Պետերբուրգում և Մոսկվայում հայ եկեղեցու վեքիլների իրավունքները վերապահված էին Լազարյան ուսմի ներկայացուցիչներին։

Ուշագրավ է, որ քանանական թվականներին Ռուսաստանի հայ եկեղեցու վիճակավորին հղած մի նամակում Հովհաննես և Խաչատուր Լազարյանները հայտնում էին, թե մտադիր են Մոսկվայից Պետերբուրգ փոխադրվել, «քանզի ի լինիլ մեր հուպ առ իշխանս՝ ևս դիւր եղիցի մեզ ծառայել տէրութեան և բարձրանալ յաստիճանէ յաստիճան, օգնական և հոգատար լինիլ ամենայն ղործոց սիրելի հասարակութեան մերոյ եկեղեցւոյ սրբոյ, որոց ըստ շաւղաց ծնողաց մերոց նուիրեալ եմք զաւուրս մեր և կարողութիւնս»*։ Նրանք իրագործեցին այդ մտադրությունը և դիրքեր գրավեցին ռուսական բյուրոկրատիայի բարձր շրջաններում։

Հիրավի, Լազարյանները միայն հարուստ կալվածատերեր ու գործարանատերեր չէին, այլև ցարական պետության խորհրդականներ։ Բայց հակառակ իրենց խոստման, նրանք այդ դիրքը օգտագործում էին ոչ թե ազգի ու

* Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, էջ 73։

եկեղեցու անկախության օգտին, այլ սրանց դիմազրկման համար՝ այս մարզում հանդիսանալով Ներսես Աշտարակեցու դիմադրության[2]։

Վճռական էր մանավանդ նրանց դիմադրությունը հայերի ազգային-քաղաքական ինքնորոշման հարցերում։ 1860-ական թվականների սկզբներին, անդրադառնալով Զեյթունի ապստամբությանը, Խաչատուր Լազարյանը հայերի ազգային-ազատագրական պայքարի գաղափարը դատապարտում էր[3]։

Ազգային-մշակութային հարցերում Լազարյանները դիմադրում էին հայ գրականության աշխարհականացման ձգտումներին՝ ըստ ամենայնի մերժելով նոր գրական լեզվի քաղաքացիականացման և գրական մտքի աշխարհականացման պահանջը։ Մոսկվայի արևելյան ճեմարանում նրանք հովանավորում էին գրաբարի պաշտպանության կուսակիցներին՝ Սալլանթյանին, Սաթերյանին ու դատապարտում Ստ. Նազարյանի և, մանավանդ, Մ. Նալբանդյանի հրապարակախոսության մարտական ուղեգիծը։ Խաչատուր Լազարյանը կկամենար, որ «Մասյաց աղավնի» պարբերականը լույս ընծայվեր ոչ թե գրական լեզվով, այլ՝ գրաբար։ Խմբագիր Այվազովսկին հարկ համարեց նրան պարզաբանել, որ ստիպված է աշխարհաբար հրատարակել իր թերթը սոսկ հաշվի առնելով այն իրողությունը, որ գրոց «վսեմ, համեղ և կանոնավոր» լեզվին անտեղյակ են իր ընթերցողները։ «Արդ,— գրում էր նա,— եթե ոմանցորեն ևս գրելով հազիվ 200 բաժանորդս ունիմ տակավին ի հայոց Տաճկաստանի... զինչ լինիցին, եթէ բոլորովին ի գրոց բարբառ յօրինիցիմ զգրուածսն»[4]։

Անդրադառնալով «Հյուսիսափայլի» ուղեգծին, Խաչատուր Լազարյանը գտնում էր, որ «ճշմարտապես օգտակար ամսագրի գլխավոր պարտականությունը և նպատակը պետք է լինի որչափ կարելի է շուտ ամրացնել հայ ժողովրդի մեջ խաղաղություն, համերաշխություն և բոլորին էլ տանել դեպի ընդհանուր բարի նպատակ, բայց ոչ մի դեպքում չբաժանել, չտարածել թշնամանքի սերմեր և չգրգռել կրքեր ու արատներ, որոնք առանց այն էլ չափազանց շատ են տարածված անբարեհույս հայերի մեջ»[5]։ «Մարդկանց կրոնա-բարոյական կրթությունն է միայն,— գրում է նա մի այլ տեղ,—որ առանց խռովության, առանց մտքեր հուզելու և առանց ազատամտության, ասանց նիհիլիզմի ձախորդ, մոլար ու վնասակար գաղափարների սահմանում է բարոյականություն, խոնարհություն, աշխատանք և կարգապահություն»[6]։ Խաչատուր Լազարյանի համար ընդունելի չէր նույնիսկ 1836 թ. ցարիզմի հայ եկեղեցուն պարտադրած «Պոլոժենիե»-ին կաթողիկոսի կողմից ցույց տրվող դիմադրությունը։ Նա ցարական Ռուսաստանին հնազանդ լինելու կոչ էր անում Մատթեոս կաթողիկոսին, նախազգուշացնելով ընդդիմադրության վատթար հետևանքներից[7]։ Զարմանալի չէ, որ Խաչատուրը Լազարյան ճեմարա-

---

2 Մատենադարանի ձեռագրատունը պահված նյութերը ցույց են տալիս, որ ի վերջո նրանք կշռադատում էին հայ և ռուս եկեղեցիների միավորման հեռանկարներն անգամ։

3 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 79 և հետ.։

4 Նույն տեղում, էջ 253։

5 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Երևան, 1956, էջ 20։

6 Նույն տեղում, էջ 20—21։

7 Նույն տեղում, էջ 21։

նի աստվածաբան Մսեր մագիստրոսի գրքերի անվերապահ խրախուսողն ու մեկենասն էր։

1859—1862 թթ. Մոսկվայում Մսերյանի խմբագրությամբ լույս տեսած «Ճռաքաղ» երկշաբաթաթերթը արևելահայ կղերա-աղայական հրապարակախոսության օրգաններից մեկն էր[8]։ Հրաժարվելով քաղաքացիական բանուկ տոմարից, «Ճռաքաղ»-ը ղեկավարվում էր հին հայկական տոմարով։

1861 թ. Մսերը և իր որդին՝ Ջարմայր Մսերյանցը, որին ի դեպ վստահված էր նաև Մոսկվայի հայերեն հրատարակությունների գրաքննչի պաշտոն, «Ճռաքաղ»-ին կից լույս էին ընծայում «Համբավաբեր Ռուսիոյ» լրագիրը։ Լրագրի պարզ հայերենը տարբերվում էր «Ճռաքաղ»-ի խրթին լեզվից։

Պետերբուրգի և Մոսկվայի ռեակցիոն վերնախավին արձագանքում էր կովկասահայ բարձրադիր կղերի ու կալվածատերերի դասը, որին ձայնակցում էին ապրանքատերերն ու փողատերերը, Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի խոշոր կապալառուներն ու ռուսական զարգացող արդյունաբերության հետ կապված հայ առևտրականները, Կովկասի վարչական ու ռազմական օրգաններում ծառայող հայ բարձրադիր զինվորականներն ու պաշտոնատերերը։

Արևելահայ ազգային-քաղաքական կյանքում այս հասարակախավերի մտայնության գործնական հիմնավորումը դրսևորվել է նրանց գաղափարախոսներից մեկի՝ Առաքել Արարատյանի մոտ։ Իր մի գրվածքում նա արձանագրում էր, թե հայերը աճում են և բազմանում ամենուրեք, նրանք միաբան են ուսումնառության և շահութաբերության բոլոր գործերում և ամենուրեք պահպանում են ու խնամում իրենց լեզուն ու կրոնը։ Ուր էլ գտնվեն նրանք, «իրենց բնակավայրը դարձնում են բնիկ աշխարհ ու հայրենիք՝ տիրանալով անբավ կալվածքի ու հարստության... հասնում մեծամեծ պաշտոնների ու արտոնությանց... Անգամ մեր հարազատ թագավորները չէին տա մեզ այն, ինչ տալիս է ռուսաց ամենախնամ տերությունը մեզ մատակարարած ուսումով, ոռճիկով, պատիվներով ու աստիճաններով։ Եվ միայն Ռուսաստանում չէ, որ իրենց խոհեմ ընթացքով հայերը վայելում են նման բարիքներ»[9]։

Ա՛ռ. Արարատյանի միտքը յուրովի լրացնում էր Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, բանաձևելով այն հայացքը, թե իբր հայերը պատրաստ են հավատարմորեն ծառայել բոլոր թագավորներին և իշխաններին, եթե միայն վերջիններս չեն դիպչում նրանց կրոնին[10]։ Ուստի հասկանալի էր, թե ինչո՞ւ Ջալալյանցի համախոհ Ալ. Թահիրովը, ռուս ոստիկանության ծառայող հայազգի չինովնիկներից մեկը, դատապարտում էր Ալեքսանդր II-ի դեմ Դ. Կարակոզովի կատարած մահափորձը։

---

8 Պարբերականի ուղղության մասին գաղափար է տալիս նրա խոսուն գլխադարձը՝ Մեծ և Փոքր Մասիսները՝ նոյի տապանով և նրա շրջապարիսպների մեջ ներփակված էջմիածնի վանքը։ Աջից՝ պատարագչի հանդերձանքով զգեստավորված լուսավորիչը՝ մի ձեռքում Ավետարան, մյուսը՝ դեպի վանքն ու Մասիսը պարզած, ձախից՝ Հայկ Նահապետը, զենք ու զրահով, աջ ձեռքին աղեղ, ձախը զոդիակոսի կենդանակերպերի վրա։

9 Ա՛ռ. Ա՛ռաքելեան, *Սխալանք վարդապետարանին կրօնի ի զգուշութիւն համազգեաց*, Տփխիս, 1858, էջ 16 և հետ.։

10 Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, հատ. 2, Տփխիս, 1848, էջ 102։

Կրկնելով Ջալալյանցի միտքը, Ալ. Թահիրովը արևմտահայերին խորհուրդ էր տալիս հասկացնել սուլթանին, որ հավատարիմ կմնան իրեն, եթե իր հովանու տակ առնի հայոց եկեղեցին[11]։

Կովկասահայ այս գործիչներին համամիտ էր Ստեփանոս քահանա Մանդինյանը՝ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիրը։ Գերբնական ուժ վերագրելով մարդկանց ուսմանը, նա դատապարտում էր այն ուսումնականներին, որոնք ըմբոստանում են աստծո կամ թագավորի դեմ[12]։ Պատասխանելով այն հայերին, որոնք քննադատում էին հայ եկեղեցու իրավունքները սահմանափակող ցարական «Պոլոժենիե»-ն, Սարգիս Ջալալյանցը, Ալեքսանդր Թահիրովը, Հակոբ Կարենյանը և Գալուստ Շերմազանյանը ծածկագիր մի գրքույկում հավաստում էին, որ Ռուսիո հայերը տիրում են իրենց կալվածներին և ստանում քաղաքական այն իրավունքները, որոնք ունեն նաև իրենք՝ ուսյալները։ Այս մտայնության առաջացման համար նպաստավոր միջավայր էր ստեղծված մանավանդ Կովկասում Վորոնցովի փոխարքայության օրոք։

Ակներև է, որ դրվատելով ցարիզմը, այս հոսանքին հարողները աչքի առաջ ունեին սոսկ կղերա-աղայական ընտրյալներին հատկացված արտոնությունները ու բարիքները կամ իրենց զավակների ուսում ստանալու դյուրությունները։ Նրանք շրջանցում էին այն իրողությունը, որ ուսումնական և գրագետ կոչված հայերը կազմում էին աննշան քանակ միայն։ «Ռուսիայի հայոց մեջ,— գրում է Ալ. Երիցյանը,— հիսուն թվականին հաղիվ թե մի 20 կամ 30 անձ լիներ համալսարանական գիտությամբ. հայկաբան գիտնականների թիվը գուցե հասներ հարյուրի, բայց դոցա մեջ հայտնի նշանավորները հինգ-վեց հատ էին. մի հարյուր անձը համարելու էր այն հայերի թիվը, որ շատ քիչ փող ծախսելով պատրաստ էր երբեմն-երբեմն հայերեն գիրք առնելու. մի երկու այդքան էլ կլինեին, որոնք ուրիշներից գրքեր փոխառնելով կարդալու վարժված էին։ Այն ժամանակ մոտավորապես այսքան էր կարդալու ընդունակություն ունեցող հայերի թիվը ամբողջ Ռուսաստանում, իսկ մնացած կես միլիոնից ավելի հայ հասարակությունը, այբուբենից անգամ զուրկ, ընկղմված էր խոր տգիտության մեջ»[13]։

1850—1860-ական թթ. արևելահայ կղերա-աղայական հոսանքի առաջվել աչքի ընկած գործիչների ցանկը չի կարելի լրիվ համարել առանց Գաբրիել Այվազովսկու։

Վենետիկի ս. Ղազարի վանքում ուսումը ավարտելուց և վարդապետական գավազան ստանալուց հետո, Այվազովսկին մի պահ վարում էր «Բազմավեպ» ամսագրի խմբագրությունը։ Փոխադրվելով Փարիզ, 1848 թ. հեղափոխությանը հաջորդած ռեակցիայի տարիներին, Մուրադյան վարժարանում նա ըստանձնեց վարիչի պաշտոն և ջանք չէր խնայում հետու պահել սաներին այդ պահին Ֆրանսիայում տարածված ազատամտական ու սոցիալիստական մրտքերից և միաժամանակ հայ կյանքում բռնապարտիստական Ֆրանսիայի քաղաքականության ձայնատար դարձնել նրանց։ 1850-ական թթ. Այվազովսկին

11 «Տիլն Ավարայրի», 1866, էջ 352։

12 Տե՛ս Ստ. Իսհաճա Մանդինեանց, Հայելի դաստիարակութեան տղայոց, Տփխիս, 1859, էջ 103, 106։

13 «Փորձ», 1879, նոյեմբեր, էջ 48։

մասնակցում է Հայկազյան վարժարանի հիմնադրմանը և միաժամանակ ձեռնարկում արևմտահայ ամիրաների սոցիալական պատվերները կատարող «Մասյաց աղավնի» պարբերաթերթի հրատարակմանը։ Սակայն շուտով վրա է հասնում նրան հովանավորողների մայրամուտը, և Այվազովսկին հարկադրված էր իր գրական-հրապարակախոսական գործունեության համար որոնել նոր հանգրվան։ Լազարյանների և Փարիզի ռուսական դեսպանության օժանդակությամբ 1858 թ. նա փոխադրվում է Ռուսաստան, ուր, ապավինած ռուսահայ մեծատուններին, հիմք է դնում Խալիբյան վարժարանին և վերանորոգում «Մասյաց աղավնի» թերթի հրատարակությունը. բոնապարտիստական ձայնատարի փոխարեն թերթը դառնում է ցարիզմի փողհարը։ Ցարական կառավարությունը, շրջանցելով էջմիածնի իրավասությունը, Այվազովսկուն է հանձնում Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի հայ եկեղեցական վարչությունը, նրան գործիք դարձնելով արևելահայերի և արևմտահայերի նկատմամբ վարած իր քաղաքականությանը։

Այվազովսկին ներքին գործոց մինիստրին հասցեագրած իր ամբաստանագրում կանգ չէր առնում անգամ քաղաքական քսությունների առաջ՝ անխընա նշավակելով լիբերալ և, մանավանդ, դեմոկրատական հոսանքների հայ գործիչներին։

«Հյուսիսափայլ»-ի մեջ զետեղված հոդվածներն անխնա պարսավելով, նա նպատակ ուներ խափանելու ամսագրի տպագրությունը և մանավանդ պատուհասելու Նալբանդյանին՝ կառավարական օրգանների առաջ նրան բնութագրելով իբրև «բանսարկուի և խռովարարի»[14]։

Իր համախոհ Հարություն աղա Խալիբին հասցեագրած նամակներից մեկում Այվազովսկին հույս էր հայտնում, թե ցարական գրաքննությունը պիտի վերականգնի Նիկոլայ I-ի խստությունները, «ղի բազումք չարաչար վարեն պայսպիսի ազատութիւն ի Ռուսիոյ»[15]։ Զգում էր նաև այն բանին, որ հայ եկեղեցուն վերաբերող գրքերի գրաքննությունը իրեն վերապահվի, հնարավորություն տալով կատարելու այն պարտականությունները, որոնք դրված են իր վրա կայսեր կողմից[16]։

Հետռեֆորմյան տասնամյակներին, զարգացող կապիտալիզմի հարվածների տակ Ռուսաստանի և Անդրկովկասի կղերա-աղայական միտքը թեվակոխեց իր կազմալուծման շրջանը։ Հետագայում կղերա-աղայական դասի փոքրիշատե կենսունակ տարրերին մնում էր միայն համակերպվել հասարակական-տնտեսական կյանքում կապիտալիստական հեղաբեկմանը և իրենց գոյատևման համար դիրքեր գրավել արևելահայ բուրժուազիայի շարքերում։ Հին կղերա-աղայական և նոր բուրժուական ուժերի վերադիրքավորումը նպատակ էր դնում հեղափոխական թափ ստացող դեմոկրատական ուժերին միացած շարքերով դիմադրելու։

---

14 Գրականության և արվեստի թանգարան, Ն. Նախիջևանի արխիվ, վավ. 8։

15 Նույն տեղում։

16 Մատենադարան, Երիցյանի արխիվ, գործ № 10, վավ. № 361, տե՛ս նաև՝ գործ № 156, վավ. № 363։

2. ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Այս հոսանքի դեմ իր պայքարը դյուրացնելու մտայնությամբ լիբերալ հրապարակախոսությունը նրան համառորեն ներկայացնում էր «կղերա-պահպանողականության» պիտակով։ Պարզունակացնելով հակառակ հոսանքների դեմ իրենց հայացքների պաշտպանության գործը, լիբերալները գիտակցաբար անտեսում էին ազգային-պահպանողականների դիրքավորման ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները։

Եթե կղերա-աղայական ռեակցիան ազգի գոյության միակ հենարանն էր համարում հայադավան եկեղեցին, ապա ազգային-պահպանողականների համար գերագույն հեղինակությունը ոչ թե հայադավան եկեղեցին էր, այլ նրան իր գոյության պատվարներից մեկը դարձնող ազգը։ Չնույնացնելով ազգի հետ, եկեղեցին հանդես էր գալիս նրանց մոտ որպես ազգը միազոդող, այն պահող գործոններից մեկը, բայց ոչ միակը։ Եթե, օրինակ՝, կղերա-աղայական հոսանքի գաղափարախոս Առաքել Արարատյանը գրում էր, թե գրաբար լեզուն ու կրոնն են ազգության սյուները[17], ազգային-պահպանողական գաղափարախոս Մարկոս Աղաբեկյանը եկեղեցուց զատ ազգության բարոյական շաղկապ էր համարում ոչ թե գրաբարը, այլ ազգային կենդանի լեզուն։ Ընդհանին ազգային լեզուն և գրականությունը, ազգային պատմությունը, ավանդությունները ու բարքերը և, վերջապես, մանուկների ազգային ուսումնառությունն ու դաստիարակությունը—սրանք էին նրա համար այն գործոնները, որոնք եկեղեցու, նրա դավանության հետ մեկտեղ երաշխիք էին նկատվում ազգի կենդանության[18]։

Ազգային-պահպանողական այն մտայնությունը, որ ստեղծվել էր Անդրկովկասում՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, սրվում էր հիմնականում այն դժգոհություններից, որոնք ծավալվում էին Կովկասում և մասնավորապես կովկասահայ միջավայրում՝ ցարիզմի գաղութային քաղաքականության շուրջը։ Վտանգված համարելով ազգի ու եկեղեցու գոյությունը Ռուսաստանում՝ նրանք յուրովի ընդդիմակայում են ցարիզմին, նրա գաղութային քաղաքականությանը Կովկասում։

Արևելահայ ազգային-պահպանողականները իրենց սոցիալ-տնտեսական շահախնդրություններով դրսևորում էին այն անբավականությունը, որ սրվում էր կովկասահայ առևտրական բուրժուազիայի միջավայրում Ռուսաստանի արդյունաբերական ապրանքների կովկասյան ներմուծումը հովանավորող ցարիզմի մաքսային քաղաքականությունից։ 1846 թ. ի վեր շեշտակիորեն կրճատվեց արևմտաեվրոպական ապրանքների ներմուծումը, հարվածի տակ դնելով արտասահմանյան շուկաների հետ կապված և կովկասյան տրանզիտով շահագրգռված հայ առևտրականների շահերը։ Կովկասահայ առևտրական բուրժուազիան ավելի շատ զբաղված էր արտասահմանյան ապրանքները Կովկասի, Պարսկաստանի կամ Թուրքիայի շուկաներում վաճառելու գործով, քան ռուսական կապիտալիզմի մենաշնորհությանը նպաստող ցա-

17 Առ. Աւարատեան, *Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենապատուական նախամայր լեզուիս Հայոց, ի Տփխիս, 1858, էջ 8։*

18 «Կռունկ», *1860, էջ 925։*

րական քաղաքականության համար։ Ազգային-պահպանողականները տրտնջում էին ցարական գաղութային քաղաքականության դեմ, պաշտպանում տեղական հայ առևտրականների շահերը, դաշնակիցներ որոնում արդյունաբերողների ապրանքների ներմուծումից տուժող տեղական մանր արտադրողների միջավայրում, պաշտպանության տակ առնում գյուղի ու քաղաքի մանր գործատերերին ու ապրանքավաճառողներին։ Իրենց հերթին վերջիններս հաճախ ձեռք էին մեկնում նրանց, հանդամանք, որ դեռ հիմք չի տալիս ազգային-պահպանողականներին արևելահայ մանր արտադրողների կամ արևելահայ գյուղական ու քաղքենի դեմոկրատիայի հետևողական արտահայտիչներ համարելու։ Այս առումով ուշագրավ է վրաց առաջավոր գործիչ Ն. Նիկոլաձեի 1865 թ. Գերցենի «Колокол»-ում տպագրված հոդվածը, ուր նա, նկարագրելով Թիֆլիսի համքարների ելույթը, գրում էր. «Թիֆլիսի քաղաքային աշխատավոր բնակչությունը (рабочее население) ձեռք է տվել մոքալաքներին, որպեսզի համատեղ դիմադրեն ռուս կառավարությանը... Մարդիկ, որոնք ոչ մի գաղափար չունեին կուսակցությունների պրակտիկայի մասին, այն ժամանակ քայլեցին «ընդհանուր թշնամու» դեմ, ձեռք-ձեռքի տված, մոռանալով, որ երեկ մոքալաքը կողոպտում էր այսօրվա իր զինակից մշակին և որ վաղը պիտի կրկնվի նույն պատմությունը»[19]։

Այստեղ Նիկոլաձեն նկատի ուներ 1865 թ. հուլիսի 27-ին Թիֆլիսի քաղաքային վարչության դեմ տեղի ունեցած այն ապստամբությունը, որի հրահրման գործում քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանը ամբաստանում էր Պ. Շանշյանին, Պ. Սիմեոնյանին, դ-ր Ռոտինյանին, Գաբրիել Խատիսյանին, Համբ. Էնֆիաջյանին և Գր. Իզմիրովին, որոնց մեծ մասը հայ ազգային-պահպանողականների ղեկավարներն էին։ Այս շարժումը հիմնականում ուղղված էր ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ, որի գործիքն էր քաղաքային վարչությունը[20]։

Հայ ազգային-պահպանողականների ղեկավարները՝ Պ. Շանշյանը և Գ. Ախվերդյանը, պաշտպանում էին տեղական առևտրի ու արդյունաբերության ընթացիկ շահերը և մեծապես ընդառաջում հնօրյա համքարությունների պահանջներին։ Նրանք նշում էին երկրի բնակչության վրա ծանրացող հարկերն ու թանկությունը, մանր արհեստավորների քայքայումը, նրանց աճող թշվառությունը[21]։

Ցարիզմի կովկասյան իշխանավորներին Շանշյանն առաջարկում էր օգնել Անդրկովկասի տեղական առևտրի ու արդյունաբերության զարգացմանը, հոգ տանել մանավանդ Կասպից և Սև ծովերի հետ միացող առևտրական ճանապարհների կարգավորմանը և նպաստել Երևանի նահանգի երկրագործության, բարելավել Արարատյան դաշտի ոռոգման գործը և տեղական ճանապարհները, որով, ըստ նրա, կվճռվեր նաև Թիֆլիսի համքարություններին հուզող խնդիրներից մեկը՝ էժան հացի մատակարարումը։

Քննադատելով «կապիտալիստներին»՝ Ախվերդյանը փաստորեն հա-

---

19 «Исторические записки», *1940, № 8, էջ 223*։

20 Գրականության և արվեստի թանգարան, Ներսես Աբելյանի արխիվ, գործ 26, թ. 11 և հետ.։

21 *П. Шахшиев*, Два слова об амкарах, Тифлис, 1857, стр. 32.

կազրվում էր միայն ցարական գաղութարարների կողմից մենաշնորհված այն դրամատերերին, որոնք «հանուն ազատ արդյունագործության» արգելափակում էին տեղական արդյունագործության զարգացման ուղիները և պահանջում տեղական ձեռնարկություններին պաշտպան կանգնած առևտրա-արդյունագործական համքարությունների լիկվիդացումը։ Ընդամին Ախվերդյանը համքարությունները չէր դիտում որպես մեկընդմիշտ ստեղծված և որևէ փոփոխությունների չենթարկվող կազմակերպություններ։ Նա հայտնում էր սոսկ այն համոզմունքը, որ համքարությունների «հանկարծական ոչնչացումը», առանց դրանք հանրօգուտ և «ժողովրդի հասկացություններին ու կարիքներին համապատասխանող այլ կազմակերպություններով փոխարինելու, բաղաքաբնակչության մեծ մասի համար անժամանակ բան կլիներ և կառաջացներ ավելի շատ չարիքներ, քան այն, ինչ որ անհիմն կերպով նրանց վերագրվում են»[22]։

Մասսայական թշվառությունները ու ոճիրները կանխող համքարությունների կազմակերպված փոխօգնությունը տեղական առևտրի և արդյունաբերության զորեղ հենարանն էր համարում նաև Պ. Շանշյանը[23]։ Բայց դարձյալ սխալ կլիներ հետևցնել, թե դրանով նա սկզբունքորեն ժխտում էր կապիտալիզմը։ Շանշյանը մեծարում էր Ադամ Սմիթի բուրժուական տնտեսագիտության դասական ուսմունքը, դրվատում մասնավոր սեփականության և «ազատ աշխատանքի» բուրժուական իրավունքը՝ որպես զարգացող առևտրի և արդյունաբերության առաջին պայման և փառաբանում մանչեստրականության հռչակած նախաձեռնումների սկզբունքը՝ որպես առևտուրն ու արդյունաբերությունը շարժող ու կանոնավորող ուժ։ Նրա կարծիքով համքարությունն այլ բան չէ, քան բուրժուական սկզբունքով ղեկավարվող «առևտրական և արդյունագործական դասակարգ»։ Շանշյանը համոզված էր, որ քաղաքակիրթ ժողովուրդների մոտ միայն անձնական շահը կարող է հասցնել զարգացման՝ կազմելով «առևտրական և արհեստագործական ընկերություններ»[24]։

Շանշյանը գտնում էր, որ առանց համքարության Թիֆլիսի նահանգում չէր լինի ոչ արդյունագործություն, ոչ երկրագործություն, կապակասեր աշխատանքը շարժող գլխավոր ուժը՝ փողը[25]։

Համքարների օգտին ունեցած իրենց ելույթներով Ախվերդյանը և Շանշյանը հակադրվում էին քաղաքական իշխող այն ուղեգծին, որով ռուս և եվրոպական արդյունաբերողների ձեռքն էր տրվում Կովկասի շուկան։

Միայն ցարիզմի տնտեսական քաղաքականությունը չէ, որ քննադատում էին ազգային-պահպանողականները, նրանք մերկացնում էին նաև Անդրկովկասում սահմանված գաղութատիրական ռեժիմը։

Իր հիշողություններում Ղ. Աղայանը Ախվերդյանին բնութագրում է որպես լուսամիտ մի անձնավորություն։ Աղայանը բերում է նրա խոսքերը. «Մենք մեր աչքով տեսնում ենք, թե հայերենն ու վրացերենը ինչպես են դուրս մղվում մեր տգետ կանանց բերաններից, մեր տներից։ Այսքանը բավական

22 *Ю. Ф. Ахвердов*, Тифлисские амкары, Тифлис, 1883, Заключение.

23 *Ст-н Шакшиев*, Два слова об амкарах.

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում, էջ 22 և հետ.։

է, որ մեր մեջ նախանձ զարթի պատվասիրության և ազգասիրության զգացման ու սկսենք դրա առաջքն առնել աղջկանց դպրոցներ բանալով, թատրոն հիմնելով, գրականությունը ճոխացնելով, վերջապես ուրիշ ազգերին մեզ օրինակ առնելով, նրանց վարմունքը մեզ համար խոսակցության նյութ չինելով։ Պետք է հետաքրքրվինք ու իմանանք, թե որպիսի՞ ճանապարհ ունեն մեր վիճակում եղող եվրոպական ազգերը, այն ազգերը, որոնք մեռած տեղից գլուխ են բարձրացրել և ազգայնապես ապրելու իրավունք են հայտնում։ Նրանք այսօր առաջ են գնում ոչ թե մեզ նման կուրորեն, այլ գիտակցաբար, մի նախամտածված և նախագծված ուղղությամբ և շատ չի քաշիլ, այդ ազգերը կանցնեն առաջնակարգ զորեղ ազգերի կարգը՝ իրենց զարգացումով ու դիրքով»[26]։

Առաջ քաշելով «ազատ դպրոցի» հայացքները, Շանշյանը դրանց հակադրում էր «սոցիալական» («սոցիալիստական»— խմբ.) դպրոցին, որի սկզբունքն ընդունելի չէր համարում օրինավոր կառավարության համար։ Նա գտնում էր, որ վերանորոգությունն ամեն բանի մեջ պետք է լինի «խաղաղ և օրինավոր ճանապարհով»[27]։

Շանշյանի նացիոնալ-սեպարատիզմն իսկ «խաղաղասիրական» էր իր բնույթով։ Հայերին նա չէր ըմբոստացնում ցարիզմի դեմ, գտնելով որ «հայերը, դժբախտաբար, անընդունակ են ապստամբելու»[28]։ Խոսելով իտալական ապստամբության մասին, նա գտնում էր, որ Իտալիան ազատություն ստացավ՝ «փախչելով անդունդ գլորող հանկարծահաս պատրիչ ապստամբությունից և հավատարիմ ժառանգորդ մնալով կոմս Քավուրի երկու ամենամեծ ավանդին՝ ֆրանսիական դաշնակցությանը և անկախ ազատությանը»[29]։ Մնալով «բարի քրիստոնյա», Շանշյանը հրահանգում էր. «Զքաւորութենէ ելնելու համար անիրավ միջոցներու չդիմել և միշտ նախապատիվ համարել աղքատությունն անիրավութենեն»[30]։ Նա հանգում էր նույնիսկ այն մտքին, թե ամեն մի փոփոխություն ի չարեն է և վերջիվերջո կարող է տանել ազգը դեպի կործանում։ Նման մտավախությունով բռնված, նա դիմադրում է նույնիսկ ազգի լուսավորության գործը կղերից ժողովրդին փոխանցելու լիբերալ լուսավորիչների պահանջին[31]։

Ռուս արդյունաբերական բուրժուազիային հովանավորող ցարական գաղութարարներին դիմադրելով, 1860—1863 թթ. ազգային-պահպանողական օրգան «Կոռնկ»-ը կովկասյան բուրժուազիայի համար տնտեսական ապահովության կռվաններ էր որոնում Կովկասի ու Մերձավոր Արևելքի շուկաներում, վերապահելով հայ առևտրականներին այդ երկրների տնտեսական կապերը հաստատողի դերը։

Ամսագրի խմբագիր Մ. Աղաբեկյանը առաջ էր քաշում այն միտքը, թե հայ առևտրականները պետք է գործ դնեն իրենց դրամագլուխը ոչ թե Ռու-

---

26 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, Երևան, 1940, էջ 189։
27 Պ. Շանշյան, Ուսումն պարտուց, հատ. 2, Կ. Պոլիս, 1870, էջ 67 և հետ.։
28 Ն. Գեղամյան, «Գործ», ամսագիր, Բաքու, 1917, էջ 70։
29 «Կոռնկ», 1861, № 7, էջ 566։
30 Պ. Շանշյան, Ուսումն պարտուց, հատ. 2, էջ 123։
31 «Հումա», 1898, գիրք Ա, էջ 18 և 40։

սաստանում, այլ Կովկասում և Հայաստանում։ «Օտար մարդիկ,— գրում էր նա,— գալիս են հեռու երկրներից և տիրանում են մեր բնության բերքերին, սակավ առ սակավ դառնում են տանուտեր մեր տան մեջ, հեռացնելով յուրյանցից մեզ՝ իսկական տանուտերերիս, իսկ մենք կարծես թե շնորհակալության ժպիտով նայում ենք նոցա, գոհ ենք նոցանից, երևի էնդուր համար, որ մերը խլում են մեզանից...»։ «Կռունկ»-ի խմբագիրը առարկում է Ստ. Նազարյանցի այն մտքին, թե հայերն իրենց արտադրական կադրերի պատրաստումը պիտի հոգան Ռուսաստանում և որ դրա համար միջոցներ պիտի հայթայթի կազմակերպվելիք «Ընդհանուր հայկական ընկերություն»-ը։ Աղաբեկյանը առարկում էր դրան։ «Մենք,— գրում էր նա,— ավելի հարմարավոր և օգտակար ենք համարում այդպիսի մի ընդհանուր հայկական ընկերության փողերով առաջին տարին հաստատել մեր կողմերում, այսինքն՝ Թիֆլիսում կամ Հայաստանի քաղաքներից մեկի մեջ մի օրինավոր ուսումնարան, որ մեր երեխայքը ուսանին երկրագործություն, զանազան արվեստներ և վաճառականություն»։ Նման ուսումնարանում, գրում է Աղաբեկյանը, պիտի սովորեն «կովկասյան և արարատյան հայերի զավակները»։ Նա չէր առարկում, որ այդպիսի մի ուսումնարան էլ ստեղծվի Հարավային Ռուսաստանի հայերի համար։ Աղաբեկյանը համամիտ էր նրանց, ովքեր տրտնջում էին, թե հանրակրթական ուսումնարանները «հացի տեր» չեն դարձնում իրենց զավակներին։ Առաջարկում էր հայ դպրոցների ձեռքը տալ «գութանը, մանգաղը, թիակը, բահը, մուրճը, խարտոցը, սղոցը, կացինը, և մյուս գործիքը», «մոտեցնելով նոցա բնությանը և կենաց հանգամանքներին»։ Կարծում էր, որ ստեղծվելիք հայկական ընկերության մասնակիցներն են լինելու նաև հայ արհեստավորները, համքարները։

1865 թ. Կ. Պոլսի Ազգային ժողովին ուղղված իր տեղեկագրում նա քննադատում էր հայ եկեղեցու վարչական իրավունքները սահմանափակող ցարական «Պոլոժենիե»-ն և կոչ անում «օրինական» ճանապարհով պաշտպանության տակ առնել նրա ինքնուրույնությունը։ Հայոց կաթողիկոսության խաթարված իրավունքները պաշտպանելու համար նա առաջարկում էր Կ. Պոլսի Ազգային ժողովին՝ օգնության հասնել ցարիզմի կրնկի տակ տառապող ռուսահայ ազգակիցներին[32]։ Աղաբեկյանի այս հայացքը պոլսահայերի Սահմանադրության ներշնչած ազգային ինքնահաբեության արդյունք էր։

Աղաբեկյանը չէր հրաժարվում Թուրքիայի ներսում ազգային-քաղաքական բարեփոխությունների հեռանկարներից։ Արևելահայ հրապարակախոսների մեջ առաջիններից մեկն էր նա, որ ոչ միայն անդրադարձավ արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը, այլև դրական վերաբերմունք ցուցաբերեց դեպի նա։ Գերագնահատելով Ազգային սահմանադրությունը, նա կարծում էր, թե հայ ժողովուրդը Թուրքիայում բարոյականի հետ ունի և ազգային-քաղաքական ազատություն, որը ծնվում է կամ ծնվելու վրա է թուրքահպատակ մյուս բոլոր ազգերի քաղաքական ազատագրման հետ մեկտեղ[33]։

32 Մ. Աղաբեկյան, *Տեղեկագիր ամենայն հայոց կաթողիկոսության արդի վիճակի վրա*, Կ. Պոլիս, 1865, էջ 6։

33 *Տե՛ս «Մեղու Ավարայրի»*, 1866, համ. Ա, էջ Դ և Ե։

Երբ 1860 թ. Մ. Խրիմյանը անցավ Կովկաս, Աղաբեկյանի «Կռունկ»-ը նրան հայտարարեց Վասպուրական աշխարհի «ազգային և բարոյական լուսավորության»[34] փողհար։ Թիֆլիսում Խրիմյանը իր մի քարոզում խիստ էր արտահայտվել ցարի հասցեին։ Թիֆլիսի վիճակավոր Սարգիս Ջալալյանցի սադրանքով՝ փոխարքայության դիվանը աճապարեց արևմտահայ անհանգիստ եկեղեցականին հեռացնել Կովկասից[35]։

Զեյթունի ապստամբության օգտին հանգանակություն անելու նպատակով Կովկասում կազմակերպվեց հատուկ կոմիտե, որի նախաձեռնողների և աջակցողների շարքում հանդիպում ենք ազգային-պահպանողական գործիչներ Մ. Աղաբեկյանին, Հ. Էնֆիաջյանին և Պ. Սիմեոնյանին։ 1863 թ. իր ձեռքն առնելով «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրման գործը, Սիմեոնյանը փոխեց նրա ուղղությունը և ընդարձակ տեղեկանքներ տպագրեց Լեհաստանի ապստամբության և Զեյթունի հերոսական ինքնապաշտպանության մասին։

Պ. Սիմեոնյանի գաղափարակցությունը Պ. Շանշյանի հոսանքին, պատահական չէր։ Սրանք երկուսով սովորել էին Դորպատի համալսարանում և հեռացվել համալսարանից հակակառավարական ուղղության համար։ Սրանց գաղափարամերձ էր նաև դորպատյան համալսարանի մի այլ ուսանող՝ Գ. Խատիսյանը[36]։

Անդրադառնալով զեյթունցիների ապստամբությանը, Սիմեոնյանը նրանց կողմնորոշում էր ոչ թե դեպի ֆրանսիական կառավարությունը, այլ դեպի ֆրանսիական ժողովուրդը[37]։

Ազգային պահպանողականների մեջ կային նաև գործիչներ, որոնք հայ ազգային շարժման ապավենը որոնում էին արևմտաեվրոպական պետությունների քաղաքական միջամտության մեջ։ Այդ տեսակետից ուշագրավ է Շահնազարյան Կարապետ վարդապետի դիրքորոշումը։

Աշխարհով մեկ սփռված ազգակիցների ապաքախտության պատճառը Շահնազարյանը համարում էր հայ «իշխաններին», որոնք իրենց հպատակներին ժառանգություն թողեցին միայն «տգիտություն, ստրկություն, արտասուք և նախատինք»։ Նա եկեղեցու բռնավորներին համարում էր «չարագոյն քան զօտարազգիս»[38]։

Նա միայն եկեղեցին չէր համարում ազգի ինքնագործունեության ասպարեզը. «Արդ իբրև հայ կփափագիմ,— գրում էր նա,— որ ազգս ոչ միայն ազատ ըլլար, այլև իր հայրենիքին ինքնիշխան տիրեր, քաղաքական հրահանգներով ծաղկեր, աշխարհաշինություն փայլեր, զինվորական և ընտանեկան առաքինություններով նախանձելի ըլլար, մարդկության օգտակար անդամ և իր նախահորը (Հայկին—խմբ.) արժանավոր ժառանգ. վերջապես կբարեմաղթեմ, որ իր բազմաժամանակյա ստրկության գարշությունը ճանաչելով ինքն ալ ցանկանար, օր առաջ մարդկության նպատակին համեմատ ազատորեն ապրիլ...»[39]։

34 «Կռունկ», 1860, էջ 595 և հետ.։

35 Գրականության և արվեստի բանգարան, Գաբր. Պատկանյանի հիշատակարան, թ. 740։

36 Նույն տեղում, Ներսես Աբելյանի արխիվ, գ. 26, թ. 11—12։

37 «Մեղու Հայաստանի», 1863, № 6, էջ 47, № 7, էջ 68։

38 Կ. Վ. Շահնազարյանց, Դաշանց Թղթո քննության ու հերքումը, Փարիզ, 1862, էջ 128։

39 Նույն տեղում, էջ 58։

Ազգային-պահպանողական մյուս գործիչների պես Շահնազարյանը ևս քննադատում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը։

Իր հայացքներով Կ. Շահնազարյանին մոտ էր կանգնած Գաբրիել Պատկանյանը։

1830—1840-ական թթ. Պատկանյանը հանդես եկավ նոր նախիջևանում որպես ցարիզմին հենարան ծառայող կղերա-աղայական տարրերի քննադատ։ 1850-ական թթ. սկզբներին նա քահանայագրկվեց, ենթարկվեց կալանքի ու աքսորի։

1863—1864 թթ. իրավունք ստանալով Վյատկայից փոխադրվել Պետերբուրգ, Գ. Պատկանյանը հանդիսանում էր իր որդու՝ բանաստեղծ Ռ. Պատկանյանի ջանքերով լույս տեսնող «Հյուսիս» շաբաթաթերթի գրեթե միակ հրատարակիչ-խմբագիրը։ Ծառանալով կղերա-աղայական հոսանքի քարոզած «ուր հաց, անդ կաց» աշխարհաքաղաքացիական սկզբունքի դեմ, նա օտարության մեջ ձգտող հայ առևտրականներին հորդորում էր հայրենիք վերադառնալ և իրենց բարեկեցության հիմք դարձնել հայրենի հողը[40]։

Հայը պահում է յուր տոհմը, յուր լեզուն, յուր ազգությունը, յուր նախնյաց անունը, ասում է Գ. Պատկանյանը, «բայց համեմատելով այժմյան ազգերուն, հայը չի կարող ասվել ազգ»։ «Ազգ դառնալու համար,— ասում է նա,— նրանք պետք է ունենան հավաքականություն և ընդհանուր նպատակ»[41]։ Համազգային նպատակի շուրջը միավորվելու համար հայերը պետք է համախմբվեին հայրենի հողի վրա։ «Աչքի առաջ ունենալով եվրոպայի ազգերի և մանավորապես Ռուսաստանի հովանավորությունը՝ կարելի է հուսալ, որ օսմանցիներն ու պարսիկները վերջ տան իրենց հետապնդումներին և հայերը գտնեն իրենց համար համախմբության կենտրոն և ազգության մեջ ընդհանուր նպատակ, ազգ դառնան և ազատություն վայելեն»[42]։ Նման հույսեր էր ներշնչում Պատկանյանին, մանավանդ, 1860 թ. հռչակված Ազգային սահմանադրությունը։

Հայրենադարձության և ազգային համախմբման հեռանկարների հետ Պատկանյանը միավորում էր նոր խնդիրներ։ Հողագործ հայերը չեն ազատագրվի աղքատության ճիրաններից, եթե անփոփոխ մնա հողագործության պապենական եղանակը։ Առանց հողամշակման նոր եղանակների, ազգը չի կարող հաղթահարել բնաջնջման վտանգը[43]։ Եթե հայերը կամենում են դիմանալ եվրոպական մրցությանը, պիտի յուրացնեն մեքենագործության արհեստը։ Արհեստագործության մեջ եվրոպացիները հետևում են աշխատանքի բաժանման սկզբունքին, մինչդեռ հայերը շարունակում են կառչել արտադրության մենագործ եղանակից։ Իր ընթացքը պետք է փոխի նաև վաճառականությունը։ Առանց հաշվապահության, վաճառագիտություն կամ «ապրանքագիտություն» չկա։ Հայ վաճառականները առանց դրա չեն կարող ծավալել իրենց առևտուրը, «Եվրոպայի միլիոններին բաժանորդ լինել» և դա-

40 Գ. Պատկանյան, *Ուսումնասե՞ր են հայք*, Մատենադարան, Պատկանյանի արխիվ, Քղք. № 37, վավ. № 34, էջ 35։

41 «Հյուսիս», 1863—64, էջ 177 և հետ.։

42 Նույն տեղում, էջ 178։

43 Նույն տեղում, էջ 187։

տասարտված պիտի լինեն միայն սպասավորել եվրոպական վաճառականներին[44]: Պատկանյանը մատնանշում է վաճառականական ընկերություններ և վաճառատներ կազմակերպելու անհրաժեշտությունը. առանց դրանց նրանք չեն դիմանա «եվրոպացոց մեծ մեքենաշինությանը»[45]:

Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարները Պատկանյանը սերտորեն առնչում էր ազգային լուսավորության հետ:

Գաբրիել Պատկանյանը հաճախ էր ոդեշնչվում ազգային անցյալի հերոսական դրվագներով: Նա 1860-ական թվականներին ժամանակակից երիտասարդության մասին իր մի անտիպ հոդվածում գրում էր.

«Ո՞ր թմրյալ հոգին չպիտի հասկանա, թե արդի պատանիք պատրաստ են այսօր յուրյանց օրն և արևն ողջակեզ բերել ի սուրբ սեղան ազգին և յուրյանց արյան հետին շիթն կաթեցուցանել իբրև կայլակ մի ձիթո ի կանթեղ հայրենասիրության՝ հօգուտ տառապյալ ազգին...»[46]:

Այնուամենայնիվ Շահնազարյանի պես Պատկանյանը ևս հայերի ազատագրման հեռանկարները չէր շաղկապում մարտական սխրանքների ու զոհաբերությունների հետ: Նա ևս փրկություն էր ակնկալում միայն եվրոպական պետություններից:

Այս ամենից հետո զարմանալի չէ, որ հերոս լեռնցիների ազատության գրավականը նա ևս տեսնում էր միայն Նապոլեոն III-ի միջամտության մեջ[47]: Իբրև խաղաղ վերանորոգումների և եվրոպական դիվանագիտության ջատագով, Պատկանյանը ևս կատաղի հակառակորդ էր հեղափոխական ցնցումների: 1862 կամ 1863 թթ. նա գրեց անտիպ մնացած իր «Փայտե ձիու վրա նստած հառաջադիմություն» պամֆլետը, ուր իր սրտի ամբողջ մաղձը թափում էր պրոգրեսի առտնին «չարագրգիռ քարոզիչներին» գլխին՝ արձագանքելով Լոնդոնի վտարանդիների և նրանց հայ կուսակիցների դեմ ռուս ռեակցիոն մամուլի էջերից տեղացող լուտանքներին:

Վաթսունական թվականների կեսերին, Ռուսաստանում արդեն գլուխ բարձրացրած ռեակցիայի պայմաններում, Պատկանյանը փոխում է իր դիրքորոշումը: Նա երես է դարձնում արևմտահայ ազատագրական շարժումից և, Շահնազարյանի օրինակով, փրկության հույսեր կապում արևմտաեվրոպական պետությունների դիվանագիտական խաղերի հետ:

Թե որքան նեղ էր ազգային-պահպանողականների ակնկալած ազգային ռեֆորմների շառավիղը, կարելի է հետևցնել Մ. Աղաբեկյանի այն ազդարարությունից, թե ազգը կաթողիկոսական խնդրից բացի ուրիշ ոչինչ չունի բարեկարգելու:

Ժողովրդական, դեմոկրատական զանգվածները նրանց պատկերանում էին որպես պատմության կրավորական, անշարժ ու լճացած գործոն:

Հիրավի, ազգային-պահպանողականների մոտ ժողովուրդը որպես կույր տարերք իր կնիքն է դնում նույնիսկ պատմության ղեկավար գործիչների

---

44 «Հյուսիս», 1863—64, էջ 226:

45 Նույն տեղում, էջ 226 և հետ.:

46 Դրականության և արվեստի թանգարան, Գաբրիել Պատկանյանի արխիվ, թղթ. 129բ, վավ. 67:

47 Մատենադարան, Պատկանյանի արխիվ, թղթ. № 137, վավ. № 67:

վրա, նրանց հայեցակետով պատմական գործիչները անզոր են, եթե ուրմատներ չունեն ժողովրդի անցյալի մեջ։ Եվ այս չէ՞ միթե պատճառը, որ չնայած «ազգի» և «ժողովրդի» մասին իրենց արած հաճախակի հուշարկումներին, նրանց երկերը քիչ բան են տալիս ժողովրդի կարիքներն ու նպատակամղումները հասկանալու և նրա կյանքի օրինաչափությունները ըմբռնելու համար։ Ցատալիստորեն ապավինելով անցյալի պատմական տարերքին, ազգային-պահպանողականները ստվերի տակ էին թողնում ոչ միայն անհատ գործիչների ստեղծարար նախաձեռնությունը, այլև պատմությանն ընթացք տվող ժողովրդական զանգվածների ներգործոն դերը՝ ազգի փրկությունը ըստպասելով դրսից կամ վերուստ տրվելիք բարենորոգումներից։

3. ԼԻԲԵՐԱԼ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Լիբերալ-բուրժուական հոսանքը արձագանքում էր բուրժուական այն հասարակախավերին, որոնց բարեկեցությունը կախված էր արդյունաբերական կապիտալի հետ կապված ռուսահայ գաղթավայրերից, որոնք XIX դարի 50—60-ական թվականներին դարձան հենց այդ հոսանքի գործունեության հանգրվանները։ Այդտեղից էին ստանում նրանք և նյութական աջակցություն, և գաղափարական զորեղ մղումներ։ Պետերբուրգն ու Մոսկվան, Ն. Նախիջևանը, Ղրիմն ու Աստրախանը, Ղզլարն ու Մոզդոկը շատ ավելի անմիջականորեն էին կապված XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ լիբերալների լուսավորական գործունեության հետ, քան Երևանն ու Ալեքսանդրապոլը, Մեծ Դարաքիլիսան ու Նոր Բայազետը։ Հատկանշական է, որ «Հյուսիսափայլ»-ը ավելի շատ բաժանորդներ ուներ Ռուսաստանի հայ գաղթավայրերում, քան կովկասյան տրանզիտի հետ կապված հայ առևտրականների այնպիսի հանգրվաններում, ինչպես Թիֆլիսն ու Շամախին, Ագուլիսն ու Շուշին։ XIX դարի կեսերին Ռուսաստանի հաղորդակցության ճանապարհների, ապրանքային տնտեսության և կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ամրանում էին Ռուսաստանի հայաբնակ ու ցրիվ գաղութների փոխադարձ կապերը և աշխուժանում հայկական համայնքների ազգային-հասարակական կյանքը։ Եթե դարասկզբին Ռուսաստանի հայաբնակ գաղութներում հարաստություն էին կուտակում և ազգային կյանքում գործոն դեր կատարում հայ այն տարրերը, որոնք լայնորեն օգտագործում էին ցարիզմի կողմից իրենց շնորհված արտոնությունները, ապա դարամիջին այդ վայրերում ավելի ազդեցիկ էին դառնում այն տարրերը, որոնց նյութական կուտակումները կապված էին գլխավորապես արդյունաբերական կապիտալի տնտեսական ու տեխնիկական նվաճումների հետ։ Մանր արտադրության վրա հիմնված առևտրա-վաշխառուական հին կենցաղը տեղի էր տալիս նոր, բուրժուական հարաբերություններին։ Սկսվում է երիտասարդության ուժեղ հոսք դեպի Ռուսաստանի կրթական օջախները, մեծանում են ազգային գրականության ու դպրոցի, տպագրության ու մամուլի պահանջները։ Անհրաժեշտություն էր դառնում գրական նոր լեզվի մշակումը։ Երիտասարդության մեջ հասունանում էր բուրժուական-դեմոկրատական լուսավորչության բնորոշ ձգտումը

դեպի հասարակական կենսաձևերի եվրոպականացումը։ Գիտությունը և բանականությունը հակադրվում են եկեղեցու դավանաբանական նեղմտությանը։ Համաժողովրդական շահեր արտահայտող «նոր ուսումնականների» ազգային գիտակցությունը հակադրվում է կղերա-ազգայնական արտոնվածների հայացքներին, նպաստում լուսավորության գործի ժողովրդականացմանը, ազգի բախտը կապելով ոչ միայն ունևորների մեկենասության, այլև լուսամիտ դաստիարակողների ստեղծագործ մտքի հետ։

Արևելահայ լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխ Ստ. Նազարյանի ազգային-լուսավորական հայացքները կազմավորվեցին XIX դարի 30—40-ական թվականներին, Ռուսաստանում իշխող ֆեոդալա-ճորտատիրական սիստեմի տիրապետության պայմաններում։ Նրա վրա ազդեցություն էին ունեցել ազգային-ազատագրական այն տրամադրություններն ու հայացքները, որոնք հույսեր էին ներշնչում արևելահայերին՝ Ռուսաստանի օգնությամբ թոթափելու պարսկա-թուրքական լուծը։ Երևանական թվականներին, Դորպատում ուսանելիս, Աբովյանի հետ մեկտեղ բարեբախտություն նկատելով Հայաստանի միացումը Ռուսաստանին, Նազարյանը պատմական այդ իրադարձությունը նախերգ է համարում հայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրումը մարմնավորող լուսավորության։ 1843 թ., երբ կաթողիկոս ընտրվեց Ներսես Աշտարակեցին, Նազարյանը վստահ էր, թե նոր կաթողիկոսը և Նազարյաններն իրենց ձեռքը վառնեն ազգի ղեկը, նրան կառաջնորդեն դեպի եվրոպական լուսավորություն։

Նիկոլայ I-ի բռնատիրությունը հուսախաբության մատնեց Նազարյանին։ Աբովյանին և Աշտարակեցուն գրած նամակներում նա ոչ միայն մերկացնում էր մեծատունների ստրկահաճությունը, այլև նրանց հովանավորող ցարական բյուրոկրատիայի քաղաքականությունը։ Աբովյանին ուղղած մի նամակում հայտնում էր, թե այդ մասին գերմաներեն մի ճառ է գրել՝ «Մի հայացք Հայաստանի ներկայի և ապագայի մասին, հոգևոր տեսակետից» խորագրով։ Հայտնում էր նաև, որ ճառը գրվանի տակ էր մնացել՝ «վտանգավոր» բովանդակություն ունենալու պատճառաբանությամբ։ Զգալով ազգի դիմազրկման վտանգը, այս ժամանակաշրջանում Նազարյանը ազգի կենսունակության և հարատևության երաշխիք էր համարում ոչ միայն նրա լեզուն ու կրոնը, այլև «քաղաքական անոթը»։ 1845 թ. Նալբանդյանի «Ցաղագս հայկական դպրության ճառ»-ը խմբագրելիս Նազարյանը այն միտքը մտցրեց, թե «գաւազան իշխանութեան է, որ հովանաւորէ և զգիտութիւն և զուսումն ազգի և ոչ ուրեք ծաղկեցան իմաստութիւնք առանց ազգային պետութեան»[48]։ Այս նույն միտքն էր կրկնում նա 1859 թ., երբ հույների ազգային-ազատագրական շարժման մասին գրում էր, որ չկա ավելի վեհափառ տեսարան, քան այն, երբ ժողովուրդը «յուր կյանքը և պատիվը պաշտպանելու համար, վեր է կալնում զենքը, որ արիասիրտ պատրաստակամությամբ կամ հաղթե, կամ մեռանի»[49]։

Չպետք է այնուամենայնիվ եզրակացնել, թե իրենց անկախությունը զենքի ուժով պաշտպանող ազգերի մասին մեծ ակնածանքով խոսող Նազարյա-

48 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 42 և հետ.։

49 «Հյուսիսափայլ», 1859, էջ 898։

նը իր ժողովրդի ինքնապահովության և զարգացման երաշխիքը ևս որոնում էր դինված ապստամբության մեջ։ Նա մերժում է պայքարի հեղափոխական ճանապարհը, լուսավորությունը համարում հայերի նյութական բարեկեցությունը երաշխավորող այն միջոցը, որը կոչված է «հոգի և զորություն տալ ազգին դիմանալու օտարի կլանող բռնությանը»[50]։

Տակավին 40-ական թվականներին Նազարյանը ձգտում էր իրավունք ստանալ արևելահայ աշխարհաբարով հայ պարբերական հրատարակելու կադանում, ուր նա ստանձնել էր համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը։ Պարբերականի նպատակն էր «հաղորդել ժողովրդյան եվրոպական քաղաքականության (քաղաքակրթության— խմբ.) և կրթության հառաջադիմությունը և կատարել աշխարհումը ցաք ու ցիր եղած Հայկա որդվոց մեջ մտավորական առ ու տուրք», քաջալերելով նրանց ազնիվ ու գեղեցիկ նախաձեռնությունը ազգային լուսավորության մասին, միավորել նրանց «ի մի մարմին բարոյական՝ հոգևորեալ հասարակաց մտածությամբ»։ Ցարական կառավարությունը չընդառաջեց երիտասարդ գիտնականի ինչպես այս, այնպես էլ սրան հաջորդած ազգային-մշակութային այլ մտահղացումների կենսագործմանը[51]։

Հայերեն պարբերականի հրատարակումը իրագործվեց միայն Ղրիմի պատերազմից հետո՝ Ռուսաստանում սկսված հեղափոխական իրադրության տարիներին։ 1858 թ. Մոսկվայում Նազարյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Հյուսիսափայլ» ամսագիրը։

«Հյուսիսափայլ»-ը որպես եվրոպական գիտության և ռուսական քաղաքակրթության դրոշակակիր ձգտում էր իր ձայնը Մոսկվայից հասցնել Կովկասի հեռավոր անկյուններն ու Ասիայի խորքերը։ Նրա նպատակն էր ծառայել ազգի բազմության, ժողովրդի կրթությանը, և լինել ազգի ինքնապահպանության զենք՝ «արտաքին սպառնալիքի» դեմ։

«Հյուսիսափայլ»-ը հակադրվում էր հայ կյանքում տիրող կղերական մտքի գերիշխանությանը և դառնում ազգային-լուսավորության բերան։ Ազգային ռեակցիային դիմադրելու համար ռուսահայ լիբերալ բուրժուական հայացքներ պաշտպանող Նազարյանը հանդես եկավ բուրժուա-դեմոկրատական հոսանքի միասնական ճակատում։ Պատահական չէ, երբ 1861 թ. էջմիածնի սինոդը սպառնում էր արգելել ամսագիրը, նրան պաշտպանելու համար հրապարակ եկան Պետերբուրգի մի խումբ հայ գործիչներ, որոնց մեջ էին և լիբերալ, և պահպանողական, և դեմոկրատ մտավորականներ՝ Նիկողայոս և Պետրոս Շանշյանները, Մովսես և Ղազար Բուդաղյանները, Մկրտիչ Սանասարյանը, Ռափայել Պատկանյանը, Ղազարոս Ղաֆյանը և ուրիշներ։ Թիֆլիսում ևս ռեակցիայի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու համար ազգային-պահպանողականները հենակետեր էին որոնում դեմոկրատական հասարակախավերի մեջ։ Նրանք էին, որ առաջին անգամ հրատարակեցին և Սայաթ-Նովային և Խաչատուր Աբովյանին։ Առավել հատկանշական է, սա-

50 «Հյուսիսափայլ», 1859, էջ 898։

51 Աշ. Հովհաննիսյան, Մ. Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, Երևան, 1955, էջ 134 և հետ.։

կայն, որ ամսագրի հենց սկզբնավորման պահից Նազարյանը ջինակցեց հայ դեմոկրատիայի առավել աշքի ընկնող հրապարակախոսի՝ Միքայել Նալբանդյանի հետ, որը և դարձավ նոր պարբերականի գլխավոր աշխատակիցը։

Ի տարբերություն Նալբանդյանի, որը հենվում էր ողջ հայ դեմոկրատական լայն հասարակախավերի վրա և արտահայտում նրանց գաղափարախոսությունը, Նազարյանի հրապարակախոսությունը ղարգացման «եվրոպական քաղաքակրթության» ուղի բռնած արևելահայ լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսությունն էր։



«Հյուսիսափայլ»-ի տիտղոսաթերթը

Բնութագրելով հայ վաճառականությանը, Նազարյանը տակավին 1851 թվականին էր դիտում, թե հայերի գնելու և վաճառելու զբաղմունքը հեռու է եվրոպական «քաղաքականության» (քաղաքակրթության—խմբ.) հետ կապված վաճառականությունից, որովհետև իրենց անկրթության հետևանքով հայերը զուրկ են վաճառաշահ արտադրանքի գործատներից («գործարանս վաճառաշահական յօրինուածոց») և չունեն առևտրական այնպիսի ընկերություններ, որոնք միլիոններ են խաղացնում[52]։ Տասը տարի անց նա հայերին հորդորում էր «իմացական վաճառաշահության և տուրևառքի հրապարակ բանալու ազգի մեջ»[53], այլ խոսքով՝ նրանց հանձնարարում անարտադրական առևտրից անցնելու կապիտալիստական արդյունաբերության։

«Վաճառականական ժողովուրդ» համարելով հայերին՝ «Հյուսիսափայլ»-ի խմբագիրը հաղիվ էր նշմարում հայ գյուղացի դասին։ Անդրկովկասի համքարությունների հարցում նա առարկում էր ազգային-պահպանողական «թիֆլիսցիներին»։ «Այն արվեստակից համքար կամ ասնաֆ ասված միաբանու-

52 Ստ. Նազարյանց, Յաղագս փորձական հոգեբանության Ճառ, Մոսկվա, 1851, էջ ԻՉ և հետ.։

53 «Հյուսիսափայլ», 1861, էջ 5։

Բյանցը,— գրում էր նա,—որոնց շատ սիրում են Թիֆլիսեցի հայերը, մեծ զորություն և ազդեցություն ընծայել ամենևին արտաքին բան է. և ոչինչ խորհուրդ չունի, եթե ոչ մի արտաքին կարգ ու կանոն պահելու արվեստակիցների մեջ և հսկելու նոցա նյութական օգտի վերա»։ «Ոչ մի տեղ այդ արվեստակիցների հոգաբարձությամբ չէ հառաջացել... ոչինչ ընկերական կարգադրություն, ոչ մի ուսումնարան, ոչ մի ժողովրդական գրանոց, ոչ մի ընթերցանության կամ մի այլ իմացական գործողության ժողով»[54]։

Նազարյանի կարծիքով արդյունաբերող վաճառականությունը պիտի լիներ ազգային կյանքը շարժող և ազգի բարեկեցությունը պահպանող զսպանակը։ Նա էր դարձյալ, որ պիտի չեզոքացներ կղերի միապետությունը, մշակեր «ամբոխի» կորդացած միտքը և ապահովեր ժողովրդի բարօրությունը։ Ամեն ինչ պետք է սկսել առևտրի ու վաճառականության կարգավորումից, սրանց «եվրոպականացումից»։

1860 թ. «Հյուսիսափայլ»-ում տպագրելով «Ժողով վաճառականների ի Մոսկվա» վերտառությամբ մի նախագիծ, Նազարյանը բարձրացնում էր հայ և ռուս բուրժուազիայի տնտեսական փոխհարաբերությունների հարցը։ Նա խորհուրդ էր տալիս հրաժարվել տեղական մանր արտադրության և արտասահմանյան կապիտալի հետ զոդված գործառնությունից և վաճառականական ընկերությունների միջոցով կապվել ռուսական արդյունաբերության հետ։ Միայն այդ միջոցով է հնարավոր ընդարձակել ազգային առևտրի ծավալը և հետզհետե անցում կատարել դեպի գործարանային ու ֆաբրիկային արդյունաբերությունը։ Ոչ միայն հայերի առևտուրը, այլ նրանց գյուղատնտեսությունն իսկ չունի զարգացման այլ հեռանկար, քան կապիտալիզմի ուղին։ Նազարյանը մատնանշում է այն դերը, որ կարող էին խաղալ հայերի մեջ «եվրոպական խոհեմ կարգով կազմակերպված այգեգործությունն ու մետաքսագործությունը»[55]։ Միայն նման միջոցով է, որ պիտի «ազգը զորանա»։ Ազգի զարգացման համար անհրաժեշտ է, որ հայ պատանիները ստանան նաև «վաճառականական և պոլիտեխնիկական կրթություն»[56]։ «Հյուսիսափայլ»-ի էջերում Նազարյանը արծարծում էր բաժնետիրական հիմունքներով կազմակերպվելիք ռուսահայ գործարանային արդյունաբերության գաղափարը և դրա հետ կապված հայ առևտրական կապիտալի զարգացման սոցիալ-տնտեսական հեռանկարները։

Մատնանշելով կապիտալիստական զարգացման այդ ուղին, Նազարյանլուսավորիչը ելնում էր ոչ թե արևելահայ բուրժուազիայի դասակարգային շահերը պաշտպանելու նեղ մտահոգությունից, այլ արևելահայ հասարակական կյանքի բուրժուական ուղու հետ լծորդված ազգի ընդհանուր բարեկեցության, նրա համախմբման ու ինքնապահովման մղումներից։ Հայ վաճառականության շահերն իսկ նրան պատկերանում էին ազգի ընդհանուր առաջադիմության և «հասարակաց» (ընդհանրության) շահախնդրության հետ լծորդված։ Նույն մերձեցմամբ վեր հանելով վաճառականության կապիտալիստական

---

54 Ստ. Նազարյանց, Երկեր, հատ. Ա, Թիֆլիս, 1913, էջ 112։

55 Նույն տեղում, էջ 163 և հետ.։

56 Նույն տեղում, էջ 273 և հետ., 282 և հետ., համմ. նաև «Հյուսիսափայլ», 1858, էջ 233։

զարգացման հեռանկարները, հրապարակախոսը խարազանում էր ազգի «հարստականների» (նախակապիտալիստական շրջանի «մեծատունների») հետամնացությունն ու բսականությունը և եվրոպական լուսավորության ու առաջադիմության պահանջների անտեսումը նրանց կողմից[57]։

Ղրիմի պատերազմում ցարիզմի կրած պարտությունը ցույց տվեց, որ իշխող ճորտատիրական կարգերը պատճառ են դառնում Ռուսաստանի հետամնացությանը և արգելք նրա առաջընթացին։ Այս նշանակում է, որ ճորտատիրական կարգերը անհամատեղելի էին դարձել Ռուսաստանի պետական շահերի հետ։ Անգամ ցարիզմի ղեկավարները հանգեցին այն եզրակացության, որ եթե գյուղացիության ազատագրությունը տեղի չունենա «վերից»՝ ռեֆորմի միջոցով, այն տեղի կունենա «վարից»՝ հեղափոխական ճանապարհով։

Ի՞նչ ուղիներով պիտի գնա երկրի հետագա զարգացումը՝ ռեֆորմի՞, թե՞ հեղափոխության. այս երկընտրանքի առաջ էր կանգնած Ռուսաստանն այդ պահին, և երկրի երկփեղկված հասարակական միտքը հածում էր հիմնական այդ հարցի շուրջը։

Ջնայած երկրում օրավուր աճում էին ճորտերի տարերային հուզումները, բայց հեղափոխություն, այնուամենայնիվ, չկատարվեց. վճռական այդ պահին ռուս ճորտերը գիտակից ու կազմակերպված հեղափոխական դասակարգ չէին կազմում։ Դիմադիր բուրժուազիան ոչ միայն չգլխավորեց ապրստամբող ճորտերին, այլև երկյուղ կրելով հեղափոխությունից, փարեց ցարական ռեֆորմներին։ Վճռական րոպեին նա ձայնակցում էր խաղաղ ռեֆորմների ընթացքը իր օգտին շրջող կալվածատերերին։

Հասկանալի է, որ այս պայմաններում դեպքերի ընթացքը թեքվում էր բուրժուա-կալվածատիրական դասակարգերին ձեռնտու ռեֆորմների կողմը և, հաշվի առնելով իր համար նպաստավոր ուժերի այդ դասավորությունը, ռեֆորմներից անմիջապես հետո ցարիզմը հակագրոհի անցավ ապստամբության սպառնացող գյուղացիության դեմ։

XIX դարի վաթսունական թվականների սկզբին կղերա-աղայական հոսանքին դիմադրող մինչ այդ միասնական բուրժուա-դեմոկրատական ճակատը իր ազդեցությունը գործեց նաև հայ կյանքում։ Գյուղացիական հեղափոխության դեմ հակագրոհի էին անցնում հայ կղերա-աղայական հոսանքը և ազգային-բուրժուական մտքի պահպանողական ու լիբերալ տարատեսակությունները։

Համառուսական հեղափոխական իրադրության տարիներին Նազարյանը մտահոգված էր ռուս ճորտերի բարոյական ազատության խնդրով միայն։ «Այս րոպեիս,— գրում էր նա,— գտնվում է Ռուսաստանը մի խորհրդավոր վերածնության ասպարեզի մեջ»։ Նա ողջունում էր ցարի գաղափարը—«ազատել ռուսաց շինականը դարավոր, տմարդացուցիչ ծառայության լծի տակից և այդպես ճանապարհ բանալ նորան դեպի բարոյական ազատությունը...»[58]։ Նազարյանը վստահ էր, որ ցարական առաջիկա ռեֆորմների շնորհիվ ոչ միայն ռուս ժողովրդի «իմացական զորությունքը կարող են այժմ ազատա-

57 Նույն տեղում, էջ 282։

58 «Հյուսիսափայլ», 1859, էջ 451։

այնս աճել և զորանալ», այլև, որ նոր հորիզոններ են բացվում նաև ժողովրդի առաջ. «Եվրոպան բաց ու արձակ է հայերու առջև, նոքա կարող են մասնակից լինել նորա կրթությանը և լուսավորությանը»[59]:

Երբ ցարիզմը հարձակման անցավ Ռուսաստանում բռնկվող գյուղացիական-ապստամբությունների դեմ և ռուս լիբերալները խոհեմության կոչեր էին տղում գյուղացիական հեղափոխությունը հրահրող Ռուսաստանի ազատամիտ ուսանող երիտասարդությանը, արևելահայ լիբերալների պարագլուխ Ս. Նազարյանը ևս փորձում էր սաստել հեղափոխական տրամադրություններով համակված հայ երիտասարդներին: «Հայը Ռուսաստանում վայելում է քաղաքացու իրավունքը,— հիշեցնում էր նա,— ոչինչ բռնություն չի հասնում նորա ընտանիքին և ոչ նորա վաստակին, ամենը նա կարող է վայելել օրենքի պաշտպանության տակ, ցուցաբերելով միայն յուր պարտքն իբրև քաղաքացի մի տերության, որ նյութապես և բարոյապես սնուցանում է նորան, և տալիս է ամեն մի հային նույնքան իրավունք, որքան յուր ազգին, ամենևին անխտիր իբրև միևնույն թագավորության որդիները»[60]:



Ստեփանոս Նազարյան

Նազարյանը հանգում էր այն մտքին, թե հայ ժողովրդի Ռուսաստանին միացած հատվածը արդեն իսկ թոթափել է քաղաքական ստրկության լուծը և հիմա նրան մնում է միայն «ազատապես աճել ու զարգանալ»:

Իր դիրքավորումով Ս. Նազարյանը սահմանազատվում էր կովկասահայ պահպանողականների ազգային-քաղաքական ինքնորոշման նպատակամղումներից և միաժամանակ բարեկամական խոսք ուղղում ազգի մեծատուններին:

«Հյուսիսափայլ»-ի խմբագիրը ուզում էր հավատացնել հայ մեծատուններին, թե նրանց ձեռքում է գտնվում նույնիսկ հայ «հասարակի» փրկության բանալին, նրա մերկությունը ծածկելու հնարը, նրա լուսավորությունն ու բարօրությունը»[61]: Նա չէր հակադրվում անգամ հայ եկեղեցուն, քանի որ նրան թվում էր, թե միայն եկեղեցու միջոցով է; որ հայերը պիտի առաջ տանեն ազգաշինության և լուսավորության գործը. դրա համար հարկավոր է միայն, որ «իմացության և կրթության պարագլուխ եկեղեցին վերանորոգվի «ավետարանական ոսմանքով»:

---

59 Ստ. Նազարյանց, Երկեր, հատ. Ա, էջ 93:
60 «Հյուսիսափայլ», 1861, էջ 252:
61 Նույն տեղում, էջ 253:

«Հյուսիսափայլ»-ը իր հրատարակության վերջին տարում՝ 1864 թ. ասպարեզ իջավ դարձյալ «խաղաղության շյուղը ձեռքին»։ Նազարյանը նորից մոտեցավ երեմնի հակառակորդներին՝ «անկեղծ ու աննենգ եղբայրությամբ»։

Այնուամենայնիվ, խորացող ռեակցիայի պայմաններն աննպաստ էին անգամ նահանջող լիբերալիզմի համար։ 1867 թ. Նազարյանը թույլտվություն էր խնդրում կառավարությունից հրատարակելու նոր պարբերական՝ «վապտեր Հայաստանի»-ն, որի էջերում նախատեսվում էր ոչ միայն ազգային-պահպանողական Կ. Եղյանի և Գևորգ Քանանյանի, այլև հայկական ռեակցիայի պարագլուխներից մեկի՝ Մ. Մսերյանի աշխատակցությունը։

Նազարյանի այս մտահղացումը չիրականացավ միայն այն պատճառով, որ Երրորդ բաժանմունքը «սեպարատիստական» տենդենցներ էր նշմարում Նազարյանի մեջ, ի դեմս նրա տեսնում էր մեկին, որը «հետամուտ է կառավարության շահերին հակառակ՝ հայ ազգային ձգտումներին»[62]։

Ցարական ժանդարմները սխալ հետքերի վրա էին։ Նրանք անտեսում էին հրապարակախոսի հայացքների մեջ կատարված հեղաբեկումը, հաշվի չէին առնում, որ Նազարյանը ազգային-քաղաքական ակնկալություններ չուներ ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև նույնիսկ Հայաստանի արևմտյան հատվածի ազգային քաղաքական հեռանկարների նկատմամբ։ «Այժմ փառք և գոհություն ամենակարողին,— գրում էր նա արևմտահայերի Ազգային սահմանադրության կապակցությամբ,— մեր հայրենակիցքը թե Տաճկահայաստանի և թե Ռուսաստանի մեջ վարող են ապրել առանց թաղելու յուրյանց ձեռքի վաստակը հողի տակ, առանց տների պատերի մեջ փակելու յուրյանց կին ու զավակը»[63]։ Նազարյանը «ազգային օջախ» չէր որոնում ո՛չ Ռուսաստանի և ո՛չ իսկ Թուրքիայի սահմաններում։ «Ո՜հ, այս րոպեիս մեր ցան ու ցիր հողերին զարկած, բրդգված կյանքի մեջ, մեր հայրենիքը չեն Անի քաղաքի ավերակները, որ ոմանք կարճատես մարդիկ հրավիրում են մեզ կենակից լինել բուերի և խլեզների,— ոչ, մեր հայրենիքը այս րոպեին մեր սրտի և հոգու մեջ է, թեպետ նույնպես ավերակ և փլատակված, ինչպես Անի քաղաքի անցած փառահեղությունը»[64]։

Փոքր-ինչ հետո Նազարյանը ազգային-հոգևոր անկախության այս գաղափարը պարուրում էր կրոնա-բարոյական ազատությամբ և հումանիզմով։ Նա այն միտքն էր հայտնում, թե որքան դանդաղ ընթանա որևէ ազգի լուսավորությունը, նույնքան ապահով կլինի նրա նպատակի իրագործումը, «եթե նա տևողապես կհիմնավորվի բանականության, կրոնական ազատության և ավելի վերին, իբրև կրոն պայծառակերպված բարոյականության և մարդկայնության վրա»[65]։

Հայ լիբերալիզմի կապը այդ ժամանակաշրջանում թույլ էր անդրկովկասյան հայության հետ։ Անդրկովկասում իսկ, ուր հազիվ միայն իր առաջին

---

62 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, Երևան, 1962, էջ 86։

63 «Հյուսիսափայլ», 1861, էջ 252։

64 Նույն տեղում, 1860, էջ 72։

65 Նույն տեղում, 1862, էջ 302։

քայլերն էր անում կապիտալիզմը, հայ բուրժուազիան ամուր հենարան չուներ արևելահայ լիբերալիզմի ազգային-քաղաքական դիրքավորման համար։ Սակայն այդ մի պահ էր, երբ արևելահայ բուրժուազիան նշմարում էր իր նկատմամբ ցարական քաղաքականության հովանավորությունը։

4. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

1859—1861 թվականների համառուսական հեղափոխական իրադրության տարիներին հայ հեղափոխական դեմոկրատները Միքայել Նալբանդյանի գլխավորությամբ կազմում էին ռուսական հեղափոխական դեմոկրատիային ընդառաջող հեղափոխական ջոկատներից մեկը, որին խոշոր դեր էր վերապահված հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման մեջ։ Ճնշված ու հարստահարված ժողովրդական զանգվածների դասակարգային շահերը Նալբանդյանը տարբերանշում էր համաժողովրդական այն շահերից, որոնց պաշտպանության համար ժողովրդի անունից մինչ այդ հանդես էին գալիս միայն արևելահայ բուրժուազիայի պահպանողական և լիբերալ դաղափարախոսները։

Նրն սկզբնապես ազգային գործիչները ազգի լուսավորությունը ակնկալում էին իշխող վերնախավերի ձեռնտվությունից և նրա զարթոնքի կրողներ համարում լուսավորված մտավորականությունը, ապա Մ. Նալբանդյանը «հասարակ ժողովրդի» մեջ տեսավ ազգի հենարանն ու վերակենդանության չծակը։ Հատկանշական է, որ նա երիտասարդության առաջավոր ջոկատներին նվիրեց «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։ Մ. Նալբանդյանը հանդես եկավ որպես հայ հասարակական մտքի և ազգային-ազատագրական շարժման հեղափոխական-դեմոկրատական ուղղության հրապարակախոսը։ Այդ երկում նա պայքարի կոչ արեց հայ առաջավոր երիտասարդությանը՝ հանդես գալ հանուն հայրենիքի վերածնության, հանուն նրա ազատագրման և «կենսանորոգ ու որոտընդոստ հարության»։

Ցեղոդալա-կալվածատիրական բռնության դեմ Խ. Աբովյանի պարգած հայ դեմոկրատական ազգայնության դրոշը Մ. Նալբանդյանի և իր հետևորդների համար դարձավ ցարական դաղութատիրության և սուլթանական բռնատիրության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժման զինանշան։ Հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական ջանքերը նրանք դաղափարապես և կազմակերպչորեն կողմնորոշում էին դեպի Ռուսաստանում բռնկող դյուղացիական հեղափոխությունը, Արևմուտքում արծարծված ազգային և սոցիալական շարժումները։

Դրանով էլ հատկանշվում է հայ դեմոկրատական մտքի մեջ նրանց կատարած սոցիալ-քաղաքական շրջադարձը։

Մ. Նալբանդյանը ծնվել է 1829 թ. հոկտեմբերի 26-ին (ն. տ. նոյեմբերի 7-ին) Նոր Նախիջևան (ներկայիս Դոնի Ռոստովի Պրոլետարական շրջան) քաղաքում՝ արհեստավոր-դարբնի ընտանիքում։ Մի քանի ամիս խալֆայական դպրոց հաճախելուց հետո, մանուկ Մուխալին տալիս են Դաբրիել Պատկանյանի մասնավոր վարժարանը։ Ուշիմ ու շնորհալի պատանու մեջ Պատկանյանը սեր է արթնացնում դեպի գրաբարը, հայոց մատենագրությունն ու

պատմությունը և միաժամանակ նրան վարժեցնում ռուսերենի մեջ ոչ միայն որպես պետական լեզու, այլև ռուս հեղինակների «բանաստեղծական դեղեցիկ մտաց» յուրացման միջոց։

Նալբանդյանի աշակերտության տարիներին ազգային-պահպանողական Պատկանյանը պայքարի մեջ էր Ն. Նախիջևանի քաղաքային և հայ եկեղեցական վարչությունների մեջ բուն դրած աղայական և կղերական վերնախավի հետ։ Սուր ընթացք ստացավ նրա պայքարը քաղաքագլուխ Հարություն աղա Խալիբի և նրան հովանավորող ռուս բարձրաստիճան պաշտոնեության ու հայ եկեղեցական իշխանությունների դեմ։ Ոչ միայն իր գրվածքներում, այլև սաների հետ ունեցած զրույցներում Պատկանյանը նշավակում էր քաղաքի տգետ մեծատուններին ու խաբեբա առևտրականներին, ձևապաշտ իշխաններին ու ծիսապաշտ տերտերներին։

Պատահական չէ, որ իր դպրոցական տարիներին, նրան աշակերտած պատանի Նալբանդյանը մի ոտանավորում մերկացնում էր ազգային ֆամուսովների ու տարտյուֆների մռայլ դիմագծերը։ Պատկանյան-ուսուցչի հետ մեկտեղ պատանի Նալբանդյանին ևս բաժին հասավ Խալիբին հովանավորողների՝ Ներսես Աշտարակեցու և փոխարքա Վորոնցովի հալածանքից։ 1845 թ. կաթողիկոսը ստիպեց ուսուցչին Նոր Նախիջևանից տեղափոխվել Թիֆլիս, իսկ տիրացու Մուխալին առաջարկեց հաճախել Մկրտիչ Եկենյանի ընծայարանը։ Համոզված, որ սովորելու ոչինչ չունի նոր ուսուցչից, Մուխալը հրաժարվեց նրա դասերից, իր դեմ բորբոքելով կաթողիկոսի սուր զայրույթը։ Հալածանքը Մ. Նալբանդյանի դեմ էլ ավելի բորբոքվեց, երբ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի վիճակավորը դպրի կոչում տվեց Պատկանյանի սանին, առաջնորդարանի գրագրի և հետո նույնիսկ թեմական քարտուղարի պաշտոն հանձնելով նրան։

Թեմական քարտուղարի պաշտոնը հնարավորություն էր տալիս երիտասարդ Նալբանդյանին ծանոթանալու Ն. Նախիջևանի, Ղրիմի, Օդեսայի, Քիշնեվի հայ գաղթավայրերի վիճակին, շփվելու ռուս և ուկրաինացի աշխատավորության հետ և համակվելու առաջավոր մտավորականության տրամադրություններով։ Առաջնորդի քարտուղարը մեծ հեղինակություն էր վայելում և իր դեմ բորբոքում կղերա-աղայական վերնախավերի դժգոհությունը։ Վերջիններիս սադրանքով Ներսեսը կարգադրում է էջմիածնի սինոդին՝ պատասխանատվության կանչել անհանգիստ «դպրին»։ Հրաժարվելով հոգևոր կոչումից, իրեն հասցեագրված զրպարտությունների մասին Մ. Նալբանդյանը գրավոր բացատրություններ է ներկայացնում և, էջմիածին մեկնելու փոխարեն, ուղևորվում Պետերբուրգ՝ քննություն բռնելու համալսարանում հայոց լեզվի դասատուի իրավունք ստանալու համար։

1853 թ. Նալբանդյանը հայոց լեզվի դասատուի պաշտոն է ստանձնում Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասարանական բաժանմունքում։ Բայց հակառակորդները այստեղ ևս հանգիստ չեն տալիս նրան։ Աղայական ոսկեպարկի, կաթողիկոսական գավազանի և ոստիկանական մտրակի դեմ ըմբոստացող երիտասարդի մեջ նրանք նշմարում էին հարստահարված ժողովրդի մոլեգին պաշտպանին։ Նրանք նույնիսկ երկյուղ էին ապրում այն բանի համար, որ նա Մոսկվայում գտնվելով կարող է ազատամիտ լինել մեծատունների և

նրանց աղոթող եկեղեցականների համար։ Ի վերջո պարզվում է, որ սինոդի կողմից հոգևոր կոչումից ազատված Նալբանդյանը ենթակա չէ եկեղեցական պատասխանատվության։ Նրան «Սիբիր քշելու» կաթողիկոսի սպառնալիքը մնում է անիրագործելի։ Լազարյանները ստիպված եղան նրան հեռացնել ճեմարանից։ Այնուամենայնիվ, հնարավոր համարեցին միջնորդելու, որպեսզի նա բարձրագույն ուսում ստանալու համար ազատ ունկնդիր համարվի Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում։

50—60-ական թվականների Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարանների բնագիտական և բժշկական ֆակուլտետները առաջավոր գաղափարների օջախներ էին ցարական Ռուսաստանում։ Այստեղից լույս ու ջերմություն էին ստանում բնական գիտությունները ու մատերիալիստական աշխարհայեցությունը՝ քննադատության մթնոլորտ ստեղծելով իդեալիստական գաղափարախոսության դեմ և ճանապարհ դառնալով երկրում ծավալվող դիմադիր տրամադրություններին։

1854—1855 ուսումնական տարվանից մինչև 1858 թվականի վերջերը ուսանող Նալբանդյանի համար լարված մտավոր աշխատանքի ժամանակաշրջան էր։ Բնական գիտությունների յուրացումը մեծ և արգասավոր ազդեցություն ունեցավ նրա հայացքների ձևավորման վրա։ Ջերմ խոսքերով էր նա հիշում իր ուսուցիչներից՝ օդընտելաբանության ուսմունքի հիմնադիր, նշանավոր գիտնական Կ. Ռյուլեի անունը։ Սակայն այդ իսկ պահին Նալբանդյանի հայացքների կազմավորման վրա ազդում էին ոչ միայն համալսարանի ամբիոններից հնչող գաղափարները, այլև Ղրիմի պատերազմից հետո երիտասարդությանը համակած մտավոր-քաղաքական խմորումները, թշնամանք սրելով նրանց մեջ դեպի ցարիզմն ու ճորտատիրական կարգերը, բյուրոկրատական քաշքշուկները, մտքի և մամուլի վրա ծանրացած ոստիկանական բռունցքը։ Մի ժամանակ էր այդ, երբ տարբեր հասարակաշերտերում պայքարի տրամադրություններ էին կուտակվում ճորտերի ազատագրման օգտին, հողատարության կոչեր լսվում մարդու բարեկեցության և նրա մտավոր-բարոյական արժանիքների գնահատման ու պաշտպանության օգտին։

Մոսկվայի համալսարանում ուսանելիս և ապա 1859—60 ուսումնական տարում թեկնածուական քննություն հանձնելու համար Պետերբուրգի համալսարանի հետ ունեցած շփումների ժամանակ Նալբանդյանը հնարավորություն ունեցավ հիմնավորապես ծանոթանալու ռուս դեմոկրատական մտավորականության համակած հեղափոխական հայացքներին, հափշտակությամբ հետևելու Ջերնիշևսկու և Դոբրոլյուբովի մերձավոր աշխատակցությամբ լույս տեսնող «Современник»-ին և հետաքրքրությամբ որոնելու Գերցենի և Օգարյովի՝ Լոնդոնում հրատարակվող «Полярная звезда» և «Колокол» պարբերականների համարները։ Ուսանող երիտասարդները ձեռքից ձեռք էին տալիս Գերցենի հոդվածները[66]։ Մ. Նալբանդյանը ուսումնասիրում էր Բելինսկու և Գերցենի, Ջերնիշևսկու, Դոբրոլյուբովի ու եվրոպական ուտոպիստ սոցիալիստների երկերը[67]։ Նրա այդ տարիների գրվածքներում արդեն զգացվում

66 «Революционная ситуация в России в 1859—61 гг.», М., 1962, էջ 346 և հետ., 353։

67 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 186 և հետ.։

է մատերիալիստական և հեղափոխական-դեմոկրատական հայացքների ազդեցությունը։

Նալբանդյանի հայացքներով համակված էին հայ ուսանողական այն շրջանները, որոնք համոզված էին, թե հայ ժողովրդի լուսավորական ջանքերը և ազգային-քաղաքական ինքնորոշման ձգտումները չունեն ավելի վստահելի հենարան և ուղեցույց, քան ցարիզմին հակադրված դեմոկրատական Ռուսաստանն ու նրա առաջավոր միտքը[68]։

Դրանք առաջին հայ մտավորականներն էին, որոնք հստակորեն տեսնում էին երկու Ռուսաստան։ Դրանցից մեկը, իշխող դասակարգերին զորավիգ, սահմանափակում կամ ճնշում էր հպատակ ազգությունների ազատաբաղձությունը, արհամարհում կամ կաշկանդում նրանց դպրոցների ու լուսավորության, լեզվի ու գրականության զարգացումը։ Մյուսն՝ ընդառաջում էր նրանց ազգային-մշակութային ու քաղաքական ինքնագիտակցությանն ու ազատագրական ձգտումներին։ Նալբանդյանի պաշտպանած գաղափարները անդրադարձնում էին արևելահայ դեմոկրատական հրիտասարդության ոգևշնչող հայացքները, նպաստում նրանց մտքերի հստակեցմանն ու բյուրեղացմանը։

Ուշագրավ է, որ 50-ական թվականների վերջերին և 60-ական թվականների սկզբներին հետզհետե հեղափոխական-դեմոկրատական երանգ ու ուղղություն ստացող հայ ուսանողության հայացքներին դիմադրելու համար Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարաններում կազմակերպում էին հայրենակցական «ժողովներ» (միություններ), որոնց նպատակն էր զսպել հայ ուսանողների «հրիտասարդական կրքերը» և նրանց հեռու պահել մյուս ազգությունների պատկանող ուսանողների «խլրտումներից»[69]։ Մոսկվայի «ժողովներում» դասախոսություններով հանդես էին գալիս Նազարյանն ու Մսերը, իսկ Պետերբուրգի հայրենակցական կազմակերպությունների գործունեությունը ղեկավարում էր ազգային-պահպանողական գործիչ Կ. Եզյանը։ Նման կազմակերպություններ կային նաև վրաց ուսանողների մեջ[70]։

Ուսանող Նալբանդյանին համակած մտքերի ու հույզերի մասին ցայտուն պատկերացում են տալիս տակավին 1854—55 թվականներին գրված նրա «Ցաղագս հայկական դպրութեան ճառս» վերնագրով խորհրդածությունները։ Գրաբարով գրված այդ էջերն, ըստ էության, նվիրված են աշխարհաբարի պաշտպանությանը և լուսաբանում են հայ նոր գրականության հանգուցային խնդիրները։ Ակներև է Բելինսկու գրական-քննադատական հայացքների ազդեցությունը հեղինակի վրա և նրա տրամադրությունը հայ հին գրականության վաստակների վրա հանգչող կղերամիտ հայկաբանների դեմ։ Նալբանդյանը հետախուզում է հայ գրականության անցյալը, նրա արդի տկարության պատճառներն ու զարգացման գալիք ուղիները որոշելու համար։ Ելնելով արդիական պահանջներից, նա քննադատում էր հին հայ մատենագրության մեջ իշխող կղերա-ֆեոդալական մտայնությունն ու արդի գրաբարյանների ժամա-

---

68 Նույն տեղում, էջ 31 և հետ., էջ 79 և հետ.։

69 Նույն տեղում, էջ 151 և հետ., էջ 186 և հետ.։

70 *Н. Николадзе*, Воспоминания о шестидесятых годах. «Каторга и ссылка» ամսագիր, 1927, № 1, էջ 33 և հետ.։

նակավրեպ հայացքները։ Հայ նոր գրական լեզվով ստեղծվելիք գրականությունը, ասում է նա, պետք է ճանապարհ հարթի դեպի ազգի մտավոր զարթոնքն ու քաղաքական վերածնությունը։ Այստեղից էլ հենց աղբյուրանում է հին հայ մատենագրության գնահատականների նրա խստաչարությունը և հետագայում էլ՝ հանդիպող նրա այն միտքը, թե «ազգի անդաստանում հինգ հատ ցորենաբույս չկա, բայց փուշ և որոմ՝ բյուրավոր» կամ նրա այն գանգատը, թե ազգի մատենագրության չքավորությունը բարձրացած է մինչև ի «Կոկիսոն հայոց»։ Դառնալով նույն այդ խնդրին, 1857 թվականին հրապարակված «Թափառական հրեայի» հայերեն թարգմանությանը կցած իր առաջաբանում Նալբանդյանը առաջ էր քաշել դարձյալ հայ գրականության աշխարհականացման ու ժողովրդայնացման այդ խնդիրը և հատուկ եռանդով շեշտել գրական ռեալիզմի պահանջը։ «Աբեղայական խուցը չէ այն դիտանոցը, որտեղից կարելի լիներ ազատ տեսողությենով նկատել աշխարհի իրողությունքը և նկարագրել այնպես, ինչպես որ կայինն»,— շեշտում էր նա։

Ռուս առաջավոր մտքի ներշնչումներից զատ՝ Նալբանդյանը ընդառաջում էր առաջադիմական այն հայացքներին, որոնք նրանից առաջ հայ կյանքի ու գրականության մասին մշակել և ձևակերպել էին Խ. Աբովյանը և Մ. Նազարյանը։ Հայ նոր գրականության այդ ռահվիրանները տակավին 40-ական թվականներին էին վերագնահատում անցյալի հայ գրականությունը՝ կյանքի արդիական պահանջներից ելնելով։ 50-ական թվականների կեսերին Մ. Նալբանդյանի գրած «Ցաղագս հայկական դպրութեան ճառ»-ը կրում էր նույնիսկ Ս. Նազարյանի խմբագրող գրչի միջամտության հետքերը[71]։ Սակայն ի տարբերություն Ս. Նազարյանի, նա չէր սահմանափակվում սոսկ արևելահայ նոր գրական լեզվի պաշտպանության խնդրով, այլև մտահոգված էր, որ հայ նոր գրական լեզուն միջոց դառնա հայերի համազգային համախմբման, իսկ ազգային-մշակութային զարթոնքին ձգտում էր հաղորդել ազգային-քաղաքական մղումներ։

Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի լուսավորական ջանքերի համար կարևոր աստիճան բացվեց, երբ նրանք ձեռնարկեցին «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակմանը։

Ազգային լուսավորության ու ազգային բարեկեցության խնդիրներ, մրտքի ու խղճի ազատության գաղափար, մամուլի և գրականության, կնոջ և ընտանիքի և, վերջապես, հայրենիքի ազատագրման հարցեր. սրանք էին «Հյուսիսափայլ»-ում Նալբանդյանի զետեղած գրական-հրապարակախոսական նյութերի թեմաները։ Նրան ամենից շատ հուզում էին ընթացիկ կացության ու քաղաքականության, լուսավորության և գիտության, մամուլի և գրականության խնդիրները։ Հեղինակի զգայացունց և ալեկոծ լեզուն, նրա տողերի բուռն ու անհանգիստ ինտոնացիաները հակադրվում էին դժգույն ու անկենդան այն ոճին, որ իշխող էր հայ ընթացիկ մամուլի էջերում, միաժամանակ անհարիր՝ ազգային զարթոնքի ուղին բռնող ընթերցողի մտածողությանն ու պահանջներին։ Մ. Նալբանդյանի հյուսիսափայլյան հրապարակախոսության առանցքը ևս ազգային լուսավորությունն էր։ Դրանով էլ հենց պայմանավոր-

71 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 111 և հետ.։

ված էր նրա նյութերի բազմազանությունը, դրանց հանրագիտական բովանդակությունն ու մարտական-քննադատական ուղղությունը։

Սակայն ի տարբերություն «Հյուսիսափայլ»-ում իշխող լիբերալ-բուրժուական գաղափարախոսության՝ Մ. Նալբանդյանը ազգային-քաղաքական ակտիվ տրամադրություն էր ներշնչում ամսագրի ընթերցողներին և ավելի շեշտակի դարձնում նրա հրապարակախոսության դեմոկրատական նպատակասլացությունը։

Հայ ժողովրդի հետամնացության գլխավոր պատճառը Մ. Նալբանդյանը ևս համարում էր նրա անգրագիտությունն ու անկրթությունը և դրանից առաջացած «անմխիթարանությունը»։ «Այնտեղ,— ասում է նա,— ուր չկա կրթություն և դաստիարակություն, չէ կարող լինել և ընկերական կյանք. իսկ ուր չկա ընկերական կյանք, այնտեղ թագավորում են միմյանցից բաժանող և հեռացնող եսական սկզբունք...»[72]։ «Ազգային դպրոցները,— գրում էր նա,— պարտական են բանալ մանուկների միտքը, պինդ տնկել նոցա մեջ ազգության սերմը, վառել նոցա սրտում հայության կրակը»[73]։ Դպրոցը ներշնչելու է սաներին «սեր, ընկերություն, ազգասիրություն, մարդասիրություն, առաքինություն, աշխատասիրություն, արիություն» և այլն։ «Հանրակրթական գիտելիքներից զատ դպրոցը ազգին պիտի տա կանոնավոր տնտեսական, գյուղական և վաճառական գիտություններ, որպեսզի հաստատ հիմքերի վրա կանգնի նորա թե երկրագործությունը և թե վաճառականությունը»[74]։ Նալբանդյանը նշավակում էր ոչ միայն ուսուցման խալֆայական սիստեմը, այլև քննադատում Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան, Փարիզի Հայկազյան, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցների ու Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուղղությունը։

Ջնայած ազգային լուսավորության խնդիրը Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի գաղափարական համագործակցության հիմքն էր, այնուամենայնիվ, այս հարցում ևս սկզբից աչք է ընկնում նրանց տարաձայնությունը։ Ս. Նազարյանը պաշտպանում էր հայերի դիմնազիական ու բարձրագույն ուսման և «ազգային ուսումնական դպրոցի» պահանջը կամ շեշտում մասնագիտական՝ վաճառականական և արհեստագիտական դպրոցներ հիմնելու կարևորությունը, առաջ էր քաշում «տերության համար հայ ուսումնական չինովնիկներ կամ «մտահայաց ժողովրդակարգերի» համար լուսավոր կադրեր և Ակնեղեցու համար կրթված տիրացուներ պատրաստելու խնդիրը։ Մ. Նալբանդյանը շեշտում էր ժողովրդական հանրակրթարանների անհրաժեշտությունը։ Նա կամենում էր ազգային կրթության գործը սկսել ոչ թե նրա վերնատնից, այլ հիմքից, ապահովելով ժողովրդական «ընդհանուր և հասարակ կրթությունը» և այն ծառայեցնել աշխատավորության նյութական բարեկեցության շահերին։ Նա դնում էր ոչ միայն քաղաքային, այլև գյուղական տարրական դպրոցներ հիմնելու խնդիր։ Պահանջում էր «Հայաստանի բոլոր գյուղերում և քաղաքներում հաստատել պարզ դպրոցներ, որոնց պաշտոնը էր լե-

72 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 256։

73 Նույն տեղում, էջ 455։

74 Նույն տեղում, էջ 358 և 461։

զու և դիր ուսուցանել ազգի զավակներին։ Այնպիսի գյուղերում, ուր ժողովրդի չքավորությունը արգելառիթ է այս գաղափարի իրագործությանը...»[75]։

Մատնանշելով «լույսի» և «խավարի», «ճշմարտության» և «ստրկության» ներհակությունը՝ «Հյուսիսափայլ»-ի հրատարակության առաջին տարում Նալբանդյանը տակավին չէր բացահայտում ազգի ներսում բախվող դասակարգային ներհակությունները։ Այնուամենայնիվ, այս հարցում ևս ավելի ու ավելի էին ակներև դառնում ամսագրի լիբերալ և դեմոկրատական բևեռների հակադրությունները։ Այսպես, մինչդեռ Ս. Նազարյանի հրապարակախոսությունը ելնում էր խղճի ու մտքի ազատության սկզբունքից և, ըստ էության, դառնում անհատի «բարոյական» ազատության շուրջը, Մ. Նալբանդյանի գերիշխող գաղափարը ազգության հարցն էր, որն ի վերջո նույնանում էր ժողովրդի սոցիալական և քաղաքական ազատագրման խնդրի հետ։ Մինչդեռ Ս. Նազարյանը հակվում էր տիրող կարգերին համակերպվելուն, Նալբանդյանի հայացքները հասունանում էին այդ կարգերի հետ պառակտվելու ուղղությամբ։

Ի վերջո ակներև էր դառնում նրա և Նազարյանի անկամրջելի տարակարծությունը։ 1859 թ. Մ. Նալբանդյանը հրաժարվում էր հայ իշխանավորների և հարուստների միջոցներով ազգը լուսավորելու մտքից և նույնիսկ ժխտում ազգի վերնախավի ազգասիրությունը։ «Ազգասե՞ր. ո՛րտեղից ո՛րտեղ... Դու երկու կոպեկով ոչ միայն ազգասեր պատվանունը, այլև քո բոլոր ազգը և քո հոր ոսկերքը կհանես գերեզմանից և կվաճառես»[76],— ասում էր նա ազգի հարուստին։ «Ազգության հաստատունը և լծակը,— գրում էր նա,— է հասարակ ժողովուրդը... Եվ ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկ, որ արծաթի սանդուղքով վեր են բարձրացել ազգի մակերևույթից, այլ այն խեղճ ու կարեկցության արժանի ժողովուրդը, որի վրա ծանրացել է ազգային ապաթախտության հետևանքը»[77]։

Ազգաշինության գործը, ասում էր Մ. Նալբանդյանը, պիտի առաջանա ցածից ու հիմքից, հասարակ ժողովրդից։ Երես շուռ տալով ազգի վերնախավերից, ազգի մտավորականները պիտի կողմնորոշվեն դեպի հասարակ ժողովուրդը, ուղղություն և զարկ տան ազգաշինության գործին[78]։

Մ. Նալբանդյանը հանգում էր այն համոզման, թե չի կարող խոսք լինել ազգի «եվրոպական լուսավորության» մասին, եթե ապահովված չէ նրա քաղաքական ազատությունն ու նյութական բարգավաճությունը։ «Ուր չկա մրտքի և բանականության ազատություն,— գրում էր նա,— այնտեղ կա հոգու ստրկություն, իսկ ուր ստրկություն՝ այնտեղ չկա կյանք։ Հայոց ազգը առանց նորան ևս քաղաքականապես մեռած է ներկայումս. մի վերանորոգություն, մի բարոյական վերածնություն, եթե կարելի է երբևիցե հուսալ, ապա ուրեմն պիտի լինի այն ճշգրիտ և ստույգ լուսավորության միջնորդությամբ»[79]։ Հրապարակախոսը ծառանում է ազգային մտքի և խղճի ստրկության դեմ և պա-

75 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 459։
76 Նույն տեղում, էջ 225։
77 Նույն տեղում, էջ 452։
78 Նույն տեղում, էջ 453։
79 Նույն տեղում, էջ 441 և հետ.։

հանջում ազգի սոցիալական և քաղաքական ազատագրում, առանց դրան, ասում է նա, չի կարող լինել ճշգրիտ և ստույգ ազատություն. «լուսավորությունը այնքան հիմնավոր է, որքան ազատ է և անկախ. սորկության մեջ չի կարող լուսավորության ծիլը կանաչել»[80]։ Ներկա հասարակության մեջ ազատությունը սոսկ իշխող վերնախավերի մենաշնորհն է, որոնք մյուսներին դիտում են որպես իրենց հրամանները կատարող ծառաներ ու սորուվներ և նրանց ազատագրական ձգտումները համարում ապստամբություն[81]։ «Հասարակ ու անզոր մարդերի» համար առանց իշխանության չի կարող խոսք լինել քաղաքական ազատության մասին։ Բայց անզոր է նաև քաղաքական իշխանությունը, եթե զուրկ է նյութական հենարանից՝ տնտեսական պատվանդանից։ «Մարդիկ,— ասում է Մ. Նալբանդյանը,— պիտո է ամրացնեին յուրյանց նյութեղեն ոտքերը, այնուհետև կարողանային գնալ բարոյականի և իմացականի քամակից»[82]։



Միխայել Նալբանդյան

Այս մտքերն ըստ էության համընկնում են այն հայացքներին, որոնք 1858—60 թթ. «Современник»-ի էջերում անց էին կացնում Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը։ Իր «Հուլիսյան հեղափոխությունը» հոդվածում Չերնիշևսկին գրում էր. «Քաղաքական իշխանությունը, նյութական բարեկեցությունը և կրթությունը իրար հետ անքակտելիորեն կապակցված բաներ են. ով դեգերում է չքավորության մեջ, չի կարող իրեն ձեռնտու եղանակով օգտվել իշխանությունից, ով չի օգտվում քաղաքական իշխանությունից, չի կարող փրկվել ճնշումից, այսինքն՝ չքավորությունից, ուրեմն՝ նաև տգիտությունից»[83]։

Չերնիշևսկու այս դրույթներից բխում էին մարտական եզրակացություններ. քանի դեռ իշխում են անաշխատ դասակարգերը, անհնարին է դուրս գալ ստեղծված վիճակից, եթե չլինի հեղափոխության միջամտությունը։ Նույն հետևություններն էին ելնում նաև Նալբանդյանի դրույթներից։

Տակավին «Ցաղագս հայկական դպրության ճառ»-ում փայլատակում էր

---

80 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 264։

81 Նույն տեղում, հատ. 1, էջ 399 և հետ.։

82 Նույն տեղում, հատ. 2, էջ 274։

83 *Н. Г. Чернышевский*, Полное собрание сочинений, том V, стр. 97.

նրա այն միտքը, թե լուսավորությունը երկնառաք տուրք չէ, այլ բարիք, որ պիտի նվաճվի «զոհիւք և նվիրագործութեամբ»։ «Լուսաւորութիւն լուսաւորեալ աղգաց դիւք են անդուլ ճգնաց, կամ գիւք արեան»,— գրում էր Նալբանդյանը 1859—61 թվականներին, Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրության պայմաններում՝ վերադառնալով իր դրույթներին[84]։ «... Ճշմարտությունը և լույսը, ասես թե միշտ պիտո է պատերազմելով հաղթեն խավարին և ստության և հափշտակեն հաղթության ձիթենին»[85]։ Ոչ միայն իր ժողովրդի լուսավորության խնդիրները, այլև նրա ազատության և բարեկեցության հնարանքարները հրապարակախոսը լծորդում է ռուս և եվրոպական հեղափոխական շարժումների հետ։ Անձամբ իսկ զինվորագրվելով այդ շարժումներին՝ նա դրանց մեջ էր տեսնում իր ժողովրդի ազատագրման երաշխիքը։

Ցարական ինքնակալության դեմ պայքարելու համար Մ. Նալբանդյանը լսատ կարելույն օգտագործեց լեգալ հնարավորությունները և գրեց նույնիսկ իր «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր» և, մանավանդ, «Ազատ աստված» բանաստեղծությունները։

1859 թ. բուժվելու պատրվակով մեկնելով արտասահման, Մ. Նալբանդյանը մտահոգված էր պարզելու ամսագրի խափանման դեպքում նրա տպագրությունը արտասահման փոխադրելու հնարավորությունը։

Ջնայած, ինչպես երևում է, Նազարյանը սկզբում համաձայնություն էր հայտնել ամսագրի տպագրությունը արտասահման փոխադրելու, սակայն հետագայում նա հակվել էր այն մտքին, թե Ռուսաստանում սկսված ռեֆորմները հնարավորություն կտան շարունակելու նրա հրատարակությունը Մոսկվայում, եթե ընդառաջելով գրաքննչական կոմիտեին, չափավորվի պարբերականի ուղղությունը, այլ խոսքով, «սանձ դրվի» գլխավոր աշխատակցի գրչին։ Ս. Նազարյանի դիրքորոշումը որոշ սառնություն մտցրեց նրա և Մ. Նալբանդյանի փոխհարաբերությունների միջև և մի պահ խորացրեց նրանց գաղափարական անջրպետը։ 1859 թ. հետո Նալբանդյանի անունը գրեթե անհետանում է ամսագրի էջերից։

1860 թ. վերջերից Մ. Նալբանդյանը ուղևորվում է Կ. Պոլիս։ Այդ քաղաքում նա մնացել է ընդամենը երկու ամիս՝ Նոր Նախիջևանին կտակված խոշոր գումարներ ստանալու համար Հնդկաստան ուղևորվելիս և մի տարի անց՝ Հնդկաստանից վերադառնալիս։ Նշանավոր ժամանակներ էին այդ, երբ արևմտահայ հասարակական կյանքը խլրտում էր նորահռչակ Ազգային սահմանադրության շուրջը։ Ազգային գործերը ղեկավարելու համար կշիռ էր ձեռք ջերել անգլո-ֆրանսիական կապիտալի հետ լծորդված արևմտահայ կոմպրադորական բուրժուազիան, որի գաղափարախոսներն էին հենց Սահմանադրության հեղինակները։ Պոլսահայ գործիչների հետ ունեցած հանդիպումներն ու մտափոխանակումները ընդլայնում էին ռուսահայ անվանի հրապարակախոսի բարեկամների ու համախոհների շրջանը, ընդարձակում նրա ազգային-

84 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 56։

85 Նույն տեղում, էջ 217 և հետ.։

քաղաքական հարցասիրություններըը, նրա գործունեությանը հաղորդում համազգային ծավալ ու լիցք։ Արևմտահայ դեմոկրատական մտավորականության առաջ նա գծագրում էր գործունեության հետևողական-դեմոկրատական հեռանկարներ, բևեռում նրա միտքը ազգի քաղաքական ու սոցիալական ազատագրման խնդիրների վրա։ Արևելահայ հրապարակախոսի հայացքները ազդեցության խոր հետքեր էին թողնում արևմտահայ առաջավոր գործիչների վրա։

Մ. Նալբանդյանը չգերագնահատեց Սահմանադրության առաջադիմական նշանակությունը։ Թուրքիայի մայրաքաղաք ոտք դնելուց հազիվ տասը օր անց Կ. Պոլսի «Մեղվում» նա առիթ ունեցավ դիտելու, որ «սահմանադրության» և «լուսավորության» դրոշ բռնած արևմտահայ միջավայրում իսկապես դոյություն չունի ազգի գաղափարական այն միասնությունը, որի մասին ուղղված ողջույնի խոսքում ավետում էր դեմոկրատական այդ թերթի խմբագիրը՝ Հ. Սվաճյանը։ «Մեղվի» մի այլ համարում քննարկման նյութ դարձնելով արևմտահայ գավառի համար չարիք դարձած Պողոս վարդապետի բունի ու հակաժողովրդական արարքները, Մ. Նալբանդյանը բավական չէր համարում Սահմանադրության օրգաններից մեկի՝ կրոնական ժողովի որոշումը վատհամբավ այդ եկեղեցականի կրոնական պաշտոնակատարությունը «լուծելու» կամ հենց «Մեղվի» խմբագրի առաջարկը՝ նրան եկեղեցական կոչումից զրկելու մասին։ Նալբանդյանը գտնում էր, որ հանցագործը պետք է պատասխանատվության կանչվի ոչ թե կրոնական, այլ քաղաքական և քրեական ատյանների առաջ։ Դրանով նա հակադրվում էր ոչ միայն նախասահմանադրական ժամանակների մտավոր-բարոյական գործիչներին ու դրանց «խավարյալ» պաշտպաններին, այլև մերկացնում «լուսավորյալ» սահմանադրականների իսկ գաղափարական սահմանափակությունն ու անհետևողականությունը։ Սահմանադրության սկզբունքային իր քննադատությամբ նա ըստ էության ջանում էր մարտական հունի մեջ դնել գավառահայ ժողովրդի և Կ. Պոլսում դեգերող պանդուխտ գավառացիների պահանջները և բյուրեղացնել արևմտահայ «լուսավորյալ» լիբերալներից տակավին չսահմանազատված արևմտահայ դեմոկրատիայի պահանջներն ու տեսակետները։

1860 թ. դեկտեմբերի վերջերին, Կ. Պոլսից Լոնդոն կատարած իր ուղևորության ժամանակ, Նալբանդյանը առիթ ունեցավ շարադրելու իր հայացքը նաև հայ ժողովրդի ազատագրման հեռանկարների մասին։ Նեապոլից Սվաճյանին ուղղած իր նամակում նա զուգահեռ էր անցկացնում Իտալիայում արծարծված գարիբալդիական շարժման և հայ ժողովրդի ընթացիկ վիճակի միջև։ Գարիբալդիի ետևում, ասում է արևելահայ հրապարակախոսը, կանգնած է «հասարակ ժողովուրդը», Վիկտոր Էմանուելի ետևում՝ «քաղաքացիք» (բուրժուազիան—խմբ.)։ Դիմադրելով ընդհանուր թշնամուն՝ երկուսն էլ պայքարում են իրենց հայրենիքի ազատագրման համար, բայց նրանց մեջ առկա է նաև «խոշոր տարբերություն»։ Իտալիայի ազատագրմանը նրանք մերձենում են «տարբեր սկզբունքներից»։

Իտալական դեպքերին ի տես, հրապարակախոսը վերհիշում էր հայրենի ժողովրդի վիճակը։ «Էտնան ու Վեզուվիան ծխվում էր. Արարատի հին վուլկանի մեջ միթե՞ կրակ կմնա խպառ...»,— հարցնում էր Մ. Նալբանդյանը։

Հայկական իրականության մռայլ հետնախորքի վրա նա չէր մոռանում արևմտահայ այն համախոհներին, «որոնց կուրծքի մեջ զարկում է մի ստուգատես հայկական սիրտ»[86]։ Նույն այս խոհերով է համակված նաև հաջորդ տարում գրված նրա «Ազգային թատրոնը Պոլսի մեջ» հոդվածը, ուր «հին խելքերին» հակադրում էր նոր սերնդի հայ երիտասարդությունը, «ժամանակի և դարու այն հարազատ որդիքը», որոնք իրենց մտքով ու փորձով այլ վերաբերմունք ունեն դեպի ազգը հուզող խնդիրները, քան իրենց «ամուլ նախնիքը»[87]։ Ակներև է, որ իր շրջագայությունների ժամանակ ողջ հայ դեմոկրատիայի պարագլուխը հանդես էր գալիս ոչ միայն իր ժողովրդի ազատագրական զարթոնքը շնփորողի, այլ նաև նրա մարտական ուժերը կազմակերպողի ու առաջնորդողի դերում։

Աննախընթաց հեղափոխական թափով է շարադրված մանավանդ Մ. Նալբանդյանի 1861 թ. Փարիզում հրապարակած «Երկու տող» պամֆլետը։ Ռուսաստանում արծարծվող հեղափոխական իրադրության սրման նշանակալից պահին է գրվել ու հրապարակվել այդ պամֆլետը, այն օրերին, երբ գյուղացիական ապստամբությունների բարձրացող ալիքը իջեցնելու ակնկալությամբ ցարը հրատարակում էր ճորտատիրության վերացումը ավետող փետրվարի 19-ի հրովարտակը։

Ռուս ճորտերի ըմբոստացումը մեկուսացած եղույթ չէր։ Այն արծարծվում էր բազմաթիվ երկրներում ծավալվող ազատագրական շարժումներին համընթաց։ Ժամանակը հասունացած համարելով վճռական գործողությունների համար, պամֆլետի հեղինակը կոչ էր անում հայ ժողովրդին անմասն չմնալ առաջավոր մարդկությանը համակած թոհուբոհից՝ ազգային ազատության դրոշ պարզելու համար։ «Մեր նվիրական պարտականությունն է, որչափ որ մեր ուժը կտանի, սպասավորել մարդկության, քանի որ ապրում ենք երկրագնդի վրա և խոստովանում մեր տկարությունը, որ չենք կարող բաժանվել նրա մակերևույթից»[88], գրում էր Նալբանդյանը։ Սրանով նա ջանում էր համառուսական հունի մեջ մտցնել նաև հայերի ազատագրական մտորումները։

Նալբանդյանը մեծարում է իրենց հայրենիքի ազատության համար մարտնչող ու նահատակվող հերոսներին, նրանց, ովքեր ապրում են և տքնում ընդհանուրի օգտի համար՝ «չավ հասկացած լինելով թե սուտ է մասնավոր քաջաբախտությունը, առանց ընդհանուրի երջանկության»[89]։ Բայց և միաժամանակ նշում էր ընդհանուրի օգտին տքնող այս հերոսների՝ հարազատ ազգի հանդեպ ունեցած հավատարմությունը և համամարդկային ազատագրական շարժման նկատմամբ նրանց նվիրվածությունը։ «Նոքա չկաշառվեցան օտարներից... նոքա չնենգեցին յուրյանց ազգին, նոքա չվաճառեցին յուրյանց գրիչը... նոքա արհամարհեցին օտարի տված պատիվը և աշխատեցան դժպհի պատվանշանների տեղ կրել յուրյանց ազգության անունը, այլև վեր-

---

86 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 86։
87 Նույն տեղում, հատ. 2, էջ 307։
88 Նույն տեղում, հատ. 3, էջ 23։
89 Նույն տեղում, էջ 30։

քերի սպիք, որոնց արժանացել են մարտիրոսաբար, ազգի ազատության անունով»[90]։ Մերկացնելով իրենց խիղճն ու գրիչը վաճառքի հանող ազգադավ այլախոհներին, Նալբանդյանը գրում է, որ իր կյանքի «բուն խորհուրդն ու նպատակն» է համարում կանգ չառնել անգամ ինքնազոհության առաջ՝ հայ հասարակ ժողովրդի կոխկռտված իրավունքը պաշտպանելու համար։

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելուն։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին. նոքա յուրյանց արծաթեն թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ։

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և կիսագրագետ ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկերկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»[91]։

Մ. Նալբանդյանը օգտագործեց հրապարակախոսության բոցաշունչ խոսքը ոչ միայն հայ ժողովրդի ճնշողներին ու հարստահարողներին մերկացնելու, այլև օտար կեղեքիչներից ազատագրվելու «ուղիղ ճանապարհը» մատնանշելու համար։ Այդ նպատակին նվիրեց նա 1862 թ. Սիմեոն Մանիկյան կեղծանունով Փարիզում լույս ընծայած իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։

Նշանավոր այդ գործում նկարագրելով Թուրքիայի տնտեսական տագնապը, նրա աճող պետական պարտքերը, ժողովրդի հետամնացությունն ու թշվառությունը, հեղինակը Թուրքիայի դժբախտության պատճառը համարում էր եվրոպական պետություններից նրա ունեցած կախումը։ Հատկապես մատնանշում էր եվրոպական կապիտալի ներխուժումը այդ երկրի շուկաները և դրա հետևանքով արևմտահայ հասարակ ժողովրդի համար ստեղծված ծանրը վիճակը։

«Հայ վաճառականը,— գրում էր նա,— կարողանում է դիմանալ եվրոպական կապիտալին՝ ստանձնելով նրա գործակալի նկուն դերը և պատճառ դառնալով «ազգի կաթվածահարության»։ 1858—1859 թթ. գրած իր երկերում հայրենի առևտրա-վաշխառուական կապիտալին դիմադրելու համար Մ. Նալբանդյանը պաշտպանում էր հայ վաճառականական ընկերություններ կազմակերպելու վերաբերյալ Նազարյանի առաջարկությունը։ Ի տարբերություն դրան՝ «Երկրագործության» հեղինակը Արևմտյան Հայաստանի համար առաջ էր քաշում «ազգային վաճառականություն» կազմակերպելու խնդիրը, որի

90 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 30։

91 Նույն տեղում, էջ 23 և հետ.։

նպատակն էր՝ հայ գյուղացիությունը և քաղաքային զանգվածները մի կողմից պաշտպանելու ֆեոդալական հարստահարումներից և մյուս կողմից՝ մրցության դուրս գալու եվրոպական. կապիտալի դեմ: Հեղինակը փայփայում էր այն պատրանքը, թե դրանով հայ ժողովրդի համար տնտեսական նոր համայնակենցաղի պատնեշ է կառուցվելու Թուրքիայում:

Կապիտալիզմին հատուկ վարձու աշխատանքի սիստեմը Մ. Նալբանդյանին պատկերանում էր որպես ստրկության համազոր չարիք: Կապիտալիզմը ոչ միայն չի լուծում «մարդու և հացի» խնդիրը, այլև թշվառության է մատնում վարձու գործավորներին, հարկադրելով հողազուրկ գյուղացիներին վաճառքի հանել իրենց «աշխատանքը», քանի որ չունեն ապրելու այլ միջոց: Ազա՞տ եմ ես, միայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչվելով ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա-ակամա մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ընտանիքի համար[92],— հարցնում էր Մ. Նալբանդյանը և իր հարցադրությամբ իսկ կանխում ընթերցողի բացասական պատասխանը: Հրապարակախոսը ուներ ռուս հեղափոխական-դեմոկրատների ու դրանց հաջորդած հեղափոխական-նարոդնիկների ընդհանուր այն համոզմունքը, թե կապիտալիզմը կանխելու համար գոյություն ունի միայն մի համադարման՝ համայնական հողատիրությունը: Դա է այն բանալին, որ կարող է մարդկանց առջև բացել ազատության, հավասարության և եղբայրության փակ դռները: Իբրև համայնքի սեփականություն, հողը չի կարող դառնալ առուծախի առարկա: Հողը կարող է լինել մասնավոր սեփականություն սոսկ որպես բնակատեղի կամ տնամերձ տնտեսության վայր: «Երկրագործության» հեղինակը դրվատում է քաղաքային մանր արհեստագործությունն ու համայնական հողատիրության վրա հիմնված գյուղացիական մանր արտադրությունը: Եթե արևմտահայությունը չապավինե համայնական հողատիրության, ապա անխուսափելի պիտի դառնան մանր գյուղացիության և մանր արհեստագործության քայքայումը, սարսափելի նեղությունն ու չքավորությունը, «որ եթե ոչ այսօր, վաղը պիտի թագավորի բոլոր Թուրքիո մեջ»[93]: Հեղինակը նախանձելի չի համարում եվրոպական գործարանատերերի ապրանքը վաճառահանող, շուկայի հարափոփոխ վիճակից և երկրում իշխող ռեժիմի քմայքներից կախված արևմտահայ վաճառականների դրությունը: Ազգը պիտի հրաժարվի գաղութագնացությունից, տուն վերադարձնի քաղաք տեղափոխված պանդուխտներին և հնարավորություն տա նրանց զբաղվելու երկրագործությամբ: «...Պիտի որ ազգի մեծագույն մասը երկրագործ լինի, իսկ փոքրագույնը՝ երկրագործի դուրս բերած արդյունքը մշակող և վաճառող, որ զուգակշիռ պահվի և աղքատությունը տարագիր գնա»[94]:

Իր այս ծրագիրն էր ահա, որ Մ. Նալբանդյանն ընկալում էր որպես ազգը կործանումից փրկող «տնտեսական հեղափոխություն»: Պանդուխտներին գյուղ վերադարձնելու և նրանց տնտեսությունը վերականգնելու համար հար-

92 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 52:
93 Նույն տեղում, էջ 93:
94 Նույն տեղում, էջ 70:

կավոր են նյութական միջոցներ, որոնք հայթայթելու են հայ վաճառականների կազմակերպվելիք վարկատու ընկերությունները։ Այդ ընկերությունների միջոցներով պիտի շահագործվեն Հայաստանի ջրային հարստությունները, մանր գյուղատնտեսության կողքին կազմակերպվեն խոշոր մեքենայացված գյուղատնտեսական ձեռնարկություններ և գյուղատնտեսական բերքերը մշակող խոշոր արդյունաբերություն[95]։ Միայն փողի ու ապրանքի կազմակերպված այդ շրջանառության միջոցով կարելի է բարվոքել թշվառության մատնված հայ մասսաների և անխուսափելի քայքայման դատապարտված հայ վաճառականության վիճակը։ Միայն կազմակերպված ազգային վաճառականությունը կարող է հայ ապրանքատերերին տեր դարձնել դրամի իշխանության (որչափ Եվրոպան կարիք ունի նրանց ապրանքների արտահանությանը) և այդ միջոցով դեպի ինքը դարձնել դրամի շրջանառությունը[96]։ Այս էր Մ. Նալբանդյանի պատկերացրած «տնտեսական հեղափոխությունը»։

Մ. Նալբանդյանը ենթադրում էր, որ քաղաքի և գյուղի մանր արտադրությունը հնարավոր կլինի փրկել կապիտալիզմի սպառնալիքից, եթե նրանց տրամադրվի կապիտալիստական արտադրության տեխնիկան՝ մեքենան։ Սա ֆրանսիական սոցիալիստներին հատուկ ուտոպիստական այն հայեցակետն էր, որ քննադատված է «Կոմունիստական մանիֆեստ»-ում։ Արտադրության և փոխանակման ժամանակակից միջոցները սեփականատիրական հին սիստեմի մեջ խցկելու փորձը «Մանիֆեստը» դիտում էր որպես մանրբուրժուական սոցիալիզմին հատուկ ուտոպիստական պատրանք[97]։

«Երկրագործության» արծարծած որոշ գաղափարներ անծանոթ չէին հայ միջավայրին։ Դրանցից մի քանիսին հանդիպեցինք Գ. Պատկանյանի մոտ։ Նման գաղափարները միանգամայն օտար չէին նաև արևմտահայերին։ Գյուղատնտեսական հումքերների և առանձնապես բամբակի ճգնաժամի կապակցությամբ, որ սրվել էր Եվրոպայում՝ ամերիկյան ստրուկների ապստամբության հետևանքով, Մանչեստրի հայ առևտրականները ստեղծեցին «Արարատյան» ընկերությունը, որի մասնակիցները պարտավորություն էին ընտանձնում «կոմիսիոն գործ ընել ընկերության հաշվին, առևտրական ձեռնարկություններ և փոխադրական գործեր ընել»։ Արևմտահայ տնտեսագետ Ն. Զորայանը և «Փարիզ» թերթի խմբագիր Ա. Մուրադյանը համոզված էին նույնիսկ, որ հայ խոշոր կապիտալիստների այդ ընկերությունը ձեռնտու պիտի լիներ ոչ միայն հայ կապիտալիստներին, այլև նպաստելու էր հայ ժողովրդի տնտեսական և մշակութային վերածնությանը։ Հարստության անսպառ աղբյուր համարելով երկրագործությունը, նրանք հայ առևտրականներին կոչ էին անում զարկ տալ ազգի երկրագործությանը։ «Փարիզ» թերթը հատկապես շեշտում էր շերամաբուծության և բամբակամշակման կարևորությունը։ Հայ վաճառականներին թերթը հորդորում էր ճանապարհներ կառուցել և նա-

---

95 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 74 և 79։

96 Նույն տեղում, էջ 46 և հետ.։

97 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Պետհրատ, Երևան, 1938, էջ 41—42։

վեր ձեռք բերել հայ գյուղացիների արտադրանքը Արևմուտք փոխադրելու և ազգային վաճառականությանը զարկ տալու համար[98]։

Զորայանի և Մուրադյանի գրածներից Մ. Նալբանդյանի տեսությունը տարբերվում է նրանով, որ ելնում էր հայ գյուղացիության շահերից։ Նա համոզված էր, որ հայ գյուղացիներին վարկավորելով, հայ բուրժուազիան կնպաստի Հայաստանի տնտեսական զարգացմանը և դրանով իսկ «ազգային վաճառականությանն» բնույթ կհաղորդի իր գործունեությանը։

Կասկած չկա, որ Մ. Նալբանդյանի առաջարկած «տնտեսական այս հեղափոխությունը» իրագործելու դեպքում Թուրքիան չպիտի կարողանար խուսափել կապիտալիզմից։ Նա միջոց չուներ արգելք դնելու հողային կապալի և փողային վարկի կապիտալիստական շահարկմանը։ Համայնապատկան ֆոնդերից առավելապես օգտվելու էին լծկան, գյուղատնտեսական գործիքներ և սերմացու ունեցող գյուղացիները։ Ջենք խոսում այլևս այն մասին, որ առանց վարձու աշխատանքի օգտագործման, անհնարին պիտի լիներ ստեղծել Մ. Նալբանդյանի նախատեսած մեքենայացված գյուղատնտեսությունը կամ գյուղատնտեսական բերքեր մշակող խոշոր արդյունաբերությունը։

Ամենամեծայնիվ, Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքին ևս կարող են վերաբերել Վ. Ի. Լենինի տողերը Գերցենի հիմնադրած նարոդնիկական դեմոկրատիզմի մասին. «Վինելով ուտոպիա այն բանի նկատմամբ, թե ինչ տեսակ պետք է լինեն (և կլինեն) հողերի նոր բաժանման տնտեսական հետևանքները, այն հանդիսանում է գյուղացիական մասսայական..., դեմոկրատական վերելքի ուղեկիցն ու սիմպտոմը»[99]։

Հնարավո՞ր է գլուխ բերել հեղինակի պատկերած «տնտեսական հեղափոխությունը» առանց քաղաքական հեղափոխության։ Հիմք կա՞ կարծելու, թե «տնտեսական հեղափոխության» հեռանկարը բացառում էր հարցի քաղաքական կողմը, չըմբռնելով որ հնարավոր չէր դիմադրել եվրոպական կապիտալին, առանց բախվելու Թուրքիայի և նրա status quo-ն պաշտպանող եվրոպական մեծ տերությունների հետ։ Եվ վերջապես, կարելի՞ էր դիմադրել օտարազգի կապիտալիստներին կամ հայազգի կալվածատերերին՝ առանց պայքարելու նրանց հովանավորող Թուրքիայի պետական կարգերի դեմ։

Որչափ «Երկրագործությունը» գրվում էր Թուրքիայում վաճառվելու համար, հեղինակը շրջանցում էր անխուսափելի այս հարցերը։ Սակայն «Երկրագործության» հեղինակը աչքի առաջ ուներ ոչ միայն արևմտահայերի աղքատությունը վերացնելու խնդիրը, այլև նշմարում էր նրա ստրկական վիճակը։ Նա լիովին գիտակցում էր «տնտեսական հեղափոխությունը» ժողովրդի սոցիալական և քաղաքական ազատագրման հետ լծորդելու անհրաժեշտությունը։ «Տնտեսական հեղափոխությունը» Մ. Նալբանդյանը չէր պատկերացնում առանց «հողի և ազատության» համար տիրող քաղաքական կարգերի դեմ ուղղված պայքարի։ Այդ ակներև է նրա չափածո և արձակ երկերից և ցարական ժանդարմերիայի ձեռքն ընկած նրա գրագրություններից։

---

98 Ա. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության*, հատ. 2, էջ 491 և հետ.։

99 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 18, էջ 453։

Արդեն իսկ «Երկու տող»-ում Մ. Նալբանդյանը հասարակ ժողովրդի ապատության ելքը տեսնում էր նրա հեղափոխական պայքարի մեջ։ Նա համոզված էր, որ «հին խելքերը երբեք համաձայնելու չէին խաղաղությամբ տեղի տալ նոր գաղափարներին և նորը պատերազմով պիտի կանգնեցնի իր դրոշը ավերակների վրա»[100]։ «Շատ ազգեր պատահեցան անբախտության, բայց այդ չեղավ նոցա համար հավիտենական մեռելություն։ Աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց յուրյանց ամայացած հայրենիքի փլատակների մեջ»,— գրում էր Մ. Նալբանդյանը։ Օտար ու առտնին ճնշողների ու հարստահարողների գավազանների տակից Հայաստանի սարերը, ձորերն ու անտառները միայն «հեկեկանք ու հոնդյունք» են հնչեցնում, ասում էր նա, բայց ճնշված ու հարստահարված ժողովուրդների վիճակը ևս վերջ է առնում, երբ նրանց փեշերի տակից դուրս են շողում դիմադրության պողպատե սրերը[101]։

«Երկրագործության» հեղինակը հեռու չէր համարում այն օրերը, երբ արևմտահայերը պիտի ըմբոստանան սուլթանի բարբարոս թագավորության դեմ՝ հայրենի իրենց հողը զենքով ազատելու և նրան «տիրաբար» իշխելու, ազատորեն մշակելու համար։ Սակայն նա չէր պատկերացնում հայերի ազատագրական շարժումը որպես ազգայնորեն մեկուսացած շարժում։ Նրանց ազատության հեռանկարը նա վերջին հաշվով շաղկապում էր ասիական ճնշված ազգերի սոցիալական և քաղաքական ազատագրման ընդհանուր տեղաշարժերի և սոցիալիզմի հաղթության պատմական հեռանկարների հետ[102]։ Բայց նախքան այդ՝ այսինքն սոցիալիզմի միջոցով «մարդու և հացի հարցը» լուծելուց առաջ՝ ասիական ազգերը, այդ թվում նաև հայերը պիտի հոգան իրենց ինքնապահովության մասին, ցույց տան, որ ընդունակ են դիմադրելու իրենց կյանքն ու գույքը հափշտակողների բռունցքին, պաշտպանելու իրենց երկրի սահմանները, ապրելու իբրև ազգ և պահպանելու իրենց ազգությունը[103]։ Հայերի կատարելիք «տնտեսական հեղափոխության» խնդրին նվիրելով իր գիրքը, Մ. Նալբանդյանը համոզված էր, որ առանց այդ հեղափոխության, անհնարին պիտի լինի նախապայմաններ ստեղծել վերականգնելու հայերի ազգության «ջարդված» մեքենան, նրա քաղաքական անկախությունը։

* * *

1857, 1859, և 1860—1862 թթ. կատարած իր ուղևորությունների ընթացքում Մ. Նալբանդյանը այցելեց կապիտալիստական Արևմուտքի մի շարք երկրներ ու կենտրոններ։ Նա տեսավ 1848 թ. հեղափոխությունից հետո աշխատանքի և կապիտալի, ազատության և ստրկության, սոցիալիզմի և լիբերալիզմի բախումները, դիտեց հողի և կապիտալի համակենտրոնացման պրոցեսները, ականատես եղավ գյուղի և քաղաքի միջնախավերի քայքայ-

100 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 15։
101 Նույն տեղում, էջ 30։
102 Նույն տեղում, էջ 48։
103 Նույն տեղում, էջ 81 և հետ.։

մանը, բանվորների և գյուղացիների հարստահարմանը, հպատակ և կախյալ ազգությունների ճնշված վիճակին։

Դևպի Հնդկաստան կատարած իր ճանապարհորդության ժամանակ Մ. Նալբանդյանը եղավ գաղութարարների ներթափանցած ու նրանց «քաղաքակրթությանը» ստրկացած Արևելքի մի շարք երկրներում, տեսավ կապիտալի տիրապետության ներքո այդ երկրների տնտեսական հետամնացությունը և նրա ժողովուրդների զանգվածային դժգոհությունները ու ըմբոստացումները։

Նշանակալից տարիներ էին դրանք, երբ Ռուսաստանում, Չինաստանում և Հնդկաստանում սանձազերծվում էր գյուղացիական ապստամբությունների տարերքը։ Այդ պահին անդրկովկասյան ժողովուրդների մեջ ևս ազգային և սոցիալական դժգոհություններ էին կուտակված ցարիզմի դեմ, իսկ Արևմտյան Հայաստանի գավառներում հայ ժողովրդական զանգվածների մեջ խմորվում էին շարժումներ՝ ուղղված սուլթանական բռնակալության և հայ իշխող վերնախավերի դեմ։

Ջարթոնքի այն ժամանակամիջոցն էր այս, երբ, Վ. Ի. Լենինի բնութագրումով, «բուրժուական դեմոկրատիայի հեղափոխականությունն արդեն մահճակում էր (Եվրոպայում), իսկ սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխականությունը դեռևս չէր հասունացել»[104]։ Անցման էտապ էր ապրում այս պահին մասնավորապես հայ դեմոկրատական մտավորականությունը, որը բռնելով բուրժուական լիբերալիզմից սահմանազատվելու ուղին, սկսում էր արդեն քաղաքական և սոցիալական համադարմաններ որոնել բուրժուական «քաղաքակրթության» ավերումներին դիմագրավելու համար։

Հայ լուսավորիչների մեջ Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ շփվելով կապիտալիստական Արևմուտքի և գաղութացված Արևելքի հետ, ոչ միայն նըշմարում էր բուրժուական «քաղաքակրթության» չարիքներն ու հակասությունները, այլև ջանում էր գտնել դրանք հաղթահարելու հնարները։ Նա ոչ միայն նկատում էր արևմտահայ կոմպրադորական բուրժուազիայի կախումը Արևմուտքի գաղութատերերից, այլև սահմանազատվում արևելահայ այն լուսավորիչներից, որոնք համակեցության եզրեր շոշափելով ցարիզմի հետ՝ հայրենի իրականության մեջ խաղաղ զարգացման ուղիներ էին հարթում կապիտալիստական «քաղաքակրթության» առաջ։ Նա համամիտ չէր նաև արևելահայ բուրժուազիայի այն գործիչների հետ, որոնք քննադատելով ցարիզմի գաղութային քաղաքականությունը Կովկասում, ազգի մեջ պատրանքներ էին տարածում անգլո-ֆրանսիական հովանու նկատմամբ։

Ո՞րն էր այն նոր դիրքը, որ գրավեց Մ. Նալբանդյանը հայերի հասարակական-քաղաքական բախտը որոշելու համար, այն նոր խոսքը, որ ասաց նա իր ժողովրդին, նրա հասարակական-քաղաքական մտքի պատմության շրջադարձի այս պահին։ Մ. Նալբանդյանը խորացրեց և զարգացման հեղափոխական ընթացքի մեջ դրեց ցարիզմի հետ գժտվելու ճանապարհը բռնած Խ. Աբովյանի ազգային-դեմոկրատական քննադատությունը։ Նա առաջինն էր, որ

104 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 14։

հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական հեռանկարները կողմնորոշեց դեպի ռուս և եվրոպական հեղափոխական շարժումները։

Հեղինակը արձագանքում էր այն նզովքին, որ բուրժուական «քաղաքակրթության» հասցեին ուղղում էին «ճնշված մարդկության անմահ բարեկամքը»՝ Ռուսսոն, Ֆուրյեն, Գերցենը։ «Սեփականության հռոմեական իրավունքի և անձի քաղաքացիական իրավունքի վրա կառուցված աշխարհը,— գրում էր Գերցենը,— կարող է հաց շպրտել քաղցածին, սակայն ճանաչել նրա «հացի իրավունքը» (право на хлеб) չի կարող»[105]։ Գերցենը տարակույս չուներ, որ հացի խնդիրը վերջիվերջո պիտի լուծվի քաղցածների օգտին, պրոլետարիատի ազատագրման օգտին։ Արդեն իսկ 1848 թ. հեղափոխությունից հետո, «С другого берега» հռչակավոր իր հոդվածաշարում նա ողջունում էր Փարիզյան սովահար պրոլետարիատի ըմբոստացումը կապիտալի թագավորության դեմ։ «Պայքարը սկսված է,— գրում էր նա,— ո՞վ կհաղթի, դժվար չէ նախատեսել, վաղ թե ուշ... կհաղթի նոր սկզբունքը»[106] (այսինքն՝ սոցիալիզմը—խմբ.)։

Գերցենին էր արձագանքում Մ. Նալբանդյանը, երբ գրեթե նրա իսկ ոճով գրում էր. «Եվրոպան ուշ ծնեցավ։ Բայց շատ արագ ծերանում է... Այո, եվրոպան կանգնած է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև. այդ տնտեսական խնդիրն է՝ մարդը և հացը։ Եվ այդ խնդիրը կանուխ թե ուշ թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Ոչինչ բռնություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդդիմադրություն, որևիցե կողմից, չէ պիտո կարողանա փակել նորա առաջքը, թեև այսօր հալածական և աքսորական ին այդ ապագայի մարգարեքը և առաքեալքը»[107]։

Եվրոպական և ասիական ժողովուրդների վերածնումը Նալբանդյանը տեսնում էր նրանց ազատությունը կաշկանդող բռնատիրությունների հեղափոխական լիկվիդացման մեջ։ Միքայել Նալբանդյանի մտքերը արձագանքում էին Լոնդոնի հեղափոխական վտարանդիներին։ Ռուս դեմոկրատական վտարանդիությունը համերաշխ էր Մաձինիի, Կոշուտի և ուրիշների հետ, որոնք դեռ 50-ական թվականներին ապստամբության կոչեր էին ուղղում Եվրոպայի և Ասիայի ճնշված ազգություններին։

Ռուս հեղափոխական վտարանդիները ձգտում էին, որ ազգային ազատ ինքնորոշման իրավունք նվաճելու դեպքում Ռուսաստանի ազգությունները միանան երկրի ազատագրված մյուս ժողովուրդներին և «եղբայրական ֆեդերացիա» կազմեն նրանց հետ։ Ի տարբերություն սլավոնոֆիլների, Եվրոպայի և Ասիայի ճնշված ազգությունների ազատագրումը նրանք ակնկալում էին ցարիզմի և բոլոր մյուս բռնատիրությունների դեմ վարելիք նրանց համատեղ պայքարից։

Ինչպես սլավոնների, այնպես և հայերի ազատագրման հեռանկարը Նալբանդյանը պատկերացնում էր ռուս հեղափոխական-դեմոկրատիայի ղեկավարների նման, կտրականապես մերժում էր ինչպես արևմտաեվրոպական պե-

---

105 *Герцен*, Полное собрание сочинений и писем, т. X, стр. 244.

106 Նույն տեղում, т. V, стр. 460 и 477.

107 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 81։

տությունների, այնպես և ցարական Ռուսաստանի միջամտությունը արևմտահայերի ազատագրման գործում և համոզված կանգնում համադեմոկրատական հեղափոխության դիրքերի վրա։

«Արևելյան հարցի» հանգուցալուծումը Նալբանդյանը ևս չէր տեսնում Թուրքիայի ժառանգությունը վերաբաժանելու հետամուտ ցարիզմի կամ եվրոպական տերությունների մեջ։ Ի տարբերություն իրեն ժամանակակից և մանավանդ իրեն հաջորդած լիբերալ և պահպանողական հայ գործիչների, Մ. Նալբանդյանը խորապես հասկանում էր Թուրքիայի status quo-ն կամ այլ խոսքով՝ նրա առկա վիճակի «անձեռնմխելիությունը» պաշտպանող եվրոպական տերությունների քաղաքականությունը։ «Նրանք,—դառնորեն հեգնում էր Մ. Նալբանդյանը,— անդադար օգնություն են ցույց տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չկործանվի։ Որպեսզի Թուրքիո ստրկացած հայ, սլավոն և հույն ժողովուրդը քաղաքակիրթ հոգաբարձվից չզրկվի... Սոքա ամենքը, իբրև բոնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում և ոչ ոք չի հարցնում աշակերտի կամքը, կամի՞ արդյոք ուսանիլ թե ոչ»[108]։

Նալբանդյանը ոչ միայն ազգային-ազատագրական ակնկալություններ չուներ գաղութակալական Անգլիայից կամ ցարական Ռուսաստանից, այլև նրանց տարածած քաղաքակրթությունից։ Գաղութակալների տարածած «քաղաքակրթության» հետևանք էր համարում, երբ մի «ազգ ճնշում և հարստահարում է մյուս ազգը», նրանց եսակենտրոն մորալի արդյունք է, երբ մի ազգ «իր մի շամփուր խորովածի համար պատրաստ է մորթել մյուս ազգի ևզը»։

«Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը պաշտպանում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հեղափոխական պայքարի միասնությունը և այդ միասնության մեջ տեսնում ազատության համար մղվող պայքարի հաջողության հրաշխիքը։ Նա կոչ էր անում ճնշված ազգություններին՝ ճնշողների դեմ բարձրացնել իրենց «չխոստովանված ազգության դրոշը»։ Այդ դրոշի ներքո մղվելիք պայքարն է, ասում է նա, որ կարող է վերջ դնել չխոստովանված ազգությունների ստրկությանը, նրանց աղքատությանը, նրանց բերել ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ազատություն։

Մ. Նալբանդյանը համոզված էր, որ արևելահայերի և արևմտահայերի ազատագրումը կենսագործելու են ոչ թե եվրոպական պետությունները, այլ ասիական և եվրոպական ժողովուրդների հեղափոխական ընդվզումները և, առաջին հերթին, ասիական և եվրոպական ժողովուրդների ազատությունը բռնադատող ցարիզմի տապալումը։ Արևմտահայ իր թղթակիցներից մեկի բերանով նա ձևակերպում էր իր սեփական միտքը. «...ինչպես մի մեծ շինվածք կառուցելու համար,— գրում է նա,— շատ նյութեր կմտնեն անոր կազմվածքի մեջ, այնպես ալ՝ անոր կործանումեն ետքը շատ նյութեր կստացվին վատ շինվածքների համար»։ Ահա թե ինչու Ռուսաստանում խմորված ազատությունը միայն ռուս ժողովրդի ազատությունը չէ, այլ Ռուսաստանի մեջ մտնող բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև Կովկասի, Վրաստանի և Հա-

108 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 89։

յաստանի ազատությունը։ «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի»[109]։

Այս տողերում էր գաղափարական և քաղաքական այն հանգույցը, որը Մ. Նալբանդյանին ու նրա հայ համախոհներին միացնում էր Ռուսաստանի և Եվրոպայի հեղափոխական-դեմոկրատների և Ռուսաստանի ու Թուրքիայի գյուղացիական և ազգային-ազատագրական շարժումների հետ։

Այն հանգամանքը, որ 1862 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Լոնդոնի ռուս վտարանդիները նախատեսում էին Թուրքիայում նախապատրաստվող ապստամբությունների մեջ հայերի մասնակցությունը, հանդիսանում է նույն ամիսներին Լոնդոնում գտնվող Մ. Նալբանդյանի հետ ռուս տարագիրների ունեցած հանդիպումների ու մտափոխանակությունների արդյունքը։

Մ. Նալբանդյանի արևմտահայ համախոհների նախաձեռնությամբ Թուրքիայում կազմակերպվելիք ժողովրդական ապստամբությունները ռուս վտարանդիները լծորդում էին Ռուսաստանում, մասնավորապես Կովկասում և Դոնի շրջանում «Земля и воля» հեղափոխական կազմակերպության, իտալական ազգային-ազատագրական շարժումները ղեկավարող Մաձինիի ու Գարիբալդիի և լեհ քաղաքական գործիչ Ադամ Չարտորիժսկու Արևմուտքում ծավալած գործունեությանը։

Ռուս և արևմտաեվրոպական դեմոկրատիայի գործիչների հետ էր առընչված ոչ միայն Մ. Նալբանդյանի, այլև նրա արևմտահայ համախոհների՝ Հարությունյան Սվաճյանի, բժիշկ Հովհաննես Քյաթիպյանի և Սերովբե Թագվորյանի քաղաքական գործունեությունը Թուրքիայում։ Իրենց ընդհատակյա գործունեությունը վարագուրելու համար նրանք օգտագործում էին նույնիսկ Մերձավոր Արևելքի մասոնական օթյակները, որոնց հետ Մ. Նալբանդյանի գաղափարակիցներից կապված էին Ս. Թագվորյանը՝ Կ. Պոլսում և Դր. Չիլինկիրյանը՝ Զմյուռնիայում[110]։

1862 թվականի կեսերին Մ. Նալբանդյանի արևմտահայ համախոհները աջակցեցին Զեյթունում բռնկված ապստամբությանը։ Հակառակ Զեյթունի ապստամբությանը սատարող արևմտահայ լիբերալների գործ դրած ջանքերին՝ Նալբանդյանի և նրա արևմտահայ համախոհների ակնկալությունները կապված էին եվրոպական պետությունների գաղութակալական քաղաքականության դեմ գործող Լոնդոնի հեղափոխական կենտրոնի հետ, որի մեջ ռուս վտարանդիներից բացի մտնում էին նաև Գարիբալդին և Մաձինին։ Թագվորյանի հայտնի նամակից պարզվում է, որ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Մաձինիի հետ և ջանացել նրա հետ ծանոթացնել նաև իր արևմտահայ գործակիցներին[111]։

Այս փաստերից հայտնի է արդեն, որ արևմտահայերի ազատագրման հարցի շուրջը Նալբանդյանի հետամտած խնդիրները համընկնում էին թուր-

---

109 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 61։

110 Աշ. Հովնաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 436 և հետ., էջ 471 և հետ., էջ 475 և հետ., էջ 499։

111 Նույն տեղում, էջ 505 և հետ.։

քահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումների նկատմամբ ռուս հեղափոխական-դեմոկրատների առաջ քաշած նպատակների հետ։

Այս մտահղացումը կարող ենք հավաստել ոչ միայն Արևմուտք ապավինած Բակունինի, Գերցենի և Օգարևի, այլև Ռուսաստանի ներսում գործող ռուս հեղափոխական-դեմոկրատների ելույթներից։ Հատուկ ուշադրության արժանի է մանավանդ 1860 թվականին «Russie et la Question d'Orient» վերնագրով Փարիզում տպագրված անանուն մի գրքույկը, որը գրել և հրատարակել էր ռուս նշանավոր հեղափոխական-դեմոկրատ Նիկոլայ Սերնո-Սոլովևիչը[112]։

Գրքույկի հեղինակը նշավակում է Թուրքիայի վերաբաժանմանը հետամուտ եվրոպական դիվանագիտությունը։ Խոր համակրանքով է խոսում նա Եվրոպայի և Ասիայի ճնշված ժողովուրդների մղած ազատագրական պայքարի մասին և կտրականապես դատապարտում եվրոպական պետությունների շահախնդիր միջամտությունը Արևելքի ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի ներքին գործերին։

Հեղինակը մատնանշում է կառավարությունների մարդասիրական ֆրազների և թուրքահպատակ ժողովուրդների ազատասիրական ձգտումների միջև եղած բացահայտ ներհակությունը։ Ռազմական ուժի վրա հենված մեծ պետությունները, ասում է նա, հետամուտ են ոչ թե օսմանյան պետության ճնշված ժողովուրդների ազատագրմանը, այլ այդ պետության մասնատմանը և նրա հարստությունների հափշտակմանը։ Դատապարտում է նա Եգիպտոսը գաղութ դարձնելու անգլիական ծրագիրը և Դարդանելը նվաճելու ցարական քաղաքականությունը, առաջ է քաշում, պաշտպանում Եգիպտոսի անկախության ու Կ. Պոլիսն ազատ քաղաք հայտարարելու, նեղուցներում ազատ նավագնացություն ապահովելու գաղափարը։

«Արևելյան հարցի» դիվանագիտական լուծման գաղտնի խարդավանքներին անանուն հեղինակը հակադրում է դեմոկրատական հրապարակայնության սկզբունքը, պետությունների իրարամերժ քաղաքականությանը հակադրում դեմոկրատիայի քողազերծ քննադատությունը։ Դժբախտությունների լաբիրինթոսից խույս տալու համար, ասում է նա, պետք է որ դիվանագիտությանը հանդիպադրվի այլ ուժ՝ միշտ ավելի իմաստալից, ավելի անկողմնակալ և ավելի գործնական հասարակական կարծիքը։

Ոչ թե պետությունների միջամտությամբ, այլ թուրքահպատակ ժողովուրդների համատեղ պայքարով է, որ պիտի վճռվի նրանց քաղաքական բախտը, ասում է հեղինակը։

Նալբանդյանը անձնական ծանոթություն էր հաստատել Ն. Ս. Սերնո-Սոլովևիչի հետ, հավանաբար, 1859 թ. Պետերբուրգում։ 1860 թ. փետրվար-մարտ ամիսներին և նույն տարվա դեկտեմբերին Լոնդոնում Սերնո-Սոլովևիչը հանդիպել էր և զրուցել Գերցենին և Օգարևին[113]։ 1862 թ. Սերնո-Սոլովևիչին ուղղված իրենց հայտնի նամակում Օգարևը և Գերցենը

---

112 *И. Е. Бирнбаум.* Неизвестная работа Н. А. Серно-Соловьевича, «История СССР», 1963, № 3, стр. 138.

113 *Серно-Соловьевич,* Публицистика, Письма, М., 1963, стр. 410 и др.

Նալբանդյանին բնութագրում են որպես ոսկի հոգու տեր, հեղափոխական գործին նվիրված անշահախնդիր ու գերազնվագույն մի մարդու, որի մասին չերմ հանձնարարականներ էին ստացել Սերնո-Սոլովևիչից[114]։ Օգարևի ու Դերցենի կողմից Նալբանդյանին տրված ամենասրտագին այս բնութագրին անմիջապես նախորդում են Կովկասում հեղափոխական կազմակերպություն ստեղծելու մասին Սերնո-Սոլովևիչին տրվող հրահանգները։ Պարզվում է, որ Սերնո-Սոլովևիչը գործելու էր Նալբանդյանի հետ։ Արտասահմանում և Ռուսաստանի ընդհատակյա «Земля и воля» կազմակերպության կողմից նրանց առաջադրված էր 1863 թ. գարնանը Ռուսաստանում կազմակերպվող համընդհանուր ապստամբության պահին ուղի հանել Կովկասի բնակչությունը։ Այլ փաստերից ևս ակներև է, որ ոչ միայն Բակունինը, այլև Դերցենն ու Օգարևը Նալբանդյանին և Սերնո-Սոլովևիչին պատասխանատու դեր էին վերապահում Կովկասում և Թուրքիայում կազմակերպվելիք ազգային-ազատագրական շարժումների մեջ։ Նույն եզրակացությանն է հանգեցնում նաև Նալբանդյանի և նրա արևմտահայ գործակիցների ծածկագրությունների վերլուծությունը[115]։

Մ. Նալբանդյանին և Սերնո-Սոլովևիչին տրված հանձնարարությունները՝ Դերցենի և Չերնիշևսկու գլխավորած համառուսական հեղափոխական շարժման կարևոր խնդիրներից էին։ Բայց նրանց վիճակված չէր իրագործելու այդ հանձնարարությունները։

1862 թ. ամռանը ապստամբության կազմակերպողների ու ղեկավարների, այդ թվում նաև Մ. Նալբանդյանի ու Սերնո-Սոլովևիչի կալանքը և դրան հաջորդած աքսորն ու մահը խափանեցին Կովկասում կամ Թուրքիայում նրանց հետագա համատեղ գործունեությունը։

Մ. Նալբանդյանի գլխավորած հեղափոխական-դեմոկրատական հոսանքը կարևոր դեր կատարեց հայ ժողովրդի հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման պատմության մեջ։

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

1. ԿՂԵՐԱ–ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

XIX դարի առաջին կեսին արևմտահայ կյանքում կղերա-ամիրայականները արտահայտում էին պոլսահայ ամիրաների և բարձրաստիճան հոգևորականության շահերը։ 50—60-ական թվականներին նրանք ձևավորվեցին որպես ռեակցիոն հոսանք և դիմագրավեցին ոչ միայն ազգային-ազատագրական շարժումներին, այլև բարեփոխությունների չափավոր պահանջներին։

Կղերա-ամիրայական հոսանքի պարագլուխը դարձավ Հովհաննես Զամուռեյան–Տեռոյենցը, գաղափարակիցներ ունենալով Մ. Գ. Տեր-Մովսիսյանին, Ա. Հասունյանին, Ղ. Պալճազարյանին և Մխիթարյան վանականներից շատե-

114 *Н. П. Огарев*, Избранные социально-политические и философские произведения, М., 1960, стр. 463.

115 Աշ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, հատ. 1, էջ 471—472։

րին։ Հոսանքի ձայնափողերը դարձան «Ջոհալ», «Երևակ», «Արևելյան դար», «Բազմավեպ», «Արշալույս Արարատյան» պարբերականները, որոնք գաղափարական մարտեր էին մղում առաջավոր մտավորականության դեմ։

Հակամարտությունները ծայր առան լեզվի շուրջ՝ գրապայքարով։ Կղերա-ամիրայականները, վախենալով, որ լեզվաշինական անմեղ ռեֆորմները կարող են խարխլել նաև հայ եկեղեցու հիմքերը, սկսեցին պաշտպանել գրաբարը։ Հ. Տերոյենցը, Ա. Աղանուրը, Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյաններից շատերը արշավանքի դուրս եկան լուսավորականների դեմ, փորձեցին նախապատվություն տալ գրաբարին, արգելեցին աշխարհաբարի մուտքը դպրոցները։

Տերոյենց-Ջամուռճյանը, պատրիարքի միջնորդությամբ, 1854 թ. արգելել տվեց Ն. Ռուսինյանի «Ուղղախոսության» դասավանդումը դպրոցներում, պայքար սկսեց քերականական «նորաբուծ» կանոններով գրված Ն. Զորայանի և Կ. Յուրճյանի հոդվածների լեզվի դեմ։

Արևմտահայ առաջավոր մտավորականները 1850—60-ականներին մշակում էին աշխարհաբարը, ստեղծում նրա քերականությունը, սակայն հետադիմականներն էլ «տեսականորեն» հիմնավորում էին իրենց դիրքը, «Երևակ», «Բազմավեպ», «Արևելյան դար» պարբերականների էջերում ազդարարում կղերա-ամիրայականների արդարացիությունն առաջինների նկատմամբ։ «Գրաբարյաններին» կարծիքով ազգի լեզուն պիտի դառնար գրաբարը։ Սրանց հայացքով, կորցնել գրաբարը, կնշանակեր կորցնել «ազգության հոգևոր ապահովանը»՝ հայոց լուսավորչական եկեղեցին։

Աշխարհաբարը հաղթանակում էր։ Նրա հակառակորդներն ստիպված էին տեղի տալ, հարմարվել նոր պայմաններին, որպեսզի մեկընդմիշտ չկտրվեին ժողովրդից։

Կղերա-ամիրայական հոսանքի գաղափարախոսները դիմակայում էին այն տեսակետին, թե հնարավոր է բարբառներից բառամթերք հավաքել, մշակել համազգային, այսինքն՝ երկու հատվածներին հասկանալի աշխարհաբար։ Մերժելով այս, նրանք փաստորեն ճիգ էին թափում այրել արևելահայ ու արևմտահայ հատվածների միջև նոր գցված լաստերը, խաթարել համազգային զարթոնքի շարժումը։

Նրանց պահպանողական դերը դրսևորվեց գրականության մասին հայտնած տեսակետների և լույս աշխարհ հանած ինքնուրույն ու թարգմանական գործերի մեջ։ Հ. Ջամուռճյանը գրեց երեսուն հատորից բաղկացած համաշխարհային կրոնների պատմությունը, ստվարածավալ «Իրավախոհը»[1]։ 1860 թ. հետո կղերա-ամիրայականները, Տերոյենցի գլխավորությամբ, գրական մարզում պայքարի դուրս եկան արևմտահայ դեմոկրատների դեմ, փորձեցին արգելել «սոցիալիզմի ու կարմիր հասարակապետության մուտքը» հայ գաղթօջախները։

Թողած եվրոպական առաջադեմ գրականությունը, Տերոյենցը թարգմանում էր «Ժակմեն Կլեա» և Ժեռառ Աբբայի «Խորհուրդ գաղտնի ընկերության» վեպերը, որոնց մեջ խարազանվում էին XVIII դարի մատերիալիստ-լուսավո-

1 «Երևակ», 1859, էջ 269։

րիչներն ու նրանց հետևորդները։ Սակայն Զամուռճյանն այստեղ սոսկ թարգմանիչ չէր, այլ փոխադրող։

1868 թ. լույս տեսավ Հ. Հիսարյանի «Նեռն կամ կատարածն աշխարհի» վեպը, ուր «Բանասերի» խմբագիրը, Տերոյենցի հետևողությամբ, ջանում էր անվանարկել հայ դեմոկրատներին։

1868 թ. Մխիթարյանները հայատառ թուրքերենով հրատարակեցին «Վիոնելլուի արկածները» վեպի թարգմանությունը, ուր դատապարտվում էին Բալկաններում, Իտալիայում 1860-ական թվականներին ստեղծված գաղտնի կազմակերպությունները, Գարիբալդիի ու Մաձինիի գլխավորած շարժումները։ Նրանք հերետիկոսության ու աղանդավորության արմատներ էին փընտրում Եվրոպայի «խաղաղ մարդկանց» մոլորեցնող Վոլտերի, Դիդրոյի, Ռուսոյի գրվածքների մեջ։ Սակայն թարգմանիչները դրանով չէին բավարարվում, այլ նման կազմակերպություններ էին որոնում Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Պադուայում։

Այդ նպատակին ծառայեցնելով ինքնուրույն ու թարգմանական գրականությունը, մամուլի դժգույն օրգանները, հետադիմականներն ուղղակի թե անուղղակի ծառայում էին սուլթանական միահեծանության։ Նրանք, դեմ դուրս գալով քաղաքական պայքարին, քարոզում էին կույր հնազանդություն սուլթանական վարչակարգին։

Տերոյենցի գլխավորած հոսանքը բացասաբար արձագանքեց Զեյթունի հերոսամարտերին, դատապարտեց «անհավատարիմ» ազգայինների «անխոհեմ» ընթացքը, Սահմանադրությունը ներկայացրեց իբրև «պետության մեջ պետություն ստեղծելու» փորձ, իսկ «Թանզիմաթը»՝ սրբագործված օրենքների ոչընչացում։ 1862 թ. օգոստոսին «Երևակը» դադարել էր, «Արևելյան դարը» զբաղված էր Մ. Նալբանդյանի «Երկու տողի» քննադատությամբ, «Ժամանակը»՝ Արմենակ Հայկունու դեմ մղվող բանակռվով։ Զամուռճյանը թուլցիկներ էր տարածում Կ. Պոլսում և ջանում ժողովրդին հեռու պահել «անհավատների վարդապետություններից»։

Կղերա-ամիրայականները միայն հայ ազատագրական պայքարը չէ, որ դատապարտում էին, այլ ազգային-բուրժուական բոլոր այն շարժումները, որոնք խարխլում էին ֆեոդալական միահեծանության հիմքերը, լիներ դա թուրքական, ցարական, թե ավստրիական։ Տերոյենցը տպագրում էր նյութեր Գարիբալդիի մասին, ապա ավելացնում «...Կարիպալտի և կարիպալտիականները շատ աղեկ մարդիկ չըլլալնին իմացած ըլլան»[2]։ Նրան անհանգստություն էր պատճառել, որ Գարիբալդիի «աջ բազուկ» Մաձինին «...անսահման ազատության կուսակից է. որ ոչ թագավոր կուզե աշխարհի վրա և ոչ որևիցե իշխանավոր, թե՛ քաղաքական և թե՛ կրոնական մասին»[3]։

Կղերա-ամիրայականներն աստիճանաբար կապեր են հաստատում արեվելահայ կղերա-աղայականների՝ Մ. Մսերյանի, Գ. Այվազովսկու, Հ. Խալիբյանի, Ս. Ջալալյանցի հետ, ձգտում միասնական ճակատով դուրս գալ ոչ միայն

---

2 «Երևակ», 1864, № 14, էջ 108։

3 Նույն տեղում, 1860, № 38, էջ 130։

դեմոկրատական հոսանքի, այլև լիբերալ բուրժուազիայի չափավոր պահանջների դեմ։

Հետադիմականներն անզիջում պայքարի դուրս եկան «Երկու տող» ու «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատություններում առաջ քաշված ծրագրերի դեմ, ջանացին ժխտել սոցիալական հեղափոխության անհրաժեշտությունը, դատապարտեցին «դիվուրաց հեղինակի» գաղափարների արևմտահայ հետևորդներին։ Այս հարցում անզիջում էր հատկապես Մ. Գ. Տեյիրմենճյանի «Արևելյան դարը»։

1861 թ. մայիսին Ջամուռճյանի հանձնարարությամբ «Արևելյան դարը» տպագրեց խմբագրի ընդարձակ հոդվածաշարը, պաշտպանության տակ առավ արևմտահայ ռեակցիայի պատվարին և դատապարտեց Մ. Նալբանդյանին։ «Երկու տող» անունով սադայելական և տարտարոսաբուխ տետրակ մը դուրս եկավ այս օրերուս մայրաքաղաքիս մեջ... Ինչպես կերևի հիշյալ տետրակին լեզուն հայ, ...բայց ոճը այլաբան, խոսքերն դիվօձն ու դարձվածքները հեթանոսական»[4]։ Նույն օրերին նրա և Տեր-Յենգի ստորագրությամբ դիմում ուղարկվեց պատրիարքարան, որտեղ «Երկու տող»-ի հեղինակին ու գրքույկի տարածողներին մեղադրանք էր ներկայացվում իբրև «անկրոնների», «անաստվածների» և պահանջում նրանց թերթերի փակում[5], խմբագիրների ձերբակալում։ Եվ իրոք, ռեակցիան հասավ իր նպատակին։ Տեյիրմենճյանը պարծենալով հարձակվում էր «Մասիս»-ի վրա, սպառնում, թե «... պիտի հարկադրես զմեզ՝ քեզ համար ալ անցագիր մը առնլու աշխատությունը կրելու. բայց գիտե՞ս արդյոք ուր երթալու համար,—հոն՝ ուր Մեղուն ու Մյունատին դադրեալ կմտածեն»[6]։

Դեմոկրատական մտավորականության զորեղացող ազդեցությունը զայրույթ էր առաջացնում կղերա-ամիրայականների շրջանում։ Ջամուռճյանը, գլխավոր հարվածը վերցնելով իր վրա, պայքարում էր Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Կ. Փանոսյանի, Մ. Այվատյանի դեմ, հրապարակախոսությամբ «վնասազերծում» «Երկրագործության» ու «Երկու տողի» ազդեցությունը, միաժամանակ հանձնարարություններ տալիս իր կուսակից խմբագիրներին՝ պայքարի դուրս գալ զատ-զատ, ջախջախել սոցիալիստներին հետևող «անհավատներին»։

Մ. Նալբանդյանի բնութագրությամբ «Երևակի ճուտ» «ժամանակ» հանդեսն ու նրա խմբագիր Ստ. Փափազյանը հանձնարարություն ստացան չդադարեցնել պայքարը Հ. Սվաճյանի դեմ, սակայն հիմնականում զբաղվել Արմենակ Հայկունու վարկաբեկման, նրա աթեիզմին՝ կրոնական իդեալիզմը հակադրելու խնդրով։

Այսպիսով, XIX դարի 50—60-ական թվականներին Թուրքիայի հայաբնակ գաղթօջախներում տակավին գործում էին կղերա-ամիրայական հոսանքի ներկայացուցիչները, որոնք, սկզբում պայքարելով լիբերալ ու դեմոկրատական մտավորականության դեմ, հետագայում կողմնակիցներ գտան ժողո-

---

4 «Արևելյան դար», 1861, № 24, էջ 203։

5 Նույն տեղում, № 25։

6 Նույն տեղում, 1861, օգոստոսի 31, № 36, էջ 53—54։

վերդական զանգվածների հեղափոխական շարժումներից երկնչող լիբերալների մեջ, ընդհանուր ճակատ ստեղծեցին հասունացող դեմոկրատական հոսանքի դեմ։ Կղերա-ամիրայականներն ունեին թուրքական կողմնորոշում և ձգտում էին հավերժացնել ֆեոդալական միապետությունը, լուսավորչական հայ եկեղեցու տիրապետությունը։

2. ԼԻԲԵՐԱԼ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Արևմտահայ լիբերալներն արտահայտում էին գաղութահայ օջախներում կենտրոնացած հայ առևտրական այն բուրժուազիայի շահերը, որը 1830-ականներից կազմակերպում էր վաճառականական ընկերություններ, կառավարությունից ստանում մաքսային առանձնաշնորհումներ և հույների ու հրեաների հետ միասին դառնում թուրք-եվրոպական առևտրի զորեղ միջնորդ։

Ամիրայական կապիտալի ու ամիրաների մենատիրական իրավունքների դեմ պայքարող հայ նորաստեղծ բուրժուազիան, ծանոթանալով Արևմուտքի երկրներին, առևտրի եվրոպական մեթոդներին, գիտակցելով լեզուներ իմանալու անհրաժեշտությունը, 1840-ական թվականներին իր զավակներին ուղարկում էր Փարիզ, Լոնդոն, Վենետիկ, Պադուա՝ հաղորդակից դարձնելու եվրոպական լուսավորությանը։

Մուրադյան ու Ռափայելյան, ապա Մուրադ-Ռափայելյան վարժարանի առաջադեմ սանները, Սորբոնի ու Քեմբրիջի համալսարանների հայ ունկնդիրները դաստիարակվում են Վոլտերի, Ռուսոյի, Դիդրոյի, Մոնտեսքիոյի, Սեն-Սիմոնի և այլոց գաղափարներով, շատերն ականատես դառնում, իսկ ոմանք էլ մասնակցում 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը։

Վերադարձին, լուսավորված այս երիտասարդությունն իր հետ բերում էր առաջադեմ գաղափարներ և ջանում կյանքի մի շարք բնագավառներում բարեփոխումներ կատարել։ Ֆրանսիական ազդեցությունը ուժեղանում էր մանավանդ ծովամերձ քաղաքներում։ «Առհասարակ,— գրում է Մ. Մամուրյանը,— մեծ ու պզտիկ՝ բարիզյան կյանքը, սովորույթը, նորաձևությունը մատենագիրներն օրինակել սկսան։ Այն ատեն ոչ միայն մեր արդն ու զարդը, տարազն ու կահույքը Ֆրանսայեն եկան, այլև Ֆրանսան տվավ մեզ մտքի սնունդ, սրտի զգացում, նույնպես և մեր կրից ճարակ, և թեթևամտության նյութ»[7]։

Այդ սերնդի անդրանիկ ներկայացուցիչներն էին Նիկ. Զորայանը, Գր. Օտյանը, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Ն. Ռուսինյանը, Աղաթոնյան եղբայրները և ուրիշներ, որոնք դիմակայեցին կղերա-ամիրայական հոսանքին։

Դարամիջին բուրժուազիան տակավին վերելք էր ապրում։ Դեռևս չկար հասունացած դեմոկրատական մտավորականություն, դրա համար էլ, առանց Լրկնչելու, բարձրացնում էր հետամնաց Թուրքիան հեղաբեկելու այնպիսի խնդիրներ, որոնցից հրաժարվելու էր կամ չափավոր շրջանակների մեջ խցկելու ճիշտ մեկ տասնամյակ հետո։ Նրա չափավոր ազատամտությունը պայմանավորված էր մի կողմից Եվրոպայում ստացած ներշնչումներով, մյուս կողմից՝ կղերա-ամիրայականներին սանձ դնելու համար ժողովրդական զանգվածների մեջ հենարան ունենալու ակնկալությամբ։

---

7 Վալտեր Սկոտ, Իվանոե, Զմյուռնիա, 1872, էջ 3 (Մ. Մամուրյանի գրած Առաջաբանը)։

1850-ական թվականներին, տարբեր դասերի մասին ունեցած մտահոգություններով հանդերձ, արևմտահայ լուսավորյալների սերունդը միասնական հակատով պայքարում էր խավարամոլների դեմ, ամեն ինչ ենթարկելով «մարդկային իմացության դատաստանին»։ Առաջադեմ այս մտավորականները խմբվում էին «Մեղու», «Մասիս», «Պեգասյան թռչնիկ», «Մաղիկ», «Կիլիկիա», «Փարիզ» և այլ պարբերականների շուրջը, որոնցից և սկիզբ է առնում լուսավորական ու սահմանադրական շարժումը։

Արևմտահայերի մտավոր զարթոնքն ազդարարողների առաջին խնդիրը պրապայքարն էր, որը սրվեց 1853 թ. և շարունակվեց մինչև 80-ական թվականների վերջը։

Տակավին 40-ականներին Ն. Զորայանն իր հոդվածները ոչ միայն գրում էր աշխարհաբարով ու հրատարակում «Հայաստան», «Բազմավեպ» պարբերականներում, այլև հիմնավորում էր նոր լեզվի անհրաժեշտությունը։ 1851 թ. լույս տեսան նրա «Վարժություն ընթերցանության ի պետս դպրոցաց», Գր. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վերա», 1852 թ. Ն. Զորայանի «Ընթերցասիրության կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակության հասնելու օգտակար խրատներ», 1853 թ. Ն. Ռուսինյանի «Ուղղախոսություն» աշխատությունները։

Այդ աշխատություններում արծարծվում էր այն պահանջը, թե դպրոցներում դասավանդելու իրավունքը պիտի վերապահել աշխարհաբարին և սահմանափակել գրաբարյանների վայելած արտոնությունները։ Նրանց ջանքերով մշակվեց արևմտահայ աշխարհաբարի քերականությունը՝ Ն. Ռուսինյանի հրատարակած «Ուղղախոսությունը»։

1853 թ. հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսում հիմնվեց «Ուսումնական խորհուրդ»[8] (նախագահ՝ Ն. Ռուսինյան, անդամներ՝ Ն. Զորայան, Մ. Այվազյան, Գր. Օտյան, Կ. Յուրճյան), որը քննեց Ն. Ռուսինյանի «Ուղղախոսությունն» իբրև աշխարհաբարի քերականություն և արտոնեց նրա դասավանդումը աշխարհիկ դպրոցներում։ Սրանով իսկ պայթեց գրապայքարը, որը մինչ այդ էլ գոյություն ուներ, սակայն ավելի սրվեց, դեմ հանդիման հանեց խավարյալներին ու լուսավորյալներին[9]։ Մշակութային խնդիրների շուրջը ծագած տարաձայնությունները վերածվեցին հասարակական ու քաղաքական պայքարի։

Հ. Տերոյենցն ու իր կուսակիցները պատրիարքի միջամտությամբ դատապարտեցին լուսավորյալների «հանդուգն» քայլը, արգելեցին «Ուղղախոսության» դասավանդումը, հավաքեցին ու այրեցին Ն. Ռուսինյանի կազմած «Տարեցույց» բազմաթիվ օրինակները, Հ. Սվաճյանին հեռացրին Պեշիկթաշի դպրատան ուսուցչի պարտականությունից։ Լուսավորյալներն ստիպված իրենց հոդվածներով էին պրոպագանդում «Ուղղախոսությունը»։

Լուսավորյալները կարողացան ձևակերպել արևմտահայերի գրական լեզուն, որի հիմքը արևմտահայ բարբառներից ու գրաբարից վերցված բառամթերքն էր։ Հետագայում չդադարած գրապայքարը հետապնդում էր աշխար-

8 «Մասիս», 1853, № 51։

9 Տե՛ս Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 25։

հաբարի մաքրության, տաճկերենի ազդեցություններից ու գրաբարյան ձևերից աշխարհաբարն ազատելու հարցը։

Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ նորաստեղծ մտավորականները ոչ միայն կազմեցին Ազգային սահմանադրության տարբերակները, առաջին տասնամյակում գլխավորեցին արհեստավորության ցույցերը, այլև քաղաքական մրցակրապարակից չեզոքացրին ամիրայությանը, պատրիարքին և ազգի ներքին գործերի ղեկը վերցրին իրենց ձեռքը։ Ազգային սահմանադրության մտահղացումը, վերամշակումը և նույնիսկ անվանման պատիվը վերապահված էր լուսավորյալ սահմանադրականներին, որոնք ձգտում էին ազգային ինքնավարության։

Լուսավորյալ մտավորականության միասնականությունն ավելի ակնառու դարձավ, երբ 1860 թ. սեպտեմբերին հիմնվեց Կ. Պոլսի «Բարեգործական» ընկերությունը։ «Բարեգործականը» քաղաքական կազմակերպություն չէր և ոչ էլ հեղափոխական նպատակներ էր հետապնդում։ Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել կրթել, լուսավորել գավառահայությանը, հոգ տանել նրա տնտեսական առաջընթացի, երկիրը զարգացման կապիտալիստական ճանապարհի վրա դնելու մասին։

Տարբեր հայացքների ու համոզումների տեր մարդկանց համախմբող «Բարեգործականի» հիմնադիրներն էին Մ. Աղաթոնը, Հ. Շիշմանյանը (Մեր ենց), անդամներն էին՝ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Մ. Մամուրյանը, Ա. Հայկունին, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը։

Ընկերությունը 1860 թ. մշակեց իր հայտարարությունը[10], իսկ Հ. Շիշմանյանն ու Մ. Մամուրյանը արևմտահայ ու կովկասահայ պարբերականներում ազդարարեցին նրա հետապնդած նպատակները։ Հրապարակված փաստաթղթերից[11] հետևում է, որ նրանց հեղինակները ձգտում էին ապահովել Թուրքիայի, հատկապես Արևմտյան Հայաստանի տնտեսական անկախությունը, դիմագրավել Եվրոպայի քայքայիչ ազդեցությանը։

Տնտեսական հետամնաց վիճակից ազգին դուրս բերելու միջոցները նրանք համարում էին լուսավորությունը, մասնագիտական ուսուցման միջոցով կրթված բանվորներ, երկրագործներ պատրաստելը։

«Բարեգործականի» անդամները տեսնում էին հազարավոր երկրագործների հոսքը դեպի մայրաքաղաք, Զմյուռնիա ու Եվրոպա, գիտակցում էին պանդխտության աղետաբեր հետևանքները, ուստի և ունևոր պոլսահայերից պահանջում էին վճարել պանդուխտների տուրքերը, նյութական միջոցներ տրամադրել այս աշխատունակ ու կորովի գավառացիներին, նրանց վերադարձնել հայրենիք, զարկ տալ ազգային երկրագործությանը[12]։ Հարցն այնքան էր հասունացել, որ նման առաջարկին դեմ չէին անգամ կոմպրադորական բուրժուազիայի ներկայացուցիչները՝ «Բարեգործականի» աջ թևը։

«Բարեգործականն» իր բաժանմունքը հաստատեց Զմյուռնիայում, դրամ հանգանակեց ու տրամադրեց Հ. Շիշմանյանին, նրան առաքեց Կիլիկիա, ուր

---

10 «Արշալույս Արարատյան», 1860, № 663։

11 «Հայտարարություն Բարեգործական ընկերության հայոց», Կ. Պոլիս, 1861, էջ 16։

12 «Փարիզ», 1860, № 47։

և ենթադրում էին խարիսխ նետել ազգի հարատևման խնդրով մտահոգվողները։ Շերենցն այստեղ փորձեց ագարակ գնել, երկրագործական վարժարան հիմնել, սակայն նրա ձեռնարկումը հաջողությամբ չպսակվեց։

1861—1863 թթ. սահմանադրական պայքարի ուժեղացումը, Զեյթունի, Արևմտյան Հայաստանի ապստամբական շարժումները, Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը քաղաքականապես հասունացրին արևմտահայ դեմոկրատական մտավորականությանը, որն առաջադրում էր պայքարի հեղափոխական գործելակերպ, հետապնդում ոչ միայն ազգային-ազատագրական, այլև սոցիալական ազատության նպատակներ։ Եվ դա օրինաչափ երևույթ էր, քանի որ կոմպրադորական բուրժուազիայի ու արևմտահայ աշխատավորական զանգվածների շահերը կարող էին համընթաց գնալ միայն որոշ շրջանում, բայց ոչ համընկնել ընդերկար։ Աշխատավոր գյուղացիների, պոլսահայ արհեստավորների ու պանդուխտների գլուխն անցած դեմոկրատական հոսանքը, ի վերջո, պայքարի ձեռնոց պիտի նետեր գաղութահայ կոմպրադորներին ու նրանց գաղափարական ձայնատարներին՝ բուրժուական լիբերալներին։

«...Լիբերալիզմի անջատման հարցը դեմոկրատիայից պատկանում է ամբողջ ազատագրական շարժման արմատական հարցերի շարքին,— գրում է Վ. Ի. Լենինը։— Ինչո՞ւմն է նրա թուլության պատճառը։ Արդյո՞ք նրանում, որ դեմոկրատիան ոչ բավարար գիտակից կերպով ու որոշակիորեն է անջատվել լիբերալիզմից, թույլ տալով վարակել իրեն նրա անզորությամբ ու տատանումներով։ Թե՞ նրանում, որ դեմոկրատիան չափից դուրս շուտ (կամ չափից դուրս կտրուկ կերպով և այլն) անջատվեց լիբերալիզմից, դրանով իսկ թուլացնելով «ընդհանուր գրոհի ուժը»։

Հազիվ թե թեկուզ մի մարդ, որն հետաքրքրվում է ազատության գործով, սկսի վիճել այն բանի դեմ, որ դա արմատական կարևորության հարց է։ Չի կարելի լինել ազատության գիտակից պողմնակից, առանց այդ հարցը միանգամայն որոշակիորեն լուծելու։ Իսկ այդ լուծելու համար պետք է հասկանալ, թե ինչպիսի հասարակական ուժեր, ինչպիսի դասակարգեր են կանգնած լիբերալիզմի թիկունքում և դեմոկրատիայի թիկունքում, ինչպիսի քաղաքական ձգտումներ են ընկած այդ դասակարգերի էության մեջ»[13]։

Արևմտահայ 1860-ական թվականների լիբերալ հոսանքի թիկունքում կանգնած էր կոմպրադորական բուրժուազիան, որը, նախքան արհեստավորությունն ու գավառահայությունն իրենց զգացնել կտային որպես քաղաքական ուժ, կատարում էր առաջադիմական դեր, պայքարում կղերա-ամիրայականների դեմ, ձգտում բարեփոխությունների ճանապարհով՝ վերևից, առանց աշխատավորության մասնակցության, արևմտահայությանը հանել ֆեոդալական խավարի թագավորությունից։ 1860-ականներին ամիրաներն ու սարաֆները, այլևս անկարող լինելով նախկին մեթոդներով դիմագրավել բուրժուական մտավորականությանը, վերանայում էին իրենց տեսակետները, համաձայնության եզրեր փնտրում լիբերալների հետ։ Կուլտուրական հեղաբեկման աջ թևը թիկունք է դարձնում երբեմնի կուսակիցներին, փորձեր անում լեզու

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 365։

գտնել երեկվա հակառակորդների՝ կղերա-ամիրայականների հետ, պայքար ծավալում բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսության դեմ։

Կային բուրժուական մտածողներ, որոնք վաղուց էին կատարել այդ շրջադարձը։ «Մասիսի» խմբագիր Կ. Յուսուֆյանը, բարեշրջումների կուլտուրական շարժման խնդիրներում համաձայնելով «Ուսումնական խորհրդի» անդամներին, տակավին 1854 թվականին էր դատապարտում ազգային-ազատագրական բնույթի հեղափոխական շարժումները, «հիմարություն»[14] անվանում հունական ապստամբությունը թուրքական բռնատիրության դեմ, մանուկ ազատությունը վտանգող[15] համարում Գարիբալդիին ու Մածձինիին, համերաշխվում Վ. Էմմանուելի, Կավուրի հետ։ «Կարիպալտի բռնվեցավ, բայց անոր բռնվելով խնդիրը լուծված և վտանգն անցած չէ...»[16]։

Յուսուֆյանը դատապարտեց նաև արևմտահայ ազատամիտներին, խաչակրաց արշավանքի դուրս եկավ Փարիզում հրատարակվող «Արևելք» ու «Արևմուտք» պարբերականների խմբագիր Ստ. Ոսկանյանի դեմ, մերժեց ազգային-ազատագրական պայքարի նրա առաջադրած ծրագրերը։

1861 թ. քաղաքական ժողովը Ն. Վարժապետյանին, Սերվիչենին, Ստ. Ասլանյանին, Գր. Աղաթոնին, Գր. Օտյանին, Ա. Տատյանին հանձնարարեց մշակել տպագրական օրենքի նախագիծ, որով փորձ էր արվում բռնությամբ լռեցնել արմատական մտքեր քարոզող մտավորականներին։

1863 թ. Ազգային միացյալ ժողովի մի խումբ երեսփոխաններ հայ պարբերականների խմբագիրներին ստիպեցին ենթարկվել հանձնաժողովի հրապարակած կանոնադրությանը։ Միայն Հ. Սվաճյանը մերժեց հրավերը, պատասխանելով, թե «քաղաքական ժողովն իրավունք չունի ենիչերիի պես բռնաբար մեկը պատրիարքարան կանչելու»։ Ժողովը որոշեց Հ. Սվաճյանին պարտադրել, որ նա ետ վերցնի իր առաջարկությունը, այլապես Բ. Դռան միջնորդությամբ փակել կտան «Մեղուն»[17]։ Սվաճյանը կրկին չենթարկվեց և հայկառակորդների սադրանքով «Մեղուն» ժամանակավորապես դադարեցվեց։

Ազգային սահմանադրության ելպատման նախօրյակին փաստորեն հակադիր բանակ կազմեցին Գր. Օտյանը, Գր. Աղաթոնը, Մ. Աղաթոնը, մանավանդ պալատում պաշտոն ստանձնած Սերվիչենը։ Սկզբում նրանք փորձեցին հաշտեցնել հասունացող դեմոկրատիային ու բուրժուականացող կղերա-ամիրայականներին, սակայն հաջողության չհասնելով՝ դուրս եկան ժողովրդական զանգվածների հեղափոխական տրամադրությունների դեմ։

Տասնհինգամյա հասակում Գր. Օտյանը Փարիզի բարիկադների վրա տեսավ ջլուտ մկաններով հեղափոխական բանվորներին։ Վերադարձին շատերին զարմացրեց ոչ միայն իր ճարտասանությամբ, խոսքի ուժով, այլև գործով։ Մ. Նալբանդյանը ծանոթ էր նրան և անվանում էր «Ազգային ժողովի առենապետ հոյակապ Գր. էֆենդի»։ Հ. Սվաճյանն իր առաջին շրջանի գործունեությամբ, նուիրական ստացած կրթությամբ պարտական էր Օտյան գերդաստանին։ «Մեղուն» դտնվում էր Գր. Օտյանի ազդեցության տակ և դժվար էր ջոկել խմբագրի ու

14 «Մասիս», 1854, № 113։
15 Նույն տեղում, 1862, 11 օգոստոսի, № 548։
16 Նույն տեղում, 1 սեպտեմբերի, № 551։
17 «Ժամանակ», 1863, № 191։

կխավոր աշխատակցի հոդվածները, մինչև 1860 թ. գաղափարական լուրջ տարաձայնություն նկատել նրանց միջև[18]։

Սակայն Գր. Օտյանը առաջին շրջանում էլ ուներ չափավոր հայացքներ-նա առաջարկում էր, օրինակ, քվեարկության իրավունքից զրկել կարդալ չիմացող արևմտահայերին։

Պատահական չէր, որ 1863 թ. Գր. Օտյանը դեմ արտահայտվեց ապըստամբական շարժումներին ընդհանրապես և իր վերանորոգչական ձեռնարկումներն ուղում էր կատարել աստիճանական զարգացման ուղիով՝ «առանց վրդովելու տիրող գաղափարները, և առանց բռնի քայքայումների»[19]։

Գր. Օտյանից ավելի աջ էր պալատական բժիշկ Սերովբե Վիչենյանը, որը ասպարեզ իջավ 1840-ական թվականներին, մասնակցեց լուսավորական շարժմանը, դարձավ Սահմանադրության հեղինակներից, բայց միշտ չափավոր ու զգույշ, հետու որևէ «ծայրահեղությունից»։ 1861 թ. իբրև Զամուռճյանի մերձավոր, նա հաճույքով խեղանդամում էր Ազգային սահմանադրությունը, պաշտպանում հայ վերնախավի շահերն՝ ընդդեմ արհեստավորության ու օրամշակների։

Սերվիչենի մտերիմների մեջ ուրույն տեղ էին բռնում Մկրտիչ և Գրիգոր Աղաթոնյանները։ Մկրտիչը «Բարեգործականի» նախագահն էր և Իտալիայում ստացած իր վաճառականական ու շերամաբուծական գիտելիքները շահարկեց Բրուսայում, ուր կիրառում էր մետաքսագործության «ամենավերջին կատարելագործություններ»։ Նա առաջիններից մեկն էր, որ Թուրքիայում ակցիոներական ընկերություններ կազմակերպեց, որոնք զբաղվում էին առևտրական գործարքներով, աշարի վարձակալությամբ և շահութաբեր այլ գործերով։ Գրիգոր Աղաթոնը ստեղծեց երկրագործական ընկերություն և կուսակիցների հետ միասին առաջարկում էր վանական կալվածքների հաշվին լուսավորել աղքատ գյուղացիներին։ Հետագայում նա հրաժարվեց գյուղացիների մասին ունեցած իր նախկին մտահոգություններից։

Արևմտահայ լիբերալների մեջ կային նաև Ն. Ռուսինյանի նման մտածողներ, հրապարակախոսներ ու գործիչներ, որոնք ավելի ձախ էին և չէին ցանկանում հակադրվել ժողովրդին։ Ռուսինյանն առաջինը մարտահրավեր նետեց կղերա-ամիրայականներին, իր ստեղծած «Տարեցույցով» պահանջեց ընդունել ֆրանսիական հեղափոխության տոմարը[20], փորձեց հակադրվել հայ եկեղեցուն։ Դրանով իսկ նա հերետիկոսի անուն վաստակեց, իսկ նրա գրքերը կղերականության ջանքերով հրո ճարակ դարձան։ Ռուսինյանը մինչև վերջ էլ մնաց վեղարավորների անզիջում հակառակորդ. նրա «...հավատքը Ֆրանսայի 1789 թ. էր։ Անոր սկզբունքները կուզեր ծավալել հայոց մեջ... ժողովրդին կհավատար, ինչպես հավատացած էին Տանթոն ու Պոտենն»[21]։

Չափավոր ծրագրերի իրականացումը նա կապում էր ժողովրդի հետ և հայտարարում, թե «ժողովուրդ դուն ես տերը, քո հրամանին պիտի հնա-

18 Հ. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 91։

19 Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 647։

20 Հ. Դաթրիեյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 3, Երևան, 1959, էջ 97—99։

21 «Գեղունի», 1902, էջ 44։

զանդին ամենքը»։ Ռուսինյանը ուզում էր ազատ, ինքնավար տեսնել Հայաստանը։

Ն. Ռուսինյանն, այնուամենայնիվ, չկարողացավ գնահատել ժողովրդի ծավալած շարժումը, իրականությունից կտրվեց և դարձավ իդեալիստ մտածող։

Այսպիսով, 1860-ական թվականներին արևմտահայ լիբերալ-բուրժուական հոսանքը հեռու էր կանգնած ժողովրդական շարժումներից, սոցիալական պայքարից։

3. ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

1850—1860-ական թթ. Արևմտյան Հայաստանում ձևավորվեց գավառահայ առևտրա-արհեստագործական բուրժուազիան, որի ձայնատար դարձած գավառահայ մտավորականությունը իր լուսավորական աշխատանքով, բարձրացրած խնդիրներով ավելի առաջադիմական դիրքեր գրավեց, քան ազգային-լիբերալները։ Ամենակարևորը, նա մտահոգված էր գյուղաբնակչության ճակատագրով։

Մինչ այդ արևմտահայ հասարակական-քաղաքական շարժման մեջ, առավել ևս գրական անդաստանում, գավառահայությունը դեռևս էական դեր չուներ։ Կ. Պոլիսն ու Զմյուռնիան, Վենետիկը, Վիեննան ու Փարիզն էին տալիս արևմտահայ գրական ու բաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչներ։ Սակայն Արևմտյան Հայաստանի անունից խոսող այս մտավորականները մինչև դարակեսը դեռևս գավա- չէին մեկնում և տեղյակ չէին հայրենի բնաշխարհում ապրող հայ ազգաբն[illegible]թյան կրած սոցիալ-քաղաքական տառապանքներին։

Անցյալ դարակեսից գավառահայ մտավորականներն արդեն գիտակցում էին, որ իրենք պետք է մտահոգվեն գավառի ճակատագրով, ստեղծեն սեփական դպրոց, մամուլ, գրականություն, հավաքեն ու գրի առնեն հայրենի բառն ու բանը, ավանդազրույցները, դյուցազնավեպերը, առակներն ու ասացվածքները։ Գավառահայ մտավորականությունն էր, որ Կ. Պոլսի ու գաղթաշխարհի հայ առաջավոր խավերին հպատակեցրեց Հայաստանին և գավառի ողբը, հարստահարությունների դեմ մղվող պայքարը դարձրեց ընդհանուր հայ ժողովրդի մտահոգության առարկա։

Արևմտյան Հայաստանում գործող գավառահայ այս մտավորականները, սակայն դեռևս, հասունացած չէին մշակելու այնպիսի ծրագրեր, որոնք զերծ լինեին պահպանողականությունից։ Նրանք չէին կարողանում գնահատել բուրժուական հարաբերությունների առավելությունները ֆեոդալականի հանդեպ։ Նրանք դեմ էին գործարանային արդյունաբերության առաջընթացին, քանի որ վերջինս քայքայում էր հիմնականում ձեռքի աշխատանքի վրա հիմնված էսնաֆների արհեստանոցները, շուկայից դուրս շպրտում գավառահայ առևտրականներին։ Գավառահայ մտավորականության հայացքը սկզբից ևեթ հառած էր դեպի անցյալը։ Նրանք ցանկանում էին ընդլայնել բարեփոխված եկեղեցու իրավունքները, վերականգնել «հայկական թագավորությունը»։

Հեռու մնալով հեղափոխական հայացքներից, նրանք չընկալեցին Մ. Նալբանդյանի ու հայ ազգային-դեմոկրատական մտավորականության երկնած

ծրագրերը, խուսափեցին ժողովրդի զանգվածային շարժումների քարոզից, արևմտահայերի զինված ինքնագործունեության գաղափարից։

Գավառահայ ազգային-պահպանողականները համախմբված էին «Արծվի Վասպուրական» և «Արծվիկ Տարոնո» պարբերականների շուրջը։ Հոսանքի գաղափարական առաջնորդը Մ. Խրիմյանն էր, իսկ նրա գաղափարակիցները՝ հիմնականում ժառանգավորաց դպրոցի սաները։

«Արծվի Վասպուրական»-ում Մ. Խրիմյանը ջանում էր բարձրացնել լուսավորչական եկեղեցու հեղինակությունը, երբեմն փոփոխություններ առաջարկելով նրա ավանդական ծեսերի մեջ։ Սկզբնական շրջանում խմբագիրն ու նրա աշխատակիցները դեռևս գրաբարապաշտ էին։ Մ. Խրիմյանն առաջարկում էր հայագիտական բոլոր գրվածքները, գեղարվեստական ինքնուրույն ու թարգմանական երկերը շարադրել գրաբարով, իսկ ինչ վերաբերում էր աշխարհաբարին, ապա այն դնել այնպիսի շրջանակների մեջ, որ մոտենար «սուրբ գրոց» լեզվին[22]։

Սահմանադրական պայքարը, շփումը կովկասահայ անվանի մտավորականների հետ, ազատագրական շարժումների բարձրացող ալիքը, Թուրքիայի քաղաքական կուրսի փոփոխությունը, քուրդ ցեղապետերի նոր վայրագությունները, Արևմտյան Հայաստանի գյուղացիության իրավիճակի ծանրությունը բեկում առաջացրին Մ. Խրիմյանի ու նրա զինակիցների հայացքների մեջ։ Վարագը աստիճանաբար դարձավ հայրենասիրական գաղափարների կրապարման օջախ։ Այդ հոսանքին հարեցին Գ. Սրվանձտյանցը, Նաթանյան եղբայրները, Երեմիա և Արիստակես Տևկանցները, Գևորգ Շերենցը, Գ. Աղվանյանցը, նույնիսկ Պարսկաստանից Վարագ ժամանեց ու սրանց հետ կապվեց պատանի Հակոբ Մելիք Հակոբյանը (Րաֆֆին), որի բանաստեղծական անդրանիկ փորձերը տպագրվեցին «Արծվի Վասպուրական»-ում։

1869 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլսի հայոց ընդհանուր ժողովը, հակառակ սուլթանի ու նրա մեծ վեզիրի կամքի, Խրիմյանին ընտրում է արևմտահայերի պատրիարք։ Նա այդ օրերին դեգերում էր Կարինի ու նրա գավառների դիվանատներում, ուր ջանում էր կարգավորել Մշո ս. Կարապետ վանքի գործերը, ընթացք տալ Տարոնի հողազրկված գյուղացիների բողոքներին, դիմակայել քուրդ ցեղապետերի պաշտպան կաշառակեր թուրք դատավորներին։

Խրիմյանն իր հետ մայրաքաղաք էր տանում ժողովրդի բողոքը, միաժամանակ և բարեկարգությունների հույսը։ Եվ իրոք, պատրիարքության առաջին իսկ ամիսներին, ստացված բողոքները նա քննության դրեց Ազգային ժողովում, կազմեց ընդարձակ տեղեկագրեր և ներկայացրեց սուլթանական կառավարությանը։

1873 թ. Խրիմյանը հրաժարվեց պատրիարքությունից և Կ. Պոլսից վերադարձավ Վան։ Սակայն նա միայնակ չէր վերադառնում։ Նրա հետ գալիս էին հազարավոր պանդուխտ վանեցիներ, որոնք Խրիմյանի խորհրդով գնել էին հրացաններ և գալիս էին հայրենի տուն, իրենց պատիվը պաշտպանելու ավազակախմբերից։

Մ. Խրիմյանի գլխավորած հոսանքը 1860-ական թթ. հասունացնում էր

22 «Արծվի Վասպուրական», 1855, № 1, էջ 12 և հետ.։

գործիչների մի սերունդ, որը հիմնականում կրթվել էր Վարագա ժառանգավորաց դպրոցում։ Այս մտավորականների մեջ աչքի ընկավ Գարեգին Սըրվանձտյանցը։

Գ. Սրվանձտյանցը 1863—1865 թթ. խմբագրում է Մշո ս. Կարապետի վանքում հրատարակվող «Արծվիկ Տարոնոյ» պարբերականը։ Երկշաբաթաթերթը լույս է տեսնում 1863 թ. ապրիլի 1-ից մինչև 1865 թ. հունիսի 1-ը, ընդամենը 43 համար։ «Վարդ» և գրական այլ կեղծանուններով Սրվանձտյանցը հոդ-



Մշո սուրբ Կարապետի վանքը

վածներ էր տպագրում նաև «Մեղու», «Մանզումեի էֆքյար», «Արևելյան մամուլ», «Մեղու Հայաստանի» պարբերականներում[23], գավառահայության լեռնացող բողոքները հանձնում գաղթօջախների ուշադրությանը, բարձրացնում համազգային խնդիրներ։

23 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, Ա. Ղանալանյանի հոդվածը, էջ 557 և հետ.։

Գ. Սրվանձտյանցը 1860-ական թվականներին գրաբարի ու աշխարհաբարի, կրոնի ու եկեղեցու հարցերում ազգային պահպանողական էր։ Նա փորձում էր հաշտեցնել երկու լեզուները և նրանց կողմնակից բանակները՝ վրեժական տեղ հատկացնելով լուսավորված եկեղեցականների գործունեությանը։ 1860-ականներին նա տարված էր հայ ժողովրդի նահապետական անցյալով, դեմ էր բուրժուական հարաբերությունների զարգացմանը, կապիտալիզմի ու եվրոպական ապրանքների ներթափանցմանն Արևմտյան Հայաստան և ազգային կենսաձևերի «եվրոպականացմանը»։ Սրվանձտյանցը հավատարմորեն ծառայում էր արհեստագործներին, գավառահայ վաճառականներին, ջանում անխաթար դարձնել նրանց տնտեսական գործարքները, վերջիններիս փրկել արդեն ծայր առած մրցակցությունից ու քայքայումից, դիմագրավել ծավալվող պանդխտությանը։



Գաբրիել Սրվանձտյանց

«Շինական Հայոց կյանք ի Հայաստան» ակնարկում, «Մշեցիների բողոքում», ապա «Մանզումեի էֆքյարում» տպագրած հոդվածներում Սրվանձտյանցն արտահայտում էր իր դժգոհությունը պետության հարկային քաղաքականությունից, բողոքում «քաղաքից ուղարկված խարաջ ժողովողի», նրան ուղեկցող զափթիեների, անկարողից բռնությամբ հարկ գանձելու անիրավության դեմ։ Հարկերի ծանրության պատճառով գյուղացին ընկնում է վաշխառուի ճանկը՝ գրավ դրնելով հողակտորը, տունը, նույնիսկ «կնոջն ու անչափահաս մանուկներին»։ Սրվանձտյանցը մատնանշում էր, որ պետության վարած հարկային քաղաքականության և եվրոպական էժանագին ապրանքների երկիր ներթափանցման, թուրք աղաների ու քուրդ բեկերի հարստահարությունների պատճառով թշվառության գիրկն են նետվում հազարավոր հայ ընտանիքներ, երեխաները մատնվում են քաղցի, տղամարդիկ պանդխտության ցուպն են վերցնում և շատերն անվերադարձ հեռանում հայրենիքից։

Սրվանձտյանցի միակ հույսը լուսավորության, ազգի «ճարտասան գլուխներ պատրաստելու» վրա էր։ Հայ ժողովուրդը դարձել է անդամալույծ, ուստի հարկավոր են երկու կարգի բժիշկներ՝ «հոգվույն համար Սահակ, Մեսրովբ և խրախուսիչ Ղևոնդ... իսկ մարմնույն համար անձնվեր Վարդան, Վահան, Մուշեղ և ասոնց նման հայրենասեր իշխանաց խումբ։ Այս երկու դաս զորավոր

բժիշկներ երկու կողմ կեցած պետք է բռնեն անդամալույծին աջ և ձախ ձեռքը և այնպես քաջալերելով վեր հանեն հայրենյաց մահճեն»[24]։

Սրվանձտյանցը գործնական օգնություն ցույց տվեց Միսաք Թիմուրյանի 1865 թ. Ակնում կազմակերպած «Նահապետական ընկերությանը»[25]։ Թիմուրյանը նպատակադրվել էր Տարոնում մի գյուղ գնել, «երկրագործական արդար վաստակոց համար աշխատիլ և միջոց ձեռք բերել»։ Ընկերության ծրագիրը, որը հավանություն էր գտել Սրվանձտյանցի կողմից, պատգամում էր հավաքած դրամագլխով գաղթեցնել Ակնի «խեղճ մշակներին», «դրամն ու քաղաքականությունն անոնց աշխատության հետ խառնելով, բնական ընթացքով մեր աստի կենաց պիտույքը հոգալով և բարոյականությամբ էլ մեր հոգվույն պետքերը պատրաստելով»։ Տնտեսական այս ծրագիրը պիտի գործադրվեր եկեղեցու, ուսման և «ընկերահաշտ քաղաքականության» հետ միասին[26]։ Սա մի ռոմանտիկ ծրագիր էր, որը նպատակ ուներ դարմանել հայրենի վերքերը, պանդուխտներին վերադարձնել Հայաստան և ամենակարևորը՝ հայրենիքը պատնեշել Եվրոպայից Թուրքիա ներմուծվող գործարանային արտադրության ազդեցությունից։

Գ. Սրվանձտյանցը, 1860-ական թթ. ոգևորված Արևմուտքի ու Ռուսաստանի ազգային-ազատագրական շարժումներով, հայ երիտասարդությանը պատգամում էր ինքնագիտակցություն և ազատագրական պայքարի կոչով։

Նա, կանգ չառնելով նահատակության ու զոհաբերության առջև, միասնական պայքարի էր կոչում հայ ժողովրդի լուսավոր զավակներին՝ խավարի, թշվառության և գերության ճիրաններից ազատվելու համար[27]։

Ջելթունի հերոսամարտերից հետո, Պ. Նորատունկյանից ստացած նամակի ազդեցությամբ նա ուշագրավ մտքեր հայտնեց, որոնք, սակայն, չեն ենթադրում, թե Սրվանձտյանցն ու իր ուսուցիչը այս պատմաշրջանում կողմնակից էին սուլթանական միահեծանության դեմ զինված ապստամբության բարձրացմանը, ժողովրդական հեղափոխական շարժմանը։ Ջենքի հատ ու կենտ կոչերով նրանք դիմակայում էին քրդական դերեբեյների մնացորդներին, փոխաբերական իմաստով, խավարամոլությանն ու տգիտությանը։ Պատահական չէր, որ թողած Արևմուտքի Գարիբալդիին, Հյուսիսի Գերցենին, թողած վերջիններիս Հայաստանի հետ կապող Մ. Նալբանդյանին, նրանք Մ. Պեշիկթաշլյանի հետ միասին, լիբերալ Նորատունկյանի միջոցով հաղորդակից դարձան լեհական իշխան Զարտորիժսկու ծրագրերին։ Սակայն 1860-ականների Սրվանձտյանցի ազգային-պահպանողականությունը զուգորդվում էր լուսավորականության հետ։ Իրական կյանքում եղած հակասական ու իրարամերժ կողմերն իրենց արտահայտությունն էին գտնում ժողովրդի հետ կապված եկեղեցական-մտավորականի աշխարհայացքի մեջ։

Վարագա դպրոցը տվեց գավառահայ ազգային-պահպանողական այլ մտավորականներ, որոնց մեջ աչքի են ընկնում Երեմիա և Արիստակես Տեր-

---

24 «Արծվի Վասպուրական», 1861, № 2, էջ 45։

25 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 563—564։

26 Նույն տեղում, էջ 563, տե՛ս նաև Գ. Սրվանձտյանց, Բորոս աղբար, Կ. Պոլիս, 1879, մասն Ա, էջ 260։

27 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 562։

Սարգսեցիները։ Երեմիա եպիսկոպոսը (1831—1885)[28] եղել է Բաղեշի, Խարբերդի, Վանի հոգևոր թեմերի առաջնորդ, 1862 թ.՝ Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդ։ Նա քաջատեղյակ էր ոչ միայն ժողովրդի իրավիճակին, այլև նրա մոտավոր անցյալի ու առօրյա պատմությանը։ Անձնական տպավորությունները ու ուսումնասիրությունները, արևմտահայ անվանի մտավորականների հետ ունեցած կապերը հնարավորություն տվեցին նրան գրի առնել XIX դարի 30—80-ական թվականների Արևմտյան Հայաստանում կատարված անցքերի պատմությունը։

1862 թ. Կ. Պոլսում Երեմիան Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Մամուրյանի և պոլսահայ այլ մտավորականների հետ ընդունեց Զեյթունի ներկայացուցիչներ Մնացական Սեմերճյանին, Գրիգոր Ապարդյան վարդապետին, Հակոբ քահանային, շաբաթներով հյուրընկալեց նրանց, հավաքույթների միջոցով մայրաքաղաքի հայերին ծանոթացրեց Զեյթունի դրությանը, կոչ արեց օգնության ձեռք մեկնել տուժածներին։ Նրա նախագահությամբ կազմակերպված ընկերությունը Մ. Մամուրյանի խմբագրությամբ նամակներ առաքեց Թիֆլիս, Վարագ, Գյակ, Աղթամար և հայաբնակ մյուս վայրերը, կոչ արեց դրամական օգնություն հասցնել Կիլիկիայի սովյալներին։

Երեմիա Տևկանցի համակրանքն ապստամբների կողմն էր, սակայն ապստամբությունից հետո նա մեծ հույսեր էր դնում եվրոպական վեհապետների միջամտության վրա, կապեր էր պահպանում Փարիզում գտնվող Կարապետ Շահնազարյանի հետ, նրան նամակներ էր առաքում, հորդորում Նապոլեոն III-ի միջոցով օգնել Զեյթունին։ Տևկանցը փորձեր արեց լեզու գտնել կաթոլիկների համայնապետ Անտոն Հասունյանի հետ, այցելեց նրան և հայցեց նրա միջամտությունը։ Նա գոհունակությամբ արձանագրում է «իր և յուրայինների» հաղթանակը, այսինքն՝ Նապոլեոն III-ի միջամտությունը, Զեյթունի իշխանների ազատումը, «արյունահեղության դադարումը», սակայն անհանգիստ ու բանադրանքի հեղեղ է թափում ամիրաների, հատկապես սուլթանին հլու-հնազանդ պալատականների, այդ օրերին իրադարձությունների նկատմամբ անտարբեր հայ կղերականների գլխին։

Երեմիա Տևկանցը սերտ կապերի մեջ էր ոչ միայն Մ. Խրիմյանի, Գ. Սըրվանձտյանցի, Մ. Մամուրյանի, Մ. Պեշիկթաշլյանի, այլև Կարապետ Փանոսյանի, Հ. Սվաճյանի հետ։ Ապստամբություններից ու արյունահեղություններից խուսափող Երեմիան անկեղծորեն մտահոգված էր հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու, երկրի տնտեսական բարգավաճման, պանդխտության դեմն առնելու, աշխարհական ու եկեղեցական ուսուցիչներ պատրաստելու խնդրով։ 1860-ական թվականներին նրա գաղափարական ազդեցության տակ էին ուսումնական եղբայրները՝ վարդապետ Արիստակեսը և աշակերտ Սեդրակը։ Հետագայում նրանցից ավագը կանգնում է պահպանողականության դիրքերում, իսկ կրտսերը լրացնում ազգային-դեմոկրատների շարքերը, երկնելով Մ. Նալբանդյանին, Խ. Աբովյանին նվիրված բանաստեղծությունների մի ամբողջական շարք և «Շահենն ի Սիպիր կամ գաղթական հայը» քաղաքական-գեղարվեստական վեպը։

---

28 ԳԱԹ, Խալատուր Վանյանի արխիվ, գործ 10, էջ 469։

Բեռլինի վեհաժողովից հետո այս հոսանքի ներկայացուցիչների մի ըզգալի մասը, հուսախաբված Եվրոպայի միջամտությունից, ոգեշնչվում է արևմտահայերի ապստամբական շարժումների գաղափարով։

4. ԱԶԳԱՅԻՆ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Ի հակադրություն կղերա-ամիրայական ու լիբերալ-բուրժուական հոսանքների, Կ. Պոլսում և Զմյուռնիայում ասպարեզ իջավ հայրենասեր գրողների ու հրապարակախոսների մի երիտասարդ սերունդ, որը դիմագրավում էր սուլթանական բռնատիրությանը, ջանում նվաճել սահմանադրություն, աղատություն և անկախություն։ Հայրենասերների այս սերունդը իր շարքերից առաջ քաշեց մեծարանքի արժանի գործիչներ, մշակեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը։

Հ. Սվաճյան, Գր. Չիլինկիրյան, Ա. Հայկունի, Կ. Փանոսյան, Մ. Ոսկանյան, Մ. Այվազյան, Ս. Թագվորյան՝ ահա գրողների, հրապարակախոսների ու քաղաքական գործիչների անդրանիկ այն սերունդը, որն արևմտահայ իրականության մեջ ձևավորեց ու զարգացրեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարը։

Պայքարի վճռականությամբ ու կրքոտությամբ աչքի ընկնող, ֆեոդալական հին հարաբերությունների ու նրանց հավերժացմանը ձգտող գաղափարաբանության քննադատությամբ հանդես եկած, կյանքի բոլոր ձևերի եվրոպականացման, աշխարհաբար ժողովրդական լեզվի, ազգային գրականության ստեղծման մունետիկների այդ համաստեղության համար բնութագրական են Ֆ. Էնգելսի խոսքերը XVIII դարի ֆրանսիական մատերիալիստ-էնցիկլոպեդիստների մասին. «Այն մեծ մարդիկ, որոնք Ֆրանսիայում լուսավորում էին գլուխները՝ մոտեցող հեղափոխության համար, իրենք հանդես էին գալիս ծայրահեղ հեղափոխականորեն։ Ոչ մի արտաքին հեղինակություն նրանք չէին ճանաչում։ Կրոնը, բնության ըմբռնումը, հասարակությունը, պետական կարգը, ամեն ինչ ամենաանխնա քննադատության էր ենթարկվում. ամեն ինչ պետք է բանականության դատաստանի առաջ կանգներ և կամ պիտի արդարացներ իր գոյությունը, կամ թե անհետանար։ Մտածող բանականությունը դարձավ գոյություն ունեցող ամեն բանի միակ չափանիշը»[29]։

Գործունեության սկզբում, սակայն, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը «բարեգործական» ընկերության ձախ թևին պատկանող մյուս մտավորականները պայքարի ձևերով ու մեթոդներով քիչ էին տարբերվում Գր. Օտյանից, Ն. Ռուսինյանից։ Բարեշրջումները դերադասելով կյանքի հեղաբեկման արմատական մեթոդներից, 1860-ական թվականների դեմոկրատ գործիչները 50-ականների գաղափարակիցներից տարբերվում էին միայն նրանով, որ իրենց մտահոգության առարկան դարձրին հասարակ ժողովրդի վիճակի բարելավումը[30]։

1860-ական թվականների սկզբներին արևմտահայ առաջադեմ մտավո-

---

29 Ֆ. Էնգելս, *Անտի-Դյուրինգ*, Երևան, 1952, էջ 19։

30 Հայկ Ղազարյան, *Մատթեոս Մամուրյան*, Երևան, 1959, էջ 84—85։

րականության ձախ թևը շրջադարձ է կատարում. ավարտվում էր դեմոկրատական հոսանքի ձևավորումը, իր շարքերում հաստատելով Մ. Նալբանդյանի գաղափարակիցներին ու զինակիցներին՝ Հ. Սվաճյանին և Ս. Բագվորյանին։ Դեմոկրատական հոսանքի օրգանները դարձան «Մեղու», «Ծաղիկ», «Մշակասեր», «Միություն» պարբերականները։ Շրջադարձի գործում էական դեր խաղացին ազգմանադրական պայքարը և գավառահայության քաղաքական շարժումները։ Զեյթունի ու Վասպուրականի հերոսամարտերը արևմտահայ մտավորականներին գործնականորեն բերեցին այն եզրահանգմանը, որ հայ ժողովրդի ազատագրման միակ միջոցը զինված պայքարն է։ Սրանց քաղաքական հաստատման համար նշանակություն ունեցան իտալական ազգային-ազատագրական, ռուսական գյուղացիական շարժումների ուժեղացումը և այդ շարժումների գաղափարախոսության ներթափանցումը Թուրքիա։ Համառուսական հեղափոխական դեմոկրատիայի ականավոր գործիչներից մեկի՝ Մ. Նալբանդյանի որոշակի ազդեցությունը ակնառու է արևմտահայ դեմոկրատական հասարակական-քաղաքական մտքի վրա։

Այսպիսով, քաղաքային արհեստավորների, պանդուխտների ու աշխատավոր գյուղացիության շահերի պաշտպան արևմտահայ դեմոկրատական հոսանքը իր ձևավորման ավարտին հասավ 60-ական թվականների սկզբին։ Սակայն բացառություն էր Փարիզում գործող Ստեփան Ոսկանյանը (1825—1901)[31], Ոսկանյանը դեռևս 1850-ական թվականներին յուրացրեց բուրժուա-դեմոկրատական աշխարհայացք, դարձավ մարտնչող հրապարակախոս՝ ընդդեմ կղերա-ֆեոդալական կաստայականության ու միջնադարյան խավարամտության, հանուն հայ ժողովրդի մտավոր ու քաղաքական ազատագրման։

Ստ. Ոսկանյանը ծնվել է Զմյուռնիայում։ 1846 թվականին գնալով Փարիզ, նա պաշտոնավարում է իբրև ուսուցիչ և հաճախում Սորբոնի համալսարանը։

Փարիզում 1855 թվականին Ոսկանյանը սկսում է հրատարակել «Արեվելք» կիսամսյա հանդեսը, սկզբից ևեթ իր առաջ խնդիր դնելով «գրով և խոսքով» բացահայտել կղերի և ամիրաների ազգադավ գործերը։ Արևմտահայ լուսավորության մարտական օրգանն անմիջապես լայն արձագանք է գտնում հայ իրականության մեջ։ Սակայն, հազիվ մեկ տարին բոլորած, «Արեվելքը» փակվեց։

1859 թ. նա հիմնադրում է «Արևմուտքը»։ Համբագրի անհանգիստ բնավորությունը, հակակղերական պրոպագանդան, ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, ազգային-ազատագրական շարժումների դրվատումը «Արևմուտքի» դեմ են հանում ռեակցիոն ուժերին։ 1859 թ. նոյեմբերի 1-ին Ոսկանյանը հրաժարվում է «Արևմուտքի» խմբագրությունից։

1859 թ. վերջերին Ոսկանյանը Իտալիայում էր։ Հրապարակախոսը սկզբում համակրում էր Իտալիայի ազատարարներին ընդհանրապես, բայց շուտով վերադիրքավորվում է և ապավինում չափավոր հանրապետականներին։

---

31 Տե՛ս «Նալբանդյանը և նրա ժամանակը», հատ. 1, էջ 300—321, տե՛ս նաև «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, էջ 96—110։

1864 թ. վերահրատարակված «Արևմուտքի» խմբագիրը չափավորեց իր պահանջները, դարձավ լիբերալ, իսկ երկու տարի անց մերվեց «Արշալույս Արարատյանի» ուղղությանը, սկսեց մարտնչել արևմտահայ ազգային-դեմոկրատների դեմ։ Նրա հայացքների չափավորությունն ավելի դրսևորվեց 1867 թ. սկսած Զմյուռնիայում հրատարակած «La Reforme» պարբերականի էջերում։



Սեթիան Ոսկանյան

Ոսկանյանը, սակայն, հայ հասարակական-քաղաքական կյանքում խոշոր ավանդ թողեց իր 1850-ական թվականների մարտընչող հրապարակախոսությամբ։ Այս տարիներին նրա հրապարակախոսության առանցքը հայ ժողովրդի լուսավորությունն էր, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը։

1848 թ. ֆրանսիական հեղափոխության ժամանակ Ոսկանյանը մասնակցեց հեղափոխական ելույթներին. «փետրվարի ազատության առաջին որոտումը մեր վրայեն արևելյան գերության մըշուշը փարատեց...։ Այո՛, Լուի Ֆիլիպին դեմ ապստամբողներու հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թուլլըրի մտնելու պատիվը ունեցանք...»[32]։

Փետրվարյան հեղափոխությունից հետո, Լուի Ֆիլիպի երեկվա տապալողների ձախ թևը հունիսին, զենքի ուժով, ջանում էր բուրժուազիայից խլել իշխանությունը։ Հունիսյան հեղափոխությունը պրոլետարական էր և Ոսկանյանը չմասնակցեց դրան, այն որակեց իբրև «մանուկ ազատությունը վտանգողի»։ Նա չհասկացավ պրոլետարիատի մղած դասակարգային պայքարի պատմական իմաստը, բացասաբար տրամադրվեց ուտոպիստ սոցիալիստների ուսմունքների նկատմամբ։ «Կանտի աշակերտը» չընդունեց «Կապեի սին դրությունը»[33]։ Բայց խանդավառ արևելցին պահպանողականների բանակում չէր և ոչ էլ հաշտվողական լիբերալիզմի պաշտպան։ Ոսկանյանն իր պայքարի առաջին էտապում բուրժուական դեմոկրատ էր, ֆեոդալական կարգերի ու գաղափարախոսության անհաշտ թշնամի։ Այս էլ բնորոշում է նրա տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ։

32 «Արևմուտք», 1859, № 17, էջ 131—132։

33 Նույն տեղում, էջ 130։

Ոսկանյանի համակրանքը Եվրոպայի ազատագրական շարժումների կողմն էր։ Նա հիացմունքով էր խոսում ֆրանսիական 1789 թ. հեղափոխության, Իտալիայի ազգային շարժումների, հունգարական հեղափոխության, հունական ապստամբության և ցարական Ռուսաստանի ու սուլթանական Թուրքիայի դեմ ընդվզելու փորձերի մասին։

Եվրոպական ու ասիական ժողովուրդների ազատագրական պայքարի դրվատանքը ինքնանպատակ չէր։ Դրանով իսկ նա հայրենասիրական կրակ էր վառում խավարապատ Թուրքիայում ապրող հայերի սրտում, ջանում նրանց ոտքի կանգնեցնել։ Սակայն նախքան ապստամբելը, հայերին պետք էր լուսավորել, հանել կղերա-ամիրայականների ազդեցությունից։ «Արեվելք» ու «Արևմուտք» խմբագիրը հետևողականորեն պաշտպանում էր ժողովրդի լուսավորության գաղափարը։ Նա միաժամանակ չէր վարանում իր ժողովրդին զենքի, նույնիսկ հեղափոխական պայքարի կոչելու։

«Ժամանակը եկավ որ ռամիկն ալ զգա, որ իր ռամկութենովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար չմնար թե ազգային և թե օտարազգի բռնավորներու դեմ զինելու ատեն»[34], Առաջելով Իտալիայի ազատագրման գործին, Ոսկանյանը հույս ուներ, որ մի օր, եթե իր ժողովուրդը ոտքի կանգնի, նրան փոխադարձ օգնության կհասնեն իտալացիները. «Զիդալիա կսիրեինք, միշտ սիրեր ենք... Այս սերը և ազատության ավյունը զմեզ թշվառության մեջ գլորեցին... Հայաստանի ավերայրաց վիճակը իր զավակներու վրա պարտք կդնե թշվառ ժողովուրդներու կարեկցիլ... Ով գիտե գուցե օր մը Իդալիայի զավակ մը մեր գերության և թշվառության դեմ բողոքե, ինչպես մենք իրեն համար բողոքելու զորությունը ունեցանք»[35]։

Ստ. Ոսկանյանը մասնակցել է գրական լուսավորական շարժմանը, արձագանքել լեզվաշինության և հայ նոր գրականության համար մղված գաղափարական պայքարին։ Աշխարհաբար լեզվի խնդիրը նա կապում էր հայ մշակույթի զարգացման, առաջընթաց շարժման հետ, պաշտպանում ու զարգացնում ժողովրդական լեզվի արովյանական սկզբունքները[36]։

Ժողովրդի ազգային զարթոնքի, քաղաքական ինքնագիտակցության բարձրացման գործում Ոսկանյանը էական տեղ էր հատկացնում գեղարվեստական գրականությանը. այդ նկատառումով էլ ամբողջ սրությամբ դնում էր ազգային նոր գրականության ստեղծման պահանջը։

Ոսկանյանի գրականագիտական առաջավոր հայացքները ընթերցողին ներկայացվեցին 1859 թ., երբ հայ մամուլի էջերում երևաց նրա ընդարձակ հոդվածը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին[37]։ «Արևմուտքը» բարձր էր գնահատում վեպի գաղափարական կողմը, հատկապես այն, որ Աբովյանը գրականության մեջ պատկերեց հայ գեղջուկին, ցույց տվեց նրա կենցաղն ու կենսահայեցողությունը, նրա ազատատենչ ոգին։ «Ժողովուրդին սիրտը՝ ահա գրագիտության աղբյուրը, իր անցյալը, ավանդությունները՝ ահա գրելու նյութերը, ազգ և մարդկություն՝ ահա նպատակը, ուր ճշմարիտ բա-

34 «Արևմուտք», 1859, № 7, էջ 55։
35 Նույն տեղում, № 17, էջ 132։
36 Նույն տեղում, № 10, էջ 74—75։
37 Նույն տեղում, № 7, էջ 40—42։

նասերը կաշխատի ուղղիլ և իր հետ տանիլ բազմությունը, որու անդամ է»։

Անձամբ ծանոթ լինելով Ոսկանյանի հետ, Մ. Նալբանդյանը որակել է նրան որպես «մեծ հայ», «քանքարավոր», «ազատախոհ ուսումնական»։

Իր գործունեությունն ավելի ուշ ծավալեց Մատթեոս Մամուրյանը (1830—1901), սակայն գրչի բեղունությամբ, լայն ընդգրկումներով, շոշափած խնդիրների բազմազանությամբ, նրանց լուծման մասին առաջադրած մեթոդներով նա խոր հետք ակոսեց հայ հասարակական մտքի պատմության մեջ։

Արգասավոր գրչի տեր մտածողի աշխարհայացքը բարդ էր ու հակասական։ 1860—70-ական թվականներին, հիմնականում կանգնած լինելով ազգային-դեմոկրատիզմի դիրքերում, նա մի կողմից հակված էր դեպի հեղափոխական դեմոկրատիզմը, մյուս կողմից տուրք էր տալիս լիբերալիզմին ու ազգային-պահպանողականությանը։

1860-ական թվականներին Մամուրյանն իր հոդվածները տպագրում էր «Մասիս», «Մեղու», «Ծաղիկ», «Միություն», «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականներում, որոնք հետագայում հավաքեց, ամբողջացրեց ու հրատարակեց «Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» և «Հայկական նամականի» հրապարակախոսական երկերում։

Վերոհիշյալ երկերում հրապարակախոսը քննադատում էր ֆեոդալական արտադրահարաբերությունները, իշխանության միապետական ձևն ու դրա հարատևման կողմնակիցներին։

Նա խիզախությամբ քննադատում էր սուլթանական միահեծան կարգերը։

Հրապարակախոսի առաջին շրջանի գործերը պարունակում են հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ճնշման մասին արտահայտած սուր մտքեր, բացատրում դրանց ահավոր հետևանքները։

Մամուրյանը դեմ էր գաղթականությանը, պանդխտությանը և, դատապարտելով այդ երևույթները, հայերին հանձնարարում էր տնտեսական զարգացման, մեքենայական արդյունաբերության յուրացման ուղին։ «Անկլիական նամականիի» հերոսների՝ Ներսեսի ու Շուշանի օրինակով նա հայ մտավորականությանը, դրամատերերին, վաճառականներին, արդյունաբերողներին, օտար քաղաքներում շահի դիտավորությամբ բնակություն հաստատած հայերին պատգամում էր վերադառնալ հայրենի բնաշխարհը, ծաղկեցնել երկիրը, այնպես, որ «... մետաղները, զանազան արմտիք, ապրանք, ուսմունք ու լույս սփռեն, պետք է որ երկաթը, շոգին, էլեկտրականությունն կենդանություն, շարժում տան այս անշունչ ու փշալից բնությանն»։

Ուշագրավ են Մամուրյանի մտորումներն այն մասին, թե Հայաստանի ու Թուրքիայի տնտեսական զարգացման աշխատանքներին սիրով մասնակից կդառնան ոչ միայն հայերը, այլև կողք-կողքի ապրող քրդերը, թուրքերը, ասորիները, թաթարները։ Համատեղ և օգտակար աշխատանքի մեջ կկոփվեր բարեկամությունը, կվերանար դրսից սողոսկած ազգային թշնամանքը։

Հայ ժողովրդի ազատագրության հարցում Մամուրյանն առաջին էտապում մերժում էր օտար միջամտությունները և հիմնական գործոն էր համարում ժողովրդական ապստամբական շարժումները։ «Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի ըրած հրաշք պիտի գործե... ցնորք է։ Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն՝ հիմարություն է։ Հեք և

ստրուկ ժողովրդյան մ'առաջին և միակ ազատարարն ինքն է, իր աշխատությունն է, իր ներքին ուժն է, իր լույսն, միությունն ու հաստատ կամքն է»[38]։

Մամուրյանն արձագանքել էր առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությանը։ Նա 1871 թ. ապրիլ ամսից սկսած տպագրում էր ինքնուրույն ու թարգմանական հոդվածներ՝ նվիրված կոմունարների սխրանքներին և բացատրում կոմունա բառի իմաստը[39], իրավամբ մատնանշում, թե Փարիզի կոմունան սկզբունքորեն տարբերվում է մինչ այդ եղած կոմունաներից, իսկ հասարակարգային իմաստով նոր որակ է մարդկության պատմության մեջ։ Մամուրյանի կարծիքով այն ֆրանսիական ուտոպիստ-սոցիալիստների երազանքների իրականացումն էր՝ նոր բովանդակությամբ։



Մատթեոս Մամուրյան

Եվրոպայից հեռու, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի հետ քիչ հույսեր կապող, Ջմյուռնիայում գործող Մ. Մամուրյանը ճեղքում էր բուրժուական սահմանափակության շրջանակները, հասկանում ու գրվատում Փարիզի ազատարարների հերոսությունը, դատապարտում «արյունախում» Թիերին, որը «...Բարիզն առավ այլ ի՞նչպես, մեկ հոյակապ մասն ավերակ, մեկ մասը ճնշված ստեղության և սպառգա վրեժխնդրության կրյոք լի, ուրիշ մեծագույն մաս մըն ալ այն սկեպտիկյան անտարբերությամբ՝ որ ամեն բանության գլուխ ծռելու կազմ ու պատրաստ կերևի»։ Կոմունայի մասին դրական կարծիքից զատ, իրար հակասող մտքեր հայտնելով հանդերձ, Մամուրյանը միաժամանակ գիտեր, որ Առաջին ինտերնացիոնալի Հաագայի երկրորդ կոնգրեսը խոսք էր ասել Փարիզի հերոսամարտերի մասին, իսկ «Բանվորների միջազգային եղբայրության» հիմնադիրն ու գլխավորը Կարլ Մարքսն էր։

1860-ական թվականներին հատկապես «Արևելյան մամուլը» հրատարակելու շրջանում, խմբագիրն անդրադառնում էր XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումներին, նրանց ղեկավարների գործունեությանը, տպագրում Վաշինգտոնի, Գարիբալդիի, Մածձինիի ընդարձակ կեն-

38 «Արևելյան մամուլ», 1876, էջ 5։

39 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1871, № 4, էջ 171—174, № 5, էջ 227, 232, № 6, 283—285, 1872, էջ 414։

սագրությունները, հայ գործիչների ուշադրությունը սևեռում սրանց գործելակերպի, ունեցած ծրագրերի վրա։

Մամուրյանն արևմտահայերին հուզող բազմաթիվ խնդիրների լուծման հարցում պաշտպանում էր Մ. Նալբանդյանի տեսակետները, որոնց հեղինակի հետ ծանոթ էր «Բարեգործականի» շրջանակներից։ Սակայն նրանց կապերն ավելի գործարար հողի վրա դրվեցին Նալբանդյանի Լոնդոն մեկնելուց և ռուս պրոպագանդիստների հետ հաղորդակցվելուց հետո։

Նալբանդյանի մահից հետո, դիմագրավելով պահպանողական բանակին, Մամուրյանը պահանջում էր գրի առնել նրա կենսագրությունը, վեր հանել նրա կյանքի ամենավառ էջերը, այն դարձնել հայ երիտասարդությանը դաստիարակող գիրք, «ուղղիչ մատյան»։

Եթե սոցիալ-դասակարգային պայքարի խնդիրներում Մ. Մամուրյանը չկարողացավ հասնել Մ. Նալբանդյանի բարձրակետին, հստակորեն չպատկերացրեց ազգրարային հարցի լուծման ռուս հեղափոխական-դեմոկրատների ծրագիրը, ապա մշակութային հարցերում՝ լեզվապայքարում, գրականության և էսթետիկայի, կրոնի ու բարոյականության, կանանց հարցի մասին հայտնած կարծիքներով անգերազանցելի դեր կատարեց արևմտահայ հասարակական կյանքում։

Արևմտահայ առաջադեմ 60-ականների ծավալած դեմոկրատական շարժման մեջ ուրույն տեղ գրավեց Զմյուռնիայի «Մաղիկ» տասնօրյա հանդեսի խմբագիր Գրիգոր Չիլինկիրյանը (1833—1923)։ Հյուգոն, Գերցենը և Մ. Նալբանդյանը դարձան նրա գաղափարական ուսուցիչները։ Նա նամակափոխանակության ունեցավ Վ. Հյուգոյի հետ, 1861 թ. ծանոթացավ Մ. Նալբանդյանին, պրոպագանդեց Ա. Գերցենի գաղափարները։

Գր. Չիլինկիրյանը 1861—1867 թթ. սկզբում միայնակ, ապա Արմենակ Հայկունու, Մ. Մամուրյանի փոխխմբագրությամբ Զմյուռնիայում ու Կ. Պոլսում հրատարակում էր «Մեղվի» գաղափարակից «Մաղիկ» պարբերականը, որտեղ և ծավալեց իր գրական ու հրապարակախոսական գործունեությունը։

1861 թ. սկսած «Մաղիկը» մշակում էր հայ ժողովրդի լուսավորության, ազգային շարժման, օտար լծի թոթափման, ինքնուրույնության նվաճելու բազմաթիվ ծրագրեր։ Օգտվելով այն հանգամանքից, որ Զմյուռնիայում, Պոլսի համեմատությամբ, ռեակցիոն ուժերը նվազ զորեղ էին, Չիլինկիրյանն ու մայրաքաղաքից այստեղ ապաստանած Արմենակ Հայկունին բացահայտում էին սուլթանների վարած հայահալած քաղաքականության էությունը, խարազանում կղերա-ամիրայականներին ու լիբերալներին և ժողովրդական զանգվածներին զինված ապստամբության կոչեր նետում։

Չիլինկիրյանը սոցիալական կնճռոտ խնդրի լուծման երկու եղանակ էր տեսնում։ Առաջինն՝ արմատական էր, հեղափոխական, երկրորդը՝ մասնավոր, բարեշրջական։ Դրանցից նա նախընտրում էր արմատականը. «... մեր նպատակն էր հայուն ապագա աղքատության դեմ հանրական դարմանը նշանակել և անկե անցնիլ մասնավոր դարմանին, որ ներկային կվերաբերի»[40]։ Բազմաթիվ գրվածքներում նա անդրադառնում էր բուրժուական հասարակարգի, ար-

40 «Մաղիկ», 1866, 128։

տաղրութ յան ու խաշխման եղանակների քննադատութ յանը, հրապարակում սոցիալական խնդրի լուծման իր խոհերը։

«Մաղկի» խմբագիրը կշտամբում էր համաքաղաքացի Ստ. Ոսկանյանին «շառաչող ձևերը ձեռնոց հագցնելու համար», սակայն 1870-ականներին ինքն էլ կտրվում էր ժամանակից, կորցնում կենդանի իրականութ յան զգացումը, մոռանում դավառի վիշտը և արժանանում Ա. Արփիարյանի իրավացի քննադատութ յանը[41]։



Գրիգոր Զալինկիրյան

Ժամանակի արևմտահայ մտավորականները անվերապահորեն Հ. Սբվաճյանի կողքին էին դնում Կարապետ Փանոսյանի, Մատթեոս Այվատյանի անունները, «Մեղվի» կողքին՝ «Մյունատի էրճիաս» (Շեփոր առավոտյան) պարբերականը։ Կարապետ Փանոսյանը և Մատթեոս Այվատյանը գրում էին թուրքերենով, ընթերցանութ յան նյութ տալիս տաճկախոս հայերին, մասնակցում Կ. Պոլսում ծավալված դեմոկրատական շարժմանը, դիվորագրվում նալբանդյանական հոսանքին, պայքարի սլաքներն ուղղելով ինչպես սուլթանական բռնատիրութ յան, այնպես էլ հայ կղերա-ամիրայականների դեմ։ Նրանց ժառանգութ յունից քիչ բան է հասել մեզ, եղածն էլ հայատառ տաճկերեն լինելով, հատուկ ուսումնասիրութ յան առարկա չի դարձել դեռևս։

1859 թ. Կ. Պոլսում Կ. Փանոսյանը հիմնադրեց «Մյունատի էրճիաս» հայատառ տաճկերենով լույս տեսնող նախ երկօրյա, ապա շաբաթաթերթը, որը սկզբից ևեթ կանգնեց «Մեղվի» դիրքերում, անհաշտ պայքարի մղեց մի կողմից հայ լուսավորչական ռեակցիայի կենտրոն «Ծրևակի», նրան հովանավորող ամիրաների ու պատրիարքի, մյուս կողմից Հռոմի կղերապետութ յանը հարած «Մեճմուայի», ամերիկյան միսիոներութ յան բերան «Ավետաբերի» դեմ։ Հ. Պարոնյանը Կ. Փանոսյանի այս շրջանի գործունեութ յան մասին գրում է. «ժողովուրդն այս կեսարացիին ընթացքին հավանելով՝ կը քաջալերեր զայն...»[42]։ Աղքատութ յան մեջ ապրող, աղքատների շահերը պաշտպանող Փանոսյանը սարսափ էր տարածել հայ վերնախավի վրա և բացեիբաց

41 «Արևելք», 1884, № 170։

42 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 79։

հայտարարում էր՝ «Հայեր երեկ հաղար տարեկան ճշմարտություն մը կորուսվեցավ պատրիարքարանին մեջ»։

«Մյունատի էրճիասն» ինչքան սիրելի էր ժողովրդական զանգվածներին, այնքան անհաճո՝ կղերա-ամիրայականներին։ Այդ էր պատճառը, որ պարբերականը հաճախ էր խափանվում։ Կ. Փանոսյանը հանդես էր գալիս նաև գրքույկներով, թռուցիկներով, որոնք գաղտնաբար տարածվում էին մայրաքաղաքում, երբեմն էլ հասցվում Զմյուռնիա։

1860 թ. Կ. Փանոսյանը հրատարակել է «Սեֆիր պիր միլլեթ» (Թշվառ ազգություն), ապա «Իսլահաթ Մուհիմմե» (Կարևոր բարեկարգություն) գրքույկները։ Վերջինս ճանաչվել է իբրև հակակրոնական պրոպագանդա և բանադրանքի է ենթարկվել։ Ն. Վարժապետյանը գրեց Կ. Փանոսյանի ու Ա. Հայկունու դեմ ուղղված «Քրիստոսի սուրբ եկեղեցին և անոր հակառակորդները» գրքույկը։ Վրդովված Փանոսյանը հանդես եկավ նոր գրքույկներով, հրապարակախոսական մարտական հոդվածներով, իսկ 1867 թ. ստանձնելով ս. Փրկչի հիվանդանոցի հոգաբարձուի պաշտոնը, փորձեց բարեփոխություններ մտցնել նրա կառավարման ձևի մեջ, սակայն հաջողության չհասավ։ 1866 թ. նա հիմնում է «Մանզումեի էֆքյար» (Մտածումների շարք) պարբերականը։

Կ. Փանոսյանն առաջին շրջանում մարտնչող հրապարակախոս էր, խիզախ գործիչ, Հ. Սվաճյանի զինակիցը։ 1860-ականների առաջին կեսին նա պաշտպանում էր Մ. Նալբանդյանի ծրագիրը, հայ ժողովրդին կոչում ազգային-ազատագրական պայքարի, գործնականում մասնակցում սահմանադրական ժողովրդական շարժման ղեկավարմանը։

1862 թ. օգոստոսի 1-ի սահմանադրական ցույցի ժամանակ Կ. Փանոսյանը ցուցարարների առաջին շարքերումն էր. հրատարակում ու գաղտնի տարածում էր թռուցիկներ, որոնք ղենքի էին կոչում պոլսահայ արհեստավորությանն ու պանդուխտներին։ Երբ Կ. Պոլիս հասավ Զեյթունի ապստամբության լուրը, «Մյունատի» լրագրի երեք համարներում շարունակաբար Կ. Փանոսյանը նկարագրում էր Տավրոսի արյունալի անցքերը, հայրենասիրության կոչ անում, «փարավոնական բարբարոսություն» անվանում թուրքական զորքի արարքը, պահանջում պաշտոնանկ անել Ազիզ փաշային, պատժել ջարդարարներին։ Օգոստոսի 20-ին փակվեց «Մյունատին», նրա հետ մեկտեղ՝ «Մեղուն», իսկ Կ. Փանոսյանը կալանավորվեց։ Կառավարությունը, սեպտեմբերի 11-ին դրամական տուգանք վերցնելով, ազատ արձակեց Կ. Փանոսյանին, իսկ «Մյունատի» պարբերականը մշտապես փակվեց։

Կ. Փանոսյանը շարունակեց գրել հրապարակախոսական գրքույկներ, շրջել գավառներում։ Նա եղավ Նիկոմիդիայում, Ազգային ժողովին ներկայացրեց ժողովրդի վիճակը վեր հանող մի ընդարձակ զեկուցագիր, պահանջեց այն առաքել Բ. Դուռ։ Պետությունից ու նրա կամակատարը դարձած հայ էֆենդիներից հուսահատուր, Փանոսյանը հանգանակություն կազմակերպեց, երկու օրում 5000 ղուրուշ դրամ հավաքեց, գնաց Պարտիզակի գավառ և անձամբ հանձնեց «տառապյալներին»[43]։ Սակայն 1870-ական թվականներին նա հաշտվողական դիրք գրավեց լիբերալների հանդեպ։

43 Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1924, էջ 205։

Աննահանջ, գաղափարական նույն բարձրության վրա մնաց Մատթեոս Այվազյանը։ Նա Կեսարիայից Կ. Պոլիս գալով, կրթություն ստացավ Սամաթիայի Սահակյան վարժարանում, դարակեսին աշխատակցեց «Մասիս», «Մյունասի էրեխաս» և այլ պարբերականներին։ 1861 թ. սկսած Այվազյանը դառնում է «Մեղու» պարբերականի գլխավոր աշխատակիցներից մեկը, Հ. Սվաճյանի, Կ. Փանոսյանի հետ միասին[44] պահանջում բարեշրջել հայ եկեղեցու միջնադարյան կանոնները, Սահմանադրությունը պարտադրել հոգևորական վերնախավերին։

1861 թ. փետրվարի 10-ին «Մեղուն» տպագրում է Մ. Այվազյանի «Եկեղեցվո կառավարությունը սահմանադրական է, թե միապետական» հոդվածը։ Այստեղ նա պաշտպանում էր «Մեղվի» խմբագրին Մ. Նալբանդյանի դրած նամակում արծարծված մտքերը, պահանջում հայ եկեղեցու բարեփոխում, ապա և ուղղակիորեն առաջադրում սոցիալական անհավասարության վերացման խնդիրը։ Պատրիարքի և ամիրաների հանձնարարականով «Երեվակը» և «Արևելյան դարը» «խաչակրաց» արշավանքի դուրս եկան Մ. Այվազյանի ու նրա գաղափարակիցների դեմ։ Տերոյենցը գրում է «Մ. Այվազյանին նամակին քննությունը» գրքույկը, որտեղ գաղափարական ընդհանրություններ էր տեսնում Մ. Նալբանդյանի և Մ. Այվազյանի հայացքների միջև։ Մեղադրելով Այվազյանին, նա ավելացնում էր. «...և քու առաջդ Նալբանդյանցին իրավունքը ավելի սրբազան և անբռնաբարելի սեպված է, քան կրոնական ժողովի իրավունքը»[45]։

Մ. Այվազյանի հոդվածները տպագրվում էին «Մեղու», ապա «Մանդումեի էֆքյար» պարբերաթերթերում, իսկ քիչ անց՝ «Արարատ» հայատառ թուրքերեն սեփական օրաթերթում։

1876 թ. Տրապիզոնի հայաբնակ գյուղերից մեկում խոշտանգվում է մի հայ գյուղացի։ Այդ մասին բողոքարկող հոդվածներ են գրում «Հայրենիքը» և նոր վերաբացված «Արարատը»։ Գործը հասնում է մեծ սադրազամ Մեհմեթ Ռուշդի փաշային։ Փակվում են դույզ պարբերականները, Մ. Այվազյանին կանչում են ոստիկանատուն և ծեծում[46]։ Ազատախոս խմբագիրը կիսամեռ տեղափոխվում է իր բնակարանը և մեկուկես ամիս տառապելուց հետո վախճանվում 1876 թ. դեկտեմբերի 15-ին։ Հայ դեմոկրատական հոսանքը կորցնում է իր լավագույն ներկայացուցիչներից մեկին։

60-ականների արևմտահայ գործիչների մեջ դժվար է մատնանշել մեկին, որն իր ազդեցությամբ, երգիծական տաղանդով, ժամանակի հուզող խնդիրների մասին հայտնած կարծիքներով, գավառում ծավալած հեղափոխական գործունեությամբ, հասարակ մարդկանց մասին ունեցած մտահոգություններով կարողանար հավասարվել Հարություն Սվաճյանին (1831—1874)։ Պատահական չէ, որ Կ. Պոլսի հայ մտավորականներից ամենից վաղ Հ. Սվաճյանը հարեց Մ. Նալբանդյանին, պաշտպանեց նրա հայացքները, կանգնեց նրա դիրքերի վրա, իսկ ուսուցչի ու զինակցի բանտարկության տարիներին ու մահից

44 Նյութերը քաղված են «Պատմություն հայ կեսարիո», հատ. 2, էջ 2038, տե՛ս նաև Գ. Ստեփանյան, Հայատառ թուրքերեն հայ մամուլը, էջ 259 և հետո։

45 «Մ. Այվազյանին նամակին քննությունը», Կ. Պոլիս, 1861, էջ 14։

46 Վ. Զարգարյան, Հիշատակարան, հատ. Բ, էջ 388։

հետո գաղափարական ուղղություն տվեց նրա հետևորդներին։ Հ. Սվաճյանն առաջինն ստացավ արտասահմանում տպագրված Մ. Նալբանդյանի աշխատությունները, «Երկու տողը» հատվածաբար արտատպեց «Մեղուս» պարբերաթերթում, հակառակորդների հարձակումներից պաշտպանեց «Երկրագործության» սկզբունքները։

Մ. Նալբանդյանը, նկատելով հեղափոխականի անզիջում բնավորությունը, խիզախելու աներեր կամքը, նրան հաղորդակից էր դարձնում իր մտորումներին, «Մեղուս» դիտում իբրև «...երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի ու ուրախության ճշմարտապես հայտարարը»[47]։ Մ. Մամուրյանը Սվաճյանին բնութագրեց իբրև «ժողովրդյան զավակ և աղետից թարգման, բռնության թշնամի և ազատության լուսամիտ ու անվեհեր կուսակից...»[48]։

Հ. Սվաճյանն ունեցել է սոցիալ-քաղաքական հայացքների զարգացման երկու շրջան։ Իր գոյության առաջին տարիներին (1856—1860) «Մեղուս» կրում էր լիբերալիզմի դրոշմը, գտնվում էր ապագա լիբերալներ Գր. Օտյանի ու Ն. Ռուսինյանի ազդեցության տակ։ Նույն տարիներին Հ. Սվաճյանը ևս չափավոր պահանջներ ուներ տակավին։ Նա դեռևս քաղաքականապես չէր հասունացել և բարեփոխությունների մեթոդը գերադասում էր հեղափոխական պայքարից։ Այդ շրջանում Սվաճյանը, որպես հայ ժողովրդի փրկության միջոց, առաջադրում էր կրթությունը, «չար կրքերու մոլորությունները» մարդկանցից հեռացնող լուսավորությունը։ Բնորոշ է, որ այդ պահին «կուսակցության ոգին» դատապարտվում էր «Մեղվի» խմբագրի կողմից, համարվում «ամենաթշվառ և ատելի ոգի մը»[49], իսկ 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը՝ արյունակիցներին իրար դեմ հանող, խաղաղությունը վրդովող երևույթ։ Արևմտահայ դեմոկրատիայի ապագա տրիբունն առաջին էտապում չհասկացավ Ստ. Ոսկանյանի մղած պայքարի իմաստը, բացասաբար արտահայտվեց նրա խմբագրած «Արևելքի» հասցեին, իսկ իր թերթի դռները բացեց ոչ միայն լիբերալների, այլև պահպանողականների առջև։

Սակայն առաջին էտապում Հ. Սվաճյանի մտահոգության առարկան ոչ թե գաղութահայ բուրժուազիան էր կամ հայ հարուստ վերնախավերն ընդհանրապես, այլ հայ գեղջուկները, օրվա հացի կարոտ մշակները, քաղաքներում հաց և աշխատանք որոնող պանդուխտները։ Ագրարային հարցն առաջադրելիս նա ջանում էր պաշտպանել եվրոպական կապիտալի ներմուծից տուժող երկրագործների, նրանց ծոցից ելած արհեստավորների ու բանվորների շահերը[50]։

1860—1861 թթ., ինչպես արևմտահայ մի շարք գործիչներ ու հրապարակախոսներ, այնպես էլ Հ. Սվաճյանը շրջադարձ է կատարում, վերանայում նախկին տեսակետները, փոխում պայքարի ձևերն ու մեթոդները։

Արդեն այդ շրջանում Հ. Սվաճյանն ազդարարում էր, որ ազգի լծակը,

---

47 Մ. Նալբանդյան, *նշվ.*, հատ. 3, էջ 107։

48 Վրույր [Մ. Մամուրյան], *Հայկական նամականի*, էջ 259—260։

49 «Մեղու», 1857, № 24։

50 Աշ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, հատ. 1, էջ 405։

«հաստարանը» հասարակ ժողովուրդն է։ Տակավին 1858 թ. նա ծանոթ էր «Հյուսիսափայլին», արտատպում էր Ստ. Նազարյանի հոդվածները։ 1860 թ. «Մեղուն» տպագրում էր Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը» հետևյալ բնաբանով. «Ազգութեան հաստարանը և լծակը է հասարակ ժողովուրդը։ Մի ազգ, թող որքան կամի հարուստ լինի երևելի մարդերով, այնուամենայնիվ այդ ազգի ազգութեան մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերա, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը»[51]։

Ի պաշտպանություն հասարակ ժողովրդի շահերի, Հ. Սվաճյանը պահանջում էր մամուլի, խոսքի ազատություն։ «Տպագրությունը ...պետք է, որ ամեն ճիգը թափե, ամեն վնաս, վտանգ, զոհ աչքը առնե ու պատերազմի. իր պարտությանը մեջ մեռնի նե ալ՝ իր պաշտպանած ճշմարտությունը օր մը պիտի պաշարվի»[52]։



Հարություն Սվաճյան

1860 թ. սկսած «Մեղուն» հետևողականորեն մշակում էր հայ ժողովրդի ազատագրման, օտարի տիրակալության տապալման ծրագրեր։ Խմբագիրն արդեն հասկանում էր իտալական ազգային շարժման ներհակությունը և մոռանալով Կավուրին ու Վ. Էմմանուելին, դրվատում էր Գարիբալդիի սխրանքները, «Կարիպալտի նոր ժամանակիս դյուցազունը, նոր սերունդին սիրտը թնդացուց...»[53]։ Այս այն օրերին էին, երբ Պոլիս էր ժամանել Մ. Նալբանդյանը, և երկուսի մեջ կնքվում էր հեղափոխական զինակցություն։

Հ. Սվաճյանի աշխարհայացքային շրջադարձի գործում, անշուշտ, էական դեր խաղաց Մ. Նալբանդյանը, սակայն քիչ կարևոր չէին նաև սահմանադրական շարժումների ուժեղացումը, Արևմտյան Հայաստանում բռնկված զինված ելույթները։

1861 թ. տարեմուտի առաջնորդողում Հ. Սվաճյանը որոշակիորեն հայտարարեց, որ իր հինգ տարվա գործունեությունը համարում է մեկ օրվա անցած ճանապարհ, որ տգիտության ու խավարի մեջ թաղված ժողովուրդը դեռևս ազգ կազմելու իրավունքից զուրկ է։

51 «Մեղու», 1860, № 101, էջ 130։
52 Նույն տեղում, № 113, էջ 225։
53 Նույն տեղում, № 116, էջ 251։

«Մեղու» պարբերաթերթով, «Մատենություն» գրքույկով, գաղտնի թռուցիկներով, ազգային ժողովում արտասանած ատենախոսություններով Հ. Սվաճյանը նալբանդյանական մարտունակությամբ քննադատում էր ժողովրդին թշվառության մեջ պահող թուրք, քուրդ, հայ այն դասերին, կառավարության պաշտոնյաներին, հարկահաններին, որոնք խեղանդամում էին երկրի տնտեսությունը, պատճառ դառնում երկրագործների պանդխտության, գավառահայերի սովամահության, Հայաստանի ամայացման։

1862 թ. նոյեմբերին Հ. Սվաճյանը «Մեղու»-ի տնօրինությունը թողնելով Հ. Հովսեփյանցին և Ա. Մուրադյանին, հեռանում է Պոլսից, շրջում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի գավառներում։ 1863 թ. հունիսի 11-ին նա կրկին վերադառնում է Պոլիս, վերստանձնում խմբագրի պաշտոնը և իր հրապարակախոսությամբ մարտական նոր թափ հաղորդում պարբերականին։

Արդեն նալբանդյանական դիրքերում կանգնած Սվաճյանը մերժում էր բարեշրջության լիբերալ քարոզները, զինված մեթոդով փորձում լուծել ժողովրդի քաղաքական ազատագրության հարցը։ «Եթե այս սուրբ պատերազմին մեջ ըլլինք՝ ազգին ամենամաքուր նահատակները պիտի ըլլանք և թող ազգն ալ մեր մահվանե ետև, մեր աչքերը գոցվելեն ետև զոհվի ուրիշին։ Իսկ եթե հաղթող ելլենք՝ երանի այն անձերուն, որ ազգի մը ազատարարն ըլլալու փառքին պիտի արժանանան»[54]։

«Մեղվի» էջերը այնուհետև լի էին քաղաքական պայքարի կոչերով, սուլթանի «շնորհած» Սահմանադրության և ցարի հրապարակած գյուղացիական ռեֆորմի քննադատությամբ։ Ավագ զինակցի բերդարգելությունը ոչ միայն չթուլացրեց Հ. Սվաճյանի հրապարակախոսության թափը, այլ ավելի ուժեղացրեց այն։ Հայ իրականության մեջ «Մեղուն» փաստորեն մենաց այն միակ պարբերականը, որ համարձակորեն պաշտպանեց ճեղափոխական դեմոկրատիայի ուղեգիծը։ 1864 թ. Հ. Սվաճյանը գրում է. «Այո մարդկային ազգի հառաջադիմության իրական թագավորը՝ արդարությունը, որ փորձով տեսնված է, թե առանց արյունահեղության չը պիտի կրնա տիրել երկրագունդիս, մեծ հաղթանակ մը պիտի կանգնե այս թվականիս մեջ, որուն շնորհիվ ոչ միայն պիտի հրճվին անթիվ տառապյալներ, այլև երկրորդ և երրորդ մեծագույն հաղթանակներու ալ դուռ պիտի բացվի, այլև շատ ըշնամիներ ինքնին անձնատուր պիտի ըլլան այս նոր արքային, որուն թագավորության գալիքը թվականես... առաջ քարոզվեցավ»[55]։

Սվաճյանը տեսնում էր, որ Իտալիայում ու Ռուսաստանում հասունացող հեղափոխական իրադարձությունները նորից դասակարգային պայքարի մարտադաշտի են վերածում Եվրոպան, որն ալեկոծվելով «...անպատճառ կերպարանափոխ պիտի ըլլա և անոր հավասարակշռության թասերուն մեջեն բան մը պիտի հանվի դրվի, բան պիտի պակսի և էվելնա, մինչև ցարդ արժեք չունեցած երևցողները արժեքնին պիտի գտնեն. ծանր կշռվողները պիտի թեթևնան և նոր հավասարություն մը պիտի հաստատվի...»[56]։ «Մեղվի» մարտաշունչ առաջնորդողը սոսկ 1864 թ. տարեմուտի մաղթանք չէր, այլ հայ ժողովրդին հեղա-

54 «Մեղու», 1861, № 128, էջ 66։
55 «Մեղու», 1864, № 227, էջ 3։
56 Նույն տեղում։

փոխական պայքարի մարտակոչ, ուղղված սուլթանական ու ցարական միահնծանությունների դեմ։ Հատկանշական են Սվաճյանի առաջադրած ծրագրի լուծման երկու էտապները, որոնք պատգամում էին օտարի տիրապետությունը խորտակելուց հետո զենքը վայր չդնել, այլ ուղղել սեփական հարստահարիչների դեմ, հեղափոխական-քաղաքական պայքարին սոցիալ-դասակարգային բովանդակություն տալ։ Պարզ է, որ այս էտապում Սվաճյանի հայացքները որոշակիորեն սահմանազատվում էին ազգային-դեմոկրատներից և նրան աստիճանաբար դնում հեղափոխական դեմոկրատի բարձրության վրա։

Պայքարի երկրորդ էտապում «Մեղվի» խմբագիրը վերամշակում էր ազգային հարցի մասին նախկինում առաջադրած ծրագրերը։ Ազգային վաճառականության, երկրագործական ընկերությունների ստեղծման, պանդրխտության դեմն առնելու, գյուղացուն հողով ապահովելու մասին ունեցած մտահոգություններն այս տարիներին «Մեղվի» էջերում դառնում են խոր լուսաբանության նյութ։

Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ առաջ քաշված հարցերը հուզում էին արևմտահայ դեմոկրատներին։ Այնպիսի հարցեր, ինչպես հողաշինարարության նոր սիստեմի, գյուղատնտեսությունը զարգացնելու, ազգային վաճառականություն կազմակերպելու խնդիրները մինչ այդ արդեն քննարկվել էին արևմտահայ պարբերական մամուլի էջերում։ Այդ մասին ասվում էր «Բարեգործականի» հայտարարության մեջ, Հ. Շիշմանյանի, Մ. Մամուրյանի, Հ. Սվաճյանի հոդվածներում։ Արմենակ Մուրադյանի խմբագրությամբ Փարիզում լույս տեսնող «Փարիզ» թերթը հանգամանորեն անդրադարձավ ազգային վաճառականության, ինտենսիվ երկրագործության ստեղծման, հայրենի երկրի տնտեսական զարգացման խնդիրներին։

1860 թ. ստեղծվեց վաճառականության մասին հոգ տանող հայրենասիրական քողով շղարշված «Արարատյան ընկերությունը»[57]։ «Փարիզի» խմբագիրն ողջունեց նրա կազմակերպիչներին, անգլիական գործարանային արտադրության կողմից մրցությունից դուրս նետվող հայ արդյունաբերողներին ու վաճառականներին կոչ արեց տեղափոխվել Արևմտյան Հայաստան կամ Կիլիկիա, հոգ տանել երկրի տնտեսական առաջընթացին, պայմաններ ստեղծել ժողովրդի լուսավորության և քաղաքական ազատագրության համար։ Այսպիսով, երկրագործության, ազգային վաճառականության, երկրի տնտեսական առաջընթացի խնդիրները արևմտահայ առաջադեմ մտավորականության ուշադրության կենտրոնումն էին։

Մ. Նալբանդյանը ծանոթ էր այդ հոդվածներին, գաղափարական կապերի մեջ էր նրանց հեղինակների հետ։ Սակայն նրա ամենամեծ արժանիքն այն էր, որ հեղափոխական լինք էր հաղորդում այդ բոլորին, ազգային հարցի լուծումը քննելիս չէր բացառում հեղափոխության հեռանկարը, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատության խնդիրները դուրս էր բերում ազգային նեղ շրջանակներից, շաղկապում ռուսական հեղափոխական-դեմոկրատական, իտալական ազգային-ազատագրական շարժումների հաղթանակի հետ։

57 Տե՛ս Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 626—627։

«Երկրագործության» լույս տեսնելուց հետո «Մեղուն» առաջինը անդրադարձավ այդ աշխատությանը, «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի» բնաբանով վերաշարադրեց նրա հիմնական մտքերը։ Հ. Սվաճյանը լիովին համերաշխվեց Մ. Նալբանդյանի ծրագրերին և հայտարարեց. «... ճշմարիտ հայու մը ըսածին նման, ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի ըսելով, նույնը մինչև մեր վերջին շունչը պիտի կրկնենք, ապահով ըլլալով մեր էությանը չափը, թե հասարակ ժողովրդի մը համար ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ—ինչպես որ չուրը ձուկի համար—միակ աղբյուրը ապրուստի՝ հարստության՝ երկրագործությունն է. քանզի երբ որ ազգ մը կազմող անհատներուն մեծագույն մասը երկրագործությամբ և առհասարակ գյուղական տնտեսությամբ կպարապի, այն ժամանակ այն ազգին ընդհանրությունը հարուստ և ապահովյալ է, որովհետև անոր հիմը բնականապես դրված է բնության վրա»[58]։ «Մեղվի» ակնարկած «ճշմարիտ հայը» Մ. Նալբանդյանն էր, այս մտքերը վերցված էին նրա «Երկրագործությունից», որի հեղինակի հետ լիովին համերաշխ Հ. Սվաճյանն արդեն համոզված էր, թե «...ազգությունը ըստինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն»[59]։

Հ. Սվաճյանը, չմոռանալով քաղաքական պայքարի կոչերը, այս տարիներին հիմնականում զբաղված էր տնտեսական խնդրի լուծման ծրագրերի մշակումով։ Նա հայտարարություններ էր անում «երկրագործական ընկերությունների» ստեղծման, հողի համայնացման վերաբերյալ, յուրովի կրկնում Մ. Նալբանդյանի աշխատությանն հիմնական դրույթները։

Հ. Սվաճյանի երազած ապստամբական շարժումները հայ ժողովրդին բերելու էին քաղաքական ազատություն, հողը պետք է խլեին օտար իշխանավորներից, այդ թվում և հայ վերնախավից և հանձնեին գյուղացու տնօրինությանը։ Այսուամենայնիվ, ագրարային հարցի լուծման մասին Հ. Սվաճյանի հրապարակախոսությունը հեղափոխական հստակ ծրագրեր չէր բովանդակում։

Մ. Նալբանդյանին հասցեագրված Ս. Թագվորյանի 1862 թ. մայիսի 14-ի նամակը, գաղտնագիր բառարանը, նրանց ընդգրկած հարցերը, Գերցենի, Մաձինիի անունները վավերական վկայություններ են, որ Մ. Նալբանդյանը ջանում էր «Земля и воля» կազմակերպության հետ կապել արևմտահայ հետևորդներին, նրանց միջոցով ընդհատակյա աշխատանք ծավալել Թուրքիայում[60]։ Այդ հետևորդների շարքում, անշուշտ, առաջիններից Հ. Սվաճյանն ու Ս. Թագվորյանն էին։

Պետրոպավլովյան բանտի նկուղում նստած Մ. Նալբանդյանը զրամանալիորեն տեղյակ էր Մեչուխեչա-Սվաճյանի գործունեությանը, նրա հրապարակած հոդվածներին։ Բոսֆորի ափերին դեգերող իր ամենասրտառուչ բարեկամին էր ձոնում նա «Ուղերձ առ Մեչուխեչայն ի Կոստանդնուպոլիս» ոտանավորը, վերջին քառատողում բացականչելով.

«Քեզ սիրեց Հայաստան, քեզ օրհնում է բյուր բերան,
Քեզ դաբնի պսակներ հյուսում է ապագան,

58 «Մեղու», 1862, հունիսի 20, № 165, էջ 138։

59 Նույն տեղում, էջ 138—139։

60 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 502։

Ընդունիր այս երկտող իմ անշուք հյուսվածքը,
Պակասը թող լցնեն սիրած իմ, քո ազգը»[61]։

Այսպիսով, հանձին Հ. Սվաճյանի, Մ. Նալբանդյանը տեսնում էր այն զինակիցին, որը պետք է շարունակեր իր սկսած գործը։

Հ. Սվաճյանը «մեղվական» երիտասարդության գլուխն անցած տոն էր տալիս արևմտահայ իրականությանն հուզող բոլոր հարցերին, սահմանադրական ու մշակութային շարժումները ծառայեցնում գլխավոր նպատակին՝ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրության խնդրին։ Անկախ Ազգային սահմանադրության էությունից, Հ. Սվաճյանի գլխավորած սահմանադրական շարժումն, ըստ էության, պայքար էր հանուն ժողովրդի քաղաքական ազատագրման, հանուն Հայաստանի ինքնավարության։

Հրապարակախոսությանը, քաղաքական պայքարին զուգընթաց, Հ. Սվաճյանը էական դեր է կատարել հայ գեղարվեստական գրականության, տեսական, գրաքննադատական մտքի զարգացման, արվեստի պատմության մեջ։ Նրա գրչին են պատկանում «Հայաստան մայր» և «Արիք Հայկազունք» հայրենասիրական բանաստեղծությունները, ռեալիստական կտավի «Քաթինքա» վիպակը, «Առանձար Ամատունի» պատմական ողբերգությունը, «Մատնություն» քաղաքական պամֆլետը։ Եթե հայ ժողովրդի ազատագրությունը Հ. Սվաճյանի տարերքն էր ու նպատակը, ապա երգիծանքը նրա պայքարի հիմնական ձևերից մեկն էր[62]։

60-ական թվականների արևմտահայ ազգային-դեմոկրատների ձախ թևին պատկանող մտավորականների մեջ Հ. Սվաճյանից զատ, հայտնի էր Սերովբե Թագվորյանը։ Նա գրական կամ հրապարակախոսական ակնառու որևէ հետք չի թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ։ Մնացել է սակայն Մ. Նալբանդյանին ուղղված 1862 թ. մայիսի 14-ի թվակիր նրա նամակը, որը, չնայած իր սակավէջությանը, ծածկագիր լինելուն, հեղաբեկում է ժամանակի հայ հասարակական մտքի, ազատագրական շարժման պատմությունը։

Ս. Թագվորյանի նամակն ու դրա հետ կապված մյուս նյութերը մի վկայություն են, որոնք հաստատում են, որ Մ. Նալբանդյանը, ենթադրվում է նաև արևմտահայ դեմոկրատները կապեր են ունեցել Գերցենի, Օգարևի, Բակունինի և Մաձինիի հետ, ջանացել են ծուխեզերքում զորք կենտրոնացնել, վառոդ արտադրել, Զեյթունին օգնության հասնել, այլ խոսքով, հայ ազգային շարժումը զուգակցել ռուսական հեղափոխական և իտալական ազատագրական պայքարի հետ։ Թագվորյանը, Հ. Քյաթիպյանը և «քսան երեսունն» հոգի այլ մարդիկ ծանոթ էին այս ծրագրերին, գործում էին նրանց իրականացման օգտին։ Սերովբե Թագվորյանը մասնակցեց «Սեր» գաղտնի ընկերության աշխատանքներին, Հ. Սվաճյանի ու Մ. Մամուրյանի հետ միասին մշակեց նոր ծրագրեր, պաշտպանեց Մ. Նալբանդյանի անձն ու գործը։ Ս. Թագվորյանը Նալբանդյանին հետևող հեղափոխական գործիչ էր։ Նրա հետ էր նաև մասնագիտությամբ բժիշկ Հովհաննես Քյաթիպյանը, որը հե-

---

61 «Հյուսիսափայլ», 1864, № 3, տպագրվել է Փառախոս Ծոլակյան կեղծանունով։

62 Գ. Գասպարյան, Հարություն Սվաճյան, Երևան, 1958, էջ 45։

տագայում ևս շարունակելով ընդհատակյա աշխատանքը, Համիդի դրածոնե-
րի ձեռքով խեղդամահ արվեց։

Այսպիսով, 1860-ականների արևմտահայ հասարակական-քաղաքական շարժումների մեջ ղեկավար դեր էր կատարում և ժողովրդին իր ետևից տանում ազգային-դեմոկրատական հոսանքը, որի ձախ թևն էին կազմում հեղափոխական դեմոկրատներ Հ. Սվաճյանն ու Ս. Թագվորյանը։ Շատ խընդիրներում սրանց հետ էին գավառահայ մի շարք գործիչներ, որոնք, հետագա տասնամյակների սոցիալ-քաղաքական իրադարձությունների ազդեցությամբ, թոթափում են պահպանողականության բեռը, շրջադարձ կատարում և երկնում ազատագրական ընդհատակյա կազմակերպություններ։ Արևմտյան Հայաստանը հասունացնում էր գործիչների մի համաստեղություն, որը հաջորդ տասնամյակներին ոչ միայն գաղափարական ուղենիշ էր դառնում արևմտահայ ազատագրական շարժմանը, այլև գործնականորեն ղեկավարում էր այն։

ԲԱԺԻՆ Ե

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՑԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ 1800—1870 ԹԹ.

XIX դարի առաջին կեսում հայկական գաղթավայրերի կյանքում որոշ տեղաշարժեր կատարվեցին։ Մի շարք հնագույն գաղթօջախներ քայքայվեցին, առաջացան ու կազմավորվեցին նոր գաղթավայրեր։ Փոփոխությունների ենթարկվեց նաև նրանց ներքին կյանքը։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը այն երկրներում, որտեղ ապաստան էին գտել բնաշխարհը թողած հայ զանգվածները, սոցիալ-դասակարգային նոր երանգավորում էր հաղորդում այդ գաղթավայրերին, փոխում նրանց դասակարգային դեմքը։

Բուն Արևելյան Հայաստանի տարածքում արդյունաբերական փոքրիշատե խոշոր կենտրոնների բացակայությունը ունեզրկված հայ գյուղացիության քայլերն ուղղեց դեպի Բաքու, Թիֆլիս, ինչպես նաև կենտրոնական Ռուսաստանի քաղաքները։

Եթե Արևելյան Հայաստանից բնակչության արտահոսքը հետևանք էր կապիտալիզմի զարգացման, ապա բոլորովին այլ էր դրությունը Արևմտյան Հայաստանում։ Այստեղ առավել զանգվածային էր արտագաղթը, բայց այն արդյունք էր թուրքական բռնապետական կարգերի հարկային ծանրը, քաղաքականության և անօրինակ կեղեքումների, թուրք պաշտոնյաների վայրագությունների, որոնք հարկադրում էին թշվառ գյուղացիությանը հեռանալ իր հայրենիքից՝ կյանքի և ապրուստի հուսալի միջոցներ գտնելու։ Սրբանց հոսանքն ուղղվում էր առաջին հերթին դեպի Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա։

Արևմտահայերի մի զգալի թիվ հաստատվեց Սիրիայում, Լիբանանում և Եգիպտոսում։ Հայ գաղթականության համար համեմատաբար նպաստավոր պայմաններ կային Եգիպտոսում, որտեղ Մուհամեդ Ալին, հոգ տանելով երկրի տնտեսական ու քաղաքական առաջընթացին, հայերի համար ստեղծեց ոչ միայն տնտեսական գործունեության հնարավորություններ, այլև նրանց ներգրավեց երկրի քաղաքական կյանքում։ XIX դարի ընթացքում Եգիպտոսում հաստատվեցին զգալի թվով հայ վաճառականներ, արդյունաբերողներ, արհեստավորներ, օրավարձու բանվորներ, որի հետևանքով երկրի երկու խոշոր կենտրոններում՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում հիմնվեցին հայկական խոշոր գաղութներ։

Պարսկահայքի բնակչության նշանակալից մասի ներգաղթը Արևելյան Հայաստան զգալի հարված հասցրեց Պարսկաստանի տնտեսությանը։ Նրա

խոշորագույն հայկական գաղթօջախի՝ Նոր Ջուղայի դեռևս XVIII դարի կեսերից սկսված անկումը շարունակվում էր, և հայ խոջաների երբեմնի ծաղկուն այս կենտրոնը գտնվում էր անմխիթար վիճակում։ Այստեղից արտահոսքը դեպի Հնդկաստան շարունակվում էր, թեև դրությունը աննախանձելի էր նաև Հնդկաստանում հիմնավորված հայերի համար։

Հնդկաստանի գաղութացումը խիստ աննպաստ վիճակ ստեղծեց հրնդկահայերի և հատկապես հնդկահայ մեծահարուստների համար։ Զուրկ լինելով պետական հովանավորությունից, նրանք չկարողացան դիմանալ եվրոպական կապիտալի մրցակցությանը, սկսեցին քայքայվել և գործունեության ասպարեզը զիջել եվրոպացիներին։ Դա էր պատճառը, որ հնդկահայերից շատերը հեռացան այստեղից և սկսեցին բախտ որոնել հեռավոր Ինդոնեզիայում։

Կապիտալիստական հարաբերությունների ձևավորման այս ժամանակաշրջանում նկատելի զարգացում ապրեցին Նոր Նախիջևանի, Աստրախանի, Ղրիմի, Մոսկվայի, Պետերբուրգի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթավայրերը։ Նրանք առավել կամ նվազ չափով օգտվում էին XVIII դ. վերջին տասնամյակներում հրապարակված կայսերական հրովարտակներից, որոնք հայերին վերապահում էին տնտեսական և իրավա-քաղաքական առանձնաշնորհումներ և ունեին ազգային սովորույթների ու իրավական նորմերի վրա հիմնված իրենց ներքին կառավարչությունները։ Ռուսաստանի հայ գաղթօջախները տնտեսական ու մշակութային կյանքում կարևոր դեր կատարեցին ինչպես արևելահայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, այնպես էլ հայ-ռուսական հարաբերություններում։

Հայ գաղթավայրերի պատմության մեջ, XIX դարում, զբաղում մեծ և կարևոր նշանակություն են ստանում Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքները։ Ճիշտ է, այս երկու վայրերում հայկական փոքրիշատե հոծ զանգվածներ չէին բնակվում, բայց նրանց դերը պայմանավորված էր այն հետզհետե մեծացող նշանակությամբ, որ ձեռք էր բերում Ռուսաստանը հայ ժողովրդին և Հայաստանին վերաբերող հարցերում։ XIX դարի սկզբին, երբ արդեն իրական հիմքերի վրա էր դրվում և շուտով կենսագործվելու էր օտարակալության լծից Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը, բնականաբար, մեծանում էր Պետերբուրգի և, հատկապես, Մոսկվայի դերը։ Այնքանով, որքանով հայ ազատագրական հույսերը, հայկական պետականության վերականգնման ծրագիրը այս ժամանակահատվածում գլխավորապես խարըսխվում էին Ռուսաստանից ստանալիք օգնության վրա, Մոսկվան և Պետերբուրգը մեծ կշիռ էին ձեռք բերում, առաջին հերթին, ազատագրվելիք Հայաստանի ապագա կացությունը սահմանելու և ռուսական կառավարության հետ համապատասխան բնույթի բանակցություններ վարելու հարցում։ Այստեղ մշակվեց ռուսական կառավարությանը 1827 թվականին ներկայացված կայսրության կազմում Արևելյան Հայաստանի կացությունը սահմանող նախագիծը Լազարյանների կողմից, որը որոշակի ազդեցություն ունեցավ հայկական մարզի ստեղծման գործում։

Այս ժամանակաշրջանում հայ ազատագրական մտքի և ազատագրական

շարժումների արտահայտություններից էր լայն ծավալ ստացած լուսավորական շարժումը։ Հայ գործիչների կողմից լուսավորական շարժումը դիտվում էր իբրև անհրաժեշտ նախապայմաններից մեկը՝ դարեր շարունակ օտարների լծի տակ կքած հայ ժողովրդական զանգվածներին ազգային ինքնագիտակցություն ներարկելու և հարյուրամյակների ընդարմացնող նիրհից սթափեցնելու համար։

Այդ առումով մեծ դեր խաղաց 1815 թվականին ռուսական երկրորդ մայրաքաղաքում՝ Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը։ Այս կրթական նշանավոր հաստատությունը սկզբից ևեթ ուղեցույց դեր սկսեց խաղալ հատկապես արևելահայ իրականության մեջ։ Իր ավելի քան մեկդարյա գոյության ընթացքում Լազարյան ճեմարանը կրթեց և դաստիարակեց բազմաթիվ հայ պատանիներ և երիտասարդներ, որոնք սփռվեցին ռուսական կայսրության կազմում մտնող գրեթե բոլոր հայաբնակ վայրերը և ազգային լուսավորության սերմեր ցանեցին։ Դրան զուգընթաց, Լազարյան ճեմարանի սաներից շատերը կարևոր դեր խաղացին դասագրքերի հրատարակության, հայ ժողովրդի պատմության տարատեսակ հարցերի ուսումնասիրության, թարգմանական ու թատերական գործի տարածման և, առհասարակ, գիտության բնագավառում։ Այդ առումով դժվար է գերագնահատել Մոսկվայի հայկական գաղթօջախի և այնտեղ գտնված Լազարյան ճեմարանի ու նրան կից տպարանի գործունեության նշանակությունը։

Գաղտնիք չէ, որ Մոսկվան իր նշանավոր համալսարանով այն վայրն էր Ռուսաստանում, որն անդուլ սերմանում էր ազատասիրական գաղափարներ։ Այստեղից էլ այն մեծ նշանակությունը, որ, բնականաբար, պետք է ստանար Մոսկվան արևելահայ իրականության մեջ, քանի որ մեծ թվով հայ երիտասարդներ կրթվեցին ու ազատասիրական գաղափարներ ստացան Մոսկվայի համալսարանում։ Հասկանալի է, թե ինչու նման պայմաններում Մոսկվան դարձավ կենտրոնական վայրերից մեկը, որտեղ ճակատեցին աշխարհաբարի և գրաբարի կուսակիցները, որտեղ թրծվեց հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ազատասիրական ոգին։ Այս հանգամանքներով էլ պայմանավորվեց Մոսկվայի դերը հայ-ռուս մշակութային կապերի սերտացման ու ամրապնդման, ռուս առաջավոր մշակույթի նվաճումները հայ իրականության մեջ տարածելու գործում։

Չպետք է անտեսել նաև այն պարագան, որ Լազարյան ճեմարանի հրատարակությունները նպաստեցին ծանոթացնելու ռուսական հասարակայնությանը հայ ժողովրդի անցյալին, դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը ունեցած անկասկած համակրանքին և Ռուսաստանից ունեցած ազատագրական ակնկալություններին։ Կարևոր երևույթ էր 1833—1838 թվականներին ռուսաց լեզվով հրատարակված եռահատոր «Հայ ժողովրդի պատմության տեսության վերաբերող ակտերի ժողովածուն», որտեղ ամփոփված էին հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ վավերագրեր։

Բնորոշ է, որ Պետերբուրգի և Մոսկվայի հայկական շրջանները սերտորեն կապված էին միմյանց հետ և միասնաբար էին հանդես գալիս հայ ժողովրդին վերաբերող կարևորագույն հարցերում, հատկապես XIX դարի առա-

ջին կեսին, երբ առաջնահերթ խնդիր էր հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության հարցը։ XIX դարի 50—60-ական թվականներին Մոսկվան և Պետերբուրգը հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում զգալի դեր խաղացին։

Այս երկու քաղաքների հայ բնակչությունը հիմնականում կազմված էր արդյունաբերողներից, վաճառականներից, նրանց գործակատարներից, պետական ծառայության մեջ գտնվող պաշտոնյաներից և փոքրաթիվ ազնվականներից։ Դժբախտաբար, տեղեկություններ չկան, թե որպիսին է եղել նրանց ընդհանուր թվաքանակը։ Որոշակի թիվ է կազմել ուսանող երիտասարդությունը, որը և իր նշանակալից լուման է ներդրել՝ հատկապես լուսավորական-դեմոկրատական շարժման բնագավառում։

Լեհաստանի և Հունգարիայի հայկական խոշոր գաղութները տխուր ճակատագիր ունեցան։ Լեհահայ գաղթավայրը XIX դարի սկզբին արդեն անցել էր պատմության գիրկը։ Դրան մեծապես նպաստել էր XVIII դարում լեհահայերի կողմից կաթոլիկության ընդունումը։

Բոլորովին այլ էր հունգարահայերի համաձուլման պատճառը։ Նրանք 1848—1849 թթ. օժանդակեցին հունգարական հեղափոխությանը։ Սակայն ռեակցիայի հաղթանակը ոչ միայն ի չիք դարձրեց ձեռք բերված դեմոկրատական ազատությունները, այլև ծանր հարված հասցրեց հունգարահայերին. նրանց բնակավայրերը քարուքանդ եղան, ժողովուրդը ենթարկվեց հալածանքների, որոնց հետևանքը եղավ գաղութի աստիճանական թուլացումը։

Դրան հակառակ, Բուլղարիայի և Դանուբյան իշխանությունների հայկական գաղթավայրերը ոչ միայն կարողացան պահպանել ազգային գոյությունը, այլև կազմակերպեցին իրենց ներքին ազգային-հասարակական կյանքը, և հարատևեցին իբրև հայ ժողովրդի տարանջատված մի մասնիկը։

Կապիտալիզմի վերընթաց զարգացմանը զուգընթաց, արևմտաեվրոպական մի շարք երկրներում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր առևտրական գործառնություններ են ծավալում և բնակություն հաստատում հայ առևտրականներ. համալսարաններում բարձրագույն կրթություն ստանալու են գալիս բազմաթիվ հայ երիտասարդներ, և հիշյալ երկրներում առաջանում են հայկական գաղթօջախներ։

Կապիտալիզմի առաջընթացը չէր կարող իր որոշակի կնիքը չդնել հայ գաղթավայրերի ազգաբնակչության դասակարգային կազմի վրա։ Եթե նախորդ դարերում գաղութների հայ բնակչությունը հիմնականում ներկայացված էր առևտրականներով ու արհեստավորներով, ապա այժմ նրանց կողքին սկսում են հանդես գալ նաև արդյունաբերողներ, գործարանային բանվորներ։ Հայ առևտրականներից շատերը, որոնք տեր էին պատկառելի դրամագլուխների, այժմ չէին բավարարվում սոսկ առևտրական գործառնությունների նեղ շրջանակներով, այլ իրենց դրամագլուխը ներդնում էին արդյունաբերության ոլորտում։ Մյուս կողմից, չկարողանալով դիմանալ գործարանային էժան ապրանքների մրցակցությանը, զրկվելով այն արտոնություններից, որոնք ընձեռում էին նրանց միջնադարյան ցեխային կազմակերպությունները, հայ արհեստավորներն ունեզրկվում էին և իրենց գոյությունը պահպանելու համար համալրում գործարանային բանվորների շարքերը։ Բնական է, որ

հայրենիքից հեռացող պանդուխտների նորանոր քարավանները ևս պետք է առաջին հերթին լրացնեին բանվորների շարքերը. սա XIX դարի համար հետզհետե բնորոշ դարձող մի երևույթ էր, որը գնալով ավելի ու ավելի լայն չափեր էր ստանում։

Հայկական գաղութների սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած այս երևույթները, ինչպես նաև այդ երկրների ներքին կյանքում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերը չէին կարող բարերար ազդեցություն չունենալ հայկական գաղթավայրերի մշակութային կյանքում։ Հայկական գաղթավայրերում բացվեցին բազմաթիվ դպրոցներ, ստեղծվեցին տպարաններ, սկսեցին հրատարակվել պարբերականներ, հիմնվեցին թատերախմբեր և մշակութային այլ հիմնարկություններ, աշխուժացավ հասարակական-քաղաքական միտքը։

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ։ Ռուսաստանում ամենախոշոր հայկական գաղթավայրերից էր Նոր Նախիջևանը, որը նշանակալից դեր է կատարել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում։

XIX դարի արշալույսին արդեն Նոր Նախիջևանը հայ գաղթավայրերի մեջ աչքի էր ընկնում ազգային սովորութիւնների վրա հիմնված իր ինքնավար կառավարչությամբ և տնտեսական բարգավաճ կյանքով։

Եկատերինա II-ի 1779 թ. նոյեմբերի 14-ի առանձնաշնորհումների ընձեռած հնարավորությունների շրջանակներում և նրա հիման վրա ձևավորվում է նորահաստատ գաղութի ինքնավարությունը։ 1780 թ. կազմակերպվում է հայկական մագիստրատը, որն իրականացնում էր քաղաքի և գյուղերի դատաստանական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները։ Ժողովրդի բոլոր խավերի կողմից երեք տարի ժամանակով մագիստրատում ընտրվում էին հինգ դատավորներ, որոնք վարում էին հայ հասարակության ամբողջ գործերը։ Սակայն այլ քաղաքների օրինակով շուտով հաստատվում է քաղաքագլխի պաշտոնը։ Քաղաքագլուխը, փաստորեն, իր ձեռքում է կենտրոնացնում հայ համայնքի ողջ կառավարչությունը։

Մագիստրատում դատավարությունն ու գործավարությունը կատարվում էր հայերեն լեզվով՝ «Հայկական դատաստանագրքի» հիման վրա, որը 1782 թ. Հ. Արղությանը բերել էր Աստրախանից։ «Դատաստանագիրքը» ճանաչվել է պետության կողմից, օրենքի ուժ է ստացել և Նոր Նախիջևանի գաղութից բացի մինչև XIX դարի 60-ական թվականների վերջը կիրառվել է նաև Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի գաղութներում։

Հայկական գյուղերը, մագիստրատի ղեկավարությանը ենթակա լինելով հանդերձ, ունեցել են իրենց կառավարման տեղական օրգանները, հանձին ավագի և 4 «ծերերս»-ի, որոնք ընտրվում էին ձայների մեծամասնությամբ՝ մեկ տարի ժամանակով։

1811 թ. հաստատվում է Դոնի հայկական գաղութի գերբը, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղուներ ու փեթակներ։

Նախապես պատրաստված նախագծի հիման վրա սկսվում է Նոր Նախիջե-

վանի և ապա գյուղերի կառուցումը։ Քաղաքի կենտրոնական մասում առանձնացվում է ընդարձակ հրապարակ, որի երկու կողմերում հիմնվում են առևտրական խանութաշարքեր ու արհեստավորական գործատներ։ Փողոցները գծվում են իրար խաչաձև, ուղղածիգ դիրքով, աստիճանաբար կառուցվում են քարե և աղյուսե տներ, քաղաքը բարեկարգ տեսք է ընդունում։

Հարավային Ռուսաստան այցելած նշանավոր ճանապարհորդների վրա մեծ տպավորություն է գործել Դոնի հայության ազգագրական ինքնատիպ նկարագիրը, նոր Նախիջևանի բարեկարգ վիճակը։ Կոմս Ի. Ա. Բեղբորոդկոն 1812 թ. ժամանում է Նոր Նախիջևան և իր օրագրում գրանցում հետևյալը. «Եղա քարավանատունը, քաղաքը բազմամարդ էր, կանոնավոր փողոցներով։ Շինությունները կառուցված էին հայկական ճաշակով։ Տները մաքուր էին, մեծ մասամբ ծածկված կղմինդրով։ Կային և լավ քարե տներ, բավական մեծ մի քանի քարաշեն եկեղեցիներ, շատ այգիներ։ Դոնի ափին, բարձունքի վրա գտնվող քաղաքի դիրքը հիանալի է»[1]։

1812 թ. Հայրենական պատերազմի հերոս Ն. Ն. Ռևակին 1820 թ. ամռանը Ա. Ս. Պուշկինի հետ այցելում է Նոր Նախիջևան. «Ամրոցի մյուս կողմը,— գրում է նա,— կա մեկ ուրիշ արվարձան կամ Նախիջևան անվանվող հայկական քաղաք՝ ընդարձակ, բազմամարդ և առևտրով խիստ հարուստ։ Կենցաղով, կառուցումներով, դեմքերով, հագուստով, ամեն ինչով ինքնատիպ է»[2]։ Ժամանակի անվանի մարդկանց բարձր գնահատականը սոսկ արտաքին տպավորության արդյունք չէր։ Տագանրոգի քաղաքապետի 1850 թ. տարեկան հաշվետվության մեջ Դոնի Նախիջևանը Նովորոսիայի երկրամասի լավագույն քաղաքներից մեկն է համարվում[3]։

Հարկ է, սակայն, նշել, որ թեպետ մինչև XIX դարի 30—40-ական թթ. Նախիջևանը բնակչության քանակով ևս եղել է Նովորոսիայի խոշոր քաղաքներից մեկը, սակայն ընդհանուր առմամբ նրա բնակչության աճը դանդաղ է կատարվել։ Այսպես, եթե 1812 թ. քաղաքի բնակչության թիվը հասնում էր 8484, իսկ շրջակայքի հայկական գյուղերինը՝ 2633 մարդու, շուրջ քառասուն տարի հետո՝ 1850 թ. Նոր Նախիջևանը ուներ ընդամենը 11295, իսկ հայկական գյուղերը՝ 5293 բնակիչ[4]։

Բնակչության դանդաղ աճը բացատրվում է, մի կողմից, մասնավորապես 1840—1850-ական թթ. մեծ չափեր ընդունած արտահոսքով, մյուս կողմից դա հետևանք էր այն բանի, որ Դոնի ինքնավար գաղութը իր արտոնությունները պահպանելու նպատակով ամեն կերպ արգելակում էր դրսի բնակչության ներհոսքը։

Նոր Նախիջևանը հայկական մյուս գաղթավայրերի համեմատությամբ այն առանձնահատկությունն ուներ, որ բաղկացած էր հայաբնակ քաղաքից ու սրա հետ կապված հայկական գյուղերից։ Հինգ հայկական գյուղերի

---

1 «Бумаги, относящиеся до Отечественной войны 1812 года», ч. IX, М., 1908, стр. 8.
2 «Архив Раевских», т. I, СПб., 1908, стр. 519—520.
3 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 5, գ. 60, թ. 70—71։
4 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 11, գ. 134, թ. 179, ֆ. 1290, ց. 1, գ. 16, թ. 7։

նոյության փաստը իր կնիքն էր դնում գաղութի սոցիալ-տնտեսական բովանդակ կյանքի վրա։

Գյուղատնտեսության ճյուղերի մեջ առաջատար տեղ ուներ դաշտավարությունը՝ հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես ցորենի մշակումը, որի համար Դոնի հարթավայրի արգավանդ հողերը լայն հնարավորություն էին ընձեռում։ Ցանքատարածությունների ու բերքատվության վերաբերյալ պահպանված փաստաթղթերից երևում է, որ Նոր Նախիջևանի օկրուգում մշակվող հացահատիկի մի փոքր մասը բավարարում էր բնակչության սպառողական պահանջները, իսկ նրա մեծագույն մասը՝ 75—80%-ը, վաճառքի էր հանվում։ Արտասահմանում հայտնի էր Նախիջևանի հայկական գյուղերի ցորենը, որը գերադասվում էր սևծովյան նավահանգստներից արտահանվող ցորենի ուրիշ տեսակներից[5]։

Նոր Նախիջևանում, ինչպես նաև նրա շրջակայքի հայաբնակ գյուղերում հաջողությամբ զբաղվում էին բանջարաբուծությամբ ու այգեգործությամբ, մասնավորապես՝ խաղողագործությամբ, որը բավական մեծ ծաղկում էր ապրել։ Զարգանում էր շերամապահությունը, որի առաջին ձեռնարկողները հայերն էին։

Հյութալի խոտով ծածկված Դոնի լայնածավալ տափաստանները նպաստավոր պայմաններ էին ստեղծում անասնապահության զարգացման համար։ Նոր Նախիջևանում զբաղվում էին անասնապահության գրեթե բոլոր ճյուղերով։ 1810 թ. տվյալներով Դոնի հայկական գաղութում կար շուրջ 11 հազար խոշոր եղջերավոր անասուն և 4500 ձի[6]։ Հայկական գաղութում լայն տարածում գտավ մասնավորապես նոր ցեղատեսակի բրդատու ոչխարաբուծությունը։

Նոր Նախիջևանում զգալի հաջողության հասավ նաև արհեստագործությունը և արդյունաբերությունը։

Գաղութի առաջացման սկզբնական տարիներից արհեստները երևան են եկել բավականաչափ մասնագիտացված ձևով։ Դոնի ավազանի բնակչության անմիջական պահանջը և համապատասխան հումքի առկայությունը կանխորոշում էին արհեստագործության որոշակի ճյուղերի զարգացումը։

Նոր Նախիջևանի ճարպահալ գործարաններում տասնյակ հազարավոր անասուններ էին մորթվում։ Մորթիների ու կաշվի առատությունը խթանում էր կաշեգործական արհեստների՝ կոշկակարության, մաշակարության, մուշտակագործության, թամբագործության առաջացմանն ու զարգացմանը։ Կայսրության հարավի ջրային ուղիներով արտահանվող մետաղը հումք էր հանդիսանում դարբնության, պայտառության, փականագործության և այլ արհեստների համար։ Միաժամանակ զարգանում էին հայերի համար ավանդական դարձած արհեստները՝ ոսկերչությունն ու արծաթագործությունը։ Հայ ոսկերիչներն ու արծաթագործները հռչակված էին իբրև նրբաճաշակ իրեր ու զարդեր պատրաստող վարպետներ։

---

5 Նույն տեղում, ց. 5, գ. 60, թ. 57։

6 Նույն տեղում, ց. 11, գ. 134, թ. 22։

Արտաքին շուկաներում և մասնավորապես Կովկասի լեռնաբնակների մոտ լայն տարածում էին գտնում հայ վարպետների պատրաստած իրերը։ Իզուր չէ, որ Եկատերինոսլավի նահանգի պաշտոնական փաստաթղթերում ընդգծվում է ուրիշ քաղաքների համեմատությամբ Նոր Նախիջևանում արհեստների որոշակի զարգացած լինելու հանգամանքը և շեշտվում մասնավորապես կաշեգործական և մետաղյա իրերի պատրաստումը։ Տագանրոգի քաղաքապետի (որի անմիջական վարչական իրավասությանն էր ենթակա Դոնի հայաբնակ գաղութը) 1850 թ. հաշվետվության մեջ նշվում է, որ հայ վարպետների պատրաստած արծաթազարդ զենքերի, սանձերի մի քանի հիանալի նմուշներ նախատեսված են ուղարկելու Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես[7]։

Նոր Նախիջևանի հայ արհեստավորներն ունեցել են ավանդական ուժ ձեռք բերած, ազգային սովորույթունների վրա հենվող իրենց համքարությունները, որոնք ներքին կառուցվածքով, վարք ու բարքով բնականաբար նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին։ Սակայն միաժամանակ Նոր Նախիջևանի արհեստավորական կազմակերպություններին՝ հատուկ աշակերտների ուսուցման, նրանց նկատմամբ վարպետների իրավունքների սահմանափակման, համքարությունները քաղաքային մագիստրատներին ենթարկված լինելու և մի քանի այլ հատկանիշներ բնորոշ են եղել ռուսական համքարություններին և հանդիսացել են նրանց անմիջական ազդեցության հետևանք։

1850-ական թվականներից, արդյունաբերության զարգացումն ու ապրանքա-դրամական հարաբերությունների ծավալումը ուժեղացնում են արհեստավորության ներքին շերտավորման պրոցեսը և քայքայիչ հետևանքներ ունենում նրա համար։

Նոր Նախիջևանի գաղութի քաղաքային արտադրությունը չէր սահմանափակվում միայն արհեստագործությամբ։ Արհեստներին զուգահեռ ու նրանց կողքին հիմնվում են մանուֆակտուրային տիպի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք քիչ էին տարբերվում արհեստավորական գործատներից։ Գաղութի հայ առևտրական բուրժուազիան (Խալիբյան, Հայրապետյան, Օգաբաշյան, Ալաջալյան, Պոպով, Հովհաննիսյան և շատ ուրիշներ) արտադրության որոշ ճյուղերի եկամտաբերությունից մղված իր կապիտալի զգալի մասը ներդնում էր արտադրության մեջ և զարկ տալիս նրա շահութաբեր ճյուղերին։ Նրանցից հիշատակության արժանի են հատկապես ձկան, ճարպի, բրդի, կաշվի, օղու, մետաքսի, ծխախոտի, աղյուսի, կղմինդրի արտադրամճյուղերը։

Ձկնորսությունն ու ձկնարդյունաբերությունը ինչպես ամբողջ երկրամասի, այնպես էլ հայկական գաղութի տնտեսության կարևոր ճյուղերից են եղել։ 1810 թ. Նոր Նախիջևանի գաղութում ձկան որսի չափը հասնում էր 510 տոննայի, իսկ ձկան յուղի արտադրությունը՝ 150 փթի[8]։

Նոր Նախիջևանում մեծ զարգացում ապրեց մանր եղջերավոր անասուն-

---

7 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 5, գ. 60, թ. 24։

8 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 11, գ. 134, թ. 26, 27, 113։

ներից գործարանային պայմաններում ճարպ ստանալու եկամտաբեր գործ։ Հայ արդյունաբերողները ճարպատու հատուկ ոչխարի հոտեր էին պահում։ Ուրիշ քաղաքներում նման գործարանների (սալղանների) բացակայության պատճառով Հյուսիսային Կովկասից, Դոնի տափաստաններից և այլ վայրերից ճարպատու ոչխարի հոտերը քշում էին Նախիջևան և մորթում նրա սալղաններում։ Նման ձեռնարկությունների շահութաբերությունից ելնելով, հայ վաճառական-արդյունաբերողները ճարպահալ գործարաններ հիմնեցին Ստավրոպոլում, Պյատիգորսկում և այլ վայրերում։ Գործարաններում տարեկան տասնյակ հազարներով ոչխար էին մորթում, ճարպը հալում, լցնում տակառները և դրեթե ամբողջությամբ առաքում արտասահման։

1865 թ. միայն Նոր Նախիջևանի տասնմեկ սալղաններում մորթվել է 67600 ոչխար, որից ստացվել է 240.750 ռ. արժողության ճարպ[9]։ Աչքի էր ընկնում նաև բրդի արտադրությունը։ Նոր Նախիջևանի արդյունաբերողները Դոնի ափին հիմնել էին բրդալվաց ձեռնարկություններ, որտեղ տարեկան շուրջ 150—200 հազար փութ բուրդ նախնական մշակման էր ենթարկվում և արտահանվում Արևմտյան Եվրոպա[10]։

Գաղթավայրի սկզբնավորումից մինչև XIX դարի 20-ական թվականները հայերը հռչակված էին օղու, մասամբ նաև գինու արտադրության բնագավառում։ Բավական է նշել, որ 1816 թ. արտադրվել է 38.169 դույլ օղի, որի վաճառքից ստացվել է 445.590 ռ. դումար[11]։

Նոր Նախիջևանում գերազանցապես հիմնվել են այնպիսի ձեռնարկություններ (կաշեգործական, բրդալվաց, ճարպահալ գործարաններ, ծխախոտի ֆաբրիկա և այլն), որոնք միայն նախնական մշակման են ենթարկել հումքը, որն այդ վիճակում արտահանվել է շուկա։ Եթե սկզբնական շրջանում արհեստավորական գործատներն ու արդյունաբերական ձեռնարկությունները շատ կողմերով համընկնում, նույնանում էին, ապա XIX դ. 30—40-ական թվականներից նրանց սահմանազատումը ակնբախ է դառնում։ Արդյունաբերության մեջ աստիճանաբար դրսևորվում են կապիտալիստական արտադրությանը բնորոշ հատկանիշներ։

Նոր Նախիջևանի աշխարհագրական դիրքն առևտրի զարգացման համար նպաստավոր պայմաններ էր ստեղծում։ Դոնի շրջանում հանդուցավորվում էին ցամաքային ու ջրային առևտրական ճանապարհները, որոնք ամբողջ հարավային Ռուսաստանի համար բացառիկ կարևորություն ունեին։

Ի տարբերություն Ռոստովի և երկրամասի մյուս քաղաքների, Նոր Նախիջևանը հայտնի էր իր ներքին առևտրով։ Նախիջևանցիներն իրենց ապրանքներով ողողում էին ոչ միայն Ռոստովի, Նովոչերկասկի ու Տագանրոգի շուկաները, այլև Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի և այլ տոնավաճառները։ Նովորոսիայի առևտրական կարևոր վայրերում նրանք իրենց խանութներն ու կրպակներն ունեին, ուր մանրածախ առևտուր էին անում։ Այսպես, եթե 50-

9 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1200, թ. 9։

10 А. А. Скальковский, Ростов на Дону, СПб, 1847, стр. 44.

11 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 11, գ. 135, թ. 35։

ական թվականներին Տագանրոգը ուներ 279 կրպակ, Եկատերինոսլավը՝ 216, Ռոստովը՝ 211, Բախմուտը՝ 148, ապա Նոր Նախիջևանում դրանց թիվը հասնում էր 368-ի[12]։

Ներքին առևտրի կարևոր ճյուղերից է եղել ձկնավաճառությունը։ Աղ դրված, չորացրած ձուկը հարյուրավոր փթերով վաճառքի է հանվել երկրի տարբեր նահանգներում։ Ներքին առևտրի մեջ կարևոր էր նաև անասունների, նրանց կաշվի ու մորթու, իսկ մանրածախ առևտրում՝ կտորեղենի, չթի, արդուզարդի և այլ իրերի վաճառքը։

Նոր Նախիջևանցիների առևտրական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ուներ Հյուսիսային Կովկասը։ Ստավրոպոլում, Եկատերինոդարում (Կրասնոդար), Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Մոզդոկում, Ղզլարում և այլ վայրերում նախիջևանցիները կրպակներ էին հիմնել և մանուֆակտուրային ապրանքների աշխույժ առևտուր էին անում։ Միաժամանակ տեղի տոնավաճառներում չերքեզներից գնում էին կովի և ձիու, ոչխարի ու այծի կաշի, նապաստակի, աղվեսի մորթիներ, մեղրամոմ, յուղ և այլն։ Նոր Նախիջևանի վաճառականների կովկասյան ամբողջ առևտրի ծավալը տարեկան հասնում էր շուրջ 3 մլն. ռուբլու։

Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էր ցորենը։ Հայ առևտրականները չէին բավարարվում հայկական գյուղերի ցորենի վաճառքով։ Նրանք Ռուսաստանի հացառատ նահանգներում՝ Ստավրոպոլում, Վորոնեժում, Օրյոլում, Տամբովում, Սարատովում, Եկատերինոսլավում և այլուր հացահատիկ էին գնում և վաճառում ցորենի արտահանությամբ զբաղվող առևտրականներին կամ ուղղակի առաքում եվրոպական երկրներ։ Հայրապետյան եղբայրները հացահատիկի հատուկ շտեմարաններ ունեին Տագանրոգի նավահանգստում։ Հայ վաճառականների շրջանում հացահատիկի վաճառքը այնքան մեծ ծավալ էր ընդունել, որ նրանք ընդգրկվել էին առևտրական ընկերությունների մեջ և հատուկ կանոններ մշակել նրա վաճառքի վերաբերյալ։

Արտաքին շուկաներում լայն սպառում էր գտնում անասունների ճարպը և յուղը։ Հայ վաճառականները Սիբիրից, Պերմի նահանգից, Կովկասի տոնավաճառներից և այլ վայրերից մեծ քանակությամբ յուղ էին գնում և առաքում արտասահմանյան շուկաները։ Միայն 1818 թ. առաջին կիսամյակում երեք հայ վաճառականներ (Ե. Չերեպով, Ն. Պոպով, Պ. Խաթրանով) արտասահման առաքելու նպատակով Նոր Նախիջևանի նավակայան էին բերել 15000 փութ կովի յուղ։

Հայ և հույն վաճառականները Աստրախանից գնում էին սև, իսկ ազովի ձեռնարկություններից՝ կարմիր ձկնկիթ և արտահանում Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա։ Ձկնկիթի տարեկան շրջանառությունը անցնում էր 10.000 փթից[13]։

Հայ վաճառականները, ծանոթ լինելով արևելյան ժողովուրդների լեզ-

---

12 Տե՛ս «Материалы для географии и статистики России, Екатеринославская губерния», составил В. Павлович, СПб., 1862, стр. 216.

13 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 139, դ. 708, թ. 3։

վին ու բարքերին, առևտրական սերտ կապերի մեջ էին գտնվում ասիական երկրների հետ։ Արտասահմանից նրանք ներմուծում էին բուսական յուղ, ծխախոտ, չոր մրգեր, նարինջ, կիտրոն, ֆիքապտուղ, ընկույզ, համեմունքներ, գորգեր, կտորեղեն և այլ ապրանքներ։

Նոր Նախիջևանի ներքին և արտաքին առևտրի տարեկան շրջանառությունը 1840 թվականին, ոչ լրիվ տվյալներով, հասնում էր շուրջ 8 միլիոն ռուբլու[14]։

Տավալուն առևտրա-փոխանակային հարաբերությունների արդյունք հանդիսացող հայ առևտրական կապիտալն իրեն զգացնել էր տալիս ոչ միայն Նոր Նախիջևանում, այլև նրա սահմաններից դուրս։ Սակայն հայկական գաղութն իր սահմանափակ պայմաններով ազատ գործունեության հնարավորություն չէր ընձեռում տեղի հայ վաճառականներին։ Վերջիններս սկսում են իրենց կապիտալները ներդնել ավելի շահավետ վայրերում և առաջին հերթին Նախակովկասի առևտրական հանգույցներում։ Այդ պարագան, ինչպես նաև այլ հանգամանքներ, Նոր Նախիջևանի առևտրի զարգացման վրա բացասական ազդեցություն են ունենում։ Հիսունական թվականներին նա սկսում է առաջնությունը զիջել ավելի բուռն թափով աճող Հարևան Ռոստովին։

Դոնի հայկական գաղութի տնտեսական կյանքի փոփոխություններին հետևելիս, դժվար չէ նկատել, որ այնտեղ համեմատաբար արագ ու դյուրին եղանակով ընթացավ նոր, կապիտալիստական հարաբերությունների ձևավորման պրոցեսը։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ Նոր Նախիջևանի գաղութը, ինչպես նաև Նովորոսիյսկի գրեթե ամբողջ երկրամասը զերծ մնաց ճորտային կախումից, հետևաբար նաև տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանն ու բուրժուական հարաբերությունների ձևավորմանը խոչընդոտող պայմաններից։

Արտադրության տարբեր ճյուղերի առաջընթացը և առանձնապես առևտրա-դրամական հարաբերությունների ծավալումը ուժեղացրին սոցիալական շերտավորումն ու դասակարգային ներհակությունները։

Դոնի հայերը սեփական միջոցներով հոգում էին իրենց օկրուգի փոստակայանները, կամուրջները, ճանապարհները բարվոք վիճակում պահելու ծախսերը։ Այս ծախսերը ծածկելու նպատակով հայկական մագիստրատը ամեն տարի բնակչության վրա լրացուցիչ հարկեր էր դնում, որոնք գնալով աճում էին։ Այդ հարկերից զատ, բնակչությունը «նվերներին» անվան տակ հզեվոր իշխանությանը վճարում էր զգալի տուրքեր։ Ժողովրդի վրա ծանրանում էին նաև քաղաքի ու գյուղերի պաշտոնյաների ապօրինությունները։

Նոր Նախիջևանի գաղութի շեշտված առանձնահատկություններից մեկն էլ բավական ցայտուն դրսևորվող սոցիալական հակամարտությունն էր։ Գյուղացիությունը տևական պայքար է մղել առևտրա-կալվածատիրական վերնախավերի դեմ՝ ամենից առաջ հողային հարցի շուրջը։

Հողային հարցը գաղութի տնտեսական հարաբերությունների առանցքն է կազմել։ Հողային տարածությունների համար հակամարտություններն առանձ-

14 «Новороссийский календарь 1840 г.», стр. 154.

նապես սրվեցին 1830-ական թվականներից։ Դաղստանի կալվածատիրական շերտերը Արտեմ Խալիբյանի գլխավորությամբ, չբավարարվելով ժամանակին հանրային տարածություններից 5100 դես. հողամաս յուրացնելով, ձգտում էին իրենց ձեռքը գցել նաև հայկական գյուղերին պատկանող հողերի մի մասը[15]։

Գյուղացիները կալվածատերերի ապօրինությունների դեմ բողոքում էին ամենուրեք, մինչև կառավարիչ սենատ, իրենց պատվիրակներն առաքում Պետերբուրգ։ Սկսվում է փոխադարձ բողոքների, միջնորդությունների և պետական տարբեր գերատեսչություններում հարցի քննարկման մի անվերջանալի շրջան։ Այդ ընթացքում քաղաքի իշխանավորների առաջարկով մագիստրատը հրավիրում է ժանդարմական կորպուսի չինովնիկների, որոնք բանսարկում են հատկապես անհնազանդ գյուղացիներին և 160 զինվոր ուղարկում չալթրցիներին պատժելու համար[16]։

Ի վերջո, պետական խորհուրդը, տեսնելով գյուղացիների իրավացիությունը վկայող անհերքելի փաստերը, 1848 թ. հարցը վճռում է նրանց օգտին։ Սակայն հետագայում ևս քաղաքի աղաները շարունակում էին տարբեր պատրվակներով օգտվել հայկական գյուղերին պատկանող հասարակական հողերից։

Նոր Նախիջևանի գաղութում հողային հարցին առնչվեր ծառացած է եղել կալվածատիրական տնտեսությունները աշխատող ձեռքով ապահովելու խնդիրը։ Դրսից աշխատողների հավաքագրելը և իրենց ագարակներում հողին ամրացնելը արգելվում էր, որովհետև այն հակասում էր առանձնաշնորհումներին։

Նոր Նախիջևանի աղայական դասը դեմում է հայ գյուղացիներին ճորտացնելու փորձերին։ Մասնավորապես 1836 թ. հարկային նոր սիստեմը կիրառելու ժամանակ նրանք ձգտում էին գլխահարկ մտցնելով բնակչության ներքնախավերին դնել նյութական ծանր դրության մեջ և, տնտեսական կախման մեջ գցելով՝ ճորտացնել գյուղացիներին։

1830—40-ական թվականներին և հետագայում Նոր Նախիջևանի գաղութի երկրագործ շերտի դասակարգային պայքարը զուգադիպում էր հեղափոխական իրադրությանը նախորդող ամբողջ Ռուսաստանում ծավալված գյուղացիական շարժումներին։ Եթե ռուսական գյուղացիությունը պայքարում էր ճորտական հարաբերությունների վերացման համար, ապա Նոր Նախիջևանի գյուղացիությունը ընդվզում էր ճորտություն մտցնելու փորձերի դեմ։

Նոր Նախիջևանի գաղութի սոցիալ-տնտեսական պայմանները, այնտեղ կատարվող իրադարձությունները այն միջավայրն էին, ուր նախապես ձևավորվեց Մ. Նալբանդյանի ըմբռնած ոգին, հիմք հանդիսանալով նրա հետագա հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքի համար։

Նոր Նախիջևանում լայն տարածում էր գտնում «Հյուսիսափայլը» ամսա-

---

15 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1152, հ. III, գ. 66։

16 Տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1968, էջ 356—358։

գիրը, որի էջերում հաճախ տպագրվում էին գաղութի հասարակական հարցերը շոշափող Մ. Նալբանդյանի կրակոտ հոդվածները։ Նա մասնավորապես բարձրացնում էր հասարակական միջոցները գաղութի լուսավորությանը ծառայեցնելու խնդիրը։

Դոնի հայկական գաղութը իր համեստ շրջանակներում արտացոլել է հայ և ռուս ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունները, աշխուժորեն արձագանքել ու մասնակցել ռուսական հասարակական կյանքի իրադարձություններին։

Դեռևս 1812 թ. Հայրենական պատերազմից առաջ, Նապոլեոնի բանակի ներխուժման վտանգի պայմաններում, սկսվում է տեղական աշխարհազոր կազմակերպելու և բանակի օգտին նվիրատվությունների լայն ալիք։ Նոր Նախիջևանի հայ հասարակությունը նվիրաբերում է 10850 ռուբլի, 243 տարբեր տեսակի զենքեր ու զգալի պարենամթերք, իսկ Թշնամու ներխուժման օրերին՝ 30000 ռուբլի[17]։ Ավելին, մագիստրատի գլխավորությամբ քաղաքից և գյուղերից աշխարհազորայիններ են հավաքում, որոնց վարժեցումը հանձնարարվում է մայոր Նիկիտա Աբրամովին[18]։

Նոր Նախիջևանի գաղութը գործուն մասնակցություն է ունեցել նաև 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմին։ Պատերազմի տարիներին հայ համայնքը իր միջոցներից պատրաստում է 10500 փութ պաքսիմատ և նվիրում բանակին։

Հայ գյուղացիներն իրենց ավելի քան 400 սայլերով ձմռանը Ռոստովից և Տագանրոգից Կերչ, Պերեկոպ, Ենիկալե են տեղափոխում պարենամթերք և հացցնում գործող բանակին։ Քաղաքի և հայկական գյուղերի բնակչությունը իր տարածքով անցնող զորքերին ապահովել է սննդամթերքով, ապաստան տվել անօթևան մնացած զինվորականների ընտանիքներին, Նախիջևանի ուսումնարանի շենքը վերածել զինվորական հիվանդանոցի։ Այդ ամենի համար հայկական գաղութը բազմիցս արժանացել է շնորհակալության ու պարգևների։

Նոր Նախիջևանի գաղութը միաժամանակ հասարակական-քաղաքական սերտ կապերի մեջ է եղել մայր հայրենիքի հետ։ Եկեղեցու սպասավորների պարբերական փոխայցելությունները և Աստրախանի միջոցով Պարսկաստանի շրջանների հետ աշխույժ առևտուրը, ուր ակտիվ դեր էին կատարում հայ վաճառականները, մեծապես նպաստում էին Հայաստանի հետ ունեցած կապերին։ Դոնի հայերի շրջանում ընդունված էր ուխտագնացությունը դեպի Երուսաղեմ և Մշո ս. Կարապետ վանքը։ Թիֆլիս—Երևան—Էջմիածին ուղիով ամիսներ տևող ճամփորդության ընթացքում նրանք մոտիկից ծանոթանում էին Անդրկովկասի ու Հայաստանի հայության կյանքին։

Կենդանի կապերի և այլ ուղիներով թափանցող տեղեկությունների միջոցով ռուսահայ զանգվածները տեղյակ էին և արձագանքում էին մայր հայ-

---

17 *Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1999, թ. 15։*

18 *М. Нерсесян,* Отечественная война 1812 г. и народы Кавказа. Ереван, 1965 стр. 197.

բնիքում կատարվող իրադարձություններին։ Արևելյան Հայաստանը աղատագրելու և Ռուսաստանին միացնելու լուրը ջերմ արձագանք է գտնում գաղութահայության շրջանում։ Դոնի հայ հասարակության անունից քաղաքագլուխ Խաչատուր Խոմաճյանը շնորհավորական ուղերձ է հղում Ներսես Աշտարակեցուն[19]։

Նոր Նախիջևանը Ռուսաստանի հայաբնակ գաղութներից բացի, կապերի մեջ էր նաև Կ. Պոլսի և հնդկահայ գաղութների հետ, նթե Կ. Պոլսի հետ շփումները գալիս էին դեռևս ղրիմահայ գաղութի կազմավորման շրջանից և բավական աշխույժ բնույթ էին կրում, ապա հնդկահայերի հետ կուլտուր-կրթական կապերն ավելի նորոդվեցին 60-ական թթ. հնդկական կտակների խընդրով Մ. Նալբանդյանի ուղևորության ընթացքում։

Նոր Նախիջևանի հայաբնակ գաղութն իր հիմնադրումից սկսած ստեղծեց նաև բավական ուրույն մշակույթ։ Տակավին XVIII դարի 80-ական թվականներին Նոր Նախիջևանում բացվում են առաջին վարժարանները, դրանց թիվը գնալով աճում է։

Ջբավարարվելով տեղի վարժարանների տված գիտելիքներով, նախիջևանցիներից ոմանք իրենց զավակներին ուղարկում էին Մոսկվայի, Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատությունները և հատկապես Լազարյան ճեմարանում ուսանելու։ Նրանցից շատերը նշանավոր մանկավարժներ, իրավաբաններ են դառնում և վերադառնալով հայրենի քաղաք, նպաստում են նրա կուլտուրական առաջադիմությանը։

Ճեմարանավարտներ Ք. Խաղամյանը, Ս. Տիգրանյանը և Մ. Քուշներյանը 1830-ական թվականների վերջերին Նախիջևանի ուսումնարանի շենքում մի քանի տարի շարունակ հայերեն լեզվով ներկայացումներ են կազմակերպում և դրանով իսկ հիմք դնում տեղական ինքնագործ թատրոնին։ XIX դարի սկզբներին գաղութի մշակութային կյանքում խոշոր հետք են թողնում Պատկանյանները։

1830-ական թվականների սկզբներին լուսավորական-մանկավարժական բեղմնավոր աշխատանք է տանում Հ. Ալամդարյանը։ Դարի կեսին հրապարակ է իջնում Մ. Նալբանդյանը։

ԱՍՏՐԱԽԱՆ։ XIX դարի առաջին կեսին Աստրախանի հայ գաղութն իր մեծությամբ և նշանակությամբ երկրորդն էր (Նոր Նախիջևանից հետո) Ռուսաստանի հայ գաղթօջախների շարքում։ Այստեղ է եղել հայկական մեծ թեմի կենտրոնը։ Քաղաքի հայ բնակչությունը խոշոր դեր էր խաղում տվյալ երկրամասի տնտեսական ու մշակութային, ինչպես նաև հասարակական կյանքում։

1815—1825 թթ. հայերի թիվը Աստրախանում հասնում էր 6.500 մարդու[20], իսկ XIX դարի կեսին՝ շուրջ 5.800-ի[21]։

---

19 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 78։

20 «Государственный архив Астраханской области» —Աստրախանի մարզի պետական արխիվ (այսուհետև՝ ԱՄՊԱ), Աստրախանի քաղաքացիական նահանգապետի դիվան, ց. 10, գ. 1084, թ. 148։

21 Նույն տեղում, գ. 2392, թթ. 111—112։

Աստրախանի հայերը հիմնականում զբաղվում էին արհեստով և առևտրով։

Ակնառու էր հայերի գործուն մասնակցությունը Պարսկաստանից ու Անդրկովկասից մետաքս, բամբակ, մետաքսյա և բամբակյա գործվածքներ, գորգեր, ներկեր, ինչպես նաև ձկնեղեն, ձկնկիթ, սոսինձ, թեյ, սուրճ, չորացրած մրգեր Աստրախան ներմուծելու գործում։ Այս ապրանքների մեծ մասը Վոլգայի վրայով Աստրախանից ուղարկվում էր Նիժնի Նովգորոդի տոնավաճառը։

Աստրախանի հայ վաճառականները ցամաքով առևտուր էին անում նաև կալմիկների և ղազախների հետ։

XIX դարի առաջին քառորդից սկսած հայերի տեսակարար կշիռը Աստրախանի նավահանգստով կատարվող արտաքին առևտրում գնալով նվազում էր և գլխավոր դերը աստիճանաբար անցնում էր Պարսկաստանի վաճառականներին։ Հայերը սկսում են առավել մեծ ուշադրություն դարձնել Ռուսաստանի ներքին առևտրի՝ գլխավորապես երկրի կենտրոնական նահանգների և Հյուսիսային Կովկասի վրայով Անդրկովկասի հետ կատարվող առևտրի վրա։ Տովային փոխադրումների ոչ հուսալիությունը մի կողմից, ռուսների ամրապընդվելը Կովկասում մյուս կողմից, հարկադրում էին հայ վաճառականներին նախընտրել Ղզլար—Վլադիկավկազ—Թիֆլիս ցամաքային առևտրական ուղին։

XIX դարի կեսին Ռուսաստանի կենտրոնական նահանգները Ասիայի հետ կապող առևտրական ուղին անցնում էր արևմտյան Կովկասով, որի հետևանքով Աստրախանի դերը ասիական երկրների հետ կատարվող Ռուսաստանի արտաքին առևտրում նվազում էր։ Կասպիական առևտրի անկմանը նպաստում էր նաև այն, որ եվրոպական և առաջին հերթին անգլիական վաճառականները Թուրքիայի և Մերձավոր Արևելքի այլ երկրների վրայով հաջողությամբ զարգացնում էին առևտուրը Պարսկաստանի հետ։

XIX դարի սկզբին Աստրախանի նավահանգստից ծով էին դուրս գալիս տարեկան շուրջ 30 առևտրական նավ, որի կեսից ավելին պատկանում էր հայերին[22]։ Վոլգայի վրա շոգենավագնացության անցնելուց հետո, 1840-ական թվականների սկզբին, գետն ակոսում էին տասը շոգենավ. դրանցից երկուսը պատկանում էր Աստրախանի հայերից Ուգլևին և Յարալովին։ 1859 թ. հայերին էր պատկանում Վոլգայով նավարկող 32 շոգենավերից 5-ը։ 1860-ական թվականների սկզբին Աստրախանի հայերն ունեին 11 շոգենավ Կասպից ծովում[23]։

Հայերը զգալի դեր էին խաղում Աստրախանի արդյունաբերության և արհեստագործության մեջ։

Այսպես, 1804 թ. Աստրախանի մետաքսագործական 25 ֆաբրիկաներից 23-ը, բամբակագործական 39 ֆաբրիկաներից 36-ը և կաշեգործական 15 ֆաբրիկաներից 6-ը պատկանում էին հայերին[24]։

---

22 ԱՄՊԱ, ֆ. 1, ց. 1, թղթ. 1, (87), գ. 5, քք. 12—17։

23 «Статистический временник Российской империи», вып. II, СПб., 1872, стр. 258—274.

24 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 17, թղթ. 1, գ. 45, քք. 4—11։

XIX դարի 40-ական թվականներին Աստրախանի արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թվի նվազման հետ միասին նվազում էր նաև հայերին պատկանող ձեռնարկությունների թիվը։

1849 թ. արդեն Աստրախանում չկար ոչ մի մետաքսագործական ֆաբրիկա։ Մնացել էր միայն վեց մանածագործական ֆաբրիկա (ընդամենը 25 բանվոր), ընդ որում դրանցից երկուսն էր պատկանում հայերին։

Բացի դրանից, հայերին էին պատկանում չորս կաշեգործական ֆաբրիկայից երեքը, աղյուսի երկու գործարան, օճառի երկու գործարան և մեկ ծխախոտի ֆաբրիկա։ 1849 թ., Աստրախանի 29 արդյունաբերական ձեռնարկություններից 13-ը հայերինն էր[25]։

Հայ ազգաբնակչության զգալի մասն էին կազմում մանածագործական ֆաբրիկաներում աշխատող վարձու բանվորները։

XIX դարի առաջին կեսին Աստրախանի հայաբնակ գաղութը դեռևս պահպանում էր իր առանձնահատուկ իրավական գոյավիճակը։ Աստրախանի հայ բնակչությունը արտոնություն ուներ առևտրական գործունեության բնագավառում, հարկատվության և դատա-վարչական առանձին հարցերում։

Հայերի առանձնահատուկ գոյավիճակի իրավական հիմքն էր 1799 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակված Պավել I-ի հրովարտակը, որը հաստատում և ձևակերպում էր այն առանձնաշնորհումները, որ ստացել էին Ռուսաստանում բնակվող հայերը XVII—XVIII դարերում։ Հրովարտակը Աստրախանի, Ղզլարի և Մոզդոկի հայերին թույլատրում էր ժամանակավոր ռուսահպատակություն ընդունել։ Նրանց արգելվում էր հարկադրաբար ռուսական վաճառականների գիլդիաներում և քաղքենիական դասում գրանցվելը (այդ դասերին պատկանելը կապված էր բազում բնամթերային և դրամական պարտուլթներ կրելու հետ)։ Հիշյալ քաղաքների հայերին թույլատրվում էր Ռուսաստանում այլևայլ ապրանքների անմաքս առևտուր, սակայն կանոնադրությամբ սահմանված մաքս վճարելով, ինչպես նաև ազատորեն զբաղվել ցանկացած արդյունագործությամբ ու արհեստով։

Հրովարտակի համաձայն Աստրախանում, Ղզլարում և Մոզդոկում վերականգնվեցին հայկական դատարանները։ Դատարանը բաղկացած էր յուրաքանչյուր տարի վերընտրվող երեք անդամներից և գրասենյակի աշխատողներից։ Դրանից զատ, հայերը ամեն տարի ընտրում էին երեք հասարակական հոգաբարձուներ, որոնք վերահսկում էին քնակչությունից հարկերի գանձումը, մի քանի ավագներ, որոնք նույնպես միջնորդի դեր էին կատարում վարչական հարցեր լուծելիս, ինչպես նաև գնահատող անձ (դույքը ցուցակագրելու համար), բնակարանային հանձնաժողովի գրագիր և պատգամավոր։

Սակայն հայերի արտոնյալ գոյավիճակը այս ամենով հանդերձ նրանց չէր ազատում մի շարք պարտուլթներից։ Դրանցից առավել խոշորը զեմստվոյի պարտուլթն էր, այսինքն՝ պետական հարկը, որը հավաքվում էր քաղաքի սպասարկման կարիքների համար (փոստի պարտուլթներ, փողոցների մաքրում և այլն)։

25 Նույն տեղում, ֆ. 18, ց. 2, գ. 916, թթ. 1—8։

Աստրախանի հայերը պարտավոր էին նաև մի քանի հարյուր զինվորի համար երեք զորանոց պահել, որոնք պետք է լիովին ապահովված լինեին վառելիքով և տնտեսական զանազան պիտույքներով։

Տնաշխերը կրում էին նաև հատուկ «հողային» պարտույթ, իսկ կրպակների տերերը՝ «կրպակային» պարտույթ, որը հասնում էր 25-ից մինչև 100 ռուբլու (ընդ որում այդ պարտույթը կրում էին միայն հայերը)։

Ռուսական վաճառականությունը հաճախ էր հանդես գալիս Աստրախանի հայերի և արևելյան երկրներից գաղթած այլ եկվորների արտոնյալ գոյավիճակի դեմ։ Հայերը հարկադրված էին համառ պայքար մղել իրենց իրավունքները պահպանելու համար։ XIX դարի առաջին կեսին ցարական կառավարությունը հրապարակեց հայերի արտոնությունները սահմանափակող մի շարք հրամանագրեր, որոնց հետևանքով Աստրախանի հայերի առևտրական և արդյունաբերական գործունեությունը նկատելիորեն նվազեց։ Այս հանգամանքը առաջացրեց Աստրախանի հայերի դժգոհությունը։ Աստրախանի հայերի յոթ ներկայացուցիչներ Պետերբուրգ խնդրագիր ուղարկեցին, բացատրելով, որ նոր պայմաններն իրենց համար անընդունելի են ու քայքայիչ։ Խնդրանքի հեղինակներն ընդգծում էին նաև, որ արտոնությունների վերացումը բացասաբար է անդրադառնում արտասահմանի (Պարսկաստանի) շատ հայերի Ռուսաստան տեղափոխվելու ցանկության վրա։

Տնտեսական կյանքում 1807 թ. ոչ ձեռնտու մանիֆեստի առաջ բերած դժվարություններն ընդունում էին նաև Աստրախանի նահանգական իշխանությունները։ Աստրախանի նահանգապետի կարծիքը վավերացնելու համար ներկայացվեց անձամբ ցարին, որը 1808 թ. նոյեմբերին հրաման արձակեց հայերի գրանցումը գիլդիաներում անորոշ ժամանակով հետաձգելու մասին։ Հավանաբար, Ռուսաստանի կառավարող շրջանները համոզվեցին, որ անհրաժեշտ է պահպանել հայերի արտոնությունները՝ հօգուտ Կասպիական և Աստրախանի առևտրի ու արդյունաբերության զարգացման։

Այնուամենայնիվ, կառավարող շրջանները չէին հրաժարվում հայերի արտոնյալ գոյավիճակին վերջ տալու մտադրությունից։ 1831 թ. հունիսի 2-ին ցարը վավերացրեց մինիստրների կոմիտեի որոշումը, որի համաձայն 1799 թ. հրովարտակով սահմանված արտոնությունները վերապահվում էին միայն Աստրախանի այն 390 հայերին, ովքեր հաշվի էին առնվել 1795 թ. մարդահամարով։ Արտոնություններից օգտվող հայերի քանակի նման սահմանափակում էր նախատեսված նաև Դզլարի ու Մոզդոկի հայերի համար։ Մյուս բոլոր հայերին առաջարկվեց 6 ամսվա ընթացքում ընդհանուր հիմունքներով ընդունել մշտական հպատակություն և կամ անցնել օտարերկրյա առևտրականների գոյավիճակի։

1831 թ. հուլիսի վերջին Աստրախանի հայերը Պետերբուրգ, Խաչատուր Լազարյանին հղեցին 24 մարդու կողմից ստորագրված մի նամակ, որով խնդրում էին կառավարական շրջաններում պաշտպանել հայերի շահերը։ Երեք ամիս անց հայերը դարձյալ Աստրախանի նահանգային վարչություն հղեցին իրենց կազմած «հանրային վճիռը», որով ապացուցում էին 1831 թ. որոշման անհիմն և անարդարացի լինելը։ Համանման գանգատներ եղան նաև

Ղզլարի բնակիչներից, որոնք վկայակոչում էին այն իրողությունը, որ իրենք հաճախ վնասներ են կրում լեռնականների ասպատակություններից։

Համառուսական դասերում հայերի բոնի գրանցումը նպաստեց նաև Ասրախանի տնտեսական նշանակության հետագա թուլացմանը։

Որոշվեց 1799 թ. արտոնություններից օգտվող հայերին պետական տուրքերը վճարելու խնդրում համառուսական դասերին հավասարեցնել ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար։ 1836 թ. մայիսի 21-ի ցարական հրամանագրով նախատեսվում էր Աստրախանի, Խերսոնի, Տավրիկյան և Եկատերինոսլավյան նահանգների, ինչպես նաև Կովկասյան մարզի հայերից այդ տուրքերը գանձել կիսով չափ, տասը տարվա ընթացքում, սկսած 1837 թ. ապրիլի 1-ից։

1831 թ. որոշման կենսագործման ընթացքում հարց հարուցվեց նաև Աստրախանի հայկական դատարանի վերացման մասին։ Այս դատարանը Աստրախանում գոյություն ուներ 1747 թ. և զբաղվում էր հայերի միջև ծագած հայցային և դատավեճային գործերի քննությամբ՝ Աստրախանի հայերի XVIII դարի կեսերին կազմված «Դատաստանագրքում» արձանագրված կանոնների հիման վրա։ Հայկական դատարանն ուներ նաև վարչական հետևյալ պարտականությունները. զեմստվոյի պարտուլթների գանձումը, շրային և ցամաքային հաղորդակցման միջոցներից օգտվելու համար վերցվող հարկի գանձումը, հայ բնակչությանը մարդահամարի ենթարկելը, այլ քաղաքներ և արտասահման մեկնելու համար հայերին անձնագիր տալը, հայկական դատարանի գրասենյակի պահպանման գումարի (տարեկան 3.618 ռ.) բաշխումն ու գանձումը և այլն։

Աստրախանի հայերը վճռականորեն առարկում էին հայկական դատարանը վերացնելու մտադրության դեմ, պատճառաբանելով, որ հայերը չգիտեն ոչ ռուսերեն և ոչ էլ ռուսական օրենսդրություն։ Մի քանի տարի համառորեն պայքարելուց հետո հայերին հաջողվեց հիմնովին պահպանել իրենց ազգային դատավարչական մարմինը։ 1837 թ. հունվարի 26-ի Սենատի հրամանագիրը վավերացնում էր հայկական դատարանի գոյությունն իր նախկին լիազորություններով հանդերձ։

Սակայն, չնայած դրան, տեղական իշխանությունները վերստին դատարանը վերակազմելու հարց հարուցեցին, վկայակոչելով հայկական դատարանի գործունեության մեջ եղած թերություններն ու զանցառությունները։

Ի պատասխան դրան, հայերը 1837 թ. վերջին կազմեցին մի նոր «հանրային վճիռ», որով հերքում էին հայկական դատարանի գործունեության մեջ եղած թերությունները և խնդրում հայկական դատարանը թողնել անփոփոխ։ «Վճիռը» ստորագրել էր 197 մարդ։

Նահանգապետը և կառավարության անդամները, չհամաձայնելով հայերի պատճառաբանությունների հետ, պետական խորհուրդ ներկայացրին իրենց եզրահանգումը։

1840 թ. մարտի 27-ին հրապարակվեց Սենատի հրամանագիրը հայկական դատարանների գործունեությունը Աստրախանում, Ղզլարում և Մոզդոկում դադարեցնելու մասին։

Չնայած դատարանի վերացմանը, հայերը տակավին շարունակում էին պահպանել իրենց միասնությունը, անվանելով իրենց «Աստրախանի հայ համայնք»։

Աստրախանի հայերը պահպանեցին իրենց համայնքի ժողովներ գումարելու իրավունքը, որտեղ լուծվում էին ներքին հարցեր, անցկացնում բանավոր դատարանի անդամների և ավագների ընտրություններ, որոնք վարչական հարցեր լուծելիս քաղաքային իշխանությունների առջև միջնորդների դեր էին կատարում։ Քննարկվում էին նաև բարեգործական հարցեր, անցկացվում հոգաբարձուների ընտրություններ, լսվում նրանց հաշվետվությունը և այլն։

Հայկական ինքնավարության այդ մնացուկները պահպանվեցին 1870 թ. քաղաքային ռեֆորմից հետո ևս։

XIX դարի առաջին կեսին նկատելիորեն աշխուժ էր Աստրախանի հայերի մշակութային կյանքը։ 1804 թ. Աստրախանի վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը հիմնադրեց, իսկ 1810 թ. պաշտոնապես բացեց հայկական հոդաստյան Աղաբաբյան ուսումնարանը, որը գոյատևեց հարյուր տարուց ավելի։ Առաջին իսկ տարում ուսումնարանն ուներ 73 սան։ Աշակերտների թիվը հետագա տարիներին գրեթե անփոփոխ էր մնում։ 1851 թ. հիմնադրվեց նաև հայկական ծխական դպրոց, որն ուներ 22 սան։ XIX դարի կեսերին քաղաքում կար հայկական 7 մասնավոր դպրոց, որոնցից յուրաքանչյուրն ուներ 15—20 սան։

Հրամայական պահանջ դարձավ լրագրի երևան գալը։ 1813 թ. լույս տեսավ Աստրախանի առաջին լրագիրը՝ «Վոստոչնիե իզվեստիան»։ Նրա հրատարակիչ Իոսիֆ ֆոն Վեյսքհոպֆենը սկզբից ևեթ նախատեսում էր թերթը հրատարակել նաև հայերեն, ելնելով այն փաստից, որ հայերը մեծ դեր են խաղում քաղաքի տնտեսական և հասարակական կյանքում։

Վեյսքհոպֆենը. որոշից ունևոր հայերի օգնությամբ ստեղծել նոր հայկական տպարան։ Այդ գործում նա մեծ օգնություն ստացավ Աստրախանի հայկական կաթոլիկ ուսումնարանի տնօրեն Կղեմես Շահվերդյանից։

1816 թ. հունվարի 5-ին լույս տեսավ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթի առաջին համարը։ Պատմության մեջ դա հայկական յոթերորդ, իսկ ռուսահայ առաջին պարբերականն էր։ Թերթը քաղվածքներ էր հրապարակում ռուսական և եվրոպական թերթերից, ասիական ժողովուրդների վիճակագրական, ազդագրական և պատմական նկարագրություններ, տեղեկություններ Աստրախանի մերձկասպյան երկրների հետ ունեցած առևտրի, Կասպից ծովի նավագնացության, դրամական արժեքների և այլ հարցերի մասին։ Լույս է տեսել շաբաթաթերթի 27 համար։ 1816 թ. հուլիսի սկզբին, հրատարակիչ Վեյսքհոպֆենի մահից հետո, «Արևելյան ծանուցմունք» թերթը դադարեց գոյություն ունենալուց[26]։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ։ XIX դարի առաջին կեսին զգալի չափով մե-

---

26 В. А. Хачатурян, Из истории армянской печати в России (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1967, № 1, էջ 105)։

ծանում են Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, ինչպես ընդհանուր թվով, այնպես էլ բնակչության քանակությամբ։

Երկրամասի հայ գաղթավայրերից ամենախոշորներն էին Ղզլարն ու Մոզդոկը։ 1816 թ. Ղզլարում ապրում էր 4392 հայ[27]։

Ղզլարի հայերի մետաքսագործության, խաղողագործության, գինեգործության և այգեգործության արտադրանքը հայտնի էր ինչպես Կովկասում, այնպես էլ Ռուսաստանում։ Ղզլարում կար հատուկ «Հայկական շուկա», որտեղ ապրանքներ էին բերվում Ռուսաստանի կենտրոնական նահանգներից, Իրանից, Վրաստանից, Դաղստանից, Օսեթիայից և ուրիշ շրջաններից։ Ղզլարի վաճառականները Օսեթիա և Ջեչնիա էին տանում կտավ, չիթ, մետաքսյա գործվածքներ, երկաթ, աղ, պղնձյա ամաններ և այլն։ XIX դարի կեսերին Ղզլարն ուներ 11 հազար բնակիչ, որոնց կեսից ավելին հայերն էին[28]։ Սակայն XIX դարի կեսից Ղզլարի տնտեսական նշանակությունն աստիճանաբար ընկնում է։ Դա կապված էր այն բանի հետ, որ քաղաքը դուրս մնաց հաղորդակցության նոր ուղիներից (որոնք անցնում էին Կասպյան ծովով կամ Ռոստով—Վլադիկավկազ ուղղությամբ)։

Մոզդոկը XIX դարի առաջին քառորդում ապրել է տնտեսական զգալի զարգացում։ Հայ բնակչությունը խոշոր դեր էր խաղում քաղաքի տնտեսական վերելքի գործում[29]։ Անբարենպաստ պայմանների պատճառով Մոզդոկի հայերը գերազանցապես զբաղվում էին արհեստներով և առևտրով։ Հայ վաճառականները իրենց ապրանքները վաճառում էին Աստրախանում, Նիժնի Նովգորոդում, Խարկովում և Ռուսաստանի այլ քաղաքներում։ XIX դարում Կովկասում հայտնի էր Մոզդոկի տոնավաճառը։

Դերբենտում հայ գաղութի գոյությունը հայտնի է միջին դարերից։ XVIII դարի վերջին այդտեղ հաշվվում էր հարյուր հայկական ընտանիք[30]։

1796 թ. Ջուբովի հրամանատարությամբ ռուս զորքերի դեպի Դերբենտ արշավանքից հետո սկսվեց հայերի նոր գաղթը Դաղստանից, Ադրբեջանից և Ղարաբաղից։ Գաղթողներին ռուսական կառավարության որոշմամբ հատկացվել է 15 հազար դեսյատին հող[31]։

Գյուղական բնակչության մեծ մասը հիմնավորվեց Թերեքի ավազանում, որտեղ ստեղծվեցին հայկական գյուղեր՝ Ղարղալա (360 մարդ), Դերբենդսկոյե (մոտ 200 մարդ), Մալախալինսկոյե (89 ընտանիք), Կասաևա Յամա (105 ընտանիք)[32]։ 1852 թ. Կասաևա Յաման, որտեղ այդ ժամանակ ապրել է արդեն 1566 բնակիչ, վերանվանվել է Էդեսիա[33]։ Հայկական գյուղերի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ, խաղողագործությամբ, մետաքսագործությամբ։

---

27 «Собрание актов...», т. I, стр. 104.

28 *Н. Г. Волкова,* О рассеянии армян на Северном Кавказе до начала XX века. *ՊՐՀ, 1966, № 3, էջ 261։*

29 *В. И. Ларина, И. Х. Бежанов.* Город Моздок, Орджоникидзе, 1963, стр. 9.

30 *П. Г. Бутков,* Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг. ч. II, стр. 583.

31 *Նույն տեղում, էջ 424—425։*

32 АКАК, т. IV, ч. II, Тифлис, 1876, стр. 592, 593, 602.

33 *Н. Г. Волкова, Նշվ. աշխ., էջ 261։*

XIX դարի սկզբներից հայաբնակ գաղութներ ստեղծվում են նաև Հյուսիսային Կովկասի ռուսական վարչական նոր կենտրոններում՝ Ստավրոպոլում, Դեորգիևսկում և Եկատերինոդարում։

Ղզլարի և Մոզդոկի հայերը սկսած XVIII դարից ունեին իրենց սեփական դատարանները, որոնց կառուցվածքը, իրավասությունը և գործավարության սկզբունքները նույնն էին, ինչ որ Աստրախանի հայերի դատավարչական օրգաններինը։

Դաղստանից, Ադրբեջանից և Ղարաբաղից գաղթած և Հյուսիսային Կովկասում բնակեցված հայերին Պավել I-ի 1799 թ. հրովարտակով շնորհվեցին որոշ արտոնություններ։ Սակայն XIX դարի առաջին կեսերից սկսած ինչպես Աստրախանում և Նախիջևանում, այդպես էլ Հյուսիսային Կովկասի հայաբնակ գաղութներում տեղի էր ունենում հայերին նախկինում տրված արտոնությունների աստիճանական սահմանափակում, որը ի վերջո հանգեցրեց նրանց իրավական առանձնահատուկ գոյավիճակի վերացմանը։

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼ։ Գրիգորիոպոլի հայ գաղութի հիմնադրումը կապված էր 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ։ 1791 թ. Յասիի հաշտության պայմանագիրը կնքելուց հետո, թուրքական տիրապետության տակ գտնվող Մոլդավիայից ու Բեսարաբիայից գաղթած շուրջ 4000 հայեր ժամանակավորապես տեղավորվեցին Դուբասար քաղաքում, իսկ շատ չանցած Դնեստրը գետի ավազանում նրանց համար հիմնադրվեցին Գրիգորիոպոլ քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Իոսիֆովկա և Վասիլևկա հայաբնակ գյուղերը։ Գրիգորիոպոլի հանդիսավոր հիմնադրումը տեղի ունեցավ 1792 թ. հուլիսի 25-ին։

1794 թ. հոկտեմբերի 12-ին Եկատերինա II կայսրուհին հրապարակեց հատուկ հրամանագիր, որով մի շարք արտոնություններ շնորհվեցին Գրիգորիոպոլի հայաբնակ գաղութին[34]։ Այդ հրամանագրով Գրիգորիոպոլը մտավ Եկատերինոսլավի նահանգապետության մեջ՝ ստանալով իր տարբերանշանը՝ կնիքն ու քաղաքային մագիստրատի դասային-ներկայացուցչական հաստիքները։ Ռուսական կառավարությունը հաստատեց հայաբնակ քաղաքի վարկավորումը՝ մի շարք արտոնություններով։ 325 բնակելի տների, մագիստրատի և եկեղեցական շինությունների կառուցման համար բաց թողնվեց շուրջ 103 հազար ռուբլի։ Վարկի մնացած մասը, շուրջ 87 հազար ռուբլի, որը բաց էր թողել կառավարությունը այլ կարիքների համար, պետք է վերադարձվեր գանձարան՝ 10-ամյա արտոնությունների ժամկետի ավարտից հետո, հետագա 10 տարում։

Գրիգորիոպոլի մագիստրատը սկսեց գործել 1794 թ. դեկտեմբերի 18-ից։ Մագիստրատն ուներ դատական և գործադիր իշխանության իրավունքներ։ Մանր գործերի տնօրինման և լուծման համար մագիստրատին կից հիմնադրվեց դատարան։ Քաղաքի բնակիչներին տրվեց ազատ առևտրի իրավունք. նրանք ազատվեցին բոլոր տեսակի զինվորական պարտություններից[35]։

---

34 Տե՛ս «Собрание актов»..., ч. I, стр. 190—193.

35 Մոլդավական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1317, ց. 1, գ. 1, թ. 24—33։

Հայկական մագիստրատի իրավասության տակ էր նաև Գրիգորիոպոլի այլազգի բնակչությունը։ Ռուս-ուկրաինական, հետագայում նաև մոլդավական բնակչությունը քաղաքում ապրում էր պայմանագրային հիմունքներով, որ նրանք կնքում էին հայկական մագիստրատի հետ։ Այդ պայմանագրերով կարգավորվում էին հայերի և գաղութում ապրող մյուս ազգերի վարչական ու իրավական հարաբերությունները։

Գուբերնի առաջին քաղաքագլուխ ընտրվեց Նոր Նախիջևանից Գրիգորիոպոլ փոխադրված կապիտան Պողոս Թումանովը։ 1795 թ. իր պարտականությունների կատարմանն անցավ նաև «Կառուցողական էքսպեդիցիան»։ Շինարարական աշխատանքները քաղաքում սկսվել էին տակավին 1792 թ. և դրանք հիմնականում ավարտվեցին XIX դարի սկզբներին[36]։

Իր հիմնադրումից անմիջապես հետո Գրիգորիոպոլը հայտնի դարձավ իբրև առևտրական քաղաք։ Խոշոր վաճառականությունը, օգտվելով ռուսական կառավարության կողմից 1796 թ. տրամադրված դրամական փոխատվությունից, ստեղծեց 95 հոգուց բաղկացած առևտրա-վաճառականական ընկերություն, որն, ըստ էության, Ռուսաստանին նոր միացված մարզի առաջին առևտրական կազմակերպությունն էր։ Նա էլ հենց առաջիններից մեկն էր, որ Ռուսաստանի հարավում հիմք դրեց արևելյան առևտրին։

Քաղաքի ներսում առևտրի ընդլայնման նպատակով խոշոր առևտրականներն իրենց միջոցներով կառուցեցին կրպակներ և նահանգային իշխանությունների առջև հարց դրեցին Գրիգորիոպոլում տոնավաճառներ կազմակերպելու մասին։

Խոշոր վաճառականների այս գործողությունները առաջ բերեցին մանր առևտրականների և արհեստավորների դժգոհությունը, որոնք վերաբնակվելով Ռուսաստանում՝ հույս ունեին դուրս գալ տնտեսական գործունեության առավել լայն ասպարեզ։ Այդ դժգոհությունը սրեց հակասությունը մանր ու խոշոր առևտրականների միջև և 1796—1802 թթ. հայաբնակ գաղութի ներքնախավերի բացահայտ ելույթների պատճառ դարձավ։ Սոցիալական շերտավորումը, որը նշմարվում էր Գրիգորիոպոլում հաստատվելուց անմիջապես հետո, հանգեցրեց նրան, որ գաղթավայրի հիմնադրման սկզբից ևեթ սկսեց ձևավորվել առևտրա-արդյունաբերական մի խավ, որը հայ բնակչության հիմնական զանգվածներից անջրպետվում էր ինչպես իր կուտակած հարստությամբ, այնպես էլ գաղութում ունեցած դիրքով։

Գրիգորիոպոլում առևտրա-արդյունաբերական շերտերի զարգացման ու նրանց՝ իբրև որոշակիորեն առանձնացված խավի երևան գալուն նպաստեցին մի շարք գործոններ։ Ամենաէականն այն էր, որ Ռուսաստանը հայ վաճառականության առջև բացել էր ազատ ձեռներեցության ասպարեզ։ Եթե սկզբում Գրիգորիոպոլի խոշոր վաճառականությունը բավարարվում էր միայն արևելյան (թուրքական, մոլդավական, վալաքյան) շուկաներով, ապա հետագայում նա իր հայացքն ուղղեց դեպի ռուսական շուկաները։ 1839 թ. Նահանգային օրացույցում նշվում է, որ Գրիգորիոպոլի առևտրականները

36 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 22, թ. 198—201։

վաճառում են «կարմիր ապրանք» (բամբակյա, բրդյա և մետաքսյա կտորեղեն), որն ստանում են Մոսկվայից և Խարկովից։

Բացի «կարմիր ապրանք»-ից, Գրիգորիոպոլի խոշոր առևտրականները վաճառում էին նաև հացահատիկ։ Սակայն հացահատիկի առևտուրը կենտրոնացած էր միայն այն սակավաթիվ առևտրականների և կալվածատերերի ձեռքում, որոնք հող ունեին կամ այն վարձակալում էին և անմիջապես իրենք էին զբաղվում հացահատիկի արտադրությամբ։ Այսպիսով, Ռուսաստանի հարավում առևտրական հողագործության զարգացման պրոցեսը իր մեջ ներգրավեց նաև Գրիգորիոպոլի հայկական գաղութը։ Գաղութի վաճառականության կորիզը ներքին առևտրով զբաղվող խոշոր առևտրականներն էին։ Մանր առևտրականների գործունեությունը գլխավորապես կապված էր Մոլդավայի և Վալաքիայի հետ։ Ապրանքների անվանացանկում մտնում էին՝ մոլդավական պատրաստի հագուստ, թուրքական ծխախոտ, գինի, ձուկ, ալյուր և այլն։

Հետագայում հայ առևտրականները սկսեցին շրջանառության մեջ դնել ինչպես զուտ ռուսական արտադրության ապրանքներ, այնպես էլ Ռուսաստանի հարավային երկրամասում թողարկվող արտադրանքներ։

Առևտրի զարգացումը և կապը ռուսական շուկաների հետ իրենց հերթին զարկ էին տալիս տեղական արտադրության զարգացմանը։ Օրինակ, գրիգորիոպոլցիների կապը Ռուսաստանի մանածագործական կենտրոնների հետ հասցրեց այն բանին, որ հայկական գաղութում հիմք դրվեց տեքստիլ արդյունաբերության։ Կամ, օգտվելով Նովոռոսիայի նահանգում սեկի (այծի բարձրորակ կաշի) արտադրության համար ստեղծված բարենպաստ պայմաններից, Գրիգորիոպոլում ընդլայնվեց սեկի արտադրությունը։ Եթե իր գոյության առաջին տարիներին Գրիգորիոպոլն ուներ սեկի ընդամենը մեկ գործարան, ապա XIX դարի 70-ական թվականներին դրանց թիվը հասնում էր վեցի[37]։

Գրիգորիոպոլի կաշեգործները արտադրանքի ծավալով Խերսոնի նահանգում գրավում էին առաջնակարգ տեղերից մեկը։

Անասնապահական ընդարձակ բազայի առկայությունը Գրիգորիոպոլի հայերին հնարավորություն ընձեռեց ոչ միայն զբաղվելու կաշվի արտադրությամբ ու վաճառքով, այլև անասունների առևտրով։

Գրիգորիոպոլի անասնավաճառները (նրանք վաճառում էին հիմնականում եղներ և ձիեր, իրենց տրամադրության տակ ունեին նույնիսկ ձիաբուծական գործարան), իրենց ապրանքն ուղարկում էին այլ շուկաներ։ Հայ վաճառականների համար խոշոր եղջերավոր անասուններ վաճառելու ամենահարմար շուկան Գալիցիան էր։

Հայ վաճառականները, որպես կանոն, իրենց ապրանքը ձեռք էին բերում վերավաճառելու համար տեղական տոնավաճառներում և շուկաներում, որտեղ խոշոր և մանր եղջերավոր անասունների լայն ընտրություն կար։ Հատկապես հռչակված էին հայաբնակ Վասիլևկա գյուղի (Արղության-Երկայնա-

37 Տե՛ս «Труды Херсонского губернского статистического комитета», кн. 1, ч. 1, էջ 22։

բազուկ իշխանների կալվածը) տոնավաճառները, որոնք տեղի էին ունենում երկու շաբաթը մեկ՝ կիրակի օրը։ Վասիլևկայի շուկաներում վաճառքի հիմնական ապրանքներն էին՝ ձիեր, խոշոր եղջերավոր անասուններ և ոչխարներ։

Միաժամանակ Գրիգորիոպոլի անասնավաճառները տոնավաճառներում և շուկաներում գնում էին անասունների մեծ խմբեր՝ սպանդի համար։ Մորթված անասունը մշակվում էր Գրիգորիոպոլի ճարպագործարանում։ Բացի ճարպագործարանից, Գրիգորիոպոլում կային նաև մոմի գործարաններ։ XIX դարի կեսերին Գրիգորիոպոլում ճարպի ամենամյա վաճառքից ստացած եկամուտը կազմում էր 13.984 ռուբլի, իսկ մոմի գործարանինը՝ 7.100 ռուբլի։ Գրիգորիոպոլի գործարաններում ստացվող ճարպն ու մոմը, հարավային երկրամասի ճարպահալման գործարանների արտադրանքի հետ միասին, Օդեսայի վրայով արտահանվում էին արտասահման, մասնավորապես Անգլիա։

XIX դարի երկրորդ քառորդից Գրիգորիոպոլի տնտեսական կյանքը ըսկըսեց անկում ապրել։ Դրան նպաստեց Ռուսաստանի ֆինանսների մինիստր Կանկրինի գիլդիական ռեֆորմների կենսագործումը։ Այդ ռեֆորմը հայերին զրկեց անմաքս առևտուր անելու իրավունքից։ Գաղթավայրի տնտեսական անկման մյուս հիմնական պատճառն այն էր, որ բուռն կերպով աճող Օդեսան ու Քիշնյովը իրենց էին ձգում Գրիգորիոպոլի խոշոր առևտրականներին ու արդյունաբերողներին։ Օդեսան իր դիրքով նրանց առջև բացում էր գործունեության առավել լայն ասպարեզ, քան հայրենի քաղաքը։ Այդ է պատճառը, որ գրիգորիոպոլցի հայերից շատերը տներ էին գնում Օդեսայում և իրենց գործունեությունը շարունակում այնտեղ, թեև կոչվում էին Գրիգորիոպոլի քաղաքացիներ։

Ինչպես Ռուսաստանի քաղաքների մեծ մասում, այնպես էլ Գրիգորիոպոլում այն ժամանակ առևտրական գործունեությունը գերիշխող էր արդյունաբերականի հանդեպ։ Վերջինս գերազանցապես հանդես էր գալիս մինչկապիտալիստական շրջանի մանր ձեռնարկությունների ձևով։ Բայց եթե ռուսական քաղաքների մեծ մասում դրա հետ էր կապված հասարակական կյանքի հետամնացությունը, սպա պատկերը հայ գաղութում նկատելիորեն այլ էր։ Այստեղ հասարակական կյանքի շատ թե քիչ աշխուժություն էր նկատվում։

Սկսած XIX դարի առաջին քառորդից նկատելիորեն աշխուժանում է Գրիգորիոպոլի հասարակական կյանքը, որի զարգացման բնորոշ առանձնահատկությունը նրա սերտ կապն էր մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ։ Այդ էր պատճառը, որ հայ ժողովրդին հուզող ու նրա ազգային խնդիրները շոշափող անց ու դարձերը լայն արձագանք էին գտնում նաև Գրիգորիոպոլի գաղութում։ XIX դարի սկզբին, ինչպես Ռուսաստանի հայկական մյուս գաղութները, այնպես էլ Գրիգորիոպոլը, ներգրավվել էր այն պայքարի ոլորտը, որ էջմիածնի աթոռի համար մղվում էր երկու հավակնորդների՝ արքեպիսկոպոսներ Դավթի և Դանիելի միջև։ Գրիգորիոպոլի հայ հասարակությունը կրքոտ հետաքրքրություն հանդես բերեց դեպի ռուս-պարսկական (1826—1828) և ռուս-թուրքական (1828—1829) պատերազմները, նրանց ելքի հետ կապելով մայր հայրենիքի ազատագրությունը թուրք-պարսկական լծից։

Դրիգորիոպոլի հայաբնակ գաղութի XIX դարի սկզբի մշակութային կյանքի նշանավոր իրադարձությունը 1806 թ. Մանվել Կյումուշխանեցու ջանքերով բացված ծխական դպրոցն էր։ Նա հայ երեխաներին տալիս էր նախնական գիտելիքներ մայրենի լեզվից, թվաբանությունից և այլն։ Դպրոցն ավարտած առանձին աշակերտներ իրենց ուսումը շարունակում էին Լազարյան Ճեմարանում։

Ռուսաստանի հայկական իսկական դպրոցներից մեկի հիմնադիրն էր հայտնի հասարակական գործիչ Դավիթ Շահինյանցը, որի նախաձեռնությամբ 1868 թ. բացվեց «Սրբուհյան դպրոցը»։

XIX դարի երկրորդ քառորդից Դրիգորիոպոլի բնակչության կազմում ըստ կրսում է աճել մոլդավացիների և ռուսների թիվը։ Քաղաքում սկսում է գործել ռուսական դպրոց, կառուցվում է ուղղափառ եկեղեցի։

40-ական թվականներին սենատի որոշմամբ թույլ է տրվում մոլդավացիներին և ռուսներին ընտրելու իրենց ներկայացուցիչները մագիստրատում և քաղաքային դումայում։ XIX դարի 60—70-ական թվականների բուրժուական ռեֆորմներից հետո անհետացան Դրիգորիոպոլի հայկական ինքնավարության վերջին մնացորդները։ Սոցիալական խոր փոփոխությունները և հասարակության դասակարգային շերտավորումը, ինչպես նաև գաղութի հայ առևտրա-արդյունաբերական շրջանների մերձեցումը ռուս խոշոր առևտրական դասի հետ, փաստորեն նպաստեցին ցարիզմի կողմից անցկացվող այն քաղաքականությանը, որն ուղղված էր Դրիգորիոպոլի հայկական ինքնավարության վերացմանը։ Սակայն հայերին հաջողվեց քաղաքում պահպանել իրենց համայնքը, ստեղծել հոգաբարձություններ, որոնք XX դարի սկզբին, չնայած իրենց եկեղեցական բնույթին, հիմնականում ծառայում էին աշխարհիկ նպատակների։

ՂՐԻՄ։ 1778 թ. արտագաղթեցմամբ հանդչած Ղրիմի հայկական գաղութը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին հայերի՝ դեպի Ղրիմ կատարած տեղաշարժերի շնորհիվ կրկին վերակենդանանում է։ Այս ուղղությամբ առաջին խոշոր իրադարձությունը հայ կաթոլիկ համայնքի վերադարձն էր Եկատերինոսլավից Ղարասուբազար, որ տեղի ունեցավ 1790 թ.։ Վերադարձածների թիվը հասնում էր շուրջ 1000 մարդու, որոնց մեջ կային նաև լուսավորչական հայեր, ինչպես և 123 հույներ[38]։ Հայ կաթոլիկ համայնքի համար Ղրիմում վերստին պահպանվեցին 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով առանձնաշնորհված արտոնությունները. համայնքի անդամները դասվում էին պետական բնակիչների շարքը, տասը տարի ժամկետով ազատվում պետական հարկերից ու տուրքերից, կարող էին զբաղվել արհեստներով, առևտրով, գյուղատնտեսությամբ, հիմնել գործարաններ ու ֆաբրիկաներ, ներքին գործերը վարելու համար պահել դատարան[39]։

XVIII դարի 90-ական թվականներին ղրիմահայ գաղութի կազմակերպմանը սատարում է ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը, որն այդ

38 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1286, ց. 1, գ. 46, թ. 103—104։

39 Նույն տեղում, ֆ. 1152, գ. 129, թ. 17—18։

նպատակով 1787 թ. ձեռնարկում է ուղևորություն դեպի Ղրիմ։ Ղրիմահայ անշքացած բնակավայրերը և հուշարձանները ցնցող տպավորություն են գործում նրա վրա. «Հույժ ցավալի էր մեզ համար տեսնել մեր քաղաքների, եկեղեցիների ու վանքերի ավերակները.— գրում էր նա,— լի տրտմությամբ այնտեղից (Ղրիմից— խմբ.) վերադարձանք Նախիջևան, նոյեմբերի 14-ին»[40]։ Ռուսական կառավարության կենտրոնական ու նահանգական իշխանությունների զանազան ատյաններին Հ. Արղությանը ներկայացնում է Ղրիմի մի շարք վայրերը, մասնավորապես Թեոդոսիա և Հին Ղրիմ կիսավեր քաղաքները հայերին տրամադրելու և Թուրքիայից դեպի Ղրիմ հայերի տեղափոխությունները խրախուսելու առաջարկություններ ու ծրագրեր, որոնց մի մասը, փոքր ուշացումով, իրականացվում է[41]։

1799 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակվեց կայսերական հրովարտակ, որը առանձնաշնորհումների հարցում կրկնելով հայերին նախկինում տրված արտոնությունները, նրանց թույլ էր տալիս բնակություն հաստատել Թերակղզում։ Հրովարտակը Հին Ղրիմ քաղաքը, 12 հազար դեսյատին հողով, հատկացնում էր հայերին, նրանց արտոնում սեփական ռատուշա (քաղաքապետարան) ունենալու իրավունք, իսկ քաղաքին մերձակա սբ. Խաչ հայկական վանքին էր վերադարձնում նախկին կալվածքները։

Հին Ղրիմ (երբեմնի Սուրխաթ) քաղաքի բնակեցումը հայերով հիմնականում սկսվեց 1806—1808 թթ., երբ այդ գործը ստանձնեց այնտեղ բացված հայկական ռատուշան։ Վերջինիս տվյալներով, 1810 թ. քաղաքն արդեն ուներ 1640 բնակիչ, որոնք կառուցել էին 165 նոր տուն, 4 քարվանսարա, 95 կրպակ, 6 սրճարան և այլն[42], իսկ XIX դարի կեսերին այնտեղ ապրում էր 4000 մարդ, որոնց մեջ այլազգիները նկատելի փոքրամասնություն էին կազմում։

Գաղութի սկզբնավորողներից էին Նոր Նախիջևանից Թերակղզի վերադարձած նախկին ղրիմահայերը։ Սրանց հարցը երկար տարիներ կռվախնձոր էր դարձել Նոր Նախիջևանի մագիստրատի և նահանգական ու տեղական իշխանությունների միջև։ Խնդիրը ձգձգվեց երկու տասնամյակ, մինչև որ 1824 թ. օգոստոսի 31-ին կառավարիչ սենատը փախստականների մի մասին, 236 ընտանիքի, որոնք Նոր Նախիջևանում չունեին տուն ու տեղ և առհասարակ որևէ անշարժ գույք, թույլ տվեց մնալ Ղրիմում[43]։ Մյուս փախստականները պարտավոր էին վերադառնալ Նոր Նախիջևան։ Այսպիսով, Ղրիմում մնում էր ամենաաղքատ դասը, սակայն Նոր Նախիջևանում գույք ունեցող փախստականների հիմնական մասն էլ տարբեր պատրվակներով խուսափեց այնտեղ վերադառնալուց և հաստատվեց Ղրիմում։ Ավելին, հետագայում ևս առանձին ընտանիքներ շարունակում էին Նոր Նախիջևանից տեղափոխվել Ղրիմ։

---

40 «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 14։

41 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1374, ց. 2, գ. 1815, թթ. 21, 22, 89։

42 Ղրիմի մարզային արխիվ, ֆ. 67, ց. 1, գ. 35, թ. 24։

43 Նույն տեղում, գ. 143, թ. 2։

Հայության շարքերը Ղրիմում ստվարանում էին գրիգորիոպոլցիների հաշվին։ 1802 թ. հունվարի 30-ին կառավարիչ սենատին իջեցված բարձրագույն հրամանը, նկատի ունենալով Գրիգորիոպոլի անհարմար դիրքը առևտրի և արհեստագործության զարգացման համար, նրա բնակիչներին թույլ էր տալիս տեղափոխվել Ղրիմ, Նոր Նախիջևան և այլուր։ Այդ նույն թվականին նշանակալից թվով գրիգորիոպոլցիներ բնակություն հաստատեցին Հին Ղրիմում. սրանք այն աղքատ հայ ընտանիքներն էին, որոնք հեռացվել էին Գրիգորիոպոլից՝ նրանց «ազգակիցների միջև խաղաղություն հաստատելու համար»[44]։

Ղրիմահայության գերակշիռ մասը կազմում էին արևմտահայերը, որոնք Ղրիմ էին գաղթում՝ այնտեղ տեսնելով առևտրի, արհեստագործության ու այգեգործության զարգացման լայն հեռանկարներ և լուրջ հույսեր ակնկալելով ռուսական կառավարության հովանավորությունից ու օժանդակությունից։ 1820-ական թվականներին ռուսական իշխանությունների և արևմտահայ կաթոլիկների ներկայացուցիչների միջև նույնիսկ երկարատև պաշտոնական գրագրություն էր վարվում Թուրքիայում ապրող 15—20 հազար ընտանիք հայ կաթոլիկներին Թեոդոսիա տեղափոխելու վերաբերյալ[45]։

Սկսած XVIII դարի վերջերից ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը հայերը պարբերաբար Թուրքիայից գալիս և հաստատվում էին Ղրիմում։ Նրանց մի մասը իր բնակությանը օրինական տեսք էր տալիս և, անցնելով բյուրոկրատական բոլոր ատյանները, ընդունում ռուսահպատակություն, իսկ մյուս մասը, թեև չէր դիմում այդ քայլին և ձևականորեն մնում էր թուրքահպատակ, սակայն ըստ էության Ղրիմի բնակիչ էր, և առհասարակ Թուրքիա գնալու ոչ մի մտադրություն չուներ։

Հայերի դեպի Ղրիմ կատարած տեղափոխումների հետևանքով հայ բնակչության թիվը թերակղզում տասնամյակ առ տասնամյակ մեծանում էր. XIX դարի 40-ական թվականների կեսերին այն հավասար էր 5400-ի[46], 60-ական թվականների վերջերին՝ 7000-ի[47]։ Այս թվաքանակի մեջ չէին մրտնում հարյուրավոր ղրիմահայ ընտանիքներ, որոնք ձևականորեն ռուսահպատակություն դեռ չէին ընդունել։ Հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Հին Ղրիմում, Ղարասուբազարում, Սիմֆերոպոլում, Եվպատորիայում, Արմյանսկի Բազարում, Թեոդոսիայում, Ցալթայում, Կերչում և բազմաթիվ գյուղատիպ վայրերում։

Վարչա-կառավարման տեսակետից գաղութը լիովին մտնում էր նահանգական և տեղական իշխանությունների իրավասության տակ։ Դրան զուգընթաց 1779 և 1799 թվականների հրովարտակների արտոնություններից օգտվող Հին Ղրիմի և Ղարասուբազարի հայ համայնքները գտնվում էին որոշակի ինքնավար վիճակում. Հին Ղրիմում 1808—1870 թթ. գործում էր հայկական քա-

---

44 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 383, ց. 29, գ. 188, թ. 1բ։

45 ՌԱՔԱ, ֆ. գլխավոր արխիվ, Պ—19, 1820, գ. 1, թ. 5բ։

46 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 4, գ. 49, թ. 88։

47 *А. К. Завадский-Краснопольский*, Крым, природа, население и особенности края, СПб., 1874, стр. 6.

ղաքային ռատուշան, իսկ Ղարասուբազարում 1790—1871 թթ.՝ հայ կաթոլիկների դատարանը։

Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան և Ղարասուբազարի հայ կաթոլիկների դատարանը վարում էին այդ գաղթօջախների վարչական, տնտեսական և դատական գործերը. սրանք ծառայում էին հայ առևտրա-արհեստավորական և հողատերերի ունևոր խավի շահերին և տեղում իրագործում ցարական վերադաս իշխանությունների կարգադրություններն ու որոշումները։ Այս օրգանները ընտրվում էին հայ համայնքների կողմից, գաղտնի քվեարկությամբ[48]։ Հին Ղրիմի ռատուշան կազմված էր բուրգոմիստրից և երկու ռատմաններից։ Սրանցից բացի, համայնքը ընտրում էր նաև քաղաքագլուխ և ավագ (староста)։ Ղարասուբազարի հայ կաթոլիկների դատարանի մեջ մտնում էին քաղաքագլուխը և երեք ատենակալներ, որոնցից մեկը դատարանի նախագահն էր[49]։ Բոլոր այս պաշտոնյանները, որպես կանոն, ընտրվում էին վաճառականներից, առևտրական և արհեստավորական դասի մեծահարուստ ներկայացուցիչներից։

Ռատուշան և դատարանը շաբաթական 2—3 անգամ գումարում էին նիստեր, քննարկում և վճիռներ կայացնում քաղաքացիական և քրեական հարցերի գծով։ Սակայն դրանց գործունեության հիմնական բնագավառը կազմում էին այդ երկու քաղաքների բարեկարգման, տնտեսական զարգացման, առևտրի և արհեստագործության կազմակերպման, հարկերի ու տուրքերի գանձման խնդիրները, խնամակալական և ժառանգական գործերը, որոնց դատարանը։ Սրանց նիստերը վարվում էին հայերեն, իսկ գործավարությունը՝ ռուսերեն։

Ղրիմահայ կյանքում եկեղեցին, բացի զուտ կրոնական հարցերից, միջամտում էր համայնքի աշխարհիկ խնդիրներին։ Մինչև 1803 թվականը ղրիմահայության եկեղեցական գործերը վարում էր Նոր Նախիջևանի հոգևոր վարչությունը, իսկ հետագայում՝ Ղարասուբազարի հոգևոր վարչությունը, որին զուգընթաց Ղրիմում նշանակվում էին առաջնորդական հաջորդներ։ 1842 թ. հաջորդը իր տեղը զիջում է Ղրիմի հայ եկեղեցիների և սբ. Խաչ վանքի գլխավոր հոգաբարձուին, որի իրավասության տակ էին գտնվում տնտեսական բոլոր գործերն ու դրամական հաշիվները։ Տեղերում եկեղեցիների տնտեսական գործերը վարում էին երեցփոխանները, կաթողիկոսի կամ թեմակալի կողմից նշանակված կառավարիչները։

Վերստին հաստատվելով Տավրիկիայում, հայերը սկսում են նկատելի դեր խաղալ նահանգի տնտեսական կյանքում։ Նրանց զբաղմունքների մեջ հիմնական տեղ էին բռնում առևտուրը, արհեստագործությունն ու երկրագործությունը։

Կապված լինելով ռուսական ներքին շուկայի, Արևելքի և հատկապես Կովկասի ու Թուրքիայի առևտրա-արհեստավորական շրջանների հետ, ղրիմահայերը զգալիորեն նպաստում էին տավրիկյան առևտրի զարթոնքին և ծավալմանը, հանդես գալով որպես հմուտ առևտրականներ։

---

48 Ղրիմի մարզային արխիվ, ֆ. 67, ց. 1, գ. 517, թ. 37։

49 Նույն տեղում, ֆ. 179, ց. 1, գ. 324, թ. 5։

Ղրիմահայ առևտրի ընդլայնմանը սկզբնապես նպաստում էին հրովարտակներով նրանց շնորհված արտոնությունները։ 1807 թ. սկսած, երբ ցարական մանիֆեստով ղրիմահայ առևտուրը ևս փորձեցին ներառնել գիլդիաների մեջ, հայ համայնքները բողոքի վճռական ձայն բարձրացրին։ Տարիներ տևող այդ պայքարը ավարտվեց նրանց օգտին։ 1832 թ. փետրվարի 29-ի կայսերական հրամանով նրանց նախկին իրավունքները պահպանվեցին։ Այս, իհարկե, չէր նշանակում, թե հայերը մնացել էին գիլդիաներից դուրս։ Իր կրպակում ներփակված առևտրականի ու շարշու կողքին XIX դարում Ղրիմի զանազան քաղաքների գիլդիաներում ամուր դիրքեր էին բռնել նաև հայ վաճառականները։

Տակավին XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, երբ կառավարությունը փորձում էր քայլեր ձեռնարկել Թերակղզու տնտեսական վիճակը շտկելու համար, թե՛ բուն ղրիմահայերը և թե՛ Նոր Նախիջևանից ու Թուրքիայից Ղրիմի նավահանգիստները ժամանած հայ առևտրականները, հաճախ իրենց սեփական նավերով[50], աշխույժ առևտուր էին անում, նպաստելով Թուրքիայի, Կովկասի և Չերքեզիայի հետ Թերակղզու առևտրական կապերի ընդլայնմանը։ Նրանք էին նաև հիմնականում Կուբան ներմուծում ռուսական ապրանքներ[51]։ XIX դարի առաջին կեսին ղրիմահայերը աչքի էին ընկնում նաև Կոստանդնուպոլսի և Տրապիզոնի հետ կատարվող առևտրի մեջ։ Առևտրի ապրանքների շարքում հիմնական տեղը բռնում էին պարենամթերքը և հագուստեղենը։ Հայ առևտրականները այս շրջանում Ղրիմ էին բերում մետաքսյա և բրդյա գործվածքներ, պատրաստի հագուստեղեն, բրինձ, գինի, ձեթ, շաքար, սուրճ, սիսեռ, խավյար, պղինձ, ձյութ, շինափայտ[52]։ Ղրիմից նրանք տանում էին բուրդ, կաշի, մշակված կաշվեղեն, ալյուր, ցորեն, վարսակ և այլն[53]։

Ռատուշայի և դատարանի միջոցով Ղարասուբազարի ու Հին Ղրիմի և առհասարակ ղրիմահայ հարուստ առևտրականները մասնակցում էին կայսրության զանազան քաղաքներում կազմակերպված առևտրական միջոցառումներին, աճուրդներին, տոնավաճառներին։ Նրանք, մանավանդ, Խարկովի բոլոր տոնավաճառների մասնակիցներն էին, որտեղից Ղրիմ էին բերում մեծաքանակ ապրանքներ։

Ստոլիպինյան տեղաշարժերին համեմատ ղրիմահայերի առևտրական գործունեությունը նոր լիցք ու երանգ է ստանում։ Ղրիմի պատերազմի ժամանակ հայ վաճառականությունը իր վրա էր վերցրել Սևաստոպոլի պատերազմական կարիքների մատակարարման զգալի բաժինը, իսկ 60—70-ական թվականներին ղրիմահայ առևտրական դասը, հարմարվելով կապիտալիստական զարգացման ընթացքին, չվրիպեց ներդրումներ կատարել նաև նահան-

---

50 ԿՊՐՊԱ, ֆ. 52, գ. 336, մաս III, թթ. 32—33, 77—78, մաս IV, թթ. 8—10, 12։

51 ՌԱՔԱ, ֆ. Գլխ. արխիվ, ու—բ 3, գ. 259, թ. 34։

52 Сумароков, Досуги крымского судьи, ч. I, стр. 130—131.

53 Հ. Տեր-Աբրահամյան, Պատմություն Ղրիմու, Թեոդոսիա, 1865, էջ 119։

գում ծավալված երկաթուղային շինարարության մեջ[54]։ XIX դարի երկրորդ կեսին հայերի առևտրական գործառնությունները սկսում են կենտրոնանալ Սիմֆերոպոլում. դրանք միաժամանակ լայն չափեր են ընդունում Արմյանսկի Բազարում, Ղարասուբազարում, Եվպատորիայում, Թեոդոսիայում։

Ղրիմահայ կյանքում կարևոր տեղ էին գրավում գյուղատնտեսական ըզբաղմունքները՝ այգեգործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունը և դաշտավարությունը։ Սկզբնապես հողի հետ ամենից շատ կապված էր Հին Ղրիմի հայ համայնքը, որի օգտագործմանը հանձնված էին ընդարձակ հողատարածություններ՝ ջրերով ու անտառով հանդերձ։ Քաղաքում բնակություն հաստատած ռուսների, հույների և թաթարների համար համայնքը սահմանել էր հողօգտագործման հատուկ կարգ, որի համաձայն առաջին երկուսը մուծում էին քաղաքային բոլոր հարկերն ու տուրքերը, որպիսիք տալիս էին հայերը, և բացի դրանից՝ կատարում պարհակներ, իսկ թաթարներին այդ կարգը քաղաքի հայ համայնքի նկատմամբ դնում էր այն վիճակում, ինչպիսի դրության մեջ գտնվում էին կալվածատիրական հողերի վրա ապրող թաթար գյուղացիները իրենց կալվածատերերի հանդեպ. նրանք պարտավոր էին քաղաքի հայ համայնքին վճարել տասանորդ և տարեկան 5—8 օր աշխատել նրա օգտին։ Հին Ղրիմում հաստատվել ցանկացող թաթարների նկատմամբ այդպիսի կարգ էր սահմանվել, որպեսզի նրանք չլքեին իրենց թաթար հողատերերին[55]։

Ղրիմահայերի մեջ կային խոշոր հողատերեր և սրանց կողքին՝ սակավահող ու հողազուրկ գյուղաբնակ ընտանիքներ։ Խոշոր հողատերերի դասը նախկին պապենական կալվածքների ժառանգական հաջորդը չէր. նրա ներկայացուցիչները առևտրական ունևոր գործատերեր էին, որոնք քայլ առ քայլ թափանցում էին հողատիրության ոլորտը։ Ժամանակի ընթացքում խոշոր հողատերեր էին դարձել Նալբանդովների, Սեֆերովների, Թուխալովների, Սպենդիարովների, Այվազովսկիների, Օբերովների և այլ ընտանիքներ, որոնցից յուրաքանչյուրը տիրում էր 1000 դեսյատինից ավելի հողատարածություններին։

Հայ աշխատավորության այն մասը, որը կապված էր հողի հետ, զգալի դեր խաղաց թերակղզում բանջարաբուծության և ծխախոտագործության տարածման ու զարգացման գործում։ Արևմտահայերը Ղրիմում ծխախոտի «սաւմսոն» և «տրապիզոն» տեսակների տարածողներից էին, նրանք մեծ համարում ունեին նաև որպես հմուտ այգեպաններ ու բանջարաբույծներ։

Խոշոր հողատեր էր ղրիմահայ եկեղեցին։ Սբ. Խաչ վանքը Հին Ղրիմից ոչ հեռու տիրում էր 1215 դեսյատին կալվածքի՝ անտառներով, վարելահողերով և այգիներով հանդերձ[56], իսկ Պերեկոպի գավառում նրա «Ադի Ղայդաչ» անունով հողամասը հավասար էր 2767 դեսյատինի[57]։ Վանքը այգի ուներ նաև

---

54 Հ. Տեր-Ավրահամյան, նշվ. աշխ., էջ 120։

55 Ղրիմի մարզային արխիվ, ֆ. 67, ց. 1, գ. 359, թ. 1բ։

56 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 73, թ/5, թ. 31բ։

57 Նույն տեղում, թ. 31բ, և 75բ, տե՛ս նաև «Крым» (газета), Симферополь, 1892, № 37։

Սուդակում՝ 17 դեսյատին տարածությամբ[58]։ Վանքապատկան բոլոր հողերը միասին կազմում էին 4000 դեսյատին։ Փոքր ու մեծ հողեր ունեին նաև սբ. Փրկիչ վանքը, Հին Ղրիմի և Թեոդոսիայի հայկական եկեղեցիները։

Հողային այդ տիրույթները եկեղեցին մեծ մասամբ տալիս էր կապալով, բացառությամբ այգիների, որոնց մշակումը կատարում էր վանքը՝ «իրղաթներ» և «մշակներ» պահելով[59]։ 1832—1842 թթ. (չհաշված 1835—1836) սբ. Խաչ վանքի եկամուտները հողերից կազմել էին 14.170 ռուբլի[60]։

Ղրիմի հայ եկեղեցու եկամուտների մի հիմնական մասը, բացի հողերից, գումարվում էր եկեղեցական տուրքերից և գանձումներից, եկեղեցական ղանաղան շինություններից, առևտրական ձեռնարկներից և այլն։

Ղրիմի տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում արհեստագործությունը։ Հայերը Ղրիմում ճանաչված արհեստավորներ էին՝ ոսկերիչներ, հյուսներ, կոշկակարներ, որմնադիրներ, քարտաշներ, դերձակներ, հացագործներ, գինեգործներ, դարբիններ և այլն։

Ղրիմի հայկական գաղութին բնորոշ էր սոցիալական ընդգծված շերտավորումը։ Այստեղ տեղափոխված հայ գաղթականների մեծամասնությունը աղքատ էր, զուրկ որևէ ունեցվածքից։ Ղրիմահայության ճնշող մեծամասնությունը մեշչանների (քաղաքաբնակների) դասին էր պատկանում, իսկ այդ դասն էլ միատարր չէր. ժամանակի ընթացքում նրանից անջատվում է առևտրա-արհեստավորական հարուստ խավը, իսկ մյուս բևեռում իրենց գոյությունն էին քարշ տալիս աղքատ ու կիսաղքատ արհեստավորների, մանր առևտրականների և օրամշակների ընտանիքները, որոնք տարեցտարի ավելանում էին ի հաշիվ արևմտահայ պանդուխտների։ Գաղութահայ ամենահարուստ դասը վաճառականներն էին, խոշոր հողատերերն ու գործարանատերերը։

Գաղութահայ աշխատավորների ուսին ծանր լուծ էին հարկերն ու տուրքերը, որ նրանք վճարում էին պետությանն ու եկեղեցուն. հրովարտակներով շնորհված արտոնություններից օգտվում էր ղրիմահայության փոքր մասը միայն, այն էլ մինչև 1870 թ., նրա հիմնական զանգվածը վճարում էր սահմանված բոլոր հարկերը, ծանրաբեռնվում պարհակներով, ամեն տեսակի պարտություններով՝ շնչահարկ, ղորապարհակ, հարկ հողից, առևտրական բազմատեսակ մաքսեր և այլն։

Աշխատավորների դրությունը վատթարանում էր եկեղեցական տուրքերի և զանազան մուծումների հետևանքով, որ գանձվում էին քահանաների, հոգևոր կառավարության, թեմի առաջնորդի և էջմիածնի օգտին։ Այս գանձումներին ավելանում էին նվիրակությունները, որոնք պարբերաբար կազմակերպում էին հոգևոր վերադաս մարմինները։

Խաղաղ ու անվտանգ արտաքին պայմանները և տնտեսական համեմատաբար կայունացող վիճակը հնարավորություն են ստեղծում գաղութում մշակութային կյանքի աշխուժացման համար։ Ղրիմահայերը հիմնել էին դպրոցներ, տպարան, հրատարակում էին գրքեր և հանդեսներ։

---

58 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 73, Բ/5, թ. 29—31։

59 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 8, վ. 62։

60 Նույն տեղում, թղթ. 105, վ. 232։

Ղրիմահայ առաջին դպրոցը հիմնվեց Ղարասուբազարում, 1816 թ., Մ. Կյումուշխանեցու կողմից։ 1820 թ. դպրոցում սովորում էին 80 երեխա[61]։ Տարբեր տարիներում դպրոցներ են կազմակերպվում Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Եվպատորիայում, Սիմֆերոպոլում, Կերչում, Օրաբազարում, Սուբաշում և բոլոր այն վայրերում, որտեղ նկատելի թվով հայություն կար։ Տավրիկյան նահանգի հայկական ծխական դպրոցներում 1861 թ. սովորում էին 225 աշակերտ[62], այդ թվում՝ Սիմֆերոպոլում՝ 35, Ղարասուբազարում՝ 56, Հին Ղրիմում՝ 25, Թեոդոսիայում՝ 38, Կերչում՝ 10, Նոր Նախիջևանում՝ 26, Պերեկոպում՝ 25 և Եվպատորիայում՝ 10 աշակերտ։ Ղրիմահայ ծխական դպրոցները որակյալ դասատուներով ապահովելու համար մերթ ընդ մերթ այս դպրոցներից լավարյան ճեմարան էին ուղարկվում ընդունակ մի քանի երեխաներ, որոնք այն ավարտելուց հետո վերադառնում էին Ղրիմ՝ մանկավարժական աշխատանքի[63]։

Թեոդոսիայում բացված աղջիկների դպրոցում, բացի կրոնից, հայոց և ռուսաց լեզուներից ու թվաբանությունից, աշակերտուհիները սովորում էին նաև կար ու ձև և այլ «աղգային այժմյան վիճակին պատկանելիք հարկավոր ուսմունքներ»[64]։

Ռուսաստանում գործող հայկական ծխական դպրոցները ենթարկվում էին հայ լուսավորչական եկեղեցուն և կրթական գերատեսչություններից անկախ էին։ 1861 թ. լուսավորության մինիստրությունը փորձում է Ղրիմի հայկական ծխական դպրոցները ենթարկել Տավրիկյան նահանգի ուսումնարանների դիրեկցիային, նպատակ ունենալով դպրոցները զրկել ինքնուրույնությունից և ազգային-կրթական դասավանդման ազատությունից։ Նման փորձերը 40-ական թվականներին, լուսավորության ռեակցիոն մինիստր Ուվարովի ժամանակ, անհաջողության էին մատնվել։ Այժմ ևս Ներքին գործերի մինիստրությունը ընդառաջում է հայ հոգևորականության բողոքներին, ըզգուշացնելով այն աննպաստ քաղաքական տրամադրության մասին, որ հայերի շրջանում անպայման կստեղծվեր կառավարության նկատմամբ։ «Հայ լուսավորչական եկեղեցու իրավունքը կամ ազատությունը խախտող կառավարական ամեն մի միջոցառում,— գրում էր Ներքին գործերի մինիստրը,— հակասում է Արևելքում մեր քաղաքական մտադրություններին, որը նպատակ ունի մեր կողմը տրամադրելու արտասահմանյան հայերի միտքը, որոնք մեծ քանակությամբ բնակվում են Թուրքիայի և Պարսկաստանի սահմանամերձ մարզերում, Իրանական Ադրբեջանի գլխավոր քաղաքներում և այնտեղի իրենց դրությամբ ազդում են Արևելքում վարած մեր քաղաքականության վրա»[65]։ Լուսավորության մինիստրությունը առժամանակ հրաժարվում է իր մտադրությունից, իսկ հայկական ծխական դպրոցներն էլ շարունակում են ենթարկվել հայ հոգևոր մարմիններին։ 1868 թ. Էջմիածնի ուսումնական

---

61 Նույն տեղում, թղթ. 36, վավ. 329, թ. 1բ։

62 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մաս I, թ. 5բ։

63 Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, վ. 131, 136, 140։

64 «Մասյաց աղավնի», 1860, էջ 42։

65 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 23բ։

Հանձնաժողովը հայկական դպրոցների համար իշեցնում է հատուկ կանոններ։

Ղրիմահայ ուսումնական հաստատությունների շարքում ուսումնա-մանկավարժական գործի դրվածքով խիստ զանազանվում էր Խալիբյան ուսումնարանը։

1858 թ. հունիսի 4-ին Գ. Այվազովսկու ներկայացրած նախագիծը հաստատվում է Ալեքսանդր II-ի կողմից՝ «Կանոններ հայկազյան ուսումնարանի, որը հաստատվում է Տավրիկյան նահանգի Թեոդոսիա քաղաքում» անվան տակ։ Ռուսական կառավարությունը ուսումնարանի գործունեության մեջ տեսնում էր իր ազդեցությունը Արևելքում և մանավանդ Թուրքիայի հայերի վրա տարածելու լավագույն հեռանկարներ։ Կառավարության հովանավորությունը, Խալիբյանի նյութական աջակցությունն ու եկեղեցական գումարներն օգտագործելու հնարավորությունը Գ. Այվազովսկուն թույլ են տալիս 1858 թ. հոկտեմբերի 14-ին բացել ուսումնարանը։

Առաջին ուսումնական տարում այնտեղ սովորում էին 89 աշակերտ, եղան տարիներ, որ այդ թիվը հասավ 140-ի[66]։

Ուսումնարանը պահվում էր եկեղեցական գումարների, Խալիբյանի կրտակի և սանների վճարումների միջոցով։ Միայն նոր շենքի շինարարության վրա Խալիբյանը ծախսել էր 152 հազար ռուբլի[67]։

1865 թ. ուսումնական տարվանից ուսումնարանը աստիճանաբար անկում է ապրում, հատկապես եկեղեցական գումարներից զրկվելու պատճառով։ 1870 թ. դեկտեմբերի 4-ին կայսերական վճիռ է իշեցվում Խալիբյան ուսումնարանը փակելու մասին, իսկ 1871 թ., 13-ամյա գոյատևումից հետո, այն դադարում է գործել։

Խալիբյան ուսումնարանին առընթեր մեծահասակների համար գործում էր լսարան։ Ուսումնարանն ուներ տպարան, որի անխափան և արդյունավետ աշխատանքի համար մեծ ջանքեր էր թափում Հ. Տեր-Աբրահամյանը, ժամանակի կրթված հայ մտավորականներից մեկը։ Այստեղ տպագրված գրքերը բազմաբնույթ էին. դասագրքերին զուգընթաց հայերեն և ռուսերեն լեզուներով, նշանակալից տպաքանակով, հրատարակվում էին գեղարվեստական ու պատմական գրքեր, թարգմանական և եկեղեցական գրականություն, տարեգրքեր և այլն։ Ուսումնարանի փակվելուց մի փոքր հետո տպարանը ևս դադարեց գործելուց։

Ղրիմահայ գաղութում XIX դարի երկրորդ կեսին հրատարակվում էին երկու պարբերական՝ «Մասյաց աղավնին» և «Դաստիարակը»։ «Մասյաց աղավնին» հայ ընթերցողին ծանոթ էր 1855 թվականից։ 1860 թ. Գ. Այվազովսկին հանդեսի հրատարակումը Փարիզից տեղափոխեց Թեոդոսիա։

Այսպիսով, XVIII—XIX դարերի սահմանագծերում վերստեղծված ղրիմահայ գաղթօջախները, համեմատաբար նպաստավոր պայմաններում, ապրում են տնտեսական և մշակութային նկատելի առաջընթաց և շոշափելի մասնակցություն ցուցաբերում հայ ժողովրդի մշակութային կյանքում կատարված տեղաշարժերին։

---

66 Նույն տեղում, գ. 50/3054, թ. 51։

67 Նույն տեղում, գ. 55/3166, մ. 2, թ. 5։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԲՈՒԿՈՎԻՆԱ։ Բուկովինան 1775 թ. միացվել էր Ավստրիական կայսրությանը։ Այստեղ հայերին ընձեռված արտոնությունները նպաստել էին նրանց թվի ստվարացմանը։ Պակաս նշանակություն չունեցավ նաև այն հանգամանքը, որ մոլդավահայության երբեմնի կենտրոն Սուչավան հայտարարվեց ազատ առևտրական քաղաք։ Այստեղ սկսեցին հավաքվել հատկապես Մոլդովայից և մասամբ Լեհաստանից ու Բուլղարիայից եկող հայերը։ Մոլդովայից հայերի գաղթի գլխավոր պատճառը մոլդովահայերի նկատմամբ երկրում գործադրվող ճնշումներն էին։ Բուկովինայում հայաբնակ խոշոր կենտրոն էր Սուչավան։ XIX դարի սկզբում այնտեղ ապրում էին 200 տուն հայեր։ Բացի Սուչավայից, 30 տուն հայեր ապրում էին Ջերնովիցում, իսկ 10 տուն էլ Սիրետում. հայերի ընդհանուր թիվը շուրջ 1200 էր։ Իսկ 1851 թ. նրանց թիվը կրկնապատկվում է և հասնում 2400-ի, որոնցից 1765-ը լուսավորչական էին, իսկ 635-ը՝ կաթոլիկ։ 1857 թ. Սուչավայում արդեն հաշվվում էր 530 հայկական տուն։ 1864 թ. ամբողջ Բուկովինայում հայերի թիվը կազմում էր ավելի քան 1000 ընտանիք[68], մոտավորապես 5000 հոգի։

Հայերը Նեգուշտինա գյուղում (Սուչավայի գավառ) 1862 թ. կառուցում են ս. Նիկողայոսի անվան մի եկեղեցի։

Սուչավայի մոտ գտնվող Գուրա Հումորուլույ (Հումոր) քաղաքում ևս հայեր էին ապրում, նրանք 1868 թ. կառուցեցին մի եկեղեցի։ Ջերնովիցում էլ հետզհետե Լեհաստանից համախմբված հայ կաթոլիկները 1870—1876 թ. բարձրացրին իրենց գեղեցիկ տաճարը։

Սկզբնական շրջանում հայերը կարևոր դեր էին խաղում երկրի արտաքին և ներքին առևտրի մեջ։ Նրանք ներմուծում էին զենքեր, գործվածքներ, համեմունքներ, ոսկերչական առարկաներ, արտածելով գյուղատնտեսական արտադրանքներ։ Հայերը զբաղվում էին նաև մի շարք արհեստներով, այդ թվում՝ պատրաստում էին երշիկեղենի և պանրեղենի տեսակներ, ոգելից ըմպելիքներ, զբաղվում կաշեգործությամբ, դեղագործությամբ, ոսկերչությամբ և այլն։

XIX դարի երկրորդ կեսին երկրում առևտրի հետզհետե անկման հետևանքով սկսում է նվազել հայերի թիվը։ 1869 թ. Բուկովինայում մնացել էր միայն 1710 հայ, որից 828-ը՝ լուսավորչական և 882-ը՝ կաթոլիկ[69]։

1800 թ. Սուչավայում գործում էր աշխարհիկ դպրոց, որի համար 1824 թ. կառուցվեց նոր շենք։ 1831 թ. դպրոց էին հաճախում 71, իսկ 1845 թ.՝ 65 աշակերտ։ Դպրոցն իր ծաղկումն է ապրում սուչավացի հայտնի ասպետ Աստվածատուր Խ. Ջունդի (1825—1897) տնօրինության օրոք։ 1852 թ. Սուչավայի դպրոցում գործում էր նաև դպրոցական թատրոն։

Բնիկ սուչավացի էր հայ բժշկության երախտավորներից մեկը՝ դոկտ. Անդրեաս Փոփովիչը (1809—1858)։ Նրա 8 տարվա աշխատանքի արդյունքն է 1850 թ. Կ. Պոլսում տպագրված «Ուրուհատ երկայնակեցութեան կամ առողջ

---

68 «Մասյաց աղավնի», 1864, էջ 268։

69 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուկովինայում, Թիֆլիս, 1911, էջ 146։

էրկայն ու երջանիկ ապրելու ուսումը» խորագրով գիրքը, որը 1876 թ. երկրորդ անգամ տպագրվելուց հետո, 1901 թ. թարգմանվեց և հրատարակվեց ռումիներեն։

Բուկովինայի Չերնովից քաղաքում էր ծնվել Շոպենի աշակերտ և նրա գործերի հրատարակիչ անվանի երգահան Կարլ Միկուլին (1821—1897), որը անմոռանալի անուն է թողել ինչպես Ռումինիայի, այնպես էլ Լեհաստանի երաժշտության պատմության մեջ։ Նա երկրում կատարած բազմաթիվ շրջագայություններից հետո 1850 թ. կազմեց ռումինական ժողովրդական 48 երգերի, դոյնաների, շուրջպարերի և հայդուկային երգերի ժողովածուն։ Միկուլին հորինել է նաև լեհերեն և ֆրանսերեն երգեր։

1859 թ. Չերնովիցում կազմված երաժշտական ընկերության առաջին նախագահն է դառնում երգահան Միկուլիի եղբայրը՝ հայազգի ասպետ Հակոբ դե Միկուլին։ Ընկերության նպատակն էր երաժշտությունը ծառայեցնել Բուկովինայում ապրող տարբեր հավատի և ազգության ժողովուրդների միասնությանը[70]։

ՄՈԼԴՈՎԱ։ XIX դարի սկզբին հայերի թիվը Մոլդովայում մոտավորապես 4500 էր։ Ֆոկշանում (Վալաքական մասն էլ միասին) 60 տուն հայ կար, Յասիում՝ 150, Տեկուչում՝ 200, Ռոմանում՝ 110 տուն, Բոտոշանում՝ 400, Տրգու Օկնայում՝ 60 և Գալացում՝ 30[71]։ 1890 թվականին այնտեղ արդեն 5600 հայ կար։ 1850—1860-ական թվականներին Մոլդովայի ինը քաղաքներում ապրում էր 1200 հայ գերդաստան[72], իսկ 1857 թ. հայերի ընդհանուր թիվը հասել էր արդեն 7000-ի[73]։

Առևտրի նոր «Մոլդովական ճանապարհը», որը ընթանում էր Լվով—Մոլդովա—Սիլիստրե—Կ. Պոլիս գծով, XIX դարի կեսին օգտագործվում էր նաև հայ առևտրականների կողմից։ Նրանցից Մկրտիչ Կրըմլիոն և Հակոբ Յակուբենցն իրենց քարավաններով Դանցիգից բերած սաթը տանում էին Կ. Պոլիս։ Հայերի մի մասը զբաղվում էր կապալառուությամբ, իսկ ուրիշները՝ անասնաբուծությամբ և անասնավաճառությամբ։ Վերջիններս մասնակցում էին Մոլդովայում, Տրանսիլվանիայում, Ավստրիայում և այլ երկրներում տեղի ունեցող տոնավաճառներին։ Հայերի մի զգալի մասը զբաղվում էր արհեստներով և համախմբված էր բրեսլաների (համքարությունների) մեջ։

Հատկապես Բոտոշանում հայերը մեծ թափ հաղորդեցին երշիկեղենի և ապուխտեղենի արտադրությանը։ Յասիում արհեստներից շատ հարգի էր նաև հայ ժանյակագործուհիների և դերձակուհիների աշխատանքը։ Հայերը Յասիում (Յաշում) զբաղվում էին նաև սրճագործությամբ, ծխախոտագործությամբ, դերձակությամբ, սեղանավորությամբ և այլն։

1840—1850-ական թվականներին հայերի համար առաջնահերթ խնդիր է դառնում գաղութի ներքին կյանքի կազմակերպումը։ 1840 թ. համայնքի խորհրդակցական ժողովում վավերացվեց հիմնականում Հակոբ Պըլըգլիուի և

---

[70] Mihail Gr. Posluşnicu, Istoria Musicei la Români, Bucureşti, 1928, p. 495, 448.

[71] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն..., էջ 207—209։

[72] «Արշալոյս Արարատյան», 1864, № 721։

[73] «Մասյաց աղավնի», 1857, էջ 99։

նրա ավագ եղբոր՝ Մկրտիչի կողմից կազմված գաղութի նոր կանոնադրությունը։ Կանոնադրության համաձայն գաղութը ղեկավարվելու էր 5 անդամներից բաղկացած թաղական խորհրդի կամ հոգաբարձության միջոցով։ Ընրանցից առաջինը՝ նախագահը, զբաղվելու էր եկեղեցիները բարվոքելով, երկրորդը՝ նոր դպրոցներ բացելու և նրանց պահպանության հարցերով, երրորդը՝ պետք է կարգավորեր հայերի միջև ծագած վեճերը, չորրորդը՝ զբաղվելու էր այրիների և որբերի իրավունքների պաշտպանության և այցելու հոդևորականների ընդունելության հարցերով և, վերջապես, հինգերորդը՝ գաղութի բոլոր տեսակի ունեցվածքների տնօրինությամբ։ Հիշյալ կանոնադրությունը գործադրության մեջ դնելու նպատակով Հակոբ Պըլըգլիուն մեկնեց Կ. Պոլիս, ուր և Հակոբ պատրիարքը 1840 թ. իր կոնդակով վավերացրեց այն։ Այսպիսով, գաղութը կազմակերպվում էր և ստեղծում իր աշխարհիկ ղեկավար մարմինը, յուրացնում որոշակի ինքնավարություն։ Բացի կոմիտեի 5 անդամներից, նրանց հետ, իբրև խորհրդականներ, գործում էին նաև 10 անդամներ։

Առաջին քայլը եղավ հայկական դպրոցները երբեմնի խղճուկ վիճակից հանելը։ 1841 թ. նոյեմբերի 8-ին Միհայիլ Ստուրզա իշխանի հրովարտակով վավերացվում է հայկական դպրոցների կանոնադրությունը։ Կարգադրվում է Հանրային կրթության հոգաբարձության հսկողության տակ բացել հայկական դպրոցներ, մյուս հանրային դպրոցների մակարդակով, բայց նախատեսված առարկաներից բացի, վերջիններս պետք է անցնեին նաև հայոց լեզու, կրոն և հայոց պատմություն։ Հայկական դպրոցների շրջանավարտներն այսուհետև իրավունք էին ստանում իրենց ուսումը շարունակելու Յասիի Միհաիլյան ակադեմիայում։ Իշխանական վավերացում ստացավ նաև գաղութի կանոնադրությունը։ Յասիի թաղականությունը կամ հոգաբարձությունը մի տեսակ «կառավարություն» դարձավ մոլդովահայության համար։ Վերջինիս ընտրություններին մասնակցում էին նաև Մոլդովայի մյուս հայաշատ կենտրոնների հոգաբարձություններից երկուական ներկայացուցիչ։ Ընտրող էին դառնում 25 տարեկանը լրացրած ա և բ դասերին (այսինքն ունևոր և միջին) պատկանողները, իսկ ընտրելի՝ 30 տարեկանը լրացրած և միայն ա դասի պատկանող մարդիկ։ Այսպիսով, ցածր խավի պատկանողները չէին կարող ընտրող կամ ընտրվող լինել։ Տվյալ ժամանակաշրջանում բացի Հակոբ Պըլըգլյանի գլխավորած խմբի գործունեությունից, մոլդովահայերի ազգային-մշակութային և իրավական այս շարժման մեջ կար նաև մի այլ խմբակցություն՝ սերդար Եսայի Դրանխոլյանի գլխավորությամբ, որը, ըստ երևույթին, կազմված էր ժողովրդական զանգվածներից և դեմ էր հայ հոգևոր կենտրոններից ինքնուրույնություն ձեռք բերելուն։ Սակայն Հակոբ Պըլըգլյանի կատարած գործի դրական նշանակությունն այն էր, որ նա առաջին անգամ հայերին դուրս բերեց կղզիացումից և նպաստեց հայ և ռումին ժողովուրդների բարեկամությանը։

Մոլդովայի հայերը երկար պայքար մղեցին քաղաքացիական իրավունքներ ստանալու համար։ Վերջապես, 1858 թ. օգոստոսի 7 (19)-ին Փարիզի Խորհրդաժողովը Մոլդովայի և Վալաքիայի միացյալ իշխանությունների կազմակերպման սկզբունքների վերաբերյալ կնքած պայմանագրի 46-րդ հոդվա-

ծում նախատեսում էր. «Քրիստոնեական որևիցե դավանության պատկանող մոլդովացիները և վալաքացիները վայելում են քաղաքացիական իրավունքների հավասարություն»։ Այսպիսով, Մոլդովայի և Վալաքիայի հայերը իբրև «հայ կրոնի պատկանող ռումինացիներ» ընդունվեցին երկրի բնիկների մեծ ընտանիքում[74]։ Սկսած 1858 թ. Մոլդովայի գրեթե բոլոր հայաշատ կենտրոններում բազմաթիվ հայեր ստացան ազնվականական տիտղոսներ և մշտնջենական կալվածներ գնելու, ինչպես նաև քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք։

Մոլդովայի հայ գաղութը ոչ միայն ներքնապես ուներ իր բովանդակալից կյանքը, այլև հնարավոր չափով կարողանում էր կապեր պահպանել մայր հայրենիքի հետ։ Դեռևս 1811 թ. Բոտոշանում գործում էր «Կտրիճների եղբայրությունը»։ 1866 թ. հիմնադրվեց բարեգործական և մշակութային մի ընկերություն, որը նպաստում էր աղջիկների դպրոցին և օգնում չքավորներին։ 1868 թ. Յասիում ստեղծվեց «Ազգասիրաց» ընկերությունը, որին անդամակցում էին նաև Տրգու Ֆրումոսի, Ռոմանի, Բակրուի, Տեքուչի, Բոտոշանի և Բեսարաբիայի հայերը, նպատակ ունենալով վառ պահել ազգային զգացումները և սատարել դպրոցին։

Մոլդովահայությունը տվեց նաև մի շարք գործիչներ, որոնք զգալի հետք թողեցին հայ ժողովրդի պատմության մեջ։ Նրանցից ամենանշանավորը հայրենիքում գործող ականավոր մանկավարժ, պատմաբան և քերականագետ Ստեփանոս Պալասանյանն էր (1837—1889), որը ծագում էր Բոտոշանցի հայտնի Պալասան ընտանիքից։

1821 թ., երբ տեղի ունեցավ Թուդոր Վլադիմիրեսկուի գլխավորած ազդային-ազատագրական շարժումը, հայ գործիչներից ոմանք ջերմ համակրանք ցուցաբերեցին դեպի այդ պայքարը։ Ինչպես Վալաքիայում, այնպես էլ Տրանսիլվանիայում և Մոլդովայում հայերը աջակցեցին 1848 թ. հեղափոխությանը։

Հեղափոխությանը մասնակից հետապնդվող օտարահպատակների թվում հիշվում են նաև երկու սուդեթ (ավստրիական հպատակ) հայեր՝ Ռոմանից՝ Անդրեյ Ջահարիան և Յոն Միխրը[75]։

Հայերը ջերմ համակրություն ցույց տվին Մոլդովայի և Վալաքիայի վերամիավորման և միացյալ Ռումինիայի ստեղծման գործին։ Քաղաքական առաջավոր մեծ գործիչ, վերամիավորված Ռումինիայի առաջին իշխան Ալեքսանդրու Յոան Կուզայի անունը միշտ ջերմ սիրով հիշվեց հայերի կողմից[76]։ Ռումինացի այդ իշխանը հայասեր էր, և համակրանքով է վերաբերվել հայերին[77]։

Ռումինացի գիտնական և հայագետ Նիկոլա Յորգան գրել է. «Հայերը երկրին տվեցին բանաստեղծներ, որոնցից էր Պրունկուն, հավաստում են նաև Ասաքիին, իրավաբաններ, ուսուցչապետներ և քաղաքական գործիչներ՝ Պր-

---

74 Academia Română, Grigorie M. Buiuclíu, 1840—1912... Bucureşti, 1914, p. 34.

75 «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1968, № 3, էջ 200։

75 Հ. Ճ. Սիրունի, Ալեքսանդրու Յոան Քուզա—Միության իշխան, «Նոր կյանք», Բուխարեստ, 1970, № 11 (1026)։

77 «Մասիս», Կ. Պոլիս, 1860, № 452։

յըգլիու, Միսիր, Կոյլավ ընտանիքներից»։ Ասաքիևիչ գերդաստանից էր ծագում Մոլդովայի լուսավորության և մշակույթի մեծ ահռվիրան՝ Գեորգե Ասաքին (1788—1869)։ Նա էր, որ հրատարակեց մոլդովական առաջին թերթը, հիմնադրեց ռումիներեն լեզվով առաջին թատրոնն ու օպերան։ Նա բանաստեղծ էր և թատերագիր, անխոնջ տպագրիչ ու դպրոցների վերանորոգիչ, մի խոսքով, «նա անձնավորում է մի ամբողջ ժողովուրդ. նրա կյանքի պատմությունը Մոլդովայի XIX դարի առաջին կեսի պատմությունն է»։ Ասաքին կարևոր դեր խաղաց նաև հայկական դպրոցների ծաղկման և իր տպարանում հայկական՝ «Արամեան» բաժին ստեղծելու գործում։



Վիլմոշ Լազար

Հայ և ռումինական մշակութային կապերի սերտացման գործում մեծ դեր է խաղացել Ասաքիի աշակերտ յասեցի Թեոդոր (Աստվածատուր) Պալասանը, որը 1868—1884 թթ. ցասիում հրատարակել է «Curierul de Jassi» թերթը։ Այն մեծ տարածում է գտել և հաճախ ժողովրդի մեջ հայտնի է եղել «Պալասանի Կուրիեր» անունով։ Նրա թերթին աշխատակցել են ռումինացի հայտնի գրողներ։ Պալասանը իր թերթում հաճախ է հրատարակել հայ ժողովրդին, Հայաստանին վերաբերող նյութեր և ծանոթացրել ռումինացի ընթերցողին։ Նա իր տպարանում հրատարակել է նաև ռումիներեն բազմաթիվ գրքեր։ 1868 թ. հազիվ քսան տարեկան հասակում իր «Suspinele Primăverii» («Գարնանային հառաչանքներ») խորագրով բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրատարակեց Ֆոկշանցի հայազգի բանաստեղծ Նիկոլայե Պրունկուն։ 1887 թ. նա հրատարակեց նաև իր «Poesii» (բանաստեղծություններ) հատորը։

1861 թ. Ֆոկշանում հրատարակվեց «Buchetul Milcovului» (Միլկովի ծաղկեփունջը) կամ ժողովրդական երգերի հատընտիրը, հայազգի Գրիգոր Մանեայի և Շտ. Իգնատի օժանդակությամբ, ուր երգեր են գրված նաև Գ. Մանեայի կողմից։ Ռումինական ակադեմիայի ձեռագրատանն է պահվում 1839 թ. բոտոշանցի հայազգի Ջերքեզ Գ. Ջոմակի կողմից Միլտոնի «Դրախտ կորուսյալ» գործի ռումիներեն թարգմանությունը, կատարված գրաբարից և ձոնված իր որդի Գրիգոր Մըտըսարին։ 1808 թվականին ցասիում ներսես քհ. Հարությունյանը մոլդավերենից հայերեն է թարգմանել Նեոփիտոսի «Գիրք

Ճակատամարտութեան»-ը, որից այժմ բազմաթիվ ձեռագիր օրինակներ են պահվում Երևանի և արտասահմանյան մատենադարաններում։

Այս շրջանում հայկական դպրոցները, դուրս գալով նախկին տիրացուական ղեկավարից, բարձրացվեցին ժամանակի առաջավոր դպրոցների մակարդակին։ Հայ դպրոցների աշակերտներին թույլ տրվեց կրելու հատուկ համազգեստ։ Յասիի հայոց դպրոցը նախապես ուներ 4 դասարան, երկու արտակարգ դասարաններ ևս, որոնցից առաջինը կոչվում էր Հայկական և բաժանված էր երեք ճյուղի՝ ճարտասանական, շարադրական և գեղագրական, իսկ երկրորդը՝ ֆրանսիական։ Բացի հայերենից և ֆրանսերենից անցնում էին նաև ռումիներեն, լատիներեն և գերմաներեն։ 1847 թ. հիմնվում է նաև աղջիկների դպրոց։ Յասիի դպրոցը մեծ համբավի է արժանանում. այնտեղ սովորում էին նաև ռումինացի, գերմանացի և հունգարացի աշակերտներ։ Ծաղկում են նաև Բուդջանի, Ռոմանի և Ֆոկշանի հայկական դպրոցները։ Հայկական դպրոցներ են բացվում Բակրու, Տըրգու-Օկնա և Գալաց քաղաքներում։ Հիշյալ քաղաքների մեծ մասում գործում էին նաև աղջիկների դպրոցներ։ Ֆոկշանում գործում էին տղաների՝ ս. Ղևոնդյանց և աղջիկների՝ ս. Հռիփսիմյանց վարժարանները։ 1858 թ. Մոլդովայի հայկական վարժարաններում սովորում էր 365 աշակերտ։

Յասիում 1847 թ. հիմնվեց հայկական առաջին տպարանը, որը լույս ընծայեց հայկական դպրոցների համար անհրաժեշտ դասագրքեր, այդ թվում՝ «Այբբենարան», «Քրիստոնեական» (1847), «Աղօթագիրք» (1850), սլավոնատառ ռումիներենով մոլդովահայերի վերազարթման շարժմանը վերաբերող փաստաթղթերի մի ժողովածու (1853) և այլն։ «Այբբենարանի» առաջին էջում զետեղված էր Մեսրոպ Մաշտոցի նկարը։

ՎԱԼԱՔԻԱ, ՕԼՏԵՆԻԱ ԵՎ ԴՈԲՐՈՒՋԱ[78]։ XVIII—XIX դարերի ընթացքում բազմաթիվ հայ նոր գաղթականներ, հիմնականում Բուլղարիայի վրայով, եկան և հաստատվեցին Բուխարեստում, ինչպես նաև Պլոեշտում, Տրգովիշտեում, Պիտեշտում, Ֆոկշանում (Վալաքիայի մասում), Բրըիլայում, Կրայովայում, Կոնստանցայում և այլն։ Վալաքիայի հայերի կենտրոնը շարունակում է մնալ Բուխարեստը, ուր հայերի թիվը հետզհետե ստվարանում էր։ 1810 թ. այնտեղ Ռուսչուկից գաղթած 40-ի չափ հայ ընտանիք է հիշվում։ Դարի սկզբին հիշատակվում է շուրջ 120 տուն հայ, որն ըստ 1829 թ. տվյալների, բարձրանում է 260-ի (կամ 750 անձի)։ 1837 թ. Բուխարեստում արդեն կար 400 տուն, իսկ 1853 թ. հայերի ընդհանուր թիվը հավասար էր 2000 հոգու[79]։ Պլոեշտ քաղաքում ևս XIX դարի սկզբում բավական թվով հայեր էին ապրում։ Արճեշում 1846—1848 թ. կային ունևոր հայ և ռուս առևտրականներ։ Արճեշի մոտ գտնվող Պիտեշտ քաղաքում ևս XIX դարում կար հայկական գաղութ։ Սակավաթիվ հայեր կային նաև Ջուրջու քաղաքում։ Դարի ըս-

---

78 Վալաքիան (Մունտենիան) կիսանկախ իշխանություն էր։ 1859 թ. այն միանալով Մոլդովայի հետ, կազմեց ապագա ռումինական պետությունը։ Փոքր Վալաքիա անունով հայտնի էր Վալաքիայից արևմուտք գտնվող Օլտենիա նահանգը, իսկ Վալաքիայից արևելք գտնվում էր Դոբրուջան։

79 Ղ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 495։

կըզբին հայ առևտրականները գործում էին նաև Օլտենիայի Կրայովա և Վել-Օկնա (Ռըմնիկու-Վըլչեա) քաղաքներում։ Հայեր կային Դոբրուջայի Կոնստանցա և Տուլչա քաղաքներում։

Թեև Վալաքիայի և հարևան երկու մյուս նահանգների հայ ազգաբնակչության թվի մասին, բացի Բուխարեստից, ճշգրիտ տվյալներ չկան, սակայն հայերի մոտավոր թիվը այս շրջանում հասնում էր շուրջ 3000 հոգու։

Վալաքիայի և մասնավորապես Բուխարեստի հայերի սոցիալական կազմը շատ խայտաբղետ էր։ Սակավաթիվ մեծ հողատերերի և մեծաքանակ ապրանքներ վաճառողների կողքին կային միջին խավին պատկանող բազմաթիվ հայ փերեզակներ և արհեստավորներ։ Սակայն Բուխարեստի հայ ազգաբնակչության ճնշող մասը կազմում էր չքավորությունը։ Հայ առևտրականները զբաղվում էին տարբեր տեսակի ապրանքների վաճառքով։ Նրանք առևտրական կապեր ունեին Թուրքիայի, Տրանսիլվանիայի, ինչպես նաև Դանուբից այն կողմ ապրող բուլղարահայերի հետ։ Բուխարեստի հայ խոշոր առևտրականներից էր Կարապետ Անուշը, որը զբաղվում էր մետաքսեղենի և ոսկեղենի վաճառքով։

Վալաքիայի և Բուխարեստի տնտեսական կյանքում որոշակի դեր էին խաղում հայ արհեստավորները, որոնք համախմբված էին համքարությունների մեջ։

XVIII դարի վերջերից մինչև 1821 թ. Բուխարեստում հռչակված էր հայազգի հացագործ Պապիկը (ռում. Babic), որը և դարձել էր Բուխարեստի հացագործների ընդհանուր բրեսլայի նախագահը։ 1820 թ. հիշվում է «Compania Armenilor»-ը, որը 1821 թ. երկրի առևտրական և արհեստակցական խմբակցությունների շարքում գրավում էր 15-րդ տեղը։ 1821 թ. Բուխարեստի հայկական բրեսլան 37 անդամ ուներ։

Բուխարեստում հայերը ունեցել են նաև հյուրանոցներ։ 1847 թ. Բուխարեստի հայոց թաղականությունը գնել էր մի իշխանատուն, որի հասույթը հատկացվում էր հայկական դպրոցին և եկեղեցուն։

XIX դարի 30-ական թվականներից հայերը դարձյալ սկսում են կարևոր դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում։ Այդ ժամանակ հիշատակված 3269 պատենտավոր առևտրականների և արհեստավորների շարքում գործում էին նաև 111 հայեր։ Բուխարեստի հայերի գլխավոր զբաղմունքներից մեկը ծխախոտագործությունն էր։ Հայտնի հայ ծխախոտագործներից էին Գրիգոր Կարապետը, Ռահել Արմեանուլը (Հայը), Հաջի Կարապետ Դանդանաօղլուն, Հաջի Սամուել Արմեանուլը, Կարապետ Հաջի Ալթունյանը, Յոսեպ (Հովսեփ) Հովհաննեսը և ուրիշներ։ Ծոկշանում հայերը զբաղվում էին նաև մետաքսի արդյունաբերությամբ[80]։

XIX դարի 30-ական թվականներից նկատելիորեն աշխուժանում է Բուխարեստի հայ գաղութի ներքին կյանքը։ 1833 թ. Մկրտիչ Խաչիկովի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Սէր անուն Յիսուսի» ընկերությունը։ Ընկերությունը գործում է երկար տարիներ և անդամավճարների միջոցով հաջողվում է գնել կալվածքներ, որոնց հասույթով ապահովվում են Բուխարեստի հայկա-

[80] Academia Română, *Grigorie M. Buiuclia* (1840—1912)... Bucureşti, 1914, p. 24.

կան եկեղեցին և դպրոցը։ 1838 թ. կազմվում է «Արարատյան» ընկերությունը, իսկ 1842 թ. «Պուքրեշի ուսումնասեր ընկերություն Արարատյան»-ը, որը տասնյակ տարիներ սատարում է դպրոցին և հիմնում աղջիկների առաջին հայկական դպրոցը։ Ավելի ուշ ստեղծվում է նաև «Ընթերցասեր ընկերություն»-ը, որը 1869 թ. հովանավորում էր դպրոցը։

Վալաքիայի և Բուխարեստի հայերը միշտ աշխատել են կապ պահպանել իրենց հեռավոր հայրենիքի հետ։ Նրանք ևս նվիրատվությունների միջոցով սատարել են հնադարյան հոգևոր և մշակութային կենտրոններին։

XIX դարի սկզբներին Բուխարեստի, ինչպես նաև հայ գաղութի պատմության հետ է կապված խոշոր դիվանագետ Մանուկ բեյ Միրզայանի (1769—1817) կյանքն ու գործունեությունը։ Նա սերում էր կարբեցի ծնողներից և ծնվել էր Ռուսչուկում, սակայն դեռևս 1795 թ. հաստատվել էր Բուխարեստում և բացել իր նշանավոր իջևանատունը, որը պատմության մեջ մինչև օրս հայտնի է իբրև «Hanul lui Manuc» (Մանուկի խանը) անունով։ Նա երկար ժամանակ իր ձեռքում էր պահում երկրի աղի վաճառքի մենաշնորհը։ Նրա սեփականությունն էին կազմում Բուխարեստի մոտ գտնվող շուրջ 25 տիրույթներ՝ կալվածքներ և պտղատու այգիներ, որոնցից մի քանիսը մինչև վերջերս հայտնի էին Մանուկ անունով, ինչպես, օրինակ. «Popeşti-Manuc» և «Mânucul» գյուղերը։ Ռումինացի պատմաբան Գեորգե Բեզվիկոնին հետևյալ կերպ է բնութագրում նրա կյանքի անցած ուղին։ Մանուկ բեյը եղել է «Բուլղարական քաղաքների կազմակերպիչ, Բարձրագույն դռան դրագոման (մեծ թարգման) և բեյ, Կրմըրաշ և պահարնիկ ազնվականական տիտղոսների առաջին կրող հայը և իշխանը՝ Մոլդո-Վալաքիայի, սերբերի և Բուխարեստի ազատարար, Բուխարեստի 1812 թ. ռուս-թուրքական խաղաղության դաշինքի կազմակերպիչ, հայերի իշխան Վիեննայի վեհաժողովում, նորին վսեմություն և ասպետ՝ Ռուսաստանում, պատվված Ալեքսանդր Ա կայսեր կողմից և վերջապես նախագծերի նախաձեռնող, որոնց իրագործելու դեպքում՝ մոռացումից դուրս էր գալու Բեսարաբիան»[81]։ Մեծ է նաև Մանուկ բեյի և նրա մերձավորների ցույց տված օգնությունը ռուսական բանակին 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին։ Մանուկ Միրզայանը ռուսական կողմնորոշման մեծ ջատագով էր։ Նա թուրքերի հետ վարած բանակցություններով և նյութական օգնությամբ սատարեց ռուսներին։ Նա դիվանագիտական կարևոր գործունեություն ծավալեց 1812 թ. Բուխարեստում Ռուսաստանի համար նպաստավոր պայմանագիր կնքելու գործում։

Դանուբյան ռազմաճակատի ռուսական բանակի զորահրամանատար գեներալ Բագրատիոնը 1810 թ. մարտի 12-ին Բուխարեստում իր տված վկայագրում նշում էր, որ Մանուկ բեյը հատուկ արդյունավետությամբ և ջանասիրությամբ օգտակար ծառայություններ է մատուցել Ռուսաստանին։

Հիշյալ պատերազմի ընթացքում նրա մատուցած ծառայությունները բարձր են գնահատել ռուս զորավարներ Կուտուզովը, Պրոզորովսկին, Միլորադովիչը, Կամենսկին և ուրիշներ։ Հակառակ Մանուկ-բեյին իրենց կողմը գրավելու Բ. Դռան և Ավստրիայի կանցլերի փորձերին, նա պատերազմից հետո

---

81 *Gheorghe Bezviconi*, Manuc bei, ediţia II, Chişinău, 1938, p. 2.

Եւս շարունակեց մնալ ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան և հաստատվելով Բեսարաբիայում, Քիշնևից ոչ հեռու Հնչեշտում կառուցեց իր ավանը, ուր և բնակեցրեց բազմաթիվ հայերի։ Նրա կյանքի հետագա շրջանը մինչև նրա խորհրդավոր վախճանը (1817) սերտորեն կապված է Բեսարաբիայի և տեղի հայ գաղութի պատմության հետ[82]։

1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ռուշուկի համար մղված մարտերին (150 մարտիկներով) մասնակցեց Մոլդո-Վալաքիայի թեմի այն ժամանակվա առաջնորդ Դրիդոր արքեպիսկոպոս Ջաքարյանը։ Նա, իր ջոկատով անցնելով հայաբնակ վայրերից, ոգևորում էր բնակչությանը, կոչ անում օգնելու թուրքերի դեմ մարտնչող ռուսական զորքերին։ Այս մարտերից մեկում էլ նա վիրավորվում է։ 1810 թ. հունիսի 23-ին, երբ Ռուշուկը հանձնվում է ռուսներին, իր մարտիկներով քաղաք է մտնում նաև Գր. Ջաքարյանը և այնտեղ հանդիպում Մանուկ բեյին, որը եկել էր նախապես թուրքերի հետ բանակցելու և քաղաքը ռուսներին հանձնելու գործով։ Մանուկ բեյը և Գր. Ջաքարյանը, ինչպես նաև Մոլդո-Վալաքիայի և Բուլղարիայի մի շարք հայեր արժանանում են ռուսական շքանշանների[83]։

1848 թ. Եվրոպայում ծայր առած հեղափոխությունների ալիքը տարածվեց նաև Վալաքիայում և հարևան երկրներում։ Այս պայքարում անմասն չմնացին Բուխարեստի հայերը։ Հեղափոխական իրադարձությունների մեջ ակնառու դեր է խաղում հայազգի ճարտարապետ Հակոբ Մելիքը։ Հեղափոխության պարտությունից հետո դարձյալ նրա տանը թաքնվեցին հեղափոխության պարագլուխներից Յոն Հելիադե Ռըդուլեսկուն, Գ. Ա. Ռոսետտին և ուրիշներ։ 1848 թ. հեղափոխության մեջ, բացի Մելիքից, ընդգրկված էին բազմաթիվ հայ աշխատավորներ[84]։ Հեղափոխության պարագլուխներից Յոն Հելիադե Ռըդուլեսկուի պահակախումբը հիմնականում կազմված էր հայերից։ Հեղափոխության ճնշումից հետո «Հայկական փողոց»-ից ձերբակալվածների մեջ էին 28 արհեստավորներ։ Արգելափակեցին 13 երիտասարդի, 10 ծառայի, 6 դերձակի և 4 իրրիշիմջիի (մետաքսաթել վաճառող)։ Ձերբակալված հայերի թվումն էին Սկարլաթ Կարապետը, որը հեղափոխության ժամանակ Պոպա Ռուսուլի և Կայմաամայի եկեղեցիների զանգերն էր հնչեցրել, նպատակ ունենալով ոտքի հանել ժողովրդական զանգվածներին, քանի որ հիշյալ եկեղեցիները գտնվում էին «Հայկական փողոցին» շատ մոտիկ և որը համարվում էր հեղափոխության բույն[85]։ Ձերբակալվածների թվումն էր նաև հայ ծխախոտագործ Ալբըն Նազարեթը և առևտրական Սկարլաթ Պաթրովիչը, որոնք մեծ դեր էին կատարել հին իշխանության կանոնադրությունը հրապարակով այրելու գործում[86]։

---

82 *Gheorghe Bezviconi*, Նշվ. աշխ.։

83 Ա. Ադամյան, Վավերագրեր ռուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809—1811), ԴԱ «Տեղեկագիր», 1954, № 9, էջ 98—100։

84 «Էջմիածին», 1951, № 1—3, էջ 50—53։

85 *Ioana Cristache-Panait*, Unele probleme privind situaţia din Bucureşti după 13 sept. 1848, Studii, revistă de istorie, Bucureşti, 1963, № 4, p. 887—902.

86 *Cornelia C. Bodea*, Figuri puţin cunoscute din revoluţia dela 1848, Studii, revistă de istorie, Bucureşti, 1960, № 2, p. 145.

XIX դ. ռումինահայ գաղութում աշխուժանում է մշակութային կրթական գործը։ Բարեգործական սկզբունքներով հիմնվում են դպրոցներ։ Այդպիսիններից էր 1817 թ. Մանուկ բեյ Միրզայանի միջոցներով հիմնադրված դպրոցը, որը կոչվել է «Վարժոց մանկանց»։ Այդ դպրոցն իր վերելքն է ապրում հատկապես 1840-ական թթ., երբ նրա աշակերտների թիվը հասնում է 100-ի։ Կ. Պոլսից ակնցի Վարդերես Միսաքյան ամիրայի նվիրատվությամբ Բուխարեստի հայ եկեղեցու բակում կառուցվում է «Միսաքյան» վարժարանը։ 1847 թ. գործում է նաև աղջիկների դպրոցը՝ Ստեփան քահանայի գլխավորությամբ, որտեղ 1849 թ. դասավանդվում էր չորս լեզու, իսկ 1864 թ. աշակերտների թիվը հասնում էր 60-ի։



Էմեն Կիշ

1861 թ. հայկական դպրոցներ էին գործում նաև Դոբրուջայի Բաբադաղ և Տուլչա քաղաքներում, Բաբադաղի հայկական դպրոցում սովորում էր 25, իսկ Տուլչայի դպրոցում՝ 20 աշակերտ։

Ռումինահայ գաղութից դուրս եկան մարդիկ, որոնք աչքի ընկնող դեր խաղացին հայ գրականության զարգացման գործում։ Հիշատակության է արժանի Գրիգոր Անուշը։ Վրթանես Փափազյանը 1914 թ. հրատարակելով «Հանգանակ» խորագրով «Ի ծխավաճառ Սարգսէ ակնցւոյ ի մականուն անհաւատ կոչեցելոյ» երգիծական գրվածքը, այն համարել էր Գր. Անուշի (1768—1824) երկասիրությունը՝ հայ նոր երգիծաբանության անդրանիկ նմուշներից մեկը[87]։

Բուխարեստի հայերից գրականությամբ էին զբաղվում Պողոս և Մեսրոպ Սեբաստյան եղբայրները։ 1850 թ. Բուխարեստի հայերի նախաձեռնությամբ ռումինական բանահյուսության հայր Անտոն Պանի տպարանից ռումիներեն լեզվով լույս է տեսնում «Հայ եկեղեցու կողմից պահպանված քրիստոնեական կրոնի դավանած կանոնները» գիրքը։ Այն ռուսերենից ռումիներենի էր թարգմանվել Վ. Ի. Մուստակովի կողմից և հրատարակվել Դ. Ա. Դանիլոպուլի և վիրաբույժ Հաջի Ասատուրի միջոցներով, «թելադրությամբ և ցանկությամբ՝ հայոց ավագերեց Օհան Մելիքի։

87 Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցոյց, 1914, կ. Պոլիս, էջ 169—171։

Ճարտարապետության ասպարեզում աչքի ընկավ Հակոբ Մելիքը, որի անունն է կրում այժմ Բուխարեստի փողոցներից մեկը։

Հայկական դպրոցի սաներից էր Միքայել Աղեքսան Քացախյանը, որը 1841 թ. նշանակվում է Բուխարեստի գլխավոր ճարտարապետի տեղակալ։

Ռումինիայում փայտյա զարդաքանդակներ պատրաստելու բնագավառում հայտնի էր բուխարեստցի Պետրե (Պետրոս) Պապիկը։

1829 թ. Բուխարեստի քաղաքային բժշկապետն է դառնում Հովհաննես Սերաֆիմը։ Նույն դարի կեսերին էր գործում նաև վիրաբույժ Հաջի Ասատուրը։

* * *

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ։ XIX դարի սկզբներին բավական թվով հայեր էին ապրում Տրանսիլվանիայի հայաբնակ քաղաքներում. Եղիսաբեթուպոլսում կար 2300 հոգի կամ 450 տուն, Գեռլայում՝ 6000 հոգի կամ 1000 տուն, Ջուրջովում՝ 140 տուն, Սեպվիզում կամ Սիպվիզում՝ 54 տուն, կամ 312 հոգի։ Հայեր կային նաև Դևայում, Այնուտում, Աբրուդում, Գեղտի Վաշարհելյում (Տըրգուլ Սըկուլեսկ), Կանտայում, Օդորհելյում, Տիմիշոարայում, Սիբինում, Սաս Սեբեշում, Բրաշովում և այլն։ Հայեր էին բնակվում նաև Մարոշ Վաշարհելյում (այժմ Տըրգուլ Մուրեշ) և Օրադեայում։ Հայերի թիվը շուրջ 15000 էր, իսկ 1848 թ. հեղափոխության նախօրյակին ավելի է ստվարանում՝ հասնելով մինչև 20.000-ի։

Հունգարացի գիտնական Լ. Կեռվարին 1842 թ. գրում էր, որ Տրանսիլվանիայում հազիվ թե գտնվի գյուղ և քաղաք, որտեղ հայեր չլինեն[88]։ Տրանսիլվանիայից հայերի հոսքը դեպի Բանատ և Հունգարիայի զանազան վայրերը շարունակվում էր նաև հետագայում։ Տրանսիլվանիայի հայերից ոմանք, Բանատում կալվածներ գնելով, հաստատվում էին այնտեղ, ոմանք էլ, Հունգարիայում բարձր ուսում ստանալով, այլևս չէին վերադառնում նախկին բնակավայրը, ուրիշներն էլ գնում էին այլ վայրեր՝ աշխատանք գտնելու նպատակով։ Հայ գաղութի սոցիալական կազմը շատ տարբեր էր։ Բանատ նահանգի Տորոնտալ գավառում կային հայ կալվածատերեր, որոնք ստացել էին ազնվականական տիտղոսներ։ Նրանցից Քիշ կամ Քիշյան (Պատիկյան) ընտանիքը Տիմիշոարա քաղաքի մոտերքում տեր էր 2—3 միլիոն ֆլորին արժողությամբ կալվածների։ Սրանց կողքին կային չարքաշ կյանք վարող հայ գյուղացիներ։ Սակայն հայերի մեծ մասի զբաղմունքը դարձյալ մնում էր առևտուրն ու արհեստագործությունը։

Կապիտալիստական մանուֆակտուրայի հիմնադրման գործում դեռ անցյալ դարի վերջից սկսած կարևոր դեր էին խաղում Գեռլայի, Եղիսաբեթուպոլսի, Ջուրջովի և մյուս վայրերի հայերը։ Այդ տեսակետից հիշատակության արժանի էին Գեռլայի հայ առևտրականների՝ կաշեգործության, Եղիսաբեթուպոլսի՝ մոմագործության մանուֆակտուրաները և մոմ սպիտակեցնելու արվեստը[89]։

---

88 «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1905, էջ 194։

89 Şt. Imreh, Despre începuturile industriei capita'iste în Transilvania... Bucureşti, 1955, p. 10.

Սղիսաբեթուպոլսում մեծ ծավալ ուներ մսագործությունը։ 1837 թ. հաստատվեց մսագործների ընկերության կանոնադրություն։ Քաղաքային վարչությունը վարձով համքարությանը տրամադրում էր արոտավայրեր, ինչպես նաև զանազան այլ հարմարություններ։

Այստեղ դարասկզբում մեծաքանակ առևտրով էր զբաղվում Ստեփան Ալթուն օղլուն, որը սուլթանական ֆերմանով իրավունք ուներ Կ. Պոլսից ապրանք արտահանել Արևելյան Եվրոպա։ Նա առևտուր էր անում Մոլդովայի, Վալաքիայի, Բուլղարիայի և Սերբիայի քաղաքներում։ Ստեփան Ալթուն օղլուին իրավունք էր վերապահված Ավստրիական կայսրությունից իր բերած ապրանքները վաճառելու Արևելքի մի շարք երկրներում։

Հայաբնակ քաղաքները, իբրև կայսերական ազատ քաղաքներ, մոտավորապես կես դար (1791—1837) պայքարեցին տուրքերից, զինվոր պահելուց և այլ պարտավորություններից ազատվելու համար։ Սակայն կայսերական նոր հրովարտակով սահմանափակվեցին անցյալում հայերի վայելած արտոնությունները։ Հայերի փողով գնած քաղաքային հողերը համարվեցին արքունական։ Չեղյալ համարվեցին նաև դեռևս Մարիա Թերեզա կայսրուհու օրոք ոգելից ըմպելիքներից, տներից և մսագործությունից գանձվող հարկերից ազատ լինելու իրավունքները։

Հայկական գաղութում ստվարացող չքավորության վիճակը մասամբ բարվոքելու համար հայ հարուստներից ոմանք հիմնում են աղքատանոցներ, ծերանոցներ, որբանոցներ և այլն։

Հայկական կենտրոններում զարգանում էր դեմոկրատական ուղղության գրականությունը։ Հովհաննես Գապտեպովչյանի կողմից Սղիսաբեթուպոլսում XIX դարի սկզբներին գրված քարոզների և այլ բնույթի նյութերի անտիպ ժողովածուներում հեղինակը մերկացնում և անարգանքի սյունին էր գամում քաղաքի մեծահարուստներին։

Մեծ արժեք է ներկայացնում գեղացի հայ նշանավոր գործիչ Զաքարիա Կապրուշյանի «Գանգատ» խորագրով անտիպ պարսավագիրը, գրված 1834—1835 թթ., ուր հեղինակը քննադատում էր վերնախավի չարաշահությունները, հայ մեծամեծների հարստանալու մարմաջը։

1801 թ. Գեղայում վերջ տրվեց հայ վաճառականների կողմից իրենց ժողովները մայրենի լեզվով վարելու սովորությանը։ 1830 թ. կառավարությունը արգելեց հայ վաճառականներին հաշիվները հայերենով գրելը։ 1805 թ. Սղիսաբեթուպոլսի քաղաքային վարչությունը ևս ստիպված վերացնում է արձանագրությունները հայերենով գրելու կարգը։ 1839 թ. սկսած Գեղա հայաքաղաքում գիշերապահի հայերեն երգը երգվում է հունգարերեն։ Սղիսաբեթուպոլսի քաղաքային դպրոցում, ինչպես նաև Ղարամյանի կտակով հիմնված վարժարանում աշակերտները այլևս չէին սովորում հայերեն։ Հայ լեզուն սովորեցնելու իրավունքը վերապահված էր միայն քաղաքի Մխիթարյան վանքին կից գործող դպրոցին։ Անշուշտ, այս ամենին մասամբ նպաստում էր նաև հայ վերնախավի օտարամոլությունը։ Սակայն հակառակ այդ բոլորին, Տրանսիլվանիայի հայոց կենտրոնները դեռևս շարունակում էին հայախոս մնալ։ Եկեղեցիներում արարողությունը և քարոզները հայերեն էին, հայերեն էին արտասանվում նաև դամբանականները։ Հայերեն երգերը, պա-

րերը և հեքիաթները մեծ տարածում ունեին ընտանիքներում։ Հայ մտավորականները մայրենի լեզվով էին գրում իրենց ստեղծագործությունները և արտասահմանում հայերեն դասագրքեր էին տպագրում իրենց դպրոցների համար։

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հեղափոխության նախօրյակին Տրանսիլվանիայում ապրող ժողովուրդների առաջավոր զավակները փորձում էին մոտենալ, ճանաչել իրար և եղբայրանալ։ Ժողովուրդների եղբայրության կոչ էին անում ռումինական շարժման պարագլուխներից բանաստեղծ և քաղաքական գործիչ Ջեզար Բոլյակը (1813—1881), հունգարացի բանաստեղծ և հրապարակագիր՝ Սենտ Իվանի Միհալին (1813—1842), սաքսոն (գերմանացի) առաջնորդները և ուրիշներ[90]։ Հայերը ևս, որ երկար տարիներ Տրանսիլվանիայի բոլոր ժողովուրդների հետ տնտեսական և մշակութային սերտ կապերի մեջ են եղել, ջերմորեն պաշտպանում էին ժողովուրդների եղբայրության գաղափարը։

1848 թ. հեղափոխության նախօրյակին երկրի կյանքում հայերի տեսակարար կշիռը բավականաչափ մեծ էր։ Ռումինական շարժման երևելի գործիչներից Գ. Բարիցիուի (1812—1893) «Gazeta de Transilvania» թերթում հրապարակած եղբայրության կոչը ուղղված էր ոչ միայն երկրի մեծ թիվ կազմող ազգություններ՝ ռումիններին, հունգարներին և գերմանացիներին, այլև հայերին։ Եվրոպացի Ա. Դե Ժերանդոն հայերի մասին հատկապես նշում էր. «Նրանք (իմա՝ հայերը) հասկացան, որ երկրում բնակվող ազգերի միջև միասնությունն անհրաժեշտ է»[91]։

Հունգարիայում և Տրանսիլվանիայում 1848 թ. ծավալված հեղափոխության ալիքը կայսրության կազմում դարեր շարունակ ստրկացված և իրավազուրկ ժողովուրդների կողմից ընդունվեց մեծ ցնծությամբ։ Հեղափոխության սկիզբը համարվում էր «Մեռած ժողովուրդների հարության օր»։ Հայերը ևս Տրանսիլվանիայի և Հունգարիայի մյուս ժողովուրդների հետ միասին իրենց արյան գնով փառավոր էջեր արձանագրեցին հեղափոխության պատմության մեջ։ Գեղայի հայերը համաքաղաքային միտինգում երկու դեպուտատներ ընտրեցին Պեշտի աշխարհաժողովի համար։ Նույնպիսի ցնծության մեջ էր նաև Եղիսաբեթուպոլիսը, ուր զատկի օրը հունգարական դրոշակը ծածանվում էր եկեղեցու աշտարակների, քաղաքային վարչության և ակումբի վրա։ Ամենուրեք ուրախություն էր, լսվում էին երաժշտություն և «կեցցե ազատությունը» բացականչություններ։ Հայերից և հունգարացիներից կազմված պահակազորը Անտոն Բոգդանֆի(յան) հայազգի հազարապետի գլխավորությամբ, հունգարական ազգային դրոշակով և երաժշտությամբ դուրս գալով քաղաքային վարչության շենքի առաջ, սկսեց զինավարժությամբ զբաղվել։ Եղիսաբեթուպոլիսը ևս ընտրեց երկու երեսփոխան՝ Պեշտի աշխարհաժողովի համար։ Ինչպես մյուս ազգությունները, այնպես էլ հայերն այդ օրերին իրենց անվերապահ նվիրվածությունը հայտնելով հեղափոխության գործին, միաժամանակ առաջ են քաշել նաև ազգային կարևոր պահանջներ։ Հայերը գեղացի նշանավոր գործիչ Զաքարիա Կապրուշյանի առաջարկությամբ

---

[90] Din istoria Transilvaniei, vol. I, ediția II—a București, 1961, p. 342.

[91] A. De Gerando, La Transylvanie et ses habitants, Paris, 1850, p. 207.

օրակարգի հարց էին դարձրել նաև 133 տարի առաջ վերացված ազգային ինքնուրույն եպիսկոպոսությունը վերականգնելու խնդիրը։ Արտաքնապես կրոնական թվացող այդ պահանջը Տրանսիլվանիայի հայերի համար ուներ հայապահպանման կարևոր նշանակություն։ Նրանք հույսեր էին փայփայում, որ հիշյալ միջոցով ցրված հայերին դարձյալ կհամախմբեն հայաբնակ քաղաքների շուրջը և նրանց զերծ կպահեն ձուլվելու վտանգից։



Հովհաննես Ծեցյան

Հայաբնակ գաղութների պատգամավորները Պեշտի աշխարհաժողովում ելույթներ էին ունենում, իրենց հայրենակիցներին տեղյակ էին պահում անցուդարձերին, նպաստում էին հայկական կենտրոններում պաշտպան վարդիա ստեղծելու գործին։ Հունգարական հեղափոխության առնկուն ղեկավար Լայոշ Կոշուտը Գեռլայի դեպուտատ Գրիգոր Սիմայանին էր վստահել Տրանսիլվանիայի ազգությունների կոմիսարի պաշտոնը, քանի որ նա քաջ գիտակ էր նահանգի տարբեր ազգությունների վիճակին ու պահանջներին։ Հետագայում ծայր առած ազգամիջյան խռովությունները թույլ չտվեցին նրան շարունակելու այդ խիստ կարեվոր գործը։ Հեղափոխությանը հայերը տվեցին նշանավոր հերոսներ։

Հեղափոխության մասնակից հունգարացի գնդապետ Շանդոր Տելեկին այդ մասին գրել է. «Բոլոր ազգություններից միայն հայն է, որ ապրում է մեզ հետ միասին և մեռնում է մեզ համար... գինվոր է 1848—1849 թվականների Տրանսիլվանիայի պատերազմի ժամանակ...»[92]։

Տրանսիլվանիայի հայերը հեղափոխությանը տվել են երեք փառաբանված զորավարներ։ Դրանցից առաջինը էռնե Կիշ(յան)ն էր (1800—1849), որի գերդաստանը նախապես կոչվել է Ագոնց։ Մեծ էր նրա դերը հատկապես Բանատում՝ սերբական հակահեղափոխական զորքերը ջախջախելու գործում։ Նա իր տաղանդով աճեց և դարձավ հեղափոխության գեներալ և ապա հունգարական բանակի հրամանատար։ Նա ծնվել էր Եղիսաբեթուպոլիս հայաքաղաքում, մեծացել օտար միջավայրում, սակայն միշտ էլ մեծ սեր էր տածում դեպի իր ազգակիցները։ Գիներալ Վիլմոշ Լազար(յան)ը (1815—1849)

[92] Avedik Felix, A magyar, örményseg multja és történeti jelentösege, Budapest, 1921, էջ 8։

դարձյալ ծնվել էր Եղիսաբեթուպոլսում։ Նա իր զորքով Բանատում կարողացավ կասեցնել հեղափոխությունը ճնշելու համար ուղարկված ցարական զորքերին և աշքի ընկավ իր խիզախությամբ։ Հեղափոխության պարտությունից հետո Կիշ(յան)ն ու Լազար(յան)ն այլ ղեկավար զորավարների հետ մահապատժի ենթարկվեցին։ Տրանսիլվանիայի հեղափոխության փառաբանված ընդհանուր հրամանատար զորավար Բեմի աջ բազուկը դարձավ հայազգի գեներալ Հովհաննես Յոց(յան)ը (1822—1904), որը Գեղալի ծնունդ էր։ Բեմը նրան դարձրեց գեներալ և ապա 1849 թ. ապրիլին վստահեց Տրանսիլվանիայի հեղափոխական բանակի ընդհանուր հրամանատարի բարձր պաշտոնը։ Բացի տաղանդավոր զորավար լինելուց, Յոց(յան)ը հեղափոխության շրջահայաց դիվանագետներից էր։

Նա գտնում էր, որ չպետք է մեկուսացնել և թշնամացնել Տրանսիլվանիայի ժողովուրդներին, այլ պետք է համախմբել նրանց հեղափոխության շուրջը։ Նրա գրչին է պատկանում 1850 թ. Գերմանիայում հրատարակված գերմաներեն այն հատորը, ուր հմուտ կերպով Յոցյանը նկարագրել է Բեմի հեղափոխական բանակի անցած մարտական ուղու պատմությունը։ Հեղափոխության ճնշումից հետո նա մի կերպ ազատվեց թշնամու ճիրաններից և միայն նրա նկարը կախաղան բարձրացվեց։ Անցնելով Արգենտինա, նա կազմակերպեց Արգենտինայի զինվորական ակադեմիան և դարձավ նրա առաջին տնօրենը։ Դարձյալ նա է հիմնադրել Բուենոս-Այրեսի զինվորական աշխարհագրական ինստիտուտը։ Սակայն Յոցյանը չմոռացավ հայ ժողովրդին։ Նա սերտ կապերի մեջ էր իր ազգակիցների հետ և մինչև իր վերջին շունչն աշխատակցեց Գեղալում լույս տեսնող հունգարերեն հայագիտական «Armenia» հանդեսին։

Հունգարական հեղափոխության թնդանոթաձիգների հազարապետն էր հայազգի հերոս Դիոնիսիոս Լուքաչ(յան)ը, որին նախ մահվան դատապարտեցին, ապա այդ պատիժը փոխարինեցին բանտարկությամբ։ Քաղաքական խոշոր գործիչ էր նաև Ստեփան Կորովկ(յան)ը՝ (1819—1881)։ Նա քաղաքական մի շարք աշխատությունների հեղինակ էր և հունգարական ակադեմիայի թղթակից-անդամ։ Հեղափոխության տարիներին նա փայլեց իր կրակոտ ատենախոսություններով։ Ստեփան Կորովկ(յան)ն էր, որ Կոշուտի և Սաչվարիի հետ գրեց անկախության հռչակման հայտարարությունը, որով Հաբսբուրգյան դինաստիան գահընկեց հռչակվեց։ 1861 թ. արտասահմանից վերադառնալով հայրենիք, 1867—1870 ԹԹ. նա դարձավ Ավստրո-Հունգարիայի կառավարության առաջին հայազգի նախարարը։

Հայերը երկրին տվեցին նաև հայտնի գիտնականներ։ Դրանցից էր մեծ բուսաբան Գաբրիել Վոլֆ(յան)ը (1811—1892)։ Նա անդամ էր արտասահմանյան բազմաթիվ գիտական ընկերություններին։ Երկրի նշանավոր բուսաբաններից էր նաև հայազգի Անտոն Յոց(յան)ը (1801—1865)։ Այս երկու գիտնականների կողմից հայտնաբերված մի շարք բույսեր կոչվում են նրանց անուններով։

Բժշկապետ Ստեփան Մալի(յան)ը հեղափոխության բոցաշունչ բանաստեղծ-հերոս Շանդոր Պետեֆիի մտերիմ բարեկամն էր և մասնակից 1848 թ համալսարանական ցույցերի։ Մալիյանը գործակցում էր «Armenia»-ին և

հայկական թանգարանին։ Դոկտ. Մարտինոս Ջաուչյանը 1848—1849 թթ. հունգարական համալսարանի ռեկտորի տեղակալն էր։ Երկրի հայտնի գրողների շարքում հիշատակվում են նաև բնիկ գեղացի Լասլո Կորովեյ(յան)ը (1780—1839), Օգոստինոս Էտվեոշ(յան)ը (1811—1861) և ուրիշներ։ Միքայել (Մինաս) Մալի(յան)ն (1799—1858) հունգարական ճարտարապետական ակադեմիայի ականավոր դեմքերից և ամենահայտնի ռազմագետ շինարարներից մեկն էր։

Հունգարիայի և Տրանսիլվանիայի հեղափոխության պատմության մեջ հերոսական էջեր է արձանագրել Գեղալյի, Եղիսաբեթուպոլսի, Ջուրջովի, Սեպվիզի և այլ վայրերի հայ ազգաբնակչությունը։ Հայերը օգնել են ոչ միայն նյութապես, այլև կարևոր դեր են խաղացել իբրև թարգմաններ, բանբերներ, դիվության քույրեր և այլն։

Տրանսիլվանիայի հայ գաղութը 1848—1849 թթ. հեղափոխության ճնշման հետևանքով ծանր կորուստներ կրեց։ Հատկապես մեծ հարված ստացավ նրա խոշորագույն կենտրոններից Եղիսաբեթուպոլիսը։ Բացի այն, որ կայսերական բանակները բազմիցս կողոպտեցին Եղիսաբեթուպոլսի գանձերը և ունեցվածքը, մոտակա և հեռավոր 44 քաղաքների, ավանների և գյուղերի բնակիչները ևս թալանի և հափշտակության ենթարկեցին քաղաքի բոլոր տները, շուրջ 500.000 ֆլորին վնաս պատճառելով[93]։ Շատ ավելի ուշ այդ թալանված ավարից միայն աննշան իրեր վերադարձվեցին քաղաքին։ Գեղալն ևս մեծ ռազմատուգանք վճարեց և ավարի ենթարկվեց։ Հայկական կենտրոնները մեծ վնասներ կրեցին նաև դրամական ռեֆորմի հետևանքով. միայն Գեղալն 411.000 թղթադրամ հանձնեց։ Տրանսիլվանիայի հայերից շատերը աշխատանք փնտրելու համար ստիպված եղան ցրվել երկրով մեկ, իսկ բազմաթիվ այլազգիներ էլ հաստատվեցին նրանց կենտրոններում։ Այս բոլորի հետևանքով զգալիորեն հետադիմեց հայկական կենտրոնների տնտեսական, ազգային և քաղաքական կյանքը։

1861 թ. Մանուկ Դապտեպովյանի կտակի համաձայն հիմնվեց «Դապտեպովյան հիմնարկությունը», որը սատարելու էր Եղիսաբեթուպոլսի աղքատ աշակերտների ուսմանը և ստեղծելու աղքատների հատուկ ապաստարան։

Տրանսիլվանիայի հայերի պատմության մեջ 1850—1870 թթ. լուսավոր մի շրջան էր, երբ բոլոր հայկական կենտրոնները համախմբվելով, միասնական ուժերով սկսեցին պայքար ծավալել հանուն ազգային ավանդույթների վերականգնման։ Գեղալի, Եղիսաբեթուպոլսի և Ջուրջովի հայերը 1868 թ. երկրի մշակույթի նախարարին գրած իրենց դիմումում հայտնում էին, որ իրենք «չեն կարող երևակայել ու ենթադրել, թե հազարամյա ծեսը փչանա... Մենք օրինավոր արդարություն կուզենք...»։

Գեղալի ղեկավարությունը գրում էր. «Եթե հայ եպիսկոպոսության վերականգնմանը չօգնեն, ապա մեր ազգությանը և եկեղեցուն վտանգ է սպառնում»։ Շատ մեծ եղան այս շրջանում հատկապես հոգևոր հովիվ և պատ-

---

93 Գր. Գովրիկյան, Հայք Եղիսաբեթուպոլիս, Տրանսիլուանիոյ..., հատ. Գ, Վիեննա, 1904, էջ 321—357։

մաքան Խաչիկ Լուքաչյանի ջանքերը, որն այդ նպատակի հաջողության համար 1867 թ. հրատարակեց «Տվյալներ Տրանսիլվանիայի հայերի պատմությունից» հունգարերեն գիրքը, ուր հատկապես անդրադառնում էր Տրանսիլվանիայի հայերի առաջնորդական աթոռի վերականգնման հրատապ հարցին։ Չնայած իր առաջացած տարիքին, Լուքաչյանը 1872 թ. Հռոմ գնաց և պապին ներկայացավ, սակայն ամեն մի փորձ անարդյունք մնաց, թեև իր ամբողջ ունեցվածքը նվիրաբերեց հիշյալ հարցի հաջող լուծման գործին[94]։

Տրանսիլվանիայի հայաբնակ գաղութում ամբողջ XIX դարի ընթացքում հայերը շարունակում էին ձեռագրերի ընդօրինակման գործը։ Սակայն, ի տարբերություն նախորդ դարից, այս ժամանակաշրջանում արդեն գերակշռում էին տրանսիլվանական հողում ստեղծված ինքնուրույն ստեղծագործությունների ընդօրինակման աշխատանքները։ Գեղայում իբրև բազմարդյուն գրիչներ գործում էին Մանուկ Բաշգուլյանը, Զաքարիա Կապրուշյանը, դպրապետ Խաչատուր Հորմյանը, Եղիսաբեթուպոլսում հիշվում են Հովհաննես Գապտեպովյանը, Զաքարիա Տոնականյանը, Բրաշով քաղաքում՝ Գրիգոր Սարգսյանը և ուրիշներ։ Հայերը Եղիսաբեթուպոլսում և Գեղայում ունեցել են մատենադարաններ, գրադարաններ ու դիվանատուն։ 1818 թ. Գեղայի գրադարանը կարգի է բերել և ցուցակագրել Զաքարիա Կապրուշյանը։ Այդ բոլորը հետագայում կորիզը հանդիսացան Գեղայում ստեղծված հայկական թանգարանի։ Ջուրջովն ու Սեպվիզն էլ ունեցել են իրենց համեստ գրադարանները։ Կայսրության մղած պատերազմների հետևանքով դատարկված գանձարանը մեծ գումարով համալրելու առթիվ Գեղայի հայերը Ֆրանց II կայսրից 1806 թ. ստացան հռչակավոր նկարիչ Ռուբենսի «Քրիստոսի իջեցումը խաչից» մեծադիր նկարը։

Սկսած XVIII դարի վերջից և հատկապես XIX դարի սկզբից Տրանսիլվանիայի հայկական դպրոցները վերելք են ապրում։ Մեծ անուն վաստակեց Եղիսաբեթուպոլսի հայկական դպրոցը։ 1814 թ. այն 57 աշակերտ ուներ։ Հիմնվում է նաև աղջիկների դպրոց։ Ամուր հիմքերի վրա է դրվում տղաների քաղաքային վարժարանը։

Գեղայի դպրոցը ևս ապրում է իր վերելքը։ Այստեղ 1818—1860 թթ. բեղմնավոր աշխատանք կատարեց Զաքարիա Կապրուշյանը։ Նրա աշակերտներից էին դոկտ. Վարդան Ըստկարյանը (1843—1886), որը հեղինակ է մի քանի գրքերի և եղել է Վիեննայի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայրը, Խաչիկ Սոնկոտյանը (1843—1907), որը խմբագրեց «Armenia» հանդեսը։ Սեպվիզի հայ դպրոցը ևս իր վերելքն է ապրել 1797 թ. սկսած։ Շնորհիվ Աղ. Ինճիճյանի ջանքերի, այս աղքատիկ և փոքրաթիվ հայ գաղութն իր դպրոցին տալիս է 56—60 աշակերտ։ Դպրոց կար նաև Ջուրջովում։ 1832 թ. Ղարամյանը օրիորդաց դպրոց է հաստատել Կլուժում։

Տրանսիլվանիայի հայաբնակ գաղութում հանդես է գալիս ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն գրականություն։ Այդ տեսակետից հիշատակության արժանի են Զաքարիա Կապրուշյանի ավելի քան 32 ձեռագիր և ցարդ անտիպ

---

94 Գր. Գովրիկյան, Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա հայաքաղաքի, Վիեննա, 1896, էջ 143—149։

մնացած հատորները, որոնք արժեքավոր են Գեղյա հայաբնակ գաղութի մտավոր և հասարակական կյանքի պատմության ուսումնասիրման համար։ Եղիսաբեթուպոլսում դեռևս XVIII դարի վերջից դպրոցին առընթեր կազմակերպվում էին թատերական ներկայացումներ։ Գեղյայում ևս XIX դարի սկզբում գործում է դպրոցական թատրոն։

Իբրև անմիջական հետևանք ազգային ինքնուրույնության պահպանման համար մղված պայքարի, Տրանսիլվանիայի հայերի մոտ այս շրջանում ըսկըսեց զարգանալ իրենց անցյալն ուսումնասիրելու ձգտումը, երևան եկան առաջին պատմագիտական աշխատությունները։

Առաջին հայ պատմագիրը, որը միջազգային ասպարեզ դուրս բերեց ինչպես ընդհանրապես հայ ժողովրդի և ի մասնավորի հայ գաղթավայրի պատմությունը, Խաչիկ Լուքաչյանն էր (1804—1870)։ Նա 1859 թ. Վիեննայում հրատարակեց «Տրանսիլվանիայի հայերի պատմություն»[95] լատիներեն աշխատությունը, ուր խոսում է հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայ ծեսի և Տրանսիլվանիայի հայոց պատմության մասին։ Նա 1867 թ. հունգարերեն լույս ընծայեց նաև «Տվյալներ Տրանսիլվանիայի հայերի պատմությունից» գործը[96], որտեղ լրացումներ կատարեց հայ գաղթավայրի պատմության վերաբերյալ և հատկապես կանգ առավ հայկական առաջնորդության վերականգնման հարցի վրա։ 1870 թ. դարձյալ Լուքաչյանն էր, որ հրատարակեց հունգարերեն «Հունգարացիների նախնիները, նրանց վաղեմի անունները և բնակավայրերը ըստ հայ աղբյուրների» ծավալուն աշխատությունը, ուր զետեղել էր նաև հայ-հունգարական կապերին վերաբերող հայերեն բնագրեր[97]։

ԲՈՒԼՂԱՐԻԱ։ Դարեր գոյատևելով, բուլղարահայ գաղութը հիմնականում պահպանեց իր ազգային կերպարանքը նաև նոր ժամանակներում։ XIX դարի սկզբին Շումենում (Կոլարովգրադ), բնակվում էին շուրջ 200 տուն հայ, Վառնայում և Ռուսչուկում (Ռուսե)՝ 150-ական, Ֆիլիպոպոլսում (Պլովդիվ)՝ 100, Թաթար-Բազարչիկում (Բազարջիկ) և Հաջի-Օղլու-Բազարչիկում (Դոբրիչ, Տոլբուխին)՝ 30-ական, Բուրգասում, Ռազգրադում, Պրովադիայում և Սիլիստրայում՝ 20-ական։ Այտոսում, «սակաւ տունք Հայոց», իսկ Սոֆիայում՝ «յառաջագույնք բազում էին..., սակայն հայ բնակիչք ցրուեալ յայլ և այլ կողմանս»[98]։

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Բուլղարիայում սաստկացան թուրքական ճնշումներն ու հալածանքները. մասսայական բնույթ ստացան բռնություններ ու կամայականությունները, ապօրինի գանձումներն ու բացարձակ կողոպուտը, որոնց հավասարապես ենթարկվում էին թե՛ բուլղարները և թե՛ հայերը։

Անընդհատ սաստկացող թուրքական ճնշումներն ու բարբարոսությու-

---

[95] *Lukaksi Chr.*, Historia Armenorum Transilvaniae, Viena, 1859.

[96] *Lukácsi Kristóf*, Adalékok az erdély örményekk történetéhez, Kolozsvár, 1867.

[97] *Lukácsi Kristóf*, A magyarok öselei, hajdankori nevei és lakhelyei, Eredeti örmény kutfők után, Kolozsvár, 1870.

[98] Մ. Բժշկեան, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ այլ կողմանս բնակեալս ի Հայկազեանց...*, Վենետիկ, 1830, էջ 209—215։

ները լուրջ հարված հասցրին նաև բուլղարահայ գաղութներին։ Հայ բնակչության տեղաշարժի հետևանքով մի շարք հայկական գաղութների, ինչպես Սոֆիայի, Բրնովոյի, Ֆիլիպոպոլսի և այլն, ազգային կյանքը թոշնեց, իսկ մի շարք հայկական գաղութներ էլ, ինչպես Պրովադիայի, Ռազգրադի, Այտոսի և այլն, բոլորովին դադարեցին գոյություն ունենալուց։ Այդ պրոցեսին նպաստեցին նաև պարբերաբար ծագող ռուս-թուրքական պատերազմները, որոնց ընթացքում թուրքերը բազմիցս ավերեցին Վառնան, Շումենը, Ռուսչուկը, Ֆիլիպոպոլիսը, Այտոսը, Բուրգասը, Պրովադիան, Ռազգրադը, Բրնովոն և այլ քաղաքներ, որոնք միաժամանակ հանդիսանում էին բուլղարահայության մեծ ու փոքր կենտրոններ։

Ինչպես նախորդ դարերում, այնպես էլ նոր ժամանակներում բուլղարահայությունը հիմնականում բնակվում էր քաղաքներում։ Նրա ճնշող մեծամասնությունը զբաղվում էր արհեստներով, հատկապես՝ ոսկերչությամբ, կաշեգործությամբ, կոշկակարությամբ, դերձակությամբ, ներկարարությամբ և թիթեղագործությամբ։

Բացի մանր արհեստավոր-վաճառականներից, որոնք մեծ տեսակարար կշիռ ունեին բուլղարահայության ընդհանուր զանգվածում, կային նաև խոշոր առևտրականներ, որոնք նշանակալից դեր էին խաղում Բուլղարիայի և՛ ներքին, և՛ արտաքին, և՛ տարանցիկ առևտրի ասպարեզում՝ մենաշնորհակից դարձնելով երկիրը ինչպես Ռուսաստանի ու Ուկրաինայի, այնպես էլ Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի հետ[99]։

Բուլղարահայության շարքերում կային նաև գյուղացիներ, որոնք բնակվում էին մասնավորապես Աջեմլեր, Կոզլուջա, Կերմենլի, Ախի-Օրման, Ջամբազը և Միսիլիմի գյուղերում։ Նրանք զբաղվում էին այգեգործությամբ, գլխավորապես՝ խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ[100]։

Զգալի տեսակարար կշիռ ունեին նաև բուլղարահայ քաղաքային և գյուղական ընչազուրկ տարրերը, որոնք հանդես էին գալիս բեռնակիրների, սեզոնային բանվորների, ջրկիրների, տնային ծառայողների, բատրակների և գյուղատնտեսական բանվորների դերում[101]։

XIX դարի առաջին կեսում ազգային կյանքը բուլղարահայ գաղութներում ապրում էր գրեթե համընդհանուր անկում։ Ազգային վարժարանները, որ գոյություն ունեին Ֆիլիպոպոլսի, Վառնայի, Շումենի, Ռուսչուկի և Թաթար-Բազարջիկի հայ-լուսավորչական եկեղեցիներին առընթեր, գտնվում էին նյութական անձուկ վիճակում։

Անդրադառնալով բուլղարահայության ուսումնա-դպրոցական գործի դրվածքին, լավատեղյակ ժամանակակիցներից մեկը վկայում է. «Եվրոպական Թուրքիայում գրեթե չեն հանդիպում հայկական իգական ուսումնարաններ։ Վառնայում կա միայն մեկ՝ արական հայկական դպրոց, այն էլ շատ խրճձուկ վիճակում։ Նա ունի ընդամենը երկու ուսուցիչ, տեղավորված է եկեղեցու

99 Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցոյց, Վենետիկ, 1926, էջ 656—658, տե՛ս նաև ЦГИА УКР. ССР (այսուհետև ՈՒԿՊԱ), ֆ. 59, I, գ. 95, թ. 46, գ. 122, թ. 77։

100 ԿՊՌՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 211, թ. 57, 67, գ. 214, թ. 21, 25, 27, 227, 283։

101 Նույն տեղում, գ. 211, թ. 4, գ. 219, թ. 37։

բակում կառուցված մեկ ոչ մեծ սենյակում՝ թեպետ և դպրոց են հաճախում հարյուրից ավելի պատանիներ։ Այդ շինությունը այնքան փոքր է, որ աշակերտների $^3/_4$ մասը նստում է հատակին՝ նստարաններ դնելու համար տեղ չլինելու հետևանքով... Ուսումնարանը կարիք ունի ամեն ինչի, անգամ անհրաժեշտագույն դասագրքերի... Վառնայի հայ բնակչությունը և նրա համայնքը աղքատ են, աղքատ՝ բուլղարականից և շատ ավելի աղքատ՝ հունականից... նրանք միջոցների իրոք մեծ կարիք ունեն»[102]։

Քրիստոնյաների իսլամացման քաղաքականությունը, որ հետևողականորեն վարվում էր Բուլղարիայում, ինչպես և այնտեղ ծվարած սակավաթիվ հայության ազգային ուսումնառության անմխիթար դրվածքը հանգեցրել էին նրան, որ XIX դարի առաջին կեսին մայրենի լեզուն բուլղարահայ գաղութներում մղվել էր հետին պլան և փոխարինվել թուրքերենով։ Անգամ Վառնայում, ուր կար նորակառույց եկեղեցի (1842 թ. սբ. Սարգիս) և ազգային դպրոց, շատ քչերն էին, ինչպես վկայում է ուղեգիրներից մեկը, որոնք խոսում էին հայերեն։

Բուլղարահայերի կացությունը էապես փոխվեց XIX դարի կեսին՝ կապված Բալկաններում շարունակվող թուրքական բռնությունների, ֆեոդալական հարաբերությունների հետագա քայքայման և կապիտալիստական հարաբերությունների ձևավորման հետ։ Հույն, բուլղար, հայ և մյուս ժողովուրդների ազգակազմավորման պրոցեսը, նրանց ազգային-ազատագրական շարժումները նպաստեցին բալկանահայության ազգային զարթոնքին։ «Ազգությունների ընդհանուր վերածնունդը ազդեցություն է գործել նաև այստեղի հայերի վրա... նրանք արդեն թևակոխել են ազգության վերածննդի, այսպես ասած, առաջին փուլը»[103],— իրավացիորեն նկատել է ռուս բանաստեղծ-դեմոկրատ Ալեքսանդր Օլխինը, որը 1862—1865 թթ. ծառայել է որպես փոխհյուպատոս Վառնայում։

Ղրիմի պատերազմից հետո բուլղարահայ գաղթավայրերն ընդունեցին արևմտահայ նոր գաղթականներ։ Բուլղարիայում, Թրակիայում և Մակեդոնիայում բնակվող հայերի թիվը հասավ 140 հազարի[104]։ Նկատելիորեն աճեց Փիլիպպոպոլսի, Վառնայի, Շումենի և Ռուսչուկի հայության քանակը, վերականգնացան Սոֆիայի, Թաթար-Բազարչիկի, Սիլիստրայի, Բուրգասի և մի շարք այլ քաղաքների խամրած հայկական գաղթօջախները։ Բուլղարական հողում հիմնադրվեցին հայկական նոր համայնքներ, ինչպես Վիդինում, Ճամբոլում, Սվիշտովում (Սիստովո) և այլուր։

Բալկանյան ժողովուրդների և բալկանահայության սոցիալ-տնտեսական և ազգային-քաղաքական կյանքում նկատված տեղաշարժերը խթանեցին հայ-բուլղարական առնչությունների հետագա զարգացմանը։ Գիտակցելով հայ և բուլղար ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի արմատական շահերի ընդհանրությունը, հայ հասարակական-քաղաքական գործիչները ըս-

102 ՌԱՔԱ, ֆ. Դեսպանությունը Կոստանդնուպոլսում, գ. 1615, թ. 87։
103 Նույն տեղում, թ. 88—89։
104 ԿՊՌՊԱ, ֆ. 430, գ. 269, թ. 1։

կրսեցին իրենց ուժերի ներածին չափով նպաստել բուլղար ժողովրդի ազգային ազատագրական շարժման վերելքին։ Այդ ասպարեզում հատկապես մեծ են պոլսահայ փորագրիչներ ու տպագրիչներ Թ. Տիվիթճյանի, Հ. Մինասյանի, Ճ. Աբամյանի, Հ. Պոյաճյանի, Հ. Փափազյանի, Հ. Կավաֆյանի և այլոց ծառայությունները։ Շնորհիվ նրանց ջանքերի Կոստանդնուպոլիսը դարձավ բուլղարական տպագրական գործի կենտրոններից մեկը, ուր 1840—70-ական թվականներին լույս տեսան 202 անուն բուլղարերեն գրքեր, 17 անուն լրագրեր ու ամսագրեր, 31 անուն տարեգրքեր՝ տոգորված բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական գաղափարներով։ Ընդ որում, Թադեոս Տիվիթճյանը, որը սերտ հարաբերությունների մեջ էր բուլղար լուսավորիչներ Կոնստանտին Օգնյանովիչի, Իվան Բոգորովի, Պետկո Սլավեյկովի և այլոց հետ, հանդիսացավ Կոստանդնուպոլսում առաջին բուլղարական տպարանի («Տրուդոլյուբիվա պչյոլա») հիմնադիրն ու տնօրենը, բուլղար առաջին գրաշարների ու տպագրիչների ուսուցիչը։ Բացի լեզալ գրքերից (74 անուն) և «Ցարգրադսկի վեստնիկ» հանրահռչակ լրագրից, նա լույս է ընծայել նաև անլեգալ գրականություն, այդ թվում մարտական կոչեր և թռուցիկներ՝ ուղղված բուլղար ժողովրդին։ Ընդսմին նա սեփական ձեռքերով իր տպագրատան արտադրանքը տարածել է Բուլղարիայում, որի համար էլ ենթարկվել է հալածանքների։

Հայ ժողովուրդը լայնորեն արձագանքեց բուլղարների ազգային-ազատագրական շարժման վերելքին, ջերմորեն ողջունեց նրանց հերոսական ելույթները, հնարավորությունների սահմանում ապստամբներին ցույց տվեց բարոյական և նյութական աջակցություն։ Նա դատապարտեց թուրքական իշխանությունություններին, որոնք հրի ու սրի մատնեցին բուլղարական բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր։ Բուլղարահայերը լիովին բաժանում էին բուլղար ժողովրդի բախտը և ակտիվորեն մասնակցում ապստամբական շարժումներին։ Շնորհիվ իրենց անձնուրաց գործելակերպի բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ մտան բազմաթիվ բուլղարահայեր։ Հիշարժան են հատկապես Կավառնայի փոստ-հեռագրատան պաշտոնյա Երանոս Երանոսյանը, որը զոհվել է հանուն Բուլղարիայի ազատագրության, Հովհաննես Ալաջաջյանը, որը սերտ կապերի մեջ է եղել բուլղար հեղափոխականների հետ և փրկել է Գեորգի Ռակովսկու կյանքը, Գեորգ Ռուսչուկլյանը (Թադեոս Պողոսյան), Արթին Գեդիկովը (Հարություն Գեդիկյան), Կարապետ Թագվորյանը, Խաչեր Վարդազարյանը, Կարապետ Փափազյանը և ուրիշներ[105]։

Հայ ժողովուրդը եղբայրական օգնության ձեռք է մեկնել նաև բուլղար հեղափոխականներին, որոնք բանտարկվում և աքսորվում էին Թուրքիայի հոգրասիական նահանգները, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստան։ Իրենց անշահախնդիր աջակցությամբ և օգնությամբ նրանք նպաստեցին բուլղար աքսորականների տառապանքների թեթևացմանը և կյանքի պահպանմանը։ Դիարբեքիրը, որը հանդիսանում էր բուլղար աքսորականների կենտ-

105 *С. В. Овнанян*, Армяно-Болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во II половине XIX в., Ереван, 1968.

րոնատեղի, պատմության մեջ մտավ որպես հայ և բուլղար ժողովուրդների եղբայրական հարաբերությունների ամրապնդման վայր։ Բուլղար աքսորականները, որոնց թվում էին ականավոր հեղափոխականներ Անգել Օբրեհենովը, Գեորգի Միրկովիչը, Աթանաս Ուզունովը, Պյոտր Բերկովսկին, Ստոյան Զաիմովը և ուրիշներ (շուրջ 200 հոգի), որոշակի հետք թողեցին արևմտահայերի հասարակական-քաղաքական կյանքում։ Թերևս նրանց ազդեցությամբ Դիարբեքիրում 1865 թ. հիմնադրվեց «Հայրենասիրաց» դեմոկրատական կազմակերպությունը։

Բալկանյան ժողովուրդները, ինչպես և բալկանաբնակ հայերը, թուրքական լծից ազատագրվելու գրավականը տեսնում էին ռուսական զենքի հաղթանակի մեջ։ Բալկանյան «բոլոր քրիստոնյաները անհամբեր սպասում են,— շեշտված է Վառնայի ռուսական փոխհյուպատոս Վ. Նյագինի 1870 թ. զեկուցագրերից մեկում,— Ռուսաստանի պատերազմին՝ ընդդեմ Թուրքիայի, որպեսզի ցույց տան ամեն տեսակի աջակցություն... Ներկայումս Ռուսաստանի Արևելյան պատերազմի դեպքում քրիստոնյա բոլոր ժողովուրդները համատարած կապստամբեն ու ռուսների հետ կշարժվեն նրանց բոլոր թշնամիների դեմ և պատրաստ են ամեն ինչ զոհաբերելու իրենց ազատագրության համար»[106]։

3. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։ XIX դարի առաջին կեսին Պարսկաստանը շարունակում էր մնալ որպես միջնադարյան հետամնաց ագրարային երկիր։ Կյանքի ու գույքի անապահովությունը ստիպում էր պարսկահայ բնակչությանը գաղթել դեպի ապահով վայրեր՝ Հնդկաստան, Ռուսաստան և այլ երկրներ։ «Այդ ժամանակ,— վշտով գրում է ժամանակակից պատմիչ Խաչատուր Ջուղայեցին,—ջուղայեցի հայերը ամբողջապես ցրվեցին երկրի երեսը... ոմանք գընացին Հնդկաստան, ուրիշներ՝ Ռուսաստան և կեսը՝ աշխարհի այլ երկրամասեր»[107]։ Գաղթում էր գլխավորապես պարսկահայ բնակչության ունևոր խավը։ Պարսկաստանում մնում էին առավելապես գյուղացիները և արհեստավորները, այսինքն՝ նրանք, ովքեր գաղթելու հնարավորություն չունեին։

Պարսկահայության դրությունը ավելի ծանրացավ XIX դարի հիսունական թվականներին։ Պարսկաստանի մի քանի գաղթավայրեր՝ նեղվելով պարսկական լեռնաբնակ ցեղախմբերի վայրագություններից, 1850 թ. մարտի 19-ին դիմել են Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին և խնդրել միջոցներ փնտրել իրենց հայրենիք փոխադրելու համար։ «Զարհուրելի է մեր նեղությունը,— գրել են նրանք,— անտանելի է մեր կեղեքանքը, անհանդուրժելի է մեր հալածանքը և անպատմելի են պես-պես անօրենությունները, որ չարաչար և անընդմեջ կրում ենք բախտիար փոչվող պարսկական ամբարիշտ բարբարոս ցեղախմբերից»[108]։

---

106 ՌԱՔԱ, Դեսպանությունը Կոստանդնուպոլսում, գ. 162 (բ), թ. 49։

107 Տե՛ս Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 289։

108 Հ. Կարբեցի, Ուղեգրութիւն, Մատենադարան, ձեռ. 2821, թ. 32ա։

XIX դարում պարսկահայ բնակչության նվազման հետևանքով խամրել էին Պարսկաստանի նախկին բազմամարդ գաղութներից շատերը։ Տվյալ ժամանակաշրջանի պարսկահայ բնակչության թվի մասին մեզ որոշ պատկերացում են տալիս «Մասյաց աղավնիում» հրապարակված 1851 թ. վիճակագրական տվյալները, որոնցից երևում է, որ Հարավային Պարսկաստանի հինգ քաղաքներում և 78 գյուղերում ապրում էր ընդամենը 19 հազար հայ։ Ըստ այդ տվյալների, պարսկահայ գաղթօջախների բնակչության թիվը հետևյալ պատկերն ուներ.

Վ ա յ ր	տուն	շունչ
Նոր Ջուղա	375	2550
Թեհրան	75	310
Վանակ և Գեոթրիար գյուղեր (Թեհրանի մոտ)	43	211
Շիրազ	7	34
Բուշեր	9	65
Համադան	40	234
Համադանի մոտիկ գյուղերը	76	316
Ջարմահալի գավառ	306	2067
Փերիայի գավառի 25 գյուղերում	1012	6543
Բուրվարի 16 գյուղերում	446	3005
Քեամարայի 5 գյուղերում	124	751
Ջյաքլայի 8 գյուղերում	183	1112
Քյազավի 7 գյուղերում	151	981
Մալայիրի 4 գյուղերում	101	581
Ղարադանի 4 գյուղերում	102	773

Ինչ վերաբերում է Աստրպատականի թեմին, ապա 1828—1830 թթ. արտագաղթից հետո զգալի թվով հայեր դեռ շարունակում էին մնալ իրենց ապրած վայրերում։ XIX դարի կեսերին Թավրիզի և նրա շրջակա գավառներում ապրող հայ բնակչության թիվը հաշվվում էր մոտավորապես 15.000—20.000 հոգի։

Հյուսիսային Պարսկաստանում հայերը բնակվում էին Թավրիզում, Խոյում, Մակուում, Սալմաստում, Ուրմիայում, Բարանդուզում, Սուլդուզում, Միանդաբում, Մարաղայում և Ղարադաղում։

Պարսկաստանի հայ բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր, որը XIX դարի առաջին քառորդում մեծ մասամբ գտնվում էր կիսաճորտական վիճակում։ Բացի հողային ռենտայից և պետական հարկերից, հայ գյուղացիները պարտավոր էին աշխատել նաև արքաների (կալվածատերերի) տնտեսության մեջ և կոռային բազմատեսակ աշխատանքներ կատարել։

Նոր-Ջուղայի հայկական որոշ գյուղեր պատկանել են արքունիքին և մինչև 1847 թ. վճարել են բնամթերային ռենտա, որը հետագայում փոխարինվել է դրամական ռենտայով[109]։

109 Տեր-Հովհաննիսյանց, նշվ. աշխ., հատ. I, էջ 301։

Պարսկահայ գյուղացիությունը, պետական հարկերից բացի, պարտավոր էր պարսկա-հնդկական թեմի առաջնորդարանին վճարել նաև, այսպես կոչված, «հոգևոր» հարկ։ Այդ հարկը գանձվել է դիխավորապես բնամթերքով։

Պարսկահայ գյուղացիության, հատկապես Սպահանի շրջանում ապրող հայ գյուղացիության համար գոյություն ուներ մեկ այլ չարիք ևս. նրանց մոտիկ լեռնային մասերում ապրող լոր և բախտիար կոչվող ցեղախմբերը, օգտվելով տեղական իշխանությունների թուլությունից, պարբերաբար հարձակվում էին հայկական գյուղերի վրա, կողոպտում գյուղացիներին։ «Ցափշտակութիւն հօտից և անդեաց նոցա լինի անպակաս[110]», վշտով նշում է Տեր-Հովհաննյանցը։

Պարսկահայ գյուղացիությունը, գյուղատնտեսական աշխատանքից բացի, զբաղվում էր նաև գորգագործությամբ։ Պարսկաստանում հայերի գործած գորգերը հայտնի էին «Արմանիբաֆ» անունով և մեծ հռչակ ունեին միջազգային շուկաներում. նրանք ավելի թանկ էին գնահատվում, քան պարսկական սովորական գորգերը։

Պարսկահայ բնակչության սոցիալական կազմում զգալի թիվ էին կազմում արհեստավորները, որոնք կենտրոնացած էին քաղաքներում՝ Թավրիզում, Թեհրանում, Համադանում, Սպահանում, Շիրազում և այլն։

Պարսկահայերի մեջ զգալի մաս էին կազմում ջուլհակները, ոսկերիչները, դարբինները, որմնադիրները, կոշկակարները, հյուսները։ XIX դարում Պարսկաստանում ոսկերչությունը գրեթե ամբողջությամբ հայերի մենաշնորհն էր։ Հայ արհեստավորների ձեռքում էր նաև պարսկական արքունիքի ոսկերչությունը։

Պարսկահայ արհեստավորները մեծ հաջողություն ունեին նաև մուշտակագործության մեջ։ Նրանք աղվեսի, կզաքիսի, գառան և այլ կենդանիների մորթուց հրաշալի մուշտակներ էին պատրաստում։

Նոր-Ջուղայում կարևոր արհեստներից էին կտավագործությունը և գուլպայագործությունը։ Նոր-Ջուղայի ջուլհակները և գուլպա գործողները տարեկան վաճառքի էին հանում 130 հազարից մինչև 140 հազար կտոր կտավ և 25 հազարից մինչև 30 հազար զույգ գուլպա։

Մեծ թվով պարսկահայեր աշխատում էին ռազմական արդյունաբերության մեջ։ Թնդանոթ ձուլող գլխավոր վարպետների մեծ մասը հայ մասնագետներ էին, որոնք եկել էին Ռուսաստանից, Անդրկովկասից և արևմտաեվրոպական երկրներից։ Պարսկաստանում մեծ հռչակ էին վայելում նաև սուր պատրաստող և սրի վրա ոսկետառ փորագրություններ անող հայ վարպետները։

Պարսկահայ արհեստավորության շրջանում գոյություն են ունեցել համքարական (էսնաֆական) կազմակերպություններ՝ կոշկակարների, ոսկերիչների, զոնդաղսազների, դերձակների, հյուսների և այլն։

Ապրանքներից բազմաթիվ տեղերում մեծ մաքսեր էին գանձվում։ Ռեշտից մինչև Բենդերբուշիր ապրանք տեղափոխող վաճառականը պարտավոր

110 Նույն տեղում, էջ 302։

էր մաքս վճարել 14 վայրում, իսկ առևտրական քարավանների կողոպուտը, սովորական երևույթ էր Պարսկաստանում։

Ատրպատականի թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը 1855 թ. հուլիսի 27-ին Նասրեդդին շահին ներկայացրել է մի խնդրագիր՝ պարսկահայ համայնքների ծանր դրության մասին։ Նա խնդրել է հետևյալը. իրավունք չտալ հավատափոխ հայերին իրենց հարազատների գույքը գրավելու, արգելել հայերի հավատափոխությունը Պարսկաստանում, ամերիկյան միսիոներներին և կրոնական գրականություն տարածողներին թույլ չտալ գործել Պարսկաստանում, արգելել կալվածատերերին՝ հայ գյուղացիներից պահանջելու խոտ և ցախ, սահմանվածից ավելի մաքս չվերցնել Ռուսաստան աշխատելու գնացող հայ մշակներից, արգելել աղջիկ փախցնելը և փախցնողներին պատժել, սանձել Ղարադաղի խաների և բեկերի անիրավությունները, օգնել Թավրիզի հայկական դպրոցին 250 թուման նպաստով, պարսկական գյուղերում ցրված հայերին հավաքել մի տեղ, սիրով վարվել հպատակ հայերի հետ, Թավրիզի ու Թեհրանի հայերին ազատել ամեն տեսակի ապօրինի հարկերից, արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, թույլ տալ հայ եկեղեցիների զանգահարությունը, օրինականացնել հայ եկեղեցիների կալվածքային իրավունքը[111]։

Նասրեդդին շահն ընդառաջել է Գևորգ եպիսկոպոսի խնդրանքին և բավարարել նրա պահանջները։ Այդ առթիվ շահը հատուկ հրովարտակ է շնորհել Ատրպատականի թեմի առաջնորդին։

Հայ բնակչության դրությունը բարելավելու նպատակով Նասրեդդին շահին դիմել էր նաև Նոր-Ջուղայի թեմի առաջնորդ Թադևոս Բեկնազարյանը։ Նրան ևս հաջողվեց պարսկական արքունիքից մի շարք արտոնություններ ստանալ[112]։

Ստեղծված համեմատաբար նպաստավոր պայմաններում պարսկահայ բնակչության թիվը փոքր-ինչ ավելացավ։ Այսպես, Նոր-Ջուղայի 1851 թ. 2550 հայ բնակչությունը ավելանում և 1880 թ. հասնում է 4567-ի, Փերիայի հայկական 25 գյուղերինը՝ 6543-ից հասնում է 12.123-ի, Բուրլարի հայկական 16 գյուղերի բնակչության թիվը 3005-ից հասնում է 6115-ի և այլն[113]։

Նոր ժամանակներում Պարսկաստանի հայ գաղթավայրերում աչքի էին ընկել մի շարք հայ գործիչներ, որոնք ղեկավար դիրք էին գրավում Պարսկաստանի պետական, զինվորական և տնտեսական կյանքի բնագավառներում։

Ըստ շարիաթի, այլակրոնները արգելված է եղել պատասխանատու պաշտոններ վարելը։ Չնայած այդ արգելքներին, գտնվել են առանձին մարդիկ, որոնք, շնորհիվ իրենց ունակությունների, ղեկավար դիրք են գրավել պետական ապարատում։

Պարսկահայ պաշտոնյաների մի այլ խումբ ավարտել էր արևմտաեվրոպական և ռուսական համալսարանները։ Դրանք այնպիսի մասնագիտության տեր

---

111 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 224, թ. 13—18։

112 Հ. Տեր-Հովհաննիսյանց, նշվ. աշխ., հատ. II, էջ 83—85։

113 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 136, թ. 7։

մարդիկ էին, որոնց կարիքը զգացվում էր Պարսկաստանում, և որոնց, հակառակ օրենքի սահմանափակումների, հարկադրված էին արտոնյալ պայմաններով աշխատանքի հրավիրել։

Պարսկական արքունիքում աշխատող հայերի մեջ զգալի թիվ են կազմել դիվանագետները և թարգմանիչները։ 1873 թ. Լոնդոնի պարսկական դեսպանը Մելքոն խանն էր, Վիեննայինը՝ Նարիման խանը, Փարիզինը՝ Նազար խանը (Լազարյան ճեմարանի շրջանավարտ) և այլն։ Պարսկաստանի արտաքին գործոց նախարարության մեջ աշխատողների, մասնավորապես թարգմանիչների ճնշող մեծամասնությունը հայեր էին։

Պարսկահայ աշքի ընկնող դիվանագետներից էր Դավիթ Մելիք-Շահնազարյանը, որի մորը պարսիկները գերի էին բերել Դեղարքունիքի Մազրա գյուղից։ Ջուղայեցիները նրան և իր մորը գնել էին պարսիկներից և ազատել։ Դավիթը փոքր հասակից ուսումնասիրել է հայերենը, պարսկերենը և արաբերենը։ Այնուհետև նա մեկնել է Փարիզ և աշակերտել Շահան Ջրպետին։ 1811 թ. պարսկական կառավարության հրավերով նա աշխատանքի է անցնում արքունիքում և 1813—1814 թթ. Ֆրանսիայում նշանակվում պարսկական հյուպատոս։ Նա իր ծառայությունների համար Նապոլեոնի կողմից պարգևատրվում է ձիավորական սրով։ 1818 թ. Փարիզում ֆրանսերեն և պարսկերեն հրատարակում է Պարսկաստանի մասին պատմական մեծ արժեք ներկայացնող «Տեղեկագրություն»։ Դավիթ Մելիք-Շահնազարյանն իր կյանքի վերջին շրջանում բնակություն հաստատեց Երևանում, ուր և մահացավ։ Պարսկական արքունիքի աշքի ընկնող դիվանագետներից էր Դավիթ խան Դավթյանը։ Փոքր հասակում նա մեծ հաջողությամբ սովորել և տիրապետել էր մի քանի լեզուների՝ հայերենի, իտալերենի, ֆրանսերենի, հունարենի, թուրքերենի և պարսկերենի։ Սկզբում աշխատանքի է անցել Ջմյուռնիայի պարսկական հյուպատոսարանում՝ թարգմանչի պաշտոնով։ 1859 թ. նշանակվել է դեսպան Վիեննայում։ Դավիթ խանը հետագայում պարսկական կառավարության կողմից նշանակվել է արտակարգ դեսպան Պետերբուրգում, ուր և ռուսական կառավարության կողմից պարգևատրվել է Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշանով[114]։

Արքունիքում բացառիկ հեղինակություն էր վայելում Ենիկոլոպյան ընտանիքը, որը Պարսկաստան էր տեղափոխվել Թիֆլիսից։ Մեծ համբավ ունեցող այդ ընտանիքի գրեթե բոլոր անդամները եղել են զարգացած մարդիկ, տիրապետել են մի շարք լեզուների և մեծ դեր կատարել Պարսկաստանի արտաքին քաղաքականության ասպարեզում։

Պարսկահայ գաղթավայրի աշքի ընկնող անձնավորություններից էր Սեթ Աստվածատրյանը, որը XIX դարի առաջին քառորդում աշխատելով Պարսկաստանի արտաքին գործոց նախարարությունում իբրև թարգմանիչ, խնդիր է ունեցել ուսումնասիրել երկրի հանքային հարստությունները և ապահովել դրանց շահագործումը։ Նա Պարսկաստան է տեղափոխել հույն հանքա-

114 «Մասիս», 1859, էջ 387։

փորներ և առաջին անգամ այնտեղ սկսել շահագործել Ղարադաղի Հասան ձոր կոչված վայրի պղնձի, արծաթի և արճիճի հանքավայրերը։

Ականավոր դեմքերից էր նաև Մելքոն խանը, լիբերալ-բուրժուական գաղափարախոսության առաջին դրոշակակիրը Պարսկաստանում։ Նա ծնվել է Թեհրանում՝ 1831 թվականին, ավարտել է Փարիզի Մուրադյան վարժարանը։ Այնուհետև պարսկական արքունիքում աշխատել է թարգմանչի, իսկ հետո՝ դիվանագետի պաշտոններում։ Մելքոն խանը ճանապարհորդել է եվրոպական մի շարք երկրներում ու Ամերիկայում, հաղորդակից է դարձել առաջադեմ գաղափարներին։ Վերադառնալով Պարսկաստան, նա հանդես է եկել մի քանի բարեփոխությունների ծրագրերով՝ ինչպես պետական ապարատում, այնպես և պարսկական լեզվի ու գրականության բնագավառներում։ Իր առաջադեմ գաղափարների համար նա ենթարկվել է հալածանքների։ Հետապնդումից ազատվելու նպատակով տեղափոխվել է Լոնդոն, որտեղ 1890 թ. պարսկերեն հրատարակել է «Ղանուն» («Օրենք») անունով մի պարբերական, որն առաջին սահմանադրական գաղափարներ քարոզող ամսագիրն էր պարսկական իրականության մեջ։ Հակառակ հարուցված դժվարությունների, ամսագրի որոշ համարներ տարածվել են Պարսկաստանում։

XIX դարում պարսկահայ գաղթօջախների նվաճման հետ անկում է ապրում նաև Նոր-Ջուղայի մշակութային կյանքը։ Ճեմարանը փակվում է, իսկ նրա փոխարեն հանդես են գալիս վանքերին կից դպրատներ, որոնք գործում են մեծ ընդմիջումներով։

1833 թ. մադրասաբնակ Գրիգոր Սամյանը 20.000 ռուպի է կտակել Նոր-Ջուղայում դպրոց բացելու նպատակով։ Դպրոցը բացվել է ս. Ստեփանոս եկեղեցու գավթում, սակայն երկար կյանք չի ունեցել. նյութական միջոցների սպառման պատճառով 1837 թ. դպրոցը փակվել է։ Այս դպրոցում երկու տարի դասավանդել է Մեսրոպ Թաղիադյանը[115]։

1843 թ. կալկաթաբնակ Հարություն Աբգարյանը ս. Աստվածածին եկեղեցու բակում հիմնել է մի դպրոց՝ «Հայկական հայրենասիրական» անունով։ Դպրոցը գործել է 40 տարի և տվել է մեծ թվով շրջանավարտներ։

1853 թ. Ինդոնեզիայի Բատավիա քաղաքից երկու քույրեր՝ Մարիամ Հարությունյանը և Թագուհի Մանուկյանը Նոր-Ջուղայի Դավրեժ թաղի ս. Մինաս եկեղեցու գավթում իրենց միջոցներով բացել են հայկական մի նոր դպրոց, որը գործել է 30 տարի[116]։

1858 թ. ճավայաբնակ Մանուկ Հորդանյանը Նոր-Ջուղայում առաջին անգամ բաց է անում օրիորդաց դպրոց։

Թավրիզում եկեղեցու գավթում գործող դպրոցի մասին տեղեկություններ են պահպանվել 1600 թվականից։ 1853 թ. Ատրպատականի թեմի առաջնորդարանի այնտեղ տեղափոխվելուց հետո կառուցվում է Արամյան դպրոցի շենքը։

Արամյան դպրոցը բարեկարգվում է Գևորգ արքեպ. Վեհապետյանի ջան-

115 «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 31—34։

116 Տեր-Հովհաննիսյանց, նշվ. աշխ., հատ. II, էջ 258—259։

քերով։ Պարսկական կառավարությունը նույնպես 1864 թ. սկսած դպրոցին տրամադրում է 250 թուման նպաստ՝ պարսկերեն դասավանդելու համար։ Դպրոցի վարչությանը հաջողվում է 300 թուման նպաստ ստանալ ցարական արքունիքից՝ ռուսաց լեզվի ուսուցման նպատակով։ Հետագայում այդ գումարը հասնում է 500 թումանի։

ՀՆԴԿԱՍՏԱՆ։ XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Հնդկաստանն արդեն գաղութացված էր։ Հայ վաճառականների նախկին «դաշնակից» «Արևելա-հնդկական» ընկերությունը անցել էր նրանց տնտեսական բնագավառից դուրս վտարելու քաղաքականության։ Վերջիններս, իրենց դիմաց ունենալով եվրոպական լավ կազմակերպված առևտրական ընկերություններ, բնական է, պետք է տեղի տային, մատնվելով տնտեսական քայքայման։

XIX դարում հիմնովին փոխվել էր հնդկահայ գաղթավայրի պատկերը. հին գաղթօջախների մի մասը քայքայվել և վերացել էր։ Նախկին գաղթօջախներից իրենց գոյությունը պահպանում էին Կալկաթան, Ջիչրան, Սեյդաբադը, Սուրաթը, Դաքքան, Ագրան, Գուվալիորը, Լահորը, Մադրասը և Բոմբեյը։ Այլևս չէին հիշվում Փաթնանան, Դովլաթաբադը, Լաքնահորը, Գոանը, Ջիտտագոնդը, Դելին, Հայդարաբադը, Բանգալորը, Մայսուրը և շատ այլ քաղաքներ, որոնք երբեմնի աշխույժ կյանք ունեցող հայկական գաղթօջախներ էին[117]։

XIX դարի առաջին կեսի հնդկահայ գաղթօջախների իրական պատկերը տալիս է Մեսրոպ Թաղիադյանը։ Խոսելով 1840-ական թվականների հայ գաղթօջախների մասին, նա գրում էր. «... իսկ այժմ կան վայրեր, որտեղից իսպառ վերացել է ազգը, ինչպես Ակպարաբադը, Լահորը, Սուրաթը, կան վայրեր, որտեղ մի քանի անձ ճրագի պես առկայծելով ցույց են տալիս, որ երբեմնի այստեղ ազգի հարստություն է եղել, ինչպիսիք են Ջիչրան, Հայդարաբադը, Փաթնանան, Գուլաերը...»[118]։

Մադրասը, որ հնդկահայ համայնքների ամենից խոշոր գաղթօջախն էր, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին գրեթե դուրս էր եկել շարքից։ Այնտեղ մնացել էին մի քանի ընտանիքներ միայն։ 1860-ական թվականներին մադրասահայ բնակչության հիմնական մասը արհեստավորներ էին, գործավարներ և այլն։

XIX դարի կեսերից սկսած Բոմբեյի հայկական կյանքը, մյուս օջախների նման սկսել էր անկում ապրել։ Բոմբեյում, որը ոչ հեռու անցյալում «հայոց որդոց համար», ինչպես սովոր էին ասել, բնակչաշատ «համալսարան» էր, XIX դարի կեսին հաշվվում էր ընդամենը 30—40 ընտանիք։

XVIII դարի վերջին մի քանի հարյուր տուն ունեցող սուրաթահայ գաղթօջախը XIX դարի կեսին իսպառ քայքայված էր։ Եթե Բոմբեյի և Մադրասի գաղթօջախները նվազեցին, ապա Սուրաթը գրեթե ամայացավ։ 1825 թ. Սուրաթի հայ գաղթավայրը հասել էր այնպիսի վիճակի, որ չէր կարող իր միջոցներով վճարել հայկական եկեղեցու քահանայի ռոճիկը։ 1861 թ. Սուրաթի հայոց եկեղեցու ունեցվածքը փոխադրվեց Բոմբեյ և եկեղեցին փակվեց։

---

117 «Ազգասեր Արարատյան», 1851, № 72, էջ 569։
118 «Ազգասեր», 1845, հատ. Ա., էջ 137։

XIX դարի երկրորդ կեսին հնդկական մյուս գաղթավայրերի վիճակը նույն պատկերն էր ներկայացնում։ Միակ գաղթօջախը հնդկական հողի վրա, որ կարողացավ տոկալ և հաղթահարել դժվարությունները, Կալկաթան էր։ Սկսած XIX դարի երկրորդ կեսից Կալկաթայի հետ է կապված Հնդկաստանում հայկական տպարանների, ընկերությունների, դպրոցների, մշակութային կյանքի ամբողջ պատմությունը։

Ճիշտ է, Կալկաթայի հայ համայնքը, որոշ տատանումներով, պահեց իր թվաքանակը, բայց նրա դեմքն էլ փոխվեց։ Նախկին առևտրական խոշոր տներից շատ քչերն էին մնացել, նորերն էլ գրեթե չկային։ XIX դարում ասպարեզի վրա երևում են մի քանի առևտրական ընկերություններ և վաճառականներ միայն։ XIX դարի հնդկական առևտրում ամենից խոշոր դեմքը համարվում է Գրիգոր Աբգարը, որը սեփական առևտրանավեր ուներ և կապված էր միջազգային կարևոր շուկաների հետ։

Դյուպրիեն Հնդկաստանում և հարևան կղզիներում ապրող հայերի թիվը XIX դարի կեսերին հաշվում է 25.000, Հ. Զագրյանը՝ 20.000։ Ոմանք, հավանաբար, հաշվի առնելով հնդկահայության հարուստ շրջանների նվիրատվությունների մեծ չափերը, նրանց թիվը հասցրել են նույնիսկ 50.000-ի։

Պարսկաստանից XIX դարի առաջին քառորդում զգալի թվով գաղթականներ եկան Հնդկաստան։ Դրանք ընչազուրկ մարդիկ էին, որոնք գաղթում էին Հնդկաստան իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար։ Նոր գաղթականության գալու հետևանքով ավելի ևս փոխվեց հնդկահայ գաղթավայրի սոցիալական պատկերը։

Հնդկահայ համայնքները իրենց աղքատ հայրենակիցներին չթողեցին անօգնական վիճակում։ Համայնքի հանգանակած գումարներով և բարերարների կտակած դրամով Կալկաթայում 1820 թ. հիմնվեց աղքատանոց՝ «Խայաթ խանե»[119]։ Աղքատանոցի միջոցները հետագայում հայթայթում էին զանազան հանգանակություններից, նվիրատվություններից, կտակներից գոյացած գումարներից։

XIX դարում հնդկահայ բնակչության սոցիալական կազմում մեծ էր ծառայողների՝ պետական պաշտոնյաների, զինվորականների, թարգմանիչների, ընկերությունների գրասենյակային աշխատողների թիվը։ Հնդկաստանում կային ոչ քիչ թվով հայ իրավաբաններ, որոնք ծառայում էին դատարաններում ու քննչական մարմիններում։

Միայն Կալկաթայի բարձրագույն դատարաններում XIX դարի երկրորդ կեսին հայ իրավաբանները քսանից ավելի են եղել։ Նրանց մեջ գտնվել են իրավաբանության և արվեստի մագիստրոսներ և բակալավրներ։ Հնդկահայ իրավաբանների ամենից փայլուն դեմքը Գրիգոր Չարլզ Պոլլն է։ Նա պաշտոններ է վարել Կալկաթայի բարձրագույն դատարանում։ Ի միջի այլոց, Պոլլն է պաշտպանել 1860 թ. Միքայել Նալբանդյանի՝ Մասեհ Բաբաջանյանի կտակի առթիվ հարուցած գործը և շահել այն[120]։

---

119 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, III, էջ 344։

120 Մատենադարան, Անհատական արխիվ, թղթ. 232, վավ. 256։

Ի դեպ, Միքայել Նալբանդյանը մի քանի ամիս մնաց Կալկաթայում և կոտակի գործը հաջող ավարտելուց հետո վերադարձավ Ռուսաստան։ Նալբանդյանի մի քանի ամսվա կյանքը Հնդկաստանում, շփումը և զրույցները տեղի հայ աղգաբնակչության հետ մեծ տպավորություն թողեցին հնդկահայ առաջավոր մտածողների շրջանում։ Հայտնի է, որ հնդկահայերը մեծագույն ցավով ընդունեցին Նալբանդյանի ձերբակալման լուրը։ Միքայել Նալբանդյանը, ըստ նրանց բնորոշումների, «ազատության չահակիր է հանդիսացել» և «մեծ հայրենասեր»[121]։ Նալբանդյանի ջերմ պաշտպան «Եղբայրասեր»-ի խմբագիր Տեր-Հարությունյանը, ընդառաջելով իր ընթերցողների խնդրանքին, նրանց ծանոթացնում է Նալբանդյանի աշխատություններին։ «Եղբայրասերը» հրատարակում է նաև «Ազատություն» հռչակավոր բանաստեղծությունը։

XIX դարում, հատկապես երկրորդ կեսին, կալկաթահայ համայնքը տրվել է մեծանուն մի շարք բժիշկներ, որոնք աչքի ընկնող գործունեություն էին ծավալում բանակում։ Հայ բժիշկների նախասիրած ճյուղը եղել է վիրաբուժությունը։

Հնդկահայերի մեջ մեծ թիվ են կազմել նաև հայ զինվորականները, որոնք պատկանել են միջին հրամանատարական կազմին։ Եղել են նաև մի քանի բարձրաստիճան զինվորականներ, որոնցից նշանավորը հայ զորավար Հակոբ Պետրոսյանն էր։ Աչքի ընկնող հայ զինվորականներից էր Մովսես Մանուկյանը, որը պաշտոնավարել է Հայդարաբադում 1837—1851 թվականներին։ Հնդկաստանում աչքի ընկնող դիրք են ունեցել հայ ծովայինները։ Դեռևս հնուց նրանք քաջ հայտնի էին Հնդկաստանի նավահանգիստներում որպես հմուտ լոցմաններ, որոնք բենգալական ծոցը ժամանած նավերը հասցնում էին Կալկաթա[122]։

Մեծ էր հնդկահայ մասնագետների և արհեստավորների թիվը։ Նախկինում առևտրական հայկական ընկերություններում ծառայող շատ հնդկահայեր, բնականաբար, աշխատանքի էին անցնում արդյունաբերական ընկերություններում, այս անգամ արդեն ոչ իբրև մանր գործավարներ, այլ մասնագետներ։

Հնդկահայության մեջ ամենից տարածված արհեստներից մեկը ոսկերչությունն էր։ Հայ արհեստավորներն այստեղ գործում էին առանձին-առանձին և կամ մեկ-երկու հոգի միանում և կազմում էին փոքրիկ համքարություն։ Հայ ոսկերիչները Կալկաթայում այնքան մեծ հռչակ ու համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ոչ միայն Հնդկաստանից, այլև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից։ Կալկաթայի հայ վարպետների ձեռքով պատրաստած իրերն աչքի են ընկել գեղարվեստական ճաշակով, կատարման նրբությամբ։

Հայ արհեստավորներից մեծ հռչակ են ունեցել նաև նկարիչ պատրաստողները, որոնց նուսիխով շինված նկարները մրցում էին հռչակավոր «մարտին» կոչվող նկարների հետ[123]։

---

121 «Եղբայրասեր», 1863, № 33, էջ 266։

122 Ղ. Ինճիճեան, Դարապատում, Վենետիկ, 1824, էջ 246։

123 «Ազգասեր Արարատյան», 1848, հատ .Ա, էջ 98։

XIX դարի կեսերին հայ վաճառականների կողքին Հնդկաստանում ըսկըսում են երևան գալ հայ առևտրա-արդյունաբերողների զանազան ընկերություններ՝ «Արևելյան ապահովչաց ընկերությունը», որը հիմնվել է 1839 թ., «Ծովային ապահովության գործարանը»՝ հիմնված 1844 թ., «Բարեկամության ապահովագրության գործարանը», որն իր բաժանմունքներն ուներ Լոնդոնում, Սինգապուրում, Մադրասում, Բոմբեյում, Ջինաստանում, «Միացյալ շոգենավաձիգ ընկերությունը», «Բասարաթ լեղակի ընկերությունը», «Հուգլիի գետանավային ընկերությունը» և այլն։

Արդյունաբերության ոլորտում գործող հնդկահայերից ոմանց զբաղեցնում էր մի միտք ևս՝ արդյունաբերական ձեռնարկություններ հիմնել հայրենի երկրում։ Նրանք նախագծեր են մշակել արդյունաբերությունը զարգացնելու, կատարելագործելու եղած արհեստները և տնային արդյունագործությունը։

XIX դարի 50—60-ական թվականներին արդյունաբերության բնագավառը չտեղափոխված հայ վաճառականները Հնդկաստանում կանգնած էին բավական ծանր կացության առջև։ Այդ վիճակից դուրս գալու համար նրանք ձգտում էին դրամագլուխները ի մի բերել և միություններ կազմակերպել։

Այս տարիներին էր, որ Ավստրալիայում հայտնաբերվեցին ոսկու հանքեր։ Դեղին սատանայի տենդով բռնվեցին նաև շատ հնդկահայ վաճառականներ։ Անկումից խուսափելու համար նրանք իրենց փրկությունը «ավետյաց երկիր» գնալու մեջ էին տեսնում։ Սակայն առաջին իսկ գնացողները կարճ ժամանակում կորցնում են ունեցածն էլ և հուսախաբ ետ դառնում[124]։

Հանգիստ չի եղել նաև Մադրասի համայնքի ներքին կյանքը։ Մեծահարուստների և աշխատավորության մեջ ծայր առած բախումները այստեղ ևս սուր բնույթ են ընդունել համայնքի վարչական մարմնի կամ հասարակական կազմակերպությունների ընտրությունների ժամանակ։ Կալկաթայի հայկական համայնքը տրոհված է եղել երկու հիմնական մասի՝ մեծահարուստների և աշխատավորների։ Վերջին խմբին պատկանել են արհեստավորները, նորեկ աղքատ պարսկահայերը և մանր առևտրականները։

Այս երկու խմբավորման մեջ մշտապես տեղի է ունեցել պայքար համայնքի ներքին խնդիրների շուրջը։ Այն սուր բնույթ է ստացել հատկապես վարչական մարմինների ընտրության ժամանակ։

Համայնքի աշխատավորությունը բողոքում էր, որ մեծահարուստները բռնանում են իրենց վրա. «Հազար կամ երկու հազար ռուփոց կարողության տերը,— գրում են նրանք,— մեծ համարում ունենալով բռնամանա ի վերա չքավորաց և աղքատանաց...»[125]։

Մադրասահայերն իրենց կապը չէին կտրել մայր հայրենիքից և հետևում էին միջազգային իրադարձություններին, հուսալով, որ մի օր դրանք կդրդող են նպաստավոր լինել հայության համար։

Ինչպես հնդկահայերից շատ շատերին, այնպես էլ Թաղիադյանին համակել էր հայրենիք վերադառնալու գաղափարը։ «Մենք տեղս արմատական ծա-

---

124 «Եղբայրասեր», 1862, № 2, էջ 224։

125 Նույն տեղում, 1863, № 18, էջ 144։

ոեր չենք,— գրում էր Թաղիադյանը,— մեր արմատն մեր Հայրենիքն ա և եթե չդնանք... մեր հայրենյաց երջանկութիւնս կարելի չէ, որ մենք երջանիկ ապրնմք»[126]։

XIX դարի 30—40-ական թվականներին հնդկահայության շրջանում մրշակվեց այն համոզումը, որ հայ ժողովրդի կենտրոնավայրը պիտի դառնա Արևելյան Հայաստանը կամ այլ խոսքով՝ Ռուսաստանի շնորհիվ ազատագրված հայ բնաշխարհը՝ Արարատի շուրջը սփռված հայաբնակ վայրերի հետ միասին։

XIX դարում հնդկահայ մշակույթում աչքի ընկնող երևույթները կապված են հայկական տպագրության հետ։ Ազգային-ազատագրական գաղափարների տարածման, մշակութային կյանքի վերելքի, հայ ժողովրդի լուսավորության հիմնական միջոցներից էր տպագրության ստեղծումը հնդկահայ գաղթօջախներում։ Հեռու հեռաստաններում հայության պահպանման միակ ելքը մնում էր ազգային լեզվով դպրոցներ բացելը, ազգային մշակույթի պահպանումը։ Ազգապահպանման նպատակով կրթական շարժումը, որը սկիզբ էր առել XVIII դարի վերջին, ավելի մեծ թափով առաջ գնաց XIX դարի սկզբներին։ Հնդկահայ մշակութային կյանքի ամենից խոշոր երևույթը 1821 թ. Կալկաթայի Հայկական մարդասիրական ճեմարանի բացումն էր։

Դպրոցն ուներ երթևեկ և գիշերօթիկ բաժիններ։ Գիշերօթիկում մեծ մասամբ սովորում էին Պարսկաստանի, Հնդկաստանի և հարևան երկրների հայ գաղթավայրերից եկած երեխաները։ Ուսումը չքավոր երեխաների համար ձրի էր։

Ճեմարանը ղեկավարում էր համայնքի կողմից ընտրված չորս անձից բաղկացած հոգաբարձությունը։ Առաջին դեմքը «գլխավոր վարժապետն» էր։ Անդրանիկ ուսուցիչներն են եղել հայ մշակույթի աչքի ընկնող այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մարտիրոս Մկրտիչ Դավթյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Հովհաննես Ավդալը և ուրիշներ։ Դպրոցի դործանվեր ուսուցիչները դաստիարակել են բազմաթիվ մանուկներ, որոնցից շատ շատերը հետագայում դարձել են հայ մշակույթի ճանաչված մշակներ։

1828 թ. սկզբներին Կալկաթայի Մարդասիրական ճեմարանին կից Հովհաննես Ավդալի ջանքերով բացվում է «Արարատյան գրադարանը»[127]։ Գրադարանը հիմնականում հավաքում է հայագիտական գրքեր։ Կարճ ժամանակ անց այնտեղ հավաքված գրականության թիվը անցնում է մի քանի հազար հատորից։ «Արարատյան գրադարանը», բացի գրքերից, հավաքում է նաև պարբերական հրատարակություններ։ Գրադարանում պարտադիր կերպով տեղ էին գտնում Հնդկաստանում հրատարակված հայերեն գրքերը։ Նրա հիմնադրման առաջին իսկ օրից այնտեղ սկսեցին հավաքվել նաև հայերեն ձեռագրեր, ինչպես նաև անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, չինարեն, պարսկերեն և այլ լեզուներով ձեռագրեր ու գրքեր։

Հնդկահայերն արդեն ունեին տպագրության բավական մեծ փորձ։ Դա-

126 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 53, վավ. 303։

127 «Բազմավեպ», 1924, էջ 166։

րի սկզբին իրար հաջորդեցին սկզբում Մադրասում՝ 1809 թ. Շիրազեցու, 1818 թ. Սարգիս Մատուր Աղավելյանցի, ապա Ջենթլում Ավետումյանի տպարանները, որոնք տասնյակ բազմաթովանդակ, հիմնականում հայրենասիրական հայագիտական բնույթի գրքեր հրատարակեցին։ Հայկական տպագրության բաժիններ են ունեցել կաթոլիկ և մխիթարական կոչված քարոզչական տպարանները Սրնբուրում և ապա՝ Կալկաթայում։ Մարդասիրական ճեմարանի հիմնադրումից հետո Հովհաննես Ավդալի ջանքերով ստեղծվել է «Մարդասիրական տպարանը», որը կեդարյա կյանք է ունեցել։

Հայկական տպագրական գործը իր զարգացման բարձրությանը հասավ 1845 թ., երբ Կալկաթայում ստեղծվեց «Արարատյան ընկերությունը», որի հիմնական նպատակներից էր Հնդկաստանում հայերեն գրքեր և պարբերականներ հրատարակելը։ Տպարանի գործերը ոնօրինում էր Թաղիադյանը։ Բացի «Ազգասերից» և «Ազգասեր Արարատյանից», այստեղ հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, բարոյախոսական գործեր և այլն։

1846 թ. ստեղծված Պողոս Վիջենյանի «Արծիվ» տպարանը կարողացավ միայն մի քանի աղոթագրքեր հրատարակել։ Համեմատաբար ավելի երկար կյանք և հարուստ հրատարակություններ ունեցավ Հովհաննես Խաչիկյանի 1869 թ. հիմնադրած տպարանը։

1822 թ. Կալկաթայում տպագրվում է «Շտեմարան» պարբերականը։ «Շտեմարանի» խմբագիր-հրատարակիչն էր Մարտիրոս Շիրազեցի Մկրտչյանը, որը Կալկաթայի հայկական համայնքի ականավոր դեմքերից էր։ Պարբերականը հրատարակվել է առանձին «տետրակներով»[128]։ Դա առաջին աշխարհաբար հայ պարբերականներից էր։

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականները։ Նրանց խմբագիր-հրատարակիչն է եղել ականավոր մանկավարժ, գրող, լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը։

Այնուհետև սրանց հաջորդեց Կալկաթայի «Եղբայրասեր»-ը (1862—1863 թթ.)։ Նրա խմբագիրն էր Եղիազար Տեր-Հարությունյանը։ Թերթի հիմնական նպատակն էր՝ պայքարել համաձուլման դեմ, պահպանել ազգային մշակույթը և զարգացնել այն։

Բացի այս պարբերականներից, հնդկահայ գաղթօջախներում հրատարակվել են նաև այլ պարբերականներ. 1820 թ. տպագրվել է «Հայելի կալկաթյան» շաբաթաթերթը՝ Պողոս Հորդանանյանի խմբագրությամբ։ Այնուհետև 1822 թ. Բոմբեյում վիմատիպ լույս է տեսել «Ծաղկաստան»-ը, որի խմբագրի անունը հայտնի չէ։ 1844 թ. Բոմբեյում տպագրվել է «Բոմբեյի հայոց լրաթուղթը», ապա «Ազդարար» երկշաբաթաթերթը՝ քաղաքական և բանասիրական բովանդակությամբ։ Մադրասի «Բանասերից» լույս է տեսել ընդամենը 39 համար։ Երկու տարի գոյատևելուց հետո, 1865 թ. Կալկաթայում փակվում է «Արևելյան հնդկաց» լրագիրը։

---

128 Ա. Ք. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 1, էջ 228—267։

1892 թ. Հովսեփ Բեգլարյանի խմբագրությամբ անգլերեն հրատարակվել է «Արա» ամսագիրը։ Հայրենասիրական ուղղություն ունեցող այս ամսագրի նպատակն էր քաղաքակիրթ մարդկության ուշադրությունը հրավիրել հայկական հարցի վրա[129]։

Հնդկահայ գաղթօջախներում մշակութային և հասարակական կազմակերպություններ, ինդոնեզիայի, Բիրմայի և մյուսների համեմատ, քիչ են եղել։ 1815 թ. Բոմբեյում հիմնվեց «Օճանսփյուռյան ընկերությունը»[130]։ Նրա հիմնական նպատակն էր հայերեն ձեռագրեր հավաքել ու հրատարակել, օտար լեզուներից թարգմանություններ կատարել, զարգացնել հայկական մշակույթը և նպաստել հայ ժողովրդի լուսավորությանը։

«Օճանսփյուռյան» ընկերությունը հատկապես մտահոգված էր հայ մանուկներին մայրենի լեզվով դաստիարակելու գործով։ Բոմբեյում նա հիմնեց հայկական դպրոց։ Բոմբեյաբնակ Պողոս Հորդանանյանը, իր հայրենակիցներին օգնելու համար, «Օճանսփյուռին» նվիրեց հայկական տպարան։ Գրեթե նույն նպատակներով և ծրագրով, բնաբան ունենալով՝ «Ուսումնասիրություն, ընթերցասիրություն, բարեսիրություն», 1818 թ. Կալկաթայում հիմնվում է «Իմաստաբննադատության միությունը»։ Կարճ ժամանակ անց, այս երկու ընկերությունները միացյալ ուժերով սկսեցին հրատարակել «Հայելի կալկաթյան», ապա՝ «Շտեմարան» պարբերականները և մի շարք արժեքավոր գրքեր։

4. ՀԱՅԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

XIX դարի առաջին կեսին սուլթանական Թուրքիայում հարատևող կյանքի ու գույքի անապահովությունը, քրիստոնյա ազգերի կրած սոցիալ-քաղաքական անտանելի ճնշումները պատճառ էին դառնում արևմտահայ զանգվածների գաղթականությանն ու պանդխտության հոսքին։ Ժողովրդի զգալի մասը հեռանում էր Արևմտյան Հայաստանից և ապրելու ու գոյատևելու քիչ թե շատ հարմարավետ վայրեր էր փնտրում Օսմանյան կայսրության ատաուինյա քաղաքներում, Եգիպտոսում և այլուր։ Սմովրանում էին Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Դամասկոսի, Հալեպի, Անտիոքի հայկական համայնքները, առաջանում էին նոր գաղթավայրեր, որտեղ և կենտրոնանում էին ոչ միայն գյուղացիները, այլև արհեստավորները, առևտրականները, պանդուխտ օրամշակները, ծնունդ տալով հայրենիքի ճակատագրով հետաքրքրվող մտավորականությանը, որն օգնության ձեռք էր մեկնում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությանը։

Օսմանյան կայսրության հայկական գաղթավայրերից ամենախոշորը Կոստանդնուպոլիսն էր (այդ մասին խոսվում է նախորդ գլուխներում), որն ուներ շուրջ 250 հազար հայ բնակչություն։ Չնայած իր փոքրաթվությանը, մայրաքաղաքից ետ չէր մնում Զմյուռնիայի հայ գաղթօջախը։

ԶՄՅՈՒՌՆԻԱ։ Թուրքիայի զարգացած ու նավահանգստային երկրորդ

---

129 Վերոհիշյալ փաստերը վերցված են «Նոր աղբարբի» 1951 թվականի № 3-ից։

130 «Օրացույց» Կալկաթայի, 1899։

քաղաքը Զմյուռնիան էր, թե՛ իբրև առևտրա-արդյունագործական կենտրոն և թե՛ որպես հայաշատ ու կազմակերպված գաղթավայր։

1605 թ. շուրջ 1000 ընտանիք արևելահայեր՝ երևանցիներ, նախիջևանցիներ ու ղարաբաղցիներ, գաղթեցին իրենց բնօրրաններից և խարիսխ գցեցին Զմյուռնիայում։ XVIII դարի վերջերին, մասնավորապես Աղա-Մահմեդ խանի արշավանքից հետո, կարբեցի, օշականցի և աշտարակցի հայերի մի մասը ևս հարկադրված գաղթեց Զմյուռնիա, գաղթօջախի հայկական ազգաբնակչության թիվը հասցնելով 12 հազարի։ Ակնհայտ է, որ այս գաղթօջախը հիմնականում ձևավորվում էր արևելահայերից։



Զմյուռնիայի ծովախորշը

1800 թ. 104 հազար[131] զմյուռնացիներից 12 հազարը հայեր էին, 1812 թ. 106 հազարից՝ 10 հազարը, 1868 թ. 187 հազարից՝ 12 հազարը։ 1876—1877 թթ. Զմյուռնիայի հայ գաղութն ուներ 2680 ընտանիք՝ 12008 շնչով[132]։

1850-ական թթ. Զմյուռնիան հանդիսանում էր Այդընի վիլայեթի կենտրոնը։ Զմյուռնիայից բացի, Արարատյան դաշտից և Ղարաբաղից գաղթած ստվար հայ բնակչություն էր ապրում վիլայեթի մյուս քաղաքներում և գյուղերում։ Կարշիյակայում բնակվում էին 150 տուն հայ լուսավորչականներ, 10 տուն կաթոլիկներ, իսկ Կարաթաղում՝ 320 ընտանիք, Այդընում՝ 100, Դենիզլիում՝ 82, Օդեմիշում՝ 177, Մանիսայում՝ 390, Կրկաղաջում՝ 159, Գասապայում՝ 105, Բուռնաբադում՝ 15, Գյուզելհիսարում՝ 30 ընտանիք[133]։ Այսպիսով, շուրջ 10 հազար հայեր էին սփռված Այդընի վիլայեթի մյուս քաղաքներում ու գյուղերում։ Քաղաքամերձ հայերը համախմբված էին Զմյուռնիայի հայկական առաջնորդության շուրջը։ 1820-ական թվականներից այս-

131 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 9, թ. 113—114։

132 ԳԱԹ, Ք. Ազատյանի արխիվ, բաժին 3, վավ. 43։

133 Հ. վ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հ. Բ, Վիեննա, 1899, էջ 35—90։

տեղ ևս երևում են կաթոլիկ ու բողոքական քարոզիչներ։ Այլադավան հայերի թիվը գնալով մեծանում է, կազմվում են հոգևոր համայնքներ, իսկ շատերն էլ, թուրքական վայրագություններից ազատվելու պատրանքով, ապավինում են օտարերկրյա հյուպատոսներին, ոմանք ընդունում նրանց քաղաքացիությունը։

Հնուց ի վեր Զմյուռնիան ենթակա էր հունական քաղաքակրթությանը. թուրքերի գրավումից հետո էլ քաղաքի բազմազգ ազգաբնակչության հաղորդակցության լեզուն հունարենն էր։

Զմյուռնիայի ազգաբնակչությունը, Թուրքիայի հպատակ մյուս քաղաքների բնակչության համեմատությամբ, մասամբ էր ենթարկվում քաղաքական ու ազգային խստաշունչ հալածանքների։ Դրա պատճառը գաղթավայրում թուրքերի փոքրաթիվ լինելն էր և արևմտաեվրոպական ու ասիական պետությունների, ինչպես նաև ռուսական ու ամերիկյան հյուպատոսարանների առկայությունը քաղաքում։

Զմյուռնիայի ազգաբնակչությունը հիմնականում տեղակայված էր առանձին թաղամասերում՝ ըստ ազգությունների։ Հայերը սկզբից հիմնել էին Հայնոց թաղամասը, որը փայտաշեն էր և հրո ճարակ դարձավ 1845 թվականին։ Նույն տեղում, լայն փողոցներով, գեղեցիկ տեսքով վերակառուցվեց հայկական թաղամասը, ուր բնակվեց հայերի մի մասը։ Հայերի մյուս մասն էլ տեղափոխվեց Քարափ կոչվող վայրը, հիմնեց նոր թաղամաս, իսկ արհեստավորները հաստատվեցին Գետեզերքում։ Այսպիսով, Զմյուռնիայի հայերը ապրում էին երեք թաղամասերում, ըստ զբաղմունքի և ունեցվածքային շերտավորման։

Գաղթօջախի հայերն ունեին տարբեր զբաղմունքներ և ենթարկված էին դասային ու դասակարգային շերտավորման։ Ճիշտ է, Զմյուռնիայում չստեղծվեց ամիրաների ու սեղանավորների դաս, սակայն այստեղ էլ կային հայ ամիրաներ, խոշոր վաճառականներ, բազմաթիվ խանութպաններ։ Ողջ Թուրքիայով մեկ հայտնի էին Յուսուֆյան Հովսեփ Զելեբին, Գրիգոր Դուլումճյանը, Սպարթալյան եղբայրները, Ավետիքյան եղբայրները, Զարեհ Թագթագյանը, Թովմաս Թովմասյանը, Կարապետ Ամիրյանը, Ղուկաս Սսայանը և ուրիշներ։ Սրանց մի մասը պետական պաշտոնյաներ էին, ունեին քաղաքական դիրք, «անբավ հարստություն», ընդարձակ պարտեզներ, այգիներ և հողեր։

Գաղթօջախի մյուս դասը արհեստավորությունն էր, որը հիմնականում համախմբված էր էսնաֆություններ մեջ և միասնաբար էր գործում թե՛ արտադրության և թե՛ ազգային, հասարակական-քաղաքական կյանքում։ Հայ արհեստավորներից հանրահայտ էին տոկերիչները, գորգագործները, երկաթագործները, չթագործները, կատարելագործված դազգահներով բանող մետաքսագործները։

Զմյուռնիայում մեծ թիվ էին կազմում չթագործական արհեստանոցները։ Նրանց արտադրանքը ներկվում էր և գունազարդվում տեղի ներկատներում և դուրս տարվում օտար շուկաներ։ Հայերն ունեին տասից ավելի տպածոյի արհեստանոցներ, ուր պատրաստում էին ծաղկանկար վերնաշապիկներ, վարադույրներ, սեղանի սփռոցներ։ Այստեղ 1790 թ. հիմնվեց բամբակի մեծ գործարան։

Գործարանում 1850 թ. աշխատում էին 300-ից ավելի հայ բանվորներ, որոնք զբաղված էին կտավի ներկման ու ձևավորման աշխատանքով։ Ընդարձակվել էր հասարակ անոթներ պատրաստող բրուտանոցը[134], «նշանավոր են ի գործարանն՝ ծաղկենկար կտավոցն և թղթարանն հաստատեալ ի ձեռն ճարտարաց հայոց,— գրում էր Ղ. Ալիշանը։— են եւրոպացւոց պանդոկք բազում, և անկելանոցք նոցա և հայոց և յոմանց»[135]։

Արհեստագործությունը Զմյուռնիայում ժառանգական բնույթի էր և արհեստանոցներում ընդգրկված էին ողջ գերդաստանի արու անդամները։ Արհեստը փոխանցվում էր սերնդե սերունդ, նույնիսկ դրոշմվում արհեստավորի ազգանվանը՝ չիլինկիր, դեմիրջի, եազմաճի և այլն։ XIX դարի երկրորդ կեսին քաղաքում գործում էին ոսկերչական 30 արհեստանոցներ, վերմակագործների՝ 10, ժամագործների՝ 12, դերձակների՝ 20, երկաթագործների՝ 12, վարսավիրական՝ 15, կոշկակարների՝ 16, ատաղձագործների 17 արհեստանոցներ։ Զմյուռնիայում արհեստավոր էին հաշվվում դեղագործները, բժիշկները, փաստաբանները, որոնք գերազանցապես հայեր լինելով, սպասարկում էին քաղաքի ազգաբնակչության մեծ մասին։

XIX դարի երկրորդ կեսին Զմյուռնիայի հայ տպարանատերերը հայերեն էին թարգմանում, հրատարակում և վաճառում եվրոպական հեղինակների գործերը։ Տեսեյան եղբայրները 1850-ական թվականներին թարգմանեցին ֆրանսիական ու անգլիական արկածային վեպեր, տպագրեցին սեփական տպարանում, վաճառեցին Զմյուռնիայում և Փոքր Ասիայի այլ գավառներում։

Զմյուռնիայում կային շուրջ 5 հազարի հասնող հայ պանդուխտներ, ոչ մեծ թվով տեղացի օրամշակ բանվորներ։ Սակայն, այդ բոլորով հանդերձ, քաղաքը XIX դարում ևս մնում էր իբրև հայ վաճառականական կապիտալի նշանավոր կենտրոններից մեկը։

Քաղաքի վաճառականական կապիտալի ծաղկմանը աջակցում էր նրա նպաստավոր դիրքը։ Զմյուռնիան այս դարաշրջանում մնաց որպես արտահանության հանրաճանաչ կենտրոն։ Ասիայի խորքերից եկած քարավանները անցնում էին Հայաստանով, դրա համար էլ առաջնորդվում էին հայերի կողմից։ Արաքսի հովիտը հնդկական ապրանքների և պարսկական արտադրանքի փոխադրության ճանապարհն էր։ Զմյուռնիայի հայերը, եկած լինելով Արարատյան դաշտից, այժմ իրենց ձեռքում էին կենտրոնացնում այդ առևտուրն ու փոխանակությունը։

XIX դարի առաջին կեսին քաղաքի վաճառականների գերակշռող մասը հայերն ու հույներն էին։ «Զմյուռնիայի հայերը ընդհանրապես հակված էին դեպի վաճառականությունը։ Նրանք ուղղակի առևտրական հարաբերություններ մեջ էին մտնում Եվրոպայի, մասնավորապես Մանչեստրի և Լոնդոնի հետ, որտեղ հիմնել էին մի շարք առևտրական տներ։ Անգլիական մանուֆակտուրային արտադրությունը հանդիսանում էր նրանց առևտրի գլխավոր ճյուղը։ Հայերը վաճառականի իրենց ավանդական ընդունակություններով այն-

134 Ներսես Սարգիսյան, *Տեղագրություն ի Փոքր և ի Մեծ հայս*, Վենետիկ, 1864, էջ 10։

135 Ղևոնդ Ալիշան, *Քաղաքական աշխարհագրութիւն*, Վենետիկ, ս. Ղազար, 1853, էջ 544։

պիսի մրցության մեջ են մտել անգլիական և հունական վաճառականների հետ, որ այս վերջիններս ստիպված են եղել իրենց գործը դադարեցնել»[136]։

Ասիական Արևելքի ու եվրոպական Արևմուտքի մեջ հայ վաճառականները զորեղ միջնորդներ էին։ XIX դարի սկզբներին նրանք կապված էին Իտալիայի ու Հոլանդիայի հետ և ոչ միայն ապրանքներ էին ներմուծում, այլև արտահանում էին։ Տրիեստ, Վենետիկ, Վիեննա, Մանչեստր էին արտահանում նրանք բամբակ, մրգեր, ձիթապտուղ, ծխախոտ, մորթիներ։ Տակավին հաջողությամբ վաճառվում էին հայ արհեստավորների արտադրած գորգերը, վարագույրները, կտավյա հագուստեղենը։ Գորգի հանրաճանաչ վաճառականներն էին Իսպենճյանները, Սիլիկճյանը, Քեհյանը, Նիքոթյանը, Պաքրիճյանը, Տոնեկյանը, որոնք ոչ միայն տեղի գորգերն էին արտահանում, այլ անցնում էին ողջ Առաջավոր Ասիայի քաղաքները, գնում հայկական գորգեր, տեղափոխում եվրոպական ամենատարբեր շուկաներ և «հաջողակ առևտուր անում»։

Պղնձեղենի առևտրով զբաղվող տեղական արտադրանքի վաճառականներն ապրանքները գնում էին Եվդոկիայից, Սեբաստիայից, Կարինից, Մալաթիայից, վաճառում էին դրսում, սակայն իրենք եվրոպայից, մասամբ էլ Կիլիկիայից, ներմուծում էին կիսամշակ պղնձե ձողեր, երկաթե ձուլածո զանգվածներ։

Բազմատեսակ մրգերի, քաղցրահամ պտուղների արտահանության մեջ առաջին տեղը բռնում էր Թուզը։ Այդ բնագավառի խոշոր առևտրականներից էր Արամ Համբարձումյանը, որն ստացել էր «Թուզի թագավոր» մականունը։

Հայ վաճառականները առևտրական տներ են հաստատում եվրոպայում. Պետրոս Յուսուֆյանը Տրիեստում հիմնեց մի քանի առևտրական տներ, կազմակերպեց զմյուռնացիների առևտրական ընկերություն և տասնամյակներ շարունակ «բարգավաճ առևտուր» էր անում քաղաքում։ Կարապետ Էքիզյանը 1855—1860 թթ. Մանչեստրում բացեց «Պապո» վաճառատունը։ Նրան հետևեցին Հովհաննես Սպարթալյանը և ուրիշներ։ Զմյուռնիացի վաճառականները առևտրական տներ հաստատեցին Հնդկաստանում, Եգիպտոսում, Դամասկոսում, Հալեպում։

Զմյուռնիայի հայ վաճառականներն այս տասնամյակներին ևս Անգլիայից ներմուծում էին բամբակյա գործվածքներ, Ֆրանսիայից՝ մետաքսյա կտորներ, Գերմանիայից՝ պատրաստի հագուստներ, Ավստրիայից՝ ապակի, ապակեղեն, շաքար, բրինձ, Ռուսաստանից՝ կարագ և նավթ։ Ինչպես տեսնում ենք, քաղաքի հայ առևտրականները գործում էին համաեվրոպական առևտրական հրապարակներում և ունեին փարթամ տնտեսություն, ապրանքներով լեցուն բազմաթիվ խանութներ։

Զմյուռնիայի, առավել ևս Այդընի վիլայեթում, հայ բնակչության մի մասը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ և առավել էր ենթարկվում սոցիալական հարստահարության։

Զմյուռնիայի հայ ազգաբնակչությունը տնքում էր ծանր հարկերի տակ։ Արհեստի, արդյունագործության, գյուղատնտեսության և ոչ մի բնագավառ

---

[136] Bonaventure F. Slaars, Etude sur Smyrne, 1868, էջ 51։

չէր վրիպում թուրք հարկահանների տեսադաշտից։ Առևտրականները ապրանքներ ներմուծելիս ու արտահանելիս վճարում էին մեծագումար մաքս, եկամուտներից՝ եկամտահարկ։ Բոլոր քրիստոնյաների համար պարտադիր էր զինվորական հարկը, որը տարեկան կազմում էր 110—120 հազար դահեկան՝ ողջ վիլայեթի հայ համայնքից։ Հարկը 1850-ական թվականներից սկսած հավաքվում էր գավառական ժողովի երեսփոխանների կողմից և միանգամից մուտք արվում պետական գանձարան։ Ջքավորները եթե չէին կարողանում վճարել հարկը, համայնքի մյուս անդամները երբեմն փոխհատուցում էին և բազմաթիվ թշվառ ընտանիքների փրկում կործանումից։

Զմյուռնիայի հայերը քաղաքում չորս եկեղեցի ունեին. ս. Ստեփանոս, ս. Լուսավորիչ և կաթոլիկների ու բողոքականների եկեղեցիները[137]։ Հասարակական շենքերի մեջ իբրև ճարտարապետական կոթողներ աչքի էին ընկնում Մեսրոպյան վարժարանը՝ կառուցված 1825 թ., Վեզիր խանը, գեղեցկատեսք շուկաները, հայկական բաղնիքը։

Զմյուռնիայում նստում էր թեմի հոգևոր առաջնորդը։ Առաջնորդարանն ուներ անշարժ կալվածքներ, խաներ, տներ, խանութներ։ Սրանցից ստացվող տարեկան եկամուտը կազմում էր 3000 օսմանյան ոսկի, այսինքն 69—70 հազար ոսկյա ռուբլու դրամագումար[138]։ Վարձու մշակության տրվող այգիներից, հանգանակություններից առաջնորդարանն ստանում էր շուրջ 200 հազար ռուբլու եկամուտ՝ ոսկով։ Այդ գումարից ազգային երկսեռ վարժարանների վրա ծախսվում էր 1100 թուրքական ոսկի, Ազգային հիվանդանոցին հատկացվում էր 450 թուրքական ոսկի, առաջնորդարանի ծախսը կազմում էր 400 ոսկի, աղքատներին և անտերունչներին բաժանվում էր 200 ոսկի։

Զմյուռնիան արևմտահայ հոգևոր մշակույթի երկրորդ կարևոր կենտրոնն էր Թուրքիայում։ Այստեղ կային բազմաթիվ տպարաններ, որոնցից աչքի ընկնողներն էին՝ միսիոներականը՝ հիմնված 1833 թ., Մեսրոպյան վարժարանի տպարանը՝ 1840 թ., «Արշալույս Արարատյանինը»՝ 1840 թ., Տետեյանը՝ 1850 թ., Մամուրյան տպարանը՝ 1883 թ.։ Զմյուռնիայում էին հրատարակվում տարբեր ուղղություններ պատկանող «Արշալույս Արարատյան», «Արփի Արարատյան», «Ծաղիկ», «Մխիթյուն», «Դիմակ», «Գարուն Հայաստանի», «Իրավունք», «Արևելյան մամուլ», «Մեսեռոպ» և այլ պարբերականներ։


Քաղաքը հայտնի էր իր կրթական հաստատություններով (Մեսրոպյան վարժարանը հիմնվեց դեռևս 1799 թ.), Մ. Մամուրյանի, Գր. Չիլինկիրյանի, Ստ. Ոսկանյանի, Մ. Նուպարյանի, Գ. Կոստանդյանի և այլոց նման հասարակական-քաղաքական առաջավոր գործիչներով, գրողներով ու հրապարակախոսներով։

1801 թ. հիմնադրվեց և հետագայում Սպարթալյան եղբայրների միջոցներով ընդարձակվեց ս. Լուսավորչյան Ազգային հիվանդանոցը։ Հիվանդանոցն ուներ ծերանոց, հոգեբուժարան, որտեղ տարվա ընթացքում բուժվում էին շուրջ 800 հիվանդներ։

---

137 Ս. Մ. Ոսկիկյան, Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 211։

138 «Հանդէս ամսօրեայ», 1890, մայիս, էջ 106—107։



Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի շենքը

Զմյուռնիայի հայ ազգաբնակչության կրթական գործով մտահոգվում էին մշակութային ընկերությունները, որոնք գնալով բազմանում էին։

Այդ ընկերություններից էին «Սյունյաց ընկերությունը» (1841—1860), «Արագածունյաց ընկերությունը» (1843—1846), «Հաշտենից միությունը» (1861—1862), «Աղքատասիրաց ընկերությունը» (1861—1894) և ուրիշներ։ Սրանք բոլորն էլ մշակութային բնույթի լուսավորական հաստատություններ էին, որոնցում ընդգրկված էին նաև այնպիսի դեմոկրատ գործիչներ, որոնք երկնում էին ազատագրական պայքարի ծրագրեր։

Մ. Նալբանդյանի այցը Զմյուռնիա (1861) նոր մղում տվեց այդ շարժմանը։ «Հաշտենից» ապա «Վասպուրական ընկերությունը», ֆրանկ-մասոնական թիկնոց առած «Տիգրան» ժողովարանը, ինչպես և այլ ընկերություններ ընդհատակյա մղումներ ունեցան։ «Զմյուռնահայք ոմնեցած են նաև Ազատ որմնադրական Ակումբ մը, Տիգրան անվամբ, հիմնված 1860 թվականներուն,— գրում է Ս. Մ. Սոցիկյանը,— որուն գոյության ու գործունեության վավերաթուղթերը ցարդ պահված կմնան Լոնտոնի Ազատ որմնադիրներու Մեծ օթեակի Մատենադարանին մեջ»[139]։

Այսպիսով, Զմյուռնիայի հայ գաղթօջախը բազմաթիվ թելերով կապված էր հայ իրականությանը, իր առաջավոր զավակների բերանով արձագանքում էր ազատագրական շարժմանը։

Զմյուռնիայի տնտեսական կյանքի, առավել ևս հասարակական մտքի, գրական ու հրապարակախոսական շարժման մեծ վերելքը վերապահված էր 1860-ական թվականներին, որն համընկնում էր Չեյթունի ապստամբության, արևմտահայերի Ազգային սահմանադրության համար ծավալված շարժմանը։

ՆԻԿՈՄԻԴԻԱ։ XIX դարի առաջին կեսին Նիկոմիդիայի գավառի ընդհանուր ազգաբնակչությունը 310 հազար էր[140], որից շուրջ 65 հազարը հայեր էին։ Բեռլինի կոնգրեսի նախօրեին գավառի հայերի թիվը անցել էր 70 հազարից[141]։

Նիկոմիդիայի հայերը տեղաբաշխված էին գավառի քաղաքներում և բազմաթիվ գյուղերում։ Հայաբնակ քաղաքներն էին Իզմիտը, Ադաբազարը, Պարտիզակը, Օվաճըկը։

Գավառական կենտրոնը Իզմիտն էր, որտեղ 1840-ական թվականներին ապրում էր 12 հազար բնակիչ, այդ թվում՝ 6000 թուրք, 4500 հայ, 1250 հույն, 200 հրեա[142]։ Դարի երկրորդ կեսին հայերի թիվը հասել էր 8 հազարի[143]։

Քաղաքի հայ համայնքը հիմնականում զբաղվում էր առևտրով, արհեստագործությամբ, մասամբ էլ երկրագործությամբ, հատկապես այգեգործությամբ։ Առևտուրը իզմիտցու հիմնական զբաղմունքն էր։ Թուրքիայով մեկ հայտնի առևտրական գերդաստաններն էին Պուլությանները, Մոսկոֆյաններ, Պանիրճյանները, Նազարեթյանները։ Սրանք գավառի արտադրանքը տե-

---

139 Ս. Մ. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 212։

140 Միհնաս Դասապյան (Ֆարհատ), Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ, Պարտիզակ, 1913, էջ 24։

141 Նույն տեղում, էջ 239։ Տե՛ս Ս. Մ. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 477։

142 Մ. Դասապյան, նշվ. աշխ., էջ 24։

143 Ս. Մ. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 468։

զափոխում ու վաճառում էին Կ. Պոլսում, Կիլիկիայում, Մարմարայով կապվում ծովային մայրուղիներին, Եվրոպայից ներմուծում էին արդյունաբերական ապրանքներ և վաճառական-գործակատարների միջոցով տարածում Ասիական Թուրքիայում, Արևմտյան Հայաստանում։ Քաղաքի կենտրոնական քարակերտ երկու շուկաների տերն ու տնօրենը հայերն էին։

Իզմիրի հայերի 20 տոկոսն արհեստով էր զբաղվում[144]։ Նրանք օղեթորներ էին, գինեգործներ, երկաթագործներ, պայտառներ, ժամագործներ, ոսկերիչներ։ Սուլթանական կառավարությունը հայ ամիրաների միջոցներով այստեղ կառուցել տվեց կայսերական գործարաններ, որոնք առաջիններից էին ողջ Թուրքիայում։ 1836 թ. Իզմիտում կառուցվեց կայսերական մահուդի գործարանը։ Դրան հետևեց Հրեքեյի չուխայի խոշոր գործարանի հիմնադրումը 1844 թ.։ Այն, հումքն ստանալով առաջինից, թուրքական բանակի համար ըզգեստներ էր կարում[145]։ Գործարանները շուտով վերակառուցվեցին և ընդարձակվեցին, այնտեղ տեղադրելով անգլիական մեքենաներ և Մեծ Բրիտանիայից հրավիրելով գործարկող ինժեներներ։ Չուխայի գործարանը փակվեց 1853 թ., իսկ մահուդի գործարանն իր գոյությունը շարունակեց շուրջ կես դար։ Մեծ համբավ ուներ Նիկոմիդիայի ֆեսխանեն[146]։

Նիկոմիդիան ուներ հայկական ութ դպրոց, որոնցից Ազգային մեծ վարժարանը միջնակարգ կրթություն էր տալիս։ Քաղաքում հիմնված էր «Ասքանազյան ընկերությունը»։ Մշակութային այդ հիմնարկությունը պահվում էր «երևելի հայերի» նպաստավորությամբ, բացել էր ճոխ գրադարան և դրան կից նաև ընթերցասրահ, ուր կիրակնօրյա հավաքույթներ էին լինում, ինչպես նաև թուրքախոս մեծահասակները հայերեն էին սովորում։ Իզմիտում տարբեր ժամանակներում հրատարակվել են «Սուրհանդակ», «Հայրենասեր», «Բյուրեղանիա», «Երկիր» պարբերականները, ընդմիջումներով իրար հերթափոխել են երկու տպարան։ Այստեղ տպագրվում էին քաղաքին ու գավառին անհրաժեշտ դասագրքեր, եվրոպական գրողների գործերի թարգմանություններ։

Նիկոմիդիայի երկրորդ խոշոր հայաքաղաքը Պարտիզակն էր (Բախչեջիկը)։ Այն հիմնվել է դեռևս XVI դարում, Սեբաստիայի գավառի Պարտիզակ գյուղից եկած հայ գաղթականների ջանքերով։ XIX դարի կեսերին քաղաքն ուներ 16—17 հազար բնակիչ՝ բոլորն էլ բացառապես հայեր։ Մինչև XX դարասկիզբը Պարտիզակը ոչ միայն պահեց իր հայկական դիմապատկերը, այլև չընդունեց թուրք պաշտոնյաներ[147]։ Վախենալով հայերի ըմբոստ բնավորությունից, թուրքերը չկնդեցին քաղաքում պաշտոնավարելու խնդրում։ Նրանք բավարարվեցին միայն պետական հարկերի գանձումով։

Տակավին 1840-ական թվականներին Պարտիզակում գործում էին վաճառականական ընկերություններ, մետաքսի և չթի գործարաններ։ Այստեղ

144 Մ. Գասապյան, նշվ. աշխ., էջ 178։

145 «Հայաստան», Կ. Պոլիս, 1847, սեպտեմբեր 13։

146 Ներսես Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 36։

147 Ս. Մ. Ոսկիկյան, նշվ. աշխ., էջ 467—470։

կար հայկական չորս դպրոց։ Սրանցից ամերիկյան միսիոներների հիմնած վարժարանը միջնակարգ կրթական հաստատություն էր։ Պարտիզակցի հայտնի մտավորականներն էին Հովհաննես Մկրյանը, Գևորգ Մեսրոպը, Թորգոմ Գուշակյանը, Մինաս Գասապյանը, Մ. Պոտուրյանը և այլք։ Քաղաքը մեծ համբավ էր վայելում իր գեղեցիկ դիրքով։ Դրա համար այն մի տեսակ ստեղծագործելու հանգստավայր էր ծառայում և՛ Կ. Պոլսի, և՛ Զմյուռնիայի հայ մտավորականության համար։

Սաքարիա գետի ափին փռված էր գավառի քաղաքներից մեկը՝ Ադաբազարը[148]։ Քաղաքը հիմնադրել են Ակնից գաղթած հայերը XVI դարի սկզբներին, ապա այնտեղ էին եկել ատրպատականցի և սյունեցի գաղթականներ։ XIX դարի կեսին Ադաբազարն ուներ 25 հազար բնակիչ, որից 10256 հայ էին[149]։ Քաղաքում գործել են 5 դպրոց, իսկ ամերիկյան բողոքականների հիմնած Հայուհյաց դպրոցը միջնակարգ կրթություն էր տալիս գավառից հավաքված հայ օրիորդներին և նշանավոր էր ողջ Թուրքիայում։ Հակոբ Սարգսյանի խմբագրությամբ Ադաբազարում հրատարակվում էր Նիկոմիդիայից տեղափոխված «Բյուզանդիա» տասնօրյա հանդեսը։

Ադաբազարցիները, երկրագործությունից բացի, զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով։ Քաղաքի առևտուրն ու արհեստագործությունը ամբողջովին հայերին էր պատկանում։ Այնտեղ զարգացած էր մետաքսագործությունը, տարեկան արտահանվում էր «28 հազար օգգա մետաքս»[150]։

Օվաճըկ ավանը փռված էր ս. Նիկա լեռան ստորոտում, Քելեզ գետահովտում, զուտ հայաբնակ էր, ուներ 4000 բնակչություն։ Այս գեղեցիկ ավանը հիմնել էին ակնցի հայերը, համալրվելով Կարինից ու Սեբաստիայից եկած գաղթականներով։ Քաղաքն ուներ Վարդուհյան ազգային վարժարան, երեք եկեղեցի, որոնցից Ճարտարապետական հոյակապ կոթող սբ. Գրիգոր Լուսավորիչը կառուցվել է 1851 թ.՝ Աղավնի Զաքարյան արքեպիսկոպոսի ջանքերով։

Օվաճըկում լույս է տեսել «Քնարիկ» անունով թերթը։ Այն ազատագրական պայքարի կոչեր է արել։ Քաղաքն իր ըմբոստ քաջերով մասնակցել է շրջապատի քուրդ և թուրք հրոսակների դեմ մղվող հայապաշտպան կռիվներին և կոչվել Նիկոմիդիայի Զեյթուն։

Նիկոմիդիայի մշակութային կարևոր կենտրոններից էր հայկական Արմաշ գյուղը։ Գյուղը հնում հունաբնակ էր, հրդեհի պատճառով լրիվ ավերված և վերաշինված XVI դարում մարաշցի և սեբաստացի հայերի ջանքերով։ Գյուղի անունը սկզբում Մարաշ էր, ապա դարձավ Արմաշ և նույն անունը տրվեց նաև Ջարխափան ս. Աստվածածնա վանքին, որտեղ և հետագայում հիմնադրվեց Դպրեվանքը։ Ջարխափանը եթե սկզբում սոսկ ուխտատեղի էր հիվանդ և հավատացյալ այցելուների համար, ապա նոր պատմաշրջանում դառնում է տոնավաճառների կենտրոն, ուր Կ. Պոլսից և Թուրքիայի շատ գավառներից գալիս էին առևտրականներ, արհեստագործ նորարարներ՝ իրենց ստեղծած արհեստի նմուշները ցուցադրելու, առևտրական գործարքներ կնքելու։

148 Ս. Մ. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 82—85։
149 Միհաս Գասապյան, նշվ. աշխ., էջ 25։
150 Ներսես Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 38։

Արմաշի վանքը հիմնադրվել է 1610 թվականին։ 1687 թվականին Արմաշը դառնում է առաջնորդանիստ, իսկ 1797 թվականին վանքը վերակառուցվում է։ 1804 թվականին Ջաքըր Հասան բռնապետն այրում է վանքը, իսկ վանականներին հալածելով քշում է Արմաշից։ 1825 թվականին Արմաշը վերակառուցվում է, ապա հիմնադրվում է Դպրեվանքը, որը ուներ տպարան, դպրոց և հրատարակում էր բազմաթիվ գրքեր։ 1864—1878 թթ. Արմաշում լույս էր տեսնում ազգային, կրոնական, բարոյական և իմաստասիրական «Հույս» հանդեսը՝ սկզբնական շրջանում Խորեն Աշըգյանի խմբագրությամբ։ Արմաշը դարձավ հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկը՝ տալով եկեղեցական ու քաղաքական գործիչներ, կաթողիկոսներ ու պատրիարքներ, հրապարակախոսներ և գրողներ։

Նիկոմիդիայի գավառում կային նաև հայաշատ գյուղեր։ Քուրդբելենում ապրում էին 8 հազար հայեր, որոնք շատ ըմբոստ էին, բռնավոր թուրքերի հետ միշտ կռիվներ էին մղում։ Ունեին երկու դպրոց։ Օրթագյուղը (Միջագյուղն) ուներ 1500 հայեր, մի եկեղեցի, Սահակ-Մեսրոպ անվամբ դպրոց, իսկ հայկական Ասլանբեկ գյուղը՝ 4000 հայ բնակիչ, որոնք գաղթել էին Պարսկաստանից։ Գեյվե գավառակում ապրում էին 15000 հայեր, համանուն գյուղում՝ 1500 հայ։ Խասկալը 1000 բնակիչ ունեցող հայկական գյուղ էր։ Արմաշ գյուղըն ուներ 1500 հայ բնակիչ։ Այսպիսով, քաղաքներից բացի, Նիկոմիդիայում ապրում էին գյուղաբնակ հայեր, որոնք ենթարկվում էին սոցիալ-քաղաքական այն անտանելի ճնշմանը, ինչը բաժին էր ընկնում արևմտահայ մյուս գավառներին։

ՏՐԱՊԻԶՈՆ։ Պատմական Պոնտոսի տարածքում գտնվող՝ Հայաստանի մի շարք գավառներն ընդգրկող Տրապիզոնի վիլայեթում շատ վաղուց էին բնակություն հաստատել հայերը։ Նահանգը բաժանված էր Տրապիզոնի, Լափստանի, Ջանիկի, Գյումուշխանեի և Շապին-Կարահիսարի սանջակներիր[151]։ Տրապիզոնի մեջ էին մտնում Համշենը, Սև Գետի հովտաշեն գյուղերը, որոնց բնակչության մեծ մասը մինչև XVIII դարի կեսերը կազմում էին հայերը։ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբներին մահմեդական կրոնավորները, «մոլեռանդ ամբոխի» բռնադատությամբ, այդ գյուղերի և Ծոմուրայի գավառի հաղարավոր հայ բնակիչներիր[152] թուրքացրին, դրանով իսկ փոխելով նահանգի բնակչության ազգային պատկերը։

XIX դարի երրորդ քառորդին Տրապիզոնի ամբողջ վիլայեթում բնակվում էին շուրջ 50 հազար հայ տեղաբնիկներ[153] և 10 հազարի հասնող պանդուխտներ։ Սրանք գալիս էին ծովամերձ քաղաքներում աշխատելու, ոմանք տարիներ հետո վերադառնում էին Հայաստան, ոմանք էլ մեկընդմիշտ մնում պանդրխտավայրերում։

Տրապիզոնի նահանգի հայաշատ և գլխավոր քաղաքներն էին Տրապիզոնը, Սամսոնը, Օրդուն, Գյումուշխանեն։ Տրապիզոն քաղաքում ապրում էին շուրջ 15 հազար հայեր, որոնց թիվը գնալով մեծացավ 60-ական թվականնե-

151 ՍՍՀՄ ԿՈՒՊԱ, ֆ. 1300, ց. 18, գ. 63, թ. 84—85։

152 Հովակիմոս Տաշյան, Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 30—35։

153 «Զիթենի», գրական ժողովածու, Թիֆլիս, 1915, էջ 300։

բին՝ Կարինից, Կեսարիայից, Կյուրինից գաղթողների հաշվին։ Նավահանգստային այդ քաղաքը տարանցիկ առևտրի կենտրոն էր, որն իր շուրջն էր համախմբել Արևմտյան Հայաստանից Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ առևտրական կապեր ունեցող հայ վաճառականներին։

Աչքի ընկնող վաճառականներն էին Արապյան Պողոսը, Մառանյանները, Թահմազյանը, Մինասյանը, Ազնավուրյան եղբայրները և ուրիշներ[154]։

Տրապիզոնի արհեստավորական դասը կազմում էին հայերը, հույները և լազերը։ Նրանք ունեին միություններ, որոնց մեջ համախմբված էին նաև առևտրականները։ 1835—1836 թթ. Մահմուդ II-ը հրապարակում է Տրապիզոնի էնաֆությունների կանոնադրությունը և սահմանում նրանց արտադրանքի ու վաճառելիք ապրանքների սակագինը[155]։ XIX դարի երկրորդ կեսից հայ արհեստավորները գնալով տնտեսապես քայքայվում են և վերածվում օրավարձու բանվորների աշխատելով նավահանգստներում և ծխախոտի պլանտացիաներում։

Ահա՛ր էր Տրապիզոնի բանվորի և պանդուխտ օրամշակի վիճակը։ Նրանք աշխատում էին 14—16 ժամ, օրական ստանալով 20—30 փարա, դիշերում էին բաց երկնքի տակ[156]։

Տրապիզոնում գործում էր մի տպարան, ուր տարբեր տարիների, իրար հաջորդելով կամ զուգահեռաբար տպագրվում էին «Խարիսխ», «Գեղջուկ», «Մոծակ», «Պոնտոս» և «Բժիշկ» պարբերականները։ Հայկական հինգ եկեղեցիներին կից գործում էին դպրոցներ, որոնք պահվում էին վանքապատկան կալվածքներից ստացված եկամուտների հաշվին։ Քաղաքի հայերը կազմակերպել էին «Թատերական ընկերություն» և հայերենով բեմադրում էին հույն ողբերգակների, ինչպես նաև Շեքսպիրի, Մոլիերի գործերը։

Սամսոնի բնակիչները 40 հազար էին, այդ թվում թուրքեր, հույներ, լազեր և մոտ 10 հազար հայեր[157]։ Քաղաքի հարստությունը Պաֆրայից ստացված բարձրորակ, բազմատեսակ և Արևելքում ու Արևմտյան Եվրոպայում հայտնի ծխախոտն էր[158], փայտից պատրաստված նուրբ կահ-կարասիները։

Հայերը զբաղվում էին նաև երկրագործությամբ։ Ծխախոտի արտադրության և արտահանման մենաշնորհը մինչև Ղրիմի պատերազմն ու Թուրքիայի կիսագաղութացումը գտնվում էր հայերի ձեռքում։ Քաղաքամերձ Չարշամբա ավանում ապրում էին 3 հազար հայեր, որոնք տնտեսապես կապված էին Սամսոնի հետ, նրան մատակարարում էին մրգեր և բանջարեղեն։

Գյումուշխանեն փոքրիկ, գեղեցիկ քաղաք էր՝ 8 հազար բնակիչներով, որոնց մեծ մասը աշխատում էր հանքախորշերում։ Հայերի թիվը 2500-ից չէր անցնում։ Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, ունեին մեկ եկեղեցի և Մեսրոպյան տարրական դպրոց[159]։

---

154 Ս. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 775—776։

155 ՀՍՍՀ ԿՊՊԱ, Թուրքական ֆերմանների ֆոնդ, վավ. 94։

156 «Մշակ», 1872, № 14։

157 Ս. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 623—624։

158 Բառունակ պէյի Ֆերուհեան, Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, Արմաշ, 1876, էջ 3։

159 Ս. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 346—347։

Շապին-Կարահիսարը կամ Նիկոպոլիսն այս տասնամյակներին մերթ մտցվում էր Սեբաստիայի, մերթ Տրապիզոնի վիլայեթի մեջ։ 20 հազար բնակչությունից 13 հազարը հայեր էին, իսկ ընդհանուր սանջակի 80 հազար բնակիչներից 25 հազարը՝ հայ տեղաբնիկներ։ Երկրագործ, արհեստավոր ու առևտրական կարահիսարցին նաև լավ կռվող էր, ըմբոստ, ուղղամիտ ու անզիջում բնավորությամբ։ Այստեղ էր ապրում Օզանյան արհեստավորական գերդաստանը, որտեղ և 1865 թ. ծնվեց ապագա զորավար Անդրանիկը։

Թրիեբոլու քաղաքի 9200 թուրքերի, հույների, լազերի կողքին առանձին թաղամասում ապրում էին 800 հայեր, որոնք ունեին իրենց դպրոցը, եկեղեցին։

Սև ծովի հարավային ափին փռված էր նավահանգստային Օրդու, նախկինում Քոթիյորան քաղաքը։ Օրդուն ուներ 20 հազար բնակչություն. հայերը կազմում էին մոտ 5 հազար[160]։ Նրանք զբաղվում էին առևտրով, արհեստագործությամբ և ունեին սեղանավորներ, որոնց մեջ ամենահարուստը Ներանոս աղան էր։ Վերջինս կապալով էր վերցնում Լազիստանի հարկահավաքման իրավունքը։ Հայերը քաղաքում ունեին երկու եկեղեցի, Մովսիսյան վարժարանը՝ 600 սաներով և Աղգային դպրոցը՝ 150 աշակերտներով։

Թուրքերենով հրատարակվում էր «Գյուզել Օրդու» պարբերականը։ Քաղաքի շրջակայքում՝ նույնանուն կազայի մեջ էին մտնում 48 գյուղեր, մասամբ հայկական, հիմնականում թուրք և հույն բնակչությամբ։

Անկյուրիա (Էնկյուրի—Գաղատիա, այժմ Անկարա) քաղաքը XIX դարի կեսերին ուներ 30 հազար բնակիչ։ Պարսկաստանից գաղթած և հետագայում այլևայլ տեղերից այստեղ հավաքված հայկական համայնքի թիվը հասնում էր 3 հազարի, որոնք պահում էին անգորական երկարամաղ այծեր. այդ ցեղատեսակը Ֆրանսիայում տարածողներից առաջիններից եղան հայերը[161]։ Անկարան հայկական համանուն առաջնորդության կենտրոնն էր։ Այստեղ գործում էին հայկական երեք դպրոց, մշակութային ընկերություն։ Այդ քաղաքը տվել է այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք էին Աբրահամ Անկյուրացին, Պետրոս Ադամյանը, Մաղաքիա Օրմանյանը և ուրիշներ։

Շուրջ 60 հազարանոց Ադրիանապոլիս (Էդիրնե) քաղաքում Պարսկաստանից, Կեսարիայից և Հայաստանից գաղթած հայերը XIX դարում կազմեցին 5 հազարի հասնող հայկական համայնք, հիմնեցին Թորգոմյան, Արշակունյան և Հռիփսիմյան վարժարանները, «Ի սերն Հիսուսի աղքատացելուն» բարեգործական ընկերությունը։ Ադրիանապոլսից են Հակոբ Պարոնյանը, Սարգիս և Պողոս Ադրիանապոլսեցի պատրիարքները։

Ռոդոստո-Թեքիրդաղ քաղաքը գտնվում էր Մարմարա ծովի եվրոպական ափին, բնակչությունը հասնում էր 25 հազարի։ Հայերն այստեղ հաստատվել են դեռևս 1606—1607 թթ., գաղթելով Ակնից, Կամախից, Երիզայից։ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռոդոստցի հայերը մեծ օգնություն ցույց տվեցին ռուսական բանակին, և երբ Ռոդոստոն Ադրիանապոլսի պայմանագրով վերադարձվեց Օսմանյան կայսրությանը, այնտեղ ապ-

160 Ս. Մ. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 811—812։

161 Նույն տեղում, էջ 219—221։

րող հայերի մեծ մասը գաղթեց Արևելյան Հայաստան։ Դարի երկրորդ կեսին 30 հազար բնակիչ ունեցող քաղաքում 10 հազարը հայերն էին[162]։ Նրանք Ռոդոստոյում ունեին երեք թաղամաս, երեք եկեղեցի, երեք դպրոց։ Երկրագործությունից՝ հատկապես հանրահայտ ռոդոստյան ձմերուկ աճեցնելուց զատ, նրանք լավ վաճառականներ էին, հմուտ արհեստագործներ[163]։

Այսպիսով, Կ. Պոլսից ու Զմյուռնիայից բացի Թուրքիայի մյուս քաղաքներում ու գյուղերում ապրում էին հայեր, որոնց ընդհանուր թիվը XIX դարի կեսերին անցնում էր 100 հազարից։ Անակնկալներն անպակաս էին հայկական գերդաստանների ոչնչացման, հարուստների ունեզրկման, արտաքսման համար։ Կոտորածների ու բռնագաղթերի հետ միասին Թուրքիայում անխնայրեն տարվում էր նաև հայ բնակչության մահմեդականացում, որը և պատճառներից մեկն էր նրա թվի նվազեցման։

ԵՐՈՒՍԱՂԵՄ։ Օսմանյան թուրքերը 1517 թ. նվաճեցին Երուսաղեմը։ 1799 թ. Նապոլեոն Բոնապարտը չարդեց թուրքական բանակը և տիրեց Երուսաղեմին։ Սակայն այդ երկար չտևեց։ Քիչ անց կրկին Երուսաղեմը վերադարձվեց Թուրքիային և թուրք-եգիպտական պատերազմների կովախնձոր դարձած «սրբազան քաղաքը» մնաց սուլթաններին մինչև առաջին աշխարհամարտը։

Երուսաղեմ քաղաքի ազգաբնակչության թիվը հասնում էր 50—55 հազարի։ Այնտեղ ապրում էին թուրքեր, հրեաներ, արաբներ, հույներ, ասորիներ, հայեր, ռուսներ։ Հայերը, հետագայում պակասելով, կորցնելով շրջակայքում ու դրսում ունեցած վանքապատկան կալվածքների մեծ մասը, XIX դարի կեսերին փոքր թիվ էին կազմում։ Կ. Մարքսը 1854 թ. Երուսաղեմի հայերի թիվը[164] հաշվում է 350, որոնք կամ միաբանության անդամներն էին, կամ նրան սպասարկող անձնակազմը։

Հայկական թաղամասում ապրող տեղացի աշխարհական հայերը, գերազանցապես թուրքախոս և արաբախոս լինելով, պարապում էին առևտրով[165] և պաշտոնավարությամբ, ոմանք էլ տիրապետելով մի քանի լեզվի, ուղեկցի և բացատրողի դեր էին կատարում աշխարհի տարբեր մասերից քաղաք ժամանող ուխտավորների համար։ Այնտեղ հավաքված հիվանդները, ծերերն ու հաշմանդամները ապրում էին միաբանության հաշվին։

Երուսաղեմը, սակայն, արևմտահայ կյանքում հայտնի էր հայկական հոգևոր միաբանությամբ՝ կենտրոն ունենալով Սիոն լեռան վրա կառուցված Սրբոց Հակոբյանց վանքը։ Միաբանությունն ուներ հոգևոր պետ՝ պատրիարք, որն ընտրովի էր և ընտրությանը մասնակցում էին միաբանության անդամ բարձրաստիճան հոգևորականները՝ նրան օժտելով գործելու լայն հնարավորություններով։

Ս. Հակոբյանց վանքը վաղուց տեր էր դարձել քաղաքում և շրջակայքում եղած հողային կալվածքների, որոնցից և գոյանում էր միաբանության եկամտի մի մասը։ Սակայն դրամ հավաքելու և հարստանալու ամենադյուրին միջոցը «Քրիստոսի գերեզմանին» տիրելու իրավունքն էր, քանի որ

162 Ս. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 618։
163 Նույն տեղում, էջ 619։
164 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, стр. 171.
165 Ս. Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 176—177։

ուխտավորների մեծ մասը գալիս էր այնտեղ և նվիրատվություններ անում։ Կ. Մարքսը գրում է, որ «...սուրբ վայրերին և տիրող գերեզմանին տիրելու համար մղվող պայքարին մասնակցում են լատինները, հայերը, հույները, հարեշները, ասորիները, ղպտիները։ Այդ բոլոր տարբեր հավակնորդների միջև բախում առաջացավ։ Եվրոպական միապետները կրոնական այդ գժտությունների մեջ տեսնում էին Արևելքում իրենց ունենալիք ազդեցության հարցը»[166]։

Երուսաղեմի շուրջը սրված հակասություններից ճարպկորեն օգտվում էր սուլթանական կառավարությունը, որը փոխեփոխ իրավացի էր ճանաչում լատիններին, հույներին, հայերին և բոլորից էլ փող էր վերցնում։ Թուրքերը լատիններին հազիվ էին հանձնում վիճելի վայրերին տիրելու ֆերման, երբ հանդես էին գալիս հայերն ավելի լիքը քսակներով և ձեռք բերում հակառակ ֆերման։ Նույն ձևով էին վարվում նաև հույների նկատմամբ[167]։ Այդ էր պատճառը, որ Երուսաղեմի հայկական միաբանությանը պատկանող 100 հազար ոսկու արժողությամբ կալվածքները մերթ ընդ մերթ տրվում էին հույներին, լատիններին, արաբներին, Թուրքական կառավարությունը դրանով ստիպում էր հայկական միաբանությանը մեծ գումարներ վճարել։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը ծանր օրեր ապրեց Դամասկոսի արաբ կառավարիչների վարած հարկային կողոպտչական քաղաքականության հետևանքով։ Դեռևս 1778 թ. Դամասկոսի Մեհմեդ փաշան, լսելով, որ Հովակիմ պատրիարքն իր դեմ բողոք է ուղարկել Կ. Պոլիս, զորքով մտնում է հայկական միաբանություն և 6 հազար դահեկան տուգանք վերցնելուց հետո միայն հեռանում։

Սակայն դրանով և սահմանակից ու ավայրի կոչվող պարտադիր հարկերի գանձումով չբավարարվելով, Մեհմեդ փաշան մեկ տարում Երուսաղեմի հայ համայնքից կորզում է 39525 դահեկան և մնում դժգոհ[168]։ Սկսած 1800 թ. Պետրոս պատրիարքը տարեկան 4195,5 բուպիե ոսկի էր վճարում Դամասկոսի փաշային, իսկ Մուհամեդ Ալիի կառավարության տասնամյակին անկանոն հարկատվության պատճառով Ս. Հակոբյանց վանքը տնտեսապես լրիվ քայքայվել էր, ընկել պարտքերի տակ։ Միաբանության նյութական սուղ վիճակը շարունակվում էր 1850-ական թթ. վերջերին, ուստի Կ. Պոլսի Ազգային ժողովը 1860—1861 թթ. որոշում է մայրաքաղաքի յուրաքանչյուր հայից 5 ղուրուշ հարկ գանձել և տրամադրել Երուսաղեմին՝ նրան այդ վիճակից հանելու համար։

Երուսաղեմը հայ մշակույթի ակնառու կենտրոններից էր։ Ս. Հակոբյանց վանքն ուներ հարուստ թանգարան, մատենադարան, ուր մինչև օրս էլ պահպանվում են հազարավոր թանկարժեք ու հազվագյուտ ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, թագավորական ու կաթողիկոսական գավազաններ, հայ ու օտար նկարիչների կտավների հավաքածուներ։ Տեղի վանական-գիտնականները սրբությամբ պահպանում էին պատմական այդ անգնահատելի գանձերը, մի մասն էլ հետազոտում և հրատարակում։ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան-

166 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, стр. 170.

167 Տե՛ս նույն տեղում։

168 Տիգրան Սավալանյանց, Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, հ. 2, էջ 802։

ներից հետո Երուսաղեմը դառնում է հայագիտական կարևոր կենտրոններից մեկը։

Երուսաղեմն ուներ ժառանգավորաց վարժարան։ Այնտեղ սովորելու էին գալիս հայ պատանիները, համառում գրաբարի և արևելյան ու եվրոպական լեզվագիտության մեջ, դառնում կամ քարոզիչ միաբաններ, կամ զբաղվում հայագիտությամբ։ 1833 թ. մշեցի Զաքարիա պատրիարքը հիմնեց Ս. Հակոբյանց վանքի տպարանը, ուր հրատարակվում էին հայագիտական հետազոտություններ, դասագրքեր, կրոնական քարոզգրքեր։ 1866 թ. Երուսաղեմում լույս է տեսնում ազգային, բանասիրական, պատրիարքության պաշտոնական հանդեսը՝ «Սիոն» ամսագիրը, որն ընդմիջումներով հարատևում է մինչև մեր օրերը։

ԵԳԻՊՏՈՍ։ Թուրքական տիրապետության տարիներին (1517—1801) Եգիպտոսն ապրեց իր պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը։ Թուրք տիրակալների կեղեքումները մի կողմից, մամլյուկների շրջանում ծայր առած ավատական երկպառակությունները մյուս կողմից, երկիրը հասցրին քայքայման եզրին։

Այդ ժամանակամիջոցում ծանր վիճակում էր նաև Եգիպտոսի հայ գաղթավայրը։ Երկրի քայքայված կացությունը, քրիստոնյաների նկատմամբ դոյություն ունեցող անհանդուրժողականությունն իրենց բացասական ազդեցությունը գործեցին։ Թե ինչքան անմխիթար վիճակում էր գտնվում եգիպտահայությունը, կարելի է եզրակացնել հետևյալից. եթե 1615 թ., Սիմեոն Լեհացու Եգիպտոս այցելած ժամանակ, Կահիրեում եղել է 200 տուն հայ բնակչություն, ապա XIX դարի սկզբներին Ստեփանոս Գուվեր Ագոնցը Կահիրեում տեսել է ընդամենը 50—60 հայ ընտանիք[169]։

Եգիպտոսում քաղաքական և տնտեսական նշանակալից վերափոխությունները կատարվեցին Մուհամեդ Ալիի կառավարության շրջանում (1805—1849)։ Ալբանացի այս ականավոր զինվորականի նպատակն էր թոթափել թուրքական լուծը, ստեղծել կենտրոնացված ուժեղ պետականություն և Եգիպտոսին միացնել հարևան արաբական երկրները։ Նրա այս ձգտումները լիովին համապատասխանում էին Եգիպտոսի կալվածատիրական ազնվականության և կոմպրադորական բուրժուազիայի շահերին[170]։

Մուհամեդ Ալին, իշխանության գլուխ անցնելուց հետո, լայն ասպարեզ տվեց հայ արդյունաբերողներին, առևտրականներին և արհեստավորությանը։ Եգիպտական իշխանություններն ավելի վստահությամբ էին վերաբերվում հայ գաղթականներին, որովհետև նրանք քաղաքականապես ավելի հավատարիմ էին Եգիպտոսին, լավ գիտեին արևելյան լեզուները և ծանոթ էին տեղական սովորույթներին։

XIX դարի երեսնական թվականներին Եգիպտոսում ապրող հայերի թիվը շատ փոքր էր, ընդամենը երկու հազար հոգի[171]։ Սակայն ստեղծված նպաս-

---

169 Ս. Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. Գ, Ափրիկէ, 1802, էջ 54։

170 «Новая история стран зарубежного Востока», т. I, М., 1952, стр. 338—339.

171 *A. B. Clot*, Aperçu général sur l'Egypte, Fr [illegible]

տավոր պայմաններում եգիպտահայության թիվը գնալով մեծանում է։ Մինչև ութսունական թվականներն այն ավելանում է երեք անգամ՝ հասնելով շուրջ վեց հազարի[172]։

Հայերը եգիպտոս էին գաղթում գլխավորապես Կ. Պոլսից, Զմյուռնիայից, Տիգրանակերտից, Արաբկիրից, Կեսարիայից և Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից։

Մինչև XIX դարի սկզբները եգիպտահայերը հիմնականում կենտրոնացած էին Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Մուհամեդ Ալիի գահակալության շրջանում, երբ մեծանում է գաղթավայրը, հայերն սկսում են բնակություն հաստատել եգիպտոսի այլ քաղաքներում և ավաններում՝ Զակազիկում, Թանտայում, Բենի-Ադիում, Քաֆր-Զիարեթում և Սուեզում։

Եգիպտահայ բնակչության սոցիալական կազմը XIX դարում, նախորդ դարերի համեմատությամբ, առանձնապես մեծ փոփոխությունների չէր ենթարկվում։ Եգիպտահայ բնակչության կազմում մենք տեսնում ենք դարձյալ հայ մեծահարուստների՝ պետական բարձր պաշտոններ ստանձնած աղաների, առևտրական խոշոր գործարքներ կատարող խոջաների, հասարակական նոր ասպարեզ մտած արդյունաբերողների, իսկ մյուս կողմում՝ իրենց գոյությունը չարքաշ աշխատանքով պահպանող արհեստավորների։ Կային նաև արդյունագործական ձեռնարկություններում աշխատող ոչ քիչ թվով բանվորներ։

Եգիպտոսի հայ բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդում եվրոպացի ճանապարհորդ Ժորժ Սանդիսը. «Կահիրեում ապրող հայերը,— գրում է նա,— ամենից աղքատներն են և ամենից պատվավորները. նրանք չարքաշ աշխատում են և համեստ ապրում»[173]։

Եգիպտոսի հայ գաղթավայրի ամենից արտոնյալ խավը վաճառականներն էին։ Նրանց մեծ մասը կապված էր ասիական և եվրոպական շուկաների հետ։ Մի շարք հայ վաճառականներ առաջ էին քաշվել բարձր պաշտոնների ներքին և արտաքին առևտրի բնագավառներում՝ կատարելով պետության հատուկ հանձնարարություններ։ Նրանցից ոմանք դարձել էին Մուհամեդ Ալիի խորհրդատուները և գործակիցները առևտրի ասպարեզում։ Եգիպտոսի արտաքին առևտրի մեջ սկսում են ներգրավվել ոչ միայն եգիպտահայ վաճառականները, այլև Թուրքիայի և եվրոպական երկրների աչքի ընկնող հայ առևտրականներն ու արդյունաբերողները։ «Հայերը,— գրում է ժամանակակից պատմաբան Ջաբարտին,— Մուհամեդ Ալիի մոտիկ կանգնած մարդիկ են, նրա շահընկերները առևտրի բոլոր բնագավառներում, նրանք ամենահեղինակավոր մարդիկն են և նրա խորհրդականները»[174]։

Եգիպտահայ վաճառականներն աշխույժ գործունեություն էին ծավալել ոչ միայն առևտրի ասպարեզում, այլև արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու ուղղությամբ։ XIX դարի առաջին կեսում Վերին և Ներքին Եգիպտո-

---

172 «Արմենիա», 1886, № 63։

173 George Sandys, Relation of Journey..., հ. II, էջ 122։

174 Абд ар-Рахман ал-Джабарти, Египет под властью Мухаммеда Али, М., 1962, стр. 610.

սում հիմնվում են ավելի քան երեսուն արդյունաբերական ձեռնարկություններ (մետաղամշակման, հյուսվածքեղենի, լաքի և այլն), որոնց գործուն մասնակցություն են ունեցել եգիպտահայ մեծահարուստ վաճառականները։

Եգիպտահայ համայնքների մյուս ստվար խավը արհեստավորությունն էր։ Մեծ հռչակ են ունեցել առանձնապես հայ ոսկերիչները, որոնք գալիս էին Պոլսից և հաստատվում Կահիրեում ու Ալեքսանդրիայում։ Պալատական գրեթե բոլոր ոսկերչապետերը հայեր են եղել։ «Հայերը,— գրում է Գաբամաճյանը,— իրրև արհեստավոր, Եգիպտոսի մեջ առաջին տեղը կբռնեն ոսկերչության մեջ, արդարև, հայ ոսկերիչները մասնավոր գաղութ մը ձևացուցած են Խան Խալիլի համբավավոր կեդրոնի մեջ և իրենց ճարտարվեստի ընտիր արտադրությունները իրավամբ գնահատված են ճաշակի բոլոր սիրահարներեն»[175]։

Ոսկերիչներից հետո, հայ արհեստավորության մեջ ստվար թիվ են կազմել յազմայի մասնագետները՝ գլխաշորի վրա ասեղնագործողները։ XIX դարի 20—30-ական թվականներին միայն Կահիրեում հայկական տասը արհեստանոց է եղել, ուր աշխատել են հայ մասնագետ յազմաչիները։

Եգիպտոսի հայ աշխատավորության մեջ զգալի թիվ են կազմել կոշկակարները։ XIX դարում Եգիպտոսի գրեթե բոլոր կոշկակարները հայեր են եղել։

Մեծ համարում ստեղծած մյուս արհեստները, որոնք դարձյալ հայ արհեստավորության մենաշնորհն են եղել Եգիպտոսում, հանդիսացել են ասեղնագործությունը և դերձակությունը։ XIX դարում Կ. Պոլսի հայկական ասեղնագործական վարժարանն ավարտած շատ կանայք տեղափոխվել են Եգիպտոս և այնտեղ հիմք դրել ասեղնագործությանը։

Եգիպտահայ բնակչության սոցիալական կազմում զգալի տեղ էր գրավում բանվորությունը։ Նրանք աշխատում էին արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարության մեջ և ագարակներում։ Հայ բանվորությունը գտնվել է ընչազուրկ վիճակում և մեծ դժվարություններով է հայթայթել օրվա հացը, պահպանել իր ֆիզիկական գոյությունը։

Եգիպտոսի հայ գաղթավայրը հնուց ի վեր տեղական իշխանությունների կողմից ճանաչվել է իբրև հոգևոր համայնք և օգտվել է մի շարք արտոնություններից։ Թուրքական տիրապետության շրջանում գաղթավայրը ենթարկվել է Երուսաղեմի պատրիարքությանը և նրա կողմից նշանակված հոգևոր պետին։ Աշխատավոր զանգվածները իրավասու չեն եղել մասնակցելու գաղթավայրի ներքին գործերի տնօրինմանը։ Երուսաղեմից ուղարկված հոգևոր առաջնորդին շրջապատել են տեղի ունևորները, որոնք և ուղղություն են տվել նրա գործունեությանը[176]։

1860 թ., երբ ընդունվեց Ազգային սահմանադրությունը, Եգիպտոսի թե-

---

175 Ս. Գաբամաճյան, Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական ասպարեզներու մեջ (Ս. Պարթևյանի «Եգիպտահայ տարեցույց», 1913, էջ 221—222)։

176 Ա. Տեր-Հովհաննիսյանց, Ժամանակագրական պատմություն Երուսաղեմի, հատ. Բ, 1890, էջ 503—507։

մում, ինչպես և Պոլսի պատրիարքության մյուս թեմերում, պետք է անցկացվեին ընտրություններ։ Սակայն այդ թույլ չտվին եգիպտահայ մեծահարուստները։ Սկսած այդ թվականից եգիպտահայ համայնքներում ծավալվել է անհաշտ պայքար տեղի հայ վերնախավի և աշխատավորության միջև՝ թեմական և հոգաբարձուական իշխանությունների շուրջ։ Տեղի վերնախավը, հենվելով եգիպտական կառավարության հովանավորության վրա, աշխատել է զրկել և սահմանափակել եգիպտահայ աշխատավորության իրավասությունը գաղթավայրի վարչական մարմիններում և հասարակական կազմակերպություններում։ Այդ իսկ պատճառով էլ աշխատավորությունը համառ պայքար է տարել իր իրավունքները պաշտպանելու համար[177]։ Պայքարի արդյունքն եղել է այն, որ գաղթավայրի աշխատավորությանը հաջողվել է 1866 թ. հարկադրել կառավարությանը ընտրությունները անցկացնել Ազգային սահմանադրության համաձայն։

XVIII—XIX դարերում Եգիպտոսի հասարակական-քաղաքական և զինվորական ասպարեզներում հայտնի են մի շարք ականավոր գործիչներ, մամլյուկների մի շարք աչքի ընկնող անուններ։ Մամլյուկների զորամասերը, ինչպես հայտնի է, կազմվում էին կռիվների ժամանակ գերի վերցված և կամ արևելյան շուկաներում գնված մանկահասակ երեխաներից, որոնց բերում էին Եգիպտոս, հատուկ զորանոցներում զինավարժություն էին սովորեցնում և նրանցով համալրում մամլյուկական զորամասերը։ Նրանց մեջ քիչ թիվ չէին կազմում և հայերը։

XVIII դարի վերջերում Եգիպտոսի հայ աչքի ընկնող գործիչներից է եղել ծովակալ Նիկողայոսը, որն իր շուրջն է հավաքել եգիպտացի, հույն, ասորի ու հայ ծովայինների և զորավիգ հանդիսացել Եգիպտոսի պաշտպանությանը։ Նիկողայոսը կազմակերպել է բավական ուժեղ նավատորմիղ՝ զինելով այն ժամանակի լավագույն հրանոթներով։ Եգիպտական այս նավատորմիղն էր, որ 1799 թվականին քաջաբար կռվեց Նապոլեոնի զորաբանակի դեմ։ Հետագայում, երբ ֆրանսիացիներին հաջողվեց գրավել Եգիպտոսը, Նիկողայոսը բանտարկվեց Կահիրեի միջնաբերդում[178]։

Հայ մամլյուկներից ուշագրավ դեմք է Մելքում Ռուստամը։ Սա ղարաբաղցի առևտրականի զավակ էր, փոքր հասակում հափշտակվել էր և բերվել Եգիպտոս։ Այստեղ Մելքումը դառնում է աչքի ընկնող զինվորական գործիչ։ 1798—1799 թթ. Նապոլեոնը, Եգիպտոսում գտնված ժամանակ, Մելքումին վերցնում է իր շքախումբը՝ թույլ տալով կրել մամլյուկական հագուստ։ Հետագայում, Նապոլեոնի ասպարեզից հեռանալուց հետո, Մելքումը բնակություն է հաստատել Ֆրանսիայի Տուրտան քաղաքում և ֆրանսերեն հրատարակել իր հիշողությունները։ Ի դեպ, Մելքումը եգիպտական բանակի աչքի ընկնող մամլյուկ հայերից հակառակ-հանվանե հիշատակում է 17 բարձրաստիճան զինվորականների՝ նշելով նրանցից յուրաքանչյուրի ծննդավայրը և ծննդյան թվականը։

177 «Արևելյան մամուլ», 1872, էջ 409։

178 Գ. Մքրտչյան, Հայազգի երևելիներ Ճաբարթիի պատմագրքին մեջ («Սիոն», 1938, № 1. էջ 22—30)։

XIX դարի առաջին կեսին Եգիպտոսում բարձր դիրքի հասած անձնավորություններից էր Պողոս Յուսուֆյանը։ Մոտիկ փոխհարաբերությունների մեջ գտնվելով Մուհամեդ Ալիի հետ և լինելով նրա խորհրդականը առևտրի ասպարեզում, նա սկզբում նշանակվել է արքունի թարգմանիչ, հետագայում մեծ վստահություն ձեռք բերելով, առաջ է քաշվել արտաքին գործերի և առևտրի տնօրենի պաշտոնին։ Շուտով նա դառնում է Մուհամեդ Ալիի անձնական խորհրդականը և իրավունք ստանում վարելու պետության բոլոր գործերը՝ փաստորեն դառնալով Եգիպտոսի վարչապետը։

Յուսուֆյանը մոտիկ փոխհարաբերությունների մեջ է գտնվել տեղի հայ համայնքի հետ։ Նրա շնորհիվ եգիպտահայ առաջնորդարանին շնորհվել են որոշ արտոնություններ։

Եգիպտոսի կառավարության գլուխ անցնելուց հետո, Յուսուֆյանը հովանավորել է բազմաթիվ հայ գործիչների։

Նա դրական դեր է կատարել նաև հայ երիտասարդներին եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունները կրթության ուղարկելու գործում։ Հայ երիտասարդները, Եվրոպայում կրթություն ստանալուց հետո, վերադառնում էին Եգիպտոս և մասնակցում հասարակական ու քաղաքական կյանքին։

Պողոս Յուսուֆյանից հետո նրա պաշտոնում նշանակվել է Արթին Զրաքյանը։ Նա Եգիպտոսից Եվրոպա սովորելու ուղարկված ուսանողների խմբից էր և մասնագիտացել էր տնտեսագիտության ու միջազգային իրավագիտության մեջ։ Վերադառնալով Եգիպտոս, 1844 թ. նա նշանակվում է միաժամանակ արտաքին գործերի և առևտրի տնօրեն, այդ պաշտոնում մնալով մինչև 1850 թվականը։ Արթին Զրաքյանի իրավասության սահմանները հետագայում ավելի են ընդարձակվում։ Նա ևս փաստորեն վարել է վարչապետի պաշտոնը և ունեցել գրեթե այն բոլոր իրավունքները, ինչ նրանից առաջ ուներ Պողոս Յուսուֆյանը։ Նրա անվան հետ է կապված Եգիպտոսում առևտրի մենաշնորհի վերացումը, որով ստեղծվեց երկրի արտադրողական ուժերի զարդացման հնարավորություն։ Նա է կարգ ու կանոն ստեղծել պետական գանձարանում, կարգավորել մաքսային անցագրերի վարչությունը և այլն։

Պողոս Յուսուֆյանի առաջ քաշած հայ երիտասարդներից է եղել նրա քեռորդիներից մեկը՝ Նուբարը, նախկին ղարաբաղցի ծնողների զավակ, որը ընակություն էր հաստատել Զմյուռնիայում։ Նուբարը գտնվել է Եվրոպա ուսանելու ուղարկված երիտասարդների խմբի մեջ և, վերադառնալուց հետո, արքունի դիվանատունը գրագիր է նշանակվել։ Մոտիկ փոխհարաբերությունների մեջ լինելով գահաժառանգ Իսմայիլի հետ, վերջինիս Եգիպտոսի փաշա դառնալուց հետո, նշանակվել է Եգիպտոսի արտաքին գործոց նախարար։ Այնուհետև նա վարել է այդ պաշտոնը մինչև 1878 թ., երբ նշանակվեց Եգիպտոսի վարչապետ։

Նուբարի առաջին գործերից մեկն է եղել Եգիպտոսի արդարադատության սիստեմում բարեփոխություններ մտցնելը։ Նա ստեղծեց խառը դատարաններ՝ աշխատելով չարաշահումների առաջն առնել։ Եգիպտոսի գլխավոր դատախազը, խոսելով Նուբար փաշայի կատարած բարեփոխությունների մասին,

հետևյալն է գրել. «Ոչ ոք չէ մոռացած և երբեք չպիտի մոռանա, որ ինքը եղավ Եգիպտոսի մեջ դատական բարենորոգման գլխավոր հիմնադիրը»[179]։

Մեծ աշխատանք է տարել Նուբարը Եգիպտոսում ջրանցքներ անցկացնելու և ոռոգվող հողերն ընդարձակելու ուղղությամբ։ Եգիպտոսի հանրօգուտ շինարարության պաշտոնյա եղած ժամանակ նա մշակել է հողերի ոռոգման ընդարձակ մի ծրագիր և ձեռնարկել դրա իրականացումը։ Նրա ջանքերով անց են կացվել մի քանի ջրանցքներ։ Բհերա նահանգի նշանավոր ջրանցքը, որ կառուցվել է Նուբարի նախաձեռնությամբ, կառավարության հատուկ հրամանով կոչվել է Նուբարի անունով։ Մեծ է Նուբարի ծառայությունը նաև Եգիպտոսի քաղաքական անկախությունը պահպանելու և այն ամրացնելու ուղղությամբ։

Նուբարը կատարել է մի շարք բարեփոխություններ արաբ գյուղացու (ֆելլահի) դրության բարելավման ուղղությամբ։ Այս գործում նա հանդիպել է տեղի ավատական շրջանների ուժեղ դիմադրությանը, սակայն արել է ամեն հնարավոր բան՝ սահմանափակելու նրանց կեղեքումները[180]։

Նուբարին զբաղեցրել է նաև հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը, հասարակական կյանքը, մշակույթի զարգացման խնդիրը, հայ երիտասարդության կրթության տալու անհրաժեշտությունը և այլն։ Մի առիթով խոսելով ազգային ծագման մասին, նա հետևյալն է ասել. «Ես կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտը իմ առջև այս գործս հանեց, հրապուրվեցա անկից և կապվեցա։ Բայց օտար երկրի մեջ այդ գործունեությունս երբեք ինծի չմոռցուց, որ հայ մըն եմ»[181]։

Նուբարից բացի, արտաքին գործերի, առևտրի, լուսավորության և այլ նախարարություններ գլխավորել են Ստեփան Դեմերջյանը, Տիգրան Ապրոն, Առաքել Նուբարը և ուրիշներ։ XIX դարի Եգիպտոսի արտաքին գործերի նախարարների ցանկից երևում է, որ հարյուր տարվա ընթացքում հայ պաշտոնյաներն այդ նախարարության գլուխն են կանգնած եղել 64 տարի։

Եգիպտահայ մշակութային կյանքում ամենանշանակալից երևույթը հայկական դպրոցներն են, որոնք զգալի դեր են խաղացել գաղթավայրի երեխաների դաստիարակության գործում։ Առաջին հայկական դպրոցը հիմնվել է Կահիրեում, 1828 թվականին՝ ակնցի բարերար Եղիազար Ամիրյանի կտակով։ Այդ դպրոցը ի վիճակի չի եղել ընդգրկել գաղթօջախի բոլոր հայ երեխաներին։ 1854 թ. բացվել է երկրորդ դպրոցը՝ վանեցի բարերար Կարապետ Գալստյանի նվիրատվությամբ։ Այս դպրոցը կրել է Մովսես Խորենացու անունը։

Կահիրեի հայ համայնքի օրինակին է հետևել Ալեքսանդրիայի գաղթօջախը, որը 1851 թ.[182] հիմնել է իր դպրոցը։

---

179 Վ. Ջարդարյան, *Հիշատակարան*, հատ. 1, էջ 268—298։

180 Ա. Ալպոյաճյան, *ԱՄՀ Եգիպտոսի նահանգը և հայերը*, էջ 83—95։

181 Ե. Աճեմյան, *Հայազգի արտաքին գործոց նախարարները Եգիպտոսի մեջ* (Աճեմյան, *Եգիպտահայ տարեցույց, 1924*, էջ 61—62)։

182 Եգիպտահայ դպրոցների մասին տե՛ս Մ. Պետրոսյանի հոդվածը՝ «Հայրենասիրական մը ազգային կրթությունը Կահիրեի մեջ» (*Տարեգիրք «Արմավենի», 1937—1938*, էջ 11—24)։

Եգիպտոսում շատ քիչ էր այն մտավորականների թիվը, որոնք տեղի հայկական դպրոցների սաներից չէին։ Եգիպտոսի հայկական դպրոցները խոշոր դեր են կատարել հայոց լեզվի պահպանման, հայ բնակչությանը համաձուլման վտանգից փրկելու գործում։

Հայկական առաջին տպարանը բացվել է 1865 թ. Կահիրեում՝ Աբրահամ Մուրադյանի ջանքերով, որը հրատարակել է «Արմավենի» կիսամսյա լրագիրը։ Եգիպտահայ այս առաջին լրագիրը երկար կյանք չի ունեցել. լույս է տեսել միայն երեք համար[183]։

Եգիպտոսի հայ գաղթավայրում հրատարակվող հայկական հաջորդ թերթը «Նեղոս»-ն է, որը լույս է տեսել Ղ. ք. Փափազյանի խմբագրությամբ։ Այն նույնպես երկար կյանք չի ունեցել. մեղադրվելով թուրքական կառավարության դեմ հոդվածներ տպագրելու մեջ, թերթը փակվել է, իսկ խմբագիրն աքսորվել։

Եգիպտահայերից ոմանք գործուն մասնակցություն են ունեցել Եգիպտոսում տպագրության և պարբերական մամուլի հրատարակման գործի կազմակերպմանը։ Հայ խմբագիրների ձեռքով են հրատարակվել «Մսըր», «էլ-Ֆճաբեթ», «էլ զաման», «էլ-Ֆիլահ» և այլ անուններով մի շարք թերթեր, արաբերեն, անգլերեն ու ֆրանսերեն ամսագրեր։

Հայերն իրենց ներդրումն ունեն նաև Եգիպտոսի ճարտարապետության բնագավառում։ Մուհամեդ Ալիի և նրա հաջորդի գահակալության տարիներին Կահիրեում կառուցված աչքի ընկնող շենքերի նախագծողների և կառուցողների մեծ մասը եղել են հայ ճարտարապետներ (Գևորգ Ռաֆայելյան, Ջենոբ Միրամեթճյան և ուրիշներ)[184]։

Եգիպտոսի կրթության, արվեստի և գիտության բնագավառներում մեծ հեղինակություն է համարվել Նագոպ Արթինը։ Նրա նախաձեռնությամբ է Կահիրեում հիմնվել արաբական արվեստի թանգարանը։

Եգիպտահայ արվեստագետների մեջ աչքի ընկնող տեղ են գրավել նաև նկարիչները։ Առանձին հայ նկարիչներ ժամանակին թողել են իրենց ստեղծագործություններից որոշ նմուշներ[185]։

ԵԹՈՎՊԻԱ։ Եթովպիայի հայ գաղթավայրի պատմությունը փաստորեն սկսվում է XIX դարից, իսկ մինչ այդ բնակչությունն այնքան փոքրաքանակ է եղել և ցրված, որ հնարավոր չի եղել երկրում հայ հավաքական կյանք ստեղծել։ XIX դարի երկրորդ կեսին Եթովպիա են գալիս հայ գաղթականական նոր հոսանքներ, որոնք ստվարացնում են բնակչության թիվը և կազմակերպում գաղթավայրի հասարակական կյանքը։ Հայ գաղթականությունը Եթովպիա է գալիս հիմնականում Թուրքիայից և բնակություն հաստատում

183 Վ. Զարդարյան, Եգիպտահայ լրագրության վաթսունամյակը (տե՛ս Ս. Պարթևյան, Եգիպտահայ տարեցույց, 1913, էջ 73—77)։

184 Կ. Պալյան, Ճարտարապետությունը Եգիպտոսի մեջ և հայ ճարտարապետների դերը (տե՛ս Ս. Պարթևյան, Եգիպտահայ տարեցույց, 1913, էջ 112)։

185 S. Տեմիրճյան, Հայ գեղարվեստն ու արվեստագետները Եգիպտոսի մեջ (տե՛ս Ս. Պարթևյան, Եգիպտահայ տարեցույց, 1913, էջ 246—261)։

Ադիս-Աբեբայում ու նրա մերձակա շրջաններում՝ Եթովպիայի մայրաքաղաքը՝ Ադիս-Աբեբան դառնում է եթովպահայ գաղթօջախներից մեկը[186]։

Եթովպացիներն արտակարգ սիրալիր ընդունելություն են ցույց տալիս հայ գաղթականությանը։ Այն ժամանակ, երբ եվրոպացիների մուտքն արգելված էր Եթովպիա, հայերն ազատ ելևմուտ ունեին այնտեղ։ Պատահել են դեպքեր, երբ եվրոպացիները Եթովպիա մտնելու թույլտվություն ստանալու համար հայ են ձևացել, փոխել են իրենց անունը և հագուստը։ Հայերի նկատմամբ ցուցաբերվող այս սիրալիրությունը պետք է բացատրել նրանով, որ նրանք քաղաքական նպատակներ չեն ունեցել հյուրընկալվող երկրում, որպես դավանակից ժողովուրդներ եթովպացին ու հայը վաղուց են ճանաչել իրար և բարեկամական սերտ հարաբերությունների մեջ գտնվել դարեր շարունակ։

Ադիս-Աբեբայի ռուսական դեսպանատան բժիշկը ցարական արքունիք ուղարկված մի զեկուցագրում հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդել հայ գաղթականների Եթովպիա գնալու մասին. «Երբ մի նոր գաղթական է գալիս, նրա առաջին գործը լինում է իր համար ապրուստի հարմարություններ գտնել. վերցնում է մի կտոր ամայի հող, որի վրա նա մի համեստ, բայց մաքուր բնակարան է կառուցում, հետո սկսում է, շուրջը ցանկապատելով, ծառեր տնկել կամ բանջարանոց մշակել, այնպես որ մի քանի ժամանակից հետո կտեսնեք, որ ամայի հողը դարձել է մի գեղեցիկ տեսարան ներկայացնող վայր»[187]։

Գաղթականության մեծ մասը եղել են արհեստավորներ և գյուղացիներ, որոնց ժամանումից հետո հիմնովին փոխվել է հայաբնակ գաղութի սոցիալական պատկերը։ Եթե առաջ գաղթավայրի բնակչության հիմնական մասը կազմել են առևտրականները և պետական պաշտոնյաները, ապա այժմ դառնում են արհեստավորները և գյուղացիները։

Հայ արհեստավորներն աշխատել են արհեստի 28 զանազան ճյուղերում։ Առանձնապես մեծ թիվ են կազմել ոսկերիչները, զինագործները և երկաթագործները։ Երկար ժամանակ որոշ արհեստների մենաշնորհը գտնվել է նրանց ձեռքում։

«Արհեստների մեջ ավելի նշանակալից են հայերի մատուցած ծառայությունները։ Նրանք եղել են Մենելիք թագավորի մոտ առաջին կատարելագործված արհեստների մասին գաղափար տվողները։ Շատ անգամ նյութական վնաս կրելով, նրանք աշխատում են ցույց տալ իրենց ընդունակությունները»[188]։

Հայ արհեստավորները շատ հաճախ վերցրել են եթովպացի աշակերտներ և սիրով սովորեցրել իրենց արհեստը։ Բաթաբան Հայկը այդ մասին հետևյալն է գրում. «Հայն ըլլալով մեծի մասամբ արհեստավոր և անմիջական շփման մեջ գտնվելով բնիկ տարրին հետ, անոր սովորեցուցած է իր արհես-

186 Հ. Բաթաբան, Արդի Եթովպիան և հայ գաղութը, Վենետիկ, 1930, էջ 165։

187 Գ. Ալթայան, Աբեսինիայի հայ գաղթականությունը (տե՛ս «Մուրճ», 1904, № 7, էջ 65)։

188 Նույն տեղում։

ոը, հասուցած է շատ մը արհեստաւորներ և օգտակար հանդիսացած եթովպացիներուն ոսկերչութեան, թիթեղագործութեան, կահույքագործութեան, գորգագործութեան և այլնի մէջ»[189]։

Շատ լուն է եղել հատկապես հայ ոսկերիչների գործունեությունը, որոնց ջանքերով տասնյակ եթովպացիներ սովորել են ոսկերչություն և երկրով մեկ տարածել այդ արհեստը։

Եթովպահայ դաղթավայրի սոցիալական կազմում զգալի թիվ են կազմել հայ գյուղացիները։ Նրանք հաստատվել են գլխավորապես քաղաքամերձ վայրերում և գյուղատնտեսական նոր գործիքների ու արհեստական պարարտացման կիրառումով օրինակ ծառայել տեղացիներին։

Եթովպիա են եկել նաև ճարտարապետներ, բժիշկներ, դեղագործներ, ատամնաբույժներ և այլ մասնագետներ։ Քսան տարուց ավելի երկրի գլխավոր ճարտարապետն է եղել Գրիգոր Հովյանը՝ Ֆրանսիայում, Բրազիլիայում և այլուր հայտնի մի մասնագետ։ Նրա կառուցած բազմաթիվ շենքերը, հատկապես առողջապահական հիմնարկները, մինչև այժմ էլ աչքի են ընկնում Եթովպիայի զանազան քաղաքներում։ Ավելի ուշ շրջանում ճանաչված ճարտարապետներից է եղել Մինաս Խերպիկյանը։ Նրա նախագծերով Եթովպիայի զանազան վայրերում կառուցվել են բազմաթիվ ճանապարհներ, կամուրջներ և այլ շինություններ։

Կարելի է նշել ոչ միայն հայ գյուղացիների, արհեստավորների և մասնագետների կարևոր գործունեությունը Եթովպիայի տնտեսական կյանքում, այլև կուլտուրական այն խոշոր դերը, որ կատարել են նրանք այդ երկրում։

Օգտվելով պետության առանձնաշնորհումից, հայ վաճառականներն իրենց ձեռքն են վերցրել երկրի ներքին և արտաքին առևտուրը։ Քիչ չեն եղել նաև այնպիսի եթովպահայեր, որոնք մեծ ձեռներեցություն ցուցաբերելով, առաջ են քաշվել պետական պատասխանատու պաշտոններին։ Բավական է ասել, որ այնպիսի մի կարևոր պաշտոն, ինչպիսին արքունի գանձարանի վարչությունն է, գտնվել է հայերի ձեռքում։ Գանձապետերի պաշտոնում իրար են հաջորդել Սելիֆ Ուստան, Հովհաննես Թովմաճյանը, Պողոս Թովմաճյանը և ուրիշներ։ XIX դարում եթովպական արքունիքում մեծ հեղինակություն և իրավունք ունեցող պաշտոնյաներից են եղել Եղիա Ենովքը՝ արքունիքի թարգմանիչը և կայսեր խորհրդականը, Պետրոսը՝ եթովպական դեսպանը մի շարք երկրներում և ուրիշներ։ XIX դարի կեսերին Եթովպիայում գործել են նաև հայկական առևտրական տներ, որոնք իրենց մասնաճյուղերն են ունեցել ասիական և եվրոպական մի շարք քաղաքներում (Փարիզում, Լոնդոնում, Պոլսում և այլն)։

Հայ առևտրականները ներմուծում էին երկաթեղեն, զենք, զինամթերք, մետաքս, կտավ, բամբակեղեն, ապակեղեն, ներկեր, զանազան մեքենաներ, գործիքներ և այլն։ Արտահանում էին կաշի, մորթեղեն, սուրճ և այլ ապրանքներ։

Հատկապես մեծ էր հայ առևտրականների դերը զենքի և ռազմամթերքի

189 Հ. Թաթարաև, նշվ. աշխ., էջ 268—269։

մատակարարման ասպարեզում։ Տարիներ շարունակ հայերի ձեռքում էր պտնվում եթովպական բանակին զենքեր մատակարարելու գործը։ Սկզբնական շրջանում հայ վաճառականները ներմուծված զենքը, ռազմամթերքը և մյուս ապրանքները փոխանակում էին փղոսկրի, մեղրամոմի և տեղական այլ ապրանքների հետ։

Սրբ որոշ դժվարություններ առաջացան Ադիս-Աբեբայի հաղորդակցության և մատակարարման գործում, հայ վաճառականներն առաջիններից եղան, որ կարողացան հմտորեն կազմակերպել ապրանքների փոխադրումը Ադիս-Աբեբա-Դեռեդավա-Ջիբութի գծով՝ անխափան կապ ստեղծելով երկրի կենտրոնի, Կարմիր ծովի և Ադենի ծոցի միջև։ Այս ձեռներեցությունն էլ ավելի բարձրացրեց նրանց հեղինակությունը տեղացիների և կառավարության աչքում։

Անձնվեր և հավատարիմ ծառայության համար բազմաթիվ հայեր արժանացել են կառավարական բարձր շքանշանների և պարգևների։ Եղել են հայեր, որոնք անգամ պարգևատրվել են «Սողոմոնյան շքանշանով», մի պարգև, որը թագավորական տան անդամներին էին միայն շնորհում[190]։

ՍԻՐԻԱ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ։ Սիրիայի և Լիբանանի գաղթավայրերը XIX դարում զգալիորեն նվազեցին։ Այդ բացատրվում է հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրքական կառավարության վարած կեղեքիչ քաղաքականությամբ։ Բացի այդ, Սիրիայի և Լիբանանի վրայով երբեմնի անցնող առևտրական ցամաքային ուղին զիջում էր իր տեղը օվկիանոսային ուղուն, որը բացասաբար էր անդրադարձել Սիրիայի և Լիբանանի տնտեսական կյանքի վրա։ Ստեղծված այս պայմաններում սիրիահայության և լիբանանահայության որոշ մասը, գլխավորապես առևտրականներ, գործունեության նպաստավոր ասպարեզ փնտրելու համար, տեղափոխվում են Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ երկրների արդյունաբերական կենտրոնները։ Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներից ամենախոշորը շարունակում էր մնալ Հալեպը, թեև այնտեղ երբեմնի գոյություն ունեցող տավարաթիվ համայնքից ապրում էր ընդամենը 500 ընտանիք՝ 2000—3000 բնակչությամբ։

XIX դարում Հալեպի հայ բնակչության սոցիալական պատկերը զգալի չափով փոխվել էր։ Այնտեղ այլևս չկային նախկին մեծահարուստ խոջաները, որոնք իշխում էին Միջին Արևելքի տարանցիկ ուղուն, այլ մնացել էին տեղական շուկայի հետ կապված մանր առևտրականներ։ Աստվածատուր Տեր-Հովհաննիսյանը, որը 1869 թ. եղել է Հալեպում, իր ուղեգրության մեջ ցավով նշում է, որ հայ առևտրականների գործունեության շրջանակները բավականաչափ սահմանափակված են[191]։

Հալեպի հայ բնակչության սոցիալական կազմում մեծ էր արհեստավորների, մասնավորապես ջուլհակների թիվը, որոնք ունեին իրենց դազգահները, մեծաքանից գործում էին հրաշալի կտորներ և վաճառքի հանում։

---

190 Հ. Բաբաբան, նշվ. աշխ., էջ 215։

191 Ա. Վ. Տէր-Յովհաննիսեան, Կարճ ճանապարհորդութիւն յԱսիա, տե՛ս «Մխոն», 1868, էջ 212։

Ջուլհակության հետ սերտորեն կապված էր ներկարարությունը։ Հալեպում այդ արհեստի լավագույն վարպետները Այնթափի և Մարաշի հայ ներկարարներն էին։ Նրանք բուսական ներկերով էին ներկում մանվածքին ու կտորները. «Հինեն ի վեր,— գրում է Սյուրմեյանը,— Հալեպ հաստատված Այնթափի և Մարաշի հայերուն ընթացիկ արհեստը մնաց մանած ներկելը և կտոր գործելը»[192]։

Հալեպի հայ արհեստավորության մեջ մեծ թիվ էին կազմում նաև դերձակները, կոշկակարները, որմնադիրները և ոսկերիչները։ Տեղական իշխանությունների կողմից հայ դերձակներին էր հանձնարարված բանակի համար հանդերձներ պատրաստելու գործը։ Հայ կոշկակարները ոչխարի, այծի և ուղտի մորթիներից պատրաստում էին դեղին և կարմիր գույնի կիսակոշիկներ, որոնք լայն սպառում ունեին։ Հայ վարպետ-որմնադիրների ձեռքով են պատրաստված ոչ միայն Հալեպի, այլև Բեյրութի և Դամասկոսի աչքի ընկնող կառույցներից շատերը։

Հալեպում ոսկերչությունը, փաստորեն, գտնվել է հայերի ձեռքին. «Հալեպի ամեն ազգի բարձր ընտանիքներու քով,— գրում է Սյուրմեյանը,— տակավին կտեսնվեր հայկական հին ոսկերչության լավագույն նմուշները, ամեն տեսակի զարդեղեններ, մարգարտահուռ և աղամանդակուռ»[193]։

Անտիոքում և նրա մոտիկ գյուղերում ապրում էին շուրջ 5 հազար հայեր։ Հայ գաղթօջախներ են եղել Փայասում, Ալեքսանդրետում, Սուետիայում և Բեյլանում։ Մուսադաղում ապրող հայերը կենտրոնացած էին վեց գյուղերում։ Բացի այդ, հայերը մի շարք գյուղերում ապրել են արաբների և ալաուտների հետ։ Ջեբել Արայում մեծ թվով հայեր ապրել են Քեսաբում և մոտակա հայկական գյուղերում[194]։

Այս վայրերի քաղաքների հայ բնակչության հիմնական զբաղմունքն է եղել արհեստագործությունը և մանր առևտուրը, իսկ գյուղացիները զբաղվել են այգեգործությամբ, շերամապահությամբ և ծխախոտագործությամբ։

Սիրիայի հայկական հնագույն գաղթօջախներից է եղել Լաթաքիան (նախկին Լավոդիկիան)։ Անցյալում այս գաղթօջախը այնքան մեծ էր, որ եպիսկոպոսական թեմ է կազմել, իսկ նոր ժամանակներում փոքր թվով բնակչություն է ունեցել։

Լաթաքիայի մոտակա լեռներում գտնվող մի շարք հայկական գյուղերի բնակչության վիճակը XIX դարի կեսերին անչափ ծանր է եղել։ «Սիրոս ի խոր խոցվեցավ,— գրել է ականատեսներից մեկը,— երբ տեսա զիրենք լեռներու գլուխները ամենախեղճ խրճիթներու ու ծերպերու մեջ պատսպարված՝ հետին աղքատությամբ»[195]։

Լեռնային այս բնակավայրերից ամենամեծը՝ Արամո գյուղը, հանդիսացել է Մուգատիմներ կոչվող ֆեոդալական տան կալվածքը։ Հայ գյուղացիներըն առանց կալվածատիրոջ թույլտվության իրավունք չեն ունեցել տղա կամ

192 Ա. Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, հատ. III, էջ 975։

193 Նույն տեղում, էջ 975։

194 *A. K. Sanjian.* The Armenian Communities in Syria under Ottoman Dominion Cambridge, 1865, p. 53—56.

195 «Մեղու», 1866, էջ 100։

աղջիկ ամուսնացնել։ Հետագայում Արամո գյուղի մի մասը վաճառվել է ֆրանսիական և ռուսական հյուպատոսներին։ «Ասոնց ամենքն ալ,— գրում է ականատես ճանապարհորդը,— թե քրիստոնյա թե անքրիստոնյա գյուղատերեր, ըստ առաջին սովորության, խեղճ գյուղացու ոսկորները կծծեն և բուրդին հետ մորթին ալ վիրավորելով կխուզեն»[196]։

Խիստ պնմխիթար վիճակում էր գտնվում Դամասկոսի հայ գաղթօջախը, որտեղ ապրում էին 3 հազար հայեր։ Այն առանձնապես ծանր հարված ըստացավ 1859 թ., երբ մյուս քրիստոնյաների հետ միասին հայերն էլ ենթարկվեցին կոտորածի։ Հայ բնակչության թիվը գնալով այնքան է նվազել, որ 1866 թ. հասել է 120 հոգու։

Շատ փոքր է եղել հայ բնակչության թիվը Լիբանանում։ Տեղի հայ գաղթավայրին ծանոթ ժամանակակից մի հեղինակ հիշատակում է XIX դարում այս գաղթավայրի մի քանի խղճուկ մնացորդներ՝ ցրված Զմմառի շուրջը (Լիբանանի լեռներում), Ղազիրում, Ջյունիում և Դեյր-էլ-Քամարում[197]։

Հիշատակագիրը, բացի իրենց ազգային ինքնությունը պահպանող հայ ընտանիքներից, թվում է նաև մի շարք ընտանիքներ, որոնք արդեն ձուլվել են մարոնիտների հետ։ Նման հայ ընտանիքներ նա մատնացույց է անում Բեյթ Բիթարում, Բեյթ Ջուվեյնում, Բեյթ Մուրադում, Բեյթ Մըրիտում, Բեյթ Գեորգիում և այլ վայրերում։ Հարսուն գյուղում, նշում է հիշատակագիրը, կա հարյուր տնից բաղկացած մի տոհմ, որը հայկական ծագում ունի և կոչվում է «Բեյթ Արմենի»։ Նա ճյուբեթ Բիշարիում մատնացույց է անում 13—15 հուշարձաններ՝ հայկական արձանագրություններով։

XVIII—XIX դարերում Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաշատ կենտրոններից, ճիշտ է, փոքրաթիվ գաղթականներ եկան Սիրիա և Լիբանան, սակայն նրանք ի վիճակի չեղան փոխելու գաղթավայրի պատկերը։ Եկողները Թուրքիայում հալածանքի ենթարկվող հայ կաթոլիկներն էին, որոնք ապաստանելով իրենց դավանակից արաբ կաթոլիկների մոտ, հավաքական ինքնուրույն կյանք չստեղծեցին և, շատ ժամանակ չանցած, կորցրին իրենց ազգային դեմքը։ Հայ կաթոլիկներն ունեին իրենց հոգևոր կենտրոնը։ Դեռևս 1720 թ. Հալեպից չորս վաճառական եղբայրներ՝ Մուրադյան ազգանունով, դիմել էին Լիբանանի մարոնիտների իշխանին և թույլտվություն ստացել Ղոստա գյուղի մոտ կառուցել Քրեյմի Ամենափրկիչ վանքը։ Այստեղ էլ Լիբանանի և Սիրիայի հայ կաթոլիկները հիմնեցին Անտոնյան կոչվող կաթոլիկ միաբանությունը։ Հետագայում, երբ կաթոլիկ բնակչությունը գնալով բազմացավ, հիմնվեց հայ կաթոլիկ կաթողիկոսությունը, որն առանձին կոնդակով հաստատվեց պապի կողմից։ 1749 թ. կառուցվեց Զմմառի նշանավոր վանքը, որը հայ մշակույթի օջախներից մեկը դարձավ։

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթավայրերում բնակչության թիվը ավելացավ Հայրապետ Տավուքյանի կառավարչության շրջանում։ Տավուքյանը կառավարիչ նշանակվեց հետևյալ իրադրության մեջ. 1860 թ. ֆրանսիական գործակալների հրահրումով արյունոտ ընդհարում եղավ արաբ

196 Նույն տեղում, էջ 101։

197 Ս. Վարդապետյան, Հայերը Լիբանանի մեջ, Բեյրութ, 1951, էջ 258։

մահմեդական դրուզների և արաբ քրիստոնյաների (մարոնիտների) միջև, իսկ Դամասկոսում տեղի ունեցավ քրիստոնյաների ջարդ։ Ֆրանսիական կառավարությունը, քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով, զորք մտցրեց Լիբանան և իր ներկայացուցիչը նշանակեց այնտեղ։ 1861 թ. Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան և Թուրքիան համաձայնության եկան Լիբանանի նոր ստատուտի վերաբերյալ։ Լիբանանը հայտարարվեց ինքնավար մարզ և որոշվեց քրիստոնյա կառավարիչ նշանակել այնտեղ։ Համար թեկնածու համարվեց Տավությանը, որը և կառավարեց մինչև 1868 թվականը[198]։

Տավությանի կառավարչության շրջանում մեղմացան ազգակից, բայց այլակրոն արաբների եղբայրասպան ընդհարումները, տիրեց տևական խաղաղություն, որը նպաստեց Սիրիայի և Լիբանանի տնտեսական կյանքի աշխուժացմանը։ Թուրքիայից որոշ թվով հայ ընտանիքներ եկան և բնակություն հաստատեցին Սիրիայում ու Լիբանանում։

Սիրիայի հայ գաղթավայրում մտավոր նոր շարժման նախակարապետը Հովհաննես Քյուրքչյանն էր։ Նա կազմել է ծրագիր, գրել է հոդվածներ և նպաստել այդ գաղթավայրի հայկական համայնքներում լուսավորության տարածմանը։ Նա իր միջոցներով 1860 թ. Հալեպում բաց է արել մասնավոր վարժարան՝ հայ աղջիկների համար։ Քյուրքչյանը դպրոցների նյութական միջոցներ ստեղծելու համար առաջարկել է Հալեպ քաղաքում կազմակերպել հայկական «Արամյան առևտրական ընկերություն»։ Այդ ընկերությունը պետք է ունենար կես միլիոն ֆրանկ դրամագլուխ՝ կազմված 500-ական բաժնեվճարներից։ Դրամագլուխը պետք է տրվեր գործունյա առևտրականներին՝ շահեցման, իսկ ստացած շահույթը տրամադրել հայ երեխաների դաստիարակությանը։ Նրա ծրագրով անհրաժեշտ էր միջնակարգ դպրոց բացել Կիլիկիայում, որն ավարտած հայ պատանիները պետք է ուղարկվեին Արևմտյան Եվրոպայի բարձրագույն դպրոցներում մասնագիտական կրթություն ստանալու։ Բարձրագույն կրթություն ստացած երիտասարդները պետք է վերադառնային հայրենի երկիր և աշխատեին արհեստագործական դպրոցներում։

Սիրիայի և Լիբանանի հայազգի արաբական գրողներն ու գիտնականները նշանակալից դեր են կատարել արաբական գրականության և գիտության զարգացման բնագավառում։ Արաբ ժողովրդից հարգված և մեծարված հայ գործիչներից է եղել Բեյրութի բժշկական կոլեջի հիմնադիր Հովհաննես Բժիշկը[199] (1826—1908), որը երկար տարիներ զբաղվել է երիտասարդ կադրերի դաստիարակությամբ։ Հովհաննեսը գրել է բժշկական հանրամատչելի բազմաթիվ աշխատություններ։ Նրա «Տան բժիշկ» աշխատությունը շատ ընտանիքների սեղանի գիրքն է եղել։ Արաբ ժողովուրդը Հովհաննես Բժշկի հիշատակը մեծարելու նպատակով Բեյրութի փողոցներից մեկը կոչել է նրա

198 Հ. Ե. Պողոսյան, Կարապետ Արքին փաշա Տավության կոտակալ և ընդհանուր կառավարիչ Լիբանանի (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1949, էջ 75)։

199 Այս և մյուս հեղինակների մասին տե՛ս Ս. Վարժապետյանի «Հայերը Լիբանանի մեջ» աշխատությունը։

անունով, Նրա արձանը կանգնեցված է այն քոլեջում, ուր նա երկար տարիներ աշխատել է։

XIX դարի հեղինակավոր հրապարակախոսներից է Հովհաննեսի որդի Գրիգորը։ Նա իր՝ 1856 թ. անգլերեն հրատարակած «Սիրիան և սիրիացիները» աշխատության մեջ դովերգել է Լիբանանի վաղեմի փառքը և կոչ արել թոթափելու թուրքական լուծը։

Լիբանանի աշքի ընկնող պատմաբան-հրապարակախոսներից է Իսկանդար Արգարիոսը։ Արաբական մատենագրության մեջ նա հայտնի է Իսկենդեր աղա Արգարիոս բին- Նաղուլ աղա-բին-Աբգար էլ էրմենի անունով։ Իսկանդարն ավելի քան երեսուն տարի ծառայել է արաբական գրականությանը և հրապարակել բազմաթիվ աշխատություններ։ Արաբական գրականության պատմության մեջ մեծ տեղ և բարձր գնահատական է տրվում Աբգարիոսի ստեղծագործություններին։ Նրա աշխատություններից «Սարսափների գիրք»-ը թարգմանվել է հայերեն։

Արաբական հայտնի բանասեր-լեզվաբան գիտնականներից է Տոհաննա Աբգարիոսը (1832—1886)։ Նա ունի բազմաթիվ աշխատություններ, որոնց գլուխգործոցը՝ ընդարձակ անգլերեն-արաբերեն բառարանն է՝ հրատարակված 1887 թվականին։ Աբգարիոսի բառարանը Մերձավոր Արևելքում իր տեսակի մեջ համարվում է առաջինը։

Աշքի ընկնող բանաստեղծներից է հայազգի Էդիբ Իսհակը (1856—1885), որը արաբ նոր գրականության ստեղծողներից մեկն է։ Փոքր հասակից նա սկսել է գրել բանաստեղծություններ և այնուհետև լայն ճանաչում է գտել արաբ գրականության մեջ։ Ընտրվել է «Ջահրեթ էլ էդեպ» («Գրականության ծաղիկը») ընկերության անդամ, որի մեջ մտնելու իրավունք են ունեցել միայն արաբական բանաստեղծության մեջ մեծ հռչակի արժանացած գրողները։ Որոշ ժամանակ նա եղել է այդ միության ատենապետը։ Էդիբը հեղինակ է բազմաթիվ արձակ և չափածո երկերի։ Նա արդի աշխարհաբար արաբերենի հիմնադիրներից մեկն է։ Տաղանդավոր բանաստեղծի հիշատակը հավերժացնելու համար Բեյրութի փողոցներից մեկը անվանվել է նրա անունով։

Լիբանանի աշքի ընկնող հայ ճարտարապետներից է Բիշարա Միհինդեղը (1841—1925), որի անվան հետ է կապված Բեյրութ-Դամասկոս խճուղու կառուցումը։ Նրա նախագծով է կառուցված Բեյրութի արվեստների և արհեստների վարժարանը, Բուրջի հրապարակի վրա գտնվող Փոքր Սերայը և այլ շենքեր։

Այսպիսով, հայկական գաղթօջախները կարևոր դեր են խաղացել աշխարհի տարբեր ժողովուրդների հետ մշակութային և տնտեսական կապերի ամրապնդման, ինչպես նաև Հայաստանում լուսավորություն տարածելու, ժողովրդին ազատագրական պայքարի նախապատրաստելու գործում։

ԲԱԺԻՆ Զ

ՄՇԱԿՈՒՅԹԸ
/1801-1870/

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՈՒԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Թուրք-պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի ազգաբնակչությունը զրկված էր տնտեսական ու քաղաքական այն պայմաններից, որոնք անհրաժեշտ էին մշակույթի զարգացման համար։ Այդ իսկ առումով էլ պատահական չէ ամենևին, որ XVIII դարի վերջին տասնամյակներին և XIX դարի արշալույսին մտավոր աշխուժացում է նկատվում Մայր Հայրենիքից հեռու հայ գաղութներում, ինչպես նաև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաբնակ վայրերում։

Պատմության նոր ժամանակաշրջանի հովերով տոգորված հայ մտավորականության նախաձեռնած շարժումն ուներ քաղաքական բովանդակություն և լուսավորության գործը հռչակում էր իբրև ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման լավագույն միջոց։ Մշակութային այդ զարթոնքը նպատակ էր հետապնդում մշակել համազգային իդեալներ և դրանք ծառայեցնել տարբեր երկրներում ապրող հայկական բեկորների մտավոր ու քաղաքական մերձեցմանը, ազգի առաջավոր ուժերի համախմբմանը։

Լուսավորության տարածումը, օտարերկրյա տիրապետողների լծի տակ դարեր շարունակ ճնշված ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից անելը դառնում էր հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը։ Սրանք նպատակներ էին, որոնք XIX դարի առաջին յոթ տասնամյակների ընթացքում ուղղություն էին տալիս հայ ժողովրդի հոգսերով ապրող և նրա ազգային շահերին հետամուտ մտավորականներին։

Տարբեր գաղթավայրերի փոխադարձ կապերի գործում խոշոր դեր էր կատարում տպագիր խոսքը։ XIX դարի առաջին քառորդում հայկական տպարաններ են բացվում Մադրասում, Թիֆլիսում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Մոսկվայում։ Տպագրվում են հարյուրավոր գրքեր, տասնյակ պարբերականներ։ Տպագիր այս հարուստ գրականության առկայությամբ էլ պայմանավորվում էր գրավաճառանոցների ստեղծումը։ Կ. Պոլսում հիմնվում է Քիթապճի Մարգարի հայտնի գրատունը, Կալկաթայում՝ Մարդասիրաց ճեմարանի գրադարանը, Թիֆլիսում՝ էնֆիաճյանների տպարան-գրավաճառանոցը։ Գրադարաններ են ստեղծվում Մոսկվայի Լազարյան ճեմարանին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին,

Աստրախանի Աղաբաբյան դպրոցին, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանին, Պոլսի Սկյուտարի ճեմարանին կից։ Այնտեղ կենտրոնանում են մինչ այդ Ամստերդամում, Վենետիկում, Պոլսում, Կալկաթայում, Մադրասում և այլ վայրերում տպագրված հայերեն գրքեր, ձեռագիր մատյաններ, օտար լեզուներով գեղարվեստական, պատմագրական և գիտական երկեր։ Օրեցօր բազմացող հայկական դպրոցներում, լիներ դա հեռավոր Հնդկաստանում թե Զմյուռնիայում, Թիֆլիսում թե Մոսկվայում, աշակերտները մայրենի լեզվին զուգահեռ սովորում էին օտար լեզուներ։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի մտավոր կյանքի վրա։ Եթե մինչ այդ իշխողը կղերական գաղափարախոսությունն էր, ապա Ռուսաստանին միանալուց հետո այս երկրամասում ապրող ժողովուրդների մտավոր զարգացման անհամեմատ լայն հեռանկարներ ստեղծվեցին։ Ռուսաստանից Կովկաս էին թափանցում առաջավոր գաղափարներ։

Դրանով պետք է բացատրել տեղացիների բուռն հետաքրքրությունը դեպի ռուսաց լեզուն ու գրականությունը։ 1820—1830-ական թվականներին կատարվում են առաջին թարգմանությունները Պուշկինից, Լերմոնտովից, Կոլցովից։ 1843 թ. Լազարյան ճեմարանի տպարանում լույս է տեսնում Ժուկովսկու, Պուշկինի, Լերմոնտովի, Բարյատինսկու և Գնեդիչի երկերի հայերեն թարգմանությունների ժողովածուն։

Տպագրվում են ռուս-հայ բառարաններ, լեզվական ձեռնարկներ, որոնք հեշտացնում են հաղորդակցությունը ռուսական գրականության հետ։ Դարաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները, ռուսական առաջավոր մտքի ներթափանցումը հայ իրականություն՝ թուլացնում էին կղերական ազդեցությունը։

Նոր դարի առաջին տասնամյակներից Թիֆլիսը դառնում է ինչպես հայ մշակույթի այլ ճյուղերի, այնպես էլ տպագրական արվեստի կենտրոն։ 1823 թ. գործում էր Ներսիսյան դպրոցի տպարանը, որտեղ տպագրվեցին մի քանի գրքեր, այդ թվում նույն դպրոցի աշակերտների գրական ստեղծագործությունների «Ծրախայրիք» ժողովածուն։ Հետագայում, 1858 թ., այնտեղ տրպվեց Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը։

Իր վայելուչ տառերով, մաքուր տպագրությամբ ավելի մեծ համբավ է ձեռք բերում Համբարձում Էնֆիաճյանցի տպարանը, որտեղ տպագրվում են Խ. Աբովյանի «Նախաշավիղը», «Պարապ վախտի խաղալիքը», Գ. Սունդուկյանի, Ղ. Աղայանի, Միք. Պատկանյանի մի շարք գրքերը և բազմաթիվ պարբերականներ («Կռունկ Հայոց աշխարհին», «Վաճառական», «Հայկական աշխարհ» և այլն)[1]։

XIX դարի սկզբներին հայ մշակույթի կարևոր օջախներից մի քանիսը գտնվում էին հնդկական գաղութում, հատկապես Մադրաս, Կալկաթա և մի շարք այլ քաղաքներում, որտեղ լույս էին տեսնում պարբերականներ, հիմնվում տպարաններ, կրթական, մշակույթի կազմակերպություններ։ Ի տարբերություն արևելահայ իրականության, որտեղ հայ մշակույթը զարգանում էր

1 Մանրամասն թվարկումը տե՛ս Թեոդիկ, Տիպ ու տառ, կ. Պոլիս, 1912, էջ 181։

ռուսական առաջավոր դրականության ու մտքի ազդեցությամբ, հնդկահայ դաղութում, որտեղ տիրապետողը անգլիական կապիտալն էր, նկատելի էր արևմտաեվրոպական մտքի ազդեցությունը։ Դաղութում առաջանում են եվրոպական լեզուներին, մասնավորապես անգլերենին հմուտ գործիչներ, որոնք իրենց ձեռքն են վերցնում լուսավորական կրթական աշխատանքը, գրում են ինքնուրույն երկեր և կատարում թարգմանություններ։

Հնդկահայ գործիչները թարգմանություններ կատարում էին որոշակի ծրագրով։ Թարգմանվում էին այնպիսի երկեր, որոնք կարող էին արձագանքել ազատագրական պայքարին։ Այսպիսին էր Վոլտերի «Հուլիոս Կեսարի» հայերեն թարգմանությունը, որը լույս տեսավ 1818 թ. Մադրասում։

Գրական այս շարժման մեջ որոշակի դեր էր կատարում բազմակողմանի զարգացած մի գործիչ՝ Մարտիրոս Մկրտչյանը։ Բացի խմբագրական-հրապարակախոսական գործունեությունից, նա հանդես է եկել որպես բանաստեղծ, դրամատուրգ։ Եվրոպական դրականությանը, առանձնապես Շեքսպիրի երկերին քաջածանոթ այս անձնավորությանն է վերագրվում հայ առաջին կենցաղային թեմայով կատակերգությունը՝ «Խոտորդիմա դժրողությանը», գրված Նոր Ջուղայի բարբառով, տպագրված Կալկաթայում 1821 թվականին։ Այն արտացոլում է անգլիական գաղութարարների կենցաղի ու սովորությունների ներթափանցումը հնդկահայ քաղքենիական միջավայրը և դրանով էլ ճանաչողական մեծ արժեք ունի։ Կատակերգության վրա նկատելի է ինչպես շեքսպիրյան, այնպես էլ մոլիերյան դրամատուրգիայի ազդեցությունը։

Դարասկզբին բուռն ծաղկում ապրող հնդկահայ մշակույթը քսանական թվականների սկզբներից թուլանում է։ 1821—1845 թթ. չենք նկատում կրթական, լուսավորական այն թափը, որ առկա էր նախորդ շրջանում։ Չի հրատարակվում և ոչ մի պարբերական։ Քառասնական թվականների կեսերից Կալկաթայում նորից է աշխուժանում մշակույթի զարգացումը, շարունակվում մոտ մեկ տասնամյակ։ Մտավոր այս շարժման ոգեշնչողն ու ընթացք տվողը Մ. Թաղիադյանն էր։ Նրա եռանդուն մասնակցությամբ Կալկաթայում ստեղծվում է «Արարատյան ընկերությունը», որը հիմնադրում է Ս. Սանդրխտյան իգական դպրոցը, հիմնում տպարան և հրատարակում «Ազգասեր» շաբաթաթերթը՝ Մ. Թաղիադյանի խմբագրությամբ։

«Արարատյան» ընկերության տպարանում լույս են տեսնում մի շարք գրքեր, մեծ մասամբ Թաղիադյանի ստեղծագործությունները, ինչպես՝ «Վէպ Վարդգէսի» (1846), «Վէպ Վարսենկան» (1847), «Մոս և Մոնդիպի» (1847), «Ճանապարհորդութիւն ի Հայս», «Թուրք Թաղիադեանց» (1847) և այլն։

Հայ մշակույթի խոշորագույն կենտրոններից մեկը շարունակում էր մնալ Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքը։ Թեև այն գտնվում էր երկրից դուրս, կտրված էր հայրենի հողից, բայց գործունեության ասպարեզը հայ կյանքն էր։ Նրանք իրենց հրատարակություններով թափանցում էին հայ իրականության բազմաթիվ խորշերը՝ հեռավոր Հնդկաստանից մինչև Թուրքիա, Կովկասից մինչև Պարսկաստան։

Նա մեծապես նպաստել է հայ մշակույթի զարգացմանը։ Մխիթարյան միաբանությունը դարասկիզբը նշանավորում է «Աշխարհագրութիւն չորից

մասանց աշխարհի» հրկասիրության հրատարակությամբ, բաղկացած 11 հատորներից, բոլորն էլ շքեղ, ոսկեզօծ ու կաշեկազմ, ստեղծված միաբանության անդամներ Ստեփանոս Գյուվեր Ագոնցի և Ղուկաս Ինճիճյանի ջանքերով։ Մոտ 8000 էջից բաղկացած այդ աշխատության մեջ մանրամասն նկարագրվում են Ասիայի, Եվրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի բոլոր երկրները, նրանց աշխարհագրական դիրքը, բուսականությունը, վաճառականությունը, տեղագրությունը...

Հիշյալ երկասիրությունը հարուստ տվյալներ է պարունակում Հայաստանի և բազմաթիվ հայկական գաղթավայրերի վերաբերյալ։ Նա կարևոր աղբյուրներից մեկն է եղել եվրոպական հայագետների համար։

Մխիթարյանների գործունեության հետ են կապված բազմաթիվ հայ պատմիչների երկերի հրատարակությունները (Ագաթանգեղոս, Եղիշե, Եզնիկ, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի և ուրիշներ), ինչպես և հունա-հռոմեական մատենագրության լավագույն նմուշների թարգմանությունները, այդ թվում Պլուտարքոսի «Զուգակշիռների» վեց հատորները, Քսենոֆոնի «Կիւրոսի խրատու պատմութիւնքը», Մարկոս Ավրելիոսի ճառերը, Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը» և այլն։

Այդ տարիներին էլ, անշուշտ, Մխիթարյանները հրատարակել են «վարք սրբոցներ» ու «մեկնաբանական» գրքեր, նաև՝ Աստվածաշունչը, բայց գրական, բանասիրական, գիտական արժեք ներկայացնող գրքերի ծավալը համեմատել անգամ դժվար է նախընթաց հարյուրամյակում կատարվածի հետ[2]։

Մխիթարյան միաբանությունը Վենետիկի ս. Ղազար կղզուց բացի ուներ մի այլ ճյուղավորում, որը գործում էր նախ Տրիեստ քաղաքում, ապա Վիեննայում։ Տրիեստյան շրջանը (1775—1810) բնորոշ է բացառապես կրոնաբարոյական, դավանաբանական գրքերի հրատարակությամբ (մեծ մասամբ հայատառ թուրքերեն)։ 1811 թվականին Տրիեստի Մխիթարյանները տեղափոխվում են Վիեննա, ստեղծում Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որն ահա ավելի քան 150 տարի գործում է անխափան, զարկ տալով հատկապես հայագիտությանը։ 1847—63 թթ. այդ միաբանությունը հրատարակել է մշակված հայերենով «Եվրոպա» շաբաթաթերթը։

Հայ իրականության մեջ մշակութային կարևորագույն կենտրոն էր էջմիածնի վանքը, որտեղ հավաքվում էին հին ձեռագրեր, գործում էր ժառանգավորաց դպրոցը։ Վանքը հաճախ է ենթարկվել ասպատակությունների, թալանի ու ավերի։ Նապոլեոնի դեսպան գեներալ Գարդանը վկայում է, որ 1805 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ վանքի մատենադարանը թալանի է ենթարկվել, իսկ տպարանի տառերից գնդակներ են ձուլվել[3]։ Անգլիացի Ջեյմս Մորիերի ուղեգրություններում կա ակնարկ, թե էջմիածնի վանքի գրքերով տաքացվել են բաղնիքներ։ Ջնայած ներքին և արտաքին այս աննպաստ պայմաններին, էջմիածնում կենտրոնանում են մեծ քանակությամբ ձեռագրեր, աս-

---

2 Մխիթարյան Միաբանության մշակութային գործունեության մասին մանրամասն տե՛ս Հ. Ռ. Սարգսյան, Երկհարյուրամյա գրական գործունեություն և նշանավոր գործիչներ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905։

3 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ջ, էջ 101։

տիճանաբար ցուցակագրվում են, ուսումնասիրվում։ 1837 թ. Հովհ. վարդապետ Շահխաթունյանը կազմում է 312 կարևոր ձեռագրերի առաջին ցուցակը, որը հայագետ Բրոսեի կողմից թարգմանվում է ու հրատարակվում ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով (1840)։ Նույն թվականին Դանիել վարդապետ Շահնազարյանը և Անդրեաս վարդապետ Կոստանդնուպոլսեցին կազմում են ավելի ընդարձակ մի ցուցակ (2340 ձեռագրերի), որը հետագայում, 1863 թ. հրատարակվում է Հակոբ Կարենյանի կողմից և հրատարակչի անունով կոչվում Կարենյան ցուցակ։

Էջմիածնի տպարանում գրքեր էին տպագրվում դեռևս XVIII դարի վերջերից։ Որոշ ընդմիջումներով տպարանը շարունակել է իր գոյությունը և ավելի աշխուժություն ապրել 1860-ական թվականների կեսերից, երբ Գևորգ Դ կաթողիկոսը վերակազմում է այն, ստեղծում ձուլարան և 1868 թ. մայիսամսից հրատարակում «Արարատ» պաշտոնաթերթը՝ Աբել եպիսկոպոս Մխիթարյանի խմբագրությամբ։

Արևմտյան Հայաստանում գործում էին Վարագա վանքը, Մուշի սուրբ Կարապետ վանքը և այլն, որոնք նույնպես հավաքում էին ձեռագրեր, կատարում մտավոր աշխատանք։

Հայկական վանքերից հնագույններից և մեծերից էր Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքը, որտեղ դարերի ընթացքում կուտակվել էր ձեռագրական հարուստ ֆոնդ։ Վանքն ուներ բավականաչափ մեծ միաբանություն, բայց կատարում էր մտավոր աննշան դեր։ Այդ վանքում նույնպես տպարան է բացվում 1830-ական թվականներին։ Առաջին երկու տասնամյակներում տպագրվում են բացառապես կրոնական գրքեր։ Միայն 1850-ական թվականների կեսերից են երևում պատմա-բանասիրական, մատենագրական երկեր՝ «Մատրագրություն Երուսաղեմի», «Գրիգոր Նարեկացի», «Միխայիլ Ասորի», «Մատթեոս Ուռհայեցի» և այլն։

Տնտեսական, քաղաքական ուրույն պայմանների մեջ էին գտնվում Արևմտյան Հայաստանի գավառները, ուր իշխողը անգիր բանահյուսությունն էր, ժողովրդական երգն ու նվագը, հեքիաթն ու խաղը, որոնք կազմում էին ճնշվող ու կեղեքվող ժողովրդի հոգևկան սփոփանքը, զվարճության միջոցը։

Դարասկզբից Կ. Պոլսում լայն գործունեություն է ծավալում Արապյան եղբայրների տպարանը։ Արապյան եղբայրներից Պողոսը Կ. Պոլսում աշխատում է տպագրիչ հոր մոտ և, աստիճանաբար հմտանալով տպագրական գործում, հիմնում է ժամանակի առաջնակարգ տպարաններից մեկը, կատարելագործում թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն տպագրական տառերը, անգամ հրավիրվում է վրաց Հերակլ թագավորի կողմից՝ Թիֆլիսում նման մի տպարան ստեղծելու առաջադրանքով։ Արապյանների Կ. Պոլսի տպարանում տպագրվում են հայ հին մատենագրության մի շարք նմուշներ։ «Նարեկը» այդ տպարանում 1807—1852 թթ. լույս է տեսել յոթ անգամ։ Այստեղ են տպագրվել Ագաթանգեղոսի, Թովմա Արծրունու երկերը, Վարդան Այգեկցու առակները, մի շարք տաղարաններ, լեզվաբանական գրքեր, բառարաններ, բժշկարաններ, այդ թվում Միքայել Ռեստենի «Բժշկարանը», Հովհաննես Վանանդեցու «Արփիական Հայաստան» չափածո ստեղծագործությունը, Գր. Փեշտիմալճյանի

«Բառդիրք հայկազեան լեզուի» բառարանը, ինչպես և պոլսահայ մի շարք պարբերականներ («Ազդարար Բյուզանդյան», «Սուրհանդակ Բյուզանդյան», «Մեղու», «Ջվարճախոս» և այլն)[4]։

1830-ական թվականների վերջերից ասպարեզ է գալիս հայտնի տպարանատեր, հայերեն և թուրքերեն տառատեսակների ստեղծող Հովհաննես Մյուհենտիսյանը։ Մյուհենտիսյանի «գործարանը», ինչպես անվանում էին այն ժամանակ, եղել է ժամանակի ամենակատարելագործված տպարանը ամբողջ Մերձավոր Արևելքում։ Նա է պատրաստել թուրքական թղթադրամների բազմաթիվ տեսակների կաղապարները։ Մյուհենտիսյանն ու Ճ. Արամյանը խոշոր դեր են կատարել տպագրական արվեստի զարգացման, տառատեսակների ստեղծման ու բարեփոխման գործում։ Արամյան տպագրական տառերը օգտագործվում են մինչև այժմ և հայտնի են ստեղծողի անունով։

1812 թվականից մինչև 1860-ական թվականների կեսերը Պոլսում ստեղծվում են հարյուրից ավելի ընկերություններ[5]։ 1812 թ. ստեղծված Արշարոնյաց ընկերությունը հոգացել է «Ընդանակ Բյուզանդյանի» և «Դիտակ Բյուզանդյանի» ծախքերը։ Ընկերությունների ճնշող մեծամասնությունը ստեղծվել է երիտասարդության ջանքերով։ Այդպիսիք էին, օրինակ, «Ուսումնական ընկերությունը», «Հայկական թանգարանը», «Նարեկյան ընկերությունը», «Վերածնություն ընկերությունը» և այլն։ Սրանք բոլորն էլ նպատակ են ունեցել օժանդակել մատաղ սերնդի դաստիարակությանը, գրենական պիտույքներ, դասագրքեր հայթայթել դպրոցներին։ Շոշափելի դեր են կատարել առանձին դպրոցներին կից ստեղծված ընկերությունները, ինչպես Սամաթիա թաղամասի Սահակյան դպրոցն ավարտած երիտասարդներից կազմված «Սահակյան սանուց միությունը», որ տասնամյակներ շարունակ ապահովել է թաղամասի հայկական վարժարանի ծախսի մի մասը։ 1851—53 թթ. հրատարակվել է «Բուրաստան Սահակյան վարժարանի» աշխարհաբար հանդեսը. հետագայում միությունը ունեցել է իր թատերախումբը, տվել ներկայացումներ։ Նույնպիսի դեր է կատարել, բայց ավելի կարճ կյանք ունեցել Սկյուտարի ճեմարանին օժանդակող ընկերությունը, հիմնադրված 1846 թվականին, իսկ Պալաթ թաղամասում հիմնված Խորենյան ընկերությունը իր գոյությունը պահպանել է մոտ հիսուն տարի, մինչև 1890-ական թվականների սկզբները և օգնել ոչ միայն թաղի դպրոցին՝ 1866 թ. կառուցելով հատուկ շենք, այլև ծավալել է լուսավորական գործունեություն, կազմակերպել դասախոսություններ, զեկուցումներ[6]։

Աստիճանաբար հիմնադրվում են այնպիսի ընկերություններ, որոնք նպատակ են դնում օժանդակել գավառահայերի լուսավորությանը։ Դրանցից էր 1851 թ. ստեղծված Սեբաստիայի ընկերությունը։ Այն գործել է կես դար, նպատակ ունենալով դպրոցներ բաց անել Սեբաստիա քաղաքում և նրա շըր-

---

4 Թեոդիկ, *Տիպ ու տառ*, էջ 65—71։

5 Հ. Եփրեմ Պողոսյան, *Պատմություն հայ մշակութային ընկերությունների*, «Հանդես ամսօրյա», 1951—1952 և հետ.։ Տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, *Պոլսո հայ ընկերությունները*, «Գաղութահայ տարեգիրք», Ա, Բ և Գ տարիներ, Պուքրեշ, 1939—1941։

6 *Մանրամասն տե՛ս* Ե. Պողոսյան, նշվ. աշխ.։

ջակա դյուղերում։ 1880 թ. նրա հսկողության և հովանավորության տակ գրտնվել է 13 դպրոց։ Ընկերություններ են հիմնում նաև գավառից Պոլիս եկած պանդուխտները, ցանկանալով զարկ տալ իրենց գավառի կրթական գործին։ Դրանցից հիշատակենք «Ուսումնատենչը», որի նպատակն էր Ջմշկածագի մեջ դպրոցներ բաց անել, Արամյան ընկերությունը, որն աշխատում էր «Կեսարիո մեջ, աղջկանց վարժարան մը բանալ» և այլն։

Կրթական-լուսավորական տասնյակ ընկերությունների մեջ խոշոր դեր է կատարել Նիկողայոս Ջորայանի, Մատթեոս Այվատյանի և ուրիշների ջանքերով 1852 թ. ստեղծված «Ընթերցասիրացը»։ Այն գործել է մոտ մեկ տասնամյակ և ձգտել «հասարակության մեջ ընթերցման ախորժակ մը տարածելով՝ անոր մտավոր մշակույթը զարգացնել»։ Այս ընկերությունը հիմնել է հատուկ թանգարան, հավաքել պատմական անցյալին վերաբերող հնագիտական բեկորներ, հազվագյուտ գրքեր և այլն, ունեցել է և իր ընթերցարանը, դարձել հավաքույթների կենտրոն։

1859 թ. հիմնված Հայկազյան ընկերության նպատակն է եղել «նախակրթական գրքեր տպել և աժան ծախել ժողովրդին»[7], իսկ Աշոտյան ընկերությունը ցանկացել է «աղջիկներու դաստիարակության նպաստել»[8]։

Մի շարք միություններ բացառապես ստեղծվել են հայ արվեստի տարբեր ճյուղերին զարկ տալու ձգտումով։ Դրանցից էր 1846 թ. Հովհ. Գասպարյանի կողմից հիմնված Արամյան ընկերությունը, որն ունեցել է կանոնավոր թատերախումբ և գործել քսան տարի՝ ներկայացումներ տալով Թուրքիայում և Կովկասում։ 1857 թ. Արմենակ Հայկունու ջանքերով կազմակերպվում է «Թատերական ընկերությունը», տալիս հայերեն ներկայացումներ, հրատարակում առաջին թատերական հայ պարբերականը՝ «Մուսայք Մասյացը»։ Նույն թվականներին Օրթագյուղում հիմնվում է «Հայկազունյան թատերական ընկերությունը», Գում Գաբուում՝ մի այլ թատերական ընկերություն, իսկ Բերայում՝ հայտնի «Արևելյան թատրոնը»[9]։ 1862 թ. ստեղծվում է «երաժշտական ընկերությունը»՝ երաժշտական ճաշակը հայոց մեջ տարածելու և ազգային երգեր հրատարակելու, «նվագածուներ առաջ բերելու» նպատակով[10]։ Այս ընկերության մեջ գործոն դեր են կատարել Տիգրան Չուխաճյանը, Գաբրիել Երանյանը, Նիկողոս Թաշճյանը։ Նրանց ջանքերով հրատարակվել է հայ առաջին երաժշտական հանդեսը՝ «Քնար հայկականը»։ Նույն տասնամյակում Օրթագյուղ թաղամասում հիմնվում է «Բարեսեր ընկերությունը»՝ իր շուրջը համախմբելով ժամանակի արվեստասեր երիտասարդներին։

Հիշյալ բոլոր ընկերություններն ունեցել են լուսավորական, կրթական նպատակ և նպաստել են արևմտահայության ազգային ինքնագիտակցության զարթոնքին, բայց ստեղծվել են նաև այնպիսի կազմակերպություններ, որոնք լուսավորական աշխատանքին զուգընթաց ունեցել են քաղաքական ո-

---

7 Ա. Ալպոյաճյան, նշվ. հոդվածը, «Գաղութահայ տարեգիրք», 1940, էջ 80։

8 Նույն տեղում, էջ 81։

9 Գ. Սահինյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, էջ 213, 68։

10 Ա. Ալպոյաճյան, նշվ. հոդվածը, «Գաղութահայ տարեգիրք», 1940, էջ 84։

րոշակի ծրագիր։ Դրանցից էր 1846 թ. ստեղծված «Համազգյաց ընկերությունը»։ Նրա նպատակն էր զարկ տալ հայ ժողովրդի քաղաքական համախմբմանը և միասնությանը։ 1860 թ. հիմնվում է «Բարեգործական» ընկերությունը, որի մեջ ընդգրկվում են Մկրտիչ Աղաթոնը, Գրիգոր Օտյանը, Սերովբե Թագվորյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը և ուրիշներ։ Հետագայում ընկերության ձախ թևին պատկանող անդամները, որոնց հաջողվել էր «Բարեգործականի» պատվավոր նախագահ ընտրել Միքայել Նալբանդյանին, խանդավառված վերջինիս հեղափոխական գաղափարներով, նրա խորհրդով ծրագրում են ստեղծել մի գաղտնի կազմակերպություն[11]։

Կ. Պոլսից հետո արևմտահայ մշակույթի խոշոր կենտրոններից էր Զմյուռնիա քաղաքը։

Արևմտյան գաղութարարները ծրագրված աշխատանք էին կատարում Թուրքիա ներթափանցելու համար։ Նրանք քայլ առ քայլ մոտենում էին մայրաքաղաքին։ Իրենց առաջին հենարանը դարձնում են Մալթա կղզին, հիմնում տպարան, հրապարակում հայերեն գրքեր, ապա այնտեղից անցնում Զմյուռնիա, որտեղ նրանց գործակալ Գուլիելմոս Կրիֆտը հայկական տպարան է բաց անում 1830 թ. և լույս ընծայում աշխարհաբար գրքեր, բացառապես կրոնական բնույթի, այդ թվում և Աստվածաշունչը[12]։ Սկսվում է բուռն պայքարը օտար ներթափանցման դեմ։ Հակազդեցությունը շոշափելի արդյունքի է հասնում, երբ 1850-ական թվականների սկզբներին Հարություն և Սարգիս Տետեյան եղբայրները բաց են անում իրենց հայտնի տպարանը։

Տետեյան տպարանի հրատարակությունների ազգային դրոշմը թույլ էր, դրանք մեծ մասամբ թարգմանական վեպեր էին, սակայն այդ գրքերը հայ իրականություն էին բերում կյանքի թարմ շունչը։ Հիշենք Վիկտոր Հյուգոյի «Թշվառներին» հինգ հատորների լիակատար և դասական թարգմանությունը Գրիգոր Զիլինկիրյանի կողմից, նույն հեղինակի «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպի թարգմանությունը՝ Մեսրոպ Նուպարյանի կողմից, Հյուգոյի մի շարք պիեսների («Լուկրեցիա Բորջիա», «Անջելո» և այլն) թարգմանությունը Ա. Կ. Տետեյանի կողմից, Վալտեր Սկոտի, Վոլտերի, Ա. Դյումայի և Ժյուլ Վեռնի վեպերի թարգմանությունը Մատթեոս Մամուրյանի կողմից և այլն[13]։

Վերոհիշյալ գրքերը առաջավոր մտքեր ու գրականության ճաշակ էին պատվաստում ընթերցող երիտասարդության մեջ։ Շատ վեպեր, ինչպես «Թշվառները», Վոլտերի երկերը («Զադիկ», «Միկրոմեգաս» և այլն), հակադրվում էին միսիոներական հրատարակություններին։

Մշակույթի այս օջախներում է, որ XIX դարի սկզբներից աշխուժացում ապրեց հայ միտքը։

2. ԴՊՐՈՑ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Դարասկզբին և՛ արևելահայ, և՛ արևմտահայ իրականության մեջ շարունակում էր տիրապետող մնալ ուսուցման ավանդական խալֆայական ձևը։

11 Նույն տեղում, էջ 81։
12 Նույն տեղում։
13 Թեադիկ, Տիպ ու տառ, էջ 135—137։

Ռասայականդման հիմնական առարկաները կապված էին կրոնի հետ և ամենևին չէին նպաստում աշակերտության մտավոր ունակությունների զարգացմանը։ Աշակերտները հարկադրված էին սաղմոս ու ժամագիրք անգիր անել։

Սակայն, թևակոխելով XIX դարը, հայկական դպրոցը կանգնեց այնպիսի խնդիրների առջև, որոնք պետք է անհրաժեշտաբար հեղաբեկում մտցնեին նրա կյանքում։ Դա ժամանակի հրամայական պահանջն էր, որովհետև խորտակվում էին իրենց դարն ապրած ֆեոդալական հարաբերությունները, հայ ժողովուրդը ներքաշվում էր կապիտալիզմի ոլորտը և արդեն իսկ զգում ազգային համախմբման անհրաժեշտությունը։ Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի մատաղ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ դպրոցի աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական միասնական սիստեմի կիրառմանը։ Դժվարին խնդիրներ էին դրանք և հասարակական ուժերի մեծ լարում էին պահանջում, որքանով որ հայկական դպրոցները զուրկ էին պետական աջակցությունից և հովանավորությունից, սակավ էին կարող դպրոցական գործիչները։ Նոր դարի առաջին տասնամյակներից պոլսահայերը սկսում են եկեղեցու գերիշխանությունից համեմատաբար ազատ դպրոցներ հիմնել, որոնց նյութական հոգսը ընկնում էր արհեստավորական կազմակերպությունների վրա։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց անմիջապես հետո հովհաննահայ վաճառականներն ու մի շարք առաջավոր գործիչներ մտածում են Թիֆլիսում լայն ծրագրով գործող մի դպրոց հիմնելու մասին։

Նոր դպրոցի կողմնակիցները, մասնավորապես Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում և եվրոպական համալսարաններում սովորած երիտասարդները, վերադառնալով հայ իրականություն, առաջին հերթին բախվում էին ծխական դպրոցի դիմադրությանը։ Եկեղեցին իր գերիշխանությունը հեշտությամբ չէր զիջում։

Համատարած խավարի մեջ փայլատակում են մի քանի կրթական օջախներ, որոնց թիվն, անշուշտ, չէր անցնում տասից, բայց մեծ էր նրանց մատուցած ծառայությունը։ Կրթական այդ կարևոր օջախներից էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ արևելահայ իրականությունում, Պոլսի Խասգյուղ թաղամասի Ներսիսյան դպրոցը, Սկյուտարի ճեմարանը, Վենետիկի Մուրադյան վարժարանը, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը և մի քանի այլ դպրոցներ՝ արևմտահայ իրականության մեջ։

1815 թ. Մոսկվայում հիմնադրվում է Լազարյան ճեմարանը՝ Ռուսաստանի խոշոր կալվածատեր և արդյունաբերող Լազարյան տոհմի նյութական միջոցներով։ Այն դառնում է ժամանակի արևելագիտական միակ կենտրոնը ամբողջ Ռուսաստանում, պատրաստում է արևելյան լեզուների (պարսկերեն, թուրքերեն, արաբերեն) հմուտ մասնագետներ, որոնք ոչ միայն օգտակար կարող էին լինել Արևելքի ժողովուրդների մշակույթի ուսումնասիրման, այլև այդ ժողովուրդների հետ հաղորդակցության գործում։

Այդ ճեմարանում են ստացել իրենց կրթությունը հայտնի ռուս արևելագետները։ Բայց ճեմարանը ամենից առաջ հայոց դպրոց էր և նրա սկզբնական

նպատակն էր դաստիարակել այնպիսի սաներ, որոնք օգտակար լինեին հայ իրականությանը։ Ճեմարանում պաշտոնավարել են Հ. Ալամդարյանը, Մ. Սալլանթյանը, Մ. Էմինը, Մսեր Մսերյանցը, Ստ. Նազարյանցը, Միք. Նալբանդյանը և ուրիշներ։ Այնտեղ սովորել են հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Գ. Ախվերդյանը, Քերովբե և Ռափայել Պատկանյանները, Պ. Շանշյանը, Պ. Սիմեոնյանը, Ս. Շահազիզը, Գ. Դոդոխյանը, Գր. Խալաթյանը, Հովհ. Հովհաննիսյանը և շատ ուրիշներ։

Թե՛ Լազարյանները և թե՛ այլ մեծահարուստներ հատկացումներ են կատարել Ռուսաստանի տարբեր վայրերից հավաքված որբ ու աղքատ երեխաների ուսուցման համար։ Ճեմարանում լայն տեղ է տրվել հանրակրթական առարկաներին ու լեզուներին։ Առաջին անգամ արևելահայ իրականության մեջ ստեղծվել են հայերեն դասագրքեր, քերականության, վայելչագրության, հայ ժողովրդի պատմության, կրոնի, ճարտասանության ձեռնարկներ, որոնցից շատերն ունենալով մի քանի տպագրություն, օգտագործվել են երկար տասնամյակներ։


Լազարյան ճեմարանը կրթական առաջին կենտրոնն էր հայ իրականության մեջ, որտեղ հավաքվում էին ոչ միայն Կովկասից ու Թուրքիայից, այլև հեռավոր Հնդկաստանից ու Պարսկաստանից եկած աշակերտներ։ Գալիս էին տարբեր գավառներից, տարբեր բարբառներով խոսող երեխաներ, իրենց հետ բերելով բնաշխարհի վարքն ու բարքը, հոգեկան նկարագիրը, նաև անգիր բանահյուսությունը։ Դասավանդման հիմնական լեզուն առաջին տարիներին դրաբարն էր, սակայն աստիճանաբար գերիշխող է դառնում արարատյան բարբառը։

Ճեմարանն ուներ իր տպարանը, որտեղ բացի դասագրքերից, տպագրվել են պատմա-բանասիրական, թարգմանական և այլ գրքեր, այդ թվում ճեմարանի աշակերտների ստեղծագործությունները՝ «Մուզայք Արարատյան» վերնագրով։ Այնտեղ է տպագրվել նաև Ս. Շահազիզի «Վևոնի վիշտը»։

Ցրվելով Ռուսաստանի հայաբնակ վայրերը, Լազարյան ճեմարանն ավարտած աշակերտները աշխատում էին հայկական դպրոցներում, թերթերի ու ամսագրերի խմբագրություններում, մոտիկից մասնակցելով մտավորական, կրթական աշխատանքին, լուսավորական կյանքին։ Նրանցից շատերն իրենց կրթությունը շարունակում էին Մոսկվայի, Պետերբուրգի կամ Դորպատի համալսարաններում։ Նկատելի է, որ բանասիրությունը, գրականությունը քիչ է գրավել հայ ուսանողներին, նրանք մեծ մասամբ հետևել են բժշկությանը։ Ժամանակի առաջավոր բնագիտությունը, որ խարխլում էր ավանդական ըմբռնումները մարդու և երկրագնդի առաջացման, տիեզերքի ստեղծման և այլ հարցերի վերաբերյալ, իրեն էր քաշում գիտության ծարավի երիտասարդներին։ Հայ համալսարանավարտներից ոմանք ճշգրիտ գիտությունների ճանապարհով եկան դեպի հումանիտար գիտությունները, հագեցնելով դրանք առաջավոր գաղափարախոսությամբ։ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում էին սովորել Գևորգ Ախվերդյանը, Միքայել Նալբանդյանը, նրա գաղափարակիցներ Աննանիա Սուլթանշահը, Հովհաննես Բերբերյանը, դրամատուրգ Միքայել Պատկանյանը և շատ ուրիշներ։

Նշանավոր այս կրթարանն իր բոլոր առավելություններով հանդերձ չէր կարող կատարել այն դերը, ինչ պիտի կատարեր հայ իրականության ծոցում հիմնադրված լուսավորության կարևոր օջախը։ Այդպիսին էր 1824 թ. Թիֆլիսում հիմնադրված Ներսիսյան դպրոցը։ Մի քանի հարյուրի է հասնում այն մարդկանց թիվը, որոնք սովորել են Ներսիսյան դպրոցում և նպաստել հայ գրականության, հրապարակախոսության, թատրոնի, նկարչության, երաժշտության զարգացմանը։

Ներսիսյան դպրոցի գործունեության մասին խոսելիս ամենից առաջ պետք է հիշել առաջին շրջանը (1825—1830), երբ նրա տեսուչն էր Հարությունն Ալամդարյանը, հայ մշակույթի խոշոր երախտավորներից մեկը։ Նա Մոսկվայից հայ իրականություն էր վերադառնում մեր մատենագրությանը, լեզվին ու պատմությանը հիմնովին տիրացած, ռուս գրականությանը քաջատեղյակ և, որ ամենից կարևորն է, այդ բոլորը մատաղ սերնդին տալու անսահման նվիրվածությամբ տոգորված։



Լազարյան ճեմարանը (XIX դարի լիտոգրաֆիա)

Ներսես Աշտարակեցու քաջալերանքով Ալամդարյանը ձեռնարկում է միջոցառումներ՝ դպրոցը ուսուցման մի դարբնոց դարձնելու ազնիվ նպատակով։ Որոշում է տեղծել պարբերական՝ «Տարեգրություն հայոց գրագիտականի»[14] վերտառությամբ։ Այս ծրագրի մի մասը նա հնարավորություն չի ունենում կենսագործել քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով։ «Տարեգրության» մտահղացումն առհասարակ մնում է թղթի վրա, իսկ 1823 թ. բացված տպարանը ունենում է ոչ արդյունավետ գործունեություն։ Դրա փոխա-

14 Աղ. Սրիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, հատ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 138։

րին Ներսիսյան դպրոցը կրթության բնագավառում կատարեց ավելին, քան ժամանակի որևէ հայ դպրոց։

Այդ դպրոցի առաջին հունձքը հանդիսացան Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Գալուստ Շիրմազանյանը և ուրիշներ։ Նրանցից շատերն իրենց կրթությունը շարունակեցին Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, մասնավորապես Մոսկվայում, Պետերբուրգում և Դորպատում, այդ վայրերում ստեղծելով հայկական ուրույն միջավայր, փոխադարձաբար ռուս և այլ ազգության պատկանող մտավորական շրջաններին հաղորդակից դարձնելով հայ կյանքին։

Ինչպես Լազարյան ճեմարանը, Ներսիսյան դպրոցն էլ, ընդունելով աշակերտներ տարբեր գավառներից, հանդիսացավ հայ աշխարհիկ գրական լեզվի ստեղծման հիմնական օջախներից մեկը, չնայած առաջին տարիներին դասավանդման հիմնական լեզուն գրաբարն էր։ Այն հանգամանքը, որ հայ նոր գրականության սկզբնավորողի՝ Աբովյանի անունը կապված է Ներսիսյան դպրոցի հետ, ինքնին վկայում է, թե որքան արգասավոր եղավ ազգային այդ կրթարանը։

Ներսիսյան դպրոցը հանդիսացավ նաև արևելահայ թատրոնի և հայ երաժշտության զարգացմանը նպաստող մի կենտրոն։ Դեռևս իր առաջին տեսչի՝ Հարություն Ալամդարյանի օրոք, 1820-ական թվականների վերջերից, այնտեղ կազմակերպվում են հայերեն ներկայացումներ, աշակերտներին հաղորդակից դարձնելով թատերական արվեստին։ Հետագայում դպրոցի ուսուցիչներ Հ. Կարենյանի և Մ. Պատկանյանի ջանքերով տրվում են ավելի կանոնավոր ներկայացումներ։


Իր աշակերտներին տալով երաժշտական և նկարչական դաստիարակություն, դպրոցը խոստումնալից շատ աշակերտների մղում էր դեպի արվեստի այդ բնագավառները։ Այս տեսակետից խոշոր ծառայություն է մատուցել Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայի սան նկարիչ Ստեփան Ներսիսյանը։

1837 թ. բացվում է Երևանի թեմական դպրոցը։ Սկզբում այնտեղ ընդունվում էին միայն հոգևորականների որդիները, աշխարհականները կարող էին սովորել գավառական դպրոցում։ Բայց կարճ ժամանակ անց վերացվում է այս սահմանափակումը, ընդունվում են նաև աշխարհականների երեխաներ[15], Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին գումարներ էին հատկացնում հարուստ հայերից ոմանք։ Երևանը չուներ այդ հնարավորությունը։ Եվ ահա դպրոցին օգնում են Սուրմալուի, Ալեքսանդրապոլի բնակիչները՝ բամբակով, ցորենով։ Չնայած ցարական կառավարության համաձուլողական քաղաքականությանը, որի հետևանքով միայն հայոց լեզուն ու կրոնն էր թույլատրված ավանդել մայրենի լեզվով, դպրոցը դառնում էր ազգային ուրույն դեմք ունեցող կրթական մի օջախ, որտեղ աշակերտները ծանոթանում էին հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին։ Դպրոցն ուներ ուսման կայուն ծրագիր, մանկավարժական խորհուրդ, կազմակերպում էր երեկույթներ, տարեվերջի հանդեսներ, ան-

15 Նշ. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 137—138։

գամ թատերական ներկայացումներ։ Հետագայում, 1865 թ., երբ Ջմշկյան-Ամերիկյան թատերախումբը եկավ Երևան, ներկայացումներ տվեց ս. Սարգիս եկեղեցու բակում գտնվող թեմական դպրոցի դահլիճում՝ տեսուչ Նահապետ Աթաեանյանի օժանդակությամբ։

Երևանի թեմական դպրոցն իր երկարամյա գոյության ընթացքում մեծ դեր է կատարել Արարատյան դաշտի հայ բնակչության մտավոր զարգացման գործում։ Հայ մշակույթի բազմաթիվ ներկայացուցիչներ սովորել են այնտեղ։ Այդ դպրոցի հասարակական կշիռը շատ ավելի բարձրացավ 1870-ական թվականներից հետո։



Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը

Երևանի կրթական կյանքում խոշոր դեր է կատարել հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, տեղի գավառական դպրոցի տեսչության հինգ տարիների ընթացքում (1843—1848)։

Աբովյանի անվան հետ է կապվում Հայաստանում առաջին թանգարանի ստեղծման փորձը, նրա տեսչության շրջանում (1846)։ Դպրոցում ստեղծվել է թանգարան, որտեղ հավաքվել են Արարատյան դաշտի բուսական աշխարհից նմուշներ, հանքային բեկորներ, նաև հնագիտական իրեր, որոնք, ինչպես «Կովկաս» թերթն է գրել, «անտերունչ տարածեալ կան յաւերակս քաղաքաց, վանօրեից և շէնից, ամենևին անտես ի մերոց համազգեաց»։ Այդ իրերի մեջ են եղել Գառնիի այսմաբեկորներից երկուսը։

Ըստ երևույթին Աբովյանը մտադրություն է ունեցել Երևանում բաց անել նաև իգական դպրոց, սակայն վրա է հասել իր խորհրդավոր անհայտացումը։ Դրանից երկու տարի հետո միայն, 1850 թ., բացվել է Երևանի առաջին իգական Հռիփսիմյանց դպրոցը։ Այնտեղ սովորել են 28 աշակերտուհիներ, որոնցից 11-ը՝ հայեր, 10-ը՝ ռուսներ և 7-ը՝ ադրբեջանուհիներ։ Չորս տարի առաջ Թիֆլիսում ստեղծվել էր ս. Նունեի (Նինայի) իգական դպրոցը և Աբովյանն էլ հրավիրվել էր պաշտոնավարելու այնտեղ։

Կրթական նույնպիսի դեր է կատարել Շուշու թեմական դպրոցը, որը բացվել է 1838 թվականին։ Ղարաբաղում մինչ այդ որևէ հիմնավոր դպրոց չի եղել։ Եղել են մի քանի գործիչներ (Պողոս Ղարաբաղցին, Հովսեփ Արցախեցին և այլք), որոնք իրենց մասնավոր դպրոցներում գիր ու դպրություն են սովորեցրել սահմանափակ թվով երեխաների։ 1820-ական թվականների կեսերից Շուշում գործում էր Բաղելի Ավետարանական միսիոներների ընկերությունը, որը բաց է անում դպրոց, տպարան, զարկ տալիս մշակութային կյանքին։ Ճիշտ է, Ավետարանական այդ ընկերությունը հետապնդում էր դավանաբանական, քաղաքական որոշակի նպատակներ, բայց ակնհայտ էր նրա կատարած աշխատանքը ժողովրդի լուսավորության ուղղությամբ։ Ընկերությունը Շուշում և Մոսկվայում տպագրում է 11679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքեր[16], որ ուշագրավ երևույթ էր այդ տասնամյակներում։ Միսիոներները իրենց կրոնական գրքերը տպագրում էին աշխարհաբար լեզվով։



Մուրադ-Ռափայելյան վարժարանի նախկին շենքը, Վենետիկ (1836—1850)

Ցարական կառավարության միջամտությամբ 1837 թ. դադարեցվում է Ավետարանական ընկերության գործունեությունը։

Սկսած 1830-ական թվականների վերջերից հայ լուսավորչական եկեղեցու թեմակալի իրավասությանն է անցնում կրթական հրատարակչական գործը։ Շուշին իր թեմական դպրոցով դառնում է հոգևոր կենտրոն Ղարաբաղի հայերի համար։ Գործում է նաև տպարանը, առաջին շրջանում տպագրելով

16 Նոր, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 93։

բացառապես հոգևոր բնույթի գրքեր, սակայն աստիճանաբար հրատարակում է նաև աշխարհիկ բովանդակությամբ գործեր, դասական երկերի թարգմանություններ, ինչպես «Շիլիոնյան կալանավորը»։

Շուշու թեմական դպրոցի շրջանավարտները շարունակում էին լուսավորություն տարածել տարբեր վայրերում, միաժամանակ սերտ կապ պահպանել իրենց սնող հաստատության հետ։ 1858 թ. ստեղծվում է մի ընկերություն, որի նպատակն էր գրադարան ստեղծել դպրոցի համար։

1860-ական թվականների սկզբներից ուժեղացող պայքարը, որի նպատակն էր թուլացնել դպրոցի վրա եկեղեցու միահեծան ղեկավարությունը և ժողովրդին մասնակից դարձնել կրթական աշխատանքի կազմակերպմանը, հանգեցրեց հոգաբարձության ստեղծմանը։

Հոգաբարձությունն իր ձեռքն է վերցնում դպրոցի ղեկավարությունը։ Գումարվում են ժողովներ, ծավալվում վիճաբանություններ։ Աշխուժանում է հասարակական միտքը։ Ժամանակի առաջավոր մտածողները հասարակական ընթերցարանում գումարված նիստերում «ամենայն հարազատությամբ քարոզում էին այն ժամանակվա մեր առաջավոր գործիչներ Նազարյանի, Նալբանդյանի, Շանշյանի գաղափարները»[17]։

Թեմական դպրոցի բարձր դասարաններում նկատելի տեղ էր տրվում հանրակրթական առարկաներին. հայոց լեզվի, հայոց պատմության հետ մեկտեղ ուսուցվում էր աշխարհագրություն, թվաբանություն, ռուսերեն, ադրբեջաներեն, ֆրանսերեն լեզուներ, վայելչագրություն, նկարչություն և այլն։

XIX դարում կրթական կյանքի աշխուժացում է նկատվում Ղրիմի Թեոդոսիա, Ղարասուբազար, Սիմֆերոպոլ, Բեսարաբիայի Քիշնյով, ինչպես և Հարավային Ռուսաստանի Մոզդոկ, Ղզլար, Աստրախան, մանավանդ Նոր Նախիջևանի հայաբնակ գաղութներում։

Լուսավորական շարժումը իր ուղորդի մեջ էր առել նաև այս հայաբնակ գաղութները, որոնք ապրում էին նույն մտորումներով, ինչ Թիֆլիսի, Մոսկվայի, Պոլսի ուսումնատենչ հայերը։ Դրան նպաստում էին մի կողմից հայ դրքի ու մամուլի թափանցումը հայաբնակ վայրերը, որը մտքեր էր հուզում, ապագայի ծրագրեր հուշում, մյուս կողմից՝ Լազարյան ճեմարանի, Մոսկվայի համալսարանի, Ներսիսյան դպրոցի շրջանավարտների գործունեությունը հայ իրականության մեջ։

Կրթական աշխատանքի աստիճանական փոխանցումը հոգևորականներից աշխարհիկ մարդկանց՝ մեծապես նպաստում է ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը, մտավոր զարթոնքին։ Այդ երիտասարդները, վերադառնալով հայրենիք, իրենց հետ բերում էին ռուսական և արևմտաեվրոպական առաջավոր գաղափարներ։ Նրանք, միաժամանակ, հայ մատաղ սերընդի մեջ պատվաստում էին սեր դեպի մայրենի լեզուն, հետաքրքրություն դեպի պատմական անցյալը, սեփական արժեքները։

Դպրոցի աշխարհականացումը դյուրին չէր. հայ եկեղեցին, տեսնելով իր ավանդական գերիշխանության թուլացումը, XIX դարի ամբողջ ըն-

17 Նույն տեղում, էջ 94։

բացքում մոլեգին պայքար է մղել նոր գաղափարներ քարոզող մանկավարժների դեմ, նրանց ենթարկելով ամեն կարգի հալածանքների։ Այդ ճակատագրին են արժանացել Խ. Աբովյանը, Գ. Պատկանյանը, Մ. Թաղիադյանը, Պետրոս Շանշյանը և ուրիշներ։ Տևական ու համառ պայքարի այս պայմաններում է, որ հիշատակված քաղաքներում ստեղծվում են կրթական նոր կենտրոններ, արական և իգական դպրոցներ։ Նոր դպրոցը, անշուշտ, դեռ երկար ժամանակ պիտի զոնվեր հայոց եկեղեցու գաղափարական ազդեցության տակ, ենթակա դասավանդման ավանդական մեթոդներին, սակայն լուսավորական նոր հայացքների տարածումը անժխտելի էր։

1806 թ. բացվում է Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, մեծ հետաքրքրություն ստեղծելով իր շուրջը։ Աստրախանում XVIII դարի վերջերից գործում էին ծխական դպրոցներ, տպարան, հավաքվել էին հին ձեռագրեր։ XIX դարի առաջին տասնամյակում արդեն փակվել էր նախկին տպարանը, բայց բացվել էր երկրորդը և լույս էր ընծայել մի քանի գրքեր, այդ թվում Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, ռուսերենից կատարված թարգմանություններ, ուսումնական ձեռնարկներ և այլն։ Աստրախանում ստացվում էին Կալկաթայում, Վենետիկում, Պոլսում հրատարակված գրքեր, պարբերականներ։

Այս պայմաններում հիմնադրված Աղաբաբյան վարժարանն ուներ գործունեության պարարտ հող և նկատելի դեր է կատարել կենսունակ այդ գաղութի կյանքում, մասնավորապես Սերովբե Պատկանյանի տեսչության տարիներին՝ 1819—1827 թվականներին։ Այս դպրոցում է սովորել Գաբրիել Պատկանյանը, որը հետագայում դարձավ ժամանակի ականավոր մանկավարժներից մեկը։

XIX դարի առաջին կեսին Քիշնյովի հայկական գաղութում կրթական նկատելի աշխատանք է ծավալում Մսեր Մսերյանցը։ Անկախ այն փաստից, որ Մսերյանցը հետագայում դարձավ արևելահայ կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչներից մեկը, «Ճռաքաղ» հետադիմական հանդեսի խմբագիրը, դրական կողմ նրա գործունեությունը արժանի է ուշադրության։ Նա 1836—1848 թթ. աշխատել է Մանուկ-բեյ Միրզայանի որդի Հովհաննես Մուրադի՝ Քիշնյովի մոտակայքում գտնվող ագարակում (Հնչեշտում) որպես տնային դաստիարակ, նաև քարտուղար, գրել է Միրզայանի քաղաքական գործունեության արկածալից պատմությունը։ Մսերյանցը միաժամանակ ունեցել է իր մասնավոր դպրոցը։ Նա նամակագրական կապ է պահպանել Խաչատուր Աբովյանի և առաջավոր այլ մտածողների հետ, գրել է հայատառ թուրքերեն աշխատություններ, որոնցից մեկում («Երկու Կիրակոս») քննադատում է եկեղեցական դոգմաները, դասավանդման հին, սխոլաստիկ մեթոդները, կոչ անում երեխաներին տալ օգտակար գիտելիքներ՝ անգիր արված կրոնական բանաձևումների փոխարեն։

XIX դարի կեսերին մտավորական կենտրոն է դառնում նաև Թեոդոսիան։ Այնտեղ 1858 թ. հիմնադրվում են տպարան և Խալիբյան վարժարանը։

Հայկական կրթական խոշոր կենտրոն էր Նոր Նախիջևանը։ Այնտեղ կար դպրոց, հիմնադրվել էր տպարան։

XVIII դարի վերջերին Լազարյանների նյութական միջոցներով դպրոց է բացվում այս քաղաքում։ Հայաբնակ այդ գաղութի տեսակարար կշռի մեծու-

Բայամբ պետք է բացատրել այն, որ Լազարյանները սկզբում նպատակ են ունեցել իրենց ճեմարանը հիմնել Նոր Նախիջևանում և հետո միայն Մոսկվայում։

Ալսպես, 1830-ական թթ. սկզբներից այնտեղ դպրոց է բաց արել ճեմարանի շրջանավարտներից Թեոդորոս Խադամյանը։ Նա եղել է բանաստեղծ, դրամատուրգ. նրա անվան հետ է կապված այդ քաղաքում թատերական ներկայացումներ տալու փաստը. հավանաբար բեմադրել է նաև իր պատմական ողբերգությունները, որոնցից մեկի ժամանակ երգվել է նրա «Ցնծա այսօր Հայաստան» երգը, ինչպես վկայում է Միքայել Նալբանդյանը։

Նոր Նախիջևանի կրթական կյանքում զգալի դեր են կատարել Պատկանյան ընտանիքի անդամները։ 1806 թ. տեղի դպրոցական գործիչների հրավերով Աստրախանից այստեղ է գալիս Սերովբե Պատկանյանը և պաշտոնավարում մինչև 1809 թվականը, ապա վերադառնում Աստրախան։ Մի նոր հրավերով, 1827 թ. Պատկանյանների ամբողջ ընտանիքը տեղափոխվում է Նոր Նախիջևան, ծավալում կրթական լայն աշխատանք։ Ս. Պատկանյանի մահից հետո նրա գործը շարունակում է որդին՝ Գաբրիել Պատկանյանը։ Նրա ղեկավարած քաղաքային դպրոցում են սովորել բանաստեղծ Ռափայել Պատկանյանը, Միքայել Նալբանդյանը և ուրիշներ։ Չնայած հոգևորական կոչմանը, Գ. Պատկանյանը եղել է լուսավոր դեմք, որի համար ենթարկվել է խավարամոլների հալածանքին։

Հակառակ այս բոլոր փորձերին, մինչև դարի կեսերը Նոր Նախիջևանը չի ունեցել կայուն ծրագրով գործող գավառական դպրոց։

Կրթական բարձր մակարդակի վրա կանգնած ուսումնարանի ստեղծման ուղղությամբ նվազ դեր չի կատարել Միքայել Նալբանդյանը թե՛ «Հյուսիսափայլում» տպագրված հոդվածներով և թե՛ գործնական աշխատանքով։ Այդ նպատակով նա ճանապարհորդել է մինչև Հնդկաստան, որպեսզի հաջողեցնի Մասեհ Բաբաջանյանի կտակը։ Նալբանդյանը 1858 թ. «Հյուսիսափայլում» տպագրած իր «Հիշատակարանում» գծել էր այն ծրագիրը, որ ունենալու էր Նոր Նախիջևանում հիմնադրվելիք դպրոցը, որտեղ բազմաթիվ լեզուներից, պատմությունից, աշխարհագրությունից, հնախոսությունից բացի ավանդվելու էին վաճառականության ուսմունք, վիճակագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, գյուղատնտեսություն, մեքենագիտություն, նկարչություն և այլն։

Այս բոլոր ծրագրերը, սակայն, մնում են թղթի վրա, ժամանակի հետամընաց պայմանների հետևանքով։

Մեծ է Դորպատի դերը արևելահայ մտավորականության զարգացման գործում։ Դարասկզբից գործող Դորպատի համալսարանը եղել է կարևոր կրթական կենտրոն հայերի համար։ Այնտեղ սովորել են քառասունից ավելի հայ ուսանողներ, որոնց զգալի մասը նշանակալից դեր են կատարել հայ կյանքում, ինչպես Խաչատուր Աբովյանը, Ստ. Նազարյանցը, Գևորգ Ախիմյանը, Պետրոս Սիմեոնյանը, Քերովբե Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը և ուրիշներ։

Մոսկվայում սովորող ուսանողության այն հատվածը, որ ամուր թելերով կապված էր հայ կյանքի հետ, ակտիվ մասնակցում էր այդ շարժումներին,

տոգորված էր նույն առաջադեմ տրամադրություններով։ Հայ ուսանողները մասնակից էին Մոսկվայում գործող գաղտնի կազմակերպությունների, խմբակների աշխատանքներին։

Մոսկվայի համալսարանում են սովորել այն երիտասարդները, որոնք Ի. Պատկանյանի ղեկավարությամբ 1850-ական թվականների կեսերին Պետերբուրգում հրատարակում էին «Գամառ-Քաթիպա» հայտնի տետրակները։ Մոսկվայի համալսարանի ուսանողների շնորհիվ սկիզբ առավ արևելահայ թատրոնը և կենցաղային դրամատուրգիան՝ Ն. Ալադաթյանի, Ն. Փուղինյանի, Մ. Տեր-Գրիգորյանի և ուրիշների ջանքերով։ Եվ, վերջապես, այդ ուսանողները զարկ տվին հայ առաջավոր հրապարակախոսական մտքին «Հյուսիսափայլ»-ում և հայերեն այլ պարբերականներում։ Ճիշտ է, արևելահայ լիբերալ բուրժուազիան զգույշ էր քաղաքական հարցերում, դեմ էր Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, այնուամենայնիվ, դեմոկրատական գաղափարների տեր մտավորականները անտարբեր չէին Արևմտյան Հայաստանում տիրող վիճակի նկատմամբ, պաշտպանում էին արևմտահայ ազատագրական շարժման քաղաքական ձգտումները։ Այդ նկատում ենք և՛ Ի. Պատկանյանի, և՛ Ս. Շահազիզի և՛ շատ ուրիշների, առավել ևս հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի մոտ, որի «Ազատությունը» երկար ժամանակ մնաց հայ երիտասարդության շուրթերին։

Մինչև դարասկիզբը Կ. Պոլսում գերազանցապես գործել են տարրական դպրոցներ և, այսպես կոչված, «դպրաց դասեր»՝ տարբեր եկեղեցիներին կից, որոնք նախնական գիտելիքներ են տվել հոգևորական կոչման պատրաստվող երիտասարդներին։

Կրթական շարժումը նոր աստիճանի է բարձրանում XIX դարի առաջին քառորդում։ 1813 թ. Թուղլաջի Մարտիրոս աղան դպրոց է հիմնում Պելթող թաղում[18]։ Մի քանի տարի անց Գրիգոր ամիրա Զերքեզյանը դպրոց է հիմնում Բերա կենտրոնական թաղամասում։ Հարություն Պեզճյանը 1826 թ. բաց է անում ասեղնագործական դպրոց՝ աղջիկների համար, որը, փաստորեն, իգական առաջին վարժարանն էր պոլսահայերի մոտ։ Նույն ամիրայի ջանքերով 1828 թ. Գում Գաբուի մայր եկեղեցու մոտ կառուցվում է մի դպրոց, որտեղ դասավանդում էր հայտնի հայկաբան Գրիգոր Փեշտիմալճյանը[19]։

Պեզճյանի օրինակին հետևում է Ճանիկ ամիրան։ Նրա օժանդակությամբ իգական դպրոցներ են բացվում Կռնովուլա և Սկորդելա թաղամասերում՝ Հռիփսիմյանց և Գայանյաց անուններով[20]։ 1832 թ. հիմնվում է էյուպ թաղամասի Պեզճյան վարժարանը։

1836 թ. բուռն զարգացում է ապրում Խասգյուղի Ներսիսյան դպրոցը, որը ժամանակի խոշոր և արդիական ծրագրով գործող ուսումնական հաստատություններից մեկն էր։ Այդ դպրոցը, որտեղ սովորում էին մոտ 600 աշակերտներ, ուներ բնագիտության սենյակ։ Ուսումնական ծրագրում, բացի մայրենի լեզվից կային ֆրանսերեն և իտալերեն[21]։

18 «Ընդարձակ օրացույց ս. փրկչյան Ազգ. հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1901, էջ 176։

19 Նույն տեղում, էջ 191—195։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, էջ 202։

Դեռևս 1832 թվականին հայ գինեգործների կազմակերպությունը դպրոց է բաց անում Դանլը Քիլիսե թաղամասում։ Հետագայում Լանգալի մայր վարժարանի հոգսը վերցնում են ոսկերիչները, Թոփ Գաբուի վարժարանինը՝ թյուպենտճիները, Սամաթիայի Ննի-Մահալեի դպրոցը ղեկավարում են արհեստավորական ուրիշ կազմակերպություններ և այլն[22]։

Այլ հեռանկարներ ուներ Եվրոպայում ուսած մի քանի երիտասարդների ջանքերով 1838 թ. բացված Սկյուտարի ճեմարանը, առաջին միջնակարգ դպրոցը արևմտահայ կյանքում։ Նրա ծրագիրը կազմված էր եվրոպական համապատասխան դպրոցների ծրագրերի ոգով, լայն տեղ տալով օգտակար գիտելիքներին և լեզուներին։

Զմյուռնիայում կային եվրոպական ծրագրով գործող երկու դպրոցներ՝ Մեսրոպյան-արական, և Հռիփսիմյան-իգական վարժարանները։

Մեսրոպյանը, որտեղ յուրաքանչյուր տարի սովորում էին 300—400 աշակերտներ, հիմնվել է 1799 թ. և ունեցել է տասնամյակների բեղուն գործունեություն։ Այս դպրոցը նկատելի ծաղկման է հասնում Անդրեաս Փափազյանի տեսչության շրջանում (1832—1845), երբ ուսումնական ծրագիրը վերակառուցվում է այնպես, որ լայն տեղ է տրվում ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն լեզուներին։ Այդ միջոցառումը մեծ աղմուկ է բարձրացնում կղերա-ամիրայական դասի մեջ և բուռն պայքարի տեղիք տալիս[23]։ Ուշագրավ է հետադիմականների այն փաստարկը, թե «Գաղղիերեն անհավատություն, Վոլտեր ըսել է»[24]։ Հետադիմականները ոչ թե սարսափում էին ֆրանսերեն լեզվից, այլ նկատում էին, որ այդ լեզվի միջոցով Զմյուռնիա են թափանցում ֆրանսիական հեղափոխության գաղափարները։

Մեսրոպյան վարժարանում Անդրեաս Փափազյանի ջանքերով կազմակերպվել են աշակերտական թատերական ներկայացումներ, ցուցադրվել են աշխարհիկ բովանդակություն ունեցող կատակերգություններ, ինչպես Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին», որը բեմադրվել է 1836 թ. և կրկնվել մի քանի անգամ։

Հռիփսիմյանց իգական վարժարանը հիմնադրվել է 1840 թ և, որոշ ընդմիջումներով (արդյունք՝ հրդեհի և նոր շենքի կառուցման), գործել է մինչև դարավերջը։ Այնտեղ նույնպես դասավանդվել են օտար լեզուներ։ Դրանով պետք է բացատրել XIX դարի երկրորդ կեսին զմյուռնահայ շատ ընտանիքներում գրասեր ու երաժշտասեր կանանց առկայությունը։

Արևմտահայ իրականության մեջ խոշոր դեր է խաղացել Վենետիկի Մխիթարյանների Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը։ Ջնայած Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը ենթակա էր Մխիթարյան վանքի հսկողությանը և ծրագրում լայն տեղ էր հատկացրել կրոնական առարկաներին, այնուամենայնիվ, գտնվելով Վենետիկ քաղաքում, մասամբ հաղորդակից էր ժամանակի գիտու-

---

22 Ա. Ալպոյաճյան, Ազգային Սահմանադրությունը (Ընդարձակ օրացույց Ազգ. հիվանդանոցի, 1910, էջ 157)։

23 Ստ. Փափազյան, Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Հ. Փափազյանի, Կ. Պոլիս, 1859, էջ 13—14։

24 Հ. Հակոբ վ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հատ. Ա, Վիեննա, 1899, էջ 123։

թյան նվաճումներին, դպրոցական մի շարք առարկաներ կապված էին դրական գիտությունների հետ։ Արևմտահայ գրականության ականավոր դեմքերից շատերը սովորել են այդ վարժարանում, ինչպես Մ. Մամուրյանը, Մկ. Պեշիկթաշլյանը, Ս. Հեքիմյանը, Թ. Թերզյանը և ուրիշներ։

Ֆրանսիական համալսարաններում սովորող ուսանողներից մի քանիսը, որոնք մասնակցել էին հեղափոխական խմորումներին, ծառացել են հայ եկեղեցու ավանդական պատգամների դեմ։ Դրանցից էին Նիկ. Ջորայանը, Նահապետ Ռուսինյանը։ Սրանցից Ջորայանը սովորել է Փարիզում, հետևել տնտեսագիտության, խորապես ուսումնասիրել ուտոպիստ սոցիալիստներին՝ Սեն-Սիմոնին, Ռոբերտ Օուենին, Ֆուրյեին,

Հաջորդ տասնամյակի խոշորագույն դեմքերից են, դարձյալ Փարիզում կրթություն ստացած, 1861—1862 թթ. Միքայել Նալբանդյանի հետ քաղաքական սերտ կապեր պահպանող բժիշկ Հ. Քյաթիպյանը և Տիգրան Փեշտիմալճյանը։ Առաջինը գրավոր ժառանգություն չի թողել, բայց եղել է ժամանակի ամենալուսավոր և մատերիալիստ մտածողներից մեկը։ Ժամանակակիցների վկայությամբ, նա մերժում էր քրիստոնեական դոգմաները, աստծո և հանդերձյալ կյանքի գոյությունը։

1860-ական թվականների արևմտահայ մտավորական սերնդի ամենափայլուն ներկայացուցիչներից է բնագետ-փիլիսոփա, մատերիալիստ աթեիստ Գալուստ Կոստանդյանը, որն իր աշխատություններով, հատկապես «Մեթոդի վրա» փիլիսոփայական երկով, մերժեց մարդու առաջացման կրոնական ըմբռնումները։ Կոստանդյանը եղել է Զմյուռնիայի «Հաշտենից և Վասպուրական» ընկերության հիմնադիրներից, որը 1860-ական թվականների սկզբներին առաջադիմական խոշոր դեր է կատարել՝ արժանանալով Միքայել Նալբանդյանի ու Հ. Սվաճյանի պաշտպանությանը։

Հնդկահայ գաղութում կրթական աչքի ընկնող աշխատանք էր կատարում 1821 թ. Կալկաթայում հիմնված Մարդասիրաց ճեմարանը, որը գտնվում էր ժամանակի լուսավորական շարժման ոլորտում և սովորող երկսեռ աշակերտությանը գերազանցապես տալիս էր աշխարհիկ դաստիարակություն, ուսուցանում հայոց լեզու, մատենագրություն, պատմություն և այլն։ Ճեմարանն ուներ բազմակողմանի զարգացած ուսուցիչներ, ինչպիսիք էին Հովհ. Ավդալլյանը, Թադ. Ավետումյանը, Մ. Թաղիադյանը և ուրիշներ։

Մարդասիրաց ճեմարանն էլ, ինչպես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, գրեթե նույն ժամանակամիջոցում, այսինքն՝ 1822—1823 թթ., ունենում է իր սեփական տպարանը, զարկ տալիս հրատարակչական գործին։ Այդ տպարանում տպագրված գրքերի նկատելի մասը մտավոր զարգացման նպաստող երկեր էին, ինչպես «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան, որ ըստ հունաց ասի տիալիքթիկես» (1822), բառարան անգլերեն լեզվի և այլն։

Ճեմարանն ստեղծում է ճոխ գրադարան, որտեղ կենտրոնացվում են հայերեն, անգլերեն և այլ լեզուներով գրքեր։

Այսպիսով, XIX դարի 50—60-ական թվականներին դպրոցական գործը հայ իրականության մեջ լուրջ առաջընթաց է ապրում։

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հայ մամուլի սկզբնավորումը կապված է հնդկահայ գաղութի ծոցում XVIII դարի վերջերին սկիզբ առած տնտեսական, քաղաքական տեղաշարժերի հետ։ Առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը» լույս է տեսնում Մադրասում ֆրանսիական հեղափոխության փոթորկոտ տարիներին՝ 1794 թվականին։ Որքան էլ որ նրա քահանա խմբագիրը՝ Հ. Շմավոնյանը նպատակ ուներ խոհեմություն քարոզել, հեռու պահել իր ընթերցողներին Եվրոպայում տարածված հեղափոխական տրամադրություններից, այնուամենայնիվ թերթը չէր կարող չարձագանքել դարաշրջանի լուսավորական գաղափարներին։

Շմավոնյանի դիրքորոշումը տարբեր էր Մ. Բաղրամյանի, Շ. Շահամիրյանի քաղաքական ձգտումներից, տարբեր էր նրա տեսակետը ապագա Հայաստանի ղեկավարման սոցիալ-քաղաքական ուղղության մասին։ Դրանով հանդերձ, «Ազդարարը» առաջին հերթին ազդարարում էր ազգային ինքնագիտակցության, լուսավորության տարածման անհրաժեշտությունը։

«Ազդարարի» էջերում տպագրվել են հրապարակախոսական հոդվածներ, պատմական ուսումնասիրություններ, ինչպես Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն պարսից» գիրքը, Հնդկաստանի պատմությանը վերաբերող դրվագներ, ֆրանսիական հեղափոխության հետ կապված լուրեր, հնդկահայ գաղութի տնտեսական-քաղաքական կյանքը արտացոլող շատ նյութեր, որոնք այժմ ճանաչողական նշանակություն ունեն, բայց իր ժամանակին կարող էին ընթերցվել հետաքրքրությամբ և խթանել մտավոր զարգացման[25]։

Չնայած այդ բոլորին, ընդամենը մի քանի տասնյակ բաժանորդ ունեցող գրաբար պարբերականը չէր կարող մեծ ազդեցություն ունենալ հայ հասարակական մտքի զարգացման վրա։

Նույնը չենք կարող ասել Շիրազեցի Մարտիրոս Մկրտչյանի ջանքերով դրանից քառորդ դար հետո Կալկաթայում լույս տեսած «Շտեմարան» պարբերականի մասին։ Նրա խմբագիրն ունեցել է ավելի լայնախոհ հայացքներ, հմուտ է եղել եվրոպական լեզուներին ու մշակույթին։ «Շտեմարանը» հնդկահայ գաղութի առօրյայի հետ կապված հարցերը առավել մեծ չափով էր լուսաբանում, զետեղում ինքնուրույն և թարգմանական երկեր, հայ աշուղների ստեղծագործություններից նմուշներ և այլն։

«Շտեմարանի» էջերում տպագրված թարգմանական երկերի մեջ ուշադրություն են գրավում Շեքսպիրի «Համլետի» ու «Երկու վերոնացիների» մի քանի հատվածները, թարգմանչի՝ Մարտիրոս Մկրտչյանի արժեքավոր դիտողություններով, որոնք փաստորեն հանդիսանում են Շեքսպիրի հայկական առաջին գնահատումները։

Հնդկահայ գաղութը ունեցել է նաև այլ պարբերականներ («Օճանասփյուռ», «Եղբայրասեր», «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան»)։ Սրանցից հայ հասարակական մտքի վրա անհամեմատ մեծ ազդեցություն ունեցավ Թաղիադյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ազգասեր» պարբերականը, որ 1845—1848 թթ.

---

25 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 1, Երևան, 1956, էջ 192—227։

հրատարակվում էր Արարատյան ընկերության ջանքերով, իսկ երբ 1848 թ. ընկերությունը կազմալուծվեց, խմբագիրը շարունակեց այն հրատարակել իր նյութական սուղ միջոցներով, վերանվանելով «Ազգասեր Արարատյան», և բաժանորդների թվի աստիճանական նվազման պատճառով 1852 թվականին հարկադրված եղավ վերջնականապես դադարեցնել[26]։ «Ազգասեր Արարատյանը», լայն տեղ տալով հանդերձ հնդկահայ կյանքին, համազգային ճանաչում գտավ, հրատարակում էր գրական, բանասիրական, գիտական երկեր, նշանաբան ունենալով ժողովրդի լուսավորությունը։ Դրանով պետք է բացատրել «Ազգասերի» շեշտված դեմոկրատիզմը, անզիջում պայքարը, որ մղում էր կղերա-ավատական գաղափարախոսության, հարուստ դասակարգի դեմ՝ ի պաշտպանություն աշխատավորական խավերի։ Իր պարբերականի էջերում լայն տեղ տալով արևմտաեվրոպական առաջավոր մտքին ու մասնավորապես գրականությանը, Թաղիադյանը ցույց էր տալիս ֆրանսիական գաղութարարների վայրագություններն Ալժիրում, անգլիացիների անխիղճ թալանը Հընդկաստանում, այն անգլիացիների, որոնք քաղաքակրթություն էին խոսում, բայց բարբարոսական եղանակներով շահագործում էին հնդիկ ժողովրդին։ «Ազգասերը» զգույշ, բայց որոշակի կոչ էր անում զենքով պաշտպանել Հընդկաստանը անգլիական գաղութարարներից։

1848 թ. ֆրանսիական հեղափոխության ըմբռնած գաղափարների պաշտպանությամբ հանդես է գալիս նույն այդ տարիներին (1848—1849) Մադրասում լույս տեսած «Բանասեր» պարբերականը, որի կարճատև, բայց հախուռն դիրքորոշումը Մխիթարյանները գնահատել են որպես «հայ լրագրության հեղափոխության» շրջան[27]։ Պատահական չպիտի համարել, որ այն խափանվում է հնդկահայ վաճառականության տենդոտ պայքարի հետևանքով։

Վենետիկի Մխիթարյանները դարասկիզբը նշանավորեցին մի ուշագրավ պարբերականով։ 1799 թ. նրանք սկսեցին հրատարակել «Տարեգրություն» փոքրիկ տետրակները։ 1803 թ. դադարում է «Տարեգրությունը» և նրա փոխարեն լույս է տեսնում «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը և շարունակվում մինչև 1820 թվականը։ 1812—1826 թթ. Վենետիկում լույս է տեսնում «Դիտակ Բյուզանդյանը»։

Դրանից հետո, ավելի քան երկու տասնամյակ Մխիթարյանները պարբերական չեն ունեցել։ Այդ շրջանում լույս են ընծայվել «Դարապատում» ժողովածուները, որոնց յուրաքանչյուր հատորում ամփոփված էին մեկ դարի քաղաքական դեպքերը։ Այս բոլոր հրատարակությունների խմբագիրը եղել է Մխիթարյան հմուտ բանասերներից Հ. Ղուկաս Ինճիճյանը։

Մխիթարյանների գրական-բանասիրական հրատարակությունների և պարբերական մամուլի առաջին բնորոշ առանձնահատկությունը լեզուն է։ Ձգտելով ստեղծել ընթերցող լայն զանգվածներին հասկանալի գրաբարաձերծ մի լեզու, կաթոլիկ վարդապետները հասել են նույնիսկ ծայրահեղու-

---

26 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 1, էջ 266—372։

27 Հ. Գրիգորիս Վ. Գալեմքեարյան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 107։

թյան։ Օրինակ, ակնոց բառի փոխարեն գործածել են աչքնոց, քանի որ ժողովուրդը գործածում էր աչք և ոչ ակն։

Իր այս պարզունակ կերպարանքով հանդերձ, Մխիթարյանների լեզուն ուշագրավ փորձ էր մամուլը դեպի ժողովուրդ տանելու ուղղությամբ։ Այն հետագայում մշակվելով, հղկվելով, քերականական նորմերի մեջ մտնելով՝ դարձավ արևմտահայ մամուլի և գրականության լեզուն՝ աստիճանաբար հասունանալով, առնականանալով ժողովրդական բառ ու բանով և ասույթներով։

«Եղանակ Բյուզանդյանի» նման մի հրատարակության բաժանորդը կամ ընթերցողը առաջին հերթին եվրոպական քաղաքների հետ սերտ հարաբերություն ունեցող հայ վաճառականն էր։ Ուստի պետք էր տալ նրան հետաքրքրող նյութեր՝ աշխարհագրական տեղեկություններ, նավահանգստային քաղաքների գործարքները, տարբեր պետությունների տնտեսական, քաղաքական կառուցվածքին վերաբերող տվյալներ և այլն, նաև ժամանցային այնպիսի նյութեր, որոնք հաճույքով ընթերցվեին աշխարհիկ կյանքով ապրող այդ մարդկանց կողմից։ Այդ բանը հասկանում էր Ղ. Ինճիճյանը և իր հրատարակությունները հետաքրքիր դարձնելու համար չէր խնայում ոչ մի ջանք։

«Եղանակ Բյուզանդյանը» լայն տեղ էր հատկացնում աշխարհագրական, տեղագրական գիտելիքներին, տարբեր երկրներում կատարված գյուտերին, տպագրում զանազան ժողովուրդների կենցաղը, առևտուրը լուսաբանող նյութեր, մեծ պետությունների պետական ու նավագնացային դրոշակները, նախորդ տարում միջազգային կյանքում կատարված քաղաքական դեպքերի սեղմ լրատուն և այլն։

«Եղանակ Բյուզանդյանի» հրատարակման տարիներին Մխիթարյանները լույս են ընծայել «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը՝ Գրիգոր Գափամաճյանի խմբագրությամբ։ Այս վարդապետը չի/ունեցել ո՛չ Ինճիճյանի լայն գիտելիքները, և ո՛չ էլ իրազեկությունը հայ և ընդհանուր պատմության։ Այնուամենայնիվ, 1812—1816 թթ. լույս տեսած վերոհիշյալ հրատարակությունը նույնպես բնութագրական է ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերի ընդգրկմամբ և առաջավոր որոշ գաղափարների ընկալմամբ։

Սակայն ո՛չ «Տարեգրությունը», ո՛չ «Եղանակ Բյուզանդյանը» և ո՛չ էլ «Դիտակ Բյուզանդյանը» հայ հասարակական-մշակութային կյանքում չեն կատարել այն դերը, ինչ 1843 թ. լույս տեսնող «Բազմավեպը», որին աշխատակցել են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպես Ղ. Ալիշանը, Գ. Զարպհանալյանը, Հ. Ջոհրապյանը և ուրիշներ։ «Բազմավեպի» առաջին խմբագիրը նշել է Դաբրիել Այվազովսկին։ Նա փաստորեն հետևել է «Եղանակ Բյուզանդյանի» օրինակին, լայն տեղ տալով ոչ այնքան կրոնա-բարոյախոսական քարոզներին, որքան իրական կյանքի թելադրանք հանդիսացող նյութերին՝ պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, հնագիտություն, տեղագրություն, առևտուր, գյուտեր և այլն։

«Բազմավեպը» իր գոյության առաջին երկու տասնամյակում ավելի աշխարհիկ հակում է ունեցել և հայ իրականությանը մոտ կանգնած՝ ավելի է արձագանքել նրա առաջավոր գաղափարներին, քան 1860—1870-ական թը-

վականներին, երբ հասունյանների նենգ մատնությունները մղում են Վատիկանին՝ ավելի աշալրջությամբ հետևելու ս. Ղազար կղզում կատարվող գրա-կան-բանասիրական աշխատանքներին։

«Բազմավեպի» էջերում լույս են ընծայվել բանասիրական և գիտական խոշոր արժեք ներկայացնող բազմաթիվ հոդվածներ, որով և այդ նշանավոր ամսագիրը մնայուն տեղ գրավեց հայագիտության անդաստանում։

Ժամանակագրական կարգով արևելահայ առաջին պարբերականը 1816 թ. Աստրախանում հրատարակված «Արևելյան ծանուցմունք» թերթն է, որը հղել է «Վոստոչնիե իզվեստիա» ռուսերեն պաշտոնաթերթի հայերեն բարգմանությունը։ Այդ թերթի հայերենի խմբագիրը էր տեղի եզվիտյան ուսումնարանի վերատեսուչ Կ. Շահվերդյանը։ Լեզուն գրաբար էր, տպագրել է հիմնականում տեղագրական, վիճակագրական, առևտրական բնույթի հոդվածներ, լուրեր, մանրապատումներ։

Արևելահայ առաջին պարբերականը, 1846—1849 թթ. Թիֆլիսում Հ. Կաթենյանի և Մ.թ. Պատկանյանի խմբագրությամբ լույս տեսած «Կովկաս» շաբաթաթերթն է։ Ճիշտ է, այն փաստորեն հանդիսացել է «Кавказ»-ի հայերեն տարբերակը, լույս է տեսել գրաբար, սակայն տպագրել է ոչ միայն քաղաքական լուրեր, պաշտոնական հաղորդագրություններ, կարգադրություններ, այլև ինքնուրույն ու թարգմանական երկեր, փոքրիկ պատմվածքներ։ «Կովկասը» ընթերցվել է Հնդկաստանում, Պոլսում, Զմյուռնիայում։ Հեռավոր այդ վայրերում ապրող հայերը նրա էջերից տեղեկություններ են ստացել արևելահայ կյանքի մասին, ափսոսանքով նշել նրա փակվելը 1849 թվականին[28]։

«Կովկասի» դադարից կարճ ժամանակ անց, 1850 թ. սկսում է լույս տեսնել «Արարատ» պարբերականը՝ Գաբրիել քահանա Պատկանյանի խմբագրությամբ, աշխարհաբար։ Չնայած խմբագրի նկատելի զգուշությանը քաղաքական կյանքի նկատմամբ, «Արարատը» անհամեմատ ավելի լայնորեն է արտացոլել իրական կյանքը, զետեղել ժամանակի առաջավոր մտայնությունը լուսաբանող նյութեր, քան «Կովկասը»։ Նրա էջերում իրենց գրական առաջին փորձերն են արել Մ.թ. Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը։ «Արարատը» առաջինն է հետաքրքրություն ստեղծել հայ աշուղական գրականության նկատմամբ, գնահատել Սայաթ-Նովայի արվեստը, տպագրել երգեր աշուղ Շիրինից, Թուրինջից և ուրիշներից։ Տպագրել է առակներ, պատմվածքներ, նկատելի դեր կատարելով արևելահայ նոր գրականության զարգացման նախաշրջանում։

50-ական թվականների կեսերից Թիֆլիսում լույս է տեսնում «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որը գաղափարախոսական ուշագրավ շրջադարձ է կատարում։ Առաջին տարիներին, երբ նրա խմբագիրն էր քահանա Մանդինյանը, հիմնականում արտահայտում էր կղերա-ավատատական գաղափարախոսությունը. հետագայում, Պետրոս Սիմեոնյանցի խմբագրության շրջ-

---

28 Գ. Ստեփանյան, Խաչատուր Աբովյանը և արևմտահայ գրականությունը, «Գրական-բանասիրական հետազոտություններ», III գիրք, էջ 132—142։

ջանում, հանդիսանալով հանդերձ արևելահայ ազգային-պահպանողական մտավորականության ձայնափողը, տպագրում էր նաև առաջադիմական մի շարք հոդվածներ, ինչպես Միքայել Պատկանյանի արժեքավոր հոդվածները ընդդեմ Հ. Կարենյանի հետադեմ գաղափարախոսության և նրա ազգայնամոլ պատմական ողբերգությունների։ Այդ հոդվածների տպագրությամբ առաջին անգամ հայ իրականություն մուտք գործեցին Բելինսկու գաղափարները։

1858 թ. Մոսկվայում Ստ. Նազարյանցի խմբագրությամբ լույս է տեսնում «Հյուսիսափայլը» և հրատարակման առաջին ամիսներից դառնում լուսավորական շարժման կենտրոնը արևելահայ կյանքում։ Այդ պարբերականը առաջինը հայ իրականության մեջ ծրագրված պայքար սկսեց կղերա-ավատատական գաղափարախոսության դեմ։ Որոշ հարցերում համատեղ հանդես էին գալիս պարբերականի խմբագիր Ստեփանոս Նազարյանցը և գլխավոր աշխատակից Միքայել Նալբանդյանը։ «Հյուսիսափայլը» առաջինն էր հայ իրականության մեջ, որ հիմք դրեց միասնական մշակված լեզվի, ստեղծեց հյուսիսափայլյան դպրոցի գրական լեզու, որով գրում էին ժամանակի ականավոր արևելահայ գրողները՝ Նազարյանցը, Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը և ուրիշներ։

«Հյուսիսափայլի» դեմ դուրս եկավ «Մեղու Հայաստանի» լրագիրը՝ Մանդինյան քահանայի խմբագրությամբ։ Մոսկվայում 1859 թ. երևաց Մսերյանցի «Ճռաքաղը», որը նույնպես մոլեգին պայքար սկսեց «Հյուսիսափայլի» դեմ։ Հեռավոր Պոլսում Նազարյանցի ու Նալբանդյանի դեմ պայքարի ճակատ բռնեցին «Ծրևակը» և «Արևելյան դարը»։ «Ճռաքաղը» սարսափով էր արձանագրում այն փաստը, որ Ստեփանոս Նազարյանցը իր գրքերից մեկում կարծիք էր հայտնում Մարս մոլորակի վրա կյանքի առկայության մասին։ Նա դտնում էր, որ նման բան «երբեք չի ընդունած առաքելական սուրբ եկեղեցին Հայաստանյայց»[29]։ Իսկ «Ծրևակը», որպալով Նազարյանցի «նյութը զորություն է և զորությունը կյանք» նախադասությունը, գրում էր, թե դա հակասում է քրիստոնեական վարդապետությանը, քանի որ «քրիստոնյայք կը հավատան թե բոլոր տիեզերաց շահողն աստված է, ուստի այս երկու բառերը իրարու հետ փոխանակելով «Հյուսիսափայլին» նախադասությունը այսպես կգտնենք. աստված նյութ է, կամ նյութը աստված է. ահա քեզ մեկ եպիկուրյան հեթանոս մը»[30]։

Պահպանողական բանակի մոլեռանդ քարոզիչներից Հ. Ջերքեզյանը «Մեղու Հայաստանի» պարբերականում հարձակվում էր Ստ. Նազարյանցի վրա այն բանի համար, որ վերջինս համարձակվել էր գրել, թե հայերը Ադամի և Եվայի անմիջական հաջորդները չեն, այլ պատկանում են հնդեվրոպական ցեղախմբին, մինչդեռ, ասում էր Ջերքեզյանը, Մովսես Մարգարեն նախաստեղծ մարդու բնակության տեղը որոշել է Եփրատի և Տիգրիսի մուտքը, ուստի դրախտը եղել է Հայաստանում և հայերն էլ նրա առաջին ժողովուրդը երկրագունդի վրա[31]։

---

29 «Ճռաքաղ», 1850, տետրակ ե, էջ 178։

30 «Ծրևակ», 1859, № 94։

31 «Մեղու Հայաստանի», 1860, № 31։

1860 թ. Թիֆլիսում լույս է տեսնում «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը։ Ինչպես «Հյուսիսափայլում», «Կռունկում» էլ նկատելի է տարբեր գաղափարների տեր մարդկանց համատեղ գործակցությունը։ Մնալով հանդերձ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսը, այն իր էջերում լայն տեղ էր տալիս դեմոկրատական խավերի տրամադրություններն արտահայտող գրողներին, հրապարակախոսներին։ Այստեղ են տպագրվել Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը, Գ. Տեր-Ալեքսանդրյանցի կենցաղագրական երկերը Թիֆլիսի բարբառով։ «Կռունկը» տպագրում էր թարգմանություններ արևմտաեվրոպական, ռուսական, վրացական, պարսկական գրականությունից։ Այդ ամսագիրը խոշոր դեր է կատարել արևելահայ նոր գրականության զարգացման գործում և նկատելի ազդեցություն է թողել հասարակական մտքի վրա։ Նրա խմբագիրը՝ Մ. Աղաբեկյանը մոտիկից կապված էր նաև արևմտահայ իրականության հետ, պարբերականում տեղ էր տալիս արևմտահայությանը հուզող հարցերին, տպագրում Ազգային սահմանադրության տեքստը, «Բարեգործական ընկերության» կանոնադրությունը, նյութեր Զեյթունի դեպքերի մասին։ Ամսագրին աշխատակցում էին նաև արևմտահայ գործիչներ Մ. Մամուրյանը և ուրիշներ։

1866—1867 թթ. Թիֆլիսում լույս է տեսնում «Վաճառականն» պարբերականը՝ Գ. Տեր-Ալեքսանդրյանցի խմբագրությամբ և պատմաբան Ալ. Երիցյանի աշխատակցությամբ։ «Վաճառականը» նույնպես արտահայտում էր հայ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսությունը և նպատակ ուներ պաշտպանել կովկասահայ առևտրական կապիտալի շահերը։ Ագրարային և այլ հարցերում այն կանգնած էր ցարիզմի ներքին քաղաքականության արդարացման դիրքերում, սակայն այդ բոլորով հանդերձ, նրա ասպարեզ գալը հետաքրքիր երևույթ էր արևելահայ հասարակական կյանքում։ Պարբերականի էջերում տպագրվում էին ոչ միայն տնտեսական, վիճակագրական կարևոր նյութեր, այլև բարձրացվում էին քաղաքատնտեսության հետ կապված մի շարք հարցեր, խոսվում էր աշխատավորական խավերի ընչազրկության և այլ խնդիրների մասին։

Հայ նոր գրականության սկզբնավորման և զարգացման գործում կարևոր դեր խաղաց մամուլը։ Հազվադեպ էին տպագրվում երկեր՝ առանձին գրքերով։ Գրական այնպիսի մի կոթող, ինչպիսին էր «Վերքը», գրվելուց տարիներ հետո միայն արժանացավ տպագրության։ Հայ գրականության, քննադատական մտքի զարգացման գործում խոշոր դեր կատարեց «Հյուսիսափայլը»։ Այդ պարբերականի էջերում լույս տեսան Միքայել Նալբանդյանի «Մեռելահարցուկը», «Հիշատակարանները», չափածո երկերի զգալի մասը, Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիսը», որը այն վեպերից է, որոնք «հիմք դրին արդյան ազգային վիպասանության», ինչպես ասում էր Միքայել Նալբանդյանը։

Ուշագրավ եզրակացությունների առիթ է տալիս «Հյուսիսափայլի» թարգմանական գրականությունը։ Նազարյանցը գերազանցապես հակված էր թարգմանելու այնպիսի երկեր, որոնք չոմնեին քաղաքական սրություն։ Դրանցից էին Մարկոս Տուլլիոս Կիկերոնի ատենական ճառերը, ավելի նոր ժա-

մանակներից Բերնարդեն դը Սեն Պիերի «Պավլոս և Վիրգինեն», որի հիմքում ընկած է փախուստը քաղաքային ժխորից, ապավինումը գյուղական իդիլիային, բախտի ու ճակատագրի քմահաճույքին։

Նալբանդյանը «Հյուսիսափայլի» հենց առաջին համարում հայտարարում էր. «Այն մատենագրությունը, որի մեջ իբրև հայելու մեջ չի երևում ազգի կյանքը, նորա և ամենանուրբ գծագրությունքը, այդպիսի մի մատենագրություն, քող. ներեն մեզ այսպես ասել ճշմարտությունը, նման է ճիզվիտների կրոնավորությանը»[32]։ Գրականության հասարակական դերը շատ ավելի պարզ Նալբանդյանը ձևակերպել է իր «Մեռելահարցուկ» վեպում, տալով նրան ոչ միայն կյանքը արտացոլելու դեր, այլև այդ կյանքի վերափոխմանը նպաստելու կոչում։ Նալբանդյանի գրականագիտական ըմբռնումները, որոնք սերտորեն կապված էին ռուս վաթսունականների, հատկապես Բելինսկու և Չերնիշևսկու էսթետիկական հայացքների հետ, ի հայտ են եկել թե՛ վերոհիշյալ ինքնուրույն ստեղծագործություններում և թե՛ թարգմանական երկերում։ Պատահական չպետք է համարել նրա թարգմանությունները Պուշկինից, Լերմոնտովից, նաև Հայնեից ու Բերանժեից։

«Հյուսիսափայլի» էջերում Մովսես Բուդաղյանը հանդես եկավ հունգար հեղափոխական բանաստեղծ Պետեֆիից կատարած թարգմանություններով, առ ի զգուշություն չհիշատակելով հեղինակի անունը, իսկ տաղանդավոր մի երիտասարդ՝ Մ. Սադաթյանն, այնտեղ հրատարակեց Լերմոնտովի «Դևի» դասական թարգմանությունը, որը մինչև այսօր էլ մնում է հայ թարգմանական գրականության լավագույն նմուշներից մեկը։

Նույն 40-ական թվականներին է զուգադիպում արևմտահայ իրականության մամուլի հանդես գալը։ 1838 թ. Կ. Պոլսում սկսում է լույս տեսնել «Լրո գիր մեծի տերության Օսմանյան» շաբաթաթերթը, որը հետագայում կոչվեց «Հայոտարար գիր լրո մեծի տերության Օսմանյան» և շարունակվեց մոտ մեկ տասնամյակ։ Այդ պարբերականը չէր արտացոլում հայ կյանքը, այլ պարզապես թարգմանություններ էր թուրքերեն «Թագվիմի վաղաք» պաշտոնաթերթից։ Տպագրում էր պաշտոնական գրություններ, հայտարարություններ, պալատական պաշտոնների նշանակումներ, Թուրքիայի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող նյութեր։

1840 թ. Խաչատուր Ոսկանյանը՝ Ամերիկայում կրթություն ստացած, զարգացած մի անձնավորություն, փորձում է Պոլսում հիմնել աշխարհաբար մի թերթ, հրատարակում է «Ազդարար Բյուզանդյան» շաբաթաթերթը, սակայն այն կարճ կյանք է ունենում։ Մի քանի համար հրատարակվելուց հետո բաժանորդի պակասի պատճառով վերածվում է գրաբարի և հաջորդ տարում դադարում։

Այն, ինչ չկարողացավ անել Խաչատուր Ոսկանյանը Կոստանդնուպոլսում, արեց Ղուկաս Պալթազարյանը Զմյուռնիայում՝ 1840 թ. աշխարհաբար հրատարակելով «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթը։

«Արշալույս Արարատյանը» լույս է տեսել «Թանզիմաթի» հռչակման հաջորդ տարվանից և շարունակվել է մինչև 1886 թ., տպրելով գաղափարական

32 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 146։

նկատելի տարուբերում։ Հրապարակ գալու առաջին տասնամյակում, հիմնականում արձագանքելով 1848 թ. ֆրանսիական և իտալական հեղափոխություններին և անդրադարձնելով հայ ժողովրդի առաջավոր ձգտումները, այդ թերթը նկատելի ծառայություն է մատուցել արևելահայ և արևմտահայ հատվածների փոխադարձ մշակութային կապի ուժեղացման ուղղությամբ։ Հիշարժան փաստ է Խաչատուր Աբովյանի գրական մի պատառիկի առաջին անգամ նրա էջերում երևալը։ Պետք է ենթադրել, որ հայ մեծ լուսավորիչը ծանոթ էր «Արշալույս Արարատյանին», գուցե և եղել է նրա բաժանորդ ընթերցողներից մեկը և ինքն էլ նյութեր է ուղարկել Զմյուռնիա։ Շաբաթաթերթում լայնորեն լուսաբանվել են հայ բանասիրության, գրականության, պատմագրության, արվեստի հետ կապված բազմապիսի հարցեր, ընդարձակ գրախոսականներ են լույս տեսել Զմյուռնիայում տպագրված գրքերի, այդ թվում «Թըշվառներ» վեպի մասին, Վասպուրականի թատրոնի քառամյա գործունեության ընթացքում ծավալուն թատերախոսականներ են երևացել ներկայացվող պիեսների վերաբերյալ։

Ղ. Պալթազարյանը, ինչպես շատ այլ լիբերալ մտածողներ, 60-ական թվականների սկզբներից աստիճանաբար թեքվել է դեպի պահպանողականությունը, պայքար սկսելով օրեցօր աշխուժացող դեմոկրատական հոսանքի դեմ։ Նալբանդյանի համախոհների ու տխրահռչակ «Երևակի» միջև մղված պայքարի ընթացքում Պալթազարյանն անցավ հակառակորդ բանակի կողմը, հետզհետե սահելով դեպի հետադիմական ճահիճը։ Սակայն նույնիսկ այս շրջանում նրա թերթի էջերում լույս են տեսել հայ կյանքն արտացոլող շատ հետաքրքրություններ, ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններ։


1846 թ. իր շաբաթաթերթն ուներ նաև Կոստանդնուպոլիսը։ Պատրիարքարանը հրատարակում է «Հայաստան» պարբերականը, խմբագրությունը հանձնելով արևմտահայ «խավարյալների» պարագլուխ Հովհաննես Տերոյենց Ջամուճյանին։ «Հայաստանի» էջերում տպագրվում են պատրիարքարանի որոշումները, կարգադրությունները, կրոնադավանաբանական նյութեր, նաև ինքնուրույն և թարգմանական գրական երկեր, պատմա-բանասիրական նյութեր, ինչպես Անիի հնությունների վերաբերող ընդարձակ մի հոդվածաշար, որտեղ առաջին անգամ փորձ էր արվում վերծանել ավերակների արձանագրությունները։ Թերթը հրատարակել է հայերեն հին ձեռագրերի հիշատակարաններ, Թիֆլիսում գործող էնֆիաճյան գրատան ձեռագրերի ցուցակը և այլն։

1851 թ. Պոլսում լույս են տեսնում երկու նոր պարբերականներ, դարձյալ աշխարհաբար։ Դրանցից մեկը Հովհ. Հիսարյանի «Բանասեր» ամսագիրն էր, մյուսը՝ Սամաթիա թաղամասի Սահակյան վարժարանի աշակերտների օրգան «Բուրաստանը»։ Սրանք թե՛ իրենց արծարծած հարցերով և թե՛ նյութերի ընտրության ու մատուցման եղանակով շատ նման են միմյանց։ «Բանասերում» տպագրվել է Հ. Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» աշխարհաբար վեպը։ Երկու պարբերականներն էլ լույս էին տեսնում բավականաչափ հրղկված աշխարհաբարով։

1852 թ. «Հայաստան» թերթը վերանվանվում է «Մասիս» և խմբագրությունը հանձնվում Կ. Ութուճյանին՝ լիբերալ մի հրապարակախոսի, որն ու-

նեցել է քառամսյա խմբագրական գործունեություն։ «Մասիսը» իր շուրջը համախմբել է աշխատակիցների մեծ բազմություն, թղթակիցներ է ունեցել հայաբնակ գրեթե բոլոր գավառներում։

Արևմտահայ մամուլը բուռն զարգացում ապրեց Ղրիմի պատերազմից հետո, երբ 1858 թ., ներքին և արտաքին իրադարձությունների թելադրանքով, սուլթանը նոր ռեֆորմներ հրապարակեց։ Նույն այդ թվականից Պոլսում ընկսեցին լույս տեսնել «Մեղու» պարբերականը՝ Հարություն Սվաճյանի խմբագրությամբ և «Զվարճախոս» երգիծաթերթը։ Հրատարակվեցին «Մուսայք Մասյաց» թատերական և «Քնար արևելյան» երաժշտական հանդեսները։



Նմուշներ հայ պարբերական մամուլից (XIX դ. I կես)

Արևմտահայ հասարակական կյանքում խոշոր դեր կատարեց «Մեղուն», որի շուրջը կարճ ժամանակում համախմբվեցին ժամանակի առաջավոր մտածողները, բուռն պայքար մղելով կղերա-ավատական գաղափարախոսության դեմ։ «Մեղուն» ձեռք մեկնեց արևելահայ առաջավոր մտածողներին, իր էջերում տպագրելով Միքայել Նալբանդյանի ազատասիրական բանաստեղծությունները։ Նա կրքոտ հոդվածներով պայքարում էր ինչպես «Ծրևակիչ», հայ կաթոլիկների օրգան «Մեխմուսի հավատիս» (Մաղկաքաղ լուրերի) հայատառ թուրքերեն թերթի, այնպես էլ «Մասիսի» դեմ։

«Մեղուն» իր թիկունքում ուներ ոչ միայն Պոլսի արհեստավորական էսնաֆ դասին, այլև գյուղական հոծ բազմություն, թղթակցություններ էր տպագրում գավառներից։ Այդ պարբերականը խոշոր դեր է կատարել լուսա-

վորական-կրթական շարժման ծավալման և հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի գործում, դառնալով այդ զարթոնքի ամենաակնառուն շնորհարը։

1859—62 թթ. «Մեղվի» հետ միասին ռեակցիայի դեմ ուժեղ ծառացումներ է ունենում Կ. Փանոսյանի «Մյունատիի էրճիաս» (Շեփոր այգաբացի) հայատառ թուրքերեն թերթը, որը 1862 թ. փակվում է Զեյթունի դեպքերի առիթով տպագրված ըմբոստ մի հոդվածի համար։ Հետագայում Փանոսյանը հրատարակում է «Մանդումեի էֆքյար» (Մտածումների շարք) հայատառ թուրքերեն ավելի չափավոր թերթը, որը «Մասիսի» հետ միասին իր գոյությունը շարունակում է երկար տասնամյակներ, XX դարասկզբից վերածվելով հայալեզու թերթի։

Զմյուռնիայում լույս են տեսել բազմաթիվ թերթեր ու հանդեսներ, որոնցից ուշագրավ էր դեմոկրատական «Մաղիկ» պարբերականը։ Եթե «Արշալույս Արարատյանը» այդ թվականներին արտահայտում էր Զմյուռնիայի աղայական վերնաշերտերի տրամադրությունները, ապա Գր. Զինկիրյանի և Ա. Հայկունու կողմից խմբագրվող «Մաղիկը» հանդիսանում էր դեմոկրատական հոսանքի գաղափարախոսը, լայնորեն արձագանքում էր հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական պայքարին։ «Մաղկի» էջերում տպագրվել են արձակ, չափածո և հրապարակախոսական բազմաթիվ երկեր, որոնք քաղաքական շեշտված բովանդակություն ունեին և ուղղված էին մի կողմից՝ սուլթանական կառավարության կամակատար հայ էֆենդիների, մյուս կողմից՝ օտարերկրյա ներթափանցման, հատկապես Վատիկանի գործակալների ու անգլո-ամերիկյան միսիոներների դեմ։

Արևմտահայ հասարակական մտքի վրա նկատելի աղդեցություն է ունեցել Ստ. Ոսկանյանը իր «Արևելք» (1856) և «Արևմուտք» (1859—1865) պարբերականներով։ Նա տպագրել է կղերա-ամիրայական գաղափարախոսության դեմ ուղղված կրքոտ հոդվածներ։ «Արևմուտքը» առաջինն էր գաղութահայ պարբերականներից, որ լայն տեղ էր տալիս հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների մերձեցման հարցին։ Սուր քննադատության ենթարկելով այդ հատվածներում գործող հետադեմ տարրերին, նա իր պաշտպանության տակ է առնում առաջավոր գործիչներին։ Ստ. Ոսկանյանը եղել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջին ողջունողներից մեկը, գնահատելով առանձնապես նրա աշխարհաբար լեզուն։

Ոսկանյանի դեմ կանգնեց հայ հետադիմական հոսանքը, մի կողմից՝ կաթոլիկական պրոպագանդան, մյուս կողմից՝ «Մասյաց աղավնին», որի խմբագիրն էր Գաբրիել Այվազովսկին։

Փարիզում հրատարակվող պարբերականներից հիշատակության արժանի է «Փարիզ» շաբաթաթերթը, որը խմբագրվում էր Ա. Մուրադյանի կողմից։

Արևմտահայ հասարակական, մտավորական կյանքում խոշոր իրադարձություն էր գավառական մամուլի ստեղծումը 1850-ական թվականների վերջերին, Մկրտիչ Խրիմյանի ջանքերով։ Նա 1855 թ. Կ. Պոլսում հրատարակում է «Արծվի Վասպուրականը» պարբերականը, նպատակ ունենալով հիմնականում արտացոլել գավառական կյանքը։ 1858 թ. նա այդ պարբերականը հրատարակում է Վանի Վարագա վանքում (փակվել է 1864 թ.), տեղի ժա-

ռանգավորաց վարժարանի բարձր դասարանների աշակերտների ու շրջանավարտների ջանքերով։

Գ. Սրվանձտյանցը 1863—1865 թթ. Տարոնում (Մուշ) լույս է ընծայում «Լրատար արծվիկ Տարոնո» պարբերականը, որի ազդեցության շրջանակն անհամեմատ փոքր էր։

Հայ պարբերական հրատարակությունները, որոնց թիվը 60-ական թվականների վերջերից անցնում էր հարյուրից, մասնավորապես դարի կեսերին հանդիսանում էին տարբեր հոսանքների գաղափարախոսներ, ունեին շեշտված դիրքորոշում հասարակական-քաղաքական հրատապ հարցերի նկատմամբ, ինչպիսիք էին ազգային հարցը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, ազգային մշակույթի ստեղծման, աշխարհաբար գրական լեզվի մշակման հարցերը և այլն։

4. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XVIII դարի վերջին տասնամյակներին և XIX դարի կեսերին հայագիտությունը բուռն զարգացում ապրեց։ Մինչև 1870-ական թվականները անհնարին աշխատանք էր կատարված հայ հին մատենագրության, լեզվի, պատմության ուսումնասիրման բնագավառում։ Հրատարակվել էին հայ պատմագիրներից մի քանիսի երկերը ու Մխիթար Աբբայի «Բառգիրք Հայկազեան լեզուի» աշխատությունը (1749), «Քերականութիւնը» (1730) և այլն։

1784—1786 թթ. Վենետիկում լույս է տեսնում Մխիթարյան միաբանության բազմարդյուն գիտնականներից Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը», որն իր ծավալով, նյութի ընդգրկմամբ, հայ և օտար սկզբնաղբյուրների լայն օգտագործմամբ աննախընթաց գործ էր։

Ժամանակագրական կարգով Չամչյանից հետո խոշորագույն հայագետը Հ. Ղ. Ինճիճյանն է։ Նա դարասկզբին (1806) հրատարակում է Հայաստանի մանրամասն աշխարհագրությունը մի հատորում, որը կազմում է Ստ. Գյուվեր Ապոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատոր գործի՝ Ասիային նվիրված բաժնի Ա հատորը։ Այն պարունակում է Հայաստանի մանրամասն տեղագրությունն ըստ ճշգրտված վայրերի, որոշելով հազարավոր տեղանուններ՝ քաղաքներ, գյուղեր, գետեր, բերդեր, հնություններ և այլն։ Մինչև այսօր էլ այն չի կորցրել արժեքը և հարուստ նյութ կարող է տալ Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների աշխարհագրությունը ուսումնասիրողներին։

1822 թ. դարձյալ Վենետիկում լույս է տեսնում նույն հեղինակի «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» ստվարածավալ աշխատությունը, որտեղ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել պատմական Հայաստանի 15 նահանգների վիճակը, ճշտելով այդ նահանգների տեղը, փոխհարաբերությունը, իսկ 1835 թ. լույս է տեսնում նրա «Ճնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր հետազոտությունը։

Հայագիտական մտքի զարգացմանը, մասնավորապես հայոց լեզվի ուսումնասիրմանը մեծապես նպաստել է Հարությունն Ավգերյանը։ Նա հայ հին

մատենագրության, զրաբար և աշխարհաբար լեզուների խոր իմացությանը միացնում էր մի շարք լեզուների և արևմտաեվրոպական գրականության ու մշակույթին քաջատեղյակ լինելու կարողությունը։ Հեղինակել է լեզվաբանական, բառարանագրական արժեքավոր մի քանի երկեր։ Դրանցից կարևորն է 1821 թ. լույս տեսած «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց» հետազոտությունը, ուր հեղինակը քննության է առնում Աննանիա Շիրակացու «Յաղագս կշռոց և չափուց» աշխատության մեջ օգտագործված և չափ ու կշիռ ցույց տվող բազմաթիվ բառեր, փորձում ստուգաբանել դրանք, համեմատելով հունարենի, եբրայերենի, պարսկերենի և այլ լեզուների հետ։

1836—1837 թթ. Վենետիկում լույս է տեսնում «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեծադիր երկհատոր բառարանը (հեղինակներ՝ Գ. Ավետիքյան, Մ. Ավգերյան և Խ. Սյուրմելյան), որը իրավամբ համարվում է հայ բառարանագրության թագն ու պսակը և այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքն ու գործնական նշանակությունը։ Պարունակում է մինչ այդ թվականները գիտությանը հայտնի մեր հին մատենագրության բոլոր նմուշների գրաբար բառերի բացատրությունը, ստուգաբանությունը՝ անհրաժեշտ վկայություններով։ Առաջին անգամ այստեղ ստուգաբանված ենք գտնում հազարավոր բառեր, համեմատված հունարեն, լատիներեն, պարսկերեն, ասորերեն և այլ լեզուների համապատասխան բառերի հետ։ Երեք հեղինակներից Մկրտիչ Ավգերյանը, որի մասնակցությունը ավելի մեծ է եղել, քան մյուս երկուսինը, 1846 թ. հրատարակում է նույն բառարանի համառոտ խմբագրությունը մեկ հատորով, կոչելով այն «Առաձեռն բառարան հայկազեան լեզուի», որը պարունակում էր նաև նախորդից դուրս մնացած 5000 լրացուցիչ բառեր։ Մխիթարյանների «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» գործը մեծապես նպաստել է հայ բանասիրական մտքի զարգացմանը։

Բառարանագրությանը զուգընթաց հրապարակ են գալիս հայոց լեզվի քերականությանը նվիրված աշխատություններ։ 1779 թ. լույս է տեսնում Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատությունը, որը հետագայում հրատարակվում է նաև համառոտ խմբագրությամբ և արժանանում մի շարք տպագրությունների (Վենետիկ, Թիֆլիս, Մոսկվա, Շուշի և այլուր)։ Ինչպես Չամչյանի «Հայոց պատմությունը» երկար ժամանակ եղել է միակ ձեռնարկը հայ ժողովրդի պատմությունը սովորողների և ուսումնասիրողների համար, նրա քերականությունն էլ հայ կյանքում կատարել է նույն դերը, ավելի քան մեկ դար մնալով գրաբարի ուսուցման լավագույն ձեռնարկը, նույնիսկ այն տարիներին, երբ հրապարակի վրա կային Արսեն Բագրատունու և այլոց ավելի մշակված քերականությունները։

Հայագիտության զարգացմանը նպաստեցին օտար լեզուներից հայերեն բառարանների ասպարեզ գալը։ Բառարանագրության զարգացումը առաջին հերթին պետք է բացատրել հայ ժողովրդի ճակատագրով, տարբեր երկրների հետ ունեցած առնչություններով։

1788 թ. Պետերբուրգում լույս է տեսնում Գր. Խալդարյանի կազմած առաջին «Հայ-ռուս բառարանը»։ Դրան հաջորդում են ռուսերենի նոր բառարաններ ու ձեռնարկներ, որոնցից հիշատակության արժանի են Հար. Ալամ-

դարյանի «Ռուս-հայ բառարանը» (Մոսկվա, 1821), Աղ. Խուդաբաշյանի երկհատոր «Հայ-ռուս բառարանը» (Մոսկվա, 1838):

1840-ական թվականներին Խաչատուր Աբովյանը կազմում է «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց» ձեռնարկը ըստ Վիրորդի դիմնազիայի ռուսաց լեզվի ուսուցիչ Ավգուստ Վիլհելմ Տապպեի մի աշխատության: Աբովյանի այս գործը մնացել է անտիպ, լույս է տեսել միայն մեր օրերում, սակայն տարակույսից վեր է, որ մեծ լուսավորիչն այն օգտագործել է իր մանկավարժական գործունեության ընթացքում:

Մխիթարյանները դարասկզբից սկսեցին հրատարակել մի շարք բառարաններ ու օժանդակ ձեռնարկներ՝ «առաջնորդ»-ներ, ինչպես կոչում էին իրենք, եվրոպական լեզուների վերաբերյալ: 1804 թ. նրանք հրատարակում են Մ. Չախջախյանի «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ աշխատությունը, կազմված «ի պէտս զարգացելոց», այսինքն՝ ուսումնականների, բանասերների համար: Հետագայում, 1837 թ. այն արժանանում է երկրորդ տպագրության, ավելի ճոխացված բովանդակությամբ: Դրանից քառորդ դար անց լույս է տեսնում նույն բառարանի գործնական նպատակներ հետապնդող համառոտ խմբագրությունը:

Լույս են տեսնում ֆրանս-հայ և անգլո-հայ բառարաններ, կազմված Մխիթարյան միաբանության անդամ Հարություն Ավգերյանի կողմից: Նա 1812 թ. հրատարակում է «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ» աշխատությունը, որի երկրորդ տպագրությունը կատարվում է 1840 թվականին: Հետագայում լույս են տեսնում ֆրանսերեն-հայերեն այլ բառարաններ: 1820-ական թվականների սկզբներից Հար. Ավգերյանը հրատարակում է անգլո-հայ բառարաններ ու քերականություններ (կազմված 1816 թվականին, ս. Ղազար կղզում հայերեն սովորող Ջորջ Գորդոն Բայրոնի օժանդակությամբ): Ճիշտ է, դրանից առաջ մի փոքրիկ, գրպանի բառարան երևացել էր Հնդկաստանում, սակայն նման գիտական բառարանների ու ձեռնարկների հիմքը դրվում է 1812 թ. հրատարակված «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ», 1825 թ. լույս տեսած «Բառարան անգլիերէն և հայերէն» աշխատություններով, որոնք հետագայում նույնությամբ կամ համառոտ խմբագրությամբ արժանացել են նոր տպագրությունների:

1840-ական թվականներից երևում են բառարաններ և ձեռնարկներ հին հունարենի հետ կապված, որոնցից հիշատակենք Արիստակես և Ստեփանոս Ազարյանների «Բառարան հելլենական և հայ լեզվացը»: Հետագայում այս ուղղությամբ նկատելի դեր է կատարում հայագետ մի հույն բանասեր՝ Դմիտրի Զոլագիտիսը, որը հաճախ ստորագրել է նաև Զոլագյան, ինչպես «Բառարան նոր հայերենէ ի հունարէն» գրքի վրա (Կ. Պոլիս, 1870):

Տպագրվում են քերականության, ընթերցանության ձեռնարկներ, զանազան լեզուների հետ կապված, ինչպես «Առաջնորդ անգլիերեն և հայերեն զրուցատրության» (Փարիզ, 1855), «Առաջնորդ գաղղիերեն և հայերեն զրուցատրության» (Փարիզ, 1855), «Առաջնորդ հայերեն և հունարեն զրուցատրության» (Կ. Պոլիս, 1869) և այլն:

Հայագիտության զարգացման կարևոր արտահայտություններից մեկն էր հայ հին մատենագրության հետազոտումն ու թարգմանությունը օտար լե-

գումներով, ինչպես և հայոց լեզվի ուսումնասիրումը օտար համալսարաններում և օտար արևելագետների կողմից։ Մինչև 1860-ական թթ. տարբեր լեզուներով թարգմանվել են հայ հին գրականության ու պատմագրության կարևոր գրքեր բոլոր նմուշները։ Խորենացու «Հայոց պատմությունը» համառոտաբար լատիներեն էր թարգմանվել դեռևս 1723 թ. և տպագրվել Ստոկհոլմում՝ Հ. Բրենների կողմից։ Վիստոն եղբայրները լատիներեն մի անկատար թարգմանություն հրատարակեցին Լոնդոնում՝ 1736 թվականին։ Ապա այն լույս է տեսել ռուսերեն, Հովսեփ Հովհաննիսյանի թարգմանությամբ (1809), ֆրանսերեն (Փարիզ, 1836, Վենետիկ, 1841, դարձյալ Փարիզ, 1855), իտալերեն (Վենետիկ, 1841, 1851) և այլն։ Եղիշեի «Վարդանանց պատերազմը» թարգմանվել է անգլերեն (Լոնդոն, 1830), իտալերեն (Վենետիկ, 1840), ֆրանսերեն (Փարիզ, 1844), ռուսերեն (1853 և այլն)։ Եզնիկի «Եղծ աղանդոցից» հատվածներ էին թարգմանվել ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով։

Մի քանի լեզուներով թարգմանվել էին Ղազար Փարպեցին, Փավստոս Բուզանդը, Կորյունը, Ագաթանգեղոսը, Սեբեոսը և այլ պատմագիրներ[33]։

Այս բոլորը լայն հետաքրքրություն էր ստեղծել հայ հին մատենագրության շուրջը եվրոպայում և Ռուսաստանում, բազմաթիվ գիտնականներ հետևում էին արևելագիտությանը, մասնավորապես հայագիտությանը։

Նոր դարաշրջանի առաջին տասնամյակներից հայագիտությանը զարկ է տրվում նաև եվրոպական համալսարաններում։ XVIII դարի վերջերից Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզու է դասավանդում Շահան-Ջրպետյանը։ Մի քանի տարվա ընդմիջումից հետո, նա 1811 թ. նորից է ստանձնում այդ պաշտոնը, շարունակում երկար տարիներ, պատրաստելով մի շարք օտարազգի հայագիտներ, որոնք նվիրվում են հայոց լեզվի ու մատենագրության ուսումնասիրմանը։ Նույն դպրոցի հրատարակությամբ 1823 թ. լույս է տեսնում Շահան-Ջրպետյանի «Քերականութիւն արամեան լեզուի» ֆրանսերեն ստվարածավալ աշխատությունը։ Այն օգտակար դեր է կատարել հայոց լեզուն օտարներին ծանոթացնելու գործում։ Շահան-Ջրպետյանի սաներից էր ականավոր արևելագետ Սեն-Մարտենը, որը մեծ գործ է կատարել հայ լեզվի հետազոտման բնագավառում, հատկապես 1818—1819 թթ. Փարիզում հրատարակած «Հիշատակագիրք Հայաստանի մասին» և այլ ֆրանսերեն աշխատություններով։ Վերջինս 1822 թ. Փարիզում հիմնադրում է «Journal Asiatique» արևելագիտական հանդեսը, որն իր էջերում պարբերաբար տպագրել է հոդվածներ հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի և հնությունների մասին։

1840—1850-ական թթ. հայագիտությունն ավելի լայն զարգացում է ապրում Ֆրանսիայում։ Արևելագիտական մասնագիտական հանդեսներն ավելի հաճախ են անդրադառնում հին Հայաստանի պատմությանն ու հոգևոր կյանքին, միաժամանակ մեծանում է հետաքրքրությունը դեպի հայկական ըսկըզբնաղբյուրները, որոնք օժանդակում էին ոչ միայն հայ, այլև բազմաթիվ ուրիշ ժողովուրդների պատմության հանգուցային հարցերի ուսումնասիրմա-

33 Գ. Ջարպինանյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1866։

նը, ինչպես վրաց, հույն, արաբ, պարսիկ և այլ ժողովուրդների։ Ասպարեզ են գալիս մարդիկ, որոնք ամբողջովին նվիրվում են հայագիտությանը։ Դրանցից առավել բեղմնավոր գործունեություն են ունեցել է. Դյուլորիեն, Մ. Բրոսսեն, Վ. Լանգլուան և ուրիշներ։ Սրանք հիմնովին սովորում են գրաբար լեզուն, ուսումնասիրում հայ հին մատենագրությունը, մեր ժողովրդի պատմությունը, հաճախ ճանապարհորդում են Հայաստանում ու Վրաստանում, տեղում հավաքում նյութեր, ծանոթանում հին ձեռագրերին ու իրենց եզրակացությունները հրատարակում «Journal Asiatique», «Revue de deux mondes» և այլ պարբերականներում, գիտական աշխարհում մեծ հետաքրքրություն ստեղծելով դեպի Արևելքի ժողովուրդները, մասնավորապես դեպի հայերն ու նրանց դարավոր մշակույթը։ Այս հայագետները ծրագրված աշխատանք են կատարում հայկական սկզբնաղբյուրների թարգմանության ու գիտական հրատարակության ուղղությամբ, կցելով հմտալից ծանոթագրություններ, դարաշրջանը, մտավոր միջավայրը ներկայացնող հետազոտություններ։ Այսպես, Ֆլորիվալը թարգմանում և հրատարակում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»՝ այդ երկու մատենագիրներին հատկացնելով ընդարձակ հետազոտություններ։

Բեղմնավոր գործունեություն է ունեցել է.Դ. Դյուլորիեն, իր ամբողջ կյանքը հայագիտությանը նվիրած մի գիտնական, որը մեր լեզուն սովորել էր Մխիթարյանների Փարիզի Մուրադյան վարժարանում։ Նա հայ հին և նոր գրականության, պատմության, մշակույթի մասին գրել է տասնյակ հետազոտություններ, որոնք լույս են տեսել հանդեսներում կամ առանձին գրքերով։ Նա 1850—1858 թթ. Փարիզում հրատարակել է Միքայել Ասորու, Մատթեոս Ուռհայեցու երկերի ֆրանսերեն թարգմանությունները, «Հետազոտություն հայկական ժամանակագրության» աշխատությունը և այլ գրքեր։ Նրա ամենից ծավալուն հրատարակությունն է «Ճավաքումն խաչակրաց պատմըչաց» ժողովածուն, որտեղ տեղ էր տրված Մատթեոս Ուռհայեցուն, Միքայել Ասորուն, Ներսես Լամբրոնացուն և խաչակիրների արշավանքների մասին խոսող այլ պատմիչների։ Դյուլորիեն հետաքրքրվել է նաև հայ ժողովրդական երգերով ու ավանդություններով, հրատարակելով «Ուսումնասիրություն հին Հայաստանի պատմական երգոց և ժողովրդական ավանդության» վերնագրով մի գիրք։

Հայագիտության զարգացման գործում նվազ դեր չի կատարել Մ. Բրոսսեն։ Նա ճանապարհորդել է Վրաստանում և Հայաստանում, եղել էջմիածնում, Անիում, ուսումնասիրել հայ հին ձեռագրերը, ծանոթացել հնություններին, գրել իր ճանապարհորդական տպավորությունները, հատուկ գրքույկներ հրատարակել էջմիածնի վանքի, Անիի ավերակների, առանձին ձեռագրերի մասին։ Չնայած նրա հետաքրքրության հիմնական շրջանակը եղել է վրացագիտությունը և այդ բնագավառը օժտել է մեծարժեք հետազոտություններով, որոնց համար լայնորեն օգտագործել է հայկական սկզբնաղբյուրները, սակայն պատկառելի թիվ են կազմում նաև նրա հայագիտական հետազոտությունները[34]։ Նա բեղմնավոր աշխատանք է կատարել հայ հին մատենագիրնե-

34 Գ. Ջարպինեանյան, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան (ըստ Գ. Ա. Շրոմպֆի)*, Վենետիկ, 1895, էջ 136—160։

րի թարգմանության ու գիտական հրատարակության ուղղությամբ։ Նրա թարգմանությամբ լույս են տեսել Կիրակոս Գանձակեցու, Ուխտանեսի, Ստ. Օրբելյանի, Թովմա Արծրունու, Սամուել Անեցու և այլ պատմագիրների երկերն ամբողջապես կամ հատվածաբար[35]։

Ֆրանսիացի հայագետներից հիշատակության արժանի է նաև Վ. Լանգլուան, որը նույնպես ունի հին Հայաստանի հոգևոր մշակույթին վերաբերող հետազոտական և թարգմանչական մի շարք հրատարակություններ։ 1852—1853 թթ. նա գիտական ուղևորություն է կատարում Կիլիկիայում, հավաքում հին արձանագրություններ, դրամներ, նյութական կուլտուրայի նմուշներ, վերադառնալով Փարիզ, հրատարակում է իր տեղեկագիրը՝ 1854 թ., իսկ 1861 թ. լույս է ընծայում ավելի ընդարձակ եզրակացությունները՝ «Ուղեվորություն Կիլիկիայում և Տավրոսյան լեռներում» վերնագրով։ Ի թիվս շատ բնագավառների, Լանգլուան հետաքրքրվել է նաև դրամագիտության հարցերով, հրատարակել «Դրամագիտություն Հայաստանի միջին դարու» (Փարիզ, 1852), «Ընդհանուր դրամագիտություն Հայաստանի» (1858) գրքերը։ Կատարել է գիտական հրատարակություններ, որոնցից հիշենք Հեթում պատմիչի ֆրանսերեն թարգմանությունը[36]։

Հայագիտության նկատմամբ լուրջ հետաքրքրություն են ցուցաբերում գերմանացի արևելագետները։ Նրանց է պատկանում հայերեն լեզվի հանգամանալից հետազոտության, հնդեվրոպական լեզվախմբում նրա տեղի որոշման, պատմա-համեմատական լեզվաբանության մեթոդով բազմաթիվ հայերեն բառերի ստուգաբանության պատիվը, ծանրակշիռ մի աշխատանք, որ սկիզբ առավ 1830-ական թվականներին՝ Ֆրանց Բոպպի, Հայնրիխ Պետերմանի, Ֆրեդերիխ Վինդիշմանի, Ռիխարդ Գոշեի ջանքերով և իր ավարտին հասավ Հյուբշմանի, Մեյեի, Հր. Աճառյանի հետազոտություններով։ Պետերմանը հայոց լեզուն հիմնովին ուսումնասիրել էր Մխիթարյանների մոտ։ Նա 1837 թ. հրատարակում է «Հայոց լեզվի քերականությունը» գերմաներեն աշխատությունը, հետագայում մի քանի հրատարակությամբ լույս ընծայում նաև նրա համառոտ խմբագրությունը, քերականական հարցերին զուգընթաց ստուգաբանելով հայերեն մի շարք բառեր։ Պետերմանը հրատարակել է հայագիտական աշխատություններ՝ նվիրված Մովսես Խորենացուն, հայկական երաժշտությանը, Ագաթիսի բարբառին և այլն։ Ճանապարհորդելով Արևելքում, նա տպագրել է իր երկհատոր ուղեգրությունը, որտեղ հարուստ տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի կենցաղի, սովորությունների, հոգեվոր մշակույթի մասին[37]։

Պետերմանի քերականությունից մոտ մեկ տասնամյակ անց, 1846 թ., Բավարիայի դիտությունների ակադեմիայի արևելագետ պրոֆեսորներից Վինդիշմանը հրատարակում է «Հայերենի տեղը արիական լեզուների մեջ» աշխատությունը նույն ակադեմիայի տեղեկագրում և հիմնավորում հայերենի կապը հնդեվրոպական լեզուների հետ, առաջ քաշելով նրա իրան-

35 Նույն տեղում, էջ 187—218։
36 Նույն տեղում, էջ 219—228։
37 Նույն տեղում, էջ 279—284։

յան լեզվաճյուղին պատկանելու տեսությունը։ Նույն հարցի խորացմանն ու հիմնավորմանն են նվիրված Ռիխարդ Գոշեի «Ներածություն հայկական լեզվի և ցեղի արիական բնույթի մասին» լատիներեն հետազոտությունը (Բեռլին, 1847), Ֆրանց Բոպպի, Ֆրիդրիխ Մյուլլերի աշխատությունները։

1831—1833 թթ. լույս է տեսնում Ս. Ն. Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության տեսությունը», որը առաջինն է ռուս հասարակությանը ծանոթացնում հայ ժողովրդի պատմության հիմնական դրվագներին։ Նույն թվականներին Մոսկվայում լույս են տեսնում «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» ժողովածուի երեք հատորները, որոնք պարունակում են հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր վավերագրեր։

Սկսած 1840-ական թվականներից հայոց լեզվով զբաղվում են Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները։ 1842 թ., գերազանցապես Ստ. Նազարյանցի օժանդակությամբ, Կազանի համալսարանում ըստեղծվում է հայոց լեզվի ամբիոն։ Մի քանի տարի անց, 1845 թ., Մկ. Բեյոյանի ջանքերով Պետերբուրգում հիմք է դրվում հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն լեզուների ամբիոնի, որը նկատելի գործունեություն է ծավալում այդ լեզուների գիտական ուսումնասիրման բնագավառում։ Հետագայում ամբիոնը վերածվում է արևելյան լեզուների ֆակուլտետի՝ հայերենի, վրացերենի և ադրբեջաներենի բաժիններով։

Հայագիտությունը որոշ զարգացում է ապրում նաև արևելահայ և արևմտահայ կյանքում։ 1826 թ. Կ. Պոլսում տպագրվում է Գևորգ դպիր Պալատեցու «Պարսկերեն-հայերեն» ստվար բառարանը, որի վերջում հեղինակը տալիս է հայերեն մի շարք բառերի ստուգաբանությունը, կապված պարսկերենի հետ, նաև հիշատակում հունարենից, պարսկերենից վերցված շատ բառեր։

Արևելահայ իրականությունում այս բնագավառում մեծ դեր են կատարել Ստ. Նազարյանցը, Պ. Շանշյանը, Մկրտիչ Էմինը, Ք. Պատկանյանը, Գևորգ Ախվերդյանը և ուրիշներ։ Էմինը և Ստ. Նազարյանցն իրենց աշխատությունները հրատարակելով ռուսերեն՝ նպաստում են հայ մատենագրության ու լեզվի ծանոթացմանը ռուսական գիտական շրջաններին։

1844 թ. Կազանի համալսարանը հրատարակում է Ստ. Նազարյանցի «Беглый взгляд на историю Гайканской литературы до конца XIII столетия» աշխատությունը, որտեղ տրվում է հայ հին մատենագրության ընդհանուր ուրվագիծը։ Դարձյալ Կազանում, երկու տարի անց, լույս է տեսնում Նազարյանցի ռուսերեն մի այլ աշխատությունը՝ «Обозрение истории Гайканской письменности в новейшие времена» գիրքը։

1853 թ. ռուսերեն լույս է տեսնում Ղազարի «Վարդանանց պատերազմը»՝ Պ. Շանշյանի թարգմանությամբ և Հմոտ առաջաբանով, որը լայն հետաքրքրություն է առաջացնում ռուս մտավորականության շրջանում։ Այդ թարգմանությունը դրական արձագանք է գտնում «Отечественных записках» և «Современнике» ամսագրերում։

Ռուսաստանում հայագիտության զարգացմանը խթանում է Լազարյան Հեմարանի դասախոսներից Մկրտիչ Էմինը։ Նա հրատարակել է պատմա-

բանասիրական բնույթի մի շարք ուսումնասիրություններ ռուսերեն լեզվով, կատարել հայ պատմագիրների երկերի գիտական հրատարակություններ, նրանց կցելով համապատասխան առաջաբաններ, ծանոթագրություններ։ 1850 թ. Մոսկվայում լույս է տեսնում էմինի «Վեպք հնոյն Հայաստանի» նշանավոր աշխատությունը, որտեղ հեղինակը քննության է առնում հայ ժողովրդի հոգևոր մշակույթի շատ կարևոր հարցերից մեկը՝ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակված նախաքրիստոնեական շրջանին վերաբերող առասպելները, դրանց մեջ գտնում օրգանական կապ և հանգում այն եզրակացության, թե այդ առասպելները նախապես մի ամբողջություն են կազմել։ Փաստորեն հայ ժողովրդական բանահյուսության գիտական ուսումնասիրումն սկսվում է Մ. էմինի արժեքավոր այս աշխատությամբ, որը հանդիսացավ ուղեցույց հետագա տասնամյակների բանասիրական մտքի համար։



Մկրտիչ էմին

Էմինը գրավոր սերտ կապ է պահպանել արևմտաեվրոպական հայագետների, մասնավորապես, Դյուլորիեի, Լանգլուայի և այլոց հետ։

Հայագիտական բեղուն գործունեություն է ունեցել Քերովբե Պատկանյանը։ Կրթություն ստանալով Մոսկվայի Լազարյան ճեմարանում, Դորպատի համալսարանում և Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտում, նա հիմնովին տիրապետում է հին և նոր հայերեններին, ռուսերենին, գերմաներենին, ֆրանսերենին։ Հայ հին մատենագրության հետ կապված հարցերի, գրաբար լեզվի, բարբառների մասին ռուսական գիտական պարբերականներում կամ առանձին գրքերով նա հրատարակում է մեծարժեք հոդվածներ, որոնցից շատերն արտատպվում են նաև ֆրանսիական ու գերմանական արևելագիտական հանդեսներում։ Բանասիրական ծանրակշիռ մի հետազոտություն է հատկապես Պատկանյանի «Исследование о составе армянского языка» աշխատությունը (1864), որը Դյուլորիեի ջանքերով զետեղվում է նաև «Journal Asiatique»-ում և չերմորեն գնահատվում արևելագետների կողմից[38]։

Շոշափելի աշխատանք է կատարվում նաև միջնադարյան և ժամանակակից ժողովրդական բանահյուսության հավաքման, հետազոտման և հրատարակման ուղղությամբ։ Թիֆլիսի «Արարատ» պարբերականում լույս են տեսնում նյութեր Սայաթ-Նովայի և աշուղ Շիրինի մասին, Վենետիկում Ղ. Ա-

38 Մանրամասն տե՛ս Գ. Ջահուկեանցյան, նշվ. աշխ., էջ 372—384։

լիշանը հրատարակում է «Ռամկական երգք հայոց» ժողովածուն՝ հայերեն և անգլերեն լեզուներով, Պոլսում լույս են տեսնում երգարաններ, Պետերբուրգում հրատարակվում է Մ. Միանսարյանի «Քնար հայկական» ժողովածուն և այլն։ Թիֆլիսի հայերի մտավոր կյանքի, բանահյուսության և աշուղական գրականության հետազոտման գործում մեծ երախտիք ունեն Գևորգ Ախվերդյանը, Գ. Տեր-Աղեքսանդրյանը և ուրիշներ։ Սրանցից առաջինը, որը, ինչպես ինքն է ասել, մի քանի տարի հավաքել էր «կենդանի աղբյուրից հանած կենդանի նյութեր»՝ առակներ, առածներ, վիճակախաղեր, աշուղական երգեր և այլն, 1852 թ. Մոսկվայում հրատարակում է Սայաթ-Նովայի հայերեն երգերի ժողովածուն ընդարձակ առաջաբանով, ծանոթագրություններով և Թիֆլիսի բարբառին նվիրված արժեքավոր մի ուսումնասիրությամբ, հաստատուն պատվանդանի վրա դնելով ոչ միայն սայաթնովագիտությունը, այլև առհասարակ ժողովրդական-աշուղական գրականության հետազոտման գործը։

Ախվերդյանը հնարավորություն չունեցավ լույս ընծայելու իր մոտ գտնվող ժողովրդական երգերը, ծիսակատարությունները և այլն։ Այդ գործը կատարեց նրա հետքերով ընթացող Գևորգ Տեր-Աղեքսանդրյանը, որն իր հավաքած հարուստ նյութի մի մասը հետագայում հրատարակեց «Թիֆլիսի հայոց մտավոր կյանքը» ժողովածուի Ա հատորում։

Այսպիսով, մինչև XIX դարի 50—60-ական թվականները հայագիտությունը բուռն զարգացում ապրեց թե՛ հայերի մոտ և թե՛ Ռուսաստանում ու Արևմուտքում, մեծ հետաքրքրություն առաջացնելով դեպի հայ ժողովրդի հին մատենագրությունը, լեզուն, պատմությունը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՎԵՍՏ

1. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

XIX դարասկզբի հայ գրականության տիրապետող ուղղությունը կլասիցիզմն էր։ Հայկական կլասիցիզմը, միաժամանակ, գեղարվեստական արտահայտություն էր ազգային մի մտայնության, որը կարելի է անվանել «հայկական գաղափարաբանություն» և որը, սկզբնավորվելով XVII դարասկզբին, տևում է ավելի քան երկու դար։

Մտավոր-գրական այդ շարժումը, ազգային-հասարակական ուրույն խընդիրներ էր արծարծում և յուրովի արձագանք էր վերածնության ու լուսավորական դարերի եվրոպական մտայնության։ Նշանավորելով քաղաքական շրջադարձ միջնադարյան Հայաստանի իշխող գաղափարաբանությունից, այն նախապատրաստեց հայ կյանքի ազգային զարթոնքը, որի խնդաստը հանգում էր մի որոշակի նպատակի՝ լուսավորել ու կրթել ազգը, պահպանել ազգի հարատևությունը։ «Հայկական գաղափարաբանությունը» վերակենդանացնում է հայոց պատմության մոռացված անցյալը, աշխարհիկ և հոգևոր կյանքի վերանորոգությամբ խանդավառված, լույս աշխարհ հանում փոշեծածկ ձեռագրերն ու մագաղաթները, վերստեղծում գրաբարն իբրև մշակված լեզու և, վերջապես, ուրվագծում ապագա հայրենիքը՝ «դրախտ Հայաստանի» մտապատկերով։ Ձուրացնելով եվրոպական կլասիցիզմի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները, հայկական կլասիցիզմը, սակայն, հասկանալի պատճառով, չկարողացավ պահպանել նրա հեղափոխական ոգին և հաղթահարվեց կրոնական մտայնությամբ մի կողմից՝ հանձնվելով երանավետ անցյալի մեծարանքին, և մյուս կողմից աստվածային նախախնամության մեջ երաշխիք որոնելով ազգային իդեալների իրագործման համար։

Կլասիցիզմը ազգային հող գտավ հայկական իրականության մեջ։ Հայկական կլասիցիզմը հարուստ նյութ էր հայտնաբերում հայոց հին գրականության դասական հուշարձաններում՝ Խորենացի, Եզնիկ, Փավստոս և ուրիշներ. որտեղից նա քաղում էր սյուժեներ ու էպիկական դրվագներ։ Թերևս սրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ գրական այդ դպրոցը բավական հարատև եղավ հայ իրականության մեջ և, բացի զուտ գեղարվեստական արտա-

հայտնությունից; ունեցավ նաև փիլիսոփայական ու տեսական հիմնավորում։ Կլասիցիզմի հայ առաջին տեսաբանը Խաչատուր Էրզրումցին է։ Կլասիցիզմի տեսության հարցերը զբաղեցրին նաև այլ հեղինակների։ Ուշագրավ են Ստեփանոս Ագոնցի «Ճարտասանությունը» (Վենետիկ, 1775), Սարգիս Տիգրանյանի «Ինչ-ինչ զեղերերգութենէ»՝ Ռասինի «Գոթողիա» ողբերգության առաջաբանը (Մոսկվա, 1834) և հատկապես Էդուարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ» (Վենետիկ, 1839) աշխատությունը, ուր ավելի սիստեմատիկ են շարադրված արվեստի տեսության, ժանրերի, սեռերի, ոճի ու լեզվի հարցերը։ Հայկական կլասիցիզմն արձագանքում էր ազգային միասնության, ազգային ազատության ու ինքնուրույն պետականության այն ձգտումներին, որոնք համապատասխանում էին հայ ժողովրդի քաղաքական երազանքներին։

Կլասիցիզմը հայ մշակույթը հարստացրեց համաշխարհային գրականության գեղարվեստական արժեքների թարգմանությամբ։

Զևավորվելով XVIII դարի երկրորդ կեսին, հայկական կլասիցիզմը հարատևեց մինչև XIX դարի 50-ական թվականները, թողնելով բավական հարուստ գեղարվեստական ժառանգություն՝ հատկապես երեք ժանրերով՝ բանաստեղծություն, վիպերգություն, դրամատուրգիա։

Հայկական կլասիցիզմի բանաստեղծությունը համարյա ամբողջապես ամփոփված է «Տաղք Մխիթարյան վարդապետաց» եռհատոր ժողովածուներում (հաջորդաբար լույս են տեսել 1852, 1853, 1854 թվականներին) և Լազարյան ճեմարանի սանների կազմած «Մուզայք Արարատյան» (1829) գրքում։ Բնության գովերգ՝ առավելապես արտաքին-նկարագրական ընկալումներով, խրատա-բարոյական ու կրոնական քարոզ, պատմական ներբող, առնին զվարճանք— այսպիսին են կլասիկական քերթվածների նյութն ու ընդգրկումը։ Թեև կլասիկական բանաստեղծությունը տառապում էր ներքին անձկությամբ ու ձևի միօրինակությամբ, այնուամենայնիվ նա ստեղծեց կանոնավոր տաղաչափություն և մասնավորապես հայրենասիրական մոտիվներով խթանեց ապագա հայ պոեզիայի զարգացումը։ Գնահատելով նրա գրական-պատմական դերը, Մ. Աբեղյանը գրում է. «Սակայն այսպես լինելով հանդերձ՝ այդ ժողովածուն մի մանկական թոթովանք է, որ ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի։ Դրա մեջ արդեն երևում է, որ «մուզաները» ոչ միայն բարոյական խրատներ ու Աստվածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատվածները, այլև ոգևորվում են մեր անցյալով ընդհանրապես. ունին արդեն հայրենիքի գաղափար, որով պարծենում են, որովհետև այդ հայրենիքը դրախտն է. ցույց են տալիս ուսման սեր և ուրախանում են, որ պարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը։ Դրանք ոգևորության նոր նյութեր են, որ Լազարյան սաներն առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետև պիտի զբաղվեր մեր ապագա բանաստեղծությունը»[1]։

Հայկական կլասիցիզմն ավելի արգասավոր եղավ վիպերգի և դրամատուրգիայի ասպարեզում։ Ունենալով բացառապես պատմական դիմորոշում,

---

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, Երևան, 1945, էջ 509—510։

վիպերգն ու դրամատուրգիան իրենց նյութն ու սյուժեներն առնում էին պատմական Հայաստանի քաղաքական անցքերից, այստեղ իսկ հայտնաբերում ազատության և հայրենասիրության գաղափարն իբրև գերագույն խորհուրդ ու առաքինություն։

Հատկանշական է, որ հայ հեղինակները հիմնականում շրջանցում են ընտանիքի ու մարդկային այլևայլ կրքերի դրամատիկ սյուժեները և նախընտրում են ազգային-քաղաքական թեմաներ, նյութ ընտրելով բացառապես պատմական անցյալի դրվագներից։ Ողբերգությունը համարելով վսեմ ժանր և հատկապես ելնելով դաստիարակչական այն սկզբունքից, թե թատրոնը պետք է «երկյուղ և գութ» հարուցի հանդիսատեսին, կլասիցիզմի դրամատուրգները այն յուրովի համահնչեցնում են ազգային-հայրենասիրական իրենց միտումներին՝ մեծարելով հայրենասիրությունն ու առաքինությունը և պատժելով հայրենիքի ու հավատի դեմ ծառացող չարիքը։

Հայ առաջին կլասիկական դրաման՝ «Արկածք Տիգրանայ», ասպարեզ եկավ Մխիթարյանների դպրոցական թատրոնում 1776 թվականին։ Հետագա տասնամյակներում պատմական ողբերգություններով հանդես եկան Մ. Ջախջախյանը («Հաղթութիւն Տրդատայ ի վերայ Հոչեի», «Դաւադրած մահ մեծին Խոսրովայ»), Ե. Թովմաճյանը («Հայկ դյուցազն», «Հանդէս մեհենամարտութեան Որատեանց»), Ա. Բագրատունին, կլասիկական դրամայի ամենաակնավոր դեմքը՝ Պետրոս Մինասյանը և այլ հեղինակներ։

Հովհան Վանանդեցին (1772—1841) իր չափածո վեպերում՝ «Ոսկի դար Հայաստանի», «Տեսարան հանդիսից Հայկայ, Արամայ և Արայի», «Արվիճակական Հայաստանի», որոնց սյուժեները վերցված են հայ պատմիչներից, հատկապես Խորենացուց և Ագաթանգեղոսից, ներկայացնում է հայոց պատմության հնագույն շրջանի դրվագները։

Վանանդեցին հայ գրականության մեջ բերեց քաղաքական մոտիվը, առաջադրեց ազգային-հայրենասիրական այն մտորումները, որոնք նախորոշում էին ազգային վերածնության գաղափարաբանությունը։

Առաջադրելով Հայաստանի քաղաքական ազատագրության գաղափարը, Վանանդեցին հայրենասիրական ջերմ զգացումներով գովերգում է «Դրախտ Հայաստանին», փարում հայրենի գեղատեսիլ բնությանը, հայրենիքի հանդեպ ունեցած սերը պարզում որպես գերագույն պարգև։ Նրա հայրենասիրական զգացումների ամենավառ արտահայտությունը «Աւր Հայաստան» բանաստեղծությունն է, որը հանճարեղ Կոմիտասի մշակմամբ դարձել է մի անկրկնելի հիմն և այսօր իսկ մնում է ազգային-հայրենասիրական լավագույն երգերից մեկը.

Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնո ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ի վեհ անունդ սիրտ իմ, ոհ, հույժ
Ոգևորի ի նոր խրախուս,
Եվ անձկայրայց ի քեզ հասում,

Ի քեզ՝ ի քեզ հույս իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան...

Ժամանակի գրականության մեջ Վանանդեցու քաղաքական-հայրենասիրական մոտիվները հնչում էին ամբողջ թարմությամբ ու նախերգանքի ըսթափեցնող շեշտերով։ Այս իմաստով էր Աբեղյանը նրան դիտում «մեր նոր բանաստեղծության սկիզբը», նրա գրվածքներում նշմարելով «մեր XIX դարու գեղեցիկ գրականության գրեթե բոլոր գաղափարներն ու զգացումները»[2]։

Արսեն Բագրատունու դրամատիկական երկերը կազմում են կրոնական սյուժեներով մի քանի օրատորիաներ, գրված Մեսաստազիոյի ազդեցությամբ և «Երվանդ Բ» (1815), «Արտաշես» (1818) պատմական ողբերգությունները։ Երկու ողբերգությունների մեջ հեղինակը դատապարտում է բռնակալությունն ու ոճրագործությունը։

Բագրատունու գրչին են պատկանում բանաստեղծությունների հինգ շարք՝ «Տերունականք», «Կրոնականք», «Բարոյականք», «Կենցաղականք», «Սթափականք», որոնց անվանումներն ինքնին ցուցադրում են նրանց թեման ու բովանդակությունը։ Թեև այդ բանաստեղծությունները որևէ թարմություն կամ գաղափարական որոնումներ չէին խոստանում, բացի բնության հիանալի պատկերներից՝ ապա Բագրատունին, այնուամենայնիվ, կլասիկական բանաստեղծությունը օժտում էր ճոխ, պատկերավոր նկարագրություններով, բառապաշարի հարստությամբ։ Նրա բանաստեղծական երևակայության այդ շնորհը առավել հուժկու թափով դրսևորվեց «Հայկ դյուցազն» (1858) վիպերգում, որն իրավամբ համարվում է հայ կլասիցիզմի գլուխ-գործոցը։ Վիպերգի սյուժեն կառուցված է Խորենացու «Հայոց պատմության» Հայկ և Բելի առասպելի վրա։

Բագրատունին իրար դեմ է կանգնեցնում բռնակալությունն ու ազատությունը և հանգույցը լուծում հօգուտ վերջինի։ Հայկ նահապետը ազատության խորհրդանիշն է, Բելը՝ բռնության, և որքան առաջինը բանական, առաքինի ու խոհեմ է, նույնքան երկրորդը անբանական է, կրքամոլ ու արգահատելի, իսկ այն, ինչ չի արդարացվում բանականությամբ՝ ենթակա է կործանման։

«Հայկ դյուցազն» չափածո վեպը տոգորված է էպիկական հայրենասիրությամբ։ Այն մի վսեմ դրվատանք է ազատության ու առաքինության, հերոսության ու գեղեցկության։ Բագրատունին արտակարգ փայլի նկարագրող է. գեղարվեստական երևակայությունը վիպերգում հասնում է մեծ թռիչքի ու լայն չափանիշների ընդգրկման։

«Հայկ դյուցազն» վիպերգը հարուստ է հեթանոսական կենցաղի, ծեսերի, տոնախմբությունների նկարագրություններով։ Մի առանձին բանաստեղծական շունչ են տալիս պոեմին հերոսների ներաշխարհի զեղումները՝ սիրո, կարոտի, երազանքի էպիկական վերապրումներով։

Լինելով Հոմերոսի «Իլիականի» թարգմանիչը, Բագրատունին որոշակի ազդվել է հունական վիպերգության գլուխ-գործոցի գեղարվեստական մի-

---

2 Մ. Աբեղյան, *Հայ հին գրականության պատմություն*, հատ. 2, էջ 518։

ջոցներից, որը նկատելի է ինչպես «Հայկ դյուցազնի» առանձին տեսարանների ու պատկերների նկարագրություններում, նույնպես և հեթանոսական կենցաղի, դիցաբանական հերոսների պատկերման մեջ։

Պետրոս Մինասյանը (1799—1867) հայ կլասիկական դրամայի ամենախոշոր դեմքն է և այդ դրամատուրգիայի տեսաբանը։ Մի շարք աշխատություններում նա արծարծել է դրամայի տեսության հարցերը՝ փորձելով լուսաբանել ոչ միայն ժանրի պոետիկայի առանձնահատկությունները, այլև դիտել այն հասարակական կոչման տեսակետից։ Ելնելով թատրոնի հասարակական դերից՝ Մինասյանը դաստիարակչական է դիտում այն դրամատուրգիան, ուր «հանդես են գալիս քաղաքական, բարոյական մեծ կոնֆլիկտներ, քաղաքացիական առաքինություններ, հայրենասիրության՝ «պերճ և վսեմ արտահայտություններով»[3]։ Այս իմաստով նա դրամայի դասական օրինակներ էր դիտում Ռասինի «Գոթողիան» և Վոլտերի «Կեսարի մահը»։

Պ. Մինասյանի գրչին են պատկանում «Խոսրով Մեծ», «Սմբատ Առաջին», «Արշակ Բ», «Երվանդ» պատմական ողբերգությունները և մի քանի կատակերգություններ։ Ելնելով իր տեսական դրույթներից, Մինասյանը պատմական ողբերգություններում ներկայացրել է պատմական Հայաստանի քաղաքական իրադարձությունները և մեկնաբանել այն քաղաքացիական առաքինության ու հայրենասիրության բարոյական սկզբունքի տեսակետից։ Այս իմաստով ուշագրավ է «Խոսրով Մեծ» դրաման։ Դրամայի հերոսը՝ տասներկուամյա Զարեհը, հանդես է գալիս որպես հեղինակի իդեալի կրողը։ Նրա հայրը՝ Անակը, որ ուներ պարսկական կողմնորոշում, երդում էր արել սպանել հայոց թագավոր Խոսրովին։ Որդին գիտեր հոր հայրենադավ դիտավորության մասին, սակայն չէր բաժանում նրա վարքագիծը, քանի որ այն դեմ էր գերագույն առաքինությանը՝ հայրենասիրությանը։ Այստեղ իսկ Զարեհը դրվում է հոգեբանական բարդ կացության առաջ։ Դավադիր հայրը որսի ժամանակ մահացու վիրավորում է թագավորին, իսկ սա վերջին վճիռն է արձակում՝ ոչնչացնել Անակի ամբողջ սերունդը, բացի Զարեհից։ Վշտահար պատանին սգում է իր հարազատների կորուստը, բայց բանականությամբ անխուսափելի է համարում չարության արժանի պատիժը։ Կատարվում է ողբերգությունը, բայց և հաղթում է առաքինությունը և սա է դրամայի դաստիարակչական իմաստը։

* * *

Հայկական կլասիցիզմի ազգային-հայրենասիրական ու քաղաքական ծրագրերը, ինչպես նաև գեղագիտական սկզբունքները պատմական զարգացման հանդեպ ի հայտ բերեցին իրենց սահմանափակությունը։ Գրական այդ ղպրոցը ոչ միայն չկարողացավ ընդգրկել լուսավորության դարի գաղափարներն իրենց ամբողջ արմատական բովանդակությամբ, այլև դեմընթաց գրնաց գաղափարական այն նոր շարժումներին, որոնց ընդառաջում էր եվրոպական միտքը XIX դարի 30—40-ական թվականներին։ Հայկական կլասի-

3 Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, հատ. 1, Երևան, 1959, էջ 169։

ցիզմը նիրհում էր «դրախտ Հայաստանի» և «բարի հին անցյալի» դափնիների վրա։

Այս կետում հայկական ռոմանտիզմը գտավ իր գրական նախորդին։ Նոր ուղղությունը կոչվեց փարատելու «հայկական գաղափարաբանության» աստվածաբանական շղարշը, կասկածի տակ դնելու նրա ազգային ծրագրերի հեղինակությունը և հայ միտքը զբաղեցնելու ազգային ու սոցիալական նոր ուղիների որոնումով։ Շրջադարձ է կատարվում ինչպես հայ հասարակական մտքի, նույնպես և գեղարվեստական մտածողության ասպարեզում, սկիզբ է առնում գրական մի նոր շարժում՝ ռոմանտիզմը։ Բայց քանի որ հայկական կլասիցիզմը կիսակատար էր թողել XVIII դարի լուսավորական գաղափարների յուրացումը, ուստի նորածագ գրական շարժումը ստիպված էր նորից դիմելու նրան և այս անհրաժեշտությամբ է, որ ի տարբերություն եվրոպական ռոմանտիզմի, հայկական ռոմանտիզմը ստանում է լուսավորական բովանդակություն։

Այն ընդհանուր նշանաբանը, որով նոր ուղղությունը հակադրվում էր իր նախորդին՝ գրականության դեմոկրատացումն էր, ժողովրդայնությունը։ Ռոմանտիզմի մուտքը հայ գրականության մեջ նշանավորվում է ժանրային վերածևումներով, հանդես են գալիս գրական անձնապատում սեռեր, կլասիկական վիպերգին փոխարինում է պոեմը, զարգանում է անձնական լիրիկան, ստեղծվում է իսկական իմաստով գեղարվեստական արձակ։

Ամբողջ սրությամբ ծառանում է նաև գրական լեզվի հարցը։ Սկսվում է գրապայքարը, որի իմաստը և քաղաքական էր, և գաղափարական, և գեղագիտական։ Սա, հիրավի, գեղարվեստական մտածողության շրջադարձի հիմքն էր։ Լեզվի աշխարհականացումը ենթադրում էր նաև մտածողության աշխարհականացում։ Գրականությունը ձեռք է մեկնում ժողովրդի հոգևոր ստեղծագործությանը, բանահյուսությունը դառնում է գրականության կենսարար աղբյուրներից մեկը, ուր նա գտնում է նոր սյուժեներ ու մոտիվներ, նոր պատկերամտածողություն։ Գրականությունը մերձենում է կյանքին, թափանցում ոչ հետազոտված անկյուններ, առօրեականն ու կենցաղայինը, որ առաջ արհամարհվում էին դասական արվեստի մուսաներից, հաշտեցվում են գեղարվեստի հետ, գրական կյանքի է կոչվում հասարակ մարդն իր խոհերով, հույզերով, անձնական զգացումներով, բայց և ազգային-քաղաքական իդեալներով։

Անցումը կլասիցիզմից ռոմանտիզմին առաջինը նշանավորեցին Հարությունյան Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիադյանը։

Մեծ չէ Հարությունյան Ալամդարյանի (1796—1834) թողած գրական ժառանգությունը՝ շուրջ երեք տասնյակ բանաստեղծություններ, որոնք 1884 թ. լույս տեսան Պետերբուրգում՝ «Չափաբերականք» խորագրի տակ։ Ալամդարյանը հայ նոր քնարերգության հիմնադիրներից է։ Նրա մի շարք քնարական ոտանավորներ՝ «Նազելույս դէմքն է ճերմակ ու կարմիր», «Պարերգութիւն», «Անուրջք», «Թշվառութիւն սոխակի», «Գարուն» և այլն բանաստեղծական նոր մտածողություն են բերում հայ պոեզիայում։ Ի հակակշիռ կլասիցիզմի բանական սկզբի, Ալամդարյանի պոեզիայի իմացաբանական ելակետը ըղգացմունքն է։ Մի շարք էլեգիական բանաստեղծություններում Ալամդարյանը

արտահայտում է մարդու խորտակված սիրո կսկիծը, կորսված երջանկության անմոռ ցավը։ Իրականությունից դժգոհ բանաստեղծը ճիգ է անում իր վիշտը բարձրացնել «համաշխարհային թախծի» և ներքին խռովքը խաղաղել ռոմանտիկական փախուստի մտորումով։ Սերը, արդեն զուտ փիլիսոփայական իմաստով, բարձրացվում է էթիկական հումանիզմի բարոյախոսության։



Հարություն Ալամդարյան

Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858) մեկն էր XIX դարասկզբի մտավոր-գրական շարժման այն առաջնեկներից, որոնք ձգտում էին հայ գրականությունը կլասիցիզմից դիմորոշել դեպի ռոմանտիզմը։ Թաղիադյանի պատմագիտական, բանասիրական հետազոտությունները ու ուղեգրությունները՝ «Դիցաբանություն», «Հնդկաստանի պատմություն», «Քրիստոնեություն ի հնդիկս», «Պատմություն Պարսից», «Ճանապարհորդություն ի Հայս», «Ճանապարհորդություն ի Պարս» և այլն, վկայում են հեղինակի լայն իմացությունների մասին և հարուստ նյութ են պարունակում Հայաստանի ու Արևվելքի պատմության վերաբերյալ։ Թաղիադյանի ազգային-սոցիալական հայեցության ելակետը լուսավորականություն է։ Նրա համոզմամբ ազատության և առաջադիմության միակ ուղին լուսավորությունն ու գիտությունն են։ Սակայն վաղ շրջանի լուսավորիչը չկարողացավ կտրվել հնի կապանքներից և փորձեց այն հաշտեցնել կրոնական իմաստասիրության հետ։ Այս երկվությունն ու հակասությունն իր կնիքը դրեց թե՛ նրա աշխարհայացքի և թե՛ գեղարվեստական ըմբռնումների վրա։ Կողմնորոշվելով դեպի գրականության դեմոկրատացումը, նա միաժամանակ իր տուրքը տվեց կլասիցիզմին և ստեղծեց մի գեղագիտություն, որը հատկանշվում է կլասիցիզմի և ռոմանտիզմի ոճական խառնուրդով։ Բայց նրա գրական-պատմական դերը հենց դեպի ռոմանտիզմ կատարած անցման մեջ է, որ բանաստեղծի մոտ արդեն հանդես է գալիս որպես գիտակցված ըմբռնում։

Թաղիադյանի բանաստեղծությունները, որոնք ամփոփված են «Թութակ Թաղիադեանց» (Կալկաթա, 1847) և «Ծաղերերգութիւն յօրհաս Թանգալ Թաղիադեանց» (1893) ժողովածուներում, հատկանշվում են մոտիվների հարբուտությամբ, ոճի թարմությամբ և շատ կողմերով նախանշում են հայ քնարերգության սկզբնավորման պատմությունը։

Թաղիադյանի քնարերգության գլխավոր մոտիվներից է հայրենասիրությունը։ Մի շարք բանաստեղծություններում՝ «Հայկ ի տեսիլ Հայկազնին», «Նոր Ջուղա», «Երազ», «Մի մոռանար» և այլն, հեղինակը մի կողմից դրվա-

տում է նախնիների մեծագործությունը, մյուս կողմից՝ փարում հայրենի հողի ու հիշատակների սրբությանը։

Թաղիադյանի պոեզիան անհաղորդ չմնաց սիրո, վայելքի, բնության խորհրդի տրամադրություններին («Տուտուռ», «Երեկո»), սակայն նրա քնարերգության մեջ ավելի տիրական շեշտով է հնչում ռոմանտիկական իրոնիան կյանքի չարիքի ու անարդարության դեմ։ Մի շարք բանաստեղծություններում նա ծաղրում է հոգևոր դասի տգիտությունն ու շահասիրությունը։

Թաղիադյանը ռոմանտիկական ձևափոխման ուղու վրա դրեց հայ պոեմի ժանրը։ «Սոս և Սոնդիպի», «Ողերերգութիւն ի Թանկ» չափածո երկերում, համադրելով կլասիցիզմի և ռոմանտիզմի պոետիկական ձևերը, նա վերջին հաշվով լուծում էր ռոմանտիկական պոեմի գեղագիտական խնդիրը։



Մեսրոպ Թաղիադյան

Նշանակալից է Թաղիադյանի դերը հայ վեպի զարգացման պատմության մեջ։ «Վեպ Վարսենկան» (1847) և «Վեպ Վարդգեսի» (1846) երկերը հայ առաջին տպագիր վեպերը լինելով, ուրույն տեղ են գրավում գեղարվեստական արձակի պատմության մեջ։ «Վեպ Վարսենկան»-ը, ինչպես հավաստում է հեղինակը, ազգային բարոյական վեպ ստեղծելու մի փորձ է։ Վեպի սյուժեն առնված է «Փեշակը ոսկի ա» ժողովրդական հեքիաթից։ Ժողովրդական սյուժեի յուրացումն իբրև ազգային վեպի ստեղծման ուղեգիծ, գրական նորույթ էր։ Իր վեպում Թաղիադյանը երջանկության իդեալը դուրս է բերում վերին պալատներից և հատկացնում խաղաղ խրճիթների հասարակ մարդուն։ Արքայադստեր հրաժարումը պալատական պերճությունից ու դասային արժանապատվությունից, սիրո և աշխատանքի մեջ երջանկության որոնումը, ինքնին հասարակ մարդու մեծարման փիլիսոփայությամբ է իմաստավորված։

«Վեպ Վարդգեսի» երկ-փոխադրությունում Թաղիադյանը արծարծում է ազգային-հայրենասիրական խնդիրներ, առաջադրելով մի ուրույն մտայնու-

թյուն, որը պիտի դառնար հայկական ռոմանտիզմի պատմահայեցության հիմնական դրույթներից մեկը։ Դա անմիաբանության ու երկպառակության գաղափարական հայտնությունն է որպես հայ ժողովրդի պատմական դժբախտության նախապատճառ։ Վեպը պատմական բովանդակություն ունի և վերաբերում է Արմավիրի Երվանդ թագավորի ժամանակներին։ Թաղիադյանը քննադատում է երկպառակությունն ու ազգուրացությունը։ Նա հայրենասիրությունն ու միասնությունը համարում է ազգային ազատագրության երաշխիք։

Պատկառելի է Ղևոնդ Ալիշանի (1820—1901) թողած գիտական-բանասիրական վաստակը։ Նրա գրչին են պատկանում տասնյակ ստվարածավալ ուսումնասիրություններ՝ պատմագիտական, հնագիտական, աշխարհագրական, բնագիտական, կրոնա-փիլիսոփայական, բանասիրական և այլն, ինչպես՝ «Քաղաքական աշխարհագրություն» (1852), «Տեղագիր Հայոց մեծաց» (1855), «Շնորհալի և պարագայ իւր» (1873), «Ընդ եղենեաւ» (1874), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893), «Հայ-Բուսակ» (1895), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (1895), «Հայ-Վենետ» (1896), «Հայապատում» (1901) և այլն։

Որպես բանաստեղծ Ալիշանը հանդես եկավ իր գործունեության առաջին շրջանում՝ 40—50-ական թվականներին և թողեց բավական հարուստ գրական ժառանգություն, արտահայտելով հայկական ռոմանտիզմի մի քանի էական առանձնահատկություններ։ Նրա չափածո երկերը 1857—1858 թթ. հրատարակվել են հինգ հատորով՝ «Նուագք» ընդհանուր խորագրի տակ, որոնք բաղկացած են ինը ցիկլից՝ «Մանկունի», «Մաղթունի», «Բնունի», «Հայրունի», «Ախոհունի», «Տխրունի», «Տերունի», «Բանք պանդխտի», «Երգք նահապետի»։ Մոտիվների ցիկլային այս սկզբունքը նորույթ էր հայ պոեզիայի պատմության մեջ։ Գրական տեսակետից ուրույն արժեք ունեն նաև «Հովիւք Շիրակայ» հովվերգական պատկերներն ու «Հուշիկք հայրենեաց հայոց» երկհատոր պատմա-գեղարվեստական էտյուդը։

Ալիշանի պոեզիայում ուժեղ է արտահայտված քրիստոնեական ռոմանտիզմի հետագեմ հայեցությունը։ Բոլոր ռոմանտիկների նման կանգնելով տրրոհված աշխարհի առեղծվածի հանդիման, և այդ չարիքը կանխելու համար այլ ուղիներ չնշմարելով, քան ավետարանական ուսմունքը, Ալիշանը «Մանկունի», «Մաղթունի», «Տերունի» և «Բանք պանդխտի» շարքերում պատվիրաններ է կարդում երկրայիններին՝ ապավինելու աստծու և հանդերձյալի նախախնամությանը։

Ջուտ էսթետիկական հրապույրը չէր Ալիշանին մղում դեպի բնություն. մի ամբողջ փիլիսոփայություն, հասարակական մի ուրույն հայեցություն էր ակնկալում նրա ռոմանտիկ բնապաշտությունը։ Մարդուն զբաղեցնելու, բարոյապես դաստիարակելու, գեղեցկակրթելու մեծ խորհուրդ էր տեսնում Ալիշանը «բնության գրքի» իմաստուն էջերում. «Բնությունը ամենեն առաջի կրթողն ու հրահանգողն է. ամեն կրթության այբուբենն է. ամեն դժվարության դյուրացնողն է»։ Այն փաստը, որ Ալիշանը Ավետարանի փոխարեն առաջադրում է «բնության գիրքը» որպես իմաստության ու գործնական մար-

դակրթության ուղեցույց, ինքնին ուշագրավ է։ Բնությունը այն կամուրջն է, որով Ալիշանը գտնում է կապը իրական աշխարհի հետ։ Այս ելակետով պիտի գնահատել «Բնունին»՝ բնության բանաստեղծական այդ հանրագիտարանը։

Ալիշանի ռոմանտիկական պոեզիայի ամենափայլուն էջը հայրենասիրական քերթվածներն են, որոնք ամփոփված են «Հայրունիք» խորագիրը կրող հատորում։ Ազգ ու հայրենիքը այն հանգրվանն էին, ուր բանաստեղծը գտավ իր ռոմանտիզմի ազգային-պատմական բովանդակությունը։

«Հայրունին» իր ամբողջության մեջ «մի հերոսամատյան է՝ լի հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական անցքերին ու անձերին նվիրված ներբողներով...»[4], «Ի Հայկն և ի բաստ հայկազանց», «Երկհազարեակն Արշակունեաց», «Ճակատամարտ Զիրաւայ և քաջակորովն Մուշեղ», «Երթ ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնեայ», «Զայնարկութիւն բանակի Աշոտոյ Բ», «Ի բամբիռն հայկազնի» և այլ քերթվածներում Ալիշանը ներբողում է հայոց պատմության հերոսապատումը։

Ալիշանի հայրենասիրական քերթվածների պսակը «Երգք Նահապետի» շարքն է, որով նա հիմնադրեց ազգային-հայրենասիրական պոեզիայի այն ուղղությունը, որի հետևորդներն էին Պեշիկթաշլյանը, Պատկանյանը, Շահազիզը և ուրիշներ։ «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Հրազդան», «Պլպուլն Ավարայրի», «Աշոտ երկաթ ի ծովուն Սևանայ», «Հայ հանճար» հոյակապ քերթվածներում բանաստեղծը մեծարում է անցյալի հերոսությունը, ողբում անմխիթար ներկան, մարդու զգացմունքների աշխարհը ցողում հայրենի հողի ու բույրի կարոտով և ապա պատմական հերոսության ու հոգու հանճարի մեծության զորավիգներով սթափեցնում ազգը նոր մաքառումների ու ստեղծագործ վերածնության.

Շագէ հայ հանճար, փայլէ բյուր բոցեր,
Իմանան ազգեր՝
Թէ հայք չեն անցեր։

Ճշմարիտ է, Ալիշանի ռոմանտիկ հայրենասիրությունը ցողված է ազգային մեսիանիզմի կրոնական հավատով, սակայն նա գտնում է նաև այն նեցուկը, որ «նյութականն» իմաստ և մարտական ջիղ էր տալիս նրա ռոմանտիզմին։ Այդ նեցուկը հայոց պատմությունն է իր հերոսական դրվագներով։

XIX դարի գրական-լուսավորական շարժման ամենամեծ ու համապարփակ դեմքը Խաչատուր Աբովյանն է (1809—1848), որը շատ կողմերով նախանշեց գրական-հասարակական մտքի զարգացման հետագա տասնամյակների ընթացքը։ Աբովյանը ծնվել է 1809 թ. Քանաքեռում, նահապետական ազդեցիկ գյուղացու ընտանիքում։ Տասը տարեկանից տովորել է էջմիածնի վարժարանում, ապա կրթություն ստացել Թիֆլիսում՝ նախ ժամանակին հայտնի Ոսկոս Ղարադաղցու ուսումնարանում, ապա՝ Ներսիսյան դպրոցում։

---

4 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 1, Երևան, 1962, էջ 482։ Ա. Ինճիկյանց, Ղևոնդ Ալիշան։

1828 թ. նա վերադառնում է Էջմիածին և նշանակվում կաթողիկոսի թարգման ու գրագիր։

1829 թ. Էջմիածին է գալիս Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի արշավախումբը՝ Արարատի գագաթը բարձրանալու։ Աբովյանն իբրև թարգման միանում է արշավախմբին, լինում առաջիններից մեկը, որ ոտք է դնում բիբլիական լեռան գագաթը։ Ուշիմ ու սրամիտ պատանին գրավում է Պարրոտի ուշադրությունը և սրա ջանքերով Աբովյանը 1830 թ. մեկնում է Դորպատ՝ կրթություն ստանալու։ Վեց տարի սովորելով Դորպատի համալսարանում, Աբովյանը վերադառնում է հայրենիք և նվիրվում գրական-կրթական գործունեության, նախ՝ Թիֆլիսում, ապա՝ Երևանում։



Խաչատուր Աբովյան

1848 թ. ապրիլի 2-ի վաղ առավոտյան Աբովյանը դուրս է գալիս տնից և ավարտում իր կյանքը մինչև այսօր անհայտ մի առեղծվածով։

Հարուստ ու համապարփակ էր Աբովյանի ստեղծագործական անհատականությունը. նա արձակագիր էր և բանաստեղծ, մանկավարժ էր և հրապարակախոս, ուղեգրող էր և ազգագրագետ։ Նա կոչված էր նորարար լինելու և հիմնադիր։ Նրա ստեղծագործությունը մի հանրագիտարան է, ուր արտացոլվել է ժամանակաշրջանի հայ հասարակական միտքը իր բոլոր դրսևորումներով՝ փիլիսոփայական, տնտեսագիտական, պատմագիտական, մանկավարժական, գեղագիտական և այլն։ Աբովյանը նոր դարագլուխ նշանավորեց հայ հասարակական մտքի և գեղարվեստական զարգացման պատմության մեջ։

Աբովյանի պատմական ծառայությունը հայ գրականության բնագավառում այն էր, որ վերջնականապես լուծեց գեղարվեստի դեմոկրատացման էքեետիկական խնդիրը, հեղաշրջելով գրականության թե ձևը և թե բովանդակությունը։ Նա քաղաքացիական իրավունք տվեց աշխարհաբարին, գրականության մեջ բերեց ժողովրդական մտածողությունը, ճանաչեց ժողովրդական բանահյուսությունն իբրև գրականության կենսատու աղբյուր։ Աբովյանը արմատապես հեղաշրջեց գրականության թեմատիկան՝ պատմությունից դիմորոշելով այն դեպի ժամանակակից կյանքը՝ ազգային, քաղաքական, սոցիալական խնդիրների գործնական նշանակությամբ։ Նա գեղարվեստորեն հայտնաբերեց ժողովրդի մարդուն՝ որպես գրականության գլխավոր հերոսի։

Այն, ինչ առաջնահերթ նշանակություն և լուծում պահանջող հրատապություն էր հանձնառում Աբովյանի գեղագիտական ծրագրերում, հայ իրականության և գեղարվեստի հարաբերակցության հարցն էր։ Հայ իրականությունը գեղարվեստակա՞ն է, հայկական հոգևոր կերտվածքը ընդունա՞կ է գեղարվեստական արտադրության՝ ահա հանգուցային հարցը, որին Աբովյանը տալիս է և՛ տեսական, և՛ գործնական լուծում։ Նա առանձնահատուկ դեր էր հատկացնում արվեստին՝ հայ ազգի լուսավորության և առաջադիմության գործում։ «Ոչինչ այնպես չէր բորբոքում իմ միտքը եվրոպական կրթության համար,— գրում է Աբովյանը,— ոչինչ այնպես բուռն կերպով չէր համապատասխանում իմ ձգտումներին, ինչպես բանաստեղծությունը, երաժշտությունը և նկարչությունը։ ...Եթե Ասիան պիտի ստանա լուսավորության իսկական լույսը, ասում էի ես իմ մտքում, ապա այդ բանը ոչ մի այլ միջոցով չէր կարող ամենից լավ և արագ կատարվել, քան դրանց միջոցով, և իմ այս կարծիքը, ավելի հաճախ, քան մեկ անգամ, հաստատվել է դրանք իմացողների կողմից»[5]։

Աբովյանը վեհացնում է հայկական բնաշխարհը, մեծարում հայոց պատմության հերոսական դրվագները, որպեսզի հավաստի Հայաստան աշխարհի գեղարվեստական բովանդակությունը. «Եվ որքան առարկաներ, որքան նյութեր ունի Հայաստանը, որոնք կարող էին բանաստեղծությանը վերին թռիչք տալ։ Հայերի կյանքը, նրանց մտածելակերպը, նրանց պատմությունը, նրանց վիճակը, նրանց դրախտային երկիրը, նրանց հիշողությունները հրաշալի ժամանակների գործաշարքերի մասին՝ իրենց անցքերով հանդերձ՝ լի են պատկերներով, որոնց նմանները սակավ ժողովուրդների և եթե չեմ սխալվում, և ոչ մի ժողովրդի մեջ գոյություն չունեն»[6]։

Հաստատելով գոյաբանական հիմքը, Աբովյանը տեսական ու գործնական լուծում է տալիս հայկական ազգային գրականության ձևի ու բովանդակության հարցերին։

Աբովյանի գեղագիտական իդեալը հայ ժողովրդի պատմական շրջադարձի գաղափարով ու հոգեբանությամբ է իմաստավորված։ Նրա իդեալ-հերոսը նոր ժամանակների մարդ-քաղաքացին է, ազգային-քաղաքական գործնական ծրագրերով, հասարակականորեն օգտակար բարոյականությամբ, գիտակից ու լուսավորված անհատը։ Այստեղ էլ Աբովյանի գեղագիտությունը ձեռք է բերում բարոյաբանական շեշտ՝ «ռեալ հումանիզմի» էթիկական շաղախով։ Ուշագրավ է Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» առակաշարքը, ուր բարոյաբանական ընդհանրացումը ուղեկցվում է կյանքի արատավոր երևույթների քննադատությամբ. բարու վեհությունը հաստատվում է չարի պախարակումով, առաքինության դրվատանքը ծնվում է մոլության քննադատությունից. այլասիրության շնորհը ելնում է եսասիրական բնազդների մերժումից, գավառական սահմանափակության ու գռեհկության ծաղրը արդարացվում բարեկիրթ ու լուսավորված անհատի գեղեցկությամբ և այս ամե-

5 Խ. Աբովյան, Երկ, հատ. 10, Երևան, 1961, էջ 167։
6 Նույն տեղում, էջ 185։

նը իմաստավորվում սիրով, բանականությամբ և խղճով ներդաշնակված հասարակության երազանքի գեղագիտական իդեալով։

Գրական ասպարեզ մտնելով որպես բանաստեղծ, Աբովյանը զբաղեցրել է իրեն ժանրային բարդ որոնումներով, որոնք ուրույն նշանակություն են ըստանում հայ նոր քնարերգության սկզբնավորման պատմության տեսակետից։ Միջնադարյան պոեզիայի, կլասիկական չափաբերության և աշուղական երգի պոետիկական նախադրյալների վրա Աբովյանը հայ բանաստեղծությունը բարձրացրեց գեղարվեստական նոր աստիճանի, գրական ինքնություն տալով ժանրային բազմազան ձևերի՝ քնարական բանաստեղծություն, ներբող, քառյակ, պոեմ, առակ և այլն։ Նա կլասիկական վիպերգին հակադրեց ռոմանտիկական պոեմը («Ադասու խաղը»), ուր դրվագի էպիկական պատումին փոխարինում է սուբյեկտիվ լիրիկական վերապրումը, հայրենասիրական չափերգը ներարկեց էլեգիական ռոմանտիզմով («Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց», «Երեւակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ», «Մուտ Հայկայ ի Հայաստան...»), ստեղծեց «Հազարափեղեն» պոեմը, որը քաղաքական պամֆլետի հազվագյուտ օրինակ է։

Աբովյանի գեղարվեստական հանճարն ավելի ցայտուն արտահայտություն գտավ արձակի ժանրում։ Նա իսկական իմաստով գեղարվեստական արձակի ստեղծողը եղավ, ժանրային մի քանի սեռերի հիմնադիր ու նորարար (վեպ, պատմվածք, արձակ բանաստեղծություն, մեմուար և այլն)։ «Առաջին սերը», «Թուրքի աղչիկը» պատմվածքները, «Մուտ գարնան», «Ամարային առավոտն ի գյուղս», «Գիշերը ամարայինն» արձակ բանաստեղծությունները, «Վերք Հայաստանի» դարակազմիկ վեպը նոր էջ են բացում հայկական գեղարվեստական արձակի պատմության մեջ։

«Վերք Հայաստանին» համանշանակ է համաշխարհային գրականության այն բացառիկ երկերին, որոնք մի ամբողջ ժողովուրդ են խորհրդանշում։ Աբովյանը հայ գրականությունը դուրս բերեց ռացիոնալիստական միագծությունից և գեղարվեստական մտածողության մեջ համադրեց աշխարհի անսահման բարդությունների բազմանշանակ կապերը։

«Վերք Հայաստանին» գրվել է 1840 թ., սակայն լույս է տեսել հեղինակի անհայտացումից հետո՝ 1858 թվականին Թիֆլիսում։ Լինելով առաջին հայ վեպը, «Վերքի» պատմական իմաստը, սակայն, չի սպառվում սոսկ գրական-ժանրային նշանակությամբ։ Նա կյանքի մի ամբողջ հանրագիտարան է, որը ներառնում է գաղափարական հարստության անեզր մասշտաբներ, միացնում դարեր, ամփոփում դարերի հոգեբանությունը և պատմականորեն դիմորոշում մի ամբողջ ժողովուրդ։ Այս իմաստով հայ ժողովրդի պատմությունը դարձավ վեպ և հայ առաջին վեպը՝ ժողովրդի պատմություն։

Վեպի գաղափարական բովանդակությունն ու գեղարվեստական նպատակադրումը բացահայտելու տեսակետից հատկանշական է գրողի հետևյալ նկատողությունը. ակնարկելով այն իրողությունը, որ օտար հեղինակների գրքերը շատ հաճախ ավելի հափշտակությամբ են կարդացվում, քան հայ գրողների երկերը, Աբովյանը ցավով նկատում է. «Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց

գործերքը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները, որ մարդու սիրտ կարող է գրավել, չունքի սրտի բաներ էին՝ ով չի սիրիլ։ Ով չի ուղիլ լսել թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ են...»։

«Վերքի» գեղարվեստական ծրագիրը նախապես էր ենթարկված մարդկային «սրտի բաների» նկարագրությանը. այնտեղ, հիրավի, զգացմունքի ամբողջ տարերքով մարդիկ վերապրում են սիրո ամենազորությունը, բարեկամության ու ընկերասիրության առաքինությունը, մահի փիլիսոփայությունը, ծնողի, զավակի բնական երկիրը, հայրենիքի սերը և այլն։ Այս ամենը վեպում իրացվում է կառուցվածքային բարդ համադրությամբ։ Սոցիալ-կենցաղային պատկերներ՝ ճանաչողական նշանակությամբ, մարդու անհատական ինքնության հայտնաբերում՝ զգացմունքի հախուռն տարերքի մեջ, նոր մարդու իդեալ՝ քաղաքացիական հոգեբանությամբ ու ազգային ինքնագիտակցությամբ, ազգային ու համամարդկային իդեալների երազանք՝ դիդակտիկ-հրապարակախոսական խորհրդածություններում, բնության, տիեզերքի, աշխարհի առեղծվածային խոհեր՝ փիլիսոփայական զեղումների մեջ — այս ամենի միասնությամբ է պայմանավորվում «Վերք Հայաստանի» վեպի բովանդակությունն ու տիպաբանությունը։

Հիմք ընդունելով 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու իրադարձությունները, Աբովյանը պատմական շրջադարձի կիզակետում գտնում է հայ ժողովրդին և գեղարվեստորեն իմաստավորում այդ բեկման նշանակությունը՝ ազգային գոյության հեռանկարի տեսակետից։ Իսկ պատմական այդ շրջադարձի իմաստը ազգային գոյության տեսակետից ինքնին երկակի է. պարսկական բռնատիրության թոթափումը հայ ժողովրդին բաժանում է բարբարոսական անցյալից և կապում քաղաքակրթության դարի խոստացած առաջադիմության հետ։ Եվ հենց այստեղ վեպի գաղափարական հանգույցներում ի հայտ է գալիս հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման խնդիրը, որ հեղինակը թրծում է ջերմ զգացումներով՝ «օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց»։

Աբովյանը ձգտում էր ոչ միայն կանխել ազգային պեսիմիզմի հոգեբանությունը, այլև հայ ժողովրդի հերոսական ոգու հայտնությամբ հավաստել նրա կենսունակության ու գոյության իրավունքը։ Այս իմաստով հայ ժողովրդի մեծության դիֆերամբը վեպում ոչ միայն ինքնաճանաչման կոչ էր, այլև ապագայի աղդարար։ Պատմության ողբերգական հանգույցներում մաքառման ու հերոսության ոգու հայտաբերումը մի մեծ գրավական էր, որպեսզի Աբովյանը ի լուր աշխարհի պարզեր հայոց ազգի գոյության իրավունքը. «Ով թուր ունի առաջ իմ գլխին խփի, իմ սիրտս խրի, ապա թե ոչ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ. «էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»։

Այս կանոնը պատմության գեղարվեստական ընկալման լայն տեսահորիզոն է գծում։ Հայերի ազատագրությունը անակնկալ չէր առկա իրադարձությունների տեսակետից, այլ պատմության տրամաբանությամբ երաշխավոր-

ված անհրաժեշտություն։ Այս իմաստով էլ պատմավեպի աբովյանական ըմբռնումը ուրույն գեղարվեստական լուծում է ստանում։ «Վերք Հայաստանին» պատմավեպ է ոչ միայն պատմական իրողությունների հավաստիությամբ, այլև այն իմաստով, որ ժողովրդի պատմության դարերն է կապակցում, նրա հոգեբանությունն ու կերտվածքը վավերացնում պատմության փիլիսոփայությամբ։

Պատմական անցյալի զորավիգներն անխմաստ են, եթե հող չեն գրտնում ներկայի մեջ։ Աբովյանը կամրջում է անցյալը ներկայի հետ, միացնում ժողովրդի պատմության թելերը, գործնական ազգապահպանության նշանաբան պարզում հայրենիքի և հայրենասիրության գաղափարը։ Գեղարվեստական հետաքրքիր ասոցիացիաներով և փիլիսոփայական խոր իմաստավորումներով է գրողը վեպի հիմնադրույթի մեջ հայտնաբերում այդ գաղափարը։ Նա բացում է աշխարհի անսահմանության առեղծվածները՝ բնության, տիեզերք, աստված, կարդում մարդու բնական զգացմունքի բոլոր էջերը, չափում այդ ամենը երկրային անցողիկ գոյության խորհրդով և այս ամենի դիմաց պարզում հայրենիքն ու հայրենասիրությունը որպես կյանքի ու գոյության գերագույն նպատակ։ Մարդիկ հեղում են իրենց անձնական զգացմունքները, սիրում են որպես ընկեր, բարեկամ, տխրում ու ողբում են իրենց կորուստը, հանուն զգացմունքի դիմում անձնազոհության. բայց կա մի գաղափար, որ նույնպես արժանի է սիրո, վշտակցության և անձնազոհության՝ հայրենիքը։ Այս անհրաժեշտությամբ է գրողը հայտնվում վիպական պատումի հանգույցներում. նա բանաստեղծացնում է մարդկանց զգացմունքները, վիշտն ու տառապանքները, որպեսզի ինքն էլ իր հայրենական վիշտը բացի մարդկանց ու աշխարհի առաջ, հուշի նրանց փառքի ու հիշատակի վեհությունը այն անձնազոհության, որ արվում է հանուն ազգի ու հայրենիքի։

«... Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի ետեր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի ըլում՝ թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ինչի՞ համար ենք էկել աշխար. քոռ գալիս ենք, քոռ գնում», այսպես են դատում վեպի հերոսները։ Ժողովրդի ազգային զգացումների այս տարերային գեղումները որսալով, Աբովյանը ձգտում էր այն բարձրացնել քաղաքացիական ինքնագիտակցության։ Այս ուղիներում է նա գտնում իր գլխավոր հերոսի՝ Աղասու կերպարի գեղարվեստական զարգացման ներքին խթանը։ Պատմական հեռատեսության և աշխարհայացքի խոր դեմոկրատիզմին պիտի վերագրել այն փաստը, որ «Վերք Հայաստանիի» հեղինակը իդեալ-հերոս է դարձնում ժողովրդի մարդուն։ Համաշխարհային ռոմանտիզմի պատմության մեջ բացառիկ օրինակներից է դա, երբ գեղագիտական իդեալն այդքան մերձեցվում է իրականությանը։ Աղասին իդեալականի և իրականի մի հետաքրքրքիր ձուլվածք է։ Գտնելով իրականության մեջ, գրողը նրան բարձրացնում է այդ իրականությունից, օժտում ռոմանտիկական անհատի բնորոշ գծերով և հակադրում նույն միջավայրի ավանդական սահմանափակությանը։

Ազատասիրության մի բնածին տրվածք խոհական երանգ է տալիս Աղասու բնավորությանը։ Նա փորձում է յուրովի ըմբռնել բնության ու տիեզերքի գաղտնիքները և մի տարերային պանթեիզմով սուզվում է արարչագործության առեղծվածի մեջ։ Այստեղ իսկ բնության հրաշքը, տիեզերքի իմաստուն

նպատակաբանվածությունն ու ներդաշնակությունը կյանքի մի ուրույն փիլիսոփայությամբ են լուսավորում Աղասու ռոմանտիկական բնազդը։ Եթե ազատ է բնությունը, ուրեմն ազատ է ծնվել նաև մարդը, եթե արարիչը բարեգութ է բնության շուայլ հրաշալիքներով, ուրեմն մարդն էլ պետք է բարի լինի մարդու հանդեպ և անուն թողնի բարի գործով։ Ազատասիրության այս զգացումն Աղասու էության մեջ վերաճում է ավելի մեծ ընդհանրացման և ի վերջո հանգում ազգի ու հայրենիքի ազատագրության գաղափարին։ Եթե բռնությունը հերքվում է բանականությամբ ու բնական ազատությամբ, ուրեմն մի ազգի բռնությունը մյուսի նկատմամբ իրավունք չէ, այլ անարդարություն։ Եթե բռնությունն իրավունք չէ, բայց գործող օրենք է, իսկ ազատությունն իրավունք է, բայց օրենք չէ, ուրեմն բարոյախոսությանն ու աղոթքին ապավինելը սին պատրանք է և բռնությունը պետք է ոչնչացնել բռնությամբ։ Ինչպես տեսնում ենք, Աբովյանը վեպի գաղափարական դրույթները չի արտահայտել մերկապարանոց տիրադներով և որպես գեղագետ դրանց տվել է հոգեբանական ու փիլիսոփայական լուծումներ։

«Վերք Հայաստանին» մի անկրկնելի գեղարվեստական համապատկեր է, ուր արտացոլում են գտել դարաշրջանի սոցիալ-փիլիսոփայությունը, կյանքն ու կենցաղը իրական, դունեղ, կենդանի պատկերների մեջ։ Աբովյանը հայտնաբերեց հայոց աշխարհաբար լեզվի հարստությունը, հմայքն ու ճկունությունը, նրա գեղեցկագիտական անսահման կարողությունը։

* * *

50—60-ական թվականների հայ իրականությունը հատկանշվում է տնտեսական, քաղաքական կյանքի վերելքով։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը նոր տեղաշարժեր է ստեղծում հասարակական կյանքում, նպաստում մշակույթի և մտավոր գործունեության այլևայլ բնագավառների ու կուլտուր-կրթական ձեռնարկումների աշխուժացմանն ու առաջընթացին։ Ստեղծվում են բարեգործական ընկերություններ, բացվում դպրոցներ, հիմնադրվում թատրոններ, ընդլայնվում են հասարակական մտքի հետաքրքրության շրջանակները, բուռն վերելք է ապրում հրապարակախոսությունը, ձևավորվում է հեղափոխական-դեմոկրատիզմը որպես դարաշրջանի մտածողության բարձրագույն արտահայտություն։

50—60-ական թվականների գրական շարժումը հատկանշվում է գրական տարբեր ուղղությունների ու հոսանքների գոյակցությամբ։ Թեև կլասիցիզմը դեռևս հարատևում էր, այնուամենայնիվ այն դադարել էր գործնական ու տեսական հարց լինելուց։ Բայց արդեն ձևավորվում է գրական մի նոր ուղղություն՝ ռեալիզմը, իսկ ռոմանտիզմը ավելի ու ավելի էր ցուցադրում երկփեղկումը՝ առաջադիմական ու հետադիմական թևերի։

Սարսափած Եվրոպայի քաղաքական ցնցումներից ծնունդ առած հասարակապետության ուրվականից, հայ «ազգայիններըե ճգնում էին հայկական միտքը հեռու պահել այդ գաղափարների ներթափանցումից։ Հետադեմ ռոմանտիզմի առավել աչքի ընկնող գաղափարախոսներն էին Ջամուռճյանը,

Փափազյանը, Մսերյանը, Այվազովսկին, գրականության մեջ՝ Նար-Պեյը, Թերզյանը, Հիսարյանը և ուրիշներ։

Մինչդեռ ազգային-պահպանողական ռոմանտիզմը ճգնում էր ետ դարձնել պատմության անիվը, ռոմանտիզմի առաջադիմական թևը սոցիալական և ազգային այլ գաղափարներով էր ոգեշնչված։ Աշխարհը համակած քաղաքական հեղաբեկումներն ու ազատագրական շարժումները և այն իդեալները, որոնք խորհրդանշում էին այդ տեղաշարժերը, ռոմանտիկական ոգի էին ներշնչում հայկական ազգային հոգեբանությանը։ Եվ հիրավի, ոչ մի բան չէր կարող ավելի հուսավառ հնչել պատմության քառուղիներում տրորված մի ժողովրդի համար, որքան դարի նշանաբանած գաղափարները՝ ազգ, հայրենիք, ազատություն, եղբայրություն, հավասարություն։

Բայց այս ոգևորությունը գրականության մեջ տևեց մինչև 60-ական թվականների կեսը։ Վերահաս քաղաքական հանգամանքները թե՛ Արևելահայաստանում և թե՛ Արևմտահայաստանում ցրեցին ազգային-ազատագրության պատրանքները, որը և գուշակեց հայկական ռոմանտիզմի առաջին վայրէջքը։

Հասարակական միտքն ու գրականությունը բուռն որոնումներից հետո հանձնվում են տեղատվության ալիքին։ Դադարում են «Հյուսիսափայլն» ու «Կռունկը», հոգեվարք է ապրում «Մեղու Հայաստանին», աստանդական ու օրամեջ կյանք է վիճակվում «Հայկական աշխարհին», Պոլսի «Մեղուն» այլևս առաջվա սրությամբ չէր հնչում, իսկ «Բազմավեպը» վենետիկի միաբանության բանասիրական հետախուզումներով էր զբաղված։ Մյուս քիչ թե շատ աչքի ընկնող պարբերականները («Արշալույս Արարատյան», «Արարատ», «Սիոն» և այլն) իրենց նեղ ու հետահայաց հարցասիրություններով, իսկ «Մասիսն» ու «Փունջը» գրական ամլությամբ, ի վիճակի չէին ընթացք տալու մտավոր շարժմանը։

Մինչդեռ կլասիցիզմը հեռանում էր պատմության ասպարեզից, իսկ ռոմանտիզմը ջղաձգվում էր ազգային-ազատագրական շարժման տարուբերումների հետ, ծնունդ է առնում գրական մի նոր ուղղություն՝ ռեալիզմը, առաջադրելով կյանքի ուսումնասիրության ու սոցիալ-հոգեբանական վերլուծության գեղագիտական իր սկզբունքները։ Այդ ուղղությունը նշանավորվում էր այնպիսի գրողների երկերով, ինչպես Մ. Նալբանդյանը, Գ. Սունդուկյանը, Դ. Աղայանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Պ. Պռոշյանը և ուրիշներ։

50—60-ական թվականներին հայ գրականությունը դրվում է զարգացման լայն ուղիների վրա։ Արդեն բավականաչափ ժառանգություն ու ավանդներ էին ստեղծել պոեզիան, արձակը, դրամատուրգիան, ձևավորվում է գրական քննադատությունը, գրականությունն ավելի ու ավելի ներազդող ուժ էր ստանում հասարակական կյանքի ասպարեզներում։

Այն ժանրը, որ այդ տասնամյակներում հնչում էր ամբողջ ձայնով՝ պոեզիան էր։ Մեծ էր պոեզիայի հասարակական արձագանքը, հայկական իրականությունը շնչում էր բանաստեղծությամբ։ Բնության, սիրո, կարոտի անձնական խոհերի նուրբ, լիրիկական տրամադրությունների հետ, ամբողջ լիությամբ հնչում էր քաղաքական-հայրենասիրական մոտիվը։ Հայրենիքի կարոտը շարժում է հայ բանաստեղծների ազգային զգացմունքները։

Դորպատյան ուսանողների հավաքույթներում ստեղծվեցին հայկական մի քանի ազգային երգեր՝ Գ. Միրիմանյանի «Հայոց աղջիկները», Ք. Պատկանյանի «Ինձ համար չէ գարնան գալը», Դ. Դոդոխյանի «Միծեռնակը», Խ. Ավագյանի «Հայոց դինին», որոնք այսօր իսկ պահպանում են իրենց հմայքը։

Ռոմանտիկական պոեզիան թոթափում է «Երկիր դրախտավայրի» տեսիլքը և շոշափում իրական հայրենիքի մտապատկերը, որն այնպես գեղեցիկ է ուրվագծվում Ն. Ռուսինյանի «Կիլիկիա» բանաստեղծության մեջ.

Երբոր բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Ջքնաղ երկիրն մեր Արմենիո,
Երբ փայլե յուր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն ի բույն դառնա,
Երբոր ծառերն հագնին տերև.
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև...

Հայկական պոեզիան հեղափոխական լիցք է ստանում. Մ. Նալբանդյանը երգում է մարդկության ազատագրության քաղաքական հիմնը, Ռ. Պատկանյանն իր ազգային-ազատագրական երգը նշանաբանում է «ռազմի քնարով», Ս. Շահազիզը ռոմանսների նվագը խլացնում է մարտակոչի հրավերով, Մ. Պեշիկթաշլյանը հնչեցնում է Զեյթունի հերոսամարտի հավերժության երգը։

Բայց երբ տեղի են տալիս ազատագրության ռոմանտիկական հույսերը և լռում է Պատկանյանի «ռազմի քնարը», Շահազիզը ընդմիշտ հրաժեշտ է տալիս պոեզիային, իսկ Պեշիկթաշլյանն անձնատուր է լինում մռայլ ու մահահաշտ էլեգիային, ասպարեզ է գալիս Պետրոս Դուրյանը՝ ազգային վիշտը վերապրելու որպես համաշխարհային թախիծ։

Էական տեղաշարժեր են տեղի ունենում դրամատուրգիայի բնագավառում։ Կլասիցիզմի ազդեցությունն այստեղ բավական տևական եղավ։ Թեև արևմտահայերը նախապատվում էին կլասիկական և պատմա-ռոմանտիկական դրաման, ապա արևելահայ թատրոնն ու դրամատուրգիան հակված էին առաջնության տալու ռեալիստական կատակերգությանը։

Պատմա-հայրենասիրական դրամայի անցումը կլասիցիզմից ռոմանտիզմին վավերացվեց ժանրային մի տիպով, որը հատկանշվում է ռոմանտիզմի և կլասիցիզմի ուրույն համադրությամբ։ Միջակա տեղ գրավելով կլասիցիզմի և ռոմանտիզմի արանքում, այդ դրամատուրգիան պահպանում էր կլասիկական դրամայի օրենքները, բայց միաժամանակ յուրացնում էր ռոմանտիկական դրամայի սկզբունքները։ Պատմական հանգամանքների քաղաքական սրությունն այստեղ ավելի էր գործում, քան գրական ավանդույթը։ Այդ մի ժամանակ էր, երբ թատրոնը ամբիոն էր և կոչված էր ազդելու հասարակական մթնոլորտի վրա։ Ռոմանտիկական մելոդրաման անկատար էր հնչում այդ պահանջի տեսակետից և հայ դրամատուրգները ձեռք էին մեկնում Վոլտերին։ Այն, ինչ ամենից ավելի հատկանշական է հայ պատմա-հայրենասիրական դրամային, դա նրա քաղաքական-տենդենցիոզ բնույթն էր, արծարծած

գաղափարների արդիական շեշտվածությունը։ Պատմական անցյալի համանմանման դրվագների մեջ օրվա քաղաքական դեպքերն ակնարկող այդ դրաման հատկանշվում է ենթատեքստային արտահայտություններով, թափանցիկ ակնարկումներով, հուշող իրադրություններով։ Հերոսները հանդես են գալիս որպես առաջադրված թեզերի արտահայտիչներ, գործողության հանգամանքներն ու հոգեբանական վերապրումները տեղի են տալիս գաղափարական տիրադների առաջ։ Դերասանի խոսքը շատ անգամ ուղղված է լինում ո՛չ թե դիմացինին, այլ հանդիսատեսին, ուր անմիջական արձագանք էին գտնում նրա ակնարկներն ու պաթետիկ-հայրենասիրական կոչերը։ Դրամայի հաջողության գաղտնիքը ոչ թե էսթետիկականն էր, այլ էթիկականը, որքան որ հագուրդ էր տալիս հանդիսատեսի ազգային-հայրենասիրական զգացումներին։ Սրանով պետք է բացատրել Սրապիոն Հեքիմյանի («Արտաշես և Սաթենիկ», «Հմայակ և Աշխեն», «Սամվել» և այլն), Հակոբ Կարենյանի («Շուշանիկ», «Վարդան Մամիկոնյան»), Թովմաս Թերզյանի («Հովսեփ գեղեցիկ», «Մովսես», «Հռիփսիմե») և այլ հեղինակների դրամատիկական երկերի հասարակական հնչումը, դրամաներ, որոնք գրված լինելով օրվա պահանջի թելադրանքով, այժմ միայն գրական-պատմական նշանակություն ունեին։

Ի՞նչ է ուսուցանում պատմա-հայրենասիրական դրաման։ Առաջադրելով ազգային-ազատագրության իդեալը, պատմա-հայրենասիրական դրաման փորձում էր պատմության դասերի մեջ կռահել ազգային դժբախտության չարիքը և պատժել այն, ինչը արժանի է դատապարտման։ Եվ նրանք գտնում են այդ չարիքը ի դեմս դավաճանության ու անմիաբանության։ Այստեղ էլ լուծվում են պատմա-հայրենասիրական դրամայի գաղափարական ու գեղարվեստական հանգույցները։ Իդեալն ու հակաիդեալը ելնում են դեմ-հանդիման, կանխորոշում հերոսների վարքը՝ բարի կամ չար և լուծում հանգույցը քարու հաղթանակով։

Մինչդեռ արևմտահայ դրամատուրգիան կլասիցիզմից ռոմանտիզմին անցնելու և արդիական թեմայի որոնումներով էր զբաղված, արևելահայ թատրոնը իր արվեստն էր կատարելագործում ռեալիստական կատակերգության բնագավառում։

Արևելահայ դրամատուրգիայի զարգացումը, որ զգալի չափով պայմանավորված էր ազգային թատրոնի ստեղծմամբ, նախապես ուղեկցվում է տեսական պայքարով։ Ո՞րն է հայ թատրոնի ու դրամատուրգիայի ուղին՝ պատմական անցյալը մեծարող դասական ողբերգությունը, թե կենցաղային ռեալիստական կատակերգությունը։ Առաջադրված հարցը ազգային պահպանողականները լուծում էին հօգուտ դասական ողբերգության, հեգնելով կենցաղային կատակերգության «գռեհիկ» արվեստը։ Դեմոկրատական հոսանքի գրողներն, ընդհակառակը, պաշտպանում էին ռեալիստական թատրոնի ու դրամատուրգիայի սկզբունքները, այստեղ նշմարելով ժողովրդի առաջադիմության, սոցիալական ու ազգային ինքնագիտակցության խորհուրդը։ Գրական բանավեճն ավարտվում է ռեալիզմի հաղթանակով, որը մեծապես խթանում է ռեալիստական կատակերգության զարգացմանը։ Ասպարեզ են գալիս մի շարք դրամատուրգներ, գրվում, բեմադրվում և հրատարակվում են տասնյակ ողբեր ու կատակերգություններ։ Ն. Ալադաթյանի «Վա՜յ իմ կորած

50 ոսկի», Ն. Փուղինյանի «Հազար թումաննոց կաբա», «Դալալ Ղազո», Գ. Շիրմազանյանի «Իմ նշանածն Արաղն ա», «Ազգային հարսանիք», Միք. Պատկանյանի «Միջի մարդ կամ մոցիքուլ», «Մեկը նշանած մյուսը կին», «Սատանի փայ», «Սուտ բարեկամ», «Քաղքի հանաք», Միք. Տեր-Գրիգորյանի «Պահվներուն խրատ», «Ով է մեղավորը», «Վայ քի իմ վեչեր», «Էս էլ քեզ դալալություն», այլ հեղինակների պիեսները և, վերջապես, Գ. Սունդուկյանի երկերը հիմք են դնում հայկական ռեալիստական դրամատուրգիային։

Առավել դժվար էր ընթանում գեղարվեստական արձակի ձևավորման պրոցեսը։

Նկատելի փաստ է, որ հայ նոր արձակի սկզբնավորումը առավելապես կապվում է վեպի հետ։ Վեպը ավելի շուտ ինքնորոշվեց և ավելի շուտ գտավ ազգային ձևը, քան «փոքր» ժանրի արձակը։ Այստեղ, այստեղ ևս նրկատելի էր որոշ շարժում և ժանրային որոնում։ Մամուլի թերթոններում հետզհետե լույս են տեսնում բարոյախոսական զրույցներ, մանրապատումներ ու կենցաղապատկերներ, որոնք մի կողմից ժանրային խոսքի ձևեր են որոնում, մյուս կողմից գեղարվեստական մտածողությունը մերձեցնում կենցաղագրական ռեալիզմին։ Գրական այս նախափորձերի կողքին երևան են գալիս նովելներ ու պատմվածքներ՝ արդեն ժանրային տարատեսակների տիպաբանական որոշությամբ։

Գեղարվեստական արձակի առավել տիրապետող ժանրը՝ վեպը, արդեն 50—60-ական թվականներին հանդես էր գալիս իր ներքին ճյուղավորումներով՝ սենտիմենտալ, ազգային-ռոմանտիկական և կենցաղային-ռեալիստական։

Սենտիմենտալ վիպագրության ամենաբնորոշ օրինակը Հ. Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» (1851) վեպն է։ Սյուժե ընտրելով դժբախտ սիրո պատմությունը, հեղինակը փորձում է հաստատել ճակատագրի ու նախախնամության գոյությունը։ Միստիցիզմի ու ֆատալիզմի ջատագովության այս հետադիմ հայեցությունը քաղաքական կերպարանք է ստանում նույն հեղինակի մյուս վեպում՝ «Նեռն կամ կատարածն աշխարհի» (1866), ուր մաղձ է թափվում դեպի հասարակապետության դիմորոշված հայ մտավորականության հասցեին և ապոկալիպտիկ թվերի մեջ գուշակում Նեռի ծնունդն ու աշխարհի կործանումը։

Ստ. Ոսկանի «Հայ դյուցազնուհի մը», Խ. Միսաքյանի «Սուիհա», Ա. Հայկունու «Էլիզա» վեպերն այլ ուղի են գծում արևմտահայ վիպագրության մեջ։ Առաջադիմական ռոմանտիզմի այս գրողները նախընտրում են ազգային-քաղաքական թեման, վեպը ծառայեցնում ազգային-ազատագրության գաղափարների արծարծմանը։ Պատկերելով ազգային կացության սարսափները, նրանք մի կողմից քարոզում էին հայրենասիրություն, արթնացնում ազգային արժանապատվության զգացումը և մյուս կողմից փայփայում ազգի ազատագրության ռոմանտիկական երազանքը։

Հայ կնոջ սխրանքի լեգենդանման մի պատումի սյուժեով Ստ. Ոսկանը «Հայ դյուցազնուհի մը» (1859) վեպում պատկերում է պարսկական բռնության սարսափները և միաժամանակ վեհացնում հայ կնոջ ազգային արժանապատվության զգացումն ու հերոսական բնավորությունը, խաչատուր Մի-

սաքյանի «Սոփիա» վեպում դրվատվում է հայկական մտքի ու ձիրքի ստեղծագործ կարողությունը։

Ա. Հայկունու «Էլիզա» (1861) վեպը պատկերում է Թուրքական բռնապետության աղետներին ենթարկված հայ ժողովրդի իրավազուրկ կացությունը և իտալացի հերոսի այլաբանական խոհերում արտահայտում հայրենիքի սերն ու կարոտը, ազատագրության հույսն ու երազանքը։

Արևմտահայ վիպագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Ագապին» («Ագապի հիքեայեսի»), որը ժամանակին արժանացել է Մ. Նալբանդյանի բարձր գնահատականին։ «Ագապին» լույս է տեսել 1851 թվականին՝ հայատառ տաճկերենով[1]։ Թեմա ընտրելով պոլսահայ կյանքում սուր բնույթ ստացած դավանաբանական երկպառակությունը, հեղինակը դատապարտում է այդ իրողությունը և առաջադրում ազգային միասնության գաղափարը։ «Ագապին» հարուստ է ռեալիստական պատկերներով, պոլսահայ արիստոկրատական բուրժուազիայի կենցաղային ու ընտանեկան բարքերի սուր մերկացումներով։

Արևելահայ վիպագրության ժողովրդային ուղին կանխորոշվեց Խ. Աբովյանի «Վերք Հայաստանիի» հայտնությամբ՝ 1858 թվականին։ Նա գրական ուղենիշ հանդիսացավ արևելահայ վիպագրության ապագա երկու թևերի՝ ազատագրական-ռոմանտիկական, որի առաջին նմուշները տվեց Րաֆֆին («Սալբի», «Հարեմ») և կենցաղագրական-ռեալիստական, որը գեղարվեստական արտահայտություն գտավ Մ. Նալբանդյանի «Մինին խոսք, մյուսին հարսն», «Մեռելահարցուկ», Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր», Ղ. Աղայանի «Արություն և Մանվել», Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» ստեղծագործություններում։

Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (1837—1920) «Տեր-Սարգիս» վեպը լույս է տեսել «Հյուսիսափայլ» ամսագրում՝ 1861 թվականին։ Թեև այն անավարտ է (ինչպես հավաստում են փաստերը, վեպի տպագրությունը կասեցվել է պահպանողական տարրերի բանսարկության հետևանքով), բայց առկա հատվածները ցույց են տալիս, որ վեպը սոցիալ-կենցաղային մի իսկական պամֆլետ է հայ հոգևոր դասի հասցեին։ Հեղինակը ստեղծել է Տեր Սարգսի հավաքական տիպը, որը խտացնում է հոգևոր դասի արատավոր գծերը՝ այլասերում, շահասիրություն և մտավոր սահմանափակություն։ Այս անողոք ռեալիստական քննադատությունը նկատի առնելով, Մ. Նալբանդյանը Գ. Տեր-Հովհաննիսյանին անվանեց «հայկական Գոգոլ», ակնկալելով գրական մի «փայլուն գալոցք»։

Մ. Նալբանդյանը թողել է գրական-հրապարակախոսական հարուստ ժառանգություն։ Լինելով դարաշրջանի հայ ամենախոշոր անհատականություններից մեկը և ուղղություն ու ընթացք տալով հայ հասարակական մտքի պատմությանը, նա ուրույն տեղ հատկացրեց իրեն նաև հայ գրականության պատմության մեջ որպես բանաստեղծ, արձակագիր և գրական քննադատ։

Մ. Նալբանդյանի պոեզիան հարուստ է թեմատիկ որոնումներով ու արծարծած մոտիվներով։ Նա գրել է հայրենասիրական բանաստեղծություններ

---

[1] Վեպը հայերեն լույս է տեսել 1953 թ. Գ. Ստեփանյանի թարգմանությամբ։

(«Հիշենք», «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը», «Օշական», «Իտալացի աղջկա երգը» և այլն), երգիծական ոտանավորներում ձաղկել հետամնացությունը, ազգային մեծատունների ու հոգևոր դասի արատավոր վարքագիծը («Հիմարաց ուսման վերա ունեցած կարծիքը», «Ну хорошо», «Ճշմարտություն», «Հայ մարդու հայրենիքը», «Առօրյա աշխարհ», «Աղցմիք», «Կրնդուկ պոչատ...»), ներբողել երևելի անունների հիշատակի մեծությունը («Հենրիկոս Թովմաս Բոքլի հիշատակին», «Ժ. Ժ. Ռուսսոյի հիշատակին»): Սակայն նրա պոեզիայի ամենաարժեքավոր էջերը կազմում են խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունները՝ «Վազող ջրին», «Անցած օրերի», «Մրտածություն», «Լուսին», «Բանաստեղծ», «Ապոլոնին», «Մանկության օրեր» և այլն: Բանաստեղծը ձգտում է իմաստավորել իր գոյությունը մեծ իդեալների որոնումով: Պոետական այս մտորումները փիլիսոփայական ընդհանրացման են հասնում «Ազատություն» բանաստեղծության մեջ, որը հայ պոեզիայի գլուխ-գործոցներից է, ազատության մի իսկական հիմն.

— Ազատությո՞ւն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտի կրկնեմ
Անդադար ազատությո՞ւն...

Նալբանդյանի խոհական-փիլիսոփայական քնարերգությունը մեծ գաղափարների պոեզիա է, ուր ազգային իդեալներն ու անձնական խոհերը բարձրացվում են տրամադրությունների համամարդկային հնչման:

Նշանակալից է Նալբանդյանի դերը հայ գեղարվեստական արձակի ձևավորման պատմության մեջ: «Մինին խոսք, մյուսին հարսն» և «Մեռելահարցուկ» երկերն արևելահայ ռեալիստական վիպագրության առաջին նմուշներն էին:

«Մինին խոսք, մյուսին հարսն» (1857) վիպակի սյուժեն վերցված է Նոր Նախիջևանի կյանքից: Հելսինկիի համալսարանի բնագիտական ֆակուլտետն ավարտած Գևորգ Շահումյանը վերադառնում է հայրենի քաղաքը՝ լուսավորություն տարածելու խանդավառ ցանկությամբ: Սոցիալական արմատական բախումներ չէր ակնկալում գաղափարական երիտասարդը. նա քննադատում է հետամնաց բարքերն ու կենցաղային նախապաշարմունքները և շատ շուտով իրեն ամբողջովին գտնում բախման հանգույցում, որից, սակայն, դուրս չի գալիս հաղթանակով: Ակներև է, որ Նալբանդյանը վեպի կոնֆլիկտին տվել է լուսավորական ռեալիզմին յուրահատուկ բարոյաբանական լուծում, սակայն դա բնավ էլ չի բացառում հայ վիպագրության առաջին նմուշներից մեկի ճանաչողական ու գրական արժեքը:

Թեմատիկ և սյուժետային նորույթ էր Նալբանդյանի «Մեռելահարցուկ» («Հյուսիսափայլ», 1859, № 8—10) վեպը, ուր գրողի ռեալիզմը հասնում է սոցիալական խոր թափանցումների՝ ի հակակշիռ սիրապատում սյուժեների,

որոնք ըստ մի որոշ գրական կարծիքի, պարտադիր են վեպի համար։ Նալբանդյանը վիպական իրականության է դարձնում հասարակական կյանքի բոլորովին նոր բնագավառներ, սյուժեն, կոնֆլիկտը, գաղափարական հանգույցը կառուցում հասարակական հոսանքների և դրանց կրող սոցիալական ուժերի բախման վրա։ Վեպի գաղափարական հերոսը՝ Կոմս Էմմանուելը լուսավորության, առաջադիմության, գիտության ու ճշմարիտ հայրենասիրության ջատագով է, իսկ հակոտնյաները՝ Շաքարյանց, Մանթուխյանց և սրանց հովանավոր բուրժուա Հովնաթանյանցը՝ խավարամտության, սնապաշտության և կույր նախապաշարմունքի կրողներ, որոնց անձնավորությունը, կենցաղն ու ընտանեկան բարքերը ենթարկված են սուր ծաղրի ու քննադատության։

Մ. Նալբանդյանի անվան հետ է կապվում հայ գրական-քննադատության կոչումը։ Հիմնավորելով քննադատության անհրաժեշտությունը և չափանիշ դիտելով այն «որևիցե ազգի լուսավորության աստիճանի», Նալբանդյանը, մասնավորապես, շեշտում էր քննադատության դերը ազգային գրականության զարգացման գործում։ «Այն ազգը,— գրում է նա,— որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն. պատճառ՝ մատենագրությունն առանց կրիտիկայի, միևնույն է, ինչպես մարմինն առանց հոգուս։

Նալբանդյանի քննադատական հայացքների առանցքը ռեալիզմն է։ Առաջադրելով կյանքի ու գրականության փոխադարձ կապի պահանջը, նա գեղարվեստականության չափանիշ էր պարզում ճշմարտությունն ու բնականությունը, գեղեցկի հասկացությունը կապում կյանքի ու բնության հետ։ Էական է դիտել, որ ռեալիզմի գեղագիտության հարցերը Նալբանդյանի քննադատական հայացքներում չեն արտահայտվում սոսկ գործնական նշանակությամբ, այլ ստանում են տեսական-փիլիսոփայական հիմնավորում։ Այս տեսակետից ուշագրավ են հատկապես «Հեգելը և նորա ժամանակը», «Աշխարհաբարի քերականության ներածություն» և «Կրիտիկա «Սոս և Վարդիթերի» աշխատությունները։ «Կրիտիկան» գրական երևույթների գեղագիտական փիլիսոփայական վերլուծության մի բացառիկ օրինակ է և որպես այդպիսին մնում է հայ քննադատական գրականության դասական նմուշներից մեկը։

Առաջին չափածո գործերը Ռափայել Պատկանյանը տպագրել է Գ. Պատկանյանի «Արարատ» շաբաթաթերթում՝ 1850 թ., բայց նրան ազգային բանաստեղծի համբավ բերեց «Արաքսի արտասուքը» (1855) հայրենասիրական լիրիկական ասքը, որը, հիրավի, գծեց արևելահայ ազատագրական-հայրենասիրական պոեզիայի ուղին։

Տակավին 50-ական թվականներին Ռ. Պատկանյանը առաջադրում էր ազգային-մտավոր գործունեության մի ծրագիր, որը բնորոշում է նրա պոեզիայի ոգին և ուղղությունը։ Մերժելով սենտիմենտալ-բարոյախոսական ազգասիրությունը, նա դրան հակադրում է ակտիվ հայրենասիրության մի ըմբռնում, որը պայքարի ու անձնազոհության, զենքի ու արյան հաստատման մեջ էր գտնում ազգի փրկությունը։ Այստեղ իսկ օրինակ պարզելով Գուստավ Ադոլֆի, Վիլհելմ Տելի, Դմիտրի Դոնսկոյի, Պուգաչովի, Ստենկա Ռազինի անունները, Պատկանյանը ստեղծում է հայ ռոմանտիկ բունտարի բա-

նաստեղծական կերպարը՝ հանձին Աղասու և Քյոռ-օղլու, որոնք մարմնավորում են ազատագրական պայքարի իր իդեալը («Աղասու մոր երգը», «Քյոռ-օղլի» և այլն)։

Պատկանյանի հայրենասիրական պոեզիան առաջադրում է մի ուրույն պատմահայեցություն. եթե մի դեպքում պատմական անցյալը հայելի է դառնում անփառունակ ներկան ողբալու համար («Արաքսի արտասուքը»), իսկ մի այլ դեպքում պատմության էջերում կարդում է ազգային դժբախտության չարիքը («Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը), ապա մի երրորդ հետևությամբ, նա մոռացության է կոչում անցյալի հերոսներին և մարտահրավեր կարդում ներկա սերնդին («Հայ պատանին երգում է»)։

Ազատագրական պայքարի ռոմանտիկական մարտակոչը, սակայն, անխառն բանաստեղծական ներշնչում չէր Պատկանյանի պոեզիայում։ Նրան յուրահատուկ էր մի զգոն ու մտրակող հայացք իրականության հանդեպ։ Եվ այստեղ ռոմանտիկական հեգնանքը մի սուր զենք է ներկայանում ծաղրելու իրական-այլանդակը, այն, ինչ դեմ ընթաց է առաջադիմության ու ազատագրության իդեալի կենսագործմանը («Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ», «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ», «Ախեն տանն է», «Հայ և հայություն», «Բարոյավեպ» և այլն)։

Պատկանյանի պոեզիան մի որոշ չափով տուրք տվեց ազգային ռոմանտիզմի վերացական պատրանքին։ «Տարաշխարհիկ» երիտասարդության հայրենասիրական հովերից էր սնվում այս ռոմանտիզմը, երիտասարդություն, որ գաղափարներ էր մտորում և ծրագրեր հորինում «գեղեցիկ հեռվում», առանց խորապես ճանաչելու ժողովրդին, առանց շոշափելու իրական այն ուժերը, որոնք պիտի իրականացնեին ազատագրական պայքարի գործը։

1866 թ. Պատկանյանը տեղափոխվում է Նոր Նախիջևան և նվիրվում դպրոցական-կրթական գործունեության։ Այլևս չէր հնչում բանաստեղծի ազգային-հայրենասիրական քնարը և երբեմնի մարտական բանաստեղծը գրում է արձակ ու չափածո երկեր՝ Նոր Նախիջևանի բարբառով, և հենց նույն միջավայրի կենցաղի ու բարքերի թեմաներով։ Գրողը սուր ծաղրի է ենթարկում տեղական վերնախավի սոցիալական չարարկումները, քննադատում հետամնացությունն ու գավառական սահմանափակությունը, պատում ազգային «բարերարներին» երեսպաշտ դիմակը։ Բարբառային արձակ գործերից ուշագրավ են հատկապես «Ջախուն», «Փորսուղին Ավագը», «Պաց աղպար», «Նոր տուն, հին տուն», «Քուլական մնռելները», «Խոռթլուխ» պատմվածքները։

70-ական թվականների ազգային-քաղաքական իրադարձությունները նոր բեկում առաջացրին Պատկանյանի ստեղծագործական կյանքում։ Ռուս-թուրքական պատերազմը վերստին հուսավառում է հայերի ազատագրության երազանքները։ Դեռ Բուլղարիայի ազատագրության հեռավոր արձագանքները էին լսվում, երբ Պատկանյանը գուշակեց նաև Հայաստանի ազատագրության արշալույսը։ Նրա ռոմանտիկական պոեզիան ամբողջ տարերքով հանձնվում է երկունքի պահի ջղաձիգ ապրումներին։ Մեկ մեկու հաջորդում են մարտական բանաստեղծությունները՝ «Մշեցու հեկեկանքը», «Ղարիբ մշեցի», «Վանեցոց աղոթքը», «Վանեցի մոր երգը», «Վանեցի գեղջուկի տաղը» և այլն։

Հազիվ քսանամյա պատանի էր Սմբատ Շահազիզը, երբ լույս ընծայեց բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Ազատության ժամերը»։

60-ական թվականների ազգային-քաղաքական իրադարձությունները նոր լիցք հաղորդեցին Շահազիզի բանաստեղծական ներշնչումներին։ «Հյուսիսափայլի» գաղափարական համախոհը միանգամից գտնում է մի պատրաստի աշխարհայացք և իր պոեզիան վերածվում ազգային-քաղաքական մոտիվների առանցքի վրա։ «Նախ քաղաքացի և ապա պոետ»՝ ահա նրա ռոմանտիզմի գեղագիտական հավատամքը։ Նա արդեն գաղափարի երգիչ է, սերն ու վայելքն այլևս չեն հրապուրում նրան, նրա էությունը համակված է ազգի ազատագրության և մարդկության բարօրության ռոմանտիկական վեհությամբ։ Քաղաքացի բանաստեղծն իր քնարը նվիրաբերում է «ազգի պիտույքին», երգում հայրենի սերը, մեծարում նրա պատմական հերոսությունը և հուսավառում ազատագրական պայքարի նրա իղձերը։ «Ազգային վիճակ», «Ինձ մի սիրիր», «Խորհրդածություն բանաստեղծի», «Բռնավոր սուլթան», «Եղվիտներ և Զեյթուն», «Պոետ, նյութապաշտ և քաղաքացի», «Իտալուհիք և իտալացիք» բանաստեղծություններով, ինչպես և «Վևոնի վիշտը» պոեմով Շահազիզը անփոխարինելի տեղ նվաճեց XIX դարի հայ ազատագրական-ռոմանտիկական պոեզիայի պատմության մեջ։ Շահազիզը ստեղծել է նաև մի քանի քնարական երգեր, որոնցից «Երազը» («Ես լսեցի մի անուշ ձայն...») մինչև այսօր էլ հուզում է իր երգային հմայքով։

Ազգային-ազատագրության հարցում անմասն չմնալով ժամանակի հեղափոխական մտայնությունից, Շահազիզը, սակայն, սոցիալ-քաղաքական իր ընդհանուր հայեցությամբ մնաց լիբերալ-լուսավորչության սահմաններում։ Դրա ցայտուն գեղարվեստական արտահայտությունն էր «Վևոնի վիշտը» (1864) պոեմը, որն իբրև չափածո վեպ ժանրային նորույթ էր հայ գրականության մեջ և որոշակիորեն կրում էր Բայրոնի ու Պուշկինի գրական աղդեցությունը։

Պոեմի ռոմանտիկ հերոսը՝ հայրենի եզերքից վաղուց հեռացած, ժամանակի առաջադիմության և գիտության ոգուն հաղորդակից Վևոնը, ազգային գիտակցությամբ առնված, մեկնում է հայրենի եզերքը, իր կյանքը նվիրաբերելու թշվառ հայրենիքին, լուսավորությամբ փրկելու իր տառապած ու հարստահարված ազգը։ Նա մի յուրատեսակ Չայլդ Հարոլդ էր, սակայն ոչ համաշխարհային թախծի տրամադրությամբ և դեպի էկզոտիկ եզերք ռոմանտիկական փախուստով, այլ մի անհատ, որ «հայրենի վիշտն» է կրում և ձգտում հայրենիք՝ փարատելու նրա տառապանքը՝ դարի առաջադիմության լույսով։

«Վևոնի վիշտը» Շահազիզի գեղարվեստական հավատամքի ամփոփումը հանդիսացավ։ Հետագայում նա հանդես եկավ «Հրապարակախոս ձայն» (1881), «Ամառային նամակներ» (1897) և այլ հրապարակախոսական երկերով, գրեց բանաստեղծություններ, որոնք, սակայն, էական երանգներ չբերեցին նրա հայեցության մեջ և նրա անունը կապված մնաց 60-ական թվականների գրական շարժման հետ։

Գաբրիել Սունդուկյանը հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիրն է։ Ծուրացնելով ռուս և եվրոպական դրամատուրգիայի ավանդները,

նա հայ ռեալիստական դրամատուրգիան բարձրացրեց սոցիալական մեծ ընդհանրացումների և գեղարվեստական կատարելության։ Սունդուկյանը ստեղծեց գեղարվեստական մնայուն կերպարների մի ամբողջ շարք, որոնք նախօրինակ հանդիսացան հայ քննադատական ռեալիզմի ապագա գրական տիպերի համար։ «Խաթաբալա», «Էլի մեկ գոհ», «Քանդած օջախ», «Պեպո» երկերով Սունդուկյանը հայկական կատակերգությունը դուրս բերեց կենցաղային պատկերների նեղ ոլորտից և ազգային թեման բարձրացրեց համամարդկային հնչման։ Արտաքուստ միայն կատակերգական՝ նրա պիեսները սոցիալական դրամաներ են՝ ուժեղ բախումներով, հոգեբանական լուծումներով ու բարդ կոլիզիաներով։ Ռեալիստորեն արտացոլելով բուրժուականացող քաղաքի սոցիալական ու բարոյական այլափոխումները, Սունդուկյանը վեր է հանել հայ առևտրական բուրժուազիայի գաղափարազրկությունը, շահասիրությունն ու սոցիալական էգոիզմը, մտավոր սահմանափակությունն ու կենցաղի ճղճիմությունը, ուր ամեն մի բարձր զգացմունք տրորվում է շահախնդրության մոլուցքի մեջ։ Դրամատուրգը խորապես համակրել ու կարեկցել է անմարդկային այդ հարաբերությունների անմեղ զոհերին։ Սունդուկյանի պիեսները ցուցադրում են հայկական առևտրական բուրժուազիայի սոցիալական կենսագրությունը։



Սմբատ Շահազիզ

Սունդուկյանի ստեղծագործական խիզախումը «Պեպոն» էր՝ հայ դրամատուրգիայի գլուխ-գործոցը։ Անփոխարինելի հմայքով օժտված ժողովրդական հերոսի հոյակապ կերպարը, համարձակ սոցիալական կոլիզիան, բեմական խոսքի շեքսպիրյան լիությունը, շեշտուն ու իմաստավոր մենախոսությունը, գործողությունների դրամատիկական ընթացքը գեղարվեստական արտակարգ հմայք են տալիս երկին։ Բուրժուազիային և աշխատավորին կանգնեցնելով դեմ առ դեմ, հեղինակը իրար է հակադրում երկու աշխարհ, ուր ամենազուրկ աշխատավորը վեհանում է իր առաքինությամբ, արժանապատվությամբ, հոգու մաքրությամբ և խիզախ ու հանդուգն ընդվզումով փըշրում «վերինն» հասարակության պայմանական պատրանքները։

Սունդուկյանը հայ գրականությանը տվեց մնայուն գեղարվեստական մի քանի տիպեր՝ Պեպո, Զամբախով, Ջիմզիմով և ուրիշներ. նրա պիեսները շուրջ հարյուր տարի զբաղեցնում են հայ թատերաբեմը։

Մկրտիչ Պեշիկթաշլյանը գրական-հասարակական ճանաչում գտավ որպես դրամատուրգ։ Նա հեղինակել է մի քանի պատմական ողբերգություններ՝

«Կոռնակ», «Արշակ Երկրորդ», «Վահե», «Վահան Մամիկոնյան», որոնք ժամանակին բեմադրվում էին պոլսահայ թատրոններում և բուռն ընդունելության արժանանում։ Արձագանքելով ազգային-ազատագրական շարժման իրադարձություններին, Պեշիկթաշլյանն իր ողբերգություններում փառաբանում է հայրենասիրությունը, պատմական Հայաստանի հերոսականությունը և, ի ցույց դնելով դավաճանությունն ու երկպառակությունն իբրև ազգային դժբախտության նախապատճառ, դատապարտում ու պատժում է այն որպես չարիք։ Ժանրի ասպարեզում Պեշիկթաշլյանի բերած նորույթն այն է, որ նա հրաժարվեց դրաբարից ու բեմը տրամադրեց հանդիսատեսին հասկանալի ընտիր աշխարհաբարին և, խախտելով դասական ողբերգության սկզբունքները, պատմա-հայրենասիրական դրաման մերձեցրեց ռոմանտիզմին, լայն տեղ տալով հերոսների զգացական-հոգեբանական ապրումների բացահայտմանը։ Որքան էլ Պեշիկթաշլյանի դրամաները ժամանակին մեծ արձագանք էին գտնում, այնուամենայնիվ, այժմ դրանք միայն պատմական նշանակություն ունեն։ Նրա տաղանդը մնայուն արժեքներ ստեղծեց քնարական բանաստեղծության բնագավառում. նա դասվեց հայ գրականության դասականների շարքը։

Պեշիկթաշլյանի պոեզիան ռոմանտիզմի և դասականության մի ներդաշնակ ձուլվածք է, որն ի հայտ է բերում արվեստի կատարելության ամբողջ հմայքը։ Պեշիկթաշլյանի գրական խառնվածքը չի հանդուրժում ուժեղ պոռթկումներ, կրքերի հախուռն տարերք, փիլիսոփայական առեղծվածների ներխուզ որոնումներ. նա հանդարտ է, ներդաշնակ և զգայուն։ Պեշիկթաշլյանի պոեզիայի ամենասուրբ և փայփայած գաղափարը հայրենիքն է և հայրենասիրությունը։ Նա ոգեշնչվել է քաջագործ նախնիների հերոսությամբ («Քերթողական ոգին Հայաստանու ի քուն», «Դիւցազունք հայոց», «Զբոսանք Արտաշեսի առաջնոյ», «Հրաւեր ի մարտ Խոսրովու մեծի», «Ի նահատակութիւն Վարդանանց» և այլն), վերապրել պատմական Հայաստանի կործանման էլեգիան, հուսավառվել ազգային զարթոնքի ռոմանտիկ հովերով, բայց ի վերջո, փշրված հույսերով անձնատուր եղել տխուր մահերգությանը։

Պեշիկթաշլյանի հայրենասիրական պոեզիայի լավագույն նմուշներից են «Մերն Վանա», «Ողբայր եմք մեք», «Գարուն», «Ոհ, ինչ անուշ և ինչպես գով...» և զեյթունյան շարքի բանաստեղծությունները՝ «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին»։ Սրբագործելով գեղեցիկ զգացմունքով փայփայված քնարական հայրենիքը, որպես անփոխարինելի կարոտ, հոգու հանգրվան և մասունք դարձած հիշատակներ, բանաստեղծը անմահության է փառապսակում Զեյթունի հերոսներին, որոնք նահատակությամբ հուսավառեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հավատը.

Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Զի չէ մեռած հայոց կրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծավ վրեժ յարեան վտակ.

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն։

Պեշիկթաշլյանը հայ պոեզիան հարստացրեց սիրո և բնության բանաստեղծական գոհարներով, որոնք աչքի են ընկնում ձևի կատարելությամբ, ներդաշնակ ռիթմով ու երաժշտականությամբ։ «Թուլլ տուր», «Քնար և շիրիմ», «Աշուն», «Ան զևփյուռն Ալեմտաղի», «Գացեք, իմ տաղք...», և այլ քնարական երգերում բանաստեղծը հրմայում է սիրո զգացմունքի թրթռումներով, բնության նուրբ ու խորհրդավոր շարժումների զգացողությամբ։



Մկրտիչ Պեշիկթաշլյան

Պետրոս Դուրյանը գրել սկսել է վաղ պատանության հասակից և ապրելով հազիվ քսան տարի, թողել է գեղարվեստական մի ժառանգություն՝ դրամատուրգիայի և պոեզիայի ասպարեզում, որը զբաղեցնում է հայ դասական գրականության փայլուն էջերից մեկը։

Դուրյանի բանաստեղծական քնարին չվիճակվեց իր նախորդների ռոմանտիկ-հայրենասիրական ոգեշնչումը. հույսի ու հավատի ժամանակներն անցել էին։ Ոչ ոք այնպես չվերապրեց քաղաքական ռեակցիայի մռայլը, ինչպես Դուրյանը։ «Նոր սև օրեր», այսպես նրան ներկայացավ արևմտահայության իրական կացությունը։ Բանաստեղծը մի վերջին ճիգ ևս արեց, փորձեց վերապրել հույսերի երբեմնի ռոմանտիկ ոգևորությունը, ճչաց «ահագին ցավի» ազգային բողոքը, «զենքին դեմ զենք» մարտակոչեց, խաղաղվեց «սիրո և միության» գեղեցիկ պատրանքով, բայց դրանք այնպես էլ մնացին որպես անձնական արձագանքներ։ Ռոմանտիկ բանաստեղծը մեն-մենակ մնաց տխրամած հայրենիքի հետ և փարեց նրան սիրո ու գորովանքի անձնականորեն այնքան մոտ ու հուզաթաթավ նվիրումներով («Ողջ աս Հայաստան», «Իմ ցավը»)։

Ինքնամոռաց ու թրթռուն ազնվությամբ բանաստեղծը հայրենիքը ձուլեց իր էության հետ, որպեսզի այն չաղարտի որևէ այլ գայթակղությամբ։ Նա պատրաստ է նոճի դառնալ և շուք տալ հայրենիքին, արցունք լինել և ցողել հայրենի դամբանները, հուր դառնալ և ազատություն տալ հային, պատրույգ լինել և լուսավորել հայրենիքի փառքը, արյուն դառնալ և կարմիր ներկել հայրենի սևը, գերեզմանում իսկ քնարի ձայն լինել և երգել հայրենի երգը։ Ոչ մի բան այնքան ցավալի չէ բանաստեղծին, որքան հեռանալ կյանքից՝ առանց մի շյուղ դնելու հայրենիքի օգտին.

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ.
Ջոգնած անոր մեռնի՛լ աննշան.
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցավ ինձ համար։

Դուրյանը վիթխարի նորարար է հայ պոեզիայի պատմության մեջ. հայ բանաստեղծական արվեստը նա բարձրացրեց ձևի կատարելության և համապարփակ ընդգրկումների։ «Հանճարեղ անհատի» ռոմանտիկական մեծությամբ նա ակնկալեց աշխարհն իր ամբողջ բարդությամբ. զգացմունքների, խոհերի մի անհուն աշխարհ, որն ավելի լայն է, ավելի տարերքոտ, ավելի դրամատիկ, քան երբևէ ընդգրկել է հայ պոեզիան։ Դուրյանը խախտեց լիրիկական մոտիվի միագծությունը և բանաստեղծությունը հարստացրեց հույզերի լիությամբ, տրամադրությունների բարդ համադրությամբ։ «Սիրել», «Դրժել», «Լճակ», «Իմ մահը», «Տրտունջք» և այլ բանաստեղծություններ համապարփակ ընդգրկումների երկեր են, որոնք ընդլայնում են հայ քնարական պոեզիայի գեղարվեստական հնարավորությունները։ Դուրյանը հայ պոեզիային հաղորդեց փիլիսոփայական խորություն, զգացմունքների մեծությունը հանգեցնելով տիեզերական մասշտաբների և առեղծվածային խորհուրդների։ Նրա ռոմանտիկական «ես»-ը իր մեջ բեկեց մարդկության ճակատագրի տիեզերական կնճիռը. անձնական ողբերգությունն ու ազգային վիշտը բարձրացրեց համաշխարհային թախծի։ Եթե մի կողմից նրա «ռոմանտիկ պանթեիզմը» միտում էր լուծել ոգու և գոյի, կյանքի ու մահվան, ոչնչի ու հավերժության, երկնքի ու երկրի գաղտնիքը, այստեղ իսկ ընդվզում տիեզերական անարդարության դեմ և հեգնելով արարչագործին՝ ժխտում է հանդերձյալը և անմահություն գտնում «մեկ շյուղի» հավերժության մեջ, ապա, մյուս կողմից, կանգնում է իդեալի ու իրականության խզման հանգույցում և ողբում տրոհված մարդկության ճակատագիրը։ Եվ ինչքան էլ նրա պոեզիայում իդեալը քրթռում է մի հանգչող նրբությամբ ու պարուրող քաղցրությամբ, որքան էլ բանաստեղծը ռոմանտիկորեն վեհացնում է սերը, փորձում խաղաղ ու ներդաշնակ բնության մեջ փարատել իր խռովքը, այնուամենայնիվ, այդ ամենը հնչում է որպես պատրանք։ Ոչ մի բանով նա չի կարողանում լցնել իդեալի և իրականության միջև բացված ճեղքը, համեզրել նպատակը ձգտման հետ, սերը՝ վայելքին, գեղեցիկը՝ զգացումին։

Պ. Դուրյանին ուրույն տեղ է պատկանում հայ դրամատուրգիայի պատմության մեջ։ Նա թողել է թատերական մի շարք երկեր՝ «Վարդ և Շուշան», «Սև հողեր», «Ասպատակություն պարսից ի Հայս», «Աննկումն Արշակունի հարստության», «Թատրոն կամ թշվառներ», որոնք նոր վերածևումներ են կատարում ժանրի ասպարեզում։ Առաջին նորամուծությունն այն էր, որ Դուրյանը պատմական դրաման ենթարկեց ռոմանտիկական արվեստի սկզբունքներին։ Դուրյանի պատմահայեցողությունը շատ կողմերով վերանայում է գեղարվեստական նախորդ չափանիշները։ Ամենից առաջ նա ի հայտ բերեց նյութի ազատ տնօրինում և դրամայի սյուժեն հարստացրեց կենցաղի ու անձնական կյանքի պատկերներով։ Նրա պատմական դրամայի իդեալ-հերոսը ոչ թե արքան է կամ իշխանը, այլ ժողովրդի մարդը՝ իր ճշմարիտ հայրենասիրու-

յամբ և անձնազոհ քաղաքացիությամբ։ Այստեղ էլ Դուրյանը ժողովրդական կյանքի փիլիսոփայությունը հակադրում է վերին պալատներին, երջանկությյան, առաքինության խորհուրդը խլում պալատական կյանքի աղտեղությունից և հատկացնում գեղջկական հյուղակի մաքրությանը։ «... Ի՞նչ է թագը, Յուշուն ատաղ մը, ի՞նչ է ծիրանին, ժողովրդական արյամբ կարմրած պատանքի կտոր մը, զոր դարձյալ ժողովուրդը կը կարկտե. ի՞նչ է պալատը, վիրապ մը, ուր մարդիկ շղթա և տապար կկռեն իրենց նմանները հարվածելու. ի՞նչ է թագավորը, թագ կրող չոր գանգ մը, որ մութին մեջ կը հարվածե», «Եվ միթե աշխարհի վրա կա թագ մը, որ արյունոտ չըլլա»,—սոցիալական հակասությունների, տերերի ու հպատակների հակադրության, պալատական բարքերի այսպիսի սուր մերկացումը նոր երևույթ էր հայ պատմա-գեղարվեստական գրականության մեջ։ Դուրյանը առաջադրում էր բոլորովին նոր ու «դաժան» պատմահայեցություն. նա անողոքաբար պատռում է պատմության գունազարդված քողը և շքեղ վարագույրների հետև տեսնում բարքերի այլասերում, ճղճիմ շահասիրություն, խարդավանք, բանսարկություն, ոճիրներ ու դավեր։ Այս էլ Դուրյանը համարում է հայոց պատմական դժբախտության չարիքներից մեկը։ Սա արդեն նշմարումն է ազգային-ազատագրական պայքարի ժողովրդական այն ուղու, որին պիտի հանդեր հետագա տասնամյակների ռոմանտիկական պատմահայեցությունը։



Պետրոս Դուրյան

Հայ դրամատուրգիայի պատմության մեջ Դուրյանի բերած նորույթը նաև այն է, որ ռոմանտիկական դրաման ազատեց պատմական թեմայի մենաշնորհից և զբաղեցրեց արդիական-սոցիալական խնդիրների արծարծումով։ «Թատրոն կամ Թշվառներն» այս իմաստով նոր խոսք էր արևմտահայ դրամայում։ Սյուժեի ողբերգական լուծումը, հերոսների կործանումը մի ուժգին սոցիալական բողոք էր կյանքի անարդարությունների դեմ, մարդու և մարդկայնության պահպանության հումանիստական բաղձանք։

2. ԹԱՏՐՈՆ

XIX դարի առաջին կեսին աշխուժացում ապրեց թատերական արվեստը։ Ամենուր կազմակերպվող սիրողական ներկայացումները հնարավոր դարձրին հայ նոր՝ արևելահայ և արևմտահայ պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծումը։ Վենետիկի ս. Ղազարի վանքում, սկսած 1770-ական թվականներից, աշակերտական ներկայացումներ են տրվել։

1790-ական թվականների կեսերից Մխիթարյանների խաղացանկում նկատելի փոփոխություն է կատարվում։ Մի ամբողջ տասնամյակ գերազանցապես ցուցադրվում են հայ պատմական անցյալը ներկայացնող պիեսներ՝ «Վահան Մամիկոնյանը» (1792), «Ղևոնդյանց նահատակությունը» (1795), «Մեծն Վարդան Մամիկոնյան» (1799), «Հայկ դյուցազն» (1805) և այլն։ Այդ շրջանում ընդամենը երկու ողբերգության ենք հանդիպում, որոնք ունեն կրոնական բովանդակություն՝ «Տրդատա հաղթությունը» և «Վաճառումն Հովսեփա»։ Բնորոշ է, որ «Վարդանաց պատերազմը» 1795 թ. ներկայացվում է որպես «Ղևոնդյաց նահատակություն»։ Նույն դրվագը 1799 թ. ներկայացվում էր «Մեծն Վարդան Մամիկոնյան»։ Վարդան զորավարի բեմհանումը շրջադարձ էր, որը հետագայում այնքան ամուր պատվանդան ստեղծեց հայ բեմում ու գրականության մեջ։

1820—1860 ԹԹ. բեմադրված պիեսների մեջ պատմական ողբերգություններին զուգընթաց նկատում ենք հակում դեպի կենցաղային կատակերգությունը՝ «Ծաղրածու Յուսուֆ», «Ճիմիճի Ահմեդի նկարագիրը», «Ավրամ հրեա», «Վաճառական Մոշոն» և այլն, որոնց մեջ քննադատվում են հասարակական չարիք հանդիսացող երևույթները։ Ուշագրավ բացառություն է «Խելոք Դավթին գյուղերու հարկերը թեթևացնելու համար մայրաքաղաք երթալը և հոն, այն է Պոլիս, տխրահռչակ հայի մի հնարամտությամբը խաբվիլը»։ Այս պիեսը ունի սոցիալական բովանդակություն։

Այս շրջանին է վերաբերում Մոլիերի դրամատուրգիայի մուտքը հայ իրականություն՝ Մխիթարյանների միջոցով։ 1812 թ. բեմադրվում է «Երևակայական հիվանդը», իսկ հաջորդ ձմռանը՝ «Ակամա բժիշկը», երկուսն էլ փոխադրություն Արսեն Բագրատունու[8]։

Դեռևս 1810-ական թվականներից Մխիթարյանները ներկայացումներ են կազմակերպում Կ. Պոլսի իրենց դպրոցներում։

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում նրա հիմնադրման առաջին տարիներից կազմակերպվում են աշակերտական ներկայացումներ, այդ թվում Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը»։ Թատերական արվեստը դպրոցական պատերից դուրս բերելու առաջին պատիվը արևելահայ կյանքում պատկանում է Գալուստ Շիրմազանյանին, որը 1840-ական թվականների կեսերից կենցաղային հարցեր շոշափող կատակերգություններ է բեմադրել, այդ թվում՝ Շիրմազանյանի «Ինչ ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի» պիեսը[9]։

1846 թ. Կ. Պոլսում հիմնվում է Արամյան թատերական ընկերությունը, որը գործում է մոտ քսան տարի, ներկայացումներ տալով ոչ միայն Թուրքիայում, այլև Կովկասում (Թիֆլիս, Էջմիածին, Երևան, Նախիջևան)։ Արամյան խումբը գործում էր կանոնավոր ռեֆիկով, ուներ թատերական շենք, բեմական հարմարություններ, անգամ նկարիչ-ձևավորող։ Թատերախումբը զգալի տեղ էր հատկացնում պատմական անցյալը ցուցադրող պիեսների («Թագավորացն հայոց»)։ Ուշագրավ է, որ նրա խաղացանկում եղել է Շիլլերի «Ավա-

---

8 Հ. Բ. Սարգսյան, Երկհարյուրամյա գրական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905։

9 «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», № 2։

զակների» սյուժեով գրված «Ռոբերտ ավազակապետ» պիեսը։ Իր ներկայացումները տալով գերազանցապես բաց հրապարակներում պատրաստված մեծ տաղավարներում, իսկ Թիֆլիսում՝ բազմահազար հանդիսականների բավարարող փայտաշեն թատրոնում, Արամյան խումբը նպաստել է ժողովրդական լայն զանգվածներին թատերական արվեստին հաղորդակից դարձնելու գործին։

1858 թ. հունվար ամսին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները բեմադրում են իրենց ընկերներից Հ. Գուրգենբեկյանի «Հաջի Սուլեյման» վոդևիլը, որի նյութը վերցված էր Թիֆլիսի չարչիների կյանքից։ Մեկ տարի անց նույն ուսանողները ներկայացնում են Նիկ. Ալադաթյանի «Վայ իմ կորած հիսուն ոսկին» վոդևիլը։ Այն դիտել են Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Մ. Մսերյանցը և ուրիշներ, որոնք առաջին անգամ արևելահայ մամուլում գրախոսականներ են գրել այդ ներկայացման մասին։

Այդ տարվա հունվար ամսից վերսկսվում են թատերական երեկույթները Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Հակոբ Կարենյանը դպրոցի դահլիճում բեմադրում է իր «Շուշանիկ» պատմական ողբերգությունը։ Ներսիսյան դպրոցի օրինակով թատերական երեկույթներ են կազմակերպում գիմնազիայի հայ աշակերտները, ցուցադրելով Թիֆլիսի բարբառով գրված կենցաղային պիեսներ, ինչպես «Հայոց լեզու կամ Պետրոս և Բարբարե»[10]։

Մամուլում սկսվում է պայքար գրական ուղղությունների, թատրոնի դերի վերաբերյալ։

Գրական հին ուղղությունը խստորեն քննադատում է կենցաղային դրամատուրգիայի ջատագով Միքայել Պատկանյանը։ «Մեղու Հայաստանի» թերթում նա գրում է մի «Կրիտիկա»՝ «Շուշանիկի» մասին և, օգտագործելով Բելինսկու գրականագիտական հայացքները, փորձում է հիմնավորել թատրոնի հասարակական դերը, առաջ է քաշում իրական կյանքի արտացոլման անհրաժեշտությունը դրամատուրգիայում։

Հ. Կարենյանցը պատասխանում է Միք. Պատկանյանին։ Վերջինս նորից է հանդես գալիս մամուլում, և այդպիսով բորբոքվում է ուժեղ պայքար իր դարն ապրած կլասիցիստական ուղղության և հայ թատրոնի վերելքն ազդարարող նոր ռեալիստական ուղղության միջև։

Միք. Պատկանյանը չի բավարարվում տեսական պայքարով։ Նա գրում է «Միջի մարդ կամ մոցիքուլ», «Մեկը նշանած, մյուսը կին» վոդևիլները, որոնք հաջողությամբ բեմադրվում են նրա կազմակերպած տնային թատրոնում։ Պահպանողական տարրերը Հ. Կարենյանի գլխավորությամբ վայնասուն են բարձրացնում, մեղադրելով Պատկանյանին, որ ցուցադրելով Թիֆլիսի հարուստ հայերի ընտանիքներում կատարվող դեպքերը, վարկաբեկում է «երևելի» մարդկանց։ Հասարակությունը ջերմ վերաբերմունք է ցույց տալիս դեպի կենցաղային ռեալիստական դրամատուրգիան։

Մոսկվայում և Թիֆլիսում կազմակերպված ներկայացումները հետա-

---

10 Աւրամ Երեմյան, *Ռուսահայ թատրոնի պատմությունը*, Ա հատոր, Վենետիկ, 1933, էջ 187—391։

քրքրություն են ստեղծում թատրոնի շուրջը։ Արևելահայ մամուլը արձագանքում է թատրոնի հետ կապված հարցերին, իր էջերում պարբերաբար հրատարակելով գրախոսականներ՝ ընթացիկ ներկայացումների մասին, բանավիճային հոդվածներ՝ բեմական ուղղությունների վերաբերյալ։ «Հյուսիսափայլ», «Ծռաքաղ», «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում լույս տեսած նման հոդվածները առատ նյութ են տալիս արևելահայ թատրոնի պատմության վաղ շրջանի մասին։

Վերոհիշյալ ներկայացումների ընթացքում աճում են դերասանական ուժերը, որոնք 1863 թ. ակզբներին Թիֆլիսում ստեղծում են արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնը՝ Պռոշյանի և ուրիշների ջանքերով։ Խումբը, նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքից հետո, նույն թվականի հունվար ամսին բեմադրում է Խ. Գալֆայանի «Արշակ Բ» ողբերգությունը, որը արևմտահայերենից արևելահայերենի է փոխադրում Պ. Պռոշյանը։

«Արշակ Բ» մեծ հաջողություն է գտնում և հասարակության պահանջով կրկնվում երկրորդ անգամ։ Այնուհետև խումբը տալիս է կանոնավոր ներկայացումներ, բեմադրում է պատմական ողբերգություններ, կատակերգություններ և վոդևիլներ։

Այս թատերախմբի գործունեության ընթացքում բեմ են բարձրանում նաև կանայք։ Առաջին խիզախ քայլը կատարում է Սոփիա Շահինյանը, որին հետևում են Սաթենիկ Ջմշկյանը և Քեթևան Արամյանը։

Արևելահայ պրոֆեսիոնալ թատերախմբի հիմնական ուժեր են դառնում Միհրդատ Ամրիկյանը, Գ. Ջմշկյանը, Արտաշես Սուքիասյանը և ուրիշներ։

Խմբի ավելի խոստումնալից ու տաղանդավոր ներկայացուցիչներից Գ. Ջմշկյանը 1860-ական թվականների կեսերից իր ձեռքն է վերցնում թատերական գործի ղեկավարությունը և դրամատուրգ Գ. Սունդուկյանի հետ միասին թատրոնը բարձրացնում մի նոր աստիճանի, ապահովում ռեալիզմի հաղթանակը։ Պատմական ողբերգությունները աստիճանաբար իրենց տեղը զիջում են կենցաղային դրամատուրգիային։ Հայ բեմում երևում են ժամանակի հասարակական կյանքը ներկայացնող տարբեր դասակարգերի պատկանող մարդիկ՝ առևտրականներ, վաշխառուներ, նաև իրենց սեփական աշխատանքով ապրող ազնիվ մարդիկ։ Մերկացվում են փողի վրա խարսխված բուրժուական խավի ընտանեկան այլանդակ ու ապականված բարքերը, կեղծիքը, խաբեությունը։

Եթե Սունդուկյանը արևելահայ թատրոնի նոր շրջադարձն էր ավետում գեղարվեստական խոշոր արժանիքներ ունեցող իր դրամատուրգիայով, ապա Գ. Ջմշկյանը նույն այդ դերը կատարում էր տաղանդավոր դերակատարումներով և թատերական գործի կազմակերպման բնագավառում հանդես բերած նոանդով։ Նրա կերտած Պեպոն («Պեպո»), Մասիսյանը («Խաթաբալա»), Միքայելը («Էլի մեկ ղոհ») և այլն տասնամյակներ մնացել են անգերազանցելի։ Գ. Ջմշկյանը Սունդուկյանի կերպարների բացահայտման, ըմբռնման իր վարպետությամբ ստեղծել է մի դպրոց, ուր հետագա տասնամյակներում սովորել են շատ դերասաններ։

Գ. Ջմշկյանը համառ ու հետևողական պայքար է մղել հայ թատրոնը կլասիցիզմի կաղապարներից ազատելու, անարվեստ մելոդրամաների փո-

խարեն հայկական բեմում ռուս դասական դրամատուրգների պիեսները, արևմտաեվրոպական ականավոր հեղինակների ստեղծագործությունները բեմադրելու գործում։ Մեծ է նրա դերը թատրոնը ժողովրդական զանգվածներին մոտեցնելու, բեմը ժողովրդին ծառայեցնելու ուղղությամբ։ Նա, առաջինը պրևնելահայ իրականության մեջ, ներկայացումներ է կազմակերպել գավառներում, շրջել մի շարք քաղաքներում, եղել Շուշում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլուր։

Դրեթե նույն տարիներին է համընկնում Ռուսաստանի գավառական մի քանի քաղաքների հայ գաղթօջախների հաղորդակցումը թատերական արվեստին, Թումաս և Պայծառ Ֆասուլաճյանների ջանքերով։ Ֆասուլաճյան ամուսինները 1866 թ. ամռանը Թիֆլիսից դուրս են գալիս շրջագայության, 1867 թ. հասնում են Մոզդոկ, կազմակերպում ժամանակավոր թատրոն և տեղի սիրողական ուժերի մասնակցությամբ տալիս հայերեն ներկայացումներ։ Մասնավորապես երիտասարդությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերել դեպի թատրոնը։ Ժամանակի մամուլը անդրադարձել է այդ փաստին, հիշատակել մի քանի երիտասարդների անուններ, որոնք մասնակցել են ներկայացումներին։

Մոզդոկից հետո խումբը մեկնել է Ղզլար, այնտեղից՝ Աստրախան, նոր Նախիջևան, ներկայացնելով պատմական ողբերգություններ, կենցաղային պիեսներ, նաև արևմտաեվրոպական և ռուսական դասական դրամատուրգիայից նմուշներ, ինչպես Մոլիերի մի քանի կատակերգությունները։

1850-ական թվականների կեսերից դպրոցական ներկայացումների հիմքի վրա ստեղծվում են Պոլսի թաղային թատրոնները՝ Խասգյուղում, Բերայում, Օրթագյուղում և այլուր։ Սրանք գերազանցապես կազմված էին սիրողներից և բեմադրում էին պատմական ողբերգություններ։ Օրթագյուղի թատրոնը ղեկավարում էր բանաստեղծ և դրամատուրգ Մկրտիչ Պեշիկթաշլյանը։ 1856 թ. նա բեմադրում է ինքնուրույն և թարգմանական պիեսներ, այդ թվում իր «Արշակ Բ», «Կոռնակ», որոնց անդրադարձել է մամուլը։

Նույն ժամանակամիջոցում թատերական աշխույժ գործունեություն է ծավալում դրամատուրգ Սրապիոն Հեքիմյանը։ Բերա կենտրոնական թաղամասում այդ թվականներին դեռևս արգելված էր հայերեն ներկայացումներ տալը, ուստի Հեքիմյանը նախ բեմադրում է թարգմանական մի քանի պիես՝ թուրքերեն լեզվով, նաև իր ողբերգություններից մեկը՝ իտալերեն, սակայն 1859 թ. լրջորեն զբաղվում է հայ ազգային թատրոն հիմնելու հարցով։ Մեկ տարի անց Բերայում տրվում են առաջին ներկայացումները հայերեն լեզվով, իսկ 1861 թ. դեկտեմբերի 14-ին հանդիսավոր պայմաններում բացվում է հայ ազգային «Արևելյան թատրոնի» վարագույրը։ Դա ըստ էության առաջին պրոֆեսիոնալ թատերախումբն էր Մերձավոր Արևելքում և իր գոյության մի քանի տարիների ընթացքում խոշոր դեր կատարեց պոլսահայ առաջավոր երիտասարդության գաղափարական դաստիարակության գործում։

Խանդավառ այդ օրերին, դեպքերի բերումով, Պոլսում է գտնվել Մ. Նալբանդյանը։ Նա ներկա է լինում թատրոնի հանդիսավոր բացմանը և արտասանում ծրագրային մի ճառ, որը տպագրվում է «Մեղուս» պարբերականում՝ «Ազգային թատրոն Պոլսի մեջ» վերնագրով։ Նալբանդյանը այս ճառում ավե-

լի հանգամանորեն, քան Մոսկվայի ուսանողների առաջին ներկայացման առթիվ գրած նկատողության մեջ, քննության է առնում թատրոնի հեռանկարի հետ կապված հարցերը և գծում հայ թատրոնի զարգացման ուղին։ Նա խորհուրդ է տալիս զգույշ լինել արևմտաեվրոպական թարգմանական երկերից, զարկ տալ ինքնուրույն, կենցաղային դրամատուրգիային և իրական կյանքի հարազատ ցուցադրումով նպաստել ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը։ Մ. Նալբանդյանի դիտողությունները ծրագրային նշանակություն են ունենում թատրոնի ու դրամատուրգիայի համար։

«Արևելյան թատրոնը» քաղաքական խստագույն պայմաններում իր գործունեությունը շարունակում է մինչև 1867 թ., բեմադրելով ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ պիեսներ, որոնց մեջ նկատելի տեղ են բռնում հայ պատմական անցյալը պատկերող ողբերգությունները։ Դրանք, չնայած հիմնականում գրված էին կլասիցիզմի ոգով, իրենց բարձրացրած հայրենասիրական գաղափարներով հասարակության կողմից ընդունվում էին օվացիաներով։ Նման պիեսներից հիշատակության արժանի են Ս. Հեքիմյանի «Հարմակ և Աշխեն», «Սամվել», Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», «Կոռնակ» և այլ ողբերգությունները։

«Արևելյան թատրոնի» խումբը հաջողությամբ բեմադրում է Մոլիերի կատակերգություններից «Տարտյուֆը» և «Բռնի ամուսնությունը», Վ. Հյուգոյի «Թագավորը զվարճանում է» դրաման, Վոլտերի «Ալզիրը» և համեմատաբար քիչ թիվ կազմող ֆրանսիացի երկրորդական հեղինակների մի քանի մելոդրամաներ։

Այն փաստը, որ թատրոնը բարձրացնում էր սոցիալական անհավասարության խնդիրներ և խթանում ազգային-ազատագրական գաղափարների տարածմանը, լրջորեն անհանգստացնում է հետադեմ խավերին, որոնք բացեիբաց հանդես են գալիս թատրոնի դեմ, այն համարելով վտանգավոր մտքեր սերմանող մի վայր։

1867 թ. գարնանը սուլթանական կառավարությունը փակում է «Արևելյան թատրոնը» իր ծաղկման ամենաբուռն շրջանում։ Փակման համար առիթ է ծառայում Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձին նվիրված երեկույթը, որը հասարակության պահանջով կրկնվել է երեք անգամ, բուռն խանդավառություն առաջացնելով երիտասարդության մեջ և վերածվելով յուրահատուկ քաղաքական ցույցի[11]։

«Արևելյան թատրոնի» փակումից հետո, նույն 1867 թ., Պոլսում թատերական մի մեծ խումբ է կազմակերպում Հակոբ Վարդովյանը։ Վարդովյանի խումբը գործում է մինչև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սկսված քաղաքական խստությունները։ Այն եղել է ամենից մեծ և կանոնավոր ծրագրով ու դրամագլխով գործող թատերախումբը ամբողջ Մերձավոր Արևելքում։ Խումբն իր կազմում ունեցել է 70—80, երբեմն մինչև 90 մարդ։

Վարդովյանի խաղացանկն էլ առաջին տարիներին բաղկացած էր պատմական ողբերգություններից և թարգմանական երկերից։ Ի տարբերություն

---

11 Գ. Ստեփանյան, *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության*, Ա հատոր, Երևան, 1962, էջ 213—242։

զուտ աղգային՝ «Արևելյան թատրոնի», այդ խումբը ներկայացումները փոխն ի փոխ տալիս էր հայերեն և թուրքերեն լեզուներով և դրանով էլ սկիզբ դնում թուրքական թատրոնին։

Արևմտահայ իրականության մեջ 50—60-ական ԹԹ. ուժեղ թափով զարգանում է դրամատուրգիան։ Հանդես են գալիս մի շարք դրամատուրգներ, որոնց մեջ աչքի ընկնող դեմքեր էին Մ. Պեշիկթաշլյանը և Ս. Հեքիմյանը։

Այդ տարիներին որպես դրամատուրգ հանդես են եկել Խորեն Գալֆայանը, Թովմաս Թերզյանը, Սրապիոն Թղլյանը և ուրիշներ, որոնց պատմական ողբերգությունները նույնպես ներկայացվել են տարբեր քաղաքներում։ Սրանցից Թ. Թերզյանը հեղինակն է «Արշակ Բ» հայկական առաջին օպերայի լիբրետոյի, որը գրվել է նախ իտալերեն, ապա թարգմանվել հայերեն։

Ի տարբերություն արևելահայ իրականության, որտեղ գերակշռողը իրական կյանքը արտացոլող կենցաղային դրամատուրգիան էր, արևմտահայերի մոտ տիրապետողը մնաց պատմական անցյալի պատկերումը։ Այդ պետք է բացատրել նրանով, որ այնտեղ հուզող հարցը ազատագրական պայքարն էր, իսկ պատմական անցյալի պատկերումը խթանում էր դրան։

Կ. Պոլսին զուգընթաց թատերական աշխույժ գործունեություն է ծավալվում Զմյուռնիայի հայ գաղութում, որտեղ 1860 թ. հիմնվում է «Վասպուրական» թատրոնը, որը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի ազատագրական պայքարի նախապատրաստման գործում, «Վասպուրականի» բեմի վրա մի ամբողջ թատերաշրջան գործել է «Արևելյան թատրոնի» խումբը՝ Ստեփան Էքշյանի գլխավորությամբ, խաղալով մեծ մասամբ ազգային պատմական ողբերգություններ։ Թե զմյուռնահայ երիտասարդությունը այդ ներկայացումների օրերին ազատագրական ինչպիսի պոռթկումներ է ունեցել, երևում է այն ընդունելությունից, որ երիտասարդները ցույց են տվել առաջին հայ դերասանուհի Արուսյակ Փափազյանին՝ օթյակներից դեպի բեմ բաց թողնելով ազավնիներ, մատուցելով ծաղկեփնջեր, նաև հայկական դրոշակ։

Վաթսունական թվականների կեսերից արևմտահայ գրականության մեջ ևս հանդես են գալիս դեմոկրատ գրողներ, որոնք դրամատիկական ստեղծագործության նյութ են դարձնում սոցիալական պայքարի հարցը։

Հ. Պարոնյանը հիմք է դնում արևմտահայ կենցաղային դրամատուրգիային իր «Ատամնաբույժն արևելյան», «Երկու տերով ծառա մը», «Շողոքորթը», հետագայում «Պաղտասար աղբար» կատակերգություններով, մեծ տաղանդով ցուցադրելով դեպի այլասերում գնացող պոլսահայ քաղքենիական ընտանիքների կյանքը, անվերապահորեն պաշտպանելով աշխատավոր ժողովրդի շահերը։

Իր դրամատուրգիայով նոր խոսք է ասում Պետրոս Դուրյանը։ «Անկումըն Արշակունի հարստության», «Ասպատակություն պարսկաց ի Հայս» և այլ պիեսներում նա ցույց է տվել հակամարտ դասակարգերի գոյությունը պատմական անցյալում։ Նրա պիեսները գրված են կլասիցիզմի կանոններին միանգամայն հակառակ, շեքսպիրյան դրամատուրգիայի սկզբունքներով։

Հայ թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման այդ բուռն շրջանը բնութագրական է նաև պոլսահայ դերասանական մի ուժեղ կոլեկտիվի ստեղծումով։ Այդ երկու տասնամյակներում որպես ականավոր արվեստագետ-

ներ ասպարեզ եկան Պետրոս Ադամյանը, Մարտիրոս Մնակյանը, Սիրանույշը, Աստղիկը, Ազնիվ Հրաչյան, Ս. Պենկլյանը, Թ. Ֆասուլաճյանը և ուրիշ դերասան-դերասանուհիներ, որոնցից մի քանիսը գալով Կովկաս ու հաղորդակից դառնալով ռուսական առաջավոր թատերական արվեստին, ձեռք են բերել մեծ հռչակ, իսկ Ադամյանն ու Սիրանույշը՝ համաշխարհային համբավ։

3. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

XIX դարի առաջին կեսում հայ կերպարվեստի պատմության մեջ ավարտվում է միջնադարյան արվեստից նոր շրջանին անցնելու պրոցեսը։

Զարգանում են կերպարվեստի բոլոր ճյուղերը՝ գեղանկարչությունը, կիրառական արվեստը, գրաֆիկան, քանդակագործությունը, հատկապես՝ զարդաքանդակը։ Երկրաչափական միօրինակ զարդանախշը իր պարզ հյուսվածքով զուգորդվում է փոքրաչափ խաչերին և քանդակագործության այդ բարձր արվեստը զրկում նրան բնորոշ երբեմնի մոնումենտալությունից։

Մեծ ծաղկում է ապրում գորգագործությունը, որի նախշերում մուտք են գործում սյուժետային թեմատիկ կոմպոզիցիաներ։ Ոսկերչական իրերում, հատկապես կանացի հարդարանքի զարդերում, զգալի տեղ է հատկացվում թանկարժեք քարերին, նրանց մեծությանը, ընդհանուր կոմպոզիցիայում նրանց կենտրոնական տեղ գրավելուն։ Օտար մոտիվների մուտքը սակայն չի խանգարում կատարողական բարձր վարպետության, ժողովրդական արվեստներին բնորոշ ավանդների պահպանմանը և զարգացմանը։ Այդ հատկապես դրսևորվում է կարպետագործության, խեցեգործության և ասեղնագործության բնագավառներում, որտեղ ժողովրդական գեղարվեստական մտածելակերպը զուգակցվում է ուտիլիտար պահանջներին։

Գրաֆիկայի բնագավառում, արդեն ավանդական դարձած գրքի նկարազարդման արվեստին զուգահեռ, մուտք է գործում թերթերի և ամսագրերի ձևավորումը։ Զգալի տեղ է տրվում զանազան հասկացություններ խորհրդանշող իմաստների կերպարային լուծումներին։ Հրատարակությունների զանազան երկրներում տեղավորված լինելը յուրատիպ կնիք է դնում նաև արվեստի այդ ճյուղի վրա։ Էկլեկտիկ բնույթի գրքային ու ամսագրային ձևավորումների կողքին տեսնում ենք նաև ազգային պրոֆեսիոնալ գրաֆիկների գոյությունը։ Հատկապես աննախընթաց ծաղկում է ապրում ծաղրանկարչությունը («Մեղու», «Թատրոն»), որտեղ առաջին պլան է մղվում տաղանդավոր նկարիչ Սիմոն Յաղըճյանի անունը։ Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում մասնագիտական կրթություն են ստանում մի շարք շնորհալի նկարիչներ, որոնց թվում նաև Հ. Քաթանյանն ու Աղ. Հովնաթանյանը։

Հովհաննես Բաբայի Քաթանյանը (1824—1894), ոսկե մեդալով ավարտելով Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիան (1857), իր ողջ կյանքը նվիրում է մանկավարժական գործունեության, դասավանդելով Թիֆլիսի Ներսիսյան և այլ դպրոցներում։ Նա, միաժամանակ, թատերական գործի ակտիվ մասնակիցներից էր, «Հյուսիսափայլի»-ի եռանդուն պրոպագանդիստներից Կովկասում, ժամանակի առաջադեմ մտածողներից, որին իր նամակներից մե-

կում Մ. Նալբանդյանը բնորոշում է որպես «անաչառ և ազգի օգտի վերա մըտածողը»։ Հասարակական գործունեության համար Հ. Քաֆանյանը 1859—1862 թթ. արտաքսվում է Ստավրոպոլ։ Մի շարք բարձրարվեստ վիմագրությունների հեղինակ («Ուգոլինոյի մահը», «Քրիստոսի փորձությունը») Հ. Քաֆանյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ են գրավում նրա գեղագրական ալբոմները, որոնք եզակի են հայ արվեստի պատմության մեջ։

Աղաթոն Մկրտումի Հովնաթանյանը (1816—1893) տաղանդավոր տոհմի միակ ներկայացուցիչն է, որը մասնագիտական կրթություն է ստացել։ Վրաստանի կառավարիչ բարոն Գ. Ռոզենի միջնորդությամբ Աղ. Հովնաթանյանը ընդունվում է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիա (1836), ստվորում ռուս նշանավոր նկարիչ Կ. Բրյուլովի արվեստանոցում։ Սկզբնական շրջանում Ա. Հովնաթանյանի ընդունակությունները երևան են գալիս դիմանկարչության, բնանկարի և պատմական նկարչության բնագավառներում, սակայն XIX դարի կեսերին ռուս իրականության մեջ մեծ զարգացում ապրող գրաֆիկայի անմիջական ազդեցության շնորհիվ, նա վերջնականապես հակվում է դեպի հաստոցային գրաֆիկան։ Աղաթոն Հովնաթանյանը հիմնականում վիմագրության տեխնիկայով բազմացնում է իր եղբոր՝ Հակոբ Հովնաթանյանի դիմանկարչական ստեղծագործությունները («Գեներալ Զասի դիմանկարը», «Կոմս Մ. Վորոնցովի դիմանկարը»), Ի. Շառլեմանի «Հիշողություններ Պաժերի կորպուսի մասին» նկարաշարքը, մի շարք դիմանկարներ՝ լուսանկարներից, այլ նկարիչների կատարած գրքերի նկարազարդումներ, որոնցում նկարիչը ձգտում է գրաֆիկական գծի արտահայտչականության, ճկունության։ Աղաթոն Հովնաթանյանը, իր քանակով քիչ աշխատանքներում անգամ, հանդես է գալիս որպես վարպետ փորագրիչ, վիմագրության տեխնիկայի գիտակ արվեստագետ։

XIX դարի հայ կերպարվեստի կարևորագույն հատվածն է կազմում գեղանկարչությունը։ Դեռևս XVII—XVIII դարերում մեծ թափ ստացած որմնանկարչական արվեստն իր տեղը վերջնականապես զիջում է հաստոցային գեղանկարչությանը։ Որմնանկարչության վերջին օրինակները երևան են գալիս XIX դարի առաջին կեսում (Մեղրու եկեղեցին 1842 թ., Թիֆլիսի Նորաշենի եկեղեցին, 1834—1835 թթ.)։ Ավարտվում է նաև համքարական արվեստանոցներում արտադրվող սրբանկարների պատրաստումը (Ախալցխա, Վան, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ), քանի որ նրանց փոխարինելու են գալիս գունավոր վիմագրություններն ու լուսանկարչական աշխատանքները։

Խանական լուծը թոթափած Երևանը թեպետ դեռևս չէր դարձել հայ կերպարվեստագետների մշտական ստեղծագործության կենտրոն, բայց և զուրկ չի եղել նկարիչներից։ Երևանում է ստեղծագործել ադրբեջանցի նկարիչ Միրզա Կադիմ Երևանին (1825—1875), որի դիմանկարչական և դեկորատիվ բնույթի ստեղծագործություններում շարունակվում էին Երևանում մինչ այդ գործած մահմեդական նկարիչների արվեստի ավանդները։ Երևան էին գալիս ռուս նկարիչները։ Երևանում որոշ ժամանակ աշխատել են նկարիչներ Հակոբ Հովնաթանյանը, Հովհաննես Քաֆանյանը։ Պատմական երևույթների բերումով արևելահայ գեղանկարչության կենտրոնն է դառնում Թիֆլիսը։

Կովկասում արվեստները և մասնավորապես գեղանկարչությունը տարա-

ծելու մասին Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչն իր նամակներից մեկում գրում էր, որ անհրաժեշտ է «տեղի բնակիչներին ծանոթացնել գիտությունների և եվրոպական գեղարվեստների հետ»[12]։ Այդ նույն հարցը հուզել է նաև Խաչատուր Աբովյանին, որը Վ. Ժուկովսկուն և Գ. Պարրոտին հասցեագրած 1835 թ. հունվարի 21-ի և 25-ի նամակներում շարադրում է իր վերաբերմունքը դեպի գեղեցիկ արվեստները։ Խ. Աբովյանը գտնում է, որ իր հայրենակիցները նրանց միջոցով կկարողանան «ամենից լավ՝ և արագ իսկական կրթության և լուսավորության հասնել»[13]։ Որպես հիմնական առարկա Խ. Աբովյանը նկարչությունն ընդգրկում է նաև Երևանի դպրոցական ծրագրերում։

XIX դարի սկզբին Թիֆլիսում անվանի դիմանկարչի համբավ ուներ Մրկըրտում Հովնաթանի Հովնաթանյանը (1779—1845)։ Նկարչական արվեստի գաղտնիքներին ծանոթանալով իր հոր՝ Հովնաթան Հովնաթանյանի մոտ, Մ. Հովնաթանյանը շարունակում է իր նախնիների սկսած գործը էջմիածնի տաճարում, վերանորոգում նրա զարդանկարները, նկարում նոր սրբապատկերներ։ Թիֆլիսում նա արվեստանոց ուներ։ Պահպանված աշխատանքներից հատկապես ուշագրավ են Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու որմնանկարները, որտեղ հին և նոր կտակարանների թեմաները մեկնաբանված են որպես առանձին հաստոցային նկարներ։ Ժամանակի մշակույթին բնորոշ կլասիցիզմը հատկապես վառ արտահայտություն է ստացել Մկրտում Հովնաթանյանի հայ թագավորների դիմանկարների շարքում («Հայկ», «Արտաշես», «Աշոտ Ա», «Վռամ Բ» և այլն)։ Ժամանակի հայրենասիրական տրամադրություններն արտահայտող այս դիմանկարներում նկարիչը խուսափում է միօրինակությունից, տարազների ընտրության ժամանակ ձգտում պահպանել պատմական ճշմարտացիությունը, ներմուծում տվյալ կերպարին բնորոշ բազմաթիվ ատրիբուտներ։ Մկրտում Հովնաթանյանի դիմանկարչական արվեստին բնորոշ վարպետությունը հատկապես հանդես է եկել Եփրեմ կաթողիկոսի, Ս. Գուրգենբեկյանի դիմանկարներում, որոնք իրենց մի փոքր ռոմանտիկ մեկնաբանումներով և կոմպոզիցիոն ինքնատիպությամբ նախապատրաստեցին նրա որդու՝ հայ անվանի դիմանկարիչ Հակոբ Հովնաթանյանի արվեստը։

Հակոբ Մկրտումի Հովնաթանյանը (1806—1881) նկարչական կրթությունը ստացել է հոր մոտ, իսկ 1841 թ. Կովկասի կառավարչապետ Ե. Գոլովինի դիմանկարի համար Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայից ստանում է «ոչ դասական» նկարչի կոչում։ Կովկասում դիմանկարչական արվեստի զարգացման և Ղարաբաղում վիմագրական քար գտնելու համար գնահատվում է կառավարության կողմից։ Ժամանակակիցները հատկապես բարձր են գնահատել Հակոբ Հովնաթանյանի դիմանկարների նմանությունը պատկերվող անձանց հետ։ Սակայն Հակոբ Հովնաթանյանի արվեստի նշանակությունը բնորոշվում է այն խոշոր դերով, որ նա խաղաց XIX դարի առաջին կեսի հայ ու վրաց արվեստների զարգացման գործում ընդհանրապես, և դիմանկարչության ժանրում՝ մասնավորապես։

---

12 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 780, օպ. 1, վավ. 186, էջ 1։

13 Դիվան Խաչատուր Աբովյանի, հատ. 2, Ե. 1948, էջ 25։

Հովնաթանյանի դիմանկարների պատկերասրահում հանդիպում ենք վաճառականների, մոքալաքների, աստիճանավորների, նրանց կանանց, Կովկաս աքսորված լեհ հեղափոխականի, գիմնազիստի դիմանկարների։ Նրա կտավները փոքրածավալ են, մարդիկ տեղավորված են կտավի կենտրոնում, պատկերված կրծքից կամ ծնկներից։

Հակոբ Հովնաթանյանի պատկերած կանայք (Մելիքովայի, Անանյանի, Ն. Օրբելյանի, Ս. Անդրոնիկաշվիլու, Շ. Նադիրյանի, նկարչի դստեր՝ Նունե Հովնաթանյանի դիմանկարները) սև, մուգ կապույտ կամ բաց կանաչ ազգային տարազներ են կրում, որոնք դրվագված են կարմիր, դեղին, բաց վարդագույն երիզներով։ Տարազների գունային հարաբերությունները հարստացվում են կանացի հարդարանքի իրերի դեկորատիվ էլեմենտներով։ Կանացի դիմանկարներին բնորոշ են թախծոտ, նշաձև աչքեր, բաց վարդագույն սեղմված շուրթեր, մաշկի փղոսկրյա թափանցիկություն։ Նկարիչը հատկապես նրբորեն է մոդելավորում դեմքն ու ձեռքերը, խիստ ուրվագծելով ֆիգուրների եզրագծերը։

Տղամարդկանց դիմանկարները հիմնականում կառուցված են սև, սպիտակ, կանաչ և կարմիր գույների համադրությունների վրա (Մելիքով, Գ. Քարաջյան, Գ. Մալինցյան, Գ. Միշևսկի, Մ. Լիլիպարյան, Դե Կորմիկ և այլք)։ Այս դիմանկարներում արտահայտչական միջոցներն ավելի զուսպ են ու խիստ։ Հոգեբանական բնութագրմամբ, կոլորիտի առանձնահատկություններով Հակոբ Հովնաթանյանի լավագույն գործերի թվին են պատկանում Նատալիա Թևոսյանի, Թամար Սագինյանի և Ներսես V Աշտարակեցու դիմանկարները, որոնք ոչ միայն Հակոբ Հովնաթանյանի, այլև XIX դարի հայ կերպարվեստի լավագույն գործերից են։

1860-ական թվականներին Հակոբ Հովնաթանյանը մեկնում է Թավրիզ, ապա հրավիրվում պարսկական պալատ, արժանանում «Նաղղշ բաշի» (նկարիչների գլխավոր) տիտղոսի, ինչպես նաև ստանում «էլխմի» (գիտություն) շքանշան։ Այդ շրջանից պահպանված դիմանկարներից երկուսը հատկապես առանձնանում են իրենց կոմպոզիցիայով։ Նասր-էդ-դին շահի և Մոզաֆեր-էդ-դին գահաժառանգի դիմանկարները օժտված են Հովնաթանյանի արվեստին բնորոշ նրբությամբ։

Հակոբ Հովնաթանյանը նոր ժամանակաշրջանի նկարիչ էր, Թիֆլիսի ղարգացող մտավորականության հետաքրքիր դեմքերից մեկը։ Եթե XIX դ. սկզբին տեղի նկարիչներն իրենց գեղանկարչական կարողություններով զիջում էին ժամանակի խոշորագույն արվեստագետին՝ Հակոբ Հովնաթանյանին, ապա վերջինս էլ նրանցից վերցնում ու ստեղծագործական ինքնատիպ մշակման էր ենթարկում այն ուշագրավը, որը բնորոշ էր այդ ժամանակի Թիֆլիսի արվեստին։ Այս փոխընկալումները օժանդակել են հայ և վրաց ժողովուրդների արվեստների զարգացմանը, իսկ Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործությունը մնում է որպես հայ-վրացական մշակութային կապերի փայլուն էջերից մեկը։

Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործությամբ ավարտվեց XVII—XVIII դարերում սկիզբ առած նոր շրջանի հայ կերպարվեստի զարգացումը և յու-

րատիպ օղակ դարձավ հետագա տասնամյակների արվեստի ազգային ավանդների հիմնավորման համար։

XIX դարի հայ արվեստի նշանակալից դեմքերից է նաև Ստեփանոս Հակոբի Ներսիսյանը (1815—1884)։ Նա ծնվել է Երևանում, սովորել Ներսիսյան դպրոցում, ապա՝ Խ. Աբովյանի միջնորդությամբ ընդունվել Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիան, որտեղ սովորել է հայ նկարիչներ Աղ. Հովնաթանյանի, Մ. Մելիքովի (ծնվել է 1818 թ.), Տ. Շևչենկոյի, վրաց նկարիչ Գ. Մայսուրաձեի հետ։

Ստեփանոս Ներսիսյանի գեղագիտական ըմբռնումների համար խոշոր նշանակություն է ունենում նրա ծանոթությունը Ստ. Նազարյանի, Խ. Աբովյանի, Հովհ. Այվազովսկու և ժամանակի առաջավոր մի շարք մտավորականների հետ։ Հետագայում Ստ. Ներսիսյանը աշխատում է որպես նկարչության ուսուցիչ՝ Ներսիսյան դպրոցում, Շուշում, որտեղ միաժամանակ մեծ ջանք է գործադրում «Թանգարան վերածնության» անունը կրող հասարակական գրադարանը հիմնելու համար։ Վաթսունամյա նկարիչը մահացավ Թիֆլիսում, հիշատակ թողնելով ժողովրդին նվիրված, անձնուրաց արվեստագետի մի կերպար և հետաքրքիր ստեղծագործությունների շարք։

Ստ. Ներսիսյանը ստեղծել է պատմական թեմաներով կտավներ, ժանրային պատկերներ, դիմանկարներ և վիմագրություններ, որոնց զգալի մասը մեզ չի հասել։ Միակ պահպանված ժանրային ստեղծագործությունը, «Զբոսախնջույք Քուռ գետի ափին» կտավն է։ Ակադեմիական նկարչության սկզբունքներով կատարված այս աշխատանքում Ստ. Ներսիսյանը պատկերել է Թիֆլիսի մոքալաքների կյանքից մի տեսարան, ռուսական-ժանրային նկարչության իր ընկալումները զուգակցելով տեղական արվեստի դպրոցի սկզբունքներին։

Ժամանակի հայ արվեստի համար միանգամայն օրինաչափ և ինքնատիպ երևույթ էր Ներսիսյան-դիմանկարիչը։ Ա. Տեր-Ղուկասյանի, Գ. Իզմիրյանի, Դ. Ակիմյանի, Ա. Մելիք-Ադամյանի և այլոց դիմանկարներում, որոշ չափով պահպանելով տեղական դիմանկարչական արվեստին բնորոշ կոմպոզիցիայի կառուցման արտաքին կողմը, Ստ. Ներսիսյանը ձգտում է պատկերված անձնավորությունների կերպարների ամբողջական բնութագրմանը, նրանց ներքնաշխարհի գեղարվեստական դրսևորմանը։ Այդ տեսակետից հատկապես ուշագրավ է գեներալ Վ. Բեհբութովի դիմանկարը, որը օժտված է ներքին կամքով, խստությամբ, բնավորության զուսպ արտահայտությամբ։

Մեծ ու անգնահատելի է Ստեփանոս Ներսիսյանի վաստակը հատկապես Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հանրահայտ դիմանկարների ստեղծման գործում։ Այս դիմանկարներն իրենց ռոմանտիկ տրամադրությամբ, կերպարների պարզ ու արտահայտիչ ներգործությամբ, կատարման բարձր վարպետությամբ հիմնավոր տեղ են գրավել հայ մշակույթի պատմության մեջ և հոգեհարազատ դարձել ժողովրդին։

XIX դարի կերպարվեստի խոշորագույն դեմքերից է աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Կոստանդինի Այվազովսկին (1817—1900)։

Հովհաննես Այվազովսկին ծնվել է Թեոդոսիայում (Ղրիմ)։ Վաղ մանկության տարիներին դրսևորած նկարչական ընդունակությունները նրան հասցրին Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիա։ Շնորհալի նկարչի համբավ ձեռք բերած երիտասարդ Այվազովսկին 1840 թ. մեկնում է Իտալիա, կյանքի հետագա տարիներին լինում բազմաթիվ երկրներում ու քաղաքներում, կազմակերպում անհատական ցուցահանդեսներ։ Սակայն մշտական բնակություն է հաստատում իր հայրենի քաղաքում, որտեղ և մահանում է 1900 թ. մայիսի 2-ին։

Հովհաննես Այվազովսկու նկարների թիվը մոտավորապես 6000-ի է հասնում։ Նա նկարել է ծովը օրվա բոլոր ժամերին, տարվա բոլոր եղանակներին։ Նրա սկզբնական շրջանի աշխատանքներում (իտալական տեսարաններ, ծովանկարներ Ղրիմից և այլն) առկա են ռոմանտիզմին հատուկ երևույթի իդեալականացում, գունային պայմանականություն։ Ժամանակի ընթացքում նրա արվեստը ավելի է կապվում իրականությանը, դառնում առավել իրապաշտում և հասկանալի։

Հասուն շրջանի լավագույն ստեղծագործություններից է «Իններորդ ալիքը», որտեղ Այվազովսկին հանդես է գալիս ոչ միայն որպես տաղանդավոր գեղանկարիչ, այլև որպես մեծ հումանիստ, որը հավատում է մարդու ամենակարող, ամենահաղթ ուժին։ Հովհ. Այվազովսկու տաղանդը փայլել է նաև «Սև ծովը», «Ալիքների մեջ», «Անդորրություն» և այլ աշխատանքներում։ Այվազովսկին չի սահմանափակվել միայն ծովանկարչությամբ։ Նա անտարբեր չի մնացել դեպի ռուսական ծովային նավատորմի հերոսապատումը։ Եվ ստեղծվել են ռուս իրականության մեջ առաջին կտավները՝ նվիրված ռուսական ծովայինների հերոսական գործերին՝ «Չեսմենյան ճակատամարտը», «Բրիդ Մերկուրիի ճակատամարտը թուրքական նավերի դեմ», «Նավարինի ճակատամարտը» և այլն։ Հովհաննես Այվազովսկուն հրապուրել են նաև բիբլիական թեմաները։ Նա կատարել է բազմաթիվ գծանկարներ, դիմանկարներ։ Այս ամենի ֆոնի վրա հատկապես արժեքավոր է այն, ինչը նրան կապում է հայ իրականության հետ։ Դրանք միայն անձնական ծանոթություններ չեն հայ մշակույթի անվանի գործիչների հետ (Ղ. Աղայան, Պ. Ադամյան, Ս. Սպենդիարյան, Վ. Սուրենյանց և այլք), կամ այն մեծ նյութական օգնությունը, որ նա ցույց էր տալիս հայ գաղթականներին։ Դրանք այն ուշագրավ ստեղծագործություններն են, որոնք կատարվել են հայկական թեմաներով։

Այվազովսկու մեծությունը նրանում է, որ իր ստեղծագործություններում նա կարողանում է գեղեցիկ զգացմունքներ ու տրամադրություն հաղորդել մարդկանց, իրականությունը վերարտադրել գեղարվեստական բարձր արտահայտչականությամբ։ Իրականության ընդհանրացված գեղարվեստական կերպարներով նա ստիպում է մարդկանց մտածել, խորհել, ուրախանալ, տրտմել, ոգևորվել, առավել զգալ իրականության գեղեցկությունը և այդ գեղեցկության մեջ տեսնել մարդու ստեղծագործական կարողությունները։ Եվ իր արվեստի այս կողմերով էլ Այվազովսկու արվեստը դուրս եկավ ազգային սահմաններից ու դարձավ համամարդկային։

XIX դարում հայ կերպարվեստը դուրս եկավ միջնադարյան նկարչության կանոնիկ դարձած սահմաններից, ընդունեց զարգացման նոր հուն, որի ձևավորմանը նպաստեց դեպի ռուսական ակադեմիական նկարչությունն ուղեցած հայ նկարիչների կողմնորոշումը։ Ստեղծագործական անհատականությունների բազմազանությունը, հետաքրքրությունների լայն շրջանակները հող նախապատրաստեցին հայ դասական նկարչության նոր, աչքի ընկնող դեմքերի հանդես գալու համար։

4. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդը թևակոխեց XIX դարը՝ չունենալով կազմակերպված երաժշտական կյանք, պրոֆեսիոնալ կոմպոզիտորներ ու երաժիշտ-կատարողներ։ Տիրապետողը բանավոր ավանդույթի ուժով սերնդից սերունդ փոխանցվող ժողովրդական ու գուսանական երաժշտությունն էր, որ ապրում էր ժողովրդի հիշողության մեջ։

Ըստ Ի. Շոպենի տվյալների, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու առաջին տարիներին ամբողջ հայկական մարզում կային 96 երաժիշտներ, որոնցից 85-ը հայեր էին[14]։ Դրանք թափառաշրջիկ աշուղներ էին, գուսանաշիններ ու դուդուկահարներ, որոնք մասնակցում էին ժողովրդական տոնախմբություններին, խնջույքներին ու հարսանիքներին։

Երաժշտական գործիքներից տարածված էին. փողայիններից՝ զուռնան, դուդուկը, հովվական սրինգը, լարայիններից՝ թառը, քամանչան, քանոնը, սանթուրը, սազը և այլն։ Մշտապես գործածվում էին նաև զանազան հարկանային գործիքներ (թմբուկը, դափը, նաղարան և այլն)։ Դարի կեսերին հետզհետե մուտք են գործում երգեհոնը (գլխավորապես հայ կաթոլիկ եկեղեցում), դաշնամուրը, ջութակը և կիթառը, որոնք հայ իրականության մեջ նոր էին սկսում տարածվել։

Արևելյան Հայաստանի տերիտորիայում ռուսական կայազորներ ըստեղծվելուց հետո մուտք են գործում նաև առաջին փողային նվագախմբերը և ռուսական ժողովրդական երաժշտական գործիքները։

Հայ ժողովրդական և գուսանա-աշուղական երաժշտությունը կազմում էր ժողովրդի երաժշտական կենցաղի անբաժանելի մասը։ Սակայն նրա հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ դեռ երկար ժամանակ (մինչև դարի վերջին քառորդը) կազմակերպված աշխատանք չէր կատարվում։ Գևոնդ Ալիշանն էր, որ 1840-ական թվականներից սկսած հավաքում և «Բազմավեպ»-ում պարբերաբար հրապարակում էր ժողովրդական (իր տերմինով ասած՝ «ռամկական») երգերի առաջին նմուշները, որոնք հետագայում ամփոփվեցին նրա «Հայոց երգք ռամկականք» (Վենետիկ, ս. Ղազար, 1852) գրքույկում։ Սա առաջին հավաքածուն էր, որի մեջ միջնադարյան հայ ժողովրդական երգերի կողքին տեղ էին գտել հարսանեկան, զարիբության և այլ երգեր։ Ընդամենը 19 երգ էր զետեղված այդ գրքույկում, բայց դժբախտաբար,

---

[14] *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. С. Петербург. 1852, стр. 896—898.

առանց եղանակների։ Ղ. Ալիշանը հանդիսանում է նաև հայ ժողովրդական երաժշտության վերաբերյալ առաջին տպագիր հոդվածի[15], ինչպես և ձեռագիր մնացած մի «Երգարանի» հեղինակը[16]։

Այս տեսակետից նշանակալից էր Խ. Աբովյանի գործունեությունը։ Որպատում ուսանելիս նա առանձին ուշադրություն էր դարձրել նաև երաժշտությանը, մշակել իր ձայնը, երգել համալսարանի երգչախմբում, ծանոթացել եվրոպական դասական երաժշտությանը և Հայաստան վերադառնալով աշխատում էր բարձր հիմքերի վրա դնել աշակերտության երաժշտական դաստիարակությունը։ Առավել կարևոր է այն, որ նա գրել և ուղարկել է Պետերբուրգի Ակադեմիա «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» խորագիրը կրող հոդվածը[17]։ Հոդվածի նպատակն էր ռուս մասնագետների ուշադրությունը հրավիրել հայ ժողովրդական և աշուղական երգերի հավաքմանը։

Աբովյանի նման Մ. Նալբանդյանը նույնպես առանձին ուշադրություն է դարձրել ժողովրդական ստեղծագործության նմուշների հավաքման ու օգտագործման վրա։ Նա հոգ էր տանում նաև եվրոպական դասական երաժշտության տարածմանը հայկական միջավայրում։ Դրանով պետք է բացատրել, որ նրա նախաձեռնությամբ էր թարգմանվում Վերդիի «Տրուբադուր» օպերան։

1856 թ. Պետերբուրգում լույս տեսավ Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուն։ Դա առաջին տպագիր երգարանն էր, որի մեջ երգերի տեքստերի հետ միասին որպես հավելված տրված էին նաև նրանց եղանակները դաշնամուրային շարահարությամբ (նոտաների տակ խոսքեր չեն տեղադրված)։ Այս երգարանով սկիզբ դրվեց երգարանների հրատարակությանը հայ իրականության մեջ։

Այս շրջանում լույս տեսած երգարաններից կարևոր է նաև 1868 թ. Պետերբուրգում տպագրված «Քնար հայկական»-ը, որի կազմողն էր Մ. Միանասարյանը։ Այս երգարանն անհամեմատ հարուստ էր իր բովանդակությամբ և պարունակում էր տարբեր բնույթի բազմաթիվ երգեր, ինչպես և չերգվող բանաստեղծություններ՝ արտասանության համար։

XIX դարի առաջին կեսի հայ գուսանա-աշուղական երաժշտությունը հենվում էր մեծ Սայաթ-Նովայի ստեղծագործության ավանդույթների վրա։ Այս շրջանի, ինչպես և հետագայում հանդես եկած աշուղների համար նա մեծ հեղինակություն էր, «վարպետաց-վարպետ» («ուստաբաշի»)։ Նրա բարերար ազդեցությունը կրեցին բազմաթիվ աշուղներ և զգալի չափով հարըստացրին իրենց աշուղական ստեղծագործությունը։ Դրանցից են՝ Շիրինը (Հովհաննես Կարապետյան, 1827—1856), Թուրինջը (Թորոս Մարթաշյան, 1792—1877), Իվանը (Հովհաննես, 1800—1864), Ազբար-Ադամը (1816—1844),

---

15 Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1845, № 7, էջ 109—111, Ղ. Ալիշան, «Ռամկական երգեր» հոդվածը՝ «Ընըստյալ կայր ու լայր կաքվուկն» երգի խոսքերի հետ միասին։

16 Տե՛ս Հ. Աբսեն Ղազարոս Ղազիկյան, Հայկական նոր մատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի, հատ. 1, Վենետիկ, 1909, էջ 63։

17 Պ. Հակոբյան, Դարձյալ անծանոթ էջեր Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունից («Սովետական արվեստ», 1959, № 1, էջ 62—67)։

Բյանհանը (Պետրոս Գնթունյանց, 1829—1886), Միսկին-Բուրջին (1810—1847), Զարգյարը (Աբրահամ, 1824—1874), Մայիֆը (Հարություն, 1825—1901), Ջահրին (Կարապետ Կարապետյան, 1818—1888) և ուրիշներ։ Սրանք ապրել և ստեղծագործել են ինչպես բուն Հայաստանում, նույնպես և նրա սահմաններից դուրս, հորինել են այնպիսի երգեր, որոնք հանդիսանալով իրենց ժամանակակիցների մտքերի ու հույզերի արտահայտությունը, սիրվել են ժողովրդի կողմից ու մտել երաժշտական կենցաղի մեջ։ Դրանց մեծամասնությունը սիրային երգեր էին, բայց դրանց կողքին կային նաև բարոյա-խրատական, պատմական դեպքերին նվիրված, իրենց սիրելի քաղաքներն ու գյուղերը գովերգող երգեր և այլն։

Այս շրջանի աշուղական երգերը խայտաբղետ էին իրենց լեզվով։ Դեռևս տիրապետող էին պարսկերենը, թուրքերենը, ադրբեջաներենը, երբեմն էլ ըստեղծվում էին լեզվախառն երգեր։ Բայց դարի կեսերին նրանց համար հիմնականը դառնում է հայերենը, թեև այստեղ էլ միասնություն չկար։ Ոմանք օգտագործում էին գրաբար կամ տարբեր բարբառներ, և միայն դարի երկրորդ կեսին տիրապետողը դառնում է աշխարհաբար գրական լեզուն։

Երաժշտական արվեստի տեսակետից այս շրջանի աշուղական երգերը հետաքրքիր են նրանով, որ՝ ավանդական աշուղական եղանակների հետ միասին արդեն հորինվում էին նոր մեղեդիներ, որոնց մեջ օգտագործվում էին գյուղական ու քաղաքային ժողովրդական երգերի ինտոնացիոն ու ռիթմական առանձնահատկությունները։

Դժբախտաբար, զուրկ լինելով ձայնագրման հնարավորությունից, XIX դարի առաջին կեսի աշուղների ինքնուրույն մեղեդիներից շատերը կորել են և միայն ամենացայտուն նմուշներն են պահպանվել։ Դրանցից են, օրինակ, Շիրինի «Այգեպան», «Ակնարկյա» և «Ցափրնջիս կորավ», Միսկին-Բուրջու «Էշխիցդ ջունուն դառած» և «Ախչի արի», Զարգյարի «Ախչիկ մի գնալ» և այլ երգեր։

Այս շրջանի ժողովրդական երաժշտության մեջ տիրապետողը դարձյալ գյուղական երգն էր՝ սերտորեն կապված հայ շինականի կյանքի ու աշխատանքի հետ։ Սրա հետ միասին լայն տարածում ունեին նաև աշխատանքային, ծիսական, հարսանեկան, էպիկական և այլ երգեր։ Մեծ տեղ էին գրավում հատկապես սիրային-լիրիկական երգերը, պարերգերն ու պարեղանակները, որոնք հաճախ իրենց մեջ արտացոլում էին հետզհետե արմատավորվող հասարակական նոր փոխհարաբերությունները։

Աշուղա-գուսանական ու ժողովրդական երաժշտության հետ միասին, իր դոյությունը շարունակում է նաև հոգևոր երաժշտությունը։ Միջնադարյան խազային նոտագրության անկումից հետո հայ հոգևոր երաժշտությունը խրստորեն ենթարկվում էր օտար ազդեցություններին։ Այս հանգամանքը մեծ մտահոգություն էր պատճառում ինչպես հոգևոր իշխանությանը, նույնպես և երաժշտության բնագավառում աշխատող մասնագետներին, և նրանք միջոցներ էին որոնում այդ երևույթի առաջն առնելու։ Ոմանք առաջարկում էին ընդունել եվրոպական նոտագրության սիստեմը և անմիջապես անցնել հոգևոր երգերի ձայնագրությանը՝ դրանք հետագա աղավաղումներից ու կորստից փրկելու նպատակով, ոմանք գտնում էին, որ ավելի լավ է ըն-

դունել հունական նոտագրությունը (փսալթիքա), իսկ շատերն էլ պահանջում էին ստեղծել հայկական երաժշտության առանձնահատկություններին համապատասխանող ձայնագրության նոր սիստեմ, որպեսզի դրանով իսկ ապահովվեր կատարվող ձայնագրությունների հարազատությունը։ Հաղթողը հանդիսացավ վերջին տեսակետը, և Պոլսում ձեռնամուխ եղան հայկական ձայնագրության նոր սիստեմի ստեղծմանը։ Այդ նոր սիստեմի ստեղծողը Համբարձում Լիմոնճյանն էր (1769—1839), որի անունով էլ այն կոչվում է Լիմոնճյանի սիստեմ։ Վայելելով Տյուզյան Հովհաննես Չելեբիի հովանավորությունն ու նյութական օժանդակությունը, Համբարձում Լիմոնճյանը (Բաբա Համբարձումը), որը լավ գիտեր եվրոպական նոտագրությունն ու հունական փսալթիքան, մի քանի տարի աշխատելուց հետո, 1815 թ. ստեղծեց հայկական նոր ձայնագրության սիստեմը՝ հարմարեցնելով այն միաձայն, վոկալ երաժշտության սկզբունքներին։ Հնչյունների բարձրությունը ցույց տվող յոթ նշանները և նրանց անունները վերցնելով միջնադարյան խազային նոտագրությունից, նա դրանք հարմարեցրեց եվրոպական նոտագրության նշաններին։ Լիմոնճյանի սիստեմի նշանները գրվում էին սովորական թղթի վրա և արտահայտում դիատոնիկ հնչյունաշարի ամբողջ տոներն ու կիսատոները։

Լիմոնճյանի սիստեմը կամ հայկական նոր ձայնագրությունը մեկդարյա կյանք ունեցավ, ենթարկվեց որոշ փոփոխությունների ու լրացումների, գլխավորապես իր աշակերտների կողմից։ Այն զգալի դեր կատարեց հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ, որովհետև նրա օգնությամբ ձայնագրվեցին և կորստից փրկվեցին հոգևոր երաժշտության բազմաթիվ նմուշներ՝ ամբողջ շարականոցը, պատարագի երգեցողությունը, ժամագիրքը և հոգևոր այլ մեղեդիներ։ Այս գործում հատկապես մեծ է Ն. Թաշճյանի, Ե. Տնտեսյանի, Հ. Չերչյանի, Հ. Այվազյանի և այլոց վաստակը։

Սակայն Լիմոնճյանի սիստեմն ուներ նաև լուրջ թերություններ։ Հարմարեցված լինելով մոնոդիկ (միաձայն) երաժշտությանը, այն չէր բավարարում բազմաձայն, հատկապես գործիքային և նվագախմբային երաժշտության պահանջները։ Բացի այդ, Լիմոնճյանի սիստեմը պատճառ դարձավ այն բանի, որ եվրոպական նոտագրությունը հայկական դպրոցները մուտք գործեց միայն դարավերջում։

Լիմոնճյանն ու իր աշակերտները նույնպես փորձեր արեցին ստեղծելու կոմպոզիտորական ինքնուրույն ստեղծագործություններ։ Սակայն այդ փորձերը մեծ մասամբ կատարվում էին հոգևոր երաժշտության բնագավառում։ Կ. Պոլսում կազմակերպված Արամյան թատրոնում իր գործունեությունը ծավալեց արևմտահայ առաջին կոմպոզիտորներից ու դիրիժորներից Կարապետ Փափազյանը։ Ամբողջ 20 տարի (1846—1866) նա կապված է եղել այդ թատրոնի հետ, երաժշտություն է գրել ներկայացումների համար, բայց նրա ստեղծագործություններից ոչինչ չի պահպանվել։

XIX դարի առաջին կեսի երաժշտության նշանավոր գործիչներից է նաև Անդրեաս Քաղցածյանը (1809—1856)։ Նա Ղրիմի Ղարասուբազար քաղաքի ծնունդ էր, իր երաժշտական կրթությունը ստացել էր լեհական Բերդիչև քաղաքում և ապա վերադառնալով հայրենի քաղաքը, աշխատել որպես հայ

եկեղեցու երգեհոնահար։ 1852 թ. փոխադրվելով Սևաստոպոլ, սկզբում աշխատել է որպես երաժշտության դասատու, իսկ հետո՝ Սևծովյան նավատորմի փողային նվագախմբիղեկավար։ Ղրիմի պատերազմի տարիներին նա շարունակում է աշխատել Սևաստոպոլում։ Երբ ծովակալ Նախիմովը Սինոպի ճակատամարտում չախչախելով թուրքական նավատորմը, հաղթանակով վերադառնում է Սևաստոպոլ, նավամատույցում նրան դիմավորում են Քաղցածյանի նոր գրած «Սինոպյան քայլերգ»-ի հնչյուններով։

Արամյան թատրոնից բացի երգն ու նվագը որպես արվեստի բաղկացուցիչ մաս օգտագործվել են նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության Մուրադ-Ռափայելյան դպրոցական թատրոնի ներկայացումների ընթացքում։ Այդ թատրոնն ունեցել է երգչախումբ իր ղեկավարով և երգապետ, որոնց վրա էլ դրված է եղել ներկայացումների երաժշտական ձևավորման պատասխանատվությունը։

Երաժշտությունն ավելի հաճախ է օգտագործվել Կ. Պոլսի թաղային թատրոնների ներկայացումների ընթացքում։ Այսպես, Խասգյուղի թատրոնի առաջին ներկայացման համար ներբող-քայլերգ է գրել Տ. Չուխաջյանը (1859 թ., խոսք՝ Չափրաստյանի, «Օն մեր նախնի»)։ Երեք տարի անց այն, նոտանեռով հանդերձ, տպագրվել է «Քնար հայկական» երաժշտական հանդեսում։

1840-ական թվականներից հայ քաղաքային բնակչության շրջաններում ուժեղանում է հետաքրքրությունը դեպի օպերային երաժշտությունը։ Դրան նպաստում են եվրոպական օպերային խմբերի հաճախակի այցելությունները Կ. Պոլիս, Զմյուռնիա, Թիֆլիս և հայաշատ այլ քաղաքներ։

Այնքան մեծ է եղել հետաքրքրությունը դեպի օպերային արվեստը, որ նույնիսկ պահանջ է առաջադրվել ազգային օպերայի ստեղծման։ Ժամանակակից հայ մամուլը հավաստիացնում էր, որ եթե հայկական օպերա ստեղծելու փորձեր լինեին, ժողովուրդը չէր զլանա իր նյութական ու բարոյական օժանդակությունը։ Նույնիսկ կոչ է արվում հասարակությանը՝ կազմակերպել հատուկ ընկերություն, որի նպատակը պիտի լիներ խոստումնալից երիտասարդների ուղարկել Եվրոպա՝ երաժշտական կրթություն ստանալու և վերադառնալուց հետո ազգային երաժշտության զարգացմանը նվիրվելու համար[18]։

Ահա այս պայմաններում էր, որ Տ. Չուխաջյանը, Միլանում երաժշտական կրթություն ստանալուց հետո Պոլիս վերադառնալով, ձեռնարկեց իր անդրանիկ օպերայի՝ «Արշակ Բ»-ի ստեղծմանը։ Տ. Չուխաջյանի «Արշակ Բ»-ն (լիբրետո՝ Բ. Բերզյանի) մեծ ստեղծագործություն էր, որի ստեղծման գործում հեղինակի կողմից հաջողությամբ օգտագործվել էր իտալական օպերայի և հատկապես Վերդիի օպերային ստեղծագործության հարուստ փորձը։

Դժբախտաբար, սուլթանական Թուրքիայի պայմաններում հնարավոր չեղավ հայկական այդ առաջին օպերան բեմադրել։ Այս բանում որոշիչ նշանակություն ունեցավ օպերայի թեման, որը ներթափանցված էր օտար բռնա-

18 «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1863, № 704։

կալության լուծը թոթափելու և ազգային ազատագրության գաղափարախոսությամբ։

Հայկական օպերայի ստեղծման ուղղությամբ կատարված նախապատրաստական աշխատանքներում զգալի վաստակ ուներ նաև Գրիգոր Սինանյանը (1836—1914)։ Նա էր առաջինը, որ Պոլսում կազմակերպեց մասնավոր դպրոց, դաստիարակելով երաժիշտ կադրեր։ Նա էր, որ «Արևելյան թատրոնի» համար կազմակերպեց նվագախումբ, պարապում էր դերասան-դերասանուհիների հետ։ Կարևոր է նաև այն, որ Գր. Սինանյանը համագործակցել է «Քնար հայկական» երաժշտական ընկերության հետ, կազմակերպելով այդ ընկերության սիմֆոնիկ նվագախումբը։ Եվ, վերջապես, նա հայ երաժշտական դերդաստաններից մեկի՝ Սինանյանների հայրն էր, մի ընտանիք, որը հետագայում տվել է երաժիշտների մի քանի սերունդ։

XIX դարի կեսերից արևմտահայ իրականության մեջ դպրոցներում ընկիզը դրվեց երաժշտության դասավանդմանը։ Դա շատ կարևոր էր աճող սերունդների գեղարվեստական դաստիարակության տեսակետից։ Դժբախտաբար, այս շրջանում չկային երաժշտական կրթություն ստացած դասատուներ և այդ պատճառով էլ դպրոցներում երաժշտության դասավանդման գործը համարյա ամբողջապես գտնվում էր տիրացուների, դպիրների ու դպրապետերի ձեռքում։ Դա պայմանավորված էր նաև նրանով, որ դպրոցները գտնվում էին եկեղեցու հովանու տակ և ավանդվող նյութն էլ հոգևոր երաժշտությունն էր։ Պոլսահայ իրականության մեջ երաժշտության առաջին կրթված դասատուն Ավետիս Խորասանճյանն էր (1842—1918), որն ավարտել էր Փարիզի կոնսերվատորիան և Պոլիս վերադառնալով, երաժշտություն էր դասավանդում դպրոցներում։ Իր նախաձեռնությամբ նա 1866 թ. սկսած աշակերտներին սովորեցնում էր եվրոպական նոտագրություն։ Նա առաջինն էր, որ ստեղծեց մանկական երաժշտություն, երեխաներին ազատելով հոգևոր երգերից։

Արևմտահայ իրականության մեջ հայ վարպետների ձեռքով պատրաստվում էին երաժշտական շատ գործիքներ (ուդ, քանոն, սանթուր, քյամանի, թառ և այլն)։ Կային ընտանիքներ, որոնք ունեին իրենց արհեստի գաղտնիքները և հարյուրավոր տարիների ընթացքում դրանք ավանդելով սերնդից սերունդ, հանդիսանում էին այդ գործի լավագույն վարպետները։ Դրանցից է, օրինակ, Զիլճյանների ընտանիքը։ Վարպետ Քերովբե Զիլճյանը (1830—1910) ունեցել է իր գործարանը, պատրաստել է բարձրորակ ծնծղաներ և հռչակվել ամբողջ աշխարհում։ Նրա պատրաստած ծնծղաներն իրենց որակով գերազանցել են եվրոպականներին թե՛ հնչողության նրբությամբ և թե՛ դիմացկունությամբ։ Սերնդից սերունդ փոխանցելով ծնծղաների ձուլման գաղտնիքը, Զիլճյանների ընտանիքն ամբողջ 200 տարի շարունակել և այժմ էլ շարունակում է այդ գործը, բազմիցս արժանանալով համաշխարհային ցուցահանդեսների մրցանակների։

Երաժշտական կյանքի կազմակերպման, ժողովրդի մեջ երաժշտական գրագիտության տարածման, դասական երաժշտության պրոպագանդայի և ազգային երաժշտության զարգացման գործում հատկապես կարևոր դեր կատարեցին երաժշտական պարբերաթերթերի հրատարակումն ու «Քնար հայ-

կական» երաժշտական ընկերության ստեղծումը։ XIX դարի կեսերից հայ երաժիշտները ոչ միայն համախմբվել էին թատրոնի շուրջը և իրենց գրած երաժշտությամբ ամեն կերպ նպաստում էին ներկայացումների գեղարվեստա-գաղափարական ազդեցության ուժեղացմանը, այլև ծավալում էին լուսավորական լայն գործունեություն՝ աշակերտության և հասարակավորների մեջ տարածելով երաժշտական գիտելիքներ։ Այս հանգամանքն էլ պայմանավորեց երաժշտական մամուլի ստեղծումը։ Դրանցից առաջինը «Քնար արևելյան» պարբերաթերթն էր, որը լույս տեսավ Կ. Պոլսում, 1858 թ. մայիսից, որպես ամսաթերթ։ Հրատարակիչներն էին՝ Լիմոնճյանի ամենաընդունակ և գործունյա աշակերտ Արիստակես Հովհաննիսյանը (1812—1878) և վերջինիս աշակերտ Գաբրիել Երանյանը։ Նրանք իրենց պարբերաթերթը տպագրում էին եվրոպական նոտաներով՝ յուրաքանչյուր համարում զետեղելով իրենց ձայնագրած «թաքսիմները», «բեշրեֆները», «սեմայիները» ու «շարքիները»։ Այսպիսով, ամսաթերթը դարձավ եվրոպական նոտագրության տարածման կարևոր նախաձեռնողներից մեկը։

«Քնար արևելյան»-ը ունեցավ ընդամենը մեկ տարվա կյանք։ Նրան փոխարինեց «Քնար հայկական»-ը, որն սկսեց հրատարակվել 1861 թ. սեպտեմբերի 1-ից որպես երկշաբաթաթերթ։ Այս անգամ նախաձեռնողը Գաբրիել Երանյանն էր, իր աշակերտ Նիկողոս Թաշճյանի հետ միասին։ Իր նախորդի համեմատությամբ, «Քնար հայկական»-ը ուներ շեշտված լուսավորական բնույթ, քանի որ յուրաքանչյուր համարում տպագրում էր սիստեմատիկ դասընթաց ինչպես եվրոպական նոտագրության, այնպես և հայկական ձայնագրության մասին։ Եվրոպական երաժշտության դասընթացը վարում էր ինքը՝ Գաբրիել Երանյանը, իսկ հայկական ձայնագրությանը՝ Համբարձում Չերչյանը։

«Քնար հայկական»-ը ունեցավ երկու շրջան։ Առաջին շրջանն ընդգրկեց վեց ամիս և լույս տեսավ 12 համար (1861 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1862 թ. փետրվարի վերջը), որից հետո ընդհատվեց և ապա նույն՝ 1862 թ. ապրիլի 30-ից սկսվեց նրա երկրորդ շրջանը, երբ աշխատանքի մեջ ներգրավվեցին Տ. Չուխաջյանը և իտալացի կոմպոզիտոր Կ. Ֆոսքինին։

Այս երկրորդ շրջանում «Քնար հայկական»-ը նույնանուն երաժշտական ընկերության պաշտոնական օրգանն էր։ Այդ ընկերությունը, որն առաջինն էր Պոլսում և ընդհանրապես հայ իրականության մեջ, կազմակերպվեց 1862 թ. մարտին, Գաբրիել Երանյանի նախաձեռնությամբ։ Լինելով երիտասարդ, բայց շատ ձեռներեց, կազմակերպչական արտակարգ ընդունակություններ ու մեծ եռանդի տեր մի գործիչ, նա իր շուրջը համախմբեց վերածննդի գաղափարներով տարված մտավորականների և կազմակերպեց «Քնար հայկական» ընկերությունը, որի նպատակն էր «երաժշտական ոգին արթնացնել ազգին մեջ»։ Երաժիշտներից բացի ընկերության մեջ ընդգրկվել էին նաև հայ մտավորականներ Մ. Պեշիկթաշլյանը, Գ. Օտյանը, Գ. Աղաթոնը, Ն. Ռուսինյանը, Մ. Մամուրյանը, Ս. Հեքիմյանը, Ս. Փափազյանը և ուրիշներ։ Երաժշտական երկշաբաթաթերթի հրատարակումից բացի, ընկերությունը շաբաթվա տարբեր օրերին ձրի դասախոսություններ էր կազմակերպում, նվիրված երաժշտության հարցերին, սիմֆոնիկ նվագախմբի համերգների օգնությամբ հասարակությանը ծանոթացնում էր եվրոպական դասական երաժշտությանը...

ձգտում էր բարձրացնել ժողովրդի գեղագիտական ճաշակը, ստեղծել և տարածել ազգային նոր երգեր, պարերգեր ու լիրիկական երգեր, թատերական երաժշտություն և այլն։ Ընկերության գործունեության շնորհիվ բարձրանում էր երաժշտության հասարակական նշանակությունը, այն կտրվում էր եկեղեցուց և ծառայում ժողովրդի լայն խավերի ազգային ինքնագիտակցության արթնացման գործին։

Ընկերության կազմում ընդգրկված երաժշտական գործիչները (Տ. Ջուխաջյան, Ա. Հովհաննիսյան, Ն. Թաշճյան, Ե. Տնտեսյան, Հ. Չերչյան և ուրիշներ). իրենց գործունեությունը շարունակեցին XIX դարի երկրորդ կեսին և զգալի չափով նպաստեցին հայ երաժշտության առաջընթացին։ Բայց ընկերության երիտասարդ հիմնադրի՝ Գաբրիել Երանյանի կյանքը շուտ ընդհատվեց։ Նա վախճանվեց 1862 թ. հոկտեմբերին, 35 տարեկան հասակում։ Իր կարճատև կյանքի ընթացքում երաժշտական-հասարակական բուռն գործունեության հետ միասին նա ստեղծեց մի շարք երգեր, որոնք այսօր էլ պահպանել են իրենց գեղարվեստական արժեքը։ Դրանցից են՝ «Կիլիկիա» (խոսք՝ Ն. Ռուսինյանի), «Հայաստան» (խոսք՝ Հ. Միրզա-Վանանդեցու), «Արիք Հայկազունք» (խոսք՝ Հ. Սվաճյանի) և այլն։

Գ. Երանյանի մահը մեծ հարված հասցրեց «Քնար հայկական» ընկերությանն ու նրա երկշաբաթաթերթին։ 1863 թ. նրանք դադարեցին գործելուց։ Դրան, անկասկած, նպաստեցին նաև Զեյթունի հերոսական ապստամբության հաջորդած թուրքական կառավարության կողմից ձեռնարկված նոր բռնություններն։

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

XIX դարի առաջին քառորդը արգասավոր չեղավ քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման տեսակետից, քանի որ Հայաստանի արևելյան հատվածը շարունակում էր գտնվել պարսկական, իսկ արևմտյանը՝ թուրքական տիրապետության տակ։ Այդ պայմաններում շինարարական գործունեություն ծավալելու, խոշոր մոնումենտալ շենքեր ու կառուցվածքներ իրականացնելու համար տնտեսական հնարավորությունները սահմանափակ էին։

Զգալիորեն փոխվում է դրությունը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, երբ ցարական, ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական իշխանությունների կողմից Հայաստանի որոշ քաղաքներում և բնակավայրերում (Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս, Նոր Բայազետ և այլն) սկսում են, ճիշտ է, դանդաղորեն, սակայն որոշակի հետևողականությամբ ու ծրագրով իրականացնել քաղաքաշինական միջոցառումներ։

Այդ տեսակետից առավել ակնառու է Երևանը[19]։

Միջնադարյան Երևանը, որի մեջ մտնում էին Բերդը, Հին քաղաքը (Շահար), Կոնդ ու Դամիր-Բուլաղ կոչվող բնակելի շրջանները, ինչպես նաև

---

19 Երևանի մասին նյութերը քաղված են Ե. Շահազիզի «Հին Երևան», Երևան, 1930, Թ. Խ. Հակոբյանի Երևանի պատմությունը (1801—1879), Երևան, 1959, В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, Ереван, 1968, աշխատություններից։

Հրազդանի կիրճում տեղավորված Ջորագյուղը (որը սկզբում ինքնուրույն գյուղ է եղել ու հետո միացել Երևանին), ռուսական տիրապետության ժամանակաշրջանում սկսում է ընդարձակվել։ Քաղաքին է միանում նաև հյուսիս-արևելյան, ամբողջապես այգեպատ բարձունքների վրա տեղավորված Նորքը։

Մոտավորապես նույն ժամանակաշրջանում Խանի-բաղ կոչվող բարձիթող տարածության վրա սկսում է առաջանալ Նոր թաղը, որը կառուցապատվում է հիմնականում Թուրքմենչայի պայմանագրի համաձայն Պարսկաստանից գաղթած հայերի միջոցով։ Բնակելի այս նոր շրջանը առաջանում է Հին քաղաքի և կենտրոնական շուկայի հրապարակի արանքում, անմիջական կապ ստեղծելով Կոնդի և Հին քաղաքի միջև։

Նոր թաղ կոչված բնակելի շրջանի կառուցապատման ժամանակ կիրառվել է ռուսական քաղաքաշինական արվեստի կանոնավոր հատակագծման առաջադիմական սկզբունքը։ Դրա շնորհիվ քաղաքի այս նոր մասում առաջանում են միմյանց զուգահեռ և ուղղահայաց փողոցներով բնակելի թաղամասեր, որոնք տարբերվում էին նախկիններից։

Երևանում իրականացված հիշյալ քաղաքաշինական աշխատանքների ատաջին փաստաթուղթը նրա գլխավոր հատակագիծն է՝ կազմված 1837 թվականին։ Նրանում քաղաքի խառնիճաղանճ կառուցապատման ֆոնի վրա առանձնանում է փողոցների կանոնավոր ցանցով նոր կառուցապատվող մասը։

Հետագա տարիներին կանոնավոր հատակագծման այս նույն սկզբունքն ընկնում է Երևանի հին մասերի վերակառուցման հիմքում։ Դրա մասին է վկայում Կովկասի փոխարքայի կողմից 1856 թ. դեկտեմբերի 23-ին հաստատված գլխավոր հատակագիծը, որով քաղաքի ողջ տերիտորիան (բացառությամբ Կոնդի և Նորքի) պետք է ենթարկվեր վերակառուցման։ Քաղաքի մյուս հատակագծում, որը վերաբերում է 1865 թ., պահպանելով հիշյալ սկզբունքները, ընդգրկվում են ավելի մեծ հողատարածություններ։

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի գործնական կիրառությունը փաստորեն սկսվում է 1862 թ., երբ նախաձեռնվում են աշխատանքներ Կրեպոստնայա (հետագայում՝ Աստաֆյան, այժմ՝ Աբովյան) փողոցի բացման ուղղությամբ։ Հյուսիս-արևելքից (պլանի գլուխ) դեպի հարավ-արևմուտք ուղղությամբ ձգվող և մոտ մեկ կմ երկարություն ունեցող այս փողոցը անցնում է քաղաքի կենտրոնական մասով՝ Հին քաղաքի և Նոր թաղի տարածությունների վրայով։ Հետագա տարիներին սկսվում է իրականացվել քաղաքի հատակագծով նախատեսված փողոցների բացումն ու կառուցապատումը։

Երևանի բերդը, որ իր գոյության ու թուրք-պարսկական տիրապետության տակ գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում ռազմավարական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող մի ամրություն էր, գրավվելով ռուսների կողմից, որոշ ժամանակ շարունակեց ծառայել այդ նպատակին։ Բացի կայազորից, այստեղ տեղավորված էր նաև նահանգապետարանը։ Այդ պատճառով գոյություն ունեցող մյուս շենքերը (խանի պալատը, հարեմը, զորանոցները, զինապահեստները և այլն) օգտագործվում էին քաղաքացիական ու զինվորական իշխանությունների կողմից։ Դրան զուգընթաց այստեղ, սկսած 1848 թ., իրականացվեցին շինարարական որոշ աշխատանքներ (հարեմի շեն-

քը հարմարեցնելով զինվորական հիվանդանոցի, կառուցելով զինվորական եկեղեցու շենքը և այլն)։ Հետագայում, երբ 1864 թ. նահանգապետարանը փոխադրվում է քաղաքի կենտրոնում (Գուբերնսկայա փողոցում) կառուցված նոր շենքը, բերդը, կորցնելով ռազմական ու վարչական իր նշանակությունը, աստիճանաբար լքվում է։

Երևանի գործարար կենտրոնը շուկայի հրապարակն էր՝ դանթարով, առևտրական ու արհեստավորական շարքերով, իջևանատներով ու այլ շենքերով։ Կային նաև երկրորդական նշանակություն ունեցող հրապարակներ, ինչպես ֆայլա-բազարը և Նոր հրապարակը (այժմ Ազիզբեկովի անվան), որը ձևավորվեց XIX դարի 50—60-ական թվականներին։

Նույն ժամանակաշրջանի քաղաքաշինական աշխատանքների արդյունքն է Անգլիական այգին (այժմ 26 կոմիսարների անվան զբոսայգի)։ Այն ըստեղծվում է Բերդի և շուկայի հրապարակի միջև ընկած ճահճապատ հողերի վրա։

Բնակչության կոմունալ սպասարկմանն էին ծառայում բաղնիքները։ Սրբանց մի մասը (ինչպես նաև այլ բնույթի կոմունալ շենքերը) վերաբերում էին պարսկական տիրապետության շրջանին և ջրի անբավարար մատակարարման հետևանքով զուրկ էին հիգիենիկ պայմաններից։ Բնակչությունը հիմնականում օգտվում էր ջրհորներից և սակավաթիվ աղբյուրներից, որոնց թիվը 1851 թ. տվյալներով 200-ի էր հասնում։ Թեև 1857 թ. սկսվում է ջրամատակարարման ցանցի կառուցումը (Գետառից), սակայն խմելու համար ո՛չ ջրհորների և ո՛չ էլ Գետառի ջրերը պիտանի չէին։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Երևանի բնակելի տների ճարտարապետությունը։ Անկախ ոճական ու ներքին կազմակերպման տարբերությունից (որն արդյունք էր նրանց բնակիչների զբաղմունքի, կենցաղային սովորույթների, ազգային պատկանելության ու դրանից բխող գեղարվեստական պատկերացումների), բազմաթիվ են բնակարանների տեղական, բնակլիմայական պայմանների համեմատ կառուցելու իմաստավորված ու ռացիոնալ լուծման ուշագրավ օրինակները։

Որպես ճարտարապետական ոչ բարձր մակարդակի օրինակ պիտի համարել Երևանի (ավելի հին եկեղեցու տեղում կառուցված) ս. Սարգիս եկեղեցու (1868) և նրա հյուսիսային կողմից կառուցված առաջնորդարանի ու դպրոցի շենքերը։ Ինչ վերաբերում է Հրազդանի ձորաբերանին կառուցված առաջնորդարանի շենքին, ապա այն ընդհանուր առմամբ օժտված էր նույն ժամանակաշրջանի Երևանի բնակելի տների հատկանիշներով։

Քաղաքի հողատարածության մեծամասնությունը զբաղեցնում էին այգիներն ու բանջարանոցները, իսկ բնակչության գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր։

Քաղաքաշինական նույն կարգի փոփոխություններ տեղի են ունենում նաև Ալեքսանդրապոլում։ Հին ամրոցի մոտ ընկած և Գյումրի անունը կրող այս փոքր բնակավայրն աստիճանաբար դառնում է ռուսական տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանի երկրորդ կարևոր քաղաքը՝ 1837 թվականից վերանվանվելով Ալեքսանդրապոլ։ Նրա զարգացման ազդակներից մեկը հանդիսացավ 1828—30 թթ. ընթացքում Էրզրումից և Կարսից շուրջ

2500 ընտանիքի ներգաղթն այստեղ։ Դրա հետ միասին, Ալեքսանդրապոլի բնակչության աճին մեծապես նպաստեց զգալի թվով ռուսական կայազորի առկայությունը քաղաքին կից բերդում։ Դրանց շնորհիվ է, որ XIX դարից առաջ ընդամենը 70 ընտանիքից բաղկացած[20] Գյումրիում 1865 թ. բնակիչների թիվը հասնում էր մոտ 17 հազարի։

Հետզհետե աճող Ալեքսանդրապոլի կորիզը հանդիսացավ «Ջերքեզի» և «Մխչոնց» ձորերի ու քարհանքերի միջև գտնվող ձորաթմբին տեղավորված հին Գյումրին, պատմական Կումայրին։ Սրա հարավ և հարավ-արևելյան մասումն է, որ սկզբում տարրերայնորեն, առանց քաղաքաշինական որոշակի ծրագրի, աստիճանաբար կազմավորվում են ու կառուցապատվում Ալեքսանդրապոլի նոր թաղամասերը, որոնցում բնակչությունը ինքնաբերաբար տեղաբաշխվում է ըստ ազգային պատկանելության («Թուրքի մահլա», «Բոշի մահլա», «Ուտումոնց մահլա», «Ռուսական թաղամաս» կամ «Սլաբոդկա»), ըստ դավանանքի («Կաթոլիկների թաղամաս» կամ «Ֆրանգների մահլա»), կամ ըստ զբաղմունքի («Ռանչպարների մահլա», տարբեր արհեստների փողոցներ և այլն)։

Թեև Ռուսաստանի հետ միացման սկզբնական շրջանում, նկատի ունենալով քաղաքի և ամրոցի ռազմավարական տեսակետից բացառիկ նշանակությունը, հիմնական հոգատարության առարկան ամրոցն էր, որի հզորացման ուղղությամբ, սկսած 1834 թ.[21] մեծ ջանքեր էին գործադրվում զինվորական իշխանությունների կողմից, ապա 1837 թ. սկսած քաղաքացիական իշխանությունների ուշադրության առարկան են դառնում նաև քաղաքի կառուցապատման հարցերը։

Ալեքսանդրապոլի բերդից և հին Գյումրիից արևելք ընկած մասի կառուցապատման ժամանակ նույնպես, ինչպես Երևանում, ղեկավարվել են կանոնավոր հատակագծման սկզբունքով։

Նոր կառուցապատված մասը, որը հետագայում հանդիսացավ քաղաքի կենտրոնը, փողոցների կանոնավոր ցանցով բաժանվեց ոչ մեծ (50×75 մ—100×150 մ) թաղամասերի։

Ալեքսանդրապոլում ևս, ինչպես Երևանում, քաղաքի հասարակական կենտրոնը շուկայի հրապարակն էր (այժմ Մայիսյան ապստամբության)։ Հրապարակի շուրջն ու նրանից սկզբնավորվող փողոցներում գտնվում էին բազմաթիվ ու բազմաբնույթ խանութներ և արհեստանոցներ։ Միևնույն ժամանակ այստեղ էին կենտրոնացած վարչական և կոմունալ (պանդոկներ, բաղնիքներ) շենքերը, եկեղեցիները։ Քարավանատների կամ պանդոկների թիվը քաղաքում տասի էր հասնում («Ծոթ ախպերանց խան», «Մատնիչյանների խան», «Սհաթրջոնց խան», «Ծաղիկենց խան», «Թարղոնց խան», «Ալմոյանների պանդոկ» և այլն)։ Սրանցից նշանավոր էր եղբայրներ Վարդան և Սարգիս Ալմոյանների պանդոկի երկհարկանի շենքը (առաջին հարկը խանութներ, երկրորդ հարկը՝ հյուրանոց), կառուցված 1865—67 թվականներին։

---

20 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 154։

21 Նույն տեղում։

Բնակչության կոմունալ սպասարկմանն էին ծառայում քաղաքի տարբեր թաղամասերում, գլխավորապես «Գյումրի-չայ» և «Մուտառա-չայ» գետերի մոտ գտնվող բազմաթիվ բաղնիքները։

Կենցաղային կարիքների համար ջրամատակարարման հարցը կարգավորվում էր գերազանցապես աղբյուրների միջոցով։ Կենցաղային ջրերի կուտակումը կատարվում էր քաղաքի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան մասերից քյահրեզային տնտեսության միջոցով։ Կուտակված ջրերը քաղաքի հյուսիսային մասում առնվում էին թրծված կավի խողովակների մեջ, որոնցով նրանք հոսում էին դեպի քաղաքի Մուտառա-չայի ուղղությամբ։ Աղբյուրների զգալի քանակություն տեղաբաշխված էր քաղաքի տարբեր թաղամասերում։ Նրանցից շատերը («Ձիթողցոնց», «Ուստա Մուկուչի», «Քոռ Ավոյի» և այլն) իրենց վրա կրում են գյումրեցի հմուտ աղբյուրաշեն վարպետների ճարտար ձեռքերի դրոշմը։

Կառուցված շենքերից հիշատակելի է Ամենափրկիչ եկեղեցին։ Հավատացյալ համայնքի միջոցներով այն կառուցվում է շուկայական հրապարակում 1859—1873 թթ.[22] ընթացքում և իր ազդեցիկ տեսքով հարստացնում հրապարակի համայնապատկերը։ Նրա կառուցող վարպետները (քարտաշ-որմնադիրներ) Պապիկ և Թադևոս Կարապետյանները ու հյուն Արդար Մանուկը նպատակադրված կերպով այս եկեղեցու շենքում ջանացել են վերարտադրել Անիի Մայր տաճարի ձևերը։

Մեկ ուրիշ եկեղեցի 1843—1855 թթ.[23] կառուցում են Էրզրումից գաղթած հայ կաթոլիկները՝ Կանոնիկոս Աղեքսանդր վարդապետի նախաձեռնությամբ։

Այսպիսով, Ալեքսանդրապոլը քաղաք է դառնում Ռուսաստանին միացվելուց հետո, կազմավորելով քաղաքաշինական առաջադեմ սկզբունքների ու տեղական շինարարական ավանդույթների հետ սերտորեն զուգակցելով իր ուրույն ճարտարապետական դեմքը։

Նթե նշված քաղաքաշինական սկզբունքը Երևանում և Ալեքսանդրապոլում կիրառություն է ունեցել մասնակիորեն, քաղաքատարածության որոշ մասի վրա, ապա ամբողջությամբ այն կիրառվել է Արևելյան Հայաստանի բնակավայրերից մեկի՝ Գորիսի կառուցապատման ժամանակ։ Նրա հիմնադրման աշխատանքներն սկսվել են 1850 թ., երբ Որոտան գետի վտակ Գորիս գետակի ձախափնյա լանջի վրա տեղավորված անձավային բնակարաններով հարուստ հին Կյորես գյուղի բնակիչները փոխադրվում են գետակի աջափնյա հարթավայրի վրա նոր հիմնադրվող բնակավայրը։

Բնակավայրի տնտեսական զարգացման պայմանները առավել նպաստավոր և հեռանկարային են դառնում հատկապես Գորիս—Շուշի խճուղային ճանապարհաշինության (1869—1879) հետևանքով։ Այդ կապակցությամբ էլ Գորիսի հատակագծման և կառուցապատման աշխատանքներն ավելի կազմակերպված են ընթանում 1870 թվականից սկսած։

---

22 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 154։

23 Նույն տեղում, էջ 155։

Պատմական նույն ժամանակաշրջանում, Հին Գավառ (Քյավառ) բնակավայրի տեղում, 1829 թ. այստեղ գաղթած հին-բայազետցիները հիմնադրում են նոր Բայազետ (այժմ Կամո) բնակավայրը։ Սա տարածվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին, Նորադուզի թերակղզուց մոտ 6 կմ դեպի արևմուտք ընկած ու հյուսիսային քամիներից լավ պահպանված գոգավորության մեջ։

Ինչպես երևում է ավելի ուշ ժամանակաշրջանի մեկ փաստաթղթից, որը վերաբերում էր նոր Բայազետում կատարվող քաղաքաշինական աշխատանքների նկատմամբ Երևանի նահանգական վարչության կողմից իրականացվող վերահսկողությանը, բնակավայրն ունեցել է նահանգապետի կողմից հաստատված գլխավոր հատակագիծ։

Գլխավոր հատակագծում փողոցների կանոնավոր ցանցով առաջացած ուղղանկյուն թաղամասերը (և նրանցում գտնվող հողամասերը) համարակալված էին։ Նոր Բայազետն ուներ չորս հիմնական թաղ՝ Բանտի, Կալերի, Խաչերի և Տալիզի։ Վերջինս հիմնականում կառուցապատվել է 1835—1840 թթ. շուկայից հարավ և Բանտի ու Կալերի թաղերից արևմուտք։ Այստեղ էին գտնվում ոստիկանատունը, բուժարանը, դպրոցը, բաղնիքը, հյուրանոցը և այլն։ Քաղաքի հիմնադրման և զարգացման մեջ զգալի դեր են կատարել Արծրունիների տոհմի ներկայացուցիչները։ Մկրտիչ Արծրունու գլխավորությամբ այստեղ հաստատվել են վերաբնակիչները, իսկ նրա եղբոր՝ Բարսեղ աղայի միջոցներով կառուցվել են իրար կից երկու դպրոցների շենքերը, ինչպես նաև խանութներ։ 1857—1860 թթ. ընթացքում Նոր Բայազետի գավառապետ Թիֆլիսեցի իշխան Իսահակ Աբելյան Աբա-Մելիքյանցի թելադրանքով ու նախաձեռնությամբ կառուցվում են հարյուրի չափ բարեկարգ կրպակներ[24], որոնցով բնակավայրի հասարակական և գործարար կենտրոնը ստանում է իր ճարտարապետական ձևակերպումը։

Քննվող ժամանակաշրջանը բեղմնավոր եղավ հայկական ժողովրդական բնակարանի զարգացման տեսակետից։ Հայաստանի տարբեր շրջաններում առաջացան բնակարանի տիպեր, որոնք համակողմանիորեն համապատասխանում էին ինչպես տվյալ շրջանի բնա-կլիմայական պայմաններին, այնպես էլ բնակիչների զբաղմունքին, նիստ ու կացին և այլն։

Հայաստանի լեռնային շրջաններում առավելապես տարածված էր բնակարանի ավանդական տիպը՝ տունը կամ գլխատունը (ղարադամ, մրատուն, տան-տուն, հացատուն, թոնրատուն, կրակատուն, քուրսու տուն և այլն)։ Ինչպես հայտնի է, բնակարանի այս տիպը հայերի, վրացիների ու այլ ժողովուրդների մոտ առաջացել է շատ հնուց։

Հատակագծում քառակուսի կամ քառանկյունի (2, 4), առանձին դեպքերում նաև ավելի քանակությամբ փայտյա սյուների վրա հենվող ու Հազարաշեն կոչվող փայտագմբեթ ծածկով (կենտրոնում՝ երդիկ), գետնափոր կամ կիսագետնափոր, երբեմն դրսից «շվաք» կոչվող սրահով տան այս տիպը,

---

24 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 36—82։ Տե՛ս նաև Ն. Մ. Պապոյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 30—36։

որ անհիշելի ժամանակներից կացարան է հանդիսացել միաժամանակ մարդկանց և անասունների համար, XIX դարում իր հետագա զարգացումն է ապրում։ Այն հիմք է ծառայում, այսպես կոչված, «կոմպլեքս տան» առաջացման համար։ «Կոմպլեքս տան» հիմնական կորիզը շարունակում է մնալ գլխատունը, որին ավելանում են գլխատան առանձին ֆունկցիաները անցյալում կատարող մասեր՝ լրացուցիչ սենյակներ, գոմ, մառան, հացատուն և այլն։ Այսպիսով, ավանդական գլխատան հիման վրա առաջանում է բնակարանի մի նոր տիպ, որը համեմատաբար ավելի բարեկեցիկ պայմաններ է ստեղծում բնակչի համար ու նպատակահարմար դառնում տնտեսությունը վարելու տեսակետից[25]։

Հայաստանի դաշտավայրային (Արարատյան դաշտ) ու նախալեռնային (Աշտարակ, Կոտայք) շրջաններում սկսվում է կազմավորվել բնակարանի մի այլ տիպ, որը համապատասխան լինելով հանդերձ տեղի բնա-կլիմայական պայմաններին, առավելապես հարմարեցված էր այգեգործությամբ ու խաղողագործությամբ զբաղվող բնակիչների կենցաղին։ Սրանց լավագույն օրինակները հանդիպում են Երևանում և նրա Կոնդ ու Նորք թաղերում, Քանաքեռում, Էջմիածնում, Աշտարակի շրջանի Աշտարակ, Օշական, Եղվարդ ու այլ գյուղերում։

Քննվող ժամանակաշրջանը բնորոշ է ոչ միայն արհեստների ու առևտրի, այլև կրթության օջախների զարգացմամբ։ Դպրոցական շենքերից հիշատակելի են Երևանի թեմական կամ առաջնորդարանի (1838), Հառիճա վանքի (1857), Վաղարշապատի (Էջմիածնի) վարժարանի կամ «ժառանգավորաց դպրոց»-ի (1813) և Գևորգյան ճեմարանի (1869) դպրոցական շենքերը։

Արևելյան Հայաստանի ազատագրման համար ռուսների նկատմամբ հայ ժողովրդի երախտագիտությունը նույնպես ճարտարապետական մարմնավորում է ստացել։ 1834 թ., Էջմիածնից ոչ հեռու, կանգնեցվել է կոթող ի հիշատակ այն ռուս զինվորների, որոնք ընկան 1827 թ. օգոստոսի 17-ի Օշականի ճակատամարտում։

Տարբեր են հիշատակված շենքերն իրենց ծավալով, բովանդակությամբ ու ճարտարապետական-գեղարվեստական մակարդակով, ինչպես տարբեր են ճարտարապետական այն միջավայրերը, որոնցում նրանք դրվել են, եթե մի քանիսը դրանցից (Երևանի առաջնորդարանի, Հառիճա վանքի դպրոցներ) ինչոր չափով արտահայտում են հայկական ազգային ճարտարապետության ավանդույթները, ապա Գևորգյան ճեմարանի շենքում զգացվում է ռուսական բարոկկոյի ճարտարապետության, իսկ Օշականի ճակատամարտի հերոսների հիշատակին կանգնեցրած կոթողում՝ ռուսական կլասիցիզմի ճարտարապետության ազդեցությունը։

Հայաստանի որոշ վանքերում դեռևս XVII դարից սկսած վերաշինական ու կառուցապատման աշխատանքները շարունակվում են նաև քննվող ժամանակաշրջանում։ Այդ տեսակետից բնորոշ է նախ և առաջ Էջմիածնի վան-

---

25 Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, 1959, էջ 43—75։ Տե՛ս նաև Է. Հակոբյան, Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը, Երևան, 1964։

քը, որի համակառուցը հարստանում է նոր շենքերով։ Բացի ճեմարանից, հիշատակելի է 1846 թ. Ներսես V Աշտարակեցի կաթողիկոսի օրոք կառուցված զգալի չափեր (170×70 մ) և խորություն (6 մ) ունեցող լիճը, որը ծառայում էր վանքից դեպի հարավ ընկած վանքապատկան տարածության վրա ստեղծված արհեստական անտառի ոռոգման, ինչպես նաև միաբանների հանգստի նպատակներին։

1831 թ. Եփրեմ կաթողիկոսին հաջորդած Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը շինել է տվել Սինոդի շենքը (այժմ վանքի միաբանների ճաշարանի շենքը)։

1869 թ. Մայր տաճարի արևելյան կողմից, նրա ամբողջ լայնությամբ ավելացվում է մի շենք՝ եկեղեցական սպասքը պահելու համար (այժմ ծառայում է որպես վանքի թանգարան)։ Իր ճարտարապետական ձևերով՝ լուծված կլասիցիզմի մոտիվներով, նա չի ներդաշնակում տաճարի հին ձևերին։

* * *

Հայ ժողովրդի շինարարական գործունեությունն իր բազմապիսի դրսևորումներն ունեցավ նաև բուն հայրենիքից դուրս, գաղթավայրերի անծայրածիր տարածքի վրա, ինչպես ցարական Ռուսաստանի սահմաններում (Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Լեհաստան, Պետերբուրգ, Մոսկվա, Նոր Նախիջևան և Աստրախան), այնպես էլ աշխարհի մի շարք երկրներում (Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս, Ռումինիա, Հունգարիա, Բեսարաբիա և այլն)։

Թիֆլիսում ու Բաքվում հայերը, բացի ժողովրդական բնակարանի բացառիկ ուշագրավ հուշարձաններից (հատկապես Թիֆլիսում), որոշ թվով նաև մոնումենտալ եկեղեցական ու քաղաքացիական շենքեր են կառուցել։ Դրանցից հիշատակելի են Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (հին) շենքը (1824), Վանքի կաթողիկե եկեղեցու վերակառուցումը (XIX դ. սկզբին) և Թիֆլիսի առաջին պրոֆեսիոնալ թատրոնի շենքը Երևանյան հրապարակում (այրվել է 1874 թ.), հետագայում նրա տեղը կառուցվել է Թամամշյանի քարավանատունը[26]։

Նույն ժամանակաշրջանում շինարարական գործունեություն է ծավալվում նաև Բաքվի հայերի կողմից, որոնք 1870 թ. կառուցում են Պարապետի ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցին[27]։

Երկու եկեղեցական շենքեր՝ ս. Գրիգոր Լուսավորիչ (1783—1807) և գերեզմանատան ս. Կարապետ (1865—1881) եկեղեցիները կառուցվել են Նոր Նախիջևանում[28]։

Մոսկվայում Լազարյանների Արևելյան լեզուների ճեմարանի շենքի միջին (կենտրոնական) մասի շինարարությունն իրականացվել է 1814—1816 թթ., իսկ թևերինը՝ 1817—1823 թթ. ընթացքում։ Գլխավոր շենքի առջև ընկած բակում 1822 թ. կանգնեցվել է կոթող՝ ի պատիվ ճեմարանի հիմնադիրների

---

26 *О. Х. Халпахчян*, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957, էջ 37։

27 Նույն տեղում, էջ 38։

28 Նույն տեղում, էջ 32։

Հովհաննես և Հովակիմ Լազարյանների։ Բացի վերոհիշյալից, նույն ժամանակաշրջանին է վերաբերում Մոսկվայի հայկական երկու՝ ս. Վերափոխման (1820—30) և Վագանկովյան հայկական գերեզմանատան ս. Հարություն (1815) եկեղեցիների շինարարությունը[29]։

Հայերը շինարարական գործունեություն են ծավալել նաև այնպիսի նշանավոր գաղթավայրերում, ինչպիսիք են Լեհաստանը, Բեսարաբիան և Ղրիմի թերակղզին, որոնք բավականաչափ հարուստ են միջնադարին վերաբերող հայ ճարտարապետական հուշարձաններով։ Դրանցից է XIX դարի 70-ական թթ. Հնչեստում (այժմ Կոտովսկոյե, Մոլդավական ՍՍՀ) կառուցված հայկական եկեղեցին, որը հիմնադրել է Միրզայան Մանուկ բեյի որդի Հովհաննեսը։

Թեև Անդրկովկասի քաղաքներում կառուցված (գլխավորապես եկեղեցական) շենքերի հեղինակները ջանացել են վերարտադրել հայկական ճարտարապետության ավանդական ձևերը, ապա Մոսկվայում և Նոր Նախիջևանում կառուցված եկեղեցիներն իրենց վրա կրում էին ռուսական կլասիցիզմի դարաշրջանի ճարտարապետության որոշակի դրոշմը։ Նույնը կարելի է ասել նաև Լազարյան ճեմարանի շենքի ճարտարապետության վերաբերյալ։

Արևմտյան Հայաստանում ապրող հայերի շինարարական գործունեությունը բնութագրող մեր տվյալները առավել չափով վերաբերում են Կ. Պոլսին։ Այստեղ կառուցված պաշտամունքային, կրթական, մշակութային և բուժական շենքերից հիշատակվում են 1833 թ. ճարտարապետ Կարապետ Պալյանի կառուցած Պեշիկթաշի հայկական եկեղեցին, Սկյուտարի ճեմարանը (1838), Պեշիկթաշի դպրոցը, ինչպես նաև Օրթագյուղի Բարեսիրաց (1867—1870) և Բերայի արևելյան թատրոնների շենքերը, որոնցից առաջինը ստեղծվել է վերակառուցման հետևանքով, իսկ երկրորդը կառուցվել է ճարտարապետ Հակոբ պեյ Պալյանի միջոցներով։ Բացի վերոհիշյալներից, հարկ է հիշատակել նաև Ծդի-Գյուլի ազգային հիվանդանոցի շենքը (1832), կառուցված ճարտարապետներ Հովհաննես ամիրա Սերվերյանի և Կարապետ ամիրա Պալյանի կազմած նախագծով[30]։

XIX դարի առաջին կեսին շինարարական որոշ գործունեություն է ծավալում Կարինի հայկական համայնքը։ Դրա արդյունք են Կարնո ժառանգավորաց վարժարանի (բացվ. 1858 թ.) համար Մուտուռկու ս. Լուսավորիչ վանքին կից և քաղաքի «Արծնյան» վարժարանի համար ս. Աստվածածին եկեղեցու մոտ 1866 թ. կառուցված շենքերը[31]։

Բեղմնավոր է եղել հնդկահայերի շինարարական գործունեությունը հատկապես Մադրասում և Կալկաթայում։ Կառուցված շենքերից հիշատակելի են Մադրասի «Հայոց մարդասիրական ճեմարանի» (1821) ու Կալկաթայի «Ս. Սանդրխտյան» աղջկաց դպրոցի (1846), Մադրասի Շիրազեցու (1809) և Սար-

---

29 Նույն տեղում։

30 Թվարկված կառուցումների մասին տե՛ս «Ճիշատակարան», Կ. Պոլիս, 1910, էջ 165—166, 184։

31 Ղազար Ջարըգ, Ծուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրութ, 1957, էջ 162—164։

գիս Մատուր Աղավելյանի (1818), Կալկաթայի Մ. Թաղիադյանի «Արարատյան ընկերության» (1845), Պողոս Վիչենյանի հիմնադրած և «Արծիվ» (1846) տպարանների, ինչպես նաև Կալկաթայի եկեղեցու և գրադարանի շենքերը[32]։

Պակաս բեղմնավոր չի եղել պարսկահայերի շինարարական գործունեությունը Նոր Ջուղայում, Սպահանում և Թավրիզում։ XVII—XVIII դդ. վերաբերող եկեղեցական ինքնատիպ շենքերով հարուստ Նոր Ջուղայում XIX դարի առաջին կեսին հիմնադրվում են մի քանի կրթական օջախներ՝ Նոր Ջուղայի հայկական դպրոցը՝ 1833 թ. (գործել է մինչև 1837 թ.), Դավրեժի թաղի ս. Մինաս եկեղեցու գավթի դպրոցը (1853) և Նոր Ջուղայի Օրիորդաց դպրոցը (1858), որոնց համար, պետք է ենթադրել, կառուցվել են հատուկ շենքեր։ XIX դ. առաջին կեսին բավականաչափ շենքեր են կառուցվում հայության հանգրվան դարձած Եգիպտոսի Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներում[33]։

Կիրակոս եպիսկոպոս Երուսաղեմցու առաջնորդության օրոք (1825—1835 թթ.) է իրականացվել Կահիրեի ս. Սարգիս եկեղեցու մոտակայքում Հայկական դպրատուն-հյուրանոցի և Հոգետուն-հիվանդանոցի երկհարկանի շենքերի շինարարությունը։ Ավելի ուշ, 1839 թ. Պեյն էլ-Սուրեյնի փողոցում կառուցվում է ս. Աստվածածին եկեղեցին։ Սա ուղղանկյուն հատակագծով (չափերը՝ 14×36 մ, բարձր. 18 մ), անսյուն, արևելյան կողմից ավագ խորանով և զույգ ավանդատներով, քարաշեն պատերով ու փայտաշեն ծածկով մի պարզ շենք է, միակ մուտքով՝ արևմտյան կողմից։

Նույնատիպ, սակայն ավելի փոքր չափի է Կահիրեի Ֆում-էլ-Խալիկէ զերեզմանատանը 1843 թ. կառուցված ս. Մինաս մատուռը։ Սրա հյուսիս-արևելյան անկյան վրա կանգնեցված է անշուք մի զանգակատուն։

Կահիրեի հայկական համայնքի շինարարական ջանքերի արդյունք են նաև Պեյն էլ-Սուրեյնի փողոցում 1852 թ. կառուցված առաջնորդարանի շենքը և Խորենյան վարժարանի ու աղա Կարապետ Գալուստի նվիրատվությամբ 1854 թ. կառուցված շենքը (որի պատճառով վարժարանը հետագայում կոչվել է Գալստյան)։ Մի փոքր մատուռ՝ ս. Թադեոս-Բարդուղիմեոս անունով 1835—36 թթ. կառուցվել է Ալեքսանդրիայից ոչ հեռու գտնվող Տիսանիս գյուղում, հայազգի Աբրահամ փաշա Բարթուղի ագարակում։ Ալեքսանդրիա քաղաքում «Արամյան» կամ «Պողոսյան» դպրոցի հիմնադրումը տեղի է ունենում 1851—1866 թթ.[34]։

Ռումինահայ գաղութում կառուցված շենքերից հիշատակելի են Սուչավայի հայկական դպրոցի շենքը, Յասիի հայկական դպրոցը (1841) և տպարանը (1847)։

Հայաստանից դուրս գործել են բազմաթիվ հայազգի ճարտարապետներ։ Դրանցից էր Պալյանների ճարտարապետական տոհմը, որի մեծատաղանդ ներկայացուցիչները XIX դարի ընթացքում հաջորդաբար գրավելով սուլթա-

---

32 Տեղեկությունները քաղված են Ա. Գ. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» գրքից, հատ. Բ, Երևան, 1967, էջ 271—275։

33 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 73։

34 Նույն տեղում։

նական Թուրքիայի արքունական ճարտարապետի պաշտոնը, Կ. Պոլիսը և շրջակայքը զարդարեցին ճարտարապետական հոյակապ կոթողներով։

Առաջինը դրանցից հանդես է գալիս Դրիգոր խալֆա Պալյանը (վախճանվել է 1823 թ.)։ Սրա նախագծերով կառուցվել են 12-ից ավելի տարբեր բնույթի շենքեր (պալատներ, մզկիթներ, զորանոցներ, քեոշկեր և այլն)։ Դրանցից առավել կարևորներն են Սարա Բուրնի, Պեշիկթաշի (Դոլմա Բախչեի) և Բեյլեր-բեյի պալատները։

Արքունական ճարտարապետի պաշտոնում հորը փոխարինում է Կարապետ ամիրա Պալյանը (1800—1866)։ Սրա նախագծերով կառուցվել են 10-ից ավելի շենքեր, այդ թվում նաև Պեշիկթաշի հայկական եկեղեցին (1838)։ Երևի վերջինիս նախագծելու կապակցությամբ էլ նա ճանապարհորդություն է կատարել դեպի Անի, ծանոթանալու համար Բագրատունյաց մայրաքաղաքի ճարտարապետական բարձրարվեստ կոթողների ավանդական ձևերին։ Լինելով իր ժամանակի առաջադեմ հայ գործիչներից, Կարապետ ամիրա Պալյանը հոգ էր տանում իր որդիների մասնագիտական ուսուցման մասին, նրանցից երեքին՝ Նիկողոս բեյին, Սարգիս բեյին և Հակոբ բեյին ուղարկելով Փարիզ, ուր նրանք ճարտարապետական կրթություն են ստանում Սեն-Բարբի վարժարանում (Սարգիս բեյը՝ նաև Լ'էկոլ դ'Բոզարում)։ Հաջորդաբար վերադառնալով Կ. Պոլիս, նրանք ծավալում են իրենց ճարտարապետական բեղմնավոր գործունեությունը սկզբում հոր ղեկավարությամբ, իսկ այնուհետև ինքնուրույն։

Կարճ է եղել Նիկողոս բեյ Պալյանի (1826—1858) ստեղծագործական կյանքը, ընդամենը 13 տարի (1845—1858)։ Այդ ժամանակամիջոցում նա նախագծել է Դոլմա Բախչե պալատի գահասրահն ու պատվո երկու դռնեը, երկու մզկիթ և մեկ քեոշկ, որոնք իրականացվել են։ Նրա ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում Զրաղանի պալատի նախագիծը, որն իր վերահաս մահվան հետևանքով իրականացվել է նրա Սարգիս և Հակոբ եղբայրների ղեկավարությամբ։

Պալյանների ճարտարապետական տոհմում առավել բեղմնավոր է եղել Սարգիս բեյ Պալյանի (1835—1899) ստեղծագործական կյանքը։ Սկզբի երեք տարիները (1855—1858) նա գործակցել է իր Նիկողոս եղբորը, գլխավորապես զբաղվելով նախագծումով (ավագ եղբայրը հիմնականում հանդես էր գալիս շինարարության կազմակերպչի դերում)։ Այնուհետև, եղբոր մահից հետո, շարունակելով ստեղծագործել ինքնուրույն, նա ոչ միայն հետևում է Զրաղանի պալատի իր եղբոր նախագծի իրականացմանը, այլև նախագծում ու կառուցում 25-ի հասնող շենքեր։

Կարապետ ամիրայի կրտսեր որդին՝ Հակոբ բեյ Պալյանը (1836—1875) նույնպես ստեղծագործական համեմատաբար կարճ կյանք է ունեցել։ Ավագ եղբոր՝ Սարգսի հետ միասին զբաղվելով հանդերձ Զրաղանի և Բեյլեր բեյի պալատների կառուցմամբ, ինքնուրույն նախագծել ու կառուցել է հինգ տարբեր շենքեր։

Այսպիսով, Պալյան ճարտարապետների տաղանդավոր ներկայացուցիչների ստեղծագործական անդուլ ջանքերով սուլթանական Թուրքիայի մայրա-

քաղաք Կ. Պոլսում XIX դարի ընթացքում կառուցվել են ավելի քան 60 պալատներ, քեոշկեր, մզկիթներ, եկեղեցի, դպրոց և այլ շենքեր։ Սրանք մոնումենտալ, ճարտարապետական-գեղարվեստական բարձրարժեք շինություններ են, որոնք կարևոր տեղ են գրավում Կ. Պոլսի ճարտարապետության մեջ։

Իրենց զգալի ներդրումը եգիպտոսի արաբական ճարտարապետության մեջ կատարել են հայազգի ճարտարապետներ Գևորգ Ռափայելյանը և Ջենոբ Միրամեթճյանը։ Դրանցից առաջինը եղել է Մուհամեդ Ալիի կառավարության շրջանում (1805—1849) եգիպտոսում նախագծված և կառուցված մի շարք կարևոր հուշարձանների հեղինակը, իսկ երկրորդը՝ Իսմայիլ փաշայի պալատական ճարտարապետը, որը կառուցել է Կահիրեի իշխանությունների պալատների զգալի մասը[35]։ Եգիպտահայ նշանավոր ճարտարապետ Կ. Պալյանի վկայությամբ, Ջենոբ Միրամեթճյանի նախագծով կառուցված «Կեզիրեյի Բալիսի մավրիտանական սյունաբարձ ճեմելիքները Ալհամպրայի նմանողությամբ, պատիվ կբերեն հայոն տաղանդին»[36]։

Հայազգի շատ ճարտարապետներ մասնակցել են նաև այլ երկրների ճարտարապետական կոթողների ստեղծմանը։

* * *

Այսպիսով, հայ ժողովրդի պատմության 1801—1870 թթ. ընդգրկող էպոխան կարևոր իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջան էր, որի ընթացքում Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին, զարգացման առաջավոր ուղի բռնեց։ Հայ աշխատավորությունը մասնակից դարձավ Ռուսաստանի հեղափոխական պայքարին, որը հանգեցրեց ցարիզմի և բուրժուա-կալվածատիրական կարգերի տապալմանը, Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի արևելահայ հատվածի ազատագրմանը։

Հայ ժողովրդի արևմտյան հատվածը մնաց թուրքական բիրտ լծի տակ և ենթարկվեց ծանր հալածանքների ու բնաջնջման։

---

35 Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Բ, Երևան, 1967, էջ 75։

36 Կ. Պալյան, Ճարտարապետությունը եգիպտոսի մեջ և ճարտարապետների դերը (տե՛ս Ս. Պարբեյան, Եգիպտահայ տարեցույց, 1913, էջ 112)։

ԿԱՐԵՎՈՐ ԱՆՑՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1800

12 հունվարի — *Թուրք-ֆրանսիական պայմանագիր, որով Եգիպտոսը վերադարձվում է Թուրքիային։*

— *Անգլո-թուրքական պայմանագիրը, որով Սև ծովը և նեղուցները փակ են հայտարարվում։*

1801

18 հունվարի — *Պավել I-ի հրովարտակը Վրաստանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ։*

Հունվար — *Անգլո-պարսկական պայմանագիրը ընդդեմ Ֆրանսիայի և Ռուսաստանի։*

9 մարտի — *Հ. Արղությանը վախճանվում է Թիֆլիսում։*

12 սեպտեմբերի — *Ալեքսանդր I-ի մանիֆեստով Արևելյան Վրաստանը միացվում է Ռուսաստանին։ Վրաստանի հետ Ռուսաստանին են միացվում Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները։*

— *Ջմյունիայում հիմնադրվեց Ազգային հիվանդանոցը։*

1801—1803 — *Գեներալ Կ. Ֆ. Կնորինգի կուսակալությունը Կովկասում և Վրաստանում։*

1802

26 փետրվարի — *Թիֆլիսում ծնվեց պատմաբան, հրապարակախոս և բանաստեղծ Գաբրիել Պատկանյանը (վախճ. 1889 թ. ապրիլի 13-ին, Պետերբուրգում)։*

26 սեպտեմբերի — *Թիֆլիսում բացվում է ռուսական Ազնվականական ուսումնարանը՝ ազնվական ծագում ունեցող վրացի և հայ երեխաների համար։*

14 դեկտեմբերի — *Կեսարիայում ծնվեց մանկավարժ Հակոբ Մանվելյանը (վախճ. 1870 թ. օգոստոսի 27-ին)։*

1803

3 հունվարի — *Ջորագյուղում (Երևանի գավառ) ծնվեց գրող, մանկավարժ և հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը (վախճ. 1858 թ. հունիսի 10-ին, Պարսկաստանի Շիրազ քաղաքում)։*

— Վենետիկում սկսում է լույս տեսնել «Եղանակ Բյուզանդյան-Բազմավեպ» տարեգիրքը՝ Ղ. Ինճիճյանի խմբագրությամբ։ Լույս է ընծայվել մինչև 1820 թվականը։

1803—1806 — Գեներալ Պ. Դ. Ցիցիանովը Կովկասի և Վրաստանի կառավարչապետ։

— Ռուսաստանին միացվեց Մեգրելիան։

1804

1804—1813 — Ռուս-պարսկական պատերազմը։

3 հունվարի — Ռուսական զորքերը գրավում են Գյանջան, որը վերանվանվում է Ելիսավետպոլ։ Գյանջայի խանության հետ Ռուսաստանին են միացվում Շամշադինի, Բասարգեչարի և այլ գավառներ։

Փետրվար — Սկսվում է թուրքական բռնապետության դեմ ուղղված սերբերի ազգային-ազատագրական պայքարը։

Մայիս — Երևանի Մամադ խանը, տեղեկանալով ռուսների առաջխաղացման մասին, կարգադրում է խանության հայ բնակչությունից շուրջ 20000 հոգի բռնագաղթեցնել Կարսի փաշայություն և այնտեղ պահել մինչև պատերազմի ավարտը։

Մայիս–սեպտեմբեր — Ռուսական զորքերի Երևանյան առաջին արշավանքը՝ գեներալ Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ։

10 հունիսի — Ռուսական զորքերը Գյումրու մերձակայքում պարտության են մատնում Աբաս Միրզայի զորքերին և ազատելով Կարս քշվող հայերին՝ բնակեցնում են Փամբակում ու Թիֆլիսում։

2 հուլիսի — 5000 զինվորից բաղկացած ռուսական զորքը պաշարում է Երևանը։

3 սեպտեմբերի — Ռուսական զորքերը վերացնում են Երևանի բերդի պաշարումը և վերադառնում Վրաստան։

— Ռուսաստանին են միացվում Իմերեթը և Գուրիան։

1805

30 Մարտի — Շորագյալի սուլթանության (Արևելյան Շիրակ) կենտրոն Արթիկի գրավումը ռուսական զորքերի կողմից։ Հոկտեմբերին Շորագյալի սուլթանությունն ընդունում է ռուսական հպատակություն։

14 մայիսի — Քյուրակ-չայ գետի ափին կնքվում է պայմանագիր, որի համաձայն Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին։

21 մայիսի — Ռուսաստանին է միացվում Շաքու (Նուխիի) խանությունը։

25 դեկտեմբերի — Ռուսաստանի կազմի մեջ է մտնում Շիրվանի (Շամախու) խանությունը։

— Մամադ խանի փոխարեն Երևանի խան է նշանակվում Մեհթի-ղուլի խանը։

1806

1806—1812 — Ռուս-թուրքական պատերազմը։

8 փետրվարի — Բաքվում դավադրաբար սպանվում է գեներալ Ցիցիանովը։

11 ապրիլի — *Խասգյուղում (Կ. Պոլիս) ծնվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ Ռուբեն Անդրեասի Փափազյանը (վախճ. 1857 թ. մարտի 6-ին, Զմյուռնիայում)։*

22 հունիսի — *Ռուսական բանակը գրավում է Դերբենդը։*

18 դեկտեմբերի — *Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը։*

— *Կ. Պոլսում հիմնվում է արևմտահայերի առաջին գրավաճառանոցը՝ քիթաբնճի Մարգարի նախաձեռնությամբ։*

1806—1809 — *Ֆելդմարշալ Ի. Վ. Գուդովիչը Վրաստանի կառավարչապետ։*

1807

4 մայիսի — *Կնքվում է Ֆինկենշտեյնի պայմանագիրը Ֆրանսիայի և Պարսկաստանի միջև, որն ուղղված էր Ռուսաստանի և Անգլիայի դեմ։*

30 մայիսի — *Թուրքական սերասքյար Յուսուֆ-զիա փաշան 10 հազար զինվորներով հարձակվում է Գյումրու վրա։*

18 հունիսի — *Գեներալ Գուդովիչի գլխավորած ռուսական զորքերը Ախուրյանի ափին պարտության են մատնում թուրքական բանակին։*

8 հուլիսի — *Կնքվում է Տիլզիտի հաշտությունը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև։*

1807—1808 — *Գեներալ Գարդանի միսիան Պարսկաստանում։*

1808

26 սեպտեմբերի—30 նոյեմբերի — *Ռուսական զորքերի Երևանյան երկրորդ արշավանքը։*

1 նոյեմբերի — *Գեներալ-մայոր Նեբոլսինը գրավում է Նախիջևանը։*

30 նոյեմբերի — *Վերացվում է Երևանի բերդի պաշարումը։*

Հոկտեմբեր — *Թուրքական մեծ սադրազամ Յուսուֆ փաշան հրապարակում է այլադավան հպատակների քաղաքական իրավունքները սահմանափակող մի հրամանագիր։*

20 դեկտեմբերի — *Զմյուռնիայում ծնվեց բանասեր, կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչ Մսեր Գրիգորի Մսերյանցը (վախճ. 1873 թ. օգոստոսի 2-ին, Մոսկվայում)։*

— *Մարաշի Գալանտեր փաշան 9 ամիս շարունակ պաշարում է Զեյթուն գավառը, սակայն գրավել չկարողանալով, հեռանում է։*

1809

17 հունվարի — *Դարդանելում կնքվում է անգլո-թուրքական պայմանագիրը. ավարտվում է անգլո-թուրքական 1807—1809 թթ. պատերազմը։*

Մարտ — *Անգլո-պարսկական նախնական պայմանագրի կնքումը, որով Անգլիան խոստանում էր օգնել Պարսկաստանին ռուս-պարսկական պատերազմում։*

2 օգոստոսի — *Կալկաթայում վախճանվեց հայ ազատագրական շարժման աշքի ընկնող ղեկավարներից մեկը՝ Հովսեփ Էմինը (ծնվ. 1726 թ., Պարսկաստանի Համադան քաղաքում)։*

15 հոկտեմբերի — *Քանաքեռում ծնվեց հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը (անհետացավ 1848 թ. ապրիլի 2-ին)։*

1809—1810 — *Գեներալ Ա. Պ. Տորմասովը Կովկասի կառավարչապետ։*

1810

15 փետրվարի — *Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում հիմնադրվում է հայոց լեզվի ամբիոն՝ Հակոբ Շահան Ջրպետյանի ղեկավարությամբ։*

10 մայիսի — *Թեոդոսիայում ծնվեց Գաբրիել Այվազովսկին (վախճ. 1880 թ. ապրիլի 8-ին, Թիֆլիսում)։*

8 դեկտեմբերի — *Ռուսական զորքերը գրավում են Ախալքալաքը։*

— *Ջելթոնը ապստամբում է թուրքական տիրապետության դեմ։*

— *Աստրախանում պաշտոնապես բացվում է Աղաբաբյան հայկական դպրոցը։*

1811

18 փետրվարի — *Հիմնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որը իր գործունեությունը շարունակում է առ այսօր։*

— *Վենետիկում հրատարակվում է Մ. Ջամշյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության համառոտագրությունը՝ «Խրախճան պատմութեան հայոց» վերնագրով։*

— *Գեներալ Պաուլուչչին Կովկասի կառավարչապետ։*

1812

14 մայիսի — *Թիֆլիսում ծնվեց «Հյուսիսափայլ» ամսագրի հիմնադիր, անվանի հրապարակախոս և լուսավորիչ Ստեփաննոս Նազարյանը (վախճ. 1879 թ. ապրիլի 26-ին, Մոսկվայում)։*

16 մայիսի — *Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվում է Բուխարեստի հաշտության պայմանագիրը։ Ռուսաստանին է միացվում Բեսարաբիան։*

12 հունիսի — *Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան։*

— *Կ. Պոլսում հիմնադրվում է հայ առաջին գրական-հասարակական կազմակերպությունը՝ «Արշարունյաց ընկերությունը»։*

— *Պետերբուրգում հիմնվում է Հովսեփ Հովհաննիսյանի տպարանը։*

1813

15 սեպտեմբերի — *Ալեքսանդր I-ի հրովարտակը Վրաստանի հայերին, որով ցարը շնորհակալություն էր հայտնում նրանց՝ Վրաստանում ռուսական բանակին ցույց տված օգնության համար։*

12 հոկտեմբերի — *Ղարաբաղի Գյուլիստան ամրոցում ստորագրվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը, որի համաձայն Պարսկաստանը ճանաչում է Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Ղուբայի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին։*

— *Էջմիածնում վերաբացվում է «Ժառանգավորաց դպրոցը»,*

1814

14 մայիսի — *Պարսկաստանի Համադան քաղաքում ծնվեց Կարապետ Շահ-Նազարյանը (վախճ. 1865 թ. օգոստոսի 29-ին, Կ. Պոլսում)։*

25 նոյեմբերի — *Թեհրանում ստորագրվում է անգլո-պարսկական պայմանագիրը, որով Անգլիան խոստանում է նպաստել Գյուլիստանի պայմանագրի վերանայմանը։*

— *Ներսես Աշտարակեցին նշանակվում է վիրահայոց առաջնորդ։*

1815

12 մայիսի — *Մոսկվայում սկսում է գործել Լազարյան ճեմարանը։*

25 նոյեմբերի — *Նոր Ջուղայում ծնվեց հայագետ Մկրտիչ Էմինը (վախճ. 1890 թ. դեկտեմբերի 13-ին, Մոսկվայում)։*

Նոյեմբեր — *Կ. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Սերվիչեն՝ Սերովբե Վիչենյանը (վախճ. 1887 թ. հոկտեմբերի 3-ին)։*

— *Սերբերի երկրորդ ապստամբությունը թուրքական բռնապետության դեմ։*

1816

5 հունվարի — *Աստրախանում լույս է տեսնում «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, որը «Восточные известия» պարբերականի տարբերակն էր, արևելահայ առաջին պարբերականը։*

2 դեկտեմբերի — *Վենետիկ է գալիս ականավոր գրող Բայրոնը՝ հայոց լեզու սովորելու և ծանոթանալու հայ գրականությանը։*

1816—1827 — *Գեներալ Ա. Պ. Երմոլովը Կովկասի կառավարչապետ։*

1817

2 մայիսի — *Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար, Կովկասի կառավարչապետ գեներալ Երմոլովի գլխավորած Պարսկաստան մեկնող ռուսական միսիան ժամանում է Էջմիածին։*

1 օգոստոսի — *Թեոդոսիայում ծնվեց աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին (վախճ. 1900 թ. մայիսի 2-ին, Թեոդոսիայում)։*

1818

11 փետրվարի — *Կ. Պոլսում ծնվեց պատմաբան Մատաթիա (Անտոն) Գարագաշյանը (վախճ. 1903 թ. նոյեմբերի 19-ին)։*

5 հունիսի — *Թիֆլիսում ծնվեց բանասեր Գևորգ Ախվերդյանը (վախճ. 1861 թ. նոյեմբերի 17-ին)։*

Հուլիս — *Զեյթունը հրաժարվում է հարկ վճարել Մարաշի փաշային և ապստամբության դրոշ է բարձրացնում։*

1819

3 փետրվարի — *Երևան է ժամանում ռուս ականավոր գրող, դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովը, որը Թեհրան էր մեկնում իբրև ռուսական միսիայի քարտուղար։*

13 օգոստոսի — Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Պետրոս Շանշյանը (վախճ. 1899 թ. մարտի 9-ին)։

23 սեպտեմբերի — Կեսարիայի էվքերե գյուղում ծնվեց բժիշկ, լեզվագետ, հասարակական-քաղաքական գործիչ Նահապետ Ռուսինյանը (վախճ. 1876 թ. նոյեմբերի 29-ին, Կ. Պոլսում)։

1820

17 հունվարի — Թեհրանից վերադարձին էջմիածին է ժամանում Ա. Ս. Գրիբոյեդովը, որտեղ և մնում է մինչև հունվարի 19-ը։

19 փետրվարի — Կ. Պոլսում ծնվեց պատմաբան, հայագետ Հովսեփ Գաթըրճյանը (վախճ. 1882 թ. հունվարի 9-ին)։

4 ապրիլի — Վանի Այգեստան թաղամասում ծնվեց Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ) (վախճ. 1907 թ. նոյեմբերի 17-ին, Էջմիածնում)։

6 հուլիսի — Կ. Պոլսում ծնվեց մեծ հայագետ Ղևոնդ Ալիշանը (վախճ. 1901 թ. նոյեմբերի 9-ին, Վենետիկում)։

8 օգոստոսի — Կ. Պոլսի հայ արհեստավորների ցույցը, որը ճնշվում է թուրքական իշխանությունների կողմից։

18 սեպտեմբերի — Հակասուլթանական ցույցին մասնակցելու մեղադրանքով մի խումբ հայեր (կեսարացի Հակոբը, Գրիգոր Սաքայանը, դելի Բաղդասարը և այլն) մահապատժի են ենթարկվում Կ. Պոլսում։

— Կալկաթայում լույս է տեսնում «Հայելի կալկաթեան» շաբաթաթերթը՝ Հովհաննես Տեր-Հակոբյանի խմբագրությամբ։

— Զմյուռնիայում ծնվեց տպարանատեր, հրատարակիչ Ճանիկ Արամյանը (վախճ. 1879 թ. ապրիլի 17-ին, Կ. Պոլսում)։

1821

Ապրիլ — Սկսվում է Հունաստանի ազգային-ազատագրական շարժումը՝ ուղղված օսմանյան միապետության դեմ։

— Կալկաթայում սկսվում է լույս տեսնել «Շտեմարան» ամսագիրը՝ Մարտիրոս Շիրազեցու խմբագրությամբ։

— Կալկաթայում բացվում է հայկական Մարդասիրական ճեմարանը, որտեղ 1825—1826 թթ. հայոց լեզվի ուսուցիչ էր աշխատում Մեսրոպ Թաղիադյանը։

— Վալաքիայում սկսվում է ապստամբություն՝ ուղղված սուլթանական տիրապետության դեմ։

1821—1823 — Թուրք-պարսկական պատերազմը։

1822

16 սեպտեմբերի — Կ. Պոլսում ծնվեց հայ նշանավոր վիպասան, հրապարակախոս Սերենցը՝ Հովսեփ Շիշմանյան (վախճ. 1888 թ. մարտի 17-ին, Թիֆլիսում)։

— Փարիզում, Սեն-Մարտենի նախաձեռնությամբ հիմնվում է «Ասիական ընկերությունը», որի հրատարակած «Journal Asiatique»-ը հարուստ նյութեր է բովանդակում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ։

1823

Մարտ — *Կարինում կնքվում է թուրք-պարսկական հաշտության պայմանագիրը, որով Բայազետ քաղաքը կրկին վերադարձվում է Թուրքիային։*

4 հուլիսի — *Կ. Պոլսում ծնվեց Գրիգոր Աղաթոնյանը (Աղաթոն), (վախճ. 1868 թ. ապրիլի 27-ին, Փարիզում)։*

11 օգոստոսի — *Կ. Պոլսում ծնվեց պատմաբան, աշխարհագետ, բանասեր Մանվել Քաջունին (վախճ. 1903 թ. դեկտեմբերի 1-ին)։*

18 նոյեմբերի — *Կ. Պոլսում վախճանվեց պատմաբան Միքայել Չամչյանը (ծնվ. 1738 թ. դեկտեմբերի 4-ին, Կ. Պոլսում)։*

1824

28 հունվարի — *Մադրասում վախճանվեց «Ազդարարի» խմբագիր Հարություն Շմավոնյանը (ծնվ. 1750 թ., Իրանի Շիրազ քաղաքում)։*

29 հունվարի — *Վենետիկում վախճանվեց անվանի գիտնական Ստեփաննոս Դուվեր Ագոնցը (ծնվ. 1740 թ. նոյեմբերի 20-ին)։*

1 դեկտեմբերի — *Թիֆլիսում բացվեց Ներսիսյան դպրոցը (շարունակեց գործել մինչև 1924 թ.)։*

1825

29 հունիսի — *Թիֆլիսում ծնվեց դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը (վախճ. 1912 թ. մարտի 16-ին)։*

14 դեկտեմբերի — *Դեկաբրիստների ապստամբությունը Պետերբուրգում։*

— *Զմյուռնիայում ծնվեց արևմտահայ հրապարակախոս և քաղաքական գործիչ Ստեփան Ոսկանյանը (վախճ. 1901 թ. փետրվարի 23-ին)։*

1826

1826—1828 — *Ռուս-պարսկական պատերազմը։*

15—21 հունիսի — *Սուլթան Մահմուդ II-ի հրամանով ենիչերիական զորքը ոչնչացվում է Կ. Պոլսում, ապա և գավառներում։*

16—17 հուլիսի — *Պարսկական զորքերը ներխուժում են Ղարաբաղ, Շորագյալ և Փամբակ. սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։*

25 հուլիսի—10 սեպտեմբերի—*Շուշվա բերդի հերոսական պաշտպանությունը։*

18 օգոստոսի — *Հրդեհի զոհ գնաց Կ. Պոլսի Գում-գափու թաղամասում գրտնվող հայոց մայր եկեղեցին, ոչնչացան նաև շատ արժեքավոր ձեռագրեր ու փաստաթղթեր։*

3 սեպտեմբերի — *Շամխորի ճակատամարտում ռուսական բանակը հաղթանակ է տանում պարսիկների դեմ՝ գեներալ Վ. Գ. Մադաթովի հրամանատարությամբ։*

13 սեպտեմբերի — *Գեներալ Պասկևիչի գլխավորած ռուսական 8 հազարանոց զորքը Ելիսավետպոլի մոտ ջախջախում է Աբաս Միրզայի 25 հազարանոց բանակը։*

21 սեպտեմբերի — *Արագածի ստորոտում, Միրաքի մոտ տարած հաղթանակից հետո ռուսական բանակը մուտք է գործում Երևանի խանություն։*

— Կ. Պոլսում ծնվեց հայ ականավոր ճարտարապետ, հասարակական գործիչ Նիկողայոս Պալյանը (վախճ. 1858 թ. փետրվարի 27-ին, իր ծննդավայրում)։

1827

28 մարտի — Կովկասի կառավարչապետ և Կովկասյան հատուկ կորպուսի ընդհանուր հրամանատար է նշանակվում գեներալ Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչը։

Մարտ — Թիֆլիսում կազմվում է հայկական առաջին կամավորական գումարտակը։

30 մարտի — Թիֆլիսում տեղի է ունենում հայ կամավորների զորահանդեսը։

2 ապրիլի — Սկսվում է ռուսական զորքի Երևանյան երրորդ արշավանքը։

13 ապրիլի — Ռուսական զորքերը գրավում են Էջմիածինը։

17 մայիսի — Հայկական կամավորական առաջին գումարտակը Թիֆլիսից մեկնում է մարտադաշտ։ Մայիսի 15-ին Հ. Ալամդարյանը հայրենասիրական ճառ է արտասանում ռազմաճակատ մեկնողների առջև։

24 մայիսի — Թիֆլիսում կազմակերպված հայկական կամավորական գնդի կանոնադրության հրապարակումը։

26 հունիսի — Նախիջևանի գրավումը ռուսական զորքերի կողմից։

5 հուլիսի — Ջևան-Բուլաղի ճակատամարտը։

7 հուլիսի — Ռուսական բանակը գրավում է Աբաս-Աբադ բերդը։

21 հուլիսի — Կարազիադինում հանդիպում են Ա. Ս. Գրիբոյեդովը և Աբաս-Միրզան, նպատակ ունենալով հաշտության բանակցություններ վարել։

17 օգոստոսի — Օշականի ճակատամարտը։

20 սեպտեմբերի — Ռուսական զորքերը գրավում են Սարդարապատի բերդը։

24 սեպտեմբերի — Սկսվում է Երևանի բերդի պաշարումը։

1 հոկտեմբերի — Ռուսական զորքերը գրավում են Երևանի բերդը։

6 հոկտեմբերի — Ստեղծվում է Երևանի ժամանակավոր վարչություն։

13 հոկտեմբերի — Ռուսական զորքերը գրավում են Թավրիզը։

7 նոյեմբեր—2 հունվար 1828 — Դեհխառականի հաշտության բանակցությունները։

Դեկտեմբեր 1827—փետրվար 1828 — Սուլթան Մահմուդ II-ը շուրջ 12 հազար հայ կաթոլիկներ է արտաքսում Կ. Պոլսից, որոնցից չորս հազարը ցրտից մեռնում են ճանապարհին, իսկ մնացածները անցնում Փոքր Ասիայի գավառները։

Դեկտեմբեր — Երևանի Սարդարի պալատում, ռուս սպաների ուժերով առաջին անգամ բեմադրվում է Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունը։

— Շուշում հիմնադրվում է հայկական տպարան։

1828

10 փետրվարի — Թուրքմենչայում կնքվում է հաշտության պայմանագիր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, որի համաձայն Ռուսաստանին են միացվում Երևանի և Նախիջևանի խանությունները ու Օրդուբադի շրջանը։

26 փետրվարի — *Սկսվում է պարսկահայերի վերաբնակեցումը Արևելյան Հայաստան և Անդրկովկաս։*

21 մարտի — *Նիկոլայ I-ի հրամանագիրը Հայկական մարզ կազմակերպելու մասին։ Մարզի վարչության պետ է նշանակվում գեներալ-մայոր Ա. Ճավճավաձեն։*

14 ապրիլի — *Նիկոլայ I-ը պատերազմ է հայտարարում Թուրքիային։*

25 ապրիլի — *Սենատի հրամանով Ա. Ս. Գրիբոյեդովը նշանակվեց Ռուսաստանի լիազոր-մինիստր (դեսպան) Պարսկաստանում։*

14 հունիսի — *Ռազմական գործողությունների սկիզբը ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում։*

23 հունիսի — *Ռուսական բանակը գրավում է Կարսը։*

23/24 հուլիսի — *Ռուսական զորքերը գրավում են Ախալքալաքը։*

15 օգոստոսի — *Ախալցխայի գրավումը ռուսական զորքերի կողմից։*

28 օգոստոսի — *Ռուսական զորքերը գրավում են Բայազետը։*

12 սեպտեմբերի — *Ռուսական զորքերը և հայկական աշխարհազորը գրավում են Թուխրախ-կալեն և ազատագրում Ալաշկերտը։*

— *Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում ծնվեց բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Պեշիկթաշլյանը (վախճ. 1868 թ. նոյեմբերի 29-ին)։*

1829

30 հունվարի — *Թեհրանում սպանվեց Պարսկաստանում ռուսական դեսպան Ա. Ս. Գրիբոյեդովը (ծնվ. 1795 թ. հունվարի 4-ին, Մոսկվայում)։*

27 հունիսի — *Էրզրումի գրավումը ռուսական բանակի կողմից։*

7 հուլիսի — *Բայբուրդի (Բաբերդի) գրավումը։*

2 սեպտեմբերի — *Ադրիանապոլսում ստորագրվում է ռուս-թուրքական հաշտության պայմանագիր։ Ռուսաստանին են միացվում Ախալքալաքը, Ախալցխան, Սև ծովի արևելյան ափը. Անապա ու Փոթի նավահանգիստները։*

26 սեպտեմբերի — *Դորպատի (այժմ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանը սկսում է վերիլք դեպի Արարատի գագաթը։*

2 նոյեմբերի — *Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը (վախճ. 1866 թ. մարտի 31-ին, Սարատովի նահանգի Կամիշին գյուղաքաղաքում)։*

Աշնանը — *Կեսարիայի կառավարիչ Քեոսե փաշան հարձակվում է Զեյթունի վրա, սակայն պարտվում և ետ է շպրտվում։*

29 դեկտեմբերի — *Գեներալ Պասկևիչը կարգադրում է գաղտնի կոմիտե ըստեղծել Թիֆլիսում, որը պետք է մշակեր հայ եկեղեցու կանոնադրությունը։*

1829—1830 — *Արևմտյան Հայաստանից 90—100 հազար հայեր գաղթում են Արևելյան Հայաստան և Անդրկովկաս։*

— *Բացվում է Լազարյան ճեմարանի տպարանը։*

1830

8 հունվարի — *Սուլթան Մահմուդ II-ը Կ. Պոլսի կաթոլիկ հայերին ինքնուրույն համայնք ունենալու իրավունք է շնորհում։*

22 հունվարի — *Լոնդոնի պայմանագրով ճանաչվում է Հունաստանի անկախությունը։*

Փետրվար 1830—1838 — *Գեներալ-մայոր Վ. Բեհբութովը Հայկական մարզի վարչության պետ։*

17 փետրվարի — *Ղրիմի Գոգենլո գյուղում ծնվեց բանաստեղծ Գևորգ Դոդոխյանը (վախճ. 1908 թ. հունիսի 8-ին)։*

17 օգոստոսի — *Թուրքիան ճանաչում է Սերբիայի ինքնավարությունը։*

17 հոկտեմբերի — *Զմյուռնիայում ծնվեց հրապարակախոս, թարգմանիչ, վիպասան Մատթեոս Մամուրյանը (վախճ. 1901 թ. հունվարի 2-ին)։*

8 նոյեմբերի — *Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց Ռափայել Պատկանյանը (վախճ. 1892 թ. օգոստոսի 22-ին)։*

1831

Հունիս — *Ցարական հրամանագրերով վերացվում են տարանցիկ առևտրականների արտոնություններն Անդրկովկասում։*

6 սեպտեմբերի — *Կ. Պոլսում ծնվեց բանաստեղծ և հասարակական գործիչ Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ), (վախճ. 1892 թ. նոյեմբերի 4-ին)։*

22 հոկտեմբերի — *Կ. Պոլսում ծնվեց հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, «Մեղու» պարբերականի խմբագիր Հարություն Սվաճյանը (վախճ. 1874 թ. ապրիլի 22-ին)։*

1831—1833 — *Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալին պատերազմում է սուլթանական կառավարության դեմ, գրավելով Թուրքիայի մի շարք նահանգներ, մասնավորապես Հայկական Կիլիկիան։*

— *Կովկասի նոր կառավարչապետ է նշանակվում բարոն Ռոզենը։*

1832

14 հունվարի — *Երևանի գավառական դպրոցի բացումը։*

27 մայիսի — *Եգիպտական բանակը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ ջարդեց թուրքական զորքերին, գրավեց Հայկական Կիլիկիայի դաշտային մասը։*

21 դեկտեմբերի — *Ռեշիդ փաշան գերի է ընկնում եգիպտացիներին։*

— *Սերաստիայից, Կարինից, Վանից բռնությամբ հավաքվեցին հայ երիտասարդներ և տեղափոխվեցին Կ. Պոլիս՝ Իփլիկ խանե նավաշինարանում աշխատելու։*

— *Թուրքական բանակը Սուլեյման փաշայի գլխավորությամբ արշավում է Զեյթունի վրա, սակայն լեռնականների կողմից ջարդվում է Ջերմուկի դաշտում։*

— *Կ. Պոլսում, Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Լրո գիր մեծի տերության Օսմանյան» շաբաթաթերթը։*

1833

27 փետրվարի — *Հայկական մարզի զինանշանի հաստատումը Նիկոլայ I-ի կողմից։*

4 մայիսի — *Նոր Նախիջևանում ծնվեց նշանավոր հայագետ, արևելագետ Քերովբե Պատկանյանը (վախճ. 1889 թ. ապրիլի 2-ին, Պետերբուրգում)։*

23 հունիսի — *Ցարի հրապարակած նոր օրենքով փոփոխություններ են մտցվում Հայկական մարզի վարչական կառուցվածքում։*

2 հուլիսի — *Վենետիկում վախճանվեց հայագետ, աշխարհագրագետ Ղուկաս Ինճիճյանը (ծնվ. 1758 թ. մարտի 21-ին)։*

26 հունիսի — *Հունքիար-Իսքելեսիի պայմանագրի ստորագրումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։*

Հուլիս — *Հիմնվում է «Անդրկովկասի բարենորոգման հատուկ կոմիտե»՝ զինվորական մինիստր Չերնիշևի նախագահությամբ։*

— *Զմյունիայում ծնվեց անվանի հրապարակախոս և թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրյանը (վախճ. 1923 թ. փետրվարի 23-ին, իր ծննդավայրում)։*

1834

24 մայիսի — *Նոր Նախիջևանում սպանվեց Հարություն Ալամդարյանը (ծնվ. 1796 թ. սեպտ. 25-ին, Աստրախանում)։*

31 մայիսի — *Կ. Պոլսում հիմնվում է ս. Փրկչյան Ազգային հիվանդանոցը, որը գործում է առ այսօր։*

4 սեպտեմբերի — *Պադուայում (Հյուսիսային Իտալիա) իր առաջին տարեշրջանն սկսեց Մխիթարյանների հիմնած Մուրադյան վարժարանը։*

14 հոկտեմբերի — *Կ. Պոլսում ծնվեց հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը (վախճ. 1887 թ. օգոստոսի 14-ին, Փարիզում)։*

— *Մահմուդ II-ը վարչական նոր բաժանման ենթարկեց Թուրքիան, այդ թվում և Արևմտյան Հայաստանը։ Նախկին փաշայություններըվերացվեցին և ստեղծվեցին վարչական նոր միավորներ՝ վիլայեթներ։*

— *Ռազմա-լենային հողատիրության ոչնչացումը Թուրքիայում։*

— *Թուրքական բանակը արշավանք է սկսում Արևմտյան Հայաստան և Քուրդիստան՝ դերեբեյներին հպատակեցնելու նպատակով։*

1835

5 սեպտեմբերի — *Մոսկվայում ծնվեց հայագետ Կարապետ Հարությունի Եզյանը (Էզով), (վախճ. 1905 թ. մայիսի 28-ին, Պետերբուրգում)։*

— *Կ. Պոլսում ծնվեց գրող, հրապարակախոս, թարգմանիչ Արմենակ Հայկունին (Համբարձում Ճիզմեճյան) (վախճ. 1866 թ. հոկտեմբերի 29-ին)։*

— *Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաղուկ գյուղում ծնվեց հայ մեծ վիպասան Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան), (վախճ. 1888 թ. ապրիլի 25-ին, Թիֆլիսում)։*

1836

11 մարտի — Նիկոլայ I-ը վավերացնում է Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու կանոնադրությունը (Положение)։

11 սեպտեմբերի — Վենետիկում բացվում է Մխիթարյանների Ռափայելյան վարժարանը։

— Հովհաննես Տատյանը Նիկոմիդիայում հիմնում է մահուդի գործարան, քիչ անց նաև Հրեքեի կայսերական չուխայի գործարանը։

— Վենետիկում լույս է տեսնում «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» աշխատության առաջին հատորը, իսկ 1837 թ.՝ երկրորդը։

— Կ. Պոլսում ծնվեց կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանը (վախճ. 1898 թ. մարտի 10-ին, Ջմյուռնիայում), հայկական առաջին օպերայի ստեղծողը։

1837

28 հունվարի — Կ. Պոլսում ծնվեց բանասեր, Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը (վախճ. 1884 թ. հոկտեմբերի 26-ին)։

22 փետրվարի — Հայկական եկեղեցական բարձրագույն խորհրդի՝ Սինոդի հիմնումը էջմիածնում։

Մարտ — Անդրկովկաս է գալիս սենատոր Գանը՝ երկրամասն ուսումնասիրելու և ռեֆորմների նախագիծ կազմելու նպատակով։

1 մայիսի — Բացվում է Երևանի կոնսիստորիան։

3 հունիսի — Աշտարակում ծնվեց ականավոր վիպասան Պերճ Պռոշյանը (վախճ. 1907 թ. նոյեմբերի 23-ին, Բաքվում)։

7 օգոստոսի — Թուրքական բանակը Ալաջա-դաղի բարձունքներում ճակատամարտ տվեց և հպատակեցրեց քրդական ցեղերին։

2 սեպտեմբերի — Երևանում իր գործունեությունն է սկսում հայոց հոգևոր թեմական դպրոցը։

Հոկտեմբեր — Հայաստան է այցելում ռուսական կայսր Նիկոլայ I-ը։

4 հոկտեմբերի — Գյումրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)։

5 դեկտեմբերի — Թիֆլիսում վախճանվեց հայագետ Հակոբ Շահան-Ջրպետյանը (ծնվ. 1772 թ. դեկտեմբերի 16-ին, Ուրֆայում)։

— Մոլդավիայի Բոդուշան քաղաքում ծնվեց հայագետ Ստեփաննոս Պալասանյանը (վախճ. 1889 թ. փետրվարի 19-ին, Էջմիածնում)։

— Արաբկիրից խարբերդ տեղափոխվելով Գրիգոր Իփեքճյանը այնտեղ հիմնում է մետաքսի գործարան։ Քիչ անց Անգլիայից, ապա Ամերիկայից նա նոր մեքենաներ է բերում և եվրոպական ձևով վերասարքավորում իր գործարանը։

1838

Հունվար — Գյուղացիական շարժումներ Փամբակ-Շորագյալի (Շիրակի) շրջանում։

Փետրվար—մարտ — Նոր Բայազետի շրջանի գյուղացիության ելույթները։

22 հունիսի — Շուշում բացվում է հայոց հոգևոր թեմական դպրոցը։
13 սեպտեմբերի — Սկյութարի ճեմարանի բացումը Կոստանդնուպոլսում։
— Արմավիր հայաբնակ քաղաքի հիմնադրումը Հյուսիսային Կովկասում։

1839

12 հունիսի — Նիզիբի տակ (Հյուսիսային Սիրիա) թուրքական բանակը ջախջախվում է եգիպտական փոխարքայի զորքերի կողմից։
3 նոյեմբերի — Գյուլխանեի խաթթը-Շերիֆ կոչվող հրովարտակի («Թանզիմաթ») հրատարակումը Աբդուլ Մեջիդի կողմից։
— Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի բացումը։
— Ամերիկյան բողոքականների ջանքերով, սկսում է հրատարակվել «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրը՝ աշխարհաբարով։

1840

5 ապրիլի — Բոլնիս-Խաչեն գյուղում ծնվեց նշանավոր մանկավարժ, գրող, հրապարակախոս Ղազարոս Աղայանը (վախճ. 1911 թ. հունիսի 20-ին, Թիֆլիսում)։
10 ապրիլի — Հայկական մարզի վերացումը. կազմվում են Վրացա-իմերեթական նահանգը և Կասպիական մարզը։
10 օգոստոսի — Ամերիկայում սկսում է լույս տեսնել «Արշալույս Արարատյան» պարբերականը՝ Ղ. Պալթազարյանի խմբագրությամբ։
12 դեկտեմբերի — Վանում ծնվեց բանահավաք, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գարեգին Սրվանձտյանցը (վախճ. 1892 թ. նոյեմբերի 5-ին, Կ. Պոլսում)։
— Կ. Պոլսում սկսեց լույս տեսնել «Աղդարար Բյուզանդյան» շաբաթաթերթը, որի արտոնատերն էր Խաչատուր Ոսկանյանը։

1841

11 փետրվարի — Կ. Պոլսում ծնվեց բանասեր, պատմաբան Մաղաքիա Օրմանյանը (վախճ. 1918 թ. նոյեմբերի 19-ին)։
6 ապրիլի — Հակաամիրայական «Միհակամ» ընկերության ստեղծումը Կ. Պոլսում։
1 հուլիսի — Լոնդոնի կոնվենցիան սևծովյան նեղուցների ռեժիմի վերաբերյալ։ Դարդանելը և Բոսֆորը փակ են հայտարարվում բոլոր տերությունների, այդ թվում Ռուսաստանի նավերի առջև։
Հուլիս— Ամերիկայում բռնկված հրդեհին զոհ են գնում հայկական փայտաշեն երկու թաղամաս։
24 օգոստոսի — Կոստանդնուպոլսի 3000 արհեստավորների հակասուլթանական և հակաամիրայական ցույցը։
18 սեպտեմբերի — Կ. Պոլսի արհեստավորները նոր ցույց են կազմակերպում։
3 հոկտեմբերի — Ամիրաները փակել են տալիս Սկյութարի ճեմարանը։

9 նոյեմբերի — Կ. Պոլսի արհեստավորները ցույց են կազմակերպում ամիրաների և պատրիարքի դեմ։

12 դեկտեմբերի — 27 արհեստավորից բաղկացած վարչություն է ստեղծվում, որին և Բ. Դուռը հանձնարարում է Սկյութարի ճեմարանի խնդրի կարգավորումը։

— Ջելթուն ներխուժող թուրքական զորքերը դուրս շպրտվեցին լեռնագավառից։

1842

22 սեպտեմբերի — Թիֆլիսում ծնվեց պատմաբան Ալեքսանդր Երիցյանը (վախճ. 1902 թ. փետրվարի 9-ին)։

3 դեկտեմբերի — Զմյուռնիայում ծնվեց լեզվագետ, թարգմանիչ Մեսրոպ Նուպարյանը (վախճ. 1929 թ. դեկտեմբերի 14-ին, Մարսելում)։

— Ծնվեց արևմտահայ վիպասանուհի Սրբուհի Տյուսաբը (վախճ. 1901 թ. հունվարի 3-ին)։

— Ցարական կառավարությունը Ռուսաստանից գաղթեցնում և Թիֆլիս—Երևան ճանապարհի շուրջն ընկած (Սևանի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Լոռու շրջաններ) գյուղերում բնակեցնում է ռուս աղանդավորների։

1843

1 մայիսի — Վենետիկում Մխիթարյանները հրատարակում են «Բազմավեպ» ամսագիրը, որը գոյատևում է մինչև օրս։

18 մայիսի 1843—1857 — Ներսես Ե Աշտարակեցի, կաթողիկոս ամենայն հայոց։

Նոյեմբեր — Ադրիանապոլսում ծնվեց մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը (վախճ. 1891 թ. մայիսի 27-ին, Կ. Պոլսում)։

— Բեդեր-խան բեյը ապստամբեց թուրքական կառավարության դեմ և գրավեց Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ։

— Զմյուռնիայում սկսում է լույս տեսնել «Հայրենասեր» շաբաթաթերթը՝ խմբագրությամբ Հ. Մելիքսեթյանցի։

— Կազանի համալսարանում բացվում է հայոց լեզվի ամբիոն, որի վարիչ է նշանակվում Ստեփաննոս Նազարյանը։

1844

17 հուլիսի — Կ. Պոլսում ստեղծվում է Ազգային ժողով՝ բաղկացած 16 ամիրաներից և 14 արհեստավորներից։

Նոյեմբեր — Կովկասում հիմնվում է փոխարքայություն։ Առաջին փոխարքա նշանակվեց իշխան Մ. Ս. Վորոնցովը։

— Թուրքիայում օտարերկրյա մասնագետներն առաջին անգամ մարդահամար են անցկացնում, ըստ որի արևմտահայերի թիվը կազմում էր 2,4 միլիոն մարդ։

1845

12 փետրվարի — Կ. Պոլսում ծնվեց Մատթեոս Իզմիրլյանը (վախճ. 1910 թ. դեկտեմբերի 11-ին, Էջմիածնում)։

27 փետրվարի — Մոսկվայում ծնվեց հրապարակախոս Գրիգոր Արծրունին (վախճ. 1892 թ. դեկտեմբերի 19-ին, Թիֆլիսում)։

3 հունիսի — Ալեքսանդրապոլում բացվում է Հայաստանում առաջին տոնավաճառը։

20 հունիսի — Աբդուլ Մեջիդի հրամանով, Սըրի փաշան մեծ բանակով մըտնում է Արևմտյան Հայաստան՝ կիսանկախ իշխանությունները վերացնելու հանձնարարությամբ։

16 օգոստոսի — Կալկաթայում Մ. Թաղիադյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Ազգասեր» շաբաթաթերթը։ 1848 թ. այն վերանվանվում է «Ազգասեր Արարատյան» և շարունակում լույս տեսնել մինչև 1852 թվականը։

— Պետերբուրգի համալսարանում հիմնվում է հայ-վրաց-թաթարական լեզուների ամբիոն, որը 1855 թ. վերածվում է Արևելյան լեզուների ֆակուլտետի։

1846

12 հունվարի — Թիֆլիսում սկսում է լույս տեսնել հայերեն «Կովկաս» շաբաթաթերթը, որը շարունակում է իր գոյությունը մինչև 1848 թվականի ըսկզբները։

1 ապրիլի — Կ. Պոլսում Պետրոս Մինասյանի (նախագահ) և Մկրտիչ Պեշիկթաշլյանի (քարտուղար) նախաձեռնությամբ հիմնվում է մշակութային «Համազգյաց ընկերությունը»։

1 հոկտեմբերի — Վերաբացվում է Սկյութարի ճեմարանը։

6 դեկտեմբերի — Ցարական կառավարությունը ռեսկրիպտ է հրապարակում, որով խաներին, բեկերին, աղալարներին և մելիքներին ճանաչում է իբրև հողի ժառանգական սեփականատերեր։

14 դեկտեմբերի — Անդրկովկասը վարչական նոր բաժանման է ենթարկվում. ստեղծվում են Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի նահանգները։

1847

9 մայիսի — Ամիրաների և արհեստավորների մասնակցությամբ Կ. Պոլսում կազմվում են Ազգային, Հոգևոր և Գերագույն ժողովներ, որոնք, փաստորեն, ապագա «Սահմանադրության» ստեղծման առաջին քայլերն էին։

12 մայիսի — Բեդեր-խան բեյի պաշարումը Օրագ բերդում։

17 հունիսի—1863 — Վիեննայում Մխիթարյանները հրատարակում են «Ծվրոպա» շաբաթաթերթը, ապա կիսամսյա հանդեսը։

1 հուլիսի — Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ Հենրիխ Գելցերը (վախճ. 1906 թ. հուլիսի 11-ին)։

1848

2 ապրիլի — Անհետացավ Խաչատուր Աբովյանը։

Մարտ — Խոշաբի կիսանկախ իշխանության վերացումը։

10 մայիսի — *Մոսկվայի Լազարյան ճեմարանը վերածվում է Արևելյան լեզուների ինստիտուտի։*

Հուլիս — *Վերացվում է Մարաշի փաշայությունը և այն դառնում է Ադանայի վիլայեթի մեջ մտնող մի սանջակ։*

9 հոկտեմբերի — *Կ. Պոլսում ծնվեց գրական, հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանը (վախճ. 1921 թ. սեպտ. 27-ին, Մարսելում)։*

1849

27 ապրիլի — *Փարիզում սովորող արևմտահայ ուսանողները կազմում են «Արարատյան ընկերությունը»։*

9 հունիսի — *Կազմվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի ու Օրդուբադի գավառները։*

Հուլիս — *Գրիգոր Գալստյանի խմբագրությամբ Սինգապուրում սկսում է հրատարակվել «Ուսումնասեր» կիսամսյա լրագիրը, որը շարունակում է լույս տեսնել մինչև 1853 թվականը։*

27 դեկտեմբերի — *Կ. Պոլսում ծնվեց մեծահամբավ դերասան Պետրոս Ադամյանը (վախճ. 1891 թ. հունիսի 2-ին)։*

— *Դարալագյազի Ռինդ գյուղի գյուղացիությանն ելույթը տեղական կալվածատերերի և ցարական կառավարության դեմ։*

1850

2 հունվարի — *Երևանի պետական իգական առաջին (Հոխիսիմյան) դպրոցի բացումը։*

29 հուլիսի — *Թիֆլիսում հիմնադրվեց ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը։*

1 սեպտեմբերի — *Թիֆլիսում սկսում է հրատարակվել «Արարատ» շաբաթաթերթը՝ Գաբրիել Պատկանյանի խմբագրությամբ։*

— *Զանգեզուրում կառուցում են Փիրդոուդանի և Կավարտի պղնձաձուլական գործարանները։*

1851

20 մայիսի — *Զեյթունի իշխանները էջմիածնի կաթողիկոսին գրում են, որ Աբդուլ Մեջիդն իրենց կանչել է Կ. Պոլիս և պայմանագիր ստորագրել՝ հարկը կանոնավոր վճարելու մասին։ Փաստորեն չեղյալ էր հայտարարվել Մուրադ IV-ի տված հրովարտակը։*

20 մայիսի — *Կ. Պոլսի Սկյութար թաղամասում ծնվեց Պետրոս Աբրահամի Դուրյանը (վախճ. 1872 թ. հոկտեմբերի 22-ին, իր ծննդավայրում)։*

8 նոյեմբերի — *Թիֆլիսում բացվեց ճարտարապետ Գաբրիել Թամամշյանի հայոց թատրոնը, որը գործեց մինչև 1874 թ. հոկտեմբերը։*

21 դեկտեմբերի — *Թուրքիայի Սամսոն քաղաքում ծնվեց գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը (վախճ. 1908 թ. փետրվարի 12-ին, Կահիրեում)։*

— Կ. Պոլսում Հ. Հիսարյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Բանասեր» հանդեսը։

1852

2 փետրվարի — Կ. Պոլսում Կարապետ Ութուճյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Մասիս» պարբերականը, որը «Հայաստանեայ» շաբաթաթերթն էր և որոշ ընդհատումներով հրատարակվեց մինչև 1908 թվականը։

Մարտ — Շուլավերի գյուղացիները ելույթ են ունենում կալվածատերերի դեմ։

3 հուլիսի — Կ. Պոլսի Խասգյուղ արվարձանում ծնվեց ուսուցիչ, հրապարակախոս և քաղաքական գործիչ Մինաս Չերազը (վախճ. 1929 թ. մարտի 27-ին, Մարսելում)։

1853

18 փետրվարի — Ղրիմի Ղարասուբազար քաղաքում ծնվեց Քրիստափոր Կարա-Մուրզան (վախճ. 1902 թ. մարտի 27-ին)։

22 մարտի — Կ. Մարքսը գրում է «Ազգությունները Թուրքիայում» հոդվածը, որտեղ տեղեկություններ կան տարբեր դավանանքի պատկանող հայերի թվաքանակի, արևմտահայության կրած սոցիալական ու ազգային ճնշումների մասին։

4 հոկտեմբերի—18 մարտի 1856 — Ղրիմի կամ Արևելյան պատերազմը։

21 հոկտեմբերի — Կ. Պոլսում Ն. Ռուսինյանի նախագահությամբ և Գ. Օտյանի, Ն. Պալյանի անդամակցությամբ ստեղծվում է «Ուսումնական խորհուրդ»։

30 հոկտեմբերի — Սկսվում են պատերազմական գործողություններ Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատում։

18 նոյեմբերի — Սինոպի ճակատամարտը։

19 նոյեմբերի — Բաշ-Քադըկլարի ճակատամարտը։

4 դեկտեմբերի — Ցարական կառավարությունը Գաբրիել Սունդուկյանին Թիֆլիսից աքսորում է Դերբենդ։

1854

15—16 մարտի — Անգլիան և Ֆրանսիան, դաշնակցած Թուրքիային, պատերազմ են հայտարարում Ռուսաստանին։

19 հուլիսի — Ռուսական զորքերը գրավում են Բայազետը։

24 հուլիսի — Քյուրուկ-Դարայի ճակատամարտը։

26 օգոստոսի — Արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրության առաջին տարբերակի կազմումն ավարտվում է, ներկայացվում պատրիարքին, որը և, որոշ ժամանակ պահելով, մերժում է։

14 սեպտեմբերի — Դաշնակիցները դեսանտ իջեցրին Ղրիմի թերակղզում (Եվպատորիայի մոտ) և սեպտեմբերի 19-ին սկսեցին շարժվել դեպի Սևաստոպոլ։

20 սեպտեմբերի — Ալմայի ճակատամարտը Ղրիմում։

5 հոկտեմբերի—8 սեպտեմբերի 1855 — Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը։

Աշնանը — Ծավալվեց եղդանշիրի ապստամբությունը՝ ուղղված սուլթանական բռնապետության դեմ։

1 դեկտեմբերի — Շուշում ծնվեց Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) (վախճ. 1908 թ. օգոստոսի 30-ին, Թիֆլիսում)։

— Երևանի նահանգի հայ և ադրբեջանցի գյուղացիները 500 մարդուց զորաջոկատ են կազմում և ուղարկում Ղրիմի պատերազմի Կովկասյան ճակատ։

1855

15 հունվարի — Գաբրիել Ալվազովսկու խմբագրությամբ Փարիզում հրատարակվում է «Մասյաց աղավնի» ամսագիրը։ 1859—1865 թթ. այն լույս էր տեսնում Թեոդոսիայում։

Հունվար — Եղդանշիրի գլխավորած քուրդ ապստամբները գրավեցին Բաղեշը, Մուշը և Արևմտյան Հայաստանի մի շարք այլ շրջաններ։

10 մայիսի — Սուլթանի հրամանով Թուրքիայի քրիստոնյաներին առաջին անգամ բանակ զորակոչեցին։ Հրամանը համարյա չգործադրվեց։

31 մայիսի — Ռուսական բանակը գրավում է Արդահանը։

Հունիս — Կ. Պոլսում լույս է տեսնում «Արծվի Վասպուրական» պարբերականը՝ Մ. Խրիմյանի խմբագրությամբ. 1858—1864 թթ. հրատարակվում էր Վարագա վանքում։ 1872 թ. կրկին հրատարակվում է Կ. Պոլսում՝ Մանվել Անանյանի խմբագրությամբ։

Հուլիս — Փարիզում, Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ, լույս է տեսնում «Արևելք» կիսամսյա հանդեսը. դադարեց 1856 թ.։

16 նոյեմբերի — Ռուսական զորքերը գրավում են Կարսը։

— Կ. Պոլսում սկսում է լույս տեսնել բողոքականների «Ավետաբեր» շաբաթաթերթը, որն ընդմիջումներով շարունակեց հրատարակվել մինչև 1915 թ.։

1856

1 հունվարի — Աշտարակում ծնվեց Երվանդ Շահազիզը (վախճ. 1951 թ. օգոստոսի 12-ին, Երևանում)։

6 փետրվարի — Սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակում է Խաթթը Հումայուն կոչվող բարենորոգումների հրովարտակը՝ «Թանզիմաթի» երկրորդ ակտը։

18 մարտի — Կնքվում է Փարիզի հաշտության պայմանագիրը, որով ավարտվեց Ղրիմի պատերազմը։

28 հուլիսի — Փարիզի պայմանագրով Կարսը վերադարձվում է Թուրքիային։

15 սեպտեմբերի — Կ. Պոլսում Հ. Սվաճյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Մեղու» կիսամսյա, ապա տասնօրյա հանդեսը։ 1872—1874 թթ. պարբերականը խմբագրում էր Հ. Պարոնյանը։

1857

Հունվար—1866 դեկտեմբեր — Կ. Պոլսում հրատարակվում է «Երևակ» կղերաամիրայական հանդեսը՝ Հովհաննես Տերոյենցի (Զամուռճյանի) խմբագրությամբ։

1 մարտի — Վարագա վանքում բացվում է ժառանգավորաց վարժարանը, ուր սովորելու իրավունք ստացան նաև «որբ ու անտերունչ» երեխաները։

10 հունիսի — Գերցենը և Օգարևը Լոնդոնում հրատարակում են «Կոլոկոլ» պարբերականը։

Հուլիս — Մ. Նալբանդյանը մեկնում է արտասահման։

3 հոկտեմբերի — Սղնախում ծնվեց գրող և նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը (վախճ. 1925 թ. հոկտեմբերի 4-ին, Թիֆլիսում)։

1858

1 հունվարի — Թիֆլիսում Ստ. Մանդինյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Մեղու Հայաստանի» պարբերականը։ 1862 թ. խմբագիր է դառնում Պետրոս Սիմեոնյանը։

Հունվար — Մոսկվայում, Ստեփաննոս Նազարյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Հյուսիսափայլ» ամսագիրը. հրատարակվել է մինչև 1864 թվականը (1863 թ. լույս չի տեսել)։

7 ապրիլի — Շամախիում ծնվեց գրող, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեն (վախճ. 1935 թ. օգոստոսի 7-ին, Կիսլովոդսկում)։

21 ապրիլի — Սուլթան Աբդուլ Մեջիդը ձևակերպեց ազգարարին օրենք, որը սահմանում էր հողատիրության նոր ձևեր։

— Շահագործման են հանձնվում Ղափանի և Հալիձորի պղնձաձուլական գործարանները։

— Թիֆլիսում առաջին անգամ հրատարակվում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը։

1858—1862 — Մոսկվայում, Մսեր և Ջարմայր Մսերյանների խմբագրությամբ հրատարակվում է «Ճռաքաղ» պարբերականը։

1859

Հունվար — Ստ. Ոսկանյանը Փարիզում հրատարակում է «Արևմուտք» հանդեսը։ Նույն թվականի վերջին դադարում է, ապա ընդմիջումներով հրատարակվում 1864—1865 թվականներին։

24 մարտի — Մ. Նալբանդյանը Մոսկվայից ուղևորվում է արտասահման։

Մայիս — Կ. Պոլսում ընտրվում է «Սահմանադրության» տեքստը կազմող նոր հանձնաժողով՝ 5 եկեղեցականների և 14 աշխարհականների մասնակցությամբ։ Նախագահ՝ Ն. Ռուսինյան։

30 նոյեմբերի — Վախճանվում է արևմտահայ նշանավոր տնտեսագետ Նիկողայոս Զորայանը (ծնվ. 1821 թ.)։

— Կ. Պոլսում Կ. Փանոսյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել դեմոկրատական ուղղության պատկանող, հայատառ թուրքերեն «Մյունաջաթի էրճիաս» (Շեփոր այգաբացի) պարբերականը, որը փակվում է 1862 թ. օգոստոսին։

1860

Հունվար 1863 — Թիֆլիսում, Մարկոս Աղաբեկյանի խմբագրությամբ, լույս է տեսնում «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականը։

14 ապրիլի — Շուշում ծնվեց պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանը) (վախճ. 1932 թ. նոյեմբերի 14-ին, Երևանում)։

24 մայիսի — Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովն ընդունում և պատրիարքը վավերացնում է արևմտահայերի Ազգային սահմանադրությունը։

8 հունիսի — Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշան արշավում է Զեյթունի վրա, սակայն ջարդվում և ետ է շպրտվում։

1 սեպտեմբերի — Կ. Պոլսում հիմնվում է Հայոց Բարեգործական ընկերությունը։

— Կ. Պոլսում, Մ. Տեր-Մեհենճյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Արևելյան դար» կիսամսյա հանդեսը։

1860—1863 — Փարիզում, Աբրահամ Մուրադյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Փարիզ» շաբաթաթերթը, ապա կիսամսյա հանդեսը։

— Ստ. Ոսկանյանը գնում է Իտալիա, ուր խմբագրում է «L' Italie» պարբերականը։

1861

Հունվար — Ախթալայում պղնձաձուլական գործարան է հիմնվում։

19 փետրվարի — Ալեքսանդր II-ի մանիֆեստը ճորտատիրական իրավունքի վերացման մասին։

Ապրիլ — Փարիզում հրատարակվում է Մ. Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը։

28 հունիսի — Կ. Պոլսում ծնվեց ականավոր գրող և քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը (թուրք ջարդարարների կողմից սպանվեց 1915 թ. հուլիսի 7-ին)։

1 հուլիսի — Զմյուռնիայում, Գր. Չիլինկիրյանի և Ա. Հայկունու խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Մաղիկ» տասնօրյա հանդեսը, որը 1865 թ. տեղափոխվում է Կ. Պոլիս։ Խմբագիրներ են դառնում Զարեհ Ստեփանյանը, ապա՝ Մ. Մամուրյանը։

10 օգոստոսի — Մոսկվայում Մսեր և Զարմայր Մսերյանները սկսում են հրատարակել «Համբավաբեր Ռուսիո» կիսամսյա պարբերականը։

8 հոկտեմբերի — Հայկական Օրիորդաց ուսումնարանի բացումը Նոր Նախիջևանում։

1 սեպտեմբերի — Պոլսում Գ. Երանյանի, Ն. Թաշճյանի և Տ. Զուխաջյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Քնար հայկական» երաժշտական կիսամսյա հանդեսը։

14 դեկտեմբերի — Կ. Պոլսում հիմնվում է Արևելյան թատրոնը։ Բացման առթիվ ճառ է ասում Միք. Նալբանդյանը։

— Զմյուռնիայում հիմնվում է «Վասպուրական» թատրոնը, որի ներկայացումներին ներկա է եղել Մ. Նալբանդյանը։

1862

Փետրվար — Վանի զինված ելույթը թուրքական կառավարության դեմ։

Մարտ—մայիս — Մ. Նալբանդյանը Լոնդոնում հանդիպումներ է ունենում ռուս վտարանդիների հետ։

14 մայիսի — Ս. Թագվորյանի հայտնի նամակը Մ. Նալբանդյանին, որտեղ նյութեր կան հայ-ռուս-իտալական ազատագրական շարժման կապերի մասին։

Մայիս — Փարիզում, Ճանիկ Արամյանի տպարանում, Սիմեոն Մանիկյան կեղծանունով լույս է տեսնում Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։

14 հուլիսի — Նոր Նախիջևանում ոստիկանությունը ձերբակալում է Մ. Նալբանդյանին։ Հուլիսի 27-ին, ոստիկանության հսկողությամբ, նա փոխադրվում է Պետերբուրգ և բանտարկվում Պետրոպավլովյան բերդում։

24 հուլիսի — Կ. Պոլսից Հաճըն մեկնեց Եղիա Տնտեսյանը, որը կապեր հաստատեց ապստամբ զեյթունցիների հետ։

27 հուլիսի — Ազիզ փաշայի բանակը դուրս է գալիս Մարաշից և շարժվում Զեյթունի վրա։

1 օգոստոսի — Կ. Պոլսում տեղի է ունենում հայ աշխատավորության ցույցը, որի մասնակիցները սուլթանից պահանջում էին վավերացնել Ազգային սահմանադրությունը։

2 օգոստոսի — Զեյթունի հերոսական ապստամբությունը։

1863

Հունվար — Կ. Պոլսում, Ստեփան Փափազյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Ժամանակ» կիսամսյա հանդեսը։

17 մարտի — Սուլթանական կառավարությունը հաստատում է արևմտահայերի Ազգային սահմանադրության կրճատված տարբերակը։

1 ապրիլի 1865 — Մշո ս. Կարապետի վանքում Գարեգին Սրվանձտյանցի խմբագրությամբ հրատարակվում է «Արծվիկ Տարոնո» պարբերականը. լույս է տեսել 43 համար։

21 հոկտեմբերի — Հռոմից Կ. Պոլսի հայերին Հայաստանի ազատագրության վերաբերյալ ծրագիր-նամակն է ուղարկում Պ. Նորատունկյանը։

6 դեկտեմբերի — Մարաշ ուղևորվեց եվրոպացիների և հայերի մասնակցությամբ կազմված Զեյթունի գործը քննող հանձնախումբը։

— Ռափայել Պատկանյանի խմբագրությամբ Պետերբուրգում լույս է տեսնում «Հյուսիս» շաբաթաթերթը։

— Մուշի զինված ելույթը քուրդ դերեբեյների դեմ։

1864

8 հունվարի — Ալեքսանդրապոլում ծնվեց ազգագրագետ Երվանդ Լալայանը (վախճ. 1931 թ. փետրվարի 24-ին, Երևանում)։

21 հունվարի — Հեռախոսային կապ է հաստատվում Երևանի և Թիֆլիսի միջև։

21 մայիս — «Հայոց մարդասիրական ընկերության» հիմնումը Բաքվում։

Մայիս — Թուրքական զորքերը արշավում են Սասունի վրա, սակայն հանդիպելով հայ-քրդական ուժերի դիմադրությանը, նահանջում են։

28 սեպտեմբերի — Առաջին ինտերնացիոնալի հիմնադրումը։

Հոկտեմբեր — Թուրքիան, այդ թվում և Արևմտյան Հայաստանը, վարչական նոր բաժանման է ենթարկվում։

Նոյեմբեր — *Խորեն Ստեփանեի խմբագրությամբ Թիֆլիսում սկսում է հրատարակվել «Հայկական աշխարհ» պարբերականը։*

10 դեկտեմբերի — *Սենատի դատավճռով Մ. Նալբանդյանը աքսորվում է Կամիշին։*

1865

17 մարտի — *Նախիջևանի Ասատապատ գյուղում ծնվեց Մանուկ Աբեղյանը (վախճ. 1944 թ. սեպտեմբերի 25-ին, Երևանում)։*

27—28 հունիսի — *Թիֆլիսի հայ աշխատավորության հակացարական ելույթը։*

Հոկտեմբեր — *Հայկական թատրոնի հիմնումը Երևանում։*

— *Սկսվում է Երևան—Թիֆլիս, Երևան—Ջուլֆա խճուղիների կառուցումը։*

— *Ջարսանջակի հայերի ելույթը քրդական ղերեբեյների դեմ։*

— *1865 թ. սկսվում և 1872 թ. ավարտվում է Փոթի-Թիֆլիս երկաթուղու կառուցումը։*

— *Ավարտվում է «Ձեյթունի գործը» քննող հանձնաժողովի աշխատանքը։ Վերացվում է լեռնագավառի մինչ այդ պաշտպանած կիսանկախ վիճակը։ Բ. Դուռը թուրք կառավարիչ է նշանակում և գավառը դնում ծանր հարկերի տակ։*

1866

Հունվար — *Երուսաղեմում սկսում է հրատարակվել Երուսաղեմի հայկական պատրիարքարանի պաշտոնական օրգան «Սիոն» ամսագիրը։*

Հունվար — *Ջիբուխլեցիների պայքարը Սևանա վանքի վանականների դեմ։*

31 մարտի — *Կամիշինում վախճանվեց Մ. Նալբանդյանը։*

13 ապրիլի — *Վանում ծնվեց գրող, հրապարակախոս Վրթանես Փափազյանը (վախճ. 1920 թ. ապրիլի 26-ին, Երևանում)։*

7 մայիսի — *Կ. Պոլսի Գուլե-գափու թաղամասում հիմնադրվեց ֆրանկմասոնական «Սեր» գաղտնի ընկերությունը, որի անդամներն էին Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը և ուրիշներ։*

29 մայիսի — *Ելիսավետպոլում (Գանձակ) ծնվեց պրոլետարական հայ պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը (վախճ. 1937 թ. նոյեմբերի 17-ին, Թիֆլիսում)։*

— *Գայանյան օրիորդաց դպրոցի բացումը Երևանում։*

1867

1 մարտի — *Թիֆլիսում ծնվեց Նար-Դոսը (վախճ. 1933 թ. հուլիսի 12-ին, իր ծննդավայրում)։*

9 դեկտեմբերի — *Անդրկովկասում դատարանական սիստեմը փոփոխության է ենթարկվում։*

— *Թուրքիայում հրապարակվեց «Վիլայեթների վարչության մասին օրենքը», որով փոփոխություններ մտցվեցին Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումների և կառավարման ձևի մեջ։*

— *Թիֆլիսում կազմակերպվում է Կովկասի վիճակագրական կոմիտեն։*

1868

1 մայիսի — Էջմիածնում սկսում է հրատարակվել «Արարատ» ամսագիրը, շարունակելով իր գոյությունը մինչև 1918 թվականը։

1 սեպտեմբերի — Երևանի պրոգիմնազիայի բացումը։

— Ելիսավետպոլի (Դանձակ) Բանանց գյուղում ծնվեց ականավոր հեղափոխական Մելիք Մելիքյանը (Դևդուշկա), (սպանվեց Բաքվում, 1918 թ. սեպտեմբերի 18-ին)։

— Տիգրան Չուխաջյանը ավարտում է «Արշակ Երկրորդ» հայ անդրանիկ օպերան։

1869

7 փետրվարի — Լոռու Դսեղ գյուղում ծնվեց Հովհաննես Թումանյանը (վախճ. 1923 թ. մարտի 23-ին, Մոսկվայում)։

Ապրիլ — Ալեքսանդրապոլում հիմնվում է «Բարեգործական ընկերությունը»։

17 հունիսի — Թիֆլիսում իր առաջին տարեշրջանն սկսեց Գայանյան օրիորդաց դպրոցը։

26 սեպտեմբերի — Փոքր Ասիայի Կուտինա գյուղաքաղաքում ծնվեց Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան), (վախճ. 1935 թ. հոկտեմբերի 22-ին, Փարիզում, աճյունը փոխադրվեց Երևան 1936 թ.)։

16 նոյեմբերի — Սուեզի ջրանցքի բացումը։ Կառուցման աշխատանքը ըսկըսվել էր 1859 թ.։

1870

14 մայիսի — Ալեքսանդր II-ի մանիֆեստը Հայաստանում և Ադրբեջանում՝ գյուղացիական ռեֆորմ անցկացնելու վերաբերյալ։

24 հուլիսի — Թերեքի մարզի Ղզլար քաղաքում ծնվեց լենինյան գվարդիայի ականավոր ներկայացուցիչ Իսահակ Քրիստափորի Լալայանցը (վախճ. 1933 թ. հուլիսի 14-ին, Մոսկվայում)։

— Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի կազմակերպումը։

— Կ. Պոլսում լույս է տեսնում «Հայրենիք» պարբերականը, որը շարունակում է իր գոյությունը մինչև 1896 թ.։

— Ախալցխայի Եղիսաբեթյան օրիորդաց դպրոցը սկսում է իր անդրանիկ տարեշրջանը[1]։

---

[1] Ժամանակագրությունը կազմելիս, հատորի ամփոփած թվական տվյալներից բացի օգտվել ենք Ա. Ալպոյաճյանի, Վ. Զարդարյանի, Ա. Դազիկյանի, Ա. Պերպերյանի, Թեոդիկի, Մ. Օրմանյանի, սովետահայ հեղինակներ Շ. Ռ. Հարությունյանի, Ս. Ա. Շահիկյանի, Գ. Խ. Սահփաճյանի աշխատություններից։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՐՔՍԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐ

Մարքս Կ., *Կապիտալ*, *հատ. 1—3, Երևան, 1954։*
Էնգելս Ֆ., *Անտի-Դյուրինգ, Երևան, 1952։*
Էնգելս Ֆ., *Ֆեոդալիզմի քայքայման և բուրժուազիայի զարգացման մասին, Երևան, 1937։*
Մարքս Կ., Էնգելս Ֆ., Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1938։
К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, тт. 3, 8, 9, 10, 11, 12, 16, 19, 21, 23, 29, 32, 35.
К. Маркс, Хронологические выписки по истории Индии, М., 1947.
Լենին Վ. Ի., Երկեր, հատ. 1, 3, 4, 5, 6, 8, 9, 11, 12, 15, 16, 19, 22, 25։

2. ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐ

Շահումյան Ստ., Երկեր, հատ. 1—3, Երևան, 1955—1958։
Սպանդարյան Ս., Երկեր, հատ. 1—2, Երևան, 1959։
Ханянц Б. М. Избранные произведения, Ереван. 1958.
Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Երևան, 1957։

3. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Ձեռագիր աղբյուրներ

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № № 2622, 2939, 4177, 4179, 4180, 4181, 4183, 4184, 4442, 4447, 4515, 4580, 5463, 6232, 6337, 8540, 8916, 9027, 9424, 9821, 9839։
Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռագիր № 2738։
Նղիշե Զարեճցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ա. Ալպոյաճյանի, Տըպագրության արվեստ և Հայք, ձեռագիր աշխատություն։
ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Հ. Աճառյանի, Հայ գաղթականության պատմություն, ձեռագիր աշխատություն։

Բ. Արխիվային նյութեր

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, արխիվային բաժին, ֆոնդ Կաթողիկոսական դիվան, Քղթ. № № 1 (վավ. 64), 4 (վավ. 46ա), 7 (վավ. 116), 8 (վավ. 62), 17 (վավ. 46), 21 (վավ. 117), 22ա (վավ. 41), 23 (վավ. 60, 116), 24 (վավ. 96, 139), 25 (վավ. 6), 27 (վավ. 125, 132), 31 (վավ. 187, 204), 32 (վավ. 155), 33 (վավ. 263), 36 (վավ. 329), 39 (վավ. 335), 45 (վավ. 142բ), 53 (վավ. 8, 303), 88 (վավ. 105ա), 90 (վավ. 58), 105 (վավ. 332), 138 (վավ. 323), 160 (վավ. 159ա), 193 (վավ. 145, 148, 152, 155, 156, 157, 159), 202 (վավ. 549), 219 (վավ. 121—325), 230 (վավ. 325), 247 (վավ. 855), 258 (վավ. 130)։ Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, Քղթ. 16 (վավ. 7, 10, 100), Կարապետ արհեպիսկոպոսի արխիվ, Քղթ. 163, (վավ. 12բ, 203), Քղթ. 163ա, (վավ. 12, 31, 67, 82, 203, 433, 437)։ Իզմիրլյանի արխիվ, Քղթ. 14 (վավ. 162, 616)։

Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 90 (վավ. 14)։ Լազարյաններէ արխիվ, թղթ. 105 (վավ. 131, 136, 140)։

Հայկական ՍՍՀ Կենտրոնական Պետական պատմական արխիվ (Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ), ֆոնդ 26, գործ 9, 149։ Ֆոնդ 42, գործ 11։ Ֆոնդ 56, ցուցակ 2, գործ 215, ցուցակ 3, գործ 22, ցուցակ 6, գործ 332։ Ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 9, 136, 155, 224, 302, 615, 624 709։ Ֆոնդ 133, գործ 389։ Ֆոնդ 139, գործ 708, 1199, 1200, 1465։ Ֆոնդ 227, գործ 346։ Ֆոնդ 242, գործ 4։ Քաղվածքների ֆոնդ, գործ 39, 49, 356, մ. 2։ Թուրքական ֆերմանների ֆոնդ, գործ 52, 94։

Նոիյեն Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԴԱՔ), արխիվ. Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 1, վավ. 104, բաժին 3, վավ. 37, 38, 40, 42, 43, 47, 49, 50, 52, 55, 57, 59, 142, 146, Ե. Վոնյանի ֆոնդ, վավ. 10։

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, պրոֆ. Լեոյի ֆոնդ, գործ 20, 24, 39, 42։

Архив внешней политики России МИД СССР (АВПР). Фонд *«Главный архив II-19»*, опись 1, дело 1; оп. у-б 3, д. 259; оп. 2. д. 13. ч. 15, 16, 17; ф. *СПб., «Главный архив* V—А^2», дд. 1076, 1083 (72), 1094, 1095; ф. *«Посольство в Константинополе»*, дд. 162, 1615; ф. *СПб., «Главный архив 1—7»*, д. 1.

Центральный государственный исторический архив СССР (ЦГИА СССР). Фонд 17, опись 1, д. 45; ф. 18, оп. 2, д. 916; ф. 383, оп. 29, д. 188; ф. 866, оп. 1, д. 162; ф. 1152, оп. 3, дд. 46, 66, 129; ф. 1281, оп. 4, д. 49; оп. 5, д. 60; оп. 11, дд. 134. 135; ф. 1290, оп. 1, дд. 16, 134; ф. 1374, оп. 2, д. 1815; ф. 1377, оп. 1, д. 19; ф. *Кавказский комитет* (1268), оп. 68 (1), дд. 1, 7.

Центральный государственный военно-исторический архив СССР (ЦГВИА СССР) фонд *Военно-ученый архив (ВУА)*, опись 1, дд. 432, 894, 978, 1019, 1046, 1108, 4258, часть II, III, 4259. часть II. V, 4258 (В), 4263, 4265, 4290, 4291, 4292, 4312, 4316, 4318, 4334, 4336, 4338, 4481, 4643, 4644, 6218; оп. 4, дд. 211, 214, 219; ф. 52, д. 336; ф. 68, оп. 1, д. 57; ф. 69, оп. 1. д. д. 37, 47, 5; ф. 559, оп. 7, д. 15; ф. 821, оп. 14, дд. 53, 73, 50/3054, 55/3166; ф. 1300, оп. 9, д. 155, оп. 18, дд. 2, 63, 82, 83.

Центральный государственный исторический архив Грузинской ССР (ЦГИА Грузинской ССР), фонд 2, опись 1, дд. 2244, 2462, 2646, 2878; ф. 5, оп. 1, д. 2093; ф. 8, д. 1902; ф. 11, оп. 1, дд. 1986, 3683; ф. 16, дд. 31, 4150; ф. 17, д. 57; ф. 47, д. 75, ф. 559, д. 5; ф. 1137, д. 715.

Крымский областной государственный архив. Фонд 67, опись 1, дд. 35, 143, 359, 517, ф. 179, оп. 1, д. 324.

Государственный исторический архив Молдавской ССР. Фонд 1317, опись 1, д. 1.

Գ. Տպագիր սկզբնաղբյուրներ

Հ ա յ ե ր ե ն

«Ազգային սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս, 1860։

«Ազգային սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս, 1863։

«Ատենադրությունք Ազգային ժողովոյ», մասն Ա, Բ, Գ, Կ. Պոլիս, 1860—1876։

Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896։

Բժշկեան Մ., Ճանապարհորդութիւն ի Լհհաստան և այլ կողմանս բնակեալս ի հայկազեանց..., Վենետիկ, 1830։

Բժշկեան Մ., Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819։

«Դիւան Հայոց պատմութեան», կազմեց Գյուտ քահանա Ալանեանց, գիրք Բ, Ժ, ԺԱ, ԺԳ, Թիֆլիս, 1911—1915։

«Դիվան Խաչատուր Աբովյանի», կազմեց և ծանոթագրեց Երվանդ Շահազիզ, հատ. 1, 1940, հատ. 2, 1948, Երևան։

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատ. Ա—Բ, Երևան, 1961—1964։

Ինճիճեան Ղ., Դարապատում, հատ. 1—3, Վենետիկ, 1824—1828։

Հակոբյան Հովնփեննես, Ուղեգրություններ (1800—1820), հատ. Զ, Երևան, 1934։
«Համարատվություն ազգային կեդրոնական վարչության 1872—73 ամի առ ազգային ընդհանուր ժողովն», Կ. Պոլիս, 1874։
«Հայոց նոր վկաները», (աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի և Հր. Աճառյանի), Վաղարշապատ, 1903։
Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, ՀՀ. Ա—Բ, 1749—1769։
«Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», Մոսկվա, 1832։
Սիմեոն դպրի Լեհացւոյ, Ուղեգրութիւն, տեղագրութիւն և յիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարակեց Ներսես Ակինյան, Վիեննա, 1936։
Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, Էջմիածին, 1873։
«Տեղեկագիր քաղաքական ժողովոց», Կ. Պոլիս, 1861, 1865, 1870։
«Տեղեկագիր դավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876։
Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմանեց Լ. Մելիքսեթ-Բեկ, հատ. Գ, Երևան, 1955։
«Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», կազմեցին և ծանոթագրեցին Ս. Խ. Սաֆրաստյան, Մ. Կ. Ջուլալյան, Երևան, 1964։

Русские

«Аграрный строй Османской империи XV—VII вв.», документы и материалы, составление, перевод и комментарии А. С. Тверитиновой, М., 1963.
«Акты, собранные Кавказской археографической комиссией», тт. I—XII, Тифлис, 1866—1904.
Бутков П. Материалы для новой истории Кавказа, ч. III, СПб., 1869.
«Внешняя политика России XIX и начала XX века». Документы Российского министерства иностранных дел, тт. I—VI, М., 1960—1963.
Воронов Н. И. Сборник статистических сведений о Кавказе, т. I, Тифлис, 1859.
«Восстание декабристов». Материалы. Документы. Следственные дела, т. I—XI, М., 1925—1954.
«Геноцид армян в Османской империи». (Сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна), Ереван, 1966.
Герцен А. И., Собрание сочинений в тридцати томах, т. I—IX, М., 1954—1956.
«Договоры России с Востоком, политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПб., 1869.
Друвил Г. Путешествие в Персию в 1812 и в 1813 гг., ч. I—II, М., 1824—1826.
Дубасов В. А. Дневник участника русско-турецкой компании 1829, М., 1916.
«Избранные социально-политические и философские произведения декабристов», т. I—III, М., 1951.
Колюбакин А. М. Статистический обзор северо-восточной части Эрзерумского вилайета от Арарата на Восток до Эрзерумской равнины на Западе, Тифлис, 1889.
Колюбакин А. М. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, ч. I, 1888, т. III, ч. I, отд. 2-й, 1891, Тифлис.
Константинополь и проливы. По секретным документам бывшего Министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова, т. I—II, М., 1925—1926.
«Крестьянское движение в Армении в XIX веке» (сборник документов), составил В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948.
Мартенс Ф. Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами, т. II, III, V, XI, XIII, СПб., 1878—1909.
«Материалы для географии и статистики России, Екатеринославская губерния», составил В. Павлович, СПб., 1862, стр. 216.
«Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I—VII, Тифлис, 1885—1887.

«Мемуары кн. Адама Чарторижского и его переписка с императором Александром I», т. I. М., 1912., т. II, М., 1913.
«Отечественная война 1812 года». Сборник документов и материалов. М.—Л., 1941.
«Передняя Азия в документах. Нахичеванские рукописные документы XVI—XIX вв.», Тбилиси, 1936.
«Полное собрание законов Российской империи», собр. второе, т. VII—VIII, XIX, XXI, XXIV, СПб., 1830—1850.
«Рабочее движение в России XIX в.». Сборник документов и материалов, т. 1, ч. 1. (1800—1825 гг.), ч. 2 (1826—1860 гг.), М., 1955.
Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова, М., 1924.
«Сборник сведений о Кавказе на основании камерального описания 1871—1877 гг.», т. I, 1871, т. VII, Тифлис, 1881.
«Сборник статистических сведений о Кавказе», т. I—II, Тифлис, 1869.
«Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I—IV, Тифлис, 1887—1888.
«Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. I—III, М., 1833—1838.
«Статистический временник Российской империи», вып. II, СПб., 1872.
«Статистическое изображение городов и посадов Российской империи», СПб., 1830.
Томилов, Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника Томилова в 1904 году, ч. 1, СПб., 1907.
Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.
Эзов Г. А. Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898.

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերեն

Աբեղյան Մ., *Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2, Երևան, 1946։*
Աբովյան Խ., *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1—10, Երևան, 1942—1961։*
Աբրահամյան Ա. Գ., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա, 1964, հատ. Բ, 1967, Երևան։*
Ազատյան Թ., *Տատյան գերդաստանը և իր ականավոր դեմքերը, Իսթանպուլ, 1952։*
«Ազգարարութիւն առ Հայս։ Առաջադրութիւն հայոց նոր սարքվոյ զօրքի համար», Թիֆլիս, 1827։
Ալիշան Ղ., *Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890։*
Ալիշան Ղ., *Յուշիկք հայրենեաց Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1869։*
Ալիշան Ղ., *Սիսուան, Վենետիկ, 1885։*
Ալիշան Ղ., *Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853։*
Ալիշան Ղ., *Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1853։*
Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901։*
Ալլահվերդյան Յ. Յ., *Ուվնիա կամ Զեյթուն լեռնային ավան ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1884։*
Ալպեր Տրվըլե և Գեորգ Փիսոճ, *Ուղևորություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892։*
Ալպոյաճյան Ա., *Պատմական Հայաստանի սահմանները, Դահիրե, 1950։*
Ալպոյաճյան Ա., *Պատմություն հայ կեսարիո, հատ. Ա., Դահիրե, 1937։*
Ալպոյաճյան Ա., *Պատմություն Սվդոկիո հայոց, Դահիրե, 1952։*
Ալպոյաճյան Ա., *Պատմություն Մալաթիո հայոց, Պեյրութ, 1961։*
Ալպոյաճյան Ա., *Պատմություն հայ գաղթականության, հատ. Ա—Գ, 1941—1955։*
Անկեյան Ն., *Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921։*
«Ակնարկ հայ երաժշտության պատմության», Երևան, 1963։
Աղաթեկյան Մ., *Տեղեկագիր Ամենայն Հայոց կաթողիկոսության արդի վիճակի վրա, Կ. Պոլիս, 1865։*

Աղանյանց Դյուտ, Կարնո դաղթը (1829—1830), Թիֆլիս, 1891։
Աղայան Ղ., Երկեր, հատ. 3, Երևան, 1940։
Աղայան Մ., Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1961։
Անառյան Հր., Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906։
Անառյան Հր., Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիջևան, 1915։
Անեվյան Լ., Հայոց պատմություն, դիրք Դ, Դահիրե, 1936։
Այվազյան Դ., Պատմություն Խալիլյան ուսումնարանին, Տիխոս, 1880։
Այվազովսկի Դ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, հատ. Ա, Բ, Վիեննեիկ, 1841։
Այվազովսկի Դ., Համառոտ պատմութիւնք վարուց օսմանեան թագաւորաց և վէպերաց, Վիեննեիկ, 1848։
Ամֆիտեատրով Ալեքսանդր, Եվրոպա և Հայաստան, թարգմ. Ա. Մխիթարյան, Թիֆլիս, 1906։
Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 1, Բաքու, 1916, հատ. 2, Էջմիածին, 1922։
Անդրեաձիկ, Տէրսիմ, ճանապարհորդութիւն եւ տեղագրութիւն, Թիֆլիս, 1901։
Անդրեասյան Ա., Խոհեր, Պեյրութ, 1961։
Աշճյան Հ., Ադանայի եղեռնը և Դոնիայի հուշեր, Նյու-Յորք, 1950։
Աղեքսանդրեան Ա., Պատմութիւն ականատես քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին, Վիեննեիկ, 1911։
Առաքելյան Հ., Զեյթուն, Թիֆլիս, 1896։
Ասատուրյան Ա., Հարություն Սվաճյան, Երևան, 1968։
Ասատուր Հ., Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921։
Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969։
Ավդալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, 1801—1917 ԹԹ., Երևան, 1959։
Առոմ, Ազգային սահմանադրություն, Կ. Պոլիս, 1914։
Առոմ, Պետական վերանորոգությունն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910։
Արծրունի Գ., Աշխատություններ, հատ. 1, Թիֆլիս, 1904։
Արծրունի Գ., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1878։
Արսեե Կ., Հայ ազատագրության ճանապարհին, Պեյրութ, 1949։
«Արևելագիտական ժողովածու», հատ. 1, Երևան, 1960։
Բարայան Լ., Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիզ, 1911։
Բասմաջյան Կ. Յ., Հայկական ընդհանուր դրամագիտություն..., Վիեննեիկ, 1936։
Բասմաջյան Կ. Յ., Իսկական պատմություն Հայոց սկզբեն մինչև մեր օրերը, մասն Բ, Պարիս, 1927։
Բաստամեան Վ., Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880։
Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը, Երևան, 1967։
Բյուրատ Ս., Ելըտըզե Սասուն, Աղեքսանդրիա, 1935։
Բյուրատ Ս., Բանտե-բանտ, Կ. Պոլիս, 1911։
Բյուրատ Ս., Զեյթունի վրնժը, Կ. Պոլիս, 1911։
Բրաճոես Դ., Հայաստանը և Եվրոպան, ծնև, 1907։
Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 3, Երևան, 1959։
Գալեմքեարյան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան..., հատ. Ա, Վիեննա, 1893։
Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934։
Գալֆաեան Ա., Համառոտ պատմութիւն նոր ազգաց, Վիեննեիկ, 1851։
Գասպարյան Գ., Հարություն Սվաճյան, Երևան, 1958։
Գասապյան Մ. [Ֆերհատ], Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ, Պարտիզակ, 1913։
Գովրիկյան Գր., Դրանսիլվանիո հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա հայաքաղաքի, Վիեննա, 1896։
Դրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամությունը, Երևան, 1942։
Դրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դարի ընկզբին, Երևան, 1957։
Դրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։
Գոպյանյան Խ., Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959։

Գուշակյան Ք., Հնդկահայք, Երուսաղեմ, 1941։
Դեհիս Դավիդով. Ռազմական հուշեր, Երևան, 1942։
Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966։
Դուրյան Պ., Տաղեր, Երևան, 1954։
Դուրյան Պ., Տաղք և քաւտերագրություններ, Կ. Պոլիս, 1872։
Եզյանց Կ., Ս. էջմիածնի մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը, Թիֆլիս, 1904։
Եսայան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Բ, Ադեքսանդրիա, 1929։
Երեմյան Ա., Ռուսահայ թատրոնի պատմությունը, հատ. Ա, Վենետիկ, 1933։
Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, հպատ. 1—2, Թիֆլիս, 1894—1895։
Երիցյան Ա., Նյութեր Ներսես 5-րդ Աշտարակեցի կաթողիկոսի կենսագրության, Թիֆլիս, 1899։
Երևանյան Գ., Պատմություն Ջարանճախի հայոց, Պեյրութ, 1956։
Ջարդարյան Վ., Հիշատակարան, Հայ նշանավորաց կենսագրությունները... (1512—1912), հատ. Ա, Կ. Պոլիս, 1910։
Ջամիճյան Ա., Հայոց նկողեցու պատմություն, հատ. Ա, 1909, Բ, 1910, Նոր Նախիջևան։
Ջարպճանալյան Գ., Պատմություն հայերեն դպրության, հատ. Բ, Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878։
«Ձեյթունցիք և լուսավորչական հայք», Կ. Պոլիս, 1866։
Ձեյթուեցի [Սեմերճյան], Ձեյթունի անցյալին և ներկային, մասն Ա, Վիեննա, 1900, մասն Բ, Բարիզ, 1903։
Ձուռաբյան Ս., Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959։
Էլիզե Ռ., Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893։
Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Ա, Վենետիկ, 1902։
«Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1901, 1902, 1905, 1907, 1909, 1910։
Թաղիադեանց Մ., Աստվածասէր եւ ազգասէր հասարակութեան Հայոց փրկեալ քաղաքին Երևանայ՝ սրբակրոն քահանայից, բարեծնունդ իշխանաց և համայն բարեպաշտն ժողովրդոց, Կալկաթա, 1828։
Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847։
Թեմուրճյան Վ., Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955։
Թեոդիկ. Ամենուն տարեցույց, Փարիզ, 1924, 1929։
Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 1, Երևան, 1959։
Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտներ, մ. Ա, Բ, Թիֆլիս, 1882։
Թովմա Մ., Յիշատակարան, Թիֆլիս, 1893։
Ժամկոչյան Հ., Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, հատ. 6, 1959։
Իննիկյան Ա., Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954։
Իննիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, Վենետիկ, 1806։
«Լայատեր լուսատուս, հորինյալ ի տեր Մկրտիչէ Տիգրանյան, Կ. Պոլիս, 1868։
Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1969։
Լեո, Ստեփանոս Նազարյանց, հատ. 1—2, Թիֆլիս, 1902։
Լեո, Պատմություն Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1837—1912), Թիֆլիս, 1914։
Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838—1913), Թիֆլիս, 1914։
Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն երկրորդ, Երևան, 1927, (ապահետիպ)։
Լեոնյան Գ., Հայ դիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946։
Լիպպիչենկո Ա. Ի., Լեհաստանի և Արևմտյան-Հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894։
Լինչ Հ., Հայաստան։ Ուղևորություններ և ուսումնասիրություններ, թարգմ. Լևոն Խաչենց, հատ. 1, 2, Կ. Պոլիս, 1913—1914։
«Լուսյա», Պատկերազարդ օրացույց 1905 թվականի, Թիֆլիս, 1904։
Խաբանասյան Ն., Հայոց թիվը, Պոստոն, 1965։

Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905։
Խառաճյան Հ., Հանքերը Հայաստանի, Փոքր Ասիո և Կիլիկիո, Նյու-Յորք, 1919։
Լոիմյան Հ. [Ե.], Ամրողջական երկեր, Նյու-Յորք, 1929։
Մոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947։
Կարինյան Ա., Անհարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 1—2, Երևան, 1956, 1960։
«Կիլիկիա», դրեց Բակ., Թիֆլիս, 1896։
Տրիմսկի Ա., Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, Վաղարշապատ, 1906։
Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը, հատ. 3, Երևան 1959։
Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան 1968։
Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան, Երևան, 1967։
Հայկ Վ., Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959։
Հայկունի Ա., Էլիզա կամ վերջին Արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպ մը, Զմյուռնիա, 1862։
«Հայ պարբերական մամուլի պատմությունից», Երևան, 1963։
«Հայ ժողովրդական պանդխտության երգեր», Երևան, 1961։
«Հայ նոր գրականության պատմություն», ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, հատ. 1—2, Երևան, 1962, հատ. 3, 1964։
Հարությունյան Շ. Ռ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, 1801—1917, Երևան, 1955։
Հացունի Վ., Նորահերտ հայ լուսինյաններ, Վենետիկ, 1953։
Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, Երևան, 1959։
Հովհաննիսյան Աշ., Մխիթար Նալբանդյանի «Անեծիք երկեր», Երևան—Մոսկվա, 1935։
Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա, Բ, Երևան, 1955—1956։
Հովհաննիսյան Օ., Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում, Երևան, 1949։
Ղազարյան Հայկ, Գրիգոր Զոհրապյան, Երևան, 1959։
Ղազարյան Հայկ, Մատթեոս Մամուրյան, Երևան, 1961։
Ղազարյան Հայկ, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 ԹԹ., Երևան, 1967։
Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի (1512—1905), հատ. Ա, Վենետիկ, 1909—1912։
Ճանաշյան Մ., Պատմություն արդի հայ գրականության, Վենետիկ, 1953։
Ճանիկյան Հ., Հնություններ Ակնա, Թիֆլիս, 1895։
Ճերազյան Լ., Ժամանակակից ընդարձակ քննական պատմություն հայոց, հատ. Ա, Մարսել, 1933։
Ճիզմեճյան Մ., Խարբերդը և իր զավակները, Ֆրեզնո-Քալիֆորնիա, 1955։
Մարկոսյան Ս., Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959։
Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հատ. Բ, Թիֆլիս, 1907։
Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895։
Մակարյան Ա., Մխիթար Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Երևան, 1946։
Մաճղինյանց Ստ., Հայելի դատաիրաւականութեան տոյոց, Տփխիս, 1859։
Մամուրյան Մ., Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881։
Մամուրյան Մ., Սև լեռին մարդը, Աթենք, 1932։
Մամուրյան Մ., Երկեր (կազմեցին և ծանոթագրեցին Հայկ Ղազարյան, Հայկազ Պողոսյան), Երևան, 1966։
Մելիխեթյան Վ., Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը, Երևան, 1950։
Մելիխեթյան Վ., Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960։
Միհայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801—1917), Երևան, 1970։
Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայարնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, մ. Ա—Գ, Կ. Պոլիս, 1864—1885։
Մ[ուրյան] Հ., Թուրքահայոց վաճառականությունն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908։
Մ[ուրյան] Հ. Գ., Մասնական պատմություն հայ մեծատուներու, Կ. Պոլիս, 1909։

Մուշեղ եպիսկոպոս, *Մանչեսթրի հայ գաղութը*, Բոստոն, 1911։
Նազարյանց Ստ., *Երկեր*, հատ. 1, Թիֆլիս, 1913։
Նազարյան Ստ., *Նամականի*, Երևան, 1969։
Նալբանդյան Մ., *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1—4, Երևան, 1940—1949։
Նաթանյան Պ., *Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Ջարսանճակի, Ճապաղչուրի և Երզնկայու*, Կ. Պոլիս, 1883։
Նաշյան Ս. Յ., *Զեյթունի քաշամարտիկ Տեր-Օհանի քաջագործությանց դրվագներեն*, Պեյրութ, 1958։
Ներսես Ե Աշտարակեցի, *Համառոտությիւն անցից քրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց ս. Էջմիածնի*, Թիֆլիս, 1853։
Ներսիսյան Մ., *Սուվորովը և հայ-ռուսական հարաբերությունները 1770—1790 թթ.*, Երևան, 1944։
Ներսիսյան Մ., *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ*, Երևան, 1955։
Ներսիսյան Մ., *Դեկաբրիստները Հայաստանում*, Երևան, 1959։
Ներսիսյան Ա., *Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան 19-րդ դարի առաջին կեսին*, Երևան, 1962։
Նուրիխան Մ., *Պատմություն ժամանակակից*, մ. Բ, Վենետիկ, 1896։
Շահխաթունեան Յ., *Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, հատ. 1—2, Վաղարշապատ, 1842։
Շահազիզ Տրվանդ, *Հին Երևան*, Երևան, 1931։
Շահնազարյան Կ., *Դաշանց քրքո քննությունն ու հերքումը*, Փարիզ, 1862։
Շահպազյան Հ., *Քյուրդո-հայ պատմություն*, Կ. Պոլիս, 1911։
Շահվերդյան Ալ., *Հայ երաժշտության պատմության ակնարկներ*, 19—20-րդ դդ., Երևան, 1959։
Շերենց Գ., *Սրբավայրեր։ Տեղագրություն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուխտանարանաց*, Թիֆլիս, 1902։
Շահիկյան Ս. Ա., *Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801—1850)*, Երևան, 1973։
Ոսկյան Հ., *Վասպուրական—Վանի վանքերը*, մ. Ա, Վիեննա, 1940, մ. Գ, 1947։
Ոսկան Հ., *Ազգիս վիճակին վրա ընդհանուր տեսություն մը*, Կ. Պոլիս, 1861։
Զագմագճյան Հ., *Ընդարձակ պատմություն հայոց*, Պոսթոն, 1917։
Զամչեան Մ., *Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև 1784*, հատ. 3, Վենետիկ, 1786։
Զարըգ Ղ., *Հուշամատյան Բարձր Հայքի*, Կարինապատում, Պեյրութ, 1957։
Զիլիճկիրյան Գր., *Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս*, Զմյուռնիա, 1883։
Զոզաճյան Ա., *Դեմքեր*, Փարիզ, 1929։
Զոզաճյան Ա., *Հայաստանը թուրք լուծին տակ*, Բոստոն, 1918։
Պալասանյան Ս., *Պատմութիւն հայոց*, Թիֆլիս, 1895։
[Պատկանյան Գ.], *Հայոց ազգի պատմութիւն*, Ս. Պետերբուրգ, 1863։
Պատկանյան Ք., *Նշխարք մատենագրության հայոց*, Ս. Պետերբուրգ, 1884։
Պարսամյան Վ., *Ճարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում*, Երևան, 1940։
Պարսամյան Վ., *Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները*, Երևան, 1947։
Պարսամյան Վ., *Հայ ազատագրական շարժումների պատմությունից*, Երևան, 1958։
Պարսամյան Վ., *Հայ ժողովրդի պատմություն*, հատ. III, Երևան, 1967։
Պէրպէրեան Ա., *Պատմութիւն հայոց*, Կ. Պոլիս, 1871։
Պողոսյան Ա. Մ., *Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը*, Երևան, 1958։
Պողոսյան Հ., *Համընի ընդհանուր պատմություն և շրջակա Գոզան-տաղի հայ գյուղերը, Լոս-Անճելըս—Քալիֆորնիա*, 1942։
Պողոսյան Հ. Մ., *Զեյթունի պատմությունը 1409—1921*, Երևան, 1969։
Պռոսյան Մ., *Գաղութահայ տարեգիրք, Ա տարի*, Պուքրեշ, 1939։
Ջալալեանց Ս., *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Բ, Տփխիս, 1842, 1853*։
Ռշտունի Վ., *Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության*, մ. Ա, Երևան, 1960։
Ռուսինյան Ն., *Ազգային հանգանակություն*, Կ. Պոլիս, 1865։

Աղայան-Դուլյան Ա., Փոքր Հայքի հիշատակներ, մասն Ա, Ջիկաղո, 1917։
Սարգսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վիեննէկ, 1864։
Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ննջգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։
Սարինյան Ս. Ն., Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ, Երևան, 1958։
Սավալանյանց Տ., Պատմություն Երուսաղեմի, հատ. Բ, Երուսաղեմ, 1931։
Սարինյան Ս. Ն., Հայկական ռոմանտիզմը, Երևան, 1966։
Սաւուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Թիֆլիս, 1912։
Սվանյան Հ., Հրապարակախոսություն, Երևան, 1960։
Ստեփանյան Գ. Խ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, Երևան, 1962։
Ստեփանյան Գ. Խ., Հակոբ Պարոնյան, Երևան, 1964։
Սրվանձտյանց Գ., Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, Կ. Պոլիս, մ. Ա, 1879, մ. Բ, 1884։
Սրվանձտյանց Գ., Համով-Հատով, Կ. Պոլիս, 1884։
Սրվանձտյանց Գ., Մանանա, Կ. Պոլիս, 1876։
«Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892։
Տաշյան Հ., Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921։
Տեր-Աբրահամյան Հ., Պատմություն Երիմու, Թեոդոսիա, 1865։
Տեր-Մովսիսյան Ս., Պատմություն Հայոց, հատ. Բ, Վիեննէկ, 1924։
Տեր-Հովհաննէսեանց Ա., Ժամանակագրական պատմութիւն Երուսաղեմի, հ. Բ, 1890։
Տեր-Հովհաննէսյան Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հատ. Ա, Նոր Ջուղա, 1880։
Տյուսաբ Սրբուհի, Երկեր (կազմեց և ծանոթագրեց Հայկ Ղազարյան), Երևան, 1959։
Բաֆֆի, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, 9, 10, Երևան, 1958—1959։
Փարսադանյան Ռ., Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1960։
Փիրումյան Տ., Երիմյան Հայրիկ, Թիֆլիս, 1887։
Քաջունի Մ., Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց, Վիեննէկ, 1857։
Քարամյան Կ. Ն., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ազգային-ազատագրական շարժման օրինաչափության հարցի շուրջը, Երևան, 1969։
Քեշյան Ա., Պարսամյան Մ., Ակն և ակնցիք, Փարիզ, 1952։
Քեշյան Բ., Պատմություն ս. Փրկչի հիվանդանոցին Հայոց ի Կ. Պոլիս, Կ. Պոլիս, 1887։
Քոսյան Հ., Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հատ. Ա, Վիեննա, 1899։
Քուշներյան Ք., Պատմություն գաղթականության Երիմու հայոց, Վիեննէկ, ս. Ղազար, 1895։
Օրմանյան Մ., Ազգապատում, հատ. 3, Երուսաղեմ, 1927։
Յիլդիխան Բարութակ պէյի, Ճանապարհորդութիւն ի Բաբէլոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, Արմաշ, 1876։

Ռուսերեն և այլ լեզուներով

Агаян Ц. П. Бакиханов А., Баку, 1948.
Агаян Ц. П. Вековая дружба народов Закавказья, ч. I, Ереван, 1970.
Агаян Ц. П. Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956.
Аверьянов П. И. Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Тифлис, 1900.
Аверьянов П. И. Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912.
Адонц М. А. Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957.
Ананян Ж. А. Армянская колония Григориополь, Ереван, 1969.
Андрианов В. М. Русско-турецкая война 1806—1812 гг., СПб., 1892.
Арешян С. Г. Армянская печать и царская цензура, Ереван, 1957.
Аргутинский-Долгоруков. Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях, Тифлис. 1897.
Ахвердов Ю. Ф. Тифлисские амкары, Тифлис, 1883.

Бакрадзе Д. Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889.
Богданова Н. Г. К вопросу о феодальной эксплуатации качевников в Закавказском крае в первой трети XIX в. («Исторический архив», т. 2, М.—Л., 1939).
Богданович М. И. Восточная война 1853—1856 годов, тт. I, II, IV, СПб., 1877.
Борьян Б. Армения, международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928.
Булгарин Ф. В. Картина войны России с Турцией в царствование императора Николая I, СПб., 1837.
Бухаров Д. Россия и Турция, СПб., 1878.
Бушуев С. Крымская война 1853—1856 гг., М., 1940.
Вандаль А. Армяне и турецкие реформы, перевод с французского, М. Я. Алавердянц, СПб., 1908.
«Ванский вилайет». М., 1910.
Воронченко, Описание Малой Азии в ее нынешнем состоянии, часть I, СПб., 1840.
Гакстгаузен А. Закавказский край, ч. 1—2, СПб., 1857.
Гиппиус А. И. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, ч. 1—2, Тифлис, 1890.
Гиппиус А. И. Статистические таблицы вилайетов Турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889.
Глинка С. Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831.
Голобородько И. И. (Южанин), Старая и Новая Турция, М., 1908.
Грибоедов А. С. Полное собрание сочинений, П., 1917.
Григорян З. Т. Вековая борьба армянского народа за свою независимость и свободу, М., 1946.
Григорян З. Т. Присоединение Восточной Армении к России в начале XIX в., М., 1959.
Гутор М. Д. Новейшая история Турции и Персии, ч. I, Тифлис, 1913.
Дадиан Мкртич бей, Армяне Оттоманской империи, Тифлис, 1878.
Данциг Б. Турция, М., 1949.
Дживелегов А. К. Армения и Турция, М., 1946.
Диев Гр. А. Армянский вопрос в Турции. (Из переписки с стамбульским публицистом), М., 1893.
Дубровин Н. Закавказье с 1803—1806 гг., СПб., 1866.
Дубровин Н. История войны и владычества русских на Кавказе, т. I—IV, СПб., 1871—1888.
Евецкий О. Статистическое описание Закавказского края, СПб., 1835.
Егиазаров С. Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1—2, Казань, 1889—1891.
Егиазаров С. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1894.
Ениколопов И. К. Грибоедов и Восток, Ереван, 1954.
Ениколопов И. К. Пушкин на Кавказе, Тбилиси, 1938.
Ерицов А. Д. Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.
Ермолов А. Алексей Петрович Ермолов, СПб., 1912.
Есаян А. М. Мулькадарское право в Армении, Ереван, 1948.
Завадский-Краснопольский, Крым, природа, население и особенности края, СПб., 1874.
Заваров С. Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1889.
Завриев Д. К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947.
Зубов Платон, Картина кавказского края, ч. 1—4, СПб., 1834—1835.
Иваненко В. Н. Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества великого князя Михаила Николаевича. Исторический очерк.—«Утверждение русского владычества на Кавказе», Тифлис, 1901.

«Известия Кавказского отдела исторического русского географического общества», т. 2, вып. 2, Тифлис, 1873—1874.
Иоаннисян А. Р. Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
«История Болгарии», Изд. АН СССР, М., 1954.
«История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах», ч. 1—2, СПб., 1836.
«История XIX века», под ред. профессоров Лависа и Рамбо, М., 1938.
«История турок от начала турецкого народа до наших времен», перевод с немецкого, СПб., 1829.
Карцов А. Заметки о курдах, Тифлис, 1896.
Коан, Карлайль Мак, Наш новый протекторат. Описание географических этнографических и экономических свойств Турецкой Азии. Перев. с английского, М., 1884.
Косев А. Новая история Болгарии, М., 1952.
Куртейл И. Д. Современное состояние Оттоманской империи, СПб., 1877.
Ларина В. И., Бетанов И. Х. Город Моздок, Орджоникидзе, 1963.
Линч Х. Ф. Б. Армения, Путевые очерки и этюды. Перевод с английского Елизаветы Джунковской, т. I, Русские провинции, т. II, Турецкие провинции, Тифлис, 1910.
Лихутин М. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб., 1863.
Махарадзе Ф. Грузия в XIX столетии, Тбилиси, 1933.
Малама Я. Д. Описание Эрзерумского вилайета, СПб., 1874.
Миллер А. Ф. Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века, М.—Л., 1947.
Мирза Адигезал-бек, Карабаг наме, Баку, 1950.
Мирза Джамал Джеваншир Карабахский, Карабаг тарихи (история Карабаха), Баку, 1961.
Муравьев Н. Н. Русские на Босфоре в 1833 году. Из записок Н. Н. Муравьева (Карского), М., 1869.
Нерсисян М. Г. Из истории русско-армянских отношений, кн. I, 1956, кн. II, 1961, Ереван.
Нерсисян М. Г. Отечественная война 1812 г. и народы Кавказа, Ереван, 1965.
Нечкина М. В. А. С. Грибоедов и декабристы, М., 1951.
Нечкина М. В. Движение декабристов, т. II, М., 1955.
Никитин В. Курды, М., 1964.
Никитин С. А. Революционная борьба в Болгарии и Апрельское восстание (см. «Освобождение Болгарии от турецкого ига», М., 1953).
«Новая история стран Зарубежного Востока», т. 1, М., 1952.
Новичев А. Д. Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937.
Овнанян С. В. Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX в., Ереван, 1968.
Оганисян Л. А. История медицины в Армении, ч. IV, Ереван, 1947.
Огарев Н. П. Избранные социально-политические и философские произведения, М., 1960.
Огородников П. На пути в Персию и Прикаспийские провинции ее, СПб., 1878.
Парсамян В. А. История армянского народа 1801—1900 гг., книга первая, Ереван, 1972.
Петросян Ю. А., Желтяков А. Д. История просвещения в Турции, М., 1965.
Петросян Ю. А. «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.
Петрушевский И. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX века. Л., 1949.
«Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.
Потто В. Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. I—V, СПб., 1885—1891.

Потто В. Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902.
Пржевальский А. М. Вилайет Эрзерум, ч. I—II, Тифлис, 1904.
Розен Д. Г. История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. I, СПб., 1872.
Роткова М. Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX века и русская буржуазия, М.—Л., 1949.
Ролен-Жекмен М. Г. Армения, армяне и трактаты, перевод с французского О. Х. А., М., 1897.
Рштуни В. А. Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947.
Саркисян Е. К. Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957.
Серно-Соловьевич Н. А. Публицистика, Письма, М., 1963.
Скальковский А. А. Ростов-на-Дону, СПб., 1847.
Скрутковский С. Лейб-гвардии сводный полк на Кавказе в персидскую войну с 1826 по 1828 гг., СПб., 1896.
Соколов И. Земельные отношения в Турции до Танзимата («Новый восток», 1924, № 6).
Тарле Е. Крымская война, т. 1, М., 1942.
Тер-Гукасов Г. Экономические интересы России в Персии, Птг., 1915.
Троттер, Мало-Азиатские курды, Тифлис, 1886.
Туманян О. Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954.
Фадеев А. В. Россия и Кавказ первой трети XIX века, М., 1960.
Фадеев А. В. Кавказ в системе международных отношений 20—50-х годов XIX века, М., 1956.
Филиппов Н. В. Военное обозрение азиатской Турции, СПб., 1881.
Хачапуридзе Г. В. К истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1950.
Хубов Е. Описание достопамятных произшествий в Армении от 1779 до 1809 гг., Петербург, 1811.
Чихачев П. А. Письма о Турции, М., 1960.
Шаншиев П. Два слова об амкарах, Тифлис, 1857.
Шарль Р. Мусульманское право, М., 1959.
Щербатов А. Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, т. 1—2, СПб., 1890.
Шостакович С. В. Дипломатическая деятельность А. С. Грибоедова, М., 1960.
Эсадзе С. Историческая записка об управлении Кавказом, т. I—II, Тифлис, 1902.
Ященко А. Русские интересы в Малой Азии, М., 1916.
Albin P. Les grands traités politiques, Paris. 1912.
Alcoc Thomas. Travels in Russia, Persia, Turkey and Greece in 1828—1829, London, 1831.
Alix A. L. Précis de l'histoire de l'empire Ottoman, Paris, 1822—1824.
Allen W. Caucasian Battle-field, Cambridge, 1953,
Academia Română, Grigorie M. Buiuciu, 1840—1912... Bucureşti, 1914.
Anderson M. S.. Macmillan, The Eastern Question 1774—1923 (A study of international relations), London-Melbourne-Toronto-New York, 1966.
Avedik Felix, A magyar, örményeseg multja és történeti jelentösege, Budapest, 1921.
Armstrong T. B. Journal of Travels in the Seat of War, during the Last Two Campaigns of Russia and Turkey, London, 1831.
Baddeley, John F. The Russian Conquest of the Caucasus, London, 1908.
Bartlet C. Y. Great Britain and Sea Power 1815—1853, Oxford, 1963.
Batailles de la glorieuse campagne du comte Paskevitch d'Erivan dans l'Asie Mineure, en 1828—1829, St. Petersburg, 1837.
Beaujour, Bon. Felix de, Voyage militaire dans l'Empire Ottoman, Paris, 1829.

Bernhardi T. Geschichte Russlands und der europäischen Politik in den Jahren 1814. bis 1831, Leipzig, 1875.
Boukharow, Dmitrie de, La Russie et la Turquie depuis le commencement de leurs, relations politiques jusqu'à nos jours, Amsterdam, 1877.
Bravley Hodgetts, Round about Armenia, London, 1896.
Bussierre, Bon. The Renouard de, Lettres sur l'Orient, écrites pendant les années 1827 et 1828, Paris, 1829.
Buxton, Travel and Politics in Armenia, London, 1914.
Cuinet Vital, La Turquie d'Asie. Géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie Mineure, Paris, 1892.
Curzon G. Persia and the Persian Question, vol. II, London, 1892.
Davis W. S. A Short History of the Near East, New York, 1923.
Djevad bey A. Etat militaire Ottoman. Depuis la fondation de l'empire, t. I, Paris, 1882,
Driault B. La question d'Orient, Paris, 1917.
Drouville, Gaspard, Voyage en Perse, fait en 1812 et 1813, Paris, 1825.
Fontanier V. Voyage en Orient, entrepris par ordre du gouvernement Français, de 1821 à 1829 Turquie d'Asie, Paris, 1829.
Fontanier V. Voyage en Orient, entrepris par ordre du gouvernement Français, de 1830—1833. Deuxième voyage en Anatolie, Paris, 1834.
Fonton, Félix, La Russie dans l'Asie Mineure ou Campagne du Maréchal Paskévitch en 1828 et 1829, Paris, 1840.
Geoffrey L. Turkey, London, 1965.
Gerandon de A. La Transylvanie et ses habitants, Paris, 1850.
Gordon L. G. American Relations with Turkey, 1830—1930, Philadelphia, 1932.
Hammer I. Histoire de l'empire Ottoman depuis son origine jusqu'á nos jours, Paris, 1835—1843.
Hansen H. Zwei Kriegsjahre. Erinnerungen eines alten Soldaten an den Feldzug der Russen gegen die Türken, 1828, Berlin, 1881.
Holland, Thomas Erskine, A Lecture on the Treaty Relations of Russia and Turkey from 1774 to 1853, Delivered at Oxford, April 28, 1877.
Kinneir, John Macdonald, A Geographica Memoir of the Persian Empire, London, 1813.
Kinneir, John Macdonald, Journey through Asia Minor, Armenia and Koordistan, London, 1818.
Klaproth M. Tableau Historique, Géographique, Ethnographique et Politique du Caucase et des provinces limitrophes entre la Russie et la Perse, Paris, 1827.
Kotzebue, Maurice de, Voyage en Perse, à la suite de l'ambassade russe, en 1817, Paris, 1819.
Langlois Victor, Voyage dans la Cilicie et les montagnes de Taurus en 1852—1853, Paris, 1863.
Léart Marcel, La question arménienne à la lumière des documents, Paris, 1913.
Legrand M. Les russes en Asie Mineure 1723—1877, Paris, 1878.
Lesley B. The Sabres of Paradise, New York, 1960.
Malcolm, Sir John, Sketches of Persia, London, 1845.
„Malcolm's History of Persia (Modern)", 1888.
Marriott J. A. R. The Eastern Question, an Historical Study in European Diplomacy, Oxford, 1951.
Melingen Frederic (Osman Seyfi Bey), La Turquie sous le règne d'Abdul-Aziz (1862—1867), Paris, 1868.
Miller W. The Ottoman Empire and Its Successors (1801—1927), Cambridge, 1927.
Mihail Gr. Poslușnicu, Istoria Muzicei la Români, București, 1928.

Moltke Helmuth von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1876.
Montieth W. Kars and Erzerouom with the Campaigns of Prince Paskevitz in 1828 an 1829, London, 1856.
Morier, Jacques, Seconde voyage en Perse, en Arménie et dans l'Asie Mineure, fait de 1810 à 1816, Paris, 1842.
Noradounghian Gabriel, Recueil des traités de l'Empire Ottoman, vol. VIII.
Olivier G. A. Voyage dans l'Empire Ottoman, l'Egypte et la Perse, fait par ordre du gouvernement pendant les six premières années de la République, Paris, 1807.
Rabbe A. Histoire d'Alexandre 1-er, Empéreur de toutes les Russies, et des principaux évènements de son règne, tt. I—II, Paris, 1826.
Rumpf J. D. T. Alexander I. Kaiser von Russland, Berlin, 1814.
Schmeindler D. Geschichte des Osmanischen Reiches in letzten Jahren, Leipzig, 1875.
Seamon L. C. B. From Vienna to Versailles, New York, 1963.
Seidlitz G. Zur Erinnerung an den türkischen Feldzug aus den Jahren 1828 und 1829, Derpt, 1877.
Slaars Bonaventura F. Etude sur Smyrne, 1868.
Steinle N. Die russich-türkischen Kriege in Europa und Asien verglichen mit jenen in den Jahren 1828 und 1829, Ulm, 1854.
St. Imreh, Despre începuturile industriei capitaliste în Transilvania... Bucureşti, 1955.
Sykes P. M. A History of Persia, vol. II, London, 1951.
Sykes P. M. Persia, Oxford, 1922,
Thornton T. The Present State of Turkey, London, 1809.
Ubicini M. A. Lettres sur la Turquie, Paris, 1854.
Ubicini M. A. Etat présent de l'Empire Ottoman, Paris, 1876.
Voss C. D. Russland beim Anfang des XIX Jahrhunderts, Leipzig, 1813.
Walsh R. Voyage en Turquie et la Constantinople, Paris, 1828.
Wittman, William, Travels in Turkey, Asia-Minor, Syria, and Across the Desert into Egypt, During the Years 1799, 1800 and 1801 in Company with the Turkish Army and the British Military Mission, London, 1803.
Witzleben F. A. Darstellung des russich-türkischen Feldzuges im Jahre 1828 in Europa und Asien, Bd. I, Magdeburg, 1829.

5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Ազգարար» (Մադրաս), 1794—1796, Մ. 2—17։
«Ազգասեր» (Կալկաթա), 1845, Հատ. Ա։
«Ազգասեր Արարատյան» (Կալկաթա), 1848, Հատ. Ա, 1851, Մ. 72։
«Արարատ» (Էջմիածին), 1914, № 9։
«Արաքս» (Պետերբուրգ), 1887, գիրք Ա։
«Արեւելյան դար» (Կ. Պոլիս), 1861, № 24, 25, 36։
«Արեւելք» (Կ. Պոլիս), 1884, № 170։
«Արեւելյան մամուլ» (Զմյուռնիա), 1871, № 4, 5, 6, 1872, № 12, 1876, № 1։
«Արեւելյան դար» (Կ. Պոլիս), 1861, № 24—26։
«Արեւմուտք» (Փարիզ), 1859, № 7, 10, 13, 17։
«Արծվի Վասպուրական» (Վան-Վարագ), 1861, № 2, 8, 1862—1863, № 3։
«Արձագանք» (Թիֆլիս), 1882, № 12, 1885, № 10, 1886, № 20, 33, 37, 1895, № 141։
«Արմենիա» (Մարսել), 1886, № 63։
«Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա), 1860, № 663, 1863, № 704, 1864, № 721։
«Բազմավեպ» (Վենետիկ), 1845, № 7, 1924, № 8—10, 1934, № 1։
«Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), 1964, № 3, 1968, № 3։

«Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1901, № 1193։
«Գեղուհի» (Վիեննա), 1902, № 1։
«Դարձ» (Բաքու), 1917, № 1—3։
«Երևակ» (Կ. Պոլիս), 1859, № 1—2, 94, 1860, № 38, 1861, № 109, 1864, № 14։
«Էջմիածին» (Էջմիածին), 1951, № 1—4։
«Ժամանակ» (Կ. Պոլիս), 1863, № 191։
«Լումա» (Թիֆլիս), 1898, գիրք Ա—Բ։
«Միլն Ավարայրի» (Կ. Պոլիս), 1866, հատ. Ա, Դ, Ե։
«Կոռունկ Հայոց աշխարհին» (Թիֆլիս), 1860, № 10, 1861, № 7, 1862, № 11, 1863, № 3։
«Համբավարեր Ռուսիո» (Մոսկվա), 1862, № 21, 1863, № 48։
«Հանդես ամսօրեա» (Վիեննա), 1890, № 4—5, 1905, № 8—11, 1902, № 8, 1949, № 3։
«Հայաստան» (Կ. Պոլիս), 1847, № 25—40։
«Հյուսիս» (Պետերբուրգ), 1863—1864, էջ 177—178, 187։
«Հյուսիսափայլ» (Մոսկվա), 1858, էջ 232—282, 1859, էջ 451, 898, 1860, էջ 72, 1861, էջ 5, 252—253, 1862, էջ 302։
«Զիբենի» գրական ժողովածու, Թիֆլիս, 1915։
«Ճռամաղ», (Մոսկվա), 1850, տետր Ե։
«Մասեաց աղավնի» (Փարիզ-Բեռդոսիա), 1856, № 6, 1857, № 4, 1860, № 6, գիրք ԺԱ, ԺԲ։
«Մանգումե» (Կ. Պոլիս), 1912, № 2639։
«Մասիս» (Կ. Պոլիս), 1854, № 113, 433, 1859, № 413, 1861, № 506, 1862, № 551, 548, 549, 550, 1864, № 654, 1872, № 1239, 1882, № 319—322, 1893, № 4։
«Մեղու» (Կ. Պոլիս), 1856, № 31, 1857, № 24, 1860, № 86, 113—116, 1861, № 128, 1862, № 165—170, 1864, № 227, 1865, № 225։
«Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), 1860, № 31, 1863, № 6—7։
«Մշակ» (Թիֆլիս), 1872, № 30, 1874, № 1, 1875, № 24, 35, 51, 1876, № 24, 1888, № 134, 1890, № 127։
«Մուրճ» (Թիֆլիս), 1904, № 7—12։
«Նոր կյանք» (Լոնդոն), 1901, № 1—12։
«Նոր կյանք» (Փարիզ), 1970, № 11։
«Սիոն» (Երուսաղեմ), 1866, № 4—6, 1868, № 11—12, 1938, № 1։
«Վերջին լուր» (Կ. Պոլիս), 1921, Հուլիս։
«Սովետական արվեստ», 1959, № 1։
«Տեղեկագիր Ա.Մամվելենի», 1937—1938, գիրք Ա, էջ 11—24։
«Տեղեկագիր ՀՍՍՀ Գ.Ա. Հասարակական գիտությունների, 1945, № 6, 1954, № 9։
«Փարիզ» (Փարիզ), 1860, № 47, 1861, № 55, 1862, № 26, 62։
«Փարձ» (Թիֆլիս), 1876—1877, № 1—3, 1877, № 4, 1879, № 1։
«Փունջ» (Կ. Պոլիս), 1877, № 1147—1151։
«Օրագիր» (Կ. Պոլիս), 1869, № 51։
«Биржевые Ведомости», СПб., 1869, № 109.
«Былое», СПб., 1906, № 7, 10, 12, 1907, № 8.
«Вопросы истории», 1952, № 3.
«Голос», СПб., 1879, № 256, 1883, № 2, 3, 5.
«Дело», СПб., 1867, № 4.
«Исторические записки», 1940, № 8.
«История СССР», 1963, № 3.
«Каторга и ссылка», 1927, № 1.
«Крым», Феодосия, 1892, № 37.
«Новый Восток», 1924, № 6.
«Радуга», Феодосия, 1862.
«Русская старина», 1903, № 6.
«Русский архив», 1908, № 11.

ՑԱՆԿԵՐ

Անձնանուններ

Արա-Մելիքյանց Ի.—652
Արբաս-Միրզա, Իրանի գահաժառանգ—14, 15, 21, 48, 53, 56, 114, 115, 118, 119, 123—125, 127, 128, 132, 134, 137—140, 142, 145, 150—153, 168, 170, 660, 665, 666
Արգար Գր.—522
Արգարիոս Սոհաննա—555
Արգարյան Հ.—520
Արդալ-բեյ—281
Արդի փաշա, թուրքական բանակի հրամանատար—245
Արդուլ-Աղիզ, թուրքական սուլթան—290, 295, 357, 359, 379, 695
Արդուլա, քուրդ փաշա—82
Արդուլ Համիդ II —458
Արդուլ Մեջիդ, թուրքական սուլթան—244, 278, 279, 281, 287, 290, 310, 334, 350, 375, 671, 673, 674, 676, 677
Աբեղյան Մ.—599, 601, 680, 686, 689
Աբելյան Ն.—390, 394
Աբխազով—165
Աբովյան Խ.—56, 57, 59, 60, 85, 139, 140, 156, 165—167, 194, 197, 398, 399, 405, 409, 421, 441, 445, 560, 570, 571, 574, 575, 582, 586, 588, 591, 607—613, 618, 636, 638, 662, 667, 673, 677, 684, 686, 689
Աբրահամ—656
Աբրահամ Անկյուրացի—539
Աբրահամյան Ա. Գ.—10, 656, 658, 686
Աբրամով Ն.—473
Ագաթանգեղոս—562, 563, 592, 600
Ագոնց Ստ. Գյուվեր—542, 562, 589, 665
Ադամյան Ա.—502
Ադամյան Պետրոս—539, 624, 639, 674
Ադամովա Ե.—685, 686
Ադոնց Մ.—254, 265, 269, 271, 691
Ազարիա—332
Ազատյան Բ.—288—300, 323, 358, 528, 684, 686
Ազատյան Ստ.—591
Ազարյան Ա.—591
Ազբար-Ադամ—641
Աղիզ փաշա—352—358, 360, 361, 450, 679
Աղնիվ Հրաչյա—634
Աղնավուր եղբայրներ—538
Աթաբեկյան Հ.—129
Աթաբեկյան Վանի—129, 130
Աթանասյան Ն.—571
Ալադաթյան Ն.—576, 616, 629
Ալամդարյան Հ.—146, 148, 157, 163, 194, 474, 568—570, 590—591, 603, 666, 669
Ալաջաջյան Հ.—514
Ալաջաջյան—468
Ալավերդյանց Մ.—165, 692
Ալեքսանդր I —113, 114, 501, 659, 662, 686, 689
Ալեքսանդր II —386, 493, 678, 681
Ալեքսանդր Մակեդոնացի—574
Ալեքսանդր Յոան Կ., իշխան—497
Ալեքսանդր, վրաց արքայազն—53, 120, 132
Ալեքսանյան Ս.—165
Ալթունյան Կ.—500
Ալթուն Ստ. օղլի—505
Ալի խան—48
Ալիշան Ղ.—499, 530, 581, 596—597, 606, 607, 640, 641, 650, 651, 664, 686
Ալիշ, Իկոնիայի նահանգապետ—274
Ալի փաշա, թուրքական բանակի հրամանատար—245
Ալի փաշա, մեծ վեզիր—338, 339, 358, 361, 367
Ալլահվերդի Աբ.—317
Ալմոյան Ս., ճարտարապետ—650
Ալմոյան Վ., ճարտարապետ—650
Ալպոյաճյան Ա.—67, 88, 93, 279, 300, 303, 322, 522, 547, 564, 565, 577, 681, 683, 686
Ալ Ջաբարդի, Աբդալ Բահման—543
Ախվերդյան Գ.—38, 260, 261, 390, 391, 568, 595, 597, 663, 691
Ակիմյան Գ.—638

Ակուլով Ն.—162
Ահարոն—59
Ահմադ բեյ, թուրքական բանակի հրամանատար—133
Ահմադ խան—14
Ահմադ սուլթան—228
Ահմեդ Պայազետ-օղլի—355
Ահմեդ փաշա, մեծ վեզիր—134, 185, 245
Աղա-Բաբա—21
Աղաբաբյան Ն.—479
Աղաբեկ Բաբիշ Բադալ օղլի—238
Աղաբեկյան Մ.—389, 392—394, 396, 584, 677, 686
Աղաբեկյան Մ.—359
Աղաթոն Դր.—434, 435, 646, 665
Աղաթոնյան եղբայրներ—360, 430
Աղաթոն Մ.—336, 339, 341, 432, 434, 435, 566
Աղա-Մահմեդ խան, Իրանի շահ—528
Աղայան Ց.—2—5, 10, 167, 220, 234, 687, 691
Աղայան Ղ.—391, 392, 560, 614, 618, 639, 671, 687
Աղայանց Հաճի—288—289
Աղանուր Ա.—427
Աղավելյան Մ.—526, 655—656
Աղեքսանդրեան Ա.—65, 77, 687
Աղվանյանց Գ., վարդապետ—291, 437
Աճառյան Հր.—431, 594, 683, 685, 687
Աճեմյան Ե.—547
Աճեմյան Լ.—72, 687
Ամբուրգեր—168, 184
Ամերիկյան Մ.—630
Ամիր-խան—141, 142
Ամիրյան Եղ.—547
Ամիրյան Կ.—529
Այվազովսկի (Այվազյան) Գաբրիել—385, 387, 388, 428, 493, 581, 588, 614, 662, 676, 687
Այվազովսկի (Այվազյան) Հովհ.—638, 639, 643, 663
Այվազովսկիներ, հոդատեղեր—490
Այվատյան Մ.—429, 431, 442, 449, 451, 565
Անանիա Շիրակացի—590
Անանյան Ժ.—10, 691
Անանյան Մ.—676
Անդրանիկ, զորավար—539
Անդրանիկ—82, 276, 687
Անդրեաս Կոստանդնուպոլսեցի, վարդապետ—563
Անդրիաս—333
Անդրոնիկաշվիլի Ս.—637
Անդրոնիկով Ի., գեներալ—245
Աշըգյան Խորեն—537
Աշիր փաշա—357
Աշնան Պողոս, ամիրա—317
Աշոտ Ա, հայոց թագավոր—607, 636
Աշտարակեցի Ն.—18, 21, 58, 59, 145, 146, 152, 163—165, 171, 173, 201, 202, 204, 240, 330, 335, 384, 385, 398, 406, 474, 515, 569, 637, 654, 663, 672, 688, 690
Ապարդյան Դր., վարդապետ—358, 366, 367, 441
Ապարդյան Զ.—356
Ապրո Տ.—547
Առաքելյան Բ.—2, 3
Ասադ բեկ—239
Ասատուր Հ.—435, 687
Ասատուր Հ., վիրաբույժ—503, 504
Ասաքի Գ.—498
Աստև, գնդապետ—130
Ասլանյան Հովհ.—165
Ասլանյան Ստ.—339, 434
Աստղիկ, դերասանուհի—634
Աստվածատրյան Սեք—519
Աստվածատուր, իշխան—367
Աստվածատուրյան—164
Ավագյան Ա.—10
Ավագյան Խ.—615
Ավանես—130
Ավգերյան Հ.—589, 591
Ավգերյան Մ.—590
Ավգալ, քուրդ խան—83
Ավդալբեկյան Խ.—19, 222, 228, 687
Ավդալյան Հովհ.—526, 578
Ավետիկ Ց.—507, 694
Ավետիս—58
Ավետիսյան Վ.—4, 5
Ավետիքյան Գ.—590
Ավետիքյան եղբայրներ—529
Ավետումյան Թ.—578
Ավետումյան Զ.—526
Ավերյանով Պ.—281—283, 691
Ավրելիոս Մարկոս, հռոմեական կայսր—562
Արաբյան Գ.—549
Արամյան Ճ.—514, 564, 664, 679
Արապյան Պ.—538, 563
Արապյաններ—325, 563
Արարատյան Առ.—386, 389
Արբին Եագուպ (Եաղուպ)—548
Արծրունի Դր.—286, 673, 687
Արծրունի Մ.—652
Արծրունիների գերդաստան—652
Արղության-Երկայնաբազուկ, իշխանական տոհմ—35, 483—484, 691
Արղության Կ.—202
Արղության Հովսեփ—117, 465, 485, 486, 659
Արմենանուլ Ռահել—500

Արմանաուլ Սամուել—500
Արփիարյան Արփիար—449, 674
Արփիարյաններ—318
Աուդլի Վ.—86
Աքիմյան Գ.—575

Բաբայան Լ.—494, 687
Բաբաջանյան Մ.—522, 575
Բաբիչանյան Հ.—129
Բարկեն վարդապետ—298
Բագրատիոն—501
Բագրատունի Ա.—590, 600, 601, 628
Բաթբարան Հ.—549—551
Բախտաձև Ի.—227
Բակիխանով Ա.—167, 168, 691
Բակունին—370, 425, 426, 457
Բաղրամյան Մ.—579
Բայրոն, Ջորջ Գորդոն—591, 622, 663
Բաշգուլյան Մ.—510
Բաշինջաղյան Գ.—677
Բասմաջյան Կ.—66, 67
Բարատինսկի Ե.—560
Բարխուդարյան Վ.—10, 472, 687
Բարյատինսկի, Կովկասի փոխարքա—222, 250
Բարսեղ աղա—652
Բարսեղ եպիսկոպոս—57
Բարունակ բեյ—336, 340
Բաքրաձե Դմ.—78, 692
Բերուրով, կապիտան—145
Բեզլարյան Հ.—527
Բեղեր-խան բեյ—83, 93, 279—282, 288, 672, 673
Բեզբորոդկո Ի., կոմս—466
Բեզվիկոնի Գ.—501, 502
Բեժանով Ի.—480
Բելինսկի Վ.—196, 197, 407, 408, 583, 585, 629
Բելյաև Ե.—327
Բեկնազարյան Թ., Նոր Ջուղայի Թեմի առաջնորդ—518
Բեհբության, իշխանական տոհմ—46
Բեհբութով Վ. (Բեհբության)—163, 185, 206, 207, 212, 215, 217, 236, 237, 239, 245, 248, 251, 252, 638, 668
Բեմ, զորավար—508
Բենկենդորֆ Կ., գեներալ—143, 145, 149, 150, 162, 165
Բեստուժև-Մառլինսկի Ա., դեկաբրիստ—161, 163
Բեստուժև Պավել, դեկաբրիստ—162, 188
Բեստուժև Պյոտր, դեկաբրիստ—188
Բերանժե Պ.—585
Բերբերյան Հովհ—568
Բերբերյան Ռ.—371
Բերկովսկի Պ.—515
Բերոյան Մ.—595
Բերնարդեն Սեն Պիեր Ժակ Անրի—585
Բժշկյան Մ.—495, 511, 684
Բիրնբաում Ի.—425
Բլավատսկի—223, 224
Բլուդով—212, 213
Բոգդանովա Ն.—52, 692
Բոգդանֆի(յան) Ա., հազարապետ—506
Բոդորով Իվ.—514
Բոդեա Կ.—502
Բոլյակ Ջեզար—506
Բոնավենտուր Սլարս—531, 696
Բոպպ Ֆրանց—594, 595
Բորոդին—188, 201
Բոթլ Թովմա Հենրիկոս—619
Բրեններ Հ.—592
Բրյուլով Կ.—196, 635
Բրոսսե Մ.—563, 593
Բրուսսալ Ժան—286
Բուդաղ մելիք—243
Բուդաղյան Ղ.—399
Բուդաղյան Մ.—399, 585
Բուդաղ սուլթան—121
Բուլուկլիու Մ.—497, 500
Բուշուև Ս.—244, 692
Բուտկով Պ.—114, 480, 685
Բուրցով Ի., դեկաբրիստ—162, 185, 188

Գաբամաճյան Ս.—544
Գաբրիելյան Հ.—435, 687
Գաբրըճյան Հ.—664
Գալանտեր փաշա—661
Գալեմքերյան Գր.—580, 687
Գալոյան Գ.—2, 3
Գալստյան Կ.—547, 656
Գալուստյան Գր.—69, 323, 326, 348, 350, 351, 674, 687
Գալուստ վարդապետ—356
Գալֆայան Խ.—630, 633, 668, 687
Գամառ-Քաթիպա տե՛ս Պատկանյան Ռ.
Գանգեռլով Ա., դեկաբրիստ—162, 163, 188
Գան, սենատոր—208, 234, 237, 241, 670
Գապտեպովյան Հովհ—505, 510
Գապտեպովյան Մ.—509
Գասապյան Մ.—83
Գասպարյան Գ.—457, 687
Գասպարյան Հովհ.—565
Գասպրաճյան եղբայրներ—306

Դարագաշյան Մ. (Անտոն)—663
Դարասեֆերյան Ա.—83
Դարդան, գեներալ—123, 124, 562, 661
Դարիբաղդի Զ.—8, 371, 414, 424, 428, 434, 440, 447, 453
Գափամաճյան Գր.—581
Գեդիկով Ա. (Հարություն Գեդիկյան)—514
Գելցեր Հ.—673
Գեղամյան Ա.—241, 242
Գեղամյան Գ., հարյուրապետ—15
Գեղամյան Ե.—392
Գեղամյաններ—43, 241
Գեղամյան Ստ., եպիսկոպոս—58
Գեղամյանց Բ.—241
Գերցեն Ա.—196, 197, 370, 371, 390, 407, 419, 422, 425, 426, 440, 448, 456, 457, 677, 685, 686
Գլինկա Մ.—196
Գլինկա Ս.—174, 595, 692
Գնեդիչ—560
Գոգոլ Ն.—196, 618
Գոլդնի Կ.—577
Գոլոբորոդկո Ի. (Ցուժանին)—95, 692
Գոլովին Ե., Կովկասի կառավարչապետ—636
Գոլոմեյան Ս., եպիսկոպոս—336
Գոշ Հրիխարդ—594, 595
Գովրիկյան Գր.—509, 510, 687
Գործակալյան Հ.—10
Գորչակով, իշխան—128
Գրիբոյեդով Ա.—144, 151, 162, 167, 168, 170, 173, 184, 189, 196, 202, 628, 663, 664, 666, 667, 690, 692—694
Գրիգոր Անուշ—503
Գրիգոր, արհեստավոր—311
Գրիգոր Կարապետ—500
Գրիգորյան Գ.—668
Գրիգորյան Զ.—4, 5, 10, 115, 193, 687, 692
Գրիգոր Նարեկացի—563
Գրին Դեվիս Ջր.—286
Գուգարենց Փանոս—356
Գուդովիչ Ի., Վրաստանի կառավարչապետ—123—128, 661
Գույումճյան Զ.—529
Գուշակյան Թ.—536, 688
Գոստաավ Ադոլֆ—620
Գուրգենբեկյան Հ.—629
Գուրգենբեկյան Ս.—636
Գևորգ Դ, կաթողիկոս ամենայն հայոց—563
Գևորգ եպիսկոպոս, Ատրպատականի թեմի առաջնորդ—335, 336, 518
Գևորգ Ը, հայ կաթոլիկների կաթողիկոս—328
Գևորգ դպիր ՊալաՓՓցի—595
Գևորգ Տաթևացի, վարդապետ—58
Դադյան Մ.—286, 692
Դանգանաօղլի Կ.—500
Դանիելսպուլ Դ.—503
Դանիել Սուրմառեցի, կաթողիկոս ամենայն հայոց—117, 146, 212, 484
Դավիդով Դ., գեներալ—137, 138, 142, 143, 160, 166, 688
Դավիթ, կաթողիկոս ամենայն հայոց—117, 146, 484
Դավթյան Դ., խան—519
Դավթյան Մ.—525
Դավութ Էֆենդի—359
Դավութ Ղազարոս—372
Դարգոմիժսկի Ա.—196
Դելի Քեշիշ, տե՛ս Տեր-Օհան
Դելի Բաղդասար—332, 664
Դեմիրչյան Ստ.—547
Դերվիշ բեկ—82
Դերվիշ փաշա—379
Դիբիչ Ի., գեներալ—148, 159, 172, 173, 188, 222
Դիգրո Դենի—428, 430
Դիևով Գր.—692
Դիլոյան Վ.—4, 5, 10, 688
Դյուտորիե Էդ.—522, 593, 596
Դյումա Ալեքսանդր—566
Դոբրոլյուբով Ն.—196, 197, 407, 412
Դոդոխյան Գ.—568, 575, 615, 668
Դոնսկոյ Դ.—620
Դրանխոլյան Ե.—496
Դուբրովին Ն.—114, 692
Դուլյան Ս.—10
Դուրյան Պ.—615, 625—627, 633, 674, 688

Եդիգարով—252
Եզդանշիր—282, 283, 288, 676
Եզնիկ Կողբացի—562, 592, 593, 598
Եկատերինա II—465, 481
Եկենյան Մ.—406
Եղիազարով Ս.—30, 37, 39, 41, 233, 692
Եղիշե—562, 592, 595
Ենիկոլոպյան ընտանիք—519
Ենիկոլոպով Ի.—151, 692
Ենիտունյան Աս., իշխան—350, 355
Ենիտունյաններ, իշխանական գերդաստան—74
Ենովք Ե.—550
Եսայան Հ.—165, 373
Եսայան Ղ.—529
Եսաուլով Պ.—165
Եվեցկի Օ.—44, 692

Երամյան Հ.—278, 311, 688
Երանյան Դ.—565, 646, 647
Երեմիա Տևկանց—358, 361, 366, 367, 375, 437, 440—441
Երեմյան Ա.—629, 688
Երեմյան Մ.—372
Երեմյան Ս.—310
Երեմյան Ս. Տ.—2, 3, 10
Երիցյան Ա.—18, 127, 152, 165, 181, 191, 193, 234, 339, 384, 385, 387, 569, 584, 672, 688, 692
Երիցյան Սրբուհի—360
Երմոլով Ա.—137, 139, 141, 143, 144, 222, 234, 663, 692
Երևանյան Դ.—378, 678, 688
Եփրեմ վարդապետ առաջին հայոց—21, 37, 58, 117, 146, 212, 636, 654

Զախմով Ստ.—515
Զահարիա Ա.—497
Զահրի (Կ. Կարապետյան)—642
Զաս, գեներալ—635
Զավարով Ս.—233, 692
Զավրիև Դ.—692
Զարդյար (Աբրահամ)—642
Զարդարյան Վ.—366, 451, 547, 548, 681, 688
Զարպհանալյան Գ.—581, 592, 593, 596, 688
Զաքարիա, Կ. Պոլսի պատրիարք—542
Զաքարյան Ազ.—536
Զաքարյան Գր.—502
Զեյթունցի (Սեմերճյան Մն.)—72, 351, 360—361, 365—367, 441, 688
Զիլճյան Փ.—645
Զիսերման Լ.—250
Զոլոտովսկի—232, 373
Զոհրապ Գր.—678
Զոհրապյան Հ.—581
Զորյան Ն.—418, 419, 427, 430, 431, 565, 578, 677
Զուբով Վ., գեներալ—480
Զուլալյան Մ.—84, 685

Էզով Դ. (Եզյանց, Եզյան Կարապետ Հ.)—149, 164, 404, 408, 669, 686, 688
Էհսան խան—205, 206, 228, 230
Էմին Հ.—661
Էմին Մ., հայագետ—568, 595, 596, 663
Էնգելս Ֆր.—16, 76, 101, 102, 106, 176, 179, 186, 189, 196, 248, 249, 293, 302, 310, 418, 442, 540, 541, 683
Էնֆիաճյաններ—559
Էնֆիաջյան Հ.—390, 394, 560
Էսատ փաշա—281
Էրխաթով Դ., գեներալ—153, 168
Էքիդյան Կ.—531
Էքշյան Ստ.—633

Ըստկարյան Վ.—510

Թագիագյան Զ.—529
Թագվորյան Կ.—514
Թագվորյան Ս.—366, 369—372, 424, 432, 442, 443, 456—458, 566, 679, 680
Թահիրով Ալ.—386, 387
Թաղիադյանց Մ.—32, 36, 55, 56—59, 157, 194, 520, 521, 524—526, 561, 574, 578—580, 603—606, 656, 659, 664, 673, 688
Թամամշյան Գ.—674
Թամուր փաշա—103
Թաշճյան Մ.—356
Թաշճյան Ն.—565, 643, 646, 647, 678
Թառումյան Բ.—268
Թառումյան Զ.—58
Թարխանով—252
Թեմուրզադե Մուստաֆա բեյ—279
Թեոդիկ—450, 503, 512, 560, 564, 566, 681, 688
Թերզիբաշյան Վ.—602, 688
Թերզյան Թ.—578, 614, 616, 633, 644
Թընկըրյան Հովհ.—317
Թիեր—447
Թիմուրյան Մ.—440
Թղլյան Ս.—633
Թովմա Արծրունի—563, 594
Թովմաճյան Ե.—600
Թովմաճյան Հովհ.—550
Թովմաճյան Պ.—550
Թովմասյան Թովմ.—529
Թուխալ Սատո—350
Թուղլաճի Մ.—576
Թումանյան Հ.—265, 266, 694
Թումանյան Հովհ.—156, 157, 194, 681, 688
Թումանով Պ.—482
Թուրինջ (Մարթաշյան Թորոս)—582, 641
Թևոսյան Նատալիա—637

Ժելտյակով Ա.—330, 693
Ժերանդո Ա.—506, 695
Ժերար Աբբա—427
Ժիրարդեն—359
Ժյուլ Վեռն—566
Ժուկովսկի Վ.—560, 636

Իբրահիմ խան—121
Իբրահիմ փաշա—61, 64—65, 274, 348, 349, 668

Իրրահիմ փաշա—353
Իգնատ Շտ.—498
Իգնատև—301, 369
Իզմիրլյան Մ.—109, 328, 376, 673, 683
Իզմիրով Գր. (Իզմիրյան)—390, 638
Իմրևհ Ստ.—504, 696
Ինճիկյան Ա.—607, 688
Ինճիճյան Ղ.—63, 67, 68, 70—72, 76, 79, 80, 90, 96, 105, 523, 562, 580, 581, 589, 660, 669, 684, 688
Իսկանդար Աբգարիոս (Իսկենդեր աղա Աբգարիոս բին-Եաղուպ աղա-բին-Աբգար էլ Էրմենի)—555
Իսկենդերյան—342
Իսկենտեր—333
Իսհակ էդիբ—555
Իսմայիլ—658
Իսմայիլ փաշա—546
Իսպենճյաններ—531
Իստոմին Վ.—348
Իվաննենկո Վ.—205, 208, 209, 234, 260, 692
Իվան (Հովհաննես)—641
Իփեքճյան Գր.—670

Լադինակի—219, 221
Լազարյան Ս.—202, 384, 385, 477
Լազարյան Հ.—655
Լազարյան Հովհ.—384, 655
Լազար(յան) Վիլմոշ—498, 507, 508
Լազարև—275
Լազարև Լ. (Լազարյան)—163, 172—175
Լազարյաններ—171, 212, 384, 385, 388, 398, 407, 462, 567, 568, 574, 575, 668, 684
Լալայան Ե.—679
Լալայանց Ի.—681
Լանգլուա Վ.—68, 74, 363, 367, 593, 594, 596, 695
Լաչինով Ե., դեկաբրիստ—32, 56, 157, 162, 163
Լաչինով Ռ.—165
Լավիս—122, 299, 693
Լարինա Վ.—480, 693
Լենին Վ. Ի.—131, 243, 272, 383, 419, 421, 433, 683
Լեո (Առաքել Բաբախանյան)—66, 71, 127, 172, 206, 213, 239, 570, 572, 678, 684
Լեոնտև—177, 119
Լերմոնտով Յու.—196, 560, 585
Լիլիպարյան Մ.—637
Լիխուտին Մ.—282, 299, 692
Լիմոնճյան Հ. (Բաբա Համբարձում)—643, 646
Լինդենֆելդեր—150
Լինչ Հ.—67, 688, 693
Լիսաևիչ—121, 129, 130
Լոբաչևսկի Ն.—196
Լորիս Մելիքով—252
Լուի-Ֆիլիպ—444
Լուսինյան Լ.—359
Լուսինյան տոհմ—359, 689
Լուքաչ(յան) Դ.—508
Լուքաչյան Խ.—510, 511
Լևոնյան Խ.—441, 684

Խադամյան Բ.—474, 575
Խաչանասյան Ե.—69, 688
Խաչբանով Գ.—470
Խալաչյան Գր.—568
Խալդարյան Գր.—590
Խալիբյան Հ.—388, 406, 428, 468, 493
Խալպախչյան Հ.—654
Խաչատրյան Վ.—10, 479
Խաչատուր աղա—23
Խաչատուր Էրզրումցի—599
Խաչատուր Ջուղայեցի—515, 579, 689
Խաչիկյան Լ.—2, 3
Խաչիկյան Հովհ.—526
Խաչիկով Մ.—500
Խաչմանուկյան գերդաստան—308
Խասեք, Քուրք զորապետ—349, 350
Խատիսյան Գ.—390, 394
Խերսիկյան Մ.—550
Խոջամիրով—267
Խորասանճյան Ավ.—645
Խորասանճյան գերդաստան—316—317
Խոմաճյան Խ.—474
Խրիմյան Մ. (Խրիմյան Հայրիկ)—292, 342, 344, 358, 367, 374, 394, 437, 441, 588, 664, 676, 689, 691
Խուբով Ե.—130, 694
Խուդաբաշյան Ալ.—202, 591
Խուրշիդ փաշա—351—352, 678

Ծերենց—432, 433, 455, 664
Ծոցիկյան Ս.—532, 534—536, 539, 540, 685

Կալանդեր փաշա—65, 73
Կախանով—257
Կամենսկի—501
Կանկրին—206, 271, 484
Կապրուշյան Զ.—505, 506, 510
Կավաֆյան Հ.—514
Կավուր—434, 453
Կարակոզով Դ.—386
Կարա-Մուրզա Ք.—675
Կարապետ—59

Կարապետ—32, 36
Կարապետ—367
Կարապետ արքեպիսկոպոս—93, 187, 192, 683
Կարապետյան Գ.—289
Կարապետյան Թ.—651
Կարապետյան Պ.—651
Կարապետ սարկավագ—332
Կարապետ քհ՛յա—354
Կարս-օսմանօղլուներ—62
Կարենյան Հ.—387, 563, 570, 582, 583, 616, 629
Կարինյան Ա.—419, 526, 579, 580, 689
Կարիպալտի Ջ., տե՛ս Գարիբալդի Ջ.
Կարյագին, գնդապետ—129, 130
Կարցով Ա.—275, 693
Կաֆար խան—33
Կելկելյան Հ.—317
Կեմփբել—170
Կեռվարի Լ.—504
Կետիկյան—23
Կիկերոն, Մարկոս Տուլիոս—534
Կիշյան (Ադոնց) գերդաստան—507
Կիշ(յան) Էռ.—503, 507, 508
Կիոս-Մամեդ փաշա—181, 182
Կիսլև Ն.—168
Կիրակոս Գանձակեցի—594
Կիրակոս եպիսկոպոս Երուսաղեմցի—656
Կլո Ա.—542
Կնորինգ Կ.—659
Կոկրին, լորդ—107
Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան)—600, 681
Կոմս Էմմանուել, տե՛ս Նալբանդյան Մ.
Կոնդանսոն Լ.—286
Կոնդուրով եղբայրներ—267
Կոնովնիցին Պ., զեկաբրիստ—162, 188
Կոշուտ Լայոշ—422, 507, 508
Կոռնիլով Վ.—248
Կոստանդյան Գ.—532, 578
Կոստանյան Մ.—165
Կոսև Ա.—97, 693
Կովալևսկի—248
Կոտլյարևսկի Պ.—130, 132—134
Կորկոտյան Քնարիկ—325
Կորմիկ դը—637
Կորովե(յան) Լ.—509
Կորովե(յան) Ստ.—508
Կռիլով Ի.—560
Կրասովսկի—149—152, 154—156, 163, 173, 201, 202, 204
Կրիմսկի Ա.—298, 689
Կրիստաշ-Պանայիտ Ի.—502
Կրիտյան Ա.—372, 373
Կրիֆդ Գաւլիել—566
Կուտահյով—206—208
Կուտուզով Մ.—133, 134, 501

Հակոբ—664
Հակոբ—58
Հակոբ—360, 366, 367, 441
Հակոբ, Կ. Պոլսի պատրիարք—332, 335, 338, 496
Հակոբյան Ա.—2, 3
Հակոբյան Է.—653
Հակոբյան Թ.—32, 43, 67, 158, 193, 260, 647, 689
Հակոբյան Հովհ.—25, 32, 35, 72, 82, 86, 89, 93, 94, 145, 562, 680, 685
Հակոբյան Պ.—641, 689
Համբարձումյան Ա.—531
Համբարձումյան Վ.—296
Համբարյան Ա.—88, 291, 294
Հայկազունի Պ.—372, 373
Հայկունի Ա.—329, 330, 362, 363, 428, 429, 432, 442, 448, 450, 565, 588, 617, 618, 669, 678, 689
Հայնե Հայնրիխ—585
Հայրապետյան—468
Հաջի Հասան փաշա—90
Հաջիբեկլինակի Մեհրթի բեկ—229
Հասան բեկ—57
Հասան խան—43, 57, 58, 125, 126, 138—140, 142—144, 154—156, 164, 166, 167
Հասել Գ.—69
Հասրաթյան Մ. Մ.—647
Հասունյան Ա.—328, 329, 358, 426, 441
Հարությունյան Եղ.—363
Հարությունյան Հ.—152
Հարությունյան Մ.—520
Հարությունյան Ն.—498
Հարությունյան Շ.—681, 689
Հարությունյան Վ.—647
Հաքստհաուզեն Ա.—37, 38, 40, 692
Հաֆըզ փաշա—276, 277
Հ. Գ. Մ. (Հարություն Մրմրյան)—315, 319—321, 689
Հեզել Գ. Վ. Ֆ.—620
Հեթում—594
Հերակլ—563
Հերցեն, տե՛ս Գերցեն
Հեքիմյան Ս.—372, 578, 616, 622, 631, 633, 646
Հիսարյան Հ.—428, 586, 614, 617, 675

Հոմերոս—562, 601
Հովակիմ—541
Հովհաննես—59
Հովհաննես Բժիշկ—554, 555
Հովհաննես Կարբեցի—94, 515, 654
Հովհաննես հարթաքյի—333
Հովհաննես Մուրադ—574, 655
Հովհաննես Ց. (Հովսեփ)—500
Հովհաննես վարդապետ—333
Հովհաննիսյան—468
Հովհաննիսյան Ա.—646, 647
Հովհաննիսյան Աշ.—2, 3, 10, 38, 316, 320, 323, 325, 366—368, 370, 385, 399, 407, 409, 424, 426, 440, 452, 456, 689
Հովհաննիսյան Ա. Ռ.—115, 193, 693
Հովհաննիսյան Լ.—165, 694
Հովհաննիսյան Հ., թարգմանիչ—592
Հովհաննիսյան Հովհ.—568
Հովհաննիսյան Հովսեփ—662
Հովյան Գր.—500
Հովնաթանյան Աղ.—634, 635, 638
Հովնաթանյան Հ.—635—637
Հովնաթանյան Մ.—636
Հովնաթանյան Նումե—637
Հովնաթանյանց գերդաստան—620
Հովնանյան Ս.—10, 514, 690
Հովսեփ Արցախեցի—572
Հովույանց Հ.—454
Հորդանանյան Մ.—520
Հորդանանյան Պ.—526, 527
Հորմյան Խ.—510
Հյուրմյուզյան Էդ.—599
Հյուրշման—594
Հյուսեին-Ղուլի խան—14, 21, 28, 33, 43, 49, 55, 57, 125, 132, 138, 142, 145, 154, 241
Հոֆմեստեր—307

Ղազար—367
Ղազար Փարպեցի—562, 592
Ղազարյան Հ.—4, 5, 10, 70, 95, 297, 302, 323, 338, 372, 442, 455, 689, 691
Ղազարյան Մանյա—10
Ղազիկյան Ա.—641, 681, 689
Ղամազյան Ի.—172
Ղանալանյան Ա.—438
Ղարասեֆերյան Ա.—103
Ղաֆայան Ղ.—399
Ղորղանյան Ա.—172
Ղորղանյան Դ.—172
Ղուկաս—58

Ճանիկ ամիրա—317, 576

Ճավճավաձե Ա.—167, 182, 183, 205, 667
Ճեղայիրլյան Մ.—316—318
Ճերահյան Մ.—307, 689
Ճիպմեճյան Մ.—307, 689

Մագուստ—317
Մադաթով Վ.—141, 143, 144, 147, 163, 665
Մալի(յան) Միքայել (Մինաս)—509
Մալի(յան) Մտ.—508
Մալինցյան Գ.—251, 637
Մալկոլմ Ջոն—115, 184, 695
Մալյուտին Մ., դեկաբրիստ—162
Մալցև Ի.—184
Մախարաձե Ց.—262, 693
Մածծինի տե՛ս Մաձինի
Մակդոնալդ—169
Մակ-Կոան Կարլայլ—303, 693
Մահմեդ-Էմին փաշա—181
Մահմեդ խան—58
Մահմեդ Ջաֆար խան—216, 217
Մահմեդ Սադըխ բեկ—235
Մահմեդ Ֆաթիհ—331
Մահմուդ II—62, 63, 73, 81, 83, 90, 93, 189, 274, 277, 290, 310, 319, 328, 347, 349, 538, 665, 666, 668, 669
Մահմուդ խան—279—282
Մաձինի—8, 370, 371, 422, 424, 428, 434, 447, 456, 457
Մաղաքիա—340
Մաղաքյան Մտ.—367
Մամադ, Երևանի խան—14, 33, 58, 115, 117—119, 660
Մամադ Կուլի խան—229
Մամբրե վարդապետ—354
Մամուրյան Մ.—297, 322, 342, 343, 352, 358, 361, 367, 372, 430, 432, 441, 442, 446—448, 452, 455, 532, 566, 578, 584, 646, 668, 678, 680, 689
Մայիֆ (Հարությունյան)—642
Մայսուրաձե Գ.—638
Մանդինյան Մտ.—387, 582, 583, 677, 689
Մանեա Գր.—498
Մանիկյան Սիմեոն, տե՛ս Մ. Նալբանդյան
Մանոզյան Հովհ.—83
Մանվելյան Հակոբ—659
Մանվելյան Հ.—333
Մանուել Կյումուշխանեցի—485, 492
Մանուկ բեյ, տե՛ս Միրզայան Մանուկ բեյ
Մանուկյան Թադևոս—520
Մանուկյան Հ.—165
Մանուկյան Մ.—523
Մանուչարյան Գր.—127, 140, 141, 234

Մաշկով Վ.—158, 168, 187
Մառանյան, գերդաստան—538
Մատթեոս, կաթողիկոս ամենայն հայոց—280, 281, 385
Մատթեոս Ուռհայեցի—563, 593
Մարգար—325, 326, 661
Մարիա Թևևզա—505
Մարկով—133
Մարտիրոսյան Գր.—355
Մարքս Կ.—16, 76, 101, 102, 106, 115, 176, 179, 186, 189, 196, 249, 293, 302, 310, 418, 447, 540, 541, 675, 683
Մելինդեն Ֆ.—376, 695
Մելիք-Արով—127, 128
Մելիք-Ադամյան Ա.—638
Մելիք-Ազարյան—267
Մելիք-Ադամալյան Աբրահամ—15, 21, 120
Մելիք-Ադամալյան Ս.—205
Մելիք-Ադամալյաններ—15, 21
Մելիք Հակոբ—502, 504
Մելիք-Ղարագյոզյան—267
Մելիք-Մարտիրոս—187
Մելիքյան Ա.—647
Մելիքյան Ի.—172
Մելիքյան Հ.—365, 366
Մելիքյան Մ. (Դեդուշկա)—681
Մելիք-Շահնազարյան Դ.—519
Մելիք-Շահնազարյան Ջ.—128
Մելիքով—184
Մելիքովա—637
Մելիքով Մ.—637, 638
Մելիքովներ—35
Մելիքսեթյան Վ.—351, 685
Մելիքսեթումյանց Խ.—627
Մելիք-Փարսադանյան—267
Մելքիսեդեկ վարդապետ—377
Մելքոն խան—519—520
Մեհթի-Ղուլի խան—14, 660
Մեհմեդ փաշա—541
Մեհմեդ փաշա—274
Մեհմեդ Ռեշիդ փաշա—62, 274—276, 668
Մեհմետ Ռուշտի փաշա—451
Մեհտի-Ղուլի խան—128
Մեյե Ան.—594
Մեննելիք—549
Մենշիկով Ա.—138, 243, 244, 248
Մեշնիկով—206—208
Մեսրոպ Գ.—536
Մեսրոպ Մաշտոց—499, 638, 683
Մեսրովբ—439
Մըսրլյան Գ.—545
Միանսարյան Մ.—641
Միլլեր Ա.—62, 693
Միլորադովիչ—501
Միլտոն—498
Միխայիլ Պավլովիչ—159
Միկլաշևսկի Ա., դեկաբրիստ—162, 187
Միկուլի Կարլու—495
Միկուլի Հակոբ—495
Միհալի Սենտ—506
Միհինդեզ Բիշարա—555
Մինասյան Հ.—514
Մինասյան Մ.—339, 597
Մինասյան Պ.—600, 602, 673
Մինասյան Վ.—538
Միշևսկի Դ.—637
Միսաքյան Խ.—617—618
Միսաքյան Վ.—503
Միսիր Ցոն—497
Միսիր ընտանիք—498
Միակի-Բուրչի—642
Միրամեճյան Ջ.—548, 658
Միրզա Աբդուլ-Հասան խան— 134
Միրզա Կադիմ Երևանի—635
Միրզա-Մահմեդ-Ալի—168
Միրզա Մասուդ—168
Միրզա Ջապար—58
Միրզայան Մանուկ բեյ—501—503, 574, 655
Միրիճանյան գերդաստան—316—317
Միրիջանյան Մ.—325
Միրկովիչ Գ.—515
Միր-Մարտո բաշկալեցի—83
Միքայել Ասորի—593
Միքայելյան Կ.—329
Միքայելյան Վ.—10
Միքայել Ռեստեն—563
Մխիթար Աբբա Սեբաստացի—589, 685
Մխիթար Գոշ—17
Մխիթարյան Ա.—563, 687
Մխիթարյաններ (Վենետիկի)—427, 428, 561, 562, 577, 580, 581, 590, 591, 593, 594, 600, 628, 644, 669, 670, 672
Մխիթարյաններ (Վիեննայի)—427, 562, 673
Մխիթար Սեբաստացի, տե՛ս Մխիթար Աբբա Սեբաստացի
Մխչյան գերդաստան—308
Մկրյան Հովհ.—157, 367, 536
Մկրտչյան Մ. Շիրազեցի—526, 561, 579, 655, 664
Մ. Մ., տե՛ս Մամուրյան Մ.
Մյուլլեր Ֆր.—595

Մյուհենտխյան Հովհ.—564
Մնակյան Մ.—634
Մոզաֆեր-էդ-դին—637
Մոխսեև Պ.—287
Մոլիեր ժան—538, 628, 631, 632
Մոլլա Իդրիս—64
Մոլտկե Հելմուտ—277, 696
Մոնտեսքիո Շ.—430
Մովսես Խորենացի—547, 562, 593, 594, 596, 598, 600, 601
Մովսես Մարգարե—583
Մովսես քահանա—356, 357, 367
Մորիեր Ջեյմս—562, 696
Մսերյան Զ.—386, 677, 678
Մսերյան Մսեր (Մսերյանց)—385, 386, 404, 408, 428, 568, 574, 583, 614, 629, 661, 678
Մսրլի Պողոս բեյ—329
Մուհամեդ Ալի—61, 274, 277, 461, 541—543, 546, 548, 658, 668
Մուհամեդ փաշա—64
Մուշեղ—439
Մուսին-Պուշկին Ա.—34
Մուստակով Վ.—503
Մուստաֆա ալ-Խայիդի—327
Մուստաֆա բեյ—280, 281
Մուստաֆա II—78
Մուստաֆա III—78
Մուստաֆա Ռեշիդ փաշա—278, 281
Մուստաֆա փաշա Բայրաքտար—62, 693
Մուրադյան Ա.—10
Մուրադյան Ար.—367, 418, 419, 454, 455, 588, 678
Մուրադյան Աբր.—548
Մուրադյան եղբայրներ—553
Մուրադ IV—72, 349, 674
Մուրավյով Ն. (Մուրավյով-Կարսկի)—149, 164, 248, 249, 693
Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան)—676

Յակուբենց Հ.—495
Յաղուբյան Ա.—347, 350, 355
Յաղուբյաններ—74
Յարալով—475
Յորգա Ն.—497
Յուզեֆովիչ Տ.—133, 685
Յուլիուէյան Կ.—336, 342, 427, 431, 434, 586, 675
Յուսուֆ փաշա—350
Յուսուֆ-Զիա փաշա—107, 123, 661
Յուսուֆյան Հ. Զելեբի—529
Յուսուֆյան Պ.—531, 546

Նավարեթ Ալիքը—502
Նազարեթյաններ—534
Նազար խան—519
Նազարյան Գ.—165
Նազարյան (Նազարյանց) Ստ.—158, 385, 393, 398—404, 408—411, 413, 416, 453, 568, 570, 573, 575, 583, 584, 595, 629, 662, 672, 677, 688, 690
Նաթանյան Պ.—288, 690
Նաթանյան եղբայրներ—437
Նալբանդյան Մխ.—9, 316, 320, 323, 325, 327, 340, 342, 343, 366, 369—371, 373, 383, 385, 388, 398, 400, 405—426, 428, 429, 433, 434, 436, 440, 441, 443, 446, 448, 450—453, 455—457, 463, 472—474, 522, 523, 534, 566, 568, 573, 575, 576, 578, 582—586, 614, 615, 618—620, 629, 631, 632, 635, 641, 667, 677—680, 688—690
Նալբանդովներ—490
Նախիմով Պ.—244, 248, 644
Նաշալյան Հ.—73, 349, 690
Նապոլեոն Բոնապարտ—116, 121—124, 134, 368, 473, 519, 540, 545, 562
Նապոլեոն III—243, 358, 359, 368, 396, 441
Նասր-էդ-դին—518, 637
Նար-Դոս—680
Նար-Պեյ, տե՛ս Գալֆայան Խ.
Նեբոլսին—125, 126, 128, 661
Նեկրասով Ն.—196
Նեոփիտոս—498
Նեչկինա Մ.—144, 160, 693
Նեսսելրոդե—170, 184
Նեսվետաև—121, 123
Ներսես Համբրոնացի—593
Ներսիսյան Ա.—66, 690
Ներսիսյան Հովհ.—57
Ներսիսյան Մ. Գ.—2—5, 33, 56, 74, 157, 159, 160, 162, 163, 193, 277, 286, 299, 301, 368, 370, 372, 376, 379, 473, 685, 690, 693
Ներսիսյան Ստ.—570, 638
Նիկիտին Վ.—64, 693
Նիկոլաեև Ն.—390, 408
Նիկոլայ I—114, 138, 144, 167, 185, 202, 204, 207—209, 212, 214, 219, 227, 228, 234, 235, 243, 244, 268, 271, 338, 398, 667, 669, 670, 692
Նիկոլայի—261
Նիկողայոս—545
Նիքոթյան—531
Նյագին Վ.—515
Նովիչև Ա.—278, 292, 693
Նորատունկյան Հ.—372

Նորատունկյան Պ.—367, 368, 440, 679
Նուրար փաշա—546, 547
Նուպարյան Մ.—532, 566, 672
Նուր-Ալլահ բեկ—93, 279, 282

Շահատիլ Ն.—40, 647, 676, 684, 690
Շահպազիլ Մ.—362, 364, 365, 368, 576, 583, 607, 615, 622, 623
Շահան-Քրպենտյան Հ.—163, 212, 519, 592, 662, 670
Շահինյան Ս.—630, 683
Շահինյանց—485
Շահխաթունյան Հովհ.—563, 690
Շահնազարյան Դ.—563
Շահնազարյան(ց) Կ.—358, 367, 394—396, 441
Շահպազյան Հ.—70, 79, 83, 86, 277, 280, 690
Շահվերդյան Կ.—479, 582
Շահումյան Գ.—619
Շամիլ—248
Շամշիև—174
Շան-Գիրեյ Ա.—257
Շանշիև Պ., տե՛ս Շանշյան Պ.
Շանշյան Ն.—399
Շանշյան Պ.—260, 263, 390—392, 399, 568, 573—575, 664, 694
Շանսև—252
Շաշկատրյան Գ.—103
Շառլեման Ի.—635
Շեյին բեյ—359
Շեյխ-Ալի բեկ—205, 206
Շերենց Գ.—437, 690
Շեքսպիր Վ.—538, 561, 579
Շիլ—137, 138
Շիշմանյան Հ., տե՛ս Սերենց
Շիպով Ի.—160
Շիրին Հ.—579, 582, 596, 641, 642
Շիրմազանյան Գ.—38, 261, 387, 390, 570, 617, 628
Շիրվանզադե Ալ.—677
Շլիսսելբուրգ—235
Շմավոնյան Հ.—579, 665
Շոպեն Ի.—22, 26, 32, 34—36, 38, 43, 44, 47, 48, 50, 51, 145, 192, 226, 229, 230, 259, 640, 686
Շոպեն Ֆր.—495
Շուշրոյան Հաղար—354, 355
Շուշրոյան Հովհ.—350, 353
Շուշրոյաններ—74
Շչերբատով—114, 145, 149, 694
Շտայնել Ն.—696
Շտիկյան Ս.—681, 690
Շրոմպֆ Գ.—593

Շևչենկո Տ.—638

Ոսկանյան Խ.—585, 671
Ոսկանյան Մտ.—434, 442—446, 449, 452, 532, 588, 617, 665, 676—678

Զագմագեյան Հ.—319, 690
Զագրյան Հ.—365, 522
Զամյլյան Միք.—589, 590, 662, 665, 690
Զամուռեյան Հ., տե՛ս Տերոենց Հ.
Զարըդ Ղ.—307, 655, 690
Զարլըզ Պոլլ—522
Զարտորիժսկի Ադամ—367, 371, 424, 440
Զաուշյան Մարտինոս—509
Զափրաստյան—644
Զաքըր Հասան—537
Զևրազ Մ.—675
Զերազյան Պ.—317
Զերազյան գերդաստան—317
Զերևպով—470
Զերնիշև Զ., գեկաբրիստ—161
Զերնիշև (Զերնիշով)—191, 208, 210, 237, 669
Զերնիշևակի Ն.—196, 197, 407, 412, 426, 585
Զերյան Հ.—643, 646, 647
Զերքեզյան Գր.—576
Զիլինկիրյան Գր.—339, 341—343, 362, 363, 372, 424, 442, 448, 449, 532, 566, 588, 669, 678, 689, 690
Զմշկյան Գ.—630
Զմշկյան Սաթենիկ—630
Զոթելզադե Հաճի խան—275
Զոլագիտես (Զոլագյան) Դմ.—591
Զոմակ Գ. Զերքեզ—498
Զոպանյան գերդաստան—317
Զրաքյան Ա.—546
Զուխաչյան Տ.—565, 644, 646, 647, 670, 678, 681

Պալասան Թ.—498
Պալասան ընտանիք—497
Պալասանյան Մտ.—363, 497, 670, 690
Պալեն—232
Պալճազարյան Ղ.—426, 585, 586, 671
Պալյան Գ.—335, 336, 341, 360, 657
Պալյան Կ.—548, 655, 657, 658
Պալյան Հ.—655, 657
Պալյան Ն.—657, 666, 675
Պալյան Ս.—657
Պալյաններ—318, 656, 657
Պայազետ-օղլի Ահմեդ փաշա—353, 354
Պան Անտոն—503
Պանիրճյաններ—534
Պապիկ—500

Պապուխյան Ն.—652
Պարթ—352
Պասկևիչ Ի. (Երևանսկի)—142, 143, 145, 149—151, 153, 154, 159, 160, 165, 167—170, 172, 173, 175, 184, 186, 190, 191, 201, 204, 206, 207, 211—213, 215, 216, 222, 229, 268, 636, 665—667, 694—696
Պավել I —476, 481, 659
Պավլովիչ Վ.—470, 685
Պատկանյան Գ.—75, 394—396, 405, 406, 418, 574, 575, 582, 607, 620, 659, 674, 690
Պատկանյան Միք.—560, 568, 570, 582, 583, 617, 629
Պատկանյան Ռ.—364, 395, 399, 568, 575, 576, 582, 615, 620, 621, 641, 668, 679
Պատկանյան Ս.—574, 575
Պատկանյան Ք.—568, 575, 595, 596, 615, 669, 690
Պատկանյաններ—474, 575
Պարթևյան Ս.—544, 548, 658
Պարոնյան Հ.—332, 449, 539, 633, 672, 676, 691
Պարսամյան Վ.—151, 170, 193, 202, 372, 373, 690, 691, 693
Պարրոտ Գ.—636
Պարրոտ Ֆր.—608, 667
Պաուլուչչի—132, 268, 662
Պաքրիճյան—531
Պեղճյան Հ.—326, 327, 576
Պենկլյան Ս.—634
Պեշիկթաշլյան Մ.—326, 329, 330, 356, 358, 364, 366—368, 372, 432, 440, 441, 566, 578, 607, 615, 623—625, 631—633, 646, 667, 673
Պետերման Հ.—594
Պետեֆի Շանդոր—508, 585
Պետրե (Պետրոս), Պապիկ—504
Պետրոս—333
Պետրոս I—180, 203, 686
Պետրոս—550
Պետրոս պատրիարք—93, 541
Պետրոսյան Հ.—523
Պետրոսյան Մ.—547
Պետրոսյան Յու.—330, 693
Պերպերյան Ա.—62, 90, 328, 332, 333, 690
Պլըզգիու (Բուլուվլիու) Դր.—496, 497, 500
Պլըզգիու Հ.—495, 496
Պլըզգիու Մ.—496
Պլըզգիուներ—497—498
Պիրոգով—196
Պլատարքոս—562
Պոլխոտովիչ—225
Պողոս Ղարադաղցի—572, 607
Պողոս—333
Պողոս—414
Պողոս պատրիարք—331
Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի—539
Պողոսյան Ա.—10, 690
Պողոսյան Եփ.—564
Պողոսյան Հ.—366, 689
Պողոսյան Հ. Ե.—554
Պողոսյան Հ. Մ.—327, 328, 348, 354, 690
Պոյաճյան Հ.—514
Պոպով—186
Պոսլուշնիկու Մ.—495
Պոտապով Մկ.—165
Պոտեն (Բոդեն)—435
Պոտտո Վ.—114, 129, 140, 144, 181, 693, 694
Պոտուրյան Մ.—306, 536, 690
Պորտնյագին—119
Պռոշյան Պ.—263, 584, 614, 618, 630, 670
Պրժևալսկի Ա.—694
Պրոզորովսկի—501
Պրոցիկով—237
Պրոնկու Նիկոլայե—497, 498
Պուգաչով Ե.—620
Պուլուքյան գերդաստան—534
Պուշկին Ա.—186, 196, 466, 560, 585, 622, 692
Պուշկին Մ., դեկաբրիստ—160—163, 187

Ջաբարդի (ալ Ջաբարդի, Աբդ ար-Բահման) —543
Ջալալյանց Ս.—329, 386, 387, 394, 428, 690
Ջախջախյան Մ.—591, 600
Ջաֆար խան, տե՛ս Մահմեդ-Ջաֆար խան
Ջաֆար-Ղուլի աղա—240
Ջելլադ—347
Ջոնսոն—35
Ջունգ Աստվածատուր Խ.—494

Ռադիշչև—196
Ռադին Ստ.—620
Ռակովսկի Գ.—514
Ռամբո—122, 299, 693
Ռասին—599, 602
Ռաֆայելյան Գ.—548, 658
Ռաևսկի Ն.—154, 466
Ռեկլյու Էլիզե—75, 286, 688
Ռեուտ—139
Ռըդուլեսկու Յոն Հելիադե—502
Ռինեկիլ Ա.—162
Ռյուլե Կ.—407
Ռշտունի Վ.—10, 224, 239, 256, 267, 685, 690, 694
Ռոբեր Ժյուլ—359

Ռոզեն Ֆ.—207, 215, 216, 236, 237, 635, 668
Ռոզեն Դ.—61, 62, 694
Ռոժկովա Մ.—256, 271, 694
Ռոլեն-Ժեկմեն Մ.—337, 694
Ռոսնատի Ֆ.—502
Ռոստոմ բեկ—127
Ռոտինյան—390
Ռոփշև Ն.—128, 134
Ռուբենս—510
Ռուբո—155
Ռուսինյան Ն.—335, 336, 339, 341, 427, 430—432, 435, 436, 442, 452, 578, 615, 646, 647, 664, 675, 677, 690
Ռուսչուկլյան Գ. (Թադեոս Պողոսյան)—514
Ռուսսո Ժ. Ժ.—422, 428, 430, 619
Ռուստամ Մելքում—545

Սադաթյան Մ.—585
Սալլանթյան Մ.—385
Սահակ Պարթև—638
Սահակ վարդապետ—289
Սամյան Գր.—520
Սամսոնյան Ստ.—251
Սամուել Աննեցի—594
Սայաթ-Նովա—399, 582, 596, 597, 641
Սայքս Պ.—131, 696
Սանասարյան Մկ.—399
Սանդիս Ժորժ—543
Սանջյան Ա.—552
Սաչվարի—508
Սավալանյանց Տ.—290, 541, 691
Սարգիս Կհաարացի—305
Սարգիս պատրիարք Ադրիանապոլսեցի—338, 339, 539
Սարգսյան Գր.—510
Սարգսյան Ե.—69, 286, 691, 694
Սարգսյան Հ.—536, 562, 628
Սարգիսյան Ն.—530, 535, 536, 691
Սարինյան Ս.—10, 691
Սաքսյան Գր.—332, 664
Սաքսյան Հ.—332
Սաֆարյան Հ.—83
Սաֆրաստյան Ա.—84, 377, 684, 685
Սեբաստիանի—116, 122
Սեբաստյան Մ.—503
Սեբաստյան Պ.—503
Սերեոս—592
Սեգալ Ի.—255
Սելիմ I Յավուզ—64
Սելիմ III —62
Սելիմ խան—121
Սելիմ փաշա—339, 340
Սելիֆ—550
Սեմիչև Ն., դեկաբրիստ—162, 188
Սեն-Մարտեն—592, 664
Սեն-Սիմոն Ա.—430, 578
Սեռնեֆճյան Ռ.—372
Սերաֆիմ Հովհ.—504
Սերեբրյակով Լ.—244
Սերնո-Սոլովևիչ—425, 426, 694
Սերովբե Կարնեցի—212
Սերվերյան Հովհ.—655
Սերվիլեն (Սերովբե Վիլենյան)—335, 336, 339, 360, 430, 434, 435, 663
Սեֆերովներ—490
Սըրրի փաշա—279, 673
Սիլիկճյան Գ.—531
Սիմայան Գր.—507
Սիմեոն Լեհացի—542, 685
Սիմեոնյան Պ. (Սիմեոնյանց)—263, 390, 394, 568, 575, 582, 677
Սիմոն Մաքսուտ բեյ—372
Սինանյան Գր.—645
Սինանյաններ—645
Սիպյագին—148
Սիրանույշ—634
Սիրունի Հ.—497
Սլավեյկով Պ.—514
Սկալկովսկի Ա.—469, 694
Սկարլաթ Պ.—502
Սկոտ Վալտեր—430, 566
Սկրուտկովսկի Ս.—155, 694
Սմբատյանց Մ.—652
Սմիտ Ադամ—391
Սյուրմելյան Խ.—590
Սյուրմելյան Ա.—552
Սոկոլով Ի.—78, 694
Սոնկոտյան Խ.—510
Սպասսկի Ն.—255
Սպարթալյան Հովհ.—531
Սպարթալյան եղբայրներ—529, 532
Սպենդիարյան Ս.—639
Սպենդիարովներ—490
Սվաճյան Հ. (Մեխուխեչա)—329, 339, 341—343, 362, 363, 369—372, 414, 424, 429, 431, 432, 434, 441—443, 449—458, 578, 587, 647, 668, 676, 680, 687, 691
Սվեշնիկյան—269
Ստեպկով—127
Ստեփանյան Ա.—243
Ստեփանյան Դ.—10, 317, 326, 451, 565, 582, 618, 632, 681, 691
Ստեփանյան Զ.—678
Ստեփանյան Խ.—680

Ստեփանոս եպիսկոպոս—57
Ստեփան քահանա—503
Ստուրզա Մ.—496
Սրվանձտյանց Գ.—90, 299, 300, 342, 367, 368, 374, 437—441, 589, 671, 679, 691
Սուլեյման—347, 348, 668
Սուլեյման բեկ—357
Սուլեյման Կանունի—84
Սուլթանշահ Ա.—568
Սուխորուկով Վ.—163, 188
Սուխոտին Ն.—114, 180
Սումարոկով Ա.—489
Սումբատով—148
Սունդուկյան Գ.—263, 560, 614, 617, 622, 623, 630, 665, 675
Սուսլով—248
Սուրենյան Հ.—339, 355
Սուրենյան Մ.—350
Սուրենյանց Վ.—639
Սուրենյաններ—74
Սուքիասյան Ա.—630

Վալիսյան Լ.—10
Վանանդեցի Հովհան—563, 600, 601, 647
Վաշինգտոն Ջ.—447
Վարդազարյան Ա.—514
Վարդան—323
Վարդան—289
Վարդան Այգեկցի—563
Վարդանյան Զ.—354
Վարդանյան Ս.—653
Վարդապետյան Ս.—553
Վարդովյան Հ.—632
Վարժապետյան Ն.—286, 434, 450, 670
Վարժապետյան Ս.—554
Վեղենյապին Ա.—188
Վեղենյապին Ն.—163
Վեհապետյան Գ.—520
Վեմյաններ—97
Վեյդենբաում Ե.—159
Վեստման—369
Վերբիցկի—143
Վերդի Ջուզեպպե—641, 644
Վեքիլյան Մ. (Վեքիլով)—143, 144
Վիկտոր Էմմանուել—414, 434
Վիշնևսկի Յ., զեկաբրիստ—162, 188
Վինդիշման Ֆր.—594
Վիչինյան Գ.—526, 656
Վիտոն եղբայրներ—592
Վոռդենշտեյն Գ.—179
Վյազալի Դ.—168

Վոլխովսկի Վ.—162, 163, 188
Վոլկովա Ն.—480
Վոլտեր—428, 430, 561, 566, 577, 602, 615, 632
Վոլֆ(յան) Գ.—508
Վորոնչենկո—692
Վորոնցով Մ.—210, 219, 221, 222, 224, 240, 241, 260, 265, 266, 268, 269, 387, 406, 635, 672
Վրույր, տե՛ս Մամուրյան Մ. (Մ. Մ.)

Տանդի (Դանտե)—276
Տաշյան Հ.—107, 537, 691
Տապպե, Ավգուստ Վիլհելմ—591
Տավուքյան Կ. Արքին փաշա—554
Տավուքյան Հայրապետ—553
Տավուտյան Հ.—317
Տատյան Առ.—318, 434
Տատյան Հովհ. բեյ—305, 670
Տատյաններ—301, 316, 318, 336, 686
Տարլե Ե.—246, 248, 694
Տելկին Շանդրո—507
Տեղապահյան Ե.—58
Տեմիրճիպաշյան Ե.—336
Տեմիրճյան Տ.—548
Տեյիրմենճյան Մ.—341, 426, 429, 678
Տեոկյան Ա.—566
Տեոկյան Հ.—566
Տեոկյան Ս.—566
Տեոկյան եղբայրներ—530
Տեր-Աբրահամյան Հ.—489, 490, 493, 691
Տեր-Ալեքսանդրյանց Գ.—584, 597
Տեր-Գրիգորյան Մ.—576, 617
Տեր-Հակոբյան Հովհ.—664
Տեր-Հարությունյան Ե.—363, 523, 526
Տեր-Հովհաննիսյանց Հ.—516—518, 520, 691
Տեր-Հովհաննիսյան Աստվ.—551
Տեր-Հովհաննիսյան Գ.—584, 614, 618
Տեր-Հովհաննիսյանց Ա.—544, 691
Տեր-Ղուկասյան Ա.—638
Տեր-Ղուկասով Գ.—44, 694
Տեր-Մովսես—367
Տերոյենց Հ.—341, 363, 427—429, 431, 435, 451, 586, 613, 676
Տեր-Սարգսենց (Տևկանց) Ա.—437, 440—441
Տեր-Սարգսենց Երեմիա Տևկանց, տե՛ս Երեմիա Տևկանց
Տեր-Օհան—73, 349, 350, 690
Տըվըլե Ալպեր—289, 686
Տիգրանյան Վ.—474, 599
Տիվիթճյան Բ.—514

Տիմիթյան Գ.—333
Տյուզյան Հ.—318
Տյուզյաններ—317—319
Տյուսար Սրբուհի—672, 691
Տնտեսյան Եղ.—366, 372, 643, 647, 679
Տոնակյանյան Զ.—510
Տոնելյան Գ.—531
Տորմասով Ա.—126, 128, 132, 662
Տվերիտինովա Ա.—64, 685
Տրոտեր—277, 694
Տրուն դը Լուխս—358
Տրուզսոն—160, 162
Տուչկով—117

Բադյուկին Ն.—66
Բաֆֆի—286, 324, 329, 437, 618, 669, 691
Բիֆատ փաշա—333

Ցևխանովսկի—119
Ցևց(յան) Ա.—508
Ցևցյան Հովհ.—507, 508
Ցիցիանով Պ.—115, 117, 119—121, 123, 127, 129, 660

Ուբրիլինի Մ.—69, 100, 295, 315, 695, 696
Ուզլև—475
Ուզունյան Հ.—317
Ուզունով Ա.—515
Ուխուճյան Կ., տե՛ս Յուխուճյան Կ.
Ուխլյամս (Ուխլյամս փաշա)—248, 249, 251
Ուսվարով Ս.—492
Ուրաս է.—73, 287, 365

Փալագաշյան Յ.—315
Փալավանդով—207, 235, 236
Փանոսյան Կ.—329, 339, 341—343, 369, 429, 441, 442, 449—451, 588, 677
Փավստոս Բուզանդ—562, 592, 598
Փափազյան—548
Փափազյան Արուսյակ—633
Փափազյան Կ.—643
Փափազյան Կարապետ—514
Փափազյան Հ.—514
Փափազյան Ռ. Անդրեաս—577, 661
Փափազյան Ս.—646
Փափազյան Վրթ.—435, 503, 614, 680
Փեշմիշյաններ—317
Փեշտիմալճյան Գր.—326, 563, 576
Փեշտիմալճյան Տ.—578
Փիլիպոս Թոխատցի—58
Փիսոն Գ.—289, 686
Փիրղալեմյան Ա.—104
Փիր-Ղուլի խան—129

Փորթուգալյան Մ.—365, 674
Փոփովիչ Ա.—494
Փուղինյան Ն.—576, 617

Քաթանյան Գր.—165
Քաթանյան Հովհ.—634, 635
Քալբալաի խան—14
Քաղցածյան Ա.—643, 644
Քանանյանց Գ.—364, 404
Քաշունի Մ.—665, 691
Քասմյան Մ.—356, 364
Քարաչյան Գ.—637
Քացախյան Միքայել Ա.—504
Քեհյան—531
Քեոսե փաշա—347, 667
Քելյան Բյուզանդ—316, 691
Քեր Փորթըր—25
Քյաթիպյան Հովհ.—369, 370, 424, 457, 578
Քյանհան (Պետրոս Գնթունյանց)—642
Քյուրքչիխանլը Պ.—317
Քյուրքչյան Հովհ.—554
Քյուրքչյան նշաբյրներ—306
Քոլանչյան Ս.—10
Քոսյան Հ.—69, 307, 528, 577, 691
Քսենոֆոն—562
Քուշներյան Մ.—474

Օբերուվներ—490
Օբրեզկով Ա.—168, 170
Օբրեսենով Անգել—515
Օգարյով Ն.—196, 407, 425, 426, 457, 677, 693
Օդորոդնիկով Պ.—17, 693
Օդնյանովիչ Կոնստանտին—514
Օղաբաշյան—468
Օզանյաններ—539
Օլխին Ալ.—513
Օհան Մելիք—503
Օմար, խալիֆ—107
Օմար փաշա—249
Օմար Ֆարուխ—327
Օչկին—212
Օսման բեյ—355
Օսման փաշա—281, 283
Օսման փաշա, Քարատիշի—353, 354
Օտյան Գր.—335, 336, 339, 341, 360, 380, 430—432, 434, 435, 442, 452, 546, 566, 646, 669, 675, 681
Օտյան, զերդաստան—434
Օրբելիանի—245
Օրբելյան Ստ.—594

Օրժիցկի Ն.—161, 162
Օրմանյան Մ.—333, 336, 539, 671, 691
Օսմն Խոքերտ—578

Պաբբիկատորյան եղբայրներ—306
Պագևև Ա.—223—225, 694
Պաքհ-Ալի խան—168
Պաքհ-Ալի շահ—114, 119, 123—125, 137, 138, 145, 150, 169, 185
Պասուպաճյան Բ.—631, 634
Պասուպաճյան Պ.—631
Պելզուլլահ փաշա—82
Պերուհյան, Բարունակ Պեյ—68, 98, 304, 538 691
Պլորիվալ—593
Պոսքինի Կ.—646
Պրանց II—510
Պրեգերիքոս—143
Պուատ փաշա—244, 299, 300, 376, 379
Պուրյե Շառլ—422, 578

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասաբադ—150, 151, 159, 160, 201, 666
Աբխազիա—13, 113
Աբրուզ—504
Ադարակ, գյուղ—266
Ադհամզալը, գյուղ—50
Ադրա—521
Ադուլիս, մահալ—15
Ադուլիս, քաղաք—397, 594
Ադաբազար—534, 536
Ադանա, գավառ—65
Ադանա (փաշայություն, վիլայեթ)—63, 65, 81, 87, 283, 287, 292, 306, 674
Ադանա, քաղաք—95—98, 103, 274, 302, 303, 305, 307, 309, 328, 366
Ադենի ծոց—551
Ադիս-Աբեբա—549, 551
Ադրբեջան—13, 167, 210, 220, 222, 227, 241, 242, 480, 481, 681
Ադրիանապոլիս—63, 94, 188—192, 302, 311, 539, 667, 672
Ազատ գետ, տե՛ս Գառնիչայ
Ազատան, տե՛ս Փոքր Զարաքիլիսա
Ազովի ծով—178, 470
Ալագյազ, տե՛ս Արագած
Ալանիա (Ալայե), գավառ—65
Ալաշկերտ, գավառ—25, 62, 87, 187, 190
Ալաշկերտ, քաղաք—183, 252, 307, 667
Ալաջա-Դաղ—276, 670
Ալավերդի—34, 259, 265, 266
Ալբանիա—274
Ալբիստան, գավառ—65, 274
Ալեքսանդրապոլ (Կումայրի, Գյումրի, Շիրակավան, Լենինական)—46, 117, 118, 123, 124, 143, 192, 224, 235, 245—248, 251—253, 258, 259, 262, 269, 270, 323, 372, 397, 570, 631, 635, 647, 649—651, 660, 661, 670, 671, 673, 679, 681
Ալեքսանդրապոլ, գավառ—209, 210, 226, 232, 233, 251, 674
Ալեքսանդրետ—(274 էջում տպագրված Ալեքսանդրիան պետք է կարդալ Ալեքսանդրետ) —552
Ալեքսանդրիա—98, 304, 461, 543, 544, 547, 656
Ալեքսանդրովկա, գյուղ—224, 225
Ալժիր—274, 580
Ալիբեկլու, գյուղ—51
Ալինջա-չայ, մահալ—15
Ալմա—675
Ալմալու, գյուղ—235
Ալուշեն, գյուղ—323
Ախալցխա, գավառ—64, 81, 209, 221, 235
Ախալցխա, փաշայություն—13, 63—65, 76, 81, 87, 89, 91, 92, 96, 180, 189, 283
Ախալցխա, քաղաք—77, 96, 123, 179, 181, 182, 185, 187—189, 192, 245, 246, 248, 251, 311, 312, 635, 667, 681
Ախալքալաք—123, 132—134, 179, 181, 182, 187, 189, 192, 245, 248, 251, 311, 662, 667
Ախթալա—34, 265, 678
Ախի-Օրման, գյուղ—512
Ախր-դաղ—352
Ախուրյան, գետ—114, 118, 122—124, 126, 134, 180, 202, 224, 661
Ակկա—274
Ակն—79 94, 95, 98, 101, 105, 316, 318, 322, 440, 536, 539
Ակպարաբադ—521
Ակսիքենդ—20, 50
Աղբակ, տե՛ս Հեքյարի
Աղբաշ, գյուղ—55
Աղդարա, գյուղ—228
Աղթամար—78, 290, 441
Աղիաքիս, գավառ—64
Աղձնիք—279
Աղճատաղ, գավառ—68
Աղշոր, գավառ—64

Աղջաղշլաղ, գյուղ—20
Աղջովա—288
Աղքենդ, գյուղ—228, 231
Ամասիա, գավառ—64, 87, 284
Ամասիա, քաղաք—95, 96, 99, 100
Ամարաթ, գյուղ—20
Ամերիկա—87, 101, 304, 307, 323, 330, 520, 562, 585, 670
Ամիդ գավառ, տե՛ս Դիարբեքիր գավառ
Ամիդ քաղաք, տե՛ս Դիարբեքիր քաղաք
ԱՄՆ—322
Ամստերդամ—101, 320, 560
Այգեստան—83, 281, 664
Այգրն, վիլայեթ—105, 528, 531
Այգրն, քաղաք—105, 528
Այնթափ—98, 304, 307, 330, 552
Այնուռ, քաղաք—504
Այռոս, քաղաք—511, 512
Անադէ, գավառ—64
Անանուր—46
Անապա—179, 183, 189, 667
Անատոլիա—61, 64, 80, 90, 186, 277, 278, 287, 293, 303, 317
Անարզաբա—328
Անգեղակոթ, գյուղ—225
Անգլիա—62, 101, 114—116, 122, 123, 131, 132, 136, 137, 171, 176—178, 183, 185, 189, 192, 243, 244, 246, 250, 275, 282, 293, 304, 306, 308, 318, 320, 359, 364, 370, 423, 464, 484, 531, 554, 661, 663, 670, 675
Անդրա, տե՛ս Անկարա
Անդրկովկաս—7, 13, 14, 18, 32, 34, 35, 60, 113—116, 121—123, 132, 134, 136, 137, 140, 142, 143, 181, 189, 191, 195, 206—211, 215, 219, 220, 222—224, 227, 237, 239, 241, 242, 244—246, 248, 250, 251, 255—258, 260, 262, 263, 267, 268, 270—272, 327, 381, 386, 388—390, 400, 404, 468, 473, 475, 517, 559, 560, 654, 655, 667—670, 673, 680
Աննեձոր—355
Անի—46, 404, 586, 593, 651, 657
Անկարա—62, 539
Անկյուրիա (Էնկյուրի, Դաղատիա), տե՛ս Անկարա
Անտիոք—274, 527, 552
Աշտարակ—18, 21, 22, 24, 49, 125, 151, 152, 164, 165, 653, 670, 676
Ապարան (գավառ, մահալ)—14, 28, 46, 118, 125, 127, 138, 139, 142, 145, 150, 151, 163, 165, 166, 175, 192, 231
Ապուչեխ, գյուղ—318
Աջարիա—13
Աջնմլեր, գյուղ—512
Աջնան, մահալ—15
Առաջավոր Ասիա—531
Ասիա—101, 166, 202, 293, 379, 399, 422, 425, 475, 523, 530, 562, 589, 609
Ասլանբեկ, գյուղ—537
Ասլանդուզ—134
Ասկարան—128, 129, 132
Ասորիք—298, 328
Աստապատ, գյուղ—680
Աստրախան, նահանգ—478
Աստրախան, քաղաք—103, 214, 397, 462, 465, 470, 473—481, 560, 573—575, 582, 631, 654, 662, 663, 669
Ավագկալ (Միխալ), գյուղ—354, 355
Ավագ-Կետիկ—354
Ավետարանոց (Ջանախչի), գյուղ—141
Ավստրալիա—524
Ավստրիա—176, 177, 183, 189, 368, 494, 495, 501, 505, 508, 531, 554
Ավստրիական կայսրություն, տե՛ս Ավստրիա
Ավստրո-Հունգարիա, տե՛ս Ավստրիա
Ատրպատական—15, 21, 52, 175, 516, 518, 520
Արաբ-Ենգիջա, գյուղ—48
Արաբկիր, գավառ—64, 87
Արաբկիր, քաղաք—94, 95, 105, 303, 307, 543, 670
Արագած—191, 665
Արամո, գյուղ—552, 553
Արարատ, լեռ—157, 162, 386, 414, 525, 608, 610, 625 667
Արարատյան դաշտ—24, 25, 115, 120, 131, 150, 390, 528, 530, 571, 653
Արարատյան երկիր—194, 206
Արարոց—83
Արաքս, գետ—32, 114, 117, 119, 123, 125, 129, 134, 136, 142, 150, 151, 153, 154, 160, 169—172, 202, 530, 620, 621
Արգենտինա—508
Արդաբիլ—169
Արդահան, գավառ—64, 187
Արդահան, քաղաք—182, 188, 190, 191, 676
Արդանուչ, գավառ—64
Արդվին—104
Արեգին, գյուղ—353, 354
Արզաքյան, գյուղ—21
Արթիկ, գյուղ—121, 660
Արինջ, գյուղ—21
Արծկե, գավառ—64, 87
Արղանա-մադեն—88, 100, 284, 304

Արեհշ, գավառ—64, 79, 87
Արեհշ, քաղաք—82
Արեհշ, քաղաք Ռումինիայում—499
Արմաշ—536, 537
Արմավիր—606
Արմավիր, քաղաք Հյուսիսային Կովկասում—671
Արմինիա, տե՛ս Հայաստան
Արմյանակի Բազար—487, 490
Արշաձոր, գյուղ—243
Արցախ—54
Արփաշայ, տե՛ս Ախուրյան գետ
Արևելյան Եվրոպա—10, 494, 505
Արևելյան Հայաստան—7, 13, 18—21, 23—28, 31, 32, 34—38, 41, 43, 45, 46, 57, 60, 116, 117, 135, 136, 144, 158, 160, 171, 173, 175, 179, 181, 188, 192—197, 201—204, 206, 210, 211, 214—215, 218—226, 228, 230, 233, 238, 243, 250, 254—259, 263, 264, 269, 333, 372, 381, 384, 389, 404, 461, 462, 474, 525, 540, 567, 611, 640, 647, 649, 651, 653, 658, 667
Արևելյան Երկրակ, տե՛ս Ծորագյալ
Արևելյան Վրաստան—13, 113, 659
Արևելք—15, 16, 106, 177, 183, 190, 196, 309, 327, 330, 421, 425, 488, 492, 493, 505, 531, 538, 541, 567, 593, 594, 604
Արևմտյան Եվրոպա—8, 101, 320, 469, 512, 538, 551, 554
Արևմտյան Հայաստան—7, 8, 23, 37, 61, 63, 64, 69, 70, 75—82, 84, 86—90, 92, 94—98, 101, 102, 104, 105, 107, 179, 186, 187, 190—192, 211, 222, 231, 233, 249, 250, 273, 275—277, 279, 281—285, 287—293, 296, 297, 301, 302, 304—307, 309, 314, 315, 318, 322, 323, 325, 327, 342, 347, 352, 360, 370, 372—374, 376, 380, 382, 416, 421, 432, 433, 436, 437, 439, 441, 453—455, 458, 461, 514, 527, 535, 538, 543, 553, 563, 576, 655, 667, 669, 672, 673, 676, 679, 680
Արևմտյան Երկրակ, տե՛ս Արևմտյան Ծորագյալ
Արևմտյան Ծորագյալ, գավառ—64, 87
Արևմտյան Վրաստան—13, 244
Արևմուտք—106, 177, 250, 278, 327, 381, 405, 419—421, 424, 425, 430, 440, 531, 597
Աքքերման—134, 177, 178
Աֆղանստան—101
Աֆրիկա—527—562

Բաբադաղ—503
Բաբելոն—375
Բաբերդ, սանջակ—63
Բաբերդ, քաղաք—37, 186, 188, 288, 309, 313, 667
Բագրևանդ—117
Բաղարչայ, գյուղ—225
Բազել—572
Բաթում—186, 246
Բալկանյան լեռնաշղթա—189
Բալկաններ—176—178, 428, 513
Բալու (գավառ, սանջակ, իշխանություն)—64, 67, 79, 88, 288, 378
Բալու, քաղաք—102, 281, 302, 307
Բախմուտ—470
Բախչիսարայ—248
Բակրու—497, 499
Բաղաբերդ, մահալ—15
Բաղդատ—62, 101, 102, 282
Բաղեշ, գավառ—64, 88, 107,
Բաղեշ (վիլայեթ, իշխանություն)—61, 67, 82, 85, 92, 276, 277, 279, 281, 284, 287, 289, 323
Բաղեշ, քաղաք—68, 95, 98, 102, 104, 107, 281, 282, 302—308, 311, 322, 330, 375, 382, 441, 676
Բայազետ, գավառ—63, 179, 187
Բայազետ, փաշայություն—25, 36, 63, 65, 68, 72, 77, 82, 83, 85, 87—89, 92, 154, 180, 190, 191, 276, 277, 283, 284
Բայազետ, քաղաք—23, 41, 43, 46, 52, 102, 179, 183, 185, 186, 187, 191, 236, 247, 248, 275, 289, 302, 311, 665, 667, 675
Բայանդուր, գյուղ—235, 245, 251—253
Բայբուրդ, տե՛ս Բաբերդ
Բանազոր, գյուղ—240
Բանանց, գյուղ—681
Բանաս—504, 507, 508
Բանգալոր—521
Բաշ-Շորագյալ—245
Բաշ-Քադըկլար—246, 252, 675
Բասարգեչար—660
Բասեն (սանջակ, գավառ)—63, 87, 187
Բասրա—101
Բավարիա—594
Բատավիա—520
Բարանդուզ—516
Բարդուշատ, մահալ—15
Բարիզ, տե՛ս Փարիզ
Բարձր Հայք—277, 300, 368
Բաքու, գավառ—209
Բաքու, խանություն—13, 18, 121, 135, 662
Բաքու, քաղաք—123, 220, 267, 268, 322, 369, 372, 461, 654, 660, 670, 679, 681
Բեզիկս, գյուղ—21
Բելգրադ—357
Բելոկան, գավառ—209—210

Բելեի, մահալ—15
Բեհերա, նահանգ—547
Բելթ Բիթար—553
Բելթ Գեորգի—553
Բելթ Ջուվեյն—553
Բելթ Մըրիա—553
Բելթ Մուրադ—553
Բելյան—65, 274, 552
Բելրութ—298, 552, 554, 555
Բենդեր—134
Բենդերբուշիր—517
Բեներեք, գավառ—64
Բենի-Ադի—543
Բեռին—286, 288, 378, 442, 534, 595, 673
Բեսարաբիա—134, 204, 214, 249, 388, 406, 481, 497, 501, 502, 573, 654, 655, 662
Բերա—323, 326, 328, 565, 576, 631, 655
Բերդագարակ, գավառ Կարսի փաշալության մեջ—64, նույն էջում Դիարբեքիրի փաշալության Բերդագարակ գավառը կարդալ Բերդակ
Բերդակ, գյուղ—323
Բերդիչև—643
Բերկրի, գավառ, իշխանություն—64, 67, 87
Բիթլիս, տե՛ս Բաղեշ
Բիրմա—527
Բղուս—225
Բյուրական—18
Բյուրականյան լեռներ—72
Բոլնիս-Խաչեն—671
Բոհտան—68, 277, 281
Բողոք, գավառ—64
Բոմբեյ—521, 524, 526, 527
Բոսնիա—283, 352
Բոստոն—330
Բոսֆորի նեղուց—105, 122, 176, 275, 456, 671
Բորժոմի կիրճ—185
Բորիսովկա—225
Բորչալու (գավառ, սուլթանություն, ուղեմաս)—13, 17, 127, 131, 145, 209, 219, 251, 659
Բոտոշան—495, 497, 499, 670
Բջնի—241, 242
Բռնակոթ—234
Բռնաշեն—291, 292, 297
Բրաղիլիա—550
Բրաիլ—183, 499
Բրաշով—504, 510
Բրըիլա, տե՛ս Բրաիլ
Բրուսա—99, 100, 303, 306, 435
Բուենոս-Այրես—508
Բուլղարիա—97, 189, 300, 352, 464, 494, 499, 502, 505, 511—514, 621
Բուխարա—102
Բուխարեստ—133, 134, 177, 499—504, 662
Բուկովինա—494, 495
Բուշեր—516
Բումնաբադ—528
Բուրգաս—189, 511—513
Բուրսա, տե՛ս Բրուսա
Բուրվար, գավառ—516, 518

Գալաց—495, 499,
Գալիցիա—483
Գայանեի վանք—57
Գայաների, տե՛ս Կենաարիա
Գանձակ, տե՛ս Ելիսավետպոլ
Գառնի—571
Գառնիբասար, մահալ—14, 20—21, 25—28, 31, 36, 48—50
Գառնիչայ, գետ—118, 119, 125, 150, 159
Գասապա—528
Գավան, գյուղ—288
Գաոը գյուղ, թաղամաս Կ. Պոլսում—315
Գարատաղ, տե՛ս Ջերնոգորիա
Գեղտի Վաշարհե (Տըրգոլ Սըկուլեսկ)—504
Գեղարքունիք—519
Գեյվե, գավառ—537
Գեյվե, գյուղ—537
Գենջ, գավառ—79
Գեոքրիար, գյուղ—516
Գեորգիևսկ, քաղաք—470, 481
Գեռլա—504—511
Գետառ, գետակ—649
Գերգեր, գավառ—65
Գերմանիա—464, 508, 531
Գիեհ, գավառ—64
Գյանջա, խանություն—13, 18, 114, 116, 135, 660, 662
Գյանջա, քաղաք—127, 251, 660
Գյոկչա (մահալ, գավառ)—14, 28, 236—238
Գյոյ-քիլիսա, գյուղ—241
Գյուղեափա—528
Գյուլիստան (գյուղ, ամրոց)—42, 131, 134—137, 142, 171, 189, 662, 663
Գյուլիստան, մելիքություն—15
Գյումրի-չայ, գետակ—651
Գյումուշ, գյուղ—21
Գյումուշխանե—284, 304, 537, 538
Գյումուշխանե, սանջակ—537
Գոա, քաղաք—521
Գոգենլո, գյուղ—668
Գոլովինո, գյուղ—225
Գորի—46, 251
Գորի, գավառ—18, 209
Գորիս—121, 165, 647, 651

Դորիս, գետակ—651
Դործոթ, գյուղ—83
Դրիգորիոպոլ—481—485, 487
Դուգարք—194
Դուլավներ—521
Դուլե-Դափու—371, 680
Դում-Դափու—315, 371, 565, 576, 665
Դուրա-Հումորուլուլ (Հումոր)—494
Դուրիա—13, 113, 247, 660
Դուրիա, գավառ—209, 210
Դուրուչխմե—326

Դալուլար, գյուղ—21
Դաղստան—115, 135, 138, 369, 480, 481
Դամասկոս—93, 103, 104, 274, 320, 527, 531, 541, 552—555
Դամիրլի-Շորլը, գյուղ—20, 50
Դանուբ—122, 133, 134, 189, 244, 245, 249, 500
Դանուբյան վիլայեթ—283
Դանցիգ—495
Դասքին, մահալ—15
Դավալու, գյուղ—257
Դարալագյազ (մահալ, գավառ)—15, 28, 34, 36, 53, 231, 235, 257, 674
Դարալիյագ (մահալ, գավառ)—14, 28, 34, 175, 192
Դարաքենդ-Փարչենխ, մահալ—14, 28, 48, 216
Դարդանել, նեղուց—122, 176, 425, 661, 671
Դարու, գավառ—79
Դաքքա—521
Դամաշեն, գյուղ—225
Դելի—521
Դեհխաուական (Դեհխարղան), գյուղ—168, 169, 666
Դեմուրչասահլ, մահալ—15
Դեյր-էլ-Քամար—553
Դենիզլի—528
Դերբենդակոյն, գյուղ—480
Դերբենտ, գավառ—209
Դերբենտ, խանություն—121, 135, 662
Դերբենտ, նահանգ—210, 673
Դերբենտ, քաղաք—480, 661, 675,
Դերեգավա—551
Դերջան—63, 87, 89, 186
Դերսիմ—97, 102, 276, 302, 304
Դերսիմ (իշխանություն, գավառ)—67, 68, 82, 283, 374, 378
Դըհ—280
Դիադին—102, 183
Դիադին, գավառ—63, 87
Դիադին, գյուղ—48

Դիարբեքիր, գավառ—64, 79
Դիարբեքիր (փաշայություն, վիլայեթ)—61—64, 68, 71, 76, 82, 86—88, 91—93, 279—281, 283, 284, 286, 287, 300, 322, 378, 543
Դիարբեքիր, քաղաք—64, 67, 86, 95, 96, 99, 100, 102, 105, 276, 302, 303, 307, 309, 328, 377, 379, 514, 515
Դիզակ, մահալ—15
Դիլիջան—46, 224, 225, 251, 672
Դիվրիկ, գավառ—64, 284, 317
Դնեստր—481
Դորբուջա—499, 500
Դոն—424, 465—469, 471, 473, 474
Դոնի Նախիջևան, տե՛ս Նոր Նախիջևան
Դոնի Ռոստով, տե՛ս Ռոստով
Դովլաթաբադ—521
Դորպատ (Տարտու)—394, 398, 568, 570, 575, 596, 608, 641, 667
Դսեղ—681
Դվին—55
Դուբասար—481
Դուշեթ, գավառ—18
Դևա—504

Եգիպտոս—61, 255, 274, 275, 277, 320, 324, 328, 348, 349, 367, 425, 461, 527, 531, 542—548, 654, 656, 658, 659, 668
Եդի-Գյուլ—655
Եթովպիա (Հաբեշստան)—548—550
Ելենովկա, գյուղ—20, 241
Ելիսավետպոլ—18, 129, 138, 142, 151, 251, 369, 660, 665, 680, 681
Ելիսավետպոլ, գավառ—18, 209
Ելղովան, գյուղ—20, 241
Եկատերինոդար—470, 481
Եկատերինոսլավ—470, 485
Եկատերինոսլավ, նահանգ—468, 478, 481
Եկրադ, գավառ—79
Եղիսաբեթուպոլիս—504—511
Եղվարդ, գյուղ—24, 25, 653
Ենի Գափու—315
Ենիկալե—473
Եոմուրա, գավառ—65, 107, 537
Եվդոկիա—78, 88, 94—96, 99, 100, 103, 105, 302—305, 307, 308, 311, 382, 531
Եվպատորիա—487, 490, 492, 675
Եվրոպա—70, 97, 99, 101—103, 106, 121, 271, 274, 293, 294, 303, 306, 307, 309, 321—323, 330, 334, 335, 370, 395, 403, 418, 421, 422, 424, 425, 428, 430, 432, 440, 442, 445, 447, 454, 502, 523, 530, 531, 535, 546, 562, 577, 579, 592, 613, 644

Եվրոպական Թուրքիա, տե՛ս Թուրքիա
Երզնկա (գավառ, սանջակ)—63, 87, 90, 284, 376
Երզնկա, քաղաք—96, 104, 302, 303, 305, 309, 322
Երիզա—539
Երուսաղեմ—93, 94, 243, 332, 338, 339, 473, 540—542, 544, 563, 680
Երևան—14—17, 23, 26, 31, 32, 34—36, 41—46, 48—50, 52, 55, 57, 59, 121, 124—127, 129—132, 138—142, 144, 145, 149, 150, 154—160, 162—165, 167, 168, 170. 172, 173, 175, 180, 183, 201, 204, 205, 210, 214, 220, 229, 231, 232, 234, 237, 241, 242, 245, 248, 251, 252, 256, 258—260, 263, 269, 270, 369, 373, 397, 473, 499, 570, 571, 628, 631, 635, 636, 638, 647—653, 659—661, 663, 666, 668, 670, 672, 674, 676, 678, 680, 681
Երևան, գավառ—205, 207, 209, 210, 223, 224, 238, 251, 254, 257, 674
Երևան, խանություն—13, 14, 16, 18, 19, 25—27, 32, 41—43, 47—49, 116, 117, 123, 125, 126, 136, 164, 169, 170, 172, 205, 268, 665, 666
Երևան, նահանգ—210, 221, 225, 226, 228, 233, 239, 242, 254—256, 258, 267, 269, 390, 674, 676
Երևան, օկրուգ—207
Եփրատ—101, 275, 583

Ջակաղիկ—543
Ջանգեզուր—15, 128, 135, 139, 144, 221, 225, 234, 239, 240, 251, 265—267, 662, 674
Ջանգիբանար—14, 20, 25—27, 31, 36, 48—51, 175, 229
Ջարուշատ, գավառ—64
Ջելթուն—8, 72, 73, 88, 96, 274, 301, 302, 305, 314, 329 340, 341, 347—370, 373, 377, 385, 394, 424, 428, 433, 440, 441, 443, 450, 457, 534, 584, 588, 615, 624, 625, 647, 662, 663, 667, 668, 672, 674, 678—680
Ջելթուն, գավառ—65, 74, 75, 80, 83, 97, 304, 661
Ջըղգան—67
Ջիլե—100, 105
Ջմմաո—553
Ջմմաոի վանք—328, 553
Ջմյունիա—10, 62, 69, 78, 101, 105, 302, 306, 319—323, 362, 363, 371, 424, 428, 436, 442—444, 447, 448, 450, 461, 519, 527—534, 536, 540, 543, 546, 559, 560, 566, 567, 577, 578, 582, 585, 586, 588, 633, 644, 659, 661, 664, 665, 668—672, 678
Ջոդ, գյուղ—238
Ջոհրաբլի, գյուղ—20
Ջուլֆաքար, գյուղ—20

Էգեյան ծով—274
Էգիլ, հյուրանոցություն—64, 79
Էդեսիա, գյուղ—480
Էդիրնե, տե՛ս Ադրիանապոլիս
Էլար, գյուղ—21
Էլուպ, քաղ Կ. Պոլսում—326, 376
Էջմիածին—17, 21—24, 31, 34, 36, 37, 41, 42, 46, 48, 49, 56—58, 78, 94, 116—120, 125, 130, 145, 146, 148—154, 163—165, 204, 206, 214, 216, 217, 328, 329, 331, 386, 388, 399, 406, 473, 484, 491, 492, 562, 563, 593, 607, 608, 628, 636, 653—654, 662—664, 666, 670, 673, 674, 681
Էջմիածին, գավառ—231, 251, 252
Էսթաբերդ, գավառ—64
Էսֆերիդ, գավառ—64
Էրզինջան, տե՛ս Երզնկա
Էրզրում—23, 41—43, 46, 63, 77, 86, 90, 93, 94, 96—98, 103—105, 123, 181, 182, 186—188, 190—191, 235, 248, 249, 275, 296, 302, 303, 305, 307, 311, 312, 322, 323, 330, 366, 374, 377, 382, 437, 531, 536, 538, 649, 651, 655, 665, 667, 668
Էրզրում, գավառ—63
Էրզրում (փաշայություն, վիլայեթ)—63, 65, 72, 76, 81, 84, 87—89, 92, 96, 107, 180, 192, 280, 281, 283, 284, 286, 287, 289, 294—296, 376, 531
Էրկան, գավառ—64
Էրմենիստան, տե՛ս Էրզրումի վիլայեթ
Էվքերե, գյուղ—664
Էտնա—414

Թաթար-Բազարչիկ (Բազարչիկ)—511—513
Թալին—24, 33, 52
Թալին, մահալ—14, 28, 165, 192, 252
Թալիշ—137, 138
Թալիշ, գավառ—209
Թալիշ, խանություն—13, 134, 135, 662
Թալիշ, մահալ Ղարաբաղում—15
Թանտա—543
Թավշան-Ղշլաղ, գյուղ—235
Թավրիզ—41, 46, 86, 102, 103, 105, 107, 127, 132, 137, 151, 160, 168, 169, 172, 184, 516—518, 520, 637, 656, 666
Թբիլիսի, տե՛ս Թիֆլիս

Թելավ—18, 46
Թելավ, դավառ—18, 209
Թեհրան—102, 115, 122—124, 136, 139, 169, 170, 184, 516—518, 520, 663, 664, 667
Թեոդոսիա—375, 486, 487, 490, 493, 573, 574, 639, 662, 663, 676
Թերեք—369, 480
Թերթիլ—64
Թեքման, սանջակ—63
Թըրնովո, քաղաք—87, 303, 512
Թխար, գավառ—279
Թիֆլիս—10, 18, 35, 41, 42, 46, 52, 103, 114, 115, 117, 118, 120, 123, 124, 126, 130, 137, 138, 140—142, 146—152, 159, 160, 185, 190, 203, 204, 209, 211, 212, 218, 220, 224, 236, 245, 251, 258—263, 268—271, 281, 282, 285, 286, 322, 361, 363, 369, 372, 384, 390, 393, 397, 399, 406, 410, 428, 441, 461, 473, 475, 519, 559, 560, 563, 567, 569—571, 573, 578, 582, 584, 586, 590, 596, 597, 607, 608, 610, 628—631, 634—638, 644, 654, 659, 660, 662—667, 669—677, 679—681
Թիֆլիս, գավառ—18, 209
Թիֆլիս, նահանգ—210, 221, 291
Թխոմա, գավառ—279
Թորթում, սանջակ—63
Թուխ-Գաբու—577
Թուխրակ-Կալէ, գավառ—63, 284, 667
Թոքատ, տե՛ս Եվդոկիա
Թրակիա—513
Թրխերոլու, քաղաք—539
Թուրքեստան—101
Թուրքիա—7, 8, 13, 23, 33, 41—42, 61—64, 66, 68—70, 72, 74, 75, 83, 86—88, 91, 96—102, 105—109, 114—116, 121, 122, 124, 131—134, 136—138, 169, 176—183, 185, 189, 190, 192—194, 202, 206, 211, 212, 223, 243, 244, 246, 248, 249, 258, 269, 270, 272—275, 277—280, 282, 283, 285—287, 290, 292, 293, 295, 296, 299, 301—304, 306—311, 316—322, 324, 325, 327—331, 334, 341, 349, 352, 361, 364, 368, 369, 371, 372, 385, 389, 393, 404, 414, 416, 417, 419, 422—426, 429, 430, 432, 435, 437, 440, 443, 445, 446, 456, 475, 486—489, 492, 493, 500, 514, 515, 527, 529, 532, 534—536, 538—540, 543, 548, 553, 554, 561, 565, 566, 568, 585, 628, 644, 657, 659, 662, 665, 667—669, 672, 674—676, 679
Թուրքմենչայ—160, 168—172, 178, 185, 189, 192, 204, 648, 666
Իգդիր—247, 252
Իգիրմիդեորտ, մահալ—15
Իդալիա, Իթալիա, տե՛ս Իտալիա
Իզմայիլ—134
Իզմիտ, տե՛ս Նիկոմիդիա
Իզմիր, տե՛ս Զմյուռնիա
Իլքիս, գավառ—64
Իկոնիա—274
Իմերեթիա—13, 18, 113, 690
Ինդոնեզիա—361, 462, 520, 527
Իոսիֆովկա, գյուղ—481
Իլիլ, գավառ—65
Իլյան, գավառ—71, 80
Իտալիա—320, 327, 364, 370—371, 392, 414, 428, 435, 443, 454, 470, 531, 639, 678
Իրան, տե՛ս Պարսկաստան
Իրանական Ադրբեջան—492
Իրաք—274

Լազիստան—537, 539
Լաթաքիա (Լավոդիկա)—552
Լահոր—521
Լամանշ—105
Լայպցիգ—271
Լանգա—577
Լաուշան, գյուղ—20, 50
Լաքնահոր—521
Լեհաստան—368, 394, 464, 494, 495, 654, 655
Լենքորան, բերդ—134
Լեռնային Կիլիկիա—72, 301, 347, 352, 358
Լիբանան—461, 551, 553, 555
Լիբանանի լեռներ—553
Լիմ անապատ—289
Լիոն, քաղաք—305
Լիվոռնո, քաղաք—101, 103, 105, 320, 371
Լոնդոն—105, 177, 183, 190, 192, 278, 320, 349, 370, 371, 396, 407, 414, 422, 424, 425, 430, 448, 468, 519, 520, 524, 530, 534, 550, 592, 668, 671, 677, 678
Լոնտոն, տե՛ս Լոնդոն
Լոռի—13, 35, 54, 113, 117, 118, 127, 128, 131, 135, 140, 144, 164, 165, 191, 192, 224, 659, 662, 672, 681
Լվով—495

Խաղտիք—300
Խաչեն, մահալ—15
Խաչկանց, վանք—93
Խառնավիլ, գյուղ—323
Խասգյուղ, Մուշում—323
Խասգյուղ, կ. Պոլսի արվարձաններից—315, 326, 367, 567, 631, 644, 661, 675

Խասկալ, գյուղ—537
Խատրլուկ, գյուղ—231
Խարազան, գավառ—282
Խարբերդ, գավառ—64, 276
Խարբերդ, վիլայեթ—283, 284, 287—289
Խարբերդ, քաղաք—96, 98, 275—276, 284, 302, 304—307, 330, 441, 670
Խարկով—480, 483, 489
Խերթվիս, ամրոց—182
Խերսոն, նահանգ—478, 483
Խիզան, գավառ—61, 64, 67, 289, 501
Խիվա—102
Խլաթ, գավառ—64, 87
Խլաթ, քաղաք—300
Խլղարաքիլիսա, տե՛ս Փոքր Ղարաքիլիսա
Խմուր, գավառ—63
Խնձորգեն, գյուղ—283
Խնձորեսկ, գյուղ—128
Խնուս, գավառ—63, 72, 87, 186
Խոյ—52, 169, 516
Խոշաբ (Մահմուդիե), գավառ—64, 67, 281, 673
Խոշևան, գավառ—64
Խուտին, բերդ—134
Խոք, մահալ—15, 34
Խութ—197, 291, 292
Խուրդափարա, մահալ—15

Ծալկա—192

Կազան—399, 595, 672
Կալկաթա—363, 521—527, 559—561, 574, 578, 579, 604, 655, 656, 661, 664, 673
Կախեթ—13, 248
Կահիրե—461, 542—545, 547, 548, 656, 658, 674
Կաղզվան—46, 64, 252
Կամիշլին—667, 680
Կայմատա—502
Կանդիա, տե՛ս Կրետե կղզի
Կանտա, քաղաք—504
Կապան, մահալ—15
Կապան-մատեն—105, 304, 318
Կասաևա Ցամա, տե՛ս Էդեսիա
Կասպիական մարզ—209
Կասպից ծով—114, 179, 390, 475, 479, 480
Կավառնա—514
Կավարտ—266, 674
Կարաղհադին—151, 666
Կարաքաղ—528
Կարա-Հասանլի, գյուղ—48
Կարաշոլու, մահալ—15
Կարբիթասար, մահալ—14, 20, 25—27, 31, 36, 48, 49, 51, 175
Կարին, տե՛ս Էրզրում
Կարխուն, գյուղ—20
Կարճկան, գյուղ—229, 304
Կարմիր ծով—551
Կարմիր վանք—93
Կարմիր վանք, Նախիջևանում—53
Կարշիյակա—528
Կարս, գավառ—64
Կարս, գետ—245
Կարս, փաշայություն—18, 25, 63—65, 81, 87, 92, 115, 118, 180, 283, 660
Կարս, քաղաք—41, 43, 46, 52, 64, 77, 123, 179—182, 185—188, 190, 191, 235, 245—249, 251, 284, 287, 308, 323, 649, 667, 676
Կեսարիա, գավառ—63, 65, 93
Կեսարիա (փաշայություն, վիլայեթ)—63, 65, 99, 286, 347
Կեսարիա, քաղաք—94, 95, 99, 101, 104, 105, 305, 306, 308, 320, 451, 538, 539, 543, 659, 664, 667
Կետիկ փաշա, քաղամաս Կ. Պոլսում—315
Կերմենչիկ—512
Կերչ—473, 487, 492
Կզլ-Կալա—49
Կիլիկիա—61, 63, 68—70, 78—80, 82, 87, 95, 98, 273, 274, 277, 286, 292, 293, 301, 323, 328, 329, 348, 349, 351, 352, 358—360, 362, 363, 365, 366, 370, 371, 374, 380, 432, 441, 454, 455, 531, 535, 554, 594, 615, 647, 668
Կիլլա, բերդ—134
Կիպրոս—274
Կիսլավոդսկ—677
Կիսկիմ, գավառ—64
Կիրասոն, գյուղ—323
Կիր-Բուզավանդ, գյուղ—20
Կլուժ—510
Կյորես, տե՛ս Գորիս
Կյուրին, քաղաք—538
Կոզլուջա—512
Կոկիսոն—347, 350
Կողբ—32—34, 46, 48, 49, 263—265, 268
Կոնստանտինովկա, գյուղ—224
Կոնստանցա—499, 500
Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս, Պոլիս—69, 72, 73, 78, 86, 90, 93, 94, 96, 101, 103, 105, 116, 122, 176, 189, 244, 250, 275, 277, 278, 283, 286, 291, 297, 300—302, 305—307, 311, 315, 316, 318—332, 334, 336—338, 343, 349—351, 358—363, 365—373, 375—379, 393, 413—415, 424, 425, 428,

431, 432, 436, 437, 440—442, 448—451, 454, 456, 461, 474, 489, 494—496, 503, 505, 514, 527, 535, 536, 540, 541, 543—545, 550, 559, 560, 563—567, 573, 574, 576, 582, 583, 585—588, 591, 595, 597, 614, 628, 631—633, 643—646, 655, 657, 658, 661—681

Կովկաս—114—118, 122, 126, 134, 137, 138, 140, 141, 146, 157—159, 161, 178, 180, 186, 192, 193, 204, 207, 210, 211, 219, 220, 222, 235, 239, 242, 244, 245, 248, 252, 272, 364, 365, 368, 386, 389, 391—394, 399, 421, 423, 424, 426, 468, 470, 475, 480, 488, 489, 561, 565, 568, 628, 634—637, 648, 659, 660, 662, 663, 666, 668, 672, 681

Կովկասյան լեռնաշղթա—14, 179

Կովկասյան մարզ—478

Կոտայք—653

Կորադիզ, գյուղ—235

Կորդվաց լեռներ—279

Կորչևի, գյուղ—20

Կսկինձ, գյուղ—288

Կրասովա, քաղաք—499, 500

Կրետե կղզի—274, 282, 352

Կրխբուլաղ—14, 15, 20, 21, 27, 28, 43, 48, 49, 143, 175

Կրկաղաչ—528

Կուբա, տե՛ս Ղուբա

Կուբան—489

Կուլբ, գավառ—64

Կուվեվչ—76

Կուսապատ, գյուղ—129

Կուտինա—681

Կուր, գետ—114, 123, 125, 169, 202

Հաղզո, գավառ—64

Հալեպ—98—100, 102, 103, 274, 302, 304, 306, 307, 328, 358, 527, 531, 551—554

Հալեպ վիլայեթ—287

Հալիձոր—266, 677

Հաղպատի վանք—146

Համըն—68, 83, 95, 98, 302, 304, 309, 323, 351, 366, 679

Համադան—516, 517, 661, 663

Համամլու, գյուղ—142, 251

Համզաչիման, գյուղ—224

Համշեն, գավառ—107

Հայաստան—11, 13, 15, 25, 36, 54, 60, 65, 113, 117, 121, 156, 157, 162, 163, 167, 171, 173, 193, 195, 199, 202, 204, 227, 250, 265, 275, 280, 301, 321, 322, 367, 368, 370, 371, 373, 374, 382, 383, 393, 396, 398, 404, 410, 418—420, 423—424, 436, 439, 440, 445, 446, 454, 456, 457, 462, 473, 484, 498, 511, 530, 537, 539, 559, 562, 571, 575, 579, 583, 589, 592—594, 598, 600—604, 609—611, 615, 621, 624, 625, 641, 642, 647, 652, 653, 656, 670, 673, 679, 681

Հայդարաբադ—521, 523

Հայկական բարձրավանդակ—102

Հայկական Կիլիկիա, տե՛ս Կիլիկիա

Հայկական մարզ—162, 173—175, 180—182, 186, 191, 193, 204—209, 212, 215, 217, 218, 226, 228, 229, 236, 237, 255, 258, 259, 269, 640, 667—669, 671

Հայոց ձոր—279

Հանի, գավառ—64

Հաշիլար, գյուղ—22

Հաշի-օղլու-Բազարչիկ (Դոբրիչ, Տոլբուխին), քաղաք—511

Հառիճա վանք—653

Հասան ձոր, Ղարադաղում—520

Հասան-Ղալա, բերդ—186

Հասան-Ղալե, վանք—93

Հարավային Ադրբեջան—169

Հարավային Բուլղարիա—189

Հարավային Հայաստան—68, 79, 82, 84, 102, 277, 279, 280

Հարավային Պարսկաստան—516

Հարավային Ռուսաստան—320, 393, 466, 573

Հարսուն, գյուղ—553

Հելսինկի—619

Հերցեգովինա—352

Հեքյարի—67, 82, 277, 279, 283, 284

Հին Ղրիմ (Սուրխաթ)—486—492

Հիսնի-Քեոյ, գավառ—64

Հյուսիսային Ադրբեջան—121, 135, 138

Հյուսիսային Աֆրիկա—202

Հյուսիսային Իտալիա—669

Հյուսիսային Կովկաս—301, 351, 386, 462, 469, 470, 475, 479—481, 654, 671

Հյուսիսային Պարսկաստան—516

Հնդկաստան—10, 101, 103, 123, 157, 320, 413, 421, 462, 515, 521—526, 531, 551, 560, 568, 575, 579, 580, 582, 591, 604, 654

Հնչեշտ (Կոտովսկոյե)—502, 574, 655

Հոլանդիա—101, 307, 531

Հոմս—274

Հռոմ—320, 328, 329, 367, 449, 510, 679

Հրազդան, գետ—36, 119, 154, 648—649

Հրեքե—305, 535, 670
Հունաստան—177, 178, 190, 274, 347, 357, 359, 470, 664, 668
Հունգարիա—464, 504, 506, 509, 654
Հունքիար-Իսքելեսի—275, 669

Ձագ, գյուղ—20

Ղազախ—17, 35, 127, 131, 140, 209, 219—220, 234, 251, 659
Ղազարապատ, գյուղ—235, 252
Ղազրին (Ղազվին)—56, 57
Ղաթար—266
Ղալաթիա, թաղամաս Կ. Պոլսում—66, 315, 319, 323, 328
Ղանտր—350
Ղարաբաբա—125, 151
Ղարաբաղ—13, 15, 18, 55, 121, 125, 128—130, 132—135, 137—142, 144, 151, 175, 208, 209, 214, 221, 369, 480, 481, 528, 572, 636, 660, 662, 665
Ղարադաղ—516, 518, 520
Ղարադաղ, գավառ—516
Ղարասուբաղար—485, 487—490, 492, 573, 643, 675
Ղարաքիլիսա, տե՛ս Մեծ Ղարաքիլիսա
Ղարղալա, գյուղ—480
Ղափան—15, 121, 172
Ղզլար—397, 465, 470, 475—478, 480, 481, 573, 631, 681
Ղզքիլիսա—46
Ղոշա-Բուլաղ, գյուղ—238
Ղոշավանք—46
Ղոստա, գյուղ—553
Ղրիմ—101, 178, 243—245, 248, 249, 253, 272, 278, 282, 288, 290, 293, 298, 314, 320, 334, 351, 365, 376, 397, 399, 402, 406, 407, 462, 473, 485—492, 513, 538, 573, 587, 639, 643, 644, 654, 655, 668, 675, 676
Ղուբա, գավառ—209, 369
Ղուբա, խանություն—13, 14, 18, 135, 663
Ղուղուչան, գավառ—63, 87
Ղուռի-Կալավեր, գյուղ—241
Ղփղխաան, տե՛ս Ալբիսան

Ճապաղջուր, գավառ—64, 71, 83, 288
Ճենովա—371
Ճյուբեք Բիշարի—553

Մադրաս—521, 524, 526, 559—561, 579, 580, 655, 665
Մադրա, գյուղ—519
Մալաթիա (Միլետինե), գավառ—65
Մալաթիա, քաղաք—100, 105, 274, 276, 277, 284, 307, 323, 531
Մալախալինսկոյե, գյուղ—480
Մալայիր, գավառ—516
Մալթա, կղզի—330, 566
Մալիշկա, գյուղ—257
Մակեդոնիա—513
Մակու—36, 48, 516
Մահմուդիե, բերդ—68
Մահմուդիե, իշխանություն—67
Մահպապանք, գյուղ—292
Մայսուր, քաղաք—521
Մանազկերտ (Մալազկերտ, Մելազկերտ), գավառ—63, 72
Մանիա—528
Մանչեստր—101—103, 105, 307, 320, 321, 371, 418, 530, 531
Մանուկ, գյուղ—501
Մասիս, տե՛ս Արարատ լեռ
Մաստարա, գյուղ—24, 46
Մավազիխաթուն, մահալ—15
Մավրյակ, գետ—246
Մարաղա, քաղաք—117, 169, 516
Մարաշ, գավառ—65, 74, 93
Մարաշ (փաշայություն, վիլայեթ)—63, 65, 72, 77, 87, 283, 347, 351, 353, 358, 674
Մարաշ, քաղաք—72, 73, 95, 97, 98, 103, 104, 302, 304, 305, 307, 309, 323, 328, 347—352, 355—357, 359, 367, 552, 661, 663, 678, 679
Մարդին, փաշայություն—62, 330
Մարզվան, քաղաք—105
Մարմարա ծով—535, 539
Մարմեդ, գյուղ—288
Մարող Վաշարհե (Տըրդուլ Մուրեշ), քաղաք—504
Մարսել—101, 672, 674, 675
Մաքրիգյուղ, թաղ Կ. Պոլսում—315
Մեգրելիա—13, 113, 247, 660
Մեղինա—288
Մեծ Բրիտանիա—535
Մեծկերտ—288
Մեծ Հայք—286
Մեծ Ղարաքիլիսա—46, 128, 143, 224, 251, 397, 672
Մեծ Մազրա, գյուղ—238
Մեհրաբլի, գյուղ—20
Մեղրի—15, 128, 132, 137, 172, 243, 635
Մերձավոր Արևելք—10, 62, 114—116, 122, 124, 176—178, 190, 211, 243, 250, 270, 272, 275, 327, 358, 392, 424, 475, 512, 555, 564, 631, 632

Մնքքա—288
Միանդար, քաղաք—516
Միլան—644
Միխայլովկա (Միխաանա)—224
Միհրիվան, գավառ—79
Միոֆարկին, գավառ—64
Միջագետք—102, 293, 328
Միջագյուղ (Օրթագյուղ), թաղամաս Կ. Պոլսում—315, 326, 565, 631, 655, 667
Միջերկրական ծով—176, 323, 359
Միջին Արևելք—211, 256, 270—272, 551
Միջին Բաշ-Շորագյալ, գյուղ—245
Միսլիմի, գյուղ—512
Միսխանա—34, 267
Միրաք, գյուղ—138, 142, 143, 167, 666
Մշո դաշտ—288
Մոզդոկ—397, 465, 470, 476—478, 480, 481, 573, 631
Մոլդավիա—134, 177, 190, 244, 481, 483, 494—499, 505, 670
Մոլդավական ՍՍՀ—481, 655
Մոլդո-Վալաքիա—501, 502
Մոկս—64, 71, 80, 83, 277, 279—281, 283, 292
Մոսկվա—10, 103, 203, 270, 307, 361, 372, 375, 384—386, 397, 399, 401, 406—408, 410, 413, 428, 462—464, 469, 474, 483, 559, 560, 567—570, 572, 573, 575, 576, 583, 590, 591, 595—597, 599, 629, 654, 655, 661—663, 667, 669, 673, 674, 677, 678, 681
Մոսուլ—62, 100, 105, 282, 288, 307
Մուշան—138
Մուշանջիկ, գյուղ—51
Մուշնի—18
Մուշ, գավառ—64, 67, 71, 82, 93, 187, 277, 280, 284, 300, 323, 374, 376, 589
Մուշ, քաղաք—8, 61, 83, 85, 90, 102, 186, 281, 289, 291, 302, 307, 308, 322, 341, 437, 440, 563, 676, 679
Մուտատ-չայ, գետակ—651
Մուսաղաղ—552
Մուրվանա, գյուղ—323

Յախչի, գյուղ—225
Յալթա—487
Յամրոլ, գյուղ—513
Յասսի—122, 134, 481, 495, 497—499, 656
Յարբմշա, գյուղ—228

Նադեժդինո (Շորժա), գյուղ—224
Նախակովկաս—471
Նախիջևան, գավառ—205, 207, 209, 210, 228, 229, 254, 257, 674, 680
Նախիջևան, խանություն—13, 15, 26, 35, 52, 53, 116, 117, 123, 125, 126, 136, 169, 170, 172, 205, 228, 268, 666
Նախիջևան, մահալ—15, 175
Նախիջևան, քաղաք—14, 26, 32, 34—36, 43, 46, 52, 53, 124—126, 133, 150, 151, 159, 168, 175, 205—207, 230, 243, 251, 252, 258, 263—265, 270, 661, 666
Նահեա (Նահին), գավառ—63
Նավարին—178, 183
Նարիման, գավառ—64
Նեապոլ—414
Նեգուշտինա, գյուղ—494
Ներքին Ախտա, գյուղ—225, 231
Ներքին Եդիպտոս—543—544
Նիգոտյան բարձունք—247
Նիզբի—278, 671
Նիժնի Նովգորոդ—103, 270, 469, 475, 480
Նիկիտինո, գյուղ—224
Նիկոլաևկա, գյուղ—224
Նիկոմիդիա, քաղաք—305, 450
Նիկոմիդիա (Իզմիտ), գավառ—296, 534—537, 670
Նիկոե, փաշայություն—65
Նոզայսկ—492
Նովո-Միխայլովկա, գյուղ—224
Նովոլևերկասկ—469
Նովոռոսիա—466, 469, 471, 483
Նորադուզ, գյուղ—652
Նորաշեն—323
Նոր Բայազետ, գավառ—210, 225, 231, 235—258, 263, 270, 397, 647
Նոր Բայազետ, քաղաք—224, 236—238, 251, 263, 270, 397, 647
Նոր-Նախիջևան—214, 369, 373, 388, 395, 397, 405, 406, 413, 462, 465—474, 481, 482, 486—489, 573—575, 619, 621, 628, 631, 654, 655, 662, 667—669, 678, 679
Նոր-Ջուղա—462, 516—518, 520, 561, 656, 663
Նորք—648, 653
Նուխի—18, 138

Շահ-Բուլաղ, բերդ—129, 130
Շահրիզ, գյուղ—225
Շամախի, նահանգ—210, 673
Շամախի, քաղաք—18, 138, 209, 214, 251, 252, 397, 677
Շամ, տե՛ս Դամասկոս
Շամլուղ—265, 266
Շամշադին—13, 17, 46, 113, 127, 131, 135, 140, 219, 660, 662
Շամքոր—141, 142, 144, 665
Շամքոր, գետ—141

Շապին-Կարահիսար (Նիկոպոլիս)—63, 89, 90, 284, 537, 539, 549
Շատախ—71, 80, 87, 277, 280, 282, 291, 292, 297
Շարուր, մահալ—14, 20, 25—27, 36, 43, 48—52, 257
Շարուր, օկրուգ—207
Շաքի, գավառ—208, 209
Շաքի, խանություն—13, 18, 121, 135, 138, 219, 660, 662
Շաֆխարադ, գյուղ—20, 49
Շեյխ-Մահմուտ—34, 264
Շիրաբադ, գյուղ—49
Շիրազ—102, 516, 517, 659, 665
Շիրակ, տե՛ս Շորագյալ
Շիրո, գավառ—68
Շիրվան, գավառ—209, 214
Շիրվան, խանություն—13, 18, 121, 135, 138, 208, 219, 660, 662
Շորագյալ—14, 17, 116, 117, 121, 125, 131, 132, 135, 138—140, 142, 144, 164, 165, 192, 231, 235, 237, 251, 252, 660, 662, 665, 670
Շուլավեր—149, 675
Շումեն (Կոլարովգրադ)—511—513
Շուշի—58, 121, 129, 138—140, 214, 220, 234, 251, 252, 269, 397, 572, 573, 590, 631, 638, 651, 665, 666, 671, 676, 678

Ոստան—67, 87
Որոտան, գետ—651

Ջալդրան—64
Ջալմաքլի, գյուղ—49
Ջախրու, գյուղ—238, 239
Ջանանափ, մահալ—15
Ջարբախ, գյուղ—24, 51
Ջարմահալ, գավառ—516
Ջարշամբա, ավան—538
Ջարտանջակ—8, 68, 82, 83, 85, 90, 102, 276, 288, 300, 376, 378—380, 680
Ջաքըր-դերե Քեփիր—353, 356
Ջեշենիա—480
Ջերնոգորիա—299, 300, 352, 357
Ջերնովից—494, 495
Ջերքեզիա—489
Ջըլդըրի փաշայություն, տե՛ս Ախալցխայի փաշայություն
Ջըլդըր (սանջակ, գավառ)—64, 81
Ջընդլի կիրճ—247
Ջըրխա, գավառ—64
Ջիրուխլու, գյուղ—225, 231
Ջինաստան—421, 524
Ջիշրա—521
Ջիտտադոնդ—521
Ջիրախլի, գյուղ—51
Ջմշկածոգ—288
Ջյաքլա, գավառ—516
Ջնչհավատ, գյուղ—48, 264
Ջոմախտըր, գյուղ—51
Ջորում, գավառ—64
Ջուխուր, գավառ—67

Պադուա—428, 430, 669
Պալաք, թաղամաս Կ. Պոլսում—315, 564
Պաղեստին—349
Պարսկահայք—461
Պարսկաստան—7, 10, 13, 14, 16, 18, 19, 42—45, 52, 53, 57, 64, 101, 103, 105, 114—118, 121—124, 130—138, 145, 150, 156, 168, 170—175, 183—185, 190, 192—196, 202, 204, 205, 211, 212, 216, 222, 223, 228, 230, 233, 235, 269—272, 275, 280, 307, 309, 320, 322, 323, 364, 389, 437, 461, 473, 475, 477, 480, 492, 515—520, 522, 525, 537, 539, 561, 568, 648, 654, 659, 661—663, 666, 667, 669
Պարտիզակ, գավառ—450
Պարտիզակ, գյուղ—535
Պարտիզակ (Բախչեջիկ), քաղաք—305, 534—536
Պաֆրա (Բաֆրա)—538
Պեյքոզ, թաղամաս Կ. Պոլսում—326, 576
Պեշտ—506, 507
Պեշիկթաշ—655, 657
Պետերբուրգ—137, 138, 141, 159, 160, 177, 202, 212, 361, 384, 386, 395, 397, 399, 406—408, 425, 428, 462—464, 472, 474, 477, 519, 562, 570, 576, 590, 595—597, 603, 634—636, 638, 639, 641, 654, 659, 662, 665, 669, 673, 679
Պերա, տե՛ս Բերա
Պերեկոպ—473, 492
Պերմի նահանգ—470
Պիտեշտ—499
Պիրիդ, լեռ—304, 347
Պիրվալի, գյուղ—245
Պլոեշտի—499
Պյատիգորսկ—469, 470
Պնդունի, գյուղ—288
Պոկրովկա—224
Պոնտոս—89, 370, 537
Պոպա Ռուսու—502
Պոպեշտի Մանուկ, գյուղ—501
Պրիվոլնոյե, գյուղ—224
Պրավադիա—511, 512

Պրուսիա—277, 368, 554
Պրուտ, գետ—62, 134, 179
Պուրսա, տե՛ս Բրուսա

Ջալալօղլի—142, 143, 145, 224
Ջահեն (Ջհհան), գետ—72, 351, 356
Ջամբազը, գյուղ—512
Ջանդիլի—163
Ջանիկ, գավառ Սվազի փաշ.—64
Ջանիկ, ամրոց—537
Ջարո-Բելոկան—210
Ջավախեթ, գավառ—64
Ջավանշիր, մահալ—15
Ջարխանչ, գյուղ—225
Ջաֆարաբադ, գյուղ,—24, 47
Ջերել Ասրա—552
Ջեզիրե—64, 67, 68, 275, 277, 281, 283, 284
Ջերմեկ, գավառ—64
Ջերմուկի դաշտ—348, 351, 354, 668
Ջըրջըր, գյուղ—225
Ջիբուխի—551
Ջիվանշիր, մահալ—15
Ջյունի—553
Ջրաբերդ, մահալ—15
Ջուլամերկ—64, 67, 68, 82, 87
Ջուլֆա (Ջուղա)—680
Ջուրջով—504, 509, 510
Ջուրջու—499
Ջևան-Բուլաղ—150, 159, 162, 666

Ռազդրադ—511, 512
Ռեշտ—137, 517
Ռինդ, գյուղ—674
Ռնդամալ, գյուղ—225
Ռշտունյաց լեռներ—279
Ռոդոստո (Թեքիրդաղ)—539, 540
Ռոման, քաղաք—495, 497, 499
Ռոստով—405, 469—471, 473, 480
Ռումելիա—287, 317
Ռումինիա—495, 497, 504, 654
Ռուսական կայսրություն, տե՛ս Ռուսաստան
Ռուս-Գերգեր, գյուղ—224
Ռուսչուկ (Ռուսե)—133, 499, 501, 502, 511—513
Ռուսաստան—7, 10, 13, 14, 17, 18, 41—43, 56, 62, 87, 103, 104, 106, 113—117, 121—124, 131—141, 157, 158, 170—172, 176—180, 183—185, 189, 190, 192—197, 201—206, 211—214, 219, 222, 223, 226, 228, 241—244, 246, 249, 250, 254, 255, 257, 258, 262, 263, 267, 270—272, 275, 280, 284, 290, 293, 307, 309, 311, 323, 327, 358, 359, 361, 363, 364, 366, 368, 370, 373, 376, 381, 383—389, 392—393, 395—399, 402—405, 407, 408, 413, 415, 421—426, 440, 445, 454, 461—463, 465, 469, 470, 472, 474—477, 480, 482—485, 492, 501, 512, 515, 517, 518, 523, 525, 531, 538, 551, 554, 559, 560, 567, 568, 570, 576, 595, 597, 611, 631, 640, 647, 650, 651, 654, 658—662, 666, 667, 669—672, 675
Ռևանդուզ—275

Սաաթլու, մահալ—14, 20, 26, 48
Սադարակ, գյուղ—257
Սալմաստ—169, 516, 669
Սալոնիկ—303
Սաղման, գավառ—64
Սամաթիա, թաղամաս Կ. Պոլսում—326, 329, 451, 564, 577, 586
Սամոս—274
Սամսաթ (Սամուսաթ), գավառ—65
Սամսոն—96, 105, 307, 371, 537, 538, 674
Սաս Սերեշ—504
Սասնո լեռներ—88
Սասուն—67, 70, 71, 80, 83, 97, 179, 281, 291, 292, 297, 301, 305, 352, 679
Սավուր, գավառ—64, 71, 80, 83
Սարա-Բուրն, թաղամաս Կ. Պոլսում—657
Սարատովի նահանգ—470, 667
Սարդարապատ, բերդ—43, 46, 47, 50, 52, 143, 145, 153, 154, 159, 160, 162, 154, 165, 167, 168, 201, 234, 251, 252, 268, 666
Սարդարապատ, մահալ—14, 20, 25, 27, 36, 48, 175
Սարդարապատ, օկրուգ—207
Սարվանլար Սուֆլա, գյուղ—51
Սաքարիա, գետ—536
Սեբաստիա, գավառ—64, 79, 87, 93, 187, 323, 535, 536, 668
Սեբաստիա (փաշայություն, վիլայեթ)—63, 64, 81, 87, 88, 91, 92, 99, 280, 283, 284, 286, 289, 296, 539
Սեբաստիա, քաղաք—90, 94—96, 99, 103, 105, 275, 284, 287, 302, 303, 307, 309, 312, 382, 531, 564
Սեիդլի-Աղաախլի, մահալ—14, 20, 28
Սելամիյե, թաղամաս Կ. Պոլսում—315
Սեմյոնովկա, գյուղ—224, 225
Սեյդաբադ—521
Սեպվիզ (Սիպվիզ)—504, 509, 510
Սերբիա—134, 177, 190, 300, 359, 505, 668
Սերգիուլ, գյուղ—20

Սիբին—504
Սիբիր—35, 407, 441, 470
Սիլիստրիա (Սիլիստրե)—189, 244, 282, 495, 511, 513
Սիմֆերոպոլ—487, 490, 492, 573
Սինգապուր—524, 674
Սինոպ—244, 246, 644, 675
Սինջար, գավառ—64, 277
Սիոն—540
Սիս—65, 68, 78, 366
Սիսիան, մահալ—15, 121
Սիսիմադան—259
Սիրետ—494
Սիրիա—98, 274, 278, 293, 347, 349, 358, 461, 551—555, 671
Սլիվնո—97
Սկյութիար, թաղամաս Կ. Պոլսում—87, 303, 315, 326, 332, 333, 560, 564, 567, 577, 655, 671—674
Սղերդ—102, 282, 286, 289
Սղնախ—18, 46, 677
Սյունիք—194, 652
Սյուրմեն—65, 107
Սողանլուղ—186, 188
Սոֆիա—511—513
Սպահան—517, 656
Սպեր—63
Սվազ, տե՛ս Սեբաստիա
Սվիշտով (Սիստովո)—513
Ստավրոպոլ—369, 469, 470, 481, 635
Ստոկհոլմ—592
Ստորին Իմեր, գավառ—64
Սրնբուր—526
Սրբոց Հակոբյանց վանք (Երուսաղեմում)—93, 540, 541, 563
Սուբաշ—492
Սուդակ—491
Սուեզ—543
Սուեզի ջրանցք—309, 681
Սուետիա—552
Սուլեյմանիե, իշխանություն—67
Սուլթանիե—137
Սուլու Մանաստըր, թաղամաս Կ. Պոլսում—315
Սուխումի—133, 183, 244, 249
Սուչավա—494, 656
Սուրաթ—521
Ս. Եղիա լեռ—536
Ս. Հրեշտակապետ, թաղամաս Կ. Պոլսում—315
Ս. Ղազար (կղզի, վանք)—387, 561, 562, 582, 591, 627, 640
Ս. Նիկոլայի ամրոց—189, 244
Սուրմալու—14, 20, 25, 27, 28, 31, 36, 48, 49, 51, 52, 175, 192, 207, 251, 252, 570
Սևանա լիճ—50, 140, 142, 192, 224, 652, 672
Սևանա վանք—231, 280, 680
Սևաստոպոլ—248, 249, 489, 644, 675
Սև գետ—65, 107, 537
Սև ծով—101, 102, 114, 176, 178, 179, 183, 186, 189, 246, 249, 275, 390, 539, 659, 667
Սևերեկ, գավառ—64

Վալաքիա (Վալախիա)—134, 177, 190, 244, 483, 496, 497, 499—502, 505, 664
Վաղարշապատ—18, 22, 24, 26, 31, 44, 49, 58, 251, 252, 653
Վայոց ձոր—175
Վան (գավառ, առնչակ)—64, 79, 83, 284
Վան (փաշայություն, վիլայեթ)—63—65, 67, 68, 76, 82, 87, 88, 92, 180, 279, 281—283, 300, 307, 375
Վան, քաղաք—8, 67, 68, 82, 88, 90, 95—98, 102—104, 107, 185, 186, 277, 280, 281, 290, 296, 298, 302, 304—307, 309, 311, 322, 330, 361, 363, 374, 375, 382, 437, 441, 588, 635, 664, 668, 671, 678, 680
Վանակ, գյուղ—516
Վառնա—183, 511—513, 515
Վասիլևկա, գյուղ—481, 483, 484
Վասպուրական—61, 82, 85, 90, 107, 276, 277, 280—282, 288, 289, 291, 299, 300, 308, 323, 341, 373, 374, 377, 394, 443
Վատիկան—327, 328, 582, 588
Վարագա լեռ—284
Վարագա վանք—78, 93, 290, 374, 437, 438, 440, 441, 563, 588, 676, 677
Վարանդա—15, 141
Վեղիբասար—14, 25—28, 36, 48, 49, 175
Վեդի-Յայ—150, 159
Վեզուվ—414
Վել-Օկնա (Ռըմնիկու-Վըլչեա)—500
Վենետիկ—101, 103, 320, 387, 410, 427, 430, 436, 531, 541, 560—562, 567, 572, 574, 577, 580, 589, 590, 592, 596, 599, 614, 627, 640, 644, 650, 660, 662—665, 669, 670, 672
Վերին Ախտա, գյուղ—225
Վերին Բաշ-Շորագյալ—245
Վերին Եգիպտոս—543—544
Վերին Իմեր, գավառ—64
Վիրորդ—591
Վիդին—513
Վիեննա—76, 96, 305, 427, 436, 501, 511, 519, 531, 541, 562, 662, 673

Վիրահմբերդ—222
Վլադիկավկազ—475, 480
Վլադիմիր—270
Վյատկա—395
Վոլգա—475
Վոսկրեսենովկա, գյուղ—224
Վորոնեժ—470
Վորոնցովկա, գյուղ—224
Վրաստան—13, 17, 18, 23, 33, 37, 42, 46, 54, 113—116, 118—121, 123—126, 132, 134, 135, 138, 146, 149, 182, 201, 203, 207, 210, 214, 222, 235, 242, 267, 268, 368, 376, 423, 480, 593, 635, 659—662
Վրացա-իմերեթական նահանգ—209, 671

Տագանրոգ—466, 468—470, 473
Տաթև, մահալ—15
Տաճկաստան, տե՛ս Թուրքիա
Տամրով—470
Տավրիկյան նահանգ—478, 488, 492, 493
Տավրոս—72, 73, 179, 275, 359, 363—367, 370, 450, 594
Տարսոն (Տարսուս)—65
Տեկուլ—495, 497
Տեղ, գյուղ—239
Տեր-Ջոր—344
Տերգու-Օկնա—495, 499
Տերգու Ֆրումոս—497
Տիգրիս—101, 583
Տլղխա—62, 124, 131, 661
Տիմիշոարա—504
Տխանիս, գյուղ—656
Տորոնտալ, գավառ—504
Տրանսիլվանիա—495, 497, 500, 504—511
Տրապիզոն, քաղաք—101—104, 186, 271, 272, 275, 307, 309—311, 322, 489, 537, 538
Տրապիզոն, գավառ—293, 537
Տրապիզոն (փաշայություն, վիլայեթ)—63, 65, 81, 87, 89, 91, 107, 280, 283, 284, 537, 539
Տրգովիշտե—499
Տրիեստ—531, 562
Տուժիկ, գավառ—63, 72
Տուլչա—500, 503
Տուրտան—545

Ուզնյր, գավառ—65
Ուլնիա, տե՛ս Զելիեան
Ուլուխանլու, գյուղ—47
Ուկրաինա—512
Ումադիե, գավառ—79
Ուշի, գյուղ—20
Ուշայու, գավառ—79
Ուրմիա—52, 169, 516
Ուրֆա—62, 65, 99, 670

Փաթնոս—521
Փամբակ—13, 17, 18, 57, 113, 117, 118, 120, 125—128, 131, 132, 135, 138—140, 142, 144, 145, 164—166, 191, 231, 235, 237, 266, 659, 660, 662, 665, 670
Փամբակաձոր, տե՛ս Փամբակ
Փայաչուկ, գյուղ—669
Փայաս—552
Փարիզ—10, 96, 105, 116, 124, 249, 278, 305, 320, 334, 358, 359, 363, 366, 367, 370, 371, 387, 388, 410, 415, 416, 425, 430, 434, 436, 441, 443, 447, 455, 493, 496, 519, 520, 550, 578, 588, 591—594, 645, 657, 662, 664, 665, 669, 674, 676—679, 681
Փերիա, գավառ—516, 518
Փիրդոուզան—266, 674
Փխիան, մահալ—15
Փոթի—133, 179, 183, 189, 667, 680
Փոցխով (գավառ, սանջակ)—64, 81
Փոքր Ասիա—69, 76, 87, 98, 105, 106, 248, 275, 279, 286, 302, 305, 322, 328, 330, 530, 666, 681
Փոքր Հայք—286, 328, 530
Փոքր Ղարաքիլիսա—118, 124, 139, 140, 235
Փոքր Մազրա, գյուղ—238
Փոքր Մասիս, տե՛ս Արարատ լեռ

Քանաքեռ—49, 118, 119, 164, 607, 653, 662
Քարատիշ—353, 354
Քարբերդ, տե՛ս Խարբերդ
Քարթլի—13
Քարվանսարա, գյուղ—225
Քաֆր-Ջիարեթ—543
Քեամարա, գավառ—516
Քեթմեն—354
Քելեզ—536
Քեղյան, գավառ—64
Քեղքիթ, սանջակ—63, 300
Քեմախ (Կամախ), սանջակ—63, 539
Քեմբրիջ—430
Քեսաբ—552
Քիշնյով—406, 484, 502, 573, 574
Քղի—186, 300, 323, 376—378
Քյաթիրլու, մահալ—15
Քյազազ, գավառ—516
Քյուրակ-չայ—121, 142, 660
Քյուրդիստան—98, 277, 279, 280, 282, 284, 304, 669

Քյուրուկ-Դարա—247, 252, 675
Քյուրքլիլի—50
Քոշ-դաղ—351
Քութայիսի—369, 673
Քութայիսի, գավառ—209
Քութայիսի, նահանգ—210, 673
Քուռ, տե՛ս Կուր գետ
Քուրդբելեն, գյուղ—537

Օդեմիշ—528
Օդեսա (Օտեսա)—333, 406, 484
Օդորհե—504
Օղուրգեթ—247
Օթուզ իքի, մահալ—15
Օլթի, քաղաք—186
Օլթի, գավառ—64, 188
Օլտենիա—499, 500
Օշական—18, 22, 49, 151—153, 164, 619, 653, 666
Օսեթիա—120, 210, 480
Օսմանյան կայսրություն, տե՛ս Թուրքիա
Օվաճըկ—534, 536
Օտուռ, գյուղ—323
Օրաբազար—492
Օրագ, բերդ—281, 673
Օրադեա—504
Օրդով—269
Օրդաքլու, գյուղ—225
Օրդուբադ, մահալ—15, 175
Օրդուբադ, քաղաք—26, 35, 36, 46, 53, 172, 175, 206, 207, 210, 229, 243, 258, 270
Օրդուբադ, օկրուգ—15, 26, 53, 170, 172, 205, 207, 210, 229, 252, 666, 674
Օրդու (Քոթիյորան)—537, 539
Օրթագյուղ (Միջագյուղ), գյուղ—537
Օրմենաս, գյուղ—288
Օրյոլ—470

Ֆեոդոսիա, գավառ—64
Ֆիլադելֆիա—96, 305
Ֆիլիպինյան կղզիներ—101
Ֆիլիպոպոլիս (Փիլիպոպոլիս, Պլովդիվ)—511—513
Ֆինկենշտեյն—123, 131, 661
Ֆոկշան—495, 498—500
Ֆրանսիա—62, 114—116, 122—125, 131, 133, 134, 171, 176—178, 189, 192, 243, 244, 246, 274, 275, 293, 307, 320, 327—330, 358, 359, 367—370, 387, 430, 435, 442, 464, 470, 519, 531, 539, 545, 550, 554, 592, 659, 661, 675

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Մ. Գ. Աղայան) 7

ԲԱԺԻՆ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Գլուխ առաջին.— Արևելյան Հայաստան (Վ. Ա. Դիլոյան)

1. Վարչական բաժանումը և վարչակարգը 13
2. Հողային հարաբերությունները 18
3. Գյուղատնտեսությունը. գյուղական համայնքը 24
4. Արհեստագործություն և առևտուր 31
5. Հարկային սիստեմը 46
6. Ազգային ճնշումներ 56

Գլուխ երկրորդ.— Արևմտյան Հայաստան (Հ. Մ. Ղազարյան)

1. Քաղաքական իրավիճակը Թուրքիայում 61
2. Վարչական բաժանումը 63
3. Հայկական կիսանկախ իշխանություններ 70
4. Հողային հարաբերությունները 75
5. Գյուղացիություն. հարկեր և տուրքեր 86
6. Քաղաքներ, արհեստներ, առևտուր 94
7. Ազգային ճնշումները և հալածանքները 106

ԲԱԺԻՆ Բ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Գլուխ երրորդ.—Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններուի միացումը Ռուսաստանին (Զ. Տ. Գրիգորյան)

1. Մեծ տերությունների հակամարտություններն Անդրկովկասում . . 113
2. 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը 117
3. Հայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին . 126
4. Գյուլիստանի հաշտությունը 131

Գլուխ չորրորդ.—Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից (Զ. Տ. Գրիգորյան)

1. Ռուս-պարսկական պատերազմը. ռազմական գործողությունները 1826 թվականին 136
2. Երևանի գրավումը 144
3. Կովկաս աքսորված դեկաբրիստների և հայ աշխարհազորայինների մասնակցությունը Երևանի գրավմանը 158
4. Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը և հայերի ներգաղթը Պարսկաստանից 168

Գլուխ հինգերորդ.— 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և արևմտահայությունը (Զ. Տ. Գրիգորյան)

1. Ռուս-թուրքական հարաբերությունների սրումը 176
2. Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում և հայերի օգնությունը ռուսական բանակին 179
3. Ադրիանապոլսի պայմանագիրը և հայերի գաղթը 188
4. Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը 192

ԲԱԺԻՆ Դ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գլուխ վեցերորդ.— Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում (Վ. Ա. Դիլոյան, Վ. Հ. Ռշտունի)

1. Երևանի ժամանակավոր վարչությունը 201
2. Հայկական մարզը 204
3. Հայկական մարզի վերացումը, վարչական նոր միավորներ . . 208
4. Ցարիզմի գաղութային քաղաքականությունը 211
5. Գյուղացիական ելույթներ 226
6. Ղրիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատը և հայերը (Ա. Մ. Պողոսյան) 243

Գլուխ յոթերորդ.— Տնտեսական կյանքի զարգացումը (Վ. Ա. Դիլոյան, Վ. Հ. Ռշտունի)

1. Տեղաշարժեր գյուղատնտեսության մեջ 254
2. Արհեստները, արդյունաբերությունը, առևտուրը 257

Գլուխ ութերորդ.— Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը 1830—1860-ական թվականներին (Հ. Մ. Ղազարյան)

1. Ռեֆորմները Թուրքիայում 273
2. Գյուղացիության վիճակը 283
3. Քաղաքներ 301
4. Պոլսահայերը 315
5. Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը 331

ԲԱԺԻՆ Դ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գլուխ իններորդ.— Ազգային-ազատագրական շարժումները 1850—1860-ական թվականներին (Հ. Մ. Ղազարյան)

1. Զեյթունցիների ինքնապաշտպանական կռիվները 1830—50-ական թվականներին 347
2. Զեյթունի 1862 թ. ապստամբությունը 352
3. Զեյթունի ապստամբության արձագանքները 360
4. Ժողովրդական ելույթները Արևմտյան Հայաստանում 374

Գլուխ տասներորդ.— Հայ հասարակական-քաղաքական հոսանքները 1850—1860-ական թվականներին

Արևելահայ հասարակական հոսանքները (Ա. Գ. Հովհաննիսյան) . 383

1. Կղերա-աղայական հոսանք 383
2. Ազգային-պահպանողական հոսանք 389
3. Լիբերալ-բուրժուական հոսանք 397
4. Հեղափոխական-դեմոկրատական հոսանք 405

Արևմտահայ հասարակական հոսանքները (Հ. Մ. Ղազարյան) . 426

1. Կղերա-ամիրայական հոսանք 426
2. Լիբերալ-բուրժուական հոսանք 430
3. Ազգային-պահպանողական հոսանք 436
4. Ազգային-դեմոկրատական հոսանք 442

Բ Ա Ժ Ի Ն Ե

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Գլուխ տասնմեկերորդ.— Հայկական գաղթավայրերը 1800—1870 թթ.

1. Հայկական գաղթավայրերը Ռուսաստանում 465
   Նոր Նախիջևան (Վ. Բ. Բարխուդարյան) 465
   Աստրախան (Վ. Ա. Խաչատրյան) 474
   Հյուսիսային Կովկաս (Վ. Ա. Խաչատրյան) 479
   Գրիգորիոպոլ (Ժ. Հ. Անանյան) 481
   Ղրիմ (Վ. Ա. Միքայելյան) 485

2. Հայկական գաղթավայրերը Արևելյան Եվրոպայում 494
   Բուկովինա (Ս. Է. Քոլանջյան) 494
   Մոլդովա (Ս. Է. Քոլանջյան) 495
   Վալաքիա, Օլտենիա և Դոբրուջա (Ս. Է. Քոլանջյան) 499
   Տրանսիլվանիա (Ս. Է. Քոլանջյան) 504
   Բուլղարիա (Ս. Վ. Հովնանյան) 511

3. Պարսկաստանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերը 515
   Պարսկաստան (Ա. Գ. Աբրահամյան) 515
   Հնդկաստան (Ռ. Ա. Աբրահամյան) 521

4. Հայերը Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում 527
   Զմյուռնիա (Հ. Մ. Ղազարյան) 527
   Նիկոմիդիա (Հ. Մ. Ղազարյան) 534
   Տրապիզոն (Հ. Մ. Ղազարյան) 537
   Երուսաղեմ (Հ. Մ. Ղազարյան) 540
   Եգիպտոս (Ա. Գ. Աբրահամյան) 542
   Եթովպիա (Ռ. Ա. Աբրահամյան) 548
   Սիրիա և Լիբանան (Ա. Գ. Աբրահամյան) 551

Բ Ա Ժ Ի Ն Զ

ՄՇԱԿՈՒՅԹԸ (1801—1870)

Գլուխ տասներկուերորդ.— Լուսավորություն, գիտություն, մամուլ (Գ. Խ. Ստեփանյան)

1. Ընդհանուր ակնարկ հայ մշակույթի զարգացման 559
2. Դպրոց, լուսավորություն 566
3. Պարբերական մամուլ 579
4. Հայագիտություն 589

Գլուխ տասներեքերորդ.— Գրականություն և արվեստ

1. Գրականություն (Ս. Ն. Սարինյան) 598
2. Թատրոն (Գ. Խ. Ստեփանյան) 627
3. Կերպարվեստ (Մ. Մ. Ղազարյան) 634
4. Երաժշտություն (Ա. Մ. Մուրադյան) 640
5. Ճարտարապետություն (Վ. Մ. Հարությունյան) 647

Կարևոր անցքերի ժամանակագրություն 659
Մատենագրություն 683
Անձնանունների ցանկ 701
Տեղանունների ցանկ 717

ՀԱՅԿ. ԱՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Տ Ո Ր Վ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Սուպեր շապիկի վրա՝ Օշականի ճակատամարտի հերոսների
հիշատակին 1834 թ. կառուցված հուշարձանը

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԴԱՄՅԱՆ
Նկարչ. ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ,
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Սուպեր շապիկը՝ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչներ՝ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Կ. Խ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎՖ 03862 Հրատ. 3667 Խմհ 1394 Պատվեր 41 Տպաքանակ 12000

Հանձնված է շարվածքի 25/I 1973 թ., ստորագրված է տպագրության 7/III 1974 թ., տպագր. 46,0 մամուլ+4 ներդիր քարտեզ, հրատ. 58,88 մամուլ, պայման. 66,68 մամուլ, թուղթ № 1, 70×108 1/16։ Գինը 4 ռ. 55 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0073169

A III 4140